Ս.Կ. ՊՈՂՈՍՅԱՆ Կ.Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՆՁ ԲԱՀ ՏԱՆՔ...

ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ

ԵՐԵՎԱՆ
«ՈՒԲ—ՊՐԵՍ»
1990

ՍԳԴ 63.3 (22) 52
Պ 797

Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս.
Պ 797 Ինձ բահ տվեք... (Գևորգ Չաուշ)։ Փաստագրական վեպ։ Եր. «NB—Պրես», 1990, 448 էջ։ 24 թ. նկ.։

Գիրքը նվիրված է Սասունի և Տարոնի հայդուկային շարժմանը և այդ շարժման ամենափայլուն դեմքերից մեկին՝ Գևորգ Չաուշին (Գևորգ Ղազարյան)։ Փաստագրական հարուստ նյութի հիման վրա հեղինակները բացահայտում են ոչ միայն Գևորգ Չաուշի կյանքի ու գործունեության, այլև 19-րդ դարի վերջի և մեր դարասկզբի հայ ազատագրական շարժման մի շարք առանցքային հարցեր։

Պ 0503020913
715 (01)—90

ISBN 5—8079—0148—7

© «NB—Պրես» հրատարակչություն, ձևավորման համար, 1990

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի երկրորդ կեսը թևակոխեց որպես քայքայված և սոցիալ-քաղաքական տևական ճգնաժամի հետևանքով բզկտված մի երկիր, որը աշխարհի լայնածավալ տերություններից մեկը լինելով հանդերձ, միջազգային ասպարեզում ինքնուրույնությունից զուրկ, ռազմա-ֆեոդալական հետամնաց կացութաձև որդեգրած պետություն էր՝ միջազգային քաղաքականության իրարամերժ հոսանքների միջև տարուբերվող մի անկշիռ երևույթ։ Եվ այնուամենայնիվ, օսմանյան կայսրությունը համարվում էր անկախ պետություն։ Սուլթանն անահմանափակ իրավունքներ ուներ, իսկ որպես խալիֆ՝ նաև հավակնում էր ամբողջ աշխարհի մահմեդականության հոգևոր տիրակալի մենաշնորհին։ Սակայն այդ ամենը երևութական էր, իրականում օսմանյան կայսրությունը «հիվանդ մարդ» էր, որի «բժշկման» համար մրցակցում էին խոշոր տերությունները։ Երկրի արտաքին առևտուրը, ըստ էության, տնօրինում էին օտարերկրյա գործակալությունները։ Նրանց ձեռքում էին Թուրքիայի երկաթուղին, նավահանգիստների տեխնիկական վերազինումը, հանքերը, քաղաքային տնտեսությունը, ֆաբրիկաների ու գործարանների մեծ մասը։

1854—74 թթ. Թուրքիան արտասահմանից փոխառություն էր ստացել 4552 միլիոն ֆրանկ, որի միայն տոկոսները ամեն տարի կազմում էին 75 միլիոն։ Տարեցտարի մեծանում էր պետական բյուջեի դեֆիցիտը, որը, եթե

1876 թվին 100 միլիոն էր, ապա ռուս-թուրքական պատերազմից հետո տասնապատկվեց։

Վ. Ի. Լենինը, ի դեմս Թուրքիայի, տեսնում էր Ասիայի այն երկրներից մեկը, որին իմպերիալիստները հատուկ եռանդով ծվատում էին[1]։

Լենինյան այս միտքը չպետք է բառացի հասկանալ, որովհետև 19-րդ դարի երկրորդ կեսից ստեղծվեց մի վիճակ, երբ կայսրության տիրապետող խավերի և արևմտյան մեծ տերությունների շահերը համընկան, և երկու կողմերի ընդհանուր նպատակը դարձավ օսմանյան կայսրության ամբողջականության ու այնտեղ տիրող սոցիալ-քաղաքական և ազգային հարաբերությունների պահպանումը։

Այդպես ձևավորվեց տխրահռչակ ստատուս քվոյի քաղաքականությունը։

Եվրոպայի խոշոր մասնագետներից մեկը՝ Վիլյամ Պիտտը գրեց. «Թուրքիայի պետության գոյությունն անհրաժեշտ է եվրոպական հավասարակշռության համար»։ Իսկ Ռոզենբուրգը «Ընդհանուր զինաթափությունը և Թուրքիայի բաժանումը» գրքույկում պահանջում էր Թուրքիան բաժանել, որովհետև այն վաղուց արդեն ցույց էր տվել իր կատարյալ անընդունակությունը առաջադիմելու և նույնիսկ իր գոյությունը պահպանելու գործում[2]։

Այդ իրողությունը նկատել էր նաև Մարքսը. «Միայն այժմ, երբ օսմանյան կայսրությանը հասցրին հիմնավոր խարխլման, գտնում են, որ կարելի է թողնել փլուզման եզրին գտնվող այդ պետությունը՝ եվրոպական հավասարակշռությունը պահպանելու պատրվակով...»[3]։

«Եվրոպական տերությունները միշտ Թուրքիային թողնում էին կատարել իր արյունալի գործը, մինչև որ գալիս էր պահը, երբ հարմար էին գտնում միջամտության համար։ Քաջ գիտենալով, որ իրենք պետք է գժտվեն օսմանյան հողի բաժանման խնդրում, մեծ տերությունները Թուրքիային թույլ էին տալիս արյան մեջ խեղդել ամեն բողոքողի կամ ապստամբական գործողություն, որն առաջ էր գալիս քրիստոնյա ժողովրդի զայրացած գիտակցությունից և, այդպիսով, ձգտում էին թուրքի ձեռքով՝ 1. վերջ տալ այն տարրերի գոյությանը, որոնք իրենց գործերով կարող են մի օր օսմանյան հողի ժառանգորդները դառնալ, ժառանգություն, որը Եվրոպան էր ցանկանում յուրացնել... 2. որքան սուղ գնով էլ լինի՝ պահպանել օսմանյան կայսրությունն այնքան ժամանակ, մինչև պետություններից մեկը կամ մյուսը հարմար կհամարի հափշտակել նրանից համեղ կտորներ և ձեռք բերել գերիշխող ազդեցություն Թուրքիայի ճակատագրի նկատմամբ»[4]։

Մեծ տերությունները կամա թե ակամա դարձան Մեծ մարդասպանի գործակիցը։

Օսմանյան կայսրությունը հետամնաց գյուղացիական երկիր էր։ Նրա 28 միլիոն ազգաբնակչությունից 24 միլիոնը զբաղված էր գյուղատնտեսության մեջ։

Եթե սեփականության առումով գերիշխողը խոշոր հողատիրությունն էր, ապա հողօգտագործման ասպարեզում՝ մանր տնտեսությունները, այսինքն՝ խոշոր հողատերերին, պետությանն ու հոգևորականությանը պատկանող հողերը մշակվում էին գյուղացիական մանր տնտեսությունների միջոցով։

Սակայն այս հետամնացությունն արտահայտվում էր ոչ միայն տնտեսության մեջ, այլև հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։

Ժամանակակիցներից մեկը գրել է. «Թուրք ազգը անընդունակ է կուլտուրական առաջընթացի, և այն ժողովուրդները, որոնք պատմական հանգամանքների բերումով հայտնվել են Թուրքիայի գերիշխանության տակ, դատապարտված են եղել կրելու.. մտավոր, բարոյական ու սոցիալ-տնտեսական ամլության լուծը»[5]։

Այո, 19-րդ դարի քաղաքակրթությունը թափանցել էր Ամերիկայի նույնիսկ խուլ անկյունները, Աֆրիկայի վայրենությունից նոր ելած երկրները, բայց այդպես էլ չկարողացավ «ծակել Թուրքիայի ժանգոտած վահանը... Քաղաքակրթությունը հպանցիկ քամու պես քսվում էր Թուրքիայի սահմանին կամ հուշիկ սահում նրա կողքով դեպի Աֆրիկա, անզոր՝ դույզն-ինչ թարմացնելու թուրքական կյանքի ապականված մթնոլորտը։ Թուրքիայի ֆեսի ծոպերը թրթռում էին քամուց, բայց նրա գլխում հնացած մտքի կաղապարված շերտերը մնում էին անհողդողդ։

Ամեն մի բարի պիտավորություն, առաջադիմական

փորձ, մշակութային զարգացման յուրաքանչյուր ձեռնարկ, որ նշմարվում է..., Թուրք կառավարությունն, առանց խտրություն դնելու միջոցների մեջ, կատաղորեն արմատախիլ է անում... նրա բռնապետական դիմագիծը, կառավարման ձևերը հենվում են Թուրք ժողովրդի տգիտության վրա։ Նրա կարծրացած նախապաշարումների, կրոնական մոլեռանդության և օտարատյաց ու վայրենի բնավորության վրա։ Այդ Թուրքիան մշտապես առկա և անասան խոչընդոտ է բոլոր այն ազգերի առաջադիմությանը, որ դժբախտություն ունեն կրելու նրա հպատակության վայրենի ու մահացու լուծը։ Անկասկած է, Թուրքիայի առաջադիմությունը կատարելապես անհնար է...»։

«...Հարկերի հավաքման անօրեն ու կամայական եղանակներ, պաշտոնական բոլոր օղակներում կատարվող դողություններ, կաշառակերություն, անօրինականություններ, երկրում արդարության լիակատար բացակայություն, ամեն տեսակի անկարգություններ կառավարչական գործերում, մի խոսքով, բաբիլոնյան խառնաշփոթ ու քաոս,— ահա Թուրքիան իր ճշմարիտ կերպարանքով»։

***

Օսմանյան կայսրությունը ոչ միայն ժողովուրդների բանտ էր, այլև գերեզմանոց։ Հպատակ ժողովուրդները հեծում էին ռազմա-ֆեոդալական այդ բռնակալության ճիրաններում։

Եվ ամենածանրը հայ ժողովրդի վիճակն էր, նրա նկատմամբ կիրառվող քաղաքականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ բացահայտ ցեղասպանություն։

1888 թվի նոյեմբերին «Հնչակը» գրեց. «Ներկայիս Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապես և տնտեսապես ստրկական կացության կերպերի մի շղթայակապ զանգված է։

Ժողովուրդը կքված է ուղղակի և անուղղակի բազմաթիվ ծանր հարկերի տակ, որոնք կրկնապատկվում, եռապատկվում են քայքայվող և սնանկացած կառավարության հաճախակի կրկնվող ֆինանսական ճգնաժամերի ժամանակ. նույնիսկ հողը շարունակաբար բռնի կերպով հափշտակվում է կառավարության կողմից... Այդպիսի պայմաններում բանտարկված ու շղթայված ժողովուրդն աշխատում և բանում է բացառապես կառավարությանն ու իշխող դասակարգերին կերակրելու համար։

Քաղաքականապես նա լիովին իրավազուրկ է, դատապարտված է ստրկական լռության, հնազանդության, անիրավ՝ դատարանում վկայություն տալիս, մեղավոր՝ եթե իրեն սպանելիս պաշտպանվում է, հանցավոր՝ եթե հառաչում ու լալիս է իր թշվառ վիճակից, կրոնով հալածված, կայքն ու կյանքն անապահով, վայրի ցեղերի ավերիչ ու անարգել հարձակումներին ենթակա, և այդ ամենով հանդերձ՝ մատնված աղքատության ու ֆիզիկական բնաջնջման»։

Թուցիկ անդրադառնանք 19-րդ դարի վերջերին արևմտահայության տնտեսական ու քաղաքական վիճակին։

Նախ՝ հարկերի ու հարկահանության մասին։

Ըստ օսմանյան օրենքի, 17 տարին լրացած 135 հոգուց մեկը զինվորագրվում էր։ Մնացած 134-ը պետք է 50 ոսկի վճարեին, այսինքն՝ յուրաքանչյուրը տարեկան 37 դուրուշ։ Հայերի համար, սակայն, այդ օրենքը չէր գործում։ Հայի տարիքը հաշվի չէր առնվում։ Հարկ էին վճարում արական սեռին պատկանող բոլորը, սկսած «օրորոցի կաթնակերից մինչև վերջին ծերը, հաշմանդամը, կաղը, կույրը, ինչպես նաև ուսուցիչները» (Թուրք ուսուցիչներն ազատ էին զորակոչվելուց և հարկ չէին վճարում)։ Սա կոչվում էր գլխահարկ կամ զինվորական հարկ։

Հողային հարկ կամ տասանորդ՝ եկամտի տասը տոկոսը։ Թուրքերը ևս այս հարկը վճարում էին, սակայն տարբերությունն այն էր, որ հայերի եկամուտը արհեստականորեն բարձրացնում էին և նրանցից շատ հարկ էր գանձվում։

Քաղաքներում ևս կար եկամտահարկ՝ առևտրից ու արհեստից ստացված եկամտի հինգ տոկոսը. տարեկան երկու փարա երկրագործության փոխառության ֆոնդի և հասարակական նշանակության շինարարության, ինչպես նաև կրթության համար։ Քանի որ արհեստներն ու առևտուրը հիմնականում հայերի ձեռքին էին, ապա, օրինակ, Սե-

բաստիայի նահանգում այդ հարկերի երեք քառորդը վճարում էին հայերը։

Կար նաև ուսման տուրք, որի գումարները հիմնականում ծախսվում էին հարուստ մահմեդականների երեխաների համար ստեղծված դպրոցների կամ կրթության հետ առնչություն չունեցող այլ բնագավառներում։ Հայկական դպրոցների վրա պետությունը երբեք որևէ գումար չէր ծախսում։

«Կոչնակ Սեբաստիո» թերթի վկայությամբ հարկ էր պահանջվում նաև մորթված անասունի կամ ունեցվածքի վաճառքի համար։

Գյուղացիներից վերցնում էին նաև արհեստավորների ու առևտրականների համար սահմանված եկամտահարկը։ Այսինքն, գյուղացին եկամտահարկ էր վճարում երկու անգամ։ Նա վճարում էր նաև քաղաք մտնելու տուրք, անտառի հարկ, որ կազմում էր գնված անտառանյութի տասը տոկոսը։ Տուրք էր վճարվում նաև որսի և ամուսնության համար։ Չնայած ճանապարհաշինության համար ևս հարկ կար, բայց գործնականում բոլոր ճանապարհները կառուցվում էին հայերի անվճար աշխատանքով կամ նրանց թալանելու միջոցով։

Այժմ՝ հարկերի գանձման ձևերի ու մեթոդների մասին։

Գյուղացու հավաքած բերքի չափը որոշում էր հարկահավաքը, որը գավազանով իբր չափում էր շեղջի տրամագիծը ու ասում քանակը։ Նա գյուղացուն խաբում էր, և վերջինս այդ գիտեր, բայց առարկելու իրավունք չուներ։ Հաճախ տասանորդը պահանջում էին փողով և «փողից զուրկ գյուղացին ստիպված էր ամենացածր գնով կալում ցորենը վաճառել դրամատերերին»։

Գյուղացին նաև պարտավոր էր առանց վարձատրվելու, որպես հարկ, հավաքված մթերքները տեղափոխել պետական պահեստները։

«...Երբևիցե քաղցած ու լքված, լկտի հացկատակ Թուրքը այդ պահին (հարկ հավաքելիս) հայի հարկի տակ խրստապահանջ ու անդուսպ բռնավոր է դառնում, ավելի՝ քան փաշան իր պաշտոնում և սուլթանը իր գահին։ Գյուղացիների խորոված գառները, ոչխարները, հավերը, սերն ու կարագը, կաթն ու ձվածեղը զարգարում են այդ երբեմնի մուրացկանների սեղանները, որոնց քիմքը այդ պահին նրբանում է վերին աստիճանի...»[6]։

Ահա մի այլ վկայություն ևս. «Հարկահան զափթիները խմբերով են ուղարկվում գյուղերը հարկահավաքության։ Այդ ժամին գյուղը, որտեղ գտնվում են զափթիեները, մի ողբալի պատկեր է ներկայացնում։ Հավ, ոչխար, տավար, ձի, զանազան մթերքներ և դրանց հետ գյուղացու աղջիկը, կինը, բոլորը այդ ժամին գտնվում են այդ զափթիեների քմահաճույքի ու կարգադրության տակ... և լաց, կոծ, մրթմրթոցներ, դժգոհություն, սպառնալիք, ծեծ, հիշոց, ամեն ինչ խառնված է և ներկայացնում է մի տարօրինակ շուկա, որն իր աղմուկով ու տեսքով դառը, շատ դառը ազդեցություն է գործում»։

Տասանորդ հավաքելու մասին «Հնչակին» գրում են. «Ամեն մեկ գավառի գավառապետ իր պաշտոնյաների հետ միասին որոշյալ օրերը ժողով են գումարում՝ իրենց գավառի գյուղերը վաճառելու քաղաքում գտնվող հարուստ մարդկանց։ Հարկավ սահիկներին է վերապահվում գյուղը գնելու արտոնությունը, թեև հայերն էլ իրավունք ունեին։ Գավառապետ փաշան հայտնում է գյուղի գինը... Թուրք աղաները ոչ մի գնի առաջ կանգ չեն առնում, քաջ իմանալով, որ մեկի փոխարեն կարող են տասն առնել, իրենց թիկունքին ունենալով լիրը ու հարստահարիչ կառավարությունը։

Տվյալ գյուղը գնած «մուլթեզիմը» տասանորդ իրավունք ունի առնելու գյուղական ամեն տեսակ արդյունաբերությունից, հողից, հացաբույսերից, այգիներից, պտղատու ծառերից և այլն... Մեր ինքնագոհ մուլթեզիմը փառավորապես ձին հեծած, մի քանի փոքրավորներ էլ ետևից՝ դիմում է իր անմեղ զոհերի բնակավայրը, վաղօրոք իր մտքի մեջ որոշելով, թե քանի հայ գեղջկուհիներ իր գազանային կրքի զոհ պիտի լինեն, քանի խեղճերի տուն պետք է հիմնահատակ անի և որքան հարստություն պետք է դիզի»։ Գյուղացիները գալիս են նրան դիմավորելու և անմիջապես այդ անկոչ հյուրի համար սեղան են գցում։ Եվ վայ գյուղացուն, եթե ճաշը մուլթեզիմի դուրը չեկավ, նա կգանակոծվի, նրա կինը ևս։ Ո՞ւմ բողոքի։ Մուլթեզիմը գյուղ է գալիս կալսելու ժամանակ։ Գյուղացին նախ

բավարարում է նրա պահանջը, ապա՝ շարչիների, եկեղեցու, աղայի, իսկ մնացածը՝ իրենց»[7]։

Թուրքերն առանց երկնչելու այս ու այնտեղ հայտարարում էին. «Մենք մեր մարգարեից պատվեր ունենք գյավուրներին օրական երեք անգամ ծեծելու։ Նրանց հացը մեզ հալալ է. նրանց գեղեցիկները պետք է լինեն մեր հարեմների զարդը»։

Հարկահավաքման ժամանակ Թուրքերն ու նրանց կողմից հովանավորվող քուրդ աղաները գործադրում էին ամենավայրագ միջոցները։

«Գյուղացու ստացած բերքի կեսը կառավարության հարկահավաքն է տանում, մեկ քառորդը՝ գյուղի աղան, և մնացած մեկ քառորդն է մնում գյուղացուն»։

Քրդերն ու չերքեզները ոչ միայն հափշտակում էին հայերի հողերը, այլև նրանց հարկադրում այդ հողերի համար հարկ վճարել։

1890 թ. սեպտեմբերի 12-ին Քարաբերդում Պոլսից ստացվեց հետևյալ հեռագիրը. «Այդտեղի լրտեսներին տրվող աշխատավարձը անմիջապես թեմերթեթ տուրքերի վրա թող ավելացվի. չլինի թե կառավարական դրամարկղից վճարվի, քանի որ լրտեսները հայերի համար են, հարկ է, որ նրանց աշխատավարձն էլ հայերը վճարեն»։

«Կոչնակ Սեբաստիոն» 1891 թ. հուլիսի 17-ին գրեց, թե երբ գյուղացին ի վիճակի չի լինում հարկ վճարել, հարկահավաքները «չեն վարանում գործադրել այն բոլոր պատիժները, տանջանքները, որոնք ինկվիզիցիան մոռացել էր, կամ մտքովն իսկ չէր անցկացրել. անասունների գոմերը, նկուղները, ածխանոցները, թոնիրները բանտերի էին վերածվել, գյուղացուն մերկացրած, ձեռներն ու ոտները պարանով կապած, գլխիվայր կախում ու գանահարում են, ձմռանը նրանց վրա սառը ջուր են լցնում և «գիշերները թողնում դրսում՝ ձյան ու սառնամանիքի տընօրինությանը»։ Պատիժը գործադրվում էր «նույնիսկ իրենց վայրենի երևակայության, եվարճության ու հաճույքի համար»։

Օրինակները շատ-շատ են։ Միայն մի մասի թվարկումը ընթերցողին կարող է զայրույթի տենդի մեջ գցել։

Ավարառություն էին կատարում նաև Թուրքական զորքերն ու ոստիկանությունը։ Հարյուրապետ Իսկենդերը 20 ոստիկանով գյուղից գյուղ էր շրջում և ամենաբազմաբնույթ ու բազմատեսակ կամայականություններ կատարում։

«... Զորքերը,— գրում է «Հնչակը»,— այնքան չարիք են պատճառել տեղացիներին, որ գյուղացիները խնդրում են կառավարությունից դրանց խնուսից հանել։ Քրդերի հարբստահարություններն ավելի տանելի էին, քան զորքերինը»։

Գյուղացիներին առանց պատճառի ձերբակալում էին և ապա կաշառք վերցնելով բաց թողնում։ Մի համիդիե կայմակամ դժգոհում էր. «Կառավարությունը մեզ թալանելու բան չթողեց։ Ինքն է հայերին կողոպտում»։

Հարկերը օրեցօր աճում էին։ 1891 թվին Մուշից գրում էին. «Խարաջը, որ առաջ 20 ղուրուշ էր, այժմ դարձել է 40, իսկ այս տարի 60 ղուրուշ են ուզում»։ Խարաջ են գանձում «նորածին մանուկից սկսած՝ մինչև 80 տարեկան հոգեվարքի մեջ գտնվող ծերունին։ Շատ տներ 10—20 մարդու համար հարկ են վճարում, շատերը 20—30 տարի պանդուխտ են լինում, բայց նրանց էլ են հաշվում ու նրանց համար էլ հարկ վերցնում»։

Զարշամպայից 1892 թ. հուլիսի 10-ին գրում են, որ հայը մարաբա է ու «մշակում է հողը և արդյունքից վարձ է տալիս հողատիրոջը։ Այդ վարձի չափն այնքան է, որ իրեն՝ մարաբային, շատ քիչ բան է մնում՝ չոր հաց»։ Ահա և այլ վկայություն.

«Սոսկալի հարստահարություններին ենթակա հայը... երկրագործ էր, բայց եզ չուներ, կով չուներ, հաց չուներ, ոտքերը բոբիկ էին, գլուխը՝ բաց»։ Գյուղացին սնանկանում էր, խրվում պարտքերի մեջ, ընկնում վաշխառուի թակարդը։ Նա պարտք էր վերցնում աներևակայելի մեծ տոկոսներով. հաճախ տոկոսն ավելի մեծ էր, քան պարտք վերցրած գումարը։

Արևմտյան Հայաստանում սոցիալական մի այնպիսի հրեշավոր աղետ, ինչպիսին սովն էր, կրկնվում էր գրեթե ամեն տարի։ «Սով է Հայաստանում, հայ ժողովուրդը ընտանիքներով է գաղթում... Սովից մարդիկ մեռնում են այն երկրում, ուր ոչ երաշտ է եղել, ոչ մորեխ երևացել և ոչ էլ բնական աղետ պատահել։ Սովից մեռնում են այն

երկրում, որը հայտնի է իր առատությամբ, ճոխ ու հարուստ բնությամբ, ուր ապրում և աշխատում է մի աշխատասեր ժողովուրդ[8]...

Պատճառը, մի կողմից ծանր, միանգամայն անտանելի, հետզհետե աճող հարկերն էին, վաշխառուների, կապալառուների, աղաների, հարկահանների կեղեքումները, մյուս կողմից պաշտոնյաների զեղծումները, տուգանքները, քուրդ ավազակների թալանն ու հափշտակությունը, տուն ու ունեցվածք ավարի ու հրկեզի ենթարկելը և, վերջապես, «ինքը՝ ճոխ, մարդկային արյունով ներկված Ելտզի պալատի գահակալ սուլթան Համիդը, այս բոլոր արյունարբուների խմբապետը, շրջապատված իր նմաններով, որոնց կյանքի միակ նպատակը զվարճությունն է ու անասնական կյանքը, որոնք իրենց գոյությունը պահպանում են հազարավոր զոհերի արյունը ծծելով... ահա թե որտեղ պիտի փնտրել սովի ու գաղթականության բուն արմատները»[9]։

Սուլթանական կառավարությունը սովը քաղաքական զենք էր դարձրել իր հակահայկական նպատակներն իրագործելու համար։

Ամեն տարի հավաքած հացը վաճառքի էր հանվում, իսկ 1893 թվին Մուշ քաղաքում այն ամբարվեց և չվաճառվեց, որի պատճառով երկու անգամ բարձրացավ հացի գինը։ Սովի վտանգը խուճապ էր առաջացրել։ Գյուղացին ու արհեստավորը իրենց ունեցածը վաճառում էին հաց գնելու համար։ Արգելվեց դրսից քաղաք բերված հացը գնել առանց ոստիկանության գիտության։ Սկսեցին հայերի բնակարանները խուզարկել ու եղած հացահատիկը բռնագրավել։ Այսինքն, կառավարությունն ամեն ինչ անում էր արհեստական սով առաջացնելու համար։ Պատահական չէ, որ թուրքերի տները չէին խուզարկվում, դրսից բերած հացահատիկը նրանցից չէին խլում։ Դեռ ավելին, հայերից խլած հացահատիկը էժան դներով վաճառում էին թուրքերին։

Սովի պատճառներից մեկը «Հնչակը» համարում էր այն, որ հողը գյուղացու համար բեռ էր դարձել, այն շահութաբեր չէր, և գյուղացին հողի մի մասն էր միայն մշակում։

1894 թվին Մշո դաշտի յուրաքանչյուր հինգ արտից միայն մեկը մշակվեց։

Գյուղացին արտադրանքի ավելցուկն իրացնել չէր կարողանում, որի հետևանքով դրամ չուներ և ընդունակ չէր հարկ վճարելու։

Կյանքի ծանր պայմանների պատճառով համաճարակներն իրար էին հաջորդում՝ խլելով մեծ թվով մարդկային կյանքեր։

«Խոլերան,— գրում էին Ամասիայից,— այդ սարսափելի համաճարակը, համագործակցելով սովի հետ, սկսել էր սարսափելի կոտորածներ անել։ Սեբաստիայի նահանգում... Թուրք պաշտոնյաներն էլ իրենց հերթին աջակցում են այդ սոսկալի երևույթին։ Տեղի բանտում երևացել է տիֆը, իսկ կառավարությունը ոչ մի ուշադրություն չի դարձնում, նրա ուղածն էլ այդ է»[10]։

Լայն տարածում ստացավ արտագաղթը։ Փակուղու առաջ կանգնած հայը հեռանում էր իր հայրենիքից։ Դրա հետևանքով, ինչպես նշում է ժամանակակիցներից մեկը. «Պարարտ արոտավայրերը և լեռները մնացել էին առանց խաշնարածի և հովվի։ Մի ժամանակ հայ գյուղացիներով շեն վայրերը դարձել էին որջ՝ բաշիբոզուկ կառավարության լիրը ու ավազակ պաշտոնյաների, համիդիեների և զափթիաների համար։ Հացի առատությամբ նախկինում հռչակված Արճեշը (Քաջբերունիք), Ալշավազը և Ալաշկերտը հեծում էին սովի ճիրաններում, որովհետև հողի հիմնական մշակը՝ հայը, չկար. մի մասը կոտորվել էր, մյուսները բռնել էին գաղթի ճամփան»։

***

Սահմռկեցուցիչ դարձան քաղաքական հալածանքները, բռնաբարություններն ու ցեղասպանության կիրքը։

1889 թվի դեկտեմբերին պատրիարքարանը սուլթանին մի տեղեկագիր ուղարկեց, հրավիրելով նրա ուշադրությունը «Հայաստանի այժմյան ողբալի վիճակի վրա՝ նախկին սուլթանների կողմից հայերին տրված այլևայլ առանձնաշնորհները չօգտագործելու, գավառների մի քանի առաջնորդների բռնի կ. Պոլիս տանելու, տարիներ ի վեր տեղի

ունեցած վայրագ հարստահարությունների ու այլնի» վրա[11]։

Սուլթանը որոշել էր բնաջնջել հայերին և մտքում ծիծաղում էր պատրիարքի միամտության վրա։

Համիդը միայնակ չէր գործում. դա թուրքական ազգային քաղաքականություն էր, իսկ սուլթանը՝ այն գործադրող գլխավոր ուժը։ «Թուրքական զորքերը, որպես ուղղակի գործիք, հայկական կոտորածների մեջ իրենց հսկայական մեղքն ունեին. նույն մեղքն ունեցավ և թուրք ժողովուրդը։

— Այն հայտարարությունը,— գրում է Ա. Սապահ Գուլյանը,— թե հայերի կրած տառապանքները հար և նման են թուրքերի կրածին, որ թուրքական կայսրությունում եղած բոլոր ժողովուրդները նույն հալածանքներին, նույն տանջանքներին, նույն զրկանքներին էին ենթարկված, կարող է ասել նա, ով աչք է փակել տիրող իրավանության առաջ։ Հային վերացնում են իր երկրից, ստիպում հեռանալ իր օջախից, կառավարության կարգադրությամբ նրան զրկում են իր հողից»[12]։

Սուլթանն ամեն ինչ անում էր իր դիվային ծրագիրն ու դրա իրագործումը աննկատ դարձնելու համար։

Նա արտասահման ուղարկեց մի բարձրաստիճան գործիչի՝ արտասահմանյան մամուլը կաշառելու և հայերի օգտին հրապարակումները ձախողելու համար։ Վերադառնալիս այդ գործիչը իր հետ տասնհինգ օտարերկրացի թղթակից բերեց և նրանց, բարձր հոնորարներ նշանակելով ու կաշառելով՝ ուղարկեց հայերին վարկաբեկող հոդվածներ գրելու։

Այդ նույն նպատակով սուլթանը հրապարակավ հայտարարեց, թե ինքը «ներում է շնորհել հայ քաղաքական բանտարկյալներին»։ Երբ այդ լուրը Տրապիզոն հասավ, վալին բանտից ազատեց քաղաքական բանտարկյալներին։ Շուտով Պոլսից հեռագիր ստացվեց. «Անմիջապես բանտարկել արձակվածներին, որովհետև ներում է շնորհված Պոլսի բանտարկյալներին միայն»։ Ընդամենը տասնմեկ հոգու։

Պատմական իրականությունն այն է, որ օսմանյան իշխանությունները ոչ միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, այլև կայսրության գոյության առաջին իսկ տարիներից, բոլոր միջոցներով աշխատել են հայերին դարձնել մի կաստա,

որի պարտականությունը լիներ միայն աշխատելն ու թուրքերի համար բարիք ստեղծելը։

Բռնակալի քողարկված նպատակն էր հայերի մեջ մեռցնել մարտական ոգին, թողնել միայն աշխատելու և համակերպության բնազդը։ Կազմակերպված հարձակում սկսվեց հայ մտավորականության դեմ, ստիպելով նրան մտածել միայն գոյությունը պահպանելու մասին։ Հայերին ջանում էին հեռու պահել ռազմավարական արվեստից, նրանցից խլում էին զենքերն ու մյուս պաշտպանական միջոցները, թողնելով միայն մի «զենք»՝ գութանը։

Հայը շրջելու, խանութ բացելու և առևտուր անելու, եկեղեցի գնալու համարձակություն չուներ։ Փողոցում թուրքը հային ամեն տեսակի վիրավորանք էր հասցնում, բայց հայը նույնիսկ մի բառ ասելու իրավունք չուներ, քանի որ զանազան հանցանքներ հնարելով՝ թուրքերը նրան բանտ էին նետում։ Սովորաբար, որպես պատրվակ, օգտագործվում էր «կոմիտեի անդամ» լինելու շինծու մեղադրանքը։ Հայը թուրքից իր պարտքերը պահանջելու իրավունք չուներ։ Այլ վայրեր գաղթելն էլ անհնար էր, որովհետև «հինգ ղուրուշ արժեցող անձնագրի համար վերցնում էին 100 ղուրուշ»[13]։

Օսմանցի կառավարողները լավ էին հասկանում, որ իրենց լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ճարտարությունը, աշխատասիրությունը, առևտրի, երկրագործության մեջ հաջողությունները, ինչպես նաև նրանց մտավոր և բարոյական ուժերն ու ընդունակությունները մեծ վիհ են բացել այդ ժողովուրդների ու թուրքերի միջև։

Թուրքերը ծագումով քոչվոր ցեղեր լինելով, իրենց նախորդներից ժառանգել էին միայն պատերազմելու, ավերելու ու թալանելու հատկանիշները։ Աշխատասիրությունը, կառուցելը, արարելը, առաջադիմությունը խորթ էին նրանց։ Նրանք քաղաքակրթության պատմության մեջ իրենց հաստատեցին որպես օտարակեր ցեղ։ Միայն այդ կերպ կարելի է բացատրել նրանց գազանաբարո վերաբերմունքը էությամբ արարող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ։

Այդ գազանաբարո վարքը ավելի ցայտուն դրսևորվեց, երբ քրիստոնյա ժողովուրդների մոտ իրենց անտանելի վի-

ճակի դիտակցությունը ընդվզման վերածվեց։ Տվյալ ժամանակահատվածում թուրք կառավարող շրջանները ելքը տեսան հայերի բնաջնջման մեջ։

Կարինի վալին հայ հարուստների հավաքի ժամանակ հայտարարեց. «Կառավարության ու երկրի համար ամենավնասակարները հայերն են, և նրանց բնաջնջումը ամենակարևոր պետական գործն է»։

Բնաջնջման մեթոդներն ու ձևերը բազմազան էին ու բազմատեսակ։ Անդրադառնանք դրանցից մի քանիսին։

Մշո դաշտում «կառավարության գաղտնի հանձնարարությամբ քրդական մի ավազակախումբ է ստեղծվել, որը շատ գյուղեր ու մարդկանց է թալանում։ Բերդակ գյուղում վեց հայերի թալանեցին, իսկ իշխանությունը դրա համար տասներկու հայի բանտ նետեց»։

«Քաբաբերդում կազմակերպված էր նման չորս ավազակախումբ՝ յուրաքանչյուրը 30—40 հոգուց բաղկացած։ Նման ավազակախմբերից բացի գործում էին տելուների, հայթաների, ենիչերիների շարժման հրոսակախմբեր, որոնք անարգել սպանում էին, ասպատակում ու քանդում խաղաղ ժողովրդի տուն ու տեղը»։

Ալաշկերտի Մազրե գյուղի անասունները գողանում են։ Հայերը բողոքում են, որ այդ արել են Այիբ փաշայի մարդիկ։ Կայմակամը վկա է պահանջում։ Բերում են մի հայի։ «Հայի վկայությունը չի անցնի»,— հայտարարում է կայմակամը։

Հայերի վիճակը հուսահատական էր և անելանելի այն պատճառով, որ նրանք զենք կրելու իրավունք չունեին և անկարող էին պաշտպանվել կառավարության քաջալերանքը վայելող զինված մուսուլմաններից։

Բայազետից գրում էին. «Կառավարությունը բոլոր պաշտոնյաներին մեկական հրացան տվեց։ Իսկ ղստիկանական հարյուրապետ Իսմայիլ էֆենդին այստեղի թուրքական տներից յուրաքանչյուրին երկու հրացան և 100 փամփուշտ տվեց...»։[14]

«Այս ձմռան սկզբին,— գրում էին Մուշից,— հուքմաթը Դաշտի գյուղերը ժանդարմներ ուղարկեց, որոնք հայ ժողովրդի զենքերը հավաքեցին տարան։ Հրացան, խանչալ,

նաչախ, պչախ՝ բոլորը տարան, մինչդեռ զինված քրդերը ազատ շրջում էին սուրմելի, խափախլի հրացաններով...

Ասում են, թե օսմանյան կառավարությունը հավասար աչքով է նայում հային ու քրդին, ինչպե՞ս չէ, ահա փաստը՝ մեկն անզեն է, մյուսը ոտից գլուխ զինված»[15]։

Հայերը տևականորեն ու անպատիժ ենթարկվում էին ամենաբիրտ ու դաժան հալածանքների, ոտնատակ էին արվում նրանց մարդկային արժանապատվությունը, պատիվը, կյանքը, այն ամենը, ինչ ազատ մարդուն տարբերում էր ստրուկից։

Պոլսի 1890 թվի ցույցից հետո իրենց բնակավայրերը «երթալ ուզող հայաստանցիներին կառավարությունն անցագիր չէր տալիս, մինչդեռ, միայն մեկ շաբաթվա ընթացքում երեք հարյուրից ավելի զինված քրդեր մեկնեցին Հայաստան... Կառավարությունը նրանց ոչ միայն զենք էր տվել, այլև յուրաքանչյուրին չորս օսմանյան ոսկի՝ որպես ճանապարհածախս...»։

Հատկանշական է նաև հետևյալ փաստը։ Միլլի աշիրեթության ապստամբության ժամանակ մի քանի թուրք զինվոր է սպանվում։ Սուլթանն իր մոտ է կանչում քուրդ երեվելիներին ու հանդիմանում. «Մենք ձեզ զենք տվեցինք հայերին և ոչ թե զինվորներին կոտորելու։ Ինչ է, հայերը վերջացե՞լ են»։

Իրավունք չունենալով զենք կրելու և ինքն իրեն պաշտպանելու, հայը կամ պետք է զոհ դառնար ցանկացած մուսուլմանին, կամ պիտի ընկներ այս կամ այն բեկի հովանավորության տակ՝ դրա դիմաց վճարելով իր աշխատանքի արդյունքը և ունեցվածքը։

Մարքսը նկատել է, որ սուլթանը օգտագործելով Ղուրանը, «անհավատներին հայտարարում է օրենքից դուրս» և մուսուլմանների ու անհավատների միջև ստեղծում շարունակական թշնամանք[16]։

Հպատակ ժողովուրդների ուշադրությունը դասակարգային և ազգային-ազատագրական պայքարից շեղելու նպատակով, Համիդը իր քաղաքականության համար զենք դարձրեց պանիսլամիզմը՝ սուլթան խալիֆի գլխավորությամբ աշխարհի բոլոր մուսուլմանների միավորման մեծապետական, շովինիստական, ֆաշիստամետ տեսություն-

նը, որը հետամտում էր մի ծրագիր, ըստ որի օսմանյան տիրապետության տակ պետք է առնվեր նաև Ռուսաստանի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Եգիպտոսի, Հյուսիսային Աֆրիկայի մահմեդականությունը։

Անզուսպ հարձակումների է ենթարկվում մշակութային կյանքը։ Փակվում էին մեծ թվով դպրոցներ, հալածվում գրականության և արվեստի գործիչները։ 1870-ական թվականներին Կ. Պոլսում հրատարակվող հիսուն պարբերականներից մնացին միայն երեք լրագիր և մի քանի հանդես՝ ամենաչնչին տպաքանակով։ Հարձակման էր ենթակա յուրաքանչյուր առաջադիմական գաղափար, արգելված էր համաշխարհային գրականության տիտանների (Վոլտեր, Տոլստոյ, Բայրոն, Շիլլեր) ստեղծագործությունների, առաջադեմ պատմաբանների ու հրապարակախոսների մուտքը Թուրքիա։ Արգելվեց Շեքսպիրի «Համլետի» բեմադրությունը, որովհետև նույնիսկ ներկայացման մեջ թագավորին սպանելը թույլատրելի չէ։ Մոլեգնում էր գրաքննությունը, արգելված էին մեծ քանակությամբ բառեր՝ «հանրապետություն», «սահմանադրություն», «ազատություն», «հավասարություն» և այլն։

Վանից դժգոհում էին. «Գրելու, խոսելու և մինչև անգամ լաց լինելու ազատություն չունենք, ոչ միայն մեր դպրոցները սահմանափակվեցին, այլև խպառ զրկվել ենք մայրենի լեզվով գրվածքներն ուսումնասիրելուց։ Մատենագիտական որևէ գիրք հայի մոտ հայտնաբերելիս, ձերբակալում են։ Եթե այդպես շարունակվի, եկեղեցու դռները ևս պիտի փակենք, որովհետև եկեղեցական գրքերը ևս վնասակար են դիտվում»։

Լոնդոնի «Դեյլի նյուսը» գրեց. «Մի քանի թուրք զինվորներ ժամասացության ժամանակ մտնում են հայոց եկեղեցին (Բայազետում), և պատճառաբանելով, որ ժամերգության ժամանակ «թագավոր» բառը գործ են ածում աստծու, իսկ թագուհին՝ Մարիամ կույսի վերաբերմամբ, հայոց ժամասացությունը հայտարարում են դավադրություն» և, քահանայի վրա հարձակվելով, անարգում նրան։

Ամասիայում մի հայի բանտ են նետում «Բազմավեպին» թղթակցելու համար։

Երզնկայի Տանձիկ գյուղում խուզարկության ժամանակ հայտնաբերված «Հայոց պատմություն» և «Եղգարան» գրքերի համար ձերբակալվել են տասնվեց մարդ։

Կարինից «Հնչակին» գրում են, թե հայրենասիրական ոտանավորների և ազգային տոները նշելու համար բազմաթիվ հայեր են բանտարկվել։

Ալաշկերտում թուրք զինվորները մեծ թվով մարդկանց դաժանորեն ծեծեցին այն բանի համար, թե իբր վերջիններս ցանկություն են հայտնել հանդիպելու «Թայմսի» թղթակցին։ Տեղի թուրք բնակչությունը, պաշտոնատար անձանց թելադրանքով, ամենուրեք հայտարարում էր. «Հայերին բուռ դանակով պիտի մորթենք»։

Սուլթանի հայաջինջ քաղաքականության մեջ առանձնահատուկ դեր ուներ բռնի կրոնափոխությունն ու թուրքացումը։ Մասնավորապես ակտիվացել էր շեյխերի գործունեությունը, որոնք մոլեռանդ զանգվածներին գրգռում էին հայերի դեմ։

Սեբաստիայից 1882 թ. մարտի 21-ին գրում են. «Մի տարուց ավելի է, ինչ թուրքական կառավարությունը իմամի ու խոջաների միջոցով մզկիթներում թուրք հասարակությանը գրգռում է հայ ժողովրդի դեմ»։

Էրզինի մզկիթում քարոզում էին. «Ով հային իր տանը հյուր ընդունի, նա պիղծ է։ Ով հայի հետ ընկերանա, նա պիղծ է։ Հայի ապրանքն ու պատիվը մուսուլմանին հալալ են»։

Հալեպի նահանգում թուրքերի կողմից հայ աղջիկների և կանանց բազմաթիվ առևանգումներ էին տեղի ունենում։ Իշխանությունները առևանգողներին չէին պատժում, պատճառաբանելով, թե նրանք (առևանգվածները) կամավոր են թուրքացել և այդ կերպ խրախուսում էին բռնի մահմեդականացումն ու ձուլումը, փաստարկելով, թե Մուհամեդն ասել է. «Քրիստոնյա աղջիկ առևանգողի ու նրան մահմեդականացնողի ոգին իր ջեննեթի մեջ է լինում, այդ գործը բարիք է, մարդը դժոխքից փրկվում է»։ Կեսարիայում քրիստոնյա աղջիկ առևանգողը բանակից ազատվում էր։

Խստացվեց օրենսդրությունը, ըստ որի, վտանգավոր բովանդակությամբ թուղթ պահողը կամ ուրիշի մոտ տեսնողն ու չհայտնողը 1—3 տարվա բանտարկության էր դատապարտվում։ Եթե զենք էր պատրաստվում, թե՛ պատ-

բաստողը և թե՛ գնողը ենթարկվում էին տասը տարվա տաժանակրության։

Հոկտեմբերի յոթին Կ. Պոլսից գրում են. «Այժմ մայրաքաղաքում... սոսկալի տեռոր է։ Մոլեգնած գազանը ամեն օր նորանոր ձերբակալություններ է կատարում։ Բանտարկյալներից շատերն այլևս արևի երես չեն տեսնի, շատերը դատապարտված են մահվան։ Այո, մահվան։ Միջնադարյան սոսկալի շարշարանքներ են այժմ գործադրվում ձերբակալված հայերի նկատմամբ...»։

Գում Գափուի ցույցի մասնակիցների դատավարության ժամանակ ակնհայտ դարձավ, որ գանակոծելով, օրերով բանտարկյալներին քաղցած ու անքուն թողնելով, անլուր շարշարանքների ենթարկելով, տանջելու ամենակատարելագործված ձևերը կիրառելով (այս հարցում թուրքերը մրցակից չունեն) «նրանցից խոսք են քաշել»։

Մշո բանտի քաղաքական բանտարկյալները փախուստի անհաջող փորձ կատարեցին, որից հետո նրանց վիճակն ավելի ծանրացավ։

Այս բանտը նետված 92 հայեր դատապարտված էին 5—100 տարվա բանտարկության, չնայած նրանցից ոչ մեկի հանցանքը ապացուցված չէր։

Գաղաթիայի բանտում հայ բանտարկյալներին հարցաքննում էին գիշերները։ Շիկացած մետաղով դաղում էին նրանց մարմինները, մերկացրած թավալում կամ ծնկաչոք պահում ձյան մեջ ու գլխներին սառը ջուր լցնում։

Մահապատժի դատապարտված թուրքը շատ ավելի բարվոք պայմաններում էր, քան հայը, որի հանցանքը դեռ ապացուցված չէր։

Բանտում հաճախ էին բռնկվում համաճարակներ։ Սանձարձակ կաշառակերություն էր տիրում։ Թուրք բանտարկյալներին անընդհատ գրգռում էին հայերի դեմ, և հայ բանտարկյալների կյանքը միշտ վտանգի տակ էր։

1894 թ. ձմռան ամիսների ընթացքում Արևմտյան Հայաստանում ավելի քան հազար ձերբակալություն է կատարվել։

Կայսրությունում քաղաքական բանտարկյալների թիվն անցնում էր չորս հազարից։

1889 թվին Վարդենիս, Խարս, Ակրոնք, Մուշեղաշեն և

Արագիլի բույն գյուղերից բանտ նետվեց քառասունհինգ մարդ, որոնցից տասնչորսը մեռան բանտում, իսկ մնացածները աքսորվեցին։

Սասունում բանտարկված 25 հոգուց ութը բանտում մեռան ծեծից։

***

Մոլագար և կասկածամիտ սուլթան Համիդը միանձնյա լուծում էր էթնիկական խմբերի բնաջնջման հարցը։

Միայն Կ. Պոլսում նա պահում էր երեսուն հազար լրտես։

«Ֆրանկֆուրտ ցայտունգի» տվյալներով «Կայսերական պալատում հինգ բյուրո է հաստատված «կասկածելիների» մասին տեղեկություններ հավաքելու... Չկա մի մինիստր, որ աղատ լինի գաղտնի հսկողությունից»։

Գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը հետագայում խոստովանել է. «Եթե ես կատարեի, ավելի ճիշտ, եթե ես ժամանակ ունենայի կատարելու Ելտզի բոլոր հրամանները, ապա, հավանաբար, Թուրքիայում ազգաբնակչությունը կպակասեր մեկ երրորդով»[17]։

«Աբդուլ Համիդի ներքին կյանքը» գրքի հեղինակ Ֆ. Դորիսը գրում է. «Սուլթան Համիդի թագավորության ամենաբնորոշ ախտանշաններից մեկը օրինազանց նախարարներ, մարդասպան կառավարիչներ, կոտորող զինվորներ, պաշտոնական ու անհաստիք լրտեսներ, գող-ավազակների մի ամբողջ աշխարհ ծնելն էր։ Հենց նրանց միջոցով էր սուլթանը գլուխ բերում իր ավերիչ «մտահղացումները»[18]։

Լոնդոնի «Վեստմինստր գազետը» իր 1893 թվի 106-րդ համարում տպագրեց առաջադեմ հայացքներ ունեցող մի թուրքի կարծիքը օսմանյան կայսրության մասին. «Ներկա վիճակից վատ հազիվ թե հնարավոր լինի, այս կարծիքը կիսում են նաև հայրենակիցները», որոնք ամոթ են զգում տիրող իրավիճակի համար և հավատ չունեն ապագայի հանդեպ։ «Տեղյակ եք, անշուշտ, այն ընդարձակ լրտեսական դրությանը, որը օր օրի աճում է. հաշված է, որ պալատի կողմից հինսուն հազար մարդ է օգտագործվում որպես լրտես... Մարդկային հարաբերությունները կաշկանդված

են հաղարումի կասկածներով։ Ասում են, երկու փաշա, մուքն ընկնելուց հետո, չեն կարող միևնույն տան մեջ միասին գտնվել, իսկ երկուսից ավելին՝ ցերեկը, եթե հատուկ թույլտվություն չունեն։ ... Այս ամենը արտաքին նշաններն են այն քաղաքականության, որ իշխում է պալատում։ Այդ քաղաքականությունը կարող է բացատրվել մեկ բառով. ՎԱԽ։ Վերցնենք թեկուզ հայերի վիճակը, որը թերևս ամենածանրն էր։ Թուրք քաղաքական գործիչները հակված են ապացուցելու, որ Արևմտյան Հայաստան չկա։ Մեր դպրոցներում օգտագործվող քարտեզների վրա այդ անունը չի երևում։ Սակայն դրանով հայկական հարցը չի դադարում գոյություն ունենալուց...

Բոլոր նրանք, ովքեր կամովի չեն փակել իրենց աչքերը, տեսնում են, որ վերջին 20 տարիների ընթացքում շարունակ հետադիմել ու անկում ենք ապրել, անընդհատ ընկղմվել ենք տիղմի մեջ, խոր, ավելի խոր, ջանալով խաբել ինքներս մեզ և ուրիշներին, թե եվրոպական քաղաքականության արտաքին ձևերը փոխ առնելով՝ առաջադիմության պողոտայի վրա ենք։

Ռուսաստանը այն կողմից նայում ու ծիծաղում է, որովհետև գիտե, որ կորստյան ճամփի վրա մեզ օգնելու համար կարիք չի զգա մինչև իսկ մատը շարժելու»։

Ահա վկայակոչումներով, փաստերով, օտարագիր և հայագիր մամուլից մեջբերումներ անելով, փորձեցինք մոտավոր պատկերացում տալ այն դժոխային իրավիճակի մասին, որ տիրում էր Թուրքիայում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում սուլթան Համիդի տխրահռչակ թագավորության տարիներին։

Համիդյան արնաթաթախ ձեռքի ծանրությունն իր վրա զգաց նաև տարոնահայությունը, որի դառնաղետ կյանքի ու ընդվզումի որոշ դրվագներ կփորձենք քննել այս գրքում։

1889 թվին «Հնչակը» գրում էր. «Այսօր Մշո դաշտը ողողվում է հայի արյունով։

Այսօր մշեցի հայի արյունաշաղախ գլուխը բարձրացած է օդ... նիզակի ծերին ցցված։

Այսօր մշեցի հայ կինը, աղջիկը թավալվում են իրենց արյան մեջ՝ դառնալով թշվառ զոհեր քրդերի գազանային կրքերի։

Այսօր Մշո գավառի հայ գյուղացիները կողոպտվում, թալանվում, ավերվում են...

Այսօր ընդհանուր տագնապ ու սարսափն է տիրել ամբողջ Մշո գավառին, ամբողջ Հայաստանին։ Անպաշտպան, անօգնական, անուժ ու անզեն, նրանք ակամա փախչում են, պանդուխտ դառնում օտար երկրներում անիծելով այն հողը, որ իրենց սիրելի ու հարազատ էր, որը դարերից ի վեր իրենց կերակրել էր, բայց որն այժմ իրենց գլխին անվերջ թշվառությունների աղբյուր էր դարձել։

Այսօր Մշո գավառին սպառնում է կատարելապես ամայանալու վտանգը... Այսօր Հայաստանը, տեսեք, կատարելապես հանձնված է ավազակների անզուսպ կամայականությանը, դարձել է դրանց բույնը, դրանց կերուխումի շտեմարանը, դրանց ավերիչ արշավանքների ասպարեզը, Հայաստանը, հայ ժողովուրդը սպառվում, քամվում, կորչում են»[19]։

***

Սուլթանն իր հայաջինջ քաղաքականության հարվածային ուժ դարձրեց նաև վաչկատուն քրդերին։ Նա տևական աշխատանք տարավ քրդերի շրջանում հայերի նկատմամբ թշնամություն պատվաստելու, համերաշխ ապրող երկու ժողովուրդների հարաբերությունները վատացնելու համար։ Սուլթանը կարողացավ հմտորեն օգտագործել քրդերի վրա ազդելու տնտեսական, քաղաքական և հոգեբանական միջոցները։

Կառավարությունը հայերի հողերը բռնագրավում ու հանձնում էր քրդերին։ Քրդերը բնակեցվեցին հայերի հետ և հայկական գյուղերը հանձնվեցին նրանց քմահաճույքին։ Գողությունը, ավազակությունը, թալանը ավելի շատացան։ Հայերին հարկադրեցին քուրդ աղաների ու բեյերի համար ամեն տեսակի ծառայություններ կատարել։

Թշվառության մեջ ապրող ալաշկերտցիների գլխին իսկական պատիժ դարձան տեղի ու Ռուսաստանից եկած քրդերը, որոնք այլևս իրենց ձմեռանոցները չէին գնում և Թալիմ փաշայի ու կայմակամի ջանքերով ձմեռն անց էին կացնում հայերի տներում։

Արճեշի շրջանի բոլոր գյուղերում կալի ժամանակ հայտնվում էին քրդերը և յուրաքանչյուր տնից 30—50 փութ ցորեն վերցնում։

Շորտու գյուղում քրդերը մի գյուղացու սպանում են, տունը թալանում ու անպատիժ մնում։ «Իզուր են ջանում խեղճ հայերը,— եզրակացնում է նամակագիրը,— քանի որ կառավարությունը չի ցանկանում քրդերին սանձահարել։ Սպանվողը հայ չէ՞։ Կառավարության համար հայ է մեռել, թե հավ՝ նույնն է։ Դեռ ուրախ են, որ մի հայ էլ պակասեց»։

1890 թվի հուլիսի 13-ին Բաղեշից պատրիարքարանին գրում են, որ Հորմուզ գյուղում, չնայած ոստիկանական կետի առկայությանը, գալիս են 25 մոտկանցի քրդեր և հայտարարում. «Հրովարտակ է եղել, որ հայերին կոտորենք»։ Նրանք գյուղացիների հաշվին կերակրվում են, ատամի վարձ վերցնում ու հեռանում։ Իսկ Կուրավու գյուղ թաֆիր հավաքելու համար ամեն օր քրդական մի ցեղ էր գալիս։

«Կառավարությունը այդ դեպքերի մասին գիտե, բայց լռում է։ Կուսակալը հրապարակավ պաշտպանում և օգնում է քրդերին՝ անընդհատ հայերի դեմ գրգռելով նրանց...»[20]։

Փափախչ ցեղը իր արյունարբու ցեղապետ Միհր Ալիի ղեկավարությամբ 1879 թվին գալիս հաստատվում է Սեբաստիայի հարավային շրջաններում՝ բռնագրավելով տեղացիների ամենաարգավանդ հողերը։ Փոքր Ասիայում ու Անդրկովկասում հայտնի այս ավազակը վայելում էր թուրքական կառավարության հովանավորությունն ու նրանից թոշակ էր ստանում։ Ի վերջո, նրան նշանակում են գերսարգար՝ ավազակության դեմ պայքարելու կոչված զորամասի հրամանատար։ Ամենամեծ ավազակը՝ ավազակության դեմ պայքարող. զուտ թուրքական տրամաբանություն է։

Իսկ Ալաշկերտից հաղորդում էին, որ Թեմուր անունով մի ոմն քուրդ ավազակապետ տասը հոգով շրջում է հայկական գյուղերում և, բռնություններ գործադրելով, դրամ հավաքում։

Սուլթանը քրդերին հայերի հետ թշնամացնելով՝ չբավարարվեց։ Նրա նախաձեռնությամբ քրդերից ձևավորվեցին անկանոն զորամիավորումներ, որոնք սուլթանի անունով կոչվում էին համիդիե։ Այդ գնդերը հայերին բնաջնջելու համար էին ստեղծված։

Կ. Պոլսից 1890 թվի նոյեմբերի 15-ին գրում են.

«Չորրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Զեքի փաշան վերջերս այցելել է բոլոր քուրդ աշիրեթությունները և նրանց համաձայնությունն է ստացել հեծելազորային գնդեր կազմելու, իբր ռուսական ու պարսկական սահմանը՝ Հայաստանն ու Կիլիկիան պաշտպանելու համար»[21]։

Այդ հեծելազորային գնդերը կազմակերպելու համար սուլթանը իրագործ հրապարակեց. յուրաքանչյուր գունդ պետք է ունենար 1000-ական ձիավոր։ «Ռուս դեսպանը պետք է ունենար 1000-ական ձիավոր։ «Ռուս դեսպանը բողոքեց սահմանի վրա այդպիսի անկանոն զորքերի ներկայության դեմ, բայց թուրքերը շարունակեցին ավելի հառնդով կազմակերպել նման զորամիավորումներ»։

1891 թվի ապրիլի 8-ին Կ. Պոլսից գրում էին. «Երբ քուրդ ավազակ և արյունռուշտ ցեղապետներից կազմված Ֆրապիէրթուղրիլ Ղազի կոչված զորագնդերի մի մասը Ցրապիզոն հասավ, սուլթանը հրամայեց, որ հատուկ շրգենավով գնան՝ նրանց առոք-փառոք դիմավորելու և Պոլիս բերելու համար։ Սուլթանը նրանց ծախսերը հոգաց իր անձնական միջոցներով։ Մեկ շաբաթ է, ինչ նրանք մայրաքաղաքում են և շրջում են ամենայն ամբարտավանությամբ»։ Քրդական զգեստներ հագած, մեկական սրով ու խենչալով զինված այդ հեծելազորայինները հետևերը մի-մի ոստիկան առած կառքերով շրջում են քաղաքի մեջ՝ մեծարվելով ավելի քան արժանի էին։ «Այս բաշիբոզուկ հեծելազորը թե ինչ նպատակով էր կազմվել, հասկանալի է...»[22]։

«Սուլթանը,— գրում են Մուշից,— քուրդ բեյերին ու ավազակներին Ստամբուլ բերելով, փառք ու պատվի արժանացրեց։ Թե ինչ է թաքնված այդ մեծարանքի ետևում, պարզ է։ Դրանք բաց ֆարման են թագավորից՝ հայերի հետ ուզած ձևով» վարվելու։

Պոլսից վերադառնալիս, նրանք Բայբուրդի ու Կարինի մոտերքում թալանում են արտաքին աշխատանքից վերադարձող հայերին։ Հայերը գիմում են վալուն, բայց ապարդյուն։ «Ո՞վ կհամարձակվի հանդիմանել սուլթանի մտերիմ իշխաններին»։

Համիդիեների կազմավորվելուց հետո քրդերն ավելի

մարտունակ դարձան, ավելի անպատկառ ու աներկյուղ սկսեցին գործադրել իրենց նողկալի «արհեստը»։

Բուլանըխից 1891 թվի նոյեմբերի 15-ին գրում են. «Չորրորդ բանակի մուշիր փաշան, մի ամիս առաջ Բուլանըխ ժամանելով, այստեղի քրդերին (Հասնանցի), որոնց ցեղապետներն անցյալ տարի Պոլսում զինվորական պատիվ ու աստիճաններ էին ստացել, պաշտոնապես զինվորագրեց ու դասակարգեց»։

Քրդերը նախապես (մուշիրի հրամանով) հայերի ձիերը բռնագրավեցին և նրանց վրա պետական սեփականության նշան դրեցին։ «Մուշիրն այսպես բոլոր գյուղերի քրդերին զինվորագրելուց հետո, Կուշտյան գյուղում զորահանդես կատարեց... Հրամանատարները հերթով երդվեցին Ղուրանի վրա և զինվորներին գաղտնի հրահանգներ տվին հայերի վերաբերյալ»[23]։

Հոկտեմբերի սկզբներին տասնմեկ քուրդ, բոլորն էլ կառավարական «այնալի» հրացանով զինված, գիշերը հարձակվեցին Խարապաշաղ գյուղի հովիվների վրա, մեկին վիրավորեցին, իսկ երկուսին սպանեցին և հոտը քշեցին տարան։ Հաջորդ օրը քուրդ ցեղապետ Այազ աղան այդ գյուղից տասնհինգ մարդ է պահանջում օլամի՝ պարհակ կատարելու համար։ Պոլիս հրավիրված մի այլ ավազակ աղա իր մարդկանց ուղարկում է հայերի կալերն ավերելու։ Այդ օրը համիդիեները սպանում են նաև Համզաշեն գյուղի հովվին ու ոչխարը փախցնում։

Սակայն բոլոր քրդերը չէին, որ համաձայնեցին մտնել համիդիե գնդերի մեջ։ Օրինակ, Մշո հարավում բնակվող քրդական մի ցեղ հրաժարվեց համիդիե դառնալ. նենգամիտ կառավարությունը մոլլաներ ուղարկեց նրանց համոզելու և կաշառելու։ Քրդերի այս ցեղի դիմադրությունը ևս հաղթահարվեց։

Ամասիայում բանտից «ոճրագործ, գող, շնացող և այլ հանցապարտ չերքեզներին ազատ արձակելով և չերքեզ բեյերին զանազան նվիրներ տալով, նրանց համակրանքը շահեցին և հազար հինգ հարյուր հոգուց բաղկացած համիդիե գունդ կազմեցին՝ գործածելու մասնավորապես հայ հեղափոխականների դեմ»[24]։

Վանի գավառում, հայտնի ավազակ Թաֆյուրի հրամանատարությամբ, նույնպես նման մի գունդ կազմվեց։ Նրանց ավերածությունները անհավոր էին։

Բասենի գյուղերից մեկի տանուտերի մոտ համիդիեի գնդապետը մարդ է ուղարկում ու պահանջում, որ իր տասներեք տարեկան աղջկանին իրեն տա։ Գիշերը եղբայրը աղջկան փախցնում է սար։ Հաջորդ օրը համիդիեները խուզարկում են ամբողջ գյուղը, ապա հետապընդում փախչողներին։ Տղայի մոտ մնացել էր երկու փամփուշտ, նա մեկով քրոջն է սպանում, մյուսով՝ իրեն։

Տարոնում համիդիե հազարապետ Իբոն փախցնում է հայերի ոչխարները։ Գիտենալով, որ իշխանություններին դիմելն անօգուտ է, հայերը Իբոյին խնդրում են, որ նա գոնե ոչխարների կեսը վերադարձնի։ Իբոն պատասխանում է. «Թագավորն էլ եմ ես, վալին էլ, ոչ մեկից էլ չեմ վախենում, ահա ոչխարները, բայց չեմ տա»։

Վասպուրականի Գուրուպաշի դաշտում ութ համիդիեներ հարձակվում են բանջար հավաքող հայերի վրա, շորս տղամարդու սպանում, իսկ կանանց բռնաբարում։ Գյուղի հայերը սպանվածների դիակների հետ շարժվում են դեպի Վան։ Զորքերին չի հաջողվում նրանց առաջն առնել, և սգո թափորը քաղաք է մտնում։ Ի վերջո, բանտ են նետվում ոչ թե համիդիեները, այլ սպանվածների հարազատները։

Համիդիե զորամասերը գործնականում դարձան պաշտոնապես կազմակերպված ավազակային միավորումներ։

«Ո՞վ կարող է խոսել կամ բողոքել համիդիե դարձած քրդերի դեմ. տերության նշանը ճակատին, սուրը ձեռքին, հարձակվում են մշակների վրա, սպանում են, եզները տանում»,— դժգոհում են ժամանակակիցները, իսկ Կարինից գրում էին. «Համիդիե հեծելազորը չարիքներ է գործում Մուշի, Վանի գավառներում և մեր կողմերում... Հայը այլևս իր անձի, գույքի և պատվի տերը չէ... Կարինի, Ալաշկերտի ճանապարհը փակված է։ Հաղորդակցությունը դադարեցված է մինչև իսկ հայ գյուղերի միջև։ Ժողովրդի տընտեսությունը հիշյալ զորքերի պատճառով կատարելապես քայքայված և հույժ թշվառ վիճակում է։ Հեծելազորի կամայականությունների դեմ ընդվզողը մահվան է դատապարտվում։ Համիդիե զորքը երկրի համար կատարյալ պատիժ, պատուհաս է դարձել... Կառավարությունը այս ամենը լավ գիտե, բայց չտեսնելու է տալիս, քանի որ այդ ամենը

նը կառավարության թելադրանքով էր կատարվում, նա էր քաջալերում զորքերին։

Մի քանի անգամ կառավարությանը բողոքել են այդ անիրավությունների համար, բայց բողոքողներից «... շատերը պատժվեցին ու բանտարկվեցին, իբրև զորքին զրպարտողներ, պետության անհավատարիմներ և խռովարարներ»։

Համիդիե գնդերի կազմավորումով բացվեցին սուլթանի «խաղաքարտերը»։ Կույր պետք էր լինել, չտեսնելու համար, որ հայ ժողովրդին բնաջնջում էր սպասվում։

***

Բռնությունների ահավորությունն ու ծավալը հպատակ ժողովուրդներին կանգնեցրին պայքարի անհրաժեշտության առջև։

Թուրք Ֆեյզի բեյը գրել է, որ հայկական շարժումներն իրենց պատճառներն ու արդարացումն ունեն. «դրանց դրդողն ու հիմք տվողը նույն ինքը թուրք կառավարությունն է իր կաշառակեր, անբարոյական, խարդախ, տխմար պաշտոնյաներով և արատավոր կառավարական համակարգով»։ Այս հայտարարության համար Ֆեյզի բեյին աքսորեցին։

«Հայերը մեկընդմիշտ պետք է իմանան,— Մուսա բեյի դատավարությունից եզրակացրեց «Հնչակը»,— որ սուլթանի կառավարությունից արդարություն չի կարելի սպասել և մայրաքաղաք դիմելու հարկ չկա դժվար հանգամանքին, այլ թող իրենց երկրում թուրն ուղղեն հարստահարիչների դեմ...»։

Հայկական նահանգներից Կ. Պոլիս պատրիարքին գրում են. «Այլևս ազգն այնպիսի վիճակում է, որ հանդուրժելն ու լռելը հավասարազոր են կորստյան»։

«Ինչո՞ւ է գլուխ բարձրացրել հայը.

Մշտական թշվառություններն ու աղետները Հայաստանում հասել են ծայրահեղության։ Հայ ժողովուրդը կորցրել է իր համբերությունը, միակ զենքը, որով նա մինչև այսօր ընդդիմանում էր կառավարությանն ու նրա հովանավորած վայրենի ավազակների հարձակումներին, բայց

ավաղ, մի զենք, որը որպես կանոն խոցում էր հենց իրեն՝ հայ ժողովրդին։ Այո, հայ ժողովուրդը զդացել է, որ վիզ ճկելով ու մեջք ծռելով թուրքի առջև, իր դրությունը չի բարելավի։

Այո, հայ ժողովուրդը համբերությունը կորցրած, վերջապես շարժվում է։

Եվ ժողովուրդը քաջ գիտե, թե ով է իր թշնամին։ Նրա թշնամին այն ավազակախումբն է, որի անունն է «Թուրք կառավարություն» և նրա պետ բաշիբոզուկը, որի անունն է սուլթան...

Այո, հայ ժողովրդի թշնամին միայն այդ կառավարությունն է և ոչ քուրդը, որի համար ավազակությունը մեկ արհեստ է, որ նա գործադրում է անպաշտպան ժողովուրդների վրա, կառավարությունն է հայի թշնամին, որ արգելք չի ուզում դնել այդ ավերիչ հարձակումներին, այլև գազանաբար քաջալերում ու աջակցում է նրանց...»[25]։

Ահա այս եզրահանգումն էլ դարձավ ուղենիշ հայ հասարակության առաջադիմական շրջանների գործունեության համար։

Թուրքական կառավարությունը ատելի էր դառնում նաև թուրք հասարակ ժողովրդի համար։ «... Ժողովուրդը գրգռված էր, նրա դժգոհ տարրերը սկսեցին տրտնջալ։ Սկսվեց գաղտնի շարժում, խլրտում, մի շարք վայրերում երևացին հակակառավարական «հայտարարություններ»։

1892 թվին օսմանյան կայսրությունում ամենուրեք տարածվեց հետևյալ հայտարարությունը. «Օսմանցիներ, հասել է Աբդուլ Համիդ բռնակալի թագավորության վերջը, որն անպատվել է իսլամի անունը և կեղտոտել օսմանի սուրբ գահը...»։

Այդ նույն ժամանակ Արաբիայում արաբները ապըստամբեցին և պահանջեցին սուլթանից ետ տալ խալիֆի տիտղոսը։

1893 թվի հունվարի սկզբներին Փոքր Ասիայում տարածված հայտարարությունները երևացին նաև հայաբնակ շրջաններում, մասնավորապես Կեսարիայի շենքերի պատերին։ Սուլթանը հրամայեց գտնել դրանց հեղինակներին։ Պոլսից եկած փաշաները ձերբակալեցին 500 հայի ու խոշտանգեցին։

Հայերի շրջանում ընդվզումները հաճախակի դարձան։ Իշխանությունները ամեն միջոց գործադրեցին թուրք ազգաբնակչությանը հայերի դեմ հանելու համար։

Ազգամիջյան կռիվների ալիքը հասավ նաև Եոզդատ։ Այդ օրերին եվրոպական թերթերը գրեցին. «Եոզդատում փետրվարի 2-ին մի հայ, որին ուզում էին ձերբակալել, սպանել է մի ոստիկանի։ Ծագել է մեծ, արյունահեղ ընդհարում։ 100 հայ սպանվել են և 50-ը վիրավորվել։ Թուրքերից երեք սպանված կա և 8 վիրավոր։ Ամասիայում մի լրտես սպանելու համար ձերբակալվել է 28 հայ»։

Երբ այս դեպքերի մասնակիցներին դատեցին և վճռվեց նրանց ղեկավարներից Գալուստ Մորուքին կախել, նույն օրը քաղաքի մուֆթիին կախված գտան «Փոխադարձ հատուցում» մակագրությունով։

Մուֆտիի տան մոտ հայերի ու թուրքերի միջև ընդհարում տեղի ունեցավ։ Ըստ թուրքական պաշտոնական տվյալների՝ սպանվեց 20 հայ և 10 թուրք։ Կ. Պոլսից բերվեց երկու վաշտ զորք, բայց հայերը հարձակվում են և նրանց փախուստի մատնում, քաղաքում պաշարողական դրություն է մտցվում, սկսում է գործել ռազմական դատարանը։ Անատոլիայի բոլոր գլխավոր քաղաքները գործնականում պաշարողական վիճակի մեջ էին։

1894 թվի մարտի 24-ին Սամսոնում 400 զինվոր պաշարում են Մ. Մանխաջյանի տունը։ Վերջինս իր ընկերների հետ հերոսաբար դիմադրում է, բայց, ի վերջո, գնդակահար է լինում։ Քաղաքում ձերբակալվում է շուրջ 500 հայ։

Գազազած այդ ընդհարումներից, սուլթանը բղավեց. «Ես ամսական իմ գանձարանից լրտեսների բանակին 300 հազար ոսկի եմ վճարում, որպեսզի այստեղ, իմ քթի տակ, այսպիսի դեպքե՞ր տեղի ունենան»[26]։

Հուզումներն ընդգրկում են նորանոր վայրեր։

Գյուղացին դիմադրում էր։ Նորից ըմբոստանում է Զեյթունը։ Հայերը հրդեհում են Մուսա բեյի ագարակը։

Դերսիմցի քուրդ Թեմուր բեկը թալանում է պետական աղահանքերը։ Մի այլ քուրդ՝ Եուսֆ բեյը, հարձակվում է Բաղեշի կուսակալության Կողթիի կառավարչատան վրա, այն ավերում և ծառայողներին վռնդում է՝ կառավարչին

հայտարարելով, որ այլևս ո՛չ իրեն, ո՛չ վալիին և ո՛չ էլ սուլթանին չի ճանաչում։

Տրապիզոնի վիլայեթի Զարսամպա գյուղաքաղաքի ու նրա գավառակի բնակչությունը՝ հայ, թուրք, չերքեզ և հույն, հրաժարվեցին կառավարությանը հարկ վճարել։ Նրանցից մի քանիսին բանտ նետեցին։ Քաղաքի ու գյուղի բնակիչները 2—3 հազար հոգով հարձակվում են բանտի վրա և ստիպում բանտարկյալներին ազատել։

Հաջնի կայմակամ չերքեզ Ալի բեյը, տեսնելով հայերի նկատմամբ կատարվող բռնությունները և հասկանալով, որ դրանց մասին իր ահազանգերը Պոլսում դիտավորյալ անարձագանք են մնում, գնում է Ադանա և իր հրաժարականը ներկայացնում կուսակալին։ Նրան անմիջապես ձերբակալում են, մեղադրելով որպես «հայերի կողմնակից»։

Սակայն հայ, քուրդ, թուրք աշխատավորության համատեղ պայքարի օրինակները բացառություններ են։ Փաստն այն է, որ օսմանյան իշխանություններին հաջողվեց թուրք և քուրդ ազգաբնակչությանը օգտագործել հայերին բնաջնջելու համար։

Դրա հետ միաժամանակ արևմտահայության պայքարը գնալով ծավալվում էր թե՛ խորքով և թե՛ լայնքով։ Այդ պայքարում աստիճանաբար առաջատար ուժ էր դառնում հայդուկությունը։

1880-ական թվականները հայդուկային խմբերի ձևավորման տարիներ էին։ Ահա երկու լուր, որոնք գրեթե միաժամանակ ստացվել են Վանից. «Զուխ Կետույքի Կանի Ապի կոչված վայրում երեք հայրենասեր երիտասարդներ՝ Հովհաննես Ագրիպանյան, Վարդան Հարությունյան (Գոլոշյանց) և Կարապետ Գյուլաղալյան, շրջելով հայ գյուղերում, գնում են դեպի Վան...»։ Ճանապարհին նրանց դեմ են դուրս գալիս 10 զափթիե։ Սկսվում է կռիվը, որի ընթացքում Ագրիպանյանն ու Հարությունյանը, ինչպես նաև մի քանի զափթիեներ, զոհվում են։ Վանում ընդհարում է եղել հայերի ու թուրքերի միջև... Երկու կողմից մոտ 30 հոգի սպանվել են։ Թուրք կառավարությունը սոսկում է այդ տեսակ ընդհարումներից, որովհետև կարծում է, թե դա ընդհանուր հայկական ապստամբության սկիզբն է»։

Մի այլ թղթակցություն հաղորդում է. «... Հայաստանի մի քանի կողմերում ժողովրդական ոգևորություններ և ինքնապաշտպանության գործը արագ առաջ է գնում...»։

«Մեծ, արյունահեղ հուզումներ Էրզրումում,— գրեց «Հնչակը»,— հուզումներ Ալաշկերտում, հուզումներ Ջարսամպայում ու Երզնկայում, ընդհարումներ Խոտորջուրում, ընդհարումներ Վանում... Հայաստանցի հայ ժողովուրդը խլրտում, շարժվում է...»։

1892 թվի հունիսի 7-ին ձերբակալվում է սեբաստացի Համբարձում Դավթյանը։ Հարցաքննության ժամանակ նա հայտարարում է, որ սուլթանական ռեժիմը «դատապարտված է ոչնչացման և մենք ուզում ենք այդ դատավճռի գործադրողները լինել...»։

1891 թվի նոյեմբերի սկզբին հայդուկային մի խումբ, ռուս-թուրքական սահմանի վրա, Յոնջալու գյուղի մոտ, կռվի մեջ է մտնում քրդերի դեմ և շուրջ 30 հոգու սպանում։ Սակայն խումբը կիրճում շրջապատվում է ու, երբ փամփուշտները վերջանում են, զոհվում են։

Ալաշկերտում գործում էր Հարությունի հայդուկային խումբը։ 1891 թ. սեպտեմբերի 14-ին քրդերը հարձակվում են այդ խմբի վրա։ Սկսվում է կռիվը, որ տևում է մինչև երեկո։ Քրդերին օգնության են գալիս 400—500 հոգի։ Մարտի մեջ են մտնում նույնիսկ կանայք։ Հայերը կարողանում են ճեղքել պաշարման շղթան։ Այդ ժամանակ մահացու վերք է ստանում Հարությունը, իսկ նրա ընկերներին հաջողվում է հեռանալ։

Սամսոնում լայն հանաչում ուներ ախալալախցի Կարապետի հայդուկային խումբը։ Ի վերջո, Կարապետը մատնության զոհ դարձավ, իսկ խումբը ցրվեց։

Կարինի շրջակայքում գործում էր Շամիլի հայդուկային խումբը, որ սարսափ էր տարածել ոչ միայն բնակչության, այլ նաև թուրքական զորքի ու ոստիկանության վրա։ Խումբը չնայած քրդական էր, բայց հայերին չէր վնասում. «Մենք ձեզ վնասելու միտք չունենք, մեր որսը հարստահարիչ կառավարության բարբարոս պաշտոնյաներն են»։

Նշանավոր հայդուկապետներից էր Գալուստ Արխանյանը, որ քաջ մարդ էր և մի քանի լեզու գիտեր։ Նա ձգեց

հայրական տուն-տեղը, հարստությունը, ընտանիքը և նվիրվեց ժողովրդի ազատության սուրբ գործին։ Նրան ձերբակալելու փորձերը անհաջողության են մատնվում։

Կայմակամը որոշում է Գալուստին խորամանկությամբ ձեռք գցել։ Արխանյանի մոտ է ուղարկում նրա մորը, կնոջն ու գյուղի քահանային և համոզում, որ հանձնվի։ Գալուստը մերժում է, բայց, ի վերջո, հարազատների ճակատագրի մասին հոգալով, հանձնվում է։

Գալուստն ու նրա ընկերները դատվեցին հետևյալ մեղադրանքով. «Կայսերական ժառանգական երկրներում բնակվող հավատարիմ հպատակ հայ ազգը օսմանյան կայսերական կառավարության դեմ զինված ապստամբության հանելու և այդ երկրների մի մասը կառավարության իրավասությունից դուրս բերելու, խռովարարական նպատակով «կոմիտե» անունով հեղափոխական ընկերություն ստեղծելու և նրան աջակցողներից մեծ գումարներ հավաքելու, զաղտնի զենք և ռազմամթերք գնելու... ներքին անդորրությունը և երկրի խաղաղությունը մասամբ վրդովելու, հավատարիմ ժողովրդին վնասելու և հեղափոխական ընկերության մասնակցելու... վնասակար թղթեր տարածելու...» համար[27]։

Գալուստի գործով 25 հոգի մահվան դատապարտվեցին։

Կեսարիայում գործում էր մի այլ հայդուկային խումբ Ճանոյի գլխավորությամբ։ Ալիս գետի ափին այս 5 հոգուց բաղկացած խումբը վեց ժամ մարտ է մղում 200 ոստիկանի դեմ։ Ի վերջո, Ճանոն զոհվում է, իսկ մյուս հայդուկները բռնվում են։

Սեպտեմբերի 8-ին 150 թուրք զինվորներ, մոտ 500 «չերքեզ և գյուրջի ավազակներ ու ծովահեններ» շրջապատում են Մարզվանի Ղապլան և Ճամիի աթիզ թաղերը։ Շմավոնի ղեկավարած հայդուկները, չորս մասի բաժանված, պաշտպանվում են։ Յոթ հայդուկներ հինգ ժամ շարունակ մարտնչում են իրենց 90 անգամ գերազանցող թշնամու դեմ։ Ի վերջո, հայդուկներից երեք հոգու հաջողվում է ճեղքել պաշտպանության շղթան ու անհետանալ։ Իշխանությունները Մարզվանում և Ամասիայում պատերազմական դրություն մտցրեցին, զանգվածային խուզարկություններ ու ձերբակալություններ կատարեցին, արգելեցին տնե-

ռում նույնիսկ ճրագ վառել, որովհետև «եթե ճրագ վառեն՝ խորհուրդներ են անում, դավադրություններ են նյութում բարեխնամ սուլթանի կառավարության դեմ»։

Նույն օրերին Սամսոնի Ալաչամ գյուղում հայ բնակչության և թուրքական զորքերի միջև ընդհարում է տեղի ունենում, սպանվում են 12 հայ և 128 թուրք։

Աբրոն (Մկրտիչ Սահակյանը) Ծապին Գարահիսարից էր, բայց երիտասարդ հասակից աշխատել էր Սև ծովի ափին։ Միջնակարգ կրթություն էր ստացել, զբաղվել վաճառականությամբ։ 1892 թ. գնում է Բաքու և աշխատանքի անցնում նավթագործարանում։ Այնտեղ նա հանձնակատարություններ էր կազմակերպում Արևմտյան Հայաստան խմբեր ուղարկելու համար։

1895 թ. Աբրոն անցնում է Սասուն։ Նա սասունցիներին հորդորում է քանիչ հանձնաժողովի անդամներին ցուցմունքներ ու տեղեկանքներ տալ։ Նա նյութեր մատակարարեց «Դեղի տելեգրաֆի» թղթակից Էմիլ Դիլոնին։

Քիչ անց Աբրոն Կովկասում էր, իսկ 2—3 ամիս հետո նա Սասուն վերադարձավ հայդուկային խմբի հետ ու մասնակցեց ինքնապաշտպանական կռիվներին։ 1896 թ. մարտի 18-ին, Մեզտեռ սարից իջնելիս, նա ընկնում է ձյան փլվածքի տակ ու խեղդվում։ Նրա դիակը գտան 45 օր հետո։

Արևմտյան Հայաստանում և ամբողջ կայսրությունում լայն ճանաչում ուներ հայդուկապետ Հ. Մինասյանը (Մինասօղլան)։

Ռշտունիքի հայդուկության հիմնադիրը (1886 թ.) Շերոն ու Չաթոն (Մարկոսն) էին։ Նրանք երկուսն էլ մեծ հեղինակություն ունեին։ Նույնիսկ քրդերն էին նրանց մասին երգեր հյուսել։ Շերոն ընկավ (1896 թ.) նույն վայրում, որտեղ երկու տարի առաջ զոհվել էր Չաթոն։

1895 թ. օգոստոսի 9-ին Քեռու հայդուկային խումբը Քեմախի կամուրջի մոտ ընդհարվեց թշնամու 400 զինվորի և 1000 բաշիբոզուկների հետ ու ոչնչացրեց 50 հոգու։

Սակայն 90-ական թվականների սկզբի խոշոր իրադարձությունները կատարվեցին Կարինում ու Կ. Պոլսում։

1890 թ. հունիսի 6-ին, զենք փնտրելու պատրվակով, իշխանությունները խուզարկում են Կարինի առաջնորդարանը։ Ոչինչ չեն գտնում։ Խուզարկում են նաև ազգային վարժարանն ու եկեղեցին։ Կրկին ոչինչ չեն գտնում։ Բայց խուզարկությունը դադարեցնելու փոխարեն սկսում են փոր-

բել եկեղեցու խորանի հատակը, որն առաջացնում է հայերի զայրույթը։ Հայերին ցրելու համար 6000 հոգիանոց զորամաս է բերվում։ Մի քանի հայ սվինահար ընկնում են, իսկ նրանցից մեկը կրակում ու սպանում է հարյուրապետին։ Տեղի է ունենում արյունալի ընդհարում։ Այդ ընթացքում քաղաքի թուրք բնակչությունը հարձակվում է հայկական թաղերի վրա։ Հայերը պաշտպանվում են։ Ամբողջ քաղաքը վերածվում է մարտադաշտի։ Սպանվում է 70 հայ, 35 թուրք, վիրավորվում են 400 հոգի։

Կարինի վալին Երզնկայից 2000 զինվոր խնդրեց։ Քաղաքը ամբողջովին պաշարվեց։ Հայերը փակվեցին իրենց տներում ու թաղերում։

Սուլթանն անհանգստացած էր։ Նա իրար հետևից հեռագրեր էր ուղարկում, հանձնարարություններ տալիս, իրավիճակի մասին լուրեր պահանջում։ Կառավարությունն անընդհատ նիստեր էր գումարում։

Պատրիարքը այցելեց Մեծ վեզիրին և հետաքրքրվեց Կարինում տիրող վիճակի մասին։ Վերջինս պատասխանեց, որ իրեն ոչինչ հայտնի չէ և խստությամբ ավելացրեց. «Հայերը թող հանգիստ մնան»։

«Այժմ ձերբակալություններ են կատարվում հայերի ջրջաններում,— գրում էին Կարինից,— և կառավարությունը ջանում է հայկական հեղափոխության կերպարանք տալ գործին և պատասխանատվությունը բարդել հայերի վրա, մինչդեռ ամեն ինչ ցույց է տալիս, որ խուզարկությունները կանխամտածված կոտորած առաջ բերելու նպատակով են գործադրվել»։ Ձերբակալվեց շուրջ 50 հոգի, այդ թվում նաև Խաչատուր Կերեկեյանը։ Կատարվեցին անասելի բարբարոսություններ։

Թուրքերի «կորուստները նվազ են եղել, որովհետև հատուկ պատրաստությամբ և զորքի ու խուժանի գործակցությամբ է հարձակումը տեղի ունեցել, այդ հարձակման կանխամտածված լինելը սարակույս չի հարուցում։ Քաղաքում ռազմական դրություն է հայտարարված»[23]*։*

Կարինի դեպքերի ազդեցության տակ խռովություններ եղան նաև Ալաշկերտում, Խնուսում և Մուշում։ Սուլթանը արգելեց եվրոպական թերթերի մուտքը Թուրքիա։

1890 թվի հուլիսի 10-ին Պետերբուրգից եվրոպական

լրագրերին ուղարկվեց հետևյալ հեռագիրը. «Վերջին ընդհարումը, որ տեղի ունեցավ Էրզրումում թուրքերի ու հայերի միջև, պատճառել է բազմաթիվ զոհեր։ Սպանվածների ու վիրավորների թիվը հասնում է մինչև 300-ի։

Հյուպատոսարանները պաշտպանված են թուրք զորքերով։ Բազմաթիվ ձերբակալություններ են եղել հայերի մեջ։

Այդ անցքի առիթով հայոց պատրիարքը հայտնել է հրաժարական տալու իր ցանկությունը։ Հրաժարականը նա պատճառաբանում է վերոհիշյալ ձերբակալություններով և այն թշնամական դիրքով, որ թուրք կառավարական մարմինները ունեն հայ ազգի նկատմամբ»[29]։

1890 թ. հուլիսի 15-ին Պոլսում տեղի ունեցած ցույցում կարդացվեց հնչակյանների կազմած «Հայ ժողովրդի պահանջները»։

Ահա այդ պահանջներից մի քանիսը.

ա) Հողը նրան, ով այն մշակում է։

բ) Բերքը նրան, ով այն արտադրում է։

գ) Բոլորը պետք է աշխատեն և իրենց քրտինքով վաստակեն ապրուստը։ Հայաստանի տերը պետք է հայերը լինեն։

դ) Օրենսդիր ժողով, ազատ ընտրություն։

ե) Կրոնի ազատություն, բոլոր խտրականությունների վերացում։

զ) Նահանգների լայն ինքնավարություն։

է) Մամուլի, խոսքի, կազմակերպությունների ազատություն։

Այս պահանջները կրոնական արարողության ժամանակ տալիս են պատրիարքին և առաջարկում ցուցարարների գլուխն անցած՝ պալատ գնալ ու ներկայացնել սուլթանին։ Պատրիարքը փախչում ու թաքնվում է։

Գում Գափուի եկեղեցու բակում ևս միտինգ տեղի ունեցավ, որի կարգախոսն էր. «Մահ կամ ազատություն»։

Ամբոխը շարժվում է պատրիարքարան և պահանջում է, որ պատրիարքը միանա ցուցարարներին։ Ահաբեկված պատրիարքը դուրս է գալիս ու ժողովրդի առաջն ընկած՝ շարժվում դեպի պալատ։

Երբ Աբդուլ Համիդին հայտնեցին հայերի ցույցի մասին, նա կատաղության նոպայի մեջ բղավեց. «Զո՛րք, զո՛րք,

կոտորել ապստամբներին»։ Մինչդեռ սուլթանը նախապես զորքեր էր կուտակել Գում Գափուում։ Ցուցարարները հասան Պալի փաշա վայրը։ Այստեղ եկան նաև Դերվիշ փաշան, ոստիկանության նախարարը, Պոլսի կառավարիչը, սուլթանի թիկնապահները, որոնց Համիդը ուղարկել էր ցույցը ջախջախելու։ Հայերին շրջապատեցին ու նրանց վրա կրակ բացեցին։ Հայերն ընկնում էին, բայց շարունակում էին առաջանալ։ Ի վերջո, նրանք անցան դիմադրության, որ տարածվեց նաև Գում Գափուի թաղերը։ Հայերի վրա կրակում էին մարտինի հրացաններով, իսկ նրանք դիմադրում էին ատրճանակներով ու քարերով։

Դերվիշ փաշան պատրիարքին հանձնեց սուլթանի հեռագիրը. «Լսեցի ու սաստիկ բարկացած եմ, մյուս անգամ այդպիսի դեպքեր չլինեն, թե չէ Ձեզ ու Ձեր ժողովները լրիվ կջախջախեմ։ Տեղեկություն տվեք, թե ինչու այդ դեպքերը պատահեցին, անշուշտ, մասնակցություն ունեցել եք[30]։

Սուլթանի հեռագրին խորեն պատրիարքը պատասխանեց. «Ի՞նչ անի խեղճ հայ ժողովուրդը, երբ տեսնում է իր տունը կողոպտված, կանայք ու հարսները՝ լլկված, տեղիս պանդուխտ հայրենակիցներիս նամակները փոստատանը բացված,- իր նյութական միջոցներից զրկված և այլ բազմաթիվ թշվառությունների մատնված։ Հայ գավառցին էլ չկարողացավ տոկալ և, ծայրահեղության դիմելով, ցույց արեց, որ ես ձեզ ասեմ։ Քանի՞-քանի՞ անգամ հայտնել եմ այս ամենը և անհետևանք է մնացել։ Ուստի, էլ չկարողանալով տոկալ և չուզելով իմ սիրելի ազգի թշնամության պատճառ լինել, գալիս եմ ներկա հրաժարագիրս մատուցելու Ձերդ կայսերական գահիդ ոտին»[31]։

Սկսվեցին ձերբակալությունները, բանտ նետվեց շուրջ 600 մարդ, որոնք անպատմելի խոշտանգումների ենթարկվեցին։

Հայկական թաղերը պաշարված էին, տները խուզարկվում էին։

1890 թ. հուլիսի 17-ին Տրապիզոնից գրում են, որ եթե Կարինի դեպքերից հետո թուրքերը սկսեցին բացահայտ խոսել հայերին կոտորելու մասին, ապա «Պոլսի ցույցերից հետո այդ ուղղությամբ գործնական քայլերի դիմեցին։

Հուլիսի 26-ի գիշերը քաղաքի 2000 Թուրքեր զինված հավաքվում են Մեյդանի հրապարակում՝ հայոց թաղերի վրա հանկարծակի հարձակվելու համար։ Հավաքվածների մեջ կային նաև Թրքուհիներ՝ զինված կացիններով ու ատրճանակներով։ Սակայն քաղաքի մի խումբ խելամիտ Թուրքերի ջանքերով կոտորածը կանխվեց»։

Նույն օրը Սեբաստիայում 200 զինված Թուրքեր հարձակվում են հայկական Թաղերի վրա, բայց ետ են շպրտվում։ Մալաթիայում ևս բացահայտ խոսում էին հայերին կոտորելու մասին, փողոցում հանդիպած հային անխնա ծեծում էին։ Թուրքերը հարձակվում են Խարբերդի Եգեքի գյուղի վրա՝ հայերին կոտորելու, բայց ետ են շպրտվում։ Դրանից 15 օր առաջ նման մի հարձակում կատարվել էր նաև Բասենի Ալիք Ջեկրեք գյուղի վրա։

Դրությունն ամենուրեք լարված էր։ Կ. Պոլսից ստացված մի նամակում կարդում ենք. «Հայաստանի բոլոր կողմերից սպանությունների, հափշտակությունների լուրեր են շարունակ հասնում։ Բոլոր քրիստոնյաներին կոտորելու սարսափը ընդհանուր է ամբողջ Հայաստանում»։

Արաբկիրից պատրիարքարանին խնդրում են «կամ մի միջոց ցույց տալ, որով կարողանանք ապօրինությունների առաջն առնել և կամ մի տեղ, ուր կարողանանք ամբողջ քաղաքով գաղթել»։

2000 արաբկիրցիներ բողոք ուղարկեցին նաև սուլթանին ու դեսպաններին։ Քաղաքի բոլոր հայ պաշտոնատար անձինք հրաժարական ներկայացրին։ «Մտքերը ծայր աստիճան հուզված են, ոչ ոք չգիտե, թե վաղը ինչ կարող է պատահել։ Քաղաքին ու շրջապատին սպասվում է մեծ արյունահեղություն։ Անվտանգությունը մնացել է բանտի մեջ...»։

Հայաստանում կառավարությունը վերանորոգում էր թերդերը, բազմապատկում զորքերի թիվը, զինում մահմեդական տարրերին, ամրացնում երկրի սահմանները, պաշարման դրության մեջ դնում ամբողջ նահանգներ։

«Անվստահ՝ Եվրոպայում իր քաղաքական խախուտ դիրքի հետևանքով, ենթակա տնտեսական քայքայման ու ֆինանսական սնանկության, շարունակ կասկածոտ իր հպատակ ազգերի խիստ դժգոհության նկատմամբ,— ո՞վ

կարող է հավատացած չլինել, որ այդ վիճակում տաճկական տերությունը, Արևելյան հարցի այդ հիվանդ գերին, դիտավորություն չունի ամենամոտ ապագայում հայ տղամարդու, հայ կնոջ, հայ երեխայի մսով, ոսկրով ու արյունով, իբրև ցեխով ու ջրով, լցնել ու փակել իր տերության խախուտ շենքի ճեղքերը ու ծակերը, հուսալով ամրացնել այն»։ «Անսովոր, ամենամեծ ծանր դեպքերը մոտալուտ են»[32]։

«Արյան հոտը,— նույն օրերին գրում են Մարզվանից,— օդի մեջ է»։

***

Ասվածից հետևում է, որ օսմանյան կայսրության ներսում, 19-րդ դարի վերջին 20-ամյակին, խմորվում էր ազգային և սոցիալ-քաղաքական մի ճգնաժամ, որը ոչ միայն դարավոր քնից արթնացրել էր ազգային և սոցիալական ճնշման տակ կքված զանգվածներին, այլև հասարակությանը ընդհուպ մոտեցրել էր ազգային շարժումներին ու դասակարգային ընդվզումներին։ Բարձրանում էր ներքաղաքական պայքարի բարիկադը, որի մի կողմում սուլթանական վարչակազմն էր, ֆեոդալական և կալվածատիրական խավերն ու վաշխառությունը, ռազմական վերնախավն ու կաշառակեր պաշտոնեությունը, ինչպես նաև մահմեդական հոգևորականությունն ու կոմպրադորական բուրժուազիան։

Բարիկադի մյուս կողմում գյուղացիությունն էր, պրոլետարական և կիսապրոլետարական տարրերը, արհեստավորները, մանր ու միջին առևտրականները, մտավորականությունը։

Բայց օսմանյան հասարակությունը խճճված էր սոցիալական, ազգային, կրոնական բազմաթիվ գորդյան հանգույցներով, որը հասարակության ներքին խավերին հնարավորություն չէր տալիս պայքարելու իրենց դասակարգային ինքնուրույն շահերի համար։ Դրա հետևանքով Թուրքիայում հասարակության վերակառուցման նպատակ հետապնդող ձևավորված շարժման մասին խոսելը դժվար է։

Դրան մասնավորապես խանգարում էր թուրք ազգաբնակչության հետամնացությունը, կրոնական մոլեռանդությունը՝ նրա կույր հնազանդությունը մահմեդական հոգևորականությանը, նաև այն, որ օսմանյան իշխող դասակարգերին դարերի ընթացքում հաջողվել էր թուրք աշխատավորության գիտակցությունը թունավորել այլամերժ մեծապետական թույնով, որն անհնար դարձրեց կայսրության կազմի մեջ եղած ժողովուրդների աշխատավոր խավերի համերաշխությունը։

Այս պայմաններում սուլթանական վարչակազմի ու շահագործողների դեմ զանգվածային շարժում առաջանալ չէր կարող։ Դա մասնավորապես ակնհայտ էր հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարում։

Մանավանդ, որ այդ ժողովուրդների պայքարը ևս ներքին միասնություն չուներ, տարբեր հասարակական խավեր նրա նկատմամբ հաճախ հակադիր, որոշ դեպքերում թշնամի վերաբերմունք ունեին։

Այս առումով բացառություն չէր կազմում նաև արևմտահայությունը։ Իհարկե, արևմտահայությունը իր ամբողջությամբ ձգտում էր դուրս գալ օսմանյան բարբարոս լծի տակից, բայց ոչ բոլոր հասարակական խավերն էին, որ գործնական մասնակցություն էին ցուցաբերում ազատագրական շարժումներին, իսկ որոշ ուժեր նույնիսկ խոչընդոտում էին դրանց ծավալմանը։

Մի քանի մեջբերումներ այդ տարիների մամուլից։

1880 թ. դեկտեմբերի 4-ին Կ. Պոլսից գրում են. «Այս անգամ ևս ազգային բարձրաստիճան ավագանին և բարձրագույն եկեղեցականությունը, ձեռք ձեռքի տված, վաճառում են ազգի շահերը և ամենախայտառակ ստորագույն պայմաններով հաշտվում են Բ. Դռան հետ»[33]։

1890 թ. վերջին, երբ սուլթանը լուր տարածեց, թե մտադիր է հայ քաղաքական բանտարկյալներին ներում շնորհել, հասարակությանը խաբելու այդ քայլերում սուլթանին լուրջ աջակցություն ցույց տվեցին Կ. Պոլսի հայ ամիրաներն ու հոգևորականները[34]։

«Հայերից քչերն են բարձր դիրքի հասել,— կարդում ենք մի թղթակցության մեջ,— նրանք էլ մեծ մասամբ թուրքի վարքն ու բարքը հնարամտորեն ընդօրինակելու, գողություն, կաշառակերություն, շողոքորթություն, անիրավություն անելով են առաջ գնացել»[35]։

«Հնչակը» գրում է.— «Զգում է մարդ, ինչպես ծնունդ առած աճում է և հայ բուրժուազիան, որ օգուտ քաղելով ժողովրդի անպաշտպան վիճակից, ոտնակոխ անելով նրա իրավունքները, ծաղրելով նրա աղքատությունն ու տկարությունը, պահելով նրան թշվառ ու ստրկական դրության մեջ և այդ տեսակետից օգնելով հարբստահարիչ ու բռնավոր կառավարություններին, ձգտում է ժողովրդի ոսկորների ու արյան վրա իր անիրավ զորությունը հաստատել»[36]։

«Հնչակը» «Արմենիային» գրում է. «Վախկոտներ, դուք դողում եք կառավարության առաջ և ձեր քաջությունը նրանով է արտահայտվում, որ սուլթանի ապտակը ձեր դեմքին՝ դուք «նորին վեհափառության ուշադրությանը արժանի» լինելու նշան եք համարում, որ սուլթանը թքում է ձեր պատրիարքի երեսին, դուք ասում եք. «Վեհափառը ամպոտել է և անձրև է գալիս նրա բերանից։ Նրան չպետք է գրգռել»[37]։

Կատարված մեջբերումներում, իհարկե, նկատելի են չափազանցությունները, քաղաքական հակակրանքի ազդեցությունը, սակայն դրանք ամենայն որոշակիությամբ հաստատում են այն իրողությունը, թե հայկական վերնախավը ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլ նաև ազգային խնդիրներում վերապահ կեցվածք էր ընդունում։ Այս պայմաններում համազգային հզոր շարժում առաջացնելը, եթե ոչ անհնար, ապա շատ դժվար խնդիր էր։

Ահա թե ինչու ժամանակի քաղաքական ուժերը գտնում էին, որ օսմանյան բռնակալության դեմ հայ ժողովրդի պայքարի հիմնական մեթոդը պետք է լիներ պարտիզանական կռիվը, որովհետև նա կանոնավոր բանակ պահելու և ընդհանուր ճակատամարտ տալու հնարավորություն չուներ։

Դրա համար էլ այդ պայքարի գլխավոր ուժը հայդուկներն էին, թշնամի լինելով «ամեն տեսակի բռնությունների՝ սկսած սատրապ աստիճանավորներից մինչև քուրդ ավազակը, մի կողմից, և արյունարբու հարկահանն ու վաշխառուն, մյուս կողմից, այդ խմբերը ապագա պատ-

մության կենդանի դրոշակակիրները կլինեն։ Պարտիզանական հարձակումներ գործելով բռնատերերի վրա, պաշտպանելով ճնշվածներին, նրանք էլեկտրականացնում են ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռվի կենդանի օրինակներ են տալիս ժողովրդին...»[33]։

Ահա թե ինչու հայդուկները վայելում էին աշխատավորական լայն շրջանների, մասնավորապես, գյուղացիության աջակցությունը։ Բերենք բազմաթիվ փաստերից միայն մի քանիսը։

«... Գյուղով... անցնում էին մի խումբ կամավորներ... Մի չքավոր այրի կին, դիմելով խմբապետին, ասաց. «Ես ոչ փող ունեմ և ոչ զենք, ինչ որ ունեմ այն եմ տալիս, սա էլ թող լինի իմ նվերը»։ Այս ասելով, կինը բռնեց իր միակ որդու ձեռքից և տվեց խմբապետին։

Շատ տեղերում գյուղացիները ծախում էին եզները և զենք գնում։ Կանայք զարդարանքները և մատանիները տալիս էին իրենց ամուսիններին և հորդորում, որ վաճառեն և դրամով զենք գնեն։

Երկու եղբայր վիճում են հայդուկ դառնալու համար։ Նրանք դիմում են ծեր հորը հարցը լուծելու։ Մերունին պատասխանում է. «Դուք կարող եք գնալ, ես չե՞մ կարող։ Երեքիս մեջ չոփ (վիճակ) գցեք, ումը կընկնի, թող նա գնա»։

Հայդուկային շարժման և ինքնապաշտպանական կռիվների ծավալման ու ղեկավարման գործում փոքր չէ հայ քաղաքական կուսակցությունների դերը։

Սակայն խորհրդահայ պատմագրությունը, հայտնի պատճառներով, տասնամյակներ շարունակ խեղաթյուրել է այդ դերը։ Մեր պատմագիտական որոշ աշխատություններ ընթերցելիս այն տպավորությունն է ստեղծվում, կարծես, այդ կուսակցությունները կանխամտածված գործել են հայկական ազատագրական շարժման դեմ։ Ընդ որում, նրանց հասցեին օգտագործվել են բնութագրումներ ու ածականներ, որոնք այսօր միայն դառը ժպիտ ու ամոթի զգացում են առաջացնում։

Ոչ մի քաղաքական շարժում ու կուսակցություն սխալներից զերծ չէ և գլխավորն այդ չէ, այլ այն, թե տվյալ

շարժումն ու կուսակցությունն ում է ծառայում և ինչ քաղաքական խնդիրներ է հետապնդում։

Օսմանյան լծից ազատագրվելը, գոյապայքարը հայ ժողովրդի բոլոր խավերի ձգտումն ու երազանքն էին, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում նրանց միությունների ու քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ։ Տարբերությունը լոկ մոտեցումներում ու մեթոդներում, այսինքն տակտիկական բնույթի խնդիրներում էր։

Սակայն այդ չի նշանակում, թե այդ կուսակցությունները սխալներ, և այն էլ կոպիտ սխալներ չեն ունեցել և այլևս դրանք քննադատության չեն ենթարկվելու։

Տվյալ դեպքում ևս չափանիշը մեկն է՝ պատմական ճշմարտությունը, և նրան պետք է հարազատ մնալ։

Ինչպիսի՞ն էր հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումն անցյալ դարի 80—90 թթ.։ «Հնչակը» գրեց, որ ողորմություն խնդրելու փոխարեն պետք էր ստեղծել մարտական կազմակերպություն, «զրդռել ժողովրդին և սկսել հեղափոխական ապստամբական շարժումներ։ Այդ ժամանակ հայկական աքաղաղը կկանչեր և Եվրոպան վեր կթռչեր իր քնից»։

«Հնչակը» հայերին կոչ էր անում. «Հայաստանի բոլոր կենդանի ուժերը պետք է ոտքի ելնեն մեծ ապստամբությամբ և այդպիսով ստիպեն Եվրոպային վերջապես մի բավարար լուծում տալ մեր խնդրին... Եվրոպայից է կախված մեր խնդրի վերջնական լուծումը»[39]։

«Եթե ուզում եք,— գրում է «Հնչակը» 1892 թ. դեկտեմբերին,— Եվրոպան միջամտի և մեր դատին լուծում տա, ամենից առաջ պետք է ինքներս մեր մեջ կենտրոնացնենք մեր բոլոր ուժերը, դնելով դրանք հեղափոխական ուղու վրա։ Եվ միայն այդ ընթացքում մենք կարող կլինենք ցնցել եվրոպական տերություններին՝ արյունահեղ կռիվներ մղելով Թուրքի դեմ, դրանով շոշափելով նրանց արևելյան շահերը և այդպիսով միայն նրանց կամաց-կամաց հարկադրել միջամտելու մեր և Թուրք կառավարության միջադեպին»։

Հնչակյան կուսակցության դիրքորոշումը ամենայն մանրամասնությամբ շարադրված է «Հնչակի» 1888 թ. 4-րդ և 5-րդ համարներում։

Այդ առնչությամբ տպագրված հոդվածում մասնավորապես նշվում է, որ «առաջանում է հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդիրը» և պահանջ է առաջադրված զատելու նրա ճակատագիրը Թուրքիայի ճակատագրից, քանի որ այս վերջինը մեր ժողովրդի ճակատագրի նկատմամբ խաղում է այն դերը, ինչ դեր խաղում է ջուրը կրակի նկատմամբ։ Մտածել, թե՝ «խաղաղ ճանապարհով ժողովուրդը կհասնի բարելավության, միանգամայն անօգուտ և անբարոյական է, ամոթ ու վախկոտություն է»։

Փրկության միայն մեկ ճանապարհ կա. «Բացարձակ պատերազմ մղել այդ կործանիչ կազմակերպության դեմ... Բացարձակ պատերազմ մղել Թուրք կառավարության դեմ...»։ Փրկության միջոցը հեղափոխությունն է, որը «պիտի սկսի գործադրել գիտակցական հեղափոխական տարրը և պատերազմի հաջողության շնորհիվ գրավի ժողովրդի աջակցությունը»։

Ուրեմն, հեղափոխությունը պետք է սկսի «գաղտնի հեղափոխական կազմակերպությունը», որը գործնականում ներկայացնում էր մարդկանց մի ոչ ստվար խումբ, իսկ ժողովուրդը շարժմանը միանում էր այդ խմբի «պատերազմի հաջողությունից» հետո միայն։

Բայց «Հնչակը» իր հարցադրումներում հետևողական չէր։ Արդեն նույն հոդվածում նա թերահավատություն է արտահայտում հեղափոխական ուժերի կարողությունների նկատմամբ։ «Հայոց անմխիթար կյանքում,— գրում է թերթը,— մենք տակավին չենք պատահել այնպիսի անկեղծ ու գիտակցական մարտնչողների, որոնք այն նոր գաղափարի հաղթության գործը դարձրած լինեն իրենց կյանքի գլխավոր նպատակը։ Ցույց տվեք հայ երիտասարդության պարտեզում, ուր, բացի սակավ լալկան ուռիներից և անպետք խոտից, լինի մեկ անկյուն, որտեղ առանձնացրած ծաղկեն արյունագույն վարդեր»։

1888 թ. մարտին «Հայ հայրենասիրական ընկերության» Լոնդոնի մասնաճյուղը հուշագիր է ներկայացնում Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերիին և խնդրում ազդել Թուրքիայի վրա՝ Բեռլինի կոնգրեսի տրակտատի 61-րդ հոդվածը կատարելու համար։ Ծաղրելով նման հուշագրերը խաղաղ պայմաններում ներկայացնելու

փաստերը, «Հնչակը» գրում է, որ հուշագրեր պետք է ներկայացնել «այնպիսի ժամանակ, երբ Հայաստանում հեղափոխական, ապստամբական հոսանքը քաղաքներ ոտի կանգնեցրած լիներ, ժողովրդին ազատության դրոշի տակ համախմբած լիներ,— այդ ժամանակ տեղական սարսափահար անցքերի նկարագիրներն արդարև— ակամա կգրավեն ամեն մի տերության ուշադրությունը...»։

Ուրեմն ո՞րն է ելքը։ «Հնչակը» պատասխանում է. «Մի պատերազմ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև հայերիս համար պետք է լինի ամենահարմար բոպեն դրդելու ու բարձրացնելու հայ ժողովրդին թշնամիների դեմ, ձգտելով օգտվել այդ բոպեից ձեռք բերելու համար հայրենիքի ու ժողովրդի ազատությունը... Այդ գործողությունները միաժամանակ պետք է լինեն ընդդեմ թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի։ Մենք խո չե՞նք ձգտում մի բռնապետությունից ազատվելու՝ այնուհետև մի ուրիշ բռնապետության ճիրանները նետվելու համար...»։

Ուրեմն, Ռուսաստանին ապավինելը ևս փրկություն չէր։ Հնարավորությունների այս հետևողական ժխտումը հնչակյան կուսակցությանը հասցրեց քաղաքական պայքարի դերի ժխտմանը և առաջին պլան մղեց ահաբեկչության ծավալումը։

«Թուրք բռնապետական և կեղեքիչ կառավարության դեմ պատերազմ մղելու համար,— 1888 թ. հունիսին գրեց «Հնչակը»,— հայ հեղափոխականների գործադրելի միջոցների մեջ նշանավոր տեղ պիտի բռնե տեռորիզմը»։ Եվ ապա. «... Երբ դեռ գործողը միմիայն հեղափոխական փոքրամասնությունը կլինի, տեռորիզմը ամենաուժեղ և ամենաանհրաժեշտ զենքն է անհավասար պատերազմի մեջ կառավարության դեմ»։

Մի քանի ամիս անց «Հնչակը» ճշտում է. «Կուսակցության գործունեության եղանակները երեքն են՝ պրոպագանդա, ագիտացիա և տեռորիզմ կամ տեռոր»։

Գրեթե նույն մոտեցումը կարելի է հանդիպել դաշնակցական կուսակցության հրապարակումներում։

«Դրոշակը» 1891 թ. № 2-ում գրեց. «Հեղափոխական հարուստ տեխնիկայով զինված գաղտնի կազմակերպության տարածումն ու զարգացումը բնականաբար առաջ

կբերի ավելի հաճախ կրկնվող խմբային ցույցեր տաճկական բռնակալության դեմ, որոնք մի կողմից կդաստիարակեն ժողովրդի հեղափոխական ոգին, մյուս կողմից, կքայքայեն տաճիկների տերության առանց այն էլ խախուտ հիմքերը։

Եվ երբ հեղափոխության պարտիզանական կռվի ալիքները ողողեն ամբողջ Տաճկական Հայաստանը, երբ նրանք անվերանորոգելի ճեղքեր բանան տաճիկ տերության խախուտ շինվածքի մեջ, երբ վերջապես, Եվրոպան տեսնի, որ Տաճկաստանի խաղաղությունը անդառնալի կերպով խախտված է երկու անհաշտ՝ մինչև արյան վերջին կաթիլը մաքառել վճռած թշնամիների կռվով, երբ նա տեսնի, որ Տաճկաստանում իր ներդրած դրամագլուխները վնասվում են և կորչելու վտանգի են ենթարկվում և, որ կայծը բոցավառվելով կարող է եվրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, այն ժամանակ ժողովուրդը ձեռք կբերի իր մարդկային իրավունքները»։

— Իսկ ո՞վ է լինելու հայդուկային շարժման ղեկավար ուժը։ Այդ հարցին «Դրոշակը» միանշանակ պատասխան է տալիս՝ մտավորականությունը, որը պետք է զբաղվի «հեղափոխական ուժերի կազմակերպմամբ», իսկ մտավորականություն ասելով «Դրոշակը» հասկանում է կուսակցության ղեկավար անդամներին։

Պայքարի մեթոդների հարցում ևս հայդուկների ու դաշնակների միջև հակասություններ կային։

Եթե հայդուկային շարժման համար բնորոշը պարտիզանական բնույթի կռիվներն էին, ապա դաշնակցության գործունեության համար՝ բացատրական-կազմակերպական աշխատանքն ու հայ ազգաբնակչության զինումը։ Դաշնակների քաղաքական տակտիկայի մասին խոսելիս, իհարկե, չի կարելի նկատի չունենալ նաև ահաբեկչությունը։

Մեր պատմագրության մեջ ոչ քիչ դեպքերում իրար են հակադրվում հայդուկությունն ու համազգային ապստամբության գաղափարը։ Ըստ որում, աչքաթող է արվում երկու հանգամանք՝ ա) հայդուկությունը հեռու գնացող քաղաքական նպատակներ չէր հետապնդում, նա իր առաջ խնդիր էր դնում պայքարել բռնության, հայի պատվի ու

կյանքի նկատմամբ ոտնձգությունների դեմ, բ) Արևմտյան Հայաստանի տարածքը բնակեցված էր ոչ միայն հայերով, այլ նաև քրդերով, թուրքերով, հրեաներով, ասորիներով, չերքեզներով, և այլազգիների այդ ծովում հայկական մեկուսացված ազգային շարժումը, առավել ևս համազգային ապստամբությունը, անիրականանալի էր։ Հայ ժողովրդի ազատագրության ուղին ընկած էր օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ու, առաջին հերթին, քուրդ ժողովրդի ազատագրական պայքարի խաչմերուկներում։ Պատմությունը այդպես էր որոշել՝ հայն ու քուրդը կամ պետք է ձեռք ձեռքի տված պայքարեին իրենց ընդհանուր ազատության համար, կամ քուրդը դառնալու էր հայի գերեզմանափորը։

Հայ բոլո՞ր հասարակական-քաղաքական ուժերը հասկացան այս ճակատագրական երկընտրանքը։ Դժբախտաբար, ոչ։ Նաև նրանք, ովքեր այսօր ևս համազգային ապստամբության գաղափարը հակադրում են հայդուկային շարժմանը և վերջինիս մեղադրանք ներկայացնում, թե նա խանգարում էր առաջինի նախապատրաստությանը, ջլատում ազատագրական շարժման ուժերը և թուրքերի համար առիթներ ստեղծում հայերին կոտորելու, պարզապես իրենց նեղություն չեն տալիս ըմբռնելու Արևմտյան Հայաստանի ոչ միայն ազգային-էթնիկական ու կրոնական, այլ նաև սոցիալ-քաղաքական իրավիճակը։ Այդպիսիները ազգային-ազատագրական շարժման մասին մարքսիզմի ընդհանուր տեսական դրույթները մեխանիկորեն տարածում են Հայաստանի վրա, առանց հաշվի առնելու օսմանյան տիրապետության զարգրելի առանձնահատկությունները։ Այդպիսիները իրենց նեղություն չեն տալիս նկատելու, որ թուրքական բռնակալության լծից բալկանյան ժողովուրդների ազատագրության հարվածային ուժը հայդուկներն էին, այդ նրանք էին, որ պարտիզանական տևական կռիվների միջոցով միավորեցին ազգային ուժերը, նրանց պայքարի ոգի ներշնչեցին, մարտունակ դարձրին և, ինչպես ասում են, կենաց և մահու պայքարի հանեցին։

Եվ եթե հայ իրականության մեջ հայդուկների պայքարը նման երջանիկ վախճանի չհասցրեց, դա ոչ թե հայ-

դուկների, այլ գոյություն ունեցող իրավիճակի ու «համազգային ապստամբության» ջատագովների մեղքն էր, նրանց մեղքը, ովքեր այդպես էլ չհասկացան և այսօր էլ չեն հասկանում, որ շուրջ 500 տարի պետականությունն ու ազատությունը կորցրած, վայրագ ճնշումների ու հալածանքների հետևանքով հլու-հպատակի հոգեբանություն ձեռք բերած, ոգու մարտունակությունից ու զենք օգտագործելու կարողությունից զրկված գյուղացի ռայան, որպեսզի միավորվի, համազգային գոտեմարտի դուրս գա, պետք է անցնի այդ գոտեմարտը նախապատրաստող պայքարի մի ամբողջ համակարգի բովով, որում գլխավորը ժողովրդական վրիժառուների շարժումն է՝ ֆիդայությունը։

Ահա թե մեր ժողովրդի համար ինչու են այդքան թանկ Արաբոն ու նրա հետնորդները, և դա ոչ միայն նրանց մարտական խիզախությունների, այլ նաև նրանց ազատատենչ և խրոխտ ոգու, նրանց մարդավայել կեցվածքի համար։

Իհարկե, խեղճ գյուղացուն թալանող ավազակին պատժելու փաստը առաջին հայացքից Արաբոյի գործողությունը համազգային ազատագրական շարժման բնույթ չէր տալիս, բայց այդ գործողությունը օգնում էր գարավոր նինջի մեջ գտնվող, կրավորական վարքագծի ախտի տակ կռացած հայ գյուղացուն արթնանալու, մեջքը շտկելու և ըմբռնելու, որ ավազակի ուժը «ի վերուստ չէ», որ նրան պետք է ընդդիմանալ, նրա դեմ պայքարել ու հաղթել։

Մի անգամ Արաբոն հարձակվեց չորս հայի ու մի քրդի թալանող ոստիկանների վրա, նրանց սպանեց ու թալանվածը վերադարձրեց տերերին։ Այսօրվա պատկերացմամբ սա առօրեական և զուտ կենցաղային նշանակություն ունեցող դեպք է, բայց այն ժամանակ հսկայական քաղաքական լիցք ուներ՝ հայ ռայան ձեռք է բարձրացնում օսմանյան պաշտոնական անձանց վրա, անձինք, որոնց հետ մինչ այդ նրա հարաբերությունները եղել են անտրտունջ ստրուկի ու կամակոր ստրկատիրոջ հարաբերություններ։ Առաջին հայդուկների գործունեության իմաստն էր թուրքական գաղութարարներին ցույց տալ, որ

հայը ի վիճակի է զենքի դիմելու, իր կայքն ու ապրելու իրավունքը պաշտպանելու։

Թուրքական պաշտոնական պատմագրությունը հրապարակ է նետել հայդուկային շարժումը բնութագրող մի այլ մոտեցում՝ այդ շարժումը անվանում է ահաբեկչություն, իսկ հայդուկները՝ ահաբեկիչ-տեռորիստներ։ Թուրք պատմաբաններն աշխատում են ընդհանուր գծեր գտնել հայդուկների և այն հայերի միջև, որոնք մեր օրերում տեռոր էին գործադրում թուրքական դիվանագետների նկատմամբ։ Նրանք ուղղակի գրում են. «19-րդ դարի վերջերին ձևավորված հայկական տեռորը շարունակվում է»։

Հանդես գալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նիստում (1983 թ.) Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թուրքմենը հայտարարեց. «Այսօր, ինչպես մեր դարի առաջին տարիներին, հայ տեռորիստները նպատակ ունեն կատարելու նոր ցեղասպանություն»։ Զարշրկվում է թրքական պաշտոնական շրջանների հնարած այն բացարձակ սուտն ու կեղծիքը, թե 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ոչ թե թուրքերն էին սպանում հայերին, այլ հայերը՝ թուրքերին։

Թուրքական պատմագրությունն իրեն բնորոշ ցինիկությամբ ստում է։ Հայդուկները, թեպետ տեռորը որպես պայքարի միջոց չէին ժխտում և օգտագործում էին, բայց երբեք այն չեն համարել իրենց պայքարի գլխավոր ու հիմնական մեթոդը։

Նրանց պայքարի գլխավոր և հիմնական մեթոդը եղել է պարտիզանական կռիվը։ Մինչդեռ տեռորիզմը հայդուկների դեմ թուրքական իշխանությունների գործադրած և ամենաշատ օգտագործվող մեթոդն էր։ Բացի այն դեպքերից, երբ հայդուկների դեմ ռազմական գործողությունների էին հանվում բանակն ու քրդական աշիրեթները, տարիներ ու տասնամյակներ շարունակ, թուրքական իշխանությունները հայդուկ ղեկավարներին ֆիզիկապես ոչնչացնելու համար մեծ գումարներ էին խոստանում, վարձում պրոֆեսիոնալ մարդասպանների, գլխագին առաջարկում։ Դրանք իրագործելու համար ստեղծվել էր լրտեսների լայն ցանց։ Այդպես սպանեցին հայդուկային ամենա-

նշանավոր առաջնորդներից մեկին՝ Աղբյուր Սերոբին։ Մի քանի մահափորձեր կազմակերպեցին Գևորգ Չաուշի և Անդրանիկի նկատմամբ։ Թուրքական իշխանությունների տեռորիստական ակտերի ցուցակը մեծ, շատ մեծ է, և թվելն՝ անհնար։

Թուրքական պատմագրությունը հայդուկային շարժման մեջ ճգնում է տեսնել միայն ազգային նպատակադրումներ։ Մինչդեռ այդ շարժումը ոչ միայն ազգային-ազատագրական էր, այլև դասակարգային։ Այդ շարժման գլխավոր ուժը գյուղացիությունն էր և այն էլ աղքատ ու միջակ գյուղացիությունը։ Շարժումն ուղղված էր ոչ միայն թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության, այլ նաև թուրք ու քուրդ բեկերի, շեյխերի, փաշաների, աղաների, հոգևոր ու աշխարհիկ մյուս ֆեոդալների ճնշումների, շահագործման ու հարստահարությունների դեմ։ Այստեղ դասակարգայինը ազգային պատյանի մեջ է մտնում այն հասկանալի պատճառով, որ ազգային ճնշման վերացումը միաժամանակ նշանակում էր այդ բեկերի ու փաշաների կողմից շահագործման ու հարստահարությունների վերացում։

Հայդուկների իղձը արտահայտված է Գևորգի հետևյալ խոսքերում. «Հայաստան, պատրաստ եմ անգամ անձս զոհել գերագույն նպատակիդ համար։

Թող մարեն աչքերս, միայն թե ծագի Հայաստանի անկախության արևը»։

Հայդուկության ու հայդուկների համար բնորոշ են նաև Բաֆֆու խոսքերը. «Ես և գուցե իմ բոլոր համախոհները կընկնենք, բայց անկումը ճանապարհ կը բացե մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով»։[40]

«Հայդուքը,— մի այլ անգամ գրում է Բաֆֆին,— բնական արտահայտություն է բռնության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի։ Հայդուքը ստրուկի բողոքն է իշխող բարբարոսության դեմ։ Նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, տարերի անմատչելի փապարներում, և այնտեղ որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդի, սկսում է տիրել ամայության վրա...

Հայդուքի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում... որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուիստում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից— ահա դրանք են նրա ցանկությունները...»։

***

Սույն աշխատանքը կպատմի 19-րդ դարում ձևավորված հայ ազատագրական պայքարի սուրբ գործին իրենց կյանքը նվիրաբերած գործիչ-մարտիկների՝ ֆիդայիների և առաջին հերթին Գևորգի կյանքի ու գործունեության մասին։ «Այսուհետև իմ բարձը Հայաստանի լեռներն են լինելու, իմ ամենաբաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը։ Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին»։ Ֆիդայիների երդման այս խորիմաստ խոսքերը մեկնաբանման կարիք չունեն։ Նրանք մշակել էին կյանքի ու մահվան սեփական կարգախոսը։ Աշխարհիկ բոլոր վայելքներից կամովին հրաժարված ֆիդային կարող էր «ամուսնանալ միայն հրացանի հետ» և ցանկացած պահի, առանց տատնվելու, կյանքը նվիրաբերել հայրենիքի ազատության զոհասեղանին։

Տասնամյակներ շարունակ, ի թիվս այլ երևույթների, այդ հերոսների մասին ևս բարձրաձայն խոսելու իրավունք չունեինք, սակայն ժողովուրդը նրանց հիշատակը պահում ու գուրգուրում էր հոգու խորքերում՝ համբերությամբ ու հավատով սպասելով այն օրվան, երբ պատշաճը կմատուցի իր խիզախ զավակների հիշատակին։ «Հայ ֆիդայիների ըմբոստ ճակատները մենք դեռ պետք է համբուրենք»։ Վաղամեռիկ դրող Մուշեղ Գալշոյանի այս խոսքերը դառնում են իրականություն։

1 Վ. Բ. Լենին, նկ, հ. 28, էջ 342
2 «Դրոշակ», 1891 թ., № 1
3 Маркс К. и Энгельс Ф. соч., т. 10, 2-ое изд., с. 83
4 «Հնչակ», 1897 թ., № 5
5 «Հնչակ», 1889 թ., № 2
6 «Դրոշակ», 1891 թ., № 1
7 «Հնչակ», 1890 թ., № 2
8 Նույն տեղը, 1894 թ., № 7
9 Ն. տ.
10 Ն. տ. 1894 թ., № 8
11 Ն. տ. 1889 թ., № 4
12 Ն. տ. 1901 թ., № 12
13 «Դրոշակ», 1892 թ., № 3
14 «Հնչակ», 1890 թ., № 7
15 Ն. տ. 1891 թ., № 6
16 Маркс К. и Энгельс Ф., соч. т. 10, 2-ое изд., стр. 167
17 Миллер. А. Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории М., 1983, с. 51
18 «Դրոշակ», 1901 թ., № 5
19 «Հնչակ», 1889 թ., № 2
20 Ն. տ. 1891 թ., № 4
21 Ն. տ. 1890 թ., № 12
22 Ն. տ. № 10
23 Ն. տ. 1892 թ., № 2
24 Ն. տ. 1895 թ., № 2
25 Ն. տ. 1889 թ., № 2
26 Ն. տ. 1894 թ., № 7
27 «Դրոշակ», 1895 թ., № 5
28 «Հնչակ», 1890 թ., № 8
29 Ն. տ.
30 Ն. տ. № 4
31 Ն. տ.
32 Ն. տ. 1892 թ., № 4
33 Ն. տ. 1891 թ., № 1
34 Ն. տ. № 3
35 Ն. տ. № 6
36 Ն. տ. 1888 թ., № 11—12
37 Ն. տ.
38 «Դրոշակ», 1891 թ., № 2
39 «Հնչակ», 1895 թ., № 19
40 Ն. տ. 1890 թ., № 6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԸԿԹԵՆՔ

Սասնա լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում էր գտնվում Փսանաց գավառակը։ Հյուսիսում՝ Խուլբի, արևելքում՝ Տալվորիկի և արևմուտքում Խիանքի շրջաններն էին։

Փսանքի կլիման տաք էր, ջուրը՝ առատ։ Ամբողջ շրջանը ծածկված էր անտառներով ու այգիներով։ Սակայն, չնայած բնակլիմայական բարենպաստ պայմաններին, փսանցի գյուղացու նյութական վիճակը ծանր էր։

Դրա համար էլ շատերը պանդխտության ցույն էին վերցնում, գնում հեռավոր Հալեպ, իրենց աշխատուժը ամենաէժան գնով վաճառում՝ ընտանիքի բազում կարիքների գեթ մի մասը հոգալու համար։

Փսանքի հյուսիս-արևմտյան մասում էր գտնվում Մըկթենք գյուղը։ Թիկունքը ապավինած սարի լանջին, դեմքը՝ արեգակին, գյուղը ապրում էր. հարսանիքներ էին լինում, երեխաներ էին ծնվում, արտերը հնձվում էին ժամանակին։ Ապրում էին... և թվում էր բնության տվածով ու իր ստեղծածով գյուղը պետք է, որ ապրեր խաղաղ ու ապահով։

Գյուղը ուներ քսանհինգ տուն, մոտ 300 շնչով։ Մըկթենքի կենտրոնում, ամբողջ Սասունում հայտնի իշխան Ղզրոյի քարաշեն տունն էր՝ բավականին ընդարձակ բակով։ Փայտաշեն դուռը փականք չուներ։ Սասունցին դուռը փակելու սովորություն չուներ, դա դժբախտության նշան էր համարվում։ Տուն մտնող հյուրը բակից ձայնում էր տանտիրոջը. եթե տանտերն էր դուրս գալիս, ուրեմն նա մտադիր էր հյուրին ընդունել բակում, իսկ

եթե ընտանիքի երիտասարդներից մեկնումեկը՝ ուրեմն հյուրը ներս մտնելու հրավեր էր ստանում։

Երկարավուն միջանցքի ձախ կողմից մտնում էին օդան։ Սա, սովորաբար, որպես հյուրասենյակ էր ծառայում, բայց այստեղ Ղզրոյի մեծ եղբայրը՝ գյուղի քահանա Տեր Ստեփանը, ընտանիքի արու զավակներին նաև գրագիտություն էր սովորեցնում։

Օդան պատուհան չուներ և լույսը ստանում էր թեք երդիկից։ Խուց հիշեցնող այս սենյակի հատակը ծածկված էր խսիրներով ու կարպետներով։ Դիմացի պատի հարթակին իրար վրա դարսված էին հյուրերի համար պահվող անկողինները, որոնք նույնպես ծածկված էին կարպետներով։ Որպես նստարան ծառայում էին կարմ քուրսիները։ Միջանցքում, օդայի դռան աջակողմյան պատի տակ շարված էին փայտե ու կավե տակառիկներ, որոնց մեջ խմելու ջուրն էր։ Այդ տակառիկների կափարիչներն ու «բաժակները» ևս փայտից էին։

Դիմացի պատի ձախ անկյունում «քունջն» էր, մոտ մեկ մետր բարձրությամբ մի խոռոչ, որի կենտրոնում օջախն էր՝ թվեկը։ Օջախից այն կողմ, առաստաղից կախված էր խնոցին։ Նույն պատը մի դուռ ուներ, որ տանում էր դեպի մըկթենքցու մառանը։

Միջանցքի հակառակ կողմում թոնրատունն էր։ Առավել աղքատ ընտանիքներում թոնրատան մի մասը նաև գոմ էր ծառայում։

Ի դեպ, Սասունի գյուղերի մեծ մասում տներն իրար էին կպած։ Նրանց ընդհանուր պատերի վրա գաղտնի անցքեր կային։ Որոշ տեղերում հնարավոր էր գյուղի մի ծայրի տունը մըտնել և այդ անցքերով հասնել գյուղի մյուս ծայրը։ Այդ արված էր պաշտպանական նպատակներով։

Ղզրոն աղքատ չէր։ Նա տանուտեր էր, ռես, և ինչպես Սասունի շատ տանուտերեր, կրում էր իշխան տիտղոսը։ Ուրեմն, ոչ միայն տանուտեր Ղզրո, այլև իշխան Ղզրո։ Սասունի անցած փառքի մի ողորմելի փշրանք, բայց նաև երաշխիք, որ թեև Սասունը Օսմանյան կայսրության կազմում է, հարստահարվում ու հալածանքների է ենթարկվում օսմանյան իշխանությունների ու քրդական ցեղապետների կողմից, բայց իրեն անկախ է զգում, գլուխ չի խոնարհում։

Ապա գալիս էր իշխան մըկթենքցու հացատունը, որը քառակուսի ընդարձակ սրահ էր։

Առաստաղը հենվում էր պատերի և չորս սյուների վրա։ Արևելյան և հարավային պատերի երկայնքով թարեքներ էին, որոնց վրա, ըստ մեծության, շարված էին կարասներն ու կճումները։ Փայտե դդալներն ու շերեփները, կավե թասերը տեղավորված էին պատերից ու սյուներից կախված փայտյա պահոցների մեջ։ Հարավային պատին ևս թվեկ կար, որի վրա էին ճաշ եփում։ Թվեկից դենը փայտյա մեծ ամբարն էր, որի մեջ ալյուր էր։ Ցորենը, գլգիլը և կորեկը պահվում էին բակի հորերում։

Ամբարին հաջորդում էին փայտյա պահարաններն ու իրար վրա շարված մեծ ու փոքր սնդուկները, որոնց մեջ ընտանիքի անդամների հագուստները, կանանց զարդեղենը, թանկարժեք իրերն էին։

Թոնրատան հյուսիսային պատի երկայնքով դարսված էին վերմակները, կարպետներն ու խսիրները, որոնցից դիշերը անկողիններ էին գցում։

Հացատան սյուներից մեկին ամրացված էր յուղի ճրագը, իսկ մյուսին՝ նավթի թիթեղյա լամպը։

Ինչպես Մըկթենքի բոլոր գյուղացիների, այնպես էլ իշխան Ղզրոյի գերդաստանի եկամուտների հիմնական մասը ստացվում էր այգեգործությունից ու պտղաբուծությունից։ Գյուղը բոլորված էր խաղողի, տանձի, ծիրանի, սալորի այգիներով և, իհարկե, նշանավոր ընկուզենիներով։

Ցանքատարածությունները սակավ էին։ Դրանք հիմնականում գտնվում էին գյուղից 7—8 կիլոմետր հեռավորության վրա՝ Սպիտակ սարի անտառի բացատներում։ Այստեղ էին նաև գյուղացիներից շատերի անասուններն ու գոմերը, մարագը, կալը, կալատունը։

Սասունում ընտանիքները բազմանդամ էին (շատ ընտանիքների անդամների թիվը 40-ի էր հասնում)։ Մեծ ընտանիքը նաև մեծ պատիվ էր։ Իշխան Ղզրոյի ընտանիքը նույնպես բազմանդամ էր։ Ժամանակի ընթացքում ձևավորվել էին ընտանեկան հարաբերությունների չգրված, բայց խստագույն կիրառվող կանոններ։ Օջախի մեծի խոսքը օրենք էր ընտանիքի բոլոր անդամների համար։ Մեծն էր ղեկավարում ընտանիքի գործունեության բոլոր բնագավառները։

Հենց իշխան Ղզրոյի գերդաստանում էլ, 1870 թվականին, ծնվեց մի արու զավակ, որին վիճակված էր դառնալու Արևմտյան Հայաստանի նշանավոր մարդկանցից մեկը։

Նորածնին կոչեցին Գևորգ։ Նա իշխան Ղզրոյի եղբոր՝ Արոյի որդին էր։

Գևորգը սովորական մանուկ էր։ Նրա մազերը, մինչև ատամ հանելը, չսանրեցին։ Սասունցիները հավատում էին, թե երեխայի մազերը սանրելու դեպքում ատամները ամուր չեն լինում։ Առաջին ատամի երևալուն պես, Գևորգին նստեցրին սպիտակ սավանի վրա և նրա բաց գլխին շաղ տվեցին խաշած ձավար, չոր մրգեր։ Այս ծեսը կոչվում էր հատկասորիկ։ Շուրջը խմբված երեխաները հավաքում էին խաշած հատիկն ու չոր մրգերը։ Իսկ երբ առաջին անգամ կաթնատամն ընկավ և փոխարենը հիմնական ատամ բսնեց, կաթնատամը դրեցին դռան ծխնիի տակ ու երգով ասացին. «Առ քեզ գիլու ատամ, տուր մեզ գառան ատամ»։

Իշխան Ղզրոն անզավակ էր։ Նա իր սերը տվել էր Գևորգին։

Չնայած Գևորգը Արոյի միջնեկն էր, կային նաև Մինասը և Օհանը, ծերունին իր հույսը կապում էր Գևորգի հետ։ Ինքն էր հետևում տղայի կրթությանն ու դաստիարակությանը։ Երազում էր նրան տեսնել եվրոպական կրթություն ստացած։ Ըստ այդմ էլ նա Տեր Ստեփանին ապսպրել էր տղային նախապատրաստել ուսումը Առաքելոց վանքում շարունակելու համար։

Սակայն իշխան Ղզրոն, ամեն ինչից առաջ, կյանքի մարդ էր։ Նա հոգ էր տանում, որ Գևորգը մեծանա ֆիզիկապես ուժեղ, կարողանա դիմանալ դժվարություններին։ Դեռ փոքրուց նրան սովորեցնում էր ծանր աշխատանքի, նրա մեջ պատվաստում կամք, համառություն, քաջություն ու պատվախնդրություն։

Նոր էր երեխան բոլորել վեց տարին, երբ Ղզրոն նրան տարավ Սպիտակ սարի անտառ՝ տերև կտրելու։ Համայնական բնույթի այդ աշխատանքը, որ գյուղովի էին իրականացնում, կոչվում էր զուբարա։

Գևորգը Սպիտակ սար գնաց ջորեպան Օհանի հետ։ Վաղորդայն էր։ Ճանապարհը ձգվում էր սարն ի վեր, երբեմն անցնում անդնդախոր կիրճերով։ Ահարկու ժայռերը, ահեղագոչ ջրվեժները բորբոքում էին երեխայի հետաքրքրությունը։

— Քեռի Օհան, էս ի՞նչ սարեր են։

— Դավթի սարերն են, լաո։ Էս քարերն էլ Արջքարերն են։ Էս քարայրներում Դավիթը սպանեց քառասուն դևերին։

— Որ մեծանամ, ես էլ կսպանեմ,— ասաց փոքրիկ հեծյալը։

— Էս էլ Սպիտակ աղբյուրն է,— ժայռի կողքերից բխող

ջուրը ցույց տալով ասաց Օհանը,— Դավիթն էդ ջրից է խմել։ Դու էլ խմիր, գառ ջան, ու թող էդ ջուրը քեզ Դավթի զորությունը տա։

Երեխան ծնկեց աղբյուրի վրա։ Ջորեպան Օհանը խաչակնքեց. «Էս օրը մոռանալու օր չէ»,— մտածեց նա։

Երբ հասան ամառանոցներին, այնտեղ բավականին ժողովուրդ էր հավաքվել։ Սկսվեց զուբարան։ Տղամարդկանց մի մասը կտրատում էր ծառերի հաստ ճյուղերը, մյուսները տերևներն էին կտրում, հնձում գըլգիլը։ Գևորգը մանգաղով գըլգիլ էր հնձում, համենայնդեպս, փորձում էր հնձել։ Աջ թաթիկը ցավում էր, բայց չէր տրտնջում։ Նրա մանկական հոգում աճում էր տղամարդկային ինքնասիրությունը։ Չորրորդ օրը ոչխարներ մորթեցին, մինչև ուշ երեկո կերան-խմեցին և գիշերով ճանապարհ ընկան դեպի գյուղ։ Միայն Ղզրոն ու երեխան գիշերեցին կալատանը և գյուղի ճամփան բռնեցին հաջորդ միջօրեին։

Ղզրոն առջևից էր քայլում։ Գևորգը հոգնել էր, ոտքերը դժվարությամբ էին շարժվում, բայց գնում էր անմոռուչ, որ Ղզրոն հանկարծ չիմանա, թե նա հոգնել է։ Իսկ Ղզրոն, իհարկե, նկատում էր, բայց ցույց չէր տալիս։

Վերջապես գյուղը երևաց։ Գևորգը նայեց իրենց տան կողմը և ուրախ բղավեց.

— Ափո՛, տե՛ս, մեր բակում ինչքան մարդ է հավաքվել։

Ղզրոն տեսողությունը լարեց և հանկարծ գունատվեց։

— Լաո, փորձանք է,— ու քայլերն արագացրեց։

Երբ տուն հասան, պարզվեց, որ Գևորգի հորեղբայրն էր մահացել։ Բակում խոտ էին փռել. ծածկեր գորգով և վրան դրել մահացածի դին, որը ծածկված էր կարմիր շալով։

Երբ Ղզրոն բակ մտավ, մի քանի րոպե լուռ կանգնեց ու հեռացավ։ Այդ ընթացքում Գևորգը աչքերը չէր հեռացնում Ղզրոյից։ Բայց մի պահ նրան կորցրեց։ Չորս դին նայեց, չգտավ։ Շրջանցեց տունը և հորեղբորը տեսավ դեմքնիվայր գետնին պառկած, գլուխը առվին կախած։

Ի՞նչ իմանար փոքրիկ Գևորգը, որ հորեղբայրը գլուխը առվի մեջ մտցրած էր լաց լինում, որպեսզի մարդիկ արցունքները չտեսնեին։

Այսպես մեծանում էր Գևորգը, հասակ առնում ու դաստիարակվում լեռնցիների այս միջավայրում, նրանց դաժան, բայց նաև ազնիվ ու շիտակ հարաբերությունների մթնոլորտում։

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Ամռան շոգ օր էր։ Տասնչորս տարեկան մի պատանի, բորբ արևից պատսպարվելու համար, նստել էր ընկուզենու ստվերում։ Գյուղից օգնություն կանչող ձայներ ու աղմուկ լսվեց։ Գևորգը շարժվեց աղմուկի ուղղությամբ։ Եվ ի՞նչ. քուրդ քոչվորները հավաքվել էին ընկուզենու այգում և քարեր նետելով ցած էին բերում հասած ընկույզները։ Այդին հայերինն էր. գյուղի կանայք, երեխաները, տղամարդիկ պատերի տակ կծկված դիտում էին այս ավազակությունը։ Նրանցից ոչ ոք չէր փորձում միջամտել։ Քրդերը գործում էին ինքնավստահ, կարծես հավաքում էին սեփական այգու բերքը։

Գևորգը մոտեցավ, նայեց քրդերին, հայացքը շուռ տվեց պատի տակ կծկված համագյուղացիներին ու բղավեց.

— Ինչո՞ւ եք կծկվել, ինչո՞ւ եք թողնում, որ թալանեն։

Նրա ճիչը անարձագանք մնաց։

Գևորգն անզոր այս ու այն կողմ նայեց, ապա մի քար վերցրեց ու բղավեց քրդերին.

— Հեռացեք այստեղից, թե չէ կխփեմ։

Քրդերն առանց ուշադրություն դարձնելու շարունակում էին կողոպուտը։ Գևորգը սկսեց քարեր շպրտել նրանց վրա։ Քրդերից մի քանիսը շարժվեցին դեպի Գևորգը։

Հայերից մեկը ձայնեց.

— Գևորգ, փախիր, կսպանեն։

Տղան դեմքը շուռ տվեց ձայնի կողմը, բայց առանց տեղից շարժվելու, շարունակեց քարեր շպրտել։ Քրդերը հարձակվեցին նրա վրա և սկսեցին ծեծել ձեռքերով, փայտով, իսկ երբ Գևորգը գետնին ընկավ՝ նաև ոտքերով։ Միայն այն ժամանակ, երբ տղան արյունաշաղախ ընկած էր և կենդանության նշան ցույց չէր տալիս, քրդերը հեռացան։

... 1886 թ. մայիսի 13-ն էր։ Դեռ լույսը չէր բացվել, բայց իշխան Ղզրոյի մեծ գերդաստանի բոլոր անդամները ոտքի վրա էին։ Նրանք պատրաստվում էին ուխտ գնալ Հեղին գյուղ։ Բոլորի ուշադրության կենտրոնում Գևորգն էր։ Ուխտագնացությունից նա տուն չէր վերադառնալու, այլ գնալու էր Առաքելոց վանք՝ կրթություն ստանալու։ Դրա համար էլ նրան հագցրել էին վանքի աշակերտի համազգեստ՝ կապույտ անդրավարտիք,

կապույտ անթև պիջակ, գույնզգույն գուլպա, նախշուն գլխարկ։ Գևորգի տրամադրությունը բարձր էր։

— Ելե՛ք, ժամանակն է շարժվելու,— գյուղով մեկ հնչեց ջորեպան Օհանի խրոխտ ձայնը։ Ուխտավորները տոնական տրամադրությամբ բռնեցին Հեղին գյուղի ճամփան։

Կանայք հագած էին գույնզգույն կտավե շապիկներ, որոնք իջնում էին մինչև կոճերը։ Շապիկները գրկվում էին երփներանգ թելերից գործված նախշուն գոտիներով։ Կանանցից ոմանք կրում էին շատրիկ ու սրտանոց, որոնց կապերը, ուսերից վար միանալով ծամթելերին, կախվում էին մինչև ոտքերը։ Գլխներին կրում էին քոֆի։ Ֆեսի գագաթին, ներսի կողմից, ամրացված էր կլոր տախտակ, որի վրա ձգված էր գդակը։ Գունավոր ժապավենը ականջների մոտ ճյուղավորվելով իջնում էր մինչև ծնոտը։ Գլխարկը ոլորված էր սև ու կարմիր գույնի մետաքսե փուշիներով, որոնց ծայրերին շարված էին պեծպեծուն ուլունքներ։ Ճակատի լայնքով գլխարկին կարված էին արծաթե դրամներ։

Որոշ կանայք հագել էին սպիտակ կտավից մոմած շապիկներ և կապույտ մահուդից ելակներ։

Տղամարդիկ կրում էին անթար, ելակ, բրդե տաբատ, սախ, գդակ, փուշի, որի երկար ծոպերը թափվում էին նրանց ճակատին ու ծոծրակին։ Բոլորն էլ ունեին գոտի, որի վրա ամրացված էին կեռ դաշույնը, ծխախոտի քիսեկը, իսկ դաստակին՝ նաև համրիչը։

Կանայք կարմիր կոշիկներով էին, իսկ տղամարդիկ դաբաղած կաշուց տրեխ կամ կոշիկ էին հագել։

Եթե ավելացնենք նաև խայտաբղետ հագուստներով տղաներին ու աղջիկներին, երեխաներին ու դեռահասներին, ինչպես նաև բազմագույն խուրջինները, կարպետները, պարկերը, ոչխարներն ու ջորիները, ապա կհամոզվեք, որ դեպի Հեղին շարժվող այդ թափորը իրոք տպավորիչ էր ու տոնական։

Հեղին գյուղը գտնվում էր խոր ձորի մեջ, պարսպված ամեհի ժայռերով։ Գյուղն ընկած էր Սասնա չորս զավառակների՝ Խիանքի, Խուլբի, Փսանքի, Տալվորիկի սահմանագլխին։ Հեղինի վանք ուխտի էին գալիս այդ բոլոր վայրերից։

Արևի ճառագայթները դեռ նոր էին ժայռերի գագաթներից ձորերը լցվում, երբ Մրկթենքի ուխտավորները վանք հասան։ Գևորգենց ընտանիքը տեղավորվեց վանքի բակի մի անկյու-

նում պատրաստված հյուղակում։ Կանայք ու աղջիկները հացի պատրաստություն էին տեսնում, երբ վանքի բակ մտավ մարդկանց մի ստվար խումբ։ Հեղինէ իշխան Վարդանն էր մերձավորների հետ։ Այդ խմբից բաժանվեց 11-ամյա սիրունիկ ու չարաճճի մի աղջիկ, իշխանի միակուճար դուստրը՝ Եղսոն, ու համարձակ քայլերով ուղղվեց դեպի Գևորգը։

— Դո՞ւ ումոնցից ես,— ուղիղ նայելով Գևորգի աչքերի մեջ հարցրեց Եղսոն։

— Իշխան Ղզրոյի ախպոր տղան եմ,— պատասխանեց Գևորգը, չդիմանալով աղջկա հայացքին։

Ընդունված կարգ էր. իշխան Վարդանը այդ օրը պետք է այցելեր մյուս գյուղերից եկած իշխաններին։ Ուխտավորների մի մասը օթևաններ էին պատրաստում, իսկ ջահել տղաներն ու աղջիկները պար էին բռնել։ Ուխտավորների երգը արձագանքում էր կիրճերում։ Եղսոն, առանց քաշվելու, բռնեց Գևորգի ձեռքը և տաղավարից դուրս քաշելով, ասաց.

— Էն դիմացի այգիները մերն են։ Գնանք խաղող ու տանձ բերենք։

Եվ պատասխան չակնկալելով՝ շարժվեց դեպի այգիները։ Այգիներում Եղսոն, ասես, կերպարանափոխվեց։ Գևորգի կողքին կանգնած էր ամաչկոտ ու շիկնած մի աղջնակ։ Գևորգը զգաց, թե ինչպես է սիրտը տրոփում իրեն անծանոթ զգացումից։ Նրանք, առանց մի բառ փոխանակելու, հավաքեցին տանձ ու խաղող և շարժվեցին դեպի վանք։ Արդեն մոտենում էին ուխտավորներին, երբ Եղսոն վարանեց, վախվորած ու շառագունած նայեց Գևորգին և հազիվ լսելի ձայնով հարցրեց.

— Դու ուսանելո՞ւ կերթաս։

— Վաղը չէ մյուս օրը։ Ուխտն ավարտելուց հետո այլևս մեր գյուղ չեմ դառնա։ Պիտի երթամ Առաքելոց վանք սովորելու և չորս տարի այնտեղ պիտի մնամ։

— Չորս տարի՞... Ուրեմն ինձ կմոռանաս,— ակամա թռավ աղջկա բերանից և, խայթված իր խոսքերից, կտրուկ պոկվեց տեղից ու վազեց դեպի ուխտավորները։ Հաջորդ երկու օրերին նա այլևս չերևաց։

... Ուխտավորները խումբ-խումբ հեռանում էին վանքի բակից։ Վանքը և նրա շրջապատը դատարկվում էր։ Տուն չէին վերադառնալու միայն Գևորգն ու չորեպան Օհանը։ Այգաբացին ճամփա էին բռնելու դեպի ուրիշ աշխարհ՝ Առաքելոց վանք։

Բայց մինչև մեկնելը Գևորգը Եղսոյի ձեռքից բռնած վանք մտավ, կանգ առավ խորանի առաջ և աղոթքի՞, թե՞ երդման պես հնչեց նրա պատանեկան ձայնը.

— Այս խաչի վրա երդվենք, որ մեր բախտը իրարու պիտի կապենք։

Չորեպան Օհանն ու Գևորգը Առաքելոց վանքի վարդապետներից մեկի ուղեկցությամբ ճանապարհ ընկան։

Գևորգը քայլում էր ցրված ու տխուր։

— Ա՛յ տղա, ինչո՞ւ ես մթնել, Առաքելոց վանք կերթաս և ոչ թե Մշո բանտ,— ձայն տվեց չորեպան Օհանը։

Գևորգը չպատասխանեց։ Կեսօրին հասան մի սառնորակ աղբյուրի։ Մոտեցան, խուրջինները վար դրեցին, ուտելիքը շարեցին։

Գևորգը նստել էր մի քարի և հայացքը պտտում էր չորս կողմը։ Հորիզոնին ընդգծվում էին Սասունը որպես լեռնաշխարհ ձևավորող երեք լեռնագագաթներ՝ Գեբինը, Ծովասարը և Անդոկը։ Առաքելոց վանքի ճանապարհը անցնում էր Գեբինի փեշերով։ Գեբինը ծածկված է խավրծիլի լայն տերևներով, և հեռվից անտառապատ սարի պատրանք էր ստեղծվում։ Այստեղից էր սկիզբ առնում Տալվորիկ գետը, որը, խորխորատների միջով հոսելով դեպի հյուսիս-արևելք, միանում էր Անդոկից սկիզբ առնող Սասուն գետին։ Տալվորիկ գետի վրա էր հայտնի Սատանայի կամուրջը, որի բարձրությունը հասնում էր 600 մետրի։

Մեր ուղևորները դեռ նոր էին հացի առաջին պատառը կրտրել, երբ աղբյուրին մոտեցան երեք քրդեր։

— Որտեղի՞ց, դեպի ո՞ւր,— ողջունելուց հետո հարցրեց նրանցից ավագը։

— Դեպի Առաքելոց վանք,— կարճ կտրեց չորեպան Օհանը։

— Դեռ երկար ճանապարհ ունեք կտրելու, մեր օդաները մոտ են, ձորի մեջ, գնանք, հանգստացեք, հետո նոր ճամփա կընկնեք։

Վարդապետն ու Օհանը շնորհակալական խոսքերով հրաժարվեցին։ Բայց քրդերը չէին զիջում՝ «Դուք մեր հյուրն եք, հյուրն աստծունն է, առանց մեր հացը կտրելու չենք թողնի, որ գնաք»։ Այդ ընթացքում քրդերից մեկը աննկատ հեռացավ և քիչ անց վերադարձավ՝ իր հետ բերելով մի ոչխար։ Նա չորեպան Օհանի օգնությամբ ոչխար մորթեց և կրակ վառեց։ Նրանք խո-

ղովածի պատրաստություն էին տեսնում, իսկ մյուսները, քարերին նստած զրուցում էին։ Եվ երբ քրդերի ավագն իմացավ, որ Գևորգը Ղզրոյի եղբորորդին է, շատ ուրախացավ և անընդհատ կրկնում էր.

— Ղզրոն իմ քիրվան է, իմ ախպերը, Ղզրոն ինձ շատ լավություն էր արել, իմ քոչ քո ոտի տակ։ Ձեր գյուղո՞ւմ էր, որ քրդերը այգի են թալանել։

— Մեր գյուղում էր,— ասաց Գևորգը։

Քուրդը քնքշանքով նայեց պատանուն.

— Լաո, էդ քրդերը ոչ միայն հայերի, այլև քրդերի թշնամին են։ Մենք երկրագործությամբ չենք զբաղվում, որովհետև մեզ ավելի հեշտ է ու ձեռնտու հայի վաստակը խլել... Եթե հայի արյունը չծծենք, մեր վարկը կառավարության աչքում կկորցնենք, որովհետև նրա պաշտոնյաները իրենք են մեզ ստիպում այդ ճանապարհով լրացնել մեր շահը և մեզ ասում են, որ հայը մեր պատառն է... Դուք հայի տերն եք, ասում են մեզ, և նրա անձն ու ինչքը ձերն են, ճշտությամբ կատարեք ձեր դերը, որպեսզի չզրկվեք արտոնություններից։ Մենք էլ կատարում ենք մեր դերը։ Եվ մեր հարձակումների ու ավերումների համար մենք ոչ մի կշտամբանք և արգելք չենք ունենում։ Օսմանցին լավ գիտե, որ եթե հայերն ու քրդերը միավորվեն, մեր այս լեռներում ինքը տեղ չի ունենա։ Դրա համար էլ օսմանյան պետության ջոջերը քրդերին լարում են հայերի դեմ, քրդերին գրգռում հայերին ոչնչացնելու, նրանց ունեցվածքին ու հողին տեր դառնալու։ Նրանք Սասունի հողերը հայերից մաքրելուց հետո խոստանում են տալ քրդերին, և մեծ թվով քրդեր հավատում են այդ խոսքերին և սպանում ու թալանում են հայերին։ Մեր ժողովրդի խղճի վրա օրեցօր ծանրանում է հանցագործությունների ու սպանությունների մեծ բեռը։ Տա աստված, որ քուրդ ժողովուրդը մի օր հասկանա, որ դրկցին թալանողն ու սպանողը կուշտ ու երջանիկ լինել չի կարող, որ հայերն ու քրդերը մի ընդհանուր թշնամի ունեն։ Այդ թշնամին օսմանյան բռնապետությունն է։ Թե չէ այն սուրը, որ այսօր կտրում է հայերի գլուխը, վաղը իջնելու է քրդերի գլխին։ Զուլո՞ւմ է, լաո՞, զուլո՞ւմ։

ԶՈՒԼՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Հաջորդ օրվա երկրորդ կեսին, անցնելով Շատախի հարթավայրը, մեր ճամփորդները Ծովասարի փեշերով շարժվեցին դեպի Առաքելոց վանք։

— Գևո՞րգ, լաո՞, ա՞յ, էն կողմ նայիր,— ձեռքը Ծովասարի ուղղությամբ պարզելով՝ ասաց ջորեպան Օհանը,— Ծովասարի և Մարաթուկի արանքում է եղել Դավթի քաղաքն ու բերդը։ Բերդի պարիսպների ու տների ավերակները հիմա էլ կան։ Կանգուն են մի քանի պատեր, դարպասի կողերը և գլխի սրբատաշ քարերը։ Էնտեղ են Դավթի ձիերի մսուրը։ Բերդում կա մի աղբյուր, որ դրսից քարե խողովակներով է բերված։ Քաղաքը կառուցել են Սանասարն ու Բաղդասարը։ Լավ գիտցի՞ր, լաո՞, Սանասարի ու Բաղդասարի օրերից մինչև հիմա Վերին Սասունը թշնամու լուծ չի տարել, ապրել է անկախ։

Մայրամուտ էր, երբ երևացին Առաքելոց վանքի պարիսպներն ու գմբեթը։ Վանքից վերև, ասես սարի կուրծքը պատռելով, դուրս էր պրծել մի հսկա ժայռաբեկոր։ Նայողին թվում էր, ուր որ է հսկա քարաբեկորը պոկվելու ու դեպի անդունդն է գահավիժելու։

— Քեռի Օհան, Դավթի քար որ ասում են, է՞ս է,— հարցրեց Գևորգը։

— Իրավ ես, լաո։ Դավթի քարն է, որ կա։

Դավիթը հովիվ էր, ու մի օր, երբ ոչխար էր արածեցնում Ծովասարի լանջերին, հանկարծ լեռան գագաթից մի վիթխարի ժայռ պոկվում ու գլորվում է դեպի ոչխարները։ Դավիթը վազում է ժայռին հանդիման և ձեռքը դեմ անելով՝ կանգնեցնում է։ Ժայռը մեխվում է իր տեղում, իսկ վրան մնում է Դավթի ձեռքի հետքը։

Արդեն մութ էր, երբ Առաքելոց վանքի դարպասից ներս մտան։

Հովհաննես վարդապետը վերամբարձ խոսքերով դիմավորեց նրանց.

— Տղա՞ս, դու ոտ դրիր սուրբ շեմից ներս, դու Թարգմանչաց վանքում ես և այժմ շնչում ես նույն օդը, ինչ հարյուրամյակներ առաջ շնչել են մեր ժողովրդի մեծերը՝ Խորենացին, Ղազար Փարպեցին, Դավիթ Անհաղթը, Ասողիկը։ Այստեղ են հանգչում այդ մեծերի աճյունները։ Դու եկել ես ուսում առնե-

լու մի կրթական օջախում, որտեղից դուրս են եկել շատ նշանավոր գործիչներ, գիտնականներ, գրողներ։ Արժանի եղիր նրանց։

Եվ այսպես, մրկթենքցի 16-ամյա պատանին դարձավ Առաքելոց նշանավոր վանքի՝ «դպրության տաճարի» սանը։

Գևորգը արտակարգ ճարպիկ պատանի էր, որսորդության սիրահար։

Մի քուրդ աղա փորձում է հափշտակել վանքի ոչխարները։ Վանքի հովիվը օգնություն է կանչում։ Գևորգը, հասնելով հալածողների ետևից, նրանցից մեկին գետնում է, զենքը ձեռքից խլում։ Մյուս քրդերը փախչում են։

Գևորգը հրաչանը ուսին, ոչխարներն առաջը դցած, վանք է վերադառնում։

«Դժվար թե չորս հսկա պարիսպներով շրջապատված այդ դարավոր մենաստանը կարողանար պահել իր մեջ Փսանաց գավառի ըմբոստ զավակին, եթե միայն այդ մենաստանը Առաքելոց վանքը չլիներ, որտեղ լեռնական մատաղ, բայց խրոխտ հոգիները գալիս են սնվելու մի քիչ լույսով և դարձյալ մղվում դեպի իրենց սարերի կույս ազատությունը»[1]։

Ժամանակին այսպես է գրվել նրա սանի մասին։

Վանքի դպրոցը հոգևոր էր և, բնականաբար, գլխավոր ուշադրությունը դարձվում էր կրոնական առարկաների դասավանդմանը։ Բայց այս վանքում կենդանի էին Խրիմյան Հայրիկի ազատասիրական գաղափարները։ Այդ գաղափարների նվիրյալն էր վանքի վանահայր Հովհաննես վարդապետ Մուրադյանը։

Դպրոցում մեծ ուշադրություն էր դարձվում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին։ Հովհաննես վարդապետը ձգտում էր իր սաներին դաստիարակել հայրենասիրության ոգով, նրանցից պատրաստել ազատագրական պայքարի մարտիկներ։ Առաքելոց վանքում էին կրթություն ստացել Արաբոն, Լևոնը, Մուրադը, Մովսեսը և այլ հայդուկներ։

Վանահայրը անմիջապես նկատեց ճարպիկ, ֆիզիկապես ուժեղ, միաժամանակ ուշիմ ու եռանդուն Գևորգին։ Նրան լրացուցիչ գրքեր էր տալիս կարդալու։ Նրան և Ահրոնք գյուղից եկած Աղամ անունով աշակերտին հաճախ էր վարդապետը հրավիրում իր խուցը, պատմում հարազատ ժողովրդի վիճակի, Արևմտյան

Հայաստանում տիրող դրության, օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների մասին։

Սկսվել էին զուլումի տարիները։ Հայ ժողովուրդը ոչնչացվելու սպառնալիքի տակ էր։ Քրդերը դարձել էին այն կույր զենքը, որը սուլթանը հմտորեն ուղղել էր հայերի դեմ։

Օգտվելով թուրքական իշխանությունների աջակցությունից ու հորդորանքներից, Մուսա բեկը վայրագ բռնություններ էր գործադրում Մշո դաշտի հայերի նկատմամբ։ 1887 թվականին, երբ Խարսի գյուղապետ Միրոն իր աղջկան նշանում էր, Մուսա բեկը, սանձարձակորեն աղջկա համար փրկագին պահանջեց։ Միրոն հրաժարվեց այդ ստորացուցիչ պահանջը կատարել։ Գազազած Մուսա բեկը հարձակվեց գյուղի վրա, թալանեց գյուղացիների ունեցվածքը, հրդեհեց տները։ Գյուղացիները գանգատ գրեցին Բ. Դռանը։ Բ. Դուռը գյուղացիների արդար բողոքն անուշադրության մատնեց, իսկ Մուսա բեկը կատարեց նոր վայրագություն՝ գազանաբար սպանեց Արգավանքի գյուղապետ Օհանին։ Սարգիսը վրեժխնդիր եղավ հոր սպանության համար։ Մուսա բեկի խմբի հինգ քրդեր ընկան նրա գնդակից, ինքն էլ հերոսաբար զոհվեց։

Այդ ավազակը սիրում էր հոխորտալ. «Ես աշիրեթի ցեղապետ եմ, և 3—4000 քուրդ սպասում են իմ հրամանին. բավական է մատս շարժեմ, և հայերից փոշի էլ չի մնա»։

1889 թվականին Մուսա բեկը կրկին է հարձակվում Խարսի գյուղապետ Միրոյի տան վրա, հորը սպանում, իսկ աղջկան՝ Գյուլիզարին, առևանգում։ Հայերի զանգվածային բողոքների ճնշման տակ սուլթանը Մուսա բեկին բերել է տալիս Կ. Պոլիս, իբր դատելու։ Սակայն նրան դիմավորելու ուղարկեց բարձր պաշտոններ զբաղեցնող Հասան և Բահրի փաշաներին։ Երեք ամիս շարունակ կառավարական շրջաններում Մուսա բեկը հիանալի ժամանակ անցկացրեց։

Դատավարությանը մասնակցելու համար Կ. Պոլիս էին եկել նաև մշեցիներ։

1889 թվի սեպտեմբերին «Հնչակը» գրեց. «... 50 հայ մշեցիներ, որ անասելի նեղություններ կրելով, 60 օր շարունակ հետիոտն ճանապարհ անցնելուց հետո, մի-մի սև հաց օրվա իրենց միակ կերակուր ունենալով, այսօր արդեն Կ. Պոլսում են ամենաողորմելի դրության մեջ...»։

«Հնչակը» գտնում էր, որ սուլթանը միտումնավոր ձգձգում է

Մուսայի դատավարությունը, որպեսզի մշեցիք, Պոլսում մնալու համար նյութական միջոցներ չունենալով և քաշքշուկից զզվելով, վերադառնան Տարոն, ինչը հիմք կտա Մուսա բեկին հայտարարելու՝ թե «մշեցիք զրպարտում են իրեն, և դրա համար էլ փախան»։

Սակայն դատական խեղկատակությունը, համենայն դեպս, տեղի ունեցավ և տևեց 10 օր։ Դատավարությանը ներկա էին Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իտալիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Բելգիայի դեսպանությունների ղեկավարները, եվրոպական և տեղական մամուլի ներկայացուցիչները։

Դատարանը Մուսա բեկի վայրագությունների մասին լսեց մի շարք գանգատներ։ Մշո Առկոնք գյուղի բնակիչ Մկրտիչ Հովհաննիսյանը բողոքեց, որ Մուսան հրդեհել է իրենց կալն ու ամբարը, և հարձակվելով իր հոր ու եղբոր վրա, կապել է սյունին, գանակոծել և 20 ոսկի պահանջել։ Էսվեց նաև ջրաղացպան Մալխասի կնոջ բողոքը, որ Մուսան սպանել է իր ամուսնուն, և մի շարք այլ գանգատներ։ Դատարանում այս հանցագործությունները հաստատվեցին, չնայած դատախազ Խալիլ բեյը բացահայտ պաշտպանում էր Մուսա բեկին և խճողված հարցերով շփոթեցնում հայերին։

1889 թ. նոյեմբերի 11-ին հրապարակվեց դատավճիռը։ Նախապես ունենալով կառավարության ցուցմունքները, դատավորները, համարյա միաձայն, Մուսա բեկին անմեղ ճանաչեցին։

ԱՄՆ-ի դեսպանն այդ դատավճռի դեմ բողոք գրեց Բ. Դուռը։

«Մուսան այժմ դատվում է,— գրեցին եվրոպական լրագրերը,— նրա փաստաբանը, խոսք չկա, ինքը կառավարությունն է։ Ապացո՞ւց... Խնդրեմ։ Մուսա բեկը սպառնացել է, որ եթե ինքը դատապարտվի, կհրապարակի այն բոլոր նամակները, որոնց մեջ գավառական նահանգապետերը նրան դրդում են հայերի դեմ արշավանքներ մղելու։ Եվ մեկ փաստ. Բ. Դուռը դիմակավորված կերպով անգլիական մի լրագրի ուղարկում է այսպիսի հեռագիր. «Մուսային այնչափ մեղադրանքներ են առաջադրված, որ նա ստիպված պետք է անհետանա»[2]։

Սուլթանը հայի «բարին է ցանկանում»։ Բայց տեսեք. Վանի նահանգապետ Խալիլ փաշան, որ Մուսայի պաշտպանն է, ստիպում է տեղացի հայերին ստորագրել Բ. Դռանն ուղարկվելիք մի հեռագրի տակ, որտեղ հայտնվում է այն միտքը, թե հայերը գոհ են իրենց դրությունից և ապրում

Խալիլը չի զլանում ստորագրել շատ հայերի փոխարեն։

Վանի վեց հայտնի վաճառականներ բողոքագիր են ուղարկում Բ. Դռան, որ իրենց անունները հեռագրի տակ ստորագրողը իրենք չեն, այլ Խալիլը Բ. Դուռը... վեց հայերին էլ բանտարկում է։

Մուսա բեկը մնաց անպատիժ, սուլթանի համաձայնությամբ թուրքական դատարանը հայերին համարեց «զրպարտիչներ» և նրանցից գանձեց դատարանի ծախսերը։

Պոլսի շքեղ կյանքը շատ շուտով ձանձրացրեց ազատ լեռնների տիրակալ ավազակին և, իշխանությունների օգնությամբ նա Պոլսից «անհետացավ», դրանով սուլթանին ազատելով մեծ տերությունների նախատինքներից։

Մուսա բեկի գազանությունների կապակցությամբ հայերի զանգվածային բողոքների կազմակերպիչը Մշո վարժարանի ուսուցիչ, Խրիմյան Հայրիկի աշակերտ, վարդենիսցի Մարգար վարժապետն էր։

Փանոս Թերլեմեզյանը անձամբ ճանաչում էր Մարգար վարժապետին ու նրա մասին գրել է. «Նա ինձ հիացրեց իբրև պատրաստված, նվիրված և մեր ձեռնարկած գործին խիստ հարմար մարդ»[3]։

Գործնականում Մարգար վարժապետը Տարոնում ազատագրական գաղափարներ քարոզող առաջին գործիչն էր։ Նա էր նաև առաջին զինված ջոկատի կազմակերպիչը։ Երբ Գյուլիզարին փախցնելուց հետո Մուսա բեկը որոշեց հարձակվել և ավերել նաև Վարդենիս գյուղը, ավազակի դեմ դուրս եկավ Մարգարի զինված խումբը։ Մուսա բեկը մի քանի զոհ տալով փախավ։ Թուրքական իշխանություններն ոստիկանություն ուղարկեցին Վարդենիս։ Նրանք վարդենիսցիներից պահանջեցին հանձնել իրենց մոտ եղած զենքերն ու քուրդ աշիրեթության հետ կռվի մեղավորներին։ Ոստիկանությունը ձերբակալեց 70 գյուղացիների, նրանցից 16-ը տասնհինգ տարվա տաժանակրության դատապարտվեց։ Մարգար վարժապետին իր խմբի հետ հաջողվեց ձերբակալությունից խույս տալ։ Մարգարին ձերբակալելու պատրվակով ոստիկանությունը խուզարկում, թալանում էր հայ գյուղացիներին։ Մուշեղաշեն գյուղում, այդպիսի մի խուզարկության ընթացքում, ոստիկանությանն դեմ են դուրս գալիս վարդենիսցի Հաստաթը իր երկու եղբայրներով։ Ոստիկանության և նրանց միացած քրդերի հետ կռիվը տևում է մինչև երեկո։ Երեք եղբայրները, հինգ հոգու սպանելով, գիշերով անհետանում են։

1890 թ. Մարգար վարժապետը մեկնում է Կովկաս։ 1891 թ. նա մի զինատար խմբի հետ վերադառնում է Մուշ։ Նույն տարվա աշնանը նա նորից կռվկասում էր և պատրաստվում էր Մուշ վերադառնալ Արաբոյի խմբի հետ։ Նրանք հաջողվում է վերադառնալ և Մուշում ու Խնուսում բա-

ցաստրական աշխատանք տանել։ Քմռանք Ակզուտ գյուղում մի մատնիչ նրան ձերբակալել է տպիս։

Բանտում նրան մի ամբողջ տարի խոշտանգում են։ Բայց Մարգարը անձնկում էր և նրանից ոչինչ իմանալ չի հաջողվում։ Նրան կախում են Բաղեշի քաղաքային հրապարակում։ Ականատեսներից մեկը գրում է. «Երբ Մարգարին հրավիրում են կախաղանի մոտ, երեսնամյա երիտասարդը պարզ, անխռով դիմում է դեպի մահ և կանգնած աթոռի վրա, կախաղանի տակ, դիմում է խուռն բազմությանը. «Հայեր, մի վհատվեք, քաջ իմացեք, որ ա :ուհետև կհասնենք մեր նպատակին։ Թեև ես մեռնում եմ, բայց դուք պիտի ապրեք։ Միա.ն այն երջանիկ ժամանակ ինձ չմոռանաք»։

«Այդ նշանավոր զոհը,— գրեց «Հնչակը»,— Մշո դաշտի պարծանքներից մեկն էր և հայ ժողովրդի սուրբ դատի անձնուրաց ու գործունյա զինվորներից մեկը»։

Մուսա բեկի դատական ֆարսը ոգևորեց թուրք բեկերին ու սպաներին։ Առանձնապես լկտիացան Մուսայի ազգականները։

Մուսա բեկի որդին, 14-ամյա Ալի բեկը, 1893 թվի նոյեմբերի 14-ին 15 ձիավորով մտնում է Խնուսի բերդը և իջևանում Մորուք գյուղում։ Երբ այստեղ նրա պահանջները չեն բավարարում, սպառնում է. «Գիտե՞ք ես ով եմ, ես այն Մուսա բեկի որդին եմ, որը հայերին Զուխուրի մեջ շշով խորովեց։ Եթե ասածներս չանեք, նույնը ես կանեմ»։

***

Մուսա բեկի դատավարությունից անմիջապես հետո Մուշում Հաջի Դայիբի ղեկավարությամբ ժողով է տեղի ունենում և որոշվում է հունիսի 10-ի դիշերը հայերին կոտորել։ Սակայն մի քանի խոհեմ թուրքերի հաջողվում է սպանդը ձախողել։ Երկու շաբաթ շարունակ քաղաքը զինվորական հսկողության տակ էր։

Հունիսի կեսերին Տիգրանակերտից Տարոն փոխադրվեցին քեռշերներ կոչվող վայրագ քրդական ցեղերը։ Ութ օրվա ընթացքում այս ավազակները թալանեցին Տարոնի գյուղերի մոտ կեսը՝ Շեխլան, Անձնուտ, Գոմս, Խոփեր, Հայկերտ, Դրմերտ, Քրդագոմ, Ծղակ, Առնիստ, Ավազաղբյուր, Հունան, Բերդակ և այլն, սպանեցին ու վիրավորեցին շատ գյուղացիների։

Իշխանությունները զորք ուղարկեցին իբր քուրդ ավազակներին պատժելու, բայց զորքը ևս սկսեց թալանել հայերին։

Լկտիացել էին նաև լրտեսները, որոնք բանսարկություն անելով, զբաղվում էին դրամաշորթությամբ։

1890 թ. օգոստոսի 30-ին Կ. Պոլսից գրում են. «Մշո դաշտը անընդհատ քրդերի, չերքեզների և քեռշերների ավարառության ու ավերմունքի վայր է դարձել, որոնց աջակցում են թուրք զինվորները՝ խաղաղություն և բարեկամություն հաստատելու պատրվակով...

Տեղ-տեղ պահեստայիններին զենքի են կոչում։ Արաբկիրից մի զինվորական վաշտ է մեկնում Բաղեշ...

Հայերի ու թուրքերի միջև անվստահությունը ահագնանում է, և տարակույս չկա, որ երկուստեք կոտորածների երկյուղը բոլորովին անտեղի չէ և վաղ թե ուշ պետք է իրականանա...»։

Կառավարությունն իր խստություններն ու հսկողությունը հայերի հանդեպ կրկնապատկել էր։ Բոլոր գյուղերում չոնեներ ու ոստիկաններ էին վխտում։ Մուշը փաստորեն պաշարված էր։

Հեղափոխականների դեմ պայքարելու պատրվակով Կոփ գյուղ զորքեր բերվեցին. մի քանի մեծ տներ վերածվեցին զորանոցների։ Ոստիկանները հսկողության տակ էին վերցրել ճանապարհները։ Ոչ մի ջորեպան, կառապան, ճամփորդ չէր անցնում առանց կողոպտվելու։ Ոստիկանների արշավանքների հետևանքով հազարավոր գյուղացիներ, տուն ու տեղ թողած, ցիրուցան էին եղել, հայրը չգիտեր զավակի տեղը, զավակը՝ հորը։

Այսպիսով ձևավորվում էր մահմեդական ազդաբնակչության և օսմանյան իշխանության դաշինքը հայ ժողովրդին տնտեսապես քայքայելու, քաղաքականապես ընկճելու և, ի վերջո, Արևմտյան Հայաստանը և, առաջին հերթին, Սասունը հայերից դատարկելու համար։

Սակայն հեշտ չէ սասունցուն կտրել իր հող ու ջրից, իր լեռներից, ուր կոփվել էր նրա ազատատենչ ոգին։ Սասունցին գիտեր համբերել ու տոկալ, բայց նաև գիտեր իր իրավունքների, իր պատվի ու տան համար կռիվ տալ։ Թեկուզև այդ կռիվը անհավասար լինի, սասունցին արյամբ կվերականգնի լեռնականի իր ոտնահարված արժանապատվությունը։

«Հնչակը» դեռ 1889 թվի դեկտեմբերին գրեց, որ սասունցիները ապստամբելու ուղին են ընտրել որպես «փրկության միակ ճանապարհ»։ Եվ այն, որ կառավարությունը մեծաքանակ զորքի ու թնդանոթների օգնությամբ կարողացավ ձերբակալել Սասնո ապստամբության պարագլուխներից շատերին, դա դեռ թուրքերի հաղթանակը չէր։

1889—1890 թվերը արևմտահայության կյանքում նշանավորվեցին ազատագրական պայքարի մի քանի խոշոր բռնկումներով։ Մասնավորապես, Տարոնում գործում էին մի քանի հայդուկային խմբեր, իսկ Արաբոն Մշո կառավարչի՝ ու քուրդ ցեղապետների սարսափն էր դարձել։

ԱՐԱԲՈ

«Արաբո...»,— Գևորգը երկյուղածորեն էր շշնջում այդ անունը, որի մասին լեգենդներ էին շրջում, և մտքում հնարավորություններ էր փնտրում նրան միանալու։

— Սրբազան, իսկ որտե՞ղ է Արաբոն,— մի անգամ հարցրեց նա։

— Արաբոն ամեն տեղ է,— խուսափուկ պատասխանեց նա, կռահելով պատանու հարցի իմաստը։— Նա մեր դպրոցում էր սովորում, բայց թողեց ու հայդուկ դարձավ։ Արաբոն իշխանություն չի ճանաչում, անընդհատ կռիվների մեջ է թուրքական բռնությունների դեմ։ Առավոտյան նրան կարելի է հանդիպել Մուշ քաղաքի մոտերքում, իսկ երեկոյան արդեն Սասնա լեռներում է։

Մի օր Գևորգը իր դասընկերոջ՝ Ադամի հետ, վանքից դուրս ելավ և շարժվեց դեպի Դավթի քար, ուր, ըստ իր ենթադրությունների, կարող էին տեսնել նրան, ում անունը Սասնա խրոխտ լեռներում թնդում էր որպես ազատատենչ որոտ։

— Հոս եկեք տեսնեմ,— թփերի միջից լսվեց մի ձայն։ Տղաները անակնկալի եկան, երբ տեսան խոտերի մեջ պառկած երեք երիտասարդների։ Նրանցից մեկը երեսունին մոտ, ամուր կազմվածքով, գեղեցիկ դիմագծերով կտրիճ էր։

«Արաբոն է»,— մտածեց Գևորգը։

— Ի՞նչ եք կորցրել էս կողմերում,— սևեռուն հայացքը տղաներին ուղղելով՝ հարցրեց նա։

— Եկել ենք քեզ տեսնելու,— համարձակ պատասխանեց Գևորգը։

— Որտեղի՞ց ես, ո՞ւմ տնից ես, անունդ ի՞նչ է։

— Փսանքի Մրկթենք գյուղից եմ, անունս Գևորգ է, բայց մեր գյուղացիները ինձ Սարհատ են ասում։— Հետո նա աղերսանքով, բայց պահանջելու պես ասաց.

— Արաբո, ընդունիր մեզ քո խումբը։

— Դեռ շատ եք ջահել,— պատասխանեց Արաբոն։

— Մենք վանք չենք վերադառնա,— կտրուկ ասաց Գևորգը,— եթե չվերցնես, կբարձրանանք սարերը։

Արաբոն տեղի տվեց ջահելների հաստատակամության առջև։

Արաբոն Սասունում հայդուկային շարժման ռահվիրան էր, ժողովրդական վրիժառուների անդրանիկ խմբի կազմակերպողն ու ղեկավարը։ Նրա իսկական անունը Առաքել էր։ Ծնվել է Բռնաշենի Կուռթեր գյուղում 1863 թվականին, սովորել է Առաքելոց վանքի դպրոցում։ Փայլուն ընդունակությունների տեր էր։ Նրան սպասում էր կրոնական ծառայությունը, բայց Առաքելը ընտրեց կյանքի այլ ուղի՝ ժողովրդի պատվի, իրավունքների ու ազատագրության համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին։ Նա հրաժարվեց կրոնական կոչումներից, հեռացավ վանքից ու վերցրեց պանդուխտի ցուպը։ Գնաց Հալեպ, մշակ դարձավ, վաստակած փողերով հրացան գնեց և վերադառնալով կազմակերպեց մի խումբ, որը կռվում էր քրդական աշիրեթների ու թուրքական ճնշողների դեմ։ Սկզբում խմբում երեք հոգի էին։ Իրենից բացի՝ դերգեվանքցի Մխոն և ալիզրոնանցի Լևոնը։ Հետագայում խումբը նոր անդամներ ընդունեց՝ Գևորգ Չաուշ, Գալշոյի Մանուկ, Գոմերցի Հովիկ, Բերդակի Ներսո, Ահրոնքցի Ադամ, Ղարսեցի Հագե։

Արաբոյի հայդուկային խմբի գործողությունների մեթոդն էր՝ արագ, հանկարծակի ու աներևույթ։ Նա անընդհատ կռիվների մեջ էր։ Ժամանակակիցներից մեկի արտահայտությամբ «առավոտյան նրան կարելի էր հանդիպել Մուշ քաղաքի մոտակայքում, իսկ երեկոյան նա արդեն Մարաթուկի գագաթին էր»։

Արաբոն բոլոր խեղճերի, հարստահարվածների, թշվառների պաշտպանն էր, անկախ նրանց ազգությունից։ 1885—1889 թվերին Արաբոն որպես «ավազակապետ էր» գործում, այսինքն նրա գործունեության մեթոդները վերցված էին այդ տարիներին օսմանյան կայսրության տարածքում գործող բազմաթիվ հրոսակախմբերի զինանոցից։ 1889—1890 թվերին նա վճռականապես սահմանազատվեց այդ մեթոդներից ու որդեգրեց պայքարի հեղափոխական միջոցներ։

Արաբոյի անունը շուտով տարածվում է ամբողջ Սասունում։ Ոչ միայն հայերը, այլ մասամբ նաև քրդերը միանում են նրան։ Սկզբում նա հայերի ու քրդերի հետ վարվում էր այնպես, ինչ-

պես քուրդ թոռունը, որը իր հպատակներին պաշտպանում է ուրիշների հարձակումներից ու ոտնձգություններից։ Արաբոն ու նրա խմբի անդամները քրդական հագուստներում ծպտված շրջում էին Սասունի ու Տարոնի գյուղերը, թուրքերից զենքեր էին բռնագրավում ու զինվում։ Նրա ստեղծած այս ավանդույթը որդեգրեցին հետագա բոլոր հայդուկային խմբերն ու շատ հայդուկներ։

Կռիվներից մեկում Արաբոն դեմքին դաշույնի հարված էր ստացել։ Սպին ձգվում էր բերանի ձախ անկյունից մինչև ծնոտը։ Այդ սպին նրա դեմքին առնականություն և խորհրդավորություն էր հաղորդում։

Մի անգամ, երբ Գևորգն ու Ադամը ուտելիք էին տանում Արաբոյի խմբին, տեսան Դավթի քարի տակ հավաքված յոթ հոգու։

— Սասունն ու Մշո դաշտը եռում են,— խոսում էր Արաբոն,— ազատագրության գաղափարները ոտի են հանել նաև հայկական նահանգների շատ գյուղացիների։ Թուրքերն ուժեղացնում են ճնշումը։ Մեր ուժերը զորեղ չեն, մենք զենք չունենք։ Խոշոր պետությունները հայերին խաբում են, նրանցից օգնության հույս չկա։ Մեզ օգնել կարող է ռուսաց պետությունը։ Միտք ունեմ անցնել Կովկաս, տեղի հայերի օգնությամբ դիմել ռուսաց թագավորին։ Կովկասում մարտական ջոկատներ կհավաքեմ, կղինեմ ու կվերադառնամ։ Մենք պետք է ժողովրդին պաշտպանենք։ Պետք է փոքր խմբերով տարածվենք ամբողջ լեռնաշխարհով, անպատիժ չթողնենք թալանի, սպանության, բռնաբարության ու դավաճանության ոչ մի դեպք։ Այլ ճանապարհ, այլ հույս չկա ժողովրդի ոգին պահելու, նրան հուսալքության չմատնելու համար։

Արաբոն իսկապես տարբերություն չէր դնում մեծ ու փոքր արարքների միջև, նա գտնում էր, որ ճնշումն ու անարդարությունը, ինչպիսին էլ դրանք լինեն, պետք է պատժվեն։

Մանավանդ, որ թուրքական իշխանությունների վարքագծի սկզբունքն էր՝ թե ով է հանցագործության իսկական հեղինակը, նշանակություն չունի, բոլոր դեպքերում մեղավոր պետք է համարել քրիստոնյային։ Անգլիական «Կապույտ գրքում» տպագրված հյուպատոսական զեկուցագրերից մեկում կարդում ենք, որ Վարդենիս գյուղում «Քրդերի ու հայերի միջև առաջացած ընդհարումը, որ ծագել էր քրդերի կողմից հարսնացու հայ աղջկան հափշտակելու փորձ անելու պատճառով և, որի ժամանակ սպանվել էին երկու քուրդ և մեկ հայ, պատիվ ունեմ հաղորդելու..., որ այդ գործով ձերբակալված և Մուշում բանտարկված 17 հայ դատապարտվել են 15-ական տարվա տաժանակիր աշխատանքի։ Հարձակմանը մասնակցող քրդերին պատժելու համար ոչինչ չի արված»։

Սա իշխանությունների հովանավորությամբ աշիրեթների վայրագությունների բնորոշ օրինակներից է։ Վարդենիսում հարսանիք էր։ Քրդերը հարձակվում են հարսին փախցնելու համար։ Հարսանիքին մասնակցում էր նաև Արաբոն, որը հարձակվում է քրդերի վրա, երկուսին սպանում, իսկ մյուսներին փախուստի մատնում։ Որոշ ժամանակ անց քրդերը մեծ ուժերով շրջապատում են Վարդենիսը, սակայն Արաբոյին ու Մարգար վարժապետին հաջողվում է կազմակերպել գյուղի պաշտպանությունը ու նրանց ետ շպրտել։

Թուրքական իշխանություններն այդ տեսնելով, Վարդենիս զորք և ոստիկանություն են մտցնում։ Չնայած նրան, որ հայերը գիտակցաբար զորքին ու ոստիկանությանը դիմադրություն ցույց չեն տալիս, վերջինները հավաքում են գյուղացիների մոտ եղած զենքերը, մի քանի տասնյակ վարդենիսցիների ձերբակալում են ու Մուշ տանում։ Հետո քրդերը հարձակվում են գյուղի վրա ու այն թալանում։

Թուրքական իշխանությունները բոլոր ուժերը ոտի են հանում Արաբոյին բռնելու համար։ Նրանք օգտագործում են այդ պատրվակը հայկական բնակավայրերում բռնություններ կատարելու համար։ Արաբոյին փնտրելու քողի տակ ոստիկանությունը հարձակվեց Ավաղուտ գյուղի վրա ու սոսկալի կոտորածներ իրականացրեց՝ տղամարդկանց տանջամահ էին անում շիկացած երկաթներով, բռնաբարում կանանց, երեխաներին ճզմում սմբակների տակ, կոտորում անասուններին։

Դառնացած Արաբոն իր շուրջն է հավաքում ընկերներին ու ակտիվ մարտական գործողություններ ձեռնարկում։ Խմբի եռանդուն տեղափոխությունները ամենուրեք մեծ արձագանք էին գտնում, գյուղացու մեջ ներարկում անձնական ու ազգային արժանապատվության գիտակցության տարրեր, գյուղացիական միջավայրից դուրս մղում ստրկական և եսասիրական հոգեբանությունը։ Հայերի շրջանում դավաճանությունն արմատախիլ անելու համար Արաբոն մի օրվա ընթացքում տեռորի ենթարկեց

Վարդենիսի շրջանի երեք գյուղապետների, որոնք մատնությունների էին զբաղվում։

Արաբոյի գործունեությունը գլխավորապես կենտրոնացած էր Բռնաշենում։ Թուրքական իշխանություններն այդ տարիներին աշխատում էին հայդուկների հետ անմիջական շփումներից զերծ մնալ և Արաբոյի դեմ կռվել քրդական աշիրեթությունների ու ցեղապետների միջոցով։ Քրդերին թույլ տրվեց ազատ կերպով թափանցել հայկական գյուղերը։

Սա հայդուկային շարժման սկզբնավորման շրջանն էր։ Հայդուկային առաջին խմբերի մեծ մասը զինված էր միայն որսորդական մեկ կամ երկու հրացանով, մի քանի դաշույնով ու սովորական դանակներով։ Չնայած դրան Արաբոյի խումբը իր վրա էր գրավել թե թուրքերի ու քրդերի, և թե հայ գյուղացիության ուշադրությունը։ Այդ մի կայծ էր, որ բռնկվելով արագ տարածվում էր։

Արաբոյի և նրա խմբի գործունեությանը հետևողը կնկատի, որ հանձինս դրա մենք գործ ունենք հայկական ֆիդայական շարժման հիմնական սկզբունքների ձևավորման պրոցեսի հետ։

Արաբոյին են պատկանում հետևյալ խոսքերը. «Հային այնքան պետք է ուժեղացնել, որպեսզի նրա աստղը պայծառանա և ուժ ունենա մինչև Շամ քշելու այս եկվոր անօրենների»։ Այսինքն ժամանակի ընթացքում Արաբոն հանգում է հայ ժողովրդի ազատության և անկախության համար պայքարի անհրաժեշտության գաղափարին։ Սակայն Արաբոյի հայդուկային խմբի համար բնորոշը ոչ թե այդ էր, այլ բռնության ու բնաջնջման դեմ պայքարը՝ ինքնապաշտպանությունը։ Դա է արտահայտում նաև նրան նվիրված հանրահայտ երգը.

«Գրողը տանի քուրդ Արոյին,
Սպանել է ջոջ Ափոյին,
Իլլաշ մացիր Արաբոյին.
Զարթնիր, լառ, մեռնիմ քեզի

. . . . . .

Դեմ Էրիշկն գալողն ո՞վ է,
Քաջ Արաբո բախտավորն է,
Զարթնիր, լառ, մեռնիմ քեզի»։

Արաբոն մագնիսի նման դեպի իրեն էր ձգում ազատատենչ հայ երիտասարդությանը, նա դարձել էր մի ամբողջ սերնդի

կուռքը։ «Տարոնի կյանքի հուզումնալի ժամանակաշրջանն էր,— գրում է Մորուք Կարոն։— Օդը հագեցած էր հայրենասիրական-հեղափոխական տրամադրություններով։ Արաբոյի, Մարգար Վարժապետի անունները ամենքի բերանին էին»։

Գրում է Գևորգը. «Մնացի այնտեղ (այսինքն Առաքելոց վանքում) երկու տարի, սակայն այնտեղ իմացա ու զգացի, որ հայություն կա, մանավանդ Արաբոն և Լևոնը կային, երբեմն հանդիպում էին վանք, նրանց համար ծառայություններ էի կատարում և դրանով գինովցա»։

Արաբոյի համբավն ու հեղինակությունը արագ տարածում ստացան ոչ միայն Սասունում և Տարոնում, այլև նրանց սահմաններից շատ հեռու։ Նրա հետ համագործակցելու ձգտում դրսևորեցին հայ քաղաքական կուսակցությունները։ Արաբոյի և Մխոյի հետ հանդիպելու և համագործակցելու հնարավորությունները պարզելու նպատակով Վանի արմենականները 1890 թ. Տարոն ուղարկեցին Փանոս Թերլեմեզյանին։ Արաբոյի և Լևոնի հետ նա հանդիպում է Առաքելոց վանքում։ Այդ մասին Թերլեմեզյանը գրում է. «Արաբոն, որ տակավին որևէ կուսակցության չէր պատկանում, լավ կազմվածքով, բարձրահասակ և թխադեմ մի երիտասարդ էր... խոշոր աշխատանք էր հարկավոր նրան ընտելացնելու և լայնորեն ըմբռնել տալու ազատագրական շարժման իմաստը, որին նա բնազդորեն միայն հարած էր։ ... Երկու ժամվա շափ իրար հետ խոսելուց հետո որոշվեց, որ նրանք կապ պիտի ունենան Մշո Ստեփանի (Սապա Գուլյանի— Ս. Պ.) հետ։ Ես վեր կացա, արձակեցի իմ կաման և կապեցի Արաբոյի մեջքին իբրև նվեր և համբուրելով նրանց հեռացա»[5]։

Հարկ է նաև նշել, որ այդ ընթացքում Հրայր Դժոխքի ու Վարդան վարդապետի ջանքերով ստեղծվեց «Ազգային միություն» անունով մի ընկերություն։ Արաբոն ղեկավար մասնակցություն ուներ այդ ընկերության աշխատանքներում։ Նա որոշ ժամանակահատվածում գործեց նաև Մ. Տամատյանի հետ միատեղ։ Գործունեության և մտածողության շրջանակների նման ընդլայնումը Արաբոյի շուրջը համախմբեցին ոչ միայն հայդուկներին, այլև Սասունի ազդեցիկ ուժերի մեծ մասին, ինչպիսիք էին Շենիկցի Գրգոն ու Մուրադը (Համբարձում Պոյաճյան)։

Թուրքական իշխանությունները, որ սկզբում Արաբոյի խմբի ահարեկչությունները համարում էին սովորական ավազակու-

թյուններ, Վարդենիսի ու Մուշեղաշենի կռիվներից հետո հասկացան, որ տվյալ դեպքում իրենք գործ ունեն ոչ թե քրեական հանցագործությունների, այլ ազգային շարժման հետ։

1892 թ. Արաբոն իր խմբով մտնում է Բերդակ գյուղը։ Նա հայդուկներին բաժանում է մոտակայքի գյուղերի վրա, իսկ ինքն ու Մխոն մնում են Բերդակում։ Ալիզոնանի գյուղապետը իշխանություններին հայտնում է, որ հայդուկները Բերդակում՝ Գասպարի մառանում են։ Թուրքական զորքերը գյուղը շրջապատում և զգալի զոհեր տալու գնով Արաբոյին ու Մխո Շահենին ձերբակալում են։

***

Հովհաննես վանահայրը Գևորգին իր խուցը կանչեց։ Տրամադրությունը վատ էր։

— Արաբոյին ու Մխոյին թուրքերը բռնել ու Մուշ քաղաքի բանտն են տարել։ Արաբոն մեղադրվում է «ավազակային խումբ կազմելու մեջ»։ Երբ նրան ու մյուս բանտարկյալներին Կարին էին տանում աքսոր ուղարկելու համար, ճանապարհին ամենուրեք նրանց ողջունում էին մեծաթիվ հայեր։ Ոստիկանները այդ հայերին քշում էին՝ սպառնալով. «Հեռացեք, հերթը ձեզ էլ կգա», որին հայերը պատասխանում էին. «Հիմա տարեք, մենք նրանցից ավել չենք»։ Ալիզոնանի գյուղապետ Կրպոն դավաճան է, նա է քրդերին հայտնել, որ Արաբոն ու Մխոն Բերդակում են։ Կրպոն պետք է սպանվի։ Դավաճանի արյունը ձեզ հալալ լինի։

Գևորգը ստացավ իր առաջին մարտական հանձնարարությունը և հաջորդ օրը Գալշո Մանուկի ու Լևոնի հետ ճանապարհ ընկավ դեպի Ալիզոնան գյուղը։ Առանց նախազգուշական միջոցների դիմելու, նրանք ուղիղ գնում են գյուղապետ Կրպոյի տուն։ Կրպոն նստած էր բակում։ Գևորգը դանակի երկու հարվածով սպանում է դավաճանին։

«Սեպտեմբեր ամսվա 10-ն էր,— գրում է Գևորգը,— մենք էլ գնացինք ս. Կարապետ։ Հոն գտանք Պ. Մուրադին։ Բայց թուրք կառավարությունը շուտով իր հայացքը մեր վրա շրջեց։ Ցույս կողմը սկսեց խուզարկություններ, բայց ոչինչ չգտավ... Բերդակցիք գիտեին, որ մենք ենք Կրպոյին սպանել»։

Նրանք վերադառնում են Առաքելոց վանք։ Արաբոյի ձերբակալությունը հուսալքություն էր առաջացրել։ Թուրքական իշխանություններն ավելի լկտի էին գործում։ Հայդուկները խուսափում էին ակտիվ գործողություններից։

Մի անծանոթ գրգիռ սկսում է նեղել Գևորգի պատանեկան զգացումները և նրա համար հետզհետե անհրապույր, անտանելի էին դառնում վանքն էլ, դպրատունն էլ, դասագիրքն էլ։ Նա միջոցներ էր փնտրում վանքից հեռանալու։

«1888 թ. մայիս ամսի 7-ին հրաժարվեցի վանքից,— գրում է Գևորգը,— գնացի տունս, բայց շարունակ գործ ունեի զենքի հետ... Բոլոր գերդաստանով ինձ սիրում էին, որովհետև այրուբեն գիտեի, իսկ տերտերը շատ էր բարկանում ու ինձ նախատում։ Ասում էր՝ զենքի հետ գործ չունես, փորձիր Ավետարան, Մաշտոց և շարական կարդալ։ Բայց ես ոչ ոքի չէի լսում ու չէի հնազանդվում... Գյուղից թողի հեռացա, կրկին վերադարձա Առաքելոց վանք, որպեսզի ընկերանամ Արաբոյին և Լևոնին»։

Գևորգը Առաքելոց վանքում միայն մի ամիս մնաց և նորից վերադարձավ Մրկթենք։

«Մրկթենք... Փսանաց գավառի այս գյուղն էր Բերդի հետ, որ սնուցել է Սասնո հայտնի կտրիճներին և օրորել է այն քաջարի ասպետների խանձարուրը», որոնց քաջագործությունները հայտնի էին ամբողջ Սասունում։ Մրկթենքցիները վարպետ և անվեհեր որսորդներ էին...

Համբավավոր որսորդ էր նաև Գևորգի հայրը, բայց կուրացել էր։ Գևորգն իր ձանձրույթը սպանում էր լեռներում։ Առավոտ կանուխ, հոր հրացանը ուսած, թափառում էր մացառուտներում, ապառաժների վրա և ուշ տուն վերադառնում։

Վանքից, Արաբոյից ու մյուս ընկերներից բաժանվելուց հետո դարձել էր ավելի ըմբոստ, ավելի խիզախ։

Նա գյուղի երիտասարդներից մարտական խումբ կազմեց ու զբաղվում էր զինավարժությամբ։

Սակայն հազիվ մի տարի տևեց այս ազատ, ինքնիշխան կյանքը...

Մի օր էլ, երբ հայրը արգելում է նրան իր հրացանը օգտագործել, Գևորգը խռոված ասում է. «Թող այս օջախն ինձ հարամ լինի, քանի դեռ սեփական զենք ձեռք չեմ բերել»։ Նա կրկին վերադարձավ վանք։

***

Մի օր Գևորգը հուսահատ նստած էր իր խցում, երբ ներս մտավ Հովհաննես վանահայրը և ուրախ բացականչեց.

— Արաբոն փախել է բանտից։ Վաղը գիշերը կլինի Դավթի քարի մոտ։ Ասել է, որ դու էլ այնտեղ գնաս։

Գևորգը ուրախությունից գլուխը կորցրեց, վանահոր ձեռքը համբուրելու փոխարեն, գրկեց ծերուկին և սկսեց վեր թռցնել։ Վանահայրը մի կերպ ազատվեց նրա գրկից և մի գրություն տվեց՝ Արաբոյին հանձնելու համար։

Արաբոն այս անգամ Գևորգին ու Ադամին ընդունեց իր խմբի հիմնական կազմում և մասնակից դարձրեց ջոկատի մարտական գործողություններին։

Հայդուկային այս խումբը ստանձնել էր ղրկվածների պաշտպանության գործը և հարվածում էր բոլոր նրանց, ովքեր ձեռք էին բարձրացնում հայ գյուղացու կյանքի ու կայքի վրա։ Արաբոն փխրուն հոգի ուներ, բայց անխնա էր թշնամու և, մանավանդ, դավաճանների հանդեպ։

... Դավթի քարի տակ հավաքվել էին տասներկու հայդուկներ։ Երևում են Արաբոն, Մխոն ու Լևոնը։ Բայց Արաբոյի տրամադրությունը տեղը չէր։

— Տղերք, ես մի քանի օրից մեկնելու եմ Կովկաս։ Այս պահին Սասունից իմ հեռանալն անհրաժեշտ է, որովհետև թուրք ոստիկանությունը ինձ բռնելու պատրվակով տակնուվրա է անում հայկական գյուղերը։

Նա Գևորգին պատվիրեց Հովհաննես վանահոր միջոցով ամենուրեք լուր տարածել, որ Արաբոն մեկնել է Տարոնից։

Գևորգը շվարած ոտի կանգնեց։ Նա շփոթված նայում էր Արաբոյին։ Վերջինս մոտեցավ նրան ու Ադամին և ասաց.

— Դուք արդեն հայդուկ եք։ Դուք պետք է լավ հասկանաք, որ հայդուկությունը ոչ միայն պատիվ է, այլև մեծ պատասխանատվություն, անսահման նվիրվածություն։ Հայդուկը իր կյանքի տերը չէ, նրա կյանքը ազատագրական պայքարին է պատկանում։ Հայդուկը պետք է կարողանա ամեն օր մահվան աչքերի մեջ նայել և պատրաստ լինել իր կյանքը զոհելու մեծ նպատակի համար։ Հայդուկը անձնական կյանք չունի։ Հայդուկի ընտանիքը իր մարտական ընկերների խումբն է, նրա տունը՝ Սասնա ժայռերն ու քարանձավները, նրա կերակուրը՝ կորեկն ու գրլ-

գիլը։ Մենք մեր արմատներով ժողովրդի մեջ ենք։ Գնահատեցեք ժողովրդի վստահությունը, վստահեք հայ գյուղացուն, առանց նրա օգնության ու աջակցության մենք անուժ ու ողորմելի ենք։

Ողբերգական վախճան ունեցավ հայդուկային շարժման առաջամարտիկ, մեր ժողովրդի անվեհեր զավակ Արաբոյի կյանքը։ Նա զոհվեց այն ժամանակ, երբ իր ցանած սերմերն արդեն ծիլ էին տալիս, երբ հայդուկային շարժումը գտնվում էր ազգային ազատագրական պայքարի վերաճելու շեմին։ Դեպքը տեղի ունեցավ Խնուսի ու Մուշի միջև ընկած մի գյուղում, երբ Արաբոն Կովկասում հայդուկային խումբ կազմած, վերադառնում էր հայրենի լեռնաշխարհ՝ նոր ուժով ծավալելու պայքարը ընդդեմ բռնատերերի։

Արաբոյի խմբից փրկված մի երիտասարդի վկայությամբ Խոշգելդի և այնուհետև Գյոլ Առաշ գյուղերում, քրդերի հետ անհավասար մարտի բռնվելով, Արաբոյի խումբը պաշարվում է և թշնամուն բազմաթիվ զոհեր պատճառելով, կոտորվում։

Արաբոն, Ղոզլի սարից ազատվելով, իջնում է համանուն գյուղը, այնտեղից անցնում Խոշգելդի։ Այստեղ են մտնում վեց ընկերներով՝ Վարդանն էր, Արաբոն, Ավոն, Մարտոն, Բուլղարն ու այդ երիտասարդը։ Խոշգելդում, մութն ընկնելուն պես, հայդուկները մտնում են մի մարագ, սակայն նկատվում են։ Գյուղացիները մարագի երդիկից թուղթ են ցած գցում, որը զգուշացնում էր. «Ջորս կողմը քրդեր են» և պատրաստ պետք է լինել։ Գյուղացիները նրանց հաց են բերում։ Արաբոն գյուղի երիտասարդներին պատվիրում է ճանապարհներին հերթապահել։ Կես գիշերին հայդուկները թողնում են գյուղը։ Լուսաբացին նրանք մտնում են Գյոլ Առաշի ձորը, և կանգ առնում աղբյուրի մոտ։ Փոխանակ սպասելու մութն ընկնելուն, նրանք ցերեկով շարունակում են ճամփան։ Հագել էին համիդիեի տարազ։ Մտնում են Գյոլ Առաշ գյուղը։ Մի քրդի հարցին, թե որտեղից եք գալիս, Արաբոն պատասխանում է՝ Մոտքից, բայց քուրդը գլխի է ընկնում, որ նրանք հայեր են։ Քիչ անց գյուղից գալիս են զինված քրդեր։ Սկսվում է կռիվը։ Գնալով քրդերը շատանում էին։ Հայդուկները կրակելով առաջ էին շարժվում. նրանք բարձրացան լանջն ի վեր, բայց պարզվեց, որ վերևում ևս քրդեր կան։ Հայդուկները շրջապատված էին։ Քրդերը բոլոր կողմերից կրակում էին։ Ընկան Մարտոն, Բուլղարն ու Ավոն։ Արաբոն ու Վարդանը կրակելով շարունակում էին առաջ ընթանալ։

«Հանկարծ հրացանաձգությունը դադարեց,— պատմում է երիտասարդը,— Արաբոն ու Վարդանը ևս սպանվել էին։ Ես վիրավորված էի, լուսաբացին փորձեցի անցնել Սասունը, բայց չհաջողվեց, սասունցիների ու քրդերի մեջ մեծ կռիվ էր սկսվել։ Ճանապարհները, կիրճերը բռնված էին քրդերով։

Խնուս վերադառնալիս՝ ճանապարհին լսեցի... թե Մշո գյուղերից մեկում 4—5 դիակ են դարսել և գնացող եկողին ցույց են տալիս։ Նրանցից երեքին ճանաչել էին, դրանք Ավոյի, Մարոյի և Բուլղարի դիակներն էին... Մնացած երկուսին, իսկ ոմանց ասելով մեկին, ոչ ոք չի ճանաչել։ Շատերն ասում են, որ Արաբոն դեռ ողջ է և ման է գալիս Դաշտում՝ Տամատյանին ազատելու»։

Միշտ այդպես է։ Ժողովուրդը չի ուզում հավատալ իր սիրելի հերոսների մահվանը։ Նրանք իրենց մահից հետո էլ լեգենդ դարձած շարունակում են ապրել ժողովրդի հիշողության մեջ, շարունակում են ոգեշնչել նրան իր ազատության համար մղվող պայքարում։ Արաբոն չի մեռել, կա։ Նա հարություն կառնի Գևորգի մեջ, Հրայր Դժոխքի, Փեթարա Մանուկի, Ախոյի, մյուսների մեջ։ Նա զենք կդառնա Գևորգի վրիժառու ձեռքերում և վա՜յ նրան, ով Գևորգի «Արաբոյին» թիրախ կդառնա։

ՃԱՆԱՊԱՐՀ, ՈՐ ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՆՈՒՄ

Գևորգը մտքում կրկնում էր Արաբոյի խոսքերը. «Հայդուկը անձնական կյանք չունի», և նրա հայացքի դեմ ուրվագծվում էր Եղսոյի պատկերը։ Եղսոն սպասում է, իսկ ինքը ամուսնանալու իրավունք չունի։ Երկու ազնվագույն զգացումներ, որ այլ պայմաններում կհարստացնեին մեկը մյուսին, այս պարագայում բացառում էին իրար։ Ոչ, Գևորգը երկընտրանքի մեջ չէր։ Նա իր որոշումն արդեն կայացրել էր։ Իսկ Եղսո՞ն, ինչպե՞ս կընդունի այդ որոշումը։ Ճակատագիրն ինչո՞ւ է այդքան դաժան բնության երկու զավակների հանդեպ։

— Ադամ,— ընկերոջը դիմեց Գևորգը,— Եղսոյին եմ ուզում տեսնել։

Ադամը խայթվածի պես շրջվեց դեպի Գևորգը, բայց երբ նրանց հայացքները հանդիպեցին, երբ զգաց հոգեկան այն մեծ

խռովքը, որ ապրում է ընկերը, ամեն ինչ հասկացավ ու լուռ հետևեց նրան։

Երեկո էր։ Հեղին գյուղի ամայի փողոցներով իշխան Վարդանի տուն էին գնում երկու երիտասարդներ։ Նրանք մոտեցան տան պարսպին։ Ահա կճուճը ձեռքին շեմից դուրս եկավ Եղսոն։ Գևորգի աչքերի առաջ էր բարձրահասակ, բարակ իրանով, սև աչք-ունքով, փոքր բերանով, մարգարտաշար ատամներով, լայն ճակատով, երկար հյուսքերով մի կատարյալ գեղեցկուհի։ Գևորգը կարկամել էր, և միայն այն ժամանակ, երբ Եղսոն, գործն ավարտելով, ներս էր ուզում մտնել, ձայնեց.

— Եղսո։

Աղջիկը նվաղուն ճիչ արձակեց, և ձեռքից կճուճն ընկավ։ Ակամա վազեց շեմից ներս։ Ապա կտրուկ ետ դարձավ ու նետվեց ձայնի ուղղությամբ։ Որքա՜ն էր սպասել նա այդ ձայնին։ Ահա կանգնած է Գևորգի դիմաց և շրթունքները շշնջում են. «Տեր աստված, եկավ, եկավ»։ Գևորգը, հայացքը փախցնելով, խուլ ձայնով ասաց. «Եղսո, բեր վանքի բանալիները»։ Աղջիկը լուռ ենթարկվեց, և քիչ հետո վերադարձավ բանալիների խուրձը ձեռքին։

Գևորգն առաջ ընկավ, Եղսոն կախարդվածի պես հետևեց նրան։

Ներս մտան վանք։ Ծանր ու ճնշող լռություն էր։ Ապա վանքի կամարների տակ ողբի՞, թե երդման պես հնչեց Գևորգի խռովահույզ ձայնը։

— Եղսո, եթե երբևիցե վիճակվեր անձնական կյանք ունենալ, դու, միայն դու կլինեիր իմ ընտրյալը։ Բայց իմ կյանքը, աստծո կամոք, իմը չէ։ Իմ և քո արանքում մի տառապյալ ժողովուրդ կա։ Ես հայդուկ եմ և ամուսնանալու իրավունք չունեմ։ Եկել եմ քանդելու մեր ուխտը։ Դու ազատ ես։ Աստված քեզ բարի բախտի արժանացնի։

Եղսոն անշարժ կանգնած էր։ Գևորգի խոսքերը նրա գիտակցությանը չհասան։ Նա Գևորգի հետ հանդիպման սպասումների երկար ու ձիգ տարիներ էր ապրել, և հանդիպման երջանկությունը այնպես էր տիրել նրա էությանը, որ այլ բան ի վիճակի չէր ընկալելու։ Իսկ երբ Գևորգի խոսքերը վերջապես նրա գիտակցությանը հասան, վանքում, բացի իրենից, ոչ ոք չկար։

Հայդուկների համար ամենադժվարը սեփական զենք ունե-

նալու խնդիրն էր։ Մեկ հրացան գնելու համար պետք էր վաճառել տասը եզ։ Ուրիշ որտեղի՞ց ճարեին այդքան դրամ։

Գևորգը որոշեց Արաբոյի օրինակով գնալ Հալեպ, փող վաստակել և հրացան գնել։ Նրան ընկերացավ Գալշոյի Մանուկը, և 1889 թվի սեպտեմբերին երկու ընկեր ճամփա ընկան դեպի Հալեպ։ Տիգրանակերտում միացան առևտրական քարավաններից մեկին։ Հալեպում հարցուփորձ անելով գտան հայկական եկեղեցին։ Հալեպում շատ պանդուխտ սասունցիներ էին աշխատում։ Նրանց մեջ կային նաև մրկթենքցիներ, որոնք Գևորգին ու Մանուկին ապաստան տվեցին։

Առաջին անգամ Սասունից ոտքը դուրս դրած Գևորգի համար Հալեպը այլ աշխարհ էր, իր շինությունների անծանոթ ոճով, անծանոթ տարազ կրող բազմությունների եռուզեռով, շուկաների աղմուկով, մզկիթների կանչերով։

Գևորգը սկզբում ծառայության անցավ մի սասունցու ջրաղացում, ապա՝ հացի փռում։

Վեց ամիս անց, իր վաստակած չնչին գումարին ավելացնելով հարազատների ու հայրենակիցների հավաքած փողը (նրանք Գևորգի հեռահար նպատակները գիտեին և բոլոր առաջ ուզում էին նրան Սասնա լեռներում տեսնել, ուր նրա կարիքը օդի պես անհրաժեշտ էր), Գևորգը հրացան գնեց։

Նա երկու ձեռքով հորիզոնական դիրքով բռնեց հրացանը, մինչև ծնկները գլուխը խոնարհեց ու ասաց. «Հայրենակիցներ, շնորհակալ, շատ շնորհակալ եմ ձեզնից»,— ապա գլուխը բարձրացնելով, շուռ եկավ դեպի հյուսիս, հայացքը հառեց երկնքին ու ասաց. «Հե՜յ, Մարաթուկ, քո զորությանը մատաղ, ինձ կամք և ուժ տուր մինչև կյանքիս վերջը Արաբոյի նման իմ այս «Արաբոյով» խփելու թշնամուն ու դավաճանին, պաշտպանելու թշվառին ու լկվածին»։

Այդ օրվանից նրա հրացանը կնքվեց «Արաբո» անունով։

Գևորգը մի քարավանի հետ բռնեց տունդարձի ճամփան։ Քարավանը հանգստանալու համար երկու օր մնաց Տիգրանակերտում, և նա հնարավորություն ունեցավ ծանոթանալու քաղաքի հայկական շրջաններին, որոնք բավական բազմամարդ էին և ունեին հստակ կազմակերպված ազգային կյանք։

Տիգրանակերտից քարավանը շարունակեց ճանապարհը։ Հաջորդ օրը, Խուլբի գետի խորը կիրճով անցնելիս, քարավանի

վրա հարձակվեց օսմանյան կայսրությունում լայն ճանաչում ստացած ավազակապետ Փուշոյի խումբը։

Գևորգը, դիրքավորվելով մի ժայռի ետևում, դիպուկ կրակոցներով գետնին փռեց մի քանի ավազակների։ Նրա գնդակից ընկավ նաև ավազակապետ Փուշոն։ Գևորգը փրկեց քարավանը։ Քարավանի քրդերը անմիջապես երգ հյուսեցին, որը փառաբանում էր Գևորգի քաջությունը։ Հետագայում ոչ միայն այդ, այլ նաև մյուս քարավանների ջորեպանները Գևորգին շատ օգնեցին Հալեպից զենք ու զինամթերք փոխադրելու գործում։

Գևորգը վերադարձավ հայրենի գյուղ։ Նա գյուղում մնաց երկու շաբաթ։ Այստեղ նրան գտավ Ադամը։ Նա Գևորգի մոտ էր եկել Հրայրի հանձնարարությամբ։ Հրայրը հանձնարարել էր գնալ Շենիկ և մտնել այդ գյուղի տանուտեր Գրգոյի մարտական ջոկատը։ Գևորգը նաև իմացավ, որ Սասունում ստեղծվել էին մի քանի ինքնապաշտպանական խմբեր, որոնք գործում էին Հրայրի ցուցումներով։ Երկու օր անց, երբ Գևորգը հորեղբորը՝ Ղզրոյին, հայտնեց հայդուկ դառնալու իր վերջնական մտադրության մասին, ծերունին դառնորեն լաց եղավ իր փչրված երազների ու չիրականացած իղձերի համար, բայց Գևորգին ետ չպահեց վճռից։

Հաջորդ օրը Գևորգը տնեցիներին հրաժեշտ տվեց ու բռնեց Վերին Սասունի ճանապարհը։

Նա այլևս հայրենի գյուղ չվերադարձավ։

«1890 թիվն էր, որ բացում էր հայկական հեղափոխության արյունոտ շրջանը, և դեռ հեղափոխական առաջին քարոզիչները Սասունի լանջերին չէին երևացել, իսկ Գևորգը արդեն ինքնաբերաբար, իրավիճակի թելադրանքով, ըմբոստացած շրջապատող պայմանների դեմ, գյուղացի երիտասարդությանը կոչ էր անում «ոչ խարճ, ոչ էլ խարաճ տալ կառավարությանը»։

«Ու երբ Տամատյանը Սասուն ոտ դրեց, Գևորգը եղավ նրա առաջին ընկերը, նրա վստահելի ու ամենաանխոնջ գործակիցը, ինչպես նաև տեղական պայմաններին ավելի ծանոթ ու իրազեկ ուղեցույցը»[6]։

Հետագայում այսպես կգրվի նրա մասին։ Իսկ առջևում մի ամբողջ կյանք կար։

«Միրին կատար հասնելուն պես,— հիշում է Գևորգը,— չորս ոստիկաններ հանդիպեցին, որոնք մեզ անմիջապես ձերբակալեցին։ Սակայն ես նրանց ձեռքում տասը բոլոր էլ չմնացի,

ջախա ու անվնաս ազատվեցի։ Ոստիկանները հետևիցս բավականին վազեցին, բայց ոչինչ անել չկարողացան։ Ես այն ժամանակ առանց զենքի էի։ Երբ եկա պարոն Մուրադին հասա, գնացինք ս. Հովհաննի վանքի կողմը, գտանք Տամատյանին... Աղբեկ գյուղի կամրջի վրա երկու սասունցի քրդեր անմիջապես իմ ընկեր Քոլոզ Հովհաննեսին բռնեցին, նրա մոտի նամակները խլեցին։ Բայց մեր հետ էր այդ կողմերից Գրիգոր անունով մի տղա։ Մենք երկուսով հարձակվեցինք և նրանց հրացանները խլեցինք։ Ուզեցինք նրանց տեղն ու տեղը սպանել, բայց Հովհաննեսը չթողեց»։

***

Գևորգն ու Ադամը ճամփա ընկան դեպի Գելիեգուզան՝ Ֆադեին հանդիպելու։ Նրանք հասան Գելի և մտան առաջին իսկ պատահած տան բակը։ Բակում մի ծերունի էր նստած սանդի վրա ու մեղեսիկ էր քաշում։

— Բարև, քեռի,— ձայնեցին։

— Բարև, աստծու բարին։

— Քեռի, որտե՞ղ է Ֆադեի տունը։

— Լաո՛, Ֆադեն տուն չունի։ Նա հեռացել է իր տնից ու սարերում է ապրում։

— Ի՞նչ է, տնեցիների՞ց է խռովել, թե՞...

— Է՛, լաո, Ֆադեի պատմությունն ուրիշ է։

Երիտասարդները նստեցին քարերին և խնդրեցին պատմել։

— Սուլթանի հրամանով Սասունում զորանոցներ էին կառուցում՝ հայերին հնազանդ պահելու համար։ Զորանոցներից մեկը կառուցում էին Ֆադեի արտի մեջ։ Զայրացած Ֆադեն գիշերը քանդեց զորանոցի պատերը և քարերը գլորեց ձորը։ Առավոտյան ոստիկանները նրան հարկադրեցին բոլոր քարերը շալակով ձորից բարձրացնել զորանոց, և այդ ամառ զորանոցի շինարարությունն ավարտեցին։ Ֆադեն, հայհոյանքների տարափ տեղալով թուրքերի հասցեին, վերցրեց իր թիակն ու գյուղից հեռացավ։ Սարերում ընտրեց մի փոքրիկ հողակտոր, գարի ցանեց ու ապրում է այնտեղ։ Նրա միակ ունեցվածքն իր բահն է, որից անբաժան է։ Ա՛յ, էս դիմացի սարով որ բարձրանաք, կես օրում կհասնեք Ֆադեի արտին։

Գևորգն ու Ադամը ճամփա ընկան ծերունու ցույց տված ուղ-

ղությամբ։ Ֆադեի արտը Անդոկի փեշերին էր։ Նրանք երկար քայլեցին։ Մութը վրա տվեց, և որոշեցին հանգստանալ՝ առավոտ լույսով ճանապարհը շարունակելու համար։

— Ո՞վ եք, էս կողմերում ի՞նչ եք անում,— կողքի ժայռի ետևից հնչեց մի ձայն։ Գևորգն ու Ադամը գնացին ձայնի ուղղությամբ։ Ժայռի տակ, թաղիքի վրա, թիակը գրկած պառկած էր մի հաղթանդամ մարդ։

— Բարի իրիկուն, քեռի Ֆադեն դո՞ւն ես։

— Դուք ո՞վ եք, ինչի՞ կհարցնեք։ Ես եմ։

Գևորգը ծոցից հանեց ծխամորճը, որը ժամանակին Արաբոն էր տվել որպես վստահության երաշխիք։

Ֆադեն մտածմունքի մեջ ընկավ և շրջվելով դեպի երիտասարդները՝ ասաց.

— Քնեք։ Լույսը բացվի, բարին հետը։— Կրկին շուռ եկավ իր թաղիքի վրա։ Գևորգն ու Ադամը հարմար տեղավորվեցին ժայռի տակ, թիկն տվին քարերին ու աչքները փակեցին։

Առավոտյան, երբ արթնացան, Ֆադեն չկար։ Մտածելով, որ խաբվել են, որ դա Ֆադեն չէր, և գուցե ծուղակ էր պատրաստվում, արագ վեր թռան և շարժվեցին Անդոկն ի վեր։ Դեռ մի քանի քայլ չէին արել, երբ լսվեց.

— Էդ ո՞ւր, էստեղ եկեք,— Ֆադեի ձայնն էր։ Նա գալիս էր դեպի տղաները։— Տալվորիկ պիտի երթանք։

Նա բահն ուսին դրեց և քայլեց սարն ի վար։ Գևորգն ու Ադամը հետևեցին նրան։

— Խառը ժամանակներ են,— խոսեց Ֆադեն և ներկայացրեց հայերի վիճակի այնքան համապարփակ ու հավաստի պատկերը, որ Գևորգն ու Ադամը քար էին կտրել, թե նման տեղեկություններ նա ինչ միջոցներով և եղանակներով էր ստանում։— Սոսկալի սպանդ է ամենուր, ամեն օր նորանոր կոտորածի լուրեր են հասնում։ Կառավարությունը կատաղած հրամաններ է արձակում՝ հայերի ամեն մի շարժում տեղն ու տեղը արյան մեջ խեղդելու։ Երզնկայի ամբողջ բանակը շարժման մեջ է, մեր երկրի բոլոր կողմերը զինվորներով են լցված։ Փոքր Ասիայից՝ Խարբերդից, Սեբաստիայից զինվորներ են գալիս։ Տաճիկ մոլլաները, կառավարության հրամանով, մուսուլման ժողովրդին ատելություն են քարոզում քրիստոնյաների նկատմամբ։ Ահավոր կոտորած տեղի ունեցավ Վանի մոտերքում։ Մուշում՝ նույնպես։ Կոտորածի լուրեր՝ Դերջանից, Բասենից՝ նմանապես։

Արճեշի մոտերքում երեք մշեցի ճամփորդ գազանաբար մորթվեցին։

Հունիսի 23-ին Կարինի Ջիթահող գյուղի դաշտերը կողոպտեցին ու փչացրին։ Ընդհարման ժամանակ հայերից մոտ քսան հոգի զոհվեցին ու հարյուր հոգի վիրավորվեցին։ Նյուս գյուղացիները բանտարկվեցին։

... Մենք այժմ պաշարման մեջ ենք գտնվում, նամակները ստուգվում են, գաղտնի ոստիկանության անխիղճ պաշտոնատար անձինք, ոստիկանները, աչքերը չորս արած, հետևում են հայերի ամեն քայլին, շարժմանը, խոսակցությանը, և ձենք փնտրելու պատրվակով նրանց խուզարկում են։

... Սկսվել են աննկարագրելի ու անպատմելի բարբարոսություններ ու չարագործություններ, մարդկանց արյունը հեղեղի նման հոսում է, եկամուտն ու ունեցվածքը ավարառվում են, տագնապալի լուրերը հաջորդում են միմյանց։

Պատվաստ կատարելու պատրվակով՝ Կիլիկիայում Թուրքերը սպանեցին 200 հայ երեխայի։

Զուլումները մոլեգնում են Տարոնում։ Բիթլիսի վիլայեթը իսկական դժոխք է, մեր Մշո դաշտը, եթե այսպես շարունակվի, ավերակ կդառնա։

ՄԱՐՏԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Տալվորիկ հասան, Ֆադեն նրանց առաջնորդեց իշխան Գասպարի տունը։ Տանտերը միջին տարիքի, ջլապինդ, բարձրահասակ մի մարդ, ուրախությամբ ընդունեց հյուրերին։ Ամեն ինչից երևում էր, որ Ֆադեն գիշերն այս տանն արդեն եղել է, և Գևորգի ու Ադամի գալը տանտիրոջ համար անսպասելի չէր։

— Բարով եք եկել, մեր գլխի ու աչքի վրա տեղ ունեք,— ասաց տանտերն ու հյուրերին տարավ մի մեծ սենյակ։ Երկու տասնյակից ավելի մարդիկ, քուրսիների վրա նստած, Դժոխք Հրայրի հետ ինչ-որ հարցի շուրջ խորհրդակցում էին։ Տալվորիկի շրջանի գյուղերի ներկայացուցիչներն էին։ Լուր էին ստացել, որ Թուրքական զորքերն ու քրդական ցեղապետները հարձակում են պատրաստում Վերին Սասունի վրա, հավաքվել էին իրենց անելիքը որոշելու։ Բոլորը մտահոգված էին, և այդ մտահոգությունը հիմք ուներ։ Բանն այն էր, որ նախորդ տարինե-

բին Թուրքական զորքերը խուսափում էին Վերին Սասուն բարձրանալ։ Դրա համար էլ այս շրջանը գործնականում ազատ էր ասպատակություններից ու թալանից։ Եվ եթե այժմ Թուրքերը որոշել են հասնել մինչև Տալվորիկ, ապա խոսքը ոչ թե մասնակի, տեղական բնույթ կրող, այլ ընդհանուր հարձակման մասին է։ Սուլթանը որոշել է արյան ծովի մեջ խեղդել Սասունը։

— Խնդիրն այն է,— ասաց Հրայրը,— որ թշնամին հակահարված ստանա ու ետ շպրտվի ոչ թե Տալվորիկի մատույցներում, այլ Դաշտում կամ նախալեռնային շրջաններում։ Դրա համար պետք է կազմակերպել Դաշտի գյուղերի ինքնապաշտպանության ջոկատներ։ Դա հնարավորություն կտա դիմադրություն ցույց տալ թշնամուն յուրաքանչյուր բնակավայրում և, ի վերջո, կասեցնել նրա առաջխաղացումը։ Տատրագոմը ձեզ օրինակ, որի բնակիչները, Հովնանի գլխավորությամբ, հարձակվեցին գյուղ ներխուժած զափթիե ու համիդիե ջոկատների վրա ու դուրս քշեցին։

Իշխան Գասպարը գտավ, որ պետք է շտապ կազմակերպել դաշույններ պատրաստելու գործը Դաշտի գյուղերը զինելու համար։ Խորհրդակցության մասնակիցները որոշեցին զինել ժողովրդին և պարտիզանական բնույթի կռիվներով հարվածել թշնամուն ամենուրեք։

Իշխան Գասպարի կարծիքով ինքնապաշտպանության զինված խմբեր պետք է ստեղծվեին բոլոր հայաբնակ գյուղերում։ Եթե առաջներում Թուրքական իշխանությունները աշիրեթապետներին թույլատրում էին թալանել հայկական գյուղերը, ապա 1891 թվին նրանք արդեն պարտադրում էին քրդերին գնալու Թուրքական զորամասերի ետևից, և երբ առաջինները այս կամ այն գյուղում ավարտում էին պատժողական գործողությունները, քրդերը պետք է հարձակվեին և թալանեին տվյալ գյուղը, ոչնչացնեին նրա բնակչությանը։

... Տարոնի հայ բնակչության վրա հարձակումները հատկապես լայն ծավալներ ստացան 1891 թվի գարնանը։ Հարձակման ենթարկվեցին Ծափնա, Հունան, Աղջան, Տերգ, Արբերդ գյուղերը։

Թուրքական բանակային ուժերի դեմ կռվի ծանրությունը իրենց վրա պետք է վերցնեին հայդուկները, իսկ ինքնապաշտպանական ջոկատները պետք է դիմակայեին քրդական աշիրեթներին։

Քրդերի նկատմամբ վերաբերմունքը վճռական նշանակություն ուներ ոչ միայն հայդուկային շարժման, այլ, ընդհանրապես, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար։ Աբդուլ Համիդը ծրագրել էր իր հալածինչ քաղաքականությունը իրագործել քրդերի միջոցով, որպեսզի հետագայում իրեն ներկայացվող ցեղասպանության մեղքը բարդեր նրանց վրա։

Դժբախտաբար, քուրդ ցեղապետների մեծ մասը հեշտությամբ խաբվեց և կանգնեց դահիճների կողմը, դարձավ նրանց հարվածային ուժը։ Սուլթանի կամակատարները հայերի վրա հարձակվելու համար այլ վայրերից Տարոն ու Սասուն էին բերում քրդական նորանոր ցեղեր։

Գևորգին հանձնվեց հինգ երիտասարդներից մի խումբ, որի խնդիրն էր արագ տեղաշարժերով շեշտակի հարվածներ հասցնել թշնամու այն ուժերին, որոնք տվյալ դեպքում առավել ակտիվություն են դրսևորում։ Տեղեկություն ստացվեց, որ Շենիկի շրջանում քրդական Մամկանի ցեղախումբը ակտիվացել և վտանգ է սպառնում տեղի հայկական գյուղերին։ Գևորգն իր խմբով շարժվեց Շենիկ։

Դեռ չհասած Ալիանք գյուղին, խումբը հանդիպեց հարյուր մարդուց բաղկացած քրդական մի ջոկատի, որը դեպի հանդիպակաց կիրճն էր քշում դյուղի ոչխարները։ Գևորգն իսկույն կողմնորոշվեց. եթե քրդերին հաջողվի ոչխարի հոտը անցկացնել կիրճը, այլևս հնարավոր չի լինի կանխել նրանց։ Նա իր խմբով անցավ կիրճի դիմացի ժայռերը և այնտեղից կրակի տակ առավ քրդերին։ Վերջիններս, մոտ մեկ տասնյակ զոհ և վիրավորներ թողնելով, քաշվեցին դեպի ժայռերն ու դիրքեր բռնելով կրակ բացեցին Գևորգի ջոկատի վրա։ Թվական գերազանցությունը հաջողության նժարը հափշտակիչների կողմն էր թեքում, երբ ժայռի ծայրին դաշույններով զինված կանանց մի մեծ խումբ երևաց և աղմուկ-աղաղակով շարժվեց դեպի քրդերը։ Վերջիններս մտածելով, որ շրջապատման մեջ են ընկել, լքեցին իրենց դիրքերը։ Շուտով իր զինված խմբով վրա հասավ նաև Շենիկի իշխան Գրգոն։ Մամկանցիք այլևս դիմադրել չկարողացան և, կռվի վայրում թողնելով երկու տասնյակից ավելի դիակներ, դիմեցին փախուստի։

Եկավ 1892 թիվը։ Հայդուկներն ու հայ գյուղացիները, օգտվելով Սասունի ձյունաշատ ձմռան ընձեռած զինադադարից,

տենդագին նախապատրաստվում էին գարնան մարտերին, փորձից գիտենալով, որ գարնան բացվելու հետ Սասնա գլխին է իջնելու թուրքական արյունոտ յաթաղանը։

Արտակարգ ծանր կացության մեջ էր Դաշտի հայությունը։

Հայերին սովի մատնելու դիտավորությամբ իշխանությունները բռնագրավել ու մահմեդական ազգաբնակչությանն էին բաժանել նրանց հացի պաշարները։ Սովն ու համաճարակային հիվանդությունները տառացիորեն հնձում էին Դաշտի հայերին։ Շատ գյուղերում մահացությունները հասան 24—40 տոկոսի։ «Հասել էր այն պահը, երբ ժողովուրդը այլևս անկարող էր դիմանալ և զսպել իր զայրույթը»։

Տարոնում տիրող վիճակը նման էր «խուլ երկրաշարժի առաջին հարվածին», որին հաջորդելու էին երկրորդ, երրորդ ուժգին հարվածները՝ սպառնալով քարուքանդ անել ամեն ինչ։ Դա հրաբխի նախանշան էր, որը ցանկացած պահի կարող էր վերածվել ահավոր աղետի։

Հայտարարվել էր զորքերի ընդհանուր զորահավաք... Միայն Սասունի վրա մի քանի վաշտ զորքի հետ ուղարկվել էր 16 մեծ դաշտային և 34 լեռնային թնդանոթ։ Սասուն ուղարկվեցին նաև Երզնկայի 19-րդ և Մուշի 12-րդ հեծյալ գնդերը, Էրզրումից մի գումարտակ՝ երկու թնդանոթներով։ Գարնանն համարքայլ դեպի Սասուն շարժվեցին թուրքական ոստիկանական ջոկատները։ Նրանք տեղավորվեցին հայկական գյուղերում։

Ապրիլին Բիթլիսի կուսակալ Թահսին փաշայի զորքերը երևացին Սեմալում։

Թուրքական բանակի դեմ կանգնած էին 2000 գյուղացի՝ զինված միայն չախմախլի հրացաններով, դաշույններով ու մահակներով։

Շատախի ու Գավառի հայերին ահաբեկելու համար իշխանությունները լուր ուղարկեցին քեռչերի քրդերին, որ գան ու բնակվեն Սիմ լեռան վրա, իսկ Հաջի Դայիբը նրանց հրավիրեց Մշո սարերը, ասելով. «Այս տարի ձեզ համար շատ որս կա»։

Քեռչերը քոչվոր չէին. նրանք Խիանքում բնակվող բագրանցիներն ու Խուլբում բնակվող բատկանցիներն էին։ Ամառները գալիս էին Շատախի սարերը և պատուհաս դառնում հայերի համար։

Մուշ քաղաքի հայերին արգելվեց առանց անցագրի քաղա-

քից մեկ ժամից ավելի բացակայել, այսինքն, քաղաքի հայությունը մեկուսացվեց գյուղերից և հատկապես Սասունից։

Ապրիլի 16-ի գիշերը Հաջի Ֆեյիմի ղեկավարությամբ մի քանի վաշտ ոստիկաններ ցրեցին Շատախի Տաիք, Իրիցունք, Գելամավ, Շուշնամերկ, Գեղաշեն գյուղերը և մինչև ապրիլի 20-ը հարցաքննում էին գյուղացիներին։ Հաջի Ֆեյիմը իր մոտ է կանչում Գելիեգուղանի, Սեմալի և Շենիկի տանուտերերին, բայց նրանք հրաժարվում են ներկայանալ։ Խնդիր էր դրված Սասունի գյուղապետներին ձերբակալել և հավաքել ազգաբնակչության մոտ եղած զենքը։ Պոլսից հատուկ ոստիկաններ բերվեցին դրսից եկած հեղափոխականներին գտնելու համար։ Այդ ընթացքում ավերվեցին ու թալանվեցին Խասգյուղի, Հայկերտի եկեղեցիները, խուզարկվեցին բոլոր մեծ ու փոքր վանքերը։

Արգելվեց օտար քաղաքացիների մուտքը Մուշ։ Հայդուկ բռնելու համար նախկինում վճարում էին 20, իսկ 1892 թվին 200 ոսկի։ Թուրքական կառավարությունը ամեն ճիգ թափում էր խեղդելու Տարոնի շարժումները։ Նա երկյուղում էր, որ այդ շարժումները կտարածվեին Հայաստանի մյուս գավառներում... Որտեղ շարժում էր ծագում, պաշարողական վիճակ էր հայտարարվում։

Բ. Դուռը անընդհատ տեղեկություններ է պահանջում Սասունում տիրող վիճակի մասին։ Պատասխանները երկիմաստ են՝ խաղաղությունը վերականգնվում է, բայց լրացուցիչ զորքեր ուղարկեք։

Իշխանությունների հանձնարարությամբ քրդերը հարձակվում են ս. Կարապետ վանքի վրա։ Վանքի միաբանությունը կռվի մեջ է մտնում և, չորս զոհ տալով ու տասը քուրդ սպանելով, նրանց ետ է մղում։

1892 թ. մայիսի 19-ին Մուշից գրում են. «Ոստիկանական վաշտերը մի ամսից ավելի Սասունում են՝ Շատախ, Գավառ, Խուլբ, Խիանք և Խարզան, Տամատյանին գտնելու ու նրա հետ հարաբերություն ունեցած գյուղապետներին ձերբակալելու համար։ Այդ վաշտերը Հաջի Ֆեյիմի, Դալիբ էֆենդու հրամանատարությամբ գյուղերում բազմաթիվ խժդժություններ կատարեցին, սակայն ոչինչ հայտնաբերել չկարողացան, իսկ տանուտերերը ներկայացան այնպիսի պայմաններում, որ նրանց ձերբակալել չհամարձակվեցին։ Այստեղ անհաջողության մատնվելով, թուրքերը իրենց զայրույթը թափում են Խուլբի ձորի երկայնքով ընկած հատուկենտ անպաշտպան ու ցրված տների վրա, ձերբակալում են հինգ հոգու, որոնցից Միրխո անունով մեկը, չդիմանալով խոշտանգումներին, մատնում է ոմանց, այդ թվում և Ազոյին, որին գազանաբար խոշտանգում են։ Ձերբակալվածներին տանում են Սեմալ Դալիբի մոտ։

Բազմոցին նստած էին Դալիբը, Ֆեյիմը և Ռաշիդը։ Ձերբակալված հինգ խուլբեցիներ կանգնած էին սենյակի կենտրոնում, որոնց հսկում էին 30 ոստիկաններ։ Գիշեր էր։ Դալիբը հարցաքննում էր խուլբեցիներին, ծեծի ու ահաբեկման միջոցով ճգնում նրանցից տեղեկություններ ստանալ։ Բայց գյուղացիները չընկճվեցին։ Դալիբը մյուսներին դուրս է հանում ու սենյակում թողնում միայն Ազոյին։ Նրան մերկացնում են և ամենոտին մի ձող դնելով՝ երկու ծայրերը ագուցում են, ապա ձեռները հորիզոնական տարածելով, մի ձող էլ կապում են դաստակներից։ Այդ կենդանի խաչը սյունին կապոտելով՝ սկսում են ծեծել։ Ազոյի մարմինը ծածկվում է կապույտ շերտերով։ Ազոն փորձում է գլուխը սյանը խփելով մեռնել ու ազատվել տանջանքներից։ Ոստիկանները նրա գլուխը բռնում են և, առանց ծեծը դադարեցնելու, հարցեր տալիս։ «Ես ոչինչ չգիտեմ, որքան ուզում եք շարչարեք, մեկ է, չեմ մատնի»,— վերջին ուժերը լարելով ասաց Ազոն։ Աքցանով սկսեցին նրա բեղերը քաշել։ Ազոն չընկճվեց։ Եվ այդպես՝ ամբողջ գիշերը։ Իսկ վաղ առավոտյան, վախենալով գյուղացիների զայրույթից, Դալիբը ձերբակալվածներին ձիերով ուղարկեց Մուշ։

Սասունը բոլոր կողմերից շրջապատվում էր ու կտրվում դրսի աշխարհից։ Սասուն բարձրացան ևս մի քանի հրետանային վաշտեր։ Հաջի Դալիբը շրջում է քրդերի բնակավայրերը ու նրանց գրգռում հայերի դեմ։ Նրան ուղեկցում էին ոստիկանները, այսինքն, նա պաշտոնական հանձնարարություն էր կատարում։ Ջեբրանցի քրդերից մեծ թվով հեծյալների Մուշ տարան, զինվորական զգեստ հագցրին, հրահանգավորեցին ու էտ ուղարկեցին։ Սակայն ոչ բոլոր քրդերը միացան թուրքերին։ Հատկապես Սասունում բնակվող քրդերը անցան հայերի կողմը ու միասին բարձրացան լեռները։

Հուլիսի 12-ին ս. Կարապետի վանքում վարդավառի տոնակատարություն էր։ Տոնակատարությանը մասնակցելու էին եկել

շուրջ 2000 հոգի։ Ոստիկանները շրջապատել էին վանքի տարածքը, այստեղ էին նաև Մուշի ու Կենճի հազարապետները, 50—60 համիդիեներ, Մուշի պաշտոնատարներ, լրտեսներ, ճանապարհները հսկում էին 21 հեծյալներ։

Նույն օրերին բագրանցի քրդերը վրաններ դրին Շենիկ, Սեմալ և Գելիեգուզան գյուղերի մեջտեղը՝ Ջայ կոչված վայրում, նրանց մի մասն էլ շարժվելով հյուսիս՝ կտրեց Շատախի կապը Տարոնի հետ։

Գեղաշենը դատարկվեց, իսկ բնակիչները բարձրացան լեռը։

Հազոյի կայմակամը քրդաբնակ Պողքան գյուղից ջորիներ է ուղում՝ իր զորքերը Սասուն տեղափոխելու, բայց մերժում է ստանում։ Վախենալով քրդերի հետ գժտվելուց, նա ոստիկաններ է ուղարկում հայաբնակ Խոծածվանք գյուղը և ջորիներ պահանջում։ Սակայն հայերը նրանց ծեծում ու վռնդում են։ Գազազած կայմակամը հարձակվում է Խնձորիկ հայաբնակ փոքրիկ գյուղի վրա։ Հայերը պաշտպանության են դիմում, նրանց օգնության են գալիս հարևան գյուղերի հայերն ու քրդերը։ Կռիվը տևում է երկու օր։ Թուրքերը փորձում են նահանջել, հայերը փակում են նրանց ճամփան։ Բայց թուրքերին հաջողվում է նահանջել դեպի Գոմսի վանք ու կանգ առնել Սլնաղբյուր վայրում։ Այստեղ են հավաքվում նաև Սասունից վերադարձող զորքերը։ Բելքցի քրդերը նրանցից պահանջում են հեռանալ։ Կայմակամը տեղի է տալիս ու հեռանում Հազո։

Օգոստոսին, 40—50 քրդեր գիշերը հարձակվում են Շուշնամերկ գյուղի վրա։ Հարևան Կոփ գյուղում 200 թուրք զինվոր կար, բայց նրանք Շուշնամերկի կռվին չմիջամտեցին. հայերն ու քրդերը թող իրար ոչնչացնեն, իրենց ուզածն էլ այդ էր։ Թուրքական կայազորը լսելով, որ «Մշո սարում 80—90 հայդուկ կա, ահաբեկված փախավ Մուշ»։ Եվ ընդհանրապես, լեռնային գյուղերի խաղաղությունը պաշտպանելու պատրվակով խնդճ գյուղացիների վրա բեռ դարձած այդ ուժերը չէին հանդգնում մի քայլ իսկ անել հայդուկային խմբերի դեմ, որոնք զարմանալի համարձակությամբ ոտի տակ էին տալիս Մուշի գյուղերը և գոտեպնդում էին հայերին։

Իշխանություններն ահաբեկված էին։ Գործնականում ինքնապաշտպանության մեջ ընդգրկված էին բոլոր գյուղերը։ Մշո կառավարիչը դիմում է Բ. Դռանը՝ իր գործելակերպը որոշելու խնդրանքով։ Ստացվում է պատասխան՝ գործել շատ զգույշ։

Գյուղերին հրահանգ ուղարկվեց հայերին ապաստան չտալ, եթե հայը նույնիսկ ծանոթ կամ բարեկամ լինի՝ ծեծել ու հանձնել իշխանություններին։ Մի փախստական բռնելու համար սահմանվեց 300 ոսկի վճար։

Միաժամանակ, իշխանությունների հորդորանքներով, արևմուտքից դեպի Սասուն շարժվեցին Տիգրանակերտի քրդերը։ Նրանց միացան նաև Խուլբի ու Խիանքի քրդերը։

Սասունցիները, տեսնելով կանոնավոր զորքերի ու քուրդ աշիրեթությունների շարժումները, գյուղերում նրանց գործադրած բռնությունները, զինվելով ու զինամթերք կուտակելով, խուսափում էին ակտիվ գործողություններից։

Մայիսի կեսերին Հազոյի ոստիկանական ջոկատը նորից հասնում է Տալվորիկ, բայց որովհետև այդ շրջանի քրդերը հայերի հետ համերաշխ էին, կայմակամը չհամարձակվեց մտնել Տալվորիկ։ Նա տալվորիկցիներից պահանջեց վճարել պետության հասանելիք տուրքերը։ Բայց այդ Տալվորիկը երբեք և ոչ ոքի տուրք չէր վճարել և կտրականապես հրաժարվում է հարկ տալ։ Կայմակամը փորձում է տուրքերը հավաքել, բայց զինված դիմադրության է հանդիպում։ Ոստիկանները գերադասում են հեռանալ։

Սասունցիներին պատժելու առաջադրանքը ըստ ամենայնի չկատարելու համար Մուշի մութեսարիֆին հեռացնում են։

Սասունում ինքնապաշտպանական կռիվները ավելի ու ավելի են ծավալվում և սուր բնույթ ստանում։

Հնչակյան կուսակցությունը շտապեց այն անվանել «հնչակյան ապստամբություն»։

«Հնչակը» 1892 թ. № 5-ում գրեց. «Հատուկ թղթատարով մի մեծ ու ծանր լուր հասավ մեզ վերջին վայրկյանին— Հնչակյան հեղափոխական կուսակցության նախաձեռնությամբ մայիսի առաջին օրերը Սասնո գավառն ու Մշո դաշտի մի քանի գյուղերն ապստամբել են կառավարության դեմ։ Մի քանի անգամ Մուշից ու Բաղեշից զորքեր են ուղարկվել ապստամբների դեմ, բայց ջարդվել են։ Կառավարությունը, չունենալով բավականաչափ տեղական զինվորական ուժ, գլուխը կորցրած՝ դիմում է ուրիշ կենտրոնների, օգնություն խնդրելով։ Ապստամբական շարժումն ավելի ու ավելի ընդարձակ ծավալ է ստանում շարունակ։

Կեցցե՛ ապստամբությունը։

Կեցցե՛ Սասունը»։

Տեսնելով հայերի ու քրդերի համերաշխությունը՝ իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին ոչ միայն այն քայքայելու, այլ նաև քրդերի միջև դժգոհություններ ու բախումներ առաջացնելու համար։ Եվ դա հաջողվեց։ Մեկ շաբաթվա ընթացքում քրդերը երեք անգամ իրար բախվեցին։ Այդ բախումների համար օգտագործվեց համիդիեների ղեկավար դերի շուրջը առաջացած տարաձայնությունները։

Որոշ մասնագետներ այն կարծիքն են արտահայտել, որ Սասունում կատարվածի «միակ պատճառը հարկն էր։ Պետությունը ուզում էր կիսանկախ լեռնական Սասունի զավակների վիզը հարկերի ծանր լծի տակ մտցնել»։

Սա սխալ կարծիք է։ Հարկերը միայն առիթ ու պատրվակ էին Սասունի հայության դեմ զանգվածային բռնություններ ու վայրագություններ գործադրելու համար։

***

Գևորգի խմբի վրա պարտականություն էր դրված արագ տեղաշարժերով ստուգել թուրքական բանակի շարժման հավանական ուղիները, այդ մասին մյուս ջոկատներին տեղյակ պահել, իսկ եթե հարկ լիներ՝ կռվի բռնվել։ Գևորգի անունն արդեն հայտնի էր ոչ միայն հայերի, այլև թուրքերի ու քրդերի շրջանում։ Ուստի նրա ջոկատի արագ տեղափոխությունները սանձում էին քրդական աշիրեթներին և առժամանակ ապահովում հայերի թիկունքը։

Կառավարական զորքերը աստիճանաբար ամրացան Կուրտիկի բարձունքներին, իսկ քրդերը ընդհուպ մոտեցան հայկական բնակավայրերին։ Ոչ մի կասկած չկար, որ բոլոր ուղղություններով հարձակում էր սկսվում Սասունի վրա։ Հայդուկները որոշեցին նախահարձակ լինել, հարվածներ հասցնել քրդերին և հարձակողական գործողություններով թուրք հրամանատարությանը հասկացնել, որ Սասունում ծանր մարտեր են սպասվում։

Այս դիրքորոշումն իրեն արդարացրեց։ Թուրքական բանակը 1892 թվականին չհանդգնեց Սասունում ռազմական լուրջ գործողություններ ձեռնարկել և սպասեց նոր համալրումների։ Այդ օրերին էր, որ Գևորգի խմբի մեջ մտավ Սպաղանցի Գալեն՝ Ֆիլիկապես ամուր, առյուծի սիրտ ունեցող, բայց դանդաղա-

Գևորգ Չաուշ



Վարդան վարդապետ

Դժոխք Հրայր

Արաբո

ՄիքրաՀ ՏամատյաՀ

Գեղ. (Ցանկանակված 1896-թՀ)

Աղբյուր Սերոբ

Մշո դաշտի Սուլուխի պատմական կամուրջը

Ս. Կարապետի վանքը

Ամրոցի վանքը

Մշո դաշտը՝ ս. Կարապետի վանքից նայելիս

Մուշ քաղաքը

Մշո ս. Առաքելոց վանքը

Մուշ քաղաքը

Մուրատ Գոյանցյան

Կոնտեմիր գյուղը

Վանցյան

Խաչգյուղ

Ֆիդայիներ

Կորյուն

Ֆիդայիներ

Նեմրութ լեռան գագաթի լիճը

Հաջի

Հակոբ Կոտոյան

Բաղդասար Սալյան. Գուրգեն



շարժ ու սակավախոս մի երիտասարդ, որը դարձավ Գևորգի ու Մակարի մերձավորագույն զինակիցն ու նշանավոր հայդուկներից մեկը։

Գալեն միջահասակ էր, թիկնեղ, թուխ դեմքով, միայն կրակոտ աչքերն էին մատնում նրա ներքին ուժը, երկաթյա կամքն ու վճռականությունը։

Գալեն Սպաղանք գյուղից էր։ Այս գյուղը ընդամենը քսանհինգ տուն ուներ, բայց տվեց մի քանի նշանավոր հայդուկներ։ Այս գյուղից էր նաև հայդուկային շարժման նահապետ Մակարը։ Սպաղանցի էին Ազեն ու Ազան։

Գալեն մարտական մկրտություն ստացավ պատանի հասակում, երբ մասնակցեց աղջիկ փախցնելու համար Տալվորիկի ու Կյապրնիի միջև ծագած կռվին, որն իսկական պատերազմի վերածվեց։ Կյապրնցիները աղջիկ փախցնելը համարեցին իրենց պատվի վայրենի ոտնահարում ու պատերազմ հայտարարեցին Տալվորիկին։ Դա մի անմիտ եղբայրասպան կռիվ էր։ Գալեն մասնակցում է Խիանքի և Մարաթուկի քուրդ ցեղերի դեմ կռիվներին։

1890 թվին, երբ Խալիլ փաշան կոտորեց Սպաղանքի ազգաբնակչությանը, զոհ գնացին Գալեի ու Մակարի ազգականներն ու հարազատները։ Այդ ողբերգական իրադարձությունը վերջնականապես որոշեց Գալեի ուղին։ Նա երդվեց իր կյանքը նվիրել ժողովրդի փրկության գործին, դառնալ հայդուկ՝ ժողովրդական վրիժառու։

1892 թվին նա մտնում է քեռու՝ Մակարի խումբը, նրա միջոցով ծանոթանում Գևորգի հետ։ Գալեն մասնակցել է Գևորգի գրեթե բոլոր մարտական գործողություններին։

Լինելով արտակարգ քաջ ու ճարպիկ կռվող, Գալեն մեծ դեր խաղաց Խարսի, Տալվորիկի, Բերդակի կռիվներում։ 1904 թ. նրան հանձնարարվեց Գրեգոլի դիրքերի պաշտպանությունը, որը նա իրականացրեց աներևակայելի քաջությամբ ու հմտությամբ։

***

1893 թվի գարնանը սկսվեց թուրքական բանակի նոր առաջխաղացում դեպի Վերին Սասուն, որին մասնակցում էին նաև աշիրեթությունները և մոլեռանդ շեյխերը՝ սրբազան պատերազմի կոչող իրենց ոռնոցներով։ Սասունը նորից պաշարվեց։

Հայերը հարկադրված էին կռվել մի քանի ճակատով։ Սակայն հարվածի գլխավոր ուղղությունը Տալվորիկն էր, որի գրավումը ճամփա կբացեր դեպի Անդոկ ու Շատախ։

Այդ ընթացքում Սեմալում ձերբակալվեց հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Միհրան Տամատյանը, որը մեծ դեր

է խաղացել Սասունում ու Տարոնում ազատագրական գաղափարների տարածման և օսմանյան բռնությունների դեմ պայքար կազմակերպելու գործում։

Այս լուրը ստանալով՝ գելիեցիներն ու ալյանքցիները հարձակվում են Սեմալի վրա՝ մատնիչներին պատժելու, սակայն «Սեմալի կանանց թախանձանքներից ազդված, ետ են դառնում»։

Տասնհինգ շենիկցիներ երիտասարդ Գրիգոր Մոսեյանի գլխավորությամբ բարձրանում են Սիմ լեռը՝ անակնկալ հարձակումով Տամատյանին ազատելու մտադրությամբ։ Մեկուկես ժամ հետո մի սեմալցի նրանց հայտնում է, որ Տամատյանին այլ ճանապարհով արդեն Մուշ են հասցրել։

Գևորգը Տալվորիկում էր, երբ ստացավ Տամատյանի ձերբակալության լուրը։ Անմիջապես հավաքելով տալվորիկցիներին՝ շտապեց դեպի Սեմալ։ Բայց արդեն ուշ էր։ Հարյուրապետ Իսկենդերի հրամանատարությամբ և հարյուր ոստիկանների ուղեկցությամբ Տամատյանին խոշտանգելով հասցրել էին Մուշ։ Մի քանի օր անց նրան տեղափոխում են Բաղեշ և, որպեսզի փախուստի չդիմի, մի ոտքը կոտրում են։ Հարցաքննության ժամանակ Տամատյանն իրեն խիզախ է պահում։ «Ոչ թե ձգտում ենք թուրք տարրը ոչնչացնել,— հայտարարեց նա,— այլ մեր ջանքերն ուղղված են, որ հայ և թուրք ժողովուրդները հավասար իրավունքներ ունենան ու բարվոք կյանքով ապրեն»։

Երբ շղթայակապ Տամատյանին բանտախուց են տանում, նա անվրդով ասում է. «Ես երջանիկ եմ, որ այսպիսի կյանքով ապրեցի»։

Լսելով Տամատյանի համարձակ պատասխանները, մի թուրք պաշտոնյա ասել է. «Այժմ արդեն խորապես համոզված եմ, որ իսկական խռովությունը Տամատյանի ձերբակալությունից հետո է սկսվելու»։

Միհրան Տամատյանը ծնվել է 1868 թվին Կ. Գոլտում, 1880-ին ավարտել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը։ Տիրապետում էր ութ լեզուների։ Զանազան վայրերում զբաղվել է ուսուցչությամբ, եղել է Տուրուբերանի և Վասպուրականի հայկական դպրոցների տեսուչ։ Գում Գափուի ցույցից հետո փախել է Աթենք։ 1891-ին վերադարձել է Սասուն և զբաղվել ինքնապաշտպանական կռիվների նախապատրաստական աշխատանքներով։

1893 թ. ձերբակալվել է։ 1897-ին հեռացել է հնչակյան կուսակցությունից, հետագայում դարձել ռամկավար կուսակցության հիմնադիրներից մեկը։ Ֆրանսիայի օգնությամբ փորձեց ստեղծել Կիլիկիայի հայկական ինքնավար պետություն։ 1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում հռչակվում է ինքնավար Հայաստան Մ. Տամատյանի գլխավորությամբ, որը սակայն շատ կարճ կյանք ունեցավ։

Տամատյանը զբաղվել է նաև գրական գործունեությամբ, նա է «Տալվորիկի կտրիճը» երգի հեղինակը։

Տալվորիկի կտրիճ եմ խորդ,
Քաղքցու պես չեմ թուլամորթ,
Սարի զավակ, քարի որդի՝
Հին քաջ հայոց եմ մնացորդ։
Տալվորիկի զավակ եմ քաջ
Չեմ խոնարհվի թուրքի առաջ
Քարոտ լեռանց եմ ազատ լաճ՝
Չեմ տեսեր ո՛չ արոր, ո՛չ մաճ։

Մահացել է Կահիրեում 1945 թվին։

Տամատյանին բռնելուց հետո կառավարությունը դիմում է կտրուկ միջոցների Սասունը ընկճելու համար, և շտապում է զիլանցիների հայտնի շեյխերին նամակ գրել և խնդրել, որ «քուրդ ցեղերին գրգռեն Տալվորիկի դեմ»։ Միաժամանակ Մուշից, Բաղեշից, Կարինից և Տիգրանակերտից զորքեր են հավաքում։ Նախ բագրանցիք, խարզանցիք, սասունցիք (քրդեր) և մի քանի այլ ցեղեր, հավաքված Տալվորիկի մոտ, պատգամավոր են ուղարկում, պահանջելով. «Թագավորին հնազանդվեք ու հարկ տվեք»։ Տալվորիկցիք պատասխանում են, թե Տաճկաստանում ամեն մի քուրդ կամ թուրք թագավոր է ձևանում։ Մենք, փոխանակ թագավորներին հնազանդվելու, աստծուն կապավինենք։ Հազարավոր քրդեր հարձակվում են Տալվորիկի վրա։ Տալվորիկցիները նրանց համփան փակելու համար քանդում են Սատանի կամուրջը։ Նրանք քաշվում են Ֆրոֆրոքար և, ճանապարհներին պահապաններ դնելով, կռվում են։ Մանր մարտերը շարունակվեցին մի ամբողջ օր։ 35 քուրդ ու 6 հայ սպանվում են։ Քրդերը հարկադրված ետ են քաշվում։

Սասունը դրսից որևէ օգնություն չէր ստանում, «անօգնական սասունցիք միմիայն իրենց չախմախլիով հուսահատ պայքար են մղում ոչ միայն ճիվաղների, այլև քաղցի դեմ։ Սասունցիները «կցորա լեռն են քաշվում, նրանց տներն ու արտերը քանդում են զորքերը»։

Բաղեշի կուսակալը Դալիբ էֆենդուն ուղարկում է որպես պատվիրակ։ Նա տալվորիկցիներին ասում է. «Ձեզնից գրավված ոչխարը, ջորին, էշերը ձեր տալիք տուրքի տեսքը համարեք և դուք էլ, մի հնազանդագիր գրելով, սուլթանից ներում հայցեք, նշելով, թե Տամատյանը ձեզ գայթակղեց»։ Բացասական պատասխան ստանալով, կուսակալը հեռանում է Բաղեշ։ Ետ են քաշվում նաև Սեմալում ու Շենիկում եղած զորքերը։

Իսկենդերը Տամատյանի ձերբակալությունից երեք օր հետո, ոստիկանների գլուխն անցած, հարձակվեց Շենիկ գյուղի վրա։ Գրգոյի ղեկավարությամբ շենիկցիները դիմադրում են։ Ոստիկանները մի զոհ տալով փախչում են[8]։

Թուրքական բանակի և քրդական կռվող ուժերի դասավորությունը, նրանց հարձակման ծավալն ու հզորությունը պարզելու համար Գրգոն Գևորգի ջոկատը հետախուզության ուղարկեց։ Երբ Գևորգի խումբը հասավ Կուրտիկի բարձունքներին, տեսավ, որ թուրքական մի ամբողջ գունդ, դիրքավորվելով, իր հսկողության տակ է վերցրել ստրատեգիական բոլոր կարևոր կետերը, լեռնաշխարհը Տարոնի դաշտին կապող բոլոր ճանապարհներն ու անցուղիները։ Խումբը Նովասարի փեշերով շարժվեց դեպի Առաքելոց վանք։

Այստեղ նրանք քննեցին հետախուզության արդյունքները և համոզվեցին, որ թուրքական իշխանությունները Մուշի կայազորից բացի, Սասունի վրա են շարժում այլ զորամասեր Բիթլիսից, Կենճից և Հազոյից։ Մեջիդ փաշան իր ոստիկանական վաշտերը ընդհուպ մոտեցրել էր Շենիկին։ Ժանդարմական մի քանի վաշտեր արդեն տեղավորվել էին Սեմալ գյուղում։ Համզոյի և Շեկոյի աշիրեթները շարժվում էին դեպի Նովասարի արևելյան լանջերը՝ Վերին Սասուն բարձրանալու համար։

Մուշում բանտարկվեցին հայկական համայնքի ու եկեղեցու զեկավարներն ու աքսորվեցին Էրզրում։

Այս տագնապալից տեղեկությունները ստանալով, Գևորգի խումբը հեռացավ վանքից, բարձրացավ դեպի Աստղնակաբերդ ու Միրին Կատար, ապա Շենիկի ճանապարհին հետախուզեց Մրկեմոզանում տեղադրված թուրքական վաշտերի դիրքերը և արդեն ուշ գիշեր էր, երբ վերադարձավ Շենիկ։

Գևորգի խումբը դադար չուներ, մեկ Մրկեմոզանի բարձունքներում էր, մերթ Ալիանքում ու Տալվորիկում։ Գևորգը, օգտագործելով տեղանքի իր գիտելիքները, պարզում էր թշնամու

զորքերի քանակը, տեղադրությունը և գործողությունների ծրագիրը։ Գնալով դեպի հարավ-արևմուտք, նա տեսավ, որ քրդական ցեղապետներն իրենց ուժերն արդեն տեղավորել են Խուլբի ու Խիանքի հարավային շրջաններում։

Մարտերն առանձնապես կատաղի էին Տալվորիկի Սպիտակ լեռան ստորոտում։ Այստեղ հարյուրավոր քրդեր իրենց մահը գտան, բայց մեծ էր նաև հայերի կորուստը։ Տևական մարտերն աստիճանաբար մաշեցին Տալվորիկի ոչ միայն ռազմամթերքը, այլ նաև կենդանի ուժը։

Դրությունը ծանր էր։ Թշնամու ուժերը ընդհուպ մոտեցել էին Տալվորիկի գյուղերին, ազգաբնակչության մեծ մասը, այրելով իրենց տները, հեռանում էր դեպի լեռնային քարանձավներն ու Սպիտակ խազակի կիրճը։ Թշնամին մեծ զոհեր տալով՝ ձգտում էր հասնել կիրճին ու կրակի տակ առնել անզեն ժողովրդին։ Թվում էր, թե ողբերգությունն անխուսափելի է։ Բայց այդ ժամանակ Սպիտակ խազակի կիրճին մոտեցած քրդերն ընկան զանգվածային կրակի տակ ու շփոթված ետ քաշվեցին։ Գևորգի ջոկատն էր, որ դիրքեր գրավելով Տալվորիկի վերևի ժայռերում, իր հսկողության տակ էր առել գյուղի արևմտյան թաղամասերի մուտքերը, մասնավորապես Սպիտակ խազակի կիրճը։ Թշնամուն այդպես էլ չհաջողվեց հասնել կիրճով հեռացող ազգաբնակչությանը։

Կռիվը օրհասական էր։ Երկրորդ օրը նոր ուժերով համալրված թշնամին գրոհում է, և տալվորիկցիները պատրաստվում էին նահանջել դեպի Ֆրոֆրոքար։ Խուճապը ճակատագրական հետևանքներ կունենար Տալվորիկի համար։ Գևորգն ու Փրխվայի Տեր-Գաբրիել քահանան, քաջալերելով գյուղացիներին, հերոսաբար շարունակեցին դիմադրությունը և հաղթեցին։

Գևորգը քսաներկու տարեկան հասակում ժողովրդական հերոսի համարում ձեռք բերեց։

Երբ քրդերի պարտության լուրը Կ. Պոլիս հասավ, սուլթանը կատաղությամբ ասաց. «Պետք է բնաջնջել Սասունը»։ Կազմվեց սուլթանական ֆարման*, որը Զեքի փաշային հանձնելու համար Բիթլիս ժամանեցին Սեյիդ բեյը և շեյխ Սուլեյմանը։

Զեքի փաշան իր համար մեծ պատիվ համարեց սուլթանի նման հանձնարարությունը։ Նա անմիջապես հրավիրեց քուրդ

* Հրաման

ընկրկեցին։ Այդ ժամանակ կիրճ ներխուժեց հազար հոգուց բաղկացած Թուրքական մի զորամաս։ Սկսվեց արյունահեղ ճակատամարտ, կատաղի մարտեր բռնկվեցին նաև գյուղի բարձունքներում։ Հայերը, հավաքելով իրենց ուժերը, բոլոր ուղղություններով հակահարձակման անցան։ Հակառակորդը մինչ այդ կարծում էր, թե հայերի ուժերը սպառված էին և, տեսնելով այդ ընդհանուր հակահարձակումը, շփոթվեց։ Վախենալով շրջապատումից ու փոքր կռիվների մեջ քաշվելուց, Թահսին փաշան իր զորամասերին նահանջի հրաման տվեց։

Սասունցիները տարան առաջին խոշոր հաղթանակը։ Այդ հաղթանակն անհնար էր առանց լեռնաշխարհի բոլոր գյուղերի նյութական, ռազմական ու բարոյական աջակցության։ Բայց հաղթանակն ամենից առաջ ապահովեցին տալվորիկցիները։ Տալվորիկցի ահել ու ջահել, հարս ու աղջիկ կանգնեցին իրենց օջախի պաշտպանության համար։

Տալվորիկի հաղթանակը բարձրացրեց սասունցիների մարտական ոգին, կոփեց հաղթանակի հասնելու նրանց կամքը։

Պատմում է Գևորգը. «... Հուլիսի 17-ին Տալվորիկի մեջ տեղի ունեցավ մի մեծ կռիվ։ Ինձ հետ էին Արմենակը, Ադամը, Պողոսը և Հովհաննեսը։ Կանոնավոր զենք չունեինք, մեկ հատ մարտին իմ ձեռքին կար, մյուսները չախմախլի էին։ Այնտեղ մենք կորցրինք հինգ ընկերներ և մի կին, իսկ քրդերից սպանվեցին 30 հոգի։ Տեղացի խեղճ հայերը բավական վնասվեցին, որովհետև քրդերը թալանեցին։ Մենք էլ անպաշտպան մնացինք, ոչ մի տեղից օգնություն չկար։ Մուրադն էլ ուշացավ։ Մինչև աշուն մնացինք այդ անորոշ վիճակում։ Արմենակը ևս թողեց մեզ և գնաց Խնուս...»։

1898 թվի հուլիսի 29-ին Խարբերդից գրել են. «Սասունի կողմերում մեծ եռով է տեղի ունեցել հայերի և թվով անհամեմատ շատ համիդիե զորքերի միջև։ Սպանված է 50—60 հայ և ավելի քան 200 քուրդ։ Նահանջող քրդերը հարձակվել են հայկական գյուղերի վրա և մոտ հարյուր անպաշտպան կին մորթելով՝ գետն են լցրել»։ («Հնչակ», 1898 թ., № 8)։

Բալուի գավառապետը հայերին սպառնացել է. «Ես այնտեղ (Տալվորիկում) էի, երբեք ևս ձեզ նման խեղճուկրակ մարդիկ էին, բայց չենայեցինք։ Ձեզ էլ երբեք օրն են գցելու։ Ականջներիդ օղ արեք՝ ձեր անունը պետք է չջջվի աշխարհի երեսից»։

Իսկ Ամասիայի մութեսարիֆը* հոխորտացել է. «Եթե լրտեսին սպանդին 24 ժամվա ընթացքում չհանձնեք, Մարզվանը երկրորդ Սասուն եմ դարձնելու...»։ («Հնչակ», 1895 թ., № 10)։

Տալվորիկից հետո Թուրքական իշխանությունները երկյուղելով, որ քրդերը ուժեղանալով կարող են վտանգավոր դառնալ իրենց համար, գժտություններ են հրահրում նրանց մեջ։

Պատմում է Հրայրը. «Սուլթանը համիդիեն ստեղծեց Հայ տարրը ոչնչացնելու համար։ Քրդերը, երբ համիդիե անունը ստացան, ավելի լկտիացան։ Գյուղացիներից պահանջում էին ամեն ինչ, և վա՜յ նրան, ով ընդդիմանում էր։ Իշխանությունները, ի պատասխան հայերի բողոքի, ասում էին. «Մեր թագավորը մեկ համիդիե հեծյալին ձեր ամբողջ ազգի հետ չի փոխի»[9]։

Համիդիեները, Թուրքերի ձեռքին գործիք դառնալով, սկսեցին պայքարել նաև միմյանց դեմ։ Ժամանակավորապես նրանց զենքերը հավաքեցին, բայց երբ հայդուկային շարժումը աշխուժացավ, զենքերը վերադարձրին և ավելի գրգռեցին հայերի դեմ։ Միայն Խնուսում երեք նոր գունդ ձևավորվեց, յուրաքանչյուրը երեք հարյուր հեծյալով։

Սուլթանը, զինելով քրդերին, «հոգում էր», որ նրանց մեջ տարաձայնություններ լինեն։ Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանըխի, Խնուսի և Վարդոյի շրջաններում եղած հասնանցի, ջիբրանցի, զոքցի, բլքցի աշիրեթները ընդգրկված էին համիդիե գնդերի մեջ և իրար դեմ կռվում էին՝ ղեկավար դիրք ունենալու համար։

Սասունցի, բագրանցի, խիանքցի, բելքցի և բոզգցի քրդերը համիդիեի կազմում չէին, բայց իրար դեմ կռվում էին այս կամ այն շահադիտական նպատակով։ Քրդերը «երբեմն հային են բարեկամ ձևանում, երբեմն՝ Թուրքին»։

1893-ի նոյեմբերին Սասունից գրում են, որ լեռնաշխարհը շարունակում է շրջապատման մեջ մնալ, թեև կառավարությունն ու քրդերը զգուշանում են և առաջվա նման ազատ ոտընձգություններ չեն կատարում։

Մուշից Հրայրը 1893 թվի հոկտեմբերի 1-ին տեղեկացրել է, որ չնայած Վալին Սասունից գնացել է, բայց Կենճի Մուսթաֆա փաշան շարունակում է շրջապատման մեջ պահել Սասունի կենտրոնը։ Գյուղերը դատարկ են, բոլորը ապավինել են ժայռերին։

«Ո՞վ գիտե,— գրում է նա,— գուցե մեր այս թղթակցությու-

* Գավառապետ

նը տեղ չհասած, մեր կողմերից հասնի արյան հոտն ու ձայնը»[10]։

Աթենք մեկնած սասունցիները պատմել են. «1893-ի ապրիլի վերջերից մինչև 1894-ի օգոստոսը ամբողջ Սասունը պաշարման մեջ էր։ Մենք այդ ընթացքում բանջարեղենով ու խոտի արմատներով սնվեցինք, իսկ ձմեռը սոսկալի վիճակում անցկացրինք։ Մեր հարաբերությունները դրսի գյուղերի հետ լրիվ կտրված էին... Այս տարվա ապրիլի վերջերին կառավարությունը, կասկածելով, թե Մշո դաշտի Վարդենիս գյուղի բնակիչները մեզ գաղտնի ուտելիք են մատակարարում, նրանց անմիջապես հանձնեց զորքերի ու քրդերի ավարառությանը։ Վարդենիսը ուներ 325 տուն, որից հազիվ 25-ը կանգուն մնացին։ Երբ Վարդենիսում կատարված բարբարոսությունների լուրը Տալվորիկ հասավ, նրա բնակիչները զայրացած հարձակվեցին Վարդենիսը շրջապատող կանոնավոր զորքերի վրա։ Մի մեծ գունդ բերվեց բազմաթիվ թնդանոթներով և սկսվեց ընդհանուր կոտորածը, բոլոր տները ռմբակոծվեցին և ավերակ դարձան»[11]։

ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

Վրա հասավ ձմեռը։

Սասունցիները համոզված էին, որ գարունը բացվելուն պես թուրքերը վերսկսելու են ռազմական գործողությունները։ Դրա համար էլ հանգամանորեն նախապատրաստվում էին։ Նորոգում էին զենքերը, վառոդ էին պատրաստում, կապարից գնդակներ ձուլում։ Տալվորիկը վերածվել էր մի յուրահատուկ զինագործարանի։ Տալվորիկցիներին հաջողվում էր տնայնագործական եղանակով երկաթ ստանալ, որից դաշույններ և այլ տեսակի սառը զենք էին ձուլում։

Սասունում կապար չկար, դրա համար էլ հայ առևտրականների օգնությամբ կապար կուտակեցին Տալվորիկի լեռների գաղտնի պահեստներում։

Վառոդ պատրաստելու համար Մշո Ցրոնք գյուղ ուղարկվեց մի ջոկատ։ Ցրոնքի հողը իր մեջ պարունակում է վառոդի հումք։ Գիշերվա ընթացքում տների հողե հատակին գոյացած սպիտակ բորբոսը հավաքում էին, ջրի խառնուրդով լցնում կավե կաթսայի մեջ ու եռացնում։ Այնուհետև այդ հեղուկը սառեցնում էին և նրա մակերեսից հավաքում վառոդի բյուրեղները, դրանց խառ-

նում ծծումբ և ուռենու շոր փայտից պատրաստված ածուխ։ Այդ խառնուրդը լցնում էին սանդի մեջ և ծեծում։ Ստացված զանգվածը կտրատում էին, մաղում, և վառոդը պատրաստ էր։

Սասունցիներին հաջողվեց որոշ քանակությամբ հրացան գնել Ֆարղինում, մոտ հարյուր հրացան էլ հավաքվեց Մշո գաշտի գյուղացիներից։

Այդ պայմաններում սասունցին ամուսնանում էր, հարսանիք էր անում, երեխա ունենում։ Սասունը իր առօրյա ուրախություններով ու տխրություններով և կռվելու, մեռնելու, բայց հաղթելու վճռականությամբ էր դիմավորում 1894 թվականը։

1893 թ. օգնություն ստանալու հույսով Անդրկովկաս մեկնեց Դժոխք Հրայրը, իսկ Սասուն բարձրացավ հնչակյան կուսակցության անդամ Մուրադը (Համբարձում Պոյաճյանը)։ Նորից Սասունի գլխին չարագույժ ամպեր էին կուտակվում։ Թուրքական 30 հազարանոց բանակը, բազմահազար քրդերի հետ, բոլոր կողմերից օղակում էին Սասունը։ Նրանք որոշել էին նախահարձակ լինել և թնդանոթների օգնությամբ իսկական ճակատամարտ տալ լեռներին ապավինած մի բուռ գյուղացիների դեմ։

Իպամական գոռ վաշտերը կատաղի,
Պաշարել են մեր լեռները սոսկալի,
Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորություն.
Մեր պապերից սովրել ենք
Մեռնիլ քաջամարտի պես,
Զոր մեզ թողին հիշատակ։
Թնդանոթի դեմ եղել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով,
Ի սեր Աստծո, դժվար է
Հպատակիլ Իպամին։

Թուրքական հրամանատարությունը այս անգամ իր գործողությունների նպատակը քողարկում էր Մուրադին բռնելու պատրվակի տակ։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱՃՅԱՆ (ՄՈՒՐԱԴ)

Ծնվել է Հաճն քաղաքում, 1867 թ.։ Նախնական կրթությունը ստացել է տեղի Միացյալ ընկերության վարժարանում։ 1885-ին գնում է Պոլիս և ընդունվում հնչակյան կուսակցության շարքերը։ Շուտով դառնում է այդ կու-

սակցության Կ. Գոլսի կազմակերպության ղեկավարը, մասնակցում Գում Գափուի 1890 թ. հուլիսի 15-ի ցույցին։ Նրան ամենուրեք փնտրում էին, նրա մեծադիր նկարը փակցված էր կայսրության ոստիկանության պետ Նազրմի ընդունարանում։ Նկարներ էին բաժանված նաև ոստիկաններին ու լրտեսներին։ Մուրադի գլուխը գնահատված էր երկու հազար ռուբլի։ Մուրադը Գոլսից գաղտնի անցնում է Եվրոպա, որտեղ մնում է մեկուկես տարի։ Ապա գնում է Սասուն, համագործակցում Մ. Տամատյանի հետ։ 1898 թ. մեկնում է Կովկաս՝ զինյալ խմբեր ու զենք բերելու։ Վերադառնում է Սասուն, ղեկավար մասնակցություն ունենում 1894 թ. կռիվներին և նույն տարվա օգոստոսին, 35 տարեկան հասակում, ձերբակալվում է։

Նրան դատապարտում են ցմահ բանտարկության և աքսորում Աֆրիկա՝ Տրիպոլիս։

Մուրադը բանտում մնում է 11 տարի, 1905 թ. փախչում է և հաստատվում Փարիզում։ 1907-ին մեկնում է ԱՄՆ։ Սահմանադրության հաստատվելուց հետո, 1908 թ. օգոստոսին վերադառնում է Թուրքիա, ընտրվում օսմանյան պառլամենտի դեպուտատ (Ադանայից)։ Նա պառլամենտում խիստ քննադատության էր ենթարկում երիտթուրքերի քաղաքականությունը։ Նրա ջանքերով ձախողվեց ոչ մահմեդականներին բանակ զորակոչելու օրենքի նախագիծը։ 1915 թ. ապրիլին նրան էլ են ձերբակալում և օգոստոսի 24-ին կախաղան են բարձրացնում։

«Երբ Մուրադ էֆենդին (ինչպես նրան անվանում էին սասունցիները) երկրորդ անգամ Կովկասից վերադարձավ, ուր գնացել էր զենք ու ռազմամթերք հայթայթելու, Գևորգը իր ընկերների՝ Կարապետի, Քոլոս Օհանեսի, Ադամի և մյուսների հետ միացավ նրան»։ Այդ խումբը, որի մեջ մտնում էին նաև Կիրակոսը, Մանուկն ու Գալեն, ամբողջ ձմռան ընթացքում դադար չուներ, գյուղից գյուղ էր անցնում, ոգևորում մարդկանց, ստուգում կռվի նախապատրաստության վիճակը, օգնում երիտասարդներին ռազմական գործը սովորելու։

1894 թ. Գելիեգուզանը, Իշխանաձորը, Աղբին, Զիթնգը, Շենիկը, Սեմալը նորից հրաժարվեցին կառավարությանն ու քրդերին միաժամանակ հարկ վճարելուց։ Նրանց օրինակին հետևեցին Փսանքի, Խուլբի ու Խիանքի հայերը։

Թուրքական հրամանատարությունը նորից դիմեց խորամանկության։ Զեքի փաշան, պատանդներ տալու միջոցով, հանդիպում ունեցավ Սասունի ազդեցիկ մարդկանց հետ և պահանջեց զենքը վար դնել ու վճարել կառավարության հարկերը։ Սասունցիները պատասխանեցին, որ իրենք կառավարությանը և քրդերին միաժամանակ հարկ վճարել չեն կարող։ Եթե կառավարությունն իր զորքերը և քրդական աշիրեթությունները դուրս

հանի Սասունից և երաշխավորի սասունցիների անվտանգությունը, իրենք զենքը վար կդնեն և կառավարությանը հարկ կվճարեն։ Բանակցությունները ձախողվեցին։

Կ. Պոլիս է կանչվում Սուլեյմանիի (Տիգրանակերտի և Մուշի միջև է գտնվում) շեյխ Սայիդ էֆենդին, որին անվանում էին նոր Ջալալէդդին։ Նրա տրամադրության տակ կար 85 հազար զինված քուրդ։ Նա մոլի հայատյաց էր, մի հատկանիշ, որ ամենաշատն էր դուր գալիս սուլթանին։

Կառավարությունը այդ հրեշի հետ մեծ հույսեր էր կապում և նախապատրաստում էր նրան Սասունի դեմ հանելու։

Իշխանությունները ապարդյուն միջոցներ ձեռնարկեցին կալանավորելու Հրայրին։ Ահրոնք գյուղում ձերբակալում են նրա հորը՝ Մամբրե քահանային, և անլուր հալածանքների ենթարկելով, տեղափոխում Բաղեշի բանտ։

Գրում է Հրայրը.

«1894 թվի գարնանամուտին Փասուրի կայմակամը անտանելի խստությամբ սկսեց հարկահավաքությունը։ Նա Խուլբի և Խիանքի Ահրոնք, Գեղրվանք, Ընձքար, Էհուբ, Սաղտուն, Փառքայ, Հեղին, Ընկուզնակ, Սևիդ, Արտկոնք, Իշխանձոր և Բերմ գյուղերը ոստիկանախմբեր ուղարկեց, ասելով, որ կառավարությունը նրանց ապստամբ է ճանաչում։ Այդ գյուղերի գլխավորներին ձերբակալելով, ոստիկանները հասան Իշխանձոր գյուղը, որը գտնվում էր Տալվորիկից հարավ, երկու ժամ հեռավորության վրա։ Նա պահանջեց իրեն հանձնել Տալվորիկի իշխաններին ու Մուրադին։ Նա նաև պահանջում է հայտնել այն «թնդանոթների ու ութ հազար զինվորների տեղը», որոնց, իբր, Արաքսի տակով փորված թունելով, Ռուսաստանից բերել էին Մշո դաշտ։ Հայերը պատասխանեցին. «Ահա Տալվորիկը, գնացեք և անձամբ ձերբակալեք»։ Կայմակամը սկսեց խոշտանգել իր մոտ եղած հայերին։ Այլևս չկարողանալով տանել այդ դժոխային տանջանքները, մի խումբ երիտասարդներ հարձակվում են ոստիկանների վրա, 12 հոգու սպանում են, մյուսներին փախուստի մատնում, իսկ իրենք պատսպարվում Անդոկում»[12]։

Բաղեշում մի ժողով է տեղի ունենում, որին մասնակցում էին բագրանցի, ոշկոտանցի, խարկանցի, փենջաբցի, Ծովասարում բնակվող խարզանցի աշիրեթապետները, բեզիկցիների ղեկավարները, Խութի, Բռնաշենի իշխանները, մոտկցիների, խեչանցիների գլխավորները, բազկանցիների, ժաճրգանցինե-

րի, խկանցիների, խիյանցիների և Սիլիվանիկի բոլոր ցեղապետները և հյուսիսային բերդերի համիդիե հեծելազնդի Բեհեդին փաշան։ Ժողովը որոշեց, որ Սասունը իր անառիկ դիրքով, անմատչելի սարերով ու ռազմատենչ ժողովրդով, մշտական վտանգ է օսմանյան կառավարության համար, և քանի դեռ նրա ըմբոստ օրինակին չեն հետևել հարևան գավառների հայերը, անհրաժեշտ է ապստամբությունը խեղդել իր խանձարուրում։ Բոլոր քուրդ ցեղերին հրաման տրվեց նախապատրաստվել և չորս կողմից հարձակվել Սասունի վրա։

Աներևակայելի արագությամբ բոլոր շրջակա կուսակալություններից զորքեր մեկնեցին դեպի Մուշ. 7869 հետևակ, 1000-ի չափ հեծյալ և 150 թնդանոթ ուղարկվեց Սասուն։ Ռուսական և պարսկական սահմանագլխից ևս զորքեր տեղափոխեցին Սասուն։

Սասունը շրջապատած քրդերի թիվը 43 հազար էր։ Նրանք իրենց ցեղապետների ու շեյխերի գլխավորությամբ միացել էին թուրքական 27,4 հազար զինվոր ունեցող կանոնավոր բանակին։ Իսկ հայերի թիվը դժվար էր ճշտել, որովհետև կանայք ու երեխաներն էլ էին կռվում։ 304 հրացանակիր կար Տալվորիկից, 741՝ Գելիեգուզանից, 209՝ Շենիկից, 160՝ Սեմալից, 180՝ Իշխանձորից, 34՝ Հիթնքից, 120՝ Աղբրիկից, 208՝ Ալիանքից։

Սկզբում հարձակման անցան քրդերը։ Սակայն հակահարված ստանալով և կռվի դաշտում թողնելով 600 սպանված, ետ շրջվեցին։ Ահաբեկված քրդերը հրաժարվեցին առանց զինվորների մասնակցության նոր հարձակում սկսել։ Քրդական տարազով ծպտված զինվորների մի խումբ միացրին քրդերին, նրանց սրտապնդելու միտումով։

Կառավարական զորքը համոզվելով, որ միայն քրդական ջոկատներով արդյունքի չի հասնի, միացավ բարբարոս խուժանին և նոր հարձակում սկսեց։

Թուրքական բանակի մի մասը ցրվեց հայկական գյուղերը, հայտարարելով, թե եկել է պաշտպանելու «հավատարիմ հպատակներին»։ Հայերը մեկ անգամ ևս խաբվելով, թուրք զինվորներին ընդունեցին, կերակրեցին, օթևան տվեցին։ Բայց այդ «հյուրերը» գիշերը հարձակվեցին քնած մարդկանց, այդ թվում կանանց ու երեխաների վրա ու բոլորին մորթեցին։

Թուրքերը անընդհատ նոր համալրումներ էին ստանում, և արդեն 1894 թվի կեսերին Զեքի փաշան իր տրամադրության

տակ ուներ 30 հազարանոց զորամիավորում և լեռնային հրետանի։ Օսման փաշայի հրամանատարությամբ Տիգրանակերտից եկավ հետևակային կորպուսը, Երզնկայից և Մուշից՝ հեծելազորային երկու գնդեր, Էրզրումից՝ երկու զումարտակներ, հրետանային երկու մարտկոց, 3000 համիդիեներ, Բաղդատից ու Հալեպից բերվեցին ռազմական միավորումներ, Բիթլիսից՝ ոստիկանական միավորում։

Մայիսի սկզբին Գևորգը լուր է ստանում, որ թուրքական մի զորագունդ մտել է Խիանքի շրջան ու կալանավորել գյուղերի տանուտերերին, իշխաններին և ակդեցիկ մարդկանց։

Խումբը շտապում է օգնության։ Գեբինի սարալանջին նրա դեմ դուրս եկավ ոստիկանական մի ջոկատ։ Գևորգի տղաների շեշտակի հարվածից մի քանի թուրքեր սպանվեցին, իսկ մյուսները ճողոպրեցին։ Իշխանձորում գտնվող թուրք զինվորները փախուստի դիմեցին։ Ձերբակալված տանուտերերն ազատվեցին։ Հենց այդ ժամանակ Շենիկից եկած սուրհանդակը Գևորգին տեղեկացրեց, որ քրդական մի բազմամարդ խումբ Անդոկի փեշերին հարձակվել է հայերի վրա և մի քանի մարդ սպանելով՝ քշել նրանց ոչխարների հոտերը։ Իշխան Գրգոն իր խմբով կտրել է քրդերի ճանապարհը և հոտերը վերադարձրել Շատախի ապահով շրջանները։ Շենիկցիներին պատժելու համար 15—20 հազար զինվորների ու քրդերի խառնամբոխը հարձակման է անցել։ Շենիկը վեց օր շարունակ ետ է մղել թշնամու գրոհները։ Ի վերջո, թուրքերն ու քրդերը դադարեցրել են հարձակումը։ Հայերը հակահարձակման են անցել՝ թշնամուն պատճառելով մեծ կորուստներ։

Իշխանություններն արագացրին զորքերի կենտրոնացումը։ Կարինից տեղ հասան թնդանոթներ և 3000 զինվոր, Մուշից, Վանից, Բաղեշից՝ 100-ական զինվոր ու 15 թնդանոթ։

Թուրքական մի ամբողջ բանակ էր կռվում Գրգոյի խմբի դեմ։ Վերջինս, օգտվելով տեղանքից, արիաբար պաշտպանվում էր։ Սկսում են գործել լեռնագագաթներին տեղադրված թուրքական թնդանոթները։

Ծովասարում, Կուրտիկում և Մրկեմոզանում ամրացած թուրքական կանոնավոր բանակը, հույսը կտրելով քրդերից, մտել էր պատերազմական գործողությունների մեջ։ Տալվորիկին

լուրջ վտանգ էր սպառնում։ Գևորգը իր խմբի հետ բռնեց Տալվորիկի ճամփան։

Սասունը գոյամարտի էր ելել։

Հուլիսի 15-ին Տալվորիկի Հարթք թաղում Գասպար Խաչոյանի տանը նորից հավաքվել էին ինքնապաշտպանության ղեկավարները՝ քննարկելու թուրքական ահագնացող վտանգին դիմակայելու բարդ ու դժվար խնդիրները։ Այստեղ էին Տալվորիկի ինը թաղերի գլխավորների՝ Հարթքի Գասպար Խաչոյանը, Փուրխի Տեր-Գաբրիել արիահռչակ քահանան, Տալվորիկի համանուն թաղից Պետրոս Զոռոյանը, Հլողինքի Արթին Համզեյանը, Հաքմանքի Գասպար Քոլոյանը, Սպաղանքի Խաչո և Մակար եղբայրները, Եղկարտի Մակարը, Հոսնուտի Համզե Գամեյանը։

Տալվորիկցիները պատվիրակներ ուղարկեցին Գելի, Շենիկ ու Սեմալ և տեղեկացրին զոյամարտ տալու իրենց վճռականության մասին։ Գելիեգուզանում նույնպես ժողով գումարվեց, որտեղ ներկա էին Շենիկի ռես Գրգոն, Սաքո Գորգեյանը, Սեմալի Տեր Հովհաննես քահանան, Շառո Կաժոյանը, Ալիանքի Պողոսը և Ասոն, Գելիի ռես Պետոն, Տեր Ղազարյան Պետրոս նորընծան, Օհան Նիկոյանը և Տեր Քաջ քահանան։

Վերլուծելով իրադրությունը, Մուրադը կոչ արեց «մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել հայրենի լեռնաշխարհն ու ընտանեկան սուրբ օջախը»։

«Թշնամին ուզում է անպատվել մեր կանանց ու աղջիկներին,— ելույթ ունենալով ասաց Գրգոն,— քանդել մեր եկեղեցիները, ոտնահարել մեր արժանապատվությունը։ Ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ։ Բոլորս էլ ուխտել ենք մեռնել և գլուխ չծռել թշնամուն»։

Գելիեգուզանցի Տեր Պողոսը, պատճառաբանելով թշնամու գերակշռությունը, առաջարկեց զիջումների գնով խաղաղ լուծում գտնել։ Պատասխանելով նրան, նույն գյուղացի Ավոն ասաց. «Ով որ մեջքը ծռի թուրքի առաջ, դավաճան է»։

Գելիի իշխան Պետոն առաջարկեց ընդհանուր ճակատամարտ չտալ։ Հանկարծակի, սրընթաց հարձակումների միջոցով թշնամուն փախուստի մատնել և զենք ու զինամթերք ավարառել։

Պետոն ասաց. «Տեսեք իմ ալեհեր գլուխը։ Տարիքս 70-ի մեջ է, բայց նրանցից քանի հախից դեռ կգամ։ Այդ 70 տարվա ընթացքում 37 կռիվ եմ տեսել, չհաշված մանր-մունր «կատակները»։ Բայց ձեզ պիտի ասեմ, որ էս կռիվը չի նմանվում էն

կռիվներից ոչ մեկին։ Էս կռվի գույնը և ձևը ուրիշ է։ Ես էս կռվից վախենում եմ։ Սիրտս ինձ ասում է, ես էլ ձեզ եմ ասում՝ կհաղթի նա, ով առաջինը կհարվածի։ Պետք է կռվենք։ Խորհուրդս էն է, որ գաղտնի հարձակվենք թուրք զորքերի վրա... Հարձակվենք գիշերով, նրանց ստիպենք փախչել և ռազմամթերք ու պարեն վերցնելով՝ քաշվենք Գելիեգուզանի ու Տալվորիկի լեռները»։

Ժողովը որոշում է նախահարձակ լինել և նեղն ընկնելիս ապավինել Տալվորիկի ժայռերին։

«Ժողովը,— գրում է Հրայրը,— այն եզրակացության եկավ, որ լավ է մեռնել պատվով, քան լինել ստրուկն այն կառավարության, որը վաղ թե ուշ մեզ կոխկրտելու և ոչնչացնելու է»։

Ժողովը հանձնարարականներ մշակեց ինքնապաշտպանության բոլոր օղակների համար։ Որոշվեցին հիմնական, օժանդակ ու պահեստային պաշտպանական գծերը։ Թիկունքում ունենալով Անդոկի ու Գերինի պես դժվարանցանելի լեռնաշխարհը, իսկ հարավ-արևմուտքում՝ Խուլբի ու Խիանքի լավ կազմակերպված հայկական գյուղերը, որոշվեց պաշտպանության գլխավոր գիծ դարձնել Տալվորիկ-Գելիեգուզան առանցքը։

Որոշվում է հարձակման անցնել հաջորդ գիշեր։

Բայց ժողովը նոր էր վերջացել, երբ լուր բերեցին, որ բագրանցի քրդերը շարժվում են Սեմալի ու Շենիկի վրա։ Թշնամին կռիվն արդեն սկսել էր։ Ժողովի մասնակիցները հանձնարարություններ ստանալով՝ հեռանում են։

Մի քանի օր անց տեղեկացան, որ թուրքերը ուժեր են ուղարկում Սատանի կամուրջը վերականգնելու համար։ Վանից գրում են. «Բաղեշից 16 քարտաշ գնում են Մուշը Սասունից բաժանող գետի վրա կամուրջ կառուցելու։ Սասունցիները թույլ չեն տալիս»։

«Կառավարությունը,— գրում է Հրայրը,— գարնան բացվելուն պես հատուկ արհեստավորներ ուղարկեց Սասնո սիրտն ու ոգին՝ Տալվորիկի Սատանի կամուրջը վերանորոգելու։ Սասունցին հասկացավ դրա օրհասական և սարսափելի վտանգը»[13]։

Գևորգը հարձակվում է կամուրջ վերականգնող 15 թուրք զինվորների վրա։ Զինվորներից յոթը զոհվում են, իսկ մյուսները փախչում են Մուշ։

Գևորգը Սատանի կամուրջից նոր էր վերադարձել, երբ իմա-

ցավ, որ քրդերը հարձակվել են Փսանաց գավառի հայկական գյուղերի վրա և թալանել։ Նա մի ջոկատ ուղարկեց քրդերից թալանը ետ առնելու։ Ֆրոֆրոքարի մոտերքում հայերը բախվեցին քրդերի հետ։ 20 քուրդ սպանվեց։

Խուլբի և Խիանքի հայկական գյուղերին հաջողվեց մանր կռիվներ տալով մինչև հուլիսի վերջը դիմադրել, բայց հուլիսի վերջին, երբ Տիգրանակերտից նոր զորամասեր եկան, հայերը հարկադրված հեռացան դեպի Իշխանձոր, ապա՝ դեպի Գեբին։

«Օգոստոսի 1-ին,— պատմում է Հրայրը,— խառնիճաղանջ բազմությունը սկսեց շարժվել դեպի Սասուն... Չեքի փաշան ձգտում էր հիմնովին կործանել Սասունը։ Նա զորքին ու քրդերին կարգաց սուլթանի ֆարմանը, որը պահանջում էր անխնա կոտորել ապստամբ հայերին։ Զինվորները սկզբում վարանում էին, խուսափում խոշտանգումներին մասնակցել, բայց ընկրկելով սպաների սպառնալիքների առաջ, սկսեցին ջարդել ու ավերել ամենայն անողոքությամբ։ Արևելյան կողմից եկող խարզանցի, բելեքցի, բաղրանցի, զիլանցի, ռաշգոտանցի, շեխտուտունցի, խիանցի, ջելալցի և մինչև Հալեպի կողմերը բնակվող քուրդ աշիրեթները, հասնելով Տալվորիկ, շրջապատում են այն[14]։ Այդ ժամանակ Մուշում կուտակված 12 հազարանոց կանոնավոր զորքը Կենֆի Մուսթաֆա փաշայի և Բաղեշի կուսակալի առաջնորդությամբ, թնդանոթներով հարձակվեցին Շենիկի ու Սեմալի վրա։ Գեղաշեն, Շուշնամերկ, Կոփ, Գերմավ և Իրիցունք հարթավայրային գյուղերի հայ բնակիչները որոշեցին հասնել Սասնո Անդոկ լեռան գագաթը, որը Գելիեգուզանից մի քանի բոլոր հեռավորության վրա էր դեպի արևմուտք, շրջապատված Գեբին լեռան քարքարոտ ապառաժներին։ Այդ ժամանակ կանոնավոր զորքին միանում են Խնուսի և Բուլանըխի համիդիե հեծելազնդերը, ռուսական և պարսկական սահմանագլխի քուրդ ցեղերը և բատկանցի կոչվող քուրդ մեծ աշիրեթը։ Երբ սրանք հասան Մշո Սիմ սարի գագաթը, շենիկցիներն ու սեմալցիները դիմեցին դեպի Անդոկ։

Չայում Շատախի գյուղերից հեռացող ազգաբնակչության ետևից հասան թուրք ու քուրդ բազմահազար զորքերը։ Սկսվեց կռիվը։ Հրացանի որոտը օդն էր թնդացնում, ծուխն ամպի պես պատել էր Սասնա լեռները, ասես հրաբխի լավաներ էին ժայթքում։ Վիրավորների հեծեծանքները, կովողների գոռում-գոչյունը, կանանց ու աղջիկների լացը խառնվել էին իրար։

Ահա Անդոկի գագաթից հասնում են Գելիեգուզանի քաջ երիտասարդները... Քրդերի ու թուրքերի բազմությունը շփոթված փախուստի է դիմում, դաշտում թողնելով ավելի քան 850 դիակ։ Հայերից զոհվում են քսան երիտասարդ և ութ կին։

Հայերը արիացած բարձրանում են Անդոկի գագաթը և պատսպարվում ապառաժների ետևում։ Բայց հաց չունեին, նրանց ուտելիքը թանն ու թանհատը, բանջարն ու անալի միսն էին։ Կանայք, երեխաներին գրկած, կռվող երիտասարդներին քաջալերում էին. «Մարաբեն ձեզ օգնական»։

Մի զորամաս Թահսին փաշայի ղեկավարությամբ շարժվեց Գելիեգուզանի, իսկ մյուսը, Խալիլ փաշայի հրամանատարությամբ՝ Անդոկի վրա։

Լուր ստանալով Շատախում ստեղծված ծանր վիճակի և Շենիկին ու Սեմալին սպառնացող վտանգի մասին, Գևորգն իր խմբով շարժվեց դեպի Շենիկ և դիրքեր գրավեց Գրգոյի կողքին։ Նրա խումբը հանկարծակի մխրճվում էր թշնամու հարձակողական գիծը, խուճապ առաջացնում ու անհետանում։

Թուրքական բանակը, 150 թնդանոթներով զինված, նոր հարձակման անցավ։ Թշնամու ուժերը տասնապատիկ գերակշիռ էին, և իշխան Գրգոն հարկադրված էր հեռանալ Շենիկից ու Սեմալից։ Երկու գյուղն էլ թուրքերը թալանեցին ու այրեցին։

Սասունը բոլոր կողմերից պաշարվեց։ Սասունցիները լավ էին հասկանում, որ այս անգամ թուրքական բանակը եկել էր ոչ թե Սասունը ընկճելու, այլ՝ ոչնչացնելու։ Եվ վճռեցին կռվել մինչև վերջ։

Գրգոն իր ուժերը դասավորեց Մրկեմոզանի դիմաց՝ Անդոկի արևելյան բարձունքների վրա։ Պետոն և Տալվորիկի մի ջոկատ դիրքեր գրավեցին Անդոկի հարավային լանջերին։ Հայերի պաշտպանական գծի երկարությունը հասնում էր 30 կիլոմետրի։ Այդ տարածքի մեջ էր տեղավորված Սասունի ամբողջ ազգաբնակչությունը։

«Բայց թշնամու հետ մեր կռիվները,— գրում է Գևորգը,— երբեք չդադարեցին. կռիվ՝ Չայում, կռիվ՝ Անդոկում, նորից կռիվ՝ Կալի գյուղում։ Չորրորդ կռվից հետո էր, որ վառվեց Գելիեգուզան գյուղը։ Շենիկ, Սեմալ և մյուս գյուղերն արդեն վնասված էին։ Ժողովուրդը այլևս դիմադրելու անկարող էր, չկար որևէ օգնություն, չկար ռազմական ուժ, մենք էլ փոքրաթիվ էինք»։

Ալիանքի շրջանի գյուղերի դեմ թշնամին հանեց 30 թնդանոթ և 4 գունդ։ Չայում հայերը դիմադրեցին 25 օր և դիմադրությունը դադարեցրին միայն այն ժամանակ, երբ իսպառ վերջացել էր փամփուշտն ու սննդամթերքը։

Թուրքերը ցրվեցին հայկական գյուղերն ու ոչնչացրին 2000 մարդ։ Գելիի վրա հարձակմանը մասնակցում էին 30 հազար զորք ու բազմաթիվ քրդեր, 50 թնդանոթ։ Գյուղը 30 օր դիմադրեց։ Հայերը նույնիսկ հակահարձակման անցան ու թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին։ Թուրքերը լրացուցիչ զորքեր բերեցին։

Դեպի Տալվորիկ շարժվող թուրքական ուժերը Աղբրիկի շրջանում սպանեցին 1200 հայ։

Վերը նշված գյուղերից փրկվեց ընդամենը 1000 մարդ, որոնք Դաշտ իջան։ Տալվորիկում աներևակայելի սխրանքներ գործեցին կանայք։ Ըստ թուրքերի վկայության՝ մի գեղեցիկ կին, սպիտակ ձիու վրա, թուրը ձեռքին, արշավում է և կռվով ճեղքելով իրենց շարքերը մտնում եկեղեցի։

Անդոկի փեշերին կռվողների մեջ էր նաև Գևորգի ջոկատը։ Որոշվում է հակահարձակման անցնել։ Դա հուսահատ, բայց միակ քայլն էր։ Վաղ առավոտյան սասունցիները միաժամանակ հարձակման անցան թուրքական բանակի երեք թևերի վրա։ Նրանց գլխավոր ուժերը, հաղթահարելով խուճապի մատնված թուրք զինվորների դիմադրությունը, սլանում էին դեպի Շենիկ։ Ձեզի փաշան մազապուրծ փախավ։ Մինչև մութն ընկնելը Շենիկ գյուղի շրջապատում համառ կռիվներ գնացին։ Երկու կողմերն էլ մարդկային մեծ կորուստներ ունեցան։

1894 թ. հուլիսի 30-ին,— գրում է Գևորգը,— կռիվ սկսվեց Սեմալից վերև, Չայ կոչվող վայրում։ Առավոտյան արշալույսին այնտեղ հավաքվել էին Շենիկ և Սեմալ գյուղերի բնակիչները, Գելիեգուղանի ու Տալվորիկի օգնական խմբերը...»։

Շենիկի ու Սեմալի ջոկատները դիրք գրավեցին աջ թևում, գելիեցիք ու ալիանքցիք՝ ձախ թևում, իսկ տալվորիկցիներն ու Գևորգի ջոկատը զբաղեցրին կենտրոնը։ Նրանց թիկունքում կանգնած էին զենք, ուտելիք և դեղորայք մատակարարող կանայք և աղջիկներ։ Թշնամին բոլոր ուղղություններով առաջ էր շարժվում։ Կատաղի, օրհասական ճակատամարտ էր։ Թշնամու մի քանի հարձակումներ ետ շպրտվեցին։

Երեկոյան կողմ արևի ճառագայթները խանգարում էին հարձակվողներին առաջանալ։ Հայերն օգտվեցին դրանից։ Գրգոն մի կողմից, ալիանքցի Պողոսը մյուս կողմից, կարողացան շրջանցել թշնամուն։ Թուրքերը հարկադրված էին ետ քաշվել։ 7 ժամ տևող ճակատամարտում նրանք կորցրին ավելի քան 200 մարդ։

Սասունցիներին հաջողվեց մեծ քանակությամբ ավար, այդ թվում հրացան ու փամփուշտ ձեռք գցել։ Մեծ էր ճակատամարտի հոգեբանական ազդեցությունը մասնավորապես քրդերի վրա։

Օգոստոսի 3-ին պատերազմական փողերը նորից հնչեցին, ու միաժամանակ հարձակում սկսվեց Տալվորիկի, Իշխանաձորի, Աղբրի, Անդոկի վրա։ Հավատորիկի գագաթներից ոմբակոծվում էին Շատախի գյուղերը։ Թուրքական հարձակման ճակատը ձգվում էր Միրին Կատարից մինչև Կռնկի գյոլ ու Բռնաշեն, Խութից մինչև Շատախ։ Կեսգիշերին թուրքերը գրավում են Ալիանքն ու այրում 165 տուն։ Հրդեհվում է Գելիի Պետոյի տունը։ Պետոն, 27 հոգի սպանելով, երբ այլևս վառոդ չուներ, անցնում է սրամարտի և 13 անգամ խոցվելով՝ սպանվում։ Գելիեցիներին հաջողվում է ետ շպրտել թշնամուն։ Այդ կռվում թշնամին կորցրեց 760, իսկ հայերը՝ 100 մարդ։

Մինչև Գելիի հանձնելը, ինքնապաշտպանության ղեկավարները կարողացան բնակչության հիմնական մասը գյուղից հեռացնել և թշնամուն անծանոթ կածաններով դուրս հանել պաշարման օղակից։ Թուրքերը, ներխուժելով գյուղ, խոշտանգեցին ու սպանեցին այնտեղ մնացածներին, գյուղը թալանեցին ու հրդեհեցին։

Բաղեշի հիվանդանոցում պառկած թուրք զինվորներից մեկը պատմել է, որ փաշայի հրամանով փոս էին փորում և սպանվածներին ու վիրավորներին դրանց մեջ լցնելով՝ այրում։ «Այրում էին կենդանի մանուկներին և ձողերի վրա բարձրացնելով՝ բղավում. «Անխելք հայեր, թե տղամարդ եք, եկեք փրկեք ձեր մանուկներին»։ Յոթ տարեկան մի աղջիկ փախավ կրակից. տեսա ու խղճահարվեցի, փակեցի աչքերս ու հեռացա՝ գարշելով մեր արածից։ Բայց փաշան հրամայեց նորից կրակի մեջ գցել կիսամեռ աղջկան»[15]։

Մի այլ տեղ զինվորները ղազախի էին բարձրացրել մի հայ գեղեցկուհու։ Նրա մարմինը մաս-մաս կտրտում էին ու հայե-

րի կողմը շպրտելով՝ բղավում. «Հայեր, քաղցած եք, ահա ձեր սիրելի կանանց միսը, կերեք-կշտացեք»։

Թշնամին շարժվեց դեպի Անդոկ։

Անդոկի գագաթին կուտակվել էր 21.745 հայ՝ ծեր ու մանուկ, այր ու կին։

Իշխան Գրգոն իր փոքրաթիվ ուժերով ծանր մարտեր էր մղում։ Այս խիզախ մարդը գիտակցելով հանդերձ, որ պարտությունն անխուսափելի է, այնուամենայնիվ, չէր վհատվում և իր հարազատ որդիներին էլ հորդորում էր դիրքերը չլքել։ Նա միաժամանակ կազմակերպեց ազգաբնակչության՝ կանանց ու երեխաների տեղափոխությունը Անդոկի բարձրաբերձ ժայռերն ու համեմատաբար անվտանգ վայրերը։

Օգոստոսի 4-ին և 6-ին տեղի ունեցան մի քանի հարձակումներ՝ փոփոխական հաջողություններով։ Օգոստոսի 7-ը ուրբաթ էր, և թուրքերը դադարեցրին մարտական գործողությունները։

Օգոստոսի 8-ին թնդանոթների համազարկերից հետո թշնամին հարձակման անցավ Անդոկի ու Սպաղանքի ուղղությամբ։ Սասունցիները կռվում էին ինչով պատահեր և կարողացան թշնամուն ետ շպրտել։ Օգոստոսի 9-ից 13-ը դադար էր։ Բայց Անդոկում հայերի վիճակը ծանր էր։ Ոչ միայն փամփուշտ չկար, այլև ուտելիք։ Սասունցիներին սպառնում էր սովը։ 13 օր շարունակ սասունցիները կանոնավոր բանակի դեմ կռվում էին նաև իրենց վերջին զենքով՝ ժայռաբեկորներով։

Օգոստոսի 13—14-ը տեղի ունեցավ ամենածանր կռիվը, որը 27 ժամ տևեց։

Հարձակումը համընդհանուր էր. ամբողջ Սասունն էր հարձակման ենթարկվում։ Պաշտպանության կենտրոն մնում էին Անդոկն ու Գելիեգուզանը։

Տեսնելով, որ հայերին ընկճել հնարավոր չէ, զորամասերը գիմում են ընդհանուր հրամանատարին, թե «սրանց հաղթել անկարելի է, սրանց հետ կա մի գերբնական զորություն, որն անխնա ջարդում է Մուհամմեդի զավակներին»։ Թուրքական բանակում խուճապ է սկսվում։ Հրամանատարը հարկադրված գիմում է խորամանկության և հաշտության դրոշակ բարձրացնում։ Նա պատվիրակներ է ուղարկում հայերի հետ բանակցելու։

Օգոստոսի 14-ին թուրքական բանակից 10 ձիավոր սպիտակ դրոշով շարժվում են դեպի Անդոկ։ Նրանք սասունցիներին առաջարկում են զենքը ցած դնել։ Փաշան խոստանում էր ներում շնորհել։

Խորամանկ Զեքին սուլթանի անունից ներողություն խնդրեց և խոստացավ հասցված վնասը պետական գանձարանի հաշվին հատուցել և Սասունը ազատել հարկերից։ Մուրադը գտնում էր, որ հաշտության առաջարկը պետք է ընդունել, քանի որ առանց հացի ու ռազմամթերքի հնարավոր չէր երկար դիմադրել։

Գրգոն հակառակ կարծիքի էր. կռիվը պետք է շարունակել։ Ըստ նրա «օսմանցին չի կարող մոռանալ իր կորուստները, վաղ թե ուշ պիտի ձգտի մեզ պատժել այն րոպեին, երբ մենք անպատրաստ կլինենք։ Լավ է, որ այսօր խառնենք մեր արյունը մեր եղբայրների արյան հետ և գլուխ չծռենք անգութ օտարներին։ Շնորհակալ ենք այն «բարեսրտությունից», որ սուլթանը ցույց է տալիս մեզ։ Հեռացեք մեր երկրից, և խաղաղությունն ինքնըստինքյան կլինի»։

Օգոստոսի 15-ին փաշան 500 ձիավորով գալիս է Անդոկի ստորոտը և պահանջում, որ մի քանի հոգի գան բանակցության։ Ռազմամթերքի ու հացի սպառվելը ստիպում է սասունցիներին ընդունել բանակցելու առաջարկը։ 184 հրացանակիրներ իջնում են դաշտ։ Գրգոն Անդոկից նկատում է, որ բլուրների ետևից զորքերը շրջափակում են նրանց։ Նա հրացանի համազարկով գնացողներին զգուշացնում է այդ մասին, բայց արդեն ուշ էր։ Սկսվում է հուսահատ կռիվ՝ դեմ առ դեմ։ Դաշտը ծածկվում է դիակներով։ Գրգոն տեսնում է, թե ինչպես մի ծերունի, դամասկոսյան դաշույնով դիակներ փռելով, առաջ է ընթանում։ Նրան հետևում է որդին, որը բղավում է. «Հա՛յր, հա՛յր, քաջերը այսպես են թռչում դիակների վրայով»։

Բոլորը սպանվեցին։

Տեր Պետրոսը յոթ քուրդ սպանեց ու բացականչեց. «Այսուհետև հանգիստ կմեռնեմ»։ Թուրքերը նրան բռնեցին, գլխից մինչև գոտկատեղը քերթեցին, մարմինը կտոր-կտոր անելով կրակի մեջ գցեցին։

Անդոկը բոլոր կողմերից շրջափակվում է։ Գելիեցիք, իշխանձորցիք և սեմալցիների մի մասը դիմում են դեպի Ֆրոֆրոքար։ Գրգոն շենիկցիների, ալիանքցիների և սեմալցիների մյուս մասի հետ ամրանում է Անդոկում և կատաղությամբ կռվում են 6 օր՝ առանց վառոդի, քարերով ու թրերով։ Քաղցած, հոգնած,

ուժասպառ մարդիկ ընկնում են, նրանց փոխարինում են կանայք ու կովում «կատաղած բորենիների նման, որոնց ձագերին հափշտակել էր ուզում... վագրը»։

Բայց երբ սովը սկսում է իր ավերածությունները, Գրգոն Անդոկի պաշտպանությունը հանձնում է կանանց ու փոքրաթիվ տղամարդկանց, իսկ ինքը մի խմբով գնում է Խուլբից ու Խիանքից հաց ու փամփուշտ բերելու։

Կանայք շարունակում են Անդոկի հերոսական դիմադրությունը։ Հափսե անունով մի ծեր կին բղավում է. «Քույրեր, ամոթով չպղծենք սասունցու անունը»։ Նրանք 24 ժամ կովում են։ Թշնամին լրացուցիչ ուժեր է բերում։ Կանայք կովելով նահանջում են դեպի Գեբին։ Նրանք գրկած փոքր երեխաներին, մարտնչում էին քարերով ու փայտերով, հնձվում թշնամու կրակահերթերից։ Դիմադրելն այլևս անհնար էր։ «Այդ ժամանակ սկսվում է աննկարագրելի կոտորած, փախուստ, երեխաների ճիչն ու լացը երկինք է բարձրանում... Վերջապես նահանջող հայերը հասնում են Գեբինի քարոտ գագաթը և տեսնում, որ չորս կողմից պաշարված են»[16]:

Գրգոյի հարս Շաքեն բարձրանում է քարաժայռի վրա և մի տարեկան երեխան գրկին, գոչում է. «Քույրերս, մեզ երկու ելք մնաց, կամ մեռնել պատվով և մեր արյունը խառնել մեր ամուսինների, եղբայրների սուրբ արյանը, կամ անեծքի ու նզովքի արժանանալով, հանձնվել Մուհամմեդի պիղծ զավակներին։ Ես գերադասում եմ մահը»։ Հայացքը դեպի երկինք հառելով, երեխային գրկած, նետվում է անդունդը։ Մյուս կանայք հետևում են նրա օրինակին։

Իրենց մայրերի ետևից անդունդ էին նետվում նաև երեխաները։ Հրեշը նույնիսկ, եթե նրա անունը Թուրք չէ, կազդվեր այդ տեսարանից։

«Քաջարի սասունցին կամաց-կամաց սկսեց նահանջել դեպի Տալվորիկ՝ Գևորգի ու նրա ընկերների առաջնորդությամբ։ Փամփուշտները սպառված էին, ռազմական դիրքերն անցան թշնամու ձեռքը, Սասունի բոլոր կիրճերն ու ճանապարհները բռնված էին զորքերով ու քրդերով։ Այլևս դիմադրությունը շարունակելն անհնար էր»։[17]:

Գյուղը դատարկվում էր։ Տալվորիկցիները գնում էին թաքնվելու լեռներում ու կիրճերում, թաքստոցներում ու քարանձավներում։

Հայդուկներն իրենց ձեռքն էին պահում գյուղի երկու կարևոր բարձունքները և հսկողության տակ էին առել Սպիտակ Լեռան կիրճերը, որտեղից նահանջում էր ազգաբնակչությունը։

Գևորգը Գալեին ուղարկեց Սպաղանք և Մակարին հանձնարարեց ամեն կերպ հսկողության տակ առնել Սպաղանքի ու Եղկարտի կիրճերը։

Նա ելնում էր իրական վիճակից։ Պատերազմը տանուլ էր տրված և պետք էր ամեն ինչ անել ժողովրդին փրկելու, որքան հնարավոր է քիչ կորուստներ տալու համար։

Օգոստոսի 27-ին թշնամին լցվեց Տալվորիկ, բայց հանդիպելով պաշտպանների հակահարվածին, ետ շրջվեց։ Դա Տալվորիկի վերջին կռիվն էր։ Իրեկոյան Անդոկի գագաթներին թշնամու ուժեր երևացին, Անդոկը գրավված էր։ Իսկ առանց Անդոկի Տալվորիկը պահելն անհնար էր։ Գյուղի պաշտպանները խումբ-խումբ նահանջեցին Տալվորիկից և մթության մեջ քայլեցին տարբեր ուղղություններով։

1894 ԹՎ. ԱՐՑՈՒՆՈՑ ՏԱՐԻ

Սասունը պարտվեց, սկսվեց եղեռնը։

Շենիկցիների մի փոքրիկ ջոկատ Անդոկում մաքառող անզեն ազգաբնակչությանը, կանանց ու երեխաների մի մասին տարավ դեպի հարավ՝ ընկուզենու անտառ։ Թուրքական բանակը ու քրդերը շրջապատեցին անտառը և ոմբակոծեցին։ Անտառում հրդեհ բռնկվեց, այնտեղ գտնվողների մեծ մասը զոհվեց։

Սկսեցին հալածել փախչող կանանց ու երեխաներին։

Ոմանք, իրենց ընտանիքներով, զորքերի գթասրտությանն են դիմում։ Նրանք ավելի դաժան ճակատագրի արժանացան։ Բոլորին լցրեցին նախապես փորված հորերի մեջ և ողջ-ողջ թաղեցին։ Թուրքը հրճվում էր։ Նրա վայրենի երևակայությունը մարդկանց տանջելու ինչ եղանակներ ասես, որ չէր հորինում։ Հղի կանանց արգանդը պատռելով, պտուղները սրի ծայրին էին առնում և, շուրջպար բռնած, պարում։ Կանանց կրծքերը կտրատում էին, որպեսզի պտուկներից հետագայում իրենց համար մեղեսիկներ պատրաստեն և տարիներ հետո իրենց «հերոսական անցյալի» համար իրեղեն ապացույցներ ունենան։

Ցաթաղանից մազապուրծ սասունցիների փշրանքները ցիրուցան եղան լեռներում և անտառներում։ Նրանց մի մասը սովից մեռավ, շատերը համաճարակի զոհ դարձան։ Եղան դեպքեր, երբ մայրերը, խելագարության տենդի մեջ, իրենց զավակներին խեղդեցին՝ նրանց տանջանքները չտեսնելու համար։ Ամենուրեք անթաղ դիակներ էին, և անգղները շարունակում էին իրենց «թուրք արյունակիցների» կիսատ թողած խրախճանքը։

Սասունը կոտորված էր։ Սուլթան Համիդի «հանճարեղ մտահղացումը» իրականացված էր. մարել էր «ըմբոստության օջախը», որից այնքան վախենում էր բռնակալը։

«... Տալվորիկում, այս րոպեին,— գրում է ժամանակակիցը,— ոչ մի մարդ, տուն չկա։ Մնացած գյուղերում հազիվ 5—6 տուն է մնացել։ Բոլոր գյուղերն այրվել են... Տալվորիկի փախըստականները դիմել են Տիգրանակերտի կողմերը...»[18]։

Կռիվների ընթացքում միայն Տալվորիկի գյուղերից թալանվեց կամ ոչնչացվեց 3100 խոշոր և 245 հազար մանր եղջերավոր անասուն, շուրջ 260 ջորի, 780 պղնձե ամանեղեն, 14 հազար մեղվատուն, 216 վրան, 8000 ոսկի արժողությամբ իրեր, դույք և հագուստ։

Սասունում ավերվեց 48 գյուղ, որոնցում կար 1300 տուն և 15 եկեղեցի։

Սասունի ճգնաժամի օրերին ծանրացավ նաև Դաշտի հայության վիճակը։ Քրդերի ավազակությունները զանգվածային ու հրեշավոր դարձան, իսկ իշխանությունները խժդժություններ էին կատարում Սասունին հարակից գյուղերում՝ Բերդակ, Առաղ, Հավատորիկ, Տերգեվանք, Ալվառինջ, Ղզլաղաջ, Գոմեր, Տատրագոմ, Քարձոր, Խորոնք, Գալախոլի, Պշել։

Գյուղերը պաշարված էին. նրանցում տեղավորված էին զորքեր։ Սով էր, իսկ զորքերը շարունակում էին բռնությունները։ Երբ Տատրագոմը դիմադրեց, հայերի մի մասին սպանեցին, իսկ մյուսներին գյուղից դուրս քշեցին ու նրանց տեղը քրդերի բնակեցրին։ Թուրքերը նպատակ ունեին այս գյուղերը դատարկել հայերից ու Սասունը շրջապատել թուրքական ու քրդական տարրերով։

«Մշո Դաշտի բոլոր գյուղերը,— գրում է ականատեսը,— առանց բացառության, կողոպտված են և մարդասպանության թատերաբեմ են դարձել»[19]։

Իսկ Մուշ քաղաքում հայերը փաստորեն տնային կալանքի մեջ էին, և քաղաքը հանգած փեթակի էր նման։

Չնայած իրենց ծանր վիճակին, Մշո դաշտի հայկական գյուղերը ինը ամիս ապաստանեցին ու կերակրեցին 2000 փախըստական սասունցու։

Մուշի նոր կառավարիչ Ֆիխամ փաշան զայրացած հավաքում է հայ երեսփոխաններին ու պահանջում վերսկսել քաղաքի գործարար կյանքը։ Հայերը հրաժարվում են խանութները բացել, պատճառաբանելով Մուշի թուրքերի զինված լինելը, Դաշտի գյուղերի վրա քրդերի հարձակումները, Մուշում մեծ թվով զինված քրդերի ու լազերի առկայությունը, որը լուրջ վտանգ էր իրենց համար։

Քաղաքի հայերի ու թուրքերի հարաբերությունները ծայրաստիճան լարված էին։

Հետևանքը եղավ բախումը հայերի և մահմեդականների միջև։ Հայերը հաղթեցին։ Նրանք գրավեցին կառավարչատունը ու փախուստի մատնեցին զորքերին։ Մութեսարիֆը օգնական ուժեր խնդրեց։ Նոր բախում տեղի ունեցավ, որի ընթացքում սպանվեց 270 և վիրավորվեց 400—500 հայ։ Մեծ թվով հայեր ձերբակալվեցին։ Զորքերը մտան գյուղերը։ Հինգ գյուղ կողոպտվեց ու հրդեհվեց։

Բաղեշից ու Կարինից Մուշի թուրքերին նախատում էին, որ դանդաղ են հայերին կոտորում։ Նրանց ծաղրելու համար նույնիսկ կանացի գլխաշորեր ուղարկեցին։ Մինչդեռ հայերի վիճակն այնքան ծանր էր, որ անգամ մութեսարիֆը միջնորդեց Կ. Պոլսի առաջ, որ հարկերի հավաքումը 1—2 տարի հետաձգվի։ Աղետալի չափեր ընդունեց արտագաղթը։

Գրում է Հրայրը. «Տարոնը աղետալի վիճակում է և բոլոր հայերի օգնությունն է հայցում։

Տաճիկ կառավարության ցանկություններն ու ձգտումները գլխիվ իրականացան։ Տնտեսական ու քաղաքական հալածանքների պատճառով Տարոնը լրիվ ավերակ է դարձել։ Այսօր բյուրավոր թշվառ ընտանիքներ փողոցից փողոց են շրջում Տիգրանակերտի, Հալեպի և այլ դաշտերում»։ Իսկ Սասունի ժողովուրդը նույնիսկ փախչելու հնարավորությունից է զրկված։

Հանուն տարոնցի և սասունցի հայի կարող ենք որոշակի ասել և հաստատել, որ «մենք մեզ նշանաբան ենք ընտրել «մահ-

կամ ազատություն», առանց մտածելու այլևս թշնամու գերակշռության մասին։ Օգնություն ենք խնդրում, «բայց վստահ եղեք նաև, որ եթե նույնիսկ օգնություն էլ չստանանք, չենք ընկճվելու և կշարունակենք պայքարը»[20]։

«Հնչակը» 1894 թ. փետրվարի 28-ին գրեց. «Վերջին երկու ամիսներին Մուշից 1000 հոգի ճամփա է եղել Կ. Պոլիս կամ այլուր՝ պանդխտելու։ Կառավարությունը նրանց մինչև Սինոպ հասնելը չխանգարեց, բայց այստեղ այդ քաղցած ու հիվանդ զանգվածին բռնությամբ ետ դարձրեց. ճանապարհին 50 հոգի մեռավ, մի մասն էլ տեղ չհասավ»։

«Որևէ ականատես,— գրում է Հրայրը,— չի կարող զսպել իր արտասուքը, երբ տեսնի պատառոտված զգեստի մեջ, փոքրիկ պարկը ուսին... մանավանդ փոքր երեխաներ, որ բռնած իրենց մայրերի քղանցքներից, բղավում են. «Մայրիկ, ոտներս ծակոտում են, սոված եմ, քայլել չեմ կարող»։

10 հազար մարդ գաղթեց Կովկաս։

Երկրից հեռանալու անձնագիր ստանալու համար պահանջվում էր 1,5 ռուբլի, սակայն շատ հաճախ այդ անձնագիր ունեցողները Պոլսից ետ էին ուղարկվում։ Պանդխտության համար ևս հարկ էր վճարվում։

Սասունցիների զգալի մասը գնաց Հալեպ։

***

Գրգոն իր մարտական ուժերի հիմնական մասն ուղարկեց կանանց ու երեխաներին փրկելու, իսկ ինքը մի փոքր խմբով առաջ նետվեց թշնամու շրջափակման գիծը ճեղքելու և հարավային Սասուն անցնելու համար։

Նրա խումբը, Հեղինից դուրս գալով, բարձրացավ Երկար Աբոտամարգ սարը և այնտեղ հանդիպեց մեծաթիվ քրդերի։ Սկսվեց մարտը։ Հայերը հերոսաբար կռվեցին, նրանց մեծ մասը զոհվեց, վիրավորվեց նաև Գրգոն։ Քրդերը նրան ճանաչում էին և գերի վերցնելով բերում են Զեքի փաշայի մոտ։ Գրգոն գտնվել էր ուշաթափ վիճակում։ Երբ ուշքի եկավ և իր դիմաց տեսավ Զեքի փաշային, կայծակնորեն կողմնորոշվելով, խլեց դիմացի ոստիկանի հրացանն ու հարձակվեց Զեքի փաշայի վրա։ Որոտացին հրացանները, և դյուցազնը գետնին տապալվեց։ Այսպես պատմել են քրդերը, բայց կա նաև վարկած, որ Գրգոն

ինքնասպան է եղել Սպիտակ աղբյուրի մոտ, թշնամուն կենդանի չհանձնվելու համար։

Տալվորիկից վերջինը հեռացան Գասպարը, Գևորգն ու Ադամը։ Նրանք շարժվեցին դեպի Զկնկուլի քարայրը։ Ճանապարհին նրանց միացավ Մուրադը։

Քարայրում էին նաև Գասպարի ընտանիքի անդամները։ Նրանք երեք օր ու գիշեր դիմադրեցին՝ զգալի կորուստներ պատճառելով թուրքերին։ Սակայն հետագա դիմադրությունն անիմաստ էր դառնում։ Գասպարը Մուրադին, Գևորգին ու Ադամին առաջարկեց հեռանալ քարայրից։

— Ճար չկա, ես իմ ընտանիքի անդամների հետ կշարունակեմ կրակել, իսկ դուք գիշերը գաղտնի հեռացեք, մեկ էլ տեսար, փրկվեցիք։ Դուք դեռ շատ եք պետք ժողովրդին։

Գևորգը, ինչպես վայել էր հայդուկին, հրաժարվեց։ Գասպարը դիմեց մեկ այլ ելքի. նա ընտանիքով դուրս եկավ քարանձավից ու հանձնվեց թուրքերին՝ տպավորություն ստեղծելով, որ քարանձավում այլևս մարդ չկա։ Սակայն թուրքերը չհավատացին և, Գասպարի ընտանիքն իրենց մոտ պատանդ պահելով, հայտարարեցին. եթե քարանձավում մնացածները չհանձնվեն, ընտանիքը անմիջապես կգնդակահարվի։ Մուրադը, Գևորգն ու Ադամը քարանձավից դուրս եկան և շարժվեցին դեպի թուրք հրամանատարը։

Մուրադի փոքրամարմին ու նիհար կազմվածքը տեսնելով՝ մի զափթիե ասաց. «Մուրադ, հա Մուրադ։ Սա՞ է Մուրադը, այս պստիկ մա՞ղը»։

Պատմում է Գևորգը. «Երբ զորքերի մեջ մտանք, մեզ վրա սարսափելի հարձակում գործեցին, կապոտեցին և ուղիղ բանակ առաջնորդեցին։ Հաղթական համազարկեր տվեցին, ուրախացան, յոթ անգամ էլ թնդանոթ պարպեցին... Հետո տարան եկեղեցի և սկսեցին գազանաբար ծեծել ու չարչարել։ Այդպես երկու գիշեր, երկու ցերեկ, ոչ հաց տվին, ոչ ջուր...

...Չորրորդ օրը մեզ Մուշ տարան։ Այստեղ էլ բավական չարչարեցին։ Երկու ամիս սպասեցնելուց հետո ինձ, Մուրադին, Գասպարին, Ադամին և Կարապետին տարան Բաղեշ։ Մեր ընկերներից մեկը Մշո բանտի մեջ մեռավ»։

***

Պոլսից գրում են. «Անհերքելի փաստերով հաստատվեց ու ապացուցվեց, որ Սասունում ու Մուշում լսված ու չտեսնված գազանություններն ու անգթությունները մինչև այժմ կատարվել են «ամենագութ և ամենաողորմած» հռչակված արյունարբու սուլթան Համիդի բարձրագույն իրադեով»[21]։

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ թուրքական բարձրագույն հրամկազմից եղան հատուկենտ մարդիկ, որ չխրախուսեցին սուլթանի հրեշավոր ծրագիրը, նույնիսկ փորձեցին նրան համոզել ետ կանգնելու իր մտադրությունից։ «... Օրինակ, մեծ հրամանատար Ղազի Օսման փաշան և առաջին քարտուղար Սուրեյա փաշան։ Վերջինս մինչև իսկ համարձակվեց սուլթանին առաջարկել, որ հայոց կոտորածի «հերոսները» չվարձատրվեն շքանշաններով։ Բայց սուլթանը ոչ միայն լսեց Սուրեյա փաշային, այլև հրամայեց թունավորել նրան»[22]։

Սուլթանը չէր սպասում, որ Սասունի իրադարձությունները մեծ հուզումներ կառաջացնեն մայրաքաղաքում և նման արձագանք կստանան եվրոպական մամուլում։ Նա շփոթվեց։ Ելտզում մեկը մյուսի ետևից խորհրդակցություններ էին տեղի ունենում, «հերքում՝ հերքումի ետևից, կաշառք թղթակիցներին, դեսպաններին»։

Բ. Դուրը «Լա Թյուրքի» նախկինում հրատարակվող թերթի խմբագրին վարձեց և ստեղծեց «Օրիենտ» ֆրանսերեն լեզվով թերթն ու նրա միջոցով տարածեց կառավարության տեսակետները։ «Օրիենտը» սուլթանի ու նրա քաղաքականության օգտին նյութեր էր տպում, իսկ թուրքական թերթերը դրանք արտատպում էին՝ որպես եվրոպական կարծիք։

Սուլթանը իր մտերիմներից մի քանիսին Եվրոպա ուղարկեց մամուլը կաշառելու, որ կոտորածների մասին չգրեն։ Դա նրան հաջողվեց։ Թերթերից շատերը, ոսկու փայլից շլացած, մասնակցեցին «լռության դավադրությանը»։

Բացառություն կազմեցին մի քանի թերթեր, այդ թվում՝ Ռոշֆորի խմբագրած «Էնտրանսիժան»-ը։ Սուլթանի ներկայացուցիչը Ռոշֆորին ևս կաշառք առաջարկեց և թվեց, թե եվրոպական որ թերթին ինքը որքան կաշառք է տվել։ Կաշառք ստացողների թվում էր նաև Վիլհելմ կայսրը՝ 6 միլիոն ֆրանկ։

Սուլթանը կառավարությանը հանձնարարեց. ոչինչ չխնայել կաշառելու նաև Պոլսի եվրոպական դեսպաններին։ Նա իր սեփական գանձարանից չորս հարյուր հազար ոսկի տվեց այդ նպատակի համար, 25 հազար ոսկով կաշառեց ԱՄՆ-ի դեսպան Թեուլիին։

Սուլթանը նույնիսկ «իր հարեմի գեղեցկուհիներին, իր կանանց էր ամուրդի հանել՝ Պոլսի եվրոպական դեսպաններին» և ազդեցիկ անձանց հրապուրելու համար։

Հայկական վերնախավին սիրաշահելու և կաշառելու փորձեր նույնպես եղան։

740 ոսկի հատկացվեց երկրաշարժից տուժած հայկական եկեղեցիները վերականգնելու համար, կաշառվեց հայ կաթոլիկների առաջնորդը, որը սկսեց ուղերձներ ու շրջաբերականներ տարածել՝ հօգուտ սուլթանի։ Թույլատրվեց հրավիրել հայ ազգային ժողով։ Սուլթանը համաձայնեց, որ հայերն իրենց հայեցողությամբ ընտրեն պատրիարքին, քաղաքական և կրոնական ժողովների անդամներին։

Իշխանությունները քայլեր էին անում սիրաշահելու սասունցիներին, խոստանալով մի քանի տարվա հարկերը բաշխել, վերադարձնել նրանցից թալանած ունեցվածքը, 50 հազար դուրուշ նպաստ բաժանել տուժածներին և այլն, պայմանով, որ նրանք շնորհակալական թուղթ տան կառավարությանը, որը բարեհաճեց Սասունում «խռովարարներին» պատժել։

Սասունցիները մերժեցին այս ամոթաբեր առաջարկը։

Զեքի փաշան՝ Սասունի դահիճը, վերապրած հայերին հորդորում էր իրենց տները վերադառնալ՝ խոստանալով օգնել նրանց վերականգնել ավերված տները։ Սակայն վերադարձած բնակչությունը ոչ մի օգնություն չստացավ և կերակրվում էր «քրդերի ձիերի կերակուրի մնացորդով, ցորենի ու կորեկի հասկերով»։ Ամիսներ անց Մուշ է հասնում սուլթանի կողմից քննիչ նշանակված Աբդուլա փաշան, որն իբր կոչված էր պարզելու Սասունի դեպքերի պատճառներն ու հայտնաբերելու մեղավորներին։ Սասունի իրադարձություններն աշխարհին ծուռ հայելու մեջ ներկայացնելու գործում մասնավորապես մեծ ջանքեր էր թափում Բաղեշի ավազակաբարո կուսակալ Թահսին փաշան։

Ո՞վ էր Թահսին փաշան։ Նա Պոլսում հայտնի էր իր կաշա-

ռակերությամբ ու զեղծարարություններով։ Նրա դեմ բողոքներն այնքան շատացան, որ այլևս անհնար էր Թահսին փաշային պաշտպանել։ Բայց Թահսինի հովանավորողները կարողացան նրա համար հաջողացնել Բիթլիսի կուսակալի պաշտոնը, որը կայսրությունում դիտվում էր որպես «ամենաեկամտաբեր» պաշտոններից մեկը։ Թահսինը Բիթլիսի գլխին կատարյալ պատուհաս էր դարձել։ Նա հայերին հարստահարելու միջոցների մեջ խտրություն չէր դնում։ Առանց առիթի մարդկանց ձերբակալում էր և կաշառք վերցնելով՝ ազատում։ Այդ միջոցով նա հայերից կորզեց 28,5 հազար ոսկի։

Թահսին փաշան հավաքում է սասունցի բանտարկյալներին և նրանց համոզում ստորագրել մի թուղթ, ըստ որի Սասունի բոլոր պատահարների մեղավորները հայ հեղափոխական գործիչներն են։

Բանտարկյալները պատասխանում են, որ իրենք նման բան առաջինը փաշայի շուրթերից են լսում և այդպես էլ կպնդեն ամեն տեղ։ Փաշան նրանցից մեկին կախել է տալիս առաստաղից և մնացյալներին սպառնում. «Եթե ասածիս նման վկայություն չտաք, բոլորիդ կախելու եմ»։ Վերջիններս պատասխանում են. «Մենք հանգիստ նստած էինք մեր տանը, դուք ձեր զորքերով հարձակվեցիք մեզ վրա, մեր կանանց, մեր երեխաներին, մեր եղբայրներին սրի քաշեցիք, մեր հարսներին ու օրիորդներին գերի տարաք, մեր տներն այրեցիք. մենք զոհվածներից լավը չենք, մեզ էլ սպանեք։ Մեր ինչի՞ն է պետք այսպիսի կյանքը»։

Շիկացած երկաթներով սկսում են նրանց խոշտանգել։ Երեք հոգի չդիմանալով տանջանքներին՝ մեռնում են։

Մուրադի վզից մի կողով սառույց են կախում և բոբիկ կանգնեցնում ձյան վրա, մինչև որ նա ուշագնաց գետնին է տապալվում։

Թահսին փաշայի կամայականություններն այլևս անտանելի են դառնում։ Հայ երևելիները թուրք վաճառականների մասնակցությամբ ժողով են գումարում։ Ոստիկանությունը հարձակվում և ժողովի բոլոր մասնակիցներին ձերբակալում է։

Բաղեշի հայերը կոտորածի շեմին էին։

Թահսին փաշայի դեմ համընդհանուր զայրույթը այնպիսի բնույթ ընդունեց, որ սուլթանը հարկադրված էր նրան պաշտո-

նից հեռացնել։ Սակայն նրան փոխարինողը շարունակեց նույն քաղաքականությունը։ Մի խումբ հայերի բանտարկեցին, որպեսզի եվրոպացի քննիչներին ցուցմունք չտան Բաղեշում և Սասունում կատարված կոտորածների և վայրագությունների մասին։

Երբ կոտորածները քողարկելու սուլթանի ճիգերը ձախողվեցին, նա օգտագործեց իր վերջին հաղթաթուղթը՝ կոտորածը ամբողջությամբ բարդել քրդերի վրա։

Իշխանությունները քրդերին նույնիսկ հարկադրեցին մի հանրագիր ստորագրել, ըստ որի, կոտորածներն ու ավարառությունները միայն իրենք են կատարել, և զորքերը դրանց մասնակցություն չեն ունեցել։

Գրում է ժամանակակիցներից մեկը. «Ճիշտ է, որ քրդերը ակտիվորեն մասնակցել են կոտորածներին, ճիշտ է, որ հանցակից են Բասենի ու Խնուսի հայերին կողոպտողները, ճիշտ է, որ չիկակները, մուկրցիք, մլանցիկ շարաֆների, մամայների առաջնորդությամբ ավերում էին Վասպուրականը։ Բայց ո՞վ էր նրանց խրախուսողը, ո՞վ էր նրանց զենք տվողը, եթե ոչ Աբդուլ Համիդը՝ իր կուսակալ փաշաների միջոցով։ Բացի այդ, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բացի քրդերից Սասունի վրա արշավել են բազմաքանակ կանոնավոր զորքեր՝ իրենց թնդանոթներով»[23]։

Խեղդվողը ձեռքը զցում է փրփուրներին։ Ինքնարդարացման ջղագրգիռ տենդի մեջ սուլթանը դիմում է վճռական միջոցների։

Հոկտեմբերին, կառավարության հրամանով, Ալա բեկը արշավում է այն քրդերի վրա, որոնք ավերել են Սասունը և այլ գավառներ, որպեսզի խլի հայերից տարած ավարը և վերադարձնի տերերին։ Ալա բեկը 200 ձիավորով նախ գնաց ջիբրանցի քրդերի վրա, բայց քրդերը դիմադրեցին, հրաժարվեցին որևէ բան վերադարձնել, և Ալա բեկը վախենալով կռվից, դատարկ ձեռքերով վերադարձավ։ Հետո ճնշում գործադրեց հասանցիների վրա։ Հասանցիք ոչ մի դիմադրություն ցույց չտվին, վրատահ իրենց ցեղապետ Ֆաթի փաշայի վրա, որը սուլթանի աչքում մեծ հեղինակություն էր։ Բայց սուլթանը ժամանակ չուներ իրեն հավատարիմ մարդկանց մասին հոգալու։ Ֆաթին իր մարդկանցով ձերբակալվեց ու բերվեց Խնուս, որտեղ էլ մահապատժի ենթարկվեց։

«Բռնված էր նաև Աղամի աղան։ Դա մի շատ հարուստ քուրդ

էր, ուներ ահագին ազդեցություն և ամեն տարի 10 հազարից ավելի ոչխար էր տանում Շամ և Հալեպ՝ վաճառելու։ Նա Կարինից հեռագրով բողոքում է Բ. Դուռ՝ հայտնելով, որ ինքը ավազակ չէ, այլ հայտնի վաճառական։ Նա ազատվեց, որովհետև կառավարությանը սպառնացել էր դեսպանների առաջ բաց անել բոլոր գաղտնիքները, ցույց տալ, որ քրդերը ամեն ինչ կատարել են կառավարության դրդմամբ»։

Մյուս ազդեցիկ քրդերին պատժել չհաջողվեց։ Հարվածը փոխադրեցին մանրերի վրա։ Հոկտեմբերից մինչև նոյեմբերի վերջը մեծ թվով քրդեր բռնվեցին ու կողոպտվեցին։ Նրանց ոչխարները, ձիերը, հարստությունը անցան ագահ պաշտոնյաների ձեռքը։ «Մի քանի տեղերում բռնաբարվեցին կանայք ու աղջիկներ։ Հրդեհվեցին մեծ թվով քրդերի տներ...

Այժմ քրդերը սաստիկ գրգռված են կառավարության դեմ»։

Քրդերի վրա մեղքը բարդելու կառավարության ջանքերը հիմնովին հերքեց խիզանցի աշիրեթապետ Խշման աղան, որի համար էլ բանտ նետվեց։ Այդ ցեղապետը հայտարարեց. «Կառավարությունը աշիրեթներին դրդեց կռվի, իսկ կոտորածը հիմնականում կատարել է զորքը»։

Քղիից երկու հայ երիտասարդներ մի քրդի կաշառում են ու նրանից վերցնում քուրդ ցեղապետներին կայմակամի ու շեյխ Մեհմեդի գրած նամակը, որն սկսվում է հետևյալ կոչով. «Ջընջեցեք բոլոր որդերին։ Սույն նամակը ձեզ հասնելուն պես, եթե Մահմեդի կատարյալ հավատացյալներ եք, հավաքեք ձեր բոլոր մարդկանց և սկսեք հայ գյուղերը թալանել, այրել ու սպանել։ Այդ գյավուրները աշխատում են տիրապետել այս երկրին և ձեր տերերը դառնալ։ Ժամանակն է գործելու, դրանց արմատները չորացրեք։ Ոչ մի հայ այդտեղ թող չմնա։ Մեր առատագութ սուլթանը, եթե լսի ձեր քաջագործության մասին, պատիվներով ու շքանշաններով կփառավորի ձեզ, ինչպես արդեն վարձատրեց Սասունի կոտորածին մասնակցած քուրդ բեյերին»։

Այս Մեհմեդը Քղիի մուդեզիմն* է եղել։ Այդ պաշտոնում նա պետական միջոցներից յուրացրեց 2 միլիոն լիրա ու փախավ Մեքքա, դարձավ հաջի և, որպես շեյխ, վերադարձավ Քղի։

Ջիբրանցի մի քուրդ աղա վկայել է. «Անցյալ տարի Սասնա կոտորածի համար կառավարությունից գիր եկավ մեզ և հանձնարարեցին, թե պետք է ձեր բոլոր հնձյալների բազմությամբ և զենքով գնաք Սասունի հայերի վրա և կոտորեք, որովհետև դա թագավորի հրամանն է։ Եթե չգնաք՝ համիդիեներից զրկվելու եք, ձեր տները թալանելու ենք, իսկ դուք մաշվելու եք բանտերում։ Բայց մենք կարևորություն չտվինք և չգնացինք։ Հիմա նոր հասկացանք, թե ինչու անցյալ տարի հոկտեմբերին Կարինի Ալա բեյը զորքերով մեր տներն ավերեց, եղած-չեղածները տարավ և մեզ բանտ ուղարկեց, և հիմա հասկացանք, թե ինչու էին մեզ հայերի դեմ դրդում, հիմա, երբ մենք էլ հայտնվեցինք հայերի վիճակում»[24]։

Կարելի է բերել բազմաթիվ այլ վկայություններ ու փաստեր, ցույց տալու համար, որ քրդերի միջոցով հայերին ճնշելն ու ոչնչացնելը օսմանյան կառավարության ներքին քաղաքականության առանցքային հարցերից էր և մշտապես գտնվում էր սուլթանի ու Բ. Դռան ուշադրության կենտրոնում։ 1894—96 թթ. այդ քաղաքականությունը դրսևորվեց իր ամբողջ խորությամբ։ Սուլթանին հաջողվեց քրդերի շրջանում անասնական ատելություն բորբոքել հայերի նկատմամբ և նրանց ձեռքով կազմակերպել մարդկության պատմության ամենահրեշավոր իրադարձություններից մեկը՝ հայ ժողովրդի բնաջնջումը։

Սակայն սխալ կլինի մտածել, թե բոլոր քրդերն ու թուրքերն էլ անասնական համակերպությամբ սուլթանի ձեռքին գործիք դարձան։ Բռնակալի տիրապետության լուծը իր ուսերին զգաց նաև թուրք ժողովուրդը։ Թուրք առաջադեմ մտավորականներից շատերը ճաշակեցին սուլթանի «եփած դառը կերակուրը»։ Եղան անհատներ, որոնք կառավարության հայաջինջ քաղաքականությունը վնասակար համարեցին իրենց իսկ՝ թուրքերի համար։

«Դարեր շարունակ,— գրում է մի թուրք,— հայը գոյության կռվում օգնության ձեռք է մեկնել Ալլահի որդիներին՝ մահմեդականներին։ Տերության գանձարանը լցրել են հայերը. արհեստը և առևտուրը ծաղկել են նրանց ձեռքերով, երկրի քաղաքական ղեկավարները եղել են նրանք։ Առանց հայի մենք կյանք չունեինք, **մենք իմքներս կարեցինք մեզ կերակրող ձեռքը**»[25]։

Ճիշտ է, Սասունի կոտորածներին աշիրեթությունները ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել, բայց բացարձակ կեղծիք է, երբ ժխտվում է պաշտոնատար անձանց, զորքի ու ոս-

* Հարկահավաք

տիկանության առաջատար դերն ու ղեկավար մասնակցությունը այդ գործում։

Օրինակ, Խնուսում կոտորածների կազմակերպիչն ու ոգեշնչողը սուլթանի ներկայացուցիչ Շաքիր փաշան էր։

Խնուսի Խոզլի գյուղի բնակիչները (60—70 տուն), զինված գերանդիներով ու դանակներով, երկու օր դիմադրում էին քրդերի հարձակումներին։ Բայց հաջորդ օրը, երբ քրդերի հարձակմանը միանում են թուրք զինվորները, խոզլեցիները թողնում են գյուղը և բարձրանում սարը, որը ծածկված էր ձյունով։ Թշնամին լցվում է գյուղ և սրախողխող անում փախչել չհասցրած գյուղացիներին։

Հոկտեմբերի 29-ին Խնուսի բերդ է գալիս ինքը՝ Շարիր փաշան։ Մի խումբ հայեր գնում են նրա մոտ, պատմում եղելությունը, բողոքում քրդերի գազանություններից։ Շաքիրը հրամայում է հայերին բանտ նետել։ Իսկ երբ նրա շուրջը հավաքվում են քուրդ բեկերն ու ցեղապետները՝ Շաքիրը նրանց հանդիմանում է, որ զբաղվելով կողոպուտով, չեն հասցրել բոլոր հայերին ոչնչացնել, ինչպես ինքն էր հրամայել։ Շաքիրի այցելությունից հետո հայերի վիճակը վատթարացավ։ Նրանք թուրքական պաշտոնյաներից, ասկյարներից, ցեղապետներից անընդհատ նույն բանն էին լսում. «Հայե՛ր, ձեր վերջը մոտ է»։

Միամիտներին մոլորեցնելու համար է նաև թուրքական պաշտոնական պատմագրության այն պնդումը, թե թուրքական իշխանություններն այդ տարիներին հետապնդում և պատժում էին միայն օտարերկրյա գործակալ հայդուկներին և հեղափոխականներին, և այն էլ՝ առավելապես Անդրկովկասից եկածներին։ Որպես ապացույց նրանք վկայակոչում էին Մուրադի ու Գևորգի նկատմամբ թուրքական դատարանի վճիռները։ Քանի որ Գևորգը «տեղացի էր», նրան դատապարտեցին 15 տարվա բանտարկության, իսկ Մուրադը դատապարտվեց 101 տարվա բանտարկության, որովհետև ուղարկված էր դրսից։ Կեղծիք է։ Դժոխք Հրայրը տեղացի էր, բայց նույնպես դատապարտվեց 101 տարվա բանտարկության։

1895 թվականին անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակից է. Դելոնը շրջագայեց ջարդերի վայրերով և, հենվելով ստուգված փաստերի վրա, գրեց. «Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի կոտորածը պայծառափայլ Բ. Դոան կանխամտածված գործն է, որը նա նախապատրաստեց հոգատարությամբ և իրագործեց դաժանորեն»[26]։

Սասունի կոտորածների պատմությունը ենթապոխել ու ենթագրոխում են ոչ միայն Թուրքիայում, այլև Արևմուտքում։ Եթե 1895 թ. մեծ պետությունների ներկայացուցիչները, այդ թվում և անգլիական կառավարության ներկայացուցիչը, գնալով Սասունի իրադարձությունների թարմ հետքերով, հայտարարեցին, որ սուլթանական կառավարությունը ինքն է հայերին զենքի մղել և ապա նրանց կոտորել, ապա մեր օրերի Անգլիայում ուրիշ փող են փչում, անամոթաբար կեղծում պատմությունը։ Նույնը և ԱՄՆ-ում։ Ամերիկյան պատմաբաններ Ս. և Ե. Շոուները Սասունի կոտորածները համարում են օրինական իշխանությունների դեմ սասունցիների ըմբոստացման հետևանք։ «Երբ պետական զորքերը մոտեցան Սասունին,— պատմում են այդ ծախված պատմաբանները,— ապստամբները ցրվեցին լեռնային մեկուսի վայրերը՝ նախապես ամայացնելով մահմեդական գյուղերը», և ապա շարունակում են ստերի շարանը. «Համիդիե գնդերն ու թուրքական կանոնավոր զորքերը Սասունն ամայացրին միայն այն բանից հետո, երբ հայերն արդեն ոչնչացրել էին մերձակա մահմեդական գյուղերի բնակիչներին»[27]։

Ինչո՞ւ են ստում այս պատմաբանները։ Ստում են, որովհետև այդպես են պահանջում Արևմուտքի պետությունների քաղաքական շահերը։ Շոու ամուսինները կրկնում են ամերիկյան այն պատմաբանների տեսակետը, որ եթե Թուրքիայում թուրքացման քաղաքականությունը չիրականացվեր բռնի միջոցներով, ապա այսօր ԱՄՆ-ը չէր ունենա այնպիսի կարևոր դաշնակից, ինչպիսին Թուրքիան է։

Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Զինովևը 1901 թ. գրում էր, որ թուրքական կառավարությունը, ուժից վեր հարկեր նշանակելով, լռելյայն շարունակում է ջարդերը։ Բ. Դոան քաղաքականությունը նպատակ ունի «կամ ազատվել հայերից, կամ էլ նրանց դնել այնպիսի վիճակում, որ դառնան անմուն ստրուկներ։ Հենց այդ նպատակով էլ, ի դեպ, միջոցներ են ձեռնարկվում, որ հայերին ստիպեն հեռանալ Սասունի լեռներից, որտեղ նրանք հնարավորություն ունեն պաշտպանվելու ավազակային հարձակումներից...»[28]։

Այսինքն՝ խոսքը հայերին ոչնչացնելու նախապես մշակված ծրագրի իրականացման մասին է։ Այս պայմաններում պարոն

Շուներ կարծիքով ո՞րն էր ելքը, հայ ժողովուրդը ի՞նչ պետք է աներ։ Գլուխն անմոռուչ կախե՞ր յաթաղանի առաջ, որդեգրե՞ր սարկությունը, պատվից ու արժանապատվությունից զուրկ կյանքը, թե՞ պայքարի ելներ իր մարդկային տարրական իրավունքների պաշտպանության համար։ Սասունցիները, բնականաբար, ընտրեցին երկրորդ ուղին։

Երբ Սասունի կոտորածներն արդեն դաժան իրողություն էին, հայկական որոշ շրջաններ սկսեցին մեղավորներ փնտրել... հայերի շրջանում։ Պոլսի հետադիմական հայ մամուլը գրեց. «Սասունի հետ այժմ գործ չունենք, թող հանգիստ մնան. հիմա կա մի ավելի մեծ խնդիր՝ կաթողիկոսական խնդիրը»։

«Թուրքերի ակնհայտ բռնաբարությունները տեսնելով հանդերձ,— 1894 թ. № 13-ում գրեց «Հնչակը»,— զարմանալի է, որ մեր մեջ գտնվում են այնպիսի անձինք, որոնք ասում են, թե... «այս մի քանի տարում կատարված վնասակար ցույցերը միայն պատճառ դարձան թշնամու կողմից հարստահարությունների խորացմանը»։ Մինչդեռ այդ ցույցերն այլ «նպատակ չունեին, եթե ոչ թշնամու գործադրած սոսկալի կեղեքումները... ի դերև հանելու և հարստահարված ժողովրդի մի արյունոտ պատկերը հրապարակի վրա դնելու համար։

Թուրքիան արդեն որոշել է բնաջնջել հայերին, նա եռանդով գործի է անցել, ինչպես Վանում՝ Թաֆուրը և Շաքիրը, այնպես էլ այլ վայրերում ուրիշ բարբարոսներ անխնա կոտորում են, հափշտակում, թալանում ու կրակի են տալիս։ Ժողովրդին այժմ մնում է միավորված, համերաշխ դիմադրել իրեն սպառնացող մահաբեր վտանգին...»։

Վանում ամբողջ «ժողովուրդը հուսահատ դրության մեջ է։ Կուսակալ Բահրի փաշան քթի տակ ժպտալով ասում է. «Հայեր, ձեզ բոլորիդ մուրացկան եմ դարձնելու»։

Սասունի դեպքերից հետո մեծ պետությունները նորից փորձեցին խաղալ ուշացած հովանավորի իրենց դերը։

Սասունի դեպքերը «հետաքննելու համար» սուլթանը ստեղծեց հանձնաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները։

«Ահա արդեն ավելի քան մի ամիս,— գրեց «Հնչակը»,— եվրոպական հանձնախումբը գտնվում է Մուշում։ Ստացված տեղեկություններից իմանում ենք, որ նրա քննությունները կա-

տարվում են շատ դանդաղ և աննպատակահարմար ձևով։ Հանձնաժողովի անդամները չունեն հմուտ թարգմանիչներ և, բացի այդ, թուրք կառավարությունը բազմաթիվ արգելքներ ու խոչընդոտներ է հարուցում հանձնաժողովի առաջ»[29]։

Այդ խոչընդոտներից են. «կառավարությունը ձերբակալում է և երբեմն, մինչև իսկ, սպանում այն բոլոր հայերին, ովքեր հանդգնում են հանձնաժողովի մոտ գնալու փորձ կատարել։ Արգելքներ են նաև թուրք կառավարության թափած բոլոր ճիգերը՝ չնչելու կամ ծածկելու Սասունի խժդժություններից մնացած առավել ապացուցիչ հետքերը»։ Այս պայմաններում հանձնաժողովը, եթե նույնիսկ համաձայնություն դրսևորեր իրական վիճակը պարզելու, հազիվ թե կարողանար։

Գրում են Բուլանըխից. «Մեր կողմերում հաղորդակցություն չկա։ Գյուղից գյուղ գնալը արգելված է։ Կառավարության կողմից ամեն գյուղում 2—3 պահապան և երկուական զինվոր է դրված այդ հաղորդակցությունը ընդհատելու համար, որպեսզի չլինի թե Մուշ գալով բողոքագրեր հանձնենք օտար քննիչներին»։

Մի սասունցի գրում է, թե երբ եվրոպական քննիչները եկան, մենք մտածեցինք, թե դա դժոխքի վերջն է։ «Սակայն, ընդհակառակը, նրանց գալով օսմանյան ճնշումը հետզհետե խստացավ, մեծացավ, որը գերազանցեց այն սաստիկ կոտորածը, որ եղավ Սասունում և Տալվորիկում»։

Օսմանյան կառավարությունը սասունցիներից պահանջում էր. «Կամ պետք է գաք ասեք, որ քրդերն են արել, կամ ձեզ էլ ձեր նախնիներին ենք հասցնելու»։ Մշո ճանապարհի վրա սահմանված է ոստիկանական հսկողություն և «չեն թողնում, որ որևէ սասունցի Մուշ գնա և բողոքի, և եթե մեկը գա Մուշ քաղաք, ճանապարհին կամ քաղաքում պետք է ձերբակալվի, կամ թուրքերի ասածով խոսի, կամ այդպես ձերբակալված մնա բանտում... նրանք, որ չեն կարողացել ուրանալ ճշմարտությունը և քննիչներին ամեն բան ճշտորեն և բառ առ բառ խոստովանել են, այսօր բանտում դառնորեն շարչարվում են։

Աղբին գյուղից չորս մարդ գնացին բողոքելու. նրանք անմիջապես անհետացան... Մի քանի ուրիշ մարդկանց, ճանապարհին բռնելով, սրի են քաշել, այդպես վարվեցին նաև մի քանի կանանց հետ, որոնցից մեկի անունը Սարո էր, ալիանքցի Աբրեի կինը։ Շենիկ գյուղից 10 հոգի մնում են ձերբակալված՝ ճիշտ խոսելու համար»[30]։

«Միայն Սասնո մի քանի անձինք Հասան (Մուշ), իրենց բողքներն ասացին և գիշերը փախան. նրանց (թուրքերի) ձեռքը չընկան»,— ահա մի այլ վկայություն։

Սասունցիներին այդ հաջողվեց հետևյալ կերպ. «Օսմանյան ոստիկանները նրանց ձերբակալեցին և շատ չարչարեցին, ներանք պատասխանեցին՝ մեզ մի չարչարեք, ինչ ցանկանում եք, դնանք այդ էլ ասենք...»։ Բայց երբ նրանք հասան քննիչներին, սկսեցին համարձակորեն պատմել կոտորածի մասին։ Այդ մարդիկ են Դավիթ Մարգոյանը, Սիմոն Պողոսյանը, Սագո Սեմալյանը, Չենիկցի Գորգեյանը, Արթին Մարգեյանը, Կիրակոս Հեպոյանը, Սրգո Օսեյանը։ Օսմանցիներն այդ մասին իմացան և, ուրիշներին դաս տալու համար որոշեցին նրանց բռնել ու ոչնչացնել։ Այդ նպատակով նրանք տասն անգամ Սասուն մարդ ուղարկեցին, բայց ապարդյուն։

Ոստիկանները սասունցիներին շարչարում են, նեղում, ասում են, թե եկեք ասեք, որ ոչ թե զորքերն են սուլթանի հրամանով կոտորել, այլ աշիրեթները։ Խուլբի կողմից Դալիբ էֆենդին և Սալի աղան 40 ոստիկանով, մասամբ՝ ոսկով սրտեր ջահեցին, մասամբ՝ խոշտանգումներով կարողացան սուտ ցուցմունքներ ստանալ։

«Նրանք անցան Սասունի կողմերը, որտեղ դեռևս 200 անձինք մնում են իրենց ավերակներում։ Այս տարվա մարտի 1-ին եկան Իսկենդեր աղան, յուզբաշին և Հուսեին աղան 30 ոստիկանով, եղած սասունցիները փախան, որովհետև սկսել էին կանանց չարչարել։ Եկողները խնդրագրի տեքստ են կազմում ու պահանջում, որ սասունցիները ստորագրեն, կանայք ու պատանիները դիմադրում են։ Իսկենդերը զայրանում է և հրամայում է բռնի բերեն ու ստորագրել տան։ Ոստիկանները մի քանի կնոջ բռնում են, ծեծում ու հարկադրում «մատներն այն կազմած թղթին խփել», նաև դտնվում են մի քանի հիվանդներ, որոնք փախչել չէին կարող. սրանց տանում են և զորով «մատները խփում թղթին»։ Այդպես՝ բոլոր գյուղերում[31]։

Երկու վկայություն ևս.

«Միշտ լրտեսները շրջում էին տեսնելու, թե հայերն ինչ են անում, գնո՞ւմ են դեսպանների մոտ և, եթե վիրավորվածներ կան, նրանց գտնում ու անհետացնում են։ Մեծ դժվարությամբ հայերը 41 տեղից վիրավորված մի սասունցու բերին դեսպաններին ցույց տալու։ Եթե կանացի հագուստ չհագցնեին, անհնար էր, որ կարողանային դեսպաններին ցույց տալ»։

Կոտորածները հատկապես գազանային էին Տալվորիկի գյուղերում, բայց այդ գյուղերից ոչ ոք չգտնվեց ու չբերվեց հարցաքննության։ «Մշո կառավարությունը Սասուն, Խուլբ, Խիանք և Տիգրանակերտ ու Սասունին սահմանակից գավառներն ուղարկեց մշեցի Դալիբ էֆենդուն և Սալեհ աղային։ Սրանք բռնությամբ ճանաչված և լեռնցի (հայերի) և թե քուրդ աշիրեթություններում ազդեցիկ դիրք ունեցողների հետ միացած՝ սկսել են կողմերի բնիկ բոլոր քուրդ սպաների միջոցով սպառնալ, ծեծել, հայհոյել և ախոռների մեջ բանտարկել խեղճ հայերին և ստիպել, որ կնքեն հատկապես օսմանյան կառավարության կողմից պատրաստված Սասունի կոտորածը հերքող հանրագիրը։ Միաժամանակ մի քանի խաշնարած մարդկանց ոչխարների գոմերում բռնելով՝ այս կամ այն գյուղի գյուղապետի անվան տակ ոստիկաններով Մուշ են ուղարկել, նրանց հարկադրելով ասել այն, ինչ հեռու է ճշմարտությունից և շահեկան՝ օսմանյան կառավարության համար»։

Սասունցիներին «ստիպում են, թե պետք է դեսպանների ժողովին ներկայանաք և ասեք այն, ինչ կպատվիրենք և, եթե այս անգամ էլ մերժեք,— սպառնում է մութեսարիֆը,— գիտցած եղեք, որ կյանքներդ ձերը չէ և հավերժ կորած եք և միաժամանակ... նշան և պատիվներ կստանաք, եթե մեր խոսքերին ունկընդրեք»։

Ոստիկանությանը հաջողվեց խոշտանգելով ու կաշառելով մի քանի հայերից կեղծ ցուցմունքներ կորզել։

Բուլանըխի, Վարդոյի, Կոնյակի, Խութ-Բռնաշենի և Մշո դաշտի հայերը աղերսագիր կազմեցին քննիչ հանձնաժողովին հանձնելու համար, որոնք «վերաբերում էին ոստիկանների բռնություններին, քրդերի գործողություններին, ավարառություններին, քրիստոնյա կանանց և օրիորդների առևանգումներին և բռնի կրոնափոխություններին, սրբապղծություններին՝ կրոնի անարգումներին, պաշտոնական մարմինների գործած զեղծումներին ու կաշառակերություններին, կապալառուների անտանելի արարքներին...»։ Սակայն նրանք այդ հանրագիրը հանձնել չկարողացան, որովհետև ժանդարմները թույլ չտվին։

Կառավարությունը հապճեպ միջոցներ էր ձեռնարկում իրեղեն ապացույցները կոծկելու համար։ Հատուկ մի ոստիկանական խումբ ուղարկվում է Սասունի լեռը, նույն փոսերի մեջ ամփոփված հարյուրավոր սասունցիների ոսկորները աներևութացնելու հրահանգով»։

«Վերջերս,— գրում են Մուշից,— մի խումբ ոստիկաններ լցվել էին Սասուն, ընկել էին գյուղերը և տարապիսի բարբարոսություններով պահան-

չեզ էին իրենց հանձնել այն անձանց, ովքեր համաձայնել էին քննիչներին բողոք ներկայացնել»։ («Դրոշակ», 1895 թ., № 6)։

Սակայն բողոքները հազարումի հնարքներով, համենայնդեպս, հասնում էին քննիչներին։ Քննիչ հանձնաժողովի նախագահ Շեֆիգ փաշայի զայրույթը կատաղության վերածվեց, և քննության ժամանակ, վրդովված սասունցի կնոջ տված ճշմարիտ ցուցմունքներից, նա, ինքնատիրապետումը կորցնելով, «եվրոպացի քննիչների աչքի առաջ ծեծեց կնոջը»։

Ոստիկանական հարյուրապետ Իսկենդեր աղան շենիկցի ուսուցիչ Միքայելին և մի քանի այլ անձանց բռնությամբ տանում է Մուշ։ Նրան հետապնդելով Մուշ են մտնում 40—50 հայ կանայք, որոնց մուտքը քաղաք մեծ տպավորություն է գործում։ Չնայած ոստիկանների արգելքին, ծեծված ու ջարդված, ցնցոտիներով ու բոկոտն կանայք քննիչ հանձնաժողովի մոտ են հասնում և նրանց հանձնում մի հանրագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանությունը ամեն ջանք գործադրում է, որ ոչ մի սասունցի Մուշ չմտնի»։

Չնայած իշխանությունների կողմից հարուցված խոչընդոտներին, հանձնաժողովը հարցաքննեց 190 հայի, քրդի, ինչպես նաև թուրք պաշտոնատար անձանց և գտավ, որ «կառավարության կարգադրությամբ և կանխամտածված կանոնավոր զորքը կոտորած է կատարել, որ քրդերի մասնակցությունը նույնպես կառավարության հանձնարարությամբ է եղել»[32]:

Հանձնաժողովը գտավ, որ հայերը Սասունում զենքի են դիմել հարկադրված, ինքնապաշտպանության նպատակով, իսկ խլխանությունները իրականացրել են հրեշավոր եղեռն։

Ապրիլի 22-ին քննիչ հանձնաժողովը գնաց Սեմալ, Շենիկ, Գելիեգուզան. «Բոլոր տներն այրված էին, մի քանի նորաշեն խրճիկներում տեսան մի քանի փրկված հայերի, որոնք ցույց տվին այրված եկեղեցին, տները և շենքերը», ապա նրանց տարան փոսերը, որոնք լցված էին դիակներով։ Սասունցիները քանդեցին փոսերը. «Ահա մարդկային մարմինները սկսեցին... երևալ, գարշահոտություն տարածվեց։ Քննիչները ստիպված Մուշից հականեխիչ դեղորայք բերել տվին։

Մի կիսամերկ կին, ցույց տալով այրված ու քանդված եկեղեցին, ասաց. «Այստեղ 50 կին ու երիտասարդ աղջիկ պղծեցին ու մորթեցին։ Ես էլ այնտեղ էի...»[33]:

Բացեցին Պետոյի տան մոտ գտնվող մեծ փոսը, գտան Տեր-Հովհաննեսի մաշկազերծ մարմինը, աչքերը փորված և պարանը վզին, ճիշտ այնպես, ինչպես նկարագրել էին սասունցիները։ Ապա դիակների կույտեր, մանր ու մեծ, ծեր ու երեխա. այր ու կին խառը լցված։ Սարսափահար եվրոպացիք տեսան, և չկարողանալով դիմանալ, հրամայեցին փոսերն անմիջապես փակել։ Նրանք քննությունը բավարար համարեցին և այլևս չուզեցին գնալ Տալվորիկ, վերադարձան Մուշ։

«Սասունի մխացող ավերակների արհավիրքներից և քստմնելի տեսարաններից նույնիսկ այդ բարբարոսությունների հեղինակներն էին սարսափել ու վրդովվել և թողել հեռացել էին այդ կողմերից։ Մինչ սասունցիներից կենդանի մնացած թշվառներն էլ, հեռու իրենց կործանված հարկերից, թափառական ու հալածական, փախուստի մեջ, սովի մահաբույր կծկումների դեմ էին մաքառում։ Գեթ Սասունն էր հանգչում իր գերեզմանային ամայության մեջ, և ձյունե թանձր ծածկոցը վարագուրում էր այնտեղ մերկությամբ երևան եկած, մարդկային հրեշության և վայրենության ամոթալի երևույթները։ Թնդանոթների որոտներից և կովողների, վիրավորների ու օրհասական վիճակում գտնվողների գոռում-գոչումից հետո դադարած էին նաև կուշտ ատամների ուրախ կռինչը և բուերի եղերական վայնասունը։ Սարսռազդու լռություն էր տիրում այդ ահեղ ձորերում ու լեռներում...»։

Նույն հանգստությունն էր տիրում նաև Մուշում. «Կարծես կառավարությունն ու իր մեղսակիցները՝ քրդերը, մի վիթխարի որս կուլ տալուց հետո, հղփացած ու մարսողական թմրության մեջ մտած պոռ օձի պես մի վայրկյան ընդհատել են իրենց շատակերությունները, երևում է, հետաքննության վերջավորությանն են սպասում, հասկանալու համար, թե կարո՞ղ են մարսել բյուրավոր հայ նահատակների արյունը, որ խմել էին...»[34]:

«Քննիչներն ամսի 7-ին այստեղից մեկնեցին և անմիջապես հանգամանքները փոխվեցին։ Մի քանի օր է տեղի թուրքերն ուզում են իրենց կրած նվաստացման վրեժը հանել, մանավանդ լսել էին, որ քննիչների հավաքած նյութերը ամբողջությամբ վնաս էին թուրք կառավարությանն ու նրա արբանյակներին, չնայած այդ քննությունները շատ թերի էին, որովհետև քննիչները անձամբ չկարողացան գնալ մինչև Սասունի խորքե-

ը, որովհետև Սասունի ամենահեռավոր խորշերը ամենաքրստրմնելի վայրագություններին հանդիսավայր եղան»։

«Սաստիկ ճնշման ներքո կատարված քննությունը կարող էր որևէ ճշմարիտ արդյունքի չհանգել, եթե չլիներ սասունցիների անվեհեր քաջությունը, որն ի դերև հանեց կառավարության բոլոր նախազգուշական և արգելակող գործողությունները»։

«Քննիչների մեկնելուց հետո Թուրքերի մեծագույն մասի համոզմունքն այն էր, թե հայոց հարցը բոլորովին մեռավ»։

Մեծ տերությունների առաջարկած բարենորոգումների ծրագիրը ևս «նրանց չի արգելի վայրագությունները շարունակել, քանի որ նրանք ըմբռնում են այդ բարենորոգումների անարժեք, անգործադրելի, բոլոր տեսակի երաշխավորություններից զուրկ լինելը և քաջ գիտեն, որ Թուրք կառավարությունը իր վերջին ճիգը կթափի ծրագիրն էլ մերժելու»[35]։

Եվ իսկապես, Սասունը կրկին պաշարման մեջ էր, ոստիկանները փնտրում էին այն սասունցիներին, որոնք կարողացել էին հանդիպել քննիչների հետ։

Մերկ, սոված և անօթևան մնացած սասունցիները, մանավանդ այն սակավաթիվ կտրիճները, որոնք օձի պես հող ուտելով և սկյուռի պես արմատ կրծելով, դեռ կառչած էին իրենց ապառաժներին, կառավարության աչքի փուշն էին, և նա ջանք չէր խնայում լեռնաշխարհի այդ վերջին մոհիկաններին ևս ոչնչացնելու համար։ «Իսկ ինչպե՞ս։ Իհարկե, փորձված միջոցով. քուրդը կա ու կա»։

Խուլբի ոստիկանապետ Էոմերը բագրանցի և բատկանցի քրդերին համոզում էր գարնանը տեղափոխվել Մշո սար, բայց նրանք հրաժարվեցին։ Դարձյալ խոստումներ, դարձյալ քրդերի ագահությունը գրգռելու փորձեր, և, ի վերջո, ձեռնարկը հաջողվում է։

Եթե քրդերը մեկ անգամ ևս սասունցիներին բնաջնջելու գործիք դառնան, ավելի հեշտ կլինի աշխարհին համոզել, որ 1894 թ. կոտորածների մեղավորը նրանք են, իսկ զորքը ընդամենը խաղաղություն հաստատելու համար է միջամտել։

Սասունում «խաղաղություն» հաստատելու գործը հանձնարարված էր հայատյաց, ջարդերի կազմակերպիչ Հաջի Դալիբին։ Նրա տրամադրության տակ էին 20 հազար քրդեր, որոնք ցրվել էին Շատախի ու Գավառի լեռներում, ողողել Մշո սարը մինչև Հավատորիկ։ Դալիբը «առանձնապես վտանգավոր հայերի» ցուցակ ունեի, որոնց վնասազերծելու հրահանգը ջանում էր իրագործել հատուկ հավատարմությամբ։ Առանց Դալիբի անցագրի, Մուշ գնացած սասունցին կամ Մուշից Սասուն գնացողները անմիջապես ձերբակալվում էին, իսկ Սեմալի, Շենիկի ու Գելիեգուզանի գյուղացիներին ընդհանրապես արգելված էր որևէ տեղ մեկնել։ Սասունում պատերազմական վիճակ էր։ Սասունցիներին նպաստ բաժանելու պատրվակով հայ-թուրքական հանձնաժողով ստեղծվեց, որը գործնականում զբաղվում էր մարդահամարով, մի բան, որը զգաստացրեց սասունցիներին, «որովհետև օսմանյան տիրապետության ընթացքում երբեք չէր հաջողվել Սասունում մարդահամար անցկացնել»։

Մեծ տերությունները կազմեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու ծրագրի նախագիծ և ներկայացրին սուլթանին։ Մի բնորոշ փաստ։ Երբ Աբդուլ Համիդը Քեամիլ փաշային հարցրեց, թե մեծ տերությունների կողմից ներկայացված այդ ծրագիրը գործադրելի՞ է, թե ոչ, և ստացավ դրական պատասխան, դազազած նրա երեսին շպրտեց «դավաճան» բառը։

«Քաջ սասունցիների ապստամբությունն ու նահատակությունները,— գրեց «Հնչակը»,— այսօր Հայկական հարցի վրա ամբողջ Եվրոպայի և Ամերիկայի լարված ուշադրությունն են բևեռել։

Բոլոր երկրների և, մասնավորապես, Անգլիայի բազմաթիվ թերթերում արդեն երեք շաբաթից ի վեր ամեն օր լիառատ լուրեր և ընդարձակ հոդվածներ են զետեղվում Թուրքական զորքերի ու քրդերի գործած խժդժությունների մասին։ Գրեթե բոլոր անգլիական թերթերը արտահայտում են այն միտքը, որ ժամանակն է Հայկական հարցին վերջ տալու, գոհացնելով հայերի պահանջները։ Մի քանի թերթ խոսում են «հայկական ինքնավարության մասին»[36]։

Երբ Անգլիայի դեսպան Ֆիլիպ Քերրին Բ. Դոնից բացատրություն պահանջեց, Մեծ եպարքոսը պատասխանեց. «Հայերը Վանի անգլիական հյուպատոսի դրդմամբ են ապստամբել», իսկ երբ դեսպանը խնդրեց թույլատրել դեսպանության զինվորական կցորդին ուղարկել Մուշ՝ տեղում այդ ապստամբության փաստը ստուգելու, եպարքոսը շտապեց հայտարարել, թե «Բ. Դռան պաշտոնատանը այս կապակցությամբ թյուրիմացություն է տեղի ունեցել և, որ հյուպատոսը որևէ պատասխանատվություն չի կրում ճշված շարժումների համար»։ («Հնչակ», 1884 թ. № 13)։

Սասունի կոտորածները առաջ բերեցին աշխարհի առաջադեմ ուժերի ցասումն ու բուռն բողոքները։ Անատոլ Ֆրանսը

Համիդին անվանեց «մի բռնակալ, որը սարսափից խելագարվել է»։ Ժան Ժորեսը հայկական ողբերգության իսկական մեղավորը համարում էր մեծ տերությունների երկդիմի շահադիտական և տմարդի քաղաքականությունը, որը Եվրոպայի դեմոկրատական ուժերին նույնպես դարձրեց եսասիրական հաշիվների խաղալիք։

Սասունի իրադարձությունների առնչությամբ շատ քաղաքներում բողոքի միտինգներ եղան, որոնցում բանաձևեր ընդունվեցին հասցեագրված Բեռլինի կոնգրեսի մասնակից պետություններին՝ պահանջելով լուծել Հայկական հարցը։

Գլադստոնը Աբդուլ Համիդին անվանեց «մեծ մարդասպան»։

«Ժամանակն է,— ասաց նա,— որ մի ընդհանուր անեծքի և ցասումի ճիչ ուղղվի այդ դաժան չարագործության դեմ։ Մարդկությանը հասցրած այդ վիրավորանքը պետք է պայթի սուլթանի ականջին և նրան զգուշացնի, իհարկե, եթե նրա մեջ դեռևս մարդկության նշույլ է մնացել, զգալու և ընկալելու իր գործած ահավոր չարիքը։ Այս սարսափները անպատվություն են քաղաքակրթության համար... նրանք ապտակ են մարդկությանը»[37]:

Ֆրանսիացի հայտնի գրող Սեվերինը ընդվզում է. «... Ինձ զայրացնում է լռությունը, եսասիրությունից բխող այն եղերական թմրությունը, որ փակել է մեր աչքերը և խցանել ականջները։ Օն, ուշքի եկ, դու հայացքդ շուռ ես տալիս։ Ականջներիցդ բռնած ես քեզ կստիպեմ անտարբեր հայացքդ ուղղել կոտորածի ահավոր սարսափներին։ Քեզ, որ խուլ ես ձևանում, ողջ կյանքում կհալածեն մեռյալների հեծեծանքները ու կխոցեն դեպի երկինք լարված նզովքի նետերը»[38]:

«Եվրոպան,— գրում է իտալական «Պերոկե» թերթը,— որ աճապարում է ամեն տեղ, ուր խժռելու որևէ բան կա, այնքան էլ չի շտապում գթասրտություն դրսևորելու»։

«Դեյլի Նյուսը» սուլթանի խոստացած ռեֆորմների մասին հիասթափությամբ գրեց, որ դրանք «ավելի անարժեք են, քան այն թուղթը, որի վրա գրված են»։

«Ամեն օր, ամեն ժամ կրկնվող սպանությունները, կանանց ու կույս աղջիկների բռնաբարությունները, առևանգումները, այն անթիվ անհամար գազանությունները, որ օրը ցերեկով կատարում էին տաճիկ ու քուրդ բաշիբոզուկները 19-րդ դարի վերջին, «լուսավորյալ» Եվրոպայի քթի տակ, անվերջ ավերումնե-

ը, կողոպուտը, թալանը, հրդեհը, որոնց ենթակա է Տաճկահայաստանի բազմաչարչար, թշվառ, ուժասպառ ժողովուրդը, շատ սակավ է արժանացել եվրոպական մամուլի ուշադրությանը։ Նա նույնիսկ աշխատել է դրանք թաքցնել։ Բայց, երբ այդ սոսկալի բարբարոսությունները ահավոր չափերի են հասնում, այն ժամանակ միայն եվրոպական մամուլը «բարեհաճում է» հատուկենտ տեղեկություններ ողորմալ»[39]։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Սասունի դեպքերին զուգընթաց ուժեղացվեցին բռնությունները հայաբնակ մյուս շրջաններում։ Միայն Երզնկայի Արմտան գյուղից բանտերում էին 50 գյուղացի, որոնցից յոթը այնտեղ մեռան։

1894 թ. դեկտեմբերին երեք օրվա ընթացքում Ամասիայից բանտ նետվեց 120 հոգի։

Հոկտեմբերի 8-ին Կեպան գավառի Սնպոն գյուղի շեյխը հարձակվում է նույն գյուղի վանահոր վրա և գազանաբար խոշտանգելով խարույկի վրա այրում նրան։

Գրում են Կեսարիայից. «Այս կողմերում օրը մեկ-երկու հայ սպանելը սովորական երևույթ է»։

Խնուսից գրում են, որ կառավարությունը իրենցից խլել է ինքնապաշտպանության գործիքները, իր ռազմական պաշարներից առատորեն բաժանել է քրդերին, որոնք սկսել են ամեն տեսակի անգթություններ գործել։

Մահ, ցկյանս աքսոր կամ բանտարկություն է սպառնում այն հային, որի մոտ գտնում են նույնիսկ մի հասարակ դանակ։

Բուլանըխի Ծեղխ Աղուբ գյուղից միայն 1894 թ. քրդերը թալանեցին 120 եզ, 120 կով, 500 ոչխար, 80 ձի, 100 լիտր յուղ։ («Հնչակ», 1895 թ., № 8)։

Սովորական դարձավ աղջիկ փախցնելն ու մահմեդականացնելը։ Միրպար գյուղի եկեղեցին փակեցին և հայերին հարկադրեցին մահմեդական ծեսեր կատարել։

Բալուի Հուվավ գյուղի բնակիչները գանգատվում են. «Գիշերը հանգիստ քնել չենք կարող, որովհետև մի տեղ պատ է ծակվում, մի տեղ տուն է կողոպտվում, մեկի անասունն են

հափշտակում։ Գյուղում գտնվող ոստիկանները սպառնում են Տալվորիկի օրը գցել մեզ»։

Քրդերի դեմ բողոքելը գործնականում դիտվում էր որպես քաղաքական հանցագործություն՝ ուղղված սուլթանի դեմ։

Համիդիե մի գունդ հարձակվում է դաշտում աշխատող գովանտակցիների վրա, թալանում է և մի հոգու սպանում։ Գյուղացիները բողոքում են։ Իշխանությունները 65 ոսկի ճանապարհածախս են պահանջում գյուղ գալու ու քննություն կատարելու համար, իսկ երբ գյուղացիները հրաժարվում են, դաժան ծեծի են ենթարկվում։ Գյուղից 25 հոգի բանտարկվեց։ Նրանց ասացին. «Դուք չգիտե՞ք, որ համիդիե զորքերի դեմ բողոքողը կհայտնվի ծովի հատակում»։

Ռուսաստանի, Անգլիայի և ԱՄՆ-ի դեսպաններին հասցեագրված բողոքագրում կարդում ենք. «Կառավարության պաշտոնյաների, իսլամ հասարակության և չերքեզների կողմից Եոզգատի և շրջակա հայ գյուղերում պարբերաբար կատարվող հարստահարությունները, սպանությունները, անարգանքը, ավարառությունները և զրկանքները մանրամասնորեն անգլիական հյուպատոսին ենք ներկայացրել»։ Բերենք միայն մի քանի փաստեր։

1894 թ. հունվարի 21-ին 40—50 մահմեդականներ «բոլոր հայերին պիտի ոչնչացնենք» աղաղակելով՝ շարժվում են դեպի կառավարչատուն։ Կառավարիչը նրանց դիմումին պատասխանում է. «Ես չեմ խառնվի, ինչ ուզում եք արեք»։ Կեսօրին մինարեից փչում է կռվի փողը։ Զորքերը, միացած մահմեդական ազգաբնակչությանը, փակում են կամուրջներն ու մեծ փողոցները, հարձակվում տների ու խանութների վրա և դրանք հրդեհում։ Մեծ թվով մարդիկ են սպանվում[40]*։*

Հեղափոխական գտնելու պատրվակով ոստիկանությունը խուզարկում է Եվդոկիայի հայկական թաղերը, բայց ոչինչ և ոչ ոքի գտնել չի հաջողվում։ Այդ ժամանակ մունետիկները կոչ են անում թուրքերին. «Հարձակվեք հայոց թաղի վրա, կոտորեք անհավատներին, պղծեք նրանց կանանց։ Մահմեդից կվարձատրվեք»։ Հայկական թաղերը հարձակման ու կոտորածի են ենթարկվում։ Ընդհարման ժամանակ 15 հոգի զոհվեց և 180-ը՝ վիրավորվեց։ Շատ հայեր անելանելի վիճակում թրքանում են։

Թուրք-պարսկական սահմանի վրա հուլիսի սկզբին հինգ բուրդ է սպանվում։ Այդ սպանությունը բարդում են հայերի վրա։ Դերիկ է գալիս Վանի

վալին ու հրամայում. «Դերիկը պետք է քանդվի հենց վաղը, վաղը քարը քարի վրա չպետք է մնա։ Հողի հետ հավասարեցրեք, մահմեդականնե՛ր, այդ սուլթանի հրամանն է. հայ ապստամբների արյունով ներկված գլուխները վաղն այստեղ պիտի տեսնեմ»։

Պետական պաշտոնյաներն ու աղաները, գրում են Օրդուից, որոշում են ջարդել հայերին ու այս նպատակով համապատասխան հրաման են տալիս տաճիկ գյուղացիներին, որոնք հայ ընտանիքների վրա հարձակվելով՝ սկսում են ավերել նրանց այգիները, փչացնել հնձած դաշտերը։ Սրերը քաշած, քարերով ու փայտերով հարձակվում են հայերի վրա։ Հանկարծակի եկած հայերը «քաղցած ու մերկ, բոբիկ ու բաց գլխով», բարձրանում են սարերը։

Արծկե գավառի բոլոր հայաբնակ գյուղերը գրեթե ավերակ դարձան։ Հայդարանցի Հուսեին փաշան իր համիդիե զորքով վերջին տարիներին այնքան նեղեց հայերին, որ շատ գյուղերի ամբողջ հայ բնակչությունը գաղթեց։

Սուլթանը Հուսեին փաշային հեռագիր ուղարկեց, որով շնորհակալություն հայտնեց Սասունի կոտորածին ակտիվ մասնակցություն ունենալու համար և խոստացավ միջոց գտնել նրա ու համիդիեների աշխատավարձը կանխիկ վճարելու։

Ապրիլի 8-ին Կ. Պոլսի Բերայի գերեզմանատունը զատկի տոնի էին հավաքվել մեծ թվով հայեր, որոնք գերեզմանատնից դուրս բշեցին ոստիկաններին։ Լրացուցիչ զինվորական ուժեր բերվեցին։ Ընդհարում տեղի ունեցավ, բայց ռուսական դեսպանը, նոր Սասունի հնարավորության սպառնալիքով, վաղեցրեց Բ. Դռանը և հարկադրեց զորքերը հեռացնել։ Սուլթանը այնքան էր զայրացել այս դեպքից, որ հաջորդ օրը աշխատանքից հեռացրեց պալատի բոլոր հայ ծառայողներին, այդ թվում նաև սպասավորներին ու խոհարարներին։

Մայիսի 11-ին 20 հազար հայեր միտինգի հավաքվեցին ս. Փրկիչ հիվանդանոցի բակում։ Ոստիկանությունը միջամտեց, բայց դիմադրության հանդիպելով՝ այլևս գործողությունների չդիմեց։ Ցույցին ծպտված մասնակցում էր նաև ոստիկանապետ Նազըմ փաշան։ Հաջորդ օրը, լրտեսների մատնությամբ, 50 ցուցարար ձերբակալվեց։

1895 թ. մարտին սուլթանը հատուկ իրադե հրապարակեց, որով բոլոր հայաբնակ վայրերում, այդ թվում նաև մայրաքաղաքի հայկական թաղերում, հաստատվեց շուրջօրյա պահակություն, հայերին հսկողության տակ պահելու համար։

Տրապիզոնում «Թուրք ժողովրդին կառավարություն նախապես զենք էր բաժանել և մի քանի մզկիթներում էլ բավա-

կան քանակությամբ ռազմամթերք կուտակել»։ 1895 թ. մայիսին, ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Բաբերդում, Երզնկայում և մի շարք այլ հայկական քաղաքներում կոտորածի նախապատրաստությունն արդեն ավարտված էր։

Մաթևոս Իզմիրլյան պատրիարքը մի հուշագիր կազմեց Բեռլինի կոնգրեսից հետո հայերի վիճակի վատթարացման մասին, որը 1895 թ. հունվարի 30-ին հանձնեց սուլթանին։ Վերջինս պատրիարքին ընդունեց ընդգծված սիրալիրությամբ, նրան նստեցրեց իր կողքին, գովեց, ապա ասաց. «Ես հայ ազգին շատ եմ սիրում, մոտ ժամանակներս մեծ բարիքներ եմ անելու ձեր ժողովրդին, փոխանակ ուրիշ տեղ դիմելու, համարձակ առաջարկեք, ինչ որ ցանկանում եք, և պիտի կատարեմ»[41]։

Դա սուլթանի ծննդյան օրն էր։

Սուլթանը կեղծելն ու խաբելը ոչ թե ամոթ, այլ արժանիք, հաղթանակ էր համարում։ Պատրիարքին տված «խոստումները» սուլթանը իրագործեց, միայն հակառակ իմաստով. կոտորածների նախապատրաստման գործը նոր թափ ու ծավալ ստացավ։

Սեբաստիայի հայաշատ գյուղերն ու քաղաքներն ավերակ դարձան, սպասակոր հրոսակները բացահայտ հայտարարում էին, որ հայերին թալանելու բարձրագույն հրաման ունեն։

Շապին Գարահիսարի կառավարիչ Մուստաֆա բեյը հայերին ասաց. «Մինչև վերջին շունչս պետք է աշխատեմ ձեր ազգը ոչնչացնել»։

Սեբաստիայից 1895 թ. հոկտեմբերին գրում են. «Երբ լուր ստացվեց, որ սուլթանը ընդունել է բարենորոգումների ծրագիրը, այստեղ իրարանցում սկսվեց։ Կ. Պոլսից զենք էին բերում, համիդիեների նոր գնդեր էին ստեղծվում»[42]։

Հայերի անհանգստությանը կուսակալ խալիլ բեյը պատասխանեց, որ այդ ամենը արվում է, որպեսզի բարենորոգումների ծրագրի իրագործման ժամանակ առաջացած խլրտումները ճնշվեն։ Նույնիսկ հարուստ թուրքերը հաճույքով զինվորագրվեցին։ Հայ զինագործների մոտ եղած զենքերը բռնագրավվեցին և նրանց արհեստանոցները փակվեցին։ Հայկական թաղերում պահականոցներ կառուցեցին և դրանք զինվորներով լցրեցին «հայերին պաշտպանելու» համար։ Իրականում հայերը շրջապատվեցին. թուրքերին զենք բաժանվեց, որոնց զգալի մասը հայերից խլված զենքերն էին։

Քաղաք բերվեց հազար հեծյալ և 5—6 հազար հեռակ

չերքեզ։ Գյուղերում սկսվեցին զանգվածային սպանություններ ու ավարառություններ։ Զինվորներն այդ ամենին օգնում ու քաջալերում էին։

Հոկտեմբերի 30-ին հայերը փակեցին խանութները և տնից դուրս չեկան։ Սակայն Խալիլին հաջողվեց Անգլիայի ու Ֆրանսիայի հյուպատոսների միջոցով հայոց առաջնորդին համոզել, որ ոչ մի վտանգ չկա և խանութները պետք է բացել։

Այդ ընթացքում կանոնավոր բանակի մի գունդ շրջապատեց քաղաքը, և հայերին արգելվեց քաղաքից դուրս գալ։ Սեբաստիայում արդեն կուտակվել էր մի քանի հազար զինվոր և 30—40 հազար բաշիբոզուկ։

Թուրքերը կոտորածի համար առիթ էին փնտրում, իսկ հայերը ոչ մի կերպ առիթ չէին տալիս։ Կեսօրվա աղոթքի ժամանակ մոլլան կոչ արեց ջարդել գյավուրներին և խուժանը շարժվեց շուկայի վրա։ Ով զենք չուներ, զինանոցից զենք ստացավ։

Կառավարչատանը Մեհմեդ էֆենդին թուրք սրիկաներին զինում էր և հրամայում ոչնչացնել հայերին։ Օրինակ ցույց տալու համար նա անձամբ, բոլորի ներկայությամբ, մի հայի սպանում է և ասում. «Ահա ես ձեզ օրինակ եմ տալիս, սպանելով գյավուրին այս պալատում։ Վստահ եղեք, որ կայսերական իրադե կա հայ ցեղը ոչնչացնելու»։

Կ. Պոլսից 1895 թ. փետրվարի 28-ին գրում են. «Սրանից 15 օր առաջ հանգանակություն բազմաթիվ թերթիկներ երևացին՝ ի նպաստ թշվառության ճիրանները մատնված և սուլթանական կառավարության արից ու թնդանոթներից ազատված սասունցիների... Սուլթանը հրաման է տալիս Նազըմին՝ ձերբակալելու թե՛ նպաստ հավաքողներին և թե՛ նպաստ տվող անձնավորություններին։ 170 մարդ ձերբակալվեց։ Մի քանի օր անց բոլորին արձակեցին, որպեսզի աշխարհին ցույց տան «իբր որքան առատագութ է սուլթանը, իբր Սասնո հազարավոր հայերի արյունով գինովցած անձը ինքը չէ և, իբր, շնորհիվ վեհ սուլթանի, ամեն ինչ իր օրինական ուղիով է ընթանում, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառներում»։ («Հնչակ», 1895 թ. № 4)։

Կոտորածներն սկսվեցին այն օրերին, երբ Մեծ մարդասպանը ստորագրում էր հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելու ծրագիրը։ Մի ծրագիր, որի կենսագործումը խեղդվեց հայերի արյան հեղեղի մեջ։

Սեպտեմբերի 20-ին Տրապիզոնում անհայտ անձինք կրակեցին Բահրի փաշայի և զինվորական հրամանատար Ֆերիդ փա-

շայի վրա։ Սպանության մեղքը բարդեցին հայերի վրա։ Հաջորդ օրը հայերը խանութները չբացեցին և սկսեցին պատրաստվել պաշտպանության։ Երբ առաջնորդն անհանգստացած դիմեց կուսակալին, Կադրի փաշան պատասխանեց. «Ձեզ վնասելու համար իմ մարմնի վրայով պիտի անցնեն»։ Հայերին հանգստացրին նաև հյուպատոսները։

Այդ ընթացքում շուկայի Բիթ-բազար մասում մահմեդականները զենք էին գնում, իսկ հայերին խուզարկում էին. նրանց մոտ եղած զենքերը խլելու համար։ Քաղաք բերվեցին մեծ թվով գյուղացիներ։ Հույներին ոպառնացել էին հայերին թաքցնելու համար պատժել։

Կադրին կանչեց քաղաքի երևելի հայերին ու պահանջեց հանձնել ահաբեկիչներին, այլապես «անվտանգության երաշխավորություն» տալ չի կարող։ Հայերը հրաժարվեցին։ Քաղաքում բացահայտ ջարդի նախապատրաստություն էր գնում։ Թուրք բնակչությանը ջարդի էին մղում՝ ասելով. «Հայերը, Անգլիայի հետ միացած, ուզում են մեր օսմանյան թագավորությունը կործանել, իսլամի կրոնը ջնջել։ Առաջիկա ուրբաթ օրը տեղի հայերը զինված հարձակվելու են մզկիթների վրա և կոտորելու են մուսուլմաններին։ Ուստի օր առաջ մենք շարժվենք և չթողնենք, որ անհավատ հայերը մեզ ջարդեն»։

Քաղաքում եղած օտարերկրացիները կուսակալից անվտանգության հավաստիացում պահանջեցին։ Կադրին այդ հավաստիացումը տալու հետ միասին, վախենալով, որ նրանք գործին կարող են միջամտել, սուլթանից թույլտվություն խնդրեց կոտորածն անմիջապես սկսելու համար։ Թույլտվությունը ստացվեց։

Սեպտեմբերի 24-ին հայերի տները խուզարկեցին և բոլորի զենքերը խլեցին։ Հաջորդ օրը խառը բնակչություն ունեցող թաղերում բնակվող հայերի տներին նշաններ փակցրեցին։ Զինվորներին ու խուժանին բաժանեցին երկաթյա ձողեր ու գործիքներ, որոնցով պետք է խորտակեին խանութների երկաթյա դռները։

Սեպտեմբերի 26-ին, ժամը 6-ին փողերը փչեցին, և զորքն ու խուժանը հարձակման անցավ։ Կադրին հորդորում էր, որ ամենից առաջ հարուստներին սպանեն։ Ամբողջ քաղաքում հայերը կոտորվում էին։ Կատարվածը ապստամբություն ներկայացնելու դիտավորությամբ հանձնարարված էր սպանել միայն

տղամարդկանց։ Սակայն սպանեցին նաև կանանց ու երեխաներին։ Նույն օրը հարձակման ենթարկվեցին նաև հայկական գյուղերը, մի քանի գյուղեր հրդեհվեցին։

Իրադարձությունների ականատես Ն. Պասալսկին պատմում է, որ երբ ռուսական «Ազով» նավով Տրապիզոն հասանք, հանկարծ ժամը 10-ին քաղաքի հրապարակում լսվեցին ատրճանակի պայթյուններ և շատ չանցած սկսվեց սոսկալի աղմուկ, վայնասուն և մոլեգին աղաղակներ՝ «զարկեք գյավուրներին»։ Խառնիհալանջ բազմությունը, բաղկացած թուրք նավատիներից, բեռնակիրներից, մսավաճառներից, զինված մարտինի հրացաններով, խռնվում է հրապարակ, խուժում փողոցները, հարձակվում հայերի վրա։ Դիակները շուտով սկսեցին դիզվել փողոցներում։ Սոսկալի էր փախչողներին հալածելու տեսարանը. կարծես վայրի գազանների որս լիներ։ Հարձակվողը բոլոր տարիքի թուրքն էր, զոհը հայն էր՝ ա.ր. կին, ծեր ու մանուկ։

Հրապարակը հիշեցնում էր այն արյունահեղ տեսարանները, որ մարդու երևակայության մեջ հարուցում էին Ումանի կամ Բարդուղիմեոսյան ջարդերը...

Զինվորները... իրենք էլ սկսեցին հարվածել ու թալանել հայերին»։ («Դրոշակ», 1895 թ., № 17—18)։

Տրապիզոնում ռուսական առևտրական ներկայացուցիչ Վ. Դ. Աբրաշկևիչը գրում է. «... Կոտորածը սկսվելուց 20 րոպե անց հրապարակում երևացին հատուկենտ զափթիեներ, բայց նրանք ոչ մի զինված թուրքի չձերբակալեցին, ոչ մի կերպ չփորձեցին արգելք հանդիսանալ կոտորածը շարունակելուն...

... Շատ անգամ անգին թուրքերը զինվորներին ցույց էին տալիս փախչող հային, և նրանք նշան էին բռնում ու կրակում խեղճ փախստականների վրա։

Տասնմեկ հայ, թուրքերի յաթաղանից փրկվելու հույսով, նետվեցին նավակների մեջ և նավարկելով դիմեցին դեպի ամենամոտ շոգենավը՝ ավստրիական «Վենիստը», բայց շոգենավից խկույն վեր քաշեցին սանդուղքը և կրակելով՝ դեն քշեցին փախստականներին։ Նրանք փորձեցին ապաստան գտնել ռուսական գրոշի ներքո, բայց մեր շոգենավին դեռ չհասած, այնտեղ աշխատող թուրք բանվորները հարձակվեցին այդ խեղճերի վրա, խողխողեցին ու ծովը թափեցին նրանց։ Սակայն վրա հասած նավապետի օգնականներից Ա. Ի. Կոստանտինովը և նավաստիները զսպեցին այդ սրիկաներին և ներս առան ապաստան փնտրող հայերին, որոնք ծանր վիրավորված էին գնդակներից ու յաթաղաններից»։

Պ. Աբաշկևիչը պատմում է, որ հյուպատոսարանի ճանա-

պարսին եղած հայերի բոլոր խանութները թալանված ու ավերված էին։ Նա տեսել է հայի յոթ դիակ, ոմանց գլուխը ջախջախված, ոմանց կոկորդը կտրված։ Իսկ շոգենավ վերադառնալիս փողոցում տեսել է 44 դիակ։ Հանդիպել է թուրքերի, որոնք հայերից թալանված գույքերն էին քարշ տալիս։ Նույն օրը, սեպտեմբերի 26-ի երեկոյան, սկսվեց հրդեհը, որը շարունակվեց նաև հաջորդ օրը[43]։

Թուրքերը զվարճանում էին՝ այլանդակելով հայերի դիակները։

Բաբերդի գյուղերում զոհվեց 2,5 հազար մարդ։ Երեսուն գյուղերում թալանվեց ու ավերվեց 1760 տուն, 36 եկեղեցի, թալանվեց 974 կով, 22,5 հազար ոչխար, 273 ձի, 2334 փեթակ։ 20 գյուղեր ընդհանրապես ոչնչացվեցին, երկուսը ամայացան, հինգը կրոնափոխ եղան։

Օրդույում թուրք խուժանը հարձակման անցավ սեպտեմբերի 29-ին։ Հայերը այս հարձակումը ձախողեցին։ Հաջորդ օրը պետք է կոտորած սկսվեր, բայց կայծակն ու հորդառատ անձրևը խանգարեց մոլագարներին։ Մյուս օրը ևս ջարդ տեղի չունեցավ, որովհետև Տրապիզոնի նավահանգիստ մտան ռուսական նավերը։

Որոշ ժամանակ անց լուր տարածվեց, թե Դանիել անունով մի հայ 800 հոգով հարձակվել ու ոչնչացրել է մերձակա գյուղերի մահմեդականներին։ 1500 զինվոր շտապեցին «օգնության» և սկսեցին հայերին անխնա կոտորել։

Իշխանությունները Քեմախ տարան 900 քուրդ, նրանց զինեցին մարտինի հրացաններով ու 25 հոգիանոց խմբերի բաժանելով՝ հարձակման ուղարկեցին հայկական գյուղերի վրա։

Քրդերը հայտարարում էին. «Որտեղ հայ գյուղ կա, պիտի ոչնչացնենք և հայ անունը պիտի վերացնենք։ Մեզ այդպես է պատվիրված»։ Հոկտեմբերի 20-ին քրդերն ու թուրքերը հարձակվեցին Ակնի Բինկյան գյուղի վրա։ Հայերը զենք չունեին ու փախան լեռները։ Տներն ավերվեցին, թալանվեցին, շատերը սպանվեցին։ Պղծեցին ու թալանեցին նաև եկեղեցին։ Ջորքի օգնությամբ քրդերը նույն բանը կատարեցին Ակնի նաև մյուս գյուղերում։

Տեվերիկի ու նրա գյուղերի վրա թուրքերի առաջին հարձակման ժամանակ թալանվեց 4500 ոչխար և այլ անասուններ, երկրորդ հարձակման ժամանակ սպանվեց 20 և վիրավորվեց մոտ 100 մարդ։ Բոլոր գյուղերը թալանվեցին։ Նույնիսկ ջուր խմելու ամանները տարան։

Տեվերիկում «ամեն քայլափոխի դիակ էր, վիրավորների աղեկտուր հառաչանքը, հրդեհվող տներից փախչող կանանց և երեխաների վայնասունը սիրտ էր ծակում։ Աչքովս տեսա բրոնաբարվող կանանց։ Մի կին քաջաբար դիմադրում էր մի քանի խուժանի, և հրացանի մի քանի հարվածներով գետնին տապալվեց։ 200 հոգի սպանված է, 100 տուն այրված, 10 ընտանիք բռնի կրոնափոխված։ Օրը 3—4 մարդ սովից մեռնում է։ Մի գյուղացի պատմում է. «Ձմեռ է գալիս, բայց չոր խսիր անգամ չկա, որ վրան նստենք։ Քաղցած ենք, երեխաները լաց են լինում, ողբում, հաց ուզում... գնում ենք քրդերից մուրալու»։

Երզնկայում կոտորածը տեղի ունեցավ հոկտեմբերի 9-ին, որը «Սասունից ավելի վատթար էր»։ Հարձակումը սկսվեց շուկայում և տևեց 6 ժամ։ Հայերը կոտորվեցին, իսկ շուկան թալանվեց։ Կոտորվեցին նաև գյուղերը։ Սպանվածների թիվը շուրջ հազար էր, գրեթե նույնքան էլ վիրավորներ կային։

Պաշտոնատար անձինք շուկայում բղավում էին՝ խփե՛ք գյավուրներին։ Կոտորածի օրը ոստիկանները շուկա եկած բոլոր հայերին խուզարկեցին ու զինաթափեցին։ Երբ քաղաքի մահմեդականները սկսեցին բացահայտ խոսել հայերին կոտորելու մասին, վերջիններս պատվիրակություն ուղարկեցին Զեքի փաշայի մոտ։ Սա հայերին խոստացավ, որ նրանց պաշտպանելու համար զորքեր կտեղադրի փողոցների երկայնքով։ Սակայն այդ զորքը զբաղվեց հայերի զենքերը խլելով։

Թուրք գյուղացիներին պատվիրել էին երկուշաբթի օրը շուկա գալ զենքով։ Հենց նրանք էլ շուկայում հարձակվեցին հայերի վրա ու սկսեցին կոտորել, իսկ ով կարողացավ փախչել, ընկավ զինվորների գնդակից։ Դիակների մի մասը գցեցին Եփրատը, իսկ մյուս մասը զինվորները քաղաքից հանեցին ու լցրին փոսերը։ Նույնիսկ թուրք զինվորներն էին ասում. «Մենք Սասունի կոտորածը տեսանք, հիմա էլ սա տեսանք, եթե այս բոլորը մարսենք, ուրեմն Աստված չկա»։

Բազվանի գյուղացիները ապաստանել էին եկեղեցում։ Զինվորները ներս խուժեցին ու 60 հոգու մորթոտեցին։

1895 թ. հոկտեմբերին Բաղեշից հայտնեցին. «Վերջին օրերին... անծանոթ դեմքեր էին ավելանում քաղաքում, դրանք դերվիշներ, մոլլաներ, ֆախիներ, շեյխեր և զանազան ցեղի քրդեր էին։ Թուրք ժողովուրդը բացահայտ կամ ծածուկ զինվում է...»։

Կուսակալ Էմեր բեյը որոշեց խորամանկել. նա թնդանոթ-

ների փողերը ուղղեց Թուրքական Թաղերին։ Հայերի դիմումին էմերը պատասխանեց. «Ձեր հավի փետուրի համար էլ պատասխանատու եմ»[44]։

Հաջորդ օրը առավոտից մեծ թվով Թուրքեր են լցվում մզկիթները։ Նրանք փակում են խանութները։ Հայերը ևս փակում են իրենց խանութները։ Ոստիկանը մի հայից պահանջում է խանութը չփակել և, մերժում ստանալով, ատրճանակով սպանում է նրան։ Սա ազդանշան էր։ «Մզկիթներից դուրս են թափվում Թուրք, քուրդ, մոլլա, շեյխ, սոֆթա և սկսում են անխնա կոտորել հայերին։ Սպանում են խանութներում, շուկայում, մորթում են ամեն տեղ։ Կոտորածը տարածվում է Թաղերն ու փողոցները։ Թուրքերը հարձակվում են ս. Սարգսի վարժարանի վրա և սպանում 5—12 տարեկան 120 երեխա։ Փողոցը այդ անմեղ հոգիների դիակներով է ծածկվում»։

Քաղաքում սպանվածների թիվը հասավ հազարի։

22 գյուղ ավերվեց ու հրդեհվեց, մեկ գյուղ, մահմեդականություն ընդունելով, փրկվեց։

Բաղեշի Սիզեռք գյուղում կատարվածի մասին պատմում է ականատեսը. «Հոկտեմբերի 13-ից սկսած, շեյխերի հրամանատարությամբ, բարբարոս քրդերը հարձակվեցին հայ և ասորի գյուղերի վրա։ Աչքի ընկած անձանց, շարաշար սպանելով կամ կենդանի այրելով, գյուղը լրիվ կողոպտում են... Մնացած ժողովրդից մահվան սպառնալիքով մահմեդականացում են պահանջում, ընդդիմացողներին սրախողխող են անում, իսկ մնացածներին թլպատում են։ Քահանաների գլխին սպիտակ փաթթոցներ են դնում։ Քահանաների կանանց մոլլաների կամ այլ մահմեդականների կանանց հետ են փոխանակում, որպեսզի մահմեդականացումը ոչ թե առերևույթ, այլ իրական լինի։

Եկեղեցիները վերաշինելով, աղոթարանը դեպի հարավ շուռ տալով, մզկիթների էին վերածում»[45]։

Երբ Մուշում ստացվեց Բաղեշի կոտորածների լուրը, իշխանությունները հայտարարեցին, որ մեղավորները հայերն են։ 50 հեծյալ շրջում էին հայկական թաղերում ու բղավում «Անհավատներ, այս ամենի պատճառը դուք եք»։

Կառավարիչը քաղաքի հայ և մահմեդական երևելիներին հրավիրեց ու հայտարարեց. «Երեկ կեսօրին, Բաղեշի Թուրքերի

աղոթքի ժամանակ, հայերը հարձակվել են մզկիթների վրա և լուսամուտներից ու դռներից գնդակահարել և սպանել են իսլամի հասարակությունից 90, իսկ զինվորներից՝ 30 հոգի։ Մուշում ևս հայերը պիտի հարձակվեն իսլամների վրա։ Ուստի, դուք պիտի միջոցներ ձեռնարկեք վտանգը կանխելու համար»։

Հաջի Դալիբը նոր էր վերադարձել Բաղեշից և գրգռում, դրդում էր «իսլամ հասարակությանը՝ կողոպտել ու կոտորել հայությանը...»։

Մուշի քաղաքային ժողովի անդամները դիմեցին կառավարչին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել կոտորածը կանխելու համար։ Վերջինս հավաստիացումներ տվեց, բայց միաժամանակ զինապահեստի դռները բացեց մուսուլմանների առաջ։

Քաղաք բերվեցին չերքեզներ ու քուրդ աշիրեթայետներ, նրանց հրահանգավորեցին և ուղարկեցին Թուրքական թաղերը։

Հոկտեմբերի 17-ին հայերը դիմեցին մահմեդական առաջնորդին և հայտնեցին իրենց անհանգստությունը։ Վերջինս պահանջեց, որ հայերն էլ բողոքեն, որպեսզի նպաստ բաժանող Մ. Քոլն ու դոկտոր Ռեյնոտը Սասունից հեռանան, այլապես «իսլամ հասարակությունը զինաթափ չի լինի»։

Մուշի հայերը նամակ գրեցին Սասուն ու խնդրեցին բավարարել այդ պահանջը։

Նոյեմբերի 3-ին մի քուրդ իր ատրճանակը տանում է հայ զինագործի մոտ վերանորոգելու։ Քուրդը հավաստում է, որ ատրճանակի մեջ փամփուշտ չկա, բայց երբ հայը շախմախը ձգում է, ատրճանակը կրակում է, որը դառնում է ազդանշան։ Թուրքերը հարձակվում են հայերի վրա։ Իրարանցում է սկսվում սկզբում շուկայում, ապա հայկական թաղերում։ Սպանվում են վեց, վիրավորվում 36 մարդ։

Մեկ օր առաջ բալաքցի, խութեցի և չխուրցի քրդերը հարձակվում են Վարդենիսի վրա և լրիվ թալանում։ Նույն բանը կատարվում է 12 այլ գյուղերում։

Բուլանըխում թալանվեց յոթ գյուղ։ Թալանվեցին նաև Սասունի Արգավանք, Մկրագոմ և տասը այլ գյուղեր։ Սկսվեց համաճարակը։

«Բոլոր չարագործությունն անողները համիդիե հեծելախմբերն են, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 150—400 հոգուց, որոնք, մերթ ընդ մերթ միանալով կանոնավոր զորքին, ցերեկով հարձակումներ էին գործում... Յուրաքանչյուր գյուղ թալանելը տևում է 3—4 օր։ Ձնայուծ Շաքիր փաշայի

«սպանեցեք և ապա թալանեցեք» կոչին, քրդերը ավելի շատ թալանում էին, քան սպանում։

Կառավարիչը բողոքող հայերին ուղղակի պատասխանեց. «Քրդերի հարձակման ժամանակ մի դիմադրեք, որովհետև թագավորի հրամանն է»։ («Դրոշակ», 1896 թ., № 10)։

Սեպտեմբերի 21-ին Տիգրանակերտում քաղաքի իշխանությունները հայերից պահանջեցին ստորագրել մի շնորհակալական նամակ՝ համաձայն որի հայերը շատ գոհ են կուսակալ էնիս փաշայի քաղաքականությունից։ Հայ ծախու վերնախավը համաձայնում է ստորագրել։ Այդ փաստը առաջացնում է լայն հասարակայնության զայրույթը։

Հաջորդ օրը հայկական եկեղեցիները և վարժարանները փակվում են։ Հնչում են բոլոր եկեղեցիների զանգերը։ Հայերը, խրոնված գավիթներում, երգում, ճառեր են արտասանում։

Սեպտեմբերի 25-ին քաղաքի բոլոր խանութները փակ էին։ Կազմվեցին իշխանությունների գազանությունների ու ապօրինությունների ցուցակներ։

Հուսեին անունով մեկը, մզկիթում իր դժգոհությունը արտահայտելով բարենորոգումների ծրագրի առթիվ, բղավեց. «Պետությունը գյավուրներին վեց նահանգ է տվել...» և ամբոխին կոչ արեց զենքի դիմել։

Բախում հրահրելու համար մի քանի թուրքի հայի հագուստ են հագցնում և հարձակման ուղարկում ճամբարների վրա։ Եվ ահա, նամազից հետո մզկիթներից դուրս գալով, մահմեդականները սկսում են հարձակումը։

Քաղաք է բերվում 8000 զինված զիլանցի։ Կոտորածն ու կողոպուտը չորս օր տևեց։ Իշխանություններն անտարբեր մնացին։ Ոչ մի միջամտություն։ Թուրքական թաղերում գտնվող հայերի տները հրդեհվեցին։ Նույնիսկ հյուպատոսարանը պաշտպանող զինվորները «փողոցներում հանդիպած հայերին ջարդելու... պարտականությունների մեջ բնավ չթերացան, մի բան, որ կարող է վկայել նույն ինքը՝ հյուպատոսը, որ ականատես էր իր բնակարանի առջև փողոցում տեղի ունեցած նմանօրինակ տեսարաններին...»[46]։

Ժանդարմների փոխհրամանատար Ազամեթ փաշան շրջում էր քաղաքում ու կոչ անում. «Ձավակներս, անհավատներին

ջարդեցե՛ք։ Նրանց ունեցվածքը ձեզ հալալ է»։ Նա ինքն էր կոտորելու օրինակ ցույց տալիս։ Ջորքը մեծ եռանդ դրսևորեց խանութներն ու պահեստները թալանելու գործում։ Հայերին՝ մեծ թե փոքր, ամենուրեք սպանում էին։ Մի կնոջ սպանելուց հետո նրա գրկից վերցրին երեք ամսական երեխային ու գցեցին մսաղացի մեջ։ Մի հացագործի իր աշակերտների հետ շպրտեցին հնոցն ու այրեցին։ Նույն բանն էր կատարվում նաև գյուղերում։

Երեկոյան ժամը 11-ին քաղաքի բերդից փող հնչեց։ Խուժանը փախավ շուկայից։ Քիչ անց շուկան հրդեհվեց։ Դա նպատակ ուներ թաքցնելու կատարված վայրագությունները, «մոխիրների մեջ թաղելու սպանված հազարավոր քրիստոնյաների մարմինները»։

Գիշերվա ժամը 5-ին Էնիս փաշան Ազամեթ և Ջամիլ փաշաների հետ մտան Շիֆթե-խան իջևանատունը և զորքին հրամայեցին սվինահար անել հայերին։ Դիակները գցեցին շուկայի հրդեհի բոցերի մեջ։ Երբ փաշաները զբաղված էին ավարը բաժանելով, մի թուրդ դուռը բացեց ու բղավեց. «Թագավորը հրամայել է, որ մենք կոտորենք գյավուրներին և ավար վերցնենք նրանց ողջ ունեցվածքը... մինչդեռ դուք եք տիրանում ավարին»։ Հանդուգն թուրդը կյանքով վճարեց իր խոսքերի համար։ Այդ գիշեր թուրքական թաղերի բոլոր տներում ավար էին բաժանում։

Շատ հայեր, վտանգից խույս տալով, թաքնվել էին եկեղեցիներում։ Շաբաթ առավոտյան զինվորները, ոստիկաններն ու խուժանը հարձակվեցին ս. Սարգիս թաղի վրա։ Նրանց հետ էին նաև թուրք կանայք, որոնք ոգևորում էին մարդասպանները։

Քաղաքի բոլոր 12 մզկիթների մինարեթներին զինվորներ էին բարձրացել և կրակում էին այն հայերի վրա, ովքեր տանիքներով փախչում էին։

Ս. Սարգիս եկեղեցում ապաստանել էր 567 մարդ։ Խուժանը ներս մտավ ու, բացի հինգ գեղեցիկ աղջիկներից, բոլորին կոտորեց։

Թուրքերը նույն օրը հարձակվեցին նաև ս. Կիրակոս մեծ թաղի վրա, կոտորեցին ու թալանեցին։ Փրկվածները ապաստանեցին Ֆրանսիայի հյուպատոս Մ. Մեյրեի տանը։

Մեծ մզկիթի մոտ գտնվող մսի խանութի պատից կախել էին 4—7 տարեկան չորսական տղայի ու աղջկա մարմիններ։

Դիարբեքիրում սպանվեց 3,5 հազար մարդ, որոնց մի մասի

դիակները քաղաքի պարսպից դուրս դիզեցին և երեք օր անց այրեցին։

Հոկտեմբերի 22-ին նահանգի 40—50 հայ գյուղեր ծխում էին. ամենամեծ գյուղից հազիվ 40 մարդ ազատվեց, իսկ Ալիբինոր գյուղից՝ ոչ մեկը։

Կոտորածներից վեց օր անց իշխանությունները հրապարակավ աճուրդի հանեցին հայերից կողոպտված իրերը՝ նրանց գնի 10 տոկոսի չափով։ Հինգ օր տևեց այդ վաճառքը։

Իրենց բարբարոսությունների հետքերը թաքցնելու համար այրված գյուղատեղերը հերկվում էին։

Գյուղերում զոհվեց 10 հազար մարդ։ Անօթևան և որբ մնաց 4—5 հարյուր երեխա, 800—900 որբևայրի կին։ Նյութական վնասը կազմեց 2 միլիոն ոսկի։

Խիզանի հայությունը կոտորվեց հոկտեմբերի 14-ին։ Տեղի կայմակամը, Պոլսից հրահանգ ստանալով, շեյխերին կոչ արեց կատարել վեհափառ սուլթանի կամքը։ Դրանից հետո քրդերը հեղեղի նման թափվեցին այդ գավառի վրա և կոտորեցին անզեն ժողովրդին, իսկ կենդանի մնացածներին բռնի կրոնափոխեցին։

Հային բռնությամբ հարկադրում են սպանել իր եղբորը կամ հորեղբորը և կնության վերցնել նրանց կանանց կամ աղջիկներին, ստիպում են հրապարակավ զուգավորվել արյունակից ազգականների հետ, որը նշանակում է, թե «հայը դնի՝ եկավ»։

Կայմակամը քրդերին հրաման էր տվել. «15 տարեկանից փոքրերին չկոտորեք, իսկ հասակավորներին նախ պետք է թուրքացնել, ապա սպանել, որպեսզի նրանց որդիները, իրենց հոր թուրքական գերեզմանը տեսնելով, այլևս չհիշեն կեղտոտ հայությունը»։

Սպարկերտից 1000 երիտասարդ, ձյունը ճեղքելով, անցնում են Մոկս, իսկ մյուս գյուղացիները ոչնչացվում կամ մահմեդականացվում են։ 14 հազար հայից 4 հազարը կոտորվում է, 2000-ը կարողանում է փախչել, իսկ 8000-ը մահմեդականություն է ընդունում։

Ղմշկածագի գյուղերի վրա հարձակումը սկսվեց հոկտեմբերի 15-ին։ Վաղուանից տղամարդկանց խաբեությամբ գյուղից հանեցին ու բոլորին սպանեցին։ 1000 թվով հայերի մահմեդականացրին։ Եկեղեցու «զանգակն ու զանգակատունը խորտակեցին, խորանն ու խաչկալը ջախջախեցին, վանքի քարը փշրեցին, մինչև իսկ հատակի սալաքարերը քանդելով, վերցրին տարան»։

* *Հավատ*

Ռշտունիքի Փայխներ գյուղը 15 օր ջարդարարներին դիմադրեց և հանձնվեց, երբ փամփուշտները վերջացան։

Աղբակի 28 գյուղեր աղբակույտի վերածվեցին, թալանվեց 11,2 հազար ոչխար, 500 գոմեշ, 1200 կով և եզ։ Հատկապես դաժան էր գործում մազրիկ ցեղի ցեղապետ Շարաֆ բեյը։

Խիզանի ս. Խաչ վանքի վանահայր Սահակ վարդապետը 20 հոգով երկար ժամանակ պաշտպանում էր վանքը և երբ, ի վերջո, վանքը գրավվեց, նրան մորթազերծ արեցին, մաշկի մեջ հարդ լցրին ու կախեցին ծառից։

Խարբերդի գյուղերը ևս կոտորվեցին և մոխրակույտի վերածվեցին։

Միայն Հուսեյնիկ գյուղում սպանվեց շուրջ 300 հոգի։

Այնթափում կոտորածը սկսվեց նոյեմբերի 16-ին և տևեց երեք օր։ Սպանվեց 500 մարդ, այրվեց 3500 տուն։ Քաղաքը լրիվ թալանվեց, մեծ թվով մարդիկ բանտարկվեցին։ Կոտորածներին մասնակցեց նաև զորքը։ Էշի վրա էգ շուն էին նստեցրել, պտտում էին փողոցներով ու բղավում՝ «Հայոց տեր Անգլիայի թագուհի, շուտ հասիր և գյավուրներին ազատիր»։

Նոյեմբերի 3-ին, Մարզվանում, փողերի կանչից հետո թուրքերը հարձակման անցան ու կոտորեցին հայերին։ Քաղաքին հասցված վնասը կազմեց 100 հազար ոսկի։

Ամասիայում, նոյեմբերի 15-ին մոտ 100 հայ սպանվեց։ Կեսարիայում, նոյեմբերի 18-ին, «հազարավոր թուրքեր, մոլեռանդ ու բիրտ, թափվում են փողոցները՝ սրերով, ատրճանակներով, բահերով ու կացիններով և կատաղի հարձակում են սկսում շուկայի ու հայկական թաղերի վրա, անխնա ջարդելով... Բաղնիքում լցվում ու սպանվում են տարբեր սեռի ու տարիքի շուրջ 250 հայ»։ Հայերի տների թալանին մասնակցում էին թուրք կանայք։ Նրանք «բաց երեսով գնում գալիս էին՝ շարունակ կողոպուտը փոխադրելով»։ Հաջորդ օրը կոտորածը դադարեց, իսկ կողոպուտը դեռ երկար շարունակվեց։ 1000—2000 հոգի հարձակվում է Մայր տաճարի վրա, որտեղ հարյուրավոր հայեր էին ապաստանել։ Խուժանը սկսեց տաճարի պատուհաններից ներս կրակել։ Փորձեցին տաճարի դուռը կոտրել, չհաջողվեց։ Հայերը 30 օր փակված մնացին տաճարում։

Մաագործների խանութներում հայերի մարմինների մասեր էին կախել ու վայրագ քրքիջով բղավում էին. «Մսի օխան 80 փարա, իսկ գլուխը 10 փարա»։

Այնթափում կողոպտվեց 1500 խանութ, 500 տուն, սպանվեց ու անհետ

կորավ 5800 հոգի։ Զանազան զրպարտություններով՝ մեծ թվով մարդիկ բանտ նետվեցին։ Նախճիրը հատկապես սարսափելի էր Մարաշում, Զեյթունում և Եդեսիայում։ Մարաշում կոտորվեց 820, իսկ Եդեսիայում 250 հոգի։ Կիլիկիայի քաղաքների միջև կապը խզված էր, նամակները բացվում ու քննվում էին։ Միայն Ուրֆայում կոտորվեց 3000 մարդ։

Այնթափի վնասը կազմեց 400 հազար ոսկի։ 1000 աղջիկներ առևանգվեցին ու Մուսուլում վաճառվեցին յուրաքանչյուրը 50 փարայով։

Արաբկիրում սպանվեց 2000 մարդ։ Ութ օր իշխանությունները նախապատրաստվում էին կոտորածի, զորքերի զեկավարությունը հանձնարարվեց հայատյաց արյունարբուների, խաբեությամբ հավաքեցին հայերի մոտ եղած զենքերը, քաղաքը շրջապատվեց, փողոցներում պարեկներ նշանակվեցին։

Հոկտեմբերի 25-ի երեկոյան հնչեցին զինվորական փողերը։ 20 հազար զորք ու խուժան ներխուժեցին քաղաք։ Խաբված հայերը կոտորվեցին գրեթե առանց դիմադրության։ Միայն հայկական թաղերում հաջողվեց դիմադրություն կազմակերպել ու երեք օր կասեցնել թշնամու առաջխաղացումը։

Խուժանը ետ է քաշվում։ Հարձակման են անցնում զորքն ու ոստիկանությունը։ Քաղաքի փողոցներում «մարդկային այլանդակված դիակները բլուրներ են կազմում, տեղ-տեղ մարդկային կարմիր արյունը առու կազմած գետինն էր ներկում... Քաղաքը բոցերի անհուն օվկիանոս էր դարձել... Ավերում, թալանում, քանդում էին... Փողոցներում՝ անտեր ու մոլորված երեխաներ։ Մի տեղ երեխան սողում է իր մոր արյունլվա դիակի վրա, մի այլ տեղ հայրը իր զավակների աչքի առաջ կացնահար է լինում... Թուրքերի ձեռքը չընկնելու համար շատ կանայք ինքնասպանություն են գործում»[47]:

Կոտորածն ու հրդեհը Արաբկիրում տևեցին 15 օր։ Հայերի 2 հազար տնից կանգուն մնաց 200-ը, բոլոր դպրոցներն ու եկեղեցիները մոխրակույտի վերածվեցին։ Բանտարկյալների միջոցով թաղում էին փողոցներում թափված դիակները և ապա նրանց ևս սպանում։

Հասարակայնությանը խաբելու համար սուլթանը Տրապիզոն ու Կարին է ուղարկում մուշիր Շաքիր փաշային՝ «հայերի դանգատները լսելու և ընդառաջելու»։*

* *Մարշալ*

Կարինում կոտորածը սկսվեց հոկտեմբերի 18-ին։ Պատմում է ականատեսը. «Ես դպրոցում էի և վերևից տեսա, որ հարևան փողոցներով անընդհատ վազում էին լազերը, չերքեզները, թուրքերը, թուրքմենները՝ բեռնավորված թալանով։

Զինվորներին հատուկ հրահանգ էր տրված՝ կոտորել հայերին... Զորքն էր խուժանի համար ճանապարհ հարթում»։ Կոտորածին մասնակցում էր 3000 զինվոր։

Լուսնկա գիշեր էր, և կոտորածը շարունակվեց մինչև լուսաբաց։ Այդ օրը սպանվեց 520 մարդ, մեծ թվով վիրավորներ կային[48]։

Տրապիզոնի հայությանը կոտորելուց հետո լազերը գալիս են, շրջապատում Կարինի գյուղերն ու թալանում։

Կարին բերվեցին մեծ թվով թուրք գյուղացիներ։

Կոտորածից հետո Կարինը ավերակ էր դարձել։ Փողոցներում շրջող զինվորներն ու դաղաշները պարծենում էին, թե ինչպես մոր գրկից խլեցին երեխային և անցկացրին սրի ծայրին։ Թե ինչպես մի գնդակով տապալեցին խաղաղ աշխատանքով զբաղված արհեստավորին։

Կոտորածից մի քանի օր անց պարզվեց, որ քաղաքը զրկված է ամեն ինչից՝ սկսած վարսավիրից մինչև բժիշկը։ Թուրքերի ու հայերի միջև այնպիսի անջրպետ առաջացավ, որ նրանց համատեղ գործունեությունը երկար ժամանակ անհնար դարձավ։

Եդեսիայում իշխանությունները բաշիբոզուկներին զինեցին և ուղարկեցին հայկական թաղերի վրա։ Բայց հայերը երկար դիմադրեցին և նրանց թույլ չտվեցին առաջանալ։ Հայկական թաղերը շրջափակվեցին։ Դրսում մնացած հայերը, մասնավորապես ջրաղացներում բանող պանդուխտ սասունցիները, ինչպես նաև այգիներում աշխատող կանայք, սպանվեցին։

Հասան փաշան հավաքեց քաղաքի հայ երևելիներին ու պահանջեց հանձնել 1800 մարտինի հրացան և, մերժում ստանալով, բոլորին բանտ նետեց ու թնդանոթներն ուղղեց հայոց թաղերի վրա։ Հայերը հարկադրված հանձնեցին զենքերը։ Նոյեմբերի 21-ի գիշերը սկսվեց կոտորածը։

«Ամբողջ Վասպուրականը դարձավ սպանության, թալանի և սոսկալի չարագործությունների ասպարեզ։ Հայերին ջնջելու սուլթանի ծրագիրը սկսեց գործադրվել ամենայն ճշտությամբ... բազմաթիվ գյուղեր հրդեհվեցին»։ Քրդերը հայերից թալանածը ազատ վաճառում են Խոյ և Սալմաստ գավառներում։ Կա-

ռավարությունը ձգտում է պարսիկներին հանել հայերի դեմ՝ գրգռելով նրանց կրոնական մոլեռանդությունը։ Սպանում էին մոլլաներին ու մեղքը բարդում հայերի վրա։

Որոշ տեղերում հայերը, հատկապես հայդուկները, դիմադրեցին։ Վասպուրականում գործում էին մի քանի հայդուկային խմբեր։ Դրանցից մեկի մասին մի քուրդ պատմում է. «Մենք 2000 հոգի էինք ... Հայդուկները 70 հոգուց ավելի էին... Մեզ հաջողվեց նրանց իջեցնել լեռներից ու գցել բաց դաշտ։ Կարծում էինք, թե այժմ նրանք փրկության ելք չունեն։ Բայց, ի զարմանս մեզ, ֆիդայիները, հրաձգության ժամանակ, սառնասրտորեն թաշկինակները վեր պարզեցին և սկսեցին պարել «Գլոր պարեր»։ Դադարեցրինք հրաձգությունը և ապշած դիտում էինք այդ արտասովոր ներկայացումը»[49]։

Վանում, հոկտեմբերի 12-ին շշուկներ տարածվեցին, որ իշխանությունները մահմեդականներին գաղտնի զենք են բաժանում։ «Սուլթանի բարենպաստ հանձնաժողովը մեկ ամիս է ձգձգում է, թե գործում է, բայց իրականում գաղտնի դավեր է լարում»։ Ամեն օր սպանություններ են կատարվում։ Քաղաքում հավաքվել էր 4000 հոգուց կազմված զորք։ Թալանված գյուղերից քաղաք էր լցվել 3000 հայ։ Այգեստանում 35 պահականոց կար, հայերը չորս կողմից շրջափակված էին։

Անգլիական հյուպատոսը «կատարյալ թուրք ոստիկանի դեր էր կատարում»։ Նա հրապարակում դաժան ծեծի ենթարկեց գյուղերից մազապուրծ եղածների ղեկավարներին, պահանջելով ետ գնալ գյուղերը։ Նա հայերին առաջարկեց չնչին գներով իրենց հողերը վաճառել և վերաբնակվել Բաբերդում։

Հայերը մերժեցին, իսկ Սպարկերտի Շաշոն ասաց. «Մենք կառավարությանը չենք հավատում, եթե դուք քրդերի ու թուրքերի նկատմամբ այդքան հավատ ունեք, հագեք քեզագախիկը, դրեք իմ քոլոզը և երկու ժամ քաղաքից հեռացեք։ Եթե առողջ ետ եկաք և ձեր գլուխը ձեր վրա մնաց, մենք ամենքս կվազենք մեր ավերակ տները»։

Հյուպատոսը կատարում էր կուսակալի կամքը, որը գյուղացիներին ուզում էր Վանից դուրս հանել, քաղաքում հայերի թիվը փոքրացնելու և նրանց կոտորածը հեշտացնելու համար։ («Դրոշակ», 1896 թ., № 11)։

«Երկար ժամանակ Վան քաղաքը,— գրում է ականատեսը,— որևէ վայրագությունից զերծ էր։ Մինչև այն պահը, երբ նահանգի կուսակալի և սուլթանի երկու թիկնապահների՝ Սաաեդդին և Շեմզին փաշաների ստորագրությամբ մի պաշտոնական հեռագ-

Քեռի, Համազասպ, Վարդան (ձախից աջ)

դայիներ

Նեքուզ ՕՁիկ

Նիկոլ Դումանն իր խմբով

Սպանդարյանի Սերոբը իր որդիների հետ

Սոսե. Սերոբի կինը

Եղսա. Գևորգի կինը

Վազգեն Տերոյան

Զորապետ Վազգենն իր խմբով

Վարդան

Փայլակ. Ռուբեն Դերձակյան

Սմբատ

Կայծակի խումբը

Վարդան Շաքրազ

Զուգամատ

էր ծանուցեց, որ հայ հեղափոխականները փորձում են ամսի 15-ին խառնակություն առաջացնել Վանում»[50]։

Իրադարձություններն սկսվեցին հետևյալ կերպ. Զարուհի անունով մի օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու ձերբակալեցին։ Թուրքերին պատրվակ էր պետք լրենց ծրագիրն իրականացնելու։

Քրդերը քաղաք լցվեցին։ Հունիսի 1-ին ջուկան փակվեց։ Հաջորդ օրը գիշերապահ զորքերը Այգեստանի հանդում ընդհարվեցին հայերի հետ։ Հնչեց օգնություն կանչող փողը, և հավաքվեցին մեծ ուժեր։ Ընդհարման ժամանակ երկու զինվոր սպանվեց, որոնց դիակները պտտեցրին փողոցներով՝ խուժանին ավելի գրգռելու համար։

Հունիսի 3-ի կեսօրին կռիվն սկսվեց։ Թուրքական թաղերում հայերի տները հրդեհեցին, տղամարդկանց սպանեցին։

Հայկական թաղամասերը ինքնապաշտպանություն կազմակերպեցին։ Հիմնական ճակատային ամրություններն էին հյուսիսում՝ Ծաև թաղը, որի տների պատերը ծակել ու դիրքերի էին վերածել, հարավում՝ Թութունջյանների տունը, Արիջյանների թաղը, Նախրի փողոցը, արևմուտքում՝ Սահակ բեյի տունը։

Սասունի և Սղերդի կոտորածների կազմակերպիչներից մեկը՝ Հալիմ էֆենդին, զորքերի գլուխն անցած, Արարուց հրապարակից հասնում է Կլոր-Դար թաղը, մոտենում է հայերի տներին ու կրակ բացում։ Դա կոտորած սկսելու ազդանշան էր։ Եվ թուրք խուժանը հարձակման անցավ։ Նրան միացան 7—10 հազար քրդեր և համիդիներ։

Վանեցիները պաշտպանվում էին հմտորեն։ Թուրքերի հարձակումները ետ մղվեցին։ Ջենքով հաղթել չկարողանալով, վալին դիմեց Անգլիայի հյուպատոսին, որը վեց տերությունների անունից գնաց հայերի հետ բանակցելու։ Հայերը մերժեցին ու առաջարկեցին, որ բանակցություններին մասնակցեն նաև Ռուսաստանի ու Պարսկաստանի ներկայացուցիչները։ Հյուպատոսները պահանջեցին անձնատուր լինել, զենքերը, ինչպես նաև գլխավոր դեմքերից 10 հոգու հանձնել կառավարությանը։ Պատասխան տալու համար հայերը ժամանակ պահանջեցին։ Սակայն, առանց պատասխանի սպասելու, հաջորդ օրը խոսեցին թնդանոթները։ Ծանր մարտեր գնացին, չկարողանալով դիմադրել հայերի գրոհին, թուրքերը թողեցին թնդանոթներն ու փա-

խան։ Հայերը մինչև մութն ընկնելը կռվեցին և ապա հեռացան քաղաքից։

Այդ ընթացքում անգլիական հյուպատոսը միսիոներների մոտ ապաստանած հայերից ջոկում էր արական սեռի ներկայացուցիչներին ու հանձնում իշխանություններին։

Հայկական թաղերը թալանվեցին։ Այդեստանում կողոպտվեց 3000 և հրդեհվեց 600 տուն, 3 եկեղեցի, դպրոցներ։ Վնասը կազմեց մեկ միլիոն ոսկի։ Հալիմ էֆենդին Այգեստանի փողոցներում քաջալերում էր թուրքերին. «Զավակներս, նախ կոտորեք, կողոպուտը թող մնա վերջում»։

Հունիսի 17-ին Սաաեդդինը 500—600 զինվորով, նույնքան էլ համիդիեներով ու թնդանոթներով, շրջապատեց Վարագա լեռները՝ հայդուկներին բռնելու համար։ Սակայն վերջիններն արդեն հեռացել էին։ Թուրքերը այրեցին ս. Գրիգորի վանքը, թալանեցին ու հեռացան։

Հանրաճանաչ հայդուկ Պետոն գրում է, որ մայիսի 17-ից կառավարությունը խուզարկություններ էր կատարում։ Գիշերը շրջապատեցին Տաճիկ-Ամեմյանի փողոցի 70 տները։ 25 տուն խուզարկվեց, բայց ոչինչ չգտան։

Մի այլ հայդուկապետ՝ Վազգենը, գրում է, որ Վանի կռիվը սկսվեց հունիսի 8-ին և շարունակվեց 12 օր։ Կառավարությունը հայերի դեմ սկզբում գործում էր խուժանի միջոցով և զորքերի գաղտնի մասնակցությամբ, իսկ հունիսի 5—8-ը՝ բացահայտ»։

Կոտորածների ժամանակ, ծանր հրետանու օգտագործումը թաքցնելու նպատակով, ոստիկան-հյուպատոսն ու ամերիկացի միսիոներ Ռեյնոսը պահանջեցին հավաքել թնդանոթների օգտագործված արկերը։ Դրանց դիմաց նույնիսկ դրամ էին վճարում։

Հասարակական կարծիքը ապակողմնորոշելու համար Բ. Դուռը «Բեռլիներ տագեբլատում» տպագրեց հետևյալ «լուրը». «Վանում մեծ խռովություններ են տեղի ունեցել։ Ահագին թվով զինված հայեր (ըստ լուրերի մոտ 6000 հոգի) հարձակվել են թուրքական բերդապահ զորքերի վրա և ծանր կորուստներ պատճառել։ Վալին մեծ զորքեր է պահանջել՝ ապստամբությունը ճնշելու համար»։

Համիդը Վիեննայի «Պոլիտիկ կորեսպոնդենցին» ուղարկած կիսապաշտոնական հեռագրում հայերին ներկայացնում է որպես ավազակների, նրանց է վերագրում այն վայրենությունները, որ զորքերն են կատարել Վասպուրականում։

Աթենքի «Կոմբան» գրեց. «Հայ ապստամբների շարժումը Վասպուրականում մեծ ուրախություն է պատճառել դժբախտ ժողովրդին, որն այդքան տարիներ հեծում է «մահիկի» բռնապետության տակ»։

«Բաբել» ռազմանավը Զմյուռնիայից զորքեր էր տեղափոխում Զեյթուն ու Մարաշ։ Հայերը նախահարձակ եղան և գրավեցին Զյուքար-Հիսարը։ Թուրքական մի զորամաս անձնատուր եղավ։ Զեյթունի զորանոցն ու ստրատեգիական բոլոր կարևոր կետերը հայերի ձեռքն անցան։

Զեյթունի և Ալդերենի գավառների հայերի ու թուրքերի միջև խոշոր բախում տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին։

Մուստաֆա փաշայի 15 հազարանոց բանակը երկյուղեց մարտի մեջ մտնել և ետ քաշվեց։ Հայերը տիրեցին մի շարք բնակավայրերի ու շարժվեցին դեպի Ադանա։

Զեյթունի զորանոցը գրավելով՝ հայերը «թշնամուն մարդասիրության դաս տվեցին», գերիներն հետ վարվելով բացառիկ դթասրտությամբ։

Համաձայն կառավարության կողմից դեկտեմբերի 17-ին դեսպաններին ներկայացրած տեղեկագրի «Զեյթունի ապըստամբները սպանել էին 266 մուսուլման...»։ Դեկտեմբերի 19-ին Զեյթունը շրջապատվեց. դեկտեմբերի 21-ին զեյթունցիները հակահարձակման անցան ու թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին։

Նույն օրը «Ֆրանկֆուրտ գազեթը» գրեց, որ Զեյթունում պաշարված թուրք զորքը (400 հոգի) սրի է քաշված։

Դեկտեմբերի 31-ին Բ. Դուռը ընդունեց վեց պետությունների ներկայացուցիչների առաջարկը՝ Զեյթուն գնալու և հայերի հետ բանակցելու մասին։ Հունվարի 2-ին հայերը այդ տերությունների ներկայացուցիչներից պահանջեցին, որ Զեյթունի կառավարիչ նշանակվի հայերից։ Հունվարի 15-ին «հյուպատոսները հրահանգ ստացան բանակցությունների ժամանակ գործել համաձայն Բ. Դռան պահանջների», ըստ որի, ապստամբների ղեկավարները պետք է հանձնվեն իշխանություններին։

Բանակցությունների ընթացքի վրա ազդելու համար թուրքական հրամանատարությունը Կեսարիայի վրայով 1000 հոգի ուղարկեց՝ Զեյթունը հյուսիսային կողմից ևս պաշարելու համար։

Ֆրանսիական «Տեմպը» գրեց. «... Տաճկական զորքը Զեյ-

թունի դեմ մղած մարտում լիակատար պարտություն է կրել։ Մարաշի բողոքական եկեղեցիները լիքն են վիրավոր զինվորներով, որոնց խնամում են միսիոներները»։

Ըստ թուրքական աղբյուրների՝ Զեյթունում 6000 թուրք զինվոր սպանվեց։

Զեյթունցիների շրջանում ևս համաճարակային հիվանդություններ սկսվեցին։ Սպառնում էր սովը։ Դրսի աշխարհի հետ կապը կտրված էր։

Զեյթունում լինելուց հետո հյուպատոսները հայտնեցին, որ 8000 հայեր սոսկալի չքավոր ու թշվառ վիճակում են։ Նրանք նույնիսկ հանգանակություն կազմակերպեցին հօգուտ Զեյթունի։

Զեյթունի հայերից կռվում զոհվեց 120, իսկ սովից՝ 8000 մարդ։

«Ֆրանսիական հյուպատոսը 4000 դուրուշով Մարաշի 1000 գյուղացու կաթոլիկ դարձրեց»։ («Դրոշակ», 1896 թ., № 19)։

Փետրվարին զեյթունցիները համաձայնեցին հանձնել զենքերը՝ պայմանով, որ ամրոցը վերականգնվի կառավարության հաշվին։ Բ. Դուռը զեյթունցիներին ներում էր խոստանում, եթե նրանք, զենքերից բացի, հանձնեն իրենց ղեկավարներին՝ Պապիկին ու Ասսին։

Հայերն այդ պայմանը մերժեցին։ Իսկ զենքերը համաձայնեցին հանձնել, եթե զինաթափվեին նաև Զեյթունի և Այնթափի մահմեդականները և հարկերը թեթևացնեին։

Սուլթանական կառավարությունը հարկադրված ընդունեց զեյթունցիների պահանջները։ Սակայն թուրքերը իրենց հատուկ «մոռացկոտությամբ» շատ շուտով դրժեցին տված խոստումները և սկսեցին Զեյթունում հարկ հավաքել ու զորանոց կառուցել։

Զեյթունի հերոսամարտը լայն արձագանք գտավ եվրոպական մամուլում։

Ռեյտեր գործակալությունը 1895 թ. հոկտեմբերի 8-ին հայտնեց. «Թուրքական տեղեկությունների համաձայն, Զեյթուն լեռնային գավառի հայերը, որոնք շատ են հիշեցնում Սասունի բնակիչներին, նույնպես մտադիր են ապստամբել իշխանությունների դեմ։ Ասում են, թե լավ զինված են»։

Զեյթունի ինքնապաշտպանական կռիվները հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական էջերից են։ 1895—96 թվերին օսմանյան բռնատիրության վարած հայաջինջ քաղաքականության դեմ արևմտահայության տարբեր հատվածների մղած պայքարում Զեյթունի հերոսամարտը առանձնանում է ոչ

միայն իր մասշտաբներով, ռազմավարական բարձր մակարդակով, այլ նաև՝ արդյունքներով։ Այդ հերոսամարտում հայերը ռազմական առումով հաղթանակ տարան և այն կարողացան վավերացնել նաև համաձայնագրով։

Այլ բան է, որ այդ ռազմական ու դիվանագիտական հաղթանակների պտուղները նրանք երկար չվայելեցին։ Ինչպես միշտ, սուլթանն ու նրա կառավարությունը անբարո գտնվեցին։

Կոտորածները իրենց արյունոտ երախի մեջ էին առնում նորանոր հայաբնակ շրջաններ։

Ագիսար (Պոլսի մոտ) գյուղում ջարդը սկսվեց սեպտեմբերի 27-ին։ Ծուկայի օր էր, այլ վայրերից այստեղ մեծ թվով մարդիկ էին հավաքվել։ Ոստիկանների առաջնորդությամբ խուժանը հարձակվեց շուկայի վրա։ Հայերին կոտորեցին ու թալանեցին։ Դիակները լցրեցին հորերը։

Սեպտեմբերի 18-ին Պոլսում հայ ցուցարարները շարժվում են դեպի Բ. Դուռը։ Սուլթանին անընդհատ լուր էին հայտնում ցուցարարների շարժման մասին։ Նրա թիկնապահներից մեկը գալիս է ցուցարարների մոտ և մի նամակ հանձնելով ոստիկանության հրամանատար Սերվեթ բեյին, ասում է. «Խփեք»։

Ոստիկանները կրակ են բացում։ Նույն ժամանակ գնդակահար տապալվում է նաև Սերվեթը։ Սկսվում է կոտորածը, որը շուտով տարածվեց ողջ քաղաքում։

Սուլթանները*, կատաղության փրփուրը բերաններին, ամբոխին կոչ էին անում անխնա կոտորել հայերին։ Նրանցից մեկը նույնիսկ փորձեց սպանված հայի արյունը խմել։

Բոլոր հայկական թաղերը վնասվեցին։ Փողոցներում օրը ցերեկով սպանում էին։ Բանտերում ոչնչացնում էին խոշտանգելով։

Ֆրանսիական դեսպանատան թարգման Ռունեն անձամբ տեսել էր, թե ոստիկանատան բակում ինչպես ծեծելով սպանել են վեց հայի։

Թաղապետարանի մթերանոցներից եկած սայլերը կազմ ու պատրաստ սպասում էին դիակները ծովափ տեղափոխելուն, որտեղից լաստերը դրանք տանում թափում էին բաց ծով։

Սուեսիայի հայ գյուղերը պաշարման մեջ էին և, հեղափոխական փնտրելու նպատակով, մի քանի անգամ խուզարկվեցին։

* Թուրք հոգևորական

Իշխանությունները լուր տարածեցին, թե ամերիկացիները մտադրվել են ծովից հարձակում գործել։ Թուրք գյուղացիությունը զանգվածաբար փախավ Անտիոք։ Այստեղ նրանց դինելով՝ ուղարկեցին հայերի ու հույների վրա, որոնց արգելված էր քաղաքից դուրս գալ։ Քաղաք են բերվում նաև լրացուցիչ զինվորական ուժեր, որոնք թնդանոթներն ուղղեցին հայկական թաղերի ու գյուղերի վրա։ Մալաթիա քաղաք էր բերվել ավելի քան 20 հազար բաշիբոզուկ, որը շուկայում կոտորածը սկսեց հոկտեմբերի 22-ին։ Շուկան թալանվեց, որից հետո հարձակում սկսվեց հայկական թաղերի վրա։ Նորաշեն եկեղեցում, Պոնջուգրլյանի, Չեքեմենցի և կաթոլիկների թաղերում հայերն ուժեղ դիմադրություն ցույց տվին։ Եկեղեցին չորս օր դիմադրեց և այդպես էլ չհանձնվեց։ Մալաթիայում սպանվեց 2,5 հազար մարդ։

Կենճի գավառի 16 հայկական գյուղեր կոտորվեցին ու ավերվեցին, իսկ կենդանի մնացածները բռնի մահմեդականացվեցին։

Բալու քաղաքում մեծ թվով հայեր սպանվեցին, մնացածները, իրենց յոթ քահանաներով բռնի թլպատվեցին ու մահմեդականացվեցին։

Մակաբայեցիների վանքում ապաստանած 800 հայերը սպանվեցին։

Քրդերը բացահայտ հայտարարում էին. «Սուլթանի հրամանով է... և, եթե ճշտությամբ կատարեինք այդ հրամանը, հիմա Մշո երկրում մեն մի հայ էլ չէր մնա»։

Հայերը, փրկվելու մտադրությամբ, տեղից տեղ էին գաղթում։ Բայց օսմանյան տերության մեջ չկար մի անկյուն, ուր յաթաղանը չգործեր։ Արևմտյան Հայաստանը մահվան թագավորության էր վերածվել։ Շուրջբոլորը՝ արյան լճեր, անթաղ դիակներ, մարդկային մսով հագեցած շներ... Աշխարհի կողմից անտեսված մի քաղաքակիրթ ժողովուրդ մարում էր իր իսկ օջրանում։

Բոլոր փաստերը վկայում էին, որ կոտորածների առաջատար ուժը բանակն էր։ Առանց զորքի խուժանը հայերի վրա հարձակվելուց խուսափում էր։ Բաբերդում հայերը կազմում էին քնակչության 10 տոկոսը, դրսից բերվեցին մեծ թվով լաղեր, բայց կոտորածը չսկսեցին մինչև Երզնկայից զորք չեկավ։

Թուրքական վայրագ երևակայությունը բ նշ նաև «խրախճանքներ» ասես, որ չէր մոգոնում։

Ուրֆայում, ջարդերի հաջորդ օրը, թուրքերը իրենց կողմից սպանված հայերի մսով ճաշ հրամցրին սովյալներին։

Այնթափում դարբինների գլուխները մտցրին հնոցի մեջ, ապա դրեցին սալի վրա և մուրճով ջախջախեցին։ Ներսունի Նալբանդի ծնկների վրա մորթեցին նրա երկու որդիներին։

«Ստանդարտը» գրեց. «Չի կարելի հապաղել, եթե ուզում եք հայերին փրկել կատարյալ բնաջնջումից...»։

Սուլթանի անձնական քարտուղար Թահսին բեյի՝ վալիներին ուղարկված շրջաբերականում գրված էր. «1897 թ. սեպտեմբերի 13։ Իմացել ենք, որ հյուպատոսներին հրամայված է ուսումնասիրել Անատոլիայում եղած հայերի թիվը, մահմեդական դարձածների, մահմեդականների տներում պահվող կանանց, հայերի ու նրանց ընտանիքների և դատապարտվածների վիճակը։ Այժմ բոլորին է հայտնի, որ հայերն իրենք են եղել խռովությունների կազմակերպիչներն ու հրահրողները։ Քանի որ նրանց հարձակումն անսպասելի էր, անտարակուսելի է, որ մահմեդական կանայք ու երեխաները նրանց ձեռքն են անցել։ Մյուս կողմից, նույնքան ստույգ է, որ ոչ մի հայ կին և երեխա չէր կարող մուսուլմանների մոտ գնալ։

Հաշվի չառնելով այս ամենը, անընդհատ քննություններ են կատարում՝ հայերին իբրև զոհ ցույց տալու համար։ Դա արվում է հատուկ՝ կայսերական կառավարությունը խարխլելու միտումով։ Հյուպատոսները այս ուղղությամբ են գործում։ Այդ թշնամական փորձերին խանգարելու համար ձեզնից պահանջվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին «նախապատրաստելու» և կայսրությանը ձեր նվիրվածությունը փաստելու ուղղությամբ։

Այլ կերպ վարվելու դեպքում կդիտվեք որպես կառավարության ու իսլամի դավաճաններ»[51]։

«Սուլթանը,— գրում է Մակքոլը,— իր սխրագործությունն սկսել է Սասունից։ Եթե ռեֆորմների ծրագիրը չլիներ, գուցե այդ կոտորածով հագենար նրա արյունատենչ ախորժակը, բայց ռեֆորմների հիմքում դրված էր հայերի և մուսուլմանների թվական հարաբերակցությունը։ Ուստի նա վճռեց խափանել այդ ծրագրի իրագործումը, հարաբերակցությունը հօգուտ մահմեդական-

ների փոխելու միջոցով (այսինքն նվազեցնելու հայերի թիվը)... իսկ պետությունները ոչինչ չարեցին մարդասպանի ձեռքը բռնելու համար, և հայերին կոտորելու հրամանը տրվեց Ելոզ-Քոշքից»։

1894—96 թթ. կոտորածները սուլթանը կազմակերպեց հայերին ահաբեկելու համար։ Դա կրոնական մոլեռանդությամբ չի կարելի բացատրել, որովհետև ուղղված էր միմիայն հայերի դեմ. մյուս քրիստոնյաներին ձեռք չէին տալիս։

Կոտորածների անմիջական ոգեշնչողները իշխանություններն ու շեյխերն էին, հարվածային ուժը՝ լեռնաբնակ քոչվորները ու կիսաքոչվորները՝ թուրքեր, քրդեր, չերքեզներ, լազեր։ Համեմատաբար իրենց հեռու պահեցին թուրք երկրագործները, չնայած նրանք ևս մասնակցեցին ավարառությանը։ Երկրագործներից ոմանք, ինչպես նաև հատուկենտ թուրք առևտրականներ ու արհեստավորներ, պաշտպանեցին հայերին։ Որոշ տեղերում հայերին պաշտպանեցին նաև քրդերը՝ Հասան-Ղալա, Բասենի Ամրագոմ, Ալաշկերտի, Բայազետի, Երզնկայի մի շարք գյուղերում։ Նույնիսկ Կարինում, որը կոտորածների «հերոս» Շաքիր փաշայի նստատեղին էր, արհեստավորների ու առևտրականների մի մասը հեռու մնաց կոտորածներից։ Մի շարք հայեր թաքնվեցին թուրքերի տներում։

Կոտորածները առաջացրին թուրք ազգաբնակչության զգալի մասի զայրույթը, և Մեծ մարդասպանը վախեցած, գոնե արտաքուստ, փոխեց իր քաղաքականությունը։ Սոֆտան դարձավ հեղափոխական և թուրքերին համոզում էր նոր կոտորած անել, «հավատացնելով, որ Եվրոպան կմիջամտի հայերին պաշտպանելու համար և կմտցնի բարեփոխություններ, որից բնականաբար կօգտվեն նաև իրենք»։ Դրանով սուլթանը նպատակ ուներ հայերի առաջիկա ջարդերի պատասխանատվությունը դնել թուրք հեղափոխականների վրա։

Սուլթանը մի հանձնաժողով ստեղծեց, որ պետք է հանդանակության միջոցով դրամ հավաքեր՝ վերականգնելու այն մզկիթները, որոնք վնասվել էին «վերջերս Անատոլիայում տեղի ունեցած անկարգություններից»։ Սրա նպատակը ակնհայտ էր՝ Եվրոպային թելադրել այն սուտը, թե հայերն էին անկարգությունների, ավերումների հեղինակները, միաժամանակ՝ մահմեդականներին գրգռել հայերի դեմ, իբր նրանք են կործանել մզկիթները։

Ի պատասխան՝ Մ. Իզմիրլյանը Բ. Դռանը գրեց. «Քանդվել և ավերվել են 400-ից ավելի հայ սրբավայրեր, իսկ մզկիթ՝ միայն մեկը՝ Արաբկիրում, որը, հայերի թաղին կից լինելով, այրվել է»[52]։

Այնուամենայնիվ, 1894—96 թթ. իրադարձությունները ցնցեցին թուրք հասարակությանը, աշխուժացրին ընդդիմադիր ուժերի գործունեությունը։ Օսմանյան հեղափոխականների շրջաբերականներում կարելի էր հանդիպել այսպիսի տողերի. «Հարամ կաթնակեր Համիդը գազազել է»։ «Կատաղած շանը (սուլթանին) պետք է սատկացնել»։ «Գազանաբարո փադիշահի Ելոզը հօդս ենք ցնդեցնելու»։ «Մեր հայրենակից հայերից օրինակ վերցրեք, որպեսզի անցյալներում գործած մեղքերդ քավեք, ձեռք մեկնեք նրանց»։ «Բռնակալ կառավարության անգթություններին զոհ գնացած հայրերը, մայրերը, եղբայրներն ու զավակները երկրից ու երկնքից «Վրե՛ժ, վրե՛ժ» են գոչում»։

Սուլթանը «Մեշվերեթի» դեմ դատ սկսեց։ Այդ թերթը հայկական ջարդերի համար սուլթանին անվանեց վատ, կեղտոտ մարդասպան։

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն մի հայտարարություն հրապարակեց, որում ասված էր. «Սահմանադրություն. ահա միակ իրական միջոցը՝ վերջ տալու միապետական շարագործ իշխանության զեղծումներին, որին Տաճկաստանի մի ծայրից մինչև մյուս ծայրը, ամեն օր զոհ են դառնում քրիստոնյաներն ու մահմեդականները»[53]։

Կարինի մահմեդականները, լսելով, որ հայերը որոշել են գաղթել, դիմեցին կուսակալին, թե պետք է հայերին օգնել, որովհետև մենք առանց հայերի չենք կարող ապրել։

Կոտորածի հետևանքով, վկայում է «Новое время» լրագիրը, պետական գանձարանը դատարկվեց։ Աշխատավարձ չէին ստանում ոչ միայն զինվորներն ու ստորին ծառայողները, այլ նաև բարձրաստիճան պաշտոնյաները։ «Նույնիսկ սուլթանի խոհարարները, աշխատավարձ չստանալու համար, գործադուլ արեցին»։

Վատացել էր կառավարության հարաբերությունները արաբների հետ։

Երիտթուրքական թերթերը հայերին կոչ էին անում. «Մի կողմ նետեք ազգային ատելությունը, և ձեռք ձեռքի տալով՝ տապալենք երկիրը քանդող բռնակալին...»։

Թուրքական «Բարենորոգչական դաշնակցություն» կազմակերպությունը հունիսի 8-ին դիմում հղեց մեծ տերություններին. «Մենք ազատ երկրում՝ տարագիր, հույս ունենք մարդասիրություն հարուցել ձեր մեջ այն հավարավոր դժբախտների նկատմամբ, որոնք հեծում են (սուլթանական) ճիվաղների ճանկերում։

Մինչև ե՞րբ է Եվրոպան այս անպատվությունը հանդուրժելու, ժամանակը չէ՞ գահընկեց անել և ազատել բավմատանջ ժողովրդին։ Դավաճան Համիդի սրով հեղված արյունը պետք է հավիտյա՞ն հոսի»։

Քղիում կայմակամը հայերին 300 հրացան տվեց, որով նրանք հաջողությամբ պաշտպանվեցին քրդերի ու չերքեզների հարձակումներից։

Պոլսի Ֆաթիհ մզկիթի պատին առաջադեմ թուրքերը գրեցին, որ հայերի նկատմամբ թշնամական դիրք չպետք է ունենալ, որովհետև նրանք «մեր բարեկամներն են եղել, բայց մենք չենք հասկացել։ Նրանց թշնամությունը թուրք ժողովրդի դեմ չ՝, որոնց իրենց եղբայրներն են համարում, այլ սուլթանի կործանարար վարչության դեմ»։

Կայսրության ռազմական մինիստր Ֆուադ փաշան ձերբակալվեց՝ Գատի գյուղի հայերին պաշտպանելու համար։

«Մեշվերեթը» գրեց. «... Մի՞թե Թուրքիան հազարավոր քրիստոնյաներին կուլ չի տվել։ Ճիշտ չէ, որ սելջուկների արյունը անխառն է մնացել։

Թուրքիայի ինքնարդարացման քսակը դատարկ է, իսկ պարտքերը շատ են։ Նա պետք է մարի գործած վայրագությունների, ստորացումների պարտամուրհակը»։

Փոխվեց իշխանությունների վերաբերմունքը քրդերի նկատմամբ։ Պոլսից Լոնդոն ու Փարիզ գրում են. «Թուրքերը պատրաստվում են ընկճելու քրդերին, որոնք հայկական ջարդերից հետո խիստ անբարոյական են դարձել... Առաջին անգամ է, որ համիդիեները հարկ պետք է վճարեն»։ «Քուրդ բեյեր և համիդիեների պետեր են այստեղ հետաքննվում ու պատժի ենթարկվում։ Կառավարության աչքում այժմ քրդերը փուշ են դարձել, որովհետև ապստամբական ուղի են ընտրել՝ անկախության հասնելու համար»[54]։

Ելազիզ մեծ մտահոգություն պատճառեց Կահիրեում հրատարակվող «Քրդստան» թերթը։

Ընդհանրապես, քրդական շարժումների մասին լուրերը

պալատին սարսափ էին պատճառում։ Քրդերի և հայերի միասնության գաղափարն իսկ սուլթանին կատաղության էր հասցնում։

Մի թուրք նկատել է. «Եթե հեղափոխությունը քրդերի շրջանում էլ ծավալվի, ապա դա մեզ համար ամեն ինչի վերջը կլինի»։

Դերսիմի քրդերը հրապարակավ ջարդերի պատասխանատվությունը դնում էին կառավարության վրա։ Նրանք հարձակվեցին մի քանի թուրքական գյուղերի վրա։

Հայկական հարցը նորից դարձավ եվրոպական դիվանագիտության երևակայության սնունդ։ Նորից հայ ազգաբնակչության թափած արյունը աճուրդի հանվեց մեծ պետությունների շահադիտական նպատակների համար։

Պաշտոնական Եվրոպան անամոթաբար խեղաթյուրում էր 1895—96 թթ. իրադարձությունները։

Սոլսբերին հայտարարեց. «Հայկական կոտորածները տարբեր վայրերի ազգությունների և տարբեր դավանանքների միջև ատելության արդյունք են. սուլթանը մեղք չունի»։

Նա նաև ասաց, թե Անգլիան միայնակ անզոր է Հայաստանի մասին հոգալ։ «Մխիթարական է տեսնել, որ խաղաղությունը որոշ չափով վերականգնված է, որ սուլթանը համաձայնել է մտցնել ռեֆորմներ, և այն իրականացնելու համար պետք է սուլթանին ժամանակ տալ»։

Դրան լիբերալ Հարֆորդը պատասխանեց, որ Սոլսբերին մի ժամանակ դժգոհ «դիվանագիտական սպառնալիքներից, բնության և նախախնամության ուժերին էր կոչում սուլթանի դեմ, իսկ այժմ հրապարակավ մեղա է ասում Թուրքիայի վեհապետին, նրան վշտացրած լինելու համար»[55]։

Նույն Սոլսբերին, նկատի ունենալով Թուրքիան, նշում էր. «Եվրոպայի կողքին փտախտ է բորբոքվել, պետք է այն հեռացնել ամբողջ մարմինը չվարակելու համար»։ («Դրոշակ», 1896 թ., № 20)։

Անգլիական մի այլ քաղաքական գործիչ 1896 թ. հայտարարեց. «Այն փաստը, որ մի քանի հազար հայ է կոտորվել, մեզ իրավունք չի տալիս Հայկական հարցին միջամտելու և ամբողջ Եվրոպան արյան մեջ ներքաշելու»։

Այդ օրերին Վիլհելմ 2-րդը Համիդին ուղարկում է իր ընտանեկան լուսանկարը։ Համիդը հրճվանքի մեջ էր «ճիշտ ժամանակին ստացած նվերի համար»[56]։

Բայց Եվրոպան միայն շահերի և երկրների առուծախով զբաղված կառավարություններով չէր բնորոշվում։ Եվրոպան Եվրոպա էր իր առաջադեմ մտավորականությամբ, այլ ժողովուրդների ցավերը իրենցը համարող աշխատավոր զանգվածներով։ Եվրոպայի առողջ ձայնը լսելի էր ամբողջ աշխարհով մեկ և դրա հետ սուլթանի նման բռնակալն իսկ չէր կարող հաշվի չնստել։

Սոկթանը հանոզում էր Ռուսաստանին, թե հայերը անաբեկիչներ են, Ֆրանսիային՝ անարխիստներ, Անգլիային՝ Իռլանդիայի դավադիրների համախոհներ։ «Հայ հեղափոխականները,— հաստատեց Բ. Դուրը,— եղեռնագործների հսկա ընկերություն են՝ տարածված աշխարհի բոլոր կողմերում։ Նրանք անարկու թշնամի են Եվրոպայի բոլոր օրինական կառավարություններին։ Նրանք դավադրություններ նախապատրաստող միջազգային ընկերության մասն են կազմում»։ («Դրոշակ», 1896 թ., № 23)։

Շվեյցարական թերթերից մեկը, հայերին մեղադրողներին նկատի ունենալով, գրում է. «Այն, որ նման հուսահատ և անօգնական կացության մեջ նրանք ըմբոստացել են սուլթանի դեմ, մի՞թե մեզ իրավունք է տալիս նրանց փնովելու։ Արդյոք նույն ճանապարհով չե՞ն ընթացել բոլոր ժողովուրդները»։ Հազար անգամ իրավացի էր Վիլհելմ Թելը, երբ ասում էր. «Մենք գիտենք, որ քաղաքականապես մեծ ազգ չենք և մեծ ազդեցություն չունենք, բայց երբ հերթը մարդասիրությանը գա, ուրիշի խորհրդի կարիքը չունենք։ Մարդասիրությունը երկրի մեծությամբ չի չափվում»[57]։

Վիեննայի «Նեո Ֆրայե Բրեսեն» գրել է. «Թուրքիան դեռ այն բարբարոս տերությունն է, ինչպիսին եղել է... և ոչ մի տերություն հանձն չի առնի այդ արյունաթաթախ պետությունը պաշտպանելու ամոթալի դերը ստանձնել»։

Եվրոպայի և Ռուսաստանի առաջադիմական ուժերը քննադատության կրակի տակ առան Հայկական հարցում մեծ տերությունների քաղաքականությունը։

Ֆրանսիական «Դեղին գրքում» բերված են Կ. Պոլսում Ֆրանսիացի դեսպան Կամբոնի հետևյալ հեռագրերը.

«Սուլթանը իր խոստումները մտադիր չէ կատարել, որովհետև համոզված չէ, որ Եվրոպան համերաշխ է և հետևողական»։

«Կրետեի հարցը լուծված է, որովհետև սուլթանը ըմբռնում է, որ ապստամբության տեսականությունը տերությունների միջամտության տեղիք կտա։ Հայկական հարցը ձգձգվում է, որովհետև սուլթանը այդ գործում եվրոպական միջամտության լեռջությանը չի հավատում»։

Նոյեմբերի 4-ին ֆրանսիական պառլամենտը ընդունեց սոցիալիստների առաջարկած նախագիծը, որը աշխարհի աշխատավորներին կոչ էր անում ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա Հայկական հարցը շուտափույթ լուծելու համար։

«Դուք,— դիմելով Հանոթոյին՝ ասաց Ժորեսը,— արտահայտվեցիք ընդդեմ նրանց, որոնց անվանում եք «դրսից եկած հայ ագիտատորներ»։ Դուք նրանց եք մեղավոր դիտում այն տանջանքների համար, որ կրում են նրանց հայրենակիցները»։ Մերկացնելով մեծ տերությունների երկդիմի եսասիրական վարքագիծը՝ նա ասաց. «Եվ ինչո՞ւ ենք զարմանում, որ մի քանի հայեր փորձում են հիշեցնել Եվրոպային նրա պարտականությունները...

Սուլթանն է, որ ցանկացել ու կազմակերպել է կոտորածները...

Նա առաջնորդվեց ամենախելամիտ որոշումով՝ Եվրոպային դնել ջարդերի փաստի առջև։ Նա Եվրոպան տեսավ վարանում, երկմիտ... դեսպանները՝ պառակտված, անզոր... նա մարդասպանի շտապողականությամբ գործի անցավ՝ բոլոր առաջ իր կոկորդին դեմ առած «Հայկական հարցից» և Եվրոպական կեղծավոր ձևականություններից ազատվելու համար։

Այո, Եվրոպան թերացավ իր կոչման մեջ՝ իր պառակտվածությամբ, անհագ տենչերով, նախանձով։ Շահերը բաժանելու առուծախի մեջ, իբր մեծ ընդհարումների տեղիք չտալու պատրվակով, նա թույլ տվեց խողխողելու մի ամբողջ ժողովուրդ...»։

«Լռություն մամուլում,— շարունակում է Ժորեսը,— որի մի մասը անտարակույս վարձատրվել է իր լռության համար։ Ամենացավալին՝ լռություն Ֆրանսիայում։

Ինչո՞ւ իրավունքների այս բռնաբարության դեմ մեր լեղուները կարկամեցին, մեր անտարբերությամբ ու հաշտվողականությամբ մենք մեղսակից դարձանք մի ամբողջ ժողովրդի խողխողմանը։

... Պետք է, որ ամեն տեղ եվրոպական պրոլետարիատը իր ձեռքը վերցնի այդ (հայկական) դատը, որպեսզի հարկադրի տե-

ությունների՝ կատարելու մարդկային տարրական պարտականությունները։

... Արդարև, հենց այն Արևելքում, որտեղ արդեն 17 դար է, ինչ քրիստոնեությունը տիեզերական խաղաղություն է ավետում, նույն այդ Արևելքում է, որ ի դերև է ելնում պառաված քրիստոնյա Եվրոպայի սնանկությունը...»[58]։

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՒ

Իսկ ինչպիսի՞ն էր դրությունը Տարոնում ու Սասունում։ Թուրքական հրամանատարությունը Գևորգի ու Մուրադի բանտարկությունը համարում էր իր մեծ հաղթանակը։ Նրանք Մուշ բերվեցին նվագախմբի հաղթական քայլերգի ներքո։ Հեռագրեր հասան սուլթանին, որ ձերբակալված են իր դեմ կռվողների ամենանշանավոր ղեկավարները։

Հայ ազգաբնակչության մեջ հերոսների ձերբակալումը խթանեց հակակառավարական շարժումներ ծավալելու տրամադրությունը։

1894 թ. կոտորածներից մի քանի ամիս անց Սասունի լեռնաշխարհում արդեն հաջողությամբ գործում էին հայդուկային մի քանի խմբեր։ Մեծ թվով սասունցիներ բողոքի երթ կազմակերպեցին։ Լեռներից իջան Մուշ քաղաք և իշխանություններից պահանջեցին ազատ արձակել ջարդերի տարիներին ձերբակալված ազատագրական շարժման մասնակիցներին։ Այդ ձերբակալությունները փորձեցին օգտագործել օտար պետությունները՝ օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու իրենց երկրների շահադիտական նպատակների համար։

Բիթլիսի իշխանությունները կազմակերպեցին Գևորգի և Մուրադի փակ դատ։ Գևորգին դատապարտեցին 15 տարվա, իսկ Մուրադին 101 տարվա բանտարկության՝ «Նորին վեհափառություն Սուլթանի դեմ ապստամբելու» մեղադրանքով։ Գևորգը, որի 25 տարին նոր էր լրացել, Մշո Սվարի ղշլասի բանտում մնաց 20 ամիս։

Ոստիկանները նրան ենթարկեցին մարմնական ու հոգևոր ահավոր տանջանքների, բայց նա արիությամբ տարավ դրանք և ելք էր փնտրում փախուստի համար։ Ինչ-որ կերպ ձեռք գցած մետաղով նա փորձում էր ծակել բանտի պատը։ Պատից հանած

մեծ քարերը գլխատակն էր դնում, իսկ հողն ու փոքր քարերը հավաքում գրպանում և բռի մեջ։ Երբ օրվա ընթացքում մեկ անգամ բանտախցից բակ էին հանում նրան, աղբը թափում էր այնտեղ։

Նրա խցի պատուհանը պատշգամբաձև էր, մի քանի թիզ դուրս էր ընկնում պատից և վանդակի նման կախվում ցած։ Եթե հնարավոր լիներ պատուհանը ծակե՞լ...

Հայդուկի միտքը փախչելու գաղափարը ընդունեց որպես միակ նպատակ։ Աշխատում էր գիշերով, հնարավորին չափ անաղմուկ։ Համբերությունն էր նրա միակ խորհրդատուն։

Արդեն ավարտել էր գործը, երբ պաշտոնավորներից մեկը նրա խցում քարի մանր կտորներ տեսավ։ Բանտախուցը ստուգվեց և անցքը հայտնաբերվեց։ Գևորգը դաժան ծեծի ենթարկվեց և փոխադրվեց երկրորդ հարկ։ Նրա բանտախուցը շուրջբոլոր էր ընկնում պատից և վանդակի նման կախվում ցած։ Դռան անցքից ոստիկանները հեռևում էին։ Գևորգին զրկեցին նաև բացօթյա զբոսանքից։ Բայց նա հուսահատվողներից չէր, կարողացավ բանտապահներից թաքցնել երկաթի կտորները և գիշերը, երբ հերթապահ ոստիկանը, օգտվելով բանտի ղեկավարության բացակայությունից, ննջում էր, սկսեց փորել խցի հատակը։ Նրան հաջողվեց փոքր անցք բացել դեպի առաջին հարկի բանտախուցը, որտեղ հայ բանտարկյալներ էին։ Ապա այդ անցքով թել անցկացրեց և առաջին հարկի բանտարկյալներին հասկացրեց, որ թելի ծայրին լուցկու տուփ կապեն։ Պահանջվեց մի քանի շաբաթ, որպեսզի Գևորգը կարողանար տուփի վրա տկտկոցների ազդանշանային «բառարան» ստեղծել։ Օգտվելով այդ ինքնատիպ հեռագրային հարմարանքից, նա բանտարկյալներին ներշնչում էր փախուստի գաղափարը։

«Որքան էլ Գևորգը համոզում էր, Մուրադը մերժեց փախուստի առաջարկը»։

Փախուստի օր նշանակվեց 1896 թ. ապրիլի 20-ի գիշերը։ Նա փորելով թուլացրել էր բանտախցի պատուհանի երկաթյա ճաղերը այնքան, որ ուզած պահին կարող էր հանել։ Իր հագուստներից և զանազան փայտերից հյուսել էր պարան։

«Բարեբախտաբար, սարսափելի փոթորիկի և ձյունախառն անձրևի պատճառով մութը թանձր էր։ Գևորգը մեջքին կապեց պարանը, որ ինքն էր հյուսել... ու օձի պես սողաց բարձրությունից»։

Մթության մեջ ոտքը խփեց քարին ու վնասեց։ Հաղթահարելով ցավը, շարժվեց քաղաքից դուրս։ Նրա օրինակին հետևեցին Հովհաննեսը, Ավոն և Խաչոն։

Ժամանակակիցներից մեկը այդ իրադարձությունները նկարագրում է հետևյալ կերպ։

«Սասնո կոտորածից հետո Մշո բանտում ձերբակալված էին մի քանի սասունցի իշխաններ ու երիտասարդներ՝ Մուրադի ու նրա ընկերների հետ։ Ինն ամիս առաջ, երբ սրանց Բաղեշից վերադարձնում էին Մշո բանտ, հայդուկային խմբի անդամներից Գևորգ անունով քաջ երիտասարդին հաջողվում է գողանալ վրանի երկու ցից և մի պարան։ ... Գարնանը դեռ ձյունը լրիվ չէր հալվել, նրան հաջողվում է բանտից փախչել... Ինքը՝ Գևորգը, տալվորիկցի Խաչո անունով երիտասարդի հետ, վերջին հարկում բանտարկված, իսկ նրա ընկերները՝ Մշո Մկրագոմ գյուղի Հովհաննեսը և տալվորիկցի Ավո անունով երիտասարդը՝ ներքնահարկում։

Գևորգին մի կերպ հաջողվում է վրանի ցցերից մեկը հասցնել իր ընկերներին։ Որոշված գիշերը Գևորգը բանտի պատը քանդելով պարանով իջնում է։ Ընկերները դեռ չէին հասցրել դուրս գալ։ Սկսվում է սաստիկ անձրև, բանտապահները չեն երևում։ Հաջողվում է ընկերներին էլ դուրս բերել ու փախչել։

Լրիվ մերկ ու բոբիկ հասնում են մի քարայրի, որտեղ մնում են երկու օր։ Երրորդ գիշերը շարունակում են իրենց ճամփան ու ազատվում։

Իշխանությունները գազազած աջ ու ձախ խուզարկում են, բայց իզուր... Նրանց փոխարեն ձերբակալում են մի քանի երիտասարդների, իբր հայդուկներ և նամակատարներ»։

Բանտից դուրս գալուց հետո Գևորգը և մյուսները իմացան այն ահավոր ողբերգության մասին, որ ապրել էր արևմտահայությունը իրենց բանտարկության ընթացքում։

Այժմ նրանք ոչ միայն հավատամքով, այլև իրենց վիճակով դարձան թուրքական բռնակալության դեմ մարտնչող, օջախից ու ընտանիքից ընդմիշտ զրկված, ժայռերին ու անտառներին ապավինած հայդուկներ։

Հայդուկային շարժումը նոր թափով սկսեց ծավալվել։ Արաբոյի դպրոցով անցած, պատերազմի բովում ու բանտային կյանքում թրծված վրիժառուները նորից ապավինեցին հարազատ ժայռերին ու քարանձավներին։ Նրանք լցվել էին մի անսովոր

վճռականությամբ։ Նրանց հետ էին հաղարավոր անմեղ զոհերի գուրը հայցող հայացքները, նրանց հետ էր Սասնո բզկտված ու արնադեղյա հողը։

Փախուստից մի քանի օր հետո Գևորգը գնաց Շենիկ, ուր նրա մոտ եկան իր հին ընկերները՝ Գալեն ու Հագոն։ Շենիկում նա լուր ստացավ, որ իշխան Վարդանը, հակառակ Եղսոյի կամքին, նրան ամուսնացրել է Հեղին գյուղից մի առևտրականի՝ միակնանի Պչուկի հետ։ Իմացավ նաև, որ սպանվել է ալիգոնանցի Լևոնը՝ հայդուկության հիմնադիրներից մեկը։

Մինչ ինքը բանտում էր, Սասունում շատ այլ տեղաշարժեր, փոփոխություններ ու ողբերգական իրադարձություններ էին կատարվել։ Հարկ էր իմանալ իրավիճակը, կապվել լեռնաշխարհում ու դաշտում գործող հայդուկների հետ, մշակել գործողությունների ծրագիր։

Այդ նպատակով նա, իր հետ վերցնելով Գալեին, տեղից տեղ էր անցնում։ Մի տեղում երկար չէր մնում, որովհետև թուրքական իշխանությունները գյուղերը ողողել էին զինվորներով, ոստիկաններով, լրտեսներով։ Բանտից փախածներին էին փնտրում։ Տալվորիկում նրան միացան մի քանի ուրիշ ընկերներ։

Սասունը 1894 թվի կոտորածներից դեռ չէր ապաքինվել, ավերված էր, արնաքամ։ Կոտորածներից հետո ստեղծվել էր նոր իրավիճակ։ Գևորգը տարակուսանքի մեջ էր և դժվարանում էր որոշել իր գործելակերպը՝ ի՞նչ ձևերով ու եղանակներով շարունակել պայքարը։ Մշո Արգավանք գյուղում մի մարդ էր ապրում, անունը՝ Բենո։ Բենոն Տարոնում ու Սասունում ճանաչված մարդ էր ոչ այնքան քաջագործություններով ու անվախությամբ, որքան իր իմաստուն խորհուրդներով։ Ոչ միայն հայերը, այլև թուրքերն ու քրդերը, ոչ միայն հասարակ գյուղացիները, այլև փաշաներն ու բեկերն էին Բենոյի մոտ գալիս նրա իմաստությունները լսելու, նրանից խորհուրդներ ստանալու։ Մի օր Բենոն բանջարանոցն էր մշակում, երբ Արգավանք մտավ կուսակալը՝ իր շքախմբով։ Բոլոր գյուղացիները դուրս եկան նրան գիմավորելու։ Բենոն չգնաց և շարունակում էր փորել բանջարանոցը։

Կուսակալը մարդ է ուղարկում Բենոյին կանչելու։ Բենոն գալիս է բահը ուսին։

— Ողջ աշխարհը հրացան է կրում,— ասում է կուսակալը,— դու ինչո՞ւ ես բահով ման գալիս։

— Փաշա,— պատասխանում է Բենոն,— արար աշխարհի հրացանները մատաղ լինեն էս բահին։ Հրացանի պատճառն ու սնունդը էս բահն է։ Եվ էս բահն է, որ հողի մեջ է թաղում հրացանի գոհերին։

— Բենո, թե որ այդքան խելոք ես, ինձ ասա. դուք, հայերդ, ձեր մի քանի հրացանով ի՞նչ կարող եք անել մեր կառավարությանը, որ այդքան համառությամբ դրանք չեք ուզում հանձնել իշխանություններին։

— Փաշաներդ, մեր դարդերի ու ցավերի մասին հարցնելու փոխարեն, տներն ընկած զենք եք փնտրում։ Հենց էդ է պատճառը, որ մենք զենք ենք ձեռք գցում ու պահում։ Մի մեծ գամփռ շուն հարցնում է կատվին. «Քո այդ ճանկերով ինձ ի՞նչ կարող ես անել, որ քեզ այդպես համարձակ ես պահում»։ Կատուն պատասխանում է. «Չգիտեմ, բայց երբ հարձակվես վրաս, քեզ ճանկռելու եմ»։

Պատասխանը փաշային դուր չեկավ։ Բայց Բենոն, շնկատելու տալով, շարունակեց։

— Ես մի անվնաս գյուղացի եմ։ Ես գնում եմ հողը փորելու ու հողի տակ մեծ ու փոքր մարդկանց, փաշաների ու ռանչպարների գանգեր գտնելու։ Հավատա, փաշա, եթե չլինի իշխանությունն ու հարստություն ունեցողների ճնշումը, բոլոր ռանչպարները խաղաղ, անվնաս մարդիկ են։

Գևորգը գնաց Արդավանք գյուղ՝ Բենոյի հետ խորհրդակցելու։ Բայց Բենոյի փիլիսոփայական-բարոյական բնույթի խորհուրդները նրան շատ բան տալ չէին կարող։ Ուստի, երբ լուր բերեցին, որ Հրայրը Ղզլաղաջ գյուղում է, նա անմիջապես մեկնեց։ Այդ ընթացքում Հրայրը եղել էր Կովկասում, ընդունվել դաշնակցության շարքերը։

Հրայրը Գևորգին խորհուրդ տվեց հրաժարվել հայդուկային կռիվներից և գլխավոր ուշադրությունը դարձնել «ընդհանուր ապստամբության» նախապատրաստությանը։ Այսինքն, պետք էր գյուղերում զինված ջոկատներ ստեղծել, նրանց վարժեցնել և պատրաստել ապստամբության։

Գևորգը Հրայրին չառարկեց, բայց նաև չըմբռնեց նրա ասածի իմաստը։ Իսկ երբ փորձեց իրականացնել նրա ցուցումները, հասկացավ, որ Սասունի պայմաններում այդ տակտիկան ոչ միայն ընդունելի չէր, այլև վնասակար էր։ Որովհետև ինքնապաշտպանության գործող, ժողովրդին օգնող ու նրանից լայն աջակցություն ստացող ջոկատների փոխարեն Հրայրը առաջարկում էր ստեղծել զինված, բայց անորոշ ժամանակով ակտիվ գործունեությունից հեռու, ժողովրդի առօրյային անհաղորդ, այդ առօրյային չմիջամտող խմբեր։

Գևորգի մեջ թերահավատություն ծագեց Հրայրի քարոզչության նկատմամբ, մանավանդ, նրա ականջին էին հասնում լուրեր Աղբյուր Սերոբի հայդուկային խմբի քաջագործությունների մասին։

***

Սերոբը խլաթ գավառի Սոխորդ գյուղի հին ու համբավավոր խչեի տոհմից էր։ Նա տիտանական կազմվածքի, բնական խելքի ու բարձր առաքինությունների տեր էր։ Պատանի հասակից Սերոբը զբաղվել է ձիարշավներով ու որսորդությամբ։ 1886 թվականին Պոլսից վերադառնում է նրա հորեղբայրը, որը մի քանի տարի ապրել ու աշխատել էր այդ քաղաքում և հաղորդակից դարձել ազատագրական գաղափարախոսություններին, վերջինիս պատմածները բորբոքեցին Սերոբի երևակայությունը։ Դեռ պատանի էր, երբ ավագ եղբորից՝ Մխեից, հրացան ու դաշույն նվեր ստացավ։ Մի անգամ միայնակ գյուղ էր վերադառնում, երբ ճանապարհին նրա դեմ դուրս եկան թալանից վերադարձող երկու քրդեր։ Նա անմիջապես հարձակվեց նրանց վրա, մեկին սպանեց, իսկ մյուսին փախուստի մատնեց։ Այդ դեպքից հետո իրար են հաջորդում երիտասարդ Սերոբ Վարդանյանի քաջագործությունները, որ օրեցօր ավելի մեծ անհանգստություն են պատճառում տեղական իշխանություններին։ Նրանք միջոցների են դիմում Սերոբին բռնելու կամ ֆիզիկապես ոչնչացնելու համար։ 1891 թվին համագյուղացիները Սերոբին փախցնում են Պոլիս։ Այստեղից նա անցնում է Ռումինիայի Սուլինա քաղաքը, որտեղ առաջին անգամ հանդիպում է Հրայրին ու Անդրանիկին։ Նրա մասին ժամանակակիցը գրում է. «Սերոբը ճարպիկ ու աշխույժ երիտասարդ էր և ուր գնար, անգործ չէր մնում»։ Նախ մի զբաղմունք է գտնում Սուլինայում. մի քանի ամիս անց առանձին սրճարան է բացում ոչ թե փող շահելու նպատակով, այլ անգործ չմնալու համար։ «Սուլինայում նա պանդուխտ հայության մխիթարությունն ու ոգևորությունն էր, նրանց միությունն

և եղբայրություն էր քարոզում»։ Նրա սրճարանում հաճախ էին բուռն քննարկումներ տեղի ունենում, որին նա ևս ակտիվ մասնակցություն էր ունենում։

Սերոբի կյանքում Հրայրի հետ հանդիպումը վճռորոշ նշանակություն ունեցավ։ Երբ Հրայրը հայ պանդուխտներին պատմեց երկրի վիճակի մասին, Սերոբի երևակայությունը բորբոքվեց և սկսեց պանդուխտներին համոզել վերադառնալ տուն և օգնության հասնել հայրենակիցներին։ Երկիր մեկնելու մտադրությամբ նա Ռումինիայից անցնում է Անդրկովկաս։ Այստեղ Սերոբը 27 հոգուց բաղկացած հայդուկային խումբ է հավաքում և անցնելով սահմանը շարժվում է դեպի Խլաթ։ Դալիբաբայի գծի վրա ջախջախում է իր դեմ ելած թշնամու գերակշիռ ուժերին և լավ զինված ընտիր խմբով 1895 թվի աշնանը մտնում է Խնուս։ Նա հիմնականում գործում էր Բիթլիսում ու Խլաթում, բայց հաճախ էր լինում նաև Սասունում և սասունցիների շրջանում մեծ հեղինակություն ու համբավ ուներ։

Սերոբի խումբը անընդհատ շարժման մեջ էր, գյուղից գյուղ էր անցնում, թշնամու հետ ընդհարումների մեջ մտնում։

Շուտով նա Խլաթում բացարձակ հեղինակություն ձեռք բերեց և դարձավ այդ շրջանի փաստական իշխանությունը։ Մարդկանց փրկելու, կյանք պարգևելու համար նրան տվեցին Աղբյուր մականունը։

Թուրքական իշխանությունները մեծ ուժեր շարժեցին դեպի Խլաթ և շրջապատեցին այն։ Խլաթի տարածքը փոքր էր և ոչ բավականաչափ արագ ու ճկուն տեղաշարժերի համար։ Նկատի ունենալով այս և նաև այն, որ թուրքական զինվորները Խլաթի գյուղերում սկսել էին խժդժություններն ու բռնությունները, գյուղացիներին չվտանգելու համար նա հեռացավ դեպի լեռները, դեպի Նեմրութ։ Նրան հաջողվեց մի քանի մանր ճակատամարտերի ու արագ տեղաշարժերի միջոցով շփոթության մեջ գցել իրեն հետապնդողներին։ Սերոբը ամենուրեք էր և ոչ մի տեղ։

Ըստ եվրոպական թերթերի. «Դեռ 1895 թվի աշնանը իշխանություններին սարսափ ազդող և Խլաթի մի քանի գյուղերը փառավոր կռիվներով փրկող Աղբյուր Սերոբը իր խմբով մնում էր այդ կողմերում։ Աղբյուրի դեմ կատաղած էին թուրքերն էլ, քրդերն էլ։ Նրանց օգնեց մի լրտես, որը իշխանությանը տվեց հայդուկների ցուցակն ու գտնվելու վայրը։ Կայմակամը 30 զինվոր ուղարկեց Թեղուտ և Սոխորդ գյուղերը հայդուկներին բռնելու համար»։

1897 թվի փետրվարի 27-ին Թեղուտը պաշարվեց։ Գյուղը խուզարկեցին, բայց Սերոբը հասցրեց ժամանակին հեռանալ։ Զինվորների մի մասը մնաց Թեղուտում, մյուսները գնացին Սոխորդ, պայմանավորվելով վտանգի դեպքում կրակել և իրար օգնության հասնել։ Սակայն նրանցից առաջ, թուրքերի օղակը անցնելով, թեղուտցի մի երիտասարդ հասնում է Սոխորդ ու Սերոբին զգուշացնում վտանգի մասին։ «Սերոբը դուրս թռավ, ու տեսավ, որ թուրքերը մոտենում են։ Նա կրակելով շարժվեց դեպի Նեմրութ, որը ծածկված էր 5—6 արշին ձյունով։ Նա շուռ գալով բղավեց թուրքերին. «Ամոթ ձեզ, որ նման բազմությամբ ընկել եք հետևիցս։ Տեսաք, թե որքան փամփուշտ կրակեցի, բայց ձեզ սպանելու նպատակ չունեի, սակայն քաջ գիտցեք, մինչև վերջին շունչս, որքան արյունս շարժվում է երակներումս, ձգտելու եմ ձեզ սպանել...»։

Այդ ժամանակ մառախուղն իջավ ու Սերոբին ծածկեց թուրքերի աչքերից։ Նրանք ետ դարձան՝ բքից փրկվելու համար։ Իսկ Սերոբը առաջ շարժվեց դեպի Նեմրութի խառնարանը և երկու օր մնաց նրա տաք ջրերի հարևանությամբ։

Բաղեշից ու Խլաթից նոր զորքեր բերեցին և սկսեցին ամենուրեք խուզարկել։ Սակայն նրան գտնել չկարողացան։

Թուրք զինվորները, երբ Նեմրութի բարձունքներին սև կետ էին տեսնում, բղավում էին. «Նայեք, անհավատը որտեղ է մնացել»։

Քուրդը ասում է. «Սատանի նման ճարպիկ, հնարագետ և ուժեղ է ջանֆիդային։ Գնդակը նրա դեմ չի գնում։ Նա ընկնում է, բայց նորից կյանք է առնում...»։

Զորքերը հարձակվում են Սերոբի հայրական տան վրա։ Նրա մեծ եղբորը՝ Մխիթարին, և եղբոր տղային՝ Սողոյին բռնում են, սաստիկ ծեծում ու բանտ են նետում, իսկ տունը թալանում են։

Հուլիսի 27-ին հասնանցի 30 քրդեր քշում են Թեղուտ գյուղի անասունը։ Սերոբը չորս հոգով հարձակվում է քրդերի վրա և մի քանի հոգու հրացանալարկ անում։ Իսկ երբ քրդերն իմացան, որ իրենց դեմ կռվողների մեջ է Սերոբ փաշան, ուղղակի փախուստի դիմեցին։ Սերոբին բռնելու պատրվակով Բաղեշի վալի Էմերը մի վաշտ համիդիե է ուղարկում Խլաթի գյուղերը։ Սկսում են թալանն ու գազանությունները։

Սերոբը ծրագրում էր միավորել Ախլաթի ու Սասունի հայդուկներին Թուրքերի ու քրդերի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար։ Նա գտնում էր, որ այդ պայքարի ծանրության կենտրոնը նորից պետք է դարձնել Սասունը։ Այդ նպատակով նա 1897 թվի գարնանը գնում է Սասուն։

Գրում է Գևորգը. «Գարնան սկզբին Սերոբն ու Գուրգենը իրենց խմբով եկան Սասուն։ Նրանց գալուց հազիվ տասն օր էր անցել, երբ Դալիբ էֆենդին Սեմալ հասնելով սկսեց խիստ խուզարկություններ կատարել, բայց չկարողացավ ոչ մեկին ձեռ ցցել»։ Հրայրը, Գուրգենն ու Վարդան վարդապետը, նկատի ունենալով, որ Սերոբի Սասունում գտնվելը կարող է նոր կոտորածների տեղիք տալ, նրան առաջարկեցին վերադառնալ Ախլաթ։

Սերոբը համաձայնեց։ Այդ անգամ նա Սասունում մնաց միայն մեկ ամիս։

Բարդ ու քաղաքական իրադարձություններով հագեցած ժամանակներ էին։

Ազատագրական շարժումը նոր վերելք էր ապրում Վանում, Էրզրումում, Բասենում, Խնուսում, հանգիստ չէր նաև Կ. Պոլսում։ Համիդը, օգտագործելով օտոմանյան բանկի վրա կատարված հարձակումը, ուժեղացրել էր հալածանքները։ Պոլսի հայկական թաղերում կոտորածներ տեղի ունեցան։ Ուշադրությունը կենտրոնացնելով այլ շրջանների վրա, թուրքական իշխանությունները հարկադրված էին չտեսնելու տալ Սասունում և Տարոնում ծավալվող շարժումները, նույնիսկ փորձում էին այս շրջանների հայերին սիրաշահել։ Անդրանիկն իր հուշերում պատմում է, որ «տալվորիկցիներից յուրաքանչյուրին սուլթանի հրամանով մի-մի ոսկի, իսկ վերին գյուղերի ժողովրդին ավելի պակաս բաժանեցին... Թուրք պաշտոնյաներն ու քրդերը կվախենային։ Դաշտն ալ կիսով չափ հանգիստ է և ժողովուրդն էլ ազատված»։ Կառավարությունը հայտարարեց, որ Սասունը յոթ տարի հարկերից ազատվում է։

Համենայն դեպս, 1890—94 թվերի դեպքերից թուրքական իշխանությունները հասկացել էին, որ առանց ռազմական լուրջ ուժեր կենտրոնացնելու, Սասունում ռազմական գործողությունների դիմելը վտանգավոր է։ Թուրքերի մտայնությունը իր կնիքն էր դրել նաև քուրդ ցեղապետների վարքագծի վրա, նրանք ևս խուսափում էին հայերի հետ ընդհարման մեջ մտնելուց։

Սակայն, խույս տալով բացահայտ կոտորածներից, սուլթանը չհրաժարվեց Հայաստանը հայերից դատարկելու քաղաքականությունից։ Նա թուրք և քուրդ աղաներին բոլոր միջոցներով շահագրգռեց տիրանալու հայերի գյուղերին ու հողերին։ Զինչին պարտքերի դիմաց հայերի ցանքսերն աճուրդի էին հանվում, իսկ պարտքատերերը նրանց դարձնում էին կիսաստրուկ ծառա։ Հարկեր հավաքող 20—25 հոգուց բաղկացած ոստիկանական և զինվորական հեծյալ ջոկատները գյուղացիների հաշվին էին ապրում, բռնաբարում կանանց և աղջիկներին, բռնի մեթոդներով մուսուլմանություն տարածում։ Հայկական գյուղերում մուսուլմանական տարրեր բնակեցվեցին, որոնք արտոնյալ իրավունքներ ստացան հայերի կյանքի ու կայքի նկատմամբ։ Դիմադրողը սպանվում էր առանց դատի ու դատաստանի։ Հայերը անվճար վարում, ցանում, մշակում էին մուսուլմանների արտերը, նրանք շատ հաճախ էին ենթարկվում թալանի, հատկապես լայն տարածում էր գտել ոչխարների թալանը։

Այսինքն, կոտորածները շարունակվում էին, բայց այլ մեթոդներով։ Փրկվում էին միայն այն գյուղերը, որոնք զինված դամադրություն էին ցույց տալիս։

Սակայն Սերոբի գործունեությունն այնպիսի ծավալներ ստացավ, որ այն լրջորեն անհանգստացրեց թուրքական իշխանություններին և նրանք ձեռնարկեցին մի շարք միջոցներ հայդուկային շարժումը ոչնչացնելու համար։ Նման հանձնարարությամբ 1898 թ. վերջերին Բիթլիս է գալիս նոր կուսակալը, որը բազմակողմանի նախապատրաստական աշխատանքներ է տանում Սերոբին ու նրա խումբը հաշվեհարդարի ենթարկելու համար։

Սերոբը այդ ժամանակ գտնվում էր Բիթլիսից կես ժամ հեռավարության վրա՝ Բաբշեն գյուղում։ 1898 թվի հոկտեմբերի 20-ին գյուղը շրջապատվում է զինվորներով ու ոստիկաններով։ Նրանց են միանում նաև քրդերը։ Սերոբը իր տասնչորս հայդուկներով տեղավորվում է մոտակա բլրի վրա։ Սկսվում է կատաղի փոխհրաձգություն, բայց թուրքերը ոչ մի կերպ չեն կարողանում ընկճել հայդուկների դիմադրությունը։ Նրանք հարկադրված թնդանոթ ու օժանդակ ուժեր են բերում, բայց հայդուկներին հաջողվում է դիպուկ հարվածով սպանել հրետանային սպային ու նրա չորս թնդանոթաձիգներին։ Հակառակ հրամանատարության ջանքերին, թուրքերն ու քրդերը մնում են գետնին կպած

և գրոհի չեն գնում։ Մարտը շարունակվում է մինչև երեկո։ Երբ մութն ընկնում է, հայդուկները աննկատ հեռանում են։ Բաբշենի ճակատամարտում սպանվեցին յոթանասուն թուրք ու քուրդ և մեկ հայդուկ։

Բաբշենի կռվից հետո թուրքական իշխանությունները գործողության մեջ են դնում բոլոր միջոցները՝ զորք, ոստիկանություն, աշիրեթություններ, լրտեսներ, Սերոբին բռնելու համար ոչնչացնելու համար։

Սերոբը ստիպված վաճառեց հայրական տունը, ունեցվածքը և ստացված գումարները տրամադրեց հայդուկներին՝ զենք գնելու։ Նա կնոջ՝ Սոսեի, որդիների՝ Հակոբի և Սամսոնի, եղբայրների՝ Մխոյի և Զաքարի հետ ընդմիշտ հեռացավ հայրենի գյուղից։

Սերոբն իր հայդուկներով ու ազգականներով տեղափոխվեց Սասուն։ Երբ նրա հիանալի զինված խումբը երևաց Սասունում, ոգևորության մի այնպիսի ալիք տարածվեց, որ սասունցիները դադարեցին նկատել թուրքական պաշտոնավորներին ու ոստիկաններին և ճանաչում էին միայն Սերոբի իշխանությունը։

Այդ տարիներին Սերոբը Սասունում, Մուշում և հարակից շրջաններում անառարկելի հեղինակություն էր, ուժի և հզորության մարմնացում։ Դրա համար էլ, երբ նա երևաց Սասունում, այստեղ գործող գրեթե բոլոր հայդուկային խմբերը ու առանձին հայդուկներ շտապեցին նրա մոտ և մտան նրա ջոկատի մեջ։

Երբ Գևորգը իր խմբով հանդիպեց Սերոբին, արդեն այդտեղ էր նաև Անդրանիկը։

«Ես, Գուրգենը և երեք ընկերներ,— գրում է Գևորգը,— գնացինք Կոփ գյուղը։ Սերոբն էլ իր խմբով այնտեղ եկավ, և Անդրանիկը իր ընկերոջ հետ դաշտից վերադարձավ։ Մեր թիվը հասավ 17-ի»։

Սերոբը իր հետ զենքեր էր բերել, գլխավորապես ռուսական մոսին, որը քրդերի սարսափն էր։ Բանն այն էր, որ քրդերը գլխավորապես զինված էին չախմախլի հրացաններով, որոնց կրակի հարվածող ուժի շառավիղը մի քանի հարյուր մետրից չէր անցնում, իսկ ռուսական հրացանով կարելի էր սպանել հազար մետրի վրա։ Դրա համար էլ Սերոբի ջոկատի գնդակները հակառակորդին հարվածում էին, իսկ կրակողը մնում էր անվնաս։ Սերոբը սասունցի հայդուկների մի մասին զինեց իր բերած հրացաններով։

Սերոբը ոչ միայն հայդուկային շարժման կազմակերպիչ ու ղեկավար էր, այլև այդ շարժման սկզբունքները մշակողը ու դրանք գործադրողը։ Նա հայդուկային շարժման տաղանդավոր ստրատեգ ու տակտիկ էր։ Ըստ նրա, հայդուկային շարժման հաջողությունները ռազմական տեսակետից պայմանավորված են հետևյալ սկզբունքներով՝ արագ, կայծակնային տեղափոխություններ, կռվի մեջ մտնել միայն այն ժամանակ, երբ վտանգն անխուսափելի է և ուրիշ ելք չկա, թշնամուն խփել հանկարծակի, և այնտեղից, որտեղից նա չի սպասում։ Մարտը վերջանալուն պես հեռանալ և կորցնել հետքերը։ Սասունի տեղանքը հայդուկի բնական դաշնակիցն է, և հայդուկը պետք է կարողանա այն ավելի լավ օգտագործել, քան թշնամին։ Սերոբի ողջ կյանքը անցավ կռիվների մեջ։ Բայց նա երբեք կռիվ չի փնտրել։ Նրա կռիվները ունեցել են միայն ինքնապաշտպանական նշանակություն։ Սերոբը մի սկզբունք ուներ՝ այնտեղ և այն դեպքում, երբ գոնե փոքր հնարավորություն կա կռվից խուսափելու, պետք է խուսափել։

Սերոբը հայդուկներին բաժանեց մի քանի ջոկատների, որոնք պետք է գործեին լեռնաշխարհի տարբեր մասերում և, օգտվելով քրդերի ու թուրքերի պասիվությունից, հոգ տանեին զինամթերքի ձեռքբերման ու պատրաստման, գյուղերի երիտասարդության զինման ու վարժեցման մասին։ Սերոբին իրենց հպատակությունն ու հավատարմությունը հայտնեցին Սասունի բոլոր իշխաններն ու հայաբնակ գյուղերի տանուտերերը։ Այսպիսով, նրա տնօրինության տակ էին լեռնաշխարհի ոչ միայն զինված ջոկատները, այլև, որոշ առումով. նաև քաղաքացիական կյանքը։

***

Մուշի թուրք կառավարչի լրտեսները անհանգստացնող լուրեր էին բերում՝ սուլթանի իշխանությունը Սասունում ձևական էր դարձել։ Դրության տերը Սերոբ փաշան էր։ Սակայն կառավարիչը չէր համարձակվում ռազմական գործողությունների դիմել։ Նորից հրապարակ նետվեցին օսմանյան պաշտոնավորների սիրած մեթոդները։ Սերոբին սպանելու համար կառավարիչը մեծ գումար խոստացավ։ Անցան օրեր, բայց թուրքական լրտեսներին այդպես էլ չէր հաջողվում կատարել իրենց տերերի հանձնարարությունը։ Այս անգամ կառավարիչը իր մոտ կանչեց քրդական շեկո ցեղի ցեղապետ Խալիլին և նրան շատ ոսկի խոս-

ա.ացավ՝ Սերոբին սպանելու համար։ Այս ցեղի քրդերը հայախոս էին և հնարավորություն ունեին ավելի հեշտությամբ լրտեսելու Սերոբի տեղաշարժերը։ Մի օր, երբ Սերոբն ու Գևորգը Կոփ գյուղում էին, շեկոյի ցեղի մի մեծաքանակ ջոկատ նրանց շրջապատեց։ Պաշարվածներն անմիջապես կրակ բացեցին։ Քրդերը հետ քշվեցին ու դիրքեր գրավելով՝ սկսեցին կրակել։ Սակայն մոսին հրացանն իր գործն արեց։ Շեկո ցեղը առաջին անգամ էր գործ ունենում այդ «սատանի թվանքի» հետ և խուճապի մատնվեց։ Օգտվելով դրանից, Սերոբը հակահարձակման անցավ և քրդերին փախուստի մատնեց։ Այդ կռվում ծանր վիրավորվեց Ադամը։ Նրան հասցրին Գելիեգուզան։ Որոշ ժամանակ անց նա մեռավ Գևորգի ձեռքերի վրա, մեռնելուց առաջ ասելով. «Գևորգ, մի օր անցիր մեր տուն մորս տեսնելու։ Նրան կասես, որ իր մայրական կաթը ինձ հալալ համարի։ Նվիրվեցի հայրենիքին, իրեն մոռացա»։

Գևորգի խմբին էր հանձնարարված զինամթերքի հայթայթման ու հայդուկային խմբերի զինման պարտականությունը։ Նա այդ անում էր մեծ հմտությամբ։ Հաճախ նրա խումբը ռազմամթերք էր բերում նույնիսկ Մուշ քաղաքից, թուրքական զինանոցների հարևանությամբ գտնվող հայերի տներից։ Զենքի մատակարարումը հնարավորություն էր տալիս ակտիվացնելու հայդուկային խմբերի գործունեությունը։ Գևորգը բազմիցս հարկադրված եղավ կռվի մեջ մտնել թուրքական զորամասերի հետ։ Այդ կռիվներում նրան հաջողվեց վճռական գործողությունների ու արագ տեղաշարժերի միջոցով թշնամուն մեծ վնասներ պատճառել։ Տանջակների հասնող այդ մարտական գործողությունների ժամանակ միայն Գալեն վիրավորվեց, բայց շուտով ապաքինվեց։ Այդ կռիվներում իր քաջությամբ ու հնարամտությամբ առանձնապես փայլեց Հագոն (Յագեն)։

Հագոն Խարս գյուղից էր։ Նրա ուսուցիչը եղել էր Մարգար վարժապետը։ Հագոն ու Գալեն Գևորգի ամենամերձավոր զինվորներից էին, նրա զույգ ձեռքերը։ Բայց խառնվածքով Հագոն Գալեի հակապատկերն էր։ Գալեն խաղաղ էր, արտաքուստ ծույլ շարժումներով։ Հագոն՝ եռանդուն ու հետաքրքրասեր։ Գալեի բերանից խոսք պոկելը հերոսություն էր, իսկ Հագոն խոսքաշատ էր, սիրում էր պատմել, երբեմն էլ պատմություններ էր հնարում։

Հագոն կռիվներում զգույշ էր, բայց գործունյա ու հնարամիտ, ընկերների նկատմամբ արտակարգ ուշադիր ու հոգատար։ «Քաղցր լեզու» ուներ և կարողանում էր մարդկանց համոզել։

Ձևաչափ բնավորությունների տարբերությանը, Գալեն և Հագոն

մտերիմ ընկերներ էին։ Գևորգը Հագոյի «քլորոպ լեզուն» հաճախ էր օգտագործում քրդերի շրջանում տարվող աշխատանքներում։ Գևորգից հետո քրդերի համար ամենամեծ հեղինակությունը Հագոն էր։

Սոլուխի ճակատամարտը վերջինը եղավ Հագոյի համար։ Համբացավ նրա խոսքաշեն լեզուն։ Նա իր կյանքով փակեց թշնամու ճանապարհը։

Հայդուկային շարժումն աստիճանաբար իր մեջ ներգրավեց նաև Դաշտի գյուղերը։ Նման խմբեր էին ստեղծվում նույնիսկ Մուշ քաղաքի հարևան գյուղերում, Մշո թուրք կառավարչի, նրա զորքերի ու ոստիկանության քթի տակ։ Կառավարիչը փորձեց գոնե Դաշտի գյուղերում ոչնչացնել հայդուկային ջոկատները և այդ գործը հանձնարարեց Դալիբ էֆենդուն։ Նրան տրամադրվեցին զինվորական ու ոստիկանական ջոկատներ։ Լրտեսների միջոցով պարզելով, որ հայդուկային մի ջոկատ Ցրոնք գյուղում է գտնվում, թուրքական ստվարաթիվ մի զորախումբ պաշարեց այդ գյուղը։ Հայդուկային խումբը ութ հոգուց էր բաղկացած։ Նրանք փողոցներում հարմար դիրքեր բռնեցին, սկսվեց ուժեղ փոխհրաձգություն։ Թուրքերը զգալի կորուստներ կրելով առաջ էին շարժվում։ Զոհվածների թվում էին թուրքական բանակի մի քանի սպաներ։ Պաշարվածները, առանց կրակը դադարեցնելու, նահանջեցին գյուղի ծայրամասը։ Նրանք մտան մի մարագ և շարունակեցին մարտը։ Մարագը գրավելու թուրքերի բոլոր ջանքերն անհաջողության մատնվեցին։ Որոշվեց հրդեհել մարագը։ Դալիբ էֆենդին բարձրացավ մարագի կտուրը և այնտեղից կարգադրություններ էր անում։ Հայդուկները մարագից կրակեցին առատաղի ուղղությամբ։ Դալիբը սպանվեց։ Դալիբի դիակը վերցնելու թուրք զինվորների բոլոր ջանքերը ապարդյուն անցան։ Դիակին մոտեցողներն ընկան նրա կողքին։

Մարագը հրդեհվեց, ներսում եղած հայդուկները հարկադրված դուրս եկան և դռան առաջ շարունակեցին մարտը։ Բոլորը, այդ թվում նաև Գուրգենը, զոհվեցին, բայց իրենց մահով էլ սարսափ տարածեցին թուրքերի վրա, որոնք երկար ժամանակ չէին համարձակվում մոտենալ հայդուկների դիակներին։ Միայն Մկրտիչ անունով մի կտրիճ երիտասարդ հաջողվեց ճեղքել թուրքերի շղթան և հասնել Մեղրագետ։ Գետի ափին նա միայնակ շարունակեց մարտը մոտ 1000 հոգու դեմ։ Երբ փամփուշտները վերջացան, նա վերցրեց դաշույնը։ Թշնա-

մին չէր համարձակվում մոտենալ մահացու վիրավոր կորիճին, մինչև որ գնդակը խոցեց նրա սիրտը։

Գիլակները տեղափոխվեցին Մուշ։ Մի քանի օր քաղաքում մեծ սուգ էր։ Հայերը թաղում էին ութ հայդուկների, իսկ թուրքերը՝ Ցրոնքում զոհված մի քանի տասնյակ սպաների ու զինվորների։

***

Սերոբը խիստ բնավորություն ուներ։ Նրա խստությունները հաճախ դաժանության էին վերածվում, իսկ երբեմն՝ ողբերգական հետևանքներ ունենում։

Այդ տարիներին Սասունում տարածված էր աղջիկ փախցնելու սովորությունը, որի հետևանքով ոչ միայն տղայի ու աղջկա ընտանիքներն ու ազգականները, այլև նրանց գյուղերն էին թշնամանում։

Սերոբը հայտարարեց բոլոր գյուղերում, որ այսուհետև աղջիկ փախցնողները խստորեն կպատժվեն։

Մի օր, երբ Սերոբը իր խմբի հետ գելիեգուզանցի Տեր Քաջի տանն էր, Մակարը նրան ասաց.

— Սերոբ, էսօր աղջիկ փախցրին, որի պատճառով Աղբրիկը և Տալվորիկը թշնամացան Փսանաց գավառի հետ։

— Ո՞վ էր,— զայրացած վեր թռավ Սերոբը։

— Գևորգի հորեղբայր Ավոն փախցրել է Առաքելոց վանքի տնտեսուհի Հերմոյին։

Քիչ հետո եկավ Գևորգը, այստեղ էր նաև Սոսեն։

— Գևորգ, քո հորեղբայր Ավոն աղջիկ է փախցրել,— ասաց Սերոբը։

Գևորգը ցնցվեց։ Նա գիտեր Սերոբի բնավորությունը։ «Տեսնես ի՞նչ կորոշի Սերոբը»,— մտածում էր նա սարսափով։

— Ինքդ պետք է որոշես Ավոյի պատիժը,— անառարկելի տոնով ասաց Սերոբը։

Գևորգը սարսռաց և աղերսանքով դիմեց Սերոբին։

— Սերոբ, քո կարգադրությունն է, ինքդ էլ որոշիր պատիժը։

— Եթե Ավոն քո հորեղբայրը չլիներ, չէր համարձակվի աղջիկ փախցնել, և դրա համար էլ պատիժը դու պիտի որոշես և դու էլ իրականացնես։

— Սերոբ,— դողաց Գևորգի ձայնը,— նրանք ինձ հայրություն են արել։

Սերոբը անհողդողդ էր։ Գևորգը գունատվեց, աչքերը կա-

տաղությունից փայլեցին։ Օդը չէր բավարարում։ Նա արձակեց վերնաշապիկի կոճակները, գլուխը իջեցրեց ծնկներին, մի պահ այդպես մնաց։

— Որտեղ ե՞ն։

— Կողքի մարագում,— պատասխանեց Մակարը։

Գևորգը խելակորույս վեր թռավ և վազեց դեպի մարագը։ Ոտքի հարվածով դուռը բացեց ու կրակեց...

Նա մի մռնչյուն արձակեց և մոլոր քայլերով հեռացավ։ Ոչ ոք չիմացավ, թե ուր գնաց։ Նա այլևս Սերոբի մոտ չվերադարձավ։ Օրեր ու ամիսներ մենակ թափառում էր Շուշնամերկի անտառներում։ Եվ երբ նրա մոտ եկան հայդուկ ընկերները, Գևորգին գտան ողբալի վիճակում, ծերացած, անճանաչելի դարձած։

Մարտական ընկերները աստիճանաբար նրան ապաքինեցին, և նա նորից մտավ պայքարի բովի մեջ։ Այդ օրերին էր, որ ս. Հովհաննու վանքից նրա մոտ եկավ Ստեփան վարդապետը.

— Գևորգ, եկել եմ ասելու, որ Եղսոյի վիճակը ծանր է։ Նա լքել է ամուսնուն և փախել վանք։ Դու գիտես, որ վանահայր Մկրտիչը իշխան Վարդանի հորեղբայրն է։ Նա Եղսոյին գանակոծեց և պահանջեց վերադառնալ ամուսնու մոտ։ Սակայն ոչ ծեծը և ոչ էլ խրատը չօգնեցին։ Նա անընդհատ կրկնում էր «Սպանեք։ Ես տուն չեմ դառնա»։ Վանահոր կարգադրությամբ Եղսոյին գցեցին խոհանոցում աշխատող կանանց մեջ և օր չի լինում, որ նա ծեծի ու վիրավորանքի չենթարկվի։

Մութն ընկնելուն պես Գևորգը շարժվեց վանք, անցավ պարսպի վրայով և ուղիղ գնաց վանահոր խուցը։ Վերջինիս արթնացրեց ու սպառնաց.

— Եթե Եղսոյին բան պատահի, եթե նրան ծեծեք կամ վիրավորեք, ձեր միաբանությունը քարուքանդ կանեմ։

Մինչ վանահայրը կըմբոներ նրա խոսքերի իմաստը, Գևորգը դուրս եկավ ու հեռացավ վանքից։

Մի քանի օր անց Խուլբից վերադառնալիս, ճանապարհին Գևորգի դեմ ելան Խիանքի ցեղապետի զինված ջոկատները (ղուլամները)։ Գևորգը նախահարձակ եղավ։ Սկսվեց դիրքային կռիվ։ Այս կռիվը դիտում էին մեծ թվով քրդեր և հիացած նրա քաջությամբ Գևորգի մասին երգ հորինեցին. «Գևորգ, ափսոս, որ հայ ես»։

Գևորգը չափազանց համեստ մարդ էր, չէր սիրում իր մա-

սին խոսել և չէր կարողանում տանել, երբ իրեն զրվում էին։ Հարաբերությունների մեջ բացառիկ հասարակ էր, պարզ ու շիտակ, իշխանություն ցույց տալու կամ ձևանալու թշնամի էր։ Ոչ մի ձգտում չուներ իշխանություն ունենալու, մանավանդ, առաջին դեմք լինելու։ Նա քաղաքական ճամարտակություններ ու բանսարկությունների կատաղի թշնամի էր, տանել չէր կարողանում «կուսակցություններ խաղացող» եսասերներին։ Նա զինվոր էր, մարտիկ և իր կյանքը անմնացորդ նվիրել էր իր ժողովրդի ազատագրությանը։ Նրա կյանքի բարձրագույն նպատակն էր. «Լաո, լիներ Հայաստան, ես բոստան ցանեի, դու հյուր գայիր և ես վարունգ հյուրասիրեի»։ Նա չէր սիրում նաև իր մասին հորինված երգերը և երբ այդ երգերը երգում էին, ասում էր. «Իմ վրա երգեր մի կապեք։ Ես բոստանչու տղա բոստանչի եմ։ Ինձ բահ տվեք»։

Մի պատառիկ ևս Գևորգի փիլիսոփայությունից։

«Շատերը հարցնում են, թե խմբերով լեռներն ընկնելով և հեղափոխություն կատարելով ազգ կազատվի՞։

Ազգի ազատությունը դյուրին գործ է, եթե սուտ հույս չդնեք հանգիստ կյանքի վրա, որը չունեք, քանի թուրքի ձեռքի տակ եք, և չխաբվեք հարստություններով, որ ձերը չէ։ Մտածեք, որ մեր կյանքը կարճ է, շատերը մեռնում են չծնված, շատերը՝ խելքի չեկած ու աշխարհ չտեսած։ Տեսնողներն էլ ապրում են շատ-շատ 50, 60 կամ 70 տարի։ Երբ էլ լինի՝ մեռնելու ենք։ Բայց եթե չսպասենք աստծո կամքին և ուզենանք մեր կամքով մեռնել՝ այն ժամանակ կազատվենք։ Աստված մեզ ազատում է մարդ արարածի կենաց տանջանքներից, իսկ մարդը իրեն ազատում է մարդու փորձանքից... Թե որ բոլոր հայերը երեկոյան ուխտ անեն մեռնել, առավոտյան արևը դեռ չծագած՝ ազատ կլինեն»։

Երբ կռվի մեջ չէր, Գևորգը աշխարհի ամենախաղաղ ու ամենահամեստ մարդն էր, իսկ երբ կռիվ էր, նա կերպարանափոխվում էր։ Կռվում նա տիրակալ էր, առյուծ, որ իր կեցվածքով բոլորին հարկադրում էր իրեն ենթարկվել։ Նա նեղ օրվա, շարքաշ կյանքի մարդ էր։ Օրերով սոված ու ծարավ էր մնում, անմռունչ դիմանում սառնամանիքներին, բնության բոլոր արհավիրքներին, և երբ ընկերները չէին դիմանում ու տրտնջում էին, ասում էր. «Հայդուկի բախան է այդպես։ Եթե հայդուկ ես, դիմացիր»։

Գևորգի համար ամենաշռայլ ու ամենաբանկալի բանը պարն էր։ Եվ երբ տրամադրությունը լավ էր լինում, նա պարի էր քաշում իր ընկերներին ու պարում էր ինքնամոռաց, պարում ողջ էությամբ։

Մինչև Սերոբի Սասուն գալը լեռնաշխարհում հայդուկների փաստացի ղեկավարը Գևորգն էր, բայց նա սիրով տեղը զիջեց Սերոբին։ Նա գերադասում էր հայդուկապետ ունենալ դրրսից և ամեն ինչ արեց, որ հայդուկները ենթարկվեն Անդրանիկին, իսկ վերջինս, առանց նրա հետ խորհրդակցելու, հարց չէր լուծում։

Գևորգը համընդհանուր հարգանք ու սեր էր վայելում։ Երբ նա որևէ գյուղ էր մտնում, այդ թվում նաև քրդական գյուղ, նրա կյանքի անվտանգությունը դառնում էր տվյալ գյուղի հասարակության պատվի ու պատասխանատվության գործը։ Գյուղի ներսում ու ճանապարհներին, Գևորգի իջևանած տան շրջապատում գյուղացիները շուրջօրյա հերթապահում էին։

***

Թահսին փաշան հնարներ էր որոնում Սերոբին շարքից հանելու համար։ Նրա հայացքը նորից շուռ եկավ դեպի քուրդ ցեղապետները։ Նա նորից իր մոտ հրավիրեց շեկո ցեղի ցեղապետ Խալիլին և նրան նորից առաջարկեց միջոց գտնել Սերոբին սպանելու։

Զմեռ էր։ Սերոբը իր խմբով Գելիեգուզան գյուղի Տեր Քաջի սարում գտնվող գոմում էր։ Խալիլին հաջողվում է ոսկով շլացնել Գեղաշեն գյուղի ռես Ավեին։ Ավեին թույն են տալիս, որը պետք է խառներ ծխախոտի հետ և տար Սերոբին։

Սեմալի մի գոմում թախտի վրա պառկած էր Անդրանիկը։ Նա հոդացավ ուներ և հայդուկ Հարությունի հետ հեռացել էր Սերոբի խմբից։ 1899 թ. նոյեմբերի 11-ի երեկոյան Հարությունը տագնապած ներս ընկավ ու դիմեց Անդրանիկին.

— Թուրքական ու քրդական զորքը Գելիեգուզանի կողմն են գնում։

— Շա՞տ են։

— Հազար հինգ հարյուր-երկու հազար մարդ։

Անդրանիկը փորձեց վեր կենալ, բայց հոդերի ցավից նորից ընկավ թախտին։

— Օգնիր բարձրանամ։

Հարությունի օգնությամբ նա մի կերպ բարձրացավ և գոմի պատուհանից տեսավ զինվորների ու զինված քրդերի մեծ բազմությունը։ Նրանց առջևից մի ձիավոր էր գնում։

— Խալիլն է,— ինքն իրեն ասաց Անդրանիկը,— գնում է Սերոբի դեմ։ Սերոբին դժբախտություն է պատահել, թե չէ Խալիլը չէր համարձակվի ձմռանն այս կողմերը երևալ։ Շտապ հասիր Գելիեգուզան, մի լուր բեր։

Գելիեգուզան։ Ձմռան գիշեր էր։ Խալիլ փաշայի զորախումբը շրջապատել էր գյուղը։ Երբ առավոտյան Սոսեն Սերոբին հայտնեց իրենց կողմը շարժվող զորքերի մասին, նա ուզեց տեղից վեր բարձրանալ, բայց չկարողացավ և վար ընկավ։ Ձեռքը տարավ գլխին, մատների մեջ մազերի փունջ մնաց։

— Գեղաշենի ռեսը մեզ թունավորել է,— գոռաց նա։

Սոսեն ու հայդուկները Սերոբի թևը մտան ու 12 հոգով շարժվեցին դեպի Անդոկ և դիրքեր գրավեցին։ Սկսվեց կատաղի փոխհրաձգություն։ Սակայն քիչ անց հրացանը Սերոբի ձեռքից վար ընկավ։ Սոսեն վերցրեց ամուսնու հրացանն ու խմբի մյուս անդամների հետ կրակ բացեց թուրքերի վրա։ Սպանվեցին Սերոբի երկու եղբայրները և խմբի ևս չորս անդամներ։ Պատմում են, որ այդ տեսնելով, Սոսեն բարձրացավ քարաժայռին ու բղավեց. «Անդրանիկ, Սերոբի տեղը նեղ է, Գևորգի, Մակարի հետ օգնության հասիր»։ Տեր Քաջը իր որդի Ադամի հետ հրացանը ձեռին տնից դուրս եկան թշնամու առաջն առնելու, բայց դեռ մի քանի քայլ չէին արել, երբ մահաբեր գնդակը խոցեց նրան։

Սերոբը սպանված ընկած էր։ Վրա հասած Խալիլը կտրեց մեռած քաջի գլուխը և տվեց իր զինվորներից մեկին։ Գլխատված Սերոբի մարմնի մոտ կանգնած էր ողբացող Սոսեն՝ որդու հետ։ Սոսեն Խալիլին խնդրեց որդուն ձեռ չտալ, բայց Խալիլը կարգադրեց նրան սպանել մոր կրծքի վրա։ Կռվում վիրավորված, որդեկորույս մորն ու ամուսնուն կորցրած դյուցազնուհուն կապեցին ձիու վրա ու գերի տարան։

Ո՞վ էր Սերոբը, այդ ի՞նչ յուրահատուկ դյուցազն էր, որի առաջ սասանվում էին նահանգի իշխանություններն ու զորքը, որի «անունով թնդում էին Բաղեշի ու Խլաթի լեռներն ու ձորերը...»։ Ո՞վ էր այդ Սերոբը, որին տարիներ շարունակ վալիները, բանակն ու աշիրեթությունները ոչ միայն բռնել, այլև վնասազերծել չէին կարողանում, և որը «մեկ այստեղ, մեկ այնտեղ հայտնվելով, պատժում էր ժողովրդի թշնամիներին...

Դա հայ ժողովրդի բարկության սրբազան աղաղակն էր, որ արտահայտվել էր իր զավակի հրաշալի պատկերով»։

Սերոբի գլուխը Խալիլը Մուշ, ապա Բաղեշ տարավ որպես հաղթական ավար և, թուրքական իշխանություններն այն իսկապես ընդունեցին որպես մեծ հաղթանակ։ Հաղթանակի ծիսակատարությունները մի քանի օր տևեցին, որից հետո Սերոբի գլուխը հանձնվեց հայկական եկեղեցուն ու թաղվեց նրա բակում, Մարգար վարժապետի կողքին, իսկ Սերոբի մարմինը թաղվեց Գելիեգուզանի եկեղեցու բակում։ Հինգ տարի անց նրա կողքին թաղեցին Տարոն բարձրավանդակի մի այլ հսկայի՝ Հրայրին։ Նրանց գերեզմանը դարձավ ուխտատեղի ողջ հայության համար։

«Սերոբը,— գրեց Ա. Զոպանյանը «Անահիտ» հանդեսի 1899 թ. № 1—2-ում,— արժանի է, անշուշտ, ոչ միայն հարգանքի, այլև հիացման։ Այդ բաղեշցի հայը նկարագիր մըն էր, ապստամբ ու անվախ հոգի մը. Բաֆֆիի Սահրատը իրականացնող տիպար մը»։ Գերմանացի հետազոտող Վալմար Բելկին են պատկանում հետևյալ խոսքերը. Սերոբը «իսկապես հավատում էր իր հեղափոխական գործով հայ ժողովրդին օգնել կատում էր իր հեղափոխական գործով հայ ժողովրդին օգնել կրոողանալուն, նրան տաճկական կամ մանավանդ քրդական բռնակալությունից ազատելուն... Սերոբը ազատության անհրկյուղ մարտիկ էր»։

Գնդակ որոտաց նոյեմբեր ամսուն,
Պաշարված ենք մենք, իմ սիրուն Սոսե.
Ձենք վեր առնելով, վերջին քաջության
Քո սիրած Սերոբի Ընտրյալ օրն այս է։

Ձայն տվեց Սոսեն. «Սերոբ ջան, ես եմ,
Զինված պատրաստված, ձայնիդ կսպասեմ,
Քեզ հետ կռվելով, քո կողքին մեռնելով,
Ամեն օր, ամեն ժամ պատրաստ է Սոսեն»։

Ավետիք Խաչակյան

ՍԵՐՈԲԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

. . . . . .

Նեմրութա սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթան.
Մենակ Սերոբի աղբյուրը սրտի

Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա—
Ազատ օրերի, դպար օրերի
Մարալ ժողովրդի սրտի մեջ կերթա...

Նեմրութա սարը քառասուն ժեռ ունի,
Քառասունի գլխուն մարմար քարափ կա.—
Էն քարփի վրա արծիվն է նստեր—
Ժեռերի արքան իր գահի վրա,
Ու կառուցի մեջ մի սիրտ է բռնէր,
Եվ զի կկանչե, չորս դին ձեն կուտա
Սարերի արքան ամպերի վրա...
— «Է՞յ, ականջ արե՛ք, հոգե՛ր ու հավքե՛ր,
Կտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մեջ,—
Սիրտը, որ ձեզնեն բանձրանց կթոներ։
Է՞յ, ականջ արե՛ք, սարե՛ր ու ձորե՛ր,
Սերոբ փաշայի սիրտն է կըտցիս մեջ,
Սիրտը, որ ձեզնեն մեծ էր ու խորն էր։

. . . . . .

Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում լո՛ւյս կուտա,
Ու քարէրում, սև հողերում
Թեկուզ թաղեն՝ չի մարի,—
Սուրբ վաթանի, ազգի սիրում
Հուր հավիտյան չի մարի։
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում բո՛ց կուտա.
Սարի սառույց, ձյունների մեջ
Թեկուզ թաղեն՝ չի սառի,
Ժողովրդի ազատ օրվա,
Գատվի սիրում՝ չի սառի,
Հուր հավիտյան չի սառի....

***

Թուրքերը Մուշում իրենց հաղթանակն էին տոնում, իսկ հայերը իրենց մեծ կորուստն էին սգում։ Սերոբի սպանությունը հուսալքության դողով պատեց Սասունն ու Տարոնը։ Թուրք հրամանատարներն ու քուրդ ցեղապետներն աճապարում էին օգտվել այդ վիճակից։

1899 թվի նոյեմբերին թուրքական մի զորամաս և նույն Բշարե Խալիլի աշիրեթությունը հարձակվում են Սպաղանք

գյուղի վրա։ Նրանց դեմ է դուրս գալիս Մակարը իր խմբով, որը դիրքեր գրավելով ժայռերի ծերպերին՝ կրակի տակ է առնում թշնամուն։ Տալով 10 սպանված, Խալիլը հարկադրված նահանջում է և անցնում Սասնո գետի մյուս ափը։ Խալիլը օգնական ուժեր է ստանում և վերսկսում է հարձակումը, բայց նրան չի հաջողվում գետն անցնել։ Խալիլը հարկադրված հեռանում է։

Մակարը Սպաղանք գյուղի իշխանն էր, միաժամանակ՝ գյուղի զինված ջոկատի զեկավարը, Սասունի հայդուկային շարժման հիմնադիրներից մեկը։ Աժդահա արտաքինով, քաջարահասակ, թիկնեղ, խոշոր գլխով ու մեծ աչքերով, դանդաղ, բայց հաստատուն ու վճռական շարժումներով։ Տորք Անգեղի կերպարանքով այս առնական տասունցին օժտված էր լեռնցուն բնորոշ բնավորության գծերով։ Նա նրբանկատ էր և փխրուն սիրտ ուներ, բայց առանձին դեպքերում նրա դաժանությունը սահման չէր ճանաչում։ Անվախ ու քաջ մարդ էր, չէր հապաղի մեն-մենակ թշնամու վաշտերին դիմակայելու։ Խիստ բարքերի ու բարձր պահանջկոտության տեր էր, իշխանական կեցվածք ուներ, և վա՜յ նրան, ով Մակարի զայրույթին արժանանար։

Պարզամիտ էր և անհիշաչար, չէ-ն երեսին ասող էր և զուրկ խորամանկությունից և երեսպաշտությունից։

Ընդոստ հայդուկ էր, ամեն մեկին չէր ենթարկվի։ Բոլոր հարցերում ուներ իր սեփական կարծիքը և հայդուկային շարժման մեջ ինքնավար և անկախ կեցվածք ուներ։ Մարտական գործողությունների ժամանակ բացառիկ կարգապահ ու պարտաճանաչ էր։

Հայդուկային տնական անցյալն ու մեծ վաստակը, շիտակությունն ու բաջությունը, բարությունն ու նվիրվածությունը Մակարին դարձրել էին հայդուկային շարժման ամենահեղինակավոր զեկավարներից ու երախտավորներից մեկը։

Ահա թե ինչու թուրքական իշխանությունները ամեն կերպ աշխատում էին Մակարին իրենց ձեռքը գցել և ոչնչացնել նրա մարտական ամրոցը՝ Սպաղանք գյուղը։

Սերոբի սպանության լուրը առնելով, դեպի Գելի շտապեց նաև Գևորգը։ Անդրանիկն ու Գևորգը անմիջապես գործի անցան։ Որոշվեց նախ պատժել գեղաշենցի ռես Ավեին։

1900 թ. ապրիլյան մի օր Գևորգը շենիկցի Մանուկի ու Ղազարի հետ գնաց դավաճանի տուն։ Երբ Գևորգը վերջնականապես համոզվեց, որ Սերոբին Ավեն է թունավորել, դավաճանի հետ նրա ընտանիքին էլ դաժանորեն պատժեց։ Նրան հաջողվեց Ավեից իմանալ դավադրության մյուս մասնակիցների, մի քանի դավաճանների ու լրտեսների անունները, որոնց բոլորին հետագայում ոչնչացրեց։

Մի անգամ, երբ Անդրանիկն ու Գևորգը անցնում էին Գելիի փողոցներով, բակերից մեկում տեսան ալեհեր, փարթամ մորուքով մի ծերունու։

— Բարև, քեռի,— բղավեցին նրանք։ Պատասխան չստացան։ Բարևը կրկնեցին, դարձյալ՝ անպատասխան։

— Գևորգ, սասունցիները մեզնից երես են դարձրել։ Կամ կպանենք Խալիլին, կամ Սասունում մենք տեղ չունենք։ Սասունցիներին պահողը նրանց հավատն ու ոգին է, եթե դրանք վերանան, Սասունը չի դիմանա,— տխուր ասաց Անդրանիկը։

Կատարվեց աշխատանքի բաժանում։ Անդրանիկն ու Մակարը զբաղվելու էին մարտական ջոկատների վերակառուցմամբ ու համալրմամբ, իսկ Գևորգը՝ զինամթերքի հայթայթմամբ և թշնամուն ահաբեկող պարտիզանական հարձակումների կազմակերպմամբ։

Սերոբի սպանությունից հետո առանձնապես ծանրացել էր Մուշ քաղաքի հայ բնակչության վիճակը։ Քաղաքի հայկական թաղերում շուրջօրյա ոստիկանական հսկողություն էր սահմանված, որ ուղեկցվում էր բռնություններով ու թալանով։ Քաղաքի հայությունը ահաբեկված էր։ Գևորգն իր փոքր խմբով լեռներից իջավ դաշտ և գիշերը մտավ քաղաք, նա ոստիկանության աչքի առաջ անցավ հայկական թաղերով, առևտրականներից մեկի տնից մի քանի պարկ վառոդ վերցրեց և հեռացավ քաղաքից։

1899 թվի աշնանն ու ձմռանը Գևորգը մի քանի ընդհարումներ ունեցավ թուրքական զափթիեների ու ոստիկանների հետ և կարողացավ դրանցից անվնաս դուրս գալ։ Մի անգամ, երբ նա երկու հայդուկի հետ Սերոբի Վերին գոմում էր, արշալույսին շրջապատվում է, բայց հայդուկներին հաջողվում է մարտի մեջ մտնել, սպանել երկու թուրք զինվորի և օգտվելով մառախուզից, դուրս գալ շրջապատումից ու գնալ դեպի Վերին Սասուն։ Մի քանի ամիս անց Գևորգի հետ ճիշտ նման մի այլ դեպք պատահեց։ Սննդամթերք հայթայթելու նպատակով 50 ոստիկաններ շրջապատում են գյուղը, բայց հայդուկները կարողանում են կռիվ տալով ետ քաշվել դեպի լեռները։

Վերադարձի ճանապարհին նա մտավ Շենիկ գյուղ և տեղի խմբին հանձնարարեց պարզել, որտեղ է Խալիլ փաշան և ինչ է անում։ Այստեղ Գևորգին մոտեցավ սուրհանդակը Մոկունք գյուղից և պատմեց, որ Մոկունքում տեր ու տիրական էր դարձել Շերիֆ աղան։ Օր չի անցնում, որ որևէ ավազակարարո գործողություն չկատարեր, սանձարձակությամբ չզբաղվեր։ Գյուղում կար մի գեղեցիկ աղջիկ՝ Եսթեր անունով, որը ծնողներ չուներ։ Շերիֆը գնում է նրանց տուն։ Եսթերը համաձայնվում է նրան ընդունել, իսկ երբ Շերիֆը քնում է, վերցնում է դաշույնը և խրում նրա կուրծքը։ Եսթերը եղբոր հետ Շերիֆի դիակը փաթաթում է վերմակով և թաղում գյուղից ոչ հեռու գտնվող ձորի տիղմի մեջ։

Բնականաբար, թուրքական իշխանություններն սկսում են փնտրել Շերիֆին և մեկ շաբաթ անց գտնում են դիակը։

Եսթերը ձերբակալվում է։ Չնայած նա պատմում է Շերիֆի սպանության մանրամասները և ասում, որ համագյուղացիներն այդ թուրքի սպանության գործում ոչ մի մասնակցություն չեն ունեցել, ոստիկանությունը մեծ թվով մարդկանց ձերբակալեց, այդ թվում՝ 70 կանանց։ Թուրքերը Մոկունք գյուղը թալանեցին։ Բանտարկված մոկունքցիներից 15-ին թունավորելով սպանեցին։ Մոկունքին բաժին ընկած դժբախտությունը մեղմելու համար Գևորգը գյուղի մի քանի խարխուլ տներ այրում է և մեղքը բարդում թուրքերի վրա։ Նա թուրքերին սպառնում է, որ եթե մոկունքցիները բանտից չազատվեն, ամբողջ շրջանը կբարձրանա իշխանությունների դեմ։ Գևորգի համառ ջանքերի շնորհիվ մոկունքցիների մեծ մասը բանտից ազատվեց։

Շուտով Անդրանիկին ու Գևորգին լուր բերեցին, որ Խալիլը Մուշ քաղաքում է։ Գնացել էր կառավարչից իր ծառայության վարձը ստանա և հաջորդ օրը, վաղ առավոտյան, բարձրանալու էր շեկո ցեղի նստավայրը։ Սերոբին սպանելու համար Խալիլին սուլթանը փաշայի կոչում էր շնորհել և պարգևատրել պատվո նշանով։ Նա նվեր ստացավ նաև Ալվառինջ գյուղից գանձվող տասնորդ հարկը։

Խալիլի ճանապարհը անցնում էր Մառիկի կիրճով։ 25 հայդուկներ Անդրանիկի, Գևորգի, Մակարի ու Գալեի հետ շարժվեցին դեպի կիրճը ու դարան մտան։ 1900 թվի նոյեմբեր ամիսն էր։ Պատմում է Անդրանիկը. «Ասացի, որչափ կարելի է, պետք է աշխատել Խալիլին ողջ բռնել, որպեսզի հարցաքննենք նրան, թե մինչև այժմ հայերից ովքե՞ր են եղել նրա լրտեսները»։

Միջօրեին առաջինը կիրճ մտավ թալանված կայքի ու ապրանքների քարավանը, ապա երևաց ինքը՝ Խալիլը, շրջապատված 40 հոգուց բաղկացած հեծյալ խմբով։ Դարան մտածները

թուլեցին, որ քարավանն անցնի և կրակ բացեցին այն ժամանակ, երբ հեծյալ խումբը հավասարվեց իրենց։ Առաջին համազարկից հեծյալների մեծ մասը գետնին տապալվեց։ Սպանվեց նաև Խալիլի ձին։ Խալիլը վայր ընկավ, բայց ոտքը մնաց ասպանդակի մեջ։ Հայդուկները վրա հասան, Խալիլին ոտքի կանգնեցրին, խուզարկեցին։ Գտան 13 հայ լրտեսների անունները պարունակող փաստաթուղթը և ապա Խալիլի գլուխը կտրեցին, գցեցին պարկի մեջ և շարժվեցին դեպի Գելի։ Ուղիղ գնացին այն ծերուկի տունը, որը մի քանի օր առաջ նրանց բարևին չէր պատասխանել։ Ծերուկը նույն դիրքով նստած էր։

— Բարև՛, քեռի։

Պատասխան չկար։ Մոտեցան ծերուկին ու պարկի միջից Խալիլի գլուխը գլորեցին նրա ոտների տակ։ Ծերուկը նայեց նրանց, թույլ ժպտաց ու ասաց.

— Լաո, սասունցուն միայն մի գազանից ազատեցիք,— ապա ոտքի կանգնելով կանչեց,— Է՜, Խալիլի գլուխը մի ոչխար արժե։ Ոչխա՛ր մորթեք։

...Զմռան համար ննդամթերք հայթայթելու նպատակով Գևորգը նոյեմբերի սկզբներին իջնում է Մշո դաշտ և գիշերը կանգ առնում Բերդակ գյուղում։ Արյունարբու Ալա և Հյուսնի բեկերը շարժվում են դեպի Բերդակ, բայց նրանք դեռ գյուղ չէին հասել, երբ Գևորգը գյուղից դուրս է գալիս և դիրքեր գրավում լեռան փեշերին։ Կռիվը սկսվում է։ Թուրքերին օգնության են գալիս քրդերը։ Հայդուկները մինչև մութն ընկնելը կարողանում են կասեցնել բազմիցս գերակշռող թշնամու հարձակումները և ապա աննկատ հեռանալ դեպի Սասուն։

Իրերի բերմամբ, Բերդակ գյուղում Գևորգը մի քանի կռիվներ է ունեցել թուրքերի ու քրդերի դեմ, և գյուղին կից ժայռը ստացել էր «Գևորգի քար» անունը։

Այդ օրերին Ալա բեկը 200 հեծյալով շրջում էր գյուղերը, խուզարկություններ կատարում և, երբ հրացան կամ սառը զենք էր գտնում, մարդկանց տանջանքների էր ենթարկում։ Բերդակի ռես Բարսեղը Ալա բեկին հայտնում է, որ Գևորգը իրենց գյուղում է։ Արշալույսին գյուղը շրջապատվում է։ Այդ օրը Գևորգը ջերմում էր և կռվում էր հիվանդագին լարվածությամբ։ Թշնամու հարվածները ետ մղելով, հայդուկներն աննկատ քաշվում են գյուղի ետնամասը։ Գիտենալով իր անվան ազդեցության ուժը, մանավանդ, քրդերի շրջանում, և ձգտելով ժամանակ

շահել, Գևորգը բղավեց. «Ես Գևորգ Չաուշն եմ»։ Թշնամու զորքի մեջ խուճապ առաջացավ, և մինչև թուրքերը կկարգավորեին իրենց ուժերը, հայդուկները նահանջեցին։

Հայդուկները գյուղամերձ այգիներում արածող ոչխարների միջով թաքուն անցան կողքի բլուրը։ Թշնամին արդեն գյուղ էր բերել մոտ 200 զինվոր ու զինված քրդեր։ Թուրքական մի հեծյալ ջոկատ փորձեց շրջանցել հայդուկներին, բայց տեղանքը խանգարեց։ Կռիվը գնալով բորբոքվում էր։ Գևորգը կռիվ մղելով քայլ առ քայլ շարժվում էր դեպի Հավատորիկ գյուղը։

Մինչև երեկո կռվելով և 20 կիլոմետր ճանապարհ կտրելով, Գևորգի խումբը բարձրանում է Ծիրին Կատար։ Թշնամին համոզված էր, որ հայդուկներն իրենց ձեռքում են և շարունակում էր հետապնդել նրանց։

Խումբը բոլոր կողմերից շրջապատված էր։ Մուշից մեծ քանակությամբ մարդիկ էին եկել տեսնելու շորս հայդուկի կռիվը հազարանոց թուրքական բանակի դեմ։ Խումբը ուժասպառ հասնում է Կոբեկի աղբյուր։ Թվում էր, թե փրկության ոչ մի հույս չկար, բայց այս անգամ էլ բախտը ժպտաց Գևորգին։ Հանկարծ արևը պահ մտավ ամպերի տակ, մառախուղը կտրեց մինչև գետին։ Թշնամին աչքից կորցրեց հայդուկներին։ Եվ ապա, ո՜վ հրաշք... Թշնամու թիկունքում հրացանային համազարկի ձայներ լսվեցին։ Թուրքերը կարծեցին, թե հայդուկներին օգնական ուժեր են գալիս և խաչաձև կրակի տակ ընկնելու վտանգից խուսափելով փախան։ Ոչ մի օժանդակ ուժ էլ չկար։ Հազոն էր, որ Մուշից հանձնարարությամբ Գևորգի մոտ էր գալիս, և ուշադրություն չդրավելու համար ցնցոտիներ էր հագել ու ուսից մաղ կախել։ Տեսնելով թուրքական զորքերին, նա ճանապարհից դուրս է գալիս, ձորը մտնում և ծպտված առաջ շարժվում։ Քարերի մեջ մի սպանված թուրք զինվոր է տեսնում։ Մոտենում է, նրա հրացանն ու փամփուշտները վերցնում, ապա, դիրք գրավելով, կրակ բացում թուրքերի վրա։

Այս կռվի թողած տպավորությունը ցնցող էր։ Այն վկայում էր պարտիզանական կռիվներ մղելու Գևորգի փայլուն տաղանդի մասին։ Հարյուրավոր թշնամիներով շրջապատված, շորս հայդուկներից երկուսը կրակում էին, իսկ մյուս երկուսը բարձրանում սարը։ Վերջիններս դիրքեր են գրավում և սկսում կրակել, որպեսզի մյուս երկուսը կարողանան իրենց դիրքերը թողնել և նահանջել։ Ու այդպես ամբողջ օրվա ընթացքում։

Բերդակի կռվից հետո Թուրքական իշխանությունները այդ գյուղում մի ջոկատ զինվոր թողեցին հայդուկների դեմ տայքարելու համար։ Չնայած դրան, Գևորգը մի քանի օր հետո իր խմբով վերադառնում է Բերդակ, խմբի անդամներին թողնում գյուղից դուրս, մենակ մտնում է գյուղ և արհամարհելով Թուրքական ջոկատի ներկայությունը, ուղիղ գնում է դեպի դավաճան Բարսեղի տուն։ Նրան տնից դուրս է կանչում և տեղնուտեղը սպանում։

Խալիլի գործակալների ցուցակում էր նաև մշեցի Ռուբենը։ Այս դավաճանը բնակվում էր Մուշի Թուրքական թաղում և խուսափում էր հայերի հետ հանդիպելուց։ Գևորգը քրդի տարազ հագած մտնում է Մուշ, գնում Թուրքական թաղամաս և սպանում Ռուբենին։ Մինչ ոստիկանությունն ուշքի կգար, Գևորգն արդեն անհետացել էր։ Այդ ահաբեկչությունը Մուշում սարսափի մթնոլորտ ստեղծեց։ Քաղաքում արտակարգ դրություն հայտարարվեց։ Չնայած դրան, Գևորգը մնում է քաղաքում, մասնակցում անգի մի խումբ հայերի ժողովին, նրանց հանձնարարություններ տալիս և գիշերն անվնաս հեռանում։ Ճանապարհին հայդուկներից մեկը՝ Համբարձումը, վնասում է ոտքը։ Գևորգը նրան թողնում է Բերդակ գյուղում, իսկ ինքը բարձրանում է լեռը։

Առավոտյան Թուրքերը պաշարում են Բերդակը։ Համբարձումը կաղալով շարժվում է դեպի լեռը։ Թուրքերն աշխատում են նրան կենդանի բռնել և կրնկակոխ հետապնդում են։ Գևորգը սպասում է մինչև հետապնդողները մոտենան ու կրակ է բացում։ Թուրքերը ետ են փախչում, իսկ Համբարձումը միանում է Գևորգի խմբին։

Ձմեռը Գևորգը նորից է Մուշ գնում վառոդ տեղափոխելու։ Նա շալակավորների հետ քաղաքից վերադառնում էր, երբ Բնավի գյուղի մոտ դեմ է առնում Թուրքական մի ջոկատի։ Հայդուկներն անմիջապես համալարկ են տալիս։ Թուրքերը մի քանի զինվոր կորցնելով փախչում են։

Գևորգը մի պարտականություն էր ստանձնել և այն բարեխղճորեն կատարում էր. երբ դավաճանին սպանում էր, նրա որբ մնացած երեխային կամ երեխաներին տանում էր Առաքելոց վանք և կրթության տալիս։

Գևորգը Սիրին Կատար էր հասել, երբ լուր բերին, թե Հրայրը եկել է Շենիկ, հրավիրել իշխանների, տանուտերերի, հայդուկների և դաշնակցական կոմիտեի ղեկավարների ժողով և հայդուկներից պահանջել զենքերը վար դնել և գործողությունները դադարեցնել՝ ի շահ ընդհանուր ապստամբության։

Ժողովին մասնակցել է նաև Անդրանիկը, որ հանդես է եկել Հրայրի պահանջի դեմ։ Հրայրը Անդրանիկին առաջարկել է հեռանալ Սասունից։ Անդրանիկն ու հայդուկները հայտարարել են, որ հրաժարվում են ենթարկվել Հրայրի կարգադրություններին։ Սակայն ժողովում ճնշող մեծամասնություն են կազմել Հրայրին հարողները։

Անդրանիկն ու իր վեց կողմնակիցները զինաթափվել են։

Այդ լուրը ցնցեց, նույնիսկ հավասարակշռությունից հանեց Գևորգին։ Հաջորդ օրը դեռ լույսը չէր բացվել, երբ Գևորգը ճանապարհ ընկավ Շենիկ։ Սեմալում նրա հետ հանդիպելու եկան զինաթափ հայդուկներն ու Անդրանիկը։ Հուզիչ հանդիպում էր։ Հատկապես դառնացած էր Մակարը։ Շուտով Գելիեգուզան գյուղում հավաքվեցին հայդուկներն ու այն տանուտերերը, որոնք Հրայրի գործողություններից դժգոհ էին։ Դիմելով հավաքվածներին՝ Գևորգը առաջարկեց ետ պահանջել զենքերը։ Հրայրը Գևորգի համառությանն ու վճռականությանը ծանոթ էր և ստիպված վերադարձրեց հայդուկների զենքերը։

Հայդուկները Գևորգին խնդրեցին դառնալ իրենց ղեկավարը։ Գևորգը վճռականապես հրաժարվեց և առաջարկեց Անդրանիկի թեկնածությունը։ Անդրանիկը դարձավ հայդուկապետ։

1 «Դրոշակ», 1907 թ., № 8
2 «Հնչակ», 1889 թ., № 3
3 Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988 թ., էջ 244
4 «Հնչակ», 1890 թ., № 10
5 Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988 թ., էջ 244
6 «Դրոշակ», 1907 թ., № 8
7 «Հնչակ», 1892 թ., № 6
8 «Դրոշակ», 1893 թ., № 5
9 «Հնչակ», 1894 թ., № 1—2
10 Ն. տ. № 3
11 Ն. տ. № 13
12 Ն. տ. 1895 թ., № 1
13 Ն. տ. 1894 թ., № 12
14 Ն. տ. 1895 թ., № 1
15 «Դրոշակ», 1895 թ., № 1
16 «Հնչակ», 1895 թ., № 1
17 «Դրոշակ», 1970 թ., № 8
18 Ն. տ. 1894 թ., № 13
19 «Հնչակ», 1896 թ., № 4
20 «Դրոշակ», 1894 թ., № 9
21 Ն. տ. № 14
22 Ն. տ.
23 Ն. տ. 1895 թ., № 1
24 «Հնչակ», 1895 թ., № 14
25 «Դրոշակ», 1896 թ., № 8
26 Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 77
27 ՀԽՍՀ ԳԱ-ի հասարակական գիտությունների ինֆորմացիոն բյուլետեն, 1983 թ., № 3, էջ 5

28 Саркисян Е., — Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.. Е., 1972, с. 202
29 *«Հնչակ», 1895 թ., № 4*
30 *Ն. տ.*
31 *Ն. տ. № 8 և 12—13*
32 *«Դրոշակ», 1895 թ., № 8*
33 *Ն. տ. № 9*
34 *«Հնչակ», 1895 թ., № 15*
35 *Ն. տ.*
36 *Ն. տ. 1894 թ., № 13*
37 *«Դրոշակ», 1895 թ., № 2*
38 *Ն. տ.*
39 *Ն. տ. 1894 թ., № 13*
40 *Ն. տ. № 11*
41 *«Հնչակ», 1895 թ., № 4*
42 *Ն. տ. 1896 թ., № 7*
43 *«Դրոշակ», 1895 թ., № 17—18*
44 *«Հնչակ», 1896 թ., № 4*
45 *Ն. տ. № 2*
46 *«Դրոշակ», 1896 թ., № 9*
47 *«Հնչակ», 1896 թ., № 20*
48 *«Դրոշակ», 1895 թ., № 17—18*
49 *Ն. տ. № 21*
50 *Ն. տ. 1896 թ., № 16*
51 *Ն. տ. 1897 թ., № 16*
52 *Ն. տ. 1896 թ., № 11*
53 *Ն. տ. 1898 թ., № 2*
54 *Ն. տ. 1897 թ., № 16*
55 *Ն. տ. 1896 թ., № 14*
56 *Ն. տ. 1896 թ., № 23*
57 *Ն. տ.*
58 *«Հնչակ», 1896 թ., № 20*

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՐԱՍԿԻԶԲ

Աշխարհը թևակոխել էր 20-րդ դարը, իսկ կապիտալիզմը՝ իր զարգացման բարձրագույն փուլը՝ իմպերիալիզմի դարաշրջանը։ Ոչ միայն զարգացած, այլև գաղութային և կախյալ երկրներում վերելք էր ապրում դասակարգային պայքարը։ Միջազգային ասպարեզում դասակարգային հարաբերությունների ծայր աստիճան սրված լինելը և նոր՝ սոցիալիստական գաղափարները 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությանը տվեցին միջազգային նշանակություն, հսկայական դարձրին նրա ազդեցությունը աշխարհի մոտ ու հեռու, զարգացած ու թույլ զարգացած հասարակությունների վրա։

Բացառություն չէր կազմում նաև օսմանյան կայսրությունը, որի սոցիալ-քաղաքական վիճակը նրան ընդհուպ մոտեցրել էր բուրժուական հեղափոխությանը։

Թուրքիան ծայր աստիճան հետամնաց երկիր էր։

Կայսրության զարգացումը կասեցնող պատճառները ավելի խորացան 20-րդ դարի սկզբներին։ Իրողություն է, որ Թուրքիայի միայն ծովափնյա շրջաններում էին զարգացել ապրանքային-կապիտալիստական հարաբերությունները, որոնք ոչ մի կերպ չէին կարողանում խթանել կայսրության արտադրողական ուժերի զարգացումը տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր ու ազգային դաժան շահագործման ու զանգվածային հետապնդումների պատճառով։ Դրա համար էլ գյուղացիության քայքայումը չէր զուգակցվում բանվոր դասակարգի ձևավորման պրոցեսի հետ. այդ քայքայումը ավելի շատ ձևավորում էր լյումպեն պրոլետարական տարրեր։ «Ֆաբրիկաների փոխարեն,— գրել է ռուս հրապարակախոս Գոլոբորոդկոն,— երկիրը մինչև

օրս լցված է հնագույն տիպի մանուֆակտուրաներով՝ նախնադարյան մեքենաներով և ձեռքի գործիքներով, որոնցից Եվրոպան ազատվել է մոտ 100 տարի առաջ... Թուրքական արհեստները զարգացման այն փուլում են, ինչ փուլում եղել են մի քանի դար առաջ»[1]։ Թուրքական պրոլետարիատի թիվը չէր անցնում 40—50 հազար մարդուց։

Բանվորների իրավազրկությունն ու անպաշտպան լինելը, աշխատանքի վիթխարի պահեստային բանակի առկայությունը, պրոլետարիատի բազմազգ կազմը ձեռնարկատերերին հնարավորություն էին տալիս նրանց ծանրագույն շահագործման ենթարկել։ Աշխատանքի ժամերը սահմանափակված չէին և հասնում էին մինչև 13—16 ժամի, իսկ օրվա աշխատավարձը կազմում էր 8—16 պիաստր։ Աղետալի վիճակում էին Կ. Պոլիս և այլ ծովափնյա քաղաքներ պանդխտության մեկնած 100—150 հազար հայեր, որոնց ճնշող մեծամասնությունը բեռնակիր էր։ Աբևելյան նահանգների քաղաքներում բանվորների վիճակն ավելի ծանր էր։ Դրան գումարվում էին բռնությունները, կյանքի և կայքի անվտանգության իսպառ բացակայությունը։ Ոստիկանությունն ու ժանդարմները, բաշիբոզուկների ավազակախմբերն ու համիդիները մոլեգնում էին կայսրության ամբողջ տարածքով մեկ, բնում խեղդելով ամեն մի շարժում ու դժգոհություն։ «Աբդուլ Համիդը,— գրում է խորհրդային գիտնական Ա. Միլլերը,— օրինական էր դարձրել հայերի, բալկանյան քրիստոնյաների և մյուս ազգային փոքրամասնությունների բռնադատումը և դրանով վաստակել «արյունարբու սուլթան» մականունը»[2]։

1902 թ. հունիսի 26-ին Բեռլինում կայացած բազմամարդ միտինգում Բեռնշտայնը հայտարարեց. «Թուրքիայի ամբողջ վարչական համակարգը միայն մահ է բերում հպատակ ժողովուրդներին... Որո՞նք են, արդյոք, թուրք ժողովրդի «լավ հատկանիշները», որ ոմանք հաճախ շեշտում են...

Եթե այլևայլ ցեղեր թուրքերի հպատակության տակ դարերի ընթացքում պահպանել են իրենց կրոնն ու ազգային արժեքները, դա թուրքական բարության վկայությունը չէ, այլ այն բանի, որ թուրք ցեղը, որ միայն նվաճող տարր է, անընդունակ է եղել ուծացնել այլադավան տարրերը»[3]։

«Լա ֆեդերասիոն օտոմանը» անդրադառնալով օսմանյան վարչակարգին՝ գրեց. «Իր ամբողջ գոյության ընթացքում Տաճ-

կաստանը կարողացել է նվաճել, բայց երբեք չի մտածել իր վարչակարգը բուժելու ուղղությամբ»։

Հանդես գալով Հռոմում կայացած բազմամարդ միտինգում, Անատոլ Ֆրանսն ասաց. «Մի հրեշ, որը սարսափում է իր ոճիրներից և իր վախը վանում է նորանոր ոճիրներ գործելով։ Աբդուլ Համիդ Բ. 1893 թ. մինչև 1896 թ. խողխողել է 300 հազար հայ և այն ժամանակից ի վեր, գարշելի զգուշավորությամբ, պարբերաբար ջանում է բնաջնջել այդ ժողովրդին»[4]։

Սուլթանից երես էին դարձրել ոչ միայն աշխատավորական-դեմոկրատական ու բուրժուական տարրերը, այլև կառավարող շրջանների մի մասը։ Համիդի կառավարության հիմքերը խարխլվել էին։ Միայն իմպերիալիստական տերությունների բարյացակամությունն էր օսմանյան կայսրության գոյության պատվարը։ Կարևոր է նաև այն փաստը, որ կայսրությունում բուրժուական արտադրահարաբերությունների զարգացման մեջ թուրքերը գրեթե մասնակցություն չունեին։ Նրանք իրենց մենաշնորհն էին դարձրել քաղաքական և ռազմական ասպարեզները, իսկ տնտեսական կյանքը թողել էին հպատակ ժողովուրդներին։

Իթթիլաֆ կուսակցության ղեկավար Սաբահեդինը գրում է. «Մինչ նվաճված ազգերը զբաղվում էին հողագործական, ճարտարապետական և առևտրական աշխատանքներով, թուրք տարրը լքում էր իր օջախը, թողնում իր հողերը, ցաք ու ցրիվ լինում ամեն կողմ թե՛ իբրև զինվորական, թե՛ իբրև պաշտոնյա...»[5]։

Ֆ. Էնգելսի դիպուկ բնորոշմամբ՝ թուրքերը առևտրին մասնակցում էին միայն «քարավանները թալանելով։ Այժմ, երբ նրանք դարձան քիչ ավելի քաղաքակիրթ, մասնակցությունը արտահայտվում է հնարավոր կոմայական ու հարկերի բռնի գանձման մեջ... Հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը»[6]։ Բացի այդ, թուրքերը կազմում էին կայսրության ազգաբնակչության միայն 1/3-ը և թուրք ազգի ձևավորումը ետ էր մնացել կայսրության կազմում եղած մյուս էթնիկական խմբերից։

«Թուրք...— գրում է Ա. Միլլերը,— մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը տիրապետող դասակարգերի բառապաշարում նշա-

նակում էր ոչ թե էթնիկական և ազգային պատկանելություն, այլ թուրք «մուժիկի», «մուժլանի», «տգետի» արհամարհական մականուն»[7]։ Թուրքական բուրժուազիան բացառապես առևտրական բուրժուազիա էր, որը մի կողմից թույլ էր, իսկ մյուս կողմից սերտ կապերի մեջ էր կալվածատիրական հողատիրության հետ և դրա համար էլ իր առաջ խնդիր չէր դնում ոչնչացնելու ֆեոդալական արտադրահարաբերությունները. նրա միակ նպատակն էր վերացնել զուլումի տարիներին բնորոշ բռնությունները։

Նա պայքարում էր ոչ թե սուլթանական կարգերի, այլ Աբդուլ Համիդ 2-րդի ռեժիմի դեմ։ Նրա նույնիսկ առաջադիմական տարրերը՝ Եվրոպայում հեղափոխական գաղափարներով դաստիարակված մտավորականներն ու սպայությունը, ձգտում էին ոչ թե հեղափոխական վերակառուցումների, այլ սուլթանական վարչակազմի շրջաններում բարեփոխումների։ Տնտեսական ասպարեզում նրա նպատակն էր անօրինել կայսրության ներքին շուկան և արտադրական կյանքը՝ դուրս մղելով մյուս ազգերին՝ հրեաներին, հայերին ու հույներին։ Քաղաքական ասպարեզում փայփայում էին մինչև Սիբիր ու Հնդկաստան ձգվող Օտոմանյան կայսրության ստեղծումը։ Մյուս ժողովուրդների թուրքացման կամ ոչնչացման գաղափարը կայսրության երազանքն էր։ Այսինքն, թուրքական բուրժուազիան ոչ միայն չէր հրաժարվում արյունարբու Համիդի քաղաքականությունից, այլև ձգտում էր այն դարձնել ազգային և պետական նպատակ։

Ս. Սապահ— Գուլյանը գրում է, որ թուրքական բուրժուազիան չի կարող կայսրության կազմում եղած ենթակա ժողովուրդների պայքարում նրանց դաշնակիցը լինել, որովհետև «Օսմանյան կայսրության ամրապնդումը նա տեսնում է մի տարամերժ նացիոնալիզմի մեջ։ Նրա այդ ձգտումը այնքան սաստիկ ու բուռն է, որ նույնիսկ ցեղային տիրապետությունը, ենթակա տարրերի հպատակությունը, նրանց ապազգայնացումն ու ձուլումը համարում էր անհրաժեշտություն։ Սա է նրա հայացքների իսկական ելակետը», որքան էլ քողարկվի փքուն բառերի տակ[8]։ Թուրքական բուրժուազիայի ու նրա դասակարգային ծագման այդ առանձնահատկությունը նրան դարձրին կայսրության առաջադիմությանը խոչընդոտող ուժ։

Թուրքական բուրժուազիան նաև նենգ ու խորամանկ էր։ Իշխանության հասնելու համար ձգտում էր ստանալ կայսրության հպատակ ժողովուրդների աջակցությունը։ Ահա թե ինչու ազատության, եղբայրության և հավասարության մասին լոզունգներով դեպի իրեն էր ձգում այդ ժողովուրդներին ու նրանց կուսակցություններին։

Առաքելոց վանքի կռվից հետո թուրքական բուրժուազիան և սպայությունը հետաքրքրվեցին նաև հայկական հայդուկային շարժումով։ 1900 թ. ամռանը սուլթանի քեռայր Մուհամեդ փաշան, որը հեռացել էր երկրից և լույս էր ընծայում «Արևելյան աշխարհ» թերթը, հրապարակեց «Բաց նամակ հայերին», ուր գրված էր. «Աբդուլ Համիդը իր թագավորության 25-ամյակը նշում է Սասունի նոր կոտորածով»։ «Իր անձնական անվտանգությունը նա գտավ ոչ այլուր, քան իր հպատակների արյան մեջ»։ Այդ թուրք գործիչը հայերին, որոնք «ևս Աբդուլ Համիդի զոհերն են», թուրքերի հետ միավորման կոչ էր անում»[9]։ Բայց նման կոչերը իրենց կուսակցական նպատակների համար հայերին օգտագործելու միտումով էին արվում։ Երիտասարդ թուրքերի «մի մասի դավանած գաղափարները ավելի վնասակար են, քան ծեր թուրքերինը»[10]։

Այնուամենայնիվ, թուրքական հասարակության ընդերքում աստիճանաբար ձևավորվում էին ուժեր, ճիշտ է սաղմնային, ճիշտ է երկչոտ ու թույլ, որոնք փորձում էին հասարակության լայն խավերի ուշադրությունը հրավիրել օսմանյան փտած ու դաժան համակարգի վրա։ 1906 թ. օգոստոսին թուրք ազատախոհների հրապարակած մի կոչում կարդում ենք. «... Տարիներ շարունակ ավազակային խմբերին գերի ենք, անզոր ու ընկճված։ Որտե՞ղ է ազատությունը, որտե՞ղ է մարդու հնարավոր երջանկությունը։ Մեր նվիրական հայրենիքը դարձել է անարդ ու ոտնակոխ։ Այս անգութ կառավարությունը միևնույն հայրենիքի զավակներին, տարբեր... բայց եղբայր ցեղերին, միմյանց ձեռքով կոտորել է տալիս։ Եվ չբավականանալով նրանց իրար թշնամի դարձնելով, նրանց կյանքն ու երջանկությունը վտանգի տակ դնելով, բանտերն ու աքսորավայրերը լցնում է հայրենիքի ամենաանձնվեր զավակներով»[11]։ Ինչ վերաբերում է թուրք աշխատավորական տարրերին, մասնավորապես գյուղացիությանը, ապա նա չնայած կալվածատիրոջ դեմ պայքարին «չէր մասնակցում», սակայն «շահագրգռված էր, որ հաղթանակ տաներ հայ գյուղացիությունը, քանի որ այդ

հաղթանակը կթեթևացներ նաև մահմեդական գյուղացիության գրությունը»[12]:

Թուրք աշխատավորությունը նախապատրաստված ու հասուն չէր բուրժուական հեղափոխության համար: Իսկ հայերի, արաբների, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը ընթանում էր միմյանցից մեկուսացած ու մասնատված: Հեղափոխական գաղափարների կրողները հիմնականում սպայությունն էր ու սովորող երիտասարդությունը, որոնք սերված էին կալվածատիրական տոհմերից և, մեծ մասամբ Թուրքեր չէին: Հենց նրանք էլ դարձան Թուրք բուրժուազիայի շովինիստական գաղափարախոսության ձևավորողները: «Պանիսլամիզմը իսկապես Թուրքական նացիոնալիզմի ոգին, էությունն է: Պանիսլամիզմը լոկ կրոնական գաղափարախոսություն չէ, ինչպես համաքրիստոնեությունը, ոչ, այն խորապես և ամենավորապես քաղաքական գաղափարախոսություն է: Թուրքիայի ղեկավար դասակարգն ինքը պանիսլամական գաղափարի իրագործմանն է հետապնդում թե՛ Թուրքիայի սահմաններում և թե՛ դրանցից դուրս, և քանի որ պանիսլամիզմն ու ցեղային և կրոնական խտրականությունը միմյանցից անանջատ գաղափարներ չեն, նրա նպատակն է պետական կյանքը դնել իսլամական ուսմունքի հիմունքների վրա...»[13]:

Շովինիստական այդ գաղափարախոսության կրողը ամենից առաջ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն էր:

«Միություն և առաջադիմություն» կուսակցությանը հաջողվեց կարճ ժամանակում դառնալ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ ծավալված օպոզիցիոն շարժումների առաջատար ուժը: Ձևված այդ կուսակցությունը հասարակության արմատական վերակառուցման որևէ ծրագիր այդպես էլ չառաջադրեց:

1902 թ. փետրվարի 4-ին Փարիզում տեղի ունեցավ կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների «ազատական» կուսակցությունների համաժողով: ԵրիտԹուրքական կուսակցությունն այդ համաժողովում ղեկավար ու տոն տվող ուժ էր և կարողացավ նրա վրին փաթաթել իր քաղաքական լոզունգները: Համագումարը խնդիր դրեց. բոլոր հնարավոր միջոցներով ապահովել օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, «կարգ ու կանոնը և խաղաղությունը» երկրի ներսում, հարգել պետության հիմնական օրենքները, անվերապահորեն ընդունել 1876 թ. սահմանադրությունը, հարգել

սուլթանի կնքած միջազգային դաշնագրերը, այդ թվում և Բեռլինի կոնգրեսի որոշումները:

Համագումարին մասնակցում էին նաև դաշնակցական և հնչակյան կուսակցությունների պատվիրակությունները, որոնք այդ բանաձևին դեմ քվեարկեցին և պահանջեցին կետ մտցնել կայսրության ապակենտրոնացման անհրաժեշտության մասին: Սակայն նրանց առաջարկությունը մերժվեց, որը և վերջակետ դրեց հայ և Թուրք կուսակցությունների համագործակցության այդ առաջին փորձին:

«Հնչակը» 1902 թվականի մայիսին գրեց. «Երիտասարդ Թուրքերը ուզում են բարեփոխել Թուրքիան, վերակենդանացնել, երիտասարդացնել նրան, առանց դիպչելու պետության սահմաններին: ... Երիտասարդ Թուրքերն ասում են՝ հեղափոխենք երկիրը, այո, բայց նախ և առաջ պահպանենք նրա ամբողջությունը»[14]:

***

Կայսրությունում ամենածանրը հայերի վիճակն էր, որն օրեցօր անտանելի էր դառնում: «Համբուրգեր ցայտունգը», նշելով այն գազանությունները, որ «տասնյակ տարիներ կատարվում են Թուրքերի ձեռքով քրիստոնյա Հայաստանում», գրում է. «Երեք միլիոն հայեր ապրում են նստակյաց՝ Թուրք կայսրության մեջ, և տառապում ամենաքստմնելի բռնապետության տակ: Նրանց արգելված է զենք կրել և շրջաշրջել գյուղից գյուղ: Նրանց վրա կարգված է հարկերի կամայական սիստեմ: Ոչ մի քրիստոնյա չի կարող երևալ դատարանի առաջ, և նրա դեմ ամեն մի անիրավություն մնում է անպատիժ: Բռնի զանգվածային կրոնափոխություններ, նրբացած չարչարանքներ, գազանություններ...»[15]:

Սուլթանը 1894—96 թթ. ջարդերից տուժած շրջանների հարկերը «զիջեց»: Սակայն երկու տարի անց «զիջել»-ը փոխեց «հետաձգել» բառով: Իսկ 1899 թվին տեղական իշխանություններին գաղտնի հրաման ուղարկեց՝ հավաքել հետաձգված բոլոր հարկերը:

Ֆրանսիական «Օտորիտե» լրագիրը 1900 թ. մայիսի 20-ին գրել է. «Հայկական նահանգներում և մանավանդ Վանի շրջանում նկատվող հուզումները արդյունք են այն հրեշավոր ձևե-

ին, որով հավաքվում են հարկերը։ Փոխանակ այդ գործը հանձնելու քաղաքացիական գործակալներին..., զինվորներին են դարձրել հարկահավաքներ, որպեսզի նրանք այդ ձևով ստանան իրենց աշխատավարձերը։ Տալիս են այսինչ գյուղը այսինչ գնդին, ասելով. «Կառավարությունը ձեզ այսքա՞ն է պարտք, ստացեք այդ միջոցներից՝ գանձելով նրանց տուրքերը»։ Ուրեմն դժվար չէ եզրակացնել, թե հայերն ինչու են ապստամբում»[16]:

Եվրոպական մամուլի շատ օրգաններ ու հասարակական գործիչներ հասկացան հայերին տնտեսապես քայքայելու միջոցով Հայկական հարցը լուծելու սուլթանի նենգ դիտավորությունը և համաշխարհային հասարակությանը կոչ արեցին վճռականություն դրսևորել այդ դիտավորությունը ձախողելու համար։

Ֆրանսիական «Լը տամպը» գրեց. «Արևելքի լուրերը մի քանի շաբաթ ի վեր մտահոգում են բոլոր նրանց, ովքեր ճիշտ պատկերացում ունեն այնտեղ տիրող դրության մասին, որն արդյունք է եվրոպական քաղաքականության հին ու ձանձրալի «մեղեդիների»։ Պետք է հուսալ, որ ժողովուրդների խիղճը կարթնանա և կառավարություններին կստիպի միջոցներ ձեռք առնել մարդկության դեմ նյութվող նոր ոճրագործությունը կանխելու... Եվրոպան պետք է Բ. Դռան մահմեդական մոլեռանդության և սուլթանի մաքիավելության դիմադրությունը հաղթահարելու ուղիներ որոնի»[17]:

Գարիբալդիական շարժման ղեկավարներից Ջիպրիանին «Լա պետիտ ռեպուբլիկի» 1899 թ. օգոստոսի 15-ի համարում գրեց. «Քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ և օրը ցերեկով կազմակերպված և իրականացված ջարդերից հետո ահա հայերին սպառնում են աքսորել իրենց իսկ երկրից»[18]։

Ահա քաղաքական, սոցիալ-տնտեսական այս խառնիճաղանջ պայմաններում էլ օսմանյան Թուրքիան ոտք դրեց 20-րդ դար։ Դար, որը Թուրքիայի առանց այն էլ խարանոտ ճակատին դրոշմելու էր բոլոր ժամանակների ամենավայրագ մարդասպանի պիտակը։

Մշո առաջնորդ Բարկեն վարդապետը 1900 թվին մի տեղեկագիր կազմեց հայերի վիճակի մասին և ուղարկեց պատրիարքարան։ Այդ տեղեկագիրը բավական է, որպեսզի պատկերացում կազմվի Սասունի ու Տարոնի հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր ծանր վիճակի մասին։

«Սասունը,— գրում է տեղեկագրի հեղինակը,— զեղծումների, անհանդուրժելի կեղեքումների և սոսկալի ոճիրների թատերաբեմ է դարձել։ Այս չարիքները գործվում են զանազան ձևերով և հայ տարրը ոչնչացնելու նպատակ են հետապնդում»[19]: Այս միտքը հիմնավորելու համար նա բերում է մի շարք հավաստի ու համոզիչ փաստեր, որոնք ընդգրկում են հայերի կյանքի գրեթե բոլոր կողմերը։ Նախ խոսվում է երկրագործական բանկի կողմից հայերին թալանելու մասին։ Այդ բանկը «չնչին գումարի դիմաց նրանց մեծարժեք արտերն ու կալվածքները գրավ վերցնելով, պայմանաժամանակն ավարտվելիս գյուղացիներին հարկադրում է դրանք կամ տալ բանկին կամ վաճառել թուրքերին՝ իրական գնից 10—15 անգամ էժան»[20]: Պարհակների, ձրի աշխատանքի և հայ գյուղացուց ձրի վերցրած շինանյութի միջոցով կառուցվում էին հիմնարկներ, վարչական շենքեր, զորանոցներ, մզկիթներ, մեչիթներ, թուրք և քուրդ աղաների ու փաշաների համար տներ ու քոշքեր։ Դրանով չբավականանալով՝ նման օբյեկտների շինարարության համար հատուկ տուրքեր էին նշանակվում, որոնք կոչվում էին «իյանե»[21]: «Հայերի նկատմամբ քրդերի գործադրած հարստահարությունները,— նկատում է Բարկեն վարդապետը,— հանրահայտ իրողություններ էին, սակայն վերջին տարիներին այդ հարստահարությունները կազմակերպված տեսք ստացան»։ Այդպիսի ոչ մի խժդժություն ու գազանություն չէր պատժվում։ «Այժմ մարդասպանությունները սովորական են դարձել...»։

Հայ գյուղացին վերցնում է պանդխտության ցուպը։ 1901 թ. հունվարի 3-ին Մուշից գրում են, որ Կովկասում 4000—5000 մշեցի պանդուխտ կար։ Պանդխտության գնացողների հաշիվ 60 տոկոսն էր ողջ տեղ հասնում։

«Հնչակը» պանդխտության մեկնողների վիճակը հետևյալ կերպ է նկարագրում. «Լեռների կողերի գաղտնի ճանապարհների, մութ ճեղքերի մեջ մեկական գավազան ձեռքներին բռնած, մերկ ու ոտաբոբիկ, քաղցած ու խոցված սրտերով, աղի արցունքով, գլուխները կքած գյուղացիների, ոսկրացած մարդկանց քարավաններ են նկատվում... Թողած իրենց հայրենական օջախը, ընտանիքն ու զավակները, մերկ ու քաղցած, հևիհև, կորաքամակ, դիմում են հեռու, շատ հեռու, մերթ ընդ մերթ խանձող հայացքները ուղղելով դեպի ետ, դեպի Երկիր։ Սասանական լռությունը տիրում է այդ խումբ-խումբ քարավանե-

ին, կարծես խոսել չգիտեն, ձայն-ծպտուն չկա, այդ անմեղ զոհերը, շշմած այս քստմնասարսուռ իրականության առաջ, լայլում ու քայլում են... Ճանապարհի երկայնքով շատերը՝ ընկերներ, հայր, եղբայր ընկնում են շնչասպառ ու մեռնում են, բայց կրկին ձայն չի ելնում։ Սով է, արհեստական սով է մեր երկրում, սա մի դիվանագիտական ճարպիկ խաղ է մեզ բնաջնջելու, արմատախիլ անելու»։

Սասունցիները, որ թուրքական խաբդավանքները զգալու սիրտ ունեին, նկատելով, որ կառավարությունը լեռնաշխարհ մուտք գործելով, «անձեն ու անձուն իրենց խեղդելու և կամաց-կամաց ջնջելու նպատակ ունի», որոշեցին ընդվզել և թեկուզ արյան գնով թույլ չտալ, որ այդ ծրագիրն իրականանա։ Նրանք կանանց միջոցով մի հեռագիր ուղարկեցին Մուշի կառավարիչին. «Եթե ուզում եք մեզ մեր հողից գաղթեցնել, բերել տվեք մի քանի օտար հյուպատոսներ, որոնց հովանավորությամբ հեռանանք այստեղից, իսկ եթե ցանկանում եք զորանոցներ կառուցել և մեզ տեղում թողնել, չենք կարող համաձայնել, որովհետև մեր աշխատող ձեռքերը մեր կանայք ու աղջիկները լինելով, գիշեր ու ցերեկ գրսում են և անպատվվում են զորքերի կողմից և այդ տանել չենք կարող»։

1901 թ. սեպտեմբերի 4-ին «Լը տամպը» գրեց. «... Չորեքշաբթի օրը Էրզրումի 7-րդ զորաբաժնի հրամանատար Մեհմեդ Ալի փաշան ութ կանոնավոր վաշտերով գնաց Սասունի գավառը՝ ռազմական միջոցներով գրավելու։ Փայտամրոցներ պիտի կառուցվեն Տալվորիկ, Սեմալ և Գելիեգուզան հայ գյուղերում»։

Ի վերջո, իշխանություններին հաջողվում է քսանութ կետերում զինված ուժեր տեղակայել և հսկողության տակ վերցնել ամբողջ Սասունը, Տարոնն ու Բաղեշը։

Հունիսի 10-ին Մուշից գրեցին. «Տաճիկ կառավարության և իսլամ տարրի վերջին վճռագիրն է՝ կոտորել Մուշն ու Սասունը... Ինչո՞ւ... Որովհետև Մուշի ու շրջակայքի հայ տարրն աչքի զարնող թիվ է կազմում, որովհետև 95-ի գաղանային կոտորածի ժամանակ Մուշը համեմատաբար քիչ չարդ ու վնաս կրեց...»[22]։

Չիզարի թուրք աղան բացարձակ բռնի միջոցներով տիրացավ Ղզլաղաջ, Սնձնուտ, Ավազաղբյուր և այլ գյուղերին։ Նա բատկանցի քրդերին կոչ արեց. «Իջեք, Դաշտի գյուղերն ավերակ դարձրեք»։

Այս աշիրեթությունից Գառանց Ալոն, որ 1895-ին կոտորել էր շուրջ

400—500 հայ, հարձակվեց Տատրագոմի վրա, կողոպտեց ու ավերեց այդ գյուղը։ Հաջորդ օրը նա հարձակվեց Ս. Հովհաննու վանքի վրա[23]։

Ոստիկան Աբդոլլահը, հայդուկներ բռնելու պատրվակով, բանտարկում է մեծ թվով անմեղ գյուղացիների։ Նրա ոստիկանական խումբը գյուղից գյուղ էր անցնում, խոշտանգում գյուղացիներին, ահ ու սարսափ տարածում։

Մուշում հրավիրվում է քուրդ և թուրք աղաների ժողով, որտեղ բալաքցիների ցեղապետ Ֆերո աղան լիազորություն է պահանջում հայ գյուղերը ոտնատակ անելու և հայդուկներին բնաջնջելու։ Մութեսարիֆը համաձայնում է, բայց ասում է, որ պետք է թույլտվությունը վերցվի վալիից։ Հաջի Ֆերոն գնում է Թիֆլիս, սակայն Ռավա վայրում հայդուկները նրա խումբը շրջապատում ու ոչնչացնում են, քիչ անց սպանվում է նաև Մշո քաղաքապետ Ճիվաղ Խալիլ էֆենդին։

«Բեռլիներ լոկալ այնցայդերը» 1901 թ. սեպտեմբերի 23-ին գրեց. «Սասունը թուրքական շորս փաշաների կողմից այնպես է պաշարված, որ մինչև անգամ կես ժամ հեռու գտնվող Մուշում չեն իմանում, թե ինչ է կատարվում Սասունում։ Ամենածանր բաներ են կասկածում։ Այստեղ որևէ լուր չկա... Ասում են, թե Սասունում մեծ թվով քրդեր կան։ Լուրերի համաձայն, այնտեղի գործողությունները ղեկավարվում է ուղղակի Ելտրզից, առանց կառավարության գիտության։ Պալատը նահանգներ է ուղարկում բազմաթիվ ուլեմներ, որոնց գրգռիչ գործունեությանն են վերագրվում Սասունի նոր դեպքերը։ Ընդհանուր վիճակը նման է հինգ տարի առաջ եղած կոտորածների նախօրյակին տիրող վիճակին»[24]։

«Ֆրանկֆուրտեր ցայտունգը» 1901 թ. սեպտեմբերի 25-ի իր համարում հաստատում է այն փաստը, որ հայկական մի շարք շրջաններ, այդ թվում նաև Սասունը, շրջապատված էին թուրքական բանակի կողմից։ Թերթը նաև նշում է, որ «հայկական հանգամանքներից դեսպաններին ուղարկված հյուպատոսական շատ տեղեկագրեր տեղ (հայաստանեցիներին— Կ. Գ.) չեն հասել։ Ենթադրում են, որ թուրքական իշխանությունները դրանք բռնագրավել են»։ («Դրոշակ», 1901 թ., № 6)։

Լայն ծավալներ ստացան ջանբազարների գազանությունները։ Նրանք հարձակվում էին Սասունի ու Տարոնի հայկական գյուղերի վրա և սպանում ազդեցիկ անձնավորություններին։ Իսկ երբ հայերը նրանց դիմադրություն էին ցույց տալիս, ան-*

* *Իշխանությունների կողմից ստեղծված ավազակախմբեր։*

միջասլես միջամտում էր բանակը և ձերբակալում գենք ունեցող գյուղացիներին։ Սովորական դարձավ իշխանությունների հրահրած անհատական ահաբեկչությունը։

Մուշում պետական ծառայողներից, թուրքերից ու քրդերից հրոսակախմբեր ստեղծվեցին, որոնց առաջ իշխանությունները գաղտնի խնդիր էին դրել ոչնչացնել հայերին։ Այդ հրոսակախմբերը Դաշտի 12 գյուղում սպանեցին 29 հայերի։ Նրանց նշանաբանն էր՝ նախ «պետք է ջնջել հայ տարրը, որից հետո նրա ունեցվածքը մերն է»։

Նրանք հրկիզեցին Մառնիկ հայաբնակ գյուղը, Մուշ քաղաքում փորձեցին հարձակվել առաջնորդարանի ու հայկական թաղերի վրա։ Հայերը բողոք ուղարկեցին սուլթանին։ Պատասխանի փոխարեն Մուշ եկավ Բաղեշի կուսակալը և հայտարարեց, որ գյուղերում կատարված բոլոր չարագործությունների հեղինակը հայդուկներն են։ Ալի բեյը, զինվորների գլուխն անցած, դնաց գյուղերը և բռնություններ գործադրելով ստորագրություններ հավաքեց, որ այդ բոլոր խժդժությունները կատարել են հայդուկները։ Բերդակ գյուղում նա գյուղացիներին հավաքեց եկեղեցում, նավթ բերել տվեց ու հայտարարեց. «Կամ կստորագրեք, կամ գյուղը կհրդեհենք»։ Քիչ անց Կարինից Մուշ է գալիս մի պաշտոնական հանձնաժողով, որին հաջորդում են զանգվածային ձերբակալությունները Մուշ քաղաքում ու Տարոնի գյուղերում։ Կարինից զորքեր են բերվում ու տեղակայվում Դաշտի գյուղերում։

1894—96 թթ. զանգվածային կոտորածներից հետո թուրքական վանդալիզմի առաջին ամենամեծ զոհը դարձավ Սասունի Սպաղանք գյուղը։ Այդ 30—35 տուն ունեցող փոքրիկ գյուղի վրա հարձակումը տեղի ունեցավ 1900 թվի հուլիսի 3-ին։ Գիշերը Խալիլ փաշայի, Քոռ Սլոյի, Ալի փաշայի ավազակախմբերը, չորս աշիրեթություն (մոտ հազար քուրդ) և մի քանի վաշտ ոստիկաններ ու զինվորներ շրջապատում են գյուղը։ Քոռ Սլոն 500 քրդերի հետ դիրք է գրավում Գելիեզուզանի և Տալվորիկի արանքում ու կտրում Սպաղանքի կապը դրսի աշխարհի հետ։

Արշալույսին հնչում է հարձակման փողը, և քրդերն ու թուրքերը լցվում են Սպաղանք։ Աղմուկի վրա հայերը տներից դուրս են թռչում, բայց ով ոտը շեմից հանում էր՝ գնդակահար ընկնում էր։ Կանայք երեխաների հետ զորքին ընդառաջ են գնում,

կարծելով, թե կխնայեն, բայց բոլորին թրահար են անում, չխնայելով նույնիսկ օրորոցի երեխաներին։ Ամբողջ գյուղից փրկվեց ընդամենը 7 հոգի, որոնցից հինգը Մակարի գլխավորությամբ կարողացան ճեղքել թշնամու օղակը և շրջապատումից դուրս գալ, իսկ երկուսը կանայք էին, որոնք նետվեցին գետը և քարերից կառչելով կարողացան մյուս ափը հասնել։ Գյուղը թալանվեց և հրդեհվեց։ Այս հրեշավոր ոճրագործությունը աշխարհի աչքից թաքցնելու համար Սպաղանքը երկար ժամանակ շրջափակման մեջ էր պահվում։ Որոշ ժամանակ անց Խալիլն ու Հուսեինը ոստիկանների հետ վերադառնում են Սպաղանք, քանդում հորերը, դիակները հանում ու այրում։

Միայն մի քանի դիակ չեն այրում՝ իբր սպանվել են ոչ թե սպաղանցիները, այլ հեղափոխականները։ Այս սուտը հաստատելու համար հանրագիր են կազմում և բռնությամբ մի քանի ստորագրություն հավաքում։

Սպաղանքում տեղի ունեցած եղեռնագործության մասին ֆրանսիական պառլամենտում Գ. Ռուանեն ասաց. «1900-ի հուլիսի 8-ին քրդական հրոսակախմբերը 1000 հոգուց բաղկացած զինվորական մի վաշտի հետ... արշալույսին, փողերը հնչեցնելով, անպաշտպան ժողովրդի վրա հարձակվեցին։ Բնակիչները, հանկարծակի եկած և շվարած, լեռնաղաշտն են փախչում և եկեղեցիներում ապաստանում։ Ձեռք ընկածին սպանում են, լինի կին, երեխա, թե ծերունի»։

«Լը տամպը» Սպաղանքի կոտորածների առնչությամբ գրեց. «Այս տեսակ դեպքերի, ինչպիսին Սասունինն է, արդարացումը հնչտ չէ...»։ («Դրոշակ», 1900 թ., օգոստոս)։

1900 թ. սեպտեմբերի 13-ին Փարիզում տեղի ունեցավ Միջազգային սոցիալիստական համաժողով, որը ընդունեց մի բանաձև՝ նվիրված Հայկական հարցին։ Ժողովը «բողոքում է Հայաստանում կատարված բռնությունների, խժդժությունների ու չարդերի դեմ և երկու աշխարհամասերի բանվորներին մատնացույց անելով կապիտալիստական պետությունների ոճրագործ մեղսակցությունը, հրավիրում է (բոլոր երկրների) պառլամենտների սոցիալիստական ֆրակցիաներին միջամտել հոգուտ հանիրավի հարստահարված հայ ժողովրդի, որին կոնգրեսն ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխության հավաստիքը»։

1900 թվի սեպտեմբերի 10—13-ը Անգլիայի Գլազգո քաղաքում տեղի ունեցավ խաղաղության միջազգային 10-րդ համաժողովը, որն ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենա-

լով, որ հայ ժողովրդի ծանր վիճակը բնավ չի բարելավվել, որ Հայաստանում կոտորածներն ու դժդժությունները շարունակվում են, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետությունները ոչ մի կոլեկտիվ քայլի չեն դիմել վերջ դնելու այս քրիստոնյա դժբախտի նկատմամբ պարբերաբար կիրառվող անգթություններին՝ որոշում է. «Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետություններին մի խնդրագիր ուղարկել, որպեսզի նրանք պաշտոնական կոնֆերանս գումարեն՝ Հայկական հարցը վճռելու համար...»[25]։

Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը այս համաժողովից անմիջապես հետո մի կոչ ուղղեց Ֆրանսիայի աշխատավորությանը. «Ամիսներ ի վեր ամենահուզիչ լուրեր են գալիս Հայաստանից։ Բազմաթիվ գյուղերում ու նշանավոր կենտրոններում՝ Եղերեկ, Խնուս, Մուշ, Սասուն և երկրի շատ ուրիշ կետերում տեղի են ունեցել առանձնապես նշանակալից ջարդեր և բազմաթիվ նշաններից երևում է, որ մոտ ապագայում իրագործվելու են շարաշուք ծրագրերը։ Այդ նշաններից են հայաշատ վայրերում զորանոցների կառուցումը և զինվորական ուժերի անողոք ծավալումը... Փոքր Ասիայի հայ ազգաբնակչությունը ծայրահեղ ծանր վիճակում է...

Արևմտյան Հայաստանը շարունակում է մնալ, «ամեն տեսակի թշվառության, վայրենությունների, ամենաստոր և ամենազարշելի եղեռնագործությունների թատերաբեմ»[26]։

Անհրաժեշտ է, որ «ֆրանսիական կառավարությունը անտարբերության դիմակը դեն նետի և անի այն քայլը, որով կարող է փրկել հարյուր-հազարավոր մարդկային կյանքեր և գուցե բնաջնջումից փրկի մի ամբողջ ժողովուրդ»։

«Լը տեմպը» սեպտեմբերի 14-ի իր առաջնորդողում գրեց. «Բ. Դուռն ու պալատը ճիգ են թափում հասարակական կարծիքը հանգստացնել, Սասունի վերջին դեպքերին երկու անձանց միջև անշնան կռվի տեսք տալով... Բայց ոչ եվրոպական կառավարությունները, ոչ հասարակական կարծիքը այս անգամ չպետք է խաբվեն։ Դեռ մատիկ անցյալի փորձը ասում է, թե ինչ արժե սուլթանի ու իր կամակատարների խոսքը...

Արդեն վաղուց լուրջ նախազգուշացումներ են լսվում»։

Ժ. Կլեմանսոնն իր «Բլոկ» շաբաթաթերթի № 35-ում գրեց. «Այս անգամ Եվրոպան նախազգուշացված է։ Նա թափված արյան պատասխանատվությունից խուսափելու ոչ մի արդարացում չունի։

Բայց նա անհանգստանո՞ւմ է։

... Հայերի խնդրածն ընդամենը այն է, որ Եվրոպան վերջապես կատարի իր տված խոստումները և սուլթանին հարկադրի իր խոսքին տեր կանգնել։ Այն է՝ երեք տերությունների կողմից մշակված և 1895-ի մայիսի 11-ին սուլթանին ներկայացված բարենորոգումների ծրագրի գործադրումը՝ որոշակի երաշխիքների ավելացումով։ Դրանց կարևորությունն զգացվեց Սասունին հաջորդող կոտորածների ժամանակ։

Այն ժամանակ պետությունների կողմից այս ծրագիրը համարվեց Թուրքիայից պահանջվելիք մինիմումը»։

Սուլթանը նորից ստոր քայլերի դիմեց՝ հասարակական կարծիքը խաբելու համար։ Այդ կապակցությամբ «Լը տեմպը» սեպտեմբերի 28-ին գրեց, որ Բ. Դուռը խոստովանում է հայկական վիլայեթների ծանր վիճակը և հայտնում է պետություններին, որ հանձնաժողով է ստեղծել դրությունն ուսումնասիրելու համար։ «Գործնականում,— նշում է թերթը,— նման հանձնաժողովներ ստեղծվում են հասարակական կարծիքը մոլորեցնելու համար։ Այս դեպքում ևս մի կողմից հանձնաժողով է ստեղծվում վիճակն ուսումնասիրելու, իսկ մյուս կողմից Մուշի իշխանություններն արգելք են հարուցում Վանում ռուսական հյուպատոս Տումանսկու առջև, որն ուսումնասիրությունների համար Մուշ էր եկել։ Բիթլիսի կուսակալը ամերիկյան միսիոներներին ևս արգելել է վիլայեթ մտնել»։ Իսկ թե ինչ էր հետևում նման արգելքներին, ցույց են տալիս 1902 թ. մարտի 14-ին Մուշից ստացված նամակի հետևյալ տողերը. «Տարոնից Ռուսաստանի հյուպատոս Տումանսկու մեկնելուց հետո վայրագությունները վերսկսվեցին։ Կատաղած թուրք զինվորները և քրդերն իրենց հրամանատարի ղեկավարությամբ ահռելի տառապանքների են մատնում Նորաշեն գյուղի դժբախտ հայերին»։

Բեռլինի «Նացիոնալ ցայտունգը» սեպտեմբերի 27-ին գրեց. «Թուրքիայի պաշտոնական շրջաններում հաճախ կարելի է լսել հետևյալը. եթե ասվում է, որ Եվրոպան քրիստոնյաներինն է, ապա պետք է նաև ասվի, որ Անատոլիան մահմեդականներինն է։ Հայկական կոտորածները թուրք կառավարող դասակարգերի այս մտածողության արդյունքն են»։

Միջազգային սոցիալիստական բյուրոն 1901 թ. հոկտեմբերի

18-ին կոչով դիմեց բոլոր երկրների բանվորական կուսակցություններին.

«Ամենաողբալի լուրեր են հասնում Հայաստանից... Այն անցքերը, որոնք վերջերս տեղի ունեցան Մշո դաշտում ու Սասունի լեռներում, հաստատում են, որ Թուրքիան շարունակում է կոտորածների քաղաքականությունը։

Պետք է, որ միջազգային սոցիալիզմը... հասարակական կարծիք ստեղծի համիդյան քաղաքականության գարշանքների դեմ։ (Հայաստանում) բռնություններ, անգթություններ, կողոպուտներ, կանանց ու աղջիկների բռնաբարություններ, գյուղերի ու ագարակների հրդեհումներ, մասնակի ջարդեր ու սպանություններ տեղի են ունեցել անընդմեջ, գրեթե բոլոր հայաբնակ վիլայեթներում։ Այնուհետև դրությունը ավելի ծանրացավ (1901 թ. հունիսից հետո)։

Բիթլիսի, Էրզրումի և, մանավանդ, Մուշի ու Բայազետի կողմերում ջարդերը շարունակվում են։ Սարսափը տիրականորեն թագավորում է ազգաբնակչության վրա, որից խլել են բոլոր զենքերը, պաշտպանվելու բոլոր միջոցները...

Աշխատավորնե՛ր։

Աբդուլ Համիդի կառավարությունը, մամուլի մի մասի համագործակցությամբ, ճգնում է լռության դավադրություն կազմակերպել Հայկական հարցի շուրջը։ Ձեր և ձեր թերթերի ու պատգամավորների պարտքն է Համիդին խանգարել, հրապարակ հանել նրա ոճիրները և ձեր համակրանքի ու քաջալերանքի խոսքերն ուղղել նրանց, ովքեր տառապում ու կռվում են՝ ապրելու իրավունք նվաճելու համար»։

1901 թ. նոյեմբերի 4-ին ֆրանսիական պառլամենտում կայացած հարցապնդման ժամանակ Մարսել Սանբան ասաց, որ Հայաստանի «...։ վիճակը անարդարության, օրինազանցության, կամայական բանտարկությունների, գյուղերի ավերումների, եկեղեցիների ու դպրոցների հրկիզումների, կանանց ու աղջիկների առևանգումների երկար շարքի շարունակությունն է, արյունատենչ բռնակալության արդյունքը։ Հայաստանի այդ վիճակը Եվրոպայի ամոթն ու նախատինքն է...

... Սուլթանը պատրաստվում էր այս ձմեռ կոտորածները վերսկսել։ Սասունում մի զորանոցի կառուցումը բնակչության կրծքից խլեց «Մեզ պաշտպանեք մեր պաշտպաններից» ճիչը։

Արտաքին գործերի նախարար Դելկասեն ասաց. «Երբ Սասուն ուղարկված բանակի հրամանատարը հայտարարում է, որ եկել է հայերին պաշտպանելու քրդերից, հայերը, «պաշտպանելու» այդ ձևին ծանոթ, ասացին. «Մեկի տեղ երկու թշնամի ենք ունենալու»[72]։

«Պրո Արմենիայում» Պիեռ Քիյարը գրեց. «Ոչ միայն Բիթլիսի և Էրզրումի սահմաններում, այլև ամեն տեղ, մասնավորապես Մուշի և Բայազետի շրջակայքում, վերսկսվել են պարբերական սպանությունները...»։

1901 թ. օգոստոսի 21-ին Մուշից այդ նույն թերթին գրեցին. «Մշո շրջակայքում նոր անկարգություններ տեղի ունեցան։ Սկսած օգոստոսի 3-ից համիդիեի ավազակախմբերը, կանոնավոր զորքի աջակցությամբ, թալանում և սպանում են։ Ոչնչացրել են Մառնիկ, Կուրավու, Իգդար, Շեխլան, Ծխավու և այլ գյուղեր։ Բնակիչները փախչում են լեռները։ Վանից ու Բիթլիսից եկած քրդերն ու զորքերը դրավում են Սասունի բարձունքները...»։

Անատոլ Ֆրանսի «Պրո Արմենիայում» տպագրած «Հայերի միություն» հոդվածում կարդում ենք. «Բոլոր հայերը, ինչ կենսական մակարդակ էլ ունենան (հարուստ, թե աղքատ), օտարության մեջ անձկությամբ հետևում են մահվան սպառնալիքների տակ գտնվող իրենց եղբայրների վիճակին։ Նրանք գիտեն, որ սուլթանը մեթոդիկ ձևով ի կատար է ածում քաղաքական մի ծրագիր, որի նպատակը բովանդակ հայ ցեղի ոչնչացումն է...»[28]։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾ

Իրականացվում էր անսանձ ու անամոթ հարձակում հայկական մշակույթի, հայկական հոգևոր և լուսավորչական հիմնարկների վրա, պղծվում, թալանվում ու քանդվում էին հայկական եկեղեցիներն ու պատմական հուշարձանները, փակվում էին առանց այդ էլ հատուկենտ հայկական դպրոցները, թերթերն ու հանդեսները, ոչնչացվում էին հայերեն գրքերը։

Կեսարիայում թուրքերի սիրած խոսքն էր. (1885 թ.) «Կարկանդակի միայն եզրերը կարողացանք ուտել, մեջտեղը մնաց», այսինքն՝ միայն 7000—8000 հայ սպանեցինք, «փոխա-

նակ արու գյավուրներին լրիվ ոչնչացնելու և իգական սեռին տիրանալու»[29]։

Թուրքերը հայերին սպառնում էին. «Անհավատներ, դուք գյավուր թագավորների օգնությանն եք դիմում մեր դեմ։ Գարունը հասնելուն պես կտեսնեք, թե ինչ արժեք ունի այդ օգնությունը։ Մեր ձեռքից ստացած ջարդերից հետո դիմեցեք ուր կուզեք։ Ահա ամեն ինչ պատրաստ, սուլթանի հրամանին է, որ կսպասենք»[30]։

Երզնկայից հայտնում են. «... Այս օրերս ընդհանուր ջարդի շշուկը դարձյալ շրջում է ժողովրդի բոլոր խավերի մեջ։ Ասվում է, թե մեծ դահիճը դարձյալ հրաման է արձակել հայերին կոտորելու։ Ամեն կողմ ահ ու սարսափ է տիրում, 95—96 թվականների փորձը աչքերիս առջև է»[31]։

Հայերի մոտալուտ կոտորածների նշան էր համարվում նաև այն, որ իշխանությունները արտակարգ սիրալիր էին դարձել քրդերի, նրանց աշիրեթապետերի և հատկապես ավազակությամբ աչքի ընկած անձանց նկատմամբ։ «Զկոցիների ցեղապետ Ղուլի խանը, որի համար մահվան վճիռ էր տրված... տարվեց Կարին և համիդիե գրվելով ոչ միայն ազատվեց, այլև կայմակամի պաշտոն ստացավ»։

Կոտորածներ նախապատրաստելը հաստատող մի երևույթ ևս։ Գրում են Ախլաթից. «Շշուկ կա թուրքերի շրջանում հայերին կոտորելու մասին։ Այդ փափսանքը մեծ երկյուղ պատճառեց Բազեշում հուլիսի 11—12-ին, երբ հայերը տեսան, թե փոլիսները խումբ-խումբ շրջում էին շուկայում ու թաղերում։ Վերջին կոտորածների ժամանակ էլ այդ նշանը տեսել էին հայերի ջարդը սկսելուց առաջ...»[32]։

Գրում են Աղբակից. «Թուրք կառավարությունը այստեղ համառությամբ առաջ է տանում իր հայաջինջ քաղաքականությունը, ամեն կերպ աշխատելով դատարկել այս գավառը իր հայ ազգաբնակչությունից»[33]։

Գրում են Կ. Պոլսից. «... Ամենուրեք ջարդերը շարունակվում են, բայց ոչ հավաքական»[34]։ «Կոտորածների նախանշան էր նաև հայերին ճնշելու, բռնաբարելու և նույնիսկ ոչնչացնելու համար քրդերին նյութապես ու բարոյապես խրախուսելու պաշտոնական քաղաքականությունը, որ նորից կիրառվում է ամենայն անամոթությամբ»[35]։

1903 թ. փետրվարին Բասենից գրում են, որ թուրքերի շրջանում պրոպագանդիստներ էին տարածվում՝ նրանց հայերի դեմ գրգռելու համար։ Իբր «գարունը սկսվելուն պես ջանֆիդայիները էրզրումի, Բասենի, Հասան Ղալայի կողմերից մեր վրա պիտի հարձակվեն, պայթուցիկ նյութերով պիտի կործանեն քաղաքապետությունները, զորանոցները, և զենքի զորությամբ պիտի տիրանան կարևոր դիրքերի...»[36]։

Այո, հայերի բնաջնջումը ոչ թե քրդական, այլ թուրքական քաղաքականություն էր, և նրա գլխավոր դրդող անձինք թուրք իշխանավորը, ֆինվորն ու ոստիկանն էին։ Քրդերը շահագրգռված չէին հայերին ոչնչացնել, նրանց այդ բանին մղում էին օսմանյան իշխանությունները։ Հայտնի ավազակ շարագործ, համիդիեի հազարապետ Ֆատեն ցուցմունք տվեց. «... Չարագործությունների հեղինակը, արմատը ես չեմ, այլ եկող-գնացող կուսակալները։ Եթե նրանց հրամանով ու հաճությամբ չլիներ, ոչ ես, ոչ էլ իմ մարդիկ չէին համարձակվի ժողովրդի մեկ շյուղին դիպչել։ Մեղավորները նրանք են, որ թույլատրեցին իրենց գիտությամբ և հաճությամբ կատարելու այս ամենը։ Հայաստանի մեջ կատարված բոլոր գողությունները, ոճրագործությունները, մարդասպանությունները, ավազակությունները կառավարության գիտությամբ ու մասնակցությամբ են տեղի ունենում»[37]։

«Աբտողլու գյուղից,— գրում են Ադանայից,— թուրքերը մի աղջիկ են փախցնում։ Աղջիկը համառորեն դիմադրում է։ Թուրքերը նրան բռնությամբ «մերկացնում, սրբունքները դաշույնով խոցոտում են և հետո դժոխային դիտավորությունը կատարում են անպաշտպան և արյունլվա մի կնոջ հետ, որն արդեն մեռած էր»[38]։ Սադիստական այս արարքները ևս նշան են, որ թուրքական հասարակությունը նաև հոգեբանորեն էր նախապատրաստվում ոչնչացնելու հայերին։ Կոտորածների նախապատրաստման մասին էր վկայում նաև պահեստայինների զորակոչը։

«Թուրքերն էլ շատ դժգոհ են,— գրում են Կիլիկիայից,— և այս դժգոհությունն իր գագաթնակետին հասավ, երբ ռեդիֆները սկսեցին զենքի տակ կանչվել։ (Կառավարությունը) իր կատաղությունը ուզում է թափել հայերի վրա։ Երկրի ամեն կողմում դրոշի տակ կանչված շատ թուրքեր դասալիք են եղել, քաշվել լեռներն ու սարերը... զինծառայությունից խուսափող-

ների կատարած վայրագություններն էլ գումարվում էին եղածին»։

Գործնականում հայերի բնաջնջումը ընթացքի մեջ էր. փոխվել էին միայն նրա ձևերն ու մեթոդները։

«Օվր դը Սոլ դ'Օրիենտ» հանդեսի 1899 թ. 219-րդ համարում հայերին բնաջնջելու մեթոդների այդ փոփոխության մասին կարդում ենք. «Հիմա արդեն այն միահամուռ խողխողումները չեն, որոնք գործադրվում էին դժբախտ հայերի հանդեպ, 1895—96-ի այն համատարած սպանդը չէ, երբ հատուկ հրամանով ու ազդանշանով ոչնչացվում էր քաղաքի կամ գյուղի ողջ ազգաբնակչությունը։ Թուրքերը հասկացան, որ Եվրոպայի գթասրտության բաժակը լցվել է։ Եվ վախենալով զինված միջամտությունից՝ փոխեցին իրենց գործելակերպը։ Որդեգրվել է անաղմուկ, գաղտնի ոչնչացման հրեշավոր ծրագիրը, որը ավելի քան մեկ տարի է, ինչ իրականացվում է հայ ցեղի դեմ...»։

Կարելի է իշխանությունների կողմից հայերի ճնշումների ու խոշտանգումների ձևերի ու միջոցների երկար ցուցակ կազմել, բայց գլխավորն այդ չէ, այլ այն, որ բացարձակ բնաջնջման փոխարեն գործադրվում էին ոչնչացման ու հալածանքների բազմատեսակ միջոցներ։

1902 թ. ապրիլին, անդրադառնալով դանիացի ճանապարհորդ Բենիգսեի նոթերին, «Հնչակը» նշում է. «Հայաբնակը տառապում է այսօր, ինչպես միշտ, քաղաքականապես։ Հարյուր հազարներին կոտորելուց հետո, երկրի ելքն ու մուտքը փակելուց, դռները կողպելուց հետո, երբ արտաքին միջամտության երկյուղն արդեն վերացած է, թշնամին ավելի ուժգին, ավելի անամոթ և ավելի լկտի, քան երբևէ, իր բռնապետական անհանդուրժելի կամքն է թելադրում. արդարություն, օրենք, իրավունք՝ դատարկ հնչյուններ են»։ («Հնչակ», 1902 թ., № 1)։

«Պրո Արմենիայում» 1900 թ. դեկտեմբերին տպագրված մի հոդվածում Քիյարը նշում է.

1. Դրությունը Տաճկաստանում այսօր նույնն է, ինչ մեծ կոտորածների նախօրեին։ Օր օրի կոտորածների ալիքներն ահագնանում են։

2. Սուլթանը անձամբ պատասխանատու է կայսրությունում կատարվող ոճրագործությունների համար։

3. Եվրոպական պետությունները կարող են սանձել այդ արյունարբու ինքնիշխանությունը, նրան պարտադրելով գոյություն ունեցող դաշնագրությունները։

«Ռեվյու Բլանշում» Պոլ Լուին գրեց, որ «Եվրոպայում շշուկներ են լսվում հայկական նոր կոտորածների հավանականության մասին։ Բոլոր ազնիվ մարդկանց պարտքն է անհապաղ կանխել դրանք, քանի դեռ ուշ չէ, ոչ թե Հանոթոյի և Լոբանովի նման այդ եղեռնական իրադարձությունները լռության մատնել»[39]։

«Օրորի» 1899 թ. սեպտեմբերի 9-ի համարում Ռուբեն Գոհիեն հայկական նոր ջարդերի մասին գրեց. «Պետք է, որ ողջ Եվրոպան իմանա իր պարտականությունը և վերջապես այն կատարի, որովհետև նա հանցավոր է Հայաստանի թշվառության համար... Միայն մի բան կարող է փրկել հայերի բեկորներին՝ պետությունների համաձայնությունն ու անհապաղ միջամտությունը...»։

Ֆրանսիական «էվենեմենտը» 1899 թ. հոկտեմբերի 15-ին վկայել է. «Համիդը ավելի նպաստավոր օրերի է սպասում իր երազած համատարած բնաջնջման համար...»։

«Պրո Արմենիայի» 1900 թ. 5—8 համարներում տպագրվեցին Հայկական հարցին նվիրված մի քանի հոդվածներ, որոնցից մեկի հեղինակը ֆրանսիացի ականավոր հասարակական գործիչ Ֆրանսուա դը Պրեսանսեն էր. «Քանի որ 1896 թ. թափած արյունը,— կարդում ենք այդ հոդվածում,— այսօր ընդվզումի շիթերով դեպի երկինք չի հեղվում, որովհետև դիակները համ՝ են և արևմուտքի զգայարանները՝ անհաղորդ, մենք պարտավոր ենք այժմվանից գուժել մի նոր դիվային սպանդի վտանգը, այժմվանից մարդկանց ունկերին հասցնել այն խուլ որոտները, որ լսվում են դժբախտ Հայաստանի լեռներից ու ձորերից՝ արթնացնելու Եվրոպայի քաղաքական ողջամտությունը։ Սխալվելու իրավունք չունենք։ Անատոլիայում նախապատրաստվում է մի սարսափելի անակնկալ։ Դեռ թարմ ոճիրներ անվրդով մարսած հրեշը նոր ոճիր է որոճում»։

Ժ. Ժորեսը նույն համարում գրեց.

«Արթո՛ւն։

Մտատանջող ու չարագուշակ լուրերը Հայաստանից նոր ջարդեր են գուժում։ Արնագույն խելագարությունը նորից մոլեգնել է։ Արդյոք Եվրոպան այս անգա՞մ էլ պիտի ականջները խցանի։ Այս անգամ ոճիրն ավելի մեծ է լինելու... Եթե վերսկսվեն Հայաստանի ջարդերը և Եվրոպան դարձյալ նույն ան-

տարբեր մեղսակցության կեցվածքը ընդունի՝ «քաղաքակրթություն» բառը ինքն իր գերեզմանը կփորի»։

1901 թ. օգոստոսի 2-ին «Լա պետիտ ռեպուբլիկը» տպագրեց Գուստավ Ռուանեի հետևյալ խոսքերը. «Կ. Պոլսում վերածընված օսմանցի Կալիգուլան 1895—96-ի ընդհանուր ջարդերից հետո, մարդասպանության մեջ ավելի հմտացած, հիմա մասնակի կոտորածների և պարբերական հարստահարության նվազ աղմկալի մեթոդն է կիրառում հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու համար»։

***

Սուլթանի հայաջինջ քաղաքականությունը առանձնահատուկ դաժանությամբ էր իրականացվում Տարոնում ու Սասունում։ Այդ գավառները, մասնավորապես Սասունը, հայ ազգաբնակչությունից դատարկելը դարձել էր պետական քաղաքականություն և գործադրվում էր անընդհատ, փոփոխվում էին միայն բնաջնջման ձևերն ու մեթոդները, իսկ ինքը՝ բնաջնջման այդ քաղաքականությունը, կար ու մնում էր։

1894—96 թթ. զանգվածային ջարդերին հաջորդեցին ոչ զանգվածային, արտաքին աշխարհի համար աննկատ, բայց տևական ու մեթոդիկ կոտորածները։ 1900 թ. միայն մի քանի ամսվա ընթացքում Մուշի շրջակա գյուղերում սպանվել է 52 հայ։ Սպանություններից ավելի դաժան էր անընդմեջ գործող հալածանքների հրեշավոր համակարգը։

Թվենք միայն մի քանի օրինակներ։ Բաղեշի կուսակալը 200 զինվոր է ուղարկում Սասուն, որոնք Գելիեգուզանում, Շենիկում և Սեմալում անհերևակայելի գազանություններ են կատարում։ Սասունում անհետանում են երեք քուրդ։ Մեղքը բարդում են հայերի (ոչ թե կոնկրետ անձանց, այլ ընդհանրապես հայերի) վրա ու դրա դիմաց Հիթենքում սպանում են 7, Տալվորիկում՝ 10 հայի։ Դրանով չբավարարվելով՝ Հիթենքը հրդեհում ու ավերակի են վերածում։

Սպանում են Աղբիրիկի Ղազար վարդապետին, սակայն վանքի միաբանությունից բռնությամբ ստորագրություններ են հավաքում, թե վարդապետին սպանել են հայդուկները։ Ի դեպ, սա ոչ թե եզակի, այլ հաճախ կրկնվող գործելակերպ էր՝ հային սպանում էին, ապա մեղքը մի այլ հայի վրա բարդում ու նրան ևս ոչնչացնում։

Սակայն սուլթանը այլևս չէր բավարարվում ոչնչացման այդ եղանակներով։ Նա նորից զանգվածային կոտորածների էր ձգտում։

Լորդ Ստրաֆորդ դը Ռեդկլիֆը, նկատի ունենալով այդ վտանգը, գրում է. «Մենք չգիտենք ե՞րբ և որտե՞ղ անգղները կրկին խրախճանքի կհրավիրվեն»[40]։

Սուլթանի տեսադաշտը դարձյալ Սասունն էր, հայերի ըմբոստության օրրանը։ Հանդես գալով խաղաղության համաժողովում, որը բացվեց 1900 թ. սեպտեմբերի 30-ին, Փարիզում, հասարակական խոշոր գործիչ ու գիտնական Լ. Մառիլիեն ասաց. «Հայերը անհետաձգելի օգնության կարիք ունեն, հակառակ դեպքում նրանք կոչնչանան ամենամոտ ժամանակներս։ Դրա համար պարտադիր չէ, որ վերանորոգվեն 1895—96 թթ. ընդհանուր կոտորածները, դրա համար միանգամայն բավարար են այն մասնակի կոտորածները, ընդհանուր թշվառությունն ու անապահովությունը, որոնք միշտ իշխել են դժբախտ Հայաստանում»[41]։

ԱՆԴՐԱՆԻԿ

Ժամանակակիցները նրան հետևյալ կերպ են բնութագրել. «Անդրանիկը աչք ունի... Սար ու ձորով անցնում ենք խմբով, հրացաններն ուսներիս. մեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհով է քայլում, իսկ Անդրանիկը՝ յուրաքանչյուրիս ճանապարհով։ Մենք անհոգ գնում ենք, իսկ նա տեսնում է, նա գիտե, պրպտում է ամեն քար ու դար, ամեն ժայռ ու բլրակ, մացառ ու պուրակ։ Նրա ուշադրությունից ոչինչ չի վրիպում։ Ինչ որ մի անգամ տեսավ, երբեք չի մոռանա... Նա գիտե աննման դիրք բռնել։ Եթե մի անգամ նա մեր տեղը կոլից առաջ որոշեց, ապա մենք վստահ ենք, որ դա լավագույնն է։ Ամբողջ օրը կռիվ կտանք և մեր դիրքերը միշտ լավագույնը կմնան...»։

Անդրանիկը թիկնեղ, լայն ճակատով, փոքր-ինչ կլոր դեմքով, շեկ ու սրածայր բեղերով տղամարդ էր։ Ծնվել է Սեբաստիայի նահանգի Շապին-Գարահիսար գյուղաքաղաքում 1865 թվականին, արհեստավոր-վաճառականի ընտանիքում։ Հայրը ցանկանում էր որդուն վաճառական դարձնել, բայց նրա առևտրական գործերը ձախողվում են և նա դիմում է մտավորու-

թյունը, Անդրանիկին արհեստ է սովորեցնում։ Սակայն Անդրանիկը այլ հակումներ ուներ։ Նա ռազմական խաղերի ու զենքի սիրահար էր։ Անդրանիկը կրթություն է ստանում տեղի վարժարանում, որտեղ և ձևավորվում են նրա ազատատենչ գաղափարները։ Գյուղաքաղաքի երիտասարդությունը մի խումբ էր կազմակերպել, որտեղ քննարկվում էին հայ ժողովրդի ազատագրության ուղիներին վերաբերող բազմազան հարցեր։ Անդրանիկը այս խմբի գործուն անդամն էր։ 17 տարեկանում Անդրանիկն ամուսնանում է «շատ սիրուն օրիորդի մը հետ»։ Սակայն մեկ տարի անց կինը, ապա նաև նորածին որդին, մեռնում են։

Անդրանիկը ուղղամիտ մարդ էր, չէր կարողանում անտարբեր անցնել կեղծիքի, շարադրության կողքով, միջամտում էր, և այդ պատճառով բանտ ընկնում։ Մի թուրք հարձակվում է Անդրանիկի հոր վրա՝ կոտրում գլուխը։ Անդրանիկը հետապնդում է այդ թուրքին և սպանում։ Նրան նորից են բանտ նետում։ Ընկերները կաշառում են բանտապահներին, բանտից հանում են Անդրանիկին և ճանապարհում Կ. Պոլիս։ Հոր սովորեցրած հյուսնությունը նրա համար դարձավ հաց վաստակելու միջոց։ Ընդունակ, ազնիվ և խելամիտ երիտասարդը տեղի հայկական շրջաններում շուտով ճանաչված ու սիրված անուն դարձավ հատկապես այն բանից հետո, երբ սպանեց Կ. Պոլսի թաղերից մեկի ոստիկանապետին, որը դարձել էր հայ մտավորականության դահիճը։ Անդրանիկը մտահղանում է հայդուկային խումբ ստեղծել։ Այդ խմբի համար զենք հայթայթելու նպատակով աշխատանքի է անցնում դինագործարանում։ Սակայն նա ծարավ էր պայքարի, իսկ Պոլիսը գործելու հնարավորություն չէր տալիս։ Ահա թե ինչու Պոլսից անցնում է Ռումինիա, ապա՝ Կովկաս։ 1895 թ. Աբրոյի խմբի կազմում Անդրանիկը մեկնում է Սասուն, Տարոնում հրացան է ձեռք գցում ու մտնում Սերոբի խմբի մեջ և շուտով դառնում տասնապետ։

Գևորգը Կոփ գյուղում հանդիպում է Անդրանիկին ու նրանից խմանում, որ Մոսե Խմոն վերադարձել է Լոնդոնից և անգլիական թագավորից նամակ է բերել։ Երկու օր հետո բոլոր խմբերի ղեկավարներն ու իշխանները հավաքվում են Գելիե գյուղում՝ թագավորի նամակը կարդալու։ Արդեն նշվեց, որ 1894—96 թթ. ջարդերը մեծ պետություններն օգտագործեցին շահադիտական

նպատակներով՝ սուլթանի վրա ճնշում գործ դնելու համար։ Հայ հասարակության որոշ խավեր հավատացին, թե այդ պետություններն իրոք ցանկանում են օգնել հայերի արդար դատին։ Եվ եվրոպական մայրաքաղաքներ ուղարկվեցին նամակներ, հանրագրեր, հասարակական գործիչներ՝ հայերին օգնելու խնդրանքով։

Սասունցիները Անգլիա ուղարկեցին գելիեցի Մոսե Խմոյին իր կնոջ՝ Ալթունի հետ։ Մոսե Խմոն հանձնարարություն ուներ եվրոպական պետությունների կառավարություններից սասունցիներին օգնելու երաշխավորագրեր բերել։

Սասունցու ավանդական տարազ հագած ամուսինները, մեծ դժվարություններ հաղթահարելով, հասնում են Լոնդոն։ Թուրքական կառավարությունն իր գործակալներին ուղարկում է, որպեսզի թույլ չտա Խմոյի հանդիպումը Անգլիայի կառավարության ղեկավարների հետ։ Եվրոպացու հագուստով ծպտված թուրքական գործակալները թագավորական պալատի շրջակայքում նկատում են Խմոյին ու նրա կնոջը և փորձում են նրանց խաբեությամբ կառք նստեցնել, սակայն Խմոն գլխի է ընկնում և, զենքի դիմելով, ազատվում նրանց հետապնդումից։

Խմոն և Ալթունը մտնում են պալատ և խնդրում տեսակցություն թագավորի հետ։ Տեսակցությունը թագավորի ու թագուհու հետ տեղի է ունենում։ Խմոն պատմում է, թե ինչի համար են եկել։ Նրանք որոշ ժամանակ մնում են Լոնդոնում և սպասում թագավորի պատասխանին։ Այստեղ Ալթունը ծնում է մի աղջիկ և, ի պատիվ անգլիական թագուհու, նրան կոչում Վիկտորյա։ Թագավորն ու թագուհին նրանց օրորոց են նվիրում և մի կնքված ծրար հանձնում։ Մոսե Խմոն օրորոցը շալակած, թագավորի թուղթը աբայի տակ թաքցրած, Ալթունի ու դստեր հետ ուղևորվում է Սասուն։

Եվ ահա հավաքվել են Սասունի անվանի մարդիկ։ Խմոն իր ուղևորությունների մասին պատմելուց հետո աբայի տակից հանում է ծրարն ու տալիս Գևորգին։ Բոլորը սրտատրոփ սպասում են։ Գևորգը սկսում է կարդալ. «Սասունի պատվական իշխաններ։ Ձեր պատվիրակ Մոսե Խմոն իր իշխանուհի տիկնոջ հետ ժամանեց Լոնդոն՝ սուլթանի բռնակալությունից քրիստոնյա հայերին ազատագրելու խնդրանքով։ Մի մոռացեք, սակայն, որ ես քրիստոնյաներից բացի թագավոր եմ նաև միլիոնավոր

մահմեդականներին։ Բիթլիսի մեջ մենք հյուպատոս ունենք, դիմեցեք նրան»։

Հավաքվածների ոգևորությունը փոխվեց հիասթափության։ Խմոն ամոթահար գլուխը կախեց։ Լռությունը խզեց տարիների փորձով իմաստնացած Մակարը.

— Ինգլիզից ու Ֆրանկից մեզ օգուտ չկա։

— Մակարը ճիշտ է ասում,— պաշտպանեց Անդրանիկը։ — Եվրոպայի ոչ մի պետություն մեզ օգնության ձեռք չի մեկնի։ Հույսներս մեզ վրա պետք է դնենք, զինվենք ու միաբան լինենք։ Մենք կփրկենք մեր ժողովրդին, եթե մեր շերեփը ոչ թե թղթից, այլ երկաթից սարքենք։

***

1894—96 թվականների կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանին բնորոշ է ոչ միայն սուլթանի հայաջինջ քաղաքականության ձևերի ու մեթոդների կատարելագործումը, այլև ընդդիմադիր ուժերի, մասնավորապես հայդուկների գործունեության թուլացումը, որը Բ. Դուռը կարողացավ օգտագործել իր նպատակների իրականացման համար։ Հայերն իսկապես հուսալքված էին։ Դա բացատրվում է ոչ միայն 1894—96 թթ. կոտորածներով, այլև նրանով, որ օսմանյան դարեր տևած բարբարոս լուծը հայերին դարձրել էր կրավորական, նրանք կորցրել էին ծանր վիճակից դուրս գալու հույսը ու գործնականում դադարել էին պայքարելուց։

«Հնչակը» 1902 թվի հունիսին գրեց.

«Մի ժամանակ ամբողջ հայ ժողովուրդը ընկղմված էր խորքի մեջ՝ անզգա, անտարբեր իր ծանր վիճակին, իր դառը, անտանելի կացության, ճնշված բռնության ծանր լծի տակ և ստրուկին վայել ծայրահեղ համբերությամբ կրում, տանում էր տիրապետողի հարստահարությունը, զրկանքները, նախատինքը և այն ամենը, ինչ որ հպարտ տիրապետողը կարող էր հնարել ռայաներին* ճնշելու համար։ Ռայաները, որոնց կյանքը, եկամուտը, աշխատանքը պատկանում էին իրենց իշխողին, որոնք ամենաթեթև հանցանքի համար ենթարկվում էին խիստ պատժի, տրոնջալիս՝ տանջանքի, և վայ բողոքողին, որը, իբրև քաղաքական հանցագործ, այլևս ապրելու իրավունքից զրկված, դատապարտվում է կախաղանի, աքսորի կամ ցմահ բանտարկության»։

Այս պայմաններում «հայ ռայան անողոք տիրապետողի ռեժիմին հնազանդվելով, ընտելացավ՝ իր վրա գործադրվող բռնություններին, ընտանեացավ հոռի, անարդար, տմարդի, կոպիտ ու վայրենի կարգերին և հետզհետե կորցրեց իր զգայությունը, ինքնասիրությունը, արժանապատվությունը, նա՝ հայ ռայան, ծայրահեղ ու երկարատև բռնության տակ, կորցրեց ազատության իր բնազդը, կորովը, բարոյապես այլասերվեց, այլանդակվեց և այլևս առանց բողոքի, առանց ձայն-ծպտուն հանելու, հաշտվեց իր վիճակի, ապրելակերպի հետ»։

Նման կարծիքների կարելի է հանդիպել նաև օտար հեղինակների մոտ։ Ֆրանսիացի Կիմոնը իր «Լա պատոլոժի դ'իսլամ» գրքի 250-րդ էջում գրում է. «Երկարատև ճնշումների ու բռնադատումների հետևանքով հայերը կորցրել են իրենց հին հատկանիշներից մի քանիսը։ Օրինակ, նրանց համար օտար են ռազմատենչ զգացումը, պատերազմելու հակումները, մարտական ոգին, զինավարժության սովորությունը, հարձակման բնազդը, հաղթանակի բերկրանքը։ Մի բան, որ շատ վտանգավոր է, նրանք կորցրել են նույնիսկ ինքնապաշտպանության ջիղը»։

Սակայն 19-րդ դարի վերջին և մասնավորապես 20-րդ դարի սկզբին, վիճակը զգալիորեն փոխվեց։ Ճիշտ է, 1894—96 թվականների կոտորածները արևմտյան հայությանը հուսալքության մատնեցին, բայց դա երկար չտևեց։ Ժողովուրդն այլևս չէր կարողանում հին ձևով, անտրտունջ տանել բռնություններն ու հարստահարությունները։

Պատմում է Անդրանիկը. «1901 թվականի հոկտեմբերին Գելիեզուզան գյուղում մեր զինվորների գաղտնի ժողով—խորհրդակցություն գումարեցինք ես, Գևորգը, Հարությունը, Վաղարշակը և Հաջի Հակոբը։ Մեր խորհրդակցության նպատակն էր միջոց և ուղի գտնել հայ ժողովրդի վրա ծանրացող տագնապը մեղմելու և թուրքական ու քրդական հարստահարությունների ու հալածանքները դադարեցնելու, քանզի քուրդն ու թուրքը, ազատ ու անկախ, հայ գյուղերի մեջ իրենց ոճիրներն ու ամեն տեսակի բռնությունները կգործադրեին և կառավարությունն այս բոլորը տեսնելով չէր պատժում, չէր սանձում, չէր սաստում։ Կառավարությունը ոչ միայն իր աչքերն էր փակում, որ-

* Բրիտ. նյութ հպատակ։

պեսզի չտեսնի ու չլսի այդ ոճիրների պատմությունը, այլ ներքնապես քաջալերում ու կազմակերպում էր դրանք, առաջ տանելով իր հայահալած ու հայաջինջ քաղաքականությունը, պսակելով նրանց կրծքերը պատվանշաններով ու առանձնաշնորհներ պարգևելով»[42]։

Անդրանիկին ու Գևորգին հաջողվում է ոչ միայն Սասունում, այլև Մշո դաշտում կազմակերպել զինված ջոկատների ու հայդուկային խմբերի ցանց, լուծել զենք ու զինամթերք պատրաստելու և հայթայթելու հարցը։ Այս գործում նրանք ստանում էին աշխատավորության ամենալայն աջակցությունը։ Տարիների փորձով հայ գյուղացին համոզվել էր, որ թուրքական իշխանություններն ու քրդական ցեղապետները հայերի զինված դիմադրության ժամանակ իրենց ոտնձգությունները սանձում են, իսկ երբ նման դիմադրություն չի լինում կամ հայդուկները պարտություն են կրում, նրանք սանձարձակ են դառնում։ Զինված ջոկատների լայն ցանցի ստեղծումը, հայդուկների խմբերի ակտիվ տեղաշարժերն ու հանկարծակի հարվածները, գյուղացիության եռանդուն աջակցությունը, օսմանյան կառավարության ներքին զզվոտոցները և արտաքին քաղաքական ու դիվանագիտական դժվարությունները հնարավորություն էին ստեղծում Սասունում ու Տարոնում նորից բարձրացնելու պարտիզանական կռիվների դրոշը։

Անդրանիկն ու Գևորգը հասկանում էին, որ նման պայմաններում շատ կարևոր է նախաձեռնությունը ձեռքից չփախցնելը, ակտիվ գործողությունների և ցուցադրական ելույթների միջոցով իշխանություններին ժամանակ չտալ ուժերի վերախմբավորում կատարելու ու հարձակման անցնելու համար։ Այդ նպատակով նրանք որոշում են ձմեռն անցկացնել Առաքելոց վանքում, Մուշ քաղաքից ութ կիլոմետր հեռավորության վրա, կուսակալ Ալի փաշայի աչքի առաջ։ Այս բանի հոգեբանական ազդեցությունը հասկանալի է՝ հայդուկները պետք է իրենց շատ ուժեղ զգային, որպեսզի համարձակվեին Առաքելոց վանքում ձմեռել։ Տակտիկական տեսակետից տրամաբանությունը հետևյալն էր։ Առաքելոց վանքը բարձունքի վրա էր, ուներ ամուր պարիսպներ, մոտ էր Մուշ քաղաքին ու Դաշտի գյուղերին, որը հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ լուծելու սնունդամթերքի, զենքի անհրաժեշտ պաշարների կուտակման հարցը և անհրաժեշտության դեպքում լուրջ դիմադրություն ցույց

տալ թուրքական բանակին՝ նրան պատճառելով ծանր կորուստներ։ Հայդուկները մինչև Առաքելոց վանք գալը նախապատրաստական զգալի աշխատանք կատարեցին։ Ցրոնք գյուղից 10 հոգի վանք տեղափոխեցին վառոդ, Մուշից փամփուշտներ հայթայթեցին, շրջակա գյուղերից՝ սննդամթերք։ Նոյեմբերի 2-ին հայդուկային խումբը ճեղքելով Ծովասարի ձյունը, մոտենում է վանքին։ «Դաշտի գյուղերի մեջ թափառող խուզարկիչ ոստիկանական գումարտակը այդ մասին իմանալով շտապում է այնտեղ, ուր ենթարկվում է մեր տղաների անակնկալ հրացանային համազարկին և մի քանի մարդու կորուստ տալով, խույս է տալիս և գալով քաղաք, լուր տալիս կառավարությանը»։

Անդրանիկն ու Գևորգը 40 հայդուկներով 1901 թվականի նոյեմբերի 3-ին մտնում են վանք։

Լուր ստանալով, որ հայդուկները ամրացել են Առաքելոց վանքում, Մշո կառավարիչն իր մոտ է կանչում Վարդան վարդապետին և սպառնում, որ եթե հայդուկներն անմիջապես չհեռանան, վանքը ռմբակոծվելու է։ Վարդան վարդապետը պատասխանում է, որ ինքը հայդուկների վրա ազդել չի կարող։

Հաջորդ օրը, նոյեմբերի 4-ին, իշխանությունները հայդուկներին առաջարկում են վանքից հեռանալ՝ խոստանալով նրանց չհետապնդել։

Հայդուկները մերժում են այդ առաջարկը։

Մի քանի օր հետո վանք են մտնում ևս 10 հայդուկներ։ Անդրանիկին հաջողվում է դրսի աշխարհի հետ կապ ստեղծել։ Այդ կապը իրականացվում էր Շուշանիկ և Զարուհի օրիորդների միջոցով։ Սակայն նախապատրաստական աշխատանքները դեռևս չէին ավարտվել, երբ սկսվեցին գլխապտույտ իրադարձությունները։

Նոյեմբերի 7-ին, թուրքական 3000-անոց մի զորաբանակ Սալեհ փաշայի գլխավորությամբ շրջապատում է վանքը՝ կտրելով դրսի աշխարհից։ Նոյեմբերի 12-ին առատ ձյուն է տեղում։

Պաշարման մեջ է թարգմանչաց սուրբ վանք,
Որ զնա պատեց թուրք զորաց փաղանգ.
Անա կլսվի որբոց աղաղակ,
Անա օգնութ ան կոչն մեզ զանգակ։

Պաշարված են հոն Անդրանիկ, Գևորգ,
Վաթսուն որբերով անտեր և անոք,
Եղեք, օ՜հ, հայեր, մի մնաք չեզոք,
Չքանդեն զվանք թուրքերն անողոք։

Տարոնից 1901 թվի դեկտեմբերի 24-ին գրում են. «Նոյեմբեր ամսվա սկզբին ընկերության տղաները, 50—60 հոգի, իրենց գլուխն ունենալով Անդրանիկն ու Գևորգը, մտան Առաքելոց վանք։ Ֆերիդ փաշան լսելով այդ, զինվորությունը լեռը հանեց...»[43]։

Հայդուկները դիրքեր են գրավում վանքի պարիսպների վրա։ Մեծաթիվ երևալու համար նրանցից ամեն մեկը կռվում էր մի քանի դիրքերից։ Վանականներն ու վանքում աշխատող կանայք պահեստային դիրքեր էին փորում, ռազմամթերք մատակարարում։ Թուրքերի հարձակումները մեկը մյուսի ետևից ձախողվում էին։

Վանքը պաշարելով, թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ պաշարվածների սննդամթերքը շուտով սպառվելու էր, իսկ սառնամանիքին՝ հայդուկները չեն կարողանա ձեղքել պաշարման շղթան ու հեռանալ։ Այսինքն՝ նրանք դատապարտված են սովամահության կամ գերության։ Թուրքերն այդպես էին մտածում, իսկ Գևորգը, գրում է Անդրանիկը, «ամեն օր վանքի դպրոցի աշակերտներին հանում էր բարձր տանիքը՝ բերդ խաղալու. հաճախ ինքն էլ էր մասնակցում։ Երեք կողմից թուրքերի արձակած գնդակները ՍՐԴ-ՍՐԴ կպչում, մխրճվում էին տանիքի թաց հողի մեջ և կամ խաղացողների գլուխների վրայով ֆրսթ-ֆրսթ սուլոցով անցնում գնում՝ հաճույք պատճառելով չարաճճի աշակերտներին»[44]։ Գևորգն այդ անելով նպատակ ուներ «թշնամուն զգացնել, որ վանքում գտնվողները որևէ մտահոգություն չունեն և միաժամանակ զինվորների մեջ հոգեբեկում առաջացնել ու նրանց դիմադրական կորովը թուլացնել»։ Գևորգը ոչ միայն անձնվիրաբար կռվում էր, այլև ամեն ինչ անում էր պաշարված հայդուկների, որբերի, ուսուցիչների ու վանքի մյուս ծառայողների տրամադրությունը բարձրացնելու համար։ Ահա մի քանի օրինակ. Գևորգի հանձնարարությամբ հայդուկներից մեկը պոկում է վանքի պատուհանի ձիթած հաստ թղթերը, դրանք ոլորում է, թաքնվում զանգակատան սյան ետևում ու բացառիկ ճշգրտությամբ նվագում թուրքական զինվորական քայլերգը։ Անդրանիկն ու մյուս հայդուկները շանթահարված՝ դիրքերից վեր են թռչում, կարծելով, թե թուրքերը վանք են մտել։ Իսկ Գևորգը քահ-քահ ծիծաղում էր։

«Թուրք զինվորներից ոմանք, իրենց գետնափոր դիրքերից,

քարերի արանքով սողալով իջնում են ներքև, գոմի ետևում թաքնվում և նշան բռնելով՝ կրակում։ Երբ նրանցից որևէ մեկը գլուխը բարձրացնում էր ու նրա ֆեսը երևում էր, Գևորգը կրակում էր։ Ֆեսը թռչում էր վեր, որն ուղեկցվում էր պաշարվածների ուրախ բացականչություններով ու ծիծաղով։

Նման դեպքերում Գևորգը, ըստ սովորության, բացականչում էր. «Հը՛ը, հը՛ը, ես Գևորգն եմ»[45]։

Նոյեմբերի 19-ի գիշերը թուրքերը երեք կողմից հարձակման անցան։ Մառախուղ էր։ Օգտվելով դրանից, նրանք ծակում են գոմի պատը ու ներս լցվում։ «Գոմի ներսի պատն էլ ծակելով,— գրում է Անդրանիկը,— մտել էին մարագ, դիրքեր թռնել մարագի ու գոմի միջև, մեզնից 70 քայլի վրա ու հոխորտում էին։

Այդ պաշարման ժամանակ էր, որ մի գիշեր թշնամու բանակից մի հոխորտացող ձայն հասավ.

— Ո՞ւր պիտի փախչեք իմ ձեռքից, հանձնվեք, հանձնվեք։

Գևորգը հեգնանքով քրդերեն պատասխանեց.

— Դո՜ւք, կանա՜յք, որ թաքնվել եք դիրքերում և չեք համարձակվում ձեր մազերը ցույց տալ։ Դուրս եկեք, ձեզ հաց ու ջուր տանք և հեռացեք, դուք՝ ո՜ւր, կռիվն՝ ո՜ւր...

Անմոռանալի էջ է զարհուրելի գիշերվա այն դյուցազնական դրվագը, երբ պաշարվածներին հանկարծ ասացին, որ զորքին հաջողվել է մոտենալ վանքին և պատրաստվում է ներս խուժել։ Գևորգը մի քանի կտրիճների հետ դուրս եկավ Հավատորիկ և հազիվ տասը համազարկ փոխանակելուց հետո թշնամին ետ քաշվեց և մինչև վերջ որոշ հեռավորությունից առաջ չեկավ»։

Սալեհ փաշան Մուշից և մոտակա գյուղերից հայ վարպետներ ու գյուղացիներ էր բերել և, ցրտից պատսպարվելու համար, վանքի պարսպից 100—200 մետր հեռավորության վրա, գետնափոր տնակներ ու վանքը ռմբակոծելու համար քարե պատնեշներ էր կառուցել։ Թուրքերին սպասարկելու համար հայկական գյուղերից 600 լծկան եզ էր բերվել։ Սակայն թուրքական զորքերի մեջ սկսվեց տիֆի համաճարակ։ Կռիվները, փոքր ընդհատումներով, տևեցին քսան օր։ Քսան օր մի բուռ հայդուկներ դիմադրում էին երեք հազարանոց բանակին։ Քսան օրվա ընթացքում թուրքերը հայդուկների գնդակներից և տիֆից կորցրեցին իրենց ուժերի զգալի մասը։

Առաքելոց վանքի կռիվները շփոթություն առաջացրին Ելոը-

զում։ Դրանցով սկսեցին հետաքրքրվել օտար պետությունները։ Սուլթան Համիդի հեռագրերը պահանջում էին բոլոր միջոցներով վերջացնել այդ խայտառակությունը, նույնիսկ խոստանում հանձնվելու դեպքում հայդուկներին ազատ արձակել։ Նա յուրաքանչյուր գերված հայդուկի համար գլխագին էր նշանակել, թուրք զորավարներին ու քուրդ ցեղապետներին հարուստ նվերներ ու բարձր շքանշաններ խոստացել։ Պաշարման 17-րդ օրը մի պատվիրակություն գնաց վանք՝ կառավարության անունից պահանջելու, որ հայդուկները հանձնվեն։ Պաշարվածները հարկադրված էին բանակցություններ սկսել, որովհետև երկու օրվա վառոդ ու փամփուշտ էր մնացել, ուտելիք չկար, վերջացել էր նաև վառելափայտը, սկսել էին վանքի մահճակալները վառել, սպառվել էր խմելու ջուրը և ստիպված ձյուն էին հալում։ Բացի այդ, գերի բռնված մի թուրք սպա հայտնեց, որ թնդանոթներ են բերվում՝ վանքը ռմբակոծելու։ Անդրանիկն իր միտքը պարզեց Գևորգին։

— Բանակցությունները մեզ հնարավորություն կտան օգտվելու զինադադարից և նախապատրաստվելու վանքից հեռանալուն։ Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի թուրքական բանագնացները տպավորություն ստանան, թե մեր զենքի պաշարները շատ են, դեռ երկար կարող ենք դիմադրել և չենք պատրաստվում վանքից հեռանալ։

«Այն օրը,— գրում է Անդրանիկը,— որ մենք իրենց նամակին պատասխանեցինք՝ թող գան, իսկույն վանքի առաջնորդարանը մաքրեցինք և մոմերի դատարկ սնդուկները բերեցինք ու առաջնորդարանի մեջ իրար վրա շարեցինք՝ վրայի միայն 4—5 սնդուկները փամփուշտներով լցնելով։ Փամփուշտի այդ սնդուկների մոտ ցիրուցան գցեցինք փամփուշտ լցնող գործիքներ, անգլիական և տեղական վառոդների տոպրակներ ու արկղներ...

Նոյեմբերի 23-ին ժամը 6.30-ին, թուրքական փողերը նորից հնչեցին։ Մի քանի րոպե անց անզեն մարդիկ երևացին։ Նրանք քայլում էին դեպի մեզ։ Երբ մոտեցան, տեսանք Մուշի առաջնորդ Խոսրով վարդապետ Փերիկյանին, Մուխթար էֆենդուն, Մեհմեդ էֆենդուն և վանահայր Հովհաննես վարդապետին»։

Բանագնացները եկան սպիտակ դրոշ պարզած։ Նրանց դիմավորեցին և ճաշասենյակ ուղեկցեցին Անդրանիկի նախատեսած ծրագրով։ Ընդունելության այդ ծիսակատարությունը թուր-

քերի վրա ուժեղ տպավորություն գործեց։ Խոսրով վարդապետը իր աջը մեկնեց Անդրանիկին, որ նա համբուրի, բայց վերջինս նրա ձեռքը ետ հրեց։

Սեղանի շուրջը տեղավորվելուց հետո բանագնացների ղեկավարը ասաց.

— Վեհափառ սուլթանից հրաման է եկել. ձեզ ներում կշնորհվի, եթե զենքը վար դնեք ու անցնեք խաղաղ աշխատանքի։

Խոսրով վարդապետը հաստատեց նրա խոսքերը։

Անդրանիկը բեղի տակ ժպտաց ու պատասխանեց.

— Մենք խաղաղ մարդիկ ենք, երազում ենք խաղաղ աշխատանքով զբաղվել և զենք ենք վերցրել ոչ թե կամովի, այլ ձեր իշխանությունների կամայականությունների ու բռնությունների պատճառով։ Դուք առանց դատ ու դատաստանի սպանում եք հային, հայը Թուրքիայում օրենքից դուրս է, նրա կյանքն ու ունեցվածքը անպատիժ թալանում եք, աղջիկներին բռնաբրում, նրանց ու մանուկներին առևանգում ու բռնի թուրքացնում։ Մենք զենքը վար կդնենք, եթե դուք այդ ամենին վերջ դնեք։ Մենք զենքը վար կդնենք, եթե բանտերից ազատվեն քաղաքական նկատառումներով բանտարկված մեր հայրենակիցները։ Մենք զենքը վար կդնենք, եթե պատժվեն Սասունում ու Դաշտի գյուղերում ավերածությունների ու կողոպուտների կազմակերպիչները և հատուցում տրվի վնասված գյուղերին, պետությունը իր պաշտպանության տակ վերցնի հայ գյուղացիներին։ Մենք զենքը վար կդնենք, եթե սուլթանը իրականացնի իր խոստումը՝ հայկական մարզերին ինքնավարություն տա։ Իմացեք, որ վեց ամսվա կռվելու ուժ ու զինամթերք ունենք։ Եթե ուզում եք՝ թնդանոթներ բերեք ու հարվածեք։ Մինչև դուք ներս գաք, ձեզնից հազարավորներ կսպանվեն, ապա միայն մեզ կհաղթեք։ Իսկ մենք այն օրը, որ հրացան վերցրինք, այդ օրվանից գիտենք մեր մահը։

Բանագնացները հեռացան՝ խոստանալով կառավարչին զեկուցել հայդուկների առաջարկած պայմանների մասին։

1902 թվի հունվարի 7-ին գրած իր նամակում Անդրանիկը կոկիզ է անդրադառնում այդ իրադարձություններին։

«Դեպքի 4-րդ օրը բանակցության մեջ մտանք կառավարության հետ... Նրանք առաջնորդարանի միջոցով մի նամակ ուղարկեցին, որով պահանջում էին կամ անձնատուր լինել և կամ թողնել վանքը։ Բայց մենք կարևորություն չտալով, 8 օր միջոց ուզեցինք պատասխանելու...»

Սակայն, վախեցնելու համար, նրանք պահանջեցին անմիջապես պատասխանել, այլապես կանչենն հարձակման։ Մենք մերժեցինք, նրանք գիշերը հարձակման անցան, բայց անարդյունք։ Երեք օր հետո նոր բանագնացներ եկան, 2 կոմիսեր և 2 առաջնորդ։ Ներս առինք, երեք ժամ խոսեցինք... (ասացինք) թե մեր նպատակն է անձնազոհ լինել հայ ազգի իրավունքը պաշտպանելու համար, և եթե չբավարարվեն ներկայացված պահանջները՝ պիտի կռվինք ու մեռնինք»։

Մի վկայություն ևս. «19-րդ օրը եպարքոսից ու պատրիարքից հեռագրեր են գալիս, որոնք մի պառավի միջոցով ուղարկվեցին հեղափոխականներին»։ Վերջինները ցանկություն են հայտնում տեսնել Խոսրով և Հովհաննես վարդապետներին, որոնք վանք են գալիս Մուխտար և Մեհմեդ էֆենդիների ուղեկցությամբ։

Անդրանիկը նրանց ասում է. «Մենք տերության դեմ ապըստամբներ չենք, մենք եղած անիրավություններուն դեմ բողոքողներ ենք միայն»։

Մեկնելիս վարդապետն ասում է, որ Ֆերիդ փաշան մտադիր է վանքը ոմբակոծել։ Անդրանիկը ծիծաղելով պատասխանում է. «Մենք նրանց թնդանոթների ու հրացանների ուժն ու զորությունը գիտենք, և եթե մենք ուզենք դուրս գալ, որ ժամանակ ուզենք, կանցնենք-կգնանք»[46]։

Մինչև Պոլսից պատասխանի ստացվելը, զինադադար հայտարարվեց։ Հայդուկները որոշեցին օգտվել դրանից և առանց պատասխանի սպասելու սկսեցին նախապատրաստվել վանքից հեռանալուն։ Բոլորի համար կարվեցին սպիտակ խալաթներ։ Եվ 1901 թվի նոյեմբերի 27-ի գիշերը նրանք դուրս եկան վանքից։ Անդրանիկի խումբը գնում էր առջևից. նրան հետևում էր Կորյունի խումբը, իսկ Գևորգի խումբը թևերից հսկում էր, որպեսզի որևէ մեկը ճանապարհից չշեղվեր ու ետ չմնար։

Մութ, մառախլապատ գիշեր էր։ Ոռնում էր բուքը։ Հայդուկները յուրաքանչյուր 50—60 քայլից հետո ծնկի էին իջնում, ստուգում շրջապատը, ապա առաջ գնում։ Պաշարողական առաջին գիծը անցնելով, Գևորգը թեքվում է դեպի վեր։ Հազիվ մի քանի քայլ էր արել, երբ դեմ է առնում թուրքական դիրքերին։

— Ո՞վ եք,— ձայն է տալիս թուրք զինվորը։

— Գիշերաշրջիկ սպա եմ,— մաքուր թուրքերենով պատասխանում է Գևորգը,— մոտ եկ։

Զինվորը մոտենում է։ Գևորգը նրա հրացանը խլում է և սպանում, որ սկսվի։

Վանքից հայդուկների հեռանալու մասին ահա թե ինչ է պատմում ժամանակակիցներից մեկը. «Վանքից նախ դուրս են գալիս Գևորգն ու Հարթինը՝ սպիտակ հագած։ Նրանք, մոտենալով պահակ զինվորին, ասում են. «... այսօր լավ հսկեցեք, որովհետև հրաման է եկել, որ առավոտյան վանքը ոմբակոծվելու է, լավ պահեցեք, որ ֆիդայիները այս գիշեր չփախչեն»։

Այդ ժամանակ պաշարման առաջին գծի մի զինվոր, ինչ-որ բան կասկածելով, բղավում է. «Ֆիդայիները գնացին»։ Թուրքերը սկսեցին կրակել։ Հայդուկներից մեկը սպանվեց։

Անդրանիկը պաշտպանության գիծն անցնելով, որոշ ժամանակ սպասեց Գևորգին, բայց որովհետև վերջինս ուշացավ, թեքվելով աջ, գնաց դեպի Կոփ գյուղը։ Թուրքական կրակագծից դուրս գալով, դեպի Կոփ շարժվեց նաև Գևորգը։

Հաջորդ առավոտյան վանքի ավագ միաբանը դիմավորեց Սալեհ փաշային, նրան հանձնեց վանքի բանալիները և հայտնեց, որ հայդուկները հեռացել են։ Հայդուկային խմբի հեռանալը այնքան աներևակայելի էր, որ Սալեհ (Ֆերիդ) փաշան նույնիսկ մեղադրվեց հայդուկների կողմից կաշառված լինելու մեջ։ ...«Անսպասելի, գրեթե գերբնական այս փախուստը առասպելական գույն ստացավ, ֆիդայիները անխոցելի և անըմբռնելի դարձան ժողովրդի երևակայության մեջ... Ժողովուրդը դուրս է գալիս վհատության հեղձուկ խավարից և իր հոգու խորքում գտնում է ապրելու կամք և պայքարի արիություն...»[47]։

Բ. Դուրը արտասահմանյան երկրներ հեռագրեր ուղարկեց, որոնցում Առաքելոց վանքի կռիվը անվանված էր «ավազակային արարք», իսկ Անդրանիկն ու նրա ընկերները՝ հայության դատը շահագործող մարդասպաններ։

«Ռուսկոյե սլովո» թերթը գրեց. «Վերջապես թուրքերին, քրդերին հաջողվեց գրավել վանքը, բայց առանց նրա խիզախ պաշտպանների։ Նրանք աննկատ ու անվնաս հեռացել էին։ Այդ ժամանակից Անդրանիկի փառքը դուրս է գալիս Թուրքիայի սահմաններից շատ հեռու։ Այդ ժամանակ նրա մասին խոսել սկսեցին ոչ միայն Կովկասում ու Ռուսաստանում, այլ՝ նաև Արևմտյան Եվրոպայում»։

Ֆրանսիական «Օրորը» ևս անդրադարձավ այս դեպքերին. «Աղերսանքներով Եվրոպային դիմելուց հետո հայերն այժմ

ուրիշ տոնով են ուզում խոսել նրա հետ։ Այժմ նրանք ավելի մեծ հավանականություն ունեն ուշադրություն գրավելու»։

Բեբելը, խրախուսելով հայերի քաջությունը, գրում է. «Մենք համոզված ենք, որ ո՛չ կառավարությունը և ո՛չ էլ Ռայխստագի մեծամասնությունը չեն արձագանքելու ձեր բողոքներին։ Այդ շրջանները մինչև արտի խորքը սառն են Հայաստանի անցքերի նկատմամբ»։ Նույն առիթով աջ սոցիալիստների առաջնորդ Էմիլ Վանդերվելդը նշում է, որ բոլոր պառլամենտներում «Ռամկավարներն ու սոցիալիստները մենակ էին մնում, երբ պետք էր դատապարտել Հայաստանի ջարդերը»։

«Լա պետիտ ռեպուբլիկում» հանդես եկավ Ա. Ջիպրանին. «Ճնշումների դեմ ապստամբությունը իրավունք է։ Ձեր թշնամիներից սպասեք միայն ստրկություն, թշվառություն, վիրավորանք, տանջանք ու ավերում։

Լրիվ բնաջնջման ենթակա ժողովուրդը հույսը միայն իր հուսահատ դյուցազնական ընդվզումի վրա պետք է դնի... Եթե դուք մեծ պատերազմում, մեծ հեղափոխության մեջ զոհեիք երեք հարյուր հազար ձեր խողխողված եղբայրներին, դուք ազատ կլինեիք։ Որևէ ժողովրդի անպատիժ սպանելն անհնար է, բացի այն դեպքից, երբ այդ ժողովուրդը ինքն է իր վիզը պարզում դահիճին։ Եթե գիտե և ուզում է ինքն իրեն պաշտպանել նույնիսկ եղունգներով ու ատամներով, այդ ժողովուրդը չի հաղթվի, չի նվաճվի, չի կորչի... Ձեր Աստվածը, ձեր հույսը, ձեր հավատը պետք է լինեն ձեր քաջությունը, ձեր հանդգնությունը, ձեր ատելությունը, ձեր հուսահատությունը... Որովհետև ձեր մարդասպան թշնամիները ոչ սեռն են խնայում, ոչ տարիքը, հետևաբար ձեր պաշտպանության համար ոտքի եք հանելու աղջիկ թե երեխա և կռվելու եք, հաղթելու կամ մեռնելու համար, հանուն ձեր պատվի, ձեր անվտանգության, ձեր անկախության և ձեր ազատության։ Զինված հարձակմանը պատասխանեք զինված ապստամբությամբ։ Ուժին՝ ուժով։

Մարդկանց համար ամեն միջոց լավ է ու բարի իրենց դահիճների դեմ կռվելու... Ամեն պատերազմ, որ տանում է դեպի ազատություն, արդար է և օրինավոր։ Կա՛մ կռվել հերոսի պես զենքը ձեռքին, կա՛մ մեռնել անարգ ու վախկոտ, համակերպվող ու լալկան։ Առաջին դեպքում դուք ազատ լինելու բախտից զուրկ չեք, երկրորդ դեպքում ազատության հոտն անգամ չեք առնի։ Ընտրեցեք»[48]։

Դժվար է գերագնահատել Առաքելոց վանքի կռվի ազդեցությունը հայ ժողովրդի բոլոր հատվածների և, իհարկե, առաջին հերթին, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայության վրա։

Այդ ազդեցությունը նման էր մի ջահի, որ եկավ մթնում խարխափելուց հոգնածներին ու հուսահատվածներին այդ վիճակից դուրս գալու ճանապարհը ցույց տալու։ Առաքելոց վանքի կռիվը մեկ անգամ ևս հաստատեց այն ճշմարտությունը, որ օսմանյան կայսրությունում փոքր ժողովուրդներն ապրելու և գոյատևելու միայն մեկ ուղի ունեն՝ զենքը ձեռքին մաքառել այդ իրավունքի՝ հարատևելու համար։ Այդ մասին Գևորգը գրում է. «Սասունը հեղաշրջված էր, ինքնավստահության և դիմադրության հոսանքը վերստին գրավում էր իր տեղը։ Բայց սարերը, քարերն ու դաշտերը հեծում են մտրակի տակ, սպանություն, ավերում, հրդեհներ, կողոպուտ, բռնաբարություն, տանջա՜նք, տանջա՜նք...

Ժողովուրդը ծայրահեղ հուսահատության և լքումի մեջ դիմում էր դավանափոխության, հուսալով ռուսական եկեղեցու գրկում անվտանգության մի հենակետ գտնել... միայն թե զուլումը դադարեր և արևի լույսը որևէ տեղից մի քիչ արդարություն բերեր»[49]։

Եվ Առաքելոց վանքի կռիվն էլ «լոկ պատահական դիմադրություն չէր», այլ «ժողովրդի գիտակցությունը ցնցելու» հերթական շարժում, որի շնորհիվ «Տարոնի աչքը, սրբած հուսալքության արցունքն ու կսկիծը իր թարթիչներից, հիմա շուտ էր գալիս դեպի վեր, դեպի բարձունքները՝ լցված հույսով և հավատքի սպասումով, հիմա սրտանց ողջունում էր Սասունին և անկախ ֆիդայուն։

Ժողովուրդը դուրս է գալիս վհատության հեղձուկ խավարից և գտնում է ապրելու կամք և պայքարի արիություն, որ հասարակության գոյության իրավունքն է հաստատում»[50]։

«Հնչակը» 1903 թ. տպեց Ս. Տաշիր* ստորագրությամբ հետևյալ բանաստեղծությունը։

Թող լռև մունջը, անդամալույծը,
Կամ, որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունենք հոգի և սիրտ փակ,
Եկ անվախ եղնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք՝
Ու այդպես լռենք»[51]։

* Ռ. Գատիանյան

ԳԱՐՏԻԶԱՆԱԿԱԿ ԿՌԻՎՆԵՐ

Առաքելոց վանքի կռվից երկու ամիս անց Գևորգը Նորաշեն հայկական գյուղում էր, որը Մուշից ընդամենը տասը կիլոմետր հեռավորության վրա էր։ Հայդուկները գիշերելու համար հարմար տներ են ընտրում։ Գևորգը, Վաղարշակը և Սեյտան Պողոսը հյուրընկալվում են նույն տանը։ Նորաշենցիներից երեք հոգի գնում են Մուշ և մութեսարիֆին ասում.

— Փաշա էֆենդի, մեր գյուղը ինը ֆիդայի են իջևանել, որոնց ուզում ենք կառավարության ձեռքը հանձնել։

— Գնացեք ձեր գյուղերը,— պատասխանում է փաշան,— դուք այսօր հարբած եք...

— Չէ, էֆենդի, մեր գլուխը կտանք, եթե ասածներս սուտ լինի. Փաղիշահի արևը վկա՝ Գևորգ Չաուշը խնզրների հետ է։ Եթե դուք ուշադրություն չդարձնեք, մենք հեռագրով կդիմենք վալիին...

Հուսեին աղա կոչված հրեշը, որը ներկա էր խոսակցությանը, պարծենալով բացականչում է.

— Ես պետք է գնամ ու բերեմ այդ Գևորգ Չաուշի գլուխը։

Առաքելոց վանքի կռվի թարմ տպավորության տակ գտնվող սպաները Հուսեինին ասում են.

— Խալիլ աղային աչքիդ առաջ բեր, նա Սերոբի գլուխը կտրեց, սակայն շատ ժամանակ չանցավ ու ինքն էլ անգլուխ մնաց։

Սակայն Հուսեինը համառում է։ Նրան տրամադրում են մեկ վաշտ ու ոստիկանական դասակ՝ Գևորգին բռնելու համար։

Սա այն Հուսեին աղան էր, որ Խալիլի հետ դավադրություն կազմակերպեց ու սպանեց Սերոբին։

Հուսեին աղան հանդիսավոր խոստում տվեց. «Գնում եմ Գևորգ Չաուշի գլուխը բերեմ։ Եթե այդ գլուխը չբերեմ, այսօրվա ընթրիքի ծախսերը ես եմ վճարելու»։ Նա հույսը դնում էր սառնամանիքի վրա, որը շրջապատման մեջ գտնվող հայդուկներին կդրկեր արագ շարժվելու ու փախչելու հնարավորությունից։

Հուսեինը մեկ ժամ հետո մտավ Նորաշեն։ Նա չգիտեր, թե Գևորգը որ տանն էր իջևանել, և երբ հայդուկների զբաղեցրած տներից անցավ, Գևորգը գյուղի զինված ջոկատին հանձնարարեց դիրքեր գրավել Առաքելոց վանքի ճանապարհին, իսկ ինքը հայդուկների հետ գնաց Մուշ տանող ճանապարհի ուղղությամբ։

Երկու հրացանավոր բարձր շենքի կտուրից պետք է պաշտպաններին հայդուկների թիկունքը։

Ժամանակակիցներից մեկը Նորաշենի իրադարձությունների մասին պատմում է. 1900 թվի վերջերին հարևան գյուղից մի քուրդ երեք ամիս շարունակ հալածում էր Վարդուշ անունով մի կնոջ, որ տա իր դստերը կնության տա իրեն։ Վարդուշը զանազան միջոցներով սիրաշահում էր քրդին, խոստանում՝ հենց որ աղջիկը մեծանա, նրան կնության տա։ Այդ մասին լսում է Գևորգը։ Նա վեց հայդուկ ուղարկում է քրդին բռնելու։ Հայդուկները քրդին բռնում են, ձիուց իջեցնում, մերկացնում, հագուստը կապում թամբից ու ձիուն բաց թողնում։ Իսկ քրդին կապում են ծառից և հարցաքննում։ Քուրդը ամեն ինչ պատմում է, վստահ, որ հայերը չեն համարձակվի իրեն ձեռք տալ։ Ի վերջո, քրդին սպանում են։ Իշխանությունները սկսում են հալածանքները՝ քրդի տեղն ու վիճակը պարզելու համար։ 1901 թվի փետրվարի 7-ին Գևորգը, 12 հայդուկներով, Նորաշենում էր։ Լրտես Մամփրեն այդ մասին լուր է տալիս իշխանություններին։ Առավոտ վաղ գյուղը շրջապատվում է Սառնամանիք էր։ Շրջապատումից դուրս գալ անհնար էր։ Գևորգին հաջողվում է խորամանկությամբ տանիքից վար բերել մի թուրք չաուշի, որին սպանում է ու նրա հագուստը հագնելով՝ մյուս հայդուկներին կարգադրում է կանացի շորեր հագնել, կծեր վերցնել, թե իբր գնում են ջուր բերելու։ Իսկ ինքը տանից դուրս է գալիս, խառնվում թուրքական զորքին ու հրամաններ արձակում։ Զորքը շարժվում է նրա ցույց տված ուղղությամբ, իսկ ինքը մտնում է մի տուն, հագուստը փոխում, մի թուղթ գրում ու փակցնում տան դրսի պատին. «Ես Գևորգն եմ, թուրքեր, ձեր հազար ֆունտը իմ մեկ ֆունտը չարժե։ Ես գնացի Սասուն։ Տղամարդկություն չէ ա՛ս ձուն-ձմռանը հազար հոգանոց զորքով գալ և խեղճ գյուղացիներին չարչարել ու տանջամահ անել»։

Թուրքերը դեմ առան գյուղի զինված ջոկատին, որը կրակ բացեց նրանց վրա։ Առաջինը գետնին տապալվեց Հուսեին աղան։ «Եվ գնդակները սուլեցին օդում։ Առաջին անվրեպ մահացու կապարը ծակեց Հուսեին աղայի ճակատն ու անցավ։ Դիակը ձիուց վար գլորվեց Մեղրագետի ալիքների մեջ»։ Թուրքերը, մի քանի տասնյակ զոհեր տալով և մնալով առանց հրամանատարի, նահանջեցին և լցվեցին մի կիսաքանդ գոմ։ Նրանք մոտակա գյուղերից օգնություն ստանալու հույսով օդ էին կրակում։ Գևորգը պաշարեց գոմը, թուրքերին փակեց այնտեղ և երկու հայդուկի գոմի դռան մոտ պահակ նշանակեց։ Գյուղը նորից պաշարվեց, սակայն թշնամին չէր համարձակվում գյուղ մտնել։ Մինչև երեկո դիրքային կռիվներ գնացին։ Երբ մութն ընկավ, Գևորգը գյուղացիներին հանձնարարեց մնալ տներում և տպավորություն ստեղծել, որ իրենք կռվին չեն մասնակցել, իսկ ինքը իր

յոթ ընկերների հետ շարժվեց դեպի լեռներն ու անհետացավ մթության մեջ։

Սա մեկն է Գևորգի ապշեցնող ճակատամարտերից։ Ութ հայդուկ ու մի քանի գյուղացիներ կռվում են 2000-անոց թուրքական կանոնավոր զորամասի և 2000 զինված քրդերի դեմ ու չեն պարտվում։

«Բազմությունը ցրվեց, ինչպես մշուշը ուժեղ քամուց, խմբի առաջապահ մասը բարձրանալով լեռն ի վեր, գրավեց Ծծմակի քիթը։ Երբ պաշարողները գլխիկոր ետ դարձան, Գևորգը իր ընկերներից մի քանիսին ուղարկեց սար, իսկ ինքը իջավ դաշտ»։

Հուսեինի դիակը Մուշ տարան։ Նրան դիմավորեց բազմամբոխ խուժանը։ Թուրքերը զայրույթով շպրտում էին հայերի երեսին. «Հուսեինին էլ կերաք։ Եթե մարսեք, լավ»։ Իսկ Մշո կառավարիչը սպառնաց Նորաշենը գցել Մոկունքի օրը։

«Այդ օրերին շարիքը կարծես անդադար հետապնդում էր Գևորգին։ Հավատորիկի Շեխ-Նիստ գոմերի մոտ նա հանդիպեց քրդերին, հարկ եղավ նորից աննպատակ կռիվ մղել և հաղթական շարունակել իր ճամփան»։ Այդ կռիվներն էլ ավելի բարձրացրեցին հայդուկների հեղինակությունը։

1902 թ. Սասուն եկավ դաշնակցական կուսակցության ակտիվ գործիչներից Վահան Տոդրամաճյանը։ Սասուն հասնելուց հետո Վահանը տակտիկական նկատառումներով, նպատակահարմար գտավ Գևորգին Սասունից առժամանակ հեռացնել։ Խուսափելով երկպառակությունից այն պահին, երբ Սասունը նոր, խոշոր իրադարձությունների շեմին էր, Գևորգը ենթարկվեց Վահանի վճռին։ Նա 1902 թ. մեկնեց Վան, իսկ այնտեղից բարձրացավ Սիփանի լանջերը։ Գևորգն այնտեղ կազմեց մի զինված խումբ և շրջում էր Արճեշի գյուղերով, որտեղ տեր ու տիրական էր Քյոռ Հուսեին փաշան։ Արճեշի հայերի վիճակը քրդական շրջապատման մեջ շատ ծանր էր։ Մի անգամ Գևորգը իր մարտիկներով դուրս է գալիս այդ քրդերի դեմ ու նրանց սպառնում՝ գյուղից հեռացեք, եթե ուզում եք ողջ մնալ։ Քրդերը զարմանքից քարացել էին, նրանք այդ կողմերում առաջին անգամ էին զինված հայեր տեսնում և այն էլ՝ այդպիսի հրամայական տոնով խոսող։

Գևորգի հեռանալը թե՛ Սասունում և թե՛ Տարոնում առաջ բերեց բուռն դժգոհություն։ Մասնավորապես ըմբոստացան տալվորիկցիները։

Դաշնակները զիջեցին, և հին ֆիդայիների մի մեծ խումբ ջարժվեց դեպի արևելք՝ Գևորգին բերելու։ Գևորգին դիմավորեցին հրացանների տոնական համազարկով։

1902 թվականը խաղաղ անցավ։ Եղան միայն մանր ընդհարումներ։ Բայց իշխանությունների կողմից հայերի ճնշումն ու հալածանքները ոչ միայն չէին դադարում, այլ գնալով ավելի այլանդակ բնույթ էին ստանում։ Հարստահարման օրինակներն ու փաստերը բազմաթիվ էին, դրանցով էր հագեցած Արևմտյան Հայաստանի յուրաքանչյուր բնակավայրի առօրյան։ Այդ նկատի ունենալով՝ Ռուանեն ֆրանսիական պառլամենտում արտասանած ճառում ասաց. «Մասնավոր ոճիրներ չեն, որոնց ենթակա են հայերը։ 1900 և 1901 թվականներին այն դրության մեջ էին, ինչ-որ էին 1892, 1893-ին, մեծ ջարդերի նախօրեին։ Բոլոր փաստերը վկայում են, որ սուլթանը, քաղաքակրթության դեմ այս ոճիրների ուղղակի և պատասխանատու հեղինակը, իր բնաջնջումի ծրագրից ձեռք չի քաշել։

Որտե՞ղ է վերջանում անհատական սպանությունը և որտե՞ղ է սկսվում կոտորածը...»։ Այնուհետև նա ընթերցում է Մշո դաշտից «Պրո Արմենիայի» ստացած մի նամակ։ Նամակագիրը հայտնում է, որ «ավերված է 11 հայկական գյուղ, սպանությունների թիվը հասնում է 106-ի... Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1900—1901 թթ. կարելի է կոչել կոտորածների նախապատրաստության շրջան...»։ Իշխանությունները մի կողմից միջոցներ են ձեռնարկում գալիք կոտորածները քողարկելու, իսկ մյուս կողմից մահմեդական ազգաբնակչությանը հրահրում են «ամենալայն կոտորածների և եղեռնագործության։ Այս նպատակով, երբ որևէ գյուղում հայ է սպանվում, երբ տներն են հրդեհում, երբ հոտերն են քշում տանում, թուրք իշխանություններն իսկույն հայտարարում են, թե այդ չարիքների հեղինակները հայ հեղափոխականներն են»[52]։ Դեռ ավելին, զգալով որ նման պնդումները կարող են հավատ չներշնչել, իշխանությունները «հայերից պահանջում են, որ նրանք իրենց սածը հաստատեն»։

1902 թ. ապրիլի 2-ին Մոնակոյում տեղի ունեցավ Խաղաղության 11-րդ համաժողովը, որտեղ Հայկական հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Պիեռ Քիյարը։ Այդ հարցի վերաբերյալ ընդունվեց բանաձև, որը կոչ էր անում Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին. 1. Հասագրա.ն հրավիրել համաժողով՝ նվիրված Հայկական հարցին։ 2. Նկատի ունենալով

որ նոր կոտորածներ են սպասվում Սասունի կողմերում, խնդրվում էր նույն պետությունների՝ իրենց հյուպատոսներին ուղարկել Մուշ, քանի որ սոսկ եվրոպական պաշտոնական վկաների ներկայությունը բավական է արգելելու արյունոտ անցքերի կրկնումը։

«Պրո Արմենիայում» Անատոլ Ֆրանսը տպագրեց մի կոչ՝ հայերի նոր ջարդերի առաջն առնելու համար միջազգային համաժողով հրավիրելու մասին։ «Ժամանակը սուղ է,— կարդում ենք կոչում,— զորանոցները բարձրանում են Զեյթուն ու Սասուն։ Ազդարարում են նոր աղետների մասին։ Մարտիրոս ժողովրդի վերապրուկներին կարելի է փրկել միայն կառավարությունների միջազգային համաձայնությամբ...»։

1902 թվի փետրվարի 3-ին հանդես գալով ռայխստագում, գերմանական սոցիալիստ Գրադնաուերն ասաց. «Տարիներ ի վեր և առավել ևս այսօր հարաճուն չափով հայերի շրջանում դարձյալ կատարվում են սարսափելի ավերումներ ու կոտորածներ։ Դրա պատճառը թուրքերի ու հայերի ցեղական ու կրոնական տարբերության մեջ չէ միայն, այլ նաև տնտեսական ու քաղաքակրթական ասպարեզում։ Հայ ազգաբնակչությունը հակում ունի դեպի Եվրոպական հաստատություններ և ներկայանում է իբրև արթուն, կենդանի և առաջադիմող մի ժողովուրդ, որը ձգտում է ազատվել Տաճկաստանի չափազանց ապականված մթնոլորտից»[53]:

Փարիզի «Լը Սիգնալ» թերթը գրում է. «... Ոչ մի տարակույս չկա, (որ) սուլթանը Եվրոպայի անտարբերությունը դաշնակից ունենալով պատրաստվում է նոր կոտորածներ սկսել։ Մեծ մարշասպանը հրամայել է սկսել Սասունից։ Սակայն վերապրող սասունցիները գիտեն արժանապատվորեն մեռնել։ Շուտով ջարդերը համընդհանուր բնույթ կստանան և արդեն ուշ կլինի դիմակայել դրանց։ Մարդասպանի հաշվարկներով՝ կարճ ժամանակ անց այլևս հայ չի մնա»[54]:

1902 թ. հուլիսի 17-ին Բրյուսելի Շերբեկ արվարձանում, հակառակ Բ. Դոան ջանքերի, բացվեց Հայասերների միջազգային համաժողովը։ Մասնակիցների թվում էին Ֆ. Պրեսանսեն, Ժ. Ժորեսը, Է. Վանդերվելդը, Վ. Լազարը և ուրիշներ։ Զեկուցող Պ. Քիյարը նշեց Հայկական հարցի լուծման երեք հնարավորությունների մասին՝ «ժողովրդի բնաջնջում, Հայաստանի միացում Ռուսաստանին և վարչական ռեֆորմներ»։

Այս համաժողովի նախագահին Պ. Քիյարը տպագրեց «Հայաստանի համար» գիրքը։ Գրքում ցույց է տրվում, որ հայերի

«վիճակը ծանրանում է օրեցօր և այդ ժողովրդի ոչնչացումը առաջ է տարվում մեթոդիկ ծրագրով»։

1. «Հայերին արգելված է ոչ միայն Թուրքիայից արտասահման գնալ, այլ նույնիսկ երթևեկել գավառից գավառ, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ։ Հետևապես հայի առևտուրը բոլորովին կաշկանդված է, և երբ վարչական միջոցներով ներսում սով է կազմակերպվում, շատ դյուրին է սովամահ անել մեծ թվով մարդկանց։ Այդպես էր Վանի սովի ժամանակ 1896 և 1897 թվականներին։

2. Հարկահաններ են թե՛ թուրք կառավարությունը և թե՛ քրդական աշիրեթները։

3. Հայերի նկատմամբ ստիկանության ստոր վարքագիծն ու մղձավանջը բանտերում։

4. Այն վայրերում, ուր հայ ազգաբնակչությունը, չնայած դաժան ճնշումներին, դեռ ընդունակ է «իրեն պաշտպանելու, կառավարությունը բնակեցնում է մահմեդական գաղթականներ՝, որոնք կեղեքում են հայ հողատերերին»։

5. «Մանր» սպանությունների մեթոդը իրականացնելով, տաճիկ կառավարությունը բնավ չի մոռացել խոշոր ջարդերի ծրագրերը»։

«Կան երկու վայրեր, ուր կառավարությունը առանձին ջանքեր է թափում բնաջինջ անելու հայ համայնքները, որոնք դեռ կարող են լուրջ դիմադրություն ցույց տալ. դա Զեյթունն է և Սասունը»։

Անդրադառնալով Սասունին, Քիյարը գրում է. «1894 թվականից ի վեր կառավարությունը իր հին տակտիկայով ձգտում է ցած բերել լեռնցիներին դեպի Մշո դաշտ՝ այնտեղ խմբուլն ջարդելու նպատակով»[55]:

Անգլիական և գերմանական «Գլոբուս» թերթից հետևյալ մեջբերումը. «Պետք է զգուշանալ դիվանագիտական անխոհեմ քայլերից, որոնք կարող են Փորթ Ասիայի մահմեդականների մոտ կարծիք ստեղծել, թե ուզում են հայերին նրանց տերը դարձնել։ Եվ անցյալում դիվանագիտական սխալ է եղել՝ պահանջել ռեֆորմներ միմիայն քրիստոնյաների համար և չմտածել մահմեդականների մասին, որոնք նույնպես կրում են բռնակալության լուծը», Քիյարը պատասխանում է. «Այդ պատճառաբանությունները նոր չեն, դրանք հնարված են Եյլդզում, և Եյլդզից են տարածվել կոտորածի հրահանգները... Եյլդզից էր նույնպես, որ հավատացրեցին մահմեդականներին, թե ռեֆորմները, իբր, ուղղված են նրանց դեմ...»։

«Լա պետիտ ռեպուբլիկում» 1902 թ. մարտի 10-ին Ժան Ժորեսը տպագրեց «Արևելք» հոդվածը։ «Երեք տարի առաջ,— գրում է Ժորեսը,— երբ հայկական շեների հրդեհը բռնել էր Արևելքի երկինքը, և հարյուր հազարավոր անմեղ զոհերի դիակներն ասես պատվանդան էին դարձել Աբդուլ Համիդի հուշարձանի համար, քաղաքակիրթ աշխարհի խղճի զմռսված դռնից պոկվեց սարսափի ճիչը»։

Ֆ. Պրեսանսեն մերկացնելով եվրոպական պետությունների ենապաշտ քաղաքականությունը, նշեց «նրանց մեղսակցությունը մեծ մարդասպանի հետ, որի ոտքը տապանաքար է դարձել մի շարք ժողովուրդների համար։ ... Մարդասիրության և ազատության անունից նրանց հղված կոչերը փուչ խոսքեր են միայն։ Պետք է գործել անհապաղ։ Չկա ոչ մի արդարացում մեր դանդաղկոտության համար։ Մենք պետք է վերացնենք այն շարիքը, որն արյամբ է հեղել Հայաստանը»։

«Հայտնի է,— շարունակում է Պրեսանսեն,— որ մինչև Արևելյան հարցը լուծվի, սպառնալից անակնկալներ պետք է ժայթքեն այն խարույկից, որը միշտ բորբոքվում է արևելյան ինկվիզիտորի ձեռքով»։

Եվրոպական դիվանագիտությունը «թույլ տվեց, որ Արևելքի շարաշուք բռնակալը հարցը խեղդի անպաշտպան ժողովուրդների արյան մեջ։

Դա մի ոճիր էր մարդկության դեմ...»։

Գլադստոնը հայտարարեց. «... Պաշտպանել հայերին ու Հայաստանը՝ կնշանակի պաշտպանել Եվրոպան»։

«Աբդուլ Համիդը պատվիրում է կոտորել, մորթել, լկել ու բռնաբարել քրիստոնյա ժողովուրդներին, բայց բավական է այդ բազմաշարշար արարածներից գոնե մեկը համարձակվի վայրագ գազանին կարմրաշեկ գնդակ կամ պսպղուն դաշույն հյուրասիրել, որ սկսվի ակնջ խլացնող գոռոցների կոկոցը...»[56]։ Եվրոպայի լավագույն մտածողների, քաղաքական և հասարակական գործիչների, մտավորականության այս ահազանգերը, իհարկե, անհետևանք չմնացին։ Դրանք հայ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգի դեմ բարձրացրին համաշխարհային հասարակական կարծիքը։

Դրանք հարկադրեցին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ սուլթանի վրա ճնշում գործադրելու, որպեսզի նա զանգվածային կոտորածներից ձեռնպահ մնա։

Դրանք բարոյական մեծ աջակցություն էին ապրելու իրավունքի համար մաքառող արևմտահայության համար։

ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

1902 թվականի սկզբին ակնհայտ դարձավ, որ Սասունը դառնում է զանգվածային կոտորածների թատերաբեմ։ Թուրքական իշխանությունները համառ հետևողականությամբ զորքեր էին բերում ու աստիճանաբար բոլոր կողմերից Սասունը վերցնում պաշարման օղակի մեջ։ Նախապատրաստական աշխատանքները տարվում էին այն հաշվով, որ Սասունի վրա հարձակումը սկսվեր 1902 թվի գարնանը։ Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր։ Բերենք դրանցից միայն մեկը. 1902 թ. մարտին Տարոնից գրում են. «Տեղիս կառավարությունը սկսել է պաքսիմաթ եփել տալ, ձյունը հալվելուն պես իր դիտավորությունն է ամբողջ զորքը Սասուն հանել, մի կողմից տղաներին հալածելու և մյուս կողմից կայսերական իրադեով զորանոցներ կառուցելու Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ և ստրատեգիական այլ կետերում, իսկ Նովասարի ժողովրդին էլ՝ ցած իջեցնել։ Արդեն հասկանում ենք, թե ինչու է Տարոնը դարձել զորքերի կենտրոնատեղի։ Աշնանը Կարինից ու Խարբերդից եկած զորքերին 10 օր առաջ 500 հեծյալ զորք ևս ավելացավ»[57]։ Սակայն 1902 թ. հարձակում տեղի չունեցավ, այն հետաձգվեց 1903 թ. գարնանը։ Թե ինչու հարձակումը հետաձգվեց, կան բազմաթիվ բացատրություններ։ Օրինակ, Մուշից 1903 թ. մարտի 20-ին ստացված նամակում կարդում ենք. «Անցյալ 1902 թ. տաճիկ կառավարությունը հարկավոր պատրաստություններ տեսել էր Սասունն ու Մշո դաշտը արյան թատերաբեմ դարձնելու... (սակայն) ֆրանսիական կառավարության աղդու միջամտությամբ գործակալ ուղարկվեց Մուշ, կոտորածի ուրվականը տեղի տվեց... Մի փոքր մխիթարություն էր դա...»[58]։

Այս կարծիքը տիրապետող էր նաև եվրոպական հասարակական-քաղաքական շրջաններում։

Իհարկե, Ֆրանսիայի միջամտությունը որոշակի դեր խաղաշել է, բայց միայն դրանով բացատրել թուրքական հարձակման

հետաձգվելը, ոչ միայն թերի, այլև սխալ կլինի։ Եթե թուրքական իշխանությունները որոշել էին Սասունի վրա հարձակվել և պատրաստ էին այդ հարձակմանը, ապա հազիվ թե նրանք հրաժարվեին իրենց մտադրությունից լոկ այն պատճառով, որ Ֆրանսիան իր գործակալին Թուրքիա էր ուղարկել։ Հավանաբար, վճռական դերը խաղացել է ոչ թե այդ միջամտությունը, այլ այն, որ թուրքական կառավարությունը կատարված նախապատրաստական աշխատանքները բավարար չէր համարում Սասունի վրա հարձակվելու։

Շարադրվածից ակնհայտ է, որ Սասունի վրա հարձակվող գլխավոր ուժը կանոնավոր բանակն ու ոստիկանությունն էր, այսինքն՝ այդ հարձակումը իրականացնում էր օսմանյան կառավարությունը։

Սասունցիները գիտեին, որ կանգնած են բնաջնջման վտանգի առաջ և փրկության ուղիներ էին փնտրում։

Ահա նրանց օգնության կանչերից մեկը։ «Գարուն է։ Տաճիկ կառավարությունն արդեն տվել է հարկավոր հրամանը՝ անցյալ տարվա ծրագիրը ավելի լայն սահմաններում գործադրելու։ Քրդական աշիրեթները պիտ հավաքվեն Մուշ, հայտարանցի մի աղա 500 հոգով պիտի այցելի Ալաշկերտ ու Բասեն, ջամատանցիների աշիրեթը պիտի հավաքվի Բասենի և Ալաշկերտի սահմանին։ Ամենուրեք պատրաստություններ են տեսնում անցյալ տարվա պակասը այս տարի լրացնելու... Եթե մեր հայ եղբայրակիցները շուտափույթ օգնության չգան, մենք, իբրև ոչխարի հոտ, անմոունչ զոհ պիտի դառնանք մարդկային սպանդանոցում և, որ ամենաաններելի ոճիրը կլինի մեզ համար, մեր մի բուռ քաջ զինվորներն ու աղատասեր լեռնցիները իրենց արյունով պիտի ներկեն Սասնո ժայռերը՝ հավիտենական անեծք կտակելով մեզ...»։

Նույն իրողությունը հաստատում է նաև «Դ' ինֆորմասիոնը», որն իր 1803 թ. հունվարի 17-ի համարում գրեց. «Հայտնի է, որ դրությունը Մուշի կողմերում վերին աստիճանի անհանգստացնող է։ Չորս քուրդ ցեղեր, կանոնավոր զորքերի հետ, շրջթայել են Սասուն լեռնավայրը՝ ֆիդայիների բանակին տիրելու և Սասունի ըմբոստներին մեկընդմիշտ ոչնչացնելու համար...»։

Նույն աղբերականը միաժամանակ նշում է, որ Սասունում տիրող վիճակի վրա «բարերար ազդեցություն ունեցավ եվրոպա-

կան տերությունների հյուպատոսական գործակալների գալուստը»։

Եվրոպայի քաղաքական գործիչները լավ էին հասկանում այս միջոցառման անցողիկ և ոչ որոշիչ նշանակությունը։

Դրա լավագույն վկայությունն է Ռուան քաղաքում 1903 թ. սեպտեմբերին տեղի ունեցած խաղաղության 13-րդ համաժողովի բանաձևը, որի մեջ միանշանակ արձանագրված էր, որ լրացուցիչ հյուպատոսների նշանակումը «... թեպետ կարող է արգելել կամ առժամանակ հետաձգել մեծ կոտորածները, բայց չի կարող փրկել դանդաղ բնաջնջումից մի ամբողջ ժողովրդի»[59]։

Մայիսի 20-ին Ռեյտեր գործակալությունը հայտարարեց. «Լեռնային վայրերում ապստամբների կենտրոնացումն անհնար դարձնելու և Սասունի շրջանում խաղաղություն վերահաստատելու համար կառավարությունը ծրագրել է քարուքանդ անել բոլոր հայ գյուղերը և ժողովրդին բնակեցնել Դաշտում, որտեղ ավելի հեշտ էր լինելու նրանց վրա հսկել»։ Հասկանալով ստեղծված վիճակի ահավորությունը և գիտակցելով, որ փրկվելու այլ միջոց և ուժ չկա, սասունցիները հանգում են ինքնապաշտպանության գաղափարին։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն պառլամենտի նիստերից մեկում արտասանած ճառում ասել է. «Բնական է, որ ժողովուրդները, որոնք անպատիժ թալանվում են և բռնաբարվում, վերջապես գիտակցեն, որ չկա ավելի վատթար վիճակ, քան ջարդ-կոտորածի մշտնջենական սարսափի տակ ապրելը»։

«Լ' Էրոպ» շաբաթաթերթի 55-րդ համարում կարդում ենք. «...Եթե այսպես շարունակվեն հարստահարությունները և ջարդերը, անխուսափելիորեն Մակեդոնիայում և Հայաստանում կրոնական ընդհանուր ապստամբություն, այն էլ՝ մոտ ժամանակներում, հնարավոր է՝ եկող գարնանը...»։

Սուլթանը ջղագրգիռ տագնապով ձգտում էր Սասունի հարցը օր առաջ լուծել, քանի որ օսմանյան կայսրության տարածքում սպառնալից չափերով ծավալվում էին ընդդիմադիր շարժումները։ Այդ շարժումները խորամանկ հեռատեսությամբ ձգտում էին՝ մերձենալ հայկական շարժման որոշակի հոսանքների հետ ու օգտագործել դրանց հնարավորությունները՝ սուլթանի դեմ մղվող պայքարում։

1902—1903 թվականներին մի քանի անգամ Մուշի սպանները կապերի մեջ մտան հայդուկների հետ։ Ոմանք հայդուկներին տեղեկություններ էին հաղորդում կառավարչի գործողությու-

ների, թուրքական զորամասերի քանակի, նրանց տեղաշարժերի ու ծրագրերի մասին։ Զորս սպաներ միացան հայդուկներին և կռվեցին իշխանությունների դեմ։ Այս պայմաններում հայ աշխատավորությունն ու թուրքական տեղական իշխանությունները իրար դեմ էին կանգնած որպես հակադիր ռազմական ուժեր։ Օսմանյան հսկա կայսրության տարբեր մասերում ճնշված ժողովուրդների, մասնավորապես՝ մակեդոնացիների պայքարը, սուլթանին հնարավորություն չէին տալիս մեծաթիվ զորքեր կուտակելու Տարոնում։ Սասունցիները եռանդուն նախապատրաստական աշխատանքներ էին ծավալել։ Նրանք այլևս չէին թաքցնում, որ պատրաստվում են թուրքական հարձակմանը հակահարված տալու։ Գրում են Տարոնից. «Ապշում են թուրքերը, զարմանում այս հանդգնությունից։ Նրանք միշտ տեսել էին հեղափոխականը իր գաղտնի դերի մեջ, միշտ թաքնված ու ժրաջան, միշտ աներևույթ ու գործոն, իսկ այսօր դերը փոխված է, նա հրապարակ է եկել ու բացահայտ է գործում, իսկ օսմանյան կառավարությունը իր ուժերից վեր է գտնում նրան խոչընդոտելն ու պատժելը։ Դեռ շատ ժամանակ առաջ չէր, երբ քուրդը ֆիդայի էր տեսնում, ամբողջ գավառը իրար էր խառնվում, աշիրեթներ էին ոտքի կանգնում, իսկ թուրքը երկյուղից պապանձվում էր։ Այսօր քուրդը տեսնում է ֆիդայուն և չտեսնելու է տալիս։ Կառավարությունը աշիրեթներին հրահրում է ֆիդայու դեմ կռիվ գնալու, իսկ նրանք մերժում են։

Փոխվել են ժամանակները։

... Բաղեշի կուսակալը նկատի ունենալով ֆիդայիների համարձակ նիստ ու կացը Սասնո անհաղթ լեռների կատարին, հեռագրում է Բ. Դուռ և հրաման է խնդրում գնալ և նրանց ջնջել։ Բ. Դուռը պատասխանում է. «Եթե կարող եք գործը հաջողությամբ կատարել և 24 ժամում բոլորին ջնջել, դեռ լուրը Եվրոպա չհասած, հարձակում գործեցեք»։ Կուսակալը պատասխանեց. «Ոչ 24 ժամվա և ոչ էլ 24 օրվա ընթացքում նրանց հաղթել չենք կարող»[60]։

Թուրքական 10 հազարանոց մի բանակ դիրքեր գրավեց Մուշ քաղաքի հարավային շրջաններում։ Թուրքական զորաջոկատներն աստիճանաբար թափանցեցին Սասուն և իրենց ձեռքը վերցրեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող կետերը։ Երկու վաշտ տեղավորվեց Շենիկ և Սեմալ գյուղերում, այսինքն՝ հսկողության տակ վերցրին Սասունի դռները։ Հետո այդ զորքերի թիվը զգալիորեն ավելացավ, ինչը գործնականում անհնար դարձրեց հայդուկների ազատ տեղաշարժերը նույնիսկ բուն Սասունում։ Ստեղծվեց վտանգավոր վիճակ։ Գևորգը այդ լավ էր հասկանում և որոշեց ինչ գնով էլ լինի նրանց դուրս շպրտել Սեմալից։ Նա Սեմալի զինված խմբերին հանձնարարեց դիրքեր գրավել և կրակ բացել թուրքական զորամասերի վրա, իսկ ինքը իր ջոկատով շրջանցեց այդ զորամասերի թիկունքը և շեշտակի հարձակման անցավ։ Թուրքական զորամասերը, առանց լուրջ դիմադրություն ցույց տալու, նահանջեցին դեպի Կուրտիկ։ Գևորգը Կուրտիկի բարձունքներին տեղադրել էր մի ջոկատ, որը թուրքերին ծանր կորուստներ պատճառեց։

«Անցած ամառվա հունիս-հուլիս ամիսներին,— գրում են Սասունից,— կառավարությունը բանակ դրեց Գելիեգուզանի մոտերքում։ Ամեն կողմից լուրեր էին հասնում մեզ, որ քրդերը, զրգռված, նախահարձակ պիտի լինեն այստեղի ազգաբնակչության և կազմակերպված պաշտպանական խմբերի վրա։ Բայց կռվից խուսափելու համար, տխուր անցյալից դաս քաղած սասունցին, որոշեց պաշտպանվել լեռներում և հարմար դիրքեր գրավեց Գեբինի և Անդոկի վրա։ Այստեղ փոխադրվեցին ռազմամթերքի և սննդի պաշարները։ Զենք ունեցողները բաժանվեցին խմբերի և սկսեցին ամրություններ ստեղծել կռվի համար։ Ժողովուրդը իր ունեցվածքով տեղավորվեց սարերի ստորոտներին։ Թե՛ զինվածները, թե՛ անզենները կազմ ու պատրաստ էին։ Այլևս ծածուկ բան չկար... Երկու բանակներ, որ իրարից միայն երկու ժամվա տարածությամբ էին բաժանված, առավոտից մինչև երեկո իրար էին դիտում»։ Տեսնելով հայերի կռվելու վճռականությունը, թուրքերը խուսափեցին հարձակումից։ Հուլիսի վերջին Սասունի և Մուշի միջև կապը կտրվեց, իշխանությունները նաև փորձ արեցին ժողովրդին հայդուկներից մեկուսացնելու, սակայն այդ նրանց չհաջողվեց։

Բացի այդ, «Բաղեշի կառավարության, Մուշի մութեսարիֆության կողմից պատվիրակներ, զորապետներ ցրվեցին քուրդ աշիրեթների մեջ՝ նրանց իրար հետ հաշտեցնելու, կրքեր բորբոքելու և Սասունի վրա հարձակման տանելու համար»[61]։ «Հուլիսին քրդերը և մի քանի ծպտյալ ոստիկաններ երկու անգամ ուխտի պատրվակով եկան Անդոկ՝ հայերի գրաված գագաթի հանդիպակաց գագաթը։ Եկան, հրացաններ պարպեցին, բայց

տեսնելով մերոնց արհամարհական վերաբերմունքը, վախեցան առաջանալ և ետ դարձան...»։ Օգոստոսին Թուրքերը եռանդուն քայլերի չդիմեցին։ «Հրամանատարը ուզեց զորքերով դալ ու այցելել ալյանքցիների կառուցած նոր մատուռը, բայց նրանք չընդունեցին։ Ուրիշ անգամ բագրանցի քրդերը ջրի պատճառով վեճ ունեցան սեմալցիների հետ, վերջիններս հրացանագությամբ ետ մղեցին նրանց, և քրդերը չհամարձակվեցին առաջ դալ։ Զանազան տեղերից լուրեր եկան, թե կառավարությունը պատրաստվում է գրավել Շենիկը, Սեմալը, Գելին և Քեշաբը։ Թշնամին մտածում էր առանց կռվի հաղթել։ Անդոկում ու Գեբինում ցուրտը սկսվել էր։ Ջրի և վառելիքի պակաս կար։ Ժողովուրդը նեղվում էր։ Եթե գյուղերը գրավեին, ապա հնարավոր չէր դրսում երկարատև կռիվ մղել ու դիմանալ։ Խորհուրդ գումարվեց և որոշվեց լցվել գյուղերը։ Այդ որոշումը անմիջապես գործադրվեց։ Նույն օրերին մեր տղաները ձերբակալեցին երկու ոստիկանների, մեկը՝ քուրդ, մյուսը՝ հայ։ Քուրդը ազատ արձակվեց և այդ հանգամանքը թշնամու վրա թողեց մեծ տպավորություն, ավելի ևս բարձրացրեց հայերի վարկը»։

Սեպտեմբերի կեսին բանակն էլ մեկնեց, և քիչ անց կառավարությունը Տափքի իր կայմակամին, հազարապետին և ոստիկաններին ետ կանչեց Մուշ։

«Մշո թուրքերը գրգռվեցին, որ կառավարությունը Սասունը թողեց ֆիդայիներին։ Կուսակալը, որ նոր էր մեկնել, նորից վերադարձավ Մուշ... Այսօր հայերը Սասունի բացարձակ տերն են, որ գրեթե անկախ վիճակի մեջ է։ Կառավարությունը ոչ տուրք է հավաքում, ոչ էլ տեղի գործերին միջամտում։ Թե մոտ և թե հեռու մայրերում, ավելի քան երբեք, արձագանք է գտել ֆիդայու հռչակը... Կառավարությունն էլ անգործ չի նստել, լավ գիտե, թե ինչ է կատարվում։ Ինչպես երևում է, չի ուզում ներկայումս աղմուկ բարձրացնել, բայց իր պատրաստությունները տեսնում է։ Վերջերս վեց թնդանոթ բերեց Մուշ։ Ասում են, թե էլի պիտի բերի և Մուշը ռազմական առումով պետք է հզորանա... Գարնանը ընդհարումը անխուսափելի է թվում»։

«... Թուրքական ռազմագիտությունը գործի է դնում իր բոլոր հնարքները՝ մեկընդմիշտ ընկճելու ըմբոստ լեռնականներին և ջնջելու ֆիդայիների հետքը...»[62]։

Այդ հնարքներից մեկը հին էր ու ծանոթ. հարձակումը սկսելու էին քրդերը։ Նպատակը հասկանալի էր՝ թող քրդերը սպանեն հայերին, իսկ հայերը՝ քրդերին։ Եվ եթե քրդերին չհաջողվի հայերին ծնկի բերել, այն ժամանակ մարտի մեջ կմտնի կանոնավոր բանակը և կավարտի հայերի բնաջնջումը։

Օգոստոսի 7-ին Սասունից հայտնում են. «Մուշի կառավարությունը ուղարկեց դեպի Սասուն... հինգ վաշտ զորք։ Հրահանգ է տրված քուրդ աշիրեթություններին ամառվա ամիսներին Սասուն անցնելիս գալ առանց ընտանիքների։ Հաղորդակցությունը Մուշի և Սասունի միջև ընդհատված է։ Հուզմունքը մեծ է»[63]։ «Արդեն գիտենք,— գրում են Բասենից,— որ մյուս աշիրեթներին հրամայված է գարնանը հավաքվել Մուշում։ Կոտորածի վտանգը ընդհանուր է, և ժողովուրդը զուրկ է դիմադրության միջոցներից... Անզորության և անօգնական զայրույթով լի՝ շվարած ենք մնացել տարածված լուրերի և կառավարության հրահանգների դիմաց...»։

Հուլիսի 27-ին գրում են Բասենից. «Կարինի և Մուշի միջև առևտրական հարաբերությունները կառավարության հրամանով կտրվել են։ Կարինում բերդը և քաղաքը պահպանելու համար մնացել են միայն թնդանոթաձիգները։ Տեղափոխած զորքի մի մասը թողել են Խնուսի բերդում, իսկ մնացածը (870 հոգի) ուղարկվել է Մուշ։

Կառավարությունը քրդերին գրգռելու համար լուր է տարածել, թե ֆիդայիները մտադիր են հատկապես քրդերին կոտորել։ Սրանք էլ մեծ թվով պատրաստվում են նախահարձակ լինել Սասունի վրա։ Կառավարությունը իր զորքերը հարձակման էր տանելու քրդերից հետո, ինչպես այդ արվեց Սասունի կոտորածի ժամանակ։ Քրդերի առաջին հարձակումը եղավ Շենիկի վրա, բայց հայերը քշեցին նրանց, իսկ զորքերը, փոխանակ օգնության հասնելու, հավաքեցին վրանները և իջան Մուշ՝ իբր թե քաղաքը պաշտպանելու նպատակով։ Երևի բուն պատճառն այն էր, որ Վանից Մուշ էին հասել անգլիական և ռուսական հյուպատոսներն ու ֆրանսիական փոխհյուպատոսը, որոնց աչքի առջև ներկա հանգամանքներում կառավարությունը հայերին կոտորելը նպատակահարմար չի համարում»[64]։

Այդ նույն ժամանակ Մուշից գրում են. «... Թուրք կառավարությունը այժմ ամեն կարելի և անկարելի միջոց ձեռք է առել քանդելու, բնաջնջելու Սասնո և Մշո շրջակա լեռնաբնակ հայ գյուղերը և դրանք լցնելու մոլեկրոն թուրքով, բարբարոս և վայրենի քրդով ու արյունարբու գող-ավազակ չերքեզներով։

Թուրք կառավարության այս սև նպատակի համար հատուկ հրահանգով եկել Մուշ և Մշո դաշտի գյուղերն են լցվել երեք հազարից ավելի գաղթական չերքեզներ, որոնք օրավուր սպասում են Սասնո կոտորածին, որ գնան ու գրավեն Սասնո և Սիմ լեռնաշղթայի գեղեցիկ, լեռնաբնակ հայ գյուղերը... Մյուս կողմից, այս օրերս այստեղ են եկել Բուլանրխի, Մանազկերտի, Խնուսի և Վարդոյի համիդիե գնդերի պետերը, որոնց գաղտնի հրահանգված է միշտ պատրաստ մնալ, որ ազդանշան ստանալուն պես հարձակվեն Սասունի վրա... Տեղական կառավարությունը լուր է տարածել, թե զորքը գնում է Մերդին, Մանազկերտ, Տիգրանակերտ և այլն, մինչդեռ գիշերային շրջանցումով պաշարման մեջ է առել Սասունը։ Նույն թուրք կառավարության բարձրագույն հրամանով լուր է տրվել Սասնո և Ներքին Դաշտի քուրդ աշիրեթներին, որ գնան և հաստատվեն Սասնո և Մշո լեռներում։ Մինչդեռ Սասնո 94-ի կոտորածից հետո եվրոպական կառավարությունների պահանջով թուրք կառավարությունը արգելել էր այդ քուրդ աշիրեթություններին գալու և հաստատվելու սասունցիների կալվածքներում, որովհետև այդ թափառաշրջիկ քրդերը ամբանը հաստատվելով Սասնո լեռների վրա, բացի այն, որ իրենց բազմաթիվ հոտերով ու խաշինքներով բոլորովին փչացնում ու քարուքանդ էին անում սասունցիների դաշտերը, մարգագետինները և անտառները, նաև ձեռնպահ չէին մնում գողություններից, մարդասպանություններից և ավազակություններից։

Ահա թե թուրք կառավարությունը ինչպես էր առիթ ստեղծում հայերին ու քրդերին կռվեցնելու, որպեսզի ինքն ահագին բանակով վրա հասներ և կոտորեր հայերին, ասելով, թե «դուք խռովարար եք, ապստամբ եք տերության դեմ, տուրք չեք տալիս, պաշտոնյաներին հավուր պատշաճի չեք հնազանդվում, մանավանդ, որ դուք անհաշտարիմ եք, որ ձեր մեջ... ջանֆիդայիներ եք պահում»[65]։

Կայսրության ամենատարբեր շրջաններից շարունակում էին Տարոն գալ նորանոր ռազմական ուժեր ու աշիրեթություններ։ Հունիսի 15-ին Մուշից հայտնեցին. «Մուշը չորս կողմից բռնված է զորքերով և թնդանոթներով։ Ժողովուրդը ահ ու սարսափի մեջ է, ոչ ոք չի կարողանում քաղաքից դուրս գալ, և երեկոյան ժամը 6-ից ամեն մարդ փակվում է իր տանը։ Լուրեր են պտտվում, որ մի քանի գյուղեր Դաշտում քանդվել են, ազգաբնակ-

Մշեցի Արամ (պզտիկ Արամ. Արամ Հակոբյան)

Ամերիկացի

Իսայի Կոչյուզ

Համբարձում Պալանյան

Բալասանի Կարապետ — Աղբյուր Սերոբի հշամարտի զինակիցը

Նիկոլ Դուման

Գայլ Վանան

Հայկուհի

Գայլ

Սմբատ

Սոսվ. Մ. Ժամհարյան (զոհվեց 1905 թ. Շուշիում)

Սեբաստացի Սաքո. Սարգիս Մովսիսյան



Սոկուխ գյուղի քարտեզը և Գևորգի վերջին կռիվը



[illegible]

Պարոնի Գ. Մարտիրոսի

[illegible]

Հարգելի Գ. Մարտիրոսի

[illegible]

[illegible]

[illegible]

1916 [illegible]

[illegible]

Պարոնի Գ. Մարտիրոսի

[illegible]

[illegible]



չությունը լեռներում է ապաստանել, իսկ բանտերում տեղ չկա, որ հայերով լցնեն։ Սասունի ս. Հովհաննես և Առաքելոց վանքերը Բուրքական զորքերը գրավել են, ամեն մեկում տեղավորված է 60—70 զինվոր, «Մշո գավառում գնալով շատանում են թուրք զորքերը, որ գալիս են բոլոր կողմերից։ Քուրդ ցեղապետներին հատուկ պաշտոնական գրություններ են ուղարկվել՝ նրանց ղենքի հրավիրելու։ Խիստ միջոցներ են ձեռնարկվում նաև Սասունում։ Այնտեղ զինվորական ջոկատներ ուղարկվեցին կիրճերը պահպանելու և լեռներ գնացողների ճամփան կտրելու համար։

Հոգեգալստյան կիրակի օրը, հունիսի 8-ին, Մուշ քաղաքում խլրտում ընկավ, իբր թե հեղափոխականները եկել են, լեռը բարձրացել և հայկական դրոշակ պարզել, իբրև թե նոր եկողներին Անդրանիկն ու ընկերները դիմավորել են հրացանների թնդյուններով և այլն...»[66]: Հունիսի 22-ին Մուշից գրեցին. «Տեղական կառավարության շարժումը այս անգամ խիստ կասկածելի է երևում։ Գավառ է ուղարկված անհամար զորք, քրդերին թիվ չկա։ Քաղաքի չորս կողմը թնդանոթներ են շարված, թուրք ազգաբնակչությունը մեծ հուզումի մեջ է. մի մասը ուզում է օր առաջ սկսել կոտորածը, մյուսները խորհում են, որ դա տերության գործն է և իրենց միջամտելու հարկը չկա։

Բոլոր հայերը սոսկալի երկյուղի մեջ են»[67]:

Թուրք-պարսկական սահմանից 1902 թվի ապրիլի 15-ին գրում են. «Երկրի ներսից շարունակ հուսահատ ճիչեր են լսվում, կոտորածի սարսափը նորից տարածվել է ամենի վրա։ Մոտ օրերս Բիթլիսում էլի իրարանցում է եղել. տեղացի քրիստոնյաները սարսափահար թողել են առևտրի հրապարակը ու փախել... Ամբողջ քաղաքը պաշարված է, ելք ու մուտքը բոլորովին դադարեցված։ Նույն սարսափն է տիրում Վանի մեջ։ Իսլամ տարրը օրեցօր ավելի թթու երես է ցույց տալիս»[68]:

Այդ ընթացքում Բասենում ընդհարում տեղի ունեցավ։ 150 հոգուց բաղկացած հայդուկային խումբը կռվի մեջ մտավ կանոնավոր բանակի ու հազարավոր խուժանի հետ։ Վերջիններս կռվի դաշտում թողեցին շուրջ 500 դիակ ու փախան։ Այդ դեպքերից հետո զենքի կանչվեցին համիդիները. ցիրուցան կանոնավոր զորքերը կենտրոնացան միջին կետերում, համիդիները ուղարկվեցին ավելի հեռու՝ սահմանի մոտերքը։ Նրանք շրջում են միայն օրը ցերեկով, 20—30 ձիավորով, անցորդնե-

ին բռնում, հարցաքննում են... Զորքերը վախեցած են. ամեն թփի տակ հայդուկ են փնտրում, ամեն խշշոցին կրակ բացում։ Նրանք այնքան էին ահաբեկված, որ Կարինի Կարմիր վանքի շրջանում կրակ բացեցին զինվորական այլ ջոկատների վրա և սպանեցին 30 հոգի»[69]:

Կարինում անգլիական հյուպատոսի փոխանորդ Հեփսընի 1903 թվականի հոկտեմբերի 13-ի տեղեկագրում նշվում է, որ Բասենի կռվին մասնակցող «հեղափոխականների հիմնական մասը Սասուն է փախել կամ լեռներում է թաքնված...»[70]: Իշխանություններն ամենուրեք լուր տարածեցին, թե Բաղեշի կուսակալությունում 1400 հայդուկ կա։ Օսմանյան պաշտոնական շրջանների Եվրոպա ուղարկած հետևյալ հաղորդագրությունները տպագրվեցին շատ պարբերականներում։ «Թուրքաց կառավարությունն անհանգիստ է նոր հայ հեղափոխական խմբերի երևան գալով, որոնք Ռուսաստանից անցել են Բայազետի և Սասունի կողմերը... Հայերը փոքրիկ խմբերով անցել են Բայազետի շրջանը և այդտեղից ճանապարհ բռնել դեպի Սասունի լեռները, ուր նրանք ապահով են հալածանքից»[71]:

Կամ «Սասունում երևացել է Անդրանիկը՝ իր բազմաթիվ մարդկանցով։ Տեղի կայմակամը փախել է իր ամբողջ պահակախմբով։ 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան Թեֆիկ փաշայի հետ միասին մեկնել է դեպի Մուշ»[72]:

Հեփսընը 1903 թվականի սեպտեմբերի 30-ին գրում է.՝ «Սասունում ծանրակշիռ դեպքերի վախը մի քանի շաբաթ բավական մեծ հուզում և մտահոգություն պատճառեց։ Սասունի վիճակը որոշ ժամանակ շատ տագնապալից էր, և այդ կողմերում որևէ ծանրակշիռ խռովության կասկածը ծնունդ էր տալիս ավելի ծավալուն անկարգությունների հնարավորության երկյուղին։ Թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները հիշում են, որ 1895 թ. կոտորածների անմիջական սկիզբը եղել էին 1894-ի Սասունի դեպքերը։ Սասունի հեղափոխականների դեմ ռազմական ուժ գործադրվելու է, բայց լեռներից վաչկատուն ցեղերի մեկնելուց հետո միայն։ Այնպես որ, եթե նույնիսկ այս հրամանները գործադրվեն, պետք է հուսալ, որ տեղի չպիտի ունենան ծանր զեղծումներ։ Զանազան հայ խմբեր ռուսական սահմանից անցել են։ Նրանցից ոմանց հաջողվել է Սասուն հասնել, իսկ մյուսները հայտնաբերվել և ետ են մղվել։ Այդ առաջին տեղեկագրից իմացվում է, որ արդեն 1903 թ. օգոստոս-սեպտեմ-

բեր ամիսներին և նույնիսկ դրանից առաջ եվրոպական դիվանագիտությունը իրազեկ էր Սասունի խմորումներին, որոնք կարող էին ծանր դեպքեր ծնել»[73]:

1904 թ. հունվարի 9-ին Էրզրումի ռուսական հյուպատոսը հաղորդել է, որ նահանգում կուտակերպված ջանբեզարների խմբերից մի քանիսը ուղարկվել են Սասունի մոտակայքում գտնվող քրդական ցեղապետ Կուլխան բեկի տրամադրության տակ։ «Բաղեշում կառավարությունը հեծյալ կամավոր խումբ կազմեց թուրք ամենահետին տարրերից բաղկացած, որի խնդիրն էր շրջել նահանգում և խափանել ֆիդայիների մուտքը Սասուն»[74]: Իշխանությունները հայդուկներին պատրվակ էին դարձնում հայ աղգաբնակչությանը հարստահարելու համար։ Մեծ թվով մարդկանց հայդուկների հետ կապ ունենալու և նրանց օգնելու մեղադրանքով ձերբակալում էին։ Կաշառք շորթելուց հետո մի քանիսին հետագայում արձակում էին։

***

1903 թ. հոկտեմբերին սուլթանական պալատը կուսակալներին ուղարկեց հետևյալ երկու հեռագրերը։

Առաջին հեռագիր՝ թվագրված հոկտեմբերի 3-ին.

«Բուլղար ավազակների ձեռքում եղած ռումբերը հայերի կողմից են պատրաստվել։ Այդ մասին տեղեկություն ստացվել է։ Ուստի ձեր խնդիրն է աչալուրջ հետևել սահմաններն անցնող հայերի շարժումներին։ Կասկածելիներին անմիջապես ձերբակալել։ Այս ծառայության մեջ աչքի ընկնողներին սպասվում է կայսերական բարձր վարձատրություն»[75]:

Այս հեռագիրը երկու խնդիր ուներ՝ ահաբեկել տեղական իշխանություններին, նրանց ակտիվ գործողությունների մղել և նաև խաբել հասարակական կարծիքը, թե Սասունում կառավարության կողմից իրականացվելիք գործողությունները ոչ թե կոտորածների, այլ «ռումբերի հետ» այդ լեռնաշխարհը մտած հեղափոխականների գործունեությունը մեկուսացնելու ու նրանց պատժելու նպատակ ունեին։

Մարտի 5-ին Բիթլիսի անգլիական փոխհյուպատոսը Կ. Պոլիս՝ դեսպանին հաղորդեց. «Ես երկու մահմեդական աղբյուրներից տեղեկացա, որ հայերի դեմ հարձակման ծրագիր է հղացված, հարձակումը պետք է տեղի ունենա տոներից (բայրամից) հետո...»։ Այնուհետև նա գրում է հետևյալ ուշագրավ տողերը.

«Ես կարծում եմ, որ ոչ մի խռովություն չի ծագի այստեղ, երբ քրդական պարագլուխները և տեղական իշխանություններն իմանան, որ կենտրոնական կառավարությունը իրոք որոշել է խաղաղություն հաստատել»։ Ապրիլի 8-ին Օ՝ Քոնորը հեռագրում է Լոնդոն. «Տեղեկանում եմ, որ հայ եպիսկոպոսների միջնորդությունը մերժվել է հեղափոխականների կողմից այն պատճառաբանությամբ, որ նման խոստումների իրագործման համար սուլթանի կողմից տրված երաշխիքները բավարար չեն, բայց եթե այդ խոստումները տրվեն եվրոպական հյուպատոսների միջոցով, նրանք պատրաստակամություն են հայտնում զենքը ցած դնել»[47]։

Վանից գրում են. «Բացի փետրվարին գնացած գնդից, մարտի 6-ին, 8-ին և 13-ին գնացին երկուական գունդ զորք (գունդը 450—480 հոգի է)։ Այս օրերս (այսինքն մարտի 17-ից հետո) դարձյալ գնալու է 4—5 գունդ։ Մի քանի գնդեր գնում են Սասունի հարավային շրջաններ, իսկ մյուսները՝ ուղիղ դեպի Մշո դաշտ։ Մի քանի աշիրեթների համիդիեականներին ևս հրամայված է սլանալ այն կողմ... Ժողովրդի մեջ, ինչպես և պաշտոնյաներն ու տաճիկները, այստեղ խոսում են, որ ապրիլի 15-ին պիտի սկսվի հարձակում Սասունի վրա։ Թեև հայերն ամեն կերպ ջանում են առիթ չտալ ընդհարումների, այսուհանդերձ կառավարությունը ավելի շատ զորքեր է կենտրոնացնում Սասունում։ Մարտի 20-ին սկսվելու է հարձակումը։ Առաջինը շարժվում է հեծելազորը, որը սկսել է նեղել Տավրոսի տակ ընկած հայ գյուղերին...

Այս գյուղերը մասամբ թալանվում են։ Գյուղերը ոչ մատնություն են անում, ոչ էլ որևէ դիմադրություն են ցույց տալիս. գյուղացիներից շատերը բանտ են առաջնորդվում, շարշարանքների են ենթարկվում և նահատակվում»[77]։

Այսպիսով, հունվար-փետրվար ամիսների ընթացքում իշխանություններին հաջողվեց այլ վայրերից լրացուցիչ ուժեր տեղափոխել Սասուն ու նրա մերձակա շրջանները։ Աշիրեթները, կենտրոնանալով Խուլբում և Խիանքում, հարձակումներ էին գործում Ահրոնքի, Հեղինի, Մազրեյի և Իշխանձորի վրա, իսկ Մուշում ու նրա դաշտում կենտրոնացած զորքն ու աշիրեթությունները Սասունի վրա հարձակվում էին հյուսիսից։ Դա գործնականում թուրքական հարձակումների սկիզբն էր և ուղեկցվում էր կոտորածներով։ Ռազմական գործողություններին զուգընթաց թուրքական զորքերն ու ոստիկանությունը ամենուրեք խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ անլուր բռնություններ էին գործադրում։ Գյուղացին թալանվում էր, զրկվում ապրելու միջոցներից։

ՕՂԱԿԸ ՆԵՂԱՆՈՒՄ Է

Սուլթանը նորից խորամանկության դիմեց։ Նա մի նոր փորձ արեց՝ առանց կռվի հայդուկներին, բոլոր սասունցիներին զինաթափ անելու, որպեսզի զանգվածային կոտորածների քաղաքականությունը լուրջ դիմադրության չհանդիպեր։

Այդ կապակցությամբ «Դենտսդ ցայտունգը» վկայում է.

«Հայոց պատրիարքարանը միջամտել է Սասունում ապրստամբապետ Անդրանիկի հրամանատարության տակ հավաքված 400 հայերի օգտին։ Այդ պատճառով Սասուն ուղարկված ութ զորագնդերը կանգ են առել Մուշում և դրվել են Մուշի հրամանատար Սալեհ փաշայի հրամանատարության ներքո։ Հայոց պատրիարքարանին հանձնարարված է բանակցել Սասունում հավաքված հայերի հետ, որ անձնատուր լինեն»[78]։

Պատրիարք Օրմանյանը սկզբում հրաժարվում է կատարել այդ հանձնարարությունը, պատճառաբանելով, թե «ինքը այդ տեսակի ազդեցություն չունի, քանի որ կառավարությունը տարիներ ի վեր ամեն բան գործ է դրել այդ ազդեցությունը ոչնչացնելու համար»։

Սակայն Բ. Դուրը պնդեց, որ Օրմանյանը միջամտի։ «Այդ նպատակով,— շարունակում է թերթը,— Եյոզից ստանալով որոշ հավաստիացումներ, նա իբրև պատվիրակ ուղարկել է Մուշի եպիսկոպոսին»[79]։ Մեզ հայտնի չեն այս առաքելության մանրամասները, բայց մի բան պարզ է. Անդրանիկը, նկատի ունենալով, որ սուլթանը ոչ թե խաղաղություն է ուզում, այլ ձգտում է կազմալուծել հայկական ուժերը, խաբել հասարակական կարծիքը, մերժում է եպիսկոպոսի միջամտությունը։ Սուլթանն Անդրանիկի այս քայլը աշխարհին ներկայացրեց որպես ազատության դրոշ պարզելու մտադրության վկայություն։

Իսկ «Կորեսպոնդենց բյուրոն» շարունակում էր հակահայկական ընթացքը. «Թուրքահայոց պատրիարք Օրմանյանը հրահանգ ստացավ Եյոզից կրկին անգամ Մուշի եպիսկոպոսի մի-

ջոցով համոզել Անդրանիկին՝ դադարեցնելու իր չարագործությունները,— գրում էր նա կրկնելով թուրքական հերյուրանքները,— Բիթլիսի վալիի տված տեղեկությունների համաձայն ապստամբաբետ Անդրանիկը հրդեհել է կենճի սանջակի երեք քրդական փոքրիկ գյուղեր, որոնց բնակիչները հրաժարվել են մնալ նրան։ Բացի այդ, խմբերից մեկը հարձակվել է Բիթլիսից հինգ մղոն հեռավորության վրա գտնվող մի գյուղի վրա և սպանել 30 մահմեդական»[80],

Մենք այստեղ գործ ունենք սուլթան Աբդուլ Համիդի կողմից արտասահմանյան մամուլին ապակողմնորոշելու արդեն ավանդական դարձած փաստերի հետ։ Հատկանշական է, որ կատարված մեջբերումները վերը նշված թերթերում տպագրված են որպես լուրեր՝ ստացված Կ. Պոլսից։

Իսկ ահա թե ինչ են գրում Եվրոպայի համեմատաբար ոչ կողմնակալ լրագրերը. «Հայերի կողմից ուղղակի գրգռման բացակայության պատճառով, թուրքերը լաճկանցի, բատկանցի քրդերին հրահրեցին հարձակվելու Գելիգերման գյուղի վրա, որպեսզի դիմադրություն առաջացնեն և հայտարարեն, որ հայերը ապստամբել են։ Այս ամենը նրանց պետք է, որպեսզի պատրվակ ունենան իրենց ջարդի ծրագիրը իրագործելու ու ամբողջովին ավերելու Սասունը, որը հայկական ազատագրական շարժումների օրրանն էր»[81],

Իրողությունն այն էր, որ սուլթանը գործողության մեջ էր դրել «Սասունն առանց սասունցիների» իր ծրագիրը։

Տալավեի (Դալավակաժեի) և Գելիգերմանի բախումների մասնակիցներից մեկը մարտի 31-ին գրում է. «Կռիվը սկսվեց։ Թեև շատ կփափագեինք, որ երբեք քրդերի հետ գործ չունենանք և նրանց բարեկամությունը շահելու համար ջանք չէինք խնայում, բայց ինչ օգուտ, որ կառավարությունն էլ մյուս կողմից ամեն ճիգ կթափեր այդ կույր ամբոխը մեր դեմ լարելու և գրգռելու։ Ու վերջապես նրան այդ հաջողվեց»[82],

***

Սուլթանը 1904 թվականը վճռական տարի էր համարում մեկընդմիշտ ձերբազատվելու հայ ֆիդայու վտանգից... Ահա թե ինչու պալատը նպատակահարմար էր համարում մինչև մարտական գործողություններ սկսելը ոչնչացնել հայդուկներին,

զինաթափել սասունցիներին։ Այդ է հոկտեմբերի 7-ին կուսակալներին ուղարկված հեռագրի բովանդակությունը. «Խռովարար հայերը, օտարներից ստացած օգնությամբ և հանգանակությամբ զենքեր, ռումբ (դինամիտ), դեղորայք հավաքելով, կայսերական երկրների մեջ փոխադրելով և տարբեր տեղերում պահելով, այս ձևով գարնան սկզբից խռովահույզ գործողությունների են դիմելու։ Ըստ ստացված տեղեկությունների՝ նորից, ինչպես նախկինում, Սասունից է սկսվելու խռովությունը։ Նրանց մտադրությունը պարզված է։ Ըստ այդմ էլ տեղական կառավարության անելիքն է՝ խստորեն և աչալրջորեն վնասազերծել հայերի խռովարար գործողությունները, իսկ չարագործներին ձերբակալել...»[83]:

Սուլթանը, որոշելով մինչև գարնան բացվելը սասունցիների մարտունակությունը ոչնչացնել, անընդհատ ռազմական ուժեր էր կուտակում լեռնաշխարհի հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար։

Ահա թե ինչու Սասունում ու նրան հարող շրջաններում ռազմական ուժերի կուտակումը հատկապես մեծ թափ ստացավ 1903 թ. վերջերին։

Գրում են Վանից. «Մի ամիս առաջ Էրզրումից, Երզնկայից, Բաղդադից և այստեղից գունդ-գունդ զորքեր էին գնում Սասունի պաշարումը խոսացնելու... Քաղաքում զորք չի մնացել (հնգվով 500—800, մինչդեռ առաջ՝ 8000—8500), փոքր մասը գնացել է դեպի Բայազետ, մեծագույն մասը՝ Սասուն»։

«Նորից մեկ թափուր զորք ճանապարհ ընկավ դեպի Մուշ։ Այս ամսի ընդամենը կարիճից գնացել են երեք թափուր զորք, մի թափուր զորք էլ երկու օր է, թվ բարգել է եղել Սեբաստում և չի կարողանում առաջ գնալ։ Հրաման է ստացված, որ դարձյալ 1000 զինվոր ուղարկվի Սասուն»։

Վասպուրականի իշխանությունները Համիդիեի գաղտնի զորահավաք կազմակերպեցին և 500 հոգիանոց մի խումբ Տարոն ուղարկեցին։

1904 թ. հունվարի սկզբներին արդեն Բաղեշի կուսակալության մեջ դրությունն այնքան երկյուղալի էր, որ Կարինում Անգլիայի փոխհյուպատոս Շիֆլեյը հունվարի 19-ին «ծանուցանելով Բաղեշի կուսակալ Հուսեին բեյի մահը, անհրաժեշտ է համարում նրա հաջորդին անմիջապես նշանակել։ Չնայած ձմեռ է,

բայց նա պետք է անմիջապես իր պաշտոնական պարտականությունների կատարմանն անցնի...»[84]:

Թուրքական իշխանությունները 1903 թ. աշնանը հիմնականում ավարտեցին Սասունի վրա հարձակման նախապատրաստական աշխատանքները։

Կ. Պոլսի պատրիարքին Վարդան վարդապետի ուղարկած զեկուցագրերից մեկում նշվում է, որ Սասունի վրա հարձակվելու նպատակով Տարոնում թուրքական ուժերի կենտրոնացման վճռական փուլը 1903 թ. աշունն էր, իսկ 1904 թ. հունվարից սկսած «հետզհետե 900 հոգիանոց զինված վաշտեր դեպի Մուշ էին մեկնում Սեբաստիայից, Խարբերդից, Դիարբեքիրից, Տրապիզոնից, Երզնկայից, Էրզրումից, Վանից և այլն...[85]։

Արդեն աշնանից հայտարարված էր, թե առաջիկա գարնանը Սասունը պիտի հարձակման ենթարկվի։ Մեկ-երկու տարվա սասունցիների խաղաղ կյանքը շատ է ու քիչ չէ»։

Անդրանիկի հուշերում այս իրադարձությունների մասին կարդում ենք. «Արդեն 1903-ից ի վեր պարզ էր տաճիկ կենտրոնական կառավարության մտադրությունը։ Բոլոր շարժումները, բոլոր հրամանները և արված քայլերը կցուցանեին, որ մեր Սասնո կուժերուն (գազաթների) վրա ապաստանած հայ հեղափոխականներուն համար կմոտենային վճռական և ճակատագրական վայրկյանները»[86]:

1904 թ. հունվարի 16-ին Բաղեշում Անգլիայի փոխհյուպատոս Մր. Հիթքոթը գրում է. «Վերջապես որոշում է տրված գարնանը հարձակվել Սասունի հեղափոխականների վրա և որ այս զինվորական շարժումը պիտի ղեկավարի անձամբ 4-րդ զորաբանակի մուշիր Զեքի փաշան»[87]։ Տասն օր անց, հունվարի 26-ին, Շիփլեյը Կ. Պոլսի իր դեսպանին հայտնում է. «Պարտավոր եմ ձեզ տեղեկացնել, որ խիստ արժանահավատ մի աղբյուր հաստատում է Մր. Հիթքոթի հայտնած տեղեկության ճշտությունը այն մասին, որ Սասունի ֆիդայիների վրա հարձակում սպասվում է ձյունը հալվելուց հետո, մոտավորապես մայիսի կեսերին»։

Օ'Քոնորը Շիփլեյի զեկուցագիրը ուղարկում է արտաքին գործերի մինիստր լորդ Լենզդաուին կից նամակով, ուր պատմում է Սասնո գավառում համախմբված հայ հեղափոխականների վրա հարձակման հավանականության վերաբերյալ մեծ վեզիրի հետ իր զրույցի մասին։ «Մի քանի օր առաջ,— գրում է

նա,— այս խնդրի մասին խոսեցի Մեծ Եպարքոսի հետ, պարզելով ռուսական սահմանի և նրանից այն կողմ հայերի շրջանում տիրող անհանգիստ վիճակը, որի մասին վերջերս բավական տեղեկություններ էին հասել ինձ։ Իր ուշադրությունը հրավիրեցի այն վտանգի վրա, որ կարող է առաջ գալ անխոհեմ գործողությունից։ Ազդու կերպով նախազգուշացրեցի Ն. Բարձրությանը չդիմել ռազմական միջոցների, բացի ծայրահեղ ստիպողական պարագաներից, քանի որ այդ միջոցների գործադրության հավանական հետևանքը պիտի լիներ աշիրեթների խժդժություններ համար դուռ բանալը։ Ֆերիդ փաշան (ասաց), ինքն էլ իմ կարծիքին է Սասունի վրա հարձակման հարցում և ինձ վստահեցրեց, որ այդպիսի հարձակում տեղի չի ունենալու, բացառությամբ այն հանգամանքից, երբ հեղափոխականների վարքը անխուսափելի կդարձնի։ Ինձ խոստացավ, որ եթե ծայրահեղ միջոցների դիմելու որոշում ստացվի, ամեն զգուշություն ձեռք պիտի առնվի»[88]:

Մեծ վեզիրը ստում էր։ Թուրքական կառավարությունը որոշել էր Սասունը կոտորածի ենթարկել՝ անկախ հայդուկների գործողություններից։ Դա այնքան ակնհայտ էր, որ Կ. Պոլսից հայտնում էին. «Մոտալուտ կոտորածի սարսափը տարածվում է ամենուրեք։ Ամեն կողմից շշնջում են՝ գարնանը կոտորած կա»[89]:

Թուրքական կառավարությունը 20-ական թվականներին զինեց քրդերին ու նրանց միջոցով կոտորեց հայերին, իսկ ապա վախենում էր, թե այդ զենքը կարող է ուղղվել իր դեմ։ Ուստի Համիդը սկսեց միջոցներ փնտրել քրդերին իր ձեռքում պահելու համար։ Նա նախ ցեղապետների որդիներին զինվորական ծառայության կամ կրթություն ստանալու պատրվակով հավաքեց Կ. Պոլիս, ուր պահվում էին որպես պատանդ։ Բացի այդ, կառավարության գործակալները շրջում էին քրդերի բնակության վայրերով ու նրանց մեջ բորբոքում ցեղային թշնամություն, իրար դեմ հանում աշիրեթություններին։

Քրդական ցեղերի միջև թշնամություն ու կռիվներ հրահրելը սուլթանի քաղաքականության կարևոր մասն էր։ Նախ, այդ կռիվները քրդերին հնարավորություն չէին տալիս քաղաքական այլ խնդիրների մասին մտածել։ Բացի այդ, նկատի ունենալով միջցեղային կռիվների իրական վտանգը, քուրդ աշիրեթությունները ստիպված էին լինում հլու հնազանդ հպատակվել կառա-

վարությանը, որպեսզի միջցեղային բախումների ժամանակ կառավարությունն իրենց հովանավորեր։

Սակայն սուլթանի խարդավանքները մասամբ իր դեմ շուռ եկան։ Պոլիս պատանդ տարված քուրդ պատանիները, ստանալով կանոնավոր կրթություն և շփվելով Պոլսի ազատամիտ տարրերի հետ, վարակվեցին մի բանով, որի դեմ այնքան կատաղի կռվում էր Թուրքական կառավարությունը։ Դա ազգային ձգտումներն էին։ Այդ երիտասարդները, մի կողմից, մոտիկից ծանոթանալով համիդյան կառավարության այն մթին նպատակներին, որոնք իրագործելու համար այնքան տխուր ու անպատվաբեր դեր պիտի խաղային իրենց ցեղակիցները, մյուս կողմից, մշտապես հարաբերություններ ունենալով Կ. Պոլսի հեղափոխական մարմինների հետ, հղացան մի միտք, որն առաջներում անիրագործելի երազ էր թվում նրանց։ «Ազատ Քրդստանի» գաղափարը մի խումբ քրդերի քաղաքական դավանանքը դարձավ։ Ցանկանալով իրենց գործունեության վայրը Բոսֆորի ափերից տեղափոխել հայրենի լեռները, նրանք սկսեցին մտածել հայրենիք վերադառնալու մասին, սակայն կառավարության ձեռնարկած արգելքների պատճառով շատ քչերին, այն էլ գաղտնի, հաջողվեց Երկիր մտնել։ «Ազատ Քրդստանի» գաղափարը շուտով ունեցավ մեծ թվով հետևորդներ։ Այս շարժման մեջ առաջատար դեր էին խաղում Բեդիր խանի որդիները, որոնցից մեկը արտասահմանում սկսեց հրատարակել «Քուրդիստան» թերթը։ Որոշ ժամանակ անց շարժման գլուխ անցավ շեյխ Օբայդուլայի որդի շեյխ Սադրը, որի անկախ կեցվածքը շատ էր անհանգստացնում կառավարությանը։ Նրան փորձեցին Պոլիս կամ Վան բերել, բայց շեյխը, զգալով Թուրքերի դիվային նպատակը, խուսափում էր։ Թուրքերը նրա դեմ ուժ գործադրեցին, որովհետև Վասպուրականում զորքերի թիվը փոքր էր և քրդերի դեմ կռվելը՝ դժվար։ Շեյխ Սադրը նշաններ էր ցույց տալիս հայդուկների հետ հարաբերությունների մեջ մտնելու համար։ «Քուրդը,— գտնում էին հայ հասարակական գործիչները,— հայի ամենալավ դրացին ու դաշնակիցը կարող է լինել, եթե միայն նրա մեջ լայնորեն ներթափանցի ինքնամանաչման ու անկախության ոգին»։

1901 թ. Բեդիր խանի որդի Աբդոլ Ռահմանը կոչով դիմեց քրդերին. «Դուք վաղուց ի վեր ձեզ քաղաքակրթության ամեն մի առաջընթացից, գիտությունի քարիքներից, ազատության երջանկությունից զրկող ու ենթադրեն գործադրված չարագործությունների աշխարհի առաջ ձեր վարքն ու պատիվը վերջնականապես արատավորող Աբդոլ Համիդին ու նրա բռնավոր պաշտոնյաներին ծառայելուց բացի ուրիշ բան չեք անում։ Փադիշահի հեռավոր նպատակը ձեզ տգիտության մեջ պահելն է։ Նա ձեզ շքանշաններ է տալիս։ Դուք չեք հասկանում, որ այդ նշաններն ու պատվոնշանները ձեր ազգային արժանապատվության և ձեր ապագայի կորստի գինն են... Այս թագավորը, որին խալիֆա ասելով հնազանդվել ուզեցիք, բռնակալ է և գահից գցելու արժանի... Մի՞թե ձեր վեհանձնությունն ու քաջությունը թույլ են տալիս, որ սպանեք հայերի կանանց և երեխաներին։ Մեզ վայել է այսքան հեշտորեն գործիք դառնալ մի Փադիշահի չարագործ ձեռքում։ Չէ՞ որ այդ ամենը աշխարհի աչքին ձեզ ներկայացնում է որպես վայրենի մի ազգ։ Անպաշտպան հայերին սպանելով, չէ՞ որ դուք վարկաբեկում եք ձեր հայրենիքը և ձեր օջախը։ Ձեզ ավարի ու ավերի մղող վալիները, մութեսարիֆները, կայմակամները ձեզնից ամեն ինչ խլելուց բացի, ինչո՞վ արժանացան ձեր հավատարմությանը։ Չէ՞ որ ձեր պատիվն էլ խլեցին։ Դուք, որպես ցեղակից և նույն երկրի զավակ, բնակաբաձար, պարտավոր եք հայերի հետ բարեկամաբար ապրել։ Այդ բնական անհրաժեշտության շնորհիվ չէ՞, որ դարեր շարունակ նրանց հետ հաշտ ու խաղաղ եք եղել։ Դուք դեռ չե՞ք զգվել ձեր վրա իշխող պաշտոնյաների ձեռքին հափշտակության, մարդասպանության և ավազակության գործիք լինելուց»։ («Դրոշակ», 1901 թ., հունիս)։

Քրդական առաջադիմական շրջանների ջանքերն, իհարկե, ապարդյուն չէին անցնում։ Դրանք օգնում էին քուրդ ազգաբնակչության մտածողության զարգացմանը, նախապայմաններ ստեղծում ազատագրական գաղափարների տարածման համար։ Այս ջանքերը նկատելի դեր էին խաղում նաև հայ-քրդական համերաշխություն ստեղծելու գործում։ Ճիշտ է, բազմաթիվ պատճառներով այդ համերաշխությունը մեծ դժվարություններ հաղթահարելով ու երկչոտությամբ էր ճանապարհ հարթում, բայց իրողություն է, որ ոչ միայն նախորդ տարիներին, այլ նաև 1904 թվականի ընթացքում եղան այդ համերաշխության դրսևորման մի շարք փաստեր ու իրադարձություններ։

1904 թ. մարտի 20-ին Քղիից գրում են, որ Խուփուս հայաբնակ գյուղում տեղի հայերն ու Հայդար բեյի ղեկավարած քուրդ ցեղը միասին դուրս եկան քուրդ ավազակների դեմ և նրանց փախուստի մատնեցին։ Հայդար բեյը հայտարարեց. «Մենք՝ զազա ցեղերս, թուրք կառավարությանը ոչ տուրք, ոչ զորք կտանք և ոչ էլ ուզում ենք կառավարության ձեռքին գործիք դառնալ և ճնշել մեր դրացի հայերին»[90]։

Քուրդ-հայկական հարաբերությունների մերձեցմանը զգալի չափով նպաստեց հայդուկների ակտիվ գործունեությունը, քուրդ

աշխատավորության լայն շրջաններում նրանց հեղինակության աճը։ Սակայն, երբ խոսք է գնում քրդերի վարքագծի մասին, անհնար է այն միանշանակ արժեքավորել, դրա պատճառները շատ են։

Նախ՝ քուրդը որպես ազգ դեռ ձևավորված չէր և քրդերի կողմից համազգային վերաբերմունքի և քաղաքականության մասին խոսք լինել չէր կարող։ Ուստի պատահական չէր, որ կային աշիրեթություններ, որոնք հայերի հետ հաշտ ու խաղաղ էին, բայց կային նաև աշիրեթություններ, որոնք հայերի կատաղի թշնամիներն էին։ Նստակյաց քրդերը ձգտում էին հայերի հետ հաշտ ապրել, իսկ քոչվոր քրդերը, ընդհակառակը, առիթ էին որոնում հայերին թալանելու։ Շատ քրդեր երկընտրանքի առջև էին կանգնած։ «Երկընտրանքի մեջ են և քուրդ աղաները,— գրում են Բայազետից,— չգիտեն ինչպես վարվել։ Նրանց հրամայում են սպանել իրենց միս ու արյուն տվող, իրենց խնամող ու կերակրող ձեռքը»։

Հուլիսի 3-ին Ալաշթից գրում են. «Այս գարնանը քրդերին կոտորածի հրահանգ էր տրվել։ Երկրաշարժը (ապրիլի 15-ի գիշերը) պատճառ եղավ այդ հրահանգի գործադրումը հետաձգելու», իսկ այժմ կոտորածի համար «կառավարությունը հանգամանքները նպաստավոր չի համարում, որովհետև երկրաշարժի հետևանքները քննելու համար օտար հյուպատոսներ են եկել այս կողմերը»։ «Հայե՛ր,— ասում են քրդերը,— եթե երկրաշարժը երկու օր էլ ուշանար, հիմա ձեր մեծամասնությունը այն աշխարհը չված կլիներ»։ («Դրոշակ», 1903 թ., № 8)։

Աբդուլ Համիդի կարծիքով ժամանակը բարենպաստ էր Սասունի հարցը լուծելու համար։ Հեռավոր Արևելքում սկսվել էր ռուս-ճապոնական պատերազմը, որն իրեն էր գամել Ռուսաստանի ուշադրությունն ու ռազմական ուժերը։ Այդ պատերազմը անհավանական էր դարձրել օսմանյան կայսրության ներքին գործերին նաև մյուս մեծ տերությունների միջամտությունը, որովհետև նրանք ևս համակ ուշադրությամբ հետևում էին խաղաղ օվկիանոսում ծավալված պատերազմական գործողություններին, և յուրաքանչյուրը ուղիներ էր որոնում այդ պատերազմից օգուտ քաղելու համար։ Դրանով պետք է բացատրել, որ 1904 թ. հունվարից սկսած թուրքական իշխանությունները իրականացրին մի շարք միջոցառումներ հայերի դիմադրողականությունը կազմալուծելու, Տարոնի ու Սասունի բնակավայրերի վրա ռազմական հսկողությունն ուժեղացնելու, ստրատեգիական

կարևորագույն կետերում զինվորական, ոստիկանական, ինչպես նաև քրդական ուժեր կենտրոնացնելու, արտաքին աշխարհի հետ Սասունի հայերի կապի բոլոր ուղիները կտրելու համար։

1903 թ. սեպտեմբերին Մուշ է գալիս Բաղեշի կուսակալ Ֆերիդ փաշան։ Նա հայ երևելիներին ու հոգևոր ղեկավարներին հավաքում ու ներկայացնում է հետևյալ պահանջը. «Սուլթան Համիդի ձեռքի վրա գոյացել է մի մեծ ուռուցք, որը նրան նեղություն է պատճառում։ Անհրաժեշտ է այդ ուռուցքը վիրահատել, որպեսզի վերքը շուտով առողջանա և չլինի թե մեր կայսեր ամբողջ մարմինը վայրակի և թանկագին կայսեր մահվան պատճառ դառնա։ Այդ ուռուցքը Սասունի մեջ գործող Անդրանիկն ու Հրայրն են։ Պետք է նրանք հանձնվեն՝ առանց արյունահեղության։ Հակառակ պարագային սուլթանը մեծ ուժ ու կարողություն ունի այդ վերքը շուտով առողջացնելու»։

Անդրադառնալով Տարոնի և Սասունի կացությանը «Լը տամպը» նկատում է, որ այդ գավառներից ստացվող լուրերը օրեցօր ավելի ու ավելի են վկայում բնաջնջման ահագնացող վտանգի մասին։ Այդ լուրերը պետք է լուրջ ահազանգ հանդիսանան ոչ միայն նրանց համար, «որոնց կարծիքով քաղաքակիրթ Եվրոպան չի կարող հանդուրժել 1894—95 թթ. գազանությունների կրկնությունը, այլև նրանց, որոնց առաջին մտահոգությունն է աշխարհի խաղաղությունը...»։

«Բայց մի բան, որ տակավին հայտնի չէր,— շարունակում է թերթը,— և որը այժմ երևան է գալիս հավաստի աղբյուրներից բխող լուրերից, որ նաև վավերացվում է դիվանագիտության պաշտոնական հաղորդագրություններով,— այդ այն է, որ մի նախագծի մինչև վերջ հետևողական իրականացման համար կամեցել են օգտվել ոչ միայն Եվրոպայի ներողամտությունից, կամ, ավելի ճիշտ կլիներ ասել, լռելյայն մեղսակցությունից, այլև այն հանգամանքից, որ կառավարությունների և ժողովուրդների ուշադրությունը կենտրոնացած է ռուս-ճապոնական պատերազմի վրա. օգտվում են դրանից վերսկսելու համար բնաջնջման ընդհատված գործը... Սասունում, Մշո դաշտում, շրջակա լեռներում էր, որ արյունը վերստին սկսեց հոսել մի քանի շաբաթներից ի վեր»։ («Դրոշակ», 1904 թ., № 2)։

Նախապատրաստվելով հայերի զանգվածային կոտորածներին՝ Բ. Դուռը չբավարարվեց Սասունի դեմ բանակային ուժեր կենտրոնացնելով։ Նա կռվի կոչեց մահմեդական բոլոր տարրերին՝ համիդիեներին ու ջանբազարներին, չերքեզներին ու քրդերին։ Ելնելով 1894—96 թթ. կոտորածների փորձից, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց քրդերին հայերի դեմ հանելու խնդրին։ Սուլթանական պալատում այն կարծիքին էին, որ հայկական առաջին զանգվածային ջարդերի ժամանակ հայերի ու քրդերի միջև թշնամությունն այնքան էր արմատացել, որ վերը նշված խնդրի լուծումը առանձին ջանքեր չէր պահանջում։

Կ. Պոլսում սխալվում էին։ Ճիշտ է, 1894—96 թթ. ջարդերից հետո հայերի ու քրդերի միջև հարաբերությունները իրոք սուր տեսք ստացան, բայց դրա հետ միասին քրդական ավելի ու ավելի լայն շրջաններ գալիս էին այն եզրակացության, որ հայերի ջարդը բխում է ոչ թե քրդերի ազգային շահերից, այլ թուրքական տիրակալների քաղաքական նպատակադրումներից։ Բացի այդ, երբ թուրքական հրամանատարությունը դիմեց քրդերին, որ գան մասնակցեն Սասունի վրա հարձակմանը «մի քանի աշիրեթների պատասխանը շատ կտրուկ և խելացի եղավ. «Սրանից առաջ էլ մեզ դրդեցիք այդպիսի բան անելու, սակայն երբ Եվրոպայի քննիչները եկան, ամբողջ պատասխանատվությունը մեզ վրա գցեցիք, իբր ինքնագլուխ էինք արել այդ գործը։ Ու եթե հայերի ցուցմունքը չլիներ՝ թե քրդերը չէին, այլ՝ զորքերը, եվրոպացին այժմ մեզ ջնջած կլիներ...»[91]։ Ճշմարտությունն այն է, որ ընդհանուր առմամբ քրդերի ազգային շահերը հակադիր էին օսմանյան նպատակներին։ «Քրդերը,— գրում է Շվեյգեր Լետխենվելորը,— թշնամաբար են վերաբերվում թուրքերին։ Ամեն ինչից երևում է, որ նրանք, ինչպես թուրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, ձգտում են անջատվել և որ նրանք պատրաստ են առաջին իսկ բարենպաստ պահին ապստամբելու»։ Իսկ ֆրանսիացի խոշոր գիտնական Ռեկլյուն նկատում է, որ անցյալ դարի կեսից սկսած «քրդական ապըստամբություններից շատերը, անշուշտ, նպատակ ունեին ձեռք բերելու քաղաքական անկախություն։ Մինչև անգամ փորձեր եղան ստեղծելու «քրդական դաշնակցություն»[92]։

Այդ բանը քաջ գիտեին և հայերը. 1900 թվականի դեկտեմ-

բերին Վասպուրականից գրում են. «Քուրդն ու թուրքը բարեկամ և դաշնակից լինել չեն կարող։ Քուրդն ազատ ու անկեղծ, իր լեռների նման կոշտ ու վայրենի, սովոր ավարառության ու հափշտակության, ասպետական դյուցազնականությամբ հիացող, անհնար է, որ համակերպվի, մանավանդ՝ ենթարկվի թուրքին, որն իր հարեմի պես ստրուկ ու վավաշոտ, խարդախ ու երկչոտ, կրոնամոլ ու շահասեր հատկություններով է տոգորված և նրա միակ նպատակը կիրքն ու հաճույքն են»։

Այո, թուրքերի ու քրդերի միջև լուրջ հակասություններ կային։ Այդ հակասությունները հետևանք էին, մի կողմից, քրդերին հարկատու դարձնելու կառավարության որոշմանը, մյուս կողմից, համիդիեների գործողությունների դեմ օսմանյան հասարակության տարբեր խավերում առաջացած դժգոհության։ Ահա այս հիմքի վրա նկատվում էր քուրդ-հայկական հարաբերությունների ոչ միայն մեղմացում, այլև՝ ձգտում մերձենալու, միասնական ճակատ կազմելու ընդդեմ օսմանյան տիրապետության։ Դա անհանգստացրեց իշխանություններին և նրանք ստեղծեցին ջանբազարների կուսակցությունը, որի մեջ հավաքագրեցին հասարակության թափթփուկներին և ուղղեցին բոլոր ընդդիմադիր ու վստահություն չներշնչող ուժերի դեմ՝ լինեն դրանք թուրք, քուրդ կամ հայ։

Այդ մասին Վանից գրում են. «Վաղուց չէ, ինչ կրոնամոլ քրդերից կազմված է «ջանբազար» անվանվող կուսակցությունը. անունն ինքը բացատրում է կուսակցության սկզբունքը։ Անդամները արյունարբու ավազակներից, կրոնամոլ աղաներից և բախտախնդիր քրդերից են հավաքագրվել։ Գազանների այդ ոհմակը գործում է Մշո դաշտում, բայց դեպքից դեպք մեր կողմերն էլ են երևացել։ Ալշավազ գավառում նրանք սկսել են ավերումներ կատարել։ Քուրդ բեկերը, կայմակամները դրանց գործիք են դարձրել իրենց ձեռքում՝ հարկեր հավաքելու և կեղեքելու ժողովրդին։ Կարծում եմ, այդ կուսակցությունը առաջ եկավ այն բանից, որ կառավարությունը վերջերս լուրջ երկյուղ կրելով հայ-քրդական հարաբերություններից, շատ տեղեր զինաթափ արեց համիդիեներին և քուրդ ազգաբնակչությանը...»։ Օսմանյան կառավարությունը խորամանկում էր, հնարքներ փնտրում ազգամիջյան թշնամություններ բորբոքելու համար։ Դրա համոզիչ վկայությունն են 1903 թ. հունիսի 3-ին Բայազետից

ստացված նամակի հետևյալ տողերը. «Վերջին ժամանակներս Համիդիե ալայակները տեսնելով, որ ծայր աստիճանի չքավորության հասած հայ գյուղացիների մոտ թալանելու, կողոպտելու այլևս ոչինչ չի մնացել, խրախուսված կառավարության ձեռնպահությունից դեպի քրդերի արարքները, իրենց շահատակությունները սկսեցին տարածել նաև խաղաղ թուրք ազգաբնակչության վրա։ Ավարառություններն այնքան շատացան, որ թուրքերը, այլևս չկարողանալով տանել քրդական հարստահարությունները, 60 գյուղ միացան և բողոքի հեռագրեր ուղարկեցին։ Իշխանությունները նման առիթի էին սպասում և զորքեր լցրեցին գյուղերը, որոնք «զինաթափեցին մի քանի պատահական քրդերի, ինչը քրդերի մեջ դժգոհության ալիք առաջացրեց։ Քրդերը սկսեցին զանազան սպառնալիքներ տեղալ իշխանությունների հասցեին, մինչև անգամ սպառնում էին միանալ «ջանֆիդայիներին»։ Դա վախեցրեց իշխանություններին, և գյուղերում «ցրված հեծելազորի սպաները շատ քրդերի խոստովանեցին, որ իրենք նշանակված են իսկապես հայերի համար, որ թուրքերի բողոքը միայն պատրվակ էր և քրդերից մի քանի զենք առնելը՝ միայն խաբելու միջոց»[93]։

Սակայն Համիդիե գնդերի չարագործությունների դեմ դժգոհությունները գնալով համընդհանուր էին դառնում։ Երկրի բոլոր ծայրերից անընդհատ բողոքներ էին ստացվում։ Գրում են Վասպուրականից. «Թուրք և քուրդ խաղաղ տարրի և ոչ Համիդիե աշիրեթությունների շրջանում մեծ դժգոհություն կա Համիդիեների նկատմամբ, որ... սկսել են բացահայտ ցույց տալ։ Համիդիեները, իրենց դիրքի շնորհիվ, կարևորություն չեն տալիս այլևս ոչ ոքի, խտրություն չեն դնում ոչ իսլամի և ոչ քրիստոնյայի միջև, սպանում, կոտորում, թալանում են բոլորին»[94]։

1908 թ. մայիսի 21-ին Վանից հայտնում են, թե Համիդիեի հրամանատար Հուսեին փաշան «իր ծառաներին պատվիրում է գնալ շրջակա բոլոր հայ գյուղերի եկեղեցիներն ու վարժարանները, քանդել, ավերել և փայտերն ու գերանները գյուղացիների շալակը տված՝ բերել քրդական ավերակ գյուղերը նորոգելու»։

Մեկ տարի անց, 1904 թ. ապրիլի 14-ին Վանից այդ նույն ավազակն մասին գրեցին. «Անցյալ ամսին կառավարությունը պահեստի զորքերը ժողովել սկսեց, այդ կապակցությամբ թուրք ժողովրդի մեջ հուզումներ տեղի ունեցան։ Նրանք խորհուրդ արեցին, որ պետք է նախ հայերին կոտորել և ապա այդ պահեստայիններին հեռացնել Վանից»։

խստագույն պատիժների էին ենթարկվում այն քրդերը, որոնք հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին։ Հասանացի Յատեհ աղան ձերբակալվեց «հայերի հետ հարաբերություն ունենալու համար»։ «Կառավարությունը հալածում է նույնիսկ Համիդիեի կայմակամ Ալի բեյին... իբր, նա էլ է հայերին համակրում»։ Թուրքական կառավարության ձեռնարկած միջոցները, անշուշտ, դեր խաղացին քրդերի կողմնորոշման գործում։ Բայց ո՛չ գլխավոր և ո՛չ հիմնական։ Որո՞նք էին այդ կողմնորոշման հիմնական պատճառները։ Ինչո՞ւ քրդերը զենք վերցրին հայերի դեմ։ Քուրդը քոչվոր խաշնարած էր, անասնապահական մթերքներ իրացնելու միջոցով իր կարիքների գոնե մինիմումը բավարարել չէր կարող և դրանով չէր էլ զբաղվում։ Նա գերադասում էր թալանի ուղին։ Քուրդը, բացի ցեղ հասկացությունից, համակեցության ոչ մի այլ տեսակի մասին գաղափար չուներ. «ցեղակից» և «այլացեղ» բառերը նրա համար հոմանիշ էին «բարեկամ» և «թշնամի» բառերին։ Ցեղապետը իր եսասիրական շահերին կարողանում էր տալ համացեղային շահի տեսք ու քրդերին քշել ավերելու ու թալանելու։ Փոքր չէր նաև կրոնական մոլեռանդության դերը։

Հայ-քրդական թշնամության երկրորդ պատճառը գերմանացի հետազոտող Շվեյգեր Լեոխենվելդը ձևակերպում է հետևյալ կերպ. «Որպեսզի քրդերը հեռու մնան անկախության ձգտումից, կառավարությունը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով։ Այսպես օրինակ, նա քրդերին դրդում է Քրդստանում բնակվող նեստորականների դեմ, ինչպես նաև մահմեդականներին դնում է քաղդեացիների դեմ, իսկ վերջիններիս՝ եզիդիների ու քրդերի դեմ։ Նա այդպիսով առաջ է բերում խռովություններ այն միակ նպատակով, որ իր ձեռքում պահի գերագույն իշխանությունը... և նպատակ ուղանդները չմիավորվեն ընդհանուր թշնամու դեմ»։

Այդ նույն նպատակով սուլթանն ու նրա կառավարությունը քրդերին հայերի դեմ էին հանում, և օգտագործում իրենց իսկ հնարած այն թեզը, թե հայերը ուզում են տեր դառնալ կայսրության արևելյան և հարավ-արևելյան տարածքներին, որ նրանք չեն ընդունում Քրդստանի գոյությունը։ Զգտելով այն մտցնել Հայաստանի կազմի մեջ, այդ ռայաները ուզում են քրդերին ռայա դարձնել։

Հայկական հարցի ամբողջ ողբերգությունը հենց այն էր, որ

օսմանյան իշխող դասակարգերին հաջողվեց հայերի անկախության ձգտումներով ահաբեկել քրդերին և նրանց հավաքել հայաջինջ քաղաքականության դրոշի ներքո։

1903 թ. մարտի 20-ին Ռայխստագում է. Բերնշտայնը, նկարագրելով Հայաստանի վիճակը Բեռլինի կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջանում, հայտարարեց. «Տեղի ունեցան կոտորածներ, որոնց նմանը չի տեսել մարդկային պատմությունը։ Անխիղճ չեկավարների դրդմամբ և անգութ հրոսակների ձեռքով կոտորվեց ժողովրդի վիթխարի մի հատված։ Դեռ կոտորածների սկզբում սուլթանը տվել էր իր պատվի խոսքը Սոլսբերիին՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստրին, թե շուտով իրագործելու է բարենորոգումները... Բարենորոգումները չիրագործվեցին, վայրագությունները վերսկսվեցին և շարունակվեցին ավելի քստմնելի, ավելի վայրագ կերպով, մինչև որ հայ ժողովուրդը արյունաթաթախ տապալվեց...»։ Ապա՝ «Ոչ մի հայ այսօր չի մտածում անջատել Հայաստանը Թուրքիայից։ Ինչ երազներ էլ ունենան հայերը հեռու ապագայի նկատմամբ, նրանք բոլորը լավ գիտեն, որ դեռ շատ երկար տարիների ընթացքում չպետք է մտածեն անկախ Հայաստանի մասին։ Այդպիսի երազը վեր է նրանց կարողությունից... Հայերը չեն ձգտում ռամկավարական կարգերի... այլ շատ ավելի համեստ բարեփոխությունների, որ... մշակված են պետությունների ներկայացուցիչների կողմից»[95]։

Մակեդոնիայի ու Հայաստանի նվիրված միտինգներից մեկի ժամանակ Ռնատոլ Ֆրանսը հայտարարեց. «Երբ յաթաղանը բարձրանում է Հայաստանի վրա «զգուշ» լինել չի նշանակում լռել և ժխտել կոտորածները, խոհեմ լինել չի նշանակում թույլատրել ոճիրը անարգ լռությամբ։ Ստորությունը երբեք իմաստություն չէ։ Ո՞րն է ուրեմն այս լռության իմաստը, երբ զոհի արյունը աղաղակում է։ Մենք հետաքրքրվում ենք հայերի և մակեդոնացիների ճակատագրով ոչ թե նրա համար, որ նրանք քրիստոնյա են, այլ որ մարդ են»։ («Դրոշակ», 1908, № 8)։

Հերյուրանք էին նաև սասունցիների կողմից նախապատրաստվող ապստամբության մասին լուրերը։ «Լուրեր են շրջում,— գրում է «Հնչակը»,— թե Սասունում կան ուժեր, որոնք ինքնապաշտպանության են պատրաստվում և «քուրդ ցեղերն ու օսմանյան զորքերը հավաքվում են Սասունի շուրջը ֆեսադիներին կալանավորելու»։ Դա նշանակում էր կոտորած, որի պատրվակն այն էր, թե «սասունցիներն ուզում են ապստամբել»։

Մի քանի գյուղեր արդեն ենթարկվել էին քրդերի ու զորքերի վայրենի ասպատակությանը։

«Պրո Արմենիան» և եվրոպական այլ թերթեր տպագրեցին հետևյալ տեղեկատվությունը. «Քրդերի բռնած սպառնալից դիրքի շնորհիվ Սասունում և Մշո դաշտում տիրում է մեծ անհանգստություն»։

«Քուրդ պահապաններ նշանակելը հայ գյուղերում, զորքեր տեղավորելը հայկական նշանավոր վայրերում, հայերին օրենքից դուրս նկատելը ու մահմեդական տգետ խուժանի գրգռումը անզեն հայ գյուղացիների դեմ՝ այս բոլորը բավական չէր։ Հայերի ոչնչացման ծրագրին ավելի արագ ընթացք տալու համար Համիդի կառավարությանը հարկավոր են հրդեհվող գյուղերի ծուխ, մարդկային արյան հոսք»։

Այսպիսով, Սասունի հայությունը բնաջնջելու համար ոտքի էին հանվել նույն ուժերը, ինչ 1894 թվին՝ կանոնավոր բանակ, ոստիկանություն, համիդիե, ջանբազարներ, քրդեր և չերքեզներ։

***

Այժմ պատասխանենք հետևյալ հարցին. որո՞նք էին այն ուժերը, որ պետք է դուրս գային օսմանյան կառավարության հավաքագրած բազմահազար զորքերի ու զինված խաժամուժի դեմ և փրկեին Սասունի հայ բնակչությանը ոչնչացումից։ Դա, առաջին հերթին ինքը՝ Սասունի բնակչությունն էր, որը նախապատրաստվում էր ինքնապաշտպանական կռիվների։ Դա Տարոնի դաշտի և Մուշ քաղաքի հայ ազգաբնակչության այն խավերն էին, որոնք քաջ գիտակցում էին, որ Սասունի կոտորածները նախերգանքն են լինելու Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններում հայկական նոր ջարդերի։ Դա նաև օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությունն էր, որ Սասունի կոտորածների մեջ տեսնում էր իր բնաջնջումը։ Դա արևելահայությունն էր, նաև հայկական դաղթօջախները, որոնք Սասունի կոտորածները համարում էին համազգային ողբերգություն և հայերի գոյատևմանը սպառնացող միանգամայն իրական վտանգ։ Վերջապես հայդուկներն էին՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարի առաջապահը, ժողովրդական այդ վրիժառուներն ու գոյատևման համար ժողովրդի պայքարի առաջամարտիկները։

Դասակարգային առումով ինքնապաշտպանության ուժերն էին. 1. Սասունի գյուղացիությունը։ 2. Արևմտյան Հայաստանի

քաղաքային չքավոր տարրերը, ինչպես նաև հայ արհեստավորներն ու առևտրականները։ 3. Մտավորականությունը, առավելապես արևելահայ մտավորականությունը։

Սասունում թուրք չարդարարների դեմ պայքարի ելան գրեթե ամբողջ գյուղացիությունը, ամբողջ բնակչությունը։ Հայ գյուղացին այլևս նախկին անմռունչ ստրուկը չէր, նա ըմբոստանում էր, բացահայտ ընդվզում։ Նույնիսկ թուրքերը խոսում էին, թե Սասնո մեջ հեղափոխականները բանակ են դրել Անդոկ լեռան բարձունքներու վրա[98]։

Պատմական գրականության մեջ Սասունում գործող հայդուկների թվի մասին տարբեր տվյալներ են բերվում։ Իրարամերժ թվեր են նշում նաև իրադարձությունների մասնակիցներն ու թուրքական աղբյուրները։ Այսպես, Կարինում Անգլիայի փոխհյուպատոսը 1903 թ. հոկտեմբերի 19-ին տեղեկագրում է. «Շատ դժվար է արժանահավատ տեղեկություն ստանալ Սասունում հայ հեղափոխականների՝ «ֆիդայիների» թվի, կազմակերպության և ծրագրերի մասին և մեծ վարանումով է, որ հաղորդում եմ ինձ հասած հետևյալ տեղեկությունները. «Ֆիդայիները վերջերս թե՛ թվով մեծապես շատացել են և թե՛ հզորացել, ասում են, հիմա նրանց թիվը 5—6000-ի է հասել, և բոլորը լավ զինված, մարզված և կազմակերպված են։ Լրիվ տիրացել են Մշո դաշտի հարավային կողմի լեռներին և իրենց իշխանությունը տարածվում է շատ գյուղերի և նույնիսկ ոչ նվազ չափով Մուշ քաղաքի վրա։ Իրենց պետը՝ Անդրանիկը, շատ կարող մարդ է, և բոլորը անպայման հնազանդվում են նրան։ Զինվորական կազմակերպությունը Թումանով անունով կովկասցի մի հայի հրամանատարության տակ է, որը ռուսական բանակի մեջ ծառայել է, և ասում են, սպա է եղել։ Թե ինչ է ֆիդայիների ծրագիրը, անկարող եմ ասել, բայց եթե այս տեղեկությունները ստույգ են, անտարակուսելի է, որ մոտ ապագայում նրանք կարևոր դեր պիտի խաղան այս երկրի մեջ»[99]։

Դժվար չէ կռահել, որ այս տվյալների աղբյուրը թուրքական է, որ հայդուկների թիվը տասնյակ անգամներ մեծացնելով, ցանկանում են արդարացնել Սասունի վրա հարձակումը։ Հավանաբար, թյուրիմացություն չէ նաև այն, որ ռուսական հյուպատոս Թումանովը ներկայացվում է որպես սասունցիների ռազմական ուժերի հրամանատար։ Եթե ռուս դիվանագետը զեկավար մասնակցություն ունի «ապստամբության», ապա նրա մեջ

խառն է «Ռուսաստանի մատը»։ Ինչևիցե, լսենք անգլիական դիվանագետին։ 1903 թ. նոյեմբերի 16-ին նա գրում է. «Անկարելի է նույնիսկ մոտավորապես որոշել, թե որքան է Սասունում զենք կրող հայերի թիվը։ Մ. Հեփսբնը և իր պաշտոնակիցները նրանց թիվը 5—6000 են հաշվում։ Դա նրանց կարծիքն է։ Ըստ երևույթին, նրանք նկատի ունեն այն ֆիդայիներին, որոնք անցյալ գարնանից ի վեր Սասունում էին, ինչպես նաև Մուշ քաղաքին մերձակա վեց գյուղերի ազգաբնակչությանը, Տալվորիկի բնակիչներին և Մուշ քաղաքից հեռացած 3—400 երիտասարդներին, որոնք, պետք է ենթադրել, որ հեղափոխականներին են միացել։

Մյուս կողմից, փոխհյուպատոս Հիթքոթը, այստեղի (Կարինի) և Բաղեշի տեղական իշխանությունները, ինչպես նաև Մուշից եկող հայ և թուրք ճամփորդները, բոլորն էլ հայտնում են, թե ֆիդայիների թիվը 300-ից ավելի չպետք է լինի, մինչ պաշտոնակիցները (Կարինի) պնդում են, թե նրանց թիվը հավանորեն 1500 է, ամենաքիչը 1000։

Վերջին ամիսներին ի հայտ է եկել մի նոր երևույթ՝ քրդերի գործակցությունը հայերի հետ։ Իրողություն է, որ Սասունի վրա այս ամռանը հարձակվելուց կառավարությանը ետ պահող պատճառներից մեկը քրդերի բռնած անսպասելի դիրքն է։ Նրանք մերժեցին ծրագրված հարձակմանը մասնակցել։ Ֆրանսիական հյուպատոսը ինձ ասաց, թե քրդերի և հայերի միջև տեղի ունեցող բանակցությունները, իր կարծիքով, հանգեցրել են մի դաշինքի, համաձայն որի քրդերը պատրաստ պիտի լինեն կատարելապես չեզոք դիրք բռնելու։ Նրանք ևս, ինչը որ անհավանական չէ, զենք կվերցնեն պաշտպանելու հայերին, եթե նրանց վրա հարձակում կատարվի։ Երկու իրողություններ վկայում են վերոհիշյալ կարծիքի հավանականությունը. առաջինն այն է, որ քրդերը, մանավանդ Սղերդի քրդերը, այս աշնանը պարեն հայթայթեցին զորքերի կողմից Սասունում պաշարված ֆիդայիների համար, երկրորդն այն է, որ այդ հուզումներով բռնկված գավառների քուրդ բնակիչների տներում հայ արհեստավորները մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք են պատրաստում հայ հեղափոխականների գործունեության համար»[100]։ Մեզ չհաջողվեց պարզել, թե քրդերի ու հայերի միջև բանակցությունները, որ հիշատակում է Շեփլեյը, երբ են տեղի ունեցել և ովքեր են դրանց մասնակցել։ Կասկածելի է նաև զենք և

սննդամթերք հայթայթելու գործում սասունցիներին բրդեքի ցույց տված օգնության փաստը։

Սակայն վերադառնանք հայդուկների քանակի հարցին։

Եթե անգլիական դիվանագետների նշած թվերը համեմատենք հայկական աղբյուրների տվյալների հետ, ապա բոլոր հիմքերն ունենք ասելու, որ Սասունի զինված գյուղացիների թիվը 2000 հոգուց չէր անցնում։

Նրանցից հայդուկ էին 200—250 հոգին, որոնցից 30—35-ը եկել էին Կովկասից, երեթե այդքան էլ կայսրության մյուս նահանգներից ու գավառներից, մասնավորապես Տարոնից։ Սասունցի էին 170—180 հայդուկ։

Գոյամարտը, ինչպես ասվեց, համաժողովրդական օգնություն և աջակցություն էր ստանում ոչ միայն Սասունի, այլ նաև Տարոնի ու Արևմտյան Հայաստանի մյուս գավառների հայ բնակչության կողմից։ Տարոնի շատ գյուղերում գործում էին մարտական ջոկատներ, որոնք պատրաստ էին մարտի բռնվել և հակահարված տալ թշնամուն։ Որոշ թվով տարոնցիներ գնացին Սասունի ինքնապաշտպանական կռիվներին մասնակցելու, իսկ տեղում մնացած յուրաքանչյուր մշեցի «ինքնակամ տալիս էր իր հացը, յուղը, մսացուն, հագուստեղենը, դրամը»։

Իրենց հայրենակիցներին օգնելու պատրաստակամություն էին հայտնում նաև մեծ թվով հայ արհեստավորներ, առևտրականներ, քաղաքի ու գյուղի ունևոր խավի ներկայացուցիչներ։

«Հնչակը» 1907 թ. հունվարին հայ առևտրական բուրժուազիայի մասին գրեց. «... Մինչ 1895 թվականը այդ դասակարգը ոչ միայն դեմ էր ամեն տեսակ հեղափոխական շարժման՝ իր կարողության սահմաններում զանազան խոչընդոտներ հարուցանելով հեղափոխական գաղափարի ծավալմանը, այլև նա ամենաջերմ պաշտպանը, ջատագովն էր սուլթանական ռեժիմի պահպանության և հարատևության, այն նկատառումով, որ իրերի այդ դրությունը իրեն հնարավորություն էր տալիս օգտվելու ընդհանուր քայքայումից, ինչպես և տիրապետող անկարգ վիճակից ու տարբեր ազգության պատկանող մասսաների տգիտությունից։

Վրա հասավ 1895-ի կոտորածը։ Թուրք կառավարության գործիք խուժանը, բնականաբար, չկարողացավ մտնել նրանց այդ նուրբ նկրտումների ու հաշիվների մեջ, ուստի իր կողոպուտի հոսանքը ավելի մեծ չափով դեպի այդ դասակարգը ուղղեց։

Իհարկե, խուժանն էլ իր հաշիվն ուներ և փոխադարձ այդ հաշվառության և հաշվետվության հետևանքը այն եղավ, որ հայ առևտրականները բոլորովին զրկվեցին իրենց ունեցվածքից և դրանից հետո էլ ընկան կարոտ ու խեղճ վիճակի մեջ։ Սնանկացած հայ վաճառականների կողքին հրապարակի վրա երևացին թուրք մեծափարթամ վաճառականները և առևտրականները, որոնք իրենց դրամագլխի մեծ մասը կազմել էին հայ վաճառականների կողոպուտից և թալանից։

Կողոպուտից և կոտորածից շատ թե քիչ ազատ մնացած հայ առևտրականները, թեև մի պահ սարսափեցին սուլթան Համիդի վարչակարգից և իրենց վստահությունը կորցրին, բայց արդեն ուշ էր, որովհետև կյանքի, գույքի ապահովություն չտեսնելով, մի կողմից՝ չհամարձակվեցին իրենց մնացած փոքրիկ դրամագլուխները շրջանառության մեջ դնել, մյուս կողմից՝ շատ թե քիչ հանդուգն եղողներն էլ տեսան, որ այլևս առևտրական բոլոր ճամփաները իրենց առջև փակված են։ Առևտրականությանը երկար ժամանակից ի վեր ոչ մի նշանակություն չտվող թուրք տարրը, երբ իր առջև տեսավ շահույթի նոր ասպարեզ՝ այն է վաճառականությունը, որով կարող էր է՛լ ավելի ընդարձակել իր շահույթը և ռայային, գյավուրին իր հպատակության տակ առնել, ամենաեռանդուն կերպով գործի անցավ և հաջողություն ունեցավ, որովհետև նրա դիրքն ու պայմանները բոլորովին տարբեր էին, ամեն ինչ իր համար նպաստավոր էր, թալանվելու, վնասվելու երկյուղ չուներ...

Մի ուրիշ հանգամանք էլ շատ օգնեց թուրք վաճառականին և առևտրականին։ Տաճիկ կրոնավորները 95 թվից հետո թե՛ մզկիթներում, թե՛ հրապարակներում բացորոշ կերպով թուրք ժողովրդին մարսել տվին այն գաղափարը, թե «գյավուրի հետ առևտուր անելը մեղք է»։

Խոջայի և մոլլայի այդ պատկերը բավական էր, որ թուրք գյուղացին իր ոտքը կտրեր հայի խանութից։ Դեռ ավելին, սուլթանի պաշտոնյաներն էլ օգնության հասան, նրանք էլ ոչ միայն կողմնակի, այլև ուղղակի կերպով և իրենց օրինակով թուրք ժողովրդին հասկացնում էին, որ հայ տարրի հետ տնտեսական հարաբերության մեջ չպետք է մտնել, պետք է հայերին աղքատացնել, պետք չէ նրանց հարստացնել, որ կոմիտեի անդամներին դրամ տան։

Հայ վաճառականի անկման պատճառներից մեկն էլ այն

եղավ, որ նա չկարողացավ Պոլիս և այլ վաճառաշահ կենտրոններ գնալ, իր ուղած ապրանքները սուղ գնով գնել թուրք մեծածախ վաճառականներից, որ երբեք ձեռնտու և շահաբեր չէր կարող լինել իր համար։

Հայ առևտրականը իր ապրանքները սպառելու համար չէր կարող դրանք նաև գյուղերը տանել, որովհետև, նախ ճանապարհին կողոպտվելու վտանգ կար, հետո թուրք պաշտոնյաները ամեն րոպե նրան կարող էին մեղադրել որպես հեղափոխական, և երրորդ՝ գյուղերի շուկան էլ արդեն գրավել էին թուրք մանր առևտրականները։ Կատարվել էր մի բան, որ լոկ հայկական երևույթ չէր։ Պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, երբ իշխող ազգի բուրժուազիան օգտագործում է պետական և ռազմական մեքենան շուկայից իր մրցակիցներին, տվյալ դեպքում՝ հայ առևտրականներին դուրս քշելու համար։ Այդ բանը թուրք բուրժուազիային հաջողվեց, որի ուղղակի հետևանքը եղավ հայ առևտրական բուրժուազիայի տրամադրության շրջադարձը՝ նա հանդես եկավ որպես ազգային-ազատագրական պայքարի, տվյալ դեպքում՝ օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարի ղեկավար։ Բայց որովհետև նա ոչ թե արդյունաբերական, այլ առևտրական բուրժուազիա էր, որը աշխատավորական լայն զանգվածների հետ շփումներ և նրանց ղեկավարելու փորձ ու հմտություն չուներ, անկարող գտնվեց իրապես դառնալու շարժման առաջնորդ և մնաց լոկ ուղեկցի ու աջակցի դերում։

Վերը նշված համարում «Հնչակը» անդրադառնում է նաև հայ արհեստավորությանը. «Հայ արհեստավորը օր օրին ապրող դասակարգ է, ապրուստ հայթայթողը իր արհեստի գործիքներն են։ Մեծ թալանին նա էլ իր ունեցած բոլոր գործիքներից զրկվեց։ Արհեստավորներից շատերն էլ սպանվեցին»։ Կենդանի մնացած արհեստավորը իր զբաղմունքը առաջ տանելու համար գործիքի կարիք ուներ... և դրամ էլ չուներ նորը ձեռք բերելու համար։

Վերջապես նա էլ ընկավ վաշխառուների ձեռքը, ահագին տոկոսներով դրամ ճարեց և սկսեց աշխատել։ Բայց թուրք մոլլաների և կառավարության պաշտոնյաների պրոպագանդան և պատվիրանները այստեղ էլ իրենց ազդեցությունն ունեցան։ Թուրք կառավարության միտումն էր հայ արհեստավորների փոխարեն տեսնել թուրք արհեստավորների։ Եվ պետք է ասել,

որ նա մասամբ իր նպատակին հասավ։ Չնայած հայ արհեստավորը անհամեմատ բարձր է թուրք արհեստավորից ու Եվրոպայի արհեստավորների մրցակիցն է և իր արտադրանքը կարող է ավելի էժան ծախել, բայց և այնպես այսօր նա չի կարող իր հացը ճարել, երեկոյան տուն է վերադառնում առանց կարողանալու զավակներին գեթ մի պատառ հաց տանելու։ Քաղաքի մեջ նա իր դեմ ունի թուրք արհեստավորին, իսկ գյուղում անվտանգություն չկա, որ կարողանա իր արհեստը գործի դնել և ապրել։ Սրան ավելացնենք նաև դինվորական և այլ բազմատեսակ տուրքերի օրեցօր ավելանալը, և դուք կունենաք հայ արհեստավորի վիճակի պատկերը։ Այդ դեռ հերիք չէ, նա տարին մի քանի անգամ բանտարկվում է տուրքերը վճարել չկարողանալու համար, եթե մի քանի հաճախորդ էլ ունի, նրանք էլ ցրվում են՝ խանութը փակ տեսնելով»։

Այսինքն՝ թուրքական բռնություններն ու յաթաղանը հայ հասարակական բոլոր խավերին կանգնեցրել էր երկընտրանքի առաջ՝ կա՛մ պայքարել թուրքական լծի դեմ, կա՛մ ոչնչանալ։

Սասունի և Տարոնի վիճակն ու այնտեղ հասունացող դեպքերը իրենց վրա էին բևեռել ոչ միայն արևմտահայերի, այլև ողջ հայության և մասնավորապես՝ արևելահայության ուշադրությունը։

Կովկասում եռանդուն աշխատանք ծավալվեց Սասունին օգնելու։ Մասնավորապես դաշնակցական կուսակցությունն այս ուղղությամբ մեծ գործ կատարեց։ Զենք և մարտական խմբեր հավաքվեցին Սասուն ուղարկելու նպատակով։ Մրգստան—Դուրան-Բարձրավանդակ (այսինքն Երևան—Սասուն) կապը իրականացվում էր՝ 1. Կարս—Խնուս—Սասուն, 2. Դավալու—Մակու—Թադեի վանք—Խոյ—Սասուն, 3. Սալմաստ—Բաշկալա—Հայոց ձոր—Վան—Սասուն, 4. Միրզաջան—Տաք աղբյուր—Արճեշ—Ախլաթ—Սասուն գծով։ Առանձին դեպքերում զենքերը Սև ծովով ուղարկում էին Ալեքսանդրիա, այնտեղից փոխադրում Հալեպ և ապա՝ Սասուն։

Այս բոլոր փոխադրումները կատարվում էին արտակարգ ծանր պայմաններում։ Ուղարկված զենքի մեծ մասը տեղ չէր հասնում և ընկնում էր թուրքերի կամ քրդերի ձեռքը։ Մեծ զոհեր էին տալիս նաև երկիր մտած զինված խմբերը։ Նրանք ճանապարհին հարձակման էին ենթարկվում, ոչնչանում մասամբ կամ ամբողջությամբ։ Բայց դա արևելահայերին չէր հուսահա-

տեղնում։ Կործանման վտանգի տակ գտնվող իրենց եղբայրներին անպայման օգնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նրանք ոչ մի զոհողության ու զոհաբերության առաջ կանգ չէին առնում։

1902—1904 թվականներին Սասուն մեկնելու համար ռուս-թուրքական սահմանը անցան մի շարք զինված խմբեր։ Նախ նշենք, որ Սասուն հասավ Թորգոմի խումբը՝ 25 հոգի, որի կազմում էին նաև Մուրադը, Քեռին, Սեպուհը, Կայծակ Առաքելը։ Թորգոմը ետ դարձավ Կովկաս և նոր խումբ հավաքելով՝ նորից ուղղություն բռնեց դեպի Սասուն, բայց Կարսի մոտերքում նրա խումբը հայտնաբերվեց ու ոչնչացվեց։

Իգդիր—Ալաշկերտ գծով դեպի Սասուն գնացող «Երկաթ» խումբը նույն բախտին արժանացավ։ Նեվրուզի խումբը՝ մոտ 90 հոգի, 1903 թ. սեպտեմբերի 17-ին անցավ սահմանը։ Նրանցից 19-ը առաջ ընկան՝ խմբի համար տեղ պատրաստելու։ Առավոտյան նրանց դեմ դուրս եկան 6 քրդեր, որոնցից 3-ը սպանվեցին, իսկ մյուս 3-ը փախան և օգնություն կանչեցին։ Քրդերը հավաքվեցին։ Կռիվը տևեց մինչև երեկո։ Հայդուկները հեռանում են Յուզվերան գյուղ, բայց վռնեցած գյուղացիները նրանց չեն ընդունում և խումբը շարժվում է դեպի Բոցիկի լեռները։ Այստեղ են հասնում նաև խմբի մյուս 70 հայդուկները։ Նրանք նոր էին միատեղվել, երբ քրդերը սկսեցին հարձակումը։ Կռիվը տևեց երեք օր։ Հայդուկները, հոգնած ու տանջված, քաշվեցին Գոմաձոր։ Զորքեր շտապեցին Կաբինից, Դալի—Բաբայից, Ղաբաբիլիսայից։ Գործի դրվեցին թնդանոթները։ Հայերը հերոսաբար դիմադրեցին։ Բայց երբ ռազմամթերքը սպառվեց, նրանցից 70 հոգի ետ դարձան դեպի ռուսական սահմանը։ Նրանք բոլորը ձերբակալվեցին։ Թուրքական իշխանությունները այս կապակցությամբ մեծ աղմուկ բարձրացրին։ «Թուրք հրամանատարը դժգոհություն է հայտնել, որ ռուսները սահմանը կանոնավոր չեն պահում, որ 600 ֆիդայիներ անցել են, ահագին կորուստ ու ավերածություն առաջացրել։ 400 մարդ խուժանից ու զինվորներից է ընկել, սպանվել է մի հազարապետ, մի կայմակամ, 3 սպա և այլն»։ Թուրքերը չափազանցում էին և դրա իմաստը նույնն էր՝ հասկացնել տալ, որ ցարական իշխանությունները իրենց հանդուրժողականությամբ գործնականում աջակցում են հայկական շարժումներին։ Դա կեղծիք էր, որովհետև այդ իշխանությունների վարքագծում հանդուրժողականության հետք անգամ չկար։

«Դժոխք» խումբը Կայծակի՝ Վաղարշակ Բաղդասարյանի գլխավորությամբ, 29 հոգով, հունիսի 7-ին անցնում է սահմանը՝ Սասուն գնալու համար, բայց թուրք սահմանապահների կողմից նկատվում է Զիվինի բարձունքներում, շրջապատվում 4000 զինվորների ու քրդերի կողմից։ Չնայած հերոսական դիմադրությանը, հայերից քչերն են փրկվում։

Նիկոլ Դումանի ղեկավարությամբ Սալմաստից մի խումբ 1904 թ. հունիսի վերջին մտավ Թուրքիա, բայց սահմանի վրա նրանց դիմավորեց հրացանային համազարկը, որովհետև թուրքերին նախապես հայտնել էին այդ խմբի գալու մասին։ Հայերից երկու հոգի զոհվեցին, իսկ մյուսները ետ դարձան։

Դեպի Սասուն մեկնածներից էր «Արարատյան» անունը կրող խումբը, (60 հոգի), որի մեջ էր նաև Մհեր Մանուկյանը։ Նա Տարոնի Ցրոնք գյուղից էր, հայրուկ, Ալիբենանցի Լևոնի խմբից։ 1894 թվին մեկնել էր Կովկաս, մասնակցել Գոլիցինի վրա կատարված ահաբեկչությանը և անցել Պարսկաստան։ Այստեղ մտել էր «Արարատյան» խմբի մեջ՝ Սասուն գնալու և 1904 թ. կռիվներին մասնակցելու համար։

Սակայն «Արարատյան» խմբին չի հաջողվում Սասուն հասնել, որովհետև դեռ սահմանը չանցած, քայքայվում ու ցրվում է։ Մհերը գնում է Թավրիզ, որտեղ որոշ ժամանակ անց զոհվում է։

Կարելի է նաև այլ խմբերի ու անձանց թվել, որոնք, թողնելով իրենց ընտանիքն ու հարազատներին, ճամփա ելան Սասունում մարտիրոսանալու համար։ Նրանց մեծ մասը նահատակվեց ճանապարհին, քչերին հաջողվեց տեղ հասնել և մաքառել հանուն սասունցի հայի փրկության։

Վանում անգլիացի փոխհյուպատոս Թիրլի 1903 թ. հոկտեմբերի 27-ի տեղեկագրում կարդում ենք. «Երբ Բուլանըխ էի, զինվորական հրամանատար Ֆերիզ Ահմեդ փաշան ինձ ասաց, թե Քեոսե Դալի արևմտյան կողմից սահմանն անցնող զինյալ հեղափոխականների մեծ մասին հաջողվել է թուրքական զորքերի միջից ճեղքել անցնել, և մտադիր է Մանազկերտից Սասուն անցնել՝ միանալու այդտեղի հեղափոխականներին, որոնք թուրքերի կարծիքով, մեծ թիվ են կազմում... Բասենի արշավախմբերից ձերբակալվածները, ամենքն էլ ռուսահայ, խոստովանում են, թե իրենց նպատակն էր Սասուն գնալ, և թե՝ ուրիշ խմբեր էլ պիտի գան»[101]։

Անգլիացի դիվանագետը հաճույքով հավատում է թուրքա-

կան պաշտոնական շրջանների ներկայացրած մտքերին ու թելերին։ Խոսքը սիզբունքային խնդրի մասին է։ Սուլթանական պրոպագանդան համառորեն այն միաքն էր զարգացնում, թե կայսրությունում բնակվող հայերի նկատմամբ Փաղիշահը այնքան հոգատար էր, և այդ հպատակները նրան այնքան հավատարիմ էին, որ իշխանությունների ու արևմտահայության միջև հակասություն, այն էլ՝ զինված պայքար, լինել չէր կարող։ Եվ հայկական շարժումները ոչ թե ներքին, այլ դրսից ներմուծվող երևույթ էին, որոնք ղեկավարվում և իրականացվում էին «դրսեցիների» կողմից։ Հետևաբար, իշխանությունները ճնշում կամ ոչնչացնում էին ոչ թե օսմանյան հպատակներին, այլ կայսրության ներքին գործերին դրսից միջամտողներին։

Բացարձակ կեղծիք է։ Վերևում արդեն ասվեց, որ սասունցիների շարքերում դրսից կռվողների թիվը 30—35-ից չէր անցնում, չհաշված տարոնցիներին։ Փոքր էր նաև կայսրության մյուս շրջաններից եկած հայերի թիվը։ Գոյամարտի նախօրյակին ակնհայտ դարձավ, որ գործնականում Սասունը միայնակ է՝ կանգնած տասնյակ հազարավոր քրդերի ու թուրքական կանոնավոր բանակի առաջ։ Սասունի շարժման մի քանի ղեկավարներ, ստեղծված վիճակից անհանգստացած, դիմեցին մերձակա շրջաններին՝ օգնական ուժեր ստանալու համար։ Հայդուկները մասնավորապես մեծ հույսեր էին կապում Վասպուրականի և լեռնային շրջաններում ինքնապաշտպանական կռիվների ծավալման և Վանի միջոցով զենք ու զինամթերք ստանալու հետ։

Վահան Փափազյանը գրում է. «Անդրանիկը պահանջում է, որ Վասպուրականը լեռնային շրջաններում արձագանքի իրենց շարժումներին»[102]։

Սակայն Վասպուրականի լեռները լուռ մնացին, իսկ Վանից այդպես էլ զենք ու զինամթերք չստացվեց։ Դրա փոխարեն ստացվեց Վ. Փափազյանի պատասխանը. «Վասպուրականի մեր զինապահեստը շատ աղքատ է» սասունցիներին օգնելու համար[103]։

1904 թվականի փետրվարի 6-ին սասունցիների անունից Հրայրը դիմեց բոլոր հայերին։ «Սասունի վիճակն անելանելի է, հնարավոր է, որ այս նամակը վերջինն է։ Սասունցիները մարտի են շտապում, որպեսզի վերջ դնեն դժոխային տանջանքներին... Պատերազմը սկսված է, և դրա համար էլ պետք է հավաքել բոլոր ուժերը և թույլ չտալ թշնամուն հաղթելու...»[104]։

Օգնության խնդրանքով մարդիկ ուղարկվեցին նաև մի շարք քուրդ ցեղապետների մոտ։ Սակայն այդ առաքելությունների արդյունքները մեծ չէին։ Իսկ Արճեշում Ջեվդեթը բռնեց քրդերի շրջանում աշխատանք տանող Պողոս և Պետրոս եղբայրներին։ «Նրանց պայտեցին... և մերկացնելով՝ կապեցին սյունին և ոջիլներով լցված տոպրակը նրանց գլխին հագցրին... կապեցին ձիու պոչից... վազեցրին ու այդպես էլ մեռցրին»[105]։

Վ. Փափազյանը հարկադրված էր խոստովանել. «Սասունը մնաց անհույս՝ դրսից որևէ օգնություն ստանալու հարցում։ Ոչ մի խումբ չկարողացավ դրսից թափանցել և իրական օգնություն ցույց տալ[106]։

Վիճակն այդպիսին էր, իսկ թուրքերը անընդհատ նորանոր ուժեր էին շարժում Սասունի վրա։

ՍԿՍՎԵՑ...

Ահագնացող վտանգի առաջ սասունցիներին օգնության ձեռք չմեկնեցին նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրած կառավարությունները։ Սասունցիների օգնության խնդրանքին էրզրումում Ռուսաստանի հյուպատոսը պատասխանեց. «Հայերը առայժմ պետք է հանգիստ մնան, միայն Ռուսիան է, որ կարող է հայկական խնդրին ցանկալի լուծում տալ, և որովհետև Ռուսիան այժմ զբաղված է ծայրագույն Արևելքում, իհարկե, չի կարող միջամտել Թուրքիայի գործերին և հայերը ավելորդ տեղը ջարդվում են»[107]։

Բ. Դուռը լավ էր հասկանում, որ հայերը մեկուսացված վիճակում էին և որոշեց գործել արագ, առանց ժամանակ կորցնելու։ Դրա համար էլ որոշվեց փոխել կոտորածների նախապես մշակված ծրագիրը, չսպասել գարնանը և սկսել մարտական անջատ գործողություններ, որոնք խնդիր ունեին հյուծելու հայերին։ Դա հնարավորություն կտար գարնանը, առանց լուրջ դժվարությունների, լուծել լեռնաշխարհի հայության հարցը։

Սասունը հարկադրված էր մահու և կենաց կռիվ մղել հղոր թշնամու դեմ։

«Կռվից խուսափելու ոչ մի ելք չկար, նախահարձակը թուրքական զորքն էր։ Սասունցիները, կամա թե ակամա, պետք է ընդունեին այդ մարտը, նրանք պետք է զենքով պաշտպանեին

իրենց գոյությունը՝ դիմելով ամեն տեսակի զոհաբերություններ»,— վկայում են ժամանակակիցները։

Իսկ Սասունում այդ տարի ձմեռը ձյունաշատ էր ու խիստ։ 1904 թվի փետրվարի 4-ին Սասունից գրում էին. «Ձմեռը դաժան է, սառնամանիքները և ձյունահյուսերը անտանելի են, ժողովուրդը բոբիկ է և տկլոր, իսկ պատերազմը՝ անհավասար։ Ի՞նչ կլինի մեզ հետ վաղը և ի՞նչ կլինի մեր դրությունը, չգիտենք»։

Սակայն սասունցիները չվհատվեցին։ 1904 թ. մարտի 21-ին Սասունից ստացված մի նամակում կարդում ենք. «... Սասունի ազատ հայերը պատրաստ են առանց վախենալու, բաց կրծքով կանգնել ընդդեմ սուլթանի կողմից պարտադրված դաժան կրոնի։ Այդ պատճառով թախանձագին խնդրում ենք մեր եղբայրներին չհրաժարվել խեղճ սասունցիներին օգնելուց...»։

Ստեղծված վիճակը քննելու և գործողությունների ծրագիրը մշակելու համար Գելիեգուզանի Ռշկներ կոչված թաղում հրավիրվում է շարժման ղեկավարների ժողով, որին մասնակցում են Անդրանիկը, Հրայրը, Գևորգը, Վահանը, Մուրադը, Սմբատը, Կոտոյի Հաճին, Ավոն, Սեպուհը, Միքայելը (Շենիկից), Քյաթիբ Մանուկը (Սեմալից), Քյաթիբ և Ռես Ավեները (Գելիեգուզանից), Սպաղանաց Մակարը, Տալվորիկից՝ Համզեն, Թաթարը և ուրիշներ։ Գյուղերի ներկայացուցիչները ժողովականներին ներկայացրին իրենց գյուղերի, նրանց մարտական ջոկատների, ռազմամթերքի, սննդամթերքի վիճակը, գյուղացիների տրամադրությունները։ Ժողովը գտավ, որ յուրաքանչյուր գյուղի պաշտպանությունն առաջին հերթին նրա բնակիչների, մարտական ջոկատների պարտականությունն է։ Անհրաժեշտ համարվեց զինել հետապնդումների հետևանքով գյուղերից փախած երիտասարդներին և ըստ ամենայնի օգտագործել նրանց ուժերը։ Զենքի հայթայթումը համարվեց գլխավոր խնդիր[108]։

Ժողովը որոշեց նաև պատերազմական գործողությունների ղեկավարների, այսինքն՝ հրամանատարական կազմի հարցը։ Ընդհանուր հրամանատար ընտրվեց Անդրանիկը։ Նա նաև պետք է ղեկավարեր արևելյան Շատախի ճակատը, Հրայրը՝ հյուսիսային ճակատը, Գևորգը՝ հարավային և հարավ-արևմտյան ճակատը (Իշխանաձոր—Տալվորիկ), Կոտոյի Հաճին՝ Չայի ճակատը։ Այսինքն, ինչպես նշում է ժամանակակիցը, այդ «ժողովում Գեվորգը ընտրվեց զինվորական խորհրդի անդամ և զինվորական երկրորդ հրամանատար»[109]։

Ժողովի ավարտին Անդրանիկը ճառ է ասում. «Կառավարությունը մտադիր է վերջնականապես դուրս հանել մեզ մեր սրբազան հայրենիքից, և թերևս մենք չկարողանանք դիմանալ կենտրոնական կառավարության թվով գերակշիռ զորքերին և ստիպված լինենք նահանջել և թերևս դժբախտություն ունենանք մարտի դաշտում ձգելու մեր ամենաթանկագին ընկերներից մի քանիսին, բայց վստահ եղեք, որ դրանով կառավարությունը ավելի կտարածի հեղափոխության սերմերը։ Հանուն մեր նահատակների, հանուն մեր կորած սուրբ ընկերների, մենք կաշխատենք չվհատվել և կռվել մինչև մեր արյան վերջին կաթիլը»[110]։

Ժողովը որոշում է «կռիվ տալ՝ ճակատագրական, վերջին անհավասար մարտնչումների ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքից»։

Ինքնապաշտպանական աշխատանքները կազմակերպելու համար ժողովի մասնակիցները մեկնում են Տարոնի ու Սասունի գյուղերը։ Հրայրը կենտրոնացնում էր կազմակերպչական աշխատանքները, Սմբատը կազմակերպում էր պարենամթերքի հայթայթումն ու տեղափոխումը լեռնային թաքստոցները։ Փոխադրությունների գործի վերահսկողությունը հանձնված էր Զաուշին։ Նրան հաջողվում է քրդերից ձեռք բերել մեծ քանակությամբ կապար։ Սասունի բոլոր մուտքերի վրա մշտական հերթապահություն սահմանվեց։ Փայտե կամուրջներ էին պատրաստվում՝ հարկ եղած դեպքում օգտագործելու համար։ Անվտանգության նկատառումով ծայրամասային մի քանի գյուղեր դատարկվեցին, իսկ գյուղացիներին տեղափոխեցին Սասունի խորքերը։ Սահմանվեց գաղտնի հսկողություն թուրքական ռազմական և քաղաքացիական իշխանությունների գործունեության վրա՝ ժամանակին ու հավաստի տեղեկություններ ստանալու ու հանկարծակիի չգալու համար։ Մարդկանց մի ստվար խումբ դարձել էր գյուղերի, մարտական ջոկատների և ընդհանուր հրամանատարության միջև կապավոր։ Տալվորիկի զենքի արհեստանոցը այդ օրերին աշխատում էր օր ու գիշեր՝ զենքեր էր նորոգում, կապար թափում, երկաթ հալում, սուր ու դաշույն պատրաստում։

Այդ օրերին «Դեյլի տելեգրաֆը» տպագրեց Ավստրա-Հուն-

գարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Գոլոխովսկու ճառը, որտեղ կարդում ենք. «Չեմ ուզում- մարգարեանալ, բայց կան թուրքական հպատակներ, որոնք այլևս չպիտի հանդուրժեն ներկայիս թուրքական ռեժիմը, և շատ հավանական է, որ այնտեղ եղած ժողովուրդը կնախընտրի մեռնել, քան այդպիսի պայմաններում ապրել»[111]։

Սասունցիները իսկապես նախընտրեցին ոչ թե ստրուկի նման ապրելու, այլ մեռնելու ուղին։ «Թուրքական հարձակումից առաջ Անդրանիկի մոտ ուղարկվեցին եվրոպական պետությունների ներկայացուցիչներ, որոնք սկսեցին համոզել նրան՝ առանց կռվելու թողնել Սասունը»[112]։

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ձոր...
Հայ ժողովրդի տեր ու պաշտպան Անդրանիկ,
Հայությունը նրա անունը պիտի հիշեր հավիտյան,
Ու թուրքը պիտի սարսափեր նրանից շատ երկար տարիներ։

Օտար դիվանագետները ամեն կերպ աշխատում էին ցույց տալ, որ իրենք գործում էին հօգուտ հայդուկների, հօգուտ հայ ժողովրդի արդար դատի։ Ահա թե ինչ է գրում Էրզրումի ռուսական հյուպատոսը. «Ընդհանուր առմամբ վիճակը շատ լուրջ է։ Անգլիական հյուպատոսները սերտ կապերի մեջ են Խարբերդում, Բիթլիսում և Էրզրումում գտնվող ֆիդայիների հետ։ Իր եռանդուն գործունեությամբ աչքի է ընկնում բրիտանական հյուպատոսը, որը, չնայած ձմեռային պայմաններին, մոտ ժամանակներս գնացել է Սասուն, որտեղ, ինչպես հաղորդում են, հեղափոխական շարժումների ղեկավարներից մեկի՝ Անդրանիկի հետ այցելել է բոլոր ապստամբական պոստերը»[113]։

Դա եվրոպական հյուպատոսների Սասուն այցելելու առաջին դեպքը չէր։ Նման այցելություններ եղան նաև 1903 թվին, երբ նրանք այստեղ եկան Կ. Պոլսի խնդրանքով և հայտնեցին «սուլթանի վճռականությունը՝ նրանց (հայդուկներին) կամ սպանել և կամ դուրս քշել կայսրության սահմաններից»։ Օտար դիվանագետները հայդուկներից պահանջում էին հեռանալ Սասունից։ Բնական էր, որ Անդրանիկը մերժեց այդ առաջարկը, որովհետև Սասունից հայդուկներին հանել, նշանակում էր սասունցիներին անպաշտպան թողնել յաթաղանի առաջ, թուրքական զորքերին ու քրդերին հնարավորություն տալ, առանց դիմադրության հանդիպելու, կոտորել ու թալանել։

Իսկ Սասունում մարտական գործողություններն արդեն սկսվել էին։ Իրադարձությունները ծավալվեցին հետևյալ կերպ.

Հեղինի կռիվը.— 1904 թ. հունվարի 10-ին Գելիեգուզանի Տավրներ գյուղ է գալիս մի գյուղացի և հայտնում, որ խիանքի մյուդիր Քյոռ Սլոն 15 հեծյալներով և իր աշիրեթով հարձակվել է՝ Հեղին, Արտկոնք, Ընկուզնակ և Իշխանձոր գյուղերը թալանելու[114]։

Հեղինում Քյոռ Սլոն գյուղացիներին հայտարարում է. «Ձեր հացը չպիտի ուտեմ, եթե 40 ոսկի չհամրեք»։ Գյուղացին որտեղի՞ց գտներ այդքան գումար։ Սկսվում է թալանը, բացի տնային գույքից հափշտակում են նաև հայերի անասունները։

Դեռ 1903 թ. աշնանը «Գևորգը իջավ Դաշտ՝ հրահանգներ տալու, կարգադրություններ կատարելու և Դաշտի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու։ Նոր էր սար բարձրացել, երբ լուր հասավ, թե Տալվորիկը վտանգի մեջ է։ Անմիջապես շտապեց դեպի սիրելի Տալվորիկ, որի պաշտպանության համար այնքան անգամ կռվել է և իր կյանքի գնով օգնության հասել»։ Բարեբախտաբար, որևէ լուրջ դեպք տեղի չունեցավ և նա թողեց Տալվորիկը ու գնաց ձմեռը Սասունի հարավ-արևմտյան կողմերի գյուղերի՝ Իշխանձորի, Արտկոնքի, Ընկուզնակի և Հեղինի պաշտպանությունը ապահովելու քրդերի հարձակումներից,— վկայում են ժամանակակիցները։

Երբ Գևորգի խումբը Իշխանձոր հասավ, հանդիպեց Հեղինի Իշխան Վարդանին։ Քյոռ Սլոն միայն նրանից հափշտակել էր 60 ոչխար, երեք ձի և 20 ոսկի։

Հայդուկները շարժվում են Հեղին՝ ավազակին պատժելու։ Այդ լսելով՝ Քյոռ Սլոն փախչում է Փասուր և իշխանություններից լրացուցիչ ուժեր խնդրում, որովհետև «այդ ժամանակ Տիգրանակերտից Փասուր էր եկել 400 հոգուց բաղկացած մի գունդ»։

Գևորգը մի գրություն է ուղարկում Սլոյին ու պահանջում հայերին թալանած անասունները, գույքն ու դրամը վերադարձնել։ Սլոն հրաժարվում է և օգնության կանչում նաև բագրանցի քրդերին։ Միաժամանակ նամակ է գրում Գևորգին թե «ինքը նպատակ չունի հայերի հետ թշնամանալու, այլ կառավարությունն է, որ այդ անել է տալիս»։

Մի քանի օր հետո նա հարձակվում է Ակրոնք գյուղի վրա, սպանում 9 հայի և առևանդում յոթ տարեկան մի աղջնակի։ Իշխանություններն այդ գազանությունների համար փոխանակ

հանցագործության հեղինակին բանտարկելու, բանտ են գցում ութ անմեղ հայերի։ Նոր ուժեր հավաքելով՝ Սլոն նորից հարձակվեց Հեղինի վրա։ Գևորգը իր խումբը բաժանեց չորս մասի, որոշեց նրանց դիրքերը և հանձնարարեց սպասել իր հրամանին։ Հունվարի 17-ին Սլոյի ուժերը բոլոր կողմերից շրջապատեցին Հեղինը։ «Առավոտյան թշնամու թնդանոթները կսկսեն որոտալ... Ցյունաշատ ու սառած դիրքերից, Գևորգի ազդանշանով, ֆիդայու մոսինը իր բերանը թշնամիներին է ուղղում։ Դիմացի ձյունապատ սպիտակ տարածությունը սև էր երևում թշնամու անհամար շարքերից։ Զորքերը անընդհատ առաջանում էին, սվինների անտառը փայլում էր, և հրացանները սկսում են միահամուռ կրակել։ Քրդերի բազմությունը ոչ կարգ էր ճանաչում և ոչ կանոն, սրերը մերկացրած, հարա-հուրա տալով Սլոն առաջնորդում էր բանակին»[115]։ Հայերը կրակ բացեցին գրոհող թշնամու վրա, որը ուշադրություն չդարձնելով իր կորուստներին, թնդանոթների կրակի պաշտպանությամբ, համառորեն առաջ էր շարժվում։ Ի վերջո, համոզվելով, որ գյուղը գրավել չի կարող, Սլոն իր ուժերը ետ քաշեց ու հեռացավ Խուլբի ուղղությամբ։

Թուրք-քրդական ուժերի հետ Գևորգը խոշոր բախում ունեցավ նաև Սպիտակ լեռան շրջանում։ Նրան հաջողվեց դիրքեր գրավել ռնդանքի վրա իշխող կետերում և ետ շպրտել թվական կազմով հայդուկներին տասնյակ անգամ գերազանցող թշնամուն։

Նկատի ունենալով, որ նոր հարձակումներից այդ շրջանի պաշտպանությունը դժվար խնդիր է, Գևորգը Խիանքի բոլոր հայկական գյուղերը դատարկեց։ Մեծ թվով խիանքցիներ՝ ծեր, երեխա, հայդուկների պաշտպանությամբ հեռացան դեպի Իշխանձոր։ Գևորգը ժողովրդի տեղափոխության գործը հանձնարարում է Սայտո Պողոսի չոկատին, իսկ ինքը մեկնում Ընկուզնակ։ Ժողովրդի տեղափոխությունն ավարտելով՝ Սայտո Պողոսը գնում է Ընկուզնակ՝ միանալու Գևորգի ուժերին։ Հարավ-արևմուտքում հայերի պաշտպանության գիծը անցնում էր Իշխանձոր—Գերբին—Սպիտակ սարով։

Հունանի կռիվը.— Խաղաղ չէր նաև Սասունի հյուսիսը։ Այդ նույն օրերին, յոթ հոգուց կազմված հայդուկային մի խումբ Հրայրի և Առաքելի ղեկավարությամբ իջնում է Դաշտ՝ նպատակ ունենալով Ցարոնի գյուղերում գործող ինքնապաշտպանական խմբերին հրահանգավորել և պաշտպանությունը ղեկավարող մարմին ստեղծել։ Իշխանությունները այդ մասին իմանալով, զորքեր են ուղարկում նրանց ոչնչացնելու։ Հրայրը մի հայդուկի հետ կարողանում է խուսափել հետապնդումից, իսկ Առաքելը, չորս հայդուկի ուղեկցությամբ, գնում է Մուշ քաղաքից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հունան գյուղը։ Նրանք տեղավորվում են երկու տներում և մի քանի օր մնում Հունանում։ Փետրվարի 5-ին հարկահավաք ոստիկանները Հունան են գալիս և խժդժություններ կատարում։ Զայրացած գյուղացիները հարձակվում են ու գյուղից դուրս քշում նրանց։ Ոստիկանները գնում են Մուշ և իշխանություններին հայտնում, թե Հունանում հայդուկներ կան։ Նույն օրը՝ փետրվարի 5-ին, երեկոյան ժամը 18.30-ին, 12—14 հեծյալ ոստիկաններ զինվորների ու թուրք խուժանի հետ ճանում են գյուղ և շրջապատում այն տունը, որտեղ գտնվում էին հայդուկներ Գրիգորը և Ջնդոն։ Միաժամանակ նրանք մարդ են ուղարկում մերձակա Նորաշեն գյուղը, որտեղ 200-ից ավելի զինվոր կար, և օգնություն խնդրում։ Օգնության համար լուր է ուղարկվում նաև Մուշ։ Այս առնչությամբ «Դեյլի տելեգրաֆը» գրեց. «Փետրվարի 5-ին, ուրբաթ օրը կեսօրին, 15 ոստիկանների մի չոկատ մտնում է Հունան գյուղը»։ Լրտեսը թուրքերին հայտնել էր, որ գյուղի տներից մեկում երեք հայդուկներ կան։ Ոստիկանները շրջապատեցին այդ տունը։ Սկսվեց փոխադարձ հրաձգություն։ Թիկունքից հայտնվեցին նաև գյուղացիները և ոստիկաններին մի կերպ հաջողվեց գյուղի գետակի մյուսն ափն անցնել[116]։

Երբ մշուշը թանձրանում է Դաշտի վրա և մութը կամաց-կամաց խտանում է, քաջերը նստում են զորքերից խլած ձիերը և հեռանում գյուղից։ Բայց ձյունը շատ էր, և ձիերը դժվարանում էին առաջ ընթանալ։ Հայդուկները ձիերի պոչերը կտրում են և նրանց բաց թողնում։ Պոչատ ձիերը Մուշ հասան այն ժամանակ, երբ թուրքական մի զորամաս քաղաքից մեկնում էր Հունան։ Հունանի բնակչության մեծ մասը ստիպված էր դիշերը լքել գյուղը, սակայն ուժեղ սառնամանիքի պատճառով շատերը ցրտահարվեցին, երեք երեխա ցրտից մեռան։ Թուրքերը երկար ժամանակ չէին համարձակվում գյուղ մտնել։ Նրանք միայն գիշերվա ժամը 3—4-ին համարձակվեցին այդ անել, երբ համոզվեցին, որ այլևս զինակիր հայ չկա իրենց դեմ։ Գյուղը լրիվ թալանվում է։ «Սպանությունները,— գրել է ֆրանսիացի մի հեղինակ,— կատարվում էին բծախնդիր դաժանությամբ։ Ինչ վե-

բաբերում է կանանց, նրանց առնանգում էին անկախ տարիքից»[117]։

Նույն բանն են հաստատում նաև եվրոպական լրագրերը։ «Փետրվարի 5-ին, առավոտյան ժամը 4-ին, մահմեդականների զինված ամբոխը, կանոնավոր զորքի աջակցությամբ, ներխուժեց Հունան գյուղը։ 120 տուն թալանվեց և հրդեհվեց։ Փոքր աղջիկներին և կանանց, այդ թվում ծննդաբերողներին փախցրին, բազմաթիվ փոքր երեխաների կենդանի թաղեցին ձյան մեջ կամ գցեցին ջրհորները»[118]։

Հունանի 400—500 բնակիչներ ձմռան սառնամանիքներին մնացին անօթևան և առանց սնունդի։

Հունանի կռիվն ու թալանը ցնցեցին ողջ Սասունը։

Արտասահմանում դրանց արձագանքը սուլթանին վախեցրեց։ Եվ ահա, երբ Մշո առաջնորդ Գնել վարդապետ Գալեմքերյանը պատրիարքին գրեց. «Հունան գյուղում խփված ժողովուրդը խեղճ ու անպաշտպան է...» և առաջարկում էր «կայսեր գթությունը հայցեցեք» ու, երբ պատրիարքը այդ մասին սուլթանին հայտնեց, վերջինս կատաղության նոպա ունեցավ և հայտարարեց, որ Մշո առաջնորդը ստում է։ Ու սկսվեց մի ցինիկ խաղ։ Պալատը Մուշի կառավարչին հարցում արեց Հունանի դեպքերի մասին։ Ստացվեց պատասխան, որ Հունանում ոչ մի դեպք տեղի չի ունեցել։ Սուլթանը պատրիարք Օրմանյանին պալատ է կանչում ու ասում, թե Գնել վարդապետը մթնոլորտը սրելու նպատակով ստել է և պահանջում է նրան հեռացնել առաջնորդությունից։ Պատրիարքը համարձակություն է ունենում սուլթանի հետ չհամաձայնելու։ Նա պնդում է, որ Գնելի տեղեկությունը ճիշտ է։ Սուլթանը ընկրկում է փաստերի առջև և պատրիարքին հանձնարարում նամակ ուղարկել ու հայերին հորդորել խաղաղ մնալ, հեղափոխականներին շաչակցել, իսկ ինքը տեղական իշխանություններին կհրամայի վերջ տալ բռնություններին։ Օրմանյանն ուղարկեց 300 շրջաբերական և ժողովրդին հորդորեց խաղաղ մնալ և «ըմբոստներին չլսել»։ Իսկ սուլթանն, ինչպես միշտ, ստում էր։ Նա իշխանություններին հանձնարարեց հայերի նկատմամբ հալածանքներն ուժեղացնել։ Մարտի 24-ին բանտարկվեցին Մշո առաջնորդն ու «Ազգային ժողովի 12 անդամները՝ Հունան գյուղի ավերման առթիվ սուլթանին գրած բողոքագրի պատճառով»[119]։

Հունանում «իր գործն ավարտելուց հետո» Թուրք խուժանն

ու զորքը բաժանվում են խմբերի ու պատրաստվում հարձակվելու Դաշտի մյուս հայաբնակ գյուղերի վրա։

Ծափի դավադրությունը.— Երբ Հունանի կռվի լուրը Անդրանիկին հասավ, նա շարժվեց Կոփ։ Այստեղ Անդրանիկը «իմանում է, որ մի քանի տափքցի քրդեր, որոնց գյուղերում գիշերել էր նախորդ օրը, մտադրված են եղել սպանել իրեն»։ Նա անմիջապես վերադառնում է Տափք և հաշվեհարդար տեսնում դավադրության մասնակիցների հետ։ Գյուղը դատարկվում է։

Անդրանիկը գիշերը լուր է ստանում, որ աշիրեթները հավաքվել են Խութում և «Սասունի վրա հարձակման են պատրաստվում, որոնց պիտի միանար նաև Բաղեշի զորքը»։

Թե՛ Հունանի և թե՛ Տափքի դեպքերը լայն արձագանք ունեցան։ Եվրոպական թերթերի վկայությամբ՝ «խուճապը տարածվեց մինչև Մուշ, որտեղ խանութները փակ են մնում արդեն վեց օր։ Կուսակալությունը կարգադրեց 4-րդ բանակային կորպուսի մի դիվիզիա ուղարկել Սասունի լեռները բարձրացած հայերի դեմ»[120]։ Փետրվարի սկզբներին «Տիգրանակերտից Սասուն է գալիս մի գունդ լրացուցիչ զորք»։ Գևորգ Չաուշը նամակ է գրում Անդրանիկին և օգնություն խնդրում։ Սմբատի խումբը օգնության է շտապում, սակայն Ընկուզնակում երկար չի մնում և անցնում է Տալվորիկ, որն անընդհատ հարձակման էր ենթարկվում Փսանքի քրդերի կողմից։ Իսկ Գևորգը լուր ստանալով, որ զորքեր են եկել նաև Արտկոնք, Ընկուզնակի պաշտպանությունը հանձնարարում է Մխիթարին, իսկ ինքը գնում է այդ զորքերի առաջխաղացումը կասեցնելու։

Թուրք աշխատավորության և զորքերի մի մասի համար Սասունի վրա հարձակումը անհասկանալի էր։

1904 թ. հունվարի 3-ին Վանից գրում են. «Զինվորները դասալքում են, Սասուն բարձրանալ չեն ուզում։ Տաճիկ ժողովուրդն ու զորքը գրգռված են»[121]։ Դեռ ավելին. առանձին թուրք զինվորներ փորձում են միանալ հայերին։ Մարտի 8-ին Սասունից գրում են. «Շատ թուրք զինվորներ ցանկություն ունեն մեզ միանալու։ Արդեն մի չաուշ և երեք զինվոր հասել են մեզ մոտ։ Ուրիշներ էլ պիտի գան»։

Պատրաստվելով Սասունի վրա հարձակվել, սուլթանը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց Եվրոպայի հասարակական կարծիքը շահելու համար։ Նա ամենուրեք լուրեր տարածեց, թե

«դրսից եկած» մեծաքանակ ուժերն ու հայդուկները պատրաստվում են ապստամբել և Թուրքերին ու քրդերին կոտորել։ Դժբախտաբար, այս սուտը եվրոպական որոշ մայրաքաղաքներում ու մամուլի օրգանների կողմից ընկալվում է որպես ճշմարտություն։ Սասունում սկսված իրադարձությունները անգլիական «Սպիտակ գրքում» ներկայացված են հետևյալ կերպ.

«1904 Թ. փետրվարի 23-ին Կ. Պոլսում անգլիական դեսպանը՝ Օ'Քոնորը, հեռագրում է մինիստր Լանզդոուին, որ Մուշի մոտերքում հարկահանների ու հայդուկների միջև ընդհարում է տեղի ունեցել և որ քրդերը տրամադրված են դիմելու ծայրահեղ միջոցների։ Իսկ Սասունում 1000 հայդուկ կա, որոնք, ըստ մեծ վեզիրի, Անդրանիկի ղեկավարությամբ իջել են Սասունից ու գրավել մի մահմեդական գյուղ[122]:

Մարտի 1-ին դեսպանը հեռագրում է Լանզդոուին. «Մեծ վեզիրի հայտնած պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ հայ հեղափոխականները, թվով մի քանի հարյուր, Անդրանիկի առաջնորդությամբ փորձում են գրգռել մահմեդական ազգաբնակչությանը՝ նրանց դուրս քշելով հայրենի գյուղերից և խլելով զենքերը։ 40 հոգուց բաղկացած մի խումբ Տալվորիկից մտել է Ինիգիան գյուղը, սպանել ու ծայրատել է երեք մահմեդականների, փախցրել է երկու կին և շատ ուրիշ վայրագություններ է կատարել։ Անդրանիկն իր զորքով հաստատվել է Տափք գյուղում, որտեղից Թուրք մյուդիրը և ժանդարմերիայի սպան փախել են Մուշ»։ Մարտի 12-ին Օ'Քոնորը հայտնում է, որ ինքը սուլթանին առաջարկել է բանակցություններ սկսել Սասունի և Մուշի երևելի հայերի հետ և ընդհանուր ներում շնորհել՝ թույլ տալով հայդուկների ղեկավարներին հեռանալու երկրից»[123]։

Մարտի 16-ին նա կրկին է հեռագրում. «... Մոտ օրերս հայոց պատրիարքը կանչվել է պալատ։ Նրան հայտնել են, որ Մուշում ու Սասունում եղած 400 հեղափոխականներից միայն հիսունն են եկել Պարսկաստանից կամ Կովկասից, մնացածը տեղացիներ են։ Սուլթանը հրավիրել է պատրիարքին և նրան հանձնարարել հրահանգել Մուշի իր ստորադրյալներին՝ բանակցության մեջ մտնելու հեղափոխականների հետ և համոզելու, որ ցրվեն, վստահեցնելով, որ նրանց ներում պետք է շնորհվի»[124]։

Ինչպես ժողովուրդն է ասում՝ ստի պոչը կարճ է։ Ճշմարտությունը, ոչ միանգամից, բայց հասնում էր աշխարհին և պարզում Տարոնում ու Սասունում տիրող իրական վիճակը։

***

Տալավեի կռիվը.— Տեղի բատկանցի քրդերին հրահրում են հարձակվել Տալավե հայաբնակ փոքրիկ գյուղի վրա։ Մի քուրդ այդ մասին տեղեկացնում է հայերին, սրանք էլ Շենիկից ու Սեմալից օգնություն են հայցում։ Մուրադը, գոմերցի Իսոն և մոկունքցի Իսոն սեմալցիներից կազմված մի խմբով մարտի 27-ին գնում են, որպեսզի Տալավեի բնակիչներին իրենց ունեցվածքի հետ տեղափոխեն Սեմալ։ Բայց նրանք ուշանում են։ Քրդերը Տալավեն թալանում են, մի քանիսին գերի վերցնում, իսկ մնացած բնակչությանը ստիպում փակվել իրենց տներում[125]:

Օգնության եկած հայերին միայն երկու օր անց է հաջողվում Տալավեի բնակչությանը գյուղից դուրս բերել և վերադարձնել Գելիեգերման։

200 քուրդ որոշում են պատժել անհնազանդ հայերին։ Մարտի 30-ի վաղորդայնին կռիվը սկսվում է։ Այս կռվում հայերը արժանի դաս են տալիս քրդերին։ Հայերից զոհվում է մեկը, իսկ քրդերից՝ 35—40 հոգի[126]: Այս կռիվը Թուրքերի ու քրդերի շրջանում լուրջ հուզումներ առաջ բերեց։ Բատկանցի, հազրանցի, սուլուխցի և այլ աշիրեթներ խուռն բազմությամբ հավաքվում են Շենիկում։ Թուրքական կառավարությունը չարախնդորեն հանդիմանում է քրդերին. «Մի՞թե մենք ձեզ ասել ենք, որ 2—300 մարդով գնաք ֆիդայիների ու Սասնո վրա։ Սասունի դեմ պետք է գնալ մեծ ուժերով»։ Մշո կառավարությունը հազարից ավելի հեծյալ ոստիկաններ է տրամադրում, նրանց են միանում քուրդ ցեղապետները իրենց մարդիանցով։ «4000 զինվոր վեց թնդանոթով դեպի Շենիկ և Սեմալ գյուղերը գնացին։ Տիգրանակերտի կողմից էլ Հազրո գյուղաքաղաքցի Սնտին բեյը և Սիվանա Հաջի Ռաշիդ աղան եկան։ Սասնո և Խուլբի գավառները չորս կողմից պաշարվել են»։

1904 թվականի ապրիլի 9-ին Ռումաստանի զինվորական ներկայացուցիչ Սամոյլովը գաղտնի նամակ է գրում իր վերադասին. «Ըստ վստահելի աղբյուրների՝ փոքրասիական նահանգասին. «Ըստ վստահելի աղբյուրների՝ փոքրասիական նահանգների հայ ազգաբնակչությունը ըստ ամենայնի զինված է։ Հա-

յերը նպատակ ունեն ըմբոստանալ Թուրք կառավարության դեմ սույն թվի գարնանը։ Խռովության կենտրոնը, որտեղ ներկայումս կենտրոնացած են 17 հազար զինված հայեր, համարվում է Սասունը, որը իր աշխարհագրական դիրքով դժվարամատույց է։ Թուրքական կառավարությունը վճռել է ոչնչացնել Սասունում հավաքված հայերին, եթե կուսակցությունների պարագլուխների հետ բանակցությունները արդյունք չտան»[127]։

Ամենայն հավանականությամբ, ռուսական գործակալը օգտվել է Թուրքական աղբյուրներից։ Ծիծաղելի է նամակում նշված այն փաստը, թե Սասունում 17 հազար զինված հայ կա, այն դեպքում, երբ այդ երկրամասի չափահաս հայ բնակչության թիվը 17 հազարի չէր հասնում։ Ցավալիորեն զարմացնում է ռուս գործակալի այն պնդումը, ըստ որի հայերն են ուզում կոտորել Թուրք և քուրդ ազգաբնակչությանը։ Դժվար չէ կռահել նամակագրի «թյուրիմացության» աղբյուրը։ Այնուամենայնիվ, նամակագիրը ևս գտնում է, որ «Թուրքական կառավարությունը վճռել է ոչնչացնել Սասունում հավաքված հայերին», որ Թուրքական բանակի գործողությունների սկիզբը ծրագրված էր ապրիլ ամսին։

***

«Սասունին վտանգ էր սպառնում բոլոր կողմերից։ Գևորգի հետախույզները լուր են բերում, որ Տիգրանակերտից նոր զորքեր են գալիս։ Տալվորիկից էլ Մակարն էր հայտնում, որ Հազոյի զորքերն ու աշիրեթներն են մոտենում։ ... Խիանքցի քրդերն ու բագրանցիներն էլ իրար մոտ են հավաքվում և սպառնում են հարձակվել Իշխանձորի ու Տալվորիկի վրա»։ Նկատի ունենալով, որ հյուսիսային հատվածներում խիստ ձմռան պատճառով մարտական գործողությունները ժամանակավորապես դադարել են, Գևորգը այդ մասերից լրացուցիչ ուժեր է բերում և թշնամուն ետ շպրտում։ Մեկը մյուսի հետևից դատարկվում էին Սասունի հարավային ու հարավ-արևմտյան շրջանների գյուղերը։ Նրանց բնակչությունը քաշվում էր լեռնաշխարհի խորքերը։ Ապրիլի 5-ին դատարկվեցին Ընկուզնակ և Արծկունք, հաջորդ օրը՝ Քորախու, Գերմավ, Զեյնեկցիք և մյուս գյուղերը, նրանց բնակիչները տեղափոխվեցին Տալվորիկ և Տափք։ Հարավ-արևմտյան շրջանում Գևորգի արդյունավետ ու շրջահայաց գործողու-

թյունները Թուրքերին համոզեցին, որ առանց Սասունի վրա հյուսիսից հարձակվելու, հարավում և հարավ-արևմտյան ճակատում հաջողության հասնել հնարավոր չէ։ Թուրքական հրամանատարությունը որոշեց սկսել ընդհանուր հարձակում։ Սասունցիների պաշտպանական գիծը հիմնական հենակետեր ուներ. հյուսիսում՝ Տափքը և Շենիկը, հարավում՝ Տալվորիկն ու Իշխանձորը, կենտրոնում՝ Գելիեգուզանը։

***

Սկսած 90-ական թվականների կեսերից հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես դաշնակցական կուսակցությունը, առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Տարոնում ծավալված ինքնապաշտպանական շարժումներին։ Սասուն ու Տարոն էին գալիս դաշնակցական գործիչներ, նրանց կողմից կազմակերպված մարտական խմբեր։ Հայդուկներին զենք էր մատակարարվում։ Դաշնակները Սասունում ծավալված շարժումները դիտում էին որպես համահայկական ազատագրական շարժման բաղկացուցիչ մաս։ Նրանց նպատակն էր Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում բարձրացնելով պայքարի դրոշ՝ հարկադրել մեծ պետություններին իրենց հովանավորության տակ առնելու հայկական դատը։ Դրա համար էլ նրանք ձգտում էին Արևմտյան Հայաստանում ծավալված շարժումների մակընթացություններն ու տեղատվությունները որոշել Թուրքերի նկատմամբ մեծ տերությունների դիվանագիտական ակտիվության աստիճանով կամ ելնելով հայկական այլ շրջաններում իրականացվող միջոցառումների շահերից։ Օսմանյան ճնշումների ու բռնատիրության դեմ պայքարի մեթոդների հարցում լուրջ սխալ էին թույլ տալիս հնչակյանները։

«Հնչակը» 1904 թ. մարտին գրեց. «Հեղափոխական գործը Թուրքահայաստանում ինքնապաշտպանության գործ չէ, մի գաղափար, որ կարծես դարձել է հայ միջակ հեղափոխականի համար մի տեսակ դավանանք, որ իր մեջ է կրում նրա հեղափոխականության ամբողջ այբուբենը։ Ո՛չ։ Հեղափոխականները պետք է իմանան, որ Թուրքահայաստանում հեղափոխական գործը հարձակողական մեթոդ է պահանջում։ Սա ապստամբական գործ է։ Սա չի սպասում, որ թշնամին գա հայ ժողովրդին կոտորելու, որպեսզի միայն այդ դեպքում ինքնապաշտպանու-

թյան դիմի. Սա չի ընդունում այն, որ փոքրիկ, ցիրուցան մարտական խմբակները, պարզամտությամբ իրենց երևակայելով զինվորական վաշտեր, դեսուդեն «հրոսակային» դիլետանտիզմով զբաղվեն»։

Նույն թերթը 1904 թ. հունիսի համարներից մեկում անդրադառնում է նաև կռվի տակտիկական հարցերին։ «Հայ հեղափոխականների գլխավոր ու հիմնական տակտիկան պետք է լինի «ընդհանուր ապստամբության նախապատրաստությունը» Թուրքահայաստանում, որոշակի նախագծով, կանոնավոր զինվորագրված ռազմական ուժով, որ հնարավոր է միայն կանոնավոր կազմակերպության և գործունեության որոշ ձևերի գոյության միջոցով։

... Դրանով իսկ մենք դեմ ենք ներկայումս եղած բոլոր մասնակի շարժումներին, որոնք առաջ անպայման ունեին իրենց կրթիչ ու նախապատրաստող հեղափոխական նշանակությունը, բայց որոնք ներկայումս այլևս երևան են գալիս կատարած ու ավարտած իրենց պատմական անհրաժեշտ դերը»։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ Սասունում ընդհանուր ապստամբության ժամանակ ինչպիսի «հարձակողական» մեթոդ էլ կիրառվեր, ինչպիսի «որոշակի նախագիծ և կանոնավոր զինվորագրված ռազմական ուժ» օգտագործվեր, գործը վերջանալու էր հայերի բնաջնջմամբ։ Սա այն դեպքն է, երբ ընդհանուր ռազմական հաղթանակն անհնար էր, և տվյալ պայմաններում հարցերի հարցը ոչ թե այդ հաղթանակն էր, այլ ինքնապաշտպանությունը, բնաջնջման դեմն առնելը։

1904 թ. ձմռանը, երբ թուրքական 4-րդ բանակը, 10 հազար զինվորներով, Մուշ քաղաքի ուղղությամբ պատրաստվում էր շարժվել Սասունի վրա, մի այլ բանակ Միջագետքից, Տիգրանակերտի վրայով, ճանապարհ էր բռնել դեպի Խուլբ ու Եիանք, երբ ոտքի էին հանվել քրդական բոլոր աշիրեթները, կուսակցական որոշ գործիչներ հայդուկային շարժման ղեկավարներից պահանջում էին ուժերը կենտրոնացնել Սասունում, հրաժարվել պարտիզանական պայքարից ու ճակատամարտ տալ թուրքական բանակների դեմ։ Պատճառաբանությունն այն էր, որ Կարինում ու Վասպուրականում ինքնապաշտպանական կռիվները դեռևս նախապատրաստական շրջանում էին։ Իսկ Սասունը, ըստ նրանց, միայն մի խնդիր ուներ՝ լուրջ վնաս հասցնել թուրքական բանակին և բարենպաստ պայմաններ ստեղծել այդ կռիվ-

ների համար։ Սասունում թուրքերին հասցվող հարվածի ուժը մեծացնելու նպատակով, նրանք Դաշտի գյուղերից ու մերձակա շրջաններից զգալի թվով զինված ջոկատներ տեղափոխեցին լեռնաշխարհ։

Հայդուկային շարժումն իր առաջ այլ խնդիր էր դնում։ Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ իրենց պայքարը նպատակ ունի թույլ չտալ թուրքերին բնաջնջելու Տարոնի ու Սասունի հայությանը։ Կյանքի փորձով նրանք գիտեին, որ հայության այդ հատվածի գոյատևումը հնարավոր է միայն դահճի դեմ զինված պայքարի միջոցով։ Պետք է զենքի ուժով սահմանափակել յաթաղանի ախորժակը, մինչև օգնություն կգա։ Նրանք նույն այդ կյանքի փորձով համոզվել էին, որ Արևմուտքի պետությունների վրա հույս դնելը միամիտ պատրանք է։

Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ կուսակցությունների սխալ քաղաքականությունն է պատճառը, որ այդ տարիներին Վասպուրականում ազատագրական պայքարի ուժեղ բռնկումներ չեղան։ Եթե Տարոնը օսմանյան կայսրության ներքին նահանգներից էր և ուղղակի կապ չուներ դրսի աշխարհի հետ և, հետևաբար, դրսից էական օգնություն չէր ստանում, ապա Վասպուրականը սահմանակից էր Պարսկաստանին և այդ երկրի վրայով ակտիվ կապի մեջ էր Ռուսաստանի հետ։ Վասպուրականում էր կենտրոնացվել դաշնակցական կուսակցության ղեկավար գործիչների մի ստվար խումբ։ Այստեղ հայկական ջոկատները անհամեմատ ավելի լավ էին զինված, քան Սասունում։

Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ հայդուկային ուժերը մի վայրում կենտրոնացնելը նշանակում էր հրաժարվել պարտիզանական կռիվների եղանակից և հարցականի տակ դնել ոչ միայն հայդուկների, այլև Սասունի բնակչության գոյությունը։ Նրանք վտանգավոր ու վնասակար էին համարում նաև Դաշտի գյուղերի ռազմական ուժերը Սասուն բարձրացնելը և գյուղերն անպաշտպան թողնելը։

Բայց դաշնակներն արդեն կազմակերպել էին Տարոնի զինված ուժերի տեղափոխությունը։

Մուշից գրում են. «Այսօր մեր քաղաքից բավական թվով հայ կամավորներ մեկնեցին դեպի կռվի վայր՝ Սասուն, իրենց զենքերով և պաշարներով»[128]։

Անդրանիկն ու Գևորգը վճռականորեն մերժում էին նաև ընդ-

հանուր ճակատամարտի գաղափարը։ Թշնամու բազմիցս գերակշիռ ուժերի դեմ ընդհանուր ճակատամարտում հաջողություն ակնկալելը գրեթե անհնար էր և նման ճակատամարտը Թուրքերի համար մեծ առավելություններ էր ստեղծում՝ իրենց ջարդարար ծրագրերն իրականացնելու համար։ Անդրանիկը գտնում էր, որ բոլոր միջոցներով պետք է խույս տալ Թշնամու խոշոր ուժերի հետ լուրջ բախումներից, պետք է օգտագործել Սասունի տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ պարտիզանական կռիվներով Թշնամուն առավել մեծ կորուստներ պատճառելու միջոցով նրան հյուծելու և Թույլ չտալու, որ իրականացնի Սասունի հայ ազգաբնակչությանը բնաջնջելու իր հրեշավոր ծրագիրը։

«Կարող ենք մեր ամբողջ ուժերը մի որևէ վայրում նետել ճակատամարտի մեջ,— ասում էր Անդրանիկը,— բայց տևական դիրքային կռիվը մեր ուժերը կսպառի։ Պետք չէ, որ նույն տեղը մնանք, մեր ուժերը քիչ են և նրանց խմբական ու հարվածային քայլերը կարող են Թշնամուն շփոթի մատնել։ Այս գործելակերպը պետք է որդեգրենք, բայց առայժմ մնանք Սասնո սահմանների մեջ»։ Նույն կարծիքին էր Գևորգը. «Շեշտակի հարվածներ պետք է տանք Թշնամուն և շատ հաճախ փորձենք նրա Թիկունքը անցնել։ Մենք մեր արագաշարժությամբ կարող ենք շփոթի մատնել Թուրքական բանակի շարքերը, քանի որ 10 հազարի հասնող մի զանգված պիտի մտնի այս լեռների և ձորերի մեջ»[129]։

Օգտվելով Տարոնի զինված ուժերի Սասուն բարձրացնելու սխալից, Թուրքական հրամանատարությունը ոստիկանական խմբեր ուղարկեց բոլոր գյուղերն ու ձերբակալեց այդ գյուղերի ազդեցիկ անձանց։ Ավելի քան 1000 մարդ բանտարկվեց Մուշ քաղաքում։ Տնային բանտարկության ենթարկվեց քաղաքի ողջ հայ բնակչությունը։ Սասունցիներին բնաջնջելու համար նորից գործի դրվեց Թուրքական 4-րդ զորաբանակը՝ Զեքի փաշայի հրամանատարությամբ։ Մարտական գործողությունների հրամանատարն էր Սալեհ փաշան, որը գործում էր Բիթլիսի կուսակալ Ֆերիդ փաշայի անմիջական ցուցումներով։ Մեծ եռանդով էին գործում Ալա բեկն ու Հաջի Ֆերոն՝ իրենց հրոսակախմբերով։ Սասունը Թշնամու մոտ 25 հազարանոց ուժերի դեմ հանել էր ընդամենը 2 հազար կռվող, որոնց մի մասը զինված էր միայն ինքնաշեն կամ գործածությունից դուրս եկած զենքերով։

Թուրքական հրամանատարության պահանջով գյուղերից հավաքեցին աշխատունակ տղամարդկանց և հարկադրեցին ձյունից մաքրել դեպի Սասուն տանող ճանապարհները։ Զորամասերն ու Թնդանոթները, գարունը դեռ չբացված, շարժվեցին դեպի Վերին Սասուն։ Նպատակը պարզ էր՝ գրավել Սասունի բարձունքները, հայդուկներին ու ժողովրդին քշել դեպի կիրճերն ու ոչնչացնել։

Հայերը հասկանում էին Թուրքերի մտադրությունը և լավ գիտեին, որ սպասել գարնանը նշանակում էր տանուլ տալ։ Անհրաժեշտ էր գործողություններ սկսել անհապաղ, քանի դեռ Թուրքերը բարձունքներին չէին ամրացել և ձյունոտ լեռներում արագ տեղաշարժվելու հնարավորություն չունեին։ Պետք էր կռվել չորս ճակատով միաժամանակ։

Անդրանիկն ու Գևորգը հավաքեցին մարտական ջոկատների ղեկավարներին և նրանց հետ մշակեցին գործողությունների ծրագիր, որի էությունը հետևյալն էր. ամեն մի ջոկատ իրեն հանձնարարված տեղամասում պետք է արագ տեղաշարժերի միջոցով հանկարծակի հարձակումներ գործի Թուրքական զորամասերի վրա, փորձի նրանց պատճառել առավել մեծ զոհեր ու խուճապ առաջացնի։ Այն գյուղերը, որոնք պաշտպանել հնարավոր չէ, նախապես պետք է դատարկվեն, իսկ բնակչությունը տեղափոխվի Անդոկի հարավային գագաթների անվտանգ մասերը։ Ձյունաշատ երկրամասում տեղափոխությունը հեշտացնելու նպատակով պատրաստվեցին լաքաներ, որ հաղնում էին ձյան վրա քայլելու համար։ Տեսնելով հայերի այդ պատրաստությունները, Թուրքերը չհամարձակվեցին ձմռանը մարտական գործողություններ սկսել։ Այն հետաձգեցին ապրիլ ամսին։ Քրդերից պահանջեցին հարձակողական գործողությունների միջոցով հայդուկներին հնարավորություն չտալ նախապատրաստվելու գարնան կռիվներին։ Եթե մինչ այդ նրանք քուրդ ցեղապետներին կաշառքով էին հրահրում հայերի դեմ, ապա արդեն կար սուլթանի հրամանը գյավուրներին ոչնչացնելու մասին։ Զեքի փաշան, վկայակոչելով սուլթանի հրամանը, քուրդ ցեղապետներին սպառնաց, որ նրանց նկատմամբ խիստ միջոցների կդիմի, եթե չմասնակցեն հարձակմանը։ Ոտքի հանվեց չորս տասնյակ հազարի հասնող քուրդ։ «4-րդ բանակի հրամանատար Զեքին,— գրում են Բայազետից,— բանակցության մեջ է հեյտարանցի ցեղապետ Քյոռ Հուսեին փաշայի հետ, որ սա հանձնառու լինի պատժել ապստամբ Սասունին ու Տալվորիկին։ Հու-

տեինը ձգձգում է, զանազան պահանջներ դնելով։ Նա պահանջում է 2000 մաուզերի հրացան և մթերք, որպեսզի կարողանա իսպառ ջնջել քյաֆիր ֆիդայիներին»։

Ձեռնարկելով ինքնապաշտպանական կռիվներ, հայդուկները չէին կարող անուշադրության մատնել և որոշակի վարքագիծ չդրսևորել քրդերի նկատմամբ։ Անդրանիկն ու Գևորգը կողմնակից էին, որ «հայկական պահանջը ընթանա տեղական ժողովուրդների պահանջների հետ ներդաշնակ, մանավանդ քրդերի հետ բարեկամություն հաստատելով, նրանց մեջ արթնացնելով հասարակական շահերը...»[131]։ Քրդերի շրջանում հատկապես ակտիվ գործունեություն էր ծավալել Գևորգը։ Նա ձգտում էր միավորել հայ և քուրդ ժողովուրդների ուժերը՝ ընդդեմ օսմանյան բռնատիրության։ Ի տարբերություն կուսակցական որոշ գործիչների այն պնդմանը, թե հայ-քրդական միությունը անհնար է[132], հայդուկների ղեկավարությունն այդ միությունը համարում էր ոչ միայն հնարավոր, այլ նաև կենսական։ Մանավանդ որ, ինչպես նշում է Լեոն, «քրդերի մեջ սկսվել էր հակապետական շարժում՝ ազգային անկախություն ձեռք բերելու համար։ Աբդուլ Համիդը սկսել էր հալածանքները ըմբոստ քրդերի դեմ, իսկ հայտնի Բեդրխան բեյի երկու որդիները կոչ էին անում, որ քրդերը միանան հայերին»[133]։ Այդ ընթացքում հայերը կարողացան որոշ ուժեր հավաքել, զինել նրանց և տեղադրել հարձակման ենթակա կետերում։

Համազգային ապստամբություն սկսելը մնաց որպես գաղափար։ Սասունը նորից միայնակ մնաց թուրքական բանակների ու աշիրեթությունների դեմ։ Այդ տեսնելով՝ Հրայրը վճռական շրջադարձ կատարեց և եռանդուն ու ղեկավար մասնակցություն ունեցավ Սասունի 1904 թ. կռիվներին։ Նրա ղեկավարությանը հանձնված պաշտպանական գիծը ձգվում էր Կուրտիկից մինչև Անդոկ։ Այս ռազմաճակատում առաջին մարտը տեղի ունեցավ Լաճկան գյուղում, մարտի 30-ին։

Լաճկանի կռիվը.— Արդեն նշվեց, որ Դաշտում ստեղծված ջանբեզարների խմբերը հայկական գյուղերում ամեն տեսակի գազանություններ էին կատարում։ Լուր է ստացվում, որ այս անգամ նրանք մտել են Քուրդմեյդան (Ողական ամրոցի շրջանում), Շեխլան, Ղզլաղաջ գյուղերը և ավերածություններ կատարել։ Անդրանիկը Մուրադին երկու զինվորների հետ ուղարկում է Դաշտ, մոտիկից ծանոթանալու կացությանը և «Տավրներ՝ խորհրդի կանչելու պատասխանատու մարմինը»։ Մուրադին հաջողվում է հավաքել 20 կամավոր, որոնց ուղարկում է Տավրներ, իսկ ինքը գնում է Շենիկ։

Մարտի 30-ին Գելիգերման է հասնում Մանոն, որը մենակ էր փրկվել իրենց ողջ գերդաստանից, և պատմում է Լաճկանի կռվի մանրամասները. «Չնայած որ քրդերի բռնած դիրքերը ավելի լավ էին, քան մերոնցը, այդուհանդերձ, քրդերը մեկիկ-մեկիկ զետին էին գլորվում։ Նրանք իրենց դիրքերից դուրս են քշվում և դիմում փախուստի։ Նրանք լցվում են մի ձոր։ Սեմալի իշխան Մանուկը և բատկանցի Արթինը բռնում են ձորի երկու կողմի լանջերը... իսկ Մուրադը կռվելով դեպի գյուղն էր առաջանում...»։ Նա գյուղ է մտնում և ուզում է հրդեհել, սակայն, ընդառաջելով քրդերի թախանձանքին, որոշում է բավարարվել նրանց զինաթափ անելով։ Չնայած դրան՝ քրդերի մոտ զենք է մնում և նրանք դավադրաբար սպանում են երկու հայդուկի։ Դրա հետևանքն այն է լինում, որ հայդուկները լցվում են տները և կոտորում բնակիչներին, իսկ Կոտոյի Հաջին այրում է գյուղը։ Այս կռվի մեջ քրդերից կոտորվում է 41 մարդ։ Կռվին մասնակցում էին նաև մի խումբ հայ կանայք, որոնք «ուտելիք, ռազմամթերք և այլն շալակած, կռվի տեղն էին տանում և իրենց քաջալերական խոսքերով խրախուսում կռվողներին»։

Ապրիլի 2-ին քրդերը Ծովասարում հարձակվեցին Արդխու և Քորախու հայաբնակ գյուղերի վրա, տները կողոպտեցին ու հրդեհեցին։ Սմբատը, որ այդ ժամանակ Տալվորիկում էր, շտապեց օգնության, բայց կարողացավ թալանվածի միայն մի մասը ետ խլել։ Օգնության հասած Մակարի ջոկատին հաջողվում է կոտորածից փրկել Քորախուի բնակիչներին և տեղափոխել Տալվորիկ գետի աջ ափը, այսինքն՝ պաշտպանության գծից ներս։

«Դրանից մի քանի օր հետո,— գրում է Սմբատը,— քրդերը հարձակվեցին Ծովասարի ու Քորախուի վրա և կողոպուտից հետո վառեցին տները։ Սպաղանաց Մակարը, որին հանձնված էր գետի հսկողությունը, իր խմբով գնաց օգնության, նրան միացա նաև ես։ Կարողացանք փրկել Քորախուի բնակիչներին և նրանց անցկացնել գետի աջ ափը»։ («Սասունի և Մուշի կռիվները», 1904 թ., էջ 14)։

Թուրքական կանոնավոր ուժերը՝ հաղթահարելով ձյունը, բուքն ու ցուրտը, շրջառիկ շարժումով առաջանում էին երկու ուղղությամբ։ Մի զորախումբ գնում էր Հավատորիկի վրա։ Երկրորդ ուժեղ զորությունը, մոտ 5000 զորքով, առաջանում էր

դեպի Շենիկ։ Քրդերն էլ, իրենց հերթին, առաջանում էին դեպի Բոնաշեն՝ մեկ կողմից, և դեպի Մրկեմոզան՝ մյուս կողմից»։

Մարտի վերջերին Տիգրանակերտից ու Սղերդից եկած թուրքական զինվորական և ոստիկանական ուժերը, ինչպես նաև Հազրոյի Սեսին բեկի և Սլիվանի Հաջի Ռաշիդի ղեկավարած աշիրեթները, միացյալ ուժերով գրավում են Խուլբի բնակավայրերը՝ Ղայսեր, Փասուր, Սաղտուն, Փառկա, դրանք թալանում են ու ավերում։ Այստեղ նրանց միանում են նաև տեղական քրդերն ու երեք թափուր զորք։ Թշնամին շարժվում է դեպի Տալվորիկ և ուժեղ ճնշում գործադրում նրա հարավային և հարավ-արևելյան թևերի վրա։ Թուրքական ուժերի մի մասն էլ բարձրանում է Անդոկի փեշերը։ Ապրիլի մեկին արդեն Գևորգի ղեկավարած պաշտպանության գիծը վտանգված էր։ Գևորգը եռանդուն միջոցների է դիմում այդ գծի պաշտպանությունն ապահովելու համար։ Պաշտպանության պլանը հետևյալն էր. Տալվորիկի զինված ջոկատները պետք է կասեցնեին դեպի Անդոկ և Գեբին շարժվող թուրքերի ու քրդերի առաջխաղացումը։ Այդ նպատակով Խուլբի Գասպարի խմբի առաջ խնդիր դրվեց թևերից հարվածել Տիգրանակերտից շարժվող զորքերին։ Գասպարին հաջողվեց հակահարվածներով թշնամուն կասեցնել և թույլ չտալ հասնելու Իշխանձորում տեղավորված բնակչությանը։ Գասպարը Խուլբի Ահարոնք գյուղի տանուտերն էր, քաջությամբ ամբողջ Սասունում ճանաչված մի մարդ։ Մասնակցել էր թուրքերի ու աշիրեթապետների դեմ բազմաթիվ կռիվների։ Նրա ճակատի խորը սպին և ձախ ձեռքի չորս կտրված մատները այդ կռիվներից մնացած հիշատակներ էին։

Կազմակերպելով Տալվորիկ—Իշխանձորի ճակատային գիծը և համոզվելով, որ այդ գիծը կկարողանա թշնամուն լուրջ դիմադրություն ցույց տալ, Գևորգը որոշ քանակությամբ ուժեր օգնության է ուղարկում հյուսիսային ճակատ, իսկ ինքը գնում է Գելիեգուզան։ Նա կարծում էր, թե թուրքական բանակի հիմնական ուժերը Շուշնամերկի վրայով շարժվելու են դեպի Գելիեգուզան։

Գևորգը «երբ լսեց, որ Գելիեգուզանի շուրջը թնդանոթներ են որոտում, անմիջապես վազեց դիմադրության կենտրոնը»։

Լսենք Սմբատին. «Երբ կռիվները սկսվեցին, ես գտնվում էի Իշխանձորում, որի ղեկավարությունը հանձնված էր Գևորգին։ Շատ չանցած՝ նամակ ստացանք, որով Գևորգին հրահանգվում

էր շտապ վերադառնալ Գելիեգուզան, ինձ հանձնելով Տալվորիկի ճակատի ղեկավարությունը՝ մեկ տասնյակ զինվորներով։

Գևորգը իր հետ առնելով ուժերի մեծագույն մասը, մեկնեց Գելիեգուզան։ Իսկ ես էլ մի տասնյակով՝ դեպի Տալվորիկ։

Նամակի բովանդակությունից հասկացվում էր, որ թշնամու գերակշիռ ուժերի առջև ավելի մտահոգիչ էր կենտրոնի պաշտպանությունը, և Իշխանձորի տեղական ուժերը բավական էին համարվում գյուղի պաշտպանության համար»։

Ապրիլի սկզբին, հյուսիսում թուրքական զորքերի հրամանատար նշանակվեց Քյոսա Բինբաշին։ Թշնամու մարտական ուժերի դասավորությունը հետևյալն էր՝ թուրքական բանակի կենտրոնում Քյոսա Բինբաշու հրամանատարության տակ գործում էին Սալեհ փաշայի, Բիթլիսի կուսակալ Ֆերիդ փաշայի ու Կենճի մութեսարիֆի զորամասերը, նրանց հարվածի գլխավոր ուղղությունը Շատախն էր՝ Շենիկ—Սեմալ, որ դուռ էր բացում դեպի Գելիեգուզան ու Անդոկ։ Ամեն ինչից երևում էր, որ կարևորագույն դեպքերը տեղի էին ունենալու Շենիկի ու Սեմալի բարձունքների վրա, ու սասունցիների գլխավոր ուժերը դիրքավորվեցին այնտեղ։

Սակայն սաստիկ ձյունը անհնար էր դարձնում թշնամու ուժերի ազատ տեղաշարժը։ Դրա համար էլ թուրքական զորքերը կարողացան Մրկեմոզան հասնել միայն ապրիլի 6-ին։

ԳՈՑԱՄԱՐՏ

Ապրիլի 6-ին հյուսիսային ճակատում թուրքական մի զորամաս Հավատորիկի վրայով շարժվում է դեպի Գերմավ և Կոփ գյուղերը, իսկ մի այլ ջոկատ դեպի այդ գյուղերն էր գալիս Բոնաշենի կողմից։ Անդրանիկը, տեսնելով թշնամու գերակշիռ ուժերը, գերադասում է ընդհարումից խուսափել։ Նա դատարկում է այդ երկու գյուղերն ու նրանց բնակչության հետ հեռանում դեպի Տափք և Գեղաշեն։

Նույն օրը Շենիկում Անդրանիկից նամակ է ստացվում. «Մուշից երկու գունդ զորք է գալիս, մեկը քայլում է դեպի Հավատորիկ, իսկ մյուս մասը պիտի գա Շենիկ—Սեմալի վրա. պատրաստ եղեք»[136]։ Թուրքական բանակին միացել էին նաև բատկանցի ու սուլուխցի քրդերը։ Հայդուկները Շենիկի գյուղա-

ցիներին տեղափոխեցին Սեմալ, բայց կռվող ուժերին թողնելով իրենց դիրքերում։ Շենիկի վրա թուրքերի հարձակման առաջին փորձը առատ ձյունի պատճառով տեղի չունեցավ։ Բայց ապրիլի 11-ին 700 սուարիներ (հեծյալ) մտան Շենիկ։ Սեպուհն ու Ավետիսն էլ Ալիանքի կողմից Շենիկ հասան, և սկսվեց կռիվը, որը տևեց 4 ժամ։ Ի վերջո, հայդուկներին հաջողվեց թուրքերին գյուղից դուրս քշել մինչև Գալոյի գյուղը։ Ապրիլի 10-ին բալաքցի և Խութի քրդերը Ղասրմ Բեկի հետ 2000 հոգով հարձակվում են Գելիեգուզանի թաղերից մեկի վրա։ Հայերը Մխիթարի ղեկավարությամբ 3 ժամ կռվում, քրդերին կորուստներ են պատճառում և ետ շպրտում։

Նույն օրը թուրքական մեծաքանակ ուժերը, կուսակալի հետ միասին, շարժվեցին դեպի Շատախ՝ Քյոսա Բինբաշու զորքերի հետ միանալու և ընդհանուր հարձակում սկսելու համար։

Թուրքական այդ ուժերի հետ միասին Սասուն էր տարվում հայ հասարակայնության մի մեծաթիվ պատվիրակություն, որը խնդիր ուներ համոզելու Անդրանիկին զենքերը ցած դնել։ Պատվիրակության կազմի մեջ էին նաև Մուշի և Բաղեշի առաջնորդները։ Մուշից գրում են, որ Մուշ գալուց հետո Բաղեշի վալին «խմբագրելով ինքնագով մի հանրագրություն, այն տեղական իսլամ պաշտոնյաների հետ քննարկեց և կանչելով Բաղեշի և այստեղի առաջնորդներին ու վարչության անդամներին, ճնշումով պահանջեց, որ նրանք էլ կնքեն այդ հանրագիրը։ Հանրագրի մեջ ասված էր, որ բանակցության մեջ մտան հեղափոխականների հետ, որոնք ավազակներ և իշխանության հանդեպ խառնակիչներ են։ Առաջնորդը և հայ վարչական մարմնի անդամները հրաժարվում են այդ թուղթը կնքել»[137]։ Նրանք ասում են. «Մինչ այժմ սասունցիների կամ այնտեղ գտնվողների հետ երբեք որևէ բանակցություն, ոչ էլ հորդոր կամ համոզում չի եղել, որի ժամանակ նրանք ընդդիմություն ցույց տված լինեին, ուստի իրենք չեն կարող ստորագրել այդ գրությունը»։

«Դրա համար կուսակալը զայրացած, առաջնորդների ժողովի անդամներին բռնի կերպով ձիերի վրա նստեցնելով, Սասուն բարձրացավ հինգ թափուր զորքով, որպեսզի այնտեղ իր խմբագրած հանրագիրը բռնի կնքել տա, ապա անմիջապես քրդերով և զորքերով հարձակում կատարի և ոմբակոծի»[138]։

Հետագայում կուսակալի կողմից Սասուն տարված պատվիրակությունն իր գործունեության մասին հաշվետվություն ներ-

կայացրեց պատրիարքին։ Այդ զեկուցագրում մանրամասն շարադրված են թուրքական զորքերի շարժումը և Սեմալ գյուղի շրջանում ծավալված իրադարձությունները։

«Ապրիլի 10-ին, շաբաթ օրը,— կարդում ենք զեկուցագրում,— ժամը 9.30-ին մեկնեցինք Սասուն՝ վեհափառ կուսակալի հետ, ընկերակցությամբ Բաղեշի ընդհանուր դատախազի, Մշո կառավարչի օգնականի և Բաղեշի իտարեի* երկու հայ անդամների։ Նույն գիշեր իջևանեցինք ս. Հովհաննու վանքի ստորոտում գտնվող հայաբնակ Ղզլաղաջ գյուղում, ուր մեզնից առաջ հասել էին զինվորական հրամանատար Սալեհ փաշան և զորքերի վաշտերը»[139]։

Հաջորդ օրը երեկոյան նրանք հասնում են Սասունի Լաճկան անունով քրդաբնակ գյուղը։ Այստեղ հասան նաև ս. Հովհաննու վանքի վանահայրական փոխանորդ Առաքել վարդապետ Մուրադյանը՝ համաձայն կուսակալի հրամանի, ինչպես և Կենճի կառավարիչը և նույն գավառին պատկանող Խուլբ գյուղի կայմակամը։

Տեղ հասնելուց անմիջապես հետո կուսակալը կանչում է իրեն ուղեկցող հայերին, ցույց է տալիս 5 վիրավոր և մեկ սպանված քրդի ու պահանջում տեղեկանք կազմել տեսածի և այն մասին, որ այդ չարագործության հեղինակները հայերն են։ Տեղեկանք կազմվեց, սակայն «առանց երբեք ասելու, թե ում կողմից են սպանված կամ վիրավորված...»։ Հաջորդ օրը, երեկոյան ժամը 10-ին, որպես պատգամավոր Սեմալ է գնում մի ստվար խումբ Առաքել վարդապետի գլխավորությամբ, որն իր հետ տանում էր սուլթանի իրադեն, պատրիարքի կոնդակը, ինչպես նաև Մշո և Բաղեշի առաջնորդների ստորագրությամբ մի գրություն, որոնց բոլորի բովանդակությունը նույնն էր. «Հեղափոխականները անձնատուր լինեն և անվտանգ վերադառնան իրենց տեղերը, իսկ տեղացի ժողովուրդն էլ անպայման հպատակվի կառավարությանը և սպասի նրա շնորհներին, հակառակ պարագային կառավարությունը խիստ միջոցների պիտի դիմի»։

Մայիսի սկզբներին եվրոպական թերթերը հրապարակեցին հետևյալ լուրը. «Բիթլիսի և Մուշի առաջնորդները, տեղի վալին և մի քանի հայ երևելիներ բարձրացան Սասունի լեռը՝ հեղա-

* Ավագանու խորհուրդ։

փոխականներին գտնելու և նրանց խորհուրդ տալու, որ հրաժարվեն ըմբոստությունից, քանի որ սուլթանը խոստացել է նրանց ներում շնորհել, եթե անձնատուր լինեն»[140]: Վարդան վարդապետը մեծ անհանգստությամբ գրում է. «Աղետը պիտի պատահեր և արյունը պիտի վազեր, որովհետև գործելու ընթացքը դեպի դրան պիտի տաներ», քանի որ «խաղաղության պատշաճավոր միջոցներ, համոզիչ երկարատև բանակցություններ, խոստացված ապահովիչ հայտարարություններ և այլն տեղի չունեցան»[141]:

Այդ ժամանակ իրենց խմբերով Սեմալում էին գտնվում Հրայրը, Անդրանիկը, ինչպես նաև Շենիկի, Ալիանքի, Գելիեգուզանի տանուտերերի ու իշխանների մի մասը: Նրանք պատվիրակներին ասացին, որ անմիջապես պատասխան տալ չեն կարող: Հրայրն այդ պահանջը հիմնավորեց նրանով, որ իրենք կառավարության խոստումներին չեն հավատում, որովհետև դեռ հիշում են 1894 թվականի դեպքերը: Պատվիրակությունը դժգոհում է՝ պատճառաբանելով, որ կուսակալը իրեն միայն ինը ժամ ժամանակ է տվել[142]: Բայց այլ ելք չտեսնելով, մնում է Սեմալում և պատասխանի սպասում: Հայդուկները որոշում են հաջորդ օրը Գեղաշենում ժողով գումարել և քննարկել Թուրքերի առաջարկները: Սակայն թե՛ Հրայրը, թե՛ Անդրանիկը գիտեին, որ Թուրքերը խորամանկում են, նրանց ոչ մի պատասխան չի կարող բավարարել, և այն, ինչ արվում է, մի նպատակ ունի՝ ծրագրված կոտորածների պատասխանատվությունը բարդել հայերի վրա: «94-ի դեպքերը բավական ապացույցներ էին հաստատելու, որ չի կարելի բնավ Թշնամու խոստումներին հավատալ և նման բոլոր պաշտոնական բանակցությունները լոկ «պատրվակներ» են ժամանակ շահելու»:

Նույն փաստն է հաստատում մայիսի 17-ին Մուշից ստացված հեռագիրը: «... Ապրիլի 12-ին վալիի հրամանով ս. Առաքելոց վանքի վանահայրը (պետք է լինի ս. Հովհաննու վանքի.— Ս. Գ.) և Բիթլիսի ու Մուշի եպիսկոպոսները հայոց պատրիարքի մի նամակով գնացին Սեմալ՝ հանձնարարություն ունենալով հարկադրելու սասունցիներին անձնատուր լինել: Սակայն այդ ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի խաբուսիկ միջոց, որովհետև ապրիլի 13-ին, նույն այդ միջոցին, երբ հայ խմբապետները իջնելով բարձունքներից, գնում էին ըմբոստացնելու հանձնաժողովին՝ նրա հետ Գեղաշենում բանակցություններ սկսելու նպատակով, վա-

լին հրաման արձակեց հարձակում գործել սասունցիների վրա, հանկարծակի բերել նրանց և բռնել խմբապետներին»: Սասունցիները մի պատասխան ունեին՝ մերժում: Դրա համար էլ սկսեցին ամրացնել իրենց դիրքերը: Սեմալի շրջակայքում ժամապահներ նշանակվեցին Թշնամու շարժումներին հետևելու համար:

Նպատակահարմար համարվեց Ալիանքի, Սեմալի, Գեղաշենի, Շուշնամերկի, Իրիցուկի և այդ շրջանի մյուս գյուղերի բնակչությունը տեղափոխել Գելիեգուզան:

Մինչ այդ լուր էր ուղարկվել Վահանին, որ շտապ մեկնի Գեղաշեն, բայց երբ վերջինս ապրիլի 13-ի առավոտյան հասնում է Գեղաշեն, գյուղը լրիվ դատարկված է գտնում: Մարտական գործողություններն արդեն սկսվել էին, և նա հարկադրված քաշվում է Շուշնամերկ: Վկայում է Վահանը. «Այստեղ (Գեղաշեն) հասա ապրիլի 13-ին ժամը 1-ին, և երբ կսպասեի Հրայրի գալուն, հանկարծ կռվի, հավարի ձայներ հասան: Երևվում էր, որ կուսակալի բանակցության խնդիրը կեղծ էր, մեզ մի վայրում հավաքելով և ապահով համարելով, մտադիր է եղել մեկ հարվածով ամեն ինչ վերջացնել»: («Դրոշակ», 1904 թ., № 4—5):

Պարզվեց, որ Թուրքերը բանակցությունների տակ քողարկվելով, Շենիքում ու նրա մերձակայքում կենտրոնացրել էին մեծ թվով զորք և շուրջ 34 հազար քուրդ: Եվ երբ առավոտյան վաղ Հրայրին հայտնեցին, որ Թշնամին Մրկեմոզանի վրայով շարժվում է դեպի Սեմալ, Թուրքերի հերթական նենգությունը ակնհայտ դարձավ: Թուրքական բանակատեղում հավաքված հայ հոգևորականներն ու երևելիները պարզապես պատանդներ էին, որոնց Թուրքական հրամանատարությունը «ուզեց օգտագործել նաև որպես դավի միջոց, որպեսզի ապստամբ Սասունը մեկ պահ միայն զենքը իր ուսից վար առներ ու խաբվեր խաղաղության կոչից»[143]: Այդ բանը Հրայրին թաքուն ասաց նաև Վարդան վարդապետը. «Առանց կռվի անձնատվություն են պահանջում, իբր թե ներում պիտի շնորհեն մեր ժողովրդին: Մի խաբվեք, մենք արդեն պատանդ ենք, մեր գլուխը պիտի ուտեն, գոնե բարձրավանդակի ժողովուրդը դիմադրի ու փրկվի...»[144]:

Այս իրադարձություններն իրենց արձագանքն ունեցան նաև արտասահմանյան մամուլի էջերում: «Գազեթ դը Լոզանը» ծաղրում է. «... Բոսֆորի ափերին զվարճացող դեսպանները բարե-

հաճել են Բ. Դրան ուշադրությունը հրավիրել, թե վերջինս պատրաստ է միջոցներ ձեռք առնել և արգելել, որ թուրք զինվորները ծայրահեղության չդիմեն, այսինքն, քիչ-քիչ կոտորեն, այնպես, որ կոտորածի ձայնը Եվրոպա չհասնի և իրենց անդորրը վրդովվի»[145]։ «Լը տամպին» Պոլսից գրում. են. «Վրդովեցուցիչ լուրեր են ստացվում Հայաստանում գտնվող հյուպատոսներից և ուրիշներից։ Բիթլիսի մեջ լուր է շրջում, որ անցյալ ամսվա վերջերին քրդերը հարձակվել են և այրել Մշո շրջակայքի մի շարք հայ գյուղեր և բնակիչներից շատերին ջարդել։ Ապստամբները Սասունի մեջ դեռևս պահում են իրենց դիրքերը, և նույնիսկ հաղորդվում է, որ վալին ամենավերջին քայլն է արել, ինքը՝ իր պաշտոնյաների, Մշո և Սասունի հայոց եպիսկոպոսների և ուրիշ հայ երևելիների հետ անձամբ գնացել է ապստամբներին անձնատուր լինելու վերաբերյալ առաջարկի շուրջը բանակցելու։ Սակայն, հազիվ թե հաջողության հասնի, որովհետև ապստամբների նպատակն է երկրի ներկա խառնակ դրությունը պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ մեծ պետությունները չեն միջամտել։ Չի կարելի մեղադրել թուրք կառավարությանը, եթե նա հեղափոխությունը կսպի կանոնավոր զորքերի միջոցով և պատերազմական օրենքներով...»[146]։

Թերթը գիտակցաբա՞ր, թե՞ թյուրիմացաբար ստում է։ Բաղեշի կուսակալը 20 հազար զորքով և նույնքան էլ զինված քրդերով գնացել էր ոչ թե բանակցությունների, այլ կոտորածի։ Նույնիսկ երեխային է հասկանալի, որ շուրջ 40 հազարանոց ռազմական ուժով բանակցությունների չեն գնում։ Դրան հակառակ, «Դեյլի նյուսը» հունիսի 13-ի համարում բացարձակ ճշգրտությամբ է բացահայտում սուլթանի ու նրա կառավարության նենգությունն ու արյունարբու դիտավորությունը. «Թուրքական իշխանությունները վաղուց գիտենալով, որ Անդրանիկը Սասունում է և որ նա պատրաստություններ է տեսնում պաշտպանվելու թուրքերի հարձակման դեպքում, վաղաժամ, մարտ ամսին սկսեցին Սասունի շուրջը կենտրոնացնել զորքեր ու քրդեր։ Թուրքերը դրդեցին լաճկան ու բատկան քուրդ ցեղերին հարձակում գործել Գելիեգերման գյուղի վրա։ Դրա նպատակն էր դիմադրություն առաջ բերել և հայերին հայտարարել ապստամբներ, ինչը և պատրվակ կծառայեր իրագործելու ջարդի ծրագիրը, Սասունի բնաջնջումը, որը համարվում է հայկական

շարժման պատվարը։ Թուրքերի դիտավորությունները գուշակելով, 30-ից ավելի հայ գյուղեր ապաստանեցին Գելիեգուզանում, ուր Անդրանիկն էր իր մի քանի հարյուր մարտիկներով։ Չնայած կատաղի հարձակումներին և ռմբակոծությանը, հայոց դիմադրությունը շարունակվեց մինչև մայիսի 3-ը, այնուհետև որոշվեց քաշվել դեպի Տալվորիկ»[147]։ Հունիսի 8-ին նույն թերթը գրեց. «Ներկա միջադեպերը մի ծրագրված նպատակ ունեն՝ հայերին դնել իրենց մահմեդական հարևանների մշտական սարսափի տակ։ Սա մի անարգանք է եվրոպական դիվանագիտության համար, որը լռելյայն հանդուրժում է հայ ազգաբնակչության հանդեպ գործադրվող այս բռնությունները»։ Նույն միտքն է արտահայտում նաև «Ռուսկիե վեդոմոստի» լրագիրը. «Թուրքերը ջանում են շուտ վերջացնել գործը։ Նրանց նպատակը պարզ է՝ ուզում են Սասունը մեկընդմիշտ դարձնել անվնաս... Հասկանալի է, թե ինչու են հայերը հուսահատորեն դիմադրում թուրքերի ծրագրերին»։ Այդ ծրագրերի իրականացման համար նույնիսկ 30 հազարանոց բանակը բավարար չէր համարվում։ Բոլոր ուղղություններով դեպի Սասուն էին շարժվում նորանոր զինվորական ուժեր ու քրդեր։

Դերջանից գրում են. «Այս օրերին Երզնկայի 4-րդ բանակը արտասովոր իրարանցման մեջ է... Սասունցի քաջերը նորից ոտքի են ելել։ Թուրքերն ու քրդերը սրտատրոփ սպասում են իրենց արյան ծարավին հագուրդ տալուն։ Վերջերս նրանց հետ խոսելը դժվարացել է։ Թուրքերն առասպելական բաներ էին պատմում այնտեղ (Սասունում) կռվող ջանֆիդայիների մասին»։ («Հնչակ», 1904 թ., № 4—5)։

Սեմալի կռիվը.— Շենիկն ու Սեմալը գտնվում են Շատախի հյուսիսային մասում, մի սարահարթի վրա, և իրարից բաժանվում են արևելքից արևմուտք հոսող Ջայ գետով։ Գետի հարավային կողմում բարձրանում են բլուրներ, որոնք Շատախը բաժանում են Միջին Սասունից։ Այդ բլուրները անվանում էին Ջայի գլուխ (Մելներոս լեռ)[148]։ Շենիկի կողմում գետին կից տարածքը հարթ է, և այդ հարթությունը ձգվում է հարավ՝ մինչև Ալիանք գյուղը։ Թուրքական հրամանատարությունն իր ուժերը բաժանեց երկու մասի։ Զորքերի մի մասը՝ վեց վաշտ և 3—4 հազար քուրդ, պետք է առաջանար դեպի հարավ, Ալիանքի վրայով անցներ Բերբերի հովիտը և այնտեղից մտներ Գելիեգուզանի հովիտ, իսկ մյուս մասը՝ երկու վաշտ և 6—7 հազար քուրդ, պիտի առաջանար դեպի արևելք՝ Սեմալ, այնուհետև

մտներ Զայի հովիտն ու անցնելով Զայի գլխով՝ նորից մտներ Գելիեգուզանի հովիտը։

«Դրան համաձայն էլ մերոնք բաժանեցին իրենց ուժերը։ Անդրանիկը գնաց Տափքի գիծը. Մարտիրոսը, Սեպուհը, Ավետիսը և Իսոն գնացին Ալիանքի գիծը պաշտպանելու, իսկ Մուրադը, Հաջին և Տոնոյի Մակարը պետք է պաշտպանեին Զայը և Զայի գլուխները»[149]։

Այսպիսով, Հրայրի հրամանատարության տակ գտնվող ռազմաճակատում հայերը ստեղծեցին պաշտպանության երեք հանգույցներ՝ Զայում Սպաղանաց Մակարի, կենտրոնական մասում, մինչև Բերբերի հովիտը, Ավետիսի հրամանատարությամբ (կռվող ուժերը բացառապես ալիանքցիներն էին), և Բերբերի հովիտը՝ Սեպուհի հրամանատարությամբ։

Զնայած ապրիլ ամիսն էր, բայց լեռները դեռևս ձյան ծածկոցի տակ էին։ Հայդուկների զգալի մասի դիրքերը ձյան մեջ էին։

Սեմալում գտնվող հայդուկներին Հրայրը հանձնարարեց դիրքեր գրավել գյուղի առաջամասում, իսկ բնակչությանն առաջարկեց հեռանալ գյուղից։ Գլխավոր ուժերը դիրքավորեց գյուղի հետնամասին հարող լեռներին։ Գյուղի առաջամասում տեղավորված ջոկատին հանձնարարված էր համառ դիմադրություն ցույց տալ թուրքերին, որպեսզի, նախ բնակչությունը հնարավորություն ունենար գյուղից հեռանալու և, միաժամանակ, թուրքերի մեջ տպավորություն ստեղծեր, թե դրանք են հայդուկների գլխավոր ուժերը, ու երբ բնակչության հեռանալուց հետո այս ջոկատը նահանջներ, թուրքերը, կարծելով, թե հաղթանակն ապահովված է, կորցնելու էին մարտական կարգը և ընկնելու էին թալանի ետևից։ Ահա այդ ժամանակ նրանց վրա կհարձակվեին հայդուկների գլխավոր ուժերը։

Թուրքերն ու քրդերը ապրիլի 13-ին, առավոտյան վաղ, շարժվեցին Սեմալի վրա։ Բերվեցին նաև թնդանոթներ։ Սեմալը գրնգակոծվում էր։ Գյուղի բնակչության տեղափոխությունը դեռ չէր ավարտվել։

Թնդանոթային ռմբակոծությանը անմիջապես հաջորդեց թուրքական հետևակի գրոհը։ Բանակին հետևում էին քրդերը, որոնք ճանապարհին թալանում էին ամեն բան, ինչ պատահում էր։ Թշնամին Սեմալի վրա 15 ռումբ նետեց։ Հայերը «դարձրին իրենց մոսինների բերանները դեպի առաջացող թշնամին։ Ոչ մի

գնդակ պարապ չպիտի անցնի՝ այս էր հայ ֆիդայու նշանաբանը։ Ձյան վրա սև տարածություն փռվեց, լայնացավ, կծկվեց, նորից տարածվեց։ Թշնամու բանակի սվինների ամբողջությունը նման էր անտառի՝ սև ու դաժան։ Կանոնավոր բանակի հետ միասին բաշիբոզուկների և քուրդ ջարդարար խուժանի բյուրավոր բազմությունը համառորեն հետևում էր զորքին»[150]։ «Հայերի դիրքերում տակավին զոհեր չկան, իսկ թշնամին զոհեր է տալիս մեկը մյուսի ետևից[151]։ Հայերը համառորեն դիմադրում էին, իսկ թուրքերը շարունակում էին առաջ շարժվել։ Եվ երբ նրանք արդեն գյուղի ծայրամասում էին, հայերի դիրքերից կրակը դադարեց։ Թուրքերը ոռնոցով լցվեցին գյուղ։ Սեմալը դատարկ էր։ Քյոսա Բինբաշին մտածելով, որ հայդուկների ջոկատը զբաղված է բնակչությանը տեղափոխելով, հրաման տվեց առանց հապաղելու հասնել նրանց ու ոչնչացնել։ Ծանր, արյունահեղ մարտեր եղան։

Ալիանքի կռիվը.— Մարտերը ծանր ընթացք ունեցան նաև Ալիանքի ճակատում։ Առավոտը բացվելուն պես թնդանոթներն սկսեցին որոտալ, և ռումբերը պայթեցին Ալիանքի շուրջը, շատերն էլ խրվեցին ձյան հաստ կեղևի մեջ և մնացին առանց պայթելու... Դիմացի ձյունապատ սպիտակ տարածությունը սեվացել էր թշնամու անհամար շարքերից։ «Թնդանոթներից թռչող առաջին ռումբերի հետ սկսեց շարժվել դաշտի այդ սև ֆոնը։ Սվինների անտառը փայլեց և հրացանները միահամուռ կրակեցին։ Քրդերի բազմությունը անկանոն, վայրի աղաղակներով բանակի առաջն ընկած, գրոհում էր։ Հայ ֆիդային ձյան ու սառույցի վրա ծնկած, մոսինը կրծքին սեղմած, գնդակներ էր տեղում թշնամու վրա։

Սոսկալի էր կռիվը։ Թշնամու գնդակները կարկուտի նման թափվում ու ջարդուփշուր էին անում քար, հող ու թումբ։ Բայց անսասան էր ֆիդային, որը դիպուկ նշանառությամբ թշնամուն մեկը մյուսի հետևից գետնին էր տապալում։ Առանց կորուստների առաջ կանգ առնելու թշնամին առաջ էր շարժվում։ «Մենք այսօր Գելիեգուզանը պետք է գրավենք, Անդրանիկ փաշան Տափքում է, Գևորգ Չաուշն՝ Իշխանձորում»[152], գոռում էին թուրքերը։

«Ավետիսը, Իսոն, Մարտիրոսը և մոկացի Քեռին կռվում էին Անդոկի կողերին։ Հրայրը, Սեպուհը, սեմալցի Կրպեն, Գևոն և Մուշեղը որոշել էին անպայման կտրել թշնամու առաջը և մեռ-

նել կամ ետ քշել նրան»։ Վիրավորվում է Սեպուհը, սպանվում է աղբեցի Գևորգը։ Սեպուհին փրկելու նետված Հրայրը ղոհվում է, իսկ Սեպուհը սողալով հեռանում է։

Հայերի ուժերը խմբավորվում են Բերբերի կիրճի բերանը, «որտեղ Թուրք զորքը կռվում էր ամենամեծ թափով» անցքը գրավելու համար, որ իրենց պետք է տաներ դեպի Գելիեգուզան։ Ավետիսը, Իսոն, Համզոն պինդ փակել էին կիրճի բերանը։ Կռվի միջոցին մի սասունցի կին, բարձր դիրքի վրա կանգնած, կանչում էր, խրախուսում կռվողներին։ «Հեթե, տղերք, մալավա խպտեք, Անթուան փաշեն Մճելնու դեն էկավ, Գևորգ Չաուշ Էկավ Իշխանձորի կողմէ, տե խպտեք, ձեր հոգուն մատաղ, ըռում կոտրվավ, ազգի հացը հալալ էղնի ձեզ, հայ զինվորներ, որն որ պաշ չխպտի, կնկտուս սավան էնոր գլխին թալենք»։ Հայերի վիճակը ծանր էր, երբ իր խմբով կռվի դաշտ հասավ Անդրանիկը։ Նա շրջանցեց Թշնամուն և հարվածեց ձախ թևին։ Թուրքերը փորձեցին ետ քաշվել, բայց Գևորգի խումբը, որ ամրացել էր ժայռերի ծերպերին, նրանց գետնին է գլորում։ Հայերի հարվածների տակ, ինչպես ականատեսն է վկայում՝ «զորքը կանգ է առնում, գլուխը կորցնում և սկսում է ետ քաշվել։ Փողը առաջանալու, հարձակվելու նշան է տալիս, բայց զինվորները ջարդված ետ են նահանջում։ Մերոնք վրա են տալիս, ահագին զորքին նախրի նման առաջները գցած հալածում են և շատերին ողջ-ողջ բռնելով՝ սպանում»։

Չայի կռիվը.— «Հաջին և Մակարը Չայի գլուխներին դիրքեր էին բռնել, իսկ Մուրադը, մի քանի ընկերներով, մնացել էր ջրի ափին՝ չթողնելու, որ Թշնամին ջուրն անցնի։ Բայց զորքը հանկարծակի հարձակվում է, այնպես որ Մուրադն ընկերներով ետ է քաշվում՝ հարմար դիրք բռնելու։ Երբ տեսնում է, որ հարմար դիրք չկա, ձայն է տալիս ընկերներին ետ դառնալ, իսկ ինքն անմիջապես շոքում է ձյան մեջ և սկսում կռվել։ Թշնամու և նրանց միջև տարածությունը մոտավորապես 600 քայլ էր։ Մոսիններից արձակած առաջին գնդակները գետնին գլորեցին մի քանի Թուրքի։ Հաջին էլ բլրի գագաթից կրակ է թափում Թշնամու վրա։ Այսպիսով, Թուրքերի թափը կոտրվում է, և նրանք չեն համարձակվում ավելի առաջ գնալ։ Փոքր ուժերով Թշնամու գնդի առաջխաղացման այդպիսի անսպասելի կասեցումը մեծ ազդեցություն է ներշնչում տղաներին, և Մուրադը ընկերների

հետ պար է բռնում, ապա երգելով շարունակում են կռիվը մինչև ժամը 6-ը։

Մուրադ Սեբաստացի, Սեբաստիայի Խորոխոն գյուղից, ազգանունը Տերտերյան։ Փոքր տարիքին ընտանիքի հետ գաղթում է Պոլիս և հասնում Ամերիկյան քոլեջ։ 1896 թ. Պոլսի ջարդերի ժամանակ սպանվում են հայրն ու մեծ եղբայրը։ Ուսման նպատակով մեկնում է Լոնդոն։ Հնչակյան կուսակցության հանձնարարությամբ գնում է Սալմաստ և զբաղվում ազատագրական գործունեությամբ՝ Երկիր գենք տեղափոխելով։ Այստեղ նրա վրա մի քանի հարձակումներ կատարվեցին, բայց նա կարողացավ հակահարված տալ։

1904 թ. Թիֆլիսում՝ Սոլոլակում, մասնակցում է հայ-ադրբեջանական ընդհարումներին և ապա անցնում Սասուն։ Թուրքական սահմանապահության հնչակումից հետո գնում է Կ. Պոլիս և դառնում հնչակյան կուսակցության քարտուղար։ 1911 թ. Ս. Սապահ-Գուլյանի հետ պրոպագանդիստական աշխատանք է տանում Փոքր Հայքի բնակավայրերում։

1918 թ. հաստատվում է Սեբաստիայում։

Թուրքական մի ջոկատ գերի հանձնվեց։ Շրջապատման վտանգից խուսափելու համար Քյոսա Բինբաշին երկու վաշտի հետ նետվեց մոտակայքում գտնվող ձորը և հարձակվեց Մուրադի դիրքերի վրա։ Մուրադը կռահում է նրա մտադրությունը և, գետն անցնելով, փակում է նահանջի ճանապարհը։ Բինբաշին շրջապատված էր։ Բայց նա ելք գտավ՝ նետվեց ձյան մեջ, հղեղատի առաջացրած խոռոչը, և այստեղ թաքնված մնաց մինչև մութն ընկնելը, որից հետո հեռացավ իր բանակատեղին։ Մնալով առանց հրամանատարի, Թուրքերը խուճապահար փախան։ Նրանք հալածվելով հասան մինչև Շենիկ։ Հայերն ուժեղացնում են հետապնդումը, Թուրքերը թողնում են նաև Շենիկը։ Վալին, «տեսնելով, որ զորքը սարսափահար փախչում է, ինքն էլ վրանները քանդում և վերադառնում է Մուշ՝ նոր ծրագրեր հղանալու համար»։

Հաղթանակը կատարյալ էր։ Հայերի մեծ մասը ոգևորված առաջ էր մղվում Թշնամուն հետապնդելու, սակայն Անդրանիկը թույլ չի տալիս։ Սասունցիները հյուծվել էին։ Նրանք, վերցնելով Հրայրի դիակը, շարժվեցին դեպի Գելիեգուզան, որտեղ և Հրայրին թաղեցին Աղբյուր Սերոբի կողքին։

Հայերն այս կռվում կորցրին հինգ տղամարդ, երկու երեխա ու մի ծեր կին։ «Թշնամուց սպանվեց 800—1000 հոգի։ Մերոնք գրավեցին 53 մաուզեր՝ 3000 փամփուշտ»։ Պատմում է ականատեսներից մեկը. «Կռվողների մի մասը Չայի վրայով բարձրա-

նում էր Գելիի կողմերը, որոնց ետևից խուժում էր նաև զորքը։ Մինչ այս պահը պատերազմը մեզ համար աննպաստ էր։ Բայց երբ չորս կողմից Անդրանիկը իր խմբով և ուրիշ խմբապետներ հասնում են օգնության, մեր կռվողները նոր ուժ առնելով՝ թշնամու թևերին են խփում և ավելի կատաղորեն են հարձակվում զորքերի վրա։ Խուճապ է սկսվում զորքի ու քրդերի մեջ։ Սրանք սկսում են ետ փախչել։ Զինվորների մի մասը մնում է հովտում և անխնա կոտորվում։ Մյուսները ցիրուցան՝ սկսում են փախչել, հայերը խուժում են նրանց հետևից և վռնդում են դեպի Ջայ, դեպի Շենիկի ու Սեմալի ավերակները։ Երեկոյան ժամը 12-ի մոտ կռիվը վերջանում է[155]։

«Երեկ, ապրիլի 13-ին,— գրում է Վահանը,— ունեցանք անհավոր կռիվ Սեմալում, և մենք կրկին տարանք հաղթություն։ Այսօր նոր զորք եկավ Մուշից, վաղը թերևս ավելի մեծ ճակատամարտ ունենանք, եթե ոչնչանանք, անշուշտ, կշարունակեք մեր գործը...»[156]։

Պատրիարքին ուղարկված վերը նշված զեկուցագրում ապրիլի 13—20-ի իրադարձությունների մասին ասվում է. «Ապրիլի 13-ին, առանց սպասելու Առաքել վարդապետի ու բանագնացների վերադարձին, փաշան առաջ շարժվելու հրաման տվեց։ Մեր առջևից գնում էր ինքը՝ փաշան, կայսերական զորքի հետ։ Դեռ Շենիկ չհասած՝ թնդանոթի աղմուկ լսվեց, որին քիչ անց հաջորդեց հրացանաձգությունը։ Կես ժամից, վերջապես, Շենիկ հասանք... Այս գյուղը հայերի կողմից այրված լինելու մասին մի ղնից նորից հայտագիր պահանջեցին։ Սակայն մենք տեսնում էինք միայն այրված Շենիկն ու ծխացող Սեմալը, իսկ թե ո՞վ էր այդ արել, չգիտեինք, և այդպես էլ գրեցինք»։

Ժամը 4-ին Շենիկ հասավ Առաքել վարդապետը և փաշային հայտնեց սասունցիների պատասխանը։ «Հայերը մի պահ մտածում էին գրավոր պատասխան տալ, բայց երբ հեռադիտակով տեսնում են, որ զորքերը տակավին մոտենում են և իրենց վտանգ է սպառնում, Առաքել վարդապետին ասում են. «Ելիր, գնա, ահա զորքերը գալիս են, էլ ի՞նչ պատասխան...»։ Փաշան պահանջեց, որ բոլորս ստորագրենք Առաքելի ներկայացրած բացատրականի տակ։ Կռիվը շարունակվեց մինչև երեկո։ Հաջորդ օրը Շենիկ բերեցին ս. Կարապետի փոխվանահայր Վարդան վարդապետ Հակոբյանին և միաբան Ստեփան վարդապետ Բաղդասարյանին։ Նրանց հարցաքննեցին, մեղադրելով, թե իբր

սննդամթերք են ուղարկում հայդուկներին։ Վարդապետները դա զրպարտություն համարեցին»։ Նրանց մեկուսացրին դատախազի վրանում։ Ապրիլի 16—19-ը հրացանաձգության ձայն չէր լսվում, իսկ 20-ին սկսվեց կատաղի հրացանաձգություն, որը տևեց 13 ժամ։ Նույնը շարունակվեց հաջորդ օրը։

Օսմանյան պալատն ամեն ինչ արեց այս իրադարձությունների շուրջ արտաահմանում թյուր կարծիք տարածելու համար։ Նրան հաջողվեց տպավորություն ստեղծել, որ Սասունի վրա օսմանյան հարձակումը ոչ թե բնաջնջման, այլ լոկ հայդուկներին ոչնչացնելու և կամ նրանց երկրից դուրս քշելու նպատակ ուներ։ Թուրքերը զգում էին, որ իրենց գործերը լավ չեն գնում, որ Սասունում հաղթանակ, այն էլ՝ հեշտ, ակնկալել չի կարելի։

Կատաղած անհաջողություններից, թշնամին իր զայրույթը թափում է Տարոնի խաղաղ բնակչության վրա։ «Թշնամին,— գրում են Մուշից,— վրեժ առնելու համար սկսեց ավերել անմեղ գյուղերը։ Այսօր Ղզլաղաջ, Գոմեր, Քարձոր, Փողրկով, Տազիգում, Շեխլան, Քուրդմեյդան, Ուրուջ, Հայկերտ, Սուլուխ, Խաչեղ, Հավատորիկ՝ 12 գյուղ... զորքով են լցված։ Դաշտի մեջ պարբերական ջարդեր են սկսվել։ Պետք է կարծել, որ շուտով դրանք կվերածվեն ընդհանուր կոտորածի, եթե աստված մի դուռ չբացի»[157]։

ՀՐԱՅՐ

Հրայրը առանձնահատուկ երևույթ է մեր բազմադարյան պատմության մեջ։

Նախ մի քանի մեջբերումներ Հրայրի ժամանակակիցներից ու համախոհներից. «Ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի մեջ սընված և իմաստավորված, իր ամբողջ կյանքը ժողովրդին նվիրած հեղափոխականի բացառիկ տիպար է Հրայրը, որ իր մեջ խտացրել էր Մամիկոնյանների քաջությունը և Բագրատունիների խոհականությունը...

Հրայրը... հայ ժողովրդի դարավոր իմաստնության հարազատ արտահայտիչն էր՝ իր գաղափարներով, ապրումներով ու գործունեությամբ»։

«Արաբոն, Լևոնը և Գևորգ Չաուշը, երբ ինքնաբերաբար լեռներն էին բարձրանում իրենց անձնական արիությամբ մարմ-

նավորելու հեղափոխական ֆիդայու նախատիպին ու տիրող շրջաններին ցույց տալու, որ հայն էլ կարող է զենք կրել և այդ զենքը գործածել, այդ նույն ժամանակ Հրայրը մեծ ոգևորությամբ լծվում էր ըմբոստության ոգին շրջանից շրջան տարածելուն, ... ավատական անիրավությունների դեմ ծառանալու սրբազան գործին»։

«Հրայրը ամեն ճիգ թափում էր բոլոր շրջանները կազմակերպելու, միշտ հետապնդելով ընդհանուր ապստամբության ծրագրին։ ... Խմբային ընդհարումներ, որքան հնարավոր է, պետք է քիչ ունենալ և ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացնել լայնածավալ կազմակերպության ձևավորման և զինման գործին»։

«Վտիտ մարմնով, ցածրահասակ մարդ էր, որ օժտված էր խոշոր ձիրքով ու մտավոր կարողություններով։ Խորը համոզմունքին նա միացնում էր հետևողականություն և համառություն... Նա պահանջում էր հանձն առնել հեղափոխական նահատակությունը...։ Նա ասում էր, որ հեղափոխականը պետք է մեռնի կամ գնդակից, կամ կախաղանով, կամ բանտում։

Այս խստակրոն մարդը, մոլեռանդ քարոզիչը հմայում էր ժողովրդին և կարողացավ նրան կազմակերպել վերևից մինչև ներքև, ինքն դառնալով իր ստեղծած կազմակերպության կենտրոնը։ Գյուղացու շորեր հագած՝ դերվիշի նման գյուղից գյուղ էր թափառում։ Անգամ վատ մարդիկ չէին համարձակվում ձեռք տալ այդ խորհրդավոր մարդուն, չեն հանդգնում նրան մատնել կամ որևէ վնաս հասցնել։ Եվ այդպես, կառավարության քթի տակ, Արմենակը շրջում էր ազատ ու համարձակ և աննկատ ստեղծում մի խոշոր կազմակերպություն»։

Եվ ապա.

«Գյուղացու հագուստով, ցուպը ձեռքին, գիշերային խավարում Հրայրը գյուղից գյուղ, շրջանից շրջան ճանապարհ էր կտրում և ամեն տեղ քարոզում ու կազմակերպում էր։ Այս փոքրիկ, վտիտ, դժգույն մարդը, որ միշտ լուրջ ու սառն էր ինչպես տխրություն, անընդհատ ժողովրդին հիշեցնում էր հին, նահապետական բարքերը, վերակենդանացնում էր անցյալի պատկերները և նրան ոգևորում էր ապագայի հույսերով։ Կարծես մեր անցյալից եկած ուրվական լիներ, որ դեգերում էր հայրենի աշխարհում ժողովրդին արթնացնելու համար։ Եվ հայ մարդը ոչ

թե սիրում, այլ պաշտում էր նրան, թշնամին անգամ նրան ենթարկվում էր»։

Հրայրը՝ Հրայր Դժոխքը, Ուրվականը, նույն ինքը՝ Արմենակ Մամբրեի Ղազարյանը, ծնվել է 1864 թ. Սասնո Խուլբ գավառակի Ահարոնք գյուղում հոգևորականի ընտանիքում։ Նա նախնական կրթությունը ստանում է իր հոր՝ Մամբրե Ղազարյանի մոտ, որից հետո ընդունվում է ս. Կարապետի վանքին կից գործող դպրոցը և ապա Մշո հռչակավոր Միացյալ ընկերության կենտրոնական վարժարանը։

Արմենակի պատանեկությունը համընկավ զուլում տարիներին, երբ թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով սաստկացնում էին հայերի քաղաքական, տնտեսական ու սոցիալական ճնշումները, քրդերին զենք դարձնում հայերին ոչընչացնելու գործում։

1880 թ. Ներջիքի քուրդ Միրզա աղան խաբեությամբ իր մոտ է հրավիրում Ահարոնքի տանուտեր Գրիգորին ու սպանում է։ Ահարոնքցիները Աննա մայրիկի գլխավորությամբ հարձակվում ու հրդեհում են Ներջիքը։ Իշխանությունները օգտագործում են այդ առիթը Խուլբում հարստահարություններն ու բռնություններ ուժեղացնելու համար։ 1880 թիվը նաև սոսկալի սովի տարի էր։ Մամբրեի ընտանիքը հարկադրված թողնում է հայրենի կյուղը և վերաբնակվում Տարոնի Ղզլաղաջ գյուղում։

Արմենակը Մշո կենտրոնական վարժարանում ոչ միայն հանրակրթական գիտելիքներ ստացավ, այլև տոգորվեց ազատագրական գաղափարներով և իրեն նվիրեց հայ ժողովրդի ազատագրության պայքարին։ Դպրոցն ավարտելուց հետո նա սկսեց ուսուցչությամբ զբաղվել, բայց նրա իսկական զբաղմունքը պայքարն էր։ Գիշերները թաքուն տնից դուրս էր գալիս և իր ընկերների հետ գնում վրեժխնդիր լինելու հայի ինչքը հափշտակողներից։

1885 թ. նրա և Վարդան վարդապետի նախաձեռնությամբ հրավիրվում է Սասունի իշխանների ու տանուտերերի ժողով, որը որոշում է ընդունում բոլոր միջոցներով դիմադրություն ցույց տալ թուրքերի ու քրդերի ոտնձգություններին։ Այս ժողովում ձևավորվում է մի խմբակ, որը ստացավ «Ազգային միություն» անունը։

Հրայրը դարձավ արևմտահայության ազատագրական պայքարի գլխավոր դեմքը։ Միանգամայն զերծ լինելով փառատեն-

չությունից, նա առաջ էր տանում ազատագրական պայքարի գործը՝ մնալով անհայտ ու խորհրդավոր։ Նա այն եզակի գործիչներից էր, որը հենց սկզբից պայքարի գլխավոր նպատակը համարեց հայ ժողովրդի քաղաքական անկախությունը, իսկ դրան հասնելու միջոցը՝ ազգի զինումն ու համազգային ապստամբությունը։

1890—1893 թվերին նա ղեկավար մասնակցություն ունեցավ Սասունի ինքնապաշտպանական կռիվներին։ Այդ տարիներին նա նաև հայդուկային շարժման կազմակերպիչն ու ղեկավարն էր, այդ շարժմանը ուղղություն տվողը։ Նրա ցուցումներով ու մասնակցությամբ էր գործում Գևորգի հայդուկային ջոկատը, որը 1893 թվին Տալվորիկի կռվում վճռական դեր խաղաց ու ապահովեց հայերի փայլուն հաղթանակը։

Այդ տարիներին Հրայրը Հնչակյան կուսակցության անդամ էր, Սասունում ու Տարոնում Հնչակյան կազմակերպության հիմնադիրը, այդ կուսակցության հանրահայտ գործիչներ Միհրան Տամատյանի ու Համբարձում Պոյաճյանի (Մուրադի) գործընկերը։

Հրայրը լավ էր հասկանում, որ Սասունի շարժումը առանց համազգային աջակցության ձախողման էր դատապարտված։ Նա այն հայ եզակի քաղաքական գործիչներից էր, որը ի սկզբանե դրեց հայ ժողովրդի բոլոր հատվածների ուժերի միավորման կենսական անհրաժեշտության խնդիրը։ Հրայրը բեղուն գրիչ ուներ և շատ էր գրում, թղթակցում հայկական թերթերին։ Նրա բոլոր հոդվածների ոգին ու պահանջը մեկն էր՝ ազատագրական ուժերի միավորում, տեղայնական տրամադրությունների դեմ անխնա պայքար, համազգային շահեր ու համազգային գործողություններ։ Նա էր հեղինակը «Հայ ժողովրդի փրկությունը իր միասնության ու համազգային զինված պայքարի մեջ է» հայտնի նշանաբանի, որ նրան բարձրացնում է հայ հասարակական-քաղաքական մտքի գագաթները։ Նույն նպատակին էր ծառայում նրա այցելությունը Կովկաս և անդամակցելը դաշնակցական կուսակցությանը։

Հրայրը անողոքորեն հարձակվում էր ազգի ուժերի մասնատման, տարանջատման բոլոր փորձերի, համազգային խնդիրների նկատմամբ անտարբերության ամեն մի դրսևորման վրա։

1895 թվին նա «Դրոշակին» գրեց. «Մենք՝ իբրև ժողովրդի զավակ, ու ծանոթ նրա բնավորությանը, նրա հոգու տրամա-

գրությանը և վերջին չորս տարիների գործունեությանը, կատարելապես համոզվեցինք և հարյուրավոր ապացույցներով տեսանք, որ կուսակցությունները շատ ավելի եղան ժողովրդի հիմքը քանդողները, քան օգուտ տվողները։ Արդյոք ամոթ չէ՞ր հայ հեղափոխական գործիչներին, որ հակառակ Մշո ու Սասնո վերջին չորս տարվա քաղցած, անգեն լինելու գոռում-գոչումին, իրենց ականջները փակեցին. թեև վերջնականապես հայի վիճակն այդպես (արյունոտ) էր լինելու... (նա) դիմանար մի քանի ամսից ավելի, և հեղափոխությունն այդ ընթացքում ընդարձակ ծավալ ստանալով՝ լրիվ չէր քայքայվի...

Ներկա հանգամանքներում, ինչպիսին մենք՝ հայերս ենք գտնվում, անխղճություն և մինչև անգամ դավաճանություն չէ՞ արդյոք, որ այդ կուսակցությունները բաժան են գործում, այդ ընթացքը անշուշտ մեզ դիտել է տալիս, որ եսական փառքի հետևից ընկած, անձնական կրքերից կուրացած՝ ջլատում են ուժերը, քան հզորացնում, մոռացել են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանությանն են ծառայեցնում գործը»։

Հայ հասարակական կյանքում կայծակի շանթ հանդիսացավ Հրայրի հայտարարությունը հնչակյան և դաշնակցական կուսակցություններին, որը 1895 թվին հրապարակեց «Դրոշակը»։ Դա ժողովրդի ուժերի միավորման ճիչ էր, ազգային միասնության կոչ ու մանիֆեստ, որը միանգամայն նշանակալից հնչողություն ունի նաև մեր օրերում։

«Վաղուց ի վեր հայ հեղափոխական գործում նշմարելի էր անձնական կրքերի և եսասիրական փառքի հետևանք հանդիսացող մեծ վնասները հայ հասարակության շահերին, նրա կենսական խնդիրներին։ Ժողովրդի քաղաքական, տնտեսական և բարոյական հալածանքների ներկա ժամանակներում փոխանակ այդ եսը կորչելու և հօգուտ ժողովրդի անհետանալու, գնալով ավելի ու ավելի հսկայական կերպարանք է ստանում, որով այն եզրակացությանն ենք հանգում, որ այդ արյան հեղեղում, ժողովրդի ներկա օրհասի մեջ, կուսակցությունների բաժանված լինելը, անձնական կրքերից բխած կուրությունը, եսասիրական փառքը ժողովրդին տանում են հավիտենական կործանման դուռը...

... Մենք հարյուրավոր փորձերով համոզվեցինք, որ կուսակցությունների բաժանվելը, երբ կա առաջանում է որպես հետևանք գաղափարների արմատական տարբերության, երբ ժողո-

վրդի խաղաղ ժամանակ կուսակցությունը պայմանավորվում է մի որևէ հասարակական հարցի կամ երևույթի մասին՝ ելնելով տարբեր աշխարհայեցողությունից, անբարոյականությունները բարոյականությունից զատողը, ճշմարտության արտահայտիչն ու ժողովրդի քայլերն առաջ տանողն է։ Իսկ հեղափոխական գործում, պատերազմի դաշտում, ժողովրդի ներկա դրության և իրերի այս տագնապալից վիճակում մանավանդ, երբ չկա գաղափարի տարբերություն, երբ հիմնաքարը, երկու կողմից էլ, մարդկանց նեղ «ես» մեջ է կայանում, այդպիսի կուսակցությունները ժողովրդի հիմքը քանդող ու կործանողներ են։...

Ժողովրդի անմիջական շահը պահանջել է և միշտ կպահանջի ընդհանուր ուժերի միացում։ Ինչո՞ւ...։ Որովհետև թշնամին, չթաքցնենք, ուժեղ է, համեմատաբար խիստ ուժեղ...։

Թող այդ կուսակցություններից յուրաքանչյուրն իր խղճին հարցնի, թե արդյո՞ք կուսակցական բաժանումը չի գլխավոր և բուն պատճառը ավերակների տակ Սասունը ծածկելու...

Թող հպարտանա միայն ինքը՝ ժողովուրդը, թող հանգստանա ժողովրդի խիղճը, թող նայի իր աքսորված, բանտարկված որդիներին, թող աչք հառի կախաղաններին, դեպի Հայաստանի հովիտն ու ձորը, ահա այնտեղ է, որ ժողովրդի արյան գոլորշին խառնվելով այրված տների ծխերին, հայ հեղափոխական գործի ղեկավարների գլխի շուրջը կամար կապած, բողոք ու լուտանք է տեղում։

Եղբայրնե՛ր, ի՞նչ ունենք բաժանելու... Փա՞ռք»։

Մի այլ անգամ նա գրեց. «Քաջ գիտակցեք, եղբայրներ, որ եթե այս դրությունը ամիսներ տևի, մի օր հանկարծ հայ հասարակության հուսահատված լինելու մասին եք լսելու։ Հանուն տարոնցի ու սասունցի հայի մենք կարող ենք անվարան ասել և հաստատել, որ մենք մեզ նշանաբան ենք ընտրել՝ «Մահ կամ ազատություն», այլևս առանց մտածելու թշնամու ուժերի անհամեմատ առավելության մասին։

... Վստահ եղեք նաև, որ եթե բոլոր կողմերից էլ անօգնական մնանք, պիտի նաև մնանք միշտ արի, անհողդողդ ու անընկճելի, բայց հողի տակից էլ անծեք ենք կարդալու այն հայերին, որոնք արյան հովիտներում մեր դիաթավալ խաղալուն հանդիսատեսն են, և սնոտի առարկություններ են բերում, առանց շաղելու և նկատի առնելու իրենց շուրջ գործադրված տնտեսական

ու քաղաքական հալածանքը, բանտարկությունն ու աքսորը, մեռցնելն ու խժ.ժությունը և այլն...»։

Հրայրը Անդրկովկասում էր, երբ կատարվեց Սասունի կոտորածը, որի մասին Վարդան վարդապետը գրում է. Սասունը «ավեր ու անապատ դարձրին, երբ Երզնկայից եկավ 4-րդ բանակի հրամանատարը, որն անձամբ պատերազմի վայր գնաց և տեսնելով արևի տակ մնացած դեռևս անթաղ անթիվ դիակները, որոնց հոտը տարածված էր չորս ժամ հեռավորության վրա, հրամայեց զորքերին ու քրդերին, որ մի քանի օր զբաղվեն այդ դիակները ձորերի, ջրերի ու փոսերի մեջ անհետացնելով»։

1895 թ. Հրայրը 40 զինված մարտիկներով հասավ Կարս՝ սահմանն անցնելու համար։

Այս անցումն ու ճամփան դեպի Երկիր Հրայրին այն եզրակացությանը բերեցին, որ մարդական ջոկատների նման տեղափոխությունը արդյունավետ չէ և պատճառ է դառնում մեծ թվով երիտասարդ ուժերի ոչնչացման։ Եվ նա գրեց. «Քանի որ օգնության ձեռք չենք կարող երկարացնել Երկրի խորքերը, մեզ միայն կմնա ջանալ ապրանք հասցնել այդ կողմերը...»։ Հրայրն ու Թաթուլը (Արամ Արամյանը) մի խմբի հետ Բասեն են հասնում, որտեղ թուրքական իշխանություններին հաջողվում է Թաթուլին բռնել ու կախաղան բարձրացնել։ Նա ճոճվելով կախաղանից, գոչեց. «Կեցցե հեղափոխությունը, կեցցե ազատությունը։ Այս կախաղանով միայն ինձ եք սպանում, բայց հեղափոխությունն ու ազատությունը սպանել չեք կարող։ Այս կախաղանի միջոցով դուք լոկ իմ գաղափարներն եք տարածելու»։ Բանտ ընկավ նաև Հրայրը, բայց շուտով քաղաքական բանտարկյալների մի փոքր խմբի ներում շնորհվեց և նա ևս բանտից ազատվեց։ Նա մասնակցեց Դալիբաբայի ճակատամարտին, որտեղ երկու տասնյակ հայդուկներ փայլուն հաղթանակ տարան ավելի քան 500 քրդերի դեմ։

Հրայրի վրա ցնցող ազդեցություն ունեցան 1894—96 թվերի կոտորածներն ու դրանց հետևանքով ստեղծված իրավիճակը։ 1896 թ. ապրիլի 8-ին նա գրեց. «Անցյալ կոտորածը բոլորովին ուժասպառ է արել ժողովրդին։ ... Մի քանի ամիս առաջ նրա զոմերն ու ախոռները լիքն էին աշխատող գոմեշներով, եզներով, կաթնատու ոչխարներով ու կովերով, այսօր, այդ բոլորի փոխարեն, նա իր ձեռքն է մեկնում հաց մուրալու համար։

Եթե տիրող խստությունները չլինեն, եթե կյանքի մի փոքր

ապահովություն ունենա, (նա) իր անխոնջ ձեռքերով էլի կկարողանա պահել իր երեխային ու կնոջը, բայց նա չգիտե, թե վաղը ինչ է կատարվելու, սպասում է արյան նոր հեղեղների...

Էլի ո՞ւմ համար աշխատել, ո՞ւմ համար արյուն-քրտինք թափել, քանի որ վտանգը դամոկլյան սրի պես իր գլխի վրա հավիտյան կախված է տեսնում։ ... Ամեն տեղ սարսափ ու արհավիրք։ Հայ ժողովուրդ, ազատությունդ փնտրի միայն կռվի մեջ»։

Այդ օրերին Հրայրի առաջ ամբողջ հասակով կանգնեց հայ ժողովրդի ամբողջական ոչնչացման վտանգը և նա ելք էր փնտրում ահագնացող վտանգի առաջն առնելու համար։ Այդ մտորումները նրան նորից ու նորից հանգեցրին այն համոզմունքին, որ փրկության միակ միջոցը ինքնապաշտպանությունն է։ «Որ հայ գավառը կամ գյուղը մտնես,— 1896 թ. մայիսին գրեց նա,— առաջինը լսում ես նրա շարշարանքների նկարագրությունը։ Ամեն օր այլևայլ գավառներից հասնող լուրերը քստմնեցուցիչ են. միշտ թալան, միշտ սպանություն, խլամացում, փախուստ և այլն։ Համոզված ենք, որ եթե ամիսներ շարունակվի ներկա անտանելի դրությունը, կոչնչանա տաճկահայ ժողովուրդը, դրա միակ դարմանն ու դեղը հեղափոխական շարժումն է, ապստամբությունն է, որը կորոշի տաճկահայերի ապագան...»։ Այո, ինքնապաշտպանություն, այո, ապստամբական կռիվներ, այո, սեփական ուժերի մոբիլիզացիա և ոչ թե զանազան ակնկալություններ։

«Հայ ժողովուրդ,— գրում է Հրայրը,— անօգուտ է Եվրոպան, ավելի արյունածարավ, քան մեր դարավոր ոսոխը։ Չհավատաս նրան երբեք։ Նա արյան և անմեղ զոհերի մեջ է որոնում իր շահերը։ Մեր հույսը պետք է լինի մեր վրա...»։

Հրայրը մինչև 1896 թ. ամռանը մնում է Բասենում և ստեղծում մարտական ջոկատներ Անդրկովկասից զենքերի փոխադրումն իրականացնելու համար։ Թուրքական իշխանությունները հոտն առնում են և Հրայրին բռնելով ուղարկում են Ղզլաղաջ, նրան զրկելով գյուղից դուրս գալու իրավունքից։ Սակայն անխոնջ ու տագնապների մեջ ալեկոծվող Հրայրը, անտեսելով այդ արգելքը, Սերոբի հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցավ հայդուկային շարժման ծավալմանը։ Նա հասկացել էր, որ «հայ ժողովրդի մեջ առաջացել էր ֆիդայաբար հարվածների տրամադրությունը։ Ամբողջ հայ զանգվածը զենքից զուրկ էր և, հետևաբար, հավաքական ըմբոստությունն արդյունավետ չէր

լինելու։ Թուրքերն ու քրդերը միայն շեշտակի հարվածից էին վախենում։ Այդպիսի հարված միայն ֆիդային կարող էր տալ»։ Հրայրը դեմ էր իրադարձությունների արհեստական արագացմանն ու ցուցադրական գործողություններով թուրքական իշխանությունների բռնությունների համար պատրվակներ ստեղծելուն։ Նա զգույշ, հաշվենկատ ու հեռատես քաղաքականության կողմնակից էր։ Այս հողի վրա հակասություններ ծնվեցին նրա և հայդուկների մի շարք ղեկավարների միջև, որն առավել սուր բնույթ ստացավ Աղբյուր Սերոբի սպանությունից հետո։

Նկատի ունենալով այս և նման մի քանի փաստեր, որոշ պատմաբաններ ու լրագրողներ հայդուկային շարժումը և Հրայրի գործելակերպը՝ համազգային ապստամբության նախապատրաստության քաղաքականությունը, իրար են հակադրում։

Թե հայդուկային շարժումը և թե համազգային ապստամբությունը պայքարի ձևեր էին նույն խնդիրների լուծման համար, դրանք ազգային ճնշումների դեմ պայքարի մեթոդներ են, մեկը հակազդեցություն է, գոյապահպանում, իսկ մյուսը՝ բռնության լծի խորտակում, այսինքն նույն շղթայի տարբեր օղակներ, որոնցից առաջինը հող է նախապատրաստում երկրորդի համար, հայ ժողովրդին մարտական շունչ ներարկում ապստամբության ընդունակ դառնալու համար։

Հարկ է նաև ըստ էության ըմբռնել, որ եթե Արևմտյան Հայաստանում համազգային ապստամբությունը որպես գաղափար, ժողովրդին ակտիվ գիրքորոշման մղող միջոց, իրական էր, ապա որպես պայքարի մեթոդ նրա հնարավորությունը շատ և շատ կասկածելի էր, թեկուզ այն պատճառով, որ Արևմտյան Հայաստանը ազգային կազմով միատարր չէր, հայը շրջափակված էր մահմեդական ֆանատիկոս զանգվածով, որը թշնամաբար էր տրամադրված ոչ միայն հայերի ազատագրական շարժումներին, այլ նաև հայ ժողովրդի գոյության բուն փաստին։ Բայց դա չի նշանակում, թե Հրայրը իր քարոզով ու պայքարով վնասում էր հայ ժողովրդի ազգային շահերին։

Հրայրը անընդհատ տեղից տեղ էր անցնում, ինքնապաշտպանության տեղական խմբեր ու մարտական ջոկատներ կազմակերպում, հոգ տանում նրանց զինման և Կովկասից զենքի փոխադրման կազմակերպման մասին։ Նա կազմակերպչական վիթխարի աշխատանք կատարեց Խնուսում ու Ախլաթում։ Այդ

աշխատանքները կազմակերպելիս նա նորից ու նորից շեշտում էր. «Ապավինել միայն սեփական ուժին, սեփական միությանն ու կազմակերպությանը»։ Բերելով նահատակված Սերոբի օրինակը, Հրայրն ասում էր, թե պետք է ջանալ, որ «ամեն հայ Սերոբ դառնա և ոչ թե ստեղծել մեկ-երկու Սերոբ ու նրանցից փրկություն սպասել»։

Իշխանությունները տեղյակ էին Հրայրի գործունեությանը և քայլերի դիմեցին «նրան ձեռք գցելու»։ Ջնայած Հրայրը գյուղացու հագուստով մեն-մենակ, երբեմն նույնիսկ ցերեկով ու անգեն էր շրջում գյուղերում ու պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքներով զբաղվում, նույնիսկ «հայտնի դավաճանները, որոնք շատերի մահվան պատճառ էին դարձել, չէին հանդգնում այդ նոր մարգարեին վատություն անել»։ Համաժողովրդական սերն ու վստահությունն էր նրան փրկում վտանգներից։

Իսկապես, այդ ժամանակաշրջանում արևմտահայ մտավորականության շարքերում դժվար է գտնել մեկ ուրիշին, որն այնքան խոր ազդեցություն և հմայք ունենար ժողովրդական ամենալայն զանգվածների շրջանում, որքան Հրայր Դժոխքը։

Հրայրը խստորեն պատժում էր անազնվությունը, վախկոտությունն ու մորթապաշտությունը։ Նա խիզախության և մարվտունակության ջատագով էր։ Դեռ 1894 թ. նա գրեց. «Այսօր Հայկական հարցը նոր և գեղեցկահույս շրջան է թևակոխում։ Այսօր ստրկական համբերությունը, գաղտագողի հառաչանքը, լռելյայն գայրույթը և խուլ բողոքը վերջանում են և նրանց հաջորդում է առյուծի մռնչյունը»։ Իսկ որպեսզի այդ մռնչյունը գործնական արդյունք ունենա, պետք է ծավալել համազգային շարժում։ Դրա համար նա անհրաժեշտ էր համարում, որ ամեն մի գյուղ ունենար ա) մարտական խումբ, բ) օժանդակ խումբ՝ կազմակերպչական և մատակարարման աշխատանքների համար, գ) այնպիսի ղեկավարություն, որն ի վիճակի լիներ իր հետևից տանելու տվյալ գյուղի ամբողջ հասարակությանը։

Համազգային շարժում ստեղծելու ձգտումը նրան տարավ Վան, որտեղ նա տեղի գործիչների հետ մշակեց համատեղ գործողությունների ծրագիր, համաձայն որի համաժողովրդական ապստամբությունը պետք է տեղի ունենար 1905 թվին։ Սակայն այս ծրագիրը դատապարտված էր ձախողման։

Սասունի հայության գլխին նորից սև ամպեր կախվեցին։ Սուլթանը միջոցներ էր մտմտում Սասունը ազատատենչ սասունցիներից դատարկելու համար և նա նորից որոշեց այդ անել լեռնաշխարհի հայ բնակչության ֆիզիկական ոչնչացման միջոցով։

Հրայրը տվյալ ժամանակահատվածում իշխանությունների հետ բախումը վնասակար ու վտանգավոր էր համարում, քանի որ համազգային շարժում դեռևս չէր ձևավորվել, որ սուլթանին հնարավորություն տար հոշոտելու ոչ միայն Սասունի և Տարոնի, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանի հայությանը։ Դրա համար էլ նա ամեն ինչ արեց այդ բախումը հետաձգելու ու առավել չափով մասնակի բնույթ տալու համար, սակայն նրան այդ չհաջողվեց։ 1904 թվականի ապրիլին թուրքական բազմահազարանոց բանակն ու աշիրեթությունները շրջապատման մեջ առան Սասունը, և Հրայրն, իր աղնիվ ու հայրենասեր ոգու մղումով, մի կողմ դնելով իշխանությունների հետ վաղաժամ չբախվելու իր կարծիքը, Անդրանիկի ու Գևորգի հետ միասին վերցրեց ինքնապաշտպանական կռիվների ղեկավարությունը։

Հրայրը դառնությամբ է գրում, որ «այս կռիվը թշնամին պարտադրեց իրենց, թե կգանա օրհասական վայրկյանը ուշացնել։ Գուցե վերջին նամակն է, որ գրում եմ ձեզ, պետք է աշխատենք պաշտպանել մեր ժողովուրդը և մեռնել հեղափոխականի մահով»։ Նրա կանխազգացումը դժբախտաբար ճիշտ դուրս եկավ։

Հրայրի զոհվելու առիթով է ստեղծված հետևյալ երգը՝

Սասուն գավառ սև լալագին,
Ձկար նման Արմենակին,
Առավոտյան ժամն էր հինգին,
Հաշիվ չկար տանկաց զորքին։

Կանչեք փաշա Անդրանիկը,
Ձարկին պարոն Արմենակը,
Եղավ հայոց նահատակը,
Թաղին Սասուն ժամին բակը։

Տանկաց զորքը թնդանոթով,
Հայ քաջերը մոսիններով,
Քաջ Գևորգը փայլուն զենքով,
Ձարդեց թուրքեր հազարներով։

Արդեն նշվեց, որ Բերբերի հովտում տարած հաղթանակից հետո սասունցիները առաջ շարժվելու փոխարեն հետ քաշվեցին Գելիեգուզան։ Դա Բինբաշուն հնարավորություն տվեց հավաքել իր ցրված ուժերը և անցնել նոր հարձակման, ապրիլի 15-ի վիճակով իշխանությունները Սասունում ու նրա մերձակայքում կուտակել էին 40 հազար զինվոր ու սպա։ Ավելի մեծ էր հարձակմանը մասնակցող քրդերի թիվը։ Թուրքական հրամանատարությունը նպատակ ուներ Գելիեգուզանում վճռական ճակատամարտ տալ, սասունցիներին կոտորել ու Սասունի հարցը մեկընդմիշտ փակել։ Թուրքական 20 հազարանոց բանակը հյուսիսային ճակատում դիրքեր էր բռնել 20 կիլոմետր երկարությամբ, այսինքն՝ ռազմաճակատի այդ հատվածում ամեն մի մետրին բաժին էր ընկնում մեկ զինվոր։ Այդ նույն ժամանակ քրդերը, Մրկեմոզանի և Ծովասարի փեշերին հավաքված, պատրաստ էին գրոհին մասնակցելու։ Եվս մոտ 20 հազար թուրքական զորք ու ոստիկաններ, առատ ձյունի պատճառով, խճճվել էին դժվարանցանելի ուղիներում, լեռներում ու կիրճերում։ Ռազմաճակատը Ծովասարի փեշերից ձգվում էր դեպի Արևմուտք և, անցնելով Սասնա գետի աջ ափով, իջնում էր Գելի, իսկ մյուս թևով անցնում էր դեպի Անդոկ և նույնպես ձգվում մինչև Գելիեգուզան։

Ապրիլի 14-ի առավոտյան 300 թուրք զինվորներ և 7000 քրդեր հարձակվեցին Գելիեգուզանից 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մերկեր գյուղի վրա։ Սասունցիները «զբաղված էին դատարկ փամփուշտները լցնելով»։ Լսելով հարձակման մասին՝ Մուրադը մի քանի հայդուկի հետ գնաց Մերկեր և Թշնամուն փախուստի մատնեց։ Հաջորդ օրը թուրքերը հարձակումը կրկնեցին։ Բայց այդ օրը առավոտյան տեղ էր հասել Գևորգը իր խմբով և Խասգյուղի Փոթորիկ քահանայի հետ դիրքեր էր գրավել Բերբերի հովտի այն մասում, որտեղ նախորդ օրը թուրքերի ռազմաճակատային գիծն էր։ Քրդերը թուրքական հրամանատարությունից թարմ ուժեր ստանալով երկրորդ անգամ փորձեցին Մերկերի վրա գնալ։ «Մերոնց տեսնելով և թուրք պահապանների տեղ ընդունելով, բարևում են։ Նրանց բարևի պատասխանը լինում է Գևորգ Չաուշի արձակած գնդակը։ Թշնամին հանկարծակիի է գալիս։ Կռիվը տևում է երկու ժամ, պարտված

քրդերը հեռանում են՝ իրենց հետ տանելով մեկ սպանված և մեկ վիրավոր»[159]։

Գևորգն արդեն «Անդոկի պաշտպանության գլուխն էր կանգնել։ Հեռվից քրդական խուժանը և կանոնավոր զորքը առաջանում էին։ Հանգիստ ու առնարյուն՝ թողեց, որ թշնամին մոտենա՝ հայերի դիրքերից ոչ մի շարժում, ոչ մի հրացանի ձայն։ Թշնամին համոզված, որ այդտեղ սպասողները իրենց մարդիկ են, համարձակ ու աներկյուղ մոտենալով՝ իսլամական բարև տվեց.

— Սելամեն ալեքիմ...

Այդ ժամանակ հրացանները որոտացին...

Գևորգը հանկարծակիի եկած ու փախչող թշնամու հետևից բղավում է.

— Ո՞ւր, ո՞ւր եք գալիս, Գևորգ Չաուշի բո՞ւչը...» («Դրոշակ», 1907 թ., № 10)։

Ապրիլի 16-ին Խիանքի և Փասուրի «կողմից եկել էր երկու վաշտ զորք՝ փակելու համար Իշխանձորի ճամփան, որպեսզի ժողովրդից ոչ ոք դուրս չգա գյուղից գավառ գնալու համար»։ Կռիվներն սկսվելուց ի վեր վտանգի և հարձակման ենթակա գյուղերը կամաց-կամաց հարկադրված էին քաշվել դեպի Սասնո կենտրոնական մասը։ Այժմ հերթը եկել է Իշխանձորցիներին։ Իշխանձորի մեջ քաջ կռվողի համբավ ունեին Մուշեղը, Աբրոն, Լևոնը, Մուկուչը ու տերտերի տղաները։ Թուրքական զորքին միացել էին նաև Խուլբի աշիրեթները։ Կռիվն սկսելու լուրը հասել էր Տալվորիկ։ Սմբատը, որ այդ ժամանակ Տալվորիկում էր, «չկրնալով իր դիրքերը թողնել, օգնության է ուղարկում Հլողինքի իշխաններին, Պոլոյի Գևոյին և Օսմանին»։ Սրանք մի քանի զինվորներով Իշխանձոր են հասնում ու բարձրանում Կապլորաքար և կռվի մեջ մտնում զորքի հետ»։ Երբ Իշխանձորի ժողովուրդը փոխադրվում է, իսկ թշնամին ցրտի պատճառով քաշվում է մինչև Սպիտակ սար, մեր կտրիճներն էլ վերադառնում են Տալվորիկ[160]։ Հաջորդ օրը Վահանը Սմբատին նամակ է գրում՝ ժողովրդին Գելի տեղափոխելու և միաժամանակ «թշնամուն Դաշտի մեջ զբաղեցնելու և չթողնելու, որ իր ամբողջ ուժերը կենտրոնացնի Սասունի վրա», նա հանձնարարում է, որ Առաքելը և Պողոսը հինգ ընկերներով Դաշտ գնան «այնտեղ էլ կռիվներ առաջ բերելու»։ Վերջինները, երբ Կռիվ են հասնում, հանդիպում են բալաքցի քրդերին, որոնց «հետ մեկ և կես ժամ կռվելուց հետո, անցնում են դեպի Դաշտ»[161]։

Գելիեգուզանի վրա առաջին ընդհանուր հարձակումը տեղի ունեցավ ապրիլի 15-ին։ Հայդուկները թուրքերին ետ մղեցին։

Նրանք միահամուռ հակագրոհի գնացին և Թուրքերին ոչ միայն թույլ չտվեցին մի թիզ անգամ առաջ շարժվել, այլև հարկադրեցին որոշ դիրքերից ետ քաշվել։ Տեսնելով, որ գրոհը հաջողություն չի բերում, Թուրքական հրամանատարությունը որոշեց նեղացնել շրջափակման օղակը և ամենօրյա ռմբակոծման միջոցով հարկադրել սասունցիներին վատնելու իրենց ռազմամթերքն ու մյուս պաշարները և ապա միայն վճռական գործողությունների դիմել։ Թուրքերի համար դա ճիշտ որոշում էր, որովհետև նրանք ունեին գերակշիռ ուժեր, ռազմամթերք և մշտապես համալրումներ էին ստանում, իսկ սասունցիների ամեն մի կորուստի զոհվելը նկատելի բացասական ազդեցություն էր ունենում նրանց պաշտպանունակության վրա։ Ինչ վերաբերում էր ռազմամթերքին, ապա սասունցիներն այն ոչ մի տեղից ստանալ չէին կարող, որովհետև արտաքին աշխարհի հետ կապը կտրված էր։

Ապրիլի 17-ին Ղասրմ բեկը մտնում է Շատախ, բայց տեսնելով, որ գյուղերը դատարկ են, մոտենում է Գելիին ու նորից հարձակվում գյուղի վրա։ Հայերը հակահարձակման են անցնում, քրդերը մի քանի զոհ տալով՝ փախուստի են դիմում[162]։ Ապրիլի 19-ին Թուրքական ուժերը բոլոր կողմերից առաջ շարժվելով՝ ավելի են նեղացնում պաշարման օղակը. «Հարձակվող զորքերի թիվը կրկնապատկվեց։ Ամեն օր շրջապատի քուրդ գյուղերից հարյուրներ ու հազարներ Սասուն էին հասնում պաշարողներին օժանդակելու, անցքերն ու կիրճերը պաշտպանելու համար»։ Թուրքական ու քրդական ուժերի կողմից պաշարվում է Վերին Սասունի 42 գյուղ[163]։

Ապրիլի 18—19-ը թշնամին բազմահազար քրդերի օգնությամբ Տալվորիկի ուղղությամբ ևս նոր հարձակում ձեռնարկեց։ Հայերը թողեցին Տալվորիկի բարձունքները և ժողովրդին առաջնորդեցին դեպի Գեբինի արևելյան լանջը։ Չնայած սասունցիների համառ դիմադրությանը, Թուրքերը հարավից մոտենում են Տալվորիկի բարձունքներին, իսկ հյուսիսից նրանք Գելիեգուզանի մերձակայքում էին։ Այսինքն՝ հայերի ձեռքում էր մնացել Գելիեգուզանի և Տալվորիկի միջև ընկած 20 կիլոմետր լայնություն ու 25 կիլոմետր երկարություն ունեցող մի տարածք, որի վրա էր կենտրոնացել Սասունի ողջ բնակչությունը՝ մեծ ու փոքր, ահել ու ջահել և մահ ու կենաց կռիվ էր մղում 70—80 հազար հոգուց բաղկացած Թուրքական բանակի ու քրդերի դեմ։

1904 թվականի մայիսի 15-ին Մուշից ուղարկված մի նաս-

մակում կարդում ենք, որ Գելիի դեմ կռվում էին 12 վաշտ զորք ու բյուրավոր քուրդ։ Մեկ հայի դեմ 200—300 թշնամի էր կանգնած։

Գելիեգուզանը Սասունի ամենամեծ գյուղերից մեկն էր։ Նա թիկն էր տվել Անդոկի փեշերին և գետակով բաժանվում էր երկու մասի։ Գյուղը մեկ տասնյակից ավելի թաղեր ուներ, որոնցից յուրաքանչյուրը, ժամանակակից պատկերացմամբ, առանձին գյուղ էր։ Իսկ այդ օրերին գյուղում հավաքվել էր լրացուցիչ 20 հազար մարդ՝ կին, երեխա, ծեր, հիվանդ, որը լուրջ դժվարություններ էր ստեղծել պաշտպանների համար։

Անդրանիկը հայդուկներին և զինված խմբի ղեկավարներին ժողովի հրավիրեց ու նրանց հետ քննարկեց պաշտպանության պլանը։ Ըստ դրա «Զաթոն, Փուրթոն, Սրապիոնը և մի քանի աղբեցի կտրիճներ դիրք են բռնում Տավրների վերևի ավերակ վանքի տեղը, Մխիթարի խոռում դիրք են բռնում Մակարը, Կարապետը, Եղոն, Մճելնի (աղբյուրի) գլխին՝ Հաջին, զինվոր Գրիգորը, Օսեի Ավեն և Կիրակոսը, Կարմիր քարերին՝ Սարգիսը և Ղազարը, Տալազարի գլխին՝ Մոկացին, Քեաթիպ Մանուկը և ռես Մանուկը, Բոզնոցներում՝ Մխիթարը, Ջոռե Օհանը և մի քանի շենիկցի, սեմալցի և գելիեգուզանցի կտրիճներ, Քեփրիշերիֆ խանում և Աղլեզի քարերին՝ Գևորգ Ջաուշը և Անդրանիկը, Բերբերի հովտի բերանին՝ Ավետիսը և Արամը, Տիրացու Օհաննեսի գոմում՝ Մուրադը և Կուրավեցի Քեռին»[164]։ Հայերի դիրքերը ղեկավարվում էին սուրհանդակների միջոցով։ Հրամանատարական կետը Գրեգոլի բարձունքի վրա էր, որ հնարավորություն էր տալիս հրամաններ տալ նաև ազդանշանների միջոցով։ Ապրիլի 20-ին պետք եղավ ամրացնել նաև հետևյալ դիրքերը. «Ամպրնեբի գլխից մինչև Շաշկա և Մուշ պաշտպանեցին Սմբատը և փարկացի Սարգիսը։ Շիքինակի արտերը՝ Անդրանիկը, Մուրադը, Ավետիսը։ Խտանի կողմից մինչև Փուշփուշի տակ՝ Գևորգ Ջաուշը, Արամը, Սմբատը և Մոկացի Գրիգորը»։

Յուրաքանչյուր խումբ ուներ 10 սարքին հրացան, որոնցից չորսը՝ մոսին, մնացածները՝ բերդանկա և չախմախլի։

Թշնամին իր թնդանոթներն ավելի է մոտեցնում և տեղակայում մերոնց բռնած դիրքերի դիմաց։ «Կռվի միջոցին Հաջին և զինվոր Գրիգորը իրենց դիրքերից ավելի առաջ անցան և սկսեցին կուրծք կրծքի կռիվը։ Մերոնցից 11 հոգի վիրավորվում ու ետ են քաշվում նշանակված դիրքը։ Թշնամու հրացանները քիչ

էին գործում, բայց թնդանոթները երբեք չռեցին, մեր դիրքերից հայտնի չէ, թե որ մեկի վրա 32 ռումբ արձակվեց։ Սեմալի և այս կռիվների ընթացքում 15 թնդանոթներ 1500 ռումբ թափեցին հայերի դիրքերի վրա»։ Գելիեգուզանի վրա հարձակման մասնակցող քրդերը ևս «զինված էին կանոնավոր հրացաններով և պարեն էին ստանում, բայց, ի վերջո, Գելիեգուզանն այդ օրն անվնաս մնաց, հայերի կորուստը թեթև, իսկ հակառակ կողմինը՝ ստվարաթիվ էր»։ Սակայն թշնամին Գելիեգուզանը գրավելու մտքից չէր հրաժարվում։ Երեք օր շարունակ թուրքերը հրետանու գնդակոծությունների ուղեկցությամբ շարժվում էին Գելիի վրա, բայց հանդիպելով սասունցիների համառ դիմադրությանը, ետ էին մղվում։ Թուրքական հրամանատարությունը, աննկատ, թնդանոթներն է՛լ ավելի մոտեցրեց գյուղին, որը հնարավորություն տվեց ուղիղ նշանառությամբ հարվածել հայերի դիրքերին և մեծ վնաս պատճառել։ Իսկ սասունցիները դիրքերը փոխել չէին կարող, որովհետև շրջապատված էին գարնանային հեղեղատներով։

Հայդուկների մի խումբ սկսեց վերականգնել Սատանի կամուրջը, որը միակ ուղին էր շրջապատումից ժողովրդին հանելու համար։

Ապրիլի 21-ին մառախլապատ, անձրևոտ օր էր։ Քյոսա Բինբաշին վճռել էր այդ օրն անպայման ընկճել հայերի դիմադրությունը և գրավել Գելիեգուզանը։ Սասունցիները՝ ծեր ու մանուկ, մասնակցում էին ճակատամարտին։ Հայերը կռվում էին աներևակայելի խելահեղությամբ, կյանքի գնով պաշտպանում յուրաքանչյուր թիզ հող։ Կանայք շալակով փամփուշտ ու սննդամթերք էին տեղափոխում, ոգևորում կռվող տղամարդկանց։ Գյուղի ռմբակոծությունը տևեց ամբողջ օրը։ Անձրևն ուժեղացավ, չախմախի հրացանների պատրույգները թրջվեցին և դրանք գործածության համար անպետք դարձան։ Իսկ այդ տեսակի հրացանով հիմնականում զինված էին հայերը։ Դրա հետևանքով թուրքերին հաջողվեց ընդհուպ մոտենալ հայերի դիրքերին (մինչև 200 մետր)։ Բայց ահա սասունցիները տեղատարափ կրակ են բացում և թշնամին ետ է ընկրկում։ Թուրքերը իրենց հարվածի գլխավոր օբյեկտը դարձնում են Մրճելներն ու Մխիթարի խոռը, որտեղ դիրքեր էին գրավել Սպաղանաց Մակարի և Կոտոյի Հաջիի ջոկատները։ Վերջինիս զբաղեցրած դիրքը գրավել հաջողվում է, սակայն Մակարը անսասան մնաց,

չնայած թուրքերը նրա դիրքերն անընդմեջ ռմբակոծության էին ենթարկում։ Հայերին հաջողվեց իրենց ձեռքում պահել նաև Գրեգոլն ու նրա շրջակայքը, որոնք վճռորոշ դեր էին խաղում գյուղի պաշտպանության գործում։ Հայերը նաև հակահարձակումների էին դիմում, որի շնորհիվ թուրքերը շփոթի էին մատնվում և զրկվում նոր, ընդհանուր գրոհ կազմակերպելու հնարավորությունից։ Այդ օրերի կռիվների մասին Մուշից ապրիլի 24-ին գրեցին. «Ապրիլի 20-ի գիշերն էր, որ թուրք զորքն ու քուրդ աշիրեթները ահագին բազմությամբ հարձակում գործեցին Գելիի վրա, որն արդեն պաշարված էր 10—12 լեռնային թնդանոթներով։ Առավոտյան ժամը 7-ից թընդանոթներն սկսում են որոտալ և հրացանաձգությունը քրդերի ու թուրքերի կողմից շարունակվում է մինչև երեկո։ Հայերը՝ ժողովուրդը և ֆիդայիները, դյուցազնաբար դիմադրեցին։

Ապրիլի 21-ին երկրորդ հարձակումը տեղի ունեցավ։ Առաջին օրը 125 և երկրորդ օրը 230-ից ավելի ռումբ գցեցին պաշարված հայերի վրա և լուրջ վնաս պատճառեցին։ Հայ խմբապետները ամրացրին իրենց պաշտպանական միջոցները, բայց թնդանոթների գործած ավերը այլ կերպ վճռեց խնդիրը։ Ավերմունքը մեծ էր։ Գյուղում հավաքված 20 հազարի չափ կանանց, երեխաների, ծերերի, հիվանդների լացն ու կոծը անտանելի էր»։

Եվ երբ մութն ընկավ, հայդուկներն ու ժողովուրդը մեծագույն կազմակերպվածությամբ անցան վերականգնված կամրջով ու հավաքվեցին Ալուշակ գյուղում։ «Իսկ երբ որոշեցին նահանջել,— մայիսի 15-ին գրում են Մուշից,— նախ գաղտնի ճանապարհներով գիշերը փախցրեցին կանանց և երեխաներին, ապա իրենք հեռացան, թեև ռումբերը կարկուտի նման թափվում էին»։

Դեպի լեռները շարժվել ու այնտեղ կռիվը շարունակել հնարավոր չէր։ Լեռները դեռ ձյունով էին ծածկված, սասունցիները ոչ ռազմամթերք ունեին և ոչ էլ սննդամթերք։ Միակ ելքը ժողովրդին Դաշտ իջեցնելն ու այնտեղի հայ բնակչությանն ապավինելն էր։ 115 հայդուկի ուղեկցությամբ ժողովրդի մի մասը շարժվեց դեպի Տարոն։ Ժողովրդին ուղեկցեցին Մուրադի, Սմբատի, Ֆահրադի և Ավետիսի խմբերը։

Հարկ է նշել, որ Սասունի մոտ 20 հազար հայ բնակչությունից Դաշտ տարվեց ընդամենը 1500—2000 հոգի։

Ապրիլի 22-ին թուրքերն ավելի մոտեցրին թնդանոթները և

սկսեցին գնդակոծել ոչ միայն գյուղը, այլ նաև ձորերն ու կիրճերը։ Թուրքական հետևակը մոտենում էր գյուղին, կատաղի կռիվ էր գնում յուրաքանչյուր թիզ հողակտորի համար։ Կռիվը շարունակվում է մինչև երեկո։ Թշնամին այդ օրն էլ գյուղ մտնել չի կարողանում։ Սակայն հայերի փամփուշտները սպառվելու վրա էին։ Որոշվում է գյուղից հեռանալ ու պարտիզանական կռիվներ մղել։

Ապրիլի 23-ին նորից սկսվեց թնդանոթների ռմբակոծությունը, բայց հայերի դիրքերը լռում էին։ Թուրքերը երկար ժամանակ չէին համարձակվում գյուղ մտնել, միայն երեկոյան, երբ նրանց հետախույզները հայտնեցին, որ սասունցիների դիրքերը դատարկ են, շարժվեցին առաջ ու մտան Գելիեգուզան։ Գյուղը գրեթե դատարկ էր։

Այդ օրերին եվրոպական թերթերը գրեցին. «Թուրքական զորքերը, հետապնդելով ազգաբնակչությանը, գնացին Գելիեգուզանի վրա, որտեղ նրանք բախվեցին հայ ազգաբնակչության հետ, որոնք այստեղ էին փախել բոլոր կողմերից և հասցրել էին խմբավորվել։ Սկսվեց արյունահեղ մարտ։ Թուրքերը պարտվեցին և ետ շպրտվեցին՝ մարտադաշտում թողնելով ավելի քան 136 սպանված, բազմաթիվ վիրավորներ և մեծ քանակությամբ հրացաններ։ Հայերից սպանվեց 7 հոգի...»[165]։

Ապրիլի 23-ից հայերը լեռներում ու կիրճերում մաքառում էին թշնամու դեմ, որը դանդաղ, բայց մեթոդիկ ձևով առաջ էր շարժվում։ Հայդուկների եռանկյունաձև ռազմաճակատը ձգվում էր Սխտոր-քարից մինչև Կրոշիկ և Գեբինից մինչև Կրոշիկ։ Կրոշիկի պաշտպանությունը ղեկավարում էին Անդրանիկն ու Մակարը, իսկ եռանկյունու մյուս երկու ծայրերը՝ Գևորգն ու Կորյունը, որոնք մայիսի մեկին անկատ անցան Ծովասար։ Երբ հաջորդ օրը թշնամին հարձակվեց նրանց դիրքերի վրա, դրանք դատարկ։

Սասունը շարունակում էր դիմադրել։ «Մինչև մայիսի 14-ը,— գրեցին եվրոպական թերթերը,— տասը օր շարունակ, 200 հայ ապստամբներ Տալվորիկի ու Գելիեգուզանի միջև խիզախաբար մաքառում էին գերակշիռ ուժերի դեմ։ Նրանց հաջողվեց կամուրջ գցել, որպեսզի հնարավորություն տան անցնելու 150 ընտանիքներին։ Այդ ժամանակ Մուշից եկան թուրքական օժանդակ ուժերը հրետանու հետ։ Բացառությամբ 22-ի, 300 ընտանիքների բոլոր անդամները՝ կանայք, երեխաներ, ծերեր կոտորվեցին։ Վերադարձավ Մուշ։ Նա հավաքեց հայկական գյուղերի բոլոր երևելիներին ու տանուտերերին և նրանց հարկադրեց սուլթանին շնորհակալական ուղերձ գրել»։

Հունիսի 13-ին Թավրիզից «Հնչակի» ստացած թղթակցությունում հետևյալ կերպ են նկարագրված Սասունի իրադարձությունները. «Երբ թուրքերի մտադրությունները հայտնի դարձան, 30 գյուղի հայեր ապաստանեցին Գելիեգուզանում, որտեղ ամրացել էին Անդրանիկն ու իր մի քանի հարյուր զինակիցները»։ Չնայած կատաղի հարձակումներին ու ռմբակոծությանը՝ դիմադրությունը տևեց մինչև մայիսի 3-ը, երբ որոշվեց քաշվել Տալվորիկ։

Լեռներում ու ձորերում ցիրուցան եղած հայերին ամեն օր սպանում են նրանց հետապնդող քրդերն ու թուրքերը։ Մուշ բերված գերիները տեղեկացնում են, որ փախստականներից շատերը ցրտից ու սովից մեռնում են լեռներում։

«Թուրքերը բացեիբաց խոստովանում էին, թե իրենց մտադրությունն է Սասունն ու նրա ժողովուրդը սրի ու հրո ճարակ անել»[166]։

Ինչպես երևաց մեջբերումներից, որոշակի չէ, թե հայդուկները երբ դատարկեցին Գելիեգուզանը։ Ոմանց կարծիքով՝ ապրիլի 21-ին, իսկ որոշ աղբյուրներ հավաստում են, թե այդ արվել է ապրիլի 22—23-ի գիշերը։ Իրականում գյուղից հեռանալը տևել է երկու օր։ Ապրիլի 21-ին Գելիեգուզանը թողեցին այն գյուղացիներն ու հայդուկները, որոնք գնալու էին Տարոն։ Այդ ընթացքում կռիվը շարունակվում էր։ Կռիվը շարունակվում էր նաև հաջորդ օրը, ապրիլի 22-ին, երբ մնացած ազգաբնակչությունը և ոչ մեծ թվով հայդուկներ գյուղը թողեցին ու շարժվեցին Կրոշիկի ու Անդոկի ուղղությամբ։ Նույն օրվա գիշերը Գելիեգուզանը թողեցին հայդուկների վերջին ջոկատները։

Այդ ընթացքում թուրքական 14 գումարտակ և 7 հազար քուրդ առաջ շարժվելով՝ հասան Տալվորիկ ու շրջապատեցին գյուղը, որտեղ 12 գյուղերի բնակչություն էր հավաքված։ Բիթլիսի կուսակալը պարծեցավ՝ «Ռումբերով Սասնա լեռներն եմ քանդելու»։ Երկու օր Տալվորիկն անընդհատ ռմբակոծվում էր։ Տալվորիկի պաշտպանությունը ղեկավարում էին Անդրանիկը, Գևորգն ու Վահանը։ Այստեղ էր հավաքվել հայդուկների մոտ կեսը։ «Ութ օր շարունակ,— գրեցին եվրոպական թերթերը,— Տալվորիկի բարձունքներում սասունցիները հերոսաբար դիմադրե-

ցին»[167]: Տալվորիկը հանձնվեց միայն այն ժամանակ, երբ լրիվ վերջացան նրա պաշտպանների փամփուշտները, իսկ թուրքերը թարմ համալրում ստանալով, ուժեղացրին ճնշումը։ Մայիսի 6-ին Տալվորիկն ընկավ։ Գրավելով Տալվորիկը, թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան։ «Կանանց խոշտանգում էին՝ կտրում նրանց կրծքերը, պատառոտում որովայնները, երեխաներին նստեցնում սրերի վրա, ծերերին՝ թրատում, կտոր-կտոր անում։ Սասունի շրջանն ամբողջովին ավերվեց և ամայացավ։ Մուշի հարթությունը ևս դարձավ հայության սպանդանոց»[168]։

Ականատեսներից մեկը մայիսի 15-ին Մուշից գրում է.

«Տալվորիկի մեջ զորքերն ու քրդերը շատ զորեղ դիմադրություն են գտնում, և երբ տկարանում են հայ քաջերի դիմաց, թենդանոթի ուժին են դիմում։ Ամբողջ 8 օր օրական 150—200 ռումբ են թափում հայերի վրա։ Եվ չկարողանալով քաջերին վնասել, կանանց և երեխաներին են ջարդում, խաբեությամբ ընտանիքների մի մասին գետն են նետում, փոքրիկ տղաներին սրախողխող անելուց հետո՝ նորից գետն են լցնում։ Տասներկու հերոսուհիներ, իրենց պատիվը փրկելու համար, երեխաներին գրկած, անագին բարձրությունից ջուրն են նետվում։ Մի քանի շենիկցի քաջեր ևս նեղ դրության մեջ գահավիժում են։ Անհոգ ու լրբացած զինվորներն անգամ զարմանում են սասունցի կանանց քաջության ու պատվասիրության վրա»։ («Դրոշակ», 1904 թ., № 7)։

Հայերի զանգվածային կոտորածները սկսվեցին ապրիլի 27-ից։

Ըստ Վարդան վարդապետի կազմած տեղեկագրի՝ 1904 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Անդոկի շրջանի 6 գյուղերում (Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Ալիանք, Գելիեմսուր, Գելիեգերման) այրվել է ու կողոպտվել 9 եկեղեցի, 641 տուն, սպանվել՝ 1772 հոգի (572 տղամարդ, 502 կին, 698 երեխա) և 2876 բնակիչներ մնացել են առանց ապաստանի և սննդի[169]։

Մեկ այլ աղբյուր հավաստում է, որ Վարդան վարդապետի բերած տվյալները հիմնականում համապատասխանում են իրականությանը։

«Դեյլի նյուսը» 1904 թ. հունիսի 10-ին գրեց.

«... Նորից մեզ ծանոթ ձեռագիրը՝ բռնաբարություններ, սպանություններ, հրեշավոր կոտանքներ, որին ենթարկվում են դեռևս ողջ հայերը։ Մահ սրից... մահ՝ ցրտից և քաղցից... ամենուրեք մահ... Եվ այս ամենը՝ քաղաքակրթության տեսադաշտում։ Եվ այս ամենը՝ «ի սեր մեր և սուլթանի բարեկամության»։

Ընդամենը 12650 բնակիչ են ունեցել իրադարձությունների

ընթացքում եղած գյուղերը։ Աղատվել են 5500 կին, երեխա և ծեր։ Ամենաեղեռնական ջարդը տեղի ունեցավ Տալվորիկի, Կրոշիկի, Գեբինի տարածքում, մայիսի 9-ին, երբ սպանվեց 3000 մարդ։ «Այդ կողմերն ապաստանած ու ամրացած հայերը, որոնց հետ էին իրենց կանայք ու երեխաները, չորս կողմից պաշարվելով, հարձակման ենթարկվեցին։ Բռնություններ կատարողներն էին թուրքական զորքերի 6 վաշտերը և նրանց հետ՝ 2000 քրդեր՝ Բսանաց գավառի և Իշխանձորի կողմից։ Սասունցիների կոտորածին մասնակցում էին նաև Դիարբեքիրի 8 վաշտ և գիլանցի շեյխ Ահմեդը (գիլանցի շեյխ Մուհամեդի որդին, որ 1894-ին Հայտնի դարձավ իր արյունարբու գործերով) 5000-ի չափ սասունցի, ջալալցի, բաղրանցի, շեյխգարանցի, բատկանցի, ուշկոթանցի՝ աշիրեթներով»։ Կոտորածներից հետո այդ բարբարոսը (շեյխ Ահմեդը) Մուշ գնաց և վալիի տեղակալի հետ «Սասունի 45 գյուղերի հողերը ստանալու պայմանագրեր կնքեց։ Քրդերն արդեն սկսել էին տեղավորվել հայկական գյուղերի ավերակների վրա»։

«Ստույգ տվյալներով,— 1904 թ. հուլիսին գրեց «Դեյլի Մեյլը»,— որ հիմնված է անգլիական և ֆրանսիական հյուպատոսների տեղում կատարած քննության վրա, 28 գյուղեր քարուքանդ են եղել և 6000 հոգի կոտորված է»[170]։ Սասունը դատարկվեց։ Սասունցին մնաց անտուն ու անօթևան։

Մուշից հայտնում են, թե կուսակալը, նկատի ունենալով, որ մեծ տերությունների հյուպատոսները մտադիր են քննություններ կատարել, «ամեն ջանք գործ է դնում բռնությունների հետքերը ջնջելու։ Դիակները ջուրն են լցվում»։ Քանդվում էին Սասունի ջատ գերեզմանները, որպեսզի հյուպատոսական քննության ժամանակ դիակները «վկայություն չտան»[171]։

Կ. Պոլսից հունիսի 17-ին գրեցին, թե Սասունի մասին տեղեկությունները շատ քիչ են։ «Վալին մայիսի 22-ին Գելիեգուզանում էր, ինչը նշանակում է, թե հեղափոխականների հետ կռիվը դեռ շարունակվում է։ Թուրքերը խոստովանում են, որ 25 գյուղ քանդված են։ Գաղտնի լուրերն այս թիվը հասցնում են 40-ի։ Մարդկային կորուստների մասին որոշակի թիվ չկա։ Ոչ ոք չգիտե ավերված գյուղերի վերապրածների ճակատագրի մասին, իհարկե, եթե այդպիսիք կան»[172]։

Մուշ բերած գերիները տեղեկացնում են, թե «փախստականներից շատերը ցրտից ու անոթությունից մեռնում են լեռներում»։

«Դեյլի նյուսի» թղթակիցը հունիսի 17-ին հեռագրել է. «Մայիսի 8-ին Գելիեզուզանից փախչող հայերը կոտորվեցին այնպես, ինչպես 1894 թվականի ջարդի ժամանակ։

Հետ մնացողներն ու անձնատուր եղողները թուրքական և քրդական ենթգուլյան զոհ դարձան։ Մահվան ենթարկվելուց առաջ, գազանաբար բռնաբարվելուց հետո, կանանց ստինքները կտրել են։ Երեխաների մի մասին կտոր-կտոր, իսկ մյուս մասին էլ, ժայռերին խփելով, ջարդ ու փշուր են արել»։

Սակայն, չպետք է կարծել, թե հայերը հանձնվում կամ ոչընչանում էին առանց դիմադրության։ Ամենուրեք նրանք ոչ միայն դիմադրում, այլ պատերազմ էին մղում թուրքերի դեմ և զոհվում էին որպես իսկական մարտիկներ։ Սասունին օգնելու նպատակով, Դաշտի գյուղերում զինված ելույթներ կազմակերպելու մտադրությամբ, Տարոն մեկնած հայդուկների խումբը, որը ղեկավարում էին Առաքելն ու Պողոսը, կանգ են առնում Բերդակ գյուղում։ Ապրիլի 21-ին թուրքերը 300 զինվորներով շրջապատում են գյուղը և խուզարկում տները։ Հայդուկները հարկադրված տներից դուրս են գալիս ու թշնամու հետ կռվի բռնվում, որ տևում է մինչև մութն ընկնելը։ Մութն ընկնելուն պես հայդուկները հեռանում են լեռները։

Հայդուկների հեռանալուց հետո թուրքերը հաշվեհարդար են տեսնում բերդակցիների հետ։

Ամենուրեք մարտեր էին մղվում։ Սասունը պարտիզանական կռիվների բոցերի մեջ էր։ Ռազմամթերք և օգնական ուժեր բերելու համար Մուրադի ղեկավարությամբ Վան ուղարկվեց մի խումբ։ Հունիսի 10-ին Մուրադը վերադառնում է Վանից՝ որոշ քանակությամբ զինամթերք հայթայթած։

Մայիսի 2-ին, Ծովասարում, նոր հարձակում է կատարվում Անդրանիկի խմբի վրա։ Գործի են դրվում թնդանոթները։ Հայդուկները թշնամու կրակին չեն պատասխանում։ Առաջ է շարժվում հետևակը, և երբ մոտենում է հայերի դիրքերին, սկսվում է հրացանային ուժեղ համազարկ։ Մարտը տևում է մինչև մութն ընկնելը։ Թուրքերը հեռանում են։ Անդրանիկը շարժվում է դեպի հյուսիս՝ Գևորգի խմբին միանալու։ Առաքելոց վանքից մինչև Բիթլիս տանող ուղիների վրա վխտում էին թուրքական զորքերը։

Գրում են եվրոպացի ականատեսները. «Բիթլիսի վալին, որ անձամբ էր ղեկավարում զորքերին ու քրդերին, որպեսզի եվրոպական հյուպատոսները չկարողանան տեղում արձանագրել զինվորների կողմից կատարված դաժանություններն ու պարզել զոհվածների թիվը, հրամայեց դիակները կտրատել մաս-մաս ու գետը գցել։ Դիարբեքիրից եկած ճամփորդները պատմում են, որ իրենք Տիգրիսի ափին տեսել են մարդու մարմնի կտորտանք, որ ափ էր նետել գետը»[173]։

Թուրք-քրդական գլխավոր ուժերը շարունակում էին մնալ Սասունում և «սանրել» լեռնաշխարհը։ Թուրքերը շտապում էին սասունցիներին օր առաջ ոչնչացնել, որպեսզի նրանք միջոց չգտնեին Անդոկի անառիկ դիրքերում ապաստանելու, որովհետև այդ դեպքում հաղթելն անկարելի կդառնար։

***

Սասունցի ազգաբնակչությանը դեպի Դաշտ ուղեկցող հայդուկային խմբի մարտական գործողություններից ամենանշանակալիցը Կոփի կռիվն էր։ Ժողովրդին Դաշտ հասցնելուց հետո խումբը բարձրանում է Ծովասար ու կանգ առնում Բարձր Աստվածածնի վանքի ավերակներում։ Սմբատը հանկարծ նկատում է, որ Տափքի կողմից վանք են շարժվում թուրքական զորքերը, իսկ Կոփի կողմից՝ քրդերը։ Հայերը դիրք են գրավում երեք կետերի վրա. Սմբատի ու Գրիգորի խումբը՝ մոտակայքում գտնվող գոմում, Ֆահրատի ու Արամի խմբերը հարձակվում են Կոփից եկող քրդերի վրա, իսկ Մուրադի և Ավետիսի խմբերը դիրքեր են բռնում Տափքից եկող զորքերի դեմ։ Սկսվում են ծանր մարտեր։ Սասունցիներից երկու հոգի սպանվում և երեքը վիրավորվում են։ Նրանց դիրքերը հնարավորություն չէին տալիս եռանդուն գործողությունների դիմելու։ Հարկ էր թշնամուն հարվածել գետի մյուս ափից։ Հայդուկների մի մասն անցնում է վարարած գետը և թշնամուն հարվածում թիկունքից։ Գելիեզուզանի տերտերի ղեկավարությամբ օգնության հասած սասունցիները նեղն են զցում թուրքերին։

Թշնամին նահանջում է, իսկ հայդուկները մտնում են ջուրը՝ գետի մյուս ափն անցածներին միանալու համար։ Մութ գիշեր էր։ Նրանք իրար կորցնում են։ Խմբի հիմնական մասին, մոտ 70 հոգու, հաջողվում է անցնել Կուրտիկ։ Հայդուկները քաղցած էին։ Նրանք երեք օր ոչինչ չէին կերել։ Երկու հոգի սովից ու ցրտից մեռնում են։ Տասը ժամ Կուրտիկի վրա թափառելուց հետո խում-

բը արշալույսին հասնում է Սիմ լեռան գագաթը՝ Ծիրին-Կատար։ Այնտեղից ցերեկով վտանգավոր էր Դաշտ իջնել և, չնայած սառնամանիք էր ու քաղցած էին, խումբը որոշում է օրն անցկացնել լեռան գագաթին։ Սմբատն ու Գելիի տերերը գնում են Հավատորիկ՝ հաց բերելու, բայց գյուղ մտնել չի հաջողվում, որովհետև այնտեղ 30 թուրք զինվոր կար։ Սակայն, երբ գյուղացիներն իմանում են, որ լեռներում քաղցած հայդուկներ կան, նրանց թաքուն սննդամթերք են ուղարկում։

Սասունը հայերից դատարկելու քաղաքականությունը իրականացվում է ոչ միայն կոտորածների, այլև նրանց Սասունից դուրս հանելու միջոցով։ Պատճառաբանելով, թե Սասունում սով է, իշխանությունները փոխանակ սննդամթերքը Սասուն տեղափոխեին, սասունցիներին էին տանում Դաշտ։ Այդ տեղափոխությունը կատարվում էր ոստիկանության միջոցով և ուղեկցվում բռնություններով։

1904 թվականի հուլիսին կաթողիկոս Խրիմյան Հայրիկը նամակ է հղում Նիկոլայ II-ին։ Նա նշում է, որ կրկնվում են 1894—96 թթ. կոտորածները։ «Մուշում և Սասունում, Բիթլիսի վիլայեթի սահմաններում վտանգ կա, որ աղետը կընդունի լայն ծավալներ և կտարածվի հայերով բնակեցված մյուս մարզերում...»։ Կաթողիկոսը ցարին խնդրում է միջամտել, որպեսզի «վերջ դրվի բոլոր կոպիտ բռնություններին, իմ հոտին սպառնացող բոլոր դժբախտ աղետներին՝ Թուրքիայի սահմաններում»։ Կաթողիկոսը նաև նշում է, որ ինքը նման խնդրագիր է հղել Բեռլինի կոնգրեսին մասնակից մյուս պետություններին։

ԴԱՇՏՈՒՄ

Մայիսի 5-ից հետո կռիվների շարանը հիմնականում տեղափոխվում է Մշո դաշտ։ Դրանք, անկասկած, Սասունի ինքնապաշտպանության շարունակությունն ու հետևանքն էին։ Մինչ այդ էլ Տարոնում թուրքերի ու քրդերի հետ բախումներ ու կռիվներ տեղի էին ունենում, բայց դրանք մի նպատակ ունեին՝ իշխանությունների ուշադրությունը իրենց վրա գրավել և, որքան հնարավոր էր, թեթևացնել սասունցիների վիճակը։ Մինչդեռ մայիսի 5-ից հետո սկսված ընդհարումներն ու կռիվները ոչ թե

պլանավորված էին, այլ պարզապես հետևանք էին այն իրողության, որ Դաշտ էին իջել Սասունի հայդուկները, որոնք ակամայից բախվում էին Մուշում ու Տարոնում կուտակված մեծաթիվ զորքերի ու քրդերի հետ։ Դաշտում հայդուկները հիմնականում ապաստանել էին Արազ, Բերդակ, Քրդազոմ, Խասգյուղ և Վարդենիս գյուղերում։

Սասունն ընկճելուց հետո թուրքերը խստություններն ուժեղացրին Դաշտում, կողոպուտի նպատակով դեպի Տարոնի գյուղերը շարժվեցին նաև աշիրեթները։ Իշխանություններն ամեն ինչ անում էին Մուշի և Տարոնի մահմեդական բնակչությանը հայերի դեմ հանելու համար։ Այդ նպատակին էին ծառայում նաև Սասունում գտնված թուրքերի ցուցադրական թաղումները Մուշ քաղաքում։ «Մշո դաշտը,— գրեցին եվրոպական թերթերը,— ևս դարձավ սպանությունների վայր։ Սկսած մայիսի 5-ից՝ թուրքական զորքերը գետնի երեսից մեկը մյուսի ետևից ջնջեցին Բերդակի, Մկրագոմի, Ալիկրպոյի, Ավազ-Աղբյուրի, Առնիստի շրջանի գյուղերը։ Սպանությունների թիվն աճում է օրեցօր։ Սարսափն ու հուսահատությունն անհնար է նկարագրել»։

Կոտորվում ու թալանվում է Գոմեր, Դրինգ, Տատրագոմ, Ճեյխ-Յուսուֆ և Ակիտան գյուղերի բնակչությունը։ Օրեզգոնք գյուղում սպանվեց 19, Տերգևանքում՝ 9, Գեղաշենում՝ 8 հայ։

Հունիսի 6-ին Թավրիզից գրեցին. «Մուշից հայտնում են վրդովեցուցիչ լուրեր՝ կառավարական բռնությունների մասին։ Սուլթանի հրամանով տեղական փաշան և զինվորական հրամանատարը պատրաստում են կոտորած»։

«Դեյլի մեյլը» գրում է. «Դրմերգ, Առնիստ, Խարս, Մկրագոմ և մի քանի այլ գյուղեր ավարի ու հրդեհի են ենթարկված։ Բնակիչների մեծ մասը կոտորված է և նրանց հետել են ջրհորները կամ Մուրադ գետը»։

«Մուշը գրավել են թուրք զինվորները։ Քանդված գյուղերի 2000-ից ավելի կանայք և երեխաներ ապաստանել են այնտեղ։ Այս խեղճ, ողորմելի ժողովուրդը անոթությունից ու վախից կիսամեռ վիճակի մեջ թափառում է փողոցներում և ներկայացնում գթաշարժ տեսարան»։

Սասունն ու Տարոնը դարձան մարդու որսադաշտ։ Օր չէր անցնում առանց սպանության, խոշտանգումների, հրդեհի ու թալանի։ Մայիսի 1-ին քրդերը հարձակվում են Աշտիշատի վրա, սպանում մի քանի երիտասարդի, անարգում հայ նշանավոր դեմքերի գերեզմանաքարերը, կոտորում տեղում եղած հայերին և ապա հրդեհում են եկեղեցին։ Գյուղը թալանվում և 241 հոգի մնում է առանց ապրելու միջոցի։

1904 թ. հունվարից մինչև հունիսի 20-ը Դաշտում սպանվել

է 109, վիրավորվել 29, բռնաբարվել 47, լրիվ թալանվել ու առանց ապրուստի միջոցների է մնացել 5324 հայ։ Բայց եթե 1904 թ. կռիվներին և այդ ժամանակահատվածում հայերի կոտորածների թիվը 1000-ի չէր հասնում, ապա կռիվներից 20 օր ետ յաթաղանի զոհերի թիվը անցավ ութ հազարից։ Ըստ Մշո առաջնորդական փոխանորդի 1904 թ. հունիսի 28-ին կազմված տեղեկագրի, 1904 թ. առաջին կեսին Սասունում կոտորվել է 2809 տղամարդ, 2193 կին, 2771 երեխա։ Ընդամենը 7773։ Նույն ժամանակաշրջանում թալանվել ու ապրուստի միջոցներից լրիվ զրկվել է 8854 մարդ։ Վնասվել, պղծվել և թալանվել է 49 եկեղեցի։ Սասունում և Տարոնում անհետաձգելի օգնության կարիք ունեցողների թիվը կազմում է 14178 մարդ։

Ահա թե ինչու տեղեկագրի հեղինակը ութ հազար կոտորվածների առկայության դեպքում անգամ հարկադրված է նշել, որ «իրավ, կոտորածները մեծ թիվ չեն կազմում, բայց արդեն Մշո և հարակից գավառների հայերը կենդանի մեռելներ են և իրենց տաժանակիր կյանքը մարտիրոսություն է, որ շարունակվում է...»։ Այդ օրերին Մուշից ստացված մի թղթակցություն հայտնում է. «Հայերի անհանգիստ կացությունը բուն Սասունում նույնն է մնում։ Շատերը կան, որ անմատչելի լեռների, քարայրների և անտառների մեջ պահված են։ Ոմանք անոթության զոհ են դառնում։ Զորքերը և լրտես քրդերը անընդհատ հետազոտություններով գտնում են և ջարդում փախստականներին։ Նրանք, որ մի քիչ ռազմամթերք ունեն, թանկ են ծախում իրենց կյանքը, բայց շատերը նվազած, անզեն, անհաց՝ զոհ են գնում դահիճների սրերին»։

Մուշից հունիսի 19-ին նաև գրում էին, որ իշխանությունները առանձնակի խստությամբ հետապնդում են հայդուկներին. «Անդրանիկի վիճակը հալածական է և ավելի դժվար, քան առաջ, որովհետև տեղական իշխանությունները հատկապես նրա հետևից են ընկած»։

Իսկ ի՞նչ ճակատագիր ունեցան Մուշ քաղաք և Տարոն տեղափոխված սասունցիները։

Մուշից մայիսի 15-ին գրում են. «Երկու հյուպատոսներ անձամբ այցելեցին նրանց։ Քաղաք եկածներին արգելված է հայերի հետ հաղորդակցություն ունենալ։ Մերկ, անոթի, խոնավ գետնի վրա, հիվանդ և վիրավոր դրության մեջ են մնում, այնպես, որ օրեկան 4—5 մեռած են հանում այդ բանտից։ Հատկանշական է նաև այն, որ Մուշ բերված կանանց ու երեխաների զգալի մասի մարմնի վրա կացնի, սվինի և դաշույնի հարվածից առաջացած վերքեր կային»։

Մայիսի 26-ին կուսակալը հրամայեց բոլոր միջոցները գործադրել, կանգ չառնել նաև խոշտանգումների առաջ՝ Մուշում եղած 400—500 սասունցի սովյալներին՝ կանանց ու երեխաներին քաղաքից քշելու համար։ Այդ հրամանի հետևանքով «կանայք ու աղջիկներ են մարում, խելագարվում, ոտքերի տակ երեխաներ են մեռնում, զորանոցում հայ կանայք են բռնաբարվում»։ Սակայն դա չէր նշանակում, թե հայ կանայք ու երեխաները Մուշից դուրս էին քշվում, որպեսզի վերադառնան Սասուն։ Ընդհակառակը, Սասունի դռները սասունցիների առաջ փակված էին։ Նույնիսկ մեծ տերությունների հյուպատոսների միջամտությունը այդ հարցը չլուծեց։

1904 թ. հուլիսի 24-ին Մուշից գրում են. «Ստացվեց սուլթանի իրադեն, որով թույլատրվում է սասունցիներին վերադառնալ իրենց լեռները։ Սա Եվրոպային խաբելու համար է, որովհետև տեղական իշխանությունները ոչ մի կերպ թույլ չեն տալիս սասունցիներին բնակվելու Սասունում, հակառակ հյուպատոսներին տված խոստումների։ Այնտեղ շարունակում են զորանոցներ կառուցել։ Կառուցվում է 4 մեծ և 4 փոքր զորանոց»։

Հայերի վրա ճնշում էր գործադրվում, որպեսզի նրանք հրաժարվեն Սասուն վերադառնալու գաղափարից։ Ամեն օր նրանց խումբ-խումբ հավաքում էին և տանում կառավարության դուռը և ստիպում էին, որ հայտարարեն, թե «Որտեղ որ կառավարությունը որոշի, այնտեղ է մեր վաթանը»։

«Թագավորը Սասուն չի տա ձեզ, ասում են և այս միջոցով ուզում են նախապաշարել նրանց միտքը։ Ուրախալին այն է, որ ժողովուրդը մինչև վերջ պնդում է, որ չի ուզում ձեռք քաշել իր հայրենիքից, ուզում է այնտեղ գնալ, այն լեռները, որ շարունակ իրենց արյունով է ներկվել։ Ժողովրդական այդ համառությունը տեսնելով՝ մի քանիսին բանտարկեցին, մյուսներին վախեցնելու համար սպառնում են ցրել աշիրեթությունների մեջ»։ Սուլթանը խնդիր է դրել «սրով ու կրակով դատարկվող Սասունի քանդված գյուղերը տալ քուրդ ցեղերին... իսկ Դաշտի հողերի մի մասով ուզում են խաբել հալածական լեռնականներին, որոնք այսօր դրված են երկու կրակի մեջ»։

Կոտորածների վտանգը Տարոնում այնքան իրական էր, որ

տարոնցի հայը գերադասում էր սովամահ լինել Սասունում, քան զոհ գնալ յաթաղանին։

«Դաշտում տասը կետի վրա, ինչպես և վանքերը, թուրք զինվորներ են լցված և հետզհետե նոր զորքեր են բերում, ասում են, թե Կրուպպի թնդանոթները շարժման մեջ են դրված՝ Դաշտին սպառնալու նպատակով»։

Տարոնի հայությունը օգնություն էր հայցում, և հայդուկների մի մասը Դաշտ իջավ հենց այդ նպատակով։ Մայիսի 5-ին հայդուկները Մկրագոմում էին, երբ գյուղ եկան թուրքական զորքեր և ոստիկաններ՝ արյունարբու ավազակապետներ Ահմեդ բեյի, Ղասըմ բեյի և Հաջի Ֆերոյի գլխավորությամբ։ Եկել էին «գյուղում քեֆ անելու»։ Սկսվում է հրացանային համազարկ։ Թուրքերը դիրք են բռնում, նրանց «ձիերը հրացանների ձայնից խրտնելով՝ փախչում են և գյուղ լցվում։ Սմբատը վերցնում է երկու ձի և երկու ընկերոջ ուղարկում Խարս՝ կովի լուրը Մուրադին հաղորդելու։ Կռիվը տևում է մինչև երեկո։ Երեկոյան հեռվից նկատվում է առաջացող մեծ բազմություն։ Երբ բավական մոտենում է, հայդուկները հստակ լսում են՝ «Կովեցեք, տղերք, կովեցեք, հա, հասանք»։ Դրանք բալաքցի քրդերն էին, որոնք հայերեն խոսելով ուզում էին մերոնց խաբել։ Բայց շուտով պարզվում է նրանց կեղծիքը։ Տղաները անխնա կրակ են թափում մոտեցողների վրա։ Երբ մութն ընկնում է, բոլորը հեռանում են գյուղից։ Քանի որ Մեղրագետն անցնելու հնար չկար, նրանք գետի երկայնքով շարժվում են դեպի Հունան։ Ճանապարհին մի հայ նրանց է տրամադրում իր լաստը և նրանք, գետն անցնելով, գնում են Ալվառինջ։ Մկրագոմում թուրքերը կորցրին 12 հոգի։ Սակայն հայդուկների հեռանալուց հետո նրանք տասնյակ մարդկանց սպանեցին, 24 տուն հրդեհեցին, մեծ թվով հայերի խոշտանգեցին ու թալանեցին։ 448 մարդ մնաց առանց ապրուստի միջոցի։

Քեռին, Կուրավուում, իր վեց ընկերների հետ թաքնված էր Մուրադ գետի ափի գետնափորում։ Նրանց թաքստոցը նկատվում է։ Թուրքերը շրջապատում են գետնափորը։ Հայդուկները ներսից կրակ են բացում, թուրքերը ևս կրակում են, սպանվում են բոլոր հայդուկները։ Ամենուտեղ թուրքերը հարձակվում են, թալանում ու ավերում են Կուրավուն, խոշտանգում են գյուղացիներին։

«Ապրիլի 11-ից մինչև 30-ը, երբ անընդհատ գրոացին կառավարական թնդանոթները և կարկուտի նման ծեծեցին

Սասնա սարերն ու ապառաժները, Գևորգը ո՛չ դադար, ո՛չ հանգիստ, ո՛չ շփոթմունք ու երկյուղ չունեցավ։ Ղեկավարեց իրեն հանձնված խմբերը զինվորական անբեւեկայելի ճարպկությամբ, հասավ ամենուրեք ու ամենավտանգավոր կռիվներին՝ բյուրավոր զինվորների ու քուրդ աշիրեթների դեմ։ 19 օրվա հերոսական դիմադրությունից հետո, Անդրանիկի հետ ժողովրդի գլուխն անցած, Դաշտ իջավ։

Հայդուկները Տարոն մեկնեցին՝ ժողովրդին հասցնելով Գեղաշեն, այսինքն՝ դուրս հանելով թշնամու ռազմական ուժերի տեղադրության շրջանից, բաժանվեցին երեք խմբի, որոնք առաջ շարժվելով՝ հանկարծակի հարձակումներ էին գործում ճանապարհին հանդիպած թուրքական ու քրդական ջոկատների վրա, նրանց զոհեր պատճառում ու խուճապի մատնում։ Հայդուկները հեռանալով իրենց գրաված դիրքերից, ճակատային գծեր էին ստեղծում մեկ այստեղ, մեկ այնտեղ, արագ տեղաշարժերով ու հարձակումներով շփոթության մեջ գցում թուրքերին։ Դրանով իսկ նրանք անգործության էին մատնել թուրքական հրետանուն, թուրքերին զրկել կողմնորոշվելու և գործնական քայլերի դիմելու հնարավորությունից։

Գևորգն ու Անդրանիկը դեռ Կուրտիկի ստորոտներում էին, երբ նրանց դեմ դուրս եկան բարձունքներին տեղավորված թուրքական զորքերի պարեկային ջոկատներն ու տեսնելով եկողներին՝ ահազանգ տվին։ Հայդուկները խուսանավելու հնարավորություն չունեին։ Մութ գիշեր էր։ Նրանք կրակ բացեցին և սրընթաց առաջ գնացին։ Ճանապարհին ոչնչացրին թուրքական մի քանի ջոկատ։ Գևորգն իր խմբով գնաց դեպի Կուրտիկի արևելյան փեշը, որպեսզի թուրքերի ուշադրությունն իր վրա սևեռի և մյուսներին հնարավորություն տա բարձրանալու լեռը։

Զառիթափից զառիթափ անցնելով և շրջանցելով թշնամու դիրքերը, Գևորգի ջոկատը կրակ բացեց խարույկների շուրջը խմբված թուրք զինվորների վրա։ Հակառակորդը խուճապի մատնվեց։ Ասկյարները դես ու դեն ընկած կրակում էին պատահական ուղղություններով։ Նրանք վազվզում էին խարույկների կողքով, լուսավորվում նրանց լույսով և թիրախ էին դառնում հայդուկների համար։ Լսելով հրաձգության ձայնը՝ լեռան արևմտյան մասերում տեղավորված վաշտերն աճապարեցին արևելք։

Բայց մինչ նրանք տեղ կհասնեին, հայդուկներն արդեն հե-

ռացել էին Գոմեր գյուղի ուղղությամբ։ Այստեղ նրանց սպասում էին Անդրանիկը և մյուս հայդուկները։ Գյուղ հասնելուց երկու-երեք ժամ չէր անցել, երբ նորից հրաձգության ձայներ լսվեցին։ Թուրքական վաշտերն էին, որոնք նպատակ ունեին ամրանալ Գոմեր գյուղում և փակել կապը լեռնաշխարհի արևմտյան շրջանների հետ։ 5000 հոգիանոց թուրքական ջոկատը և բատկանցի աշիրեթությունը մայիսի 24-ին շրջապատեցին գյուղը։ Մինչ այդ Անդրանիկն ու Գևորգն իրենց խմբերով հասցրեցին գյուղից դուրս գալ և դիրքեր գրավել մոտակա ժայռերում։ Նրանք թիկունքից հարվածեցին գյուղը պաշարողներին։ Ուժեղացրին կրակը նաև գյուղում մնացածները։ Երբ մութը վրա հասավ, հայդուկները աննկատ հեռացան։ Մի քանի օր անց, մայիսի 31-ի երեկոյան, Բիթլիսի ոստիկանապետ Իզզեթ բեյը 200 ոստիկաններով ու ժանդարմներով նորից է պաշարում Գոմերը։ Նա լուր է տարածում, թե Գոմերում է գտնվում Անդրանիկը։ Կես ժամ անց պաշարմանը մասնակից զինվորների թիվը հասնում է 450-ի։ Նրանց են միանում նաև արմանցի և բատկանցի աշիրեթները։ Հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս։ Այդ ընթացքում Գոմերի կանայք ու երեխաները, օգտվելով ծառախիտ տեղանքից, շարժվում են դեպի Դաշտի գյուղերը, իսկ տղամարդիկ բարձրանում են լեռները։ Թուրքերն ու քրդերը լցվում են գյուղ, այնտեղ մնացած ծերունիներին խողխողում են, գյուղը թալանում ու հրդեհում։

Հունիսի 5-ին Տերգևանք գյուղում էին գտնվում մի քանի հայդուկներ՝ Սմբատի ղեկավարությամբ։ Հաջորդ օրը վաղ առավոտյան թուրքերը պաշարում են գյուղը։ Պաշարողը Իզզեթն էր, որ 120 ոստիկանով և բազմաթիվ զինված թուրքերի ու քրդերի հետ, իմանալով, որ գյուղում հայդուկներ կան, եկել էր նրանց ոչնչացնելու։ Այդ ժամանակ Տերգևանքում էր հավաքված նաև Բերդակի և Առաղի գրեթե ողջ բնակչությունը, որը փախել էր թուրքերի հետապնդումից։

«Մեր վիճակը չափազանց վտանգավոր էր,— գրել է Սմբատը,— հազիվ հրացանս պայթեց, երբ զինվորները ներխուժեցին և սկսեցին հետապնդել մեզ։ Նրանց արագ ու համարձակ առաջխաղացումն արգելելու համար հարկադրված էինք մերթ ընդ մերթ դիրքեր բռնել ու կրակել... Երբ սլանում էինք դեպի վեր, այնքան երկու հարյուր հրացաններից տեղացող համազարկերի տակ, նույնքան խիտ կրակ մեզ հանկարծ դիմավորեց

ճակատից, շատ մոտիկից, հազիվ 100 քայլ հեռավորությունից... Ամեն մի քարակույտից բարձրանում էր թուրքական զինվորի գլուխ, և զենքը կրակում էր մեր ուղղությամբ։ Պաշարվել էինք, մնալով երկու կրակի տակ, ավելի ճիշտ, մահացու ծուղակ էինք ընկել... Մանավանդ, որ դեպի աջ ոչ մի քայլ անել չէինք կարող, քիչ այն կողմ հսկա անդունդ էր բացվել։ Ելք չկար։ Մնում էր կռվել մինչև վերջին փամփուշտը և պատվով մեռնել, կամ կռիվը ձգձգել մինչև մութն ընկնելը և օգտվելով գիշերվա ընձեռած աջակցությունից, թուրքական շղթայից մի ճեղք փընտրել... Մեր ամեն բոպեն հազար հրաշքով օգտագործելու ժամ էր, մանավանդ որ ներքևից ու վերևից կրակ էր տեղում մեզ վրա։ Մեզ մի միջոց էր մնում՝ քայլել դեպի ձախ ոչ թե փրկվելու, այլ գոնե կրակի խաչաձևումից ազատվելու... Եվ այդպես, փոխնե-փոխ, իրար պաշտպանելով, մերթ վազելով, մերթ սողալով, հաջողվեց որոշված տեղը հասնել անվնաս»[174]։

Պատմում է ականատես Լ. Պոլեյանը. «Գևորգը Բերդակ էր եկել, մեր հնձանում էր և սպասում էր մյուս հայդուկների գալուն։ Գևորգը ելավ դուրս, ականջը դրեց գետնին՝ ձայն լսելու համար։ Մեկեն ցատկեց ու ասաց. «Հրացանի ձայն է գալիս»։ Հայրս ասաց. «Ծառերի թփերի ձայնն է»։

Գևորգը նորից պառկեց գետնին։ «Տղաներն անպայման թուրքերի են հանդիպել. ես պետք է մեկնեմ։ Այս գիշեր նորից ինձ սպասեք»։ Մեզ հետ համբուրվեց ու գնաց։ Եթե ետևից ձի քշեին, չէին հասնի։ Տերգևանք գյուղից տղաները մեկնում են, բայց հանդիպում են թուրքական զորքի պահակներին և կռիվ սկսում... Տղաներն ուզում են հեռանալ, բայց չեն կարողանում. զորքի շունը նրանց տեղը հայտնում է։ Տղաների փամփուշտները հատնելու վրա էին, հուսահատվում են։ Ուզում են անձնասպան լինել և ողջ չհանձնվել»։ Այդ ընթացքում Գևորգը «մտնում է ջրաղացի առվի մեջ, որ ջրով լիքն էր, ու կրակում է թուրքերի թիկունքին։ Զորքերը զարմանում են։ Փոխանակ ֆիդայիների վրա կրակելու, զորքի վրա են կրակում։ Թուրք սպան, կարծելով, թե զինվոր է, բղավում է. «Սխալ ես կրակում»։ Այդ միջոցին Գևորգը մի գընդակ է խփում շան ճիշտ բերանին։ Շունը սատկում է։ Երբ շան ձայնը կտրվում է, խմբի տղաները մտածում են. «Գևորգն է օգնության հասել»։ Գևորգը խփում է նաև սպային ու բղավում. «Գևորգ Չաուշն է։ Հանձնվե՛ք»։ Զորքը փախուստի ճամփեն է բռնում։ Գևորգը միանում է ընկերներին»[175]։

Այս կռվում թշնամին կորցնում է 14 հոգի։ Հայդուկների հեռանալուց հետո զորքը հարձակվում է գյուղի վրա։ Գրում է ականատեսը. «Թուրքերը անզեն և անպաշտպան հայերին կոտորում էին գնդակով, սրով ու սվինով»։ Այդ պահին Մուշից Բերդակ են գալիս Ֆրանսիական և անգլիական հյուպատոսները, սեփական աչքերով տեսնում Թուրքական վայրագությունների հետևանքները։

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆԻՑ

Տեսնելով, որ միայն զենքի ուժով հարցը լուծել հնարավոր չէ, թուրքական իշխանությունները նորից դիմեցին խորամանկության։ Նրանք Անդրանիկի գլխի համար մեծ գումար խոստացան, բայց որևէ արդյունքի չհասան։

Անհաջողություններից կատաղած Մշո կառավարիչ Հաֆզ փաշան իր մոտ է կանչում քաղաքի հայ մեծամեծներին և ասում, թե սուլթանից հրաման է ստացվել, որ եթե հայդուկները Տարոնից հեռանան, կոտորածներն ու հալածանքները կդադարեցվեն և հայերի համար կստեղծվի խաղաղ կյանքի հնարավորություն։ Դրա հետ միասին, ինչպես գրեցին եվրոպական մի շարք լրագրեր, «Մուշի մութեսարիֆի մուավին* նշան էֆենդին գնացել է փնտրելու Անդրանիկին և բանակցելու նրա հետ անձնատուր լինելու պայմանների մասին»[176]: Մշո առաջնորդարանն ու դաշնակցական կոմիտեի ղեկավարները ընկրկեցին և սկսեցին հայդուկներից պահանջել, որ հեռանան Տարոնից ու Սասունից, Դաշտի հայության կոտորածի պատճառ չդառնալու համար։ Կոմիտեն հայդուկներին գրում էր. «Սասունի դատարկվելուց հետո Մշո դաշտը չի կարող ապստամբական պատերազմի բռնվել թուրք բանակների հետ, որոնք Բիթլիսից և Էրզրումից ողողել են Դաշտի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը։ Թուրք կառավարությունը բոլոր գրգռիչ միջոցներին դիմում է, որպեսզի ապացուցի հյուպատոսներին, թե հայերն են, որ ամեն տեղ կռիվներ են սարքում և ապստամբություններ կատարում։ Պահանջում ենք, որ անմիջապես մարտական ուժերը հեռացնեք Դաշտից դեպի լեռնամասերը, խմբերի բաժանված (և եթե կարելի է, այդ խմբերի մի մասը թող անցնի Ախլաթի և Վանի շրջան)»[177]:

Մի քանի օր անց Մուշից ստացվում է մի նոր նամակ՝ Վարդան վարդապետի, Տատրակի (Գեղամ Տեր-Կարապետյանի) և Համազասպի ստորագրությամբ. «Կառավարությունը և զորքանակը Դաշտի հոծ հայությանը ամբողջությամբ խեղդելու սև ծրագրեր են որոճում։ Անդարմանելի աղետ պիտի լինի, եթե խմբերը չհեռանան դեպի Վան... Երբ հեռանաք այս լեռներից ու Դաշտից, մենք աղմուկով այդ իրողությունը պիտի հայտնենք ու, թերևս, այդպիսով որոշ ժամանակ վտանգը հեռացնենք այս շրջաններից։ Օտար հյուպատոսների ներկայությունն էլ մեզ պիտի օգնի»[178]:

Այս նամակներն ստանալուց հետո Անդրանիկը Գևորգին գրում է. «Մենք Սովասար վերադարձանք։ Կ. կոմիտեն խնդրում է, որ լեռները ապաստանենք կամ անցնենք Ախլաթի շրջանը։ Դաշտի վիճակը ծանր է։ Կապ պահենք իրար հետ թռուցիկ փոքր խմբերով և զգուշանանք նոր դեպքերից՝ մինչև Մուրադի վերադարձը»[179]:

Այսինքն՝ Անդրանիկը նպատակահարմար համարեց Մուշից ստացված խնդրանքը ժամանակավորապես կատարել, մինչև Մուրադը Վանից վերադառնար և պարզ դառնար, թե Վանում ինչ վիճակ է տիրում և որքանով է նպատակահարմար Վասպուրական մեկնելը։

Բայց Անդրանիկի այդ քայլը հանդիպեց հայդուկների մի զգալի մասի դժգոհությանը, և նա որոշեց խնդիրը դնել հայդուկների ժողովի քննարկմանը։ Այդ որոշմանը հանգելուց հետո նա Գևորգին գրում է. «Սիրելի Սարհատ, վերցրու խմբերը, իջիր Մշո դաշտ և Ավրանի վրայով բարձրացիր Տերիկ գյուղը, ուր իրար կգտնենք»[180]: Մի քանի օր անց նա նորից Գևորգին գրում է. «Դաշտում ձեր լինելը անհրաժեշտ է։ Շուտով Վահանն էլ է Դաշտ իջնելու»[181]։ Իսկ Վահանը Սպաղանքի սարում էր։ Գևորգը լուր է ուղարկում Վահանին՝ իր մոտ գալ Դաշտ իջնելու համար։ Պայմանավորվում են հանդիպման վայրը և գաղտնանշանը՝ «խարույկ»։ Բայց որովհետև Վահանը շատ գեր էր և դժվարությամբ էր քայլում, գիշերվա փոխարեն տեղ է հասնում լուսաբացին։ Թուրքերը նրան նկատում են ու կրակի տակ առնում։ Կատաղի ճակատամարտ է սկսվում։ Թուրքերը մի քանի զոհ են տալիս։ Զոհվում է նաև Վահանը։ Գևորգը դառնա-

* Խորհրդական

ցած բացականչում է. «Լաո, Վահանն էլ գնաց, վազենք Անդրանիկի մոտ»[182]:

Գևորգը Անդրանիկին հանդիպում է Տերիկ գյուղում։ Այստեղ են գալիս նաև մյուս հայդուկները։ Մառնիկի անտառում ժողովի է հավաքվում հայդուկության ծաղիկը՝ քննելու մեկ հարց. Տարոնից հեռանալ, թե ոչ, և եթե հեռանալ, ապա ո՞ւր, Վա՞ն, թե՞ ուրիշ տեղ։ Տաք վեճեր եղան։ Տարոնից հեռանալու պահանջի դեմ հատկապես ըմբոստանում էին վաստակաշատ հայդուկները, մասնավորապես, տեղացիները։ Այդ թևը ղեկավարում էր Մակարը, ամենատարեց և ամենափորձված հայդուկը, որը քսան տարի շարունակ զենքից և լեռներից չէր բաժանվել։

«Ես իմ հող ու ջրից չեմ հեռանա և եթե իմ վերջը եկել է, թող ընկնեմ Սասունում։ Ո՞ւր գնալ, ո՞ւմ հույսին թողնել անվեն ժողովրդին։ Այդ ո՞ր օրվանից է, որ մենք սկսել ենք թուրք կառավարիչների խոսքերին հավատալ։ Անցած տարիների փորձը հազար անգամ ապացուցել է, որ Տարոնում ժողովրդի վիճակը համեմատաբար բարվոք է լինում այն ժամանակ, երբ կա ակտիվ հայդուկային շարժում։ Մեր թշնամին այնպիսին է, որ հասկանում է միայն զենքի, ուժի լեզուն։ Ինչո՞ւ ենք ժողովրդին դրանից զրկում, թողնում բախտի քմահաճույքին։ Սուտ է, որ թուրքերը բնակչությանը սպանում, կողոպտում են, որովհետև մենք ենք այստեղ։ Թուրքերը մեզնից ազատվել են ուզում, որպեսզի ոչ ոք չխանգարի անվեն ժողովրդի հետ վարվելու իրենց հայեցողությամբ։ Քսան տարվա իմ հայդուկային կյանքում այդ շարժումը երբեք այնքան ուժեղ չի եղել, ինչպես այժմ։ Տասը տարի առաջ մեզնից ոչ ոք նույնիսկ երազել չէր կարող, որ այսքան հայդուկային խմբեր կունենանք։ Ինչո՞ւ ենք քանդում ստեղծվածը։ Քանդում ենք, որովհետև այդպես ձեռնտու է թուրքերի՞ն։ Այն, ինչ նրանք չկարողացան այս երկար տարիների ընթացքում զենքով անել, այժմ անում են մի օրվա ընթացքում, սուտ խոստումներով։

Ով կհեռանա այստեղից, խաբված կամ վախկոտ մարդ է»,— ասաց Մակարը և թողեց ժողովը։ Նրան հետևեցին ևս մի քանիսը։ Նրանք գնացին իրենց լեռների գիրկը, գնացին ձուլվելու նրանց և լեռան ուժով կռվելու թուրքերի դեմ։

Փորձված հայդուկների հեռանալը ծանր տպավորություն թողեց ժողովի մասնակիցների վրա։ Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։ Վերջապես խոսեց Գևորգը. «Քեռի Մակարի բերանով

ճշմարտությունը խոսեց։ Մենք ժողովրդին պայքարի հանեցինք, ժողովուրդը մեզ հավատալով վտանգեց իր տունը, կայքը, կյանքը և բարձրացավ յաթաղանի դեմ։ Իսկ այժմ, երբ ժողովրդի վիճակը ծանր է, մենք նրան լքում և հանձնում ենք բարբարոսների քմահաճույքին։ Ծանր վիճակ մեզ համար այս տարիների ընթացքում շատ է ստեղծվել, բայց մենք երբեք չենք հուսահատվել, շարունակել ենք պայքարը։ Առաջին անգամ վտանգը ընդհուպ մոտեցել է Մշո մեր ազգային ջոջերին, և նրանք մեզնից պահանջում են փախուստի դիմել, հեռանալ։ Լավ, հեռանանք, բայց մեր խղճին ի՞նչ պատասխան տանք, ինչպե՞ս նայենք սասունցու աչքերին։

Ինձ թվում է, Վան պետք է անցնեն միայն Անդրանիկն ու մի քանի ուրիշ ընկերներ, որոնք այնտեղից կգնան Կովկաս՝ զենք հայթայթելու։ Այդ մեզ հնարավորություն կտա տպավորություն ստեղծել, որ հայդուկների հիմնական մասը հեռացել է Տարոնից։ Սասունում մնացող հայդուկները ժամանակավորապես իրենց զգացնել չեն տա և կսպասեն, թե ինչպես իրենց կպահեն թուրքերը»։

Սակայն Գևորգը իրապես դեմ էր նաև Անդրանիկի և մյուսների հեռանալուն և մինչև վերջ էլ նա Անդրանիկին չներեց այդ։ 1906 թվականին նա Անդրանիկին (Պարույր էր նրա ծածկանունը) և Մուրադին մի նամակ գրեց, թե ինչու ինքը, ընտրված լինելով դաշնակցություն կուսակցության 4-րդ համագումարի պատվիրակ, հնարավորություն չունի նրա աշխատանքներին մասնակցելու և իր լիազորությունները հանձնում է նրանց։ Այդ նամակում կարդում ենք. «Ընկերներ, ժողովի համար, երբ ես բախտ չունեցա գալ և ներկայանալ..., բայց ձայնս տվի ձեզ, որ ներկայանաք ժողովին և մեր կողմից խոսեք և ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպես որ գրել եմ Արևելյան Բյուրոյին, որ Դուք պետք է ներկայանաք ժողովին և խոսեք մեր ու Երկրի մասին, թե Երկիրն ինչ է պահանջում, բայց չուրանաք ձեր Աստված և Երկիրը, ինչպես ուրացել եք մինչև ցայդ, թե ինչպես Բարձրավանդակ ու Տարոն, որ ամենից աշխատող ու գործ տեսնող և շատ զոհեր տվող (շրջան է), նրա տրամադրության ներքո ոչ մի դրամ չկա, իսկ Շամի (Վասպուրականի) տրամադրության ներքո կա 80.000 ռուբլի, նաև կա 100.000-ից ավելի ծայրեր, իսկ մերը՝ ոչինչ. ո՞ւմ երեսից, ձեզ պես ընկերների երեսից, որ թողեցիք մեզ և Երկիրը Աստծու կրակի մեջ ու գնացիք,

ոչ դրամ, ոչ էլ ռազմամթերք ղրկեցիք մեզ և ձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող։ Ինչ որ է, այն անցավ, բայց այսուհետև աշխատեք, դուք էլ և մենք մարդ լինենք, Երկրով միասին։ Եղբայրք ջան, խնդրեմ լավ աշխատեք, որ օգուտ հասցնեք այստեղի ժողովրդին և գործին, որ ազատվեք նրանց մեղքից։ Համբույրներով՝ Սարհատ»։

Խիստ նամակ է, բայց նաև ընկերոջ, բարեկամի, մտերիմի, հայրենիքի, ժողովրդի շահերն ամեն ինչից բարձր դասող անձի նամակ է։ Իսկ ժողովում նա մեղմ էր, հասկանում էր Անդրանիկի ու մյուսների հոգու խռովքը, ծանր ապրումները։

Խոսք վերցրեց Կոտոյի Հաջին. «Գևորգ, թե՛ թուրքերի, թե՛ քրդերի և թե՛ հայերի համար հայդուկությունը այդ դու ես։ Այո, առաջին հերթին Գևորգ Չաուշն է։ Թուրքերը գիտեն, որ դրսից եկածները գնալու են։ Չհեռացողները լինելու են տեղացիները, դու և մյուսները։ Թուրքերը քեզ են ուզում հեռացնել Սասունից և եթե դու չես գնալու, մյուսների գնալն ավելորդ է ու վնասակար։ Հետևաբար, հարցը այսպես է դրված՝ Գևորգ Չաուշը պետք է գնա՞, թե՞ մնա։ Իմ կարծիքով, դու գոնե որոշ ժամանակով պետք է գնաս, որպեսզի թուրքերը չօգտագործեն քո մնալն ու ժողովրդին կոտորեն։ Մենք զենք ու ռազմամթերք չունենք և որևէ տեղից ստանալու հույս էլ չկա, որովհետև թուրքական զորքերը փակել են բոլոր ճանապարհները։ Պետք է գնալ, գուցե հնարավոր լինի Վանում զենք հայթայթել։ Իմ կարծիքով, ճիշտ կլինի, եթե այստեղ ժամանակավորապես մնան մի քանի իշխաններ, որոնց կենթարկվեն բոլոր հայդուկային խմբերը, իսկ մյուսները պետք է հեռանան»։

Ժողովը որոշում ընդունեց հեռանալ Սասունից։ Հուլիսի 10-ին 34 հոգուց կազմված հայդուկային խումբը շարժվեց դեպի Բերդակ։

Ինչպե՞ս գնահատել ժողովի այս որոշումը։ Եթե նկատի առնվի ստեղծված իրավիճակը, ապա ճիշտ էր։ Սասունի գոյամարտն իր գործն արել էր և այլևս Տարոնում մնալն իմաստ չուներ։ Այդ իսկապես կարող էր թուրքական իշխանությունների ձեռքում պատրվակ դառնալ՝ Տարոնում ևս կոտորածներ կազմակերպելու։ Բայց այս որոշումը նաև հետևանք էր այդ օրերին նորից գլուխ բարձրացրած այն մտայնության, որ միևնույն է, առանց մեծ տերությունների գործնական օգնության ստեղծված ծանր վիճակը վերացնելն անհնար է։ Նույնիսկ կարծիքներ էին

արտահայտվում, որ հայդուկությունը, որպես շարժում, իրեն արդեն սպառել է և այլևս անելիք չունի։ Տվյալ դեպքում գլխավոր խնդիր համարվեց դիմել մեծ տերություններին, որ նրանք ճնշում գործադրեն սուլթանի վրա՝ հայերի վիճակը բարելավելու, և եթե հաջողվի՝ հայկական նահանգներում նաև բարենորոգումներ կատարելու համար։ Այդ օրերին էր, որ դաշնակցական կոմիտեն որոշում է հուշագիր ներկայացնել եվրոպական տերություններին։

Այս մտահղացման հեղինակներն էին Վարդան վարդապետը, Տատրակը (Գեղամ Տեր-Կարապետյան), Կորյունը, Համազասպը և ուրիշներ։

Կոմիտեի պատրաստած հուշագրում շարադրված էին Սասունի իրադարձությունների պատճառները և այն պահանջները, որոնց գործադրումն անհրաժեշտ էր՝ լեռնաշխարհում խաղաղություն հաստատելու համար։ Հուշագիրը ստորագրել էին Անդրանիկն ու Տատրակը։ Այն առաջարկում էր.

— Վերացնել բոլոր արտակարգ ու ժամանակավոր հարկերը, ինչպես նաև տասանորդ հարկը (աշարը) և սահմանել մեկ հարկ՝ հողային հարկ։

— Սասունի և Տարոնի հայերին 10 տարի ազատել հարկերից, չվճարված հարկերն այլևս չհավաքել։ Հարկահավաքության ժամանակ զորք, ոստիկան և տեղական պաշտոնյաներ չօգտագործել։ Հավաքած հարկերից բաժին հանել տեղական կարիքների համար։

— Վերացնել զինվորական հարկը, հայ երիտասարդներին զորակոչել բանակ և նրանցից ստեղծել առանձին զորամասեր։

— Գյուղերի անվտանգությունն ապահովելու համար զինված պահակներ նշանակել։

— Մահմեդական ազգաբնակչությանը ևս արգելել զենք կրել, կամ այդ իրավունքը տալ նաև քրիստոնյաներին։

— Վերադարձնել հայերից բռնագրաված ու յուրացրած հողերը, ինչպես նաև զանազան շինությունները։

— Դավանանքի ազատություն և հավասարություն։ Թույլ տալ տեղերում թերթեր ու ամսագրեր հրատարակել։

— Առևտրի, տեղափոխության, ճանապարհորդության ազատություն։

— Բոլոր դավանանքների ու ազգությունների հավասարություն դատարանի առջև։

— Թույլ տալ, որ արտասահմանից վերադառնան բոլոր հայ գաղթականներն ու պանդուխտները, նրանց վերադարձնել իրենց հողերն ու նախկինում ունեցած իրավունքները։

— Հայ քաղաքական բանտարկյալներին ազատ արձակել։

— Սահմանափակել համիդիեների իրավունքները, նրանց թույլ չտալ բռնություններ ու ավերածություններ գործել, թույլ չտալ, որ քրդերը որպես արոտավայր օգտագործեն հայերի հողերը։

— Եվրոպական մեծ տերությունների հսկողության տակ հայկական վեց վիլայեթների համար մի ընդհանուր քրիստոնյա կառավարիչ նշանակել, որը պետք է կառավարի «ազգաբնակչության կողմից ընտրված խորհրդի աջակցությամբ»։ Եվրոպական տերությունները պետք է հսկողություն սահմանեն կառավարչի գործունեության վրա։

— Ըստ բնակչության ազգային կազմի ձևավորել ժանդարմերիան, որի վրա վերահսկողություն պետք է իրականացնեն եվրոպացի սպաները։

— Սասունի և Տարոնի հայերի վնասների հատուցում, քանդված տների վերականգնում։ Հոգալ, որ գյուղացին կարողանա դնել սննդամթերք, առաջին անհրաժեշտության իրեր և պիտույքներ, ինչպես նաև հողագործական գործիքներ[183]։

Հուշագրին կցված էր տեղեկանք՝ հայերի ծանր վիճակի, նրանց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին։ Հյուպատոսներին հանձնվեց նաև մի փաստաթուղթ, որով հայերը բողոքում էին Սասունում զորանոցների կառուցման դեմ։

***

Հայդուկային խումբը որոշում է մեկնելուց առաջ թշնամուն ևս մեկ հարված հասցնել և այդ անել Կուրավու գյուղում։

Հայդուկները հուլիսի 16-ին մտան Կուրավու։ Հաջորդ օրը լուսադեմին գյուղ եկավ 200 հոգուց բաղկացած թուրքական մի ջոկատ։ Գյուղացիները ռես Օհանի գլխավորությամբ ասկյարներին դիմավորում են, կերակրում, գիշերելու տեղ տալիս։ Բայց ասկյարը մնում է ասկյար։ Նա առանց բռնության յոլա գնալ չի կարող։ Ասկյարներից մեկը փորձում է բռնաբարել մի կնոջ, որը դիմադրում է, աղմուկ բարձրացնում ու փախչելով մտնում է գյուղի տներից մեկը[184]։

— Թուրքերը,— գրում է ժամանակակիցներից մեկը,— կնոջ

հետևից մոտենում են այն տանը, որտեղ կանգ էր առել Առաքելի տասնյակը, ծեծում են դուռը։ Առաքելը թույլ չի տալիս դուռը բացեն, սակայն զինվորը ճեղքից տեսնում է ներսում եղածներին ու բղավում է, որ ֆիդայիներ են։ Տունը շրջապատվում է, և երբ բոլոր թուրքերը հավաքվում են այդ տան շուրջը, մնացած երեք տներից հայդուկները միաժամանակ համազարկ են տալիս։ Թուրքերի շարքերը հնձվում են։ Նրանց մի մասին հաջողվում է դիրքեր գրավել աթարի ամրոցի հետևում։ Բայց Գևորգը թույլ չի տալիս, որ թշնամին ուշքի գա։ Նա Մուրադի հետ վազում է գերեզմանոց։ Թուրքերի մի մասը հետապնդում է նրանց։ Սկսվում է կատաղի մարտ։ «Շուտով հասնում են Սմբատը, Իսոն, Պողոսը, Ասատուրը, զորքերի դիակներով է ծածկվում գերեզմանոցը... Իսկ զորապետը... սպիտակ երեսսրբիչը վզին փաթաթած, այնպես էր փախչում, որ որսկան շունը չէր կարողանա հասնել»[185]։ Մյուս հայդուկները, տների տանիքներին դիրք բռնած, կրակ բացեցին թուրքերի վրա, որոնք խուճապահար փողոցից փողոց էին փախչում, բայց այդպես էլ կրակի գոտուց դուրս գալ չէին կարողանում։ Թուրքերից մոտ 100 հոգի սպանվեցին։

Հայդուկներն ամրացնում են իրենց դիրքերը, որոնք հիմնականում գտնվում էին բարձր տների ու եկեղեցու տանիքներին։ Նաև դիրքեր փորվեցին, բարիկադներ կառուցվեցին։ Իսոն, Սմբատը և Պողոսը դիրք էին բռնել գյուղի հարավային, Մկրտոն ու Հասրաթը՝ արևելյան, Առաքելն ու Ավետիսը՝ հյուսիսային կողմում, իսկ արևմուտքում, որտեղ գյուղի եկեղեցին էր՝ Հովհաննեսը, Արամը, Ասատուրն էին։

Լուրը Մուշ է հասնում։ Ալա բեյի հրամանատարությամբ գեպի Կուրավու է շարժվում 3000 հոգուց բաղկացած մի զորամաս, որը գյուղ է հասնում երեկոյան կողմ ու դիրքեր գրավում Կուրավուի դիմաց, Արածանիի ափին։ Կուրավուի վրա շարժվեցին նաև չերքեզները, Մուշից բերվեցին թնդանոթներ։ Սուլուվի կամրջի թմբերի ետևից առաջապահ ուժերը կրակ բացեցին Կուրավուի ուղղությամբ։ Հայդուկների մի խումբ հարձակվեց նրանց վրա ու փախուստի մատնեց։ Թուրքերը երեք կիլոմետր ետ քաշվեցին, բայց սկսեցին թնդանոթները գործի դնել, նպատակ ունենալով նոր ուժեր հավաքել։ Եվ հաջողվեց Կուրավուի շուրջը հավաքել զինվորական նոր ուժեր ու մեծաթիվ քրդեր։ Հաջորդ օրը նոր հարձակում սկսվեց։

Հայդուկները խփեցին եկեղեցու զանգերը, որ շրջակա գյուղերը ևս իմանային կռվի մասին ու հարկ եղած դեպքում օգնության հասնեին։ Ծանր մարտեր եղան։ Երբ մութն ընկավ, բոլոր հայդուկները ազդանշանով հավաքվեցին Մուրադ գետի ափին ու հեռացան[186]։

Հայդուկների մի այլ խմբի ուղեկցությամբ գյուղից հեռացան նաև նրա բնակիչները, որոնք գնացին Գոմսի, Ավրանի և Աշտիշատի, իսկ մի մասն էլ՝ Արածանիի հոսանքի ուղղությամբ։ Հաջորդ օրը թուրքերը թալանեցին Կուրավուն, Ծխավանը, Ախչունը, 70 հոգու սպանեցին, Կուրավուն և Ախչունը հրդեհեցին։

Կուրավուի կռվի երկրորդ օրվա մասին Սմբատը գրում է.

«Կռիվը տևեց մինչև երեկո և դեռևս դադարելու նշան ցույց չէր տալիս։ Մեզ տրված հրահանգի համաձայն, օգտվելով մթությունից, պետք է քաշվեինք դեպի Ախչուն, որ հեռու չէր, բայց այնտեղ հասնելու համար պետք է նորից գետն անցնեինք։ Ստացած օգնության շնորհիվ թուրքն արդեն կարողացել էր գրավել գյուղի կեսը, իսկ մենք կռվելով՝ քայլ առ քայլ նահանջում էինք դեպի գետը։ Բայց տեղ հասնելով տեսանք, որ ճանապարհը կտրված է։ Գետի դիմացի ափը գրավել էին Ալա բեյի զինվորները։ Վտանգավոր կացություն էր. երկու կրակի մեջտեղ, թվով անհամեմատ տկար, ամբողջ օրը տևած կռվից ուժասպառ, նաև սոված։ Այս պարագայում միայն հուսահատական հանդգնությունը կարող էր մեզ փրկել...

Ու գնդակների տարափի տակ զենքերն ու փամփշտակալները վեր բռնած՝ նետվեցինք ջուրը։ Դժվար թե մեզնից շատերը ողջ կամ անվնաս հասնեին գետեզերք, եթե մի անակնկալ միջամտություն օգնության չհասներ։ Ախչունից հանկարծ համազարկ պայթեց, շփոթի մատնելով թուրքերին։ Գյուղի մեր ընկերներն էին, որոնք աչքի առաջ ունենալով վտանգը և տեսնելով մեզ վրա ծանրացող մահացու սպառնալիքը, կռվի մեջ մտան։ Ջորքը սկսում է փախուստի դիմել, և մենք բոլորս ապահով անցնում ենք գետը»։

Հուլիսի 17-ին թուրքերը թալանելու նպատակով, հարձակվում են Շեյխ Յուսուֆի վրա։ Մի քանի ախչունցի և տեղացի հայեր դուրս են գալիս նրանց դեմ և մինչև կեսօր հաջողությամբ ետ մղում թշնամու հարձակումները։ Սակայն լրացուցիչ ուժեր ստանալով, թուրքերը գյուղը բոլոր կողմերից պաշարում են։ Հայերը դիրք են գրավում եկեղեցու տանիքին ու շարունակում

կռիվը, ապա մտնում են եկեղեցու ներսը և համառ դիմադրություն ցույց տալիս։ Սակայն փամփուշտները սպառվում են, և թուրքերը, մոտենալով եկեղեցուն՝ հրդեհում են։ Եկեղեցում եղած 12 քաջեր զոհվում են։

Այս կռիվները մեծ արձագանք են ունենում։ Դաշտի գյուղերի միջև երթևեկությունը գրեթե դադարում է։ «Թուրքերը, ֆիդայու ահից չեն համարձակվում դուրս գալ, իսկ հայերը դրսում չեն երևում, վախենալով, որ թուրքերի վրեժխնդրությանը կենթարկվեն։ Կառավարությունը ամենախիստ միջոցներ էր ձեռք առել ֆիդայիներին իր ճանկը գցելու»[187]։

Իսկ հայդուկները Կուրավուից անցնում են Վարդենիսի շրջանի Խարս գյուղը։ Այստեղ նրանք դատում են Սերոբին մատնողներից մեկին՝ մշեցի Նազարին, և որոշում նրան գնդակահարել։ Խումբը ճամփա է բռնում դեպի Ախլաթ։ Այդ ամբողջ ընթացքում թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով փընտրում էին հայդուկներին, որոնց հետքը Կուրավուի ճակատամարտից հետո կորցրել էին։ Կուսակալ Ֆերիդ բեյը նորից Անդրանիկի գլխի համար մեծ գումար՝ 1000 ոսկի խոստացավ[188]։

Հայդուկների ռազմամթերքը սպառվում էր և նրանք խուսափում էին նոր բախումներից, շտապում էին օր առաջ հասնել Աղթամար։ Մանավանդ, որ ամիսներ տևող կռիվները, քաղցն ու հիվանդությունները հյուծել էին նրանց, և կանգ առնելու, ինչպես ասում են, շունչ քաշելու մեծ կարիք ունեին։ Բայց նախախնամությունը նրանց համար նոր կռիվ էր նախատեսել։ Օգոստոսի 11-ին հայդուկները հասնում են Շամիրամ գյուղը և երկու օր կանգ առնում գյուղի կողքին գտնվող բլուրների վրա։ Այդ լուրը հասնում է Ալա բեյին, որը 400 զինվորով գալիս է Շամիրամ՝ հայդուկներին բռնելու։

Ժամանակակիցներից մեկը գրում է. «Կծվակի սպա Ալա բեյին իմաց են տալիս, որ Սերոբ Աղբյուրի մատնիչներին կախող Սեպուհը ընկերներով եկել է Շամիրամ։ Նա առանց իմանալու, որ Անդրանիկն էլ է եկել մատնիչներից վրեժ լուծելու, դիմում է դեպի Շամիրամ»[189]։

Նա անմիջապես շարժվում է դեպի գյուղի բարձունքները դիրքեր գրավելու և Նեմրութ տանող ճանապարհը փակելու համար։ Իրենց զորքերով Շամիրամ էին եկել նաև արյունարբու Ֆերիդ փաշան և Սայիդ բեյը։

Հայդուկների մի մասը դիրքեր է զբաղեցնում գյուղի եկեղե-

ցու տանիքին, Գևորգը 10 հայդուկներով՝ բլուրների վրա գտնվող հին բերդի ավերակներում, Անդրանիկն ու մյուսները՝ գյուղի վերին ծայրամասի բլուրներին։ Սմբատն իր խմբով հանձնարարություն էր ստացել պաշտպանելու գյուղի աղբյուրը, որպեսզի թշնամին ծարավ մնալով, հարկադրված հեռանա։

Մինչև կռիվն սկսելը գյուղից ուտելու պաշար և կժերով բավական չանակությամբ ջուր է բերվում։ Սկսվում է կատաղի ճակատամարտ։ Պատմում է Սմբատը. «Թուրքերը ջանում էին օգտվելով հողի անհարթությունից, սողալով կամ արագ ոստյուններով մոտենալ Աղբյուրին, բայց շնորհիվ մեր անթերի նշանառության, նրանց գամել էինք իրենց տեղերում։ Նրանցից ոչ ոք չէր համարձակվում մի քայլ առաջանալ։ Գլուխը վեր բարձրացնողը տապալվում էր առհավետ։ Այս մահվան խաղը տևեց ավելի քան 2 ժամ»։

Գևորգը տեսնելով, որ Սմբատի վիճակը ծանր է, յոթ հոգով շարժվում է դեպի Աղբյուրը և հարձակվում թշնամու վրա, որը, չկարողանալով դիմադրել, ետ է քաշվում։ Կռիվը սաստիկ բնույթ ստացավ նաև մյուս դիրքերում։

«Շամիրամի կռվում, որ տևեց 14 ժամ, Գևորգը հակառակորդի ամենաուժեղ թևի վրա ցանեց այնպիսի ահարկու կրակ, որ թշնամին դիմանալ չկարողացավ ու սարսափահար նահանջեց»[10]։

Անգլիական հյուպատոսարանի թարգմանիչ Արշակ Սաֆրաստյանը գրում է. «Հյուպատոսի հանձնարարությամբ գնացել էի Շամիրամ, որ հետևեմ իրադարձություններին։

Ճանապարհը բռնված էր զինվորական սայլերով, այս ու այն կողմ շարժվող կանոնավոր զորքերով և, մանավանդ, անկիրթ քուրդ խուժանով։ Հրամանատար Ֆերիդ փաշայի վրանը Շամիրամից մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի բլրի վրա էր։ Հենց ներս մտա, վալին սկսեց շատ լկտի փոլիտիկոսի բառերով հայհոյել հայ ավազակներին, որոնք արդեն սպանել ու վիրավորել էին բազմաթիվ զորքեր ու ձիավորներ։

Դուրս եկա վրանի տակից՝ մի քիչ նայելու շրջակայքին, պայծառ արևի տակ անգամ շատ քիչ բան կարելի էր տեսնել։ Հեծելազորի շարժումներից բարձրանում էր փոշու ամպ։ Ախլաթից հասած նշանավոր գազան չերքեզ Աչա բեյը 400 սուվարիներով կտրել էր Շամիրամը Նեմրութի փեշերից և Գյոգուչի ստորոտներից։ Հարավային դիրքերը բռնել էին կանոնավոր զորքը, ժանդարմները, քրդերը և այլն, ընդամենը 8000 օսմանցի...

Թուրքերը արձակեցին փոքրիկ թնդանոթի մի քանի հարվածներ միայն։ Կռիվը մղվեց հրացանի անդով և անդադրում կրակով։ Գնացի զինվորական

հրամանատարի միջոցով՝ Սայիդ բեյի վրանը։ Նա ասաց. «Այս ստահակները (հայդուկները) առյուծի պես են կռվում»։ («Ավո—«Գևորգ Չաուշ, էջ 236—238)։

Բիթլիսից թուրքերի նոր ուժեր բերեցին, բայց մութն արդեն ընկել էր։ Գևորգը մի ռումբ պայթեցրեց, որ հայդուկների հավաքվելու պայմանանշանն էր։ Շամիրամում թուրքերը կորցրին մոտ 70, իսկ հայերը՝ 1 հոգի։

«Ֆրանկֆուրտ ցայտունգը» գրում է. «Օգոստոսի 18-ին կռիվ տեղի ունեցավ 40 հոգիանոց հայ խմբի և ոստիկան զինվորների միջև»։

Օգոստոսի 19-ին Կ. Պոլսից «Ռեյտեր» գործակալությանը հայտնեցին, որ «վերջին օրերս տեղի ունեցած կռիվների ժամանակ Բիթլիսի նահանգի Շամիրամ գյուղի միայն մի քանի տներ են քանդվել։ Հայ խումբը կարողացավ Նեմրութ հասնել»։

Զոհերի թվի մասին տվյալները շատ խայտաբղետ են։ Դա բնորոշ է ոչ միայն այս, այլև մյուս ճակատամարտերին։ Կարելի է ենթադրել, որ հայ աղբյուրները մեխանիկորեն չափազանցում էին թշնամու կորուստները, իսկ թուրքական աղբյուրները և նրանց միջոցով արտասահմանյան մամուլը՝ ընդհակառակը։

Օգտվելով այն բանից, որ թշնամին խուսափում էր լուրջ գործողություններից, հայդուկները գիշերը դատարկում են գյուղը և շարժվում Դատվանի ուղղությամբ։ Սմբատը հուժկու հարվածով ճեղքեց Մուշեղաշենը շրջապատող թուրքական շղթան և ճամփա բացեց դեպի Դատվան։ Երբ մոտեցան գյուղին՝ այն դատարկ գտան։ Առաջ շարժվեցին դեպի Վանա ծով և ի՞նչ... Դատվանցիները, մեծ ու փոքր, տեղավորված էին նավակների մեջ։ Ամիսներ շարունակ նրանք այդպես էին ապրել։ Հենց թշնամին մոտեցել էր, նրանք նավակներով գնացել էին լճի խորքերը և վերադարձել, երբ վտանգն անցել էր։ Հայդուկները տեղավորվեցին նրանց նավակներում և շարժվեցին Աղթամար։ Հոգնած ու քաղցած հայդուկները ափ դուրս եկան Աղթամարում։ Թուրքերն այդ նկատելով՝ մի քանի հարյուր զինվորով ծովից ու ցամաքից պաշարեցին կղզին։ Ցամաքից թնդանոթները ռմբակոծում էին հայդուկներին (նրանք կղզու վրա 45 ռումբ գցեցին), իսկ զինվորները նավակներով մոտենում էին կղզուն։ Բայց

* Զինվորական կոչում

ամեն անգամ հայդուկները նրանց հետ էին քշում։ Թշնամու հիմնական նշանակետը նավակներն էին, որպեսզի հայդուկները հնարավորություն չունենային կղզուց հեռանալ։ Սակայն հայերը նավակները քաշել էին Ծովախորշի խորքը և թաղիքով ծածկել։ Թշնամուն այդպես էլ չհաջողվեց դրանք հայտնաբերել։

Փամփուշտները խնայողաբար օգտագործելու համար Անդրանիկը ճշգրտորեն որոշում էր թշնամու գտնված վայրի հեռավորությունը և թույլ էր տալիս կրակել միայն այն դեպքում, երբ պարզվում էր, որ թուրքերը 1000 մետրից մոտ տարածության վրա են գտնվում։

Ահա թե այդ իրադարձություններն ինչպես է ներկայացնում «Բրեստ ցայտունգը». «Այժմ միայն ստացված են հյուպատոսական տեղեկագրեր այն մոլեգին հարձակման մասին, որ արել է հայ հեղափոխականների կատաղի առաջնորդ Անդրանիկը Վանա լճի Աղթամար փոքրիկ կղզու վրա։ Լճի շուրջը զանազան պտույտներ գործելուց հետո, Անդրանիկը իր մարտիկներով մի քանի նավ առած... փոխադրվում է վերոհիշյալ կղզին։ Այդ լուրը առնելով՝ մի քանի օր հետո ուղարկում են տաճկական մի զորեղ ջոկատ՝ Անդրանիկին դուրս քշելու համար։ Մոտ 30 թընդանոթի հարվածներ տեղացին կղզու վրա, որոնցից չորսը միայն հասան նրան, այն էլ առանց որևէ վնաս պատճառելու»[191]։ Կռիվը տևում է մինչև երեկո, բայց թշնամուն այդպես էլ չի հաջողվում կղզի մտնել։ Հայդուկների հետ հանդիպելու համար Վանից եկել էին դաշնակցական գործիչներ Իշխանն ու Վահան Փափազյանը։ Աղթամարի տաճարի մոտ նրանք ժողովի հավաքվեցին։ Պարզվեց, որ Վանի գործիչները ամենևին էլ ուրախ չեն, որ հայդուկային այդ բավականին ստվար ու փորձված խումբը Վասպուրական է եկել։ Կոմսը և Իշխանը, դաշնակցական կոմիտեի հանձնարարությամբ, հայդուկներին առաջարկեցին Վասպուրականից հեռանալ և Պարսկաստանի վրայով անցնել Անդրկովկաս։ Ժողովում տաք վիճաբանություններ եղան։ Կոմսն ու Իշխանը, չկարողանալով հիմնավոր պատասխան տալ Անդրանիկի մեղադրանքներին, գերադասեցին հեռանալ ժողովից։ Լուռ էր մնայն Գևորգը։ Նրա ողջ էությունը Սասունում էր։ Վ. Փափազյանը պատմում է. «Անդրանիկը, գլուխը բարձրացրած, բազմության մեջ մեկին էր փնտրում։ Վերջապես ձայնում է. «Գևորգ, լաո, ո՞ւր ես մնացել, առաջ եկ, երեսդ տեսնենք»... Կարճահասակ, նիհար, գլուխը բաց մարդուն էր ուղղված այս

հրավերը, որը անտարբեր նստած գետնին, մեզ էր նայում։ «Այստեղ լավ է,— ասաց մեղմ ձայնով։ Անդրանիկը ելավ, ձեռքից բռնեց և գրեթե բռնի բերեց կողքը նստեցրեց։ Գևորգ Չաուշն էր, Մշո առյուծը, հանդարտ, կշռված շարժումներով, ինքնամփոփ, խոնարհ ու միշտ լուռ»։ Իսկ վեճերը շարունակվում էին։ «Անդրանիկ,— հնչեց Գևորգի ձայնը,— չգիտեմ մյուսները ինչպես, ես հենց այսօր Սասուն եմ վերադառնում։ Ո՞ւր պիտի երթամ։ Չէ՞ որ Դուրանն է իմ երկիրը, այնտեղ եմ ծնվել, այնտեղ պիտի մեռնեմ,— ապա գլուխը կախեց, ժպտաց մեղավոր ժպիտով՝ կարծես թողություն էր խնդրում իր ընկերներից դեպի մահ գնալու իր որոշման համար»։ Նրան միացան ևս 14 հայդուկներ։ Մյուսները լուռ էին, բայց համոզված, որ Գևորգը ճիշտ է վարվում։ Մի քանի ժամ հետո բազում տարիների զենքի ընկերները ողջագուրվեցին, և Գևորգը իր ուղեկիցների հետ նավակ նստեց։ Նրանք ճանապարհ բռնեցին դեպի Նեմրութ։

Թուրքական զորամասերը շրջապատել էին լիճը, նպատակ ունենալով թույլ չտալ հայդուկներին շրջապատումից դուրս գալ։ Բարեբախտաբար, մառախլապատ եղանակ էր։ Ճիշտ է, այդ եղանակին նավարկելը դժվար էր ու վտանգավոր, բայց թշնամին չէր նկատի նավակը։ Սկսվում է ուժեղ փոթորիկ։ Նավակն իր ուղղությունը կորցնում է և շարժվում դեպի Ախլաթ։ Գիշերը վրա էր հասել, երբ վերջապես երկար շարշարանքից հետո նավակը հաջողվեց մոտեցնել Կծվակի ժայռոտ ափին։ Հայդուկներն ափ ելան ու սկսեցին մագլցել ժայռն ի վեր։ Լեռներին սովոր այս մարդիկ ծովի վրա իրենց վստահ չէին զգում, իսկ երբ ոտք դրեցին ժայռերին, մի գերբնական ուժ ձեռք բերին։ Բարձրանում էին, և հանկարծ հենց դիմացից՝ մոտ 30 մետր հեռավորությունից, ուժեղ հրաձգություն սկսվեց։ Պարետություն անող թուրքական զորքերն էին, որ շարժման ձայն առնելով՝ կրակ էին բացել։ Հայդուկներին մնում էր հուժկու հարվածով ցրել հակառակորդին և ճանապարհ բացել։ Դա նրանց հաջողվեց, և խումբը բարձրացավ Նեմրութ։ Հրաձգության վայրում մնաց միայն Ասատուրը, որ ծանր վիրավորվել էր, և որպեսզի թշնամու ձեռքը չընկնի, բարձր ժայռից իրեն նետեց լճի փոթորկահույզ ալիքների մեջ ու խեղդվեց։

Ժամանակակիցներից մեկը գրում է. «Կառավարությունը Շամիրամի կովի հաջորդ օրը ամենուրեք ծովը խիստ հսկողության տակ էր վերցրել և բանտարկել բոլոր նավերը։ Գևորգը,

անտեղյակ թշնամու կողմից արված այս կարգադրությանը, նավով մոտենում է Կծվակի քարերին։ Տղաներից մի քանիսը հազիվ էին ոտները ցամաք դրել, երբ գիշերային մթության միջից դարանակալ թուրք զորքերը նրանց բուռն կրակի տակ են առնում։ Ջաուշը հանկարծակիի է գալիս, բայց չի կորցնում վճռականությունն ու սառնասրտությունը։ Տղաներին հրամայում է արագ առաջ գնալ ու դիրք բռնել Կծվակի քարերի գագաթին... Ռազմիկ կամավորները թռչում են դեպի Նեմրութի լանջերը, թշնամուց խլելով բավական թվով զոհեր»[192]: 1904 թ. օգոստոս ամիսն էր։ Խումբը ճամփան շարունակեց Ծովասար։ Գյուղացիներն ամենուրեք հրճվանքով էին դիմավորում նրանց, կերակրում, լուրեր հաղորդում։ Հայդուկները Սասունում էին։

Գյուղացիների պատմածները Գևորգին մեկ անգամ ևս համոզեցին, որ Սասունից հեռանալը սխալ էր։ Թուրքերն ու քուրդերը, օգտվելով դրանից, անսանձ էին դարձել։ Նրանք անպատիժ թալանում ու սպանում էին։ «Անլուր հալածանքներին ու խստություններին ենթակա ժողովուրդը, ֆիդայիների մեկնելուց հետո, անձնատուր էր եղել սև հուսալքության... Երբ իմացավ Գևորգի ներկայությունը իր մեջ, իր կողքին, իր մոտ, կրկին ունեցավ սփոփանքի թեթև սարսուռ, կրկին իր հոգու խորքում զգաց հույսի բաբախում։ Գևորգը՝ կեղեքիչների սարսափը, այնտեղ էր»[193]։

Իսկ Անդրանիկն ու մյուս հայդուկները Աղթամարում մնացին ևս մի քանի օր։ «Այստեղ ծավալվեցին դաժան մարտեր խիզախների փոքրիկ ջոկատի և թուրքական վիթխարի բանակի միջև»։ «Երբ ուտելու պաշարը վերջացավ, խումբը, կղզում թողնելով երկու դրոշակներ, դուրս եկավ։ Կանգուն մնացած դրոշակները երկու օր էլ խաբեցին թշնամիներին, որոնք ամենայն եռանդով շարունակում էին ոմբակոծել կղզին, կարծելով, թե ֆիդայիները տակավին այնտեղ են»։

«Բրեստ ցայտունգը» գրեց. «Անդրանիկը թողեց կղզին նույն ձևով, ինչ ձևով եկել էր այնտեղ։ Այդպիսով, նա մի քանի օր մնաց կղզում»։ Խումբը շարժվեց դեպի Վան, իսկ որոշ ժամանակ անց, Պարսկաստանի վրայով՝ Ռուսաստան։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Սասունն իր դերը կատարեց։ «Հայերի հերոսական դիմադրությունը, Սասնո լեռներում և Մշո դաշտում ծավալված անհավասար կռիվները հիացրել էին աշխարհը։ Ամենուրեք հայության հանդեպ համակրանքի ալիք բարձրացավ»[194]: 1904 թ. հունիսի 9-ին հանդես գալով Ֆրանսիայի պառլամենտում, մեծ մարդասեր Ֆրանսուա Պրեսանսեն շնորհավորեց հայ ժողովրդին, որ նա զենք է վերցրել նվաճելու իր ազատության տարրական պայմանները...

«Ես չեմ ասում, թե այդ արյունոտ ողջակեզերը միայն ջարդեր են եղել, եղել են և կռիվներ, անհավասար կռիվներ, քանի որ հայերը գրեթե անզեն են եղել, բայց դրանք այն կռիվներից են, առանց որոնց որևէ ժողովուրդ չի նվաճում իր գոյության իրավունքը... Նրանք չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին։ Նրանք պաշտպանվեցին ապրիլ ամսից ի վեր, առանց տոնելու հաղթանակ, որ անհնարին էր։ Հայերի, ինչպես և ուրիշ ճնշված ժողովուրդների համար կան այնպիսի պարագաներ, որ ապստամբությունն ամենասուրբն է և առաջնագույնը բոլոր պարտավորություններից»[195], Ժորեսը գրեց. «Ցանկանում եմ միանալ քաղաքակիրթ աշխարհի մարդկանց զգացմունքներին և բողոքել այն զզվելի վարչակարգի դեմ, որի ներքո գտնվում են հայերը»։ Հանդես գալով հայերին ահաբեկչության մեջ մեղադրողների դեմ «Դեյլի Նյուսի» թերթակիցը 1904 թ. հուլիսի 1-ին Կ. Պոլսից գրեց. «Անգլիայում պետք է լիուլի հասկացվի, որ հայ ժողովրդի մեծ մասը դատապարտում է սպառնալիքների դիմելը և կամ այդ սպառնալիքները բանկ օթթոմանի վրա եղած հարձակման նման եղանակով գործադրելը։ Բայց այդ չի նշանակում, թե նրանք գոհ են ներկա ռեժիմից։ Այդ տեսակ հերյուրանքներ ասվում են միայն վարձկան թերթերի կողմից։ Հայերի ցանկությունն է իրենց կյանքը և ինչքը ապահով տեսնել և ոչ թե իրենց ժողովրդին տեսնել տանջված ու բռնաբարված։ Նրանք ընդունում են, թե կայսրության բոլոր նահանգներում էլ իրենք թվով քիչ են, որ բռնի միջոցների դիմելը, նույնիսկ ի պատասխան հրեշային բռնաբարությունների, առաջ պիտի բերի էլ ավելի դաժան ճնշում»։ «Էրզրումում ժողովուրդը գանգատվում է կամայական ձերբակալումների և մանավանդ այն տանջանքների դեմ, որոնց ենթարկվում են նրանք...

Էդուարդ Թագավորի հպատակներին ինչքան էլ անհավանական թվան այս պատմությունները, սակայն Թուրք կառավարության մեթոդներին ծանոթ եղողներին անհավանական չեն թվա։ Ինչպես երևում է, էրզրումում հյուպատոսները դեմ են կամայական ձերբակալություններին և տանջանքներին, և նրանց դիտողությունները օգտակար դեր են խաղացել, բայց միայն քաղաքում»։ Նամակագիրը հայտնում է, թե հայկական խմբերի մասին տարածված լուրերը սուտ են, և թե՝ «մի քանի հոգու ներկայությունից օգտվում են՝ քրիստոնյա ժողովրդին կողոպտելու։ Այս լուրերը տարածվել են նաև Վանի շրջանում, որոնք նույնպես անհիմն են և պատրվակ՝ քրիստոնյաների վրա քրդերի հարձակման համար»[196]։

«Դեյլի նյուսը» 1904 թ. հունիսի 18-ին անդրադարձել է այս հարցին. «Դժոխային կացությունը դարձյալ տիրել է Հայաստանում, և մենք մի անգամ ևս դեմ առ դեմ կանգնած ենք պատմական այն կոտորածի, բռնաբարության և ավերումի հանդեպ, որոնց հետ մեզ ընտելացրել է սուլթանի կառավարությունը։ Վերջին կոտորածների միջև եղած միակ տարբերությունը այն է, որ այդ կոտորածները կատարված են պարբերաբար, անդադար, և հրկիզումներն ու մարդասպանությունները, որ մի ամսից ի վեր շարունակվում են, Եվրոպայի ուշադրությունը չեն գրավել, ուրեմն և կարող են անպատիժ շարունակվել արյունարբու սուլթանի կողմից»։ Ինչպես 1894—96 թվերի, այնպես էլ 1904 թվի ջարդերի ժամանակ սուլթանն ու Բ. Դուռը ամեն ինչ արեցին, որպեսզի տեղեկությունների արտահոսք տեղի չունենա և արտասահմանում ճշմարտությունը չիմանան։

«Մեծ ջանքեր է գործադրվում,— 1904 թվականի հուլիսի 1-ին գրեց «Դեյլի նյուսը»,— դուրս չհանելու համար որևէ մանրամասնություն՝ Հայաստանում վերջերս կատարվածի վերաբերյալ։ Բայց այժմ գաղտնի նամակներ են հասնում, որոնք լույս են սփռում վիճակի վրա... Ոչ ոքի թույլ չի տրվում քաղաքից կամ Մշո շրջակայքից դուրս ելնել, վախենալով, որ չլինի թե իրենց տեսածները և լսածները պատմեն... Նույնիսկ Թուրքերը, նախքան մեկնելը, ստիպված են թույլտվություն ստանալ և երդում տալ, որ ոչ ոքի չպետք է հայտնեն, թե ինչպես են վարվում քրիստոնյա ժողովրդի հետ»։ Սուլթանական կառավարությունը ոչ մի խաբեության և կեղծիքի առջև կանգ չէր առնում համաշխարհային հասարակայնությանը թյուրիմացության մեջ գցելու համար։

Այս ուղղությամբ հատկապես մեծ ջանքեր էր թափում «Օրիենտ» լրագիրը։ Սուլթանի փողերով պահվող այս թերթում նրա ծախու խմբագիր Նիկոլայդիսի հեղինակությամբ Սասունին նվիրված հոդվածներից մեկում կարդում ենք. «...Մի՞թե աշխարհը չգիտե, որ նրանք (հայերը) առևտրականներ են, որքան ճարպիկ, այնքան և շահասեր, որ նրանց մեջ ագահությունը հիմնական առաքինությունն է... 1895-ի շարժումը առաջացավ շահի, վաստակի այդ ախորժակներից։ Նրանք սրվել էին արդեն դարերի ընթացքում, երբ Անատոլիայի ոչ հայ ազգաբնակչությունը շարունակ կեղեքվում էր հայերի ձեռքով, բայց նրանք տակավին չէին հագեցել։ 1904-ի շարժումը ծագեց միևնույն պատճառներից և նրա դադարելուց հետո նորանոր շարժումներ պիտի առաջ գան, մինչև որ հայկական ախորժակները չստանան լիակատար բավարարություն»։

Սուլթանը շինծու լուրերով ողողում էր արտասահմանյան պարբերականները, կանգ չէր առնում ոչ մի միջոցի առջև, կաշառք էր տալիս, որ այդ նյութերը տպագրվեն։ Եվ տպագրվում էին սուտն ու կեղծիքը, դառնում եվրոպացի ընթերցողի սեփականությունը։ Ահա դրանցից մեկը. Վիեննա, 20-ը ապրիլի. «Պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ Սասունի շրջանում տեղի են ունեցել լուրջ կռիվներ զորքերի և հայ ապստամբների միջև։ Այս վերջինները թվով 2000, եկել են մեծ մասամբ Ռուսաստանից ու Պարսկաստանից։ Կռիվները, անշուշտ, ծագել են այն պատճառով, որ ապստամբապետ Անդրանիկը մերժել է բանակցության մեջ մտնել տեղական իշխանությունների հետ՝ անձնատուր լինելու մասին։ Զորքերն ունեցել են 20 հոգի սպանված և 23 վիրավոր։ Ապստամբների կորուստը հայտնի չէ։ Տալվորիկի շրջանի 12 գյուղեր ավերված են, հայտնի չէ ապստամբների՞, թե՞ քրդերի ձեռքով»[197]։

Կ. Պոլիս, 2-ը մայիսի. «... Քանի որ քրդերը հարձակվել էին Սասունի մի քանի գյուղերի վրա, հայ հեղափոխականները, խմբապետ Անդրանիկի առաջնորդությամբ, շտապ օգնության հասան իրենց հայրենակիցներին, քշեցին և կոտորեցին բազմաթիվ քրդերի»[198]։

Իսկ մայիսի 5-ին Պոլսից հաղորդում են, որ «քրդերի մասնակցությունը այդ կռիվներին կասկածելի է թվում։ Կենտի մութեսարիֆը մի անգամ հեռագրել է, «որ հայկական շարժման առիթով մահմեդականները շատ գրգռված են և դժվար կլինի արգելք լինել բռնի ճնշումներին»[199]։

Բայց բոլոր լրագրողներն ու հասարակական գործիչները չէ, որ հավատում էին թուրքական այս կեղծիքներին։

Հուլիսի 7-ին, Փարիզի մունիցիպալիտետի խորհրդում, Կոլը հայտարարեց. «Ամենուրեք թալան, սպանություն, ավերմունք։ Շաբաթ չի լինում, որ գյուղ չթալանվի, կորստի չմատնվի։ Եվ դրա հետ միասին՝ անվերջ խաբեություններ և կեղծ լուրեր, որ ամեն օր հրապարակ է գցվում օսմանյան դեսպանության կողմից՝ եվրոպական հասարակական կարծիքը քնեցնելու համար»[200]։

Օսմանյան կայսրության ներքին կյանքին լավատեղյակ օտարերկրացիները հերքում էին թուրքական հերյուրանքները հայերի անջատողական գործունեության, մասնավորապես, համազգային ապստամբություն նախապատրաստելու մասին։ Ահա մի վկայություն.

«Սասունի գավառը հանդարտ է և խաղաղված։ Ռազմական կետերի մշտական զորամասերում պահակազորեր են դրված։ Կոտորածից ողջ մնացածները քաղցած են, բայց փորձում են վերաշինել իրենց այրված գյուղերը։

Բիթլիսի հյուպատոսական մարմինը կոտորածից, ցրտից ու անոթությունից մեռնողների թիվը 3500-ի է հասցնում։ Մուշի գավառում ապստամբները պարտիզանական կռվի ձև են ընտրել՝ զորքերին ու քուրդ խմբերին դարանի մեջ գցելով՝ նրանք պահանջում են մի քանի բարեփոխումներ, որոնք գլխավորապես վերաբերում են տեղական վարչությանն ու տնտեսական վիճակին և չեն դիպչում կայսրության ամբողջությանը»։ (ՀԽՍՀ, Մ. Պ. Կ. Ա. Ֆ. 131, ց. 1, գ. 68)։

1904 թ. ամռանից թուրքական իշխանությունները ոչ միայն Սասունում ու Տարոնում, այլև հայաբնակ բոլոր շրջաններում ուժեղացրին զանգվածային հալածանքներն ու ճնշումները։

«Դեյլի նյուսի» թերթակիցը հուլիսի 1-ին գրում է. «Սասունում կատարված սպանությունների մի ցուցակ տեսա, որը ցույց է տալիս, որ թուրք խուժանը ազատ բաց է թողնված ժողովրդի վրա»։

«Ֆրանկֆուրտ ցայտունդը» նկատում է, որ Թուրքիան Եվրոպայի աչքից թաքցնում է «Հայաստանի լեռներում տեղի ունեցող անցքերը»։ Թերթը նշում է, որ Աբդուլ Համիդ II-ը երբեք չի վարանել և չի վարանի «հայկական վտանգը կրկին հեռացնելու արյան գետերով։ Պայմանները Հայաստանում ուղղակի անտանելի են...»[201]։ Հայաստանում տիրող վիճակը հատկապես բուռն հետաքրքրություն էր առաջացրել Ֆրանսիայում, այն դարձել էր քաղաքական կյանքում ամենաեռանդուն քննարկվող հարցերից մեկը. իրար էին բախվում երկու հակադիր կարծիքներ ու մոտեցումներ։ Պառլամենտում արտասանած ճառում արտաքին գործերի մինիստր Դելկասեն հայտարարեց, թե Սասունում հայերը ապստամբել են և, հետևաբար, «ճնշել յուրաքանչյուր ըմբոստություն ամեն մի կառավարության պարտականությունն է»։ Նկատի ունենալով այդ ճառը՝ Պրեսանսեն մայիսի 26-ին նրան դիմեց. «Թույլ տվեք Ձեզ մասնակից անելու այն խիստ ծանրակշիռ հեռագրերին, որոնք ստացվել են Թիֆլիսից ու Բաքվից, և որոնք մանրամասնորեն հաղորդում են, որ Սասնա կոտորածները ներկա ամսվա սկզբներին մեծ չափով վերսկսվել են»։ Ապա Պրեսանսեն պահանջում է միջոցների դիմել՝ «դադարեցնելու այս ոճիրները և սանձահարելու ու արգելելու տասը տարի առաջվա սոսկալի դեպքերի կրկնությունը»[202]։ Երեք օր անց Պրեսանսեն դժգոհում է, որ իր նախորդ նամակի պատասխանը չի ստացել. «Արյունը հոսում է, ժամանակը ստիպում է, հրամայական պահանջ կա, որ Ֆրանսիան պաշտոնապես և հրապարակավ հայտարարի, թե պարտավոր է այս ոճիրները դադարեցնել և 1895-ի սոսկալի աղետների կրկնության առաջն առնել»[203]։

Հունիսի 9-ին նա պառլամենտում հարցապնդում արեց ու պահանջեց, որ Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը ծովում նավերի ցույց կազմակերպեն՝ «արգելելու համար հայ ազգի բնաջնջումը»։

Հանդես գալով պատասխան խոսքով՝ Դելկասեն ընթերցեց Կ. Պոլսում ֆրանսիացի դեսպանի զեկուցագիրը։ «Ներկա վիճակը նման չէ 1894-ի կոտորածին։ Մի քանի գյուղեր են միայն քանդվել ու բնակչությունը սրի քաշվել, սակայն անհնար է աղետի ծավալը որոշել, որը, կարծում ենք, չափազանցված է»։ «Սասունում,— ասաց մինիստրը,— համախմբվել էին հայ հեղափոխականների կամ ֆիդայիների բազմաթիվ խմբեր», և թուրքական զորքերը լեռնաշխարհ բարձրացան «ապստամբությունը ճնշելու, որի համար սուլթանին չի կարելի մեղադրել[204]»։ Ջնայած դրան, նույնիսկ նա չկարողացավ ժխտել, որ Սասունում վայրագություններ են կատարվել և որ սուլթանին հավատալ չի կարելի։ Նա նշեց, որ հայերի նկատմամբ վայրագությունները թուրքական իշխանություններին «բնավ անախորժ չէին», «անմեղ զոհերի թիվը պարզ վկայում է, որ զինվորները շատ էլ չէին նեղվում ընտրության համար»։ Նկատի ունենալով սուլթանի քաղաքականությունը, Դելկասեն նշեց. «Բավական չէ արդարանալու համար ցուցադրել տրված հրամանները։ Պետք է պարզ կերպով հաստատել, որ այդ հրամանները անկեղծ են, որ նրանց

անկեղծությանը հավատում են ամենից առաջ նրանք, ովքեր դրանք գործադրելու հանձնարարություն ունեին»[205]:

Պառլամենտի այդ նույն նիստում Պրեսանսեն հայտարարեց. «1894-ի և 96-ի պատմությունն է, որ վերսկսվում է։ Միևնույն վայրերն են՝ Սասուն, Մուշ, միևնույն գյուղերն են՝ Գելիեգուզան, Տալվորիկ, Սեմալ և ուրիշներ... Միևնույն մարդիկ են՝ Զեքի փաշա, Ֆերիգ բեյ, զոհերն են միայն ուրիշ, որովհետև մի քանիսը բախտ են ունեցել, այո, բախտ, նահատակվել առաջին հարվածից և կենդանի մնացածների հետ չենթարկվել մեծ մարդասպանի հրահանգած ոճիրներին»։ Դիմելով կառավարությանը, նա ասաց. «Բողոքներ դուք արել եք... Ձեզ հետ բողոքել են նաև Անգլիան և Ռուսաստանը։ Բայց սուլթանը գիտե, թե ինչ արժեն այդ բողոքները, երբ նրանց հետևից չկա հաստատ որոշում՝ հասնելու նպատակին, և ձեռնպահ չմնալ գործողություններից, եթե դրանք անհրաժեշտ դառնան»։ «Հիշեցեք,— շարունակեց նա,— որ 1894-ի Սասունի ջարդերով արյունոտ վարագույրն էր միայն, որ բարձրացավ, որովհետև ժամանակին դարման չեղավ չարիքին... Նույնիսկ Զեքի փաշան և Ֆերիգ բեյը գործից չհանվեցին։ Ֆրանսիական կառավարությունը Թուրքական ջրերը նավեր մտցրեց միայն այն բանի համար, որ Թուրքիան ֆրանսիական մի քանի հարուստներից վերցրած պարտքերը չէր վերադարձնում, իսկ երբ մի ամբողջ ժողովրդի արյուն է հոսում, նա էական որևէ քայլի չի դիմում»։

«Եթե դուք չեք ուզում թույլ տալ վերսկսելու մի մեծ ոճիր, որ ոչ միայն մի եղերափորձ է՝ ընդդեմ մարդկության, այլև գեբագույն մի վտանգ՝ Արևելքի ու աշխարհի խաղաղության համար, ապա առաջարկում եմ Ձեզ (Անգլիայի ու Ռուսաստանի հետ) բարեհաճել անհրաժեշտ դիմումներ անել Կ. Պոլսում։ Առաջարկում եմ, իհարկե, պաշտպանել այդ դիմումները նույնպիսի մի ցույցով, որով դուք գոհացում ստացաք չորս տարի առաջ։ Առաջարկում եմ ապահովագրել ձեզ մի այնպիսի ապագայից, որ այժմ դեռ կարող եք հեռացնել, բայց վաղը կարող է խույս տալ ձեզնից, ինչպես և մեզնից»[206]։

Եվրոպական պետությունների եսասեր, անբարոյական քաղաքականությունը նկատի ունենալով, Քիյարը «Պրո Արմենիայում» գրեց. «Միայն Աբդուլ Համիդի երեսը չէ, որ կարմիր է պլշկված։ Այդ սարսափելի արյան ցայտերը հասնում են նաև ուրիշ ժողովուրդների ղեկավարներին, որոնց Հոմերոսն անվանում է ժողովուրդներին լափողներ»։ «Դեյլի նյուսը» 1904 թ. հուլիսի 1-ին գրեց. «Մեր դեսպանը, նոր խռովությունների առաջն առնելու համար, իր ցանկությունների մեջ ուրիշներից անշուշտ ետ չի մնում, սակայն ինքը և պաշտոնակիցները հրահանգ են ստացել բավականանալ միմիայն իրականությունը հասկանալով ու բողոքելով։ Բառը, որ պիտի դադարեցներ առևանգումը, կողոպուտը և բռնաբարումը, դեռ չէր արտասանված»։

Այդ տարիներին օսմանյան վայրագ քաղաքականության մերկացմամբ և հայ ժողովրդի արդար դատի պաշտպանությամբ, բացի Պրեսանսեից և Ժորեսից, հանդես եկան միջազգային ճանաչում ունեցող այնպիսի առաջադեմ գործիչներ, ինչպիսիք են Պասսին, Ա. Ֆրանսը, Կլեմանսոն, Լերուա-Բոլքեոն, Քիյարը, Բերարը, Դ'Էստուրնելը, Գոհիեն, Ձեմբան, Ռուանեն, Դը Կոնստանսը՝ Ֆրանսիայում, Բրայսը, Ստիվենսոնը, Մակքոլը, Դիլոնը, Ռամզեին, Բիտը՝ Անգլիայում, Վանդերվելդը, Ռեկալյուն, Գնիսը, Լորանը, Եանսոնը, Էրբերան և Պիքարը՝ Բելգիայում, Վիրխովը, Լամբրեխտը, Բեռնշտայնը, Բեբելը, Կաուցկին, Լյուքսեմբուրգը, Լիբկնեխտը, Լեփսիուսը, Հարդենը, Լեհմանը, Ռորհբախը՝ Գերմանիայում, Վան Կոլլը՝ Հոլանդիայում, Բայերը՝ Դանիայում, Լոմբազոն, Ֆերրին, Ա. Ջիբրիանին, Ֆ. Գարիբալդին՝ Իտալիայում և ուրիշներ։

Հայ ժողովրդի արդար դատի պաշտպանների շարքում էին ռուսական մտավորականության և հեղափոխական շարժման բազմաթիվ ներկայացուցիչներ։

ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սասունի 1904 թվականի իրադարձությունների ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է լավ ըմբռնել դրանց իմաստը։

Ինչպիսի՞ն էր այդ իրադարձությունների բնույթը։ Դրանք իրենցից ի՞նչ էին ներկայացնում՝ քաղաքական որոշակի ծրագիր ունեցող ապստամբությո՞ւն, պարտիզանական կռի՞վ, թե՞ ինքնապաշտպանություն կամ գոյապայքար։

Թուրքական պատմագրությունը այն համարում է ապստամբություն, որը նախապատրաստեց ու իրականացրեց դաշնակցական կուսակցությունը։

Մինչդեռ իրողությունը հետևյալն է։

Սուլթանը որոշել էր Սասունը դատարկել հայերից և այդ անել նրանց բնաջնջման միջոցով, որը, բնականաբար, ոտքի հանեց սասունցիներին։ Սասունցին զենք վերցրեց ոչ թե օսմանյան կայսրությանը հաղթելու, այլ միայն գոյություն ունենալու իրավունքի համար։ Սասունի ինքնապաշտպանությունը ապստամբություն համարելու դեմ հանդես էին գալիս նաև որոշ դաշնակցականներ։ Օրինակ, այդ կուսակցության ոչ շարքային անդամ Վարդոն մամուլում մի քանի անգամ հանդես եկավ այդ տեսակետի քննադատությամբ։ Սակայն պատմագրության մեջ նման մոտեցումները հազվադեպ են։ Տիրապետողն այն կարծիքն է, որ 1904 թվին նախապատրաստվել և իրականացվել էր դաշնակցական կուսակցության կողմից և խնդիր ուներ «սուլթանին դաս տալ»։

Ընդհանրապես հայդուկության, նրա պայքարի բնութագրման, հայդուկների ղեկավարների գնահատման, քաղաքական կուսակցությունների հետ նրանց կապերի, ինչպես նաև այդ շարժման ղեկավարման գործում կուսակցությունների դերի շուրջը խեղաթյուրումները շատ են։ Ցանդրադառնալով բոլորին, բերենք միայն երկու օրինակ։ Խուքը վերաբերում է Վահան Փափազյանին, որը հայդուկներին վերագրել է վարկաբեկիչ իրաշարժություններ ու հարաբերություններ։

Ըստ նրա՝ հակասություններ կային ոչ թե հայդուկների ու դաշնակցական կուսակցության, այլ «դրսի» ու «ներսի» հայդուկների միջև։ Նա գրում է. «Երկարորեն, մերթ մեղմ, հաճախ բուռն ու կրքոտ վիճաբանությունները կշարունակվեին։ Կզգայի, որ իրենց մեջ անախորժ հարաբերություն ստեղծված էր, նկատելի էր, որ թաքնված ու զսպված մի բան կար դուրանցիների և դրսից եկած ուժերու միջև... Իշխանը և ես մեծ ճիգ գործ դրինք հանգստացնելու կրքերը։ Տիրող ծանր մթնոլորտը կարող էինք փարատել մենք՝ անկաշկանդ, իբրև խնդրից և իրենց ներքին հաշիվներից ու նկատառումներից դուրս մարդիկ։ Մեզ էր ուղղված բոլորի հայացքները»[207]։

Վ. Փափազյանը, խոսելով մի ժողովի մասին, գրում է, որ քննարկվող հարցը «Անդրանիկի և Գևորգ Չաուշի անախորժ փոխհարաբերությունների խնդիրն էր։ Հրայրն օգտագործել էր Վարշգեսի ներկայությունը և հեղինակությունը՝ վերջ տալու ներքին այդ պառակտմանը։ Անդրանիկի և Գևորգ Չաուշի ձգված հարաբերությունների դարմանը կգտնեն վերջինիս ժամանակավորապես Տարոնից Վան փոխադրելով»[208]։ Ճիշտ չէ։ Երբեք Անդրանիկի և Գևորգի միջև հատուկ քննարկում պահանջող հակասություններ ու «ձգված հարաբերություններ» չեն եղել։ Նրանք ոչ միայն մտերիմ ընկերներ, այլև համախոհներ էին։ Իրականում լարված հարաբերություններ կային ոչ թե Անդրանիկի ու Գևորգի միջև (և Հրայրն էլ աշխատում էր այդ հարաբերությունները կարգավորել), այլ Անդրանիկի ու Հրայրի միջև, որոնք կրում էին ոչ թե անձնական, այլ սկզբունքային բնույթ, վերաբերում էին ինքնապաշտպանական կռիվների տակտիկայի ու ստրատեգիայի առանցքային հարցերին։

Ինչևիցե, Սասունի 1904 թ. իրադարձությունները «դաշնակցական ապստամբություն» և ընդհանրապես՝ ապստամբություն համարելը կեղծիք է, որ ստեղծվել է սուլթանական պալատում՝ եղերական իրադարձությունների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար։ Եվ տարօրինակ է, որ դափինների հետևից վազող որոշ գործիչներ սուլթանի նենգությունը չէին ուզում նկատել ու կրկնում էին նրա հնարած կեղծիքը։

Եվ ահա Սասունի իրադարձությունները վերլուծելու համար դրվում են ապստամբության սխեմայի մեջ և փնտրում են, թե որն էր հայերի պարտության պատճառը, կարծես թե այլընտրանք կար և մի բուռ սասունցիներ կարողանալու էին հաղթել օսմանյան հզորությանը։

Օսմանյան իշխանությունների դեմ հայդուկների կռիվն ինքնապաշտպանական էր։ Հայդուկները քաջ գիտեին, որ իրենք սուլթանին հաղթել չեն կարող, բայց և անհավասար մարտի ելան՝ հանուն հայ գյուղացու կյանքի, հանուն նրա պատվի ու արժանապատվության։

Ըստ այդմ էլ միանշանակ ասել, թե Սասունի կռիվներում հայերը պարտվեցին, ճիշտ չի լինի։ Ընդհակառակը, հիմքեր կան ասելու, որ սասունցիներն այս կռիվներից, ըստ էության, հաղթող դուրս եկան։

Նրանք ձախողեցին Սասունը բնաջնջելու, սասունցիներից դատարկելու սուլթանի մտադրության կատարումը։ Ոչ միայն սասունցին մնաց Սասունում, այլև Սասունում մնացին հայդուկային կազմակերպված խմբեր, ինքնապաշտպանության ջոկատներ։ Այստեղ էին Գևորգը, Մակարը։ Սասունն ընկճված չէր։ Պայքարը շարունակվում էր։

գրքերը լայն արձագանք ունեցան։ Նրանք հայկական շրջաններում խանդավառ տրամադրություն ստեղծեցին, տասնյակ հազարավոր մարդկանց մեջ ամրապնդեցին ազատագրական պայքարին մասնակցելու վճռականությունը։ Սասունի դեպքերի ազդեցության տակ ու նրանցից անմիջապես հետո Թուրքերի ու քրդերի հետ բախումներ եղան Էրզրումում, Վանում, Արճեշում։

Որոշ տեղերում մակերես դուրս եկան Թուրք-քրդական հակասությունները։ Խարբերդում համիդիեներին իշխանությունները զինաթափեցին, նրանցից խլեցին նույնիսկ հագուստը, պատճառաբանելով, թե «այժմ արդեն չեն կարող գալ հայ ֆիդայիները»։ Առանձին տեղերում փորձեր արվեցին ամբողջ քուրդ բնակչությանը զինաթափելու։

Իշխանությունները դեռևս զենքի տակ գտնվող համիդիեներին տեղից տեղ էին փոխադրում, անորոշ վիճակում պահում։ Համիդիեներն ասում էին. «Ո՞ւր ենք գնալու, չգիտենք, արդյո՞ք Մակեդոնիա, Ռումելիա, Ալբանիա, թե՞ Սասուն։ Երեք տեղն էլ գնալ կլինի, վերադառնալ չի լինի... Տաճիկի միաքն է մեզ կոտորել տալ... Վա՜յ մեր օրին»։

Սուլթանը պրովոկացիոն ջարդեր ու հալածանքներ հրահրելով՝ չկարողացավ թեթևացնել երկրում խորացող տնտեսական ու քաղաքական համազգային բնույթ ընդունած ճգնաժամը։ Գնալով դրությունը ավելի ծանրացավ, վայրագ բարքերն ու հալածանքները երկիրը կանգնեցրին բարոյալքման առջև[209]:

1904 թ. իրադարձությունները նկատելի բարերար ազդեցություն ունեցան նաև Թուրք և քուրդ աշխատավորության քաղաքական հասունացման վրա։ Նրանք սկսեցին կասկածանքով վերաբերվել, իսկ առանձին դեպքերում՝ ընդդիմանալ սուլթանական քաղաքականությանը, փաշաների, խաների, բեկերի ու շեյխերի կամայականություններին։ Վանում, 1906 թ., Թուրք ընդհատակյաները թռուցիկ էին փակցրել, որում ասվում էր. «Մենք՝ մահմեդականներս, մինչև այժմ հանցավոր էինք համարում հայ հեղափոխականներին, նրանց անվանելով խռովարարներ։ Մինչև այժմ, կուրորեն ենթարկված լինելով կառավարության հարստահարություններին ու ճնշումներին, կարծում էինք, թե այդ է մեր ճակատագիրը, որին պարտավոր էինք հնազանդվել մինչև վերջ։ Իսկ այժմ բացվել են մեր մտքերն ու աչքերը, և մենք էլ ենթարկվելով հայերի վիճակին ու բախտին, ձայնակցում ենք նրանց բողոքներին ու հայտարարում, որ վերացնենք այս խիստ ճնշումներն ու հարստահարությունները, որոնք այլևս անտանելի են։ Անուղղակի տուրքերը, դատարանական զեղծումները, կաշառակերությունը և պաշտոնական ողջ խայտառակությունները մեր ժողովրդին ծայր աստիճանի թշվառության ու հետադիմության մատնեցին, որոնց այլևս չենք կարող դիմանալ»[210]։ Ճիշտ է, այս մտածողությունը լայն տարածում չգտավ և օսմանյան տիրակալներին հաջողվեց Թուրք ժողովրդին դեռ երկար ժամանակ արբեցնել շովինիստական ու կրոնական ֆանատիզմով, բայց անժխտելի է, որ Թուրք հասարակության մեջ ծայր էին առել լուրջ խմորումներ։

Սասունի հերոսամարտից հետո քաղաքական որոշ շրջաններ կրկին բարձրացրին Հայկական հարցը։ Կաթողիկոսը և դաշնակցության ներկայացուցիչներ Հ. Սարաջյանը, Ս. Ավետյանը և Լորիս Մելիքյանը կազմեցին մի պատվիրակություն և հասան մինչև ԱՄՆ։ Նրանց ընդունեց պրեզիդենտ Ռուզվելտը։ Հայերը պրեզիդենտին խնդրեցին աջակցել Հաագայի միջազգային դատարանում Հայկական հարցը քննելու։

Պատմությունը կրկնվում էր։ Այդ նույն Ռուզվելտը, որի գրչին են պատկանում հետևյալ խոսքերը. «Թուրքիայի հայ հպատակների տանջանքները բարձրորեն դարման ու բուժում են աղաղակում։ Այդ տանջանքները ցնցում են ամբողջ մարդկային ցեղի հումանիստական զգացմունքը», հայերի խնդրանքին 1906 թ. փետրվարի 20-ին պատասխանեց, որ ավելի պատճառաբանված կլիներ, եթե այդ խնդիրը (դատարան) մտցվեր մի այնպիսի կառավարության կողմից, որն ստորագրել էր Բեռլինի 1878 թ. դաշնագիրը։ ԱՄՆ-ը հրաժարվեցին նաև Հայկական հարցին նվիրված միջազգային կոնգրես հրավիրելու նախաձեռնությունն իրենց վրա վերցնելուց[211]։

Հարկ է նաև նշել, որ Եվրոպայի միջամտության հարցը հայկական շրջաններում լայնորեն էր քննարկվում, և նա այս կամ այն քաղաքական կուսակցության միանշանակ ծրագիր չդարձավ։ Այդ հարցը ծնվում էր քաղաքական որոշակի իրադարձություններում և երբ վրա էր հասնում հիասթափությունը, հրապարակը թողնում էր։ Օրինակ, «Հնչակ» թերթը, մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունից հիասթափված, 1897 թվականին գրել է. «Մենք մեր հեղափոխական գործը բոլորովին չենք կարող համարեցնել այս կամ այն պետության շա-

հերին։ Պետք է ստեղծել, առաջ բերել իրողություններ, և այդ պետություններն են, որ ստիպված են իրենց շահերի հարմարեցումը փնտրել մերինի մեջ։ Մենք հայ հեղափոխության մահազանգը հնչեցրած կլինենք հենց այն րոպեից, երբ կմտածենք շարժվել այս կամ այն պետության շահերի թելադրանքին և իղձերին համեմատ։ Դա չի լինի հեղափոխություն, այլ մի արտաքին ուժի քաղաքական գործակալություն, ինչ որ հեռու է եղել մեզնից և հեռու էլ կմնա մինչև վերջ։ Հայ հեղափոխությունը իր ուրույն ընթացքը պիտի շարունակի, համաձայն իղձերին և պարագաներին, առանց մեկ ու մյուս պետության քաղաքական խաղալիքը, գործիքը դառնալու»։ Իսկ մի քանի տարի անց «Հնչակը» իր հույսը կապում էր մեծ տերությունների աջակցության և միջամտության հետ։ «Հեղափոխականի հրամայական պարտքը պետք է լինի ժողովրդին հասկացնել,— գրեց նա,— որ եթե եվրոպական տերությունները մինչև այժմ ակտիվ չմիջամտեցին և իրենց ձեռքը չվերցրին Հայկական հարցի վերջնական լուծումը, դրա գլխավոր պատճառն այն էր, որ ուժ՝ տեսական, կովող, մեծածավալ ուժ երևան չհանեցինք...», որովհետև «առանց ուժ երևան գալու չի խանգարվի եվրոպական պետությունների շահերը, իսկ առանց այդ շահերը խանգարելու միջամտություն չի լինի»[212]։

1906 թ. «Հնչակը» նորից է հիասթափություն ապրում և իր օգոստոսի համարում գրում. «Չեկավ մեր փրկությունը սուլթաններից, չեկավ ցարերից, չեկավ և այն պետություններից, որոնք հրապարակային խոստումներ էին տվել մեզ։ Այս վերջիններս իրենց արդահատանքի բառերի ծորակը բաց թողին, ուրիշ ոչինչ... Չորս պատերի մեջ բանտարկված, պրկված ըստրուկին կմնար իր ազգության հարցը լուծել։ Ու այդ միակ ճարը բնական այն ուղին էր, որ մենք դեռ շատ վաղուց բռնած պետք է լինեինք, փոխանակ ծառայական հոգի ցույց տալու, ուրիշների դուռը ծեծելու և մուրացկանություն անելու։ Ժողովրդային շարժումների, կռվի, ապստամբության, հեղափոխության մեջ պիտի որոնեինք մեր ազատագրության բանալին։ Դրանից դուրս ուրիշ ելք չկա։ Ու մենք ընտրեցինք, ավելի ուղիղն ասած, իրերը մեզ ստիպեցին այդ ուղին ընդունել. այդպես էլ եղավ»[213]։

Նման տատանումներից զերծ չմնաց նաև Անդրանիկը։ 1904 թ. իրադարձություններից նա եզրակացրեց, որ հայդուկային

պայքարը ազատագրության միջոց չէ։ Հայդուկային շարժումը կարող է հաջողության հասնել, եթե նա ստանա որևէ հզոր տերության հովանավորությունն ու օգնությունը։ «Սասունցին,— գրում է նա,— մշեցին, խլաթցին հրացանը անգամ մը ևս այն ատեն միայն առնելու են ձեռքերնին, երբ այդ հրացանը պետության մը պահեստից է, որ իրենց կուգա։ Անանկ հարյուր մոսինով, երկու հարյուր բերդանով, աչքը դեպի փամփուշտի ճամփան, պետության դեմ կռիվ չէ մղվի»[214]։

Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները 1904 թ. հուլիսի 14-ին գրեցին Պոլսից, որ ռեֆորմների մի ծրագիր կազմեցին «Անատոլիայի այն վիլայեթների մասին, որոնք բնակեցված են հայերով։ Ռուսական դեսպանը այն հանձնեց Բ. Դռանը»։

Ցարական դիվանագետ Լոբանովին են պատկանում հետևյալ խոսքերը. «Թուրքահայ հարցը Ռուսաստանի համար ոչ թե արտաքին, այլ ներքին հարց է»։ Չնայած դրան, ցարական կառավարությունը առանձնակի եռանդ չէր դրսևորում սուլթանի հայաջինջ քաղաքականության առաջն առնելու։ Նա գործնականում հայկական շարժման նկատմամբ որդեգրեց թշնամական դիրք։ Դա իր արտահայտությունը գտավ նաև Անդրկովկասում Գոլիցինի հայատյաց քաղաքականության մեջ։ «Ռուսաստանի և մասնավորապես Անդրկովկասի հեղափոխական շարժումների վերելքից վախեցած, Նիկոլայ II-ը շահագրգռված էր, որ Ռուսաստանին հարևան Արևմտյան Հայաստանում պահպանվի հանգստություն և կարգ ու կանոն։ Ցարական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին սասունցի փախստականների մուտքը Անդրկովկաս, որպես «անհանգիստ տարրեր»։ Թուրքիա վերադարձող հայերին ընդունելու վերաբերյալ Պետերբուրգում Թուրքիայի դեսպանի պաշտոնական դիմումի կապակցությամբ, Կովկասի փոխարքա Գոլիցինը արտաքին գործերի մինիստրությանը հասցեագրված նամակում վճռականապես դեմ է արտահայտվում դրան, որովհետև «Անկասկած Բ. Դուռը մեզ մոտ կուղարկի հայկական շարժման բոլոր հեղափոխականներին ու ագիտատորներին և ընդհանրապես ամենաանհանգիստ և անհուսալի տարրերին՝ Անդրկովկասը նորից լցնելով հազարավոր և նույնիսկ տասնյակ հազարավոր թուրքահայերով»[215]։

Ցարական կառավարությունը բոլոր միջոցներով խոչընդոտում էր արևելյան հայերի կողմից Սասունին որևէ օգնություն

թրի 11-ին 200 զինված հայեր անանկատ անցնում են ռուս-թուրքական սահմանը։ Հաջորդ օրը ռուսական սահմանապահները իրենք ևս անցնում են սահմանը, հայերին շրջապատում են և պահանջում առանց դիմադրության հանձնվել թուրքերին։ Հայդուկները հարկադրված զենքերը վար են դնում։ Թուրքերը բոլորին ոչնչացնում են։ «Հայերի շրջանում հեղափոխական շարժումների վերաաշխուժացման նշանները նկատի ունենալով,— Բայազետից գրում է ռուս գործակալ Իվանովը,— թուրքական կառավարությունը ձեռնարկում է ռազմական ծավալուն միջոցներ։ Պլաստունների (ռուսական սահմանապահ ջոկատ) մասնակցությունը ֆիդայիների դեմ ուղղված գործողություններին հայ ազգաբնակչության վրա ուժեղ տպավորություն է թողել, որովհետև, եթե հայերի մեջ մնացել է դրսից որևէ օգնություն ստանալու հույս, ապա այդ միայն Ռուսաստանից էր։ Ընդհանրապես սխալ կլիներ կարծել, թե թուրքահայերը թշնամաբար են վերաբերվում Ռուսաստանին, և այս տեսակետից նրանք բաժանում են Ռուսաստանի իրենց ցեղակիցների զգացմունքները։ Թուրքահայերը, հանձինս Ռուսաստանի, տեսնում են բնական պաշտպանի»։ Ռուսական զինվորական գործակալ Իվանովը գտնում է. «Ռուսաստանի շահերին չի ծառայում այն, որ իրենք օգնում են Թուրքիային՝ հայկական շարժումները ճնշելու համար։ Ընդհակառակը, Ռուսաստանի համար շատ ավելի օգտակար է պաշտպանել ու աջակցել թուրքահայերին, հանձինս որոնց Թուրքիայի դեմ պատերազմի ժամանակ Ռուսաստանը կունենա գործնական ու օգտակար դաշնակից...

Այս առումով,— եզրակացնում է Իվանովը,— ֆիդայիների նկատմամբ ... հաշվեհարդարին, թուրքերի հետ միասին, պլաստունների մասնակցությունը հազիվ թե արժանի է հավանության»[216]։

Ակնհայտ է երկու մոտեցում և երկու վերաբերմունք Հայկական հարցին։ Դա Ռուսաստանում նոր բան չէր։ Միշտ էլ ռուսական ռեակցիան մերժել է հայկական շարժումները և աջակցել դրանց դեմ պայքարին, և միշտ էլ ռուսական առաջադիմական շրջանները ողջունել են հայկական շարժումները և աջակցել դրանց ծավալմանը։ Չնայած դրան, նույնիսկ ցարական կառավարությունը 1904 թ. հանդես եկավ ի պաշտպանություն

արևմտահայության և գործնական քայլեր կատարեց հայկական նոր կոտորածների առաջն առնելու համար։

1904 թ. ապրիլի 15-ին Անգլիայի արտաքին գործերի միներստր Լանզդոուն հեռագրում է Պետերբուրգի անգլիական դեսպանին. «Ռուս կառավարությունը տեղեկացել է, որ տաճկական շատ մեծ զորք է կենտրոնացված Հայաստանի այդ մասում (Տարոնում և Սասունում), թվով ենթադրաբար մոտ 38 հազար մարդ, մի ուժ, որ ռուս կառավարությանը թվում է չափազանց, որ կարող է հասցնել լուրջ խառնակությունների և գուցե հայերի ընդհանուր կոտորածի։ Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հրավիրել է Բ. Դռան ուշադրությունը այդ խնդրի վրա և հույս է հայտնել, որ դեսպան Քոնբրը ևս հրահանգ կստանա նույնը անելու»[217]։

Անգլիայի քաղաքականության իսկական բնույթը պարզելուն օգնում է Բիթլիսի նրա փոխհյուպատոսի ապրիլի 2-ի հեռագիրը դեսպան Օ'Քոնբրին։ Բիթլիսի նոր նշանակված կուսակալ Ֆերիգ բեյի այն հարցին, թե հայդուկների դեմ պե՞տք է ուժ գործադրել, փոխհյուպատոս Հեթքոթը պատասխանում է դրական, «եթե միայն վստահ եք, որ զինվորներն ու սպաները չեն չափազանցի իրենց տրված հրահանգները և չեն խառնի անմեղներին հանցավորների հետ»։ Բայց Հեթքոթը միաժամանակ վճռականապես հերքում է թուրքերի տարածած այն լուրերը, թե հայերն են նախահարձակն ու գրգռողները, թե իբր հայդուկները բռնությամբ գրավել են մահմեդական 24 գյուղ։ «Նրան (Ֆերիգ բեյին),— գրում է փոխհյուպատոսը,— սկզբում փոքր-ինչ անակնկալ պատճառեց, երբ ես հայտնեցի իմ համոզմունքը, որ եթե երկրում մի քիչ արդարություն հաստատվեր, կոմիտեներն ու ապստամբները փոքր աջակցություն միայն կգտնեին»[218]։

Բ. Դուռը ապրիլի վերջերին անգլիական դեսպանին հավատացնում էր, որ Հայաստանը լցված է հայդուկներով, որ միայն Վանի ու Բասենի շրջանում 3—4 հազար հայդուկ կա։ Իսկ անգլիացիներն էլ համաձայն էին դա ճշմարտության տեղ ընդունել։ Այսպես, Վանի անգլիական փոխհյուպատոսը ապրիլի 11-ին դեսպանին գրեց. «Հեղափոխականները շարունակ գալիս են Վան, քրդերի նման հագնված, և քրդերը պատրաստակամություն են ցույց տալիս օգնելու նրանց սահմանն անցնելու և ամեն կերպ աջակցելու՝ լիուլի վարձատրության փոխարեն»[219]։

Ճիշտ է, Սասունի դեպքերի ընթացքում նման դիվանագի-

տական գրագրությունները աշխուժացան, սակայն տերություններից և ոչ մեկը ոչ մի գործնական քայլի չդիմեց։

Մայիսի 12-ին նույն Օ'Քոնորը հեռագիր ուղարկեց Բիթլիսի փոխհյուպատոսին, որով հանձնարարվում էր ռուսական և ֆրանսիական հյուպատոսների հետ, ինչպես այդ արվել էր 1896 թ. Զեյթունում, գնալ հայդուկների մոտ և նրանց ու թուրքական կառավարության մեջ միջնորդի դեր կատարել՝ նրանց ղեկավարներին առաջարկել հանձնվել ու դրսից եկածներին, երկրից անվտանգ դուրս հանելու պայմանով, պահանջել «քրիստոնյաների համար կյանքի ապահովության երաշխավորություն, մահմեդական հարևանների զինաթափում, քաղաքական բանտարկյալների ներում, զենքերի հանձնում, մի քանի տարով հարկահանության դադարեցում և այլն»[220]։

Անգլիայի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ բրիտանական կառավարությունը իր միջնորդությունն է առաջարկել Բ. Դռան և ապստամբների միջև բանակցություններ սկսելու։ Բ. Դուռը համաձայնել է։

Պոլսից մայիսի 17-ին հայտնեցին, որ «Մուշի անգլիական և ռուսական հյուպատոսները և Վանի ֆրանսիական հյուպատոսը իրենց կառավարություններից հրաման ստացան համաձայնության գալ, քննություն սկսելու Բիթլիսի վիլայեթի կացության մասին»[221]։

Սակայն այս բոլորը միայն խոսքեր էին և գործնական ոչ մի արդյունք չունեցան։ Դեռ ավելին, Հայկական հարցում անգլիական կառավարությունն ավանդական ձևով երկդիմի քաղաքականություն էր վարում։ Նա խոսքով պաշտպանում էր հայերին, իսկ գործով օգնում օսմանյան կառավարությանը՝ հայկական շարժումները ճնշելու, որովհետև դրանք ռուսական կողմնորոշում ունեին։

«Էքոն» հունիսի 11-ին գրեց. «Այն իրողությունները, որոնց վրա Պրեսանսեն Ֆրանսիայում և Ջ. Բրայսը այստեղ ուշադրություն հրավիրեցին, բավականին զարհուրելի ու սպառնալի են։ Լորդ Փերսին ինքն էլ խոստովանեց, որ 25 հայ գյուղեր կրակի են տրվել, մինչ Դելկասեն ընդունում է, որ այդ գյուղերի բնակիչները սրի են քաշվել»։

Լորդ Փերսիի «երեկվա ճառը պարզապես թուրքին հրավեր էր՝ անպատիժ շարունակելու իր վայրագությունները։ Դիզրաելիի օրերից այս կողմ սրանից ավելի անպատիվ խոսք լսված չէր բրիտանական նախարարի բերանից»։

Մենք պետք է գործով վերացնենք այս «ճառի թողած ցավալի տպավորությունը», թույլ չտանք, որ թուրքերը հոշոտեն հայերին։ Դեռ 1899 թ. Համիդը Վիլհելմին ասել էր, որ վաղ թե ուշ Թուրքիան հեռանալու է Եվրոպայից։ Վերջինս գովեց իր սրտակից բարեկամի իմաստությունն ու ասաց. «Թուրքիայի ապագան Փոքր Ասիայում է»[222]։ Իսկ Պոլսում գերմանական դեսպաններից մեկը խոստովանել է. «Արևելքում, ուր էլ գնանք՝ Պոլիս, Եգիպտոս, հայերը մեր քաղաքականության միակ ընդդիմադիր ուժն են»։ Եվ պատահական չէր, որ կայզերական Գերմանիան այս անգամ էլ հայերի նկատմամբ թշնամական դիրք գրավեց։

Իտալիան էլ անհանգստության նշաններ ցույց չէր տալիս. նույնիսկ պառլամենտում կատարված հարցապնդումից հետո, որը կառավարությունից պահանջում էր ակտիվություն հանդես բերել Հայկական հարցը լուծելու համար, Հռոմը որևէ քայլ չարեց։

ԱՐՅԱՆ ԴԵՄ՝ ԱՐՅՈՒՆ

Գևորգի շուրջն էին հավաքվել 70—80 հայդուկներ։ Նրանց մեջ էին Սպաղանաց Մակարն ու Մարգեն, Գալեն ու Հագեն, Մանուկն ու Ախոն՝ իրենց ջոկատներով։ «Թե որ մեռնել կա, էլ ինչո՞ւ մեռնել շղթան ձեռքներիս։ Ավելի լավ չէ՞ մեռնել Գևորգի կողքին»։ Հանդիպումը հուզիչ էր։ Ծեր Մակարը լաց էր լինում։ Սասունի ժողովուրդը, վերադառնալով գյուղերը, դրանք այրված էր գտել։ Սասունցին վերականգնում էր իր քանդված օջախը։ Թուրքերին հաջողվել էր զինաթափ անել ոչ միայն Սասունի, այլև Դաշտի գյուղերի բնակչությանը։ Անասելի տանջանքների էին ենթարկվում բանտարկված 1000 տարոնցիները։ Դաշտում հազարավոր մարդիկ սրի քաշվեցին, ամենուրեք թալան ու ավերածություն էր։ «Կարմիր ջարդից հետո սպիտակ կոտորած,— գրում են Մուշից,— Սասունի և Դաշտի արյունահեղություններով, հալածանքներով, անգթություններով անարդ բրոնապետությունը չի բավականանում, այլ ուզում է Մշո գեղեցիկ դաշտն ամբողջությամբ քանդել։

Այժմ իրողությունն այն է, որ ամեն գյուղից ամենաքիչը 20—30 տուն գաղթել է։ Կառավարությունը դալալների միջոցով հայտնեց ժողովրդին, թե աղքատները թող ազատ հեռանան Դիարբեքիր, նույնիսկ դյուրություններ ու ճանապարհածախս տվեց, իսկ նրանց հեռանալուց 5—10 օր անց մուհաճիրներ է բերում ու հաստատում հեռացողների հողերի վրա»։ «Սով է, բայց արհեստական սով... Ո՞վ է տեսել կամ լսել, որ ցորենի շտեմարան կոչվող Մշո դաշտը այդ օրվան հասներ...»[223]։ Թուրքական իշխանությունները մեծ ավերածություններ էին կատարել նաև Սասունի միջնաբերդում՝ Տալվորիկում, Գելիեգուզանում, Իշխանձորում, Տափքում։ Սվիններով սպառնալիքի տակ սասունցիներին հարկադրել էին գյուղերում զորանոցներ կառուցել, որտեղ տեղավորվել էին 500 թուրք զինվոր։ Սրանք, հայդուկներին փնտրելու պատրվակով, խուզարկություններ էին կատարում, զբաղվում թալանով։ Եռանդուն գործունեություն էին ծավալել հարկահավաքները։ «Աչքներս որ կողմ դարձնենք,— գրում է ականատեսը,— աչ ու ձախ աղքատություն, խեղճություն է։ Թշվառությունն ամենուրեք համայնական է... Հայը, Թուրքը, քուրդը՝ բոլորն էլ, առհասարակ, անորոշ վիճակում, մութ ապագայի խաբկանքների մեջ, տարուբերվում են ջղագրգիռ, հուսահատ ու անձկոտ...»[224]։ «Տուրքերը թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում անասելի ձևով են հավաքվում»։ Դրա համար էլ ժողովուրդը հայդուկների հասցեին ասում էր. «Մեզ թողին դուշմանի ձեռ, իրենք գնացին»։

Գևորգը հանձնարարություններ տվեց հայդուկներին, իսկ ինքը 15 հոգով դերադասեց որոշ ժամանակ մնալ Մառնիկի շրջանում։ Դաշտի բնակչությունը վտանգի մեջ էր։ Դրա համար էլ Գևորգը նպատակահարմար գտավ հայդուկների հիմնական ուժերը տեղափոխել Դաշտի գյուղերը։ Նա իր խմբով Մառնիկից հսկում էր Դաշտին և անհրաժեշտության դեպքում կայծակի արագությամբ հարվածում բռնության դիմած թուրքական զորքին ու ոստիկանությանը։ Ջանբեզարները Սասունի շրջանում գործում էին արյունախում Կուլի-խան բեկի ղեկավարությամբ։ Այդ ջոկատներում հիմնականում հավաքված էին բախտախնդիր, պորտաբույծ և ավազակային տարրեր։ Ջանբեզարները կառավարությունից ստանում էին բարձր աշխատավարձ, ձրի հագուստ, սնունդ և այլն։ Կառավարությունը, հարկեր հավաքելու պատրվակով, այս ջոկատներն օգտագործում էր հայկական ու քրդական շարժումների դեմ։ Այսպիսով, սուլթանը ազատագրական շարժումների դեմ պայքարում գործարքի մեջ մտավ քրեական հանցագործների, ավազակների հետ։ Ժողովուրդը արնաքամ էր լինում։ Դրա համար էլ հայդուկներն իրենց գլխավոր հարվածը ուղղեցին ջանբեզարների դեմ։

Գևորգն իր խմբով անցնում էր գյուղից գյուղ, և ամենուրեք նրան դիմավորում էին մեծ ոգևորությամբ։ Բռնությունից մեջբերած գյուղացին ուղղվում էր։ Նրա մեջ կրկին արթնանում էր սասունցու մարտնչող ու ազատասեր ոգին։

Թուրքական բանակն ու ոստիկանությունը, Դաշտի գյուղերն ընկած, բռնի միջոցներով հայ բնակչությունից զենքեր էին հավաքում։ Գևորգը հայդուկներին հանձնարարեց գյուղերում եղած պիտանի հրացանները հավաքել, պահել թաքստոցներում և թուրքերին տալ միայն հին ու կոտրտված զենքերը։ Գևորգը վճռեց գործողությունների դիմել նաև այն թուրքերի ու քուրդ աղաների դեմ, որոնք տիրացել են հայերի հողերին, տներին և նույնիսկ գյուղերին։ Տարոնի Օրկնոց գյուղը տնքում էր Միրզա բեյի կեղեքումից։ Նա իր զորքով ու կանանցով այստեղ եկավ գյուղացիներից զենք հավաքելու և տիրացավ գյուղին։ Սր չէր լինում, որ նա կամ նրա մարդիկ թալան ու ավերածություն չկատարեին։ Գյուղացիներին պարտադրեցին ձրի կերակրել ու սպասարկել զինվորներին, հարեմին ու սպասարկող անձնակազմին, որոնց թիվը 150-ից անցնում էր։ Ամեն օր, երեկոյան, Միրզա բեյը գյուղացիների հաշվին խնջույք էր կազմակերպում, զվարճանում և ապա բարձրանում իր հարեմը։ Մի գիշեր Միրզան իր հերթական կերուխումից հետո ձիերի դոփյուն լսեց։ Գևորգը 30 հայդուկների հետ շրջապատել էր Միրզա բեյի տունը։ Նա մոտեցավ մուտքին և ատրճանակը պահելով պահակների վրա՝ պահանջեց արթնացնել Միրզային։

— Միրզա բեյ, ի՞նչ է, մեռա՞ծ ես, որ Գևորգ Չաուշին այսքան սպասեցնել ես տալիս,— հնչեց Գևորգի ձայնը։

Միրզա բեյը դողալով գլուխը պատուհանից դուրս հանեց ու կմկմալով ասաց. «Հրամեցե՛ք, հրամեցե՛ք»։

Երկու պահակ վախվորած դուռը բաց արին և նրան առաջնորդեցին բեյի սենյակը։ Գևորգի ետևից գնում էին Գալեն ու Մանուկը։

— Միրզա բեյ, այս կողմերով անցնում էի, որոշեցի հան-

դիպել քեզ ու բարեել,— ասաց Գևորգը,— խառն օրեր են։ Գյուղացիների հետ լավ վարվիր։

Բեյը սարսափից քարացել էր։

— Իմ գլխի վրա տեղ ունես, Գևորգ,— ապա շուռ գալով ծառաներին՝ հրամայեց,— ոչխար մորթեք։

— Մենք ճամփորդ ենք, ժամանակ չունենք։ Մնաք խաղաղությամբ։ Աստված ոչ անի, թե մեկ էլ հարկադրված լինեմ քո դուռը բանալ,— ասաց Գևորգն ու գնաց դեպի ելքը։

Քիչ անց սարսափած բեյի ունկերը թմբկահարեցին հեռացող ձիերի սմբակների դոփյունը։ Գիշերվա լռության մեջ տպավորությունն այնպիսին էր, ասես մի ամբողջ բանակ էր արշավում։

Օրկնոց գյուղից 5 կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում Մկրագոմ գյուղը։ Այդ գյուղի տեր ու տնօրենը Հասան աղան էր, որն իր վայրագություններով Միրզա բեյից ետ չէր մնում։ Գևորգն իր հեծյալ ջոկատով մտավ գյուղ և ուղիղ գնաց Հասան աղայի տունը։ Աղայի քուրդ պահակները խուճապահար իրար խառնվեցին։

— Այստեղ կանչեք Հասան աղային,— հրամայեց Գևորգը։ Վախվորած շարժումներով վար իջավ Հասան աղան։

— Բարև՛, Գևորգ, ներս հրամեցեք,— մի կերպ կարողացավ արտաբերել Հասան աղան։

— Դու նամարդ ես, քո հացը ուտել չի լինի։ Քեզ քանի անգամ եմ ասել, որ հայն ու քուրդը պետք է հաշտ ու խաղաղ ապրեն, թշնամություն չանեն, միասին կռվեն թուրքերի դեմ։ Դու ինձ հետ համաձայն ես եղել, իսկ հիմա տիրացել ես հայկական գյուղին և թալանում ու տանջում ես ժողովրդին։

Հասան աղան ծունկի իջավ Գևորգի առաջ, գլուխը կախեց ու ասաց.

— Ճշմարիտ ես, Գևորգ, ես խաբվեցի, նամարդություն արի։ Արժանի եմ, խփիր։

Գևորգը զայրույթով ասաց.

— Վերջին անգամ եմ զգուշացնում։

Առավոտյան Հասան աղան հավաքեց գյուղի տղամարդկանց, ջերմ ճառ արտասանեց հայերի ու քրդերի եղբայրության մասին և հավաստիացրեց, որ ինքը ամեն ինչ կանի հայերի կյանքի ու կայքի ապահովության համար։

Իսկ Միրզա բեյը, Գևորգի հեռանալուց հետո, ձի նստեց ու

հասավ Մուշ։ Կառավարչին պատմեց գիշերվա դեպքը և զորք խնդրեց։

Հայդուկների վրեժխնդրությունից ահաբեկված Սասունի կառավարիչ Ջևադ էֆենդին Վերին Սասունից, որն իր նստավայրն էր, հեռացել և բնակվում էր Մուշ քաղաքից ոչ հեռու գտնվող Սեմալ գյուղում։ Բայց դա փրկություն չէր։ Հայդուկները երևում էին նաև Դաշտի գյուղերում, որտեղ Գևորգ Չաուշի հայտնվելու լուրը Մուշի կառավարչին շանթահարեց։ Նա, զայրույթից կարկամած, քայլում էր իր նստավայրում՝ հայհոյանքների կարկուտ տեղալով հայերի հասցեին։

Նա իր մոտ կանչեց Քյոսա Բինբաշուն և հրամայեց զորքերով անմիջապես մտնել այդ գյուղերը, տակնուվրա անել, կրակի տալ, Գևորգ Չաուշին բռնել և Մուշ բերել։

Թուրքական զորքերը լցվեցին հայկական գյուղերը, բայց հայդուկներն ասես չքացել էին։ Լուր ստացվեց, որ Գևորգն իր խմբով Արտխոնք գյուղում է։ Մինչև այնտեղ չորս ժամվա ճանապարհ էր։

Գևորգը հասնելով Արտխոնք, իր մոտ է կանչում ռես Պետրոսին ու ասում. «Գնա Մուշ և կառավարչին ասա, որ Գևորգը իր խմբով ձեր գյուղում է»։ Պետրոսը նախ զարմացավ, ապա փորձեց հրաժարվել նման հանձնարարություն կատարելուց։ Սակայն հանդիպելով Գևորգի վճռական ու խիստ հայացքին, գնաց Մուշ։

Պետրոսի գնալուց հետո Գևորգը գյուղացիներին հավաքեց ու ասաց. — Մենք այժմ մեկնում ենք, քիչ հետո թուրքական զորքերը այստեղ կլինեն։ Բողոքեք մեր դեմ, մեզ հայհոյեք, որ ձեզ ձեռք չտան։

Գիշերը Գևորգը մտնում է Շեխլան գյուղը։ Այստեղ նրան բողոքում են Թելո աղայի սանձարձակություններից։ Գևորգը շտապում է Թելոյի տուն։

— Թելո որ ասում են, դո՞ւ ես,— հարցնում է Գևորգը անսպասելիորեն տուն խուժելով։ Սարսափահար գաղանը տեղից վեր է թռչում և ընկնում Գևորգի ոտները։ Գևորգը զզվանքով ասում է. «Թելո, գիշեր ժամանակ մտել եմ քո տուն՝ քեզ մի առակ պատմելու։ Թե որ իմ միտքը հասկանաս, քեզ կներեմ, թե որ չհասկացար, շանսատակ եմ անելու։ Ժամ ու պատարագ չտեսած սասունցի մի հայ,— պատմում է Գևորգը,— Մուշ է գալիս և, որովհետև կիրակի օր էր, ժամ է գնում։ Երբ պատա-

բաց կատարող վարդապետը ողջույն է տալիս, ժողովրդի մեջ սկսվում է սասունցուն անսովոր շարժում։ Նա կարծելով, թե մարդիկ կատաղած իրար պիտի կոտորեն, ժամից դուրս է գալիս ու փախչում։ Ճանապարհին հանդիպելով ժամ գնացող մի խումբ մարդկանց, աղաղակում է. «Հայեր, ո՞ւր եք գնում, ժամի ժողովուրդը կատաղած իրար միս է ուտում»։ Զարմացած մարդիկ հարցնում են՝ ինչո՞ւ։ Սասունցին պատասխանում է. «Պատճառը չգիտեմ, ախպեր, բայց էդ խառնակությունը վարդապետից սկսվեց»։ Վերջում Գևորգն ավելացրեց. «Թելո, հասկացա՞ր իմ առակի միտքը։ Կատաղած շունը կատաղեցնում է իր կծած շներին։ Ժողովրդի մեջ ամեն խառնակություն սկսվում է մեկից։ Մեր կռիվը ժողովուրդը իրար խառնող սուլթանի դեմ է։ Դու ինչո՞ւ ես կատաղել և ժողովրդի միսն ես ուտում»։ Թելոն երդում է տալիս այլևս հայերին նեղություն չտալ և դառնալ Գևորգի զինակիցը։

Այս շրջանում Գևորգը հայդուկային շարժման համար երեք հիմնական խնդիր է դնում։ Դրանք են. զինված պայքար բոլոր այն աշիրեթապետերի դեմ, որոնք չեն դադարում ճնշումներ գործադրել հայերի նկատմամբ։ Ահաբեկել և զսպել բոլոր այն ցեղերին, որոնք գործիք են դարձել թուրքական իշխանությունների ձեռքին։ Եռանդուն շարժերով ոգևորել և հավատներշնչել ժողովրդին։

Մի օր Գևորգը գնում էր Ալիջան գյուղ։ Նա գյուղացիներից իմանում է, որ գյուղին տիրացած Քերիմ բեյը արյունռուշտ գազանի նման է իրեն պահում։ Գևորգը իր մոտ կանչեց Տիգրանին.

— Տիգրան, ես Քերիմ բեյին նամակ էի ուղարկել, որ հայերին չնեղի, բայց նա ինձ չլսեց։ Վերցրու չորս մարդ, ծպտվեք քրդական հագուստների մեջ, մտեք Քերիմի տունը և նրա վերջը ավեք։

Տիգրանն իր ընկերների հետ հասավ Քերիմի տուն։ Այստեղ մեծ խնջույք էր։ Երբ ներս մտան, Քերիմը չնկատեց, բայց երբ աչքն ընկավ անծանոթներին, ձեռքը դեպի մաուզերը տարավ։ Հենց այդ ժամանակ հնչեց ատրճանակի ձայնը, և Քերիմը ձեռքն այս անգամ արդեն դեպի կուրծքը տարավ։ Հավաքվածներն իրար խառնվեցին։ Քերիմը մի ձեռքով կուրծքը բռնած, իսկ մյուսով՝ մաուզերը, հասավ տան շեմին, բայց Տիգրանի ատրճանակից արձակած գնդակը նրան գետնին տապալեց։ Տիգրանը,

օգտվելով խառնաշփոթից, անհետացավ։ Իսկ նրա չորս ընկերները, այդ թվում Մոսիկն ու Մկրոն, զոհվեցին։ Գևորգը Տերգեվանքից գնում էր Հավատորիկ։ Դիշեր էր։ Հայդուկներին նկատում են թուրքական զորքերը։ Հայդուկները թեքվում են դեպի Բերդակ, ձորի մեջ, թմբերի ետևում տեսնում են թշնամու զինվորների։ Անելանելի վիճակ էր։ Բայց Գևորգին խորթ էր խուճապի ենթարկվելն ու գլուխը կորցնելը։ Անմիջապես գտնում է ելքը։ Երկու հայդուկների հրամայում է իջնել ձորը, աղմկելով իրենց վրա բևեռել թշնամու ուշադրությունը և ապա հեռանալ Դաշտի ուղղությամբ։ Մյուսներին հրամայում է պառկել իրարից 100—200 մետր հեռավորության վրա։ Ոչ մի դեպքում չկրակել և սողալով գնալ դեպի ձորի մուտքը, դիրքեր գրավել ու սպասել իր հրամանին։

Թուրքական զորքերը, հետապնդելով Մանուկին և Ախոյին, հնարավորություն են տալիս մյուս հայդուկներին շրջանցելու իրենց։ Հայդուկները թիկունքից հարվածում են թշնամուն։ Օգտվելով թուրքերի շփոթությունից, Մանուկն ու Ախոն կարողանում են դուրս գալ պաշարման շղթայից, հասնել Նորաշեն։

«Անցյալ շաբաթ,— գրեց «Հնչակը» 1905 թ. օգոստոսին,— Մուշի կողմերում մի հայ հեղափոխական խմբի և թուրքական զորքերի միջև եղած ընդհարումի հետևանքով 12 զինվոր սպանվում է, հեղափոխականների կորուստների թիվը հայտնի չէ։ ... Մուշի գյուղերից մի փախստական պատմում է, որ այդ ընդհարման պատճառով Մշո դաշտի և Բուլանըխի գյուղերը լրիվ կողոպտված են զորքերի, համիդիեների և բաշիբոզուկ խուժանի կողմից, մեծ թվով մարդիկ սպանված և վիրավորված են»։

Գևորգը քաշվում է լեռները։

Վերը նշված դիպվածներն ու ահաբեկչությունները մի շարք թուրք ու քուրդ աղաների զսպեցին. «Ավելի լավ է գիշերվա գայլի բարեկամը դառնալ, քան թշնամանալ նրա հետ»,— մտածում էին նրանք։

ՀԱՅՆ ՈՒ ՔՈՒՐԴԸ ՀԱՇՏ ՈՒ ԽԱՂԱՂ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆ

Գիշերը կես էր դառել, երբ Գևորգն իր խմբով հասավ Օրկնոց։ Խումբը գյուղից դուրս մնաց. Գևորգը երկու հոգու հանձնարարեց մտնել Միրզա բեյի ննջարանը և դաշույնով նրան

տրյանել։ Հանձնարարությունը կատարվեց։ Ապա նա կանչեց Օրկնոցի գյուղացիներից մեկին ու ասաց.

— Վաղը կգնաս Մկրագոմ, Հասան աղային կտեսնես ու կասես, որ ես զիշերն այս կողմերով անցա, բայց ժամանակ չունեցա նրան հյուր գնալու։

Խումբն առաջ շարժվեց։ Մկրագոմ գյուղին չհասած՝ նրանց դեմ ելան մի խումբ գյուղացիներ։ Նրանք Գևորգին պատմեցին իրենց անտանելի վիճակի մասին։ Գևորգը, իր հետ վերցնելով 10 հայդուկներ, գնաց դեպի ոստիկանների բնակատեղին։ Զիներով մտավ բակ և տեսնելով աղմուկից բակ դուրս եկած ոստիկաններին, հանգիստ ասաց.

— Ի՞նչ եք ուզում այս խեղճ ժողովրդից։ Եթե հիմա ես էլ ձեզ նման վարվե՞մ։

— Փաշա, մենք ի՞նչ անենք, մեզ այդպես էր հրամայված, խնայեցեք մեզ։

— Ես փաշա չեմ, ես Գևորգ Չաուշն եմ։

Այդ անունը լսելով՝ ոստիկանները պապանձվեցին։

— Հենց այժմ ձեզ կարող ենք ոչնչացնել, բայց այս անգամ խնայում ենք։ Հեռացեք Մուշ և կառավարչին ասեք, որ հայի արյան դիմաց արյուն է թափվելու։

Մի քանի ժամ հետո ոստիկանները հեռացան գյուղից։

1904 թ. կռիվներից հետո, ինչպես արդեն նշվեց, սուլթանը հանձնարարություն տվեց՝ հայերին թույլ չտալ վերադառնալու Սասուն, գտնել միջոցներ ու պատրվակներ՝ նրանց հողերը խլելու և մուսուլմաններով բնակեցնելու համար։

Նկատի ունենալով այդ՝ Գևորգը հայդուկներին ու տանուտերերին հանձնարարեց թույլ չտալ, որ հայ գյուղացին իր հողը վաճառի թուրքին կամ քրդին։ Եթե գյուղացին կարիքից դրդված է հողը վաճառում, հանգանակության միջոցով օգնել նրան։ Միջոցներ ստեղծել նաև ետ գնելու գյուղացիներից արդեն խլված հողերը։ Այս առումով առաջնակարգ նշանակություն ուներ կառավարության կողմից Կովկասից բերված և Սասունում բնակեցրած շուրջ 5000 մահմեդականների հարցը։ Բանն այն էր, որ չերքեզներին կառավարությունը ոչ միայն բնակեցրեց հայերի հողերում, այլև նրանց զինեց և արտոնյալ իրավունքներ տվեց քրդերի և, մասնավորապես, հայերի նկատմամբ։ Հայերը որոշեցին օգտագործել քրդերի ուժերը՝ եկվոր մահմեդականներին Սասունից հեռացնելու համար։ Քրդական ցեղախմբերը անընդ-

հատ հարձակումներ էին գործում, հայկական գյուղերում տեղավորված չերքեզներին սպանում, թալանում, նրանց համար ստեղծում անապահով վիճակ, մինչև որ նրանց մի մասը հարկադրված հեռացավ Սասունից։ Գևորգի ջանքերի շնորհիվ մի քանի քուրդ ցեղապետներ խուսափեցին թուրքական իշխանությունների հանձնարարությունները կատարելուց, չէին մասնակցում հայերի վրա հարձակումներին։ Հայդուկներին հավատարիմ մնաց Խճող գյուղի դերվիշը՝ իր յոթ եղբայրներով։ Գևորգի հետ բարեկամական հարաբերություններ էր պահպանում ցեղապետ Տրպոյի Սաիդը, քրդական շեկո ցեղի մի քանի ներկայացուցիչներ և այլն։

1905 թ. Բերդակում հրավիրված հայդուկների ժողովում Գևորգը ասաց. «Մնացինք մենք, մեր յուղը և մեր ալյուրը։ Պետք է գործենք այնպես և այնքան, ինչքան մեր ալյուրը ջուր կվերցնի։ Սասունն ընկավ, մնացինք բաց Տարոնի ու Դուրյանի մեջ, ամեն քայլափոխը մեկ-մեկ վտանգ է։ Պետք է քուրդ բեյերի հետ հարաբերության մեջ մտնենք և ամեն կերպ աշխատենք նրանց մեր կողմը պահել»։

Գևորգին ձեռք գցելու թուրքական զորքերի ու ոստիկանության բոլոր ջանքերն ապարդյուն անցան։ Նա ուրվականի նման հայտնվում էր, հարվածում ու անհետանում։ Թուրքերը կատաղած էին, հուսահատված ու ամոթահար։ Իսկ ձմեռը լեռներից աստիճանաբար իջնում էր Դաշտ։ Գևորգին փնտրողները դատարկ ձեռքերով վերադարձան իրենց զորանոցները։

Ձմեռը անհարմարություններ էր ստեղծում նաև հայդուկների համար։ Գևորգն իր խմբով բարձրացավ Մառնիկ և ձմեռն անցկացրեց ձյունե տնակներում, թաղիքների վրա։ Երբ գարունը բացվեց նա հավաքեց հայդուկներին և ասաց. «Սասունն ու Դաշտը պետք է բաժանենք մեր խմբերի միջև, յուրաքանչյուր խումբ գործելու է իրեն կցված գյուղերում։ Խմբերը գործելու են ըստ իրադրության թելադրանքի։ Նորից ու նորից արագ տեղաշարժեր, հարկ եղած դեպքում կայծակնային հարված և լայն շարժման տպավորություն ստեղծեք»։

Գևորգը 15 հայդուկներով շարժվեց Կուրտիկ։ Ճանապարհին նա մտավ Փեթար գյուղը։ Այստեղ տեր ու տիրական էր Յուսուֆ աղան, որը գյուղացիներին պարտքերի դիմաց դատապարտել էր ճորտային աշխատանքի։

Գևորգի խումբը մտավ Յուսուֆ աղայի բակը և առանց ու-

շադրություն դարձնելու բակում եղած պահակներին, բարձրացավ նրա ննջասենյակը։ Վերջինս քնած էր։ Արթնացրեց։

— Ի՞նչ ես ուզում այս խեղճ գյուղացիներից։ Այդ ինչպե՞ս եղավ, որ գյուղացիների հողերը քո սեփականությունը դարձան։

— Էֆենդի, ես գյուղացիներին պարտք էի տվել, բայց նրանք երկու տարում վերադարձնել չկարողացան և հոժարակամ պարտքի դիմաց իրենց հողերը տվեցին։

— Ստում ես, մեկ ոսկու դիմաց երկու տարի անց գյուղացուց 20 ոսկի ես ուզում, որտեղի՞ց տա։ Յուսուֆ աղա, վերջ տուր, թե չէ վատ կլինի։

Եվ շուռ գալով՝ հեռացավ։

Նույն գիշեր խումբը հասավ Ալվառինջ, որտեղ գյուղացիները, չդիմանալով Քասիմ բեկի հալածանքներին, թողել էին գյուղն ու հեռացել։ Գևորգը մտավ Քասիմի տունը, բարձրացավ նրա ննջասենյակը, արթնացրեց, կնոջը մյուս սենյակն ուղարկեց, իսկ ամուսնուն գնդակահարեց։

Յուսուֆ բեկը Մուշից, կառավարչի տրամադրած զորքով, վերադառնում էր Փեթար, երբ լուր ստացվեց Քասիմի սպանության մասին։ Զորքը շուռ եկավ Ալվառինջ, իսկ Յուսուֆը մի քանի ոստիկաններով մտավ Փեթար, նոր թալան կազմակերպեց և գնաց Մուշ՝ հայդուկների պատժից խուսափելու համար։ Գևորգը որոշեց Յուսուֆին ոչնչացնել հենց Մուշում, թուրք կառավարչի, զորքի ու ոստիկանության քթի տակ։

Նա Իսրոյին, Թադեին, Մանուկին և Մխոյին հանձնարարեց այդ գործը։ Նրանք ծպտված հասան Մուշ։ Իրար ուսի բարձրանալով՝ Ախոն ու Մանուկը պատուհանից ներս մտան, իսկ Թադեն ու Իսրոն դրսում սպասեցին։

Առավոտյան սպանված Յուսուֆի գրպանում մի թուղթ գտնվեց. «Զուլումիդ համար դու պիտի մեռնես։ Սարհատ»։

Այս սպանությունն ահաբեկեց թուրքերին. հայդուկների երկար ձեռքը մինչև իրենց տունն էր հասել։

Այդ օրերին Գևորգին հայտնեցին, որ Դեղձմեր գյուղի բեկն իր զինված ջոկատներով շրջում է բնակավայրերով և կողոպտում հայ գյուղացիներին։ Գևորգը հանձնարարում է խասգյուղցի երկու հայդուկի գնալ Ալվառինջ և այդ բեկի հաշիվը մաքրել։ Նրա կարգադրությունը կատարվում է ճշտությամբ։ Իսկ մի քանի օր հետո Ալվառինջ է գալիս ինքը՝ Գևորգը։ Նա իր շուրջն է հավաքում տեղի քրդերին, զրուցում, նվերներ տալիս և այնտեղից

անցնում Գոմս գյուղը։ Այս գյուղում էր բնակվում բանտից նոր աղատված տխրահռչակ ավազակ Մեհմեդ Ալին։ Իշխանությունները Գոմս գյուղը նվիրել էին նրան, որը, իր նման հիսուն ավազակների հետ, բնակվում էր գյուղում և գործադրում ամեն տեսակի բռնություններ։ Գևորգը գերի է վերցնում Մեհմեդ Ալուն և նրանից պահանջում վերջ տալ հայերի նկատմամբ ավազակություններին։ Ահաբեկված Ալին իսկապես դադարում է հայերին հետապնդելուց, մի բան, որ Մուշի ոստիկանական շրջաններում կասկած է ծնում նրա նկատմամբ։ Մեհմեդ Ալուն հսկողության տակ են վերցնում։ Նա հարկադրված հեռանում է Գոմս գյուղից։

Գևորգը Մառնիկում էր, երբ նրան այցելության եկավ քրդական նշանավոր ցեղապետ Ղասրմ բեկը։

— Ղասրմ բեկ, դու բարով եկար, ես քո մասին շատ եմ լսել, բայց առաջին անգամ եմ տեսնում։

— Գևորգ Ջաուշ, քեզ հյուր եմ եկել, եկել եմ քեզ հետ աղ ու հաց կիսելու և եղբայրանալու։

— Հյուրն աստծունն է, մեր աղ ու հացը քեզ հալալ լինի։

— Գևորգ, թուրքերի հետ վերջնականապես խզվել եմ։ Թուրքը մեր դեմ ամեն տեսակի չարիքներ գործեց, բայց մենք՝ քրդերս, խելք չունենք։ Իմ պապերը հայերի հետ հաշտ ու խաղաղ են ապրել և ապրել են պատվով ու նամուսով։ Օսմանցիները մեր մի քանի մեծերին խաբեցին և իրենց գործիքը դարձրեցին հայերի դեմ։ Մեր ձեռքերը արյունոտվեցին հայերի արյունով, մեր հացը հարամ եղավ։ Օսմանցիները մեր ցեղի շատ անվանի մարդկանց վերացրել են, մյուսներին աքսորել, որի հետևանքով ցրվեց մեր ցեղը, կորցրեց իր վաղեմի հեղինակությունը։ Քուրդը հայի վրա ձեռք բարձրացնելու իրավունք չունի, որովհետև դրանից օգտվում են միայն օսմանցիները։

Հյուրասիրելուց հետո Գևորգը հարցնում է.

— Բեկ, ինչո՞ւ ուզեցիր անպատճառ ինձ տեսնել։

— Լավ մարդուն ո՞վ չի ուզի տեսնել, մանավանդ, քեզ նման քաջին, որին, ասում են, գնդակ չի դիպչում։

— Բայց դրանից քեզ ի՞նչ օգուտ։ Չէ՞ որ վաղը, երբ կառավարությունն իմանա, թե դու հետս տեսնվել ես, թշնամի աչքով պիտի նայի քեզ և մի օր էլ գուցե ձերբակալի։

— Կառավարությունը հիմա էլ, եթե կարողանա, ինձ կձեր-

բակալի։ Իսկ քեզ պես բարեկամ ունենալը ինձ շատ հոգսերից կազատի։

— Եթե տղամարդու պես խոսք ես տալիս, որ կդառնաս հայ ազգի բարեկամը, այդ ժամանակ ես ու դու կլինենք ճշմարիտ բարեկամներ, իսկ եթե ոչ, հաշվիր, որ իրար չենք տեսել։

— Համաձայն եմ։ Խութի անունից խոսք եմ տալիս։

— Ես մի քանի քուրդ աղաների հետ ևս պայման ունեմ։

— Ովքե՞ր են։

— Բեկ, եթե ես այդ աղաների անունները քեզ հայտնեմ, ուրեմն քո անունն էլ պետք է նրանց ասեմ։ Եվ եթե ձեզնից որևէ մեկը մատնիչ լինի, ուրեմն վաղը բոլորդ կձերբակալվեք։ Թող ժամանակ անցնի, իրար լավ փորձենք, նոր միայն իրար ամեն ինչ ասենք։— Ապա ձայնեց.

— Աղ ու հաց բերեք։

Բերեցին։ Գևորգն աղն ու հացը բռնեց. Ղասըմ բեկը ոտքի կանգնեց, նրանք հացը կտրեցին, թաթախեցին աղի մեջ ու կեցան։ Ապա իրար մատ կտրեցին և արյունները խառնեցին։ Հետո հրացանի ու սրի առաջ կանգնած՝ երդում տվին հավատարիմ լինել միմյանց։ Որպես հավատարմության նշան՝ Գևորգի հայդուկներից երկուսը՝ Հակոն ու Մոսիկը, անցան ծառայության Ղասըմ բեկի մոտ, իսկ վերջինիս երկու ծառաները՝ Հասեն ու Հասանոն, մտան հայդուկների խմբի մեջ։ Հասանոն Գևորգի թիկնապահն էր, անսահման հավատարիմ մի մարդ, որը բազմիցս իր կյանքը վտանգեց Գևորգին անխուսափելի մահից փրկելու համար։ Նա հերոսի մահով զոհվեց Սուլուխի կամուրջը պաշտպանելու ժամանակ, 1907 թ. մայիսի 27-ին։

Երբ Գևորգի ու Ղասըմ բեկի դաշինքի մասին լուրը հասավ Մուշ, Թուրքական զորամասը շարժվեց դեպի Ղասըմի բնակատեղին և գնդակոծեց։ Ղասըմ բեկին օգնության եկավ հայդուկների մի ջոկատ, որը, սակայն, չկարողացավ կասեցնել Թուրքական գերակշիռ ուժերի առաջխաղացումը։ Հայերն ու քրդերը ծանր կորուստներ կրեցին։ Ղասըմ բեկն իր ընտանիքով մի կերպ դուրս պրծավ ու փախավ, իսկ նրա բնակավայրը ավերվեց։

... Հայդուկների ժողով էր։ Քննարկվում էր քրդերի նկատմամբ վերաբերմունքի հարցը։ Շատերը դեմ էին քուրդ բեկերի ու աղաների, մասնավորապես Ղասըմ բեկի հետ կապեր հաստատելուն։ Գևորգը դեմ էր նման կարծիքներին ու բացատրում էր.

— Մենք նրա անունը կօգտագործենք քուրդ հասարակության մեջ։ Երբ նա մեզ հետ լինի, ավելի համարձակ ու ազատորեն կկարողանանք մեր քարոզչությունն առաջ տանել։ Անտարակույս, մեր գործունեության ողջ դաղտնիքները նրան չենք ասելու։ Նա մեր ազդեցության տակ է։ Երբ տեսնենք, որ սամին ջեղում է, այն ժամանակ փոկը մի լավ կձգենք, բայց քանի դեռ սայլը քաշում է, թող քաշի՝ որքան կարող է։

ՀԱՐՍԱՆԻՔ

Գևորգը 15 հոգու հետ ս. Հովհաննու վանքին հարող անտառում էր։ 1905 թվի գարնան վերջին օրերն էին։ Անտառը չքնաղ տեսք ուներ...

Հայդուկների խումբը ճաշի էր նստել։ Հանկարծ անտառից հնչեց պահապանների ազդանշանը, որ նշանակում էր, թե մարդ է մոտենում։ Գալեն ու Հագեն վեն թռան և քիչ անց վերադարձան մի երիտասարդ կրոնավորի հետ։ Ստեփան վարդապետն էր։ Ընդհանուր բարև տալով ասաց, որ Գևորգի հետ խոսակցություն ունի։ Գևորգը թե.

— Այս տղերքից ես գաղտնիք չունեմ, խոսի՛ր, վարդապետ։

Ստեփան վարդապետը դժվարանում էր խոսել, բայց Գևորգը պնդեց։

— Սուրբ Հովնանի վանքից եմ գալիս։ Հեղինի իշխան Վարդանի աղջիկ Եղսոն այնտեղ է և ինձ քեզ մոտ է ուղարկել։ Խնդրեց հայտնել, որ ուզում է քեզ տեսնել։ Ասաց. «Նրան տեսնեմ, երկու բառ փոխանակեմ ու թող ինձ սպանի»։

Վարդապետի խոսքերը պայթեցին ռումբի պես։ Դրանք այնքան անսպասելի էին, որ ներկաները հայացքներն ուղղած Ստեփանին, քարացել էին։ Կինը ուզում է հանդիպել հայդուկի հետ։ Իսկ այդ երիտասարդ մարդիկ հայդուկ դառնալով, երդվել էին մոռանալ կին, սեր, ընտանիք։

Գևորգի հոգին տակն ու վրա եղավ, նա գունատվեց և գլուխը խոնարհեց։ Ծանր լռություն էր, բոլորը շփոթված էին։

—Գևորգ, ես խոստացել եմ քո պատասխանը այսօր հասցնել Եղսոյին,— հնչեց վարդապետի ձայնը։

Գևորգը գլուխը բարձրացրեց և խուլ ձայնով ասաց.

— Հայտնիր, որ արդեն 20 տարի պսակված եմ զենքի հետ և երկրորդ անգամ պսակվել չեմ կարող։ Ես այսօր կամ վաղը՝

աստված գիտե։ Թող Եղսոն վերադառնա իր հայրական տունը։

Նա վեր կացավ, հեռացավ խմբից ու նստեց մի ծառի տակ։ Նրա հայացքի առջևով անցավ իր կյանքը։ 20 տարի. . Ինչ՞ որ ասես, որ գլխով չեն անցել։ Նա իրեն նվիրեց Սասունի դատին և հանուն դրա զոհեց ամեն ինչ։ Քանի՞-քանի անգամ է ինքը հրաժեշտ տվել կյանքին, բայց բոլոր այդ տարիներին հոգու խորաններում միշտ անթեղված է եղել Եղսոյի սերը։ Եվ բոլոր ջանքերը՝ խեղդելու այդ զգացումը, ապարդյուն են անցել։ Կռվի ԲԼԺ պահին թե մահվան սպառնալիքի առաջ, նրա դեմ հառնել է Եղսոն, որի սիրո ուժն է նրան վտանգներից պաշտպանել, և այժմ Եղսոյի միակ իղձն է հանդիպել, երկու խոսք փոխանակել ու կյանքին հրաժեշտ տալ։

Լռությունը խզեց Գալեն.

— Գևորգ, անաստված բան ես անում։ Եղսոն իր կյանքը քեզ է զոհել։ Մյուսները չգիտեն, բայց ես հո գիտեմ նրա սիրո պատմությունը։ Համաձայնիր, մեղք է։ Դուք պսակվեք, ես պատասխան կտամ հայ ազգին։

Նրան միացավ Հագեն։

— Նահատակի խնդրանքը մերժելը մեղք է, աստված չի ներ։

Նրանց միացան նաև մյուսները։ Բոլորը Գևորգին համոզում էին տեղի տալ, համաձայնել հանդիպելու Եղսոյի հետ, իսկ Արամը, ոտքի կանգնելով, հանդիսավոր հայտարարեց.

— Գևորգ, դու մեր ղեկավարն ես, և քո ասածները միշտ մեզ համար օրենք են եղել։ Այս հարցում մեր ասածը քեզ համար պետք է օրենք լինի։ Խոսքը հայդուկային կանոնների խախտման մասին է։ Դու ինքդ դրանք խախտելու իրավունք չունես։ Իսկ մենք բոլորս միասին կարող ենք։ Հայդուկը ամուսնանալու իրավունք չունի, բայց մեր մեջ դու և քեռի Մակարն եք ձեր ուսերին կրում հայդուկային կյանքի 20 տարիների բեռը։ Դու սովորական հայդուկ չես, այլ մեր շարժման սիրտն ու արյունը։ Եվ մենք գտնում ենք, որ դու ոչ միայն պետք է հանդիպես Եղսոյին, այլև պսակվես նրա հետ։

Լսվեցին ձայներ.

— Ճիշտ է, մենք համաձայն ենք։

Գևորգը լուռ մնաց։

Գալեն մոտեցավ Ստեփան վարդապետին.

— Գնացի՞նք, վարդապետ։

Հայդուկներին համակեց մի արտակարգ աշխուժություն։ Հայդուկային դաժան իրականություն էր ներխուժել մարդկային մի քնքուշ ջերմություն և տաքացրել արյունն աչքերն առած այդ մարդկանց հոգիները։ Դերբնական մի ուժ նրանց մի պահ կտրել էր դաժան իրականությունից և տարել մարդկային նուրբ զգացմունքների աշխարհը։

Լուռ էր միայն Գևորգը։

Ծառերի ետևից երևաց Գալեն և Գևորգին ասաց, թե Եղսոն սպասում է ընկուզենու տակ։ Գևորգը մոլոր քայլերով գնաց։ Երբ մոտեցավ, Եղսոն վեր թռավ, բայց հուզմունքից հազիվ ոտքի վրա մնաց։

— Գևորգ, ես գնամ տղաների մոտ, դուք խոսեք,— ասաց վարդապետը։

— Մենք խոսելիք չունենք,— դուրս թռավ Գևորգի շուրթերից։

Բայց Ստեփանն արդեն հեռանում էր։ Գևորգն ու Եղսոն կանգնեցին իրար դիմաց։ Նրանք այդպես էլ ոչ մի բառ չփոխանակեցին։ Գևորգը շուռ եկավ ու գնաց տղաների մոտ։ Ծառերի արանքից ընկուզենուն մոտեցան Գալեն ու Հագեն։ Նրանք Եղսոյին բերեցին հայդուկների մոտ։

Իսկ այստեղ արդեն ոչխար էին մորթում ու հարսանիքի պատրաստություն տեսնում։ Եվ երբ արևը մայր մտավ, բոլորը հավաքվեցին գետնին բացած սեղանի շուրջը։ Նրանք մոմեր վառեցին։ Գլուխները հակած, դեմ դիմաց կանգնած էին Գևորգն ու Եղսոն։ Ստեփան վարդապետը սուրբ գիրքը բռնած՝ աղոթում էր։ Ապա Գալեն առաջ եկավ, ձեռքին մի ատրճանակ։

— Եղսո քույրիկ, դու հայդուկի նշանած դարձար։ Սա էլ մեր հարսանեկան նվերը. կապիր մեջքիդ, թող փոխարինի պսակի մատանուն։

Սկսվեց խնջույքը, երգն ու պարը, որ տևեց մինչև ուշ գիշեր։ Առավոտյան վաղ խումբը ոտքի վրա էր։ Պետք է մեկնեին։ Գևորգը Եղսոյին հանձնեց Ստեփան վարդապետին և խնդրեց նրան տանել Փեթար, իշխան Պետոյի տուն, և շրջվելով դեպի Եղսոն, բոլորի ներկայությամբ ասաց.

— Եղսո, իմ ընկերների նվիրած ատրճանակն ամենաթանկ նվերն է։ Հայդուկի զենքը խիզախ ոգի է սիրում։ Այդ սուրբ զենքով խփիր թշնամուն, խփիր, որտեղ էլ լինի։ Իսկ եթե ստեղծվի վիճակ, երբ կարող ես թշնամու ձեռքն ընկնել, չվարանես ատրճանակի փողը քունքիդ մոտեցնել...

Նորապսակները բաժանվեցին...

Պսակադրությանը Մակարը ներկա չէր։ Երբ լսեց Գևորգի ամուսնության մասին, խռովքով լցվեց ծեր հայդուկի հոգին։ Նա գտնում էր, որ հայդուկային շարժման գլխավոր ուժը երիտասարդությունն էր, և Գևորգի ամուսնությունը վատ օրինակ կծառայեր մյուսներին։ Ամուսնացած հայդուկը հայդուկ չէր, և եթե մյուսները հետևեին Գևորգի օրինակին, ուրեմն շարժումը կկազմալուծվեր։ Նա չուզեց հանդիպել Գևորգին։ Սեխակ Մակարը հայդուկների ամենահեղինակավոր դեմքերից էր և նրա բռնած դիրքը կարող էր պառակտել շարժումը։

Թուրքական բանակը ողողել էր Մշո դաշտը, գրեթե բոլոր գյուղերում զորամասեր կային, ուժեղ հսկողության տակ էին վերցված բոլոր ճանապարհները։ Գևորգը մի ստվար խմբով Դաշտ իջավ և գնաց Խարս գյուղը։ Նրան զգուշացրին, որ գյուղում թուրքական վաշտ է տեղավորված, բայց նա պնդեց այդ գյուղում գիշերելու իր որոշումը։ Խումբը բաժանվեց չորս մասի և տեղավորվեց գյուղի կարևորագույն կետերը զբաղեցնող տներում։ Եվ այդ արվեց այնպիսի վարպետությամբ, որ գյուղում գտնվող թուրքերը ոչինչ չզգացին։

Գևորգը, Գալեն և մի քանի ուրիշ հայդուկներ տեղավորվում են Դավոյի Մարգարի տանը, որը գտնվում էր գյուղի հարավարևմտյան թաղում։

Հաջորդ օրը հայդուկների ժամապահները լուր են բերում, որ Մուշի կողմից զորք է գալիս։ Եվ իսկապես, Մուշում և Բիթլիսում իմացել էին, որ Գևորգը 30 հայդուկներով Խարսում է և հազարապետ Սուլեյման աղային ու Հյուսնի բեկին ուղարկել էին նրանց ոչնչացնելու կամ գերի վերցնելու։

Մարգարի տանիքից հեռադիտակով հետևելով թուրքերի առաջխաղացմանը, Գևորգը պարզ տեսնում է, որ թուրքական զորքերը, իրենց միացնելով ճանապարհամերձ գյուղերի զինվորական ջոկատներն ու քրդական զինված ուժերը, մոտենում են Խարս գյուղին։ Հարձակվողների մեջ էր նաև Ղասրմ բեկը՝ իր զինված ջոկատով։ Նա Գևորգին լուր է ուղարկում, որ հարկադրված մասնակցում է հարձակմանը, բայց իր ուժերին կարգադրել է կրակել երկինք։

Թուրքերն ու քրդերը շրջապատման մեջ են առնում Խարսը։

Մոտենալով գյուղին՝ Սուլեյման աղան կանչում է ռես Գասպարին և Պետրոսի Դավոյին ու հրամայում.

— Գնացեք հայտնեք Գևորգին, թող անձնատուր լինի։ Մեր բարեհաճ կառավարությունը նրան ներում է շնորհել։ Հայդուկները թող գան իրենց հպատակությունը հայտնեն և զենքերը հանձնեն։ Իսկ եթե չգան, գյուղը կայրենք և բոլորին կկոտորենք։

Գևորգը լրաբերներին հանձնարարում է գնալ թուրքական հրամանատարի մոտ և նրա հետ բանակցելով՝ ժամանակ շահել, մինչև ինքը որոշի անելիքը։ Նա կանչում է գյուղի ավագանուն և ասում.

— Եթե այսօր չկռվենք, բոլորս էլ տնով-տեղով կոչնչանանք։ Եթե կռվենք, բոլորս կազատվենք։ Մենք կթաքնվենք, գյուղի երիտասարդները թող մնան իրենց տներում։ Մնացածները պետք է զբաղվեն իրենց առօրյա գործերով և տպավորություն ստեղծեն, թե գյուղում հայդուկ չկա։ Խարսի ավագանին թող գնա թուրքերի մոտ և ասի, թե հայդուկները եկան, բայց անցան-գնացին։ Թող զորքերը խուզարկեն գյուղը, եթե մեզ գտնեն, այն ժամանակ կասեմ ինչ անենք։

Հայդուկները տեղավորվում են վեց տներում։ Թուրքական հրամանատարը մտնում է գյուղ։ Խարսի ավագանին նրան աղ ու հացով է դիմավորում։ Գասպարը ասում է.

— Իսկապես երկու օր առաջ Գևորգ Չաուշը եկել էր, բայց նույն օրը թողեց-գնաց։ Եթե ցանկանում եք, խուզարկեք գյուղը...

Սուլեյմանը հրամայում է խուզարկել գյուղը։ Բայց ապարդյուն։ Ոչ ոքի չեն գտնում։ Թուրքերը որոշում են մնալ գյուղում և ուրախ ժամանակ անցկացնել։ Այդ ժամանակ մի վաշտ մոտենում է Դավոյի Մարգարի տանը։ Զինվորները ներս են մտնում։ Գևորգը շրջապատված էր, բայց սառնասիրտ հետևում է դեպքերի զարգացմանը։ Թուրք սպան ինչ-որ բան կասկածելով՝ հրամայում է երդիկից և դռնից կրակ բացել։ Նա համոզվել էր, որ Գևորգը գյուղում է։ Վերջապես այդ մեծ հայդուկը ծուղակն էր ընկել։ Թուրքական մյուս ուժերը ևս շարժվեցին դեպի վերին թաղ, դեպի Մարգարի տուն։

Երբ նրանք արդեն խմբվել էին տան շորսբոլորը, Գևորգը ազդանշան տվեց։ Գյուղի վեց կետերից թշնամու վրա կրակ տեղաց։ Հայդուկները չէին երևում. նրանք կրակում էին թաքստոցից, իսկ թուրքերը խռնվել էին փողոցներում և չգիտեին, թե որ

ուղղությամբ փախչեն, որպեսզի կրակի օղակից դուրս գան։ Հայդուկները տներից ելնելով՝ ճակատային կռիվ են սկսում։ Սուլեյմանը փախչում է, ճանապարհին հանդիպելով Դավոյին՝ գոռում է. «Ասում էիր, թե ձեր գյուղում ոչ ոք չկա՞», և գնդակահարում է նրան։

Գևորգը այս տեսնելով, բղավում է.

— Շներ, անմեղ ժողովրդի՞ն եք կոտորում։ Գևորգը ես եմ։ Եթե փախչեք, ձեր թագավորի հացը ձեզ հարամ լինի։

Կռիվը սաստկանում է։ Մարտի մեջ են մտնում Խարսի երիտասարդները։ Նրանք փակել էին գյուղի նեղ փողոցներն ու կրակի տակ առել թուրքերին։ Նրանց հաջողվեց սպանել թուրքերի շեփորահարին և, ձեռք գցելով նրա շեփորը, թուրքական բանակին շփոթեցնող ազդանշաններ տալ։ Գյուղից դուրս գտնվող թուրքական մեծաթիվ ուժերը իրենց անելիքը չգիտեին, որովհետև նրանց հրամանատարները մնացել էին գյուղում և կրկվել զորամասերի հետ կապի միջոցներից, միայն մի վաշտ խրոխտ քայլերով անցավ գյուղի փողոցներով, բայց ընկնելով խաչաձև կրակի տակ, իր կազմի կեսը կորցրեց։ Կռվում էր ողջ գյուղը, նաև՝ կանայք ու երեխաները։

Սուլեյմանը, խմբավորելով իր ուժերը, հարձակման է անցնում, բայց անմիջապես վիրավորվում է և ետ փախչում։ Նրա օրինակին հետևում են մյուսները։ Խարսեցիների ձեռքն անցավ 100 հրացան։ Սպանված էր թուրքական բանակի 24 սպա և 60 զինվոր։ Մի քանի ժամ անց թշնամին ավելի մեծ ուժերով է հարձակման անցնում։ Բայց հաղթանակից արբած հայդուկներն ու գյուղացիները կռվում էին առյուծի պես։ Ամենատաք ու վտանգավոր դիրքը Գևորգինն էր։ Թշնամին, թաքնված խոտի դեզի ետևում, կրակի տակ էր առել նրան։

— Դուրս եկեք տղամարդու պես կռվենք։ Ի՞նչ եք կնկա նման պառկել դեզերի ետևում,— բղավում է Գևորգն ու հրացանից կրակ բացում դեզերի վրա։

Երեկոյան կողմ զորքը ետ քաշվեց, իսկ հայերը հավաքվեցին Մարգարի կալում։ Այդ ժամանակ Ղասրմ բեկը սրարշավ գալիս է Գևորգի վրա ու բղավում.

— Գևորգ Չաուշ, դու իմ ձեռքից ո՞ւր պիտի փախչես։

— Ղասրմ բեկ, քո գլխի ճարը տես։

Ղասրմ բեկի քողարկված խոսքերը հասկացնում էին, որ Մառնիկ տանող ուղիներում թուրքեր ու քրդեր չկան։

Գևորգը Խարս գյուղը լրիվ դատարկում է և գյուղացիներին տեղափոխում Խվներ և Ղասրմ բեկի պաշտպանության տակ գտնվող մյուս գյուղերը։ Հաջորդ օրը առավոտյան, երբ թուրքերը Խարս մտան, այնտեղ գտան միայն ծերունազարդ Հովոյին ու մի կույր աղջկա։

Խարսի կռվի արձագանքները մեծ էին։ Այդ հաղթանակը բարձրացրեց հայդուկների և հատկապես Գևորգի հեղինակությունը ոչ միայն հայերի, այլև քրդերի ու թուրքերի շրջանում։ Իսկ իշխանություններն ուժեղացրին հետապնդումները, ամենուրեք Գևորգին էին փնտրում։

Մի քանի օր անց Գևորգը ժողով հրավիրեց Հունան գյուղի մարագներից մեկում։ Նա, դիմելով հայդուկներին, ասաց.

— Այսուհետև մենք չենք կարող խմբով շրջել։ Կառավարությունը, իր ամոթալի պարտությունից կատաղած, սաստկացրել է հետապնդումները։ Վիճակն ավելի է բարդանում ռազմամթերքի պակասի պատճառով։ Մենք պետք է բաժանվենք փոքր խմբերի և ցրվենք տարբեր ուղղություններով։ Գլխավոր խնդիրը ռազմամթերք ճարելն է։

***

Գևորգի հաղթանակները մի քանի քուրդ ցեղապետների ևս հարկադրեցին հայդուկների հետ դաշինքի մեջ մտնել։ Այդ էր պահանջում նաև աշխատավոր քուրդը, որի համար Գևորգ Չաուշը դարձել էր հերոսության խորհրդանիշ։ Գևորգին իսկապես հաջողվել էր քրդական շրջաններում իր անձի նկատմամբ մեծ հավատ ու վստահություն ստեղծել։ Նա հիանալի տիրապետում էր քրդերենին, հաճախ էր նրանց այցելում, իսկ քրդական օգաներում նրա երևալը իսկական տոնի էր վերածվում։ Քուրդ ցեղապետների միջև ծագած վեճերի ժամանակ վիճող կողմերը հաճախ Գևորգի միջամտությանն էին դիմում։ Գևորգը քրդերին օգնության ձեռք էր մեկնում թուրքերի հետ բախումների ժամանակ։ Քուրդ աշխատավորները նրան մի քանի տասնյակ երդեր էին ձոնել։

Խարսի փայլուն հաղթանակից հետո նա նպատակահարմար համարեց հանդիպելու քուրդ ցեղապետներին։ Գևորգին քրդերը դիմավորեցին մեծ շուքով։ Դիմելով ներկաներին՝ նա ասաց.

— Օսմանցին 100 տարի առաջ ձեզ էր կոտորում։ Այն ժա-

մանակ մենք թույլ էինք և ձեզ օգնել չէինք կարող։ Այժմ նրանք մեզ են կոտորում և այդ անում են ձեր ձեռքով։ Վաղը, մեր հաշիվը մաքրելով, նորից դառնալու են ձեզ։ Վերջապես դուք պիտի հասկանա՞ք այս բանը։

Բոլորը համաձայն էին Գևորգի հետ և հավատարմության երդում տվին։ Նկատի ունենալով քուրդ ցեղապետների անկայուն կողմնորոշումը, (նրանք շատ հաճախ էին հայերին դավաճանում) ոմանք, այդ թվում և Սպաղանց Մակարը, քուրդ ցեղապետների նկատմամբ Գևորգի քաղաքականությունը սխալ ու վտանգավոր էին համարում։ Պատասխանելով այդպիսիներին, Գևորգն ասում էր, որ քրդերը, որպես ամբողջական ժողովուրդ, ձևավորված չեն։ Նրանք նման են մի հոտի, որի հովիվն են կրոնապետը, աշիրեթապետը, աղան ու բեկը։ Ում հետ այդ հովիվներն են, նրա հետ են նաև քրդական ցեղերը։ Փորձել առանց այդ հովիվների ուղղակի աշխատավոր քրդերի հետ կապվել՝ նշանակում է մեր դեմ հանել այդ հովիվներին ու քուրդ աշխատավորին։

Այլ կերպ ասած, քուրդ աշխատավորությունը դեռևս հասունացած չէր ինքնուրույն քաղաքական կողմնորոշման համար։ Սակայն դա չէր խանգարում, որպեսզի Գևորգն օգնության ձեռք մեկներ նրան՝ ընդդեմ քուրդ բեկերի ու աղաների, թուրք հարբստահարիչների։ Եվ որովհետև Գևորգը քուրդ աշխատավորության շրջանում բացարձակ հեղինակություն ու մեծ հմայք ուներ, այդպիսի օգնության կանչեր շատ էին ստացվում։

Ծովասար վերադառնալուց հետո Գևորգը ձեռնարկեց մի նոր շրջագայություն քրդաբնակ գյուղերով։ Դեռ չէր մեկնել, երբ մի սուրհանդակ եկավ ու Գևորգին հանձնեց Ղասրմ բեկի նամակը։

Բեկը Գևորգին հրավիրում էր հյուրընկալվել իր տանը։ Գևորգը բանբերին ասաց. «Բարևիր իմ եղբորը և ասա, որ ես սիրով կգայի, բայց հենց հիմա շտապ տեղ եմ գնալու և չգիտեմ, թե երբ կազատվեմ»։ Այս բանբերը նոր էր հեռացել, երբ մոտ բերին մի ուրիշի։ Սա ևս նամակ հանձնեց Գևորգին։ Գրում էր Ղասրմ բեկի կինը, գեղեցկուհի Ջամիլան։ «Գևորգ, թուրքերը Ղասրմին կաշառել են, նա քեզ կանչում է սպանելու, չգաս»։ Գևորգը բաց թողեց բանբերին և, շուտ գալով դեպի հայդուկները, ասաց. «Ես այժմ հյուր եմ գնալու Ղասրմ բեկին։ Ինձ հետ պետք է գան 10 հոգի»։ Խումբը իսկույն մեկնեց։ Երբ մոտեցան Ղասրմի բնակատեղիին, նկատեցին, որ նրա բակում մոտ 300 զինված

քուրդ էր շարք կանգնած։ Գևորգի հեծյալ ջոկատը ուղիղ մտավ բակ և անցնելով զինյալների շարքի միջով՝ մոտեցավ Ղասրմի վրանին։ Շուտով դուրս եկավ Ղասրմ բեկը կնոջ հետ։ Բեկը աթոռ դրեց, որ Գևորգը ձիուց հեշտությամբ իջնի։ Բեկը ձգվեց՝ նրան համբուրելու, բայց Գևորգը թույլ չտվեց՝ ասելով. «Ես նամարդի հետ չեմ համբուրվի»։ Գևորգը առանց շտապելու, արձակեց զենքերը, դրանք տվեց հայդուկներից մեկին, բաց արեց կուրծքը և սկսեց շրջանցել զինյալների տողանը։ «Ղասրմ բեկը ինձ հրավիրել է սպանելու։ Ես եկել եմ։ Դե, սպանեք։ Ինչո՞ւ չեք շարժվում»։ Քրդերը մեխված կանգնած էին։ Գևորգը վերադարձավ իր նախկին տեղը, զենքերը կապեց, թռավ ձիու վրա ու հեռացավ։ Երկար ժամանակ Ղասրմ բեկն ու զինյալներն անշարժ էին։

Խարսի ճակատամարտից հետո Թուրքերն սկսել էին կասկածանքով նայել Ղասրմ բեկին, և երբ այս անգամ էլ նա չկատարեց իր խոստումը՝ Գևորգին մեռած թե կենդանի իշխանություններին հանձնել, և վերջապես, իմանալով Գևորգի ու Ղասրմի գաղտնի հանդիպումների մասին, Տարոնի կառավարիչը մի քանի վաշտ է ուղարկում Խվներ՝ Ղասրմին պատժելու։ Այդ լսելով՝ Ղասրմն իր ընտանիքով իսկույն հեռանում է՝ զինվորներին պատվիրելով թուրքերի վրա չկրակել։ Թուրքերը շրջապատում են Խվները։ Գևորգի հայդուկներից Մոսոն, որ Ղասրմ բեկի մոտ էր գտնվում, անտեսում է բեկի կարգադրությունը և դիպուկ հարվածներ է տեղում թշնամու զորքերի վրա։

Գևորգը Խվներից ուղիղ գնում է Մառնիկի սար։ Հայդուկները Սասնա լեռներում այլևս թաքուն չէին գործում։ Մառնիկ՝ հայդուկների ճամբարն էին գալիս Սասունի տարբեր գյուղերից, բողոքում, հրահանգներ ստանում, իրենց ծառայությունը առաջարկում։ Այստեղ էին գալիս նաև քրդեր, քուրդ ցեղապետներ՝ Գևորգին տեսնելու, նրա հետ խորհրդակցելու, պայմանավորվելու։ Մառնիկի լեռան փեշի բացատը դարձել էր հայդուկների շտաբը։ Գևորգը որոշում է Մառնիկից գնալ Ալվառինջ գյուղը, որտեղ բնակվում էր խիանքցի աշիրեթապետ Մահմեդ աղան։ Նա ուզում էր այս աղայի հետ բանակցել և նրան ևս իր կողմը գրավել։ Մակարի բոլոր ջանքերը, որպեսզի Գևորգը ետ կանգնի այդ քայլից, իրեն չվտանգի, արդյունք չտվեցին։

... 1905 թ. սեպտեմբերյան մի գիշեր Գևորգի խումբը մտավ Ալվառինջ և ուղիղ գնաց Մահմեդ աղայի տուն։ Տանտերը ուրախությամբ ընդունեց հյուրերին, միաժամանակ լուր ուղար-

կելով Մուշ, որ Գևորգը իր տանն է։ Նա Թեյի հետ Թույն խառնեց և հյուրասիրեց հայդուկներին։

Գևորգը որոշում է հեռանալ գյուղից, բայց դեռ գյուղի ծայրին չհասած, իրեն վատ է զգում և մտնում մարագներից մեկը՝ գիշերն այնտեղ անցկացնելու համար։ Հաջորդ օրը, հոկտեմբերի 1-ի առավոտյան, Թուրքական երկու վաշտ Ալվառինջը շրջապատեցին, իսկ 3-րդ վաշտը մտավ գյուղ ու սկսեց «սանրել» տները։ Գևորգի ջոկատը մարագից դուրս եկավ ու մարտի բռնվեց, բայց ճեղքել պաշարումը չկարողացավ։ Միայն Գևորգին հաջողվեց դուրս պրծնել։ Նա շրջանցեց գյուղը, ճանապարհին հագավ մի սպանված Թուրք սպայի հագուստներն ու գնաց գյուղի կողմը։ Կանգնելով փողոցներից մեկի մուտքին՝ նա սկսեց կրակել Թուրք զինվորների վրա։ Բայց, երբ նկատեց, որ Թուրքերը զարմացած իրեն են նայում, առաջ գնաց և դիմելով Թուրքերին, բղավեց.

— Զարկեք այդ գյավուրներին։

Թուրքերը գնացին նրա հետևից։ Նա Թուրքական զինվորներին տարավ դեպի գյուղի կենտրոնական մասը։ Թուրքերը ներխուժեցին տները, իսկ Գևորգը՝ ծանոթ քրդի տունը։ Նա իր հագուստները տվեց քրդին, որը դրանք հագնելով՝ զենքը ձեռքին թռավ դուրս։ Իսկ Գևորգը մնաց նրա տանը։

Դոմից դուրս եկած հայդուկները կատաղի դիմադրություն են ցույց տալիս, բայց բոլորն էլ զոհվեցին։ Սպանվածներից մեկի մոտ Թուրքերը գտան Գևորգի պայուսակն ու կնիքը։ Նրանք կարծեցին, թե դա Գևորգ Չաուշն է, և հաղթական շուքով շարժվեցին դեպի Մուշ։

— Սպանված է գլխավոր ֆիդային։ Ֆիդայիներին վերջ է տրված,— Մուշից հեռագրեր թռան Ստամբուլ։ Սուլթանը այդ հաղթանակի առթիվ շքանշաններ ուղարկեց 4-րդ բանակի հրամանատարությանը։ Կռվին մասնակցած սպաների զինվորական կոչումները մեկ աստիճանով բարձրացվեցին, իսկ Սալեհ փաշան ստացավ նաև Պատվո նշան։ Թուրք մեծամեծները տոնում էին Գևորգ Չաուշի սպանությունը։ Մինչդեռ, մութն ընկնելուն պես, Գևորգը դուրս եկավ քրդի տնից ու գնաց Մառնիկի անտառ։ Ալվառինջում հայդուկների զոհվելը խռովել էր հոգին. Նա իրեն մեղավոր էր համարում։ Եթե ինքը մի քիչ հաշվենկատ լիներ, այդ դժբախտությունը չէր պատահի։ Երկու շաբաթ նա անտառից դուրս չեկավ։ Խուսափում էր ընկերներից։ Իսկ Թուր-

քերը շարունակում էին տոնել իրենց հաղթանակը։ Այդ լուրերը հասնում էին Գևորգին, և նա վերջապես որոշեց վրեժ լուծել։ Հավաքեց հայդուկներին, բաժանեց երկու խմբի, որոնցից մեկը Արամի ղեկավարությամբ պետք է շարժվեր դեպի Ալվառինջ, իսկ մյուսը իր ղեկավարությամբ գնալու էր Խասգյուղ։

— Խնդիրն այսպիսին է. մենք պետք է մտնենք գյուղերը, մոտենանք այն տներին, որտեղ Թուրքական վաշտեր են տեղավորված, աղմուկ բարձրացնենք, և երբ զինվորներն ու սպաները տներից դուրս թափվեն, դիպուկ կրակով նրանց ոչնչացնենք և անմիջապես հեռանանք։

Ծրագիրը հաջողությամբ իրականացվեց։ Խասգյուղում հայդուկները կրակի տակ առան փողոցից դուրս եկած Թուրքական զորքերին, երեսունից ավելի մարդ սպանեցին ու վիրավորեցին, իսկ երբ Թուրքական մնացած ուժերը դիրքեր գրավեցին և սկսեցին կրակել, պատասխան չստացան։ Կարծես այդ կողմերում ոչ ոք չէր եղել։ Հաջորդ օրը, առավոտյան, զոհվածների դիակները սայլերին բարձած, տարան Մուշի Թուրքական գերեզմանատունը թաղելու։

Սալեհ փաշան ու նրա գործընկերները դժվար կացության մեջ ընկան։ Եթե Կ. Պոլսում իմանային, որ Գևորգը կենդանի է, նրանց վիճակը շատ վատ էր լինելու։ Դրա համար էլ արգելվեց Գևորգի անունը տալ։ Ով այդ անունը տալիս էր, բանտ էին գցում։ Սալեհ փաշան արգելեց Թուրքերին ու քրդերին հայդուկների հետ ընդհարվել։

Մի կողմից, դեմոկրատական-հեղափոխական տրամադրությունների աճի, իսկ մյուս կողմից, հայդուկների ջանքերի շնորհիվ, 1905 թ. հայ ազգաբնակչության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները որոշ չափով մեղմացան։

1905 թվականի հեղափոխական ալիքը թափանցեց նաև Տարոն ու խմորումներ առաջացրեց Թուրքական սպայության շրջանում։ Օսմանյան կայսրության ճգնաժամը խորացել, իր գագաթնակետին էր հասել։ Տարոնում որոշ սպաներ ուղղակի կապեր հաստատեցին հայդուկների հետ, իսկ նրանցից ոմանք կատարում էին հայդուկների հանձնարարությունները։ Այդ պայմաններում հայդուկների հեղինակությունն ու ազդեցությունն աճում էր։ Աճում էր նաև հայդուկների հետ համագործակցող քուրդ բեկերի ու սպաների թիվը։ Ստվարանում էին հայդուկների

շարքերը։ Գևորգի տրամադրությունը բարձր էր։ Նրան մեծապես ուրախացնում էին այս տեղաշարժերը։

1906 թվականն սկսվեց հայդուկների ակտիվ գործողություններով։ Տակտիկական պլանը նույնն էր՝ արագ տեղափոխություններ, շեշտակի հարվածներ։ Փոքր խմբերի բաժանվելով՝ հայդուկները տարածվեցին Սասունի ու Տարոնի ամբողջ տարածքով։ Որտեղ հանդիպում էին թուրքական ուժերի, շեշտակի հարված էին հասցնում ու հեռանում։

Գևորգն իր խմբով անցավ Դաշտի արևելյան մասը՝ Ախլաթ։ Այդ լուրը Մուշ հասավ, զորքը շարժվեց Ախլաթ, իսկ Գևորգն արդեն Գառնեն գյուղում էր, Մուշ քաղաքի կողքին, թուրքական զորանոցների հենց պատի տակ։

Մի օր, երբ մոտակա դաշտում թուրքական զորքերը, Բինբաշու ղեկավարությամբ, զորավարժություններ էին անցկացնում, Գևորգը իր թաքստոցից դուրս եկավ, ձի նստեց, գնաց դեպի զորավարժությունների վայրը։ Քշեց անցավ դաշտի միջով, մոտեցավ Բինբաշուն, զինվորական բարև տվեց ու առաջ ընթացավ։ Գևորգը մտավ Մուշ, գնաց թուրքական թաղերը և սկսեց փնտրել արյունարբու լրտես Ճիմել աղայի տունը։ Մի դուռ ծեծեց։ Դուրս եկավ տանտիրուհին։ Հարցրեց՝ Ճիմել աղայի տո՞ւնն է։ Պատասխանը դրական էր։ «Որտե՞ղ է»։ «Հենց նոր գնաց»։ «Երբ կգա, ասեք, Գևորգ Չաուշը եկել էր իրեն բարև տալու»։ Նա եկած ճանապարհով վերադարձավ, կրկին անցավ զորքի միջով, կրկին բարևեց հրամանատարին ու վերադարձավ իր թաքստոցը։

«Գևորգ Չաուշը Մուշում է»,— այդ լուրը շուտով բերնից բերան անցավ։ Իսկ Գևորգն արդեն լեռներում էր և Մանուկի հետ անտառում նստած լսում էր Ալադի Միսակի երգը։

Մանուկը Շենիկ գյուղից էր։ 1894 թ. կռիվներին մասնակցել էր Գրգոյի ջոկատի կազմում։ Դրանից հետո բանտ էր ընկել, ապա վերադարձել հայրենի օջախ, բայց այդ վերադարձը շատ կարճ էր տևել։ Նա նորից հրացան էր վերցրել ու մտել Գևորգի խումբը։ Մանուկը մասնակցել էր հայդուկների գրեթե բոլոր կարևոր մարտական գործողություններին՝ սկսած Գեղաշենի դավաճան Ավեի և Խալիլ փաշայի սպանությունից մինչև 1904 թ. կռիվները, երբ նա, շենիկցիների գլուխն անցած, ցուցաբերեց ռազմական հիանալի ընդունակություններ, քաջություն ու սառնասրտություն։ Նա աչքի ընկնող դեր խաղաց նաև Բերդակի, Գոմերի, Կուրավուի, Խարսի կռիվներում։

Սուլուխի ճակատամարտից հետո, երբ Մակարը գնաց զբաղվելու Գևորգի կնոջ ու որդու՝ Եղսոյի և Վարդգեսի փրկության գործով, նրան միացան

Մանուկը, շենիկցի Ղազարը, Ախոն, Հագոն։ Նրանք, մեծ դժվարություններ հաղթահարելով, առաջ էին գնում։ Մերացել էր Մակարը, արդեն դժվարությամբ էր քայլում։ Փեթար գյուղում նրանք հանդիպում են Կրբոյին ու Տիգրանին, որոնց հետ էին Եղսոն ու Վարդգեսը։ Նույն օրը երեկոյան Փեթարը պաշարվում է։ Մակարը Ղազարի խմբին հանձնարարում է բարձրանալ լեռը և դիրք գրավել նրա գագաթին։ Դեպի գագաթն է շարժվում նաև Մակարի խումբը։ Մանուկը մի քանի հայդուկներով գնում էր նրանց հետևից։ Մերուկը որոշել էր ճեղքել թշնամու պաշարման օղակը և բարձրանալ լեռները։ Նա մեկնելուց առաջ Տիգրանին հանձնարարություն տվեց Վարդգեսին հանձնել գյուղացիներից մեկի խնամքին, իսկ Եղսոյին ապանել, որպեսզի «մեր նամուսը թուրքերի ձեռքը չընկնի»։

Թուրքերը հասկացել էին Մակարի մտադրությունը և իրենք ևս շտապում էին դեպի սարի գագաթը։ Խումբը բոլոր կողմերից շրջապատվում է։ Մանուկը կռվի մեջ է մտնում, որպեսզի հնարավորություն տա Ղազարին և Մակարին հասնելու լեռան կատարը։ Անհավասար ու անհույս կռիվ էր։ Վեց հայդուկներ կռվում էին հարյուրավոր զինվորների դեմ։

Հայդուկներին հաջողվեց հասնել լեռան գագաթ։ Բայց դա էլ փրկություն չէր. ս. Հովհաննու վանքից դեպի հայդուկներն էր շարժվում թուրքական մի ուրիշ զորամաս։ Փրկվելու համար անհրաժեշտ էր շտապ հեռանալ։ Հայդուկները շարժվում են քրդական ամառանոցները։ Նրանց հաջողվում է շեշտակի հարվածով կոտրել քրդերի դիմադրությունը և առաջ գնալ։ Թուրքական բանակը կրնկակոխ հետապնդում էր։ Հայդուկներն ուղղվում են Շենիկ գյուղի վերևում գտնվող բարձունքը։ Մակարի ուժերը դավաճանում են։ Հայդուկները, ծանրամարմին ծերունուն շալակներն առած, շարունակում են բարձրանալ լեռն ի վեր։ Մակարը պահանջում է իրեն թողնել խոչկանցի քրդերի մոտ ու հեռանալ։ Հայդուկները հարկադրված համաձայնում են, բացառությամբ Մանուկից, որը չի լքում վիրավոր Մակարին։ Նա ծերունուն հասցնում է քրդերի օբան։ Քրդերից մեկը հարձակվում է Մանուկի վրա։ Մանուկը զենքի է դիմում։ Երեք քուրդ սպանվում և երկուսը վիրավորվում են։ Վիրավորվում է նաև Մանուկը։ Նա այլևս անկարող էր Մակարին օգնել։ Քրդերը Մակարին սպանում են, իսկ Մանուկը փախչում է իրենց գյուղի կողմը։ Նրա դեմ է ելնում թուրքական մի ջոկատ։ Մանուկը կրակ է բացում, բայց ապարդյուն, թուրքերը մոտենում են։ Նա կատաղած ջարդում է հրացանը, շպրտում անդունդը, ապա բարձրանում ժայռի գագաթը, հասակով կանգնում ու սպասում է թշնամու գնդակին։

Նրա մահը գեղեցիկ էր իր ապրած կյանքի նման։

ՌՈՒԲԵՆ

Արդեն ասվեց, որ 1905—1906 թվերը եղան հայդուկային շարժման վերելքի տարիներ, ինչը պայմանավորված էր հետևյալ գործոններով։

Օսմանյան կայսրությունը ոչ միայն տարեցտարի, այլև ամ-

սե ամիս ու օրեցօր խարխլվում էր։ Ազատագրական պայքարի էին դուրս եկել կայսրության կազմի մեջ մտնող, յաթաղանի կողմից բռնադատվող ու հարստահարվող ժողովուրդները։ Ազատագրական-հեղափոխական շարժումը հատկապես բուռն թափ ստացավ 1905 թ. ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ազդեցության տակ։ Ահա այս պայմաններում օսմանյան կառավարությունն ու ինքը՝ արյունարբու սուլթան Համիդը, ճակատային հարձակումների ու ճնշումների փոխարեն, խուսանավում էին, երբեմն նույնիսկ չնկատելու տալիս Սասունում և Տարոնում ծավալված ինքնապաշտպանական շարժումները։ Մյուս կողմից՝ այդ շարժումները թուրքական մտավորականության դեմոկրատական խավերի և մասնավորապես հեղափոխական-առաջադիմական հայացքներ ունեցող սպայության կողմից դիտվում էր որպես օսմանյան բռնապետության դեմ ընդհանուր դեմոկրատական շարժման բաղկացուցիչ մաս։

Այսինքն՝ հայդուկային շարժման ծավալման համար այդ տարիներին օսմանյան կայսրությունում ստեղծվել էր համեմատաբար բարենպաստ քաղաքական պայմաններ։

Հայդուկային շարժման աշխուժացման գործում վիթխարի էր Գևորգի ներդրումը։ Նա կարողացավ իր շուրջը համախմբել ոչ միայն Սասունի, այլև Տարոնի ու Խնուսի, Ախլաթի ու Բիթլիսի գյուղերի ու բնակավայրերի մարտական ուժերը։ Բասենից մինչև Դատվան, Բիթլիսից մինչև Տիգրանակերտ ընկած հայաբնակ գյուղերի զգալի մասում ստեղծվեց ինքնապաշտպանության ջոկատների մի համակարգ։ Գյուղերում աշխատանքներ էին տարվում զենքի ձեռքբերման, վինման ու ռազմական ուսուցման ուղղությամբ, սահմանված էր զինված ջոկատների միջև կապի, փոխօգնության ու համագործակցության կարգ։

Գևորգը ստեղծեց գործակալների ու կապավորների լայն ցանց։ Հարաբերությունների մեջ մտավ Մուշի զինվորական և ոստիկանական ղեկավար պաշտոնյաներից մի քանիսի, այդ թվում՝ գաղտնի ոստիկանության պետ, ծագումով հայ Մեհմեդ էֆենդու և ուրիշների հետ, որոնցից տեղեկություններ էր ստանում թուրքական զորքերի ու ոստիկանության գործողությունների, հայդուկների ու հայերի նկատմամբ ձեռնարկվելիք քայլերի մասին։ Նրա կատարած աշխատանքի շնորհիվ՝ քրդերով բնակեցված 20—25 գյուղ հայդուկային կողմնորոշում ունեին,

իսկ մի շարք քրդաբնակ գյուղեր հայդուկների կողմն էին, բայց վախենում էին նրանց հետ համագործակցել։

Մի կողմից՝ քրդերը Գևորգի ու հայդուկների մասին երգեր ու լեգենդներ էին ստեղծում, փառաբանում նրանց, իսկ մյուս կողմից քուրդը իր երեխային սաստում էր, ասելով՝ «Զայնդ կտրիր, թե չէ Գևորգը կգա»։

Բայց 1905—1906 թթ. ոչ միայն հայդուկային շարժման ամենածավալուն, այլև ներքին հակասությունների ու պառակտումների շրջանն էր, որ վերջին հաշվով հանգեցրեց այդ շարժման անկմանը։ Ո՞րն էր պատճառը։ Արդեն տասը տարի Գևորգի և դաշնակցության բյուրոյի միջև պայքար էր գնում հայդուկային շարժման լինել-չլինելու շուրջը։ Այդ պայքարի ընթացքում Գևորգը երկու անգամ արտաքսվեց Սասունից, մեկ անգամ Սասունից դուրս հանվեց հայդուկային շարժման կորիզը։ Այդ շարժման ու նրա ղեկավարների նկատմամբ կիրառվում էին վարկաբեկելու և ահաբեկելու զանազան միջոցներ։ Հայդուկային շարժման վերացումը, ինքնապաշտպանական ջոկատների վերածելը դաշնակցական կոմիտեներին կից գործող մարտական խմբերի, պայքարի մեթոդների առումով, Տարոնում Վանի մի տարբերակի ստեղծումը դաշնակցության ղեկավարների համար աստիճանաբար ձեռք բերեց պատվախնդիր նշանակություն, և նրանք միջոցների ու հնարավորությունների առաջ կանգ չէին առնում՝ այն իրականացնելու համար։ Մեկը մյուսի ետևից Սասուն էին ուղարկվում դաշնակցական կուսակցության աչքի ընկնող գործիչներ (Վահան, Վարդգես, Գուրգեն, Քեռի), օգտագործում էին տեղի դաշնակցական գործիչներին (Հրայր, Վարդան վարդապետ, Տատրակ), բայց ապարդյուն։ Հայդուկային շարժումը ոչ միայն ապրեց, այլև աննախադեպ ծավալ ու թափ ընդունեց։ Արդյունքում՝ շարժումը խզեց հարաբերությունները դաշնակցական կոմիտեի հետ։ Նրանից հեռացան դաշնակների կողմից ուղարկված գործիչները։ Վերջինը Կորյունն էր, որ հեռացավ 1905 թ., Գևորգին թողնելով հետևյալ երկտողը. «Սիրելի Սարհատ, ես գնացի»։ Կարդալով այդ երկտողը՝ Գևորգը դառնացած ասաց. «Կորյունին վաղուց դուր չէր գալիս իմ գործելակերպը։ Նա պահանջում էր հեռու մնալ ինքնապաշտպանական կռիվներից և սպասել։ Սպասել, երբ նույնիսկ աչքիդ առաջ խոշտանգում, թալանում ու սպանում են հայ գյուղացուն։ Կորյունը մնացած-

ների նման հեռացա՞վ, թե՞ փախավ արյան մեջ շաղախված մեր այս երկրից»։

Բայց սխալ կլիներ նույն հարթության վրա դնել դաշնակցական բյուրոյի քաղաքականությունը և Սասունում ու Տարոնում աշխատող դաշնակցական գործիչների վարքագիծը։ Բանն այն է, որ Թիֆլիսում նստած դաշնակցական լիդերները տարբերական պատկերացում չունեին Սասունի ու նրա սոցիալ-տնտեսական, դասակարգային-հոգեբանական առանձնահատկությունների մասին։ Նրանք Արևմտյան Հայաստանի բոլոր գավառները, այդ թվում և Սասունը, աշխատում էին տեղավորել իրենց կուսակցական նպատակադրումների ու ծրագրերի մեջ։ Դրա համար էլ, տակտիկական վարքագիծ մշակելիս, ելնում էին ոչ թե իրական վիճակից, այլ Եվրոպայում մշակված կամ իրականացված ինչ-որ քաղաքական կոնցեպցիայից և կամ պայքարի միջոցից։

Իհարկե, այս գործում փոքր դեր չէր խաղում նաև այն իրողությունը, որ Հայաստանի երկու մասերը, հարյուրամյակներ շարունակ, գտնվել էին տարբեր պետությունների տիրապետության տակ։ Եթե Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի մեջ ու հայկական շրջաններում տիրապետողը օսմանյան Թուրքիային բնորոշ առանձնահատկություններն էին, ապա Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքը, հայ ազգաբնակչության ողջ հոգեբանական համակարգը ներծծված էր Ռուսաստանի քաղաքական, գաղափարախոսական մթնոլորտով ու հասարակական տարբեր հոսանքների ազդեցությամբ։ Տարոնում ու Սասունում ծնված ու հասակ առած դաշնակցական գործիչները, որպես անձ, ձևավորվել էին օսմանյան Թուրքիայի սոցիալ-քաղաքական հնոցում, բայց որպես գործիչներ որդեգրել էին ռուսական իրականության ազդեցության տակ ձևավորված քաղաքական հայացքներ։ Նրանք, իհարկե, լավ էին հասկանում Սասունի ու Տարոնի կյանքի ու հոգեբանության առանձնահատկությունները և ոչ մի կերպ չէին կարողանում դրանք տեղավորել դաշնակցական քաղաքականության կաղապարում։ Այստեղից էլ՝ այս գործիչների հայացքների ու քաղաքականության երկատվածությունը, անհետևողականությունը, տեղատվությունները։

Դաշնակցական կուսակցությունը ինչո՞ւ էր դեմ հայդուկային շարժմանը։

Ինչպես վերևում ասվեց, Հայաստանի ազատագրության համար դաշնակցության ծրագիրը հետևյալն էր. տևական նախապատրաստական աշխատանքի միջոցով Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությանը բազմակողմանիորեն նախապատրաստել ընդհանուր ապստամբության և այնպիսի ապստամբական կռիվների, որ հարկադրեր մեծ պետություններին լրջորեն զբաղվել և լուծել Հայաստանի անկախության հարցը։ Դրա համար, Արևմտյան Հայաստանի զանազան կենտրոններում (Վան, Էրզրում, Կիլիկիա), դաշնակցությունը ստեղծում էր ապստամբության ռազմա-քաղաքական հենակետեր, բնակավայրերում կազմակերպում և վարժեցնում զինված մարտական ջոկատներ, որոնք գործում էին դաշնակցական կոմիտեների ղեկավարության ներքո։ Այսինքն, դաշնակցությունն ամեն ինչ ենթարկում էր ապագա ընդհանուր ապստամբության շահերին։ Իսկ հայդուկային շարժումը դաշնակների այդ ծրագրի մեջ չէր տեղավորվում։ Որովհետև հայդուկային շարժումը ո՛չ ամբողջական և ո՛չ էլ տեղական առումով ազգային-ազատագրության խնդիրներ լուծել չէր կարող։ Մինչդեռ նա զոհասեղանին էր դրել Սասունի և Տարոնի զենք կրելու ընդունակ ուժերին։ Այդ ուժերը պարտիզանական կռիվներում աստիճանաբար հալվում, ոչնչանում էին, և երբ սկսվեր ընդհանուր ապստամբությունը, ապա նա Բիթլիսի նահանգում հաջողության հասնել չէր կարող՝ բավարար քանակի մարտական ջոկատներ չունենալու պատճառով։ Ուրեմն, պետք էր ցրել հայդուկային խմբերը, ինքնապաշտպանության ջոկատները վերակառուցել գյուղական զինված խմբերի և սպասել ապստամբության սկսվելուն։

Հայդուկային շարժմանը դեմ էր նաև երիտթուրքերի կուսակցությունը, որը մեթոդիկ ճնշում էր գործադրում դաշնակցության վրա՝ այդ շարժումը քայքայելու և վերացնելու համար։ Թուրքական բուրժուազիայի շովինիստական կուսակցությունը չէր կարող կողմ լինել և չպայքարել օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ, ինչ ձևով ու բնույթով էլ նա արտահայտվեր։ Բացի այդ, երիտթուրքերի Մուշի կոմիտեի կարծիքով, հայդուկների գոյությունը խանգարում էր այդ կոմիտեի գործունեությանը, որովհետև հայդուկային շարժման պատճառով կառավարությունը Բիթլիսի նահանգում պահում էր մեծ քանակությամբ զինվորական ու ոստիկանական ուժեր, լրտեսական բազմամարդ ցանց, որոնք, բոլորը միասին, հեղափոխական շարժման համար ստեղծում էին ոչ միայն ռազմաքաղաքական լրացուցիչ լուրջ դժվա-

բություններ, այլև ահաբեկված վիճակում էին պահում լայն հասարակայնությանը։

1906 թ. կեսերին Սասուն հասավ դաշնակցական կուսակցության աչքի ընկնող գործիչներից մեկը՝ Ռուբեն Տեր-Մինասյանցը։ Վ. Իսկանդարյանը, որ 1906 թ. դաշնակցական բյուրոյի հանձնարարությամբ գնացել էր Երկիր, գրում է. «Հետագայում, մեր խոսակցությունների ընթացքում, ես և Ռուբենը պարզեցինք. ես՝ Հ. Հ. Դաշնակցական Արևելյան բյուրոյի, իսկ նա՝ տեղական ընկերների տեսակետները։ Ռոստոմը, Սիմոնը և Համոն (բժ. Օհանջանյան) շարունակ պնդել էին և ինձ պատվիրել, որ աշխատենք Գևորգին համոզել, որ նա միառժամանակ թողնի Երկիրն ու անցնի Կովկաս...

... Պետք էր համոզել Գևորգին՝ միառժամանակ անցնելու Կովկաս։ Պետք էր, որ նա Կովկասում միառժամանակ շրջանների մեջ մտներ։ Ամենքն էլ համոզված էին, որ այդ հանգամանքը շատ բարերար ազդեցություն պիտի թողներ նրա բնավորության, գազազած հոգու և աշխարհայացքի վրա։ Մյուս կողմից՝ նրա և փախստական տղոց մեծ մասի հեռանալով, Դաշտի մեջ զինված ընդհարումների շարժառիթները կպակասեին։ Ռուբենը ճիշտ և ճիշտ նույն առաքելությամբ եկել էր Վանից։ Այդ հողի վրա շարունակ պայքարել էր խոսքով և օրինավոր որոշումներով, սակայն միշտ հանդիպել էր Գևորգի համառ ընդդիմությանը...

Գևորգը մի համոզում ուներ. Մշո դաշտը, եթե առանց հայդուկի մնար, հայկական թե թուրքական դավաճանական ու դավադրական տրամադրությունները ազատ թևածելու հնարավորություն կստանային։ Նման պարագայում ժողովուրդը իր գլուխը պիտի կորցներ և կուլ գնար սև ուժին։ Նա կարծես չէր ուզում տեսնել, որ իրենից հետո Երկրում մնում էր Ռուբենը։ Վերջապես, Դաշտի մեջ կարող էին մնալ ժողովրդի սիրած հայդուկներից մի քանի հոգի ևս՝ կազմակերպության հմայքը տեղը պահելու համար։ Մնում էր հայ-քրդական բարեկամության խնդիրը, որ Գևորգի ներկայության կարևորությունը շեշտող ազդակներից մեկն էր նկատված...

Պետք էր մի խոշոր խաչ դնել այդ «հայ-քրդական» ցնորքի վրա»։ Գևորգը Սասունում չպետք է լինի՝ այսպիսին էր առաջադրված խնդիրը։

Ահա թե ինչու, Ռուբենը Սասուն գալով, շարունակեց իրա-

կանացնել հայդուկներին այդ երկրամասից հեռացնելու քաղաքականությունը։ Այդ ժամանակ Տարոնում և Սասունում գործող հայդուկների թիվը անցնում էր 250 մարդուց։ Ռուբենը առաջարկեց նրանց մի մասին ուղարկել Վան, մյուս մասին՝ Անդրկովկաս, իսկ Սասունում պահել ամենաշատը 20 հայդուկ։ Գևորգը վճռականապես դեմ էր այդ առաջարկին։ Բայց Ռուբենին հաջողվեց 60 հայդուկների համոզել և Սասունից հեռացնել դեպի Վան ու Պարսկաստան։ Այս անմիտ ու վնասակար արարքն արդարացնելու համար Ռուբենի հուշագրություններում հայդուկներին վերագրվում են արարքներ, որոնք վարկաբեկիչ են ոչ միայն այդ շարժման համար, այլև ստվեր են գցում հայ գյուղացու նվիրվածության ու անձնազոհության վրա։ Ռուբենը գրում է. «Գևորգը ստիպված էր այդ դժոխք երկրի մեջ ոչ միայն դիմագրավել թշնամու հալածանքներին, այլ շարունակ տանջվել ֆիդայիներու գազանութենեն», որ հայդուկների թվի փոքրացման շնորհիվ ներքին տարաձայնությունները վերացան և տասն օր անց «Գևորգը կամաց-կամաց բոլոր գործերը կը գցե իմ վզիս»։

Սա, մեղմ ասած, ճիշտ չէ և նպատակ ունի հագուրդ տալ սեփական փառամոլությանը։ Իսկ իրականությունն այն էր, որ Գևորգը վճռականապես հրաժարվեց կուսակցական գործերով զբաղվելուց և պահանջում էր հայդուկային խմբերի ու ինքնապաշտպանության ջոկատների ինքնուրույնություն։ Ռուբենն ինքն է խոստովանում, որ Գևորգը կուսակցական աշխատանքներով զբաղվելու ոչ մի ցանկություն չուներ։ Սասուն գալուց հետո Ռուբենը, հակառակ Գևորգի կարծիքին, ձեռնարկեց ու իրականացրեց մի միջոցառում, որն իր բնույթով արկածախնդրություն էր, իրականացման մեթոդներով՝ ստոր ու դավաճանական, իսկ հետևանքներով՝ վնասակար ու վտանգավոր։ Նա որոշեց Սասունի, Տարոնի, Ախլաթի և մի քանի այլ շրջանների գյուղացիներին համոզել, որ նրանք միասին դիմեն թուրքական իշխանություններին, թե ստեղծված ծանր պայմաններում այլևս դիմանալ չեն կարող և հեռանում են Ռուսաստան, Ամերիկա և այլ երկրներ։ Ըստ մտահղացման՝ գյուղացիների այդ քայլը վախեցնելու էր սուլթանին, և նա կաշխատեր ինչ-որ չափով թեթևացնել հայերի վիճակը։ Մինչդեռ սուլթանը ինքն էր ամեն կերպ աշխատում Սասունը հայերից դատարկել, և ահա փաստորեն օգնության էին գալիս նրան։ Սասունի գյուղացիությունը

չխաբվեց ու շարձագանքեց այս պրովոկացիային, իսկ մյուս շրջաններում, մասնավորապես Ախլաթում, Բուլանըխում, մեծ թվով գյուղացիներ արձագանքեցին ու խաբվելով ընկան ծանր վիճակի մեջ։ Նախ ո՞ւր գնալ և ի՞նչ միջոցներով գնալ։ Դաշնակների խոստումը, թե Ռուսաստանն ու Ամերիկան պատրաստակամություն են հայտնել հայերին տեղափոխելու, նույնքան էր ճշմարիտ, որքան այս հրեշավոր միջոցառումը իրականացնելու համար գյուղացիներին ոտի հանելուն ուղղված բոլոր խոստումները։

ՄԱԿԱՐԸ ՋԻՆԱԹԱՓ

Ռուբեն Տեր-Մինասյանցը Արամ Մանուկյանի երաշխավորագրով երևաց Սասունի հայդուկների հավաքատեղում։ Այստեղ նրան ընդունեցին սրտաբաց։ Սակայն շուտով պարզ դարձավ, որ Ռուբենի և Գևորգի «ջուրը մի առվով չի հոսում»։ Ռուբենը ձգտում էր միահեծան իշխանության, նա գեղեցիկ հռետոր էր, գիտեր մարդկանց իր կողմը գրավել խոսքով, իսկ Գևորգը հայդուկների համակրանքն էր շահել իր ապրած կյանքով։ Գևորգի հեղինակությունն ու փառքը խանգարում էին Ռուբենին իր կուսակցական նպատակադրումները իրագործելու։ Այդ իսկ պատճառով նա փորձեց խաղալ այդ հեղինակության հետ, օգտագործելով Մակարի բնավորության թույլ կողմերը։ Իսկ ինչո՞ւ Մակարին ընտրեց։ Որովհետև Գևորգից հետո հայդուկների շրջանում ամենամեծ հեղինակությունը Մակարն էր։ Մակարն ուներ իր ուժեղ ջոկատը, առանձնապես իրեն նվիրված մարդիկ։ Մի անգամ իմանալով, որ Գևորգը երեք օրից լինելու է Փեթարի ձորի Ճամբարում, Ռուբենը զանազան պատրվակներով այստեղ է հավաքում գրեթե բոլոր երդվյալ հայդուկներին։

Գևորգը մտավ Ճամբար։ Նա ընդհանուր բարև տալուց հետո նստեց գետնին։ Այդ ժամանակ լսվեց Ռուբենի ձայնը.

— Մակար, դու ասում էիր, թե մեր մեջ ավազակ կա։ Պետք է այժմ ասես, թե ով է այդ ավազակը։

Գևորգը հանկարծակիի եկավ։ Նրա հայացքը մթնեց։

— Պարոն Ռուբեն, ես քեզ ասել եմ, որ Գևորգը սխալներ է թույլ տալիս, բայց ավազակ չեմ ասել,— կիսաձայն թոթովեց հուզմունքից խեղդվող ծերունին։

Գևորգը վեր թռավ, դաշույնը դուրս քաշեց և բղավեց։

— Մակար, պետք է ասես, թե որոնք են իմ սխալներն ու ավազակությունները։ Այսօր կամ իմ գլուխն է թռնելու, կամ քոնը։

Գևորգի այս խոսքի վրա Մակարի թիկունքից սպառնալից տեսքով բարձրացան մի քանի հին հայդուկներ։

Նրանց դեմ ոտի կանգնեցին մյուս հայդուկները։

— Մակա՛ր, զենքերդ հանիր,— հրամայեց Գևորգը։

Մակարը նայեց դեմ-դիմաց, մարտական տրամադրությամբ ու թշնամական հայացքով իրար չհանդուրժող հայդուկներին, և այդ հսկա մարդը կարծես փուլ եկավ, ուսերը թուլացած կախվեցին, մեջքը կորացավ, կնճիռները խորացան։ Նա դողդողացող ձեռքերով քանդեց մեջքին կապված զենքերը ու դրանք շպրտելով Գևորգի ոտքերի տակ, գլխիկոր անհետացավ ծառերի ետևում։ Մակարի օրինակին հետևեցին նրա հինգ կողմնակիցները։

Այն, ինչ կատարվեց, Գևորգի համար անսպասելի ու ամենասարսափելին էր։ Նա ևս քաշվեց անտառի խորքը և ուզեց հասկանալ, ինքն իրեն բացատրել կատարվածը։ Նրանք, Մակարն ու Գևորգը, հայդուկների ավագ սերնդի ներկայացուցիչներ էին։ Մոտ 20 տարի միասին էին եղել, միասին տարել հայդուկային կյանքի դժվարություններն ու տառապանքները, վրտանգներն ու զրկանքները։ Մակարը հայրական սիրով էր կապված Գևորգին։ Գևորգը նրա թուլությունն էր, նրա պարծանքը։ Նա տասնյակ անգամներ իրեն մահվան երախն էր նետել՝ Գևորգին փրկելու համար։ Նույնիսկ այն գիտակցությունը, թե թշնամու գնդակը կարող է տապալել Գևորգին, նրան շանթահար էր անում, զրկում խոհեմությունից։ Կյանքի բոլոր, նույնիսկ ամենադժբախտ երևույթներին փիլիսոփայորեն նայող այդ հսկան դառնում էր անօգնական մի երեխա, երբ Գևորգի մասին վատ լուր էր ստանում։ Ճիշտ է, անցած երկու տասնամյակների ընթացքում նրանք նաև վիճել էին մի քանի, այդ թվում նաև սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի շուրջ, տարբեր և նույնիսկ իրարամերժ կարծիքներ էին ունեցել, բայց դրանք երբեք բախում չէին ծնել և չէին սառեցրել նրանց հարաբերությունները։ Մակարը դեմ էր Գևորգի ամուսնությանը։ Այդ մասին նա Գևորգին ասել էր թե՛ առանձին և թե՛ հրապարակավ։ Բայց դրանից հետո էլ նրանք շարունակեցին մնալ սրտամոտ բարեկամներ, մանավանդ, որ ամուսնությունից

արդեն ավելի քան մեկ տարի էր անցել, ծնվել էր Գևորգի արու զավակը։ Վարդգեսի ծնվելուց հետո Մակարն այլևս այդ ամուսնության մասին չէր ակնարկում։ Հայդուկների կարծիքով, նա իր հոգու խորքում նույնիսկ ուրախանում էր Գևորգի համար։ Եվ իսկապես, Գևորգի սպանվելուց հետո Մակարը ամեն ինչ արեց, չխնայեց նույնիսկ իր կյանքը՝ Եղսոյին ու Վարդգեսին օգնելու, թույլ չտալու, որ նրանք թուրքական կառավարության ճանկն ընկնեն։ Այդ նա էր, որ մեռնելուց առաջ խնդրեց իրեն թաղել Գևորգի կողքին։ «Ոչ, պատճառն այդ ամուսնությունը չէ»,— եզրահանգեց Գևորգը,— Մակարը միշտ էլ ամենախիստ բառերով էր հայհոյում Գևորգին, երբ վերջինս իրեն չպատճառաբանված վտանգների էր ենթարկում։ Նա հաճախ էր կրկնում. «Գևորգը փորձանք է փնտրում։ Թե ի՞նչ է ուզում, չգիտեմ»։ Բայց դա միայն վկայում է Գևորգի նկատմամբ Մակարի հայրական սիրո մասին։ «Սա էլ պատճառ չէ»,— ինքն իրեն շշնջաց Գևորգը։

Ցարիներ առաջ Մակարը զայրանում էր, երբ խոսք էր լինում Կովկասից սպասվելիք օգնության մասին։ Նա գտնում էր, որ հույսը սեփական ուժերի վրա պետք է դնել։ Մանավանդ, որ Կովկասի խոստումները շատ էին, իսկ իրական օգնությունը՝ չնչին։

Գևորգից մեծ ջանքեր ու երկար ժամանակ պահանջվեց Մակարին համոզելու, որ նա ոչ միայն սխալ, այլ նաև վնասակար տեսակետ է պաշտպանում։ Սասունն ու Մուշը առանձին երկրներ չեն, այլ Հայաստանի մի մասը, իսկ սասունցիներն ու մշեցիները հայ ժողովրդի մի հատվածն են։ Գևորգը սիրում էր ասել ու անընդհատ կրկնում էր. «Էջմիածինը նույնքան Հայաստան է, որքան ս. Կարապետը»։ Նա ամբողջ կրքոտությամբ հարձակվում էր այն հայերի վրա, որոնք փորձում էին հոգեբանորեն ևս օրինականացնել Հայաստանի մասնատվածությունը, ովքեր արևելահայերին անջատում էին արևմտահայերից, փորձում նրանց նույնիսկ իրար հակադրել։ Նա պնդում էր՝ Սասունի ու Մուշի ազատագրումն անհնար է առանց ամբողջ Հայաստանի ազատագրության։ Իսկ Հայաստանի ազատագրության շահերը պահանջում են նրա բոլոր ուժերի միավորում, այդ ուժերի միաձուլում։ «Եթե բոլոր հայերը այսօր երեկոյան որոշեն մեռնել, լուսաբացին, մինչև արևի ծագելը, ազատ կլինեն»,— ահա նրա թևավոր խոսքը, որ կարող էր դառնալ ազատագրական պայքարում հայ ժողովրդի ուժերի միավորման նշանաբան։ «Դեռ ավելին,—

բացատրում էր Գևորգը,— հայերը միայնակ չեն կարող օսմանյան լծից ազատվել, եթե օգնության ձեռք չմեկնի Ռուսաստանը»։

Մակարը համառորեն չէր համոզվում։ Ամբողջ կյանքը Սասունում անցկացրած այդ սասունցուն թվում էր, թե աշխարհում Սասունից մեծ ու հզոր ոչինչ չկա, և եթե Սասունը միավորվի, կկարողանա ազատագրվել։

Գևորգի դեմքին թույլ ժպիտ երևաց։ «Իմ ու քեռի Մակարի տարիների վեճը լուծեց ռուսական մոսին հրացանը,— հիշում էր Գևորգը։— Աղբյուր Սերոբը, երբ Սասուն եկավ, իր հետ բերել էր մի քանի մոսին հրացան, որոնցից մեկական տվեցինք խուլբեցի Գալուստին ու Ղազարին։ Մի անգամ ես, Մակարն ու հինգ ուրիշ հայդուկներ գնացել էինք Խուլբի Կյապռնի գյուղը՝ Գալուստի հետ որոշ հարցերի շուրջ պայմանավորվելու։ Ամառ օր էր։ Երբ հասանք Կյապռնի, ուղիղ գնացինք Ղազարի տուն։ Այստեղ էր նաև Գալուստը։ Դեռ նոր էինք մի քանի բառ փոխանակել, երբ վազելով ներս ընկավ Ղազարի եղբոր տղան՝ Պողոսը, ու բղավեց.

— Զորք է գալիս։

— Շա՞տ են,— հարցրի ես։

— Մի հիսուն հոգի կլինեն,— պատասխանեց Պողոսը։

— Գևորգ,— ասաց Գալուստը,— իմ ու Ղազարի ձեռին մոսին հրացաններ են։ Մենք կքաշվենք դիմացի սարը, իսկ դուք աշխատեք աննկատ շարժվել Տալվորիկի ուղղությամբ։

Այդպես էլ վարվեցինք։ Չէր անցել կես ժամ, երբ հրացանային համազարկի և ապա նաև գոռում-գոչյունի ձայներ, աղիողորմ ճիչեր լսվեցին։ Երբ շուտ եկանք, մի անհավատալի պատկերի ականատես եղանք։ Ղազարն ու Գալուստը բարձրացել էին սարալանջի ժայռին, ողջ հասակով կանգնել ու կրակում էին դեպի սարը շարժվող թուրքական ջոկատի վրա։ Թուրքերը ևս կրակում էին։ Իսկ երբ թուրքերը 500—600 մետր մոտեցան, Գալուստն ու Ղազարը ժայռից իջան և բարձրանալով մի քանի հարյուր մետր, շուտ եկան ու շարունակեցին կրակել։

— Հրաշք է,— տեսնելով այդ՝ բացականչեց Մակարը,— ասի մի հրացանով թուրքի մի գնդի դեմ կարելի է կռվել։

— Բա դու դեմ ես Կովկասի հետ կապին։ Եթե այդ կապը չլիներ, Գալուստի ու Ղազարի ձեռքին ոչ թե մոսին, այլ բերդանկա հրացան էր լինելու և այն ժամանակ ասված գիտեր, թե ես ու դու հիմա մեռած էինք, թե կենդանի»։

Մի սկզբունքային նշանակություն ունեցող հարցում ևս Գևորգն ու Մակարը տարակարծիք էին։ Գևորգը հայ ժողովրդի՝ օսմանյան տիրակալության դեմ պայքարի հաջողության գրավականն էր համարում հայ-քրդական դաշինքը։ Նա գտնում էր, որ Արևմտյան Հայաստանն իր ազգային կազմով միատարր չէ։ Հայերի հետ կողք կողքի ապրում էին Թուրքեր, հույներ, ասորիներ և այլն։ Բայց, տոկոսային առումով, հայերից հետո ամենաշատը քրդերն էին։ Այն պայմաններում, երբ գործնականում անհնար էր հայ և Թուրք աշխատավորության համագործակցությունը, առանց քրդերի հետ դաշինքի, հայերի ազգային ցանկացած շարժում դատապարտված էր պարտության։

Ի դեպ, 1900-ական Թվականներին արևմտահայ հասարակական հոսանքների առաջ կանգնած էր մի երկընտրանք՝ օսմանյան լծից ազատագրվելու համար ո՞ւմ հետ դաշնակցել՝ քրդերի՞ Թե Թուրքական «դեմոկրատական-հեղափոխական ուժերի», տվյալ դեպքում՝ երիտԹուրքերի հետ։ Դաշնակները գտնում էին, որ պետք է դաշինքի եկրեր փնտրել երիտԹուրքերի հետ, որովհետև Թուրքիայում միակ իրական ուժը, որը ի վիճակի էր տապալելու սուլԹանական կարգերը, այդ կուսակցությունն էր։

Դաշնակների ընդդիմախոսները, այդ Թվում և Գևորգը, համաձայնելով, որ սուլԹանական տիրակալության դեմ պայքարում երիտԹուրքերի կուսակցությունն իսկապես առաջատար դեր ուներ, միաժամանակ գտնում էին, որ այդ կուսակցությունը օսմանյան կայսրության կազմի մեջ եղած ժողովուրդներին և, մասնավորապես, հայ ժողովրդին ազատություն չի տա, որ այդ ազատությունը կարող է ձեռք բերվել միայն պայքարի միջոցով, իսկ այդ պայքարում հայերի բնական դաշնակից կարող են լինել քրդերը։

Մակարը դեմ էր դաշինքին Թե՛ երիտԹուրքերի և Թե՛ քրդերի հետ։ Նա Գևորգին զգուշացնում էր, որ գլխավորը սեփական ուժերի համախմբումն է, որովհետև «քրդական ցեղապետները մեզ հետ են, երբ մենք ուժեղ ենք, մեր դեմ են, երբ մենք Թույլ ու անօգնական ենք։ Նույնը և Թուրքական մտավորականությունն ու սպայությունը»։ Ամեն անգամ, երբ Գևորգը հյուր էր գնում քուրդ ցեղապետներին, Մակարը շատ էր անհանգստանում։ Նրան միշտ Թվում էր, Թե քրդերը սիրաշահելով միջոցներ էին որոնում նրան ֆիզիկապես ոչնչացնելու համար։ Միայն այս հարցում՝ քրդերի նկատմամբ վերաբերմունքի հարցում, Մակարն ու

Գևորգը ընդհանուր հայտարարի չեկան և ամեն մեկը մնաց իր կարծիքին։ Բայց սխալ կլիներ մտածել, Թե դա կարող էր պատճառառանալ, որպեսզի Մակարը խզեր կապը Գևորգի հետ, միանգամից հօդս ցնդեցներ այն ամենը, ինչ ստեղծվել էր համատեղ մաքառումների ընԹացքում, զրկանքների ու զոհաբերությունների գնով։ «Ոչ, պատճառը այդ չէ,— վճռեց Գևորգը,— իսկ եԹե օգտագործել են Մակարի միամիտ, հախուռն բնավորությունը։ Բայց ո՞վ»։

Անցան օրեր, և Գևորգի համար առեղծվածը մնաց առեղծված։ Հայդուկի անհանգիստ, վտանգներով լի կյանքը Գևորգին Թույլ չտվին երկար մնալու այդ մտածմունքների ու մտահոգությունների մեջ, նրան դուրս քաշեցին ու տարան լեռնային կածաններով, անորոշ բախտին ընդառաջ։ Այնուամենայնիվ, նա չկարողացավ դիմանալ Մակարից և մյուս հայդուկներից բաժանված մնալու վիճակին։ Մի քանի օր հետո նրանց անձամբ գտավ, ետ վերադարձրեց զենքերը, Մակարի հետ կողք կողքի նստած՝ երեխայի նման հոնգուր-հոնգուր լաց եղան և, առանց նույնիսկ մի բառ փոխանակելու, վերադարձան Մառնիկի անտառ։ Նրանք այդպես էլ այլևս խոսք չբացեցին այդ ծանր միջադեպի մասին։ Նրանցից յուրաքանչյուրը Թանկ էր գնահատում մյուսի հոգու խաղաղությունը, որպեսզի իրեն Թույլ տար բացատրվելու։

«ԳԵՎՈՐԳԸ ԽԵԼՈՒԵԼ Է...»

Ալվարինջի տխուր դեպքերը երկար ժամանակ իրենց կնիքը Թողեցին Գևորգի տրամադրության և գործունեության վրա։ Բնությամբ մարդասեր ու մարդամոտ՝ նա սկսել էր խուսափել ընկերներից, օրերով ու շաբաթներով քաշվում էր Հովնանի անտառ։ Նրան ավելի ու ավելի էր մտահոգում հայդուկային շարժման վաղվա օրը։ Այդ շարժումը չէր կարող անվերջ մնալ ինքնապաշտպանության կաղապարի մեջ։ Միայն օրվա հոգսերով ապրելը, հեռանկարի բացակայությունը չէր կարող բացասաբար չազդել շարժման, մասնավորապես, նրա բարոյական հենքի վրա։ Գևորգը նպատակահարմար չէր համարում իր մտատանջությունները կիսել հայդուկների, ինչպես նաև խմբերի ղեկավարների հետ։ Նա չէր ուզում նրանց մեջ խախտել հավատը

ջարժման ապագայի նկատմամբ։ Գևորգը խորհում էր, քննում։ Նա ելք էր որոնում։ Իսկ ժամանակը չէր սպասում։ Նրա «պասսիվությունը» թե՛ թշնամիների և թե՛ զինակիցների կողմից, չէր հասկացվում։ Հայդուկների շրջանում նույնիսկ ծայր առան անհնպաստ խոսակցություններ։ Ռուսաստանում, այդ թվում՝ Անդրկովկասում, ծավալված հեղափոխական շարժումների պայմաններում հայդուկների գործունեության պասսիվացումը ավելի լավ էր երևում։ Ստեղծվում էր այն տպավորությունը, թե ազատագրական շարժման օջախները տեղափոխվել են հյուսիս, մտել Արևելյան Հայաստանի գյուղերն ու քաղաքները։ Խզվել էր կապը Կովկասի հետ. ո՛չ զինված ջոկատներ էին գալիս, ո՛չ զենք էր ստացվում։

1906 թվականի ուշ աշունն էր։ Գևորգը հայդուկներին բաժանեց գյուղերում ձմեռն անցկացնելու համար, իսկ ինքը, փոքրիկ ջոկատով, մի քանի ցուցադրական այցելություններ ունեցավ քրդական ցեղերին հասկացնելու, որ ինքն ու հայդուկությունը կան և ոչ միայն կան, այլև երբեք այդքան ուժեղ չեն եղել։ Համոզվելով, որ առայժմ քուրդ ցեղապետները հայերի դեմ որևէ քայլի չեն համարձակվի դիմել, վերադարձավ Փեթար։

Արդեն գիտենք, որ սուլթանի հրամանով Սասունի վանքերը վերածվել էին զորանոցների։ Ասկյարների զորակայան էր դարձել նաև հռչակավոր սուրբ Կարապետի վանքը։

Այս վանքը կառուցված էր Բինգյոլի գեղատեսիլ լանջին, Խնուսից մի քանի կիլոմետր հյուսիս-արևմուտք, Մժնկերտ գյուղի դիմաց, Էրզրում տանող ճանապարհից ոչ հեռու։ Ըստ ավանդության, այս վանքը Գրիգոր Լուսավորչի դաստակերտն էր և կառուցված էր նրա կողմից։ Գրիգոր Լուսավորիչը Ս. Կարապետի մասունքը Կեսարիայից Հայաստան բերելիս, երդվեց. «Որտեղ սպիտակ ջորին հոգնի և ծունկը գետնին զարկի, այնտեղ վանք կառուցել և մասունքը այնտեղ ամփոփել»։ Մժնկերտ գյուղի ձորակով բարձրանալիս, ջորին ծունկը գետնին խփեց։ Հենց այդտեղ էլ կառուցվեց վանքը և կոչվեց Ս. Կարապետ։ Այս վանքը մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալի դեր է խաղացել։

Բիթլիսի կուսակալը ոտի էր հանել բոլոր զորամասերն ու ոստիկանությանը՝ Գևորգին գտնելու համար։ Ջյունաշատ ու ցուրտ ձմեռը խանգարում էր արագ տեղափոխությունների միջոցով հետապնդողներից կտրվելու և հետքը կորցնելու։

Գևորգը Գալեի ու Մանուկի հետ ձմեռում էր անտառում։ Ցրտահարվում են Մանուկի ոտքերը, Գալեի՝ ականջները։ Մըրսում և հիվանդանում է նաև Գևորգը։ Բայց նրանք առանց կանգառի առաջ էին շարժվում դեպի ս. Կարապետի վանքի բարձունքները։ Մոտակա բոլոր գյուղերում թուրքական զինվորներ կային, որը բացառում էր հայդուկների մուտքը գյուղերը։ Բուքն ու սառնամանիքը ավելի են սաստկանում։ Այլևս անհնար էր դրսում մնալ։ Եվ Գևորգը դիմում է ծայրահեղ քայլի, որոշում է մտնել ս. Կարապետի վանքը։ Վանքում այդ ժամանակ ավելի քան 100 հոգուց բաղկացած թուրքական ջոկատ կար, որն իր հսկողության տակ էր վերցրել վանքի ողջ շրջապատը, մուտքերն ու ելքերը։

Գևորգին հաջողվում է մի հովվի միջոցով կապվել Ստեփան վարդապետի հետ։ Վանքի կտուրին հերթապահող թուրք զինվորները, բքի պատճառով, մի քանի քայլից այն կողմ ոչինչ չէին տեսնում ու ցրտից դեմքները ծածկած՝ ետ ու առաջ էին քայլում։ Օգտվելով դրանից՝ Գևորգը աննկատ հայտնվում է վանքի պարսպի տակ, ապա ձնագնդի շարտում Ստեփան վարդապետի պատուհանին։ Պատուհանը բացվում է և մի պարան կախվում։ Գևորգը մագլցում է վեր։ Հիվանդ էր, ձեռքերը սառել էին։ Բոլոր ճիգերը գործադրելով հասնում է պատուհանին, ներս սողոսկում ու ուշագնաց ընկնում խցի հատակին։ Ստեփան վարդապետի խնամքի ու հոգատարության շնորհիվ մի քանի օր անց նրա ջերմը անցնում է։ Եվս մի քանի օր՝ և Գևորգը լրիվ ապաքինվում է։ Նա մեկ ամիս մնում է վանքում, իրեն փընտրող թուրք զինվորների հետ նույն հարկի տակ։ Երբ եղանակները մի փոքր մեղմանում են՝ գաղտնի հեռանում է վանքից։

Գևորգը գնում է Խնուսի կողմերը և մինչև գարուն մնում այնտեղ։ Նա միշտ էլ Խնուսում հայդուկային շարժման ծավալմանը մեծ ուշադրություն էր դարձնում։ Գևորգը փափագում էր Խնուսում և Բասենում ստեղծել հայդուկային ջոկատներ ունեցող գյուղերի մի շղթա, որոնք կապահովեին Սասունի կանոնավոր կապը Անդրկովկասի հետ։

Գևորգին հաջողվում է Խնուսի քրդերից (Աղդո, Ֆլեթ) և հայերից (Օհան, Մարտիրոս, Տիգրան, Միսակ, Մոսո) ձևավորել կապավորների մի հուսալի խումբ, որն աշխատում էր անխափան։ Բայց որոշ ժամանակ անց թուրքերին հայտնի դարձավ այդ կապավորների գոյությունը, և նրանց վրա իշխանությունների կողմից հսկողություն սահմանվեց։ Մշտական հսկողության տակ էր նաև Մոսոն։ Նրանց գյուղը ճանապարհի վրա էր։

Ամիսը երկու անգամ նա Կովկաս գնալ-գալիս, անցնում էր իրենց գյուղի կողքով, բայց գյուղ մտնել չէր համարձակվում, այնտեղ ոստիկաններ կային։ Մի անգամ էլ չկարողացավ իրեն զսպել ու մտավ գյուղ։ Ոստիկանությունը և խնուսից բերված զորամասը պաշարում են գյուղը։ Մոսոն իր մոտ եղած նամակներն այրում է, մորն ու սիրած աղջկան հրաժեշտ տալիս, ձի նստած արշավում դեպի Թուրքերը, հուսալով ճեղքել շրջապատման գիծը։ Երեք զինվոր սպանվում են։ Վերջին պահին, երբ համարյա ճեղքել էր շղթան, թշնամու գնդակը թիկունքից հասավ նրան։ Անվեհեր կապավորը զոհվեց։

Գևորգի խնուս գալու նպատակներից մեկն էլ այն էր, որպեսզի կարողանար պայմաններ ստեղծել, կարիքի դեպքում, Սասունից որոշ քանակությամբ սովյալների ժամանակավորապես խնուս տեղափոխել, դեպի այլ երկրներ արտագաղթը կանխելու համար։ Արոս գյուղում, մեկ օրվա ընթացքում, նրա շուրջը հավաքվեցին 25 զինված հեծյալներ, որոնց թվում՝ 5 քրդեր։ Բոլոր գյուղերում նրա երևալը ոգևորության ալիք էր առաջացնում, ստեղծվում էին ինքնապաշտպանական նոր ջոկատներ։

Գևորգը, երբ անցնում էր Ջեռնակ սարի ստորոտով, ուշադրություն դարձրեց մի վիթխարի ժայռաբեկորի, որը կանգնած էր հողասյան վրա և դրա համար էլ շարժվում էր։ Ժաժան քարն էր։ Փորձեր էին եղել եզների ու գոմեշների միջոցով քարը գցել, սակայն ապարդյուն։ Քարը շարժվում էր, բայց ամուր կառչած էր հիմքին։ Այդպես էլ սասունցին է՝ մտածեց նա։

Երբ խումբը մոտենում էր Գովանդուկ գյուղին, նրա դիմաց նկատվեց ոստիկանական մի ջոկատ, որը գյուղերն ընկած հայդուկներ էր փնտրում։ Ջոկատի հրամանատարը բղավեց. «Ո՞վ եք»։

— Ես Գևորգ Չաուշն եմ։ Կարո՞ղ եմ երկու զինվորի հետ մոտենալ։ Հետդ խոսելիք ունեմ։

Բինբաշին համաձայնեց։ Գևորգը մոտեցավ։ Քիչ անց զրուցակիցները բաժանվեցին բարեկամաբար։ Բինբաշին իր ջոկատի անդամներին արգելեց այդ հանդիպման մասին որևէ տեղ պատմել։ ... Խնուս բերդում գտնվելու ժամանակ տեղացիները դանգատվեցին, որ հարկահավաք Ֆայիմ էֆենդին հայերին թալանում է։ Գևորգը գիշերը գնում է հարկահավաք ոստիկանի տուն, ծեծում դուռը։ «Ո՞վ է»,— լսվում է ներսից։ «Գևորգ Չաուշն է»,— հնչում է պատասխանը։ «Էֆենդին քնած է»,— հնչում է ծառայի սարսափահար ձայնը։ «Գնա արթնացրու»,— հրամայում

է Գևորգը։ Երբ ծառան Ֆայիմին արթնացնելով տեղեկացնում է, որ դրսում Գևորգ Չաուշն է սպասում, վերջինս այլայլվում է և հրամայում իմանալ, թե անկոչ հյուրը ի՞նչ է ուզում։ «Գևորգ Չաուշը 400 ոսկի տուգանք է ուզում՝ ժողովրդին թալանելու և կաշառք վերցնելու համար»։

Հաջորդ օրը 400 ոսկին դրված էր նշանակված տեղում։ Այն բաժանվում է աղքատ և հարկահանների կողմից հարստահարված խնուսցիներին։

Թուրքական ոստիկանությունը կազմված էր աշխատավորական ծագում ունեցող մարդկանցից, որոնք, հեղափոխական շարժումների ծավալմանը զուգընթաց ու դրանց ազդեցության տակ, առանձին ջանասիրություն չէին դրսևորում իրենց պաշտոնական պարտականությունների կատարման համար։ Նրանք հատկապես խուսափում էին հայդուկների հետ գործ ունենալուց, որովհետև համոզվել էին, որ հայդուկի վրա զենք բարձրացրած ոստիկանն անպայման վրիժառուների զոհն է դառնալու։ Օրինակ, շատ ժամանակ չէր անցել Ալվառինջի ողբերգական դեպքերից, երբ հայդուկները դարանակալեցին ու գնդակահարեցին այդ գյուղում հայդուկների վրա հարձակված բոլոր ոստիկաններին։ Ոստիկանների մեջ քիչ չէր նաև հայերի կողմից կաշառվածների թիվը։ Իսկ կաշառք ստանալու համար թուրք ոստիկանը պատրաստ էր ամեն ինչի, ընդհուպ մինչև հայդուկների գործակալ դառնալը։

Պատմում են նաև այսպիսի դեպք. Խալիլչաուշ գյուղում էր բնակվում մի անգրագետ, բայց շատ սրամիտ ու ընդունակ երիտասարդ, անունը Սիմե։ Նրա հորեղբորորդին՝ Տիգրանը, ոչ միայն Խնուսում, այլև Սասունում ու Տարոնում հայտնի մատնիչ էր։ Մատնիչին ֆիզիկապես ոչնչացնելու բոլոր փորձերը անհաջողության էին մատնվել։ Գևորգն այդ գործը հանձնարարում է Սիմեին։ Հանձնարարությունը կատարելու համար Սիմեն ծառայության է մտնում իր լրտես ազգականի մոտ և կարողանում շահել նրա վստահությունը։ Մատնիչին ամեն րոպե թվում էր, թե ինչ-որ տեղ թաքնված մեկը պատրաստվում է իրեն սպանել։ Երբ նա այդ մասին գանգատվում էր, Սիմեն պատասխանում էր կատակով.

— Մի վախենա։ Ո՞վ կարող է քեզ սպանել։ Եթե սպանելու հարկ լինի, այդ ես կանեմ։ Ամոթ չէ՞, որ իմ աղգականին ուրիշները սպանեն։

Մի քանի օր անց Սիմեն դավաճանին սպանեց, անցավ Սասուն և մտավ Գևորգի ջոկատը։

... Գևորգը ամեն ինչ անում էր, որ կանխի հայդուկային շարժման մեկուսացումը։ Նա, ինչպես վերևում նշվեց, առանձնահատուկ նշանակություն էր տալիս Անդրկովկասի հետ կապերին։ Այդ նպատակով, բացի Խնուս—Բասեն—Կարս գծից նա աշխատում էր հայդուկային միջանցք ստեղծել նաև Տարոն—Ախլաթ—Լեռնապար—Պարսկաստան ուղղությամբ։ Նրան հաջողվեց Ախլաթի 27 գյուղերում ինքնապաշտպանական ջոկատներ կազմակերպել։

Զենքեր տեղափոխելու ճանապարհ ունենալու համար նա սերտ հարաբերություններ էր ստեղծել Տիգրանակերտի ու դեպի Հալեպ տանող ճանապարհին ընկած գյուղերի քրդերի հետ։ Այդ նպատակով հաճախ էր երևում Հարավային Հայաստանի գավառներում։ Հալեպ—Տիգրանակերտ—Սասուն ճանապարհը նա դարձրեց զենք տեղափոխելու գլխավոր ուղի։ Սկսած 1900 թվականից՝ հայդուկները հիմնականում կարողացան զենքով ապահովվել։ Ըստ ռուսական հյուպատոսի տվյալների՝ միայն մի փոխադրումով տեղ էր հասցվել 400 հրացան։

Մի անգամ Գևորգը Տիգրանակերտում էր, երբ լուր ստացավ, որ քաղաքում օսմանյան սպաների գաղտնի ժողով է հրավիրված։ Գևորգի բոլոր ջանքերը իմանալու, թե սպաներն ինչ հարց են քննելու, ապարդյուն անցան։ Այնժամ որոշեց դիմել խիստ վտանգավոր քայլի. ձեռք բերեց թուրքական բանակի սպայի համազգեստ և մի հայդուկի հետ գնաց մասնակցելու սպաների ժողովին։ Ժողովի մասնակիցները նրա բարևն ընդունելուց հետո հարցրին, թե անծանոթ սպան որտեղի՞ց է գալիս։

— Վանից եմ գալիս և Պոլիս եմ գնում,— պատասխանեց Գևորգը։

— Երևի լսե՞լ եք Բերդակի կռվի և Գևորգ Չաուշի սատանայական զենքի մասին։

— Լսել եմ, գիտեմ, որ այդ կապակցությամբ սուլթանը շատ է մտահոգ։

Նախագահողը հայտնեց, որ սուլթանը Գևորգ Չաուշի գլխի համար խոստացել է հազար ոսկի։ Հավաքվել են որոշելու, թե ինչպես ձեռք գցեն հայդուկապետին, և ո՞վ հանձն կառնի այդ։

Տիրեց լռություն։ Նախագահողը հարցը կրկնեց, բայց այն կրկին անպատասխան մնաց։

— Ես կբերեմ Չաուշի գլուխը,— հայտարարեց Գևորգը։

— Այդ ինչպե՞ս։

— Ահա, վերցրու Գևորգ Չաուշի գլուխը,— գլուխը դեպի նախագահողը երկարելով՝ ասաց Գևորգը։

Մինչ թուրք սպաները զարմանքից ու սարսափից մեխվել էին իրենց տեղերում, Գևորգն անհետացավ։

ՊԱՐՈՒՄ ԵՆ ԿՌՎԵԼՈՎ ԵՎ ԿՌՎՈՒՄ ՊԱՐԵԼՈՎ

1907 թ. ապրիլին Գևորգը հեռավոր ուղևորությունից վերադառնում էր ս. Կարապետի վանք։ Արդեն գարուն էր։ Գևորգը շարժման մեջ դրեց բոլոր հայդուկներին։ Նրանք փոքրաթիվ խմբերով ցուցադրական տեղաշարժեր էին կատարում թե՛ Սասունի և թե՛ Դաշտի, Խնուսի ու Ախլաթի գյուղերով, տպավորություն ստեղծում, որ ամենուրեք կան ու գործում են հայդուկային խմբեր։ Այս տեղաշարժերը լրջորեն անհանգստացրին թուրքական իշխանություններին։ Նրանք լրացուցիչ զինված ուժեր տեղափոխեցին Սասուն և հսկողության տակ առան նրա գյուղերը։ Գևորգը որոշեց էլ ավելի ակտիվ գործողությունների դիմել և թուրքական իշխանություններին հասկացնել, որ հայդուկային շարժման ծավալման առաջն առնել այլևս անհնար էր։ Այդ նպատակով իր խմբով ս. Կարապետի վանքից կտրեց-անցավ Տարոնի դաշտն ու բարձրացավ Նեմրութի լանջերը։ Այդ արշավը ահաբեկեց թուրք և քուրդ փաշաներին ու բեկերին և միաժամանակ Գևորգին հնարավորություն տվեց հարուստ տեղեկություններ հավաքել ինքնապաշտպանական ջոկատների, քրդական ցեղերի շարժումների ու վարքագծի, թուրքական իշխանությունների գործողությունների ու մտադրությունների մասին։

Երբ ճանապարհին հանդիպում էին թուրքական ջոկատներ, Գևորգը կայծակնային արագությամբ հարձակվում էր նրանց վրա, շեշտակի հարվածներ հասցնում և նույն արագությամբ հեռանում։ Այդ պատճառով, թուրքական ջոկատները գերադասում էին ոչ թե վերահսկել հայկական գյուղերի անցուդարձը, այլ մնալ զորանոցներում կամ իրենց հենակետերում։

Մառնիկի անտառում հրավիրված էր ինքնապաշտպանության ջոկատների ղեկավարների ու հայդուկների ժողով, որը քննում էր կենսական նշանակություն ունեցող հարցեր՝ հրաղենի ու զինամթերքի ապահովման գործի բարելավում, քաղաքա-

կան բանտարկյալներին օգնության կազմակերպում, քրդերի հետ կապերի ու համագործակցության զարգացում, ելնելով ստեղծված իրադրությունից՝ հայդուկային խմբերի տեղադրության վերանայում, Անդրկովկասի հետ կապերի ուժեղացում, հայերի հողերին տիրացած մահմեդականների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը և այլն։ Ժողովում տիրում էր ոգևորության և ինքնապաշտպանության գործին աներեր հավատարմության, Գևորգի նկատմամբ սիրո ու վստահության տրամադրություն։ Հավանաբար այս ժողովը Գևորգը հենց այդ նպատակով էլ հրավիրել էր՝ մերժելու տարընթացության, մասնատվածության ու ինքնագլխության, չնայած մասնակի, բայց առկա երևույթները, ամրապնդելու շարժման միասնությունն ու համախմբվածությունը։ Ժողովն ավարտվեց նրա մասնակիցների խրոխտ պարով։ Պարողների շարքը գլխավորում էր Գևորգը։ Քոչարի պարող սասունցիների ոտքերի հարվածներից թնդում էր անտառը։ Այս մարդիկ պարում էին կռվելու պես և կռվում՝ պարելու պես։ Իսկ երբ գիշերը վրա հասավ, հայդուկները, չորս խմբի բաժանված մեկնեցին տարբեր ուղղություններով։ Գևորգն իր խմբով գնաց դեպի Խնուս, բայց այնտեղ երկար չմնաց. նրա խմբի վրա հարձակվեց թուրքական ոստիկանության ու ասկյարների մի ջոկատ։ Հայդուկները հակահարձակման անցան։ 40—50 րոպե անց թուրքերը լեղապատառ փախան՝ ընդհարման վայրում թողնելով 12 զոհված։ Բնորոշ է, որ այս ընդհարման ժամանակ հավաքվել էին մեծ թվով քրդեր և հեռվից դիտում էին մարտը։ Հայդուկների հաղթանակը նրանց վրա շշմեցուցիչ տպավորություն թողեց։ Այդ հաղթանակի շնորհիվ Խնուսի գյուղերում մ'ն քանի ամիս ոչ ոստիկան և ոչ էլ աշիրեթապետ երևաց։ Գևորգի խումբը կտրեց անցավ լեռները և Արածանու վրայով մտավ Շեխլան գյուղը։ Այստեղ նա մի այնպիսի պարահանդես և ուրախություն կազմակերպեց, Գևորգը այնպես պարեց, որ մասնակիցների հիշողության մեջ մնաց ընդմիշտ։ Դա բնորոշ էր Գևորգի բնավորությանը։ Նա ոչինչ կիսատ-պռատ չէր անում։ Նա ցանկացած գործի մեջ հոգի էր դնում և կատարում հիմնավորապես։ Երեկոյան կողմ նրան լուր բերին, որ ս. Հովհաննու անտառի կողմերը թուրքական մի ստվարաթիվ ջոկատ է երևացել։ Գևորգը կտուրն է բարձրանում և հեռադիտակով հետևում թուրքական զորամասի գործողություններին։ Ապա նա իր ջոկատը բաժանում է երկու մասի և քերծերով անցկացնում թուրքա-

կան զորամասի թիկունքը։ Իսկ գյուղի ջոկատներին հանձնարարում է մտնել անտառ և թուրքերի ուղղությամբ մի քանի հարամազարկ տալուց հետո, արագ հեռանալ։ Նրանք այդպես էլ արեցին։ Թուրքերը կարծելով, թե անտառում կրակողները հայդուկների հիմնական ուժերն են, ուղղվեցին դեպի անտառ։ Այդ ժամանակ Գևորգի ջոկատները թիկունքից հարձակման անցան և հարկադրեցին թուրքերին փոքրիկ խմբերի բաժանվելով՝ հեռանալ անտառի խորքը։ Հայդուկները հետապնդելով շրջապատեցին այդ խմբերն ու ոչնչացրին։ Ապա կայծակնային արագությամբ հեռացան դեպի Աշտիշատ։

Հաջորդ օրը թուրքական հրամանատարությունը նոր մեծ ուժեր ուղարկեց ս. Կարապետ վանքի ուղղությամբ, համոզված, որ Գևորգն ու իր ջոկատն այդ շրջանում են։ Մի ամբողջ շաբաթ ասկյարները ոտնատակ էին տալիս հայկական ու քրդական գյուղերը, բայց Գևորգ Չաուշին ոչ մի տեղ գտնել չկարողացան։

Մինչդեռ Գևորգի խումբը Դաշտի մի գյուղից մյուսն էր անցնում, կազմակերպում, ոգևորում ինքնապաշտպանության խմբերին։

Նա Դաշտի արևմուտքում գտնվող Ցրոնք գյուղից գնաց արևվելք, նեմրութի ուղղությամբ։ Երբ հասավ Դաշտի կենտրոնական մասը, թեքվեց դեպի Հացիկ, Խարս, Վարդենիս գյուղերը։ Ապա ետ դարձավ և գնաց Խվներ։ Բոլորը սպասում էին, որ նա երթը կշարունակի հյուսիս, բայց շուտ եկավ և թուրքական զորամասերի կողքով անցնելով՝ բարձրացավ Մառնիկ։ Մեկ շաբաթ աչքից կորավ, ոչ ոք նրա տեղը չգիտեր։ Թուրքական զորամասերն այդ ամբողջ ժամանակ Դաշտի գյուղերն ընկած ճգնում էին հասնել Գևորգի ջոկատին։ Վերջապես Քյոսա Բինբաշին հասկացավ Գևորգի մտադրությունը, որը թուրքական զորամասերն իր ետևից գցած սրընթաց արշավում էր, որպեսզի վերջիններն այդ երթերում հոգնեին, կորցնեին մարտունակությունը, ի վիճակի չլինեին և ժամանակ չունենային պատժողական լուրջ գործողությունների դիմելու։

Բինբաշին իր զորամասերին ետ կանչեց զորանոցները։

1907 թ. մայիս ամիսն էր։ Գևորգը լեռներից նորից իջնում է Դաշտ։ Անձրևոտ ու ցուրտ գիշեր էր։ Հետզհետե քայլելը դժվարանում էր, մինչև ազդրերը խրվում էին ցեխի մեջ։ Գևորգը ստիպված էր Մանուկին իր տաբնյակի հետ ուղարկել մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քարձոր գյուղը՝ ձիեր բերելու։ Շատ չանցած նրանք վերադարձան՝ իրենց հետ բերն-

լով 40 ձի, ինչպես նաև մի խումբ քուրդ գյուղացիների։ Քրդերը հայդուկներին հյուրասիրելու համար ուտելիք էին բերել։ Գևորգը նախ ներողություն է խնդրում գյուղացիներին անհանգստություն պատճառելու համար և ապա ասում, որ 10 օր հետո բոլոր ձիերը կվերադարձվեն։ Նա դրամ է տալիս՝ գյուղի աղքատ քրդերին բաժանելու համար։ Երիտասարդները ոտքով, իսկ մյուսները՝ ձիերով, խումբը առաջ է շարժվում դեպի ս. Հովհաննու անտառը։ Հաջորդ օրը Գևորգին լուր են բերում, որ թուրքական բանակը շարժվում է դեպի անտառ։ Գիշերը կես էր եղել, երբ Գևորգը խմբին ոտքի հանեց։ Նրանք անտառի միջով գնացին դեպի Ղզլաղաջ գետակն ու մտան հեղեղատը։ Հետքերը կորցնելու համար նա ջոկատին ոչ թե մյուս ափը հանեց, այլ առանց ջրից դուրս գալու, շարժվեցին գետի հոսանքի ուղղությամբ։ Հայդուկների անտառ մտնելու հետքերը թշնամին պետք է տեսներ, իսկ անտառից պետք էր այնպես հեռանալ, որ հետքեր չմնային և տպավորություն ստեղծվեր, թե հայդուկները ոչ թե դուրս են եկել, այլ խորացել են անտառի մեջ։ Ռազմական այս խորամանկությունը հաջողվում է։ Գևորգի խումբը հասել և հանգստանում էր Քուրդմեյդան հայկական գյուղում, իսկ թուրքական զորամասերը շրջապատել էին անտառը, տիրբեր գրավել ու դնդակոծում էին։ Մինչև կեսօր հրաձգությունը շարունակվեց։ Թուրքերը վախենում էին անտառ մտնել։ Օրվա երկրորդ կեսին թշնամին, անտառի շրջապատումը շարունակելու համար պահեց միայն հետևակը, իսկ հեծելազորը Դաշտ իջեցրեց՝ հայդուկներին այնտեղ ևս փնտրելու համար։ Հեծելազորը մոտենում էր Քուրդմեյդան գյուղին։ Գևորգը նկատի ունենալով, որ 100 հեծյալներից բաղկացած այդ ջոկատը հետևակից շատ էր հեռացել, որոշում է օգտվել դրանից. նա մի խումբ հեծյալ հայդուկների ուղարկում է Շեյխլան գյուղի ուղղությամբ։ Մոտենալով գյուղին, ջոկատը շրջվում է ու կրակ բացում թուրքական հեծելազորի վրա։ Վերջիններս իրենց ճանապարհը փոխում են և շարժվում դեպի հայդուկները, որոնք սրընթաց հեռանում էին լեռները։ Նրանք արդեն հինգ կիլոմետր հեռացել էին, երբ Գևորգը իր մոտ եղած հայդուկներով դուրս է գալիս թշնամու հեծյալների թիկունքը, նրանց կտրում հետևակից ու վերցնում կրակի տակ։ Նույն ժամանակ թուրքերին հետապնդած ջոկատը դիրքեր է գրավում ու հարվածում թշնամուն։ Թուրքերը ետ են վերադառնում։

Հայդուկների երկու խմբերը մտնում են Արածանի գետն ու անցնում մյուս ափը։ Թշնամու հետևակը թողնում է անտառը և քիչ անց արդեն Արածանիի հակառակ ափին էր։ Բայց չէր համարձակվում հայդուկների կրակի տակ գետն անցնել։

Հայդուկները Արածանիի ափով շարժվում էին վեր, ապա թեքվում հարավ-արևմուտք ու գնալով հասնում պատմական Աշտիշատ։ Այս շրջանի լեռնային մասերում բնակվում էին քրդերը, իսկ հարթավայրում՝ հայերը։ Հակառակ կողմում վարարած Արածանին էր։ Այսինքն՝ թշնամու հարձակման դեպքում հայդուկները հեռանալու հնարավորություն չունեին և ծուղակն էին ընկնելու։ Գևորգը որոշում է անմիջապես հեռանալ։ Նա փեթաբրա Մանուկին ու Ախոյին հանձնարարում է աննկատ մոտենալ Սուլուխի կամրջին և առանց աղմուկ բարձրացնելու՝ ոչնչացնել թուրք պահակներին։ Հարևան Կուրավու գյուղում թուրքական ուժեղ ջոկատ կար և աղմուկի դեպքում կմիջամտեր։ Իսկ դա կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ։ Մանուկն ու Ախոն հանձնարարությունը կատարեցին հմտորեն։ Հայդուկներն անցան կամուրջն ու շարժվեցին դեպի Քրդագոմ գյուղը։ Այստեղ լուր ստացվեց, որ Մշո կառավարիչը նոր մեծաթիվ զորքեր է շարժում ս. Կարապետի վանքի շրջանը շրջապատելու և հայդուկներին Աշտիշատի կողմերում բռնելու համար։

Ասել կուզե՝ Գևորգը բացարձակ ճշտությամբ էր գնահատել իրադրությունը և խումբը ժամանակին դուրս բերել այդ շրջանից։ Նա թուրքական բանակին թողնելով, որ իրեն փնտրի ս. Կարապետի ու Արածանիի արանքում, շարժվում է Դաշտի գյուղերը։ Լուր ստանալով, որ Գևորգը գնում է Բիթլիսի ուղղությամբ, թուրքերը թե՛ Բիթլիսից և թե՛ Մուշից զորքեր են ուղարկում։ Թշնամուն հաջողվում է Դրմերտ գյուղի մոտ թիկունքից և ճակատից ընդհուպ մոտենալ հայդուկներին։ Երեկոյան կողմ Գևորգն իր հեծյալներով դուրս է գալիս Դաշտ, բայց այստեղ նրա դեմ է ելնում թուրքական մի հեծյալ ջոկատ։ Սակայն Գևորգը հանկարծակիի չի գալիս և, օգտվելով մթությունից, հարձակվում է այդ ջոկատի վրա ու ճեղքելով թշնամու շղթան՝ ցուցադրաբար շարժվում է Յրոնք գյուղը, ապա թուրքերի տեսադաշտից դուրս գալուց հետո կտրուկ շրջադարձ է կատարում ու սլանում դեպի Սասունի խորքերը։ Թշնամին նրա հետքը կորցնում է ու մի շաբաթ շարունակ ապարդյուն փնտրում։

Եվս մի քանի օր, և Գևորգն իր խմբով Սուլուխ հայաբնակ

գյուղում էր։ Գյուղում 150—200 տուն կար։ Սուլուխցիները քաջ մարդիկ էին. այս գյուղից տասնյակ հայդուկներ են դուրս եկել։ Գյուղը ծառաղուրկ էր, տեղավորված Մշո դաշտի սահմանագծին, մեջքը հենած լեռներին։ Սուլուխը գտնվում էր Մուշ—Էրզրում ճանապարհին, Մուշ քաղաքից 10 կիլոմետր հեռավորության վրա։ Գյուղի կողքին 12 կամար ունեցող հին ու հայտնի, ստրատեգիական ու տնտեսական բացառիկ նշանակություն ունեցող կամուրջն էր։

Գարուն էր։ Մուրադ գետի ջրերը բարձրացել էին և գետն անցնելը շատ դժվար էր, եթե չասենք՝ անհնար...

ՍՈՒԼՈՒԽ

Սուլուխ... 1907 թ. մայիսի 25-ին իր ջոկատով այստեղ եկավ Գևորգը։ Հաջորդ օրը Սուլուխ հասավ նաև Ռուբենը, որը եկել էր հայդուկներին հրաժեշտ տալու, որովհետև մյուս օրը ճանապարհ էր ընկնելու դեպի Կովկաս։ Մինչև մայիսի 26-ի վերջալույսը Սուլուխում հավաքվեցին 84 հայդուկներ։ Հաջորդ օրը սուլուխցի Մեսրոպի տանը ջուր տաքացրին, հայդուկների մեծ մասը լողացավ, խորոված պատրաստեցին և ուրախ կատակներով անհոգ նախաճաշում էին։ Ոչինչ սարսափելի չէ, երբ միասին են 84 հայդուկներ։ Այն էլ՝ Սասունի հայդուկների ընտրանին։ Դրսում նույնիսկ պահակներ չէին նշանակել։ Գևորգը թույլ էր տվել երկու լուրջ սխալ. նախ Սուլուխի տեղանքը թշնամուն հնարավորություն էր տալիս հեշտությամբ շրջապատելու հայդուկներին։ Բացի այդ, հայդուկային այսպիսի բազմանդամ ջոկատով երեք օր Սուլուխում մնալը խոհեմ չէր։ Եթե Գևորգը, համենայն դեպս, որոշել էր կանգ առնել Սուլուխում, ապա պետք է համապատասխան հանձնարարություններ տար Մուշի իր գործընկերներին։ Դժբախտաբար, այս անգամ Գևորգը պարտիզանական շարժման իր սկզբունքներն անտեսեց և դաժանորեն պատժվեց։

Նախաճաշը շարունակվում էր, երբ տանտերը գունատված ներս ընկավ ու բղավեց.

— Մուշից զորք է գալիս, անհամար զորք։

Գևորգը, վերցնելով հեռադիտակը, բարձրացավ կտուր և այն, ինչ տեսավ, ցնցեց նրան։ Խոփերի դաշտը սևացել էր սևազգեստ թուրքական բանակից, որ մորեխի պես շարժվում էր դեպի Սուլուխ։ Հարձակվող զորամասը, որ Համիդի անունն էր կրում, ղեկավարում էր Քյոսա Բինբաշին։

Գևորգը կատաղությունից ատամներն է սեղմում։ Ուրեմն Բինբաշին իսկապես որոշել էր ոչնչացնել հայդուկներին։ Դրա համար էլ գալիս է գաղտագողի և ուզում է հարցը լուծել հանկարծակի, շեշտակի հարվածով։

Թուրքական զորամասն այնքան էր մոտեցել, որ արդեն հնարավոր չէր գյուղից հեռանալ և խուսափել ճակատամարտից։ Գյուղի կողքից հոսում էր Արածանին, Մուրադ գետը։ Գարուն էր, գետը հորդացել էր, հեղեղի վերածվել, և անցնելը գրեթե անհնար էր։

Բացի այդ՝ թուրքական բանակի շարժումը դիտելիս Գևորգը հասկացավ, որ Բինբաշին լրիվ տեղեկություններ ունի, թե տրվյալ պահին որտեղ են հայդուկները և ինչով են զբաղված։ Այսինքն՝ Բինբաշին գյուղում լրտես ունի և հետևաբար, հազիվ թե փակած լիներ նաև գյուղից հեռանալու ճանապարհները։ Եվ իսկապես, հինգ հազար քրդեր արևելքից, հարավից ու հարավարևմուտքից շրջապատել էին Սուլուխը և սպասում էին Բինբաշու հրամանին։ Ուրեմն՝ ճակատամարտ։ Այս խորհրդածությունների ընթացքում Գևորգի ուղեղը տենդագին աշխատում էր, որոշում պաշտպանության գիծը և հայդուկների ու գյուղի զինված ջոկատների տեղադրման կետերը։ Ու երբ կտուրից վար իջավ, արդեն լրիվ պատրաստ էր պաշտպանության մանրամասն սխեման։ Եվ առանց ժամանակ կորցնելու՝ սկսեց հրահանգներ ու հրամաններ տալ։

— Հագո, Հասանոյի և երեք սուլուխցու հետ գնացեք կամուրջը պաշտպանելու։ Կյանքի գնով կամուրջը պետք է պաշտպանեք։ Եթե տիրանան կամուրջին, հնարավորություն կունենան առանց մեծ ջանքերի անցնելու մեր պաշտպանության թիկունքը։

— Ղազար, վերցրու մի խումբ և դիրքեր գրավիր գյուղի գերեզմանատանը։ Ոչ մի կերպ թույլ չտաք, որ թշնամին մեզ հարվածի աջ թևից։

— Ռուբենը տասը մարտիկներով թող դիրքեր գրավի գյուղի ծայրի քանդված մարագում՝ գյուղ մտնող խճուղին կրակի տակ առնելու համար։

— Մշեցի Ռուբենն իր խմբով թող դիրքեր գրավի ավերակ մարագից ձախ ընկած կիսաշեն եկեղեցու պատերին և նույնպես հսկողության տակ առնի խճուղին։

— Մանուկ, քո ջոկատով դիրքեր գրավիր գյուղի կենտրոնում, ս. Գևորգ եկեղեցու շրջակայքում։ Գյուղի միջին մասում, ճակատի ամբողջ երկարությամբ դիրքեր պիտի գրավեն Սուլուխի զինված ջոկատներն ու գյուղացիները։

Ինքը՝ Գևորգը, Գալեն, ցրոնքցի Էլոն, Մեսրոպը և սուլուխցի մի խումբ զինյալներ դիրքեր գրավեցին գյուղի առաջամասում, Քյուչուկի տան կտուրին։

Դիրքերի ընտրությունը կատարվեց ամենաճիշտ տարբերակով։ Հայոն կամրջի վրա, մշեցի Ռուբենը կիսաշեն եկեղեցու պատերի տակ, իսկ Ռուբենն ու Սայտո Պողոսը քանդված մարագում պետք է ապահովեին պաշտպանության գծի թևերը։ Գլխավոր հարվածային ուժը տեղադրված էր կենտրոնական մասում, որովհետև հենց կենտրոնական մասն էր իր վրա կրելու թշնամու գլխավոր հարվածը։ Գևորգը այստեղ ստեղծել էր եռաշար պաշտպանական գիծ։ Առաջամասում Գևորգն էր, նրա թիկունքում դիրքեր էին գրավել գյուղի զինված ջոկատները, իսկ երրորդ գծում, ս. Գևորգ եկեղեցու շրջանում, շենիկցի Ղազարի խումբն էր։

Պաշտպանական դիրքերի այս դասավորությունը վկայությունն էր Գևորգի փայլուն, պատերազմ վարելու ինքնատիպ տաղանդի և իրադարձությունների մեջ արագ ու ճիշտ կողմնորոշվելու կարողության։

Սասունի հայդուկների կռիվների գլխավոր սկզբունքն էր՝ ճակատամարտերի ժամանակ անընդմեջ տեղաշարժեր, բարձունքների վրա դիրքերի գրավում և դրանց անընդհատ փոփոխում՝ օգտագործելով լեռների ծերպերը։ Տեղանքի մյուս հնարավորությունների ճիշտ օգտագործում՝ թշնամուն հարվածելու նրա համար անսպասելի կետերում, անակնկալ տեղաշարժերի ու հարվածների միջոցով անցնելու թշնամու թիկունքը։

Սուլուխն այլ էր։ Այն գտնվում էր Բյուրակնի լեռների և Տարոնի դաշտի սահմանագծին։ Գյուղի թիկունքում բարձրանում էին լեռները, աջ թևում հոսում էր փրփրաբաշ Արածանին, իսկ ձախ կողմը Խոփերի դաշտի շարունակությունն էր։

Գիմացից գալիս էր թշնամու 3000 հոգուց բաղկացած մի զորաբանակ։ Ասենք նաև, որ հայդուկները, այդ թվում նաև Գևորգը, Սուլուխ էին եկել հետիոտն, առանց ձիերի։

Այդ նշանակում էր, որ թշնամուն թևերից հարվածելը և արագ ու հանկարծակի նրա թիկունքն անցնելը հնարավոր չէր։ Ո՞րն էր

ելքը։ Տակտիկական ինչպիսի՞ հնարք պետք է իրականացվեր թշնամու 100 անգամ գերակշռող ուժերի հարձակմանը դիմակայելու համար։ Պաշտպանական երեք գիծ ստեղծելով, Գևորգը ձգտում էր թշնամուն ծուղակը գցել և գյուղի փողոցներում նրան պատճառել մեծ կորուստներ։ Եթե թշնամին հաղթահարեր առաջին գծի դիմադրությունը, կմտածեր, որ հաղթել է հայդուկների գլխավոր ուժերին, որովհետև առաջին գծում կռվում էր անձամբ Գևորգ Չաուշը, հետևաբար նա, առաջին գիծն անցնելով, ավելի ինքնավստահ պետք է գյուղ մտներ։ Այստեղ նա կընկներ Սուլուխի մարտական ջոկատների, ինչպես նաև գյուղի մյուս մասերում դիրքեր բռնած հայդուկների կրակի տակ։ Դա հնարավորություն կտար մինչև մութն ընկնելը դիմադրել և գիշերը հեռանալ Սուլուխից։ Գևորգը խստորեն պատվիրեց, որ առանց իր ազդանշանի ոչ ոք չկրակի։ Թուրքական վաշտերը մոտենում էին։ Նրանք արդեն 100 մետր հեռավորության վրա էին, իսկ հեծյալ զորամասը սրարշավ գնաց դեպի ս. Գևորգի եկեղեցին։ Պայթեց Գևորգի հրացանը։ Բոլոր հայդուկները միաժամանակ կրակ բացեցին խիտ շարքերով առաջ եկող թուրքական վաշտերի վրա։ Թուրքերի մի մասը ճանապարհից դուրս եկավ ու պատսպարվեց փոսերի մեջ, քարերի ու թփերի տակ։ Ոմանք շփոթված վազեցին դեպի գյուղ ու թաքնվեցին պատերի տակ, իսկ հիմնական մասը ետ շրջվեց, հեռացավ, ու դուրս գալով մոսին հրացանի կրակի գոտուց, դիրքեր գրավեց։

Օրվա երկրորդ կեսին լսվեց թուրքական բանակի փողերի կանչը, և Քյոսա Բինբաշին երկրորդ անգամ հարձակման տարավ իր զորամասերը։ Այս անգամ թուրքերը առաջ էին շարժվում ոչ թե շարասյուներով, այլ ցրված մարտակարգով՝ վազքփորսող սկզբունքով։ Սկսվեց կատաղի ճակատամարտ։ Թուրքերը մեծ զոհեր էին տալիս, բայց համառորեն առաջ էին շարժվում։ Քյոսա Բինբաշին անձամբ էր ղեկավարում հարձակումը։ Նա արդեն Քյուչուկի տան պատի տակ էր, երբ գետնին տապալվեց։ Թուրքերի մի մասը, նրա մարմինը վերցրած, ետ գնացին, իսկ մյուսները առաջ շարժվեցին ու մտան հայդուկների դասավորության մեջ։

Գևորգից աջ կռվում էր Գալեն։ Հանկարծ նրա հրացանը դադարեց կրակելուց։ Գևորգը շուտ եկավ դեպի նա։ Իր հայդուկային պատանեկության ընկերը՝ Գալեն, սպանված էր։ Նա հանձնարարեց Գալեին իջեցնել Քյուչուկի ախոռը, իսկ ինքը շարու-

նակեց կրակել։ Բայց հանկարծ դադարեց կրակելուց նաև նրա հրացանը։ Զսպանակը փչացել էր։ Նա ծունկը գետնին իջեցրեց և փորձեց կարգի գցել հրացանը, բայց այդ ժամանակ մի գընդակ, ինչպես Ռուբենն է գրում, անցնելով Գևորգի «աջ թիկունքից խրվեց նրա ծնկի մեջ»։ Գևորգը մի կերպ կտուրից վար իջավ, մտավ ախոռ և գիտակցությունը կորցրած ընկավ զոհված ընկերոջ՝ Գալեի կողքին։ Քիչ անց թուրքերը գրավեցին Գևորգի զբաղեցրած դիրքերը, և Քյուչուկի կտուրի վրա կես ժամից ավելի կատաղի կռիվներ գնացին, մինչև որ Էլոյին հաջողվեց իր խմբով ետ գրավել այդ տունը և շարունակելով հետապնդել թշնամուն, հասնել մինչև խճուղի։ Գյուղ մտած թուրքերից շատերը շրջապատվեցին ու ոչնչացվեցին։ Նահանջող թուրքական զորամասերի ետևից հայդուկները շարժվեցին դեպի Կամուրջի թաղի տները և նոր դիրքեր գրավեցին։

Թուրքերը փորձեցին հեծելազորով անցնել գյուղի հարավային մասը և թիկունքից խփել հայդուկներին։ Սակայն հայդուկները հասկացան նրանց մտադրությունը և շեշտակի հարվածով ցրեցին այդ հեծյալ ջոկատը։

Տալով ավելի քան 150 սպանված և շուրջ 250 վիրավոր, ու Սուլուխը գրավել չկարողանալով, թուրքական հրամանատարությունը հարկադրված էր Մուշից թնդանոթներ խնդրել։

Հայդուկներն ու սուլուխցիները մութն ընկնելուն պես թողեցին իրենց դիրքերը և վերցնելով Գալեի դիակն ու վիրավոր Գևորգին, հեռացան Արածանիի ուղղությամբ։ Գյուղում մնաց միայն Տիգրանի հինգ հոգիանոց խումբը, որը շարունակեց կռվել, մինչև որ հայդուկներն ու բնակչությունը թշնամու կրակի գոտուց դուրս կգային։ Մութ գիշեր էր։ Մի բուռ հայեր թուրքական զորաբանակի քթի տակ զգույշ առաջ էին շարժվում։ Երբ մոտեցան Սուլուխի կամրջին, Հագոյին սպանված գտան։

Շենիկցի Մանուկը ալիզոնանցի Մքոյի ուսից վար բերեց Գալեի դիակը, համբուրեց իր ամենամոտ ընկերոջ ճակատը և նրա դիակն իջեցրեց Արածանիի ջրերի մեջ։ Նույն բանն արեցին նաև Հագոյի ու Հասանոյի դիակների հետ։ Վիրավոր Գևորգին կապեցին ձիու թամբին ու Մուրադ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ շարժվեցին դեպի Խաշլախտախ գյուղը։ Այստեղ Գևորգին դրեցին եղեգնուտում, կանաչ թփերով ծածկեցին, երկու սուլուխցու ապսպրեցին հսկել նրան և հեռացան։

Հաջորդ օրն իր զորախմբով այստեղից անցնելիս, քրդական

ցեղապետներից մեկը՝ Զայնալ բէկը, տնքոց է լսում։ Գնում է ձայնի ուղղությամբ։

Զայնալը խոտը ետ է տանում ու տեսնում է հայդուկի մեռնող դեմքը։

— Ջո՞ւր...

Նա Գևորգին իսկույն ճանաչում է և անմիջապես հանձնարարում Արածանիից ջուր բերել։ Զայնալը Գևորգի գլուխը բարձրացնում է և ջուրը մոտեցնում շուրթերին։ Հենց այդտեղ, քուրդ ցեղապետի ձեռքերի վրա, հոգին ավանդում է Գևորգը։

1907 թվականի մայիսի 28-ն էր։

Սուլուխի ճակատամարտի և Գևորգի սպանության մասին հիմնական գրավոր աղբյուրը Ռուբենի «Հայ հեղափոխականի մը յիշատակները» գիրքն է։ Սակայն այս իրադարձությունների մասին այդ գրավոր աղբյուրի և ճակատամարտի մասնակիցների պատմածների միջև լուրջ հակասություններ կան։ Եվ իսկապես։ Այնպես, ինչպես մինչև այժմ գրականության մեջ ներկայացված է Գևորգի մահը, մի քանի մանրամասներում հանդիպում է ճակատամարտի մասնակիցների տրամաբանական առարկություններին։

Նրանք անհնար էին համարում, որ տանիքին գտնվող Գևորգի վրա ներքևից կրակելիս գնդակը դիպչեր աջ թիկունքին և միաժամանակ ջարդեր ծունկը։ Եթե ընդունենք, որ գնդակը սկզբում դիպել էր ծնկին և ապա մտել կրծքի աջ վանդակը, ապա ծնկի ոսկորների ջախջախված լինելու փաստը բացառում է նաև այդ հավանականությունը, մանավանդ, որ գնդակը Գևորգի մարմինը ծակել անցել էր։ Այսինքն՝ անպատասխան են մնում այն հարցերը, թե ինչպե՞ս և ո՞ւմ գնդակից վիրավորվեց Գևորգը։ Գևորգի վերքը մահացու չէր, և ինչպես Ռուբենն էր ասում՝ նման վերքով նա կարող էր 1—2 շաբաթից ոտքի կանգնել։ Գևորգը մեռավ արյունաքամ լինելուց, այլ խոսքով, անուշադրությունից։ Իսկ ինչո՞վ բացատրել այդ անուշադրությունը հայդուկների առաջնորդի նկատմամբ։ Խոսքը սովորակա՞ն անուշադրության, թեժ մարտերի պատճառով օգնելու անհնարինությա՞ն, թե դիտավորության մասին է։ Նորից հարցեր, հարցեր, որոնք, դժբախտաբար, որոշակի պատասխան չունեն։ Ռուբենը գրում է, որ երբ Գևորգին դրեցին եղեգնուտների մեջ, նրան պաշտպանելու ու խնամելու համար թողեցին երկու սուլուխցու, իսկ ըստ Կարո Սասունու, թողեցին մեկ մարդու՝ սու-

լուխցի Միհրանին։ Մեկ այլ հեղինակ գրում է, որ թողեցին երեք հոգու։ Բայց երբ Զայնալի խումբը եղեգնուտ է մտնում, Գևորգի մոտ ոչ ոք չի լինում։ Ո՞ւր կորան (կամ կորավ) այդ պահապանները։ Ըստ ոմանց, նրանք գիշերը գնացել էին գյուղ՝ միջոցներ գտնելու, Գևորգին տեղափոխելու համար, բայց մի քանի ժամ հետո, երբ վերադարձան, Գևորգին իր տեղում չգտան։

Այդ նույն ժամանակ թուրքական ամբողջ բանակը տարածվել էր Սուլուխում, նրան հարող գյուղերում, դաշտերում ու լեռներում, որպեսզի գտնի ոչ միայն Գևորգին, այլև նրա կնոջն ու որդուն։ Սուլուխի խայտառակությունը, սուլթանի ամենատաղանդավոր հրամանատարներից մեկի՝ Քյոսա Բինբաշու կորուստը, համարժեք հատուցում էին պահանջում։ Եվ պատահական չէր, Զայնալ բեկի հեռանալուն պես այնտեղ հայտնվեց թուրքական մի ջոկատ։ Նրանք անմիջապես Գևորգի սպանվելու լուրը հայտնեցին Մուշ և ապա ձայլի վրա դնելով նրա դիակը՝ հաղթական շեփորներ հնչեցնելով, շարժվեցին հյուսիս, թանկարժեք ավարը իրենց տերերին հասցնելու։

Մահվան թափորը դեռ չէր մոտեցել Մուշ քաղաքին, երբ նրան ընդառաջ եկավ զինվորական կայազորի փողային նվագախումբը մի վաշտի ուղեկցությամբ։ Այդ նույն նվագախումբն ու վաշտը մասնակցել էին Քյոսա Բինբաշու թաղմանը։ Նվագախմբի և զինվորական պատվաշարի ուղեկցությամբ Գևորգի աճյունը քաղաք բերվեց և դրվեց հրապարակում։ Երեք օր շարունակ քաղաքի հայ, քուրդ և նաև թուրք ազգաբնակչությունը նրան հրաժեշտ էր տալիս։ Եվ ապա զինվորական բոլոր պատվածեսերով, Շոպենի երաժշտության ուղեկցությամբ նրան թաղեցին Սաչկի դուրանի Կողու թաղի գերեզմանատանը։

Գևորգի համար ասում էին. «Միշտ ժողովրդի մեջ, միշտ ժողովրդին կպած՝ այդ էր նրա մարտական տենչը, նրա գործելակերպը, անսպառ աղբյուրը այն անվախության ու անվեհերության, որոնցով նա ապրեց, փայլեց ու վերջին րոպեին... մարեց։

Ծարոնի ու Սասունի տանջանքն ու մաքառումը իր աչքով տեսավ, լսեց հարազատ երկրի փրկության կանչող աղաղակը, և այդ վիշտն ու տանջանքը նրա հերոսության հնոցը եղան, ոգեշնչողներն ու մղողները այն ձեռնարկումների, որոնցում նա փայլեց որպես զեկավար ու հայդուկապետ, իբրև վրիժառու ու մարդասեր։ Երբեք թիկունք չդարձրեց, երբեք ձեռքը չառավ տա-

բուդի ցուպը, չկտրվեց մայր հողից ու ժողովրդից։ Աչքերը Անդոկն հառած, նա մնաց մեծ՝ իր հավատով ու հավատարմությամբ, իր անսասան կամքով ու պատանեկան սիրով։

Հերոս՝ թշնամու դիմաց, նա հերոս մնաց նաև մահվա՛ն հանդեպ։ Նա հարազատ ժողովրդին կտակեց արհամարհանք մահվան նկատմամբ և տիտանական ուժի դրսևորում վտանգի ու մեծագործությունների կատարման ժամանակ»։

«Ընկավ անմահ հերոս քաջամարտիկ Գևորգ Ջաուշը...— գրեց Ա. Սաֆրաստյանը,— (նա) պահապան հրեշտակ էր Մշո դաշտին։ Բոլոր հարստահարող, կեղեքիչ, բռնարար քուրդերը կսոսկային նրա վրեժխնդրությունից և հայ գյուղացին կապրեր նրա վեհապանծ հովանիին տակ»։ «Տարոնը զրկվեցավ իր առյուծասիրտ զավակի ազատ հմայքի բարիքներից... Նա գնաց «իր սրին շաչող եղբայրների բողոքի ու վշտի բեռը վերցրած»։

Անգլիական դիվանագետ Վ. Հերդը 1907 թ. օգոստոսին գրել է, որ Գևորդը շատերի սիրելին էր։ Գյուղացիները նրա օգնությամբ ազատվում էին բռնություններից ու կեղեքումներից։

«Մի գյուղում բնակիչներն ինձ բացահայտորեն ասացին, որ եթե ֆիդայիները չլինեին, իրենք վաղուց մահմեդականներ կլինեին», որ այնտեղ, որտեղ «ֆիդայիների իշխանությունն ուժեղ էին», որ այնտեղ, որտեղ «ֆիդայիների իշխանությունն ուժեղ է, քրդերը չեն կարողանում թալանել հայկական գյուղերը», իսկ մի շարք «տեղերում հայերի համար հայդուկապետները նույնքան լեգալ էին, որքան քրդական աշիրեթապետները»։ Ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը Գևորգի մասին գրել է. «Այդ ֆիդային իր համարձակ գործունեությամբ ապշեցնում էր բոլորին»։

Հազար ինն հարյուր յոթը թվականին,
Ձքնաղ մայիսի քսան և յոթին
Տոն է բազմաշխատ՝ մանվան Գևորգին,
Սասնո հարազատ մեծանուն քաջին։

Որ գրկեց հողը հայրենի երկրին,
Մոտ քսան տարի ծառայեց ազգին,
Կռվեցավ անվերջ հետը դուշմանին
Միշտ հաղթեց մեկով անոնց հազարին։

Վերջին բարևներս տարեք հայ ազգին,
Վերջին համբույրներս որդուս՝ Վարդգեսին։
Լացին ընկերներ, մոտեցան կարգով,
Համբուրեցին զինք ու անցան խմբով։

Նայեց բոլորտիք. ալ չկար ընկեր,
Ընկած կռուի դաշտ տառապեր անտեր,
Համբուրեց հողը քաղցր հայրենյաց,
Փակեց աչքերը ներքևն աստեղաց։

ՀԱՅԴՈՒԿ

Հայդուկները հագնում էին լայն տաբատներ ու գույնզգույն բաճկոններ՝ կարմիր ու դեղին նախշերով։ Գոտիներին ամրացնում էին կաշվից քառակապ փամփշտակալներ, որոնք ծածկվում էին անթև աբաներով։ Եթե նրանց հրացանները բազմազան էին՝ չախմախլի, մարտին, մոսին և այլն, ապա բոլոր հայդուկները կրում էին միայն սիրիական կեռ դաշույն։ Հայդուկներն իրենց գլուխները ծածկում էին արախչիով կամ գդակով՝ մուգ կարմրավուն փուշիներով ոլորած։ Մեջքներին կապում էին պայուսակ և մի պարան՝ ծառերը մագլցելու համար։ Պայուսակի ներսը բաժանված էր մի քանի մասի։ Մեկում պահվում էին առաջին անհրաժեշտության առարկաներ՝ գուլպա, տրեխ, ոսկրե սանր։ Մյուսում՝ մի քանի բուռ բռված կորեկալյուր և մի կտոր չորթան, երրորդում դրվում էր երեք մետր սպիտակ կտավ՝ պատանք։ Հայդուկը գերեզման չուներ։ Նրա բաղձանքը՝ եթե մեռնել՝ միայն կռվում, թշնամու գնդակից։ Հայդուկին պատանքի համար կտոր տալը հոգեբանական նշանակություն ուներ։

Հայդուկները աշխատում էին հագնվել միատեսակ։ Ավագ ու կրտսեր հայդուկների հագուստներն իրարից չէին տարբերվում։ Գեորգը ևս հագնում էր սովորական հայդուկի հագուստ։ Նա կրծքին ուներ խաչկապ փամփշտակալներ, փամփուշտների երեք ժապավեն էլ մեջքի կողմից էր։ Միայն նա հեռադիտակ ուներ։ Նա, ինչպես նաև մյուս հին հայդուկները՝ պատանք չէր պահում։

Հայդուկը հարստություն և ունեցվածք ոչ միայն չուներ, այլև ունենալու իրավունք էլ չուներ։ Նրա կյանքը նվիրաբերված էր հայրենի ազատությանը և պատկանում էր միայն հայրենիքին։

Հայդուկն անընդհատ շարժման մեջ էր։ Դեռ լույսը չբացված, նա հեռանում էր, և ոչ ոք չգիտք է իմանար, թե որ ուղղությամբ ուր է գնում։ Նրա բնակատեղին քարայրն էր, ձնե տնակը, լեռներն ու կիրճերը, իսկ գյուղերում՝ անասնագոմի կամ մարագի մութ անկյունը։ Գիշերը հայդուկի սեփականությունն էր,

գիշերը հայդուկն էր դրության տերը, իսկ ցերեկը նրա գլխավոր հոգսը թաքնվելն ու չնկատվելն էր։

Նա տեղափոխվում, տեղից տեղ էր անցնում գիշերը, ապավինելով մթությանը։ Գնում էր սարերով, կիրճերով ու ծերպերով, որպեսզի մարդու չհանդիպեր, իսկ երբ լույսը բացվում էր, մտնում էր թաքստոց։ Նա շատ հաճախ մեջքին ունենում էր ծանր բեռ։ Հայդուկների մեծ մասը հմուտ շալակավորներ էին։ Նրանցից շատերը մինչև 100 կիլոգրամ բեռը տեղափոխում էին 20—30 կիլոմետր։ Այս դեպքում ևս նա իր հրացանից ու մյուս հանդերձանքներից ոչ մի րոպե բաժանվելու իրավունք չուներ։ Վտանգը, մահը հայդուկի մշտական ուղեկիցներն էին, և ամեն օր, ամեն ժամ կարող էին կնքել նրա մահկանացուն։ Հայդուկը մահվան դեմ չէր մաքառում։ Նրա կռիվը թշնամու, իր հայրենիքը բռնադատողների դեմ էր։ Նրա օրերն անցնում էին ձյան ու բքի մեջ, անձրևի ու կարկուտի տակ։ Հայդուկը հիշում էր միայն այն օրերը, երբ կուշտ էր եղել։ Սոված օրերը չէր հիշում, որովհետև նրա գոյությունը պայքար էր քաղցի ու ծարավի դեմ։ Նրա կյանքն անցնում էր անքուն ու վտանգներով լեցուն գիշերներով, առանց անկողնու ու տաք սննդի։ Նրա քունը սովորական մարդու քուն չէր, այլ կիսաքուն վիճակ էր, ականջը՝ ձայնի։ Նա նույնիսկ քնած ժամանակ պետք է պատրաստ լիներ վայրկենապես կռվի մեջ մտնելու, հարձակվելու կամ պաշտպանվելու, վտանգի րոպեին մագլցելու լեռներն ի վեր, գրավելու նոր դիրքեր և դրանք՝ անպայման լեռների ամենաբարձր կետերում։ Նա մի ձեռքով կռվում էր, մյուսով ճանկռում հողը և ծածկում սպանված ընկերոջ դիակը։ Նա սգալու, կորուստը ողբալու ժամանակ չուներ։ Սակայն սպանված հայդուկին թաղելը նրա պարտքն էր ու սուրբ պարտականությունը։

Անընդհատ ու միշտ զգույշ։ Չխոսել ու չհազալ, քայլել լուռ, քանզի նույնիսկ սեփական ձայնը մատնիչ էր։ Նա անտառում ծառերին, նույնիսկ տերևներին դիպչելու իրավունք չուներ, որովհետև մատնիչ էին նաև տերևների խշշոցը, ճյուղերի շարժումը։ Նա շատ հաճախ հարկադրված էր լինում զսպելու հագն ու փռշտոցը, ծխելու անզուսպ ցանկությունը, դրանք նույնպես մատնիչներ էին։ Նա՝ այդ ուժեղ ու անվախ մարդը, հարկադրված թաքնվում էր բոլորից, հայից ու քրդից, բոլոր կենդանի էակներից, որովհետև դրանք բոլորը իրենց ուշադրությամբ կարող էին օգնել թշնամուն նրա տեղը հայտնաբերելու։

Եվ այսպես՝ ամեն օր, ամեն ժամ։ Եվ այսպես՝ ոչ թե մեկ, ոչ թե երկու, այլ տասնյակ տարիներ։ Ավելի ճիշտ, այնքան, քանի դեռ հայդուկը ապրում ու մաքառում էր։ Այնքան ժամանակ, քանի դեռ նա հայդուկ էր, քանի դեռ թշնամու գնդակը չէր խոցել նրան։ Տեղաշարժերի ժամանակ, անկախ դրանց տևողությունից, 10—15 րոպեից ավելի հանգստանալ չէր կարելի։ Ճանապարհ ընկնելուց առաջ մեկ առ մեկ ստուգում էին, թե բոլո՞րն էին ներկա, քնի կամ հոգնածության պատճառով ետ մնացողներ չկայի՞ն։ Պետք էր միշտ աչալուրջ լինել, որ եթե թշնամի հանդիպեր, նրա վրա առաջինը հայդուկը կրակեր ու խուճապի մատներ։ Յուրաքանչյուր հայդուկ պետք է կարողանար կռվել ու հաղթել 10—20 թշնամու։

Եթե ռազմական գործողությունների կարիք չկար, հայդուկների մի մասին թույլատրում էին գնալ իրենց գյուղերը, կազմակերպել պաշտպանական ջոկատներ։

Սկզբնական շրջանում հայդուկ դառնալու հատուկ ծիսակատարություն գոյություն չուներ։ Ժամանակի ընթացքում ձևավորվեց մի շատ պարզ, բայց իր իմաստով դաժան ծիսակատարություն։ Հայդուկ դառնալու ցանկություն ունեցողին նախ տեվական ժամանակ օժանդակ աշխատանքներ էին հանձնարարում և ստուգում։ Ապա մարտական բնույթի հանձնարարություններ էին տալիս ու կրկին ստուգում։ Որից հետո մեկ կամ մի քանի հայդուկ պետք է նրան երաշխավորեին՝ իրենց վրա վերցնելով հայդուկ ընդունվողի վարքագծի պատասխանատվությունը։ Այս բոլորից հետո աղ ու հացի կողքին դնում էին հրացան ու դաշույն, որոնց վրա բոլորի ներկայությամբ ընդունվողը երդում էր տալիս հավատարիմ մնալ հայդուկությանը, նրա կանոններին, ժողովրդի ազատության գործին։ Եթե նա անհրաժեշտ հագուստ, իրեր ու զենք չուներ, հանդիսավոր պայմաններում դրանք հանձնում էին նրան։

Հայդուկների ճնշող մեծամասնությունը աղքատ գյուղացիներ էին, որոնք հարստահարությունների պատճառով հեռացել էին տնից-տեղից, իրենց նվիրել ազգային ազատագրության և սոցիալական ճնշման դեմ պայքարին։

Հայդուկությունը էությամբ ուղղված լինելով թուրքական յաթաղանի եղեռնի ու քրդական ցեղապետերի թալանի դեմ՝ միաժամանակ կրում էր դասակարգային բնույթ, որովհետև հայդուկային շարժման հիմքն ու գոյության գլխավոր պայմանը

գյուղացիական լայն զանգվածներին աջակցություն ու օգնություն ցույց տալն էր։ Առանց այդ օգնության ու աջակցության հայդուկային շարժում գոյություն ունենալ չէր կարող։ Այդ գյուղացիներն էին համալրում հայդուկների շարքերը, գյուղացիների միջոցով էին հայդուկները զինվում, գյուղացիներն էին հայդուկներին կերակրում, նրանց անհրաժեշտ տեղեկություններ հասցնում, հայդուկներին թաքցնում, հարկ եղած դեպքում նրանց հետ կողք կողքի կռվում։ Գյուղերում ստեղծված ինքնապաշտպանական ջոկատները միաժամանակ հայդուկների հենակետերն էին, նրանց պահեստային ուժերը, որոնք շատ հաճախ վճռական դեր էին խաղում թուրքական իշխանությունների ու քուրդ ցեղապետների դեմ մղվող կռիվներում։

Հայդուկությունն ու ինքնապաշտպանությունն խմբերը Սասունի հայ գյուղացիության ազատագրական պայքարի միջոցներն էին, այդ պայքարի ձևերը։ Հարկ է նշել, որ այդ պայքարի կենսունակությունը պայմանավորված էր ոչ միայն գեղջուկ տղամարդկանց, այլև կանանց ու երեխաների ակտիվ վերաբերմունքով ու օգնությամբ, բազմաթիվ օրինակներ կան, երբ կանանց ու պատանիների զգոնության ու խիզախության շնորհիվ հայդուկները փրկվել են ոչնչացումից, շահել են ճակատամարտը, խուսափել հետապնդումից, իսկ վիրավորները նրանցից նաև խնամք ու բժշկական օգնություն են ստացել, ապաքինվել։

Գևորգին հաջողվեց 1905—1906 թվականների ընթացքում հիմնականում ավարտել ինքնապաշտպանական պայքարի մեջ ընդգրկված գյուղացիական խմբերի կազմակերպչական ձևավորումը։ Այն մոտավորապես ներկայացնում էր հետևյալ պատկերը։ Կար հայդուկների կենտրոնական խումբ, որի գործունեության շրջանակների մեջ էր մտնում ամբողջ երկրամասը՝ Սասունն ու Տարոնը։ Այս խմբի ղեկավարը՝ Գևորգը, միաժամանակ հայդուկային մյուս խմբերի, ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարն էր։ Առանձին դեպքերում, հատկապես կարևոր նշանակություն ունեցող հարցեր քննարկելու համար, խորհրդակցության էին կանչում հայդուկային խմբերի ղեկավարներին։

Շարժման կազմակերպչական ու ռազմական հիմքը գյուղում գործող ինքնապաշտպանական ջոկատներն էին։ Դրանց մեջ ընդգրկված էին տվյալ գյուղի խիզախ, նվիրված և անձնազոհ գյուղացիները, հատկապես երիտասարդությունը։ Ջոկատի ան-

դամները, որպես կանոն, ընդունվում էին՝ հաշվի առնելով նրա բոլոր անդամների կարծիքը։ Ընդունվողը պետք է ունենար հրացան և փամփուշտ։ Ջոկատն ուներ իր թաքստոցը և գաղտնի զինապահեստը։ Գյուղում ջոկատը իրականացնում էր ամենօրյա հերթապահություն։ Նրա գլխավոր նպատակը հարձակումներից ու թալանից գյուղը պաշտպանելն էր։

Հայդուկային խմբի անդամների անձնական հակումներից ելնելով նրանց միջև կատարվում էր աշխատանքի բաժանում։ Օրինակ, մշեցի Տիգրանը արտակարգ դիմացկուն մարդ էր։ Առաքելոց վանքի կռվի ժամանակ բանակցությունների սենյակի մուտքի մոտ նա էր որպես պահապան կանգնած և նա էր, որ մերկ ձեռքերով կրակը բռնած՝ վառեց թուրք պատվիրակների ծխախոտը, սարսափի մատնելով նրանց։

Կարկուտ Թադեն մասնագիտացել էր հրացանի գնդակների պարունակությունը ստուգելու գործում, այսինքն ստուգում էր՝ գնդակների մեջ վառոդ կա՞, թե ոչ։ Հասանոն Գևորգի թիկնապահն էր։ Բարսեղը Գևորգի խմբի ձիապանն էր։ Նա միաժամանակ հսկում էր, որ հայդուկները հմտորեն պահպանեն անվտանգության կանոնները՝ առանց քողարկելու կրակ չվառեն և ծխելիս թաքցնեն կամ ձեռնափայտի, կամ ուղղակի ափի մեջ։ Ծխախոտի մնացորդները գետնին չգցեին, այսինքն՝ հետքեր չթողնեն։ Սուրխաչ Հազարիկը տեղաշարժերի ժամանակ հայդուկների ավելորդ բեռներն էր շալակում և հսկում, որ լուսնկա գիշերներին հրացանները ուսներին չդնեն և փայտի կոթերը պահեն լուսնի կողմը, որ դրանք չփայլեն։ Տալվորիկցի Կամե Գասպարը զբաղվում էր հայդուկների համար դրամական միջոցներ հայթայթելով։ Ալադին Միսակը հայդուկների երգիչն էր և իր հիանալի ձայնով փոքր դադարների ժամանակ մի ակնթարթ հայդուկներին կտրում էր դաժան իրականությունից ու տանում մարդկային հույզերի աշխարհը։ Սեյտո Պողոսը հայդուկների կնիքի ու փաստաթղթերի պատասխանատուն էր։ Հայդուկների խումբն ուներ նաև իր շալակավորները, խարույկ վառելու համար փայտ և ածուխ հայթայթողները, կապավորները։

Հայդուկային շարժումը, իր մեջ միավորելով գյուղացիության ձգտումը՝ ոչնչացնել ազգային և դասակարգային ճնշումները, իր բնույթով առաջադիմական-դեմոկրատական շարժում էր։ Դրա համար էլ այդ շարժումը վայելում էր ամբողջ հայ ժողովրդի համակրանքն ու աջակցությունը։ 1903 թվականին բոլշևիկյան «Պրոլետարիատի կռիվ» թերթը գրեց. «Ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը՝ մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»։

1 Миллер А.. Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 48
2 Նույն տեղը. էջ 50.
3 ՀԽՍՀ ՄՊԿԱ ֆ—131, ց—1, գ—48
4 Ն. տ. գ—52.
5 «Երկրի ձայն» շաբաթաթերթ, 1907 թ., № 10.
6 Маркс К., Энгельс Ф., соч. т. 9, 2-ое изд. с. 25
7 Миллер А. Актуальные проблемы новой и новейшей истории, с. 20
8 «Հնչակ», 1906 թ., դեկտեմբեր.
9 «Դրոշակ», 1900 թ., սեպտեմբեր.
10 ЦГИАЛ, ф. 408, оп. 77, д. 270, л. 5—6
11 Ն. տ.
12 Ն. տ.
13 «Հնչակ» 1908 թ., № 4—5.
14 Ն. տ. 1902 թ., մայիս.
15 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—53.
16 «Դրոշակ», 1900 թ., ապրիլ
17 Ն. տ. 1899 թ., փետրվար.
18 «Դրոշակ», 1899 թ., դեկտեմբեր.
19 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—51.
20 Ն. տ.
21 Ն. տ.
22 «Դրոշակ», 1901 թ., № 5.
23 Ն. տ.
24 Ն. տ. 1901 թ., № 6
25 Ն. տ.
26 Ն. տ.
27 Ն. տ. № 8
28 Ն. տ. № 4.
29 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—48.
30 Ն. տ. գ—52.
31 «Դրոշակ», 1903 թ., № 4.
32 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—55.
33 «Հնչակ», 1902 թ., հունիս
34 Ն. տ.
35 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58
36 Ն. տ. գ—59.
37 Ն. տ. գ—55.
38 Ն. տ.
39 «Դրոշակ», 1899 թ., սեպտեմբեր
40 Ն. տ. հունիս.
41 Ն. տ. օգոստոս.
42 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ., էջ 62—63.
43 ՀԽՍՀ ՀՄՊԱ, ֆ—131, ց—1, գ—46
44 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 63.
45 Ն. տ.
46 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—46.
47 «Դրոշակ», 1907 թ., № 9.
48 Ն. տ. 1901 թ., դեկտեմբեր
49 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 61.
50 Ն. տ. էջ 66—67.
51 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—46
52 Ն. տ. ֆ—131, ց—1, գ—11,

53 Ն. տ. գ—45.
54 Ն. տ. գ—48.
55 Ն. տ. գ—50.
56 «Հնչակ», 1903 թ., փետրվար.
57 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—47.
58 Ն. տ. գ—53.
59 «Դրոշակ», 1903 թ., № 8.
60 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—57.
61 Ն. տ.
62 Ն. տ.
63 Ն. տ. գ—49.
64 «Դրոշակ», 1903 թ., № 3
65 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—50.
66 Ն. տ.
67 «Դրոշակ», 1903 թ., № 8.
68 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
69 Ն. տ.
70 «Զարթոնք», 1971 թ., օգոստոսի 11.
71 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—53.
72 Ն. տ. գ—58.
73 «Զարթոնք», 1971 թ., օգոստոսի 11
74 ՌԱՔՍ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1904 թ., գ—2672, թ. 8.
75 «Դրոշակ», 1904 թ., № 3.
76 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
77 Ավո, Գևորգ Չաուշ, Բեյրութ, 1972 թ., էջ 177—178.
78 «Դրոշակ», 1904 թ., № 2.
79 Ն. տ.
80 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
81 Ն. տ.
82 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 70.
83 «Դրոշակ», 1904 թ., № 13.
84 Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բեյրութ, 1950 թ., էջ 305.
85 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թուղթ 237 բ, վավ. 18, թ—2.
86 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ., էջ 71.
87 «Զարթոնք», 12 օգոստոսի, 1971 թ.
88 Ն. տ.
89 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
90 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
91 Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագրեց Աղան Տարոնցին, հեղինակներ՝ Տիգրան և Միսակ Բդեյաններ, Կահիրե, 1962 թ., էջ 163
92 «Դրոշակ», 1904 թ., № 2
93 «Դրոշակ», 1903 թ., № 6
94 Ն. տ. օգոստոս
95 Ն. տ. 1900 թ., դեկտեմբեր
96 «Հնչակ», 1904 թ., №4—5
97 «Դրոշակ», 1903 թ., № 3
98 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—57.
99 «Զարթոնք», 11 օգոստոսի, 1971 թ.
100 Ն. տ. 12 օգոստոսի 1971 թ.
101 Ն. տ. 11 օգոստոսի, 1971 թ.
102 Վ. Փափազյան, Իմ հուշերը, էջ 300
103 Ն. տ. էջ 298.
104 Ն. տ.
105 Ն. տ. էջ 298.
106 Ն. տ. էջ 210.
107 Галоян Г. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922 гг. Е., 1969, с. 58
108 Ավո, Գևորգ Չաուշ, Բեյրութ, 1972 թ., էջ 189.
109 «Դրոշակ», 1907 թ., № 9
110 Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, դրեց Արսեն Մուրամբյան, Կ. Պոլիս, 1920 թ., էջ 85
111 «Հնչակ», 1904 թ., № 3

112 Հ. Պողոսյան, Սասունի պատմություն, Ե. 1985 թ., էջ 257
113 АВПР, ф. Посольство Константинополя» (1904), д. 2672, л. 13
114 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—64.
115 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 195—196.
116 «Հնչակ», 1904 թ., № 3.
117 Pour l'Arménie et la Macédoine, Paris, 1904, p. XXI—XXII
118 Sassoun et les atrocités hamidiennes, interpellation, Genève. 1904, p. 28
119 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58
120 Sassoun et les atrocités. p. 28
121 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
122 Ն. տ.
123 Ն. տ.
124 Ն. տ.
125 Սասունի և Մուշի կռիվները, ժնև, 1904 թ., էջ 11.
126 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 7.
127 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 199.
128 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
129 Կ. Սասունի, Սարերի ասլանը, Բեյրութ, 1956 թ., էջ 384—389.
130 «Դրոշակ», 1904 թ., № 2.
131 Տեղակալ Մ. Ավետեան, Հուշամատյան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954 թ., էջ 128.
132 Ք. Միքայելյան, Հեղափոխական մտքեր, ժնև, 1906 թ., էջ 123.
133 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ—Բ, Փարիզ, 1935 թ., էջ 45.
134 «Դրոշակ», 1907 թ., № 10.
135 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 199.
136 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—65
137 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 16.
138 Ն. տ. թ. 13—14.
139 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
140 Ն. տ.
141 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 22.
142 Արսեն Մուրամբյան, Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920 թ., էջ 91.
143 Կ. Սասունի, Սարերի ասլանը, էջ 395
144 Ն. տ.
145 «Հնչակ», 1904 թ., 4—5
146 Ն. տ.
147 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
148 Ն. տ.
149 ЦГВИА, ф. 450. оп. 1, д. 142 (1906), лл. 11—12
150 Անդրանիկի կյանքը... էջ 79.
151 Ն. տ.
152 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—66.
153 ЦГВИА, ф. 450, оп. 1, д. 142 (1906), л. 12
154 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—66
155 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59
156 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
157 Ն. տ.
158 Հարազատ պատմություն Տարոնոյ... էջ 151.
159 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—65.
160 Ն. տ.
161 Ն. տ.
162 Կ. Սասունի, Պատմություն Տարոն աշխարհի, Բեյրութ, 1957 թ. էջ 679—680
163 Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, էջ 264.
164 Անդրանիկի կյանքը... էջ 88
165 Sassoun et les atrocités... p. 27-32.
166 «Հնչակ», 1904 թ., հունիս.
167 Sassoun et les atrocités... p. 31.
168 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59
169 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 53—54 թ. 54—55.

170 «Հնչակ», 1904 թ. № 7.
171 «Դրոշակ», 1907 թ., № 7.
172 «Հնչակ», 1904 թ. հունիս.
173 Sassoun et les atrocités... p. 32.
174 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 217—218.
175 Ն. տ.
176 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
177 Կ. Սասունի, Սարերի ասլանը, էջ 447.
178 Ն. տ. էջ 458.
179 Ն. տ. էջ 454.
180 Ն. տ. էջ 447.
181 Անդրանիկի կյանքը... էջ 101.
182 Ն. տ. էջ 102.
183 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 221—223.
184 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—68.
185 Ն. տ.
186 Սասունի և Մուշի կռիվները... էջ 61.
187 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—69
188 Անդրանիկի կյանքը... էջ 108.
189 Ն. տ.
190 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 236.
191 «Դրոշակ» 1904 թ. № 11.
192 Ն. տ. 1907 թ. № 10.
193 Ն. տ.
194 Հ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե. 1986 թ., էջ 170.
195 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
196 «Հնչակ», 1904 թ. № 7.
197 «Դրոշակ», 1904 թ. № 4—5.
198 Ն. տ.
199 Ն. տ.
200 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—60
201 Ն. տ. գ—62.
202 «Հնչակ», 1904 թ. № 6.
203 Ն. տ.
204 Ն. տ.
205 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ. 131, ց. 1, գ. 62.
206 Ն. տ. գ. 61.
207 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 243—244.
208 Փափազյան Վ. Իմ հուշերը, հ. 1, Բեյրութ, 1950, էջ 146.
1950, էջ 146.
209 Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976 թ., էջ 209.
210 «Հնչակ», 1906 թ., № 5.
211 Ն. տ. № 3.
212 Ն. տ. № 4.
213 Ն. տ., № 8.
214 Ա. Թերզիպաշյան, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 103.
215 Саркисян Е. Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Е, 1972, с. 215
216 Голобородько, Турция, М., 1912, с. 248
217 «Դրոշակ», 1904 թ., № 12
218 Ն. տ.
219 Ն. տ.
220 Ն. տ.
221 Ն. տ.
222 «Հնչակ», 1906 թ. № 12.
223 «Դրոշակ», 1907 թ., № 3.
224 «Հնչակ», 1905 թ., № 8.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 168—179
2. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 117—119, 239
3. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 20—26, 35
4. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 10, стр. 83, 167
5. Ленин, соч. т. 16, стр. 187
6. Ленин, соч. т. 24, стр. 119—121
7. Ленин, соч. т. 25, стр. 85—86
8. Լենին, Երկ. հ. 28, էջ 243.
9. ՄԷԼ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, 45, 51 ֆոնդեր.
10. ՀԽՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, 408.
11. ՀԽՍՀ Մամուլի պետական կենտրոնական արխիվ, ֆ. 131.
12. Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թուղթ. 237 բ.
13. ЦГИАЛ, ф. 408, оп. 77, к. 270
14. ՌԱՔՍ, Ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն» 1904 թ., գ. 2672.
15. ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 310
16. ЦГВНА, ф. 450, д. 1421 (1906)
17. Երկրի ձայն, 1907 թ. № 10.
18. Զարթոնք. 11, 12 օգոստոսի 1971 թ.
19. Արմենիա, 11-ը նոյեմբերի 1937 թ.
20. Մշակ, 1876—1900 թթ.
21. Նոր կյանք, 1899—1902 թթ.
22. Դրոշակ, 1890. 1908 թթ.
23. Հնչակ, 1887—1914 թթ.
24. Ձայն հայրենյանց, 1908 թ.
25. Մուրճ—1894—1906 թթ.
26. Հուսաբեր 1-ը օգոստոսի 1932 թ.
27. «Հայրենիք» ամսագիր, 1924—1944 թթ.
28. Երկրի ձայն, 1906 № 10
29 Փորձ, 1879 № 7—8
30. Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932, էջ 62—63. 66, 67, 70, 71, 73, 77, 79, 86, 88, 101—102, 103, 108.
31. Ավո, Գևորգ Չաուշ, Պեյրութ, 1972, էջ 177—178, 185—189, 195—196, 221, 223, 236—238, 242—243.
32. Ավո, Հրայր Դժոխք, Պեյրութ, 1985, էջ 10—13, 18, 23, 38, 43, 106, 135, 138

33. Աղայան Ս., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե. 1976. էջ 111. 209.
34. Bayur I. Türk Inkilâb Tarihi, cilf I, Ankara, 1963, s. 69, 371.
35. Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 13, 19
36. Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Е., 1969, стр. 58
37. Геноцид армян в османской империи, Е., 1982, стр. 77, 170, 38, 166
38. Голобородько И., Старая и новая Турция, М., 1908, стр. 220—222
39. Голобородько И., Турция, М., 1912, с. 248
40. Գրական դեմքեր, Ե, 1988, էջ 57, 77.
41. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 121—125.
42. Դիվան Հ. 3. Դաշնակցություն, հ. 1, Պոստըն, 1934, էջ 191, 210, 328, 336, 339.
43. Եազճեան Գ., Աբդուլ Համիդ 2-րդ Կարմիր սուլթան, Պեյրութ, 1980, էջ 846—853.
44. Երիցյանց Մ., Զորավար Սմբատի հուշերը, հ—Ա, 1900—1914, Փարիզ, 1936, էջ 153, 174, 190, 192.
45. Զոր. Անդրանիկ, Առաքելոց վանքի կռիվը, Ֆրեզնո, 1926, էջ 9, 11, 14, 17, 22.
46. Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, գրեց Սրսեն Մուրամբյան, Կ. Պոլիս, 1920, էջ 85.
47. Инджикян О., Буржуазия Османской империи, Е., 1977, с. 58, 76, 84
48. Թասոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Ե, 1980, էջ 112, 142, 148.
49. Թերզիպաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ 1942, էջ 92, 103.
50. Լալայան, Գ., Հեղափոխական դեմքեր, Գահիրե, 1945, էջ 286, 296, 297, 299.
51. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 41—42, 74, 81, 117, 120.
52. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 39, 45.
53. Karal E. Osmanli Tarihi, cilf VIII, Ankara, 1962, s.s. 69, 371.
54. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 186, 235.
55. Համբարյան Ա., Ազգային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Ե, 1965, էջ 28.
56. Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագրեց Աղան Տարոնցին, հեղինակներ Տիգրան և Միսակ Բդեյաններ, Կահիրե, 1962, էջ 151, 236.
57. Հնչակյան ս. դ. կուսակցության պատմություն, Բեյրութ, 1962, էջ 30—36, 101, 108, 146.
58. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 450.
59. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ինֆորմացիոն բյուլետեն՝ 1983 թ. № 3, էջ 5, 1984 թ., № 7, էջ 38, 39, 44, 50.
1984 թ., Օսմանյան դրությունը և հայ մամուլը 1838—1896 թթ. էջ 12.
60. Ղազարյան Հ., Հարություն Սվաճյան, Ե. 1986, էջ 157, 162.
61. Mardin S. Jön Türklerin Siyasi Fikirleri, 1895—1908, Ankara, s. 53.

62. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Ե. 1968, էջ 130, 133, 135, 137, 147, 169.
63. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 15-րդ, Ե. 1989, էջ 143.
64. Миллер А., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 20, 48, 51
65. Միքայելյան Ք. Հեղափոխական մտքեր, ԺՆև, 1906, էջ 133.
66. Nasibian A. Britain and the Armenian Questions 1915—1923. London. 1985, pp. 21, 27, 33.
67. Национальный вопрос в освободившихся странах Востока, М., 1986, с. 47.
68. Նեափ Մ., Հայ եղեռնը. իմ վկայություններս և տոքթ. Ա. Նազգաշեան, Այաշի քանտը, Պեյրութ, 1978, էջ 31, 39, 45, 57, 63, 69, 75։
69. Զորմիսեան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Բ. 1878—1908, Պեյրութ, 1974, էջ 369.
70. Չիլինկարեան Եղ., Հիշատակարաններ Բաղեշի առաջնորդունես, Երուսաղեմ, 1925, էջ 26—29։
71. Петросян Ю., Младотурецкое движение, М., 1971, с. 138, 268
72. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 54, 62—69, 133, 136, 175, 282, 296
73. Պողոսյան Հ., Սասունի պատմություն, Ե., 1985, էջ 130, 257, 284.
74. Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988, 243—244.
75. Pour l'Arménie la Macedoine. Paris, 1904, p. XXI—XXII.
76. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, Հ. Դ. Լոս-Անճելըս, 1951, էջ 129, 186, 298—299.
77. Ռուբեն, Հայ հեղափոխականի մի յիշատակները, Հ. Դ. Լոս-Անճելըս, 1951, էջ 41, 73, 86.
78. Սապահ-Գուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 42, 57.
79. Սապահ-Գուլյան Ս., Պատասխանատուները, Ֆրավիտենս, 1916, էջ 97, 102, 141, 153, 174.
80. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական յարաբերությունները (ԺԹ դարէն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 18, 21.
81. Սասունի Կ., Սարերի ասլանը, Բեյրութ, 1966, էջ 372, 384, 389, 395, 447, 454, 458.
82. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 673, 679—680, 682.
83. Սասունի և Մուշի կռիվները, ԺՆև, 1904, էջ 11, 14, 23, 41.
84. Sassoun et les atrocités hamidiennes, interpellation, Genève, 1904, pp. 27—32.
85. Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и держав в последней четверти XIX и начале XX вв., Е., 1972, с. 215
86. Սերոբ Վարդանյան Աղբյուր, ԺԸնեվ, 1907, էջ 7, 8, 12, 14.

87 Սրճեան Հ., Թուրք-ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը, Ե, 1986, էջ 170.
88. Սիրվարդ, Մեծ Մուրաղ, 1955, էջ 32, 35.
89. Վարանդեան Մ., Հ. 3. Դաշնակցութեան պատմություն, հ. 1, Պոսթըն, 1931, էջ 192, 206, 261, 304.
90. Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրման հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե, 1967, էջ 287, 294.
91. Tahsin Pasha, Abdülhamit, Iildiz Hatizalari, Istambul, 1931, c. 131.
92. Տարոնցի Գլակ, Ապստամբ Սասուն, ժնև, 1903, էջ 4—8.
93. Տեղակալ Մ. Ավետիսեան, Հուշամատեան և զոր. Անդրանիկ,Փարիզ, 1954, էջ 128.
94. Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. 1, Բեյրութ, 1950, էջ 206—208, 210, 300, 301, 305.
95. Յեղափոխական ալպոմ, 1972, հ. 4, էջ 16—24.
96. Հուշապատում Հ. 3. Դաշնակցութեան, Բոստոն, 1950, էջ 367, 383, 391.
97 Цовикян Х., Влияние русской революции 1905 года на революционное движение в Турции, Советское востоковедение, т. III, М. — Л., 1945, с. 15—17.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն . . . 3

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Մրկթենք . . . 55
Պատանեկություն . . . 60
Զուլումի տարիներ . . . 65
Արաբո . . . 72
Ճանապարհ, որ դեպի հավերժություն է տանում . . . 82
Մարտական մկրտություն . . . 88
Հերոսամարտ . . . 106
1894 թիվ. Արյունոտ տարի . . . 121
Կոտորածներ . . . 143
Աղբյուր Սերոբ . . . 174

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Դարասկիզբ . . . 205
Նախապատրաստվում է նոր կոտորած . . . 221
Անդրանիկ . . . 227
Պարտիզանական կռիվներ . . . 242
Հարձակումը նախապատրաստվում է . . . 249
Օղակը նեղանում է . . . 261
Գոյամարտի նախօրյակին . . . 270
Սկսվեց... . . . 285
Գոյամարտ . . . 305
Հրայր . . . 317
Գելիեգուզան . . . 328
Դաշտում . . . 340
Հեռանում են Սասունից . . . 348
Արձագանքներ . . . 363
Բնույթն ու նշանակությունը . . . 369
Արյան դեմ՝ արյուն . . . 379
Հայն ու քուրդը հաշտ ու խաղաղ պիտի ապրեն . . . 385
Հարսանիք . . . 391
Ռուբեն . . . 403
Մակարը զինաթափ . . . 410
«Գևորգը խելոռել է...» . . . 415
Պարում են կռվելով և կռվում՝ պարելով . . . 421
Սուլուխ . . . 426
Հայդուկ . . . 434
Գրականություն . . . 444

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Ստեփան Կարապետի Պողոսյան
Կարո Ստեփանի Պողոսյան

ԻՆՁ ԲԱՀ ՏՎԵՔ...

(ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ)
Փաստագրական վեպ

Литературно-художественное издание

Степан Карапетович Погосян
Каро Степанович Погосян
ДАЙТЕ МНЕ ЛОПАТУ...
(Геворк Чауш)
Документальная повесть

(На армянском языке)
Издательство «NB — пресс»
Ереван 1990

Հրատ. խմբագիր՝ Հ. Թ. Կարճիկյան
Նկարիչ՝ Վ. Ս. Աբրահամյան
Գեղ. և տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Կ. Կ. Հակոբյան

Հանձնված է շարվածքի 25. 06. 90 թ.։ Ստորագրված է տպագրության 12. 07. 90 թ.։ Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 26,04 պայմ. տպ. մամ., 24,47 հրատ. մամ. (ներդիր 24 թ.)։ Տպաքանակ՝ 101000։ (II թողարկում 50001—101000)։ Պատվեր 1։ Գինը 6 ռ.։

ԽՍՀՄ սոցիալ հայտնագործությունների ֆոնդ. Հայկական հանրապետական մասնաճյուղ մամուլի գործակալություն «ՆԲ—Պրես» հրատարակչություն, Երևան, Աճառյան, 40։

Фонд социальных изобретений СССР. Армянский Республиканский филиал агентство печати издательство «NB—пресс», Ереван, Ачаряна, 40.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան— 10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10, ул. Алавердяна, 65.

Ս.Կ. ՊՈՂՈՍՅԱՆ Կ.Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՆՁ ԲԱՀ ՏԱՆՔ...

ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ

ԵՐԵՎԱՆ
«ՈՒԲ—ՊՐԵՍ»
1990

ՍԳԴ 63.3 (22) 52
Պ 797

Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս.
Պ 797 Ինձ բահ տվեք... (Գևորգ Չաուշ)։ Փաստագրական վեպ։ Եր. «NB—Պրես», 1990, 448 էջ։ 24 թ. նկ.։

Գիրքը նվիրված է Սասունի և Տարոնի հայդուկային շարժմանը և այդ շարժման ամենափայլուն դեմքերից մեկին՝ Գևորգ Չաուշին (Գևորգ Ղազարյան)։ Փաստագրական հարուստ նյութի հիման վրա հեղինակները բացահայտում են ոչ միայն Գևորգ Չաուշի կյանքի ու գործունեության, այլև 19-րդ դարի վերջի և մեր դարասկզբի հայ ազատագրական շարժման մի շարք առանցքային հարցեր։

Պ 0503020913
715 (01)—90

ISBN 5—8079—0148—7

© «NB—Պրես» հրատարակչություն, ձևավորման համար, 1990

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի երկրորդ կեսը թևակոխեց որպես քայքայված և սոցիալ-քաղաքական տևական ճգնաժամի հետևանքով բզկտված մի երկիր, որը աշխարհի լայնածավալ տերություններից մեկը լինելով հանդերձ, միջազգային ասպարեզում ինքնուրույնությունից զուրկ, ռազմա-ֆեոդալական հետամնաց կացութաձև որդեգրած պետություն էր՝ միջազգային քաղաքականության իրարամերժ հոսանքների միջև տարուբերվող մի անկշիռ երևույթ։ Եվ այնուամենայնիվ, օսմանյան կայսրությունը համարվում էր անկախ պետություն։ Սուլթանն անահմանափակ իրավունքներ ուներ, իսկ որպես խալիֆ՝ նաև հավակնում էր ամբողջ աշխարհի մահմեդականության հոգևոր տիրակալի մենաշնորհին։ Սակայն այդ ամենը երևութական էր, իրականում օսմանյան կայսրությունը «հիվանդ մարդ» էր, որի «բժշկման» համար մրցակցում էին խոշոր տերությունները։ Երկրի արտաքին առևտուրը, ըստ էության, տնօրինում էին օտարերկրյա գործակալությունները։ Նրանց ձեռքում էին Թուրքիայի երկաթուղին, նավահանգիստների տեխնիկական վերազինումը, հանքերը, քաղաքային տնտեսությունը, ֆաբրիկաների ու գործարանների մեծ մասը։

1854—74 թթ. Թուրքիան արտասահմանից փոխառություն էր ստացել 4552 միլիոն ֆրանկ, որի միայն տոկոսները ամեն տարի կազմում էին 75 միլիոն։ Տարեցտարի մեծանում էր պետական բյուջեի դեֆիցիտը, որը, եթե

1876 թվին 100 միլիոն էր, ապա ռուս-թուրքական պատերազմից հետո տասնապատկվեց։

Վ. Ի. Լենինը, ի դեմս Թուրքիայի, տեսնում էր Ասիայի այն երկրներից մեկը, որին իմպերիալիստները հատուկ եռանդով ծվատում էին[1]։

Լենինյան այս միտքը չպետք է բառացի հասկանալ, որովհետև 19-րդ դարի երկրորդ կեսից ստեղծվեց մի վիճակ, երբ կայսրության տիրապետող խավերի և արևմտյան մեծ տերությունների շահերը համընկան, և երկու կողմերի ընդհանուր նպատակը դարձավ օսմանյան կայսրության ամբողջականության ու այնտեղ տիրող սոցիալ-քաղաքական և ազգային հարաբերությունների պահպանումը։

Այդպես ձևավորվեց տխրահռչակ ստատուս քվոյի քաղաքականությունը։

Եվրոպայի խոշոր մասնագետներից մեկը՝ Վիլյամ Պիտտը գրեց. «Թուրքիայի պետության գոյությունն անհրաժեշտ է եվրոպական հավասարակշռության համար»։ Իսկ Ռոզենբուրգը «Ընդհանուր զինաթափությունը և Թուրքիայի բաժանումը» գրքույկում պահանջում էր Թուրքիան բաժանել, որովհետև այն վաղուց արդեն ցույց էր տվել իր կատարյալ անընդունակությունը առաջադիմելու և նույնիսկ իր գոյությունը պահպանելու գործում[2]։

Այդ իրողությունը նկատել էր նաև Մարքսը. «Միայն այժմ, երբ օսմանյան կայսրությանը հասցրին հիմնավոր խարխլման, գտնում են, որ կարելի է թողնել փլուզման եզրին գտնվող այդ պետությունը՝ եվրոպական հավասարակշռությունը պահպանելու պատրվակով...»[3]։

«Եվրոպական տերությունները միշտ Թուրքիային թողնում էին կատարել իր արյունալի գործը, մինչև որ գալիս էր պահը, երբ հարմար էին գտնում միջամտության համար։ Քաջ գիտենալով, որ իրենք պետք է գժտվեն օսմանյան հողի բաժանման խնդրում, մեծ տերությունները Թուրքիային թույլ էին տալիս արյան մեջ խեղդել ամեն բողոքողի կամ ապստամբական գործողություն, որն առաջ էր գալիս քրիստոնյա ժողովրդի զայրացած գիտակցությունից և, այդպիսով, ձգտում էին թուրքի ձեռքով՝ 1. վերջ տալ այն տարրերի գոյությանը, որոնք իրենց գործերով կարող են մի օր օսմանյան հողի ժառանգորդները դառնալ, ժառանգություն, որը Եվրոպան էր ցանկանում յուրացնել... 2. որքան սուղ գնով էլ լինի՝ պահպանել օսմանյան կայսրությունն այնքան ժամանակ, մինչև պետություններից մեկը կամ մյուսը հարմար կհամարի հափշտակել նրանից համեղ կտորներ և ձեռք բերել գերիշխող ազդեցություն Թուրքիայի ճակատագրի նկատմամբ»[4]։

Մեծ տերությունները կամա թե ակամա դարձան Մեծ մարդասպանի գործակիցը։

Օսմանյան կայսրությունը հետամնաց գյուղացիական երկիր էր։ Նրա 28 միլիոն ազգաբնակչությունից 24 միլիոնը զբաղված էր գյուղատնտեսության մեջ։

Եթե սեփականության առումով գերիշխողը խոշոր հողատիրությունն էր, ապա հողօգտագործման ասպարեզում՝ մանր տնտեսությունները, այսինքն՝ խոշոր հողատերերին, պետությանն ու հոգևորականությանը պատկանող հողերը մշակվում էին գյուղացիական մանր տնտեսությունների միջոցով։

Սակայն այս հետամնացությունն արտահայտվում էր ոչ միայն տնտեսության մեջ, այլև հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։

Ժամանակակիցներից մեկը գրել է. «Թուրք ազգը անընդունակ է կուլտուրական առաջընթացի, և այն ժողովուրդները, որոնք պատմական հանգամանքների բերումով հայտնվել են Թուրքիայի գերիշխանության տակ, դատապարտված են եղել կրելու.. մտավոր, բարոյական ու սոցիալ-տնտեսական ամլության լուծը»[5]։

Այո, 19-րդ դարի քաղաքակրթությունը թափանցել էր Ամերիկայի նույնիսկ խուլ անկյունները, Աֆրիկայի վայրենությունից նոր ելած երկրները, բայց այդպես էլ չկարողացավ «ծակել Թուրքիայի ժանգոտած վահանը... Քաղաքակրթությունը հպանցիկ քամու պես քսվում էր Թուրքիայի սահմանին կամ հուշիկ սահում նրա կողքով դեպի Աֆրիկա, անզոր՝ դույզն-ինչ թարմացնելու թուրքական կյանքի ապականված մթնոլորտը։ Թուրքիայի ֆեսի ծոպերը թրթռում էին քամուց, բայց նրա գլխում հնացած մտքի կաղապարված շերտերը մնում էին անհողդողդ։

Ամեն մի բարի պիտավորություն, առաջադիմական

փորձ, մշակութային զարգացման յուրաքանչյուր ձեռնարկ, որ նշմարվում է..., Թուրք կառավարությունն, առանց խտրություն դնելու միջոցների մեջ, կատաղորեն արմատախիլ է անում... նրա բռնապետական դիմագիծը, կառավարման ձևերը հենվում են Թուրք ժողովրդի տգիտության վրա։ Նրա կարծրացած նախապաշարումների, կրոնական մոլեռանդության և օտարատյաց ու վայրենի բնավորության վրա։ Այդ Թուրքիան մշտապես առկա և անասան խոչընդոտ է բոլոր այն ազգերի առաջադիմությանը, որ դժբախտություն ունեն կրելու նրա հպատակության վայրենի ու մահացու լուծը։ Անկասկած է, Թուրքիայի առաջադիմությունը կատարելապես անհնար է...»։

«...Հարկերի հավաքման անօրեն ու կամայական եղանակներ, պաշտոնական բոլոր օղակներում կատարվող դողություններ, կաշառակերություն, անօրինականություններ, երկրում արդարության լիակատար բացակայություն, ամեն տեսակի անկարգություններ կառավարչական գործերում, մի խոսքով, բաբիլոնյան խառնաշփոթ ու քաոս,— ահա Թուրքիան իր ճշմարիտ կերպարանքով»։

***

Օսմանյան կայսրությունը ոչ միայն ժողովուրդների բանտ էր, այլև գերեզմանոց։ Հպատակ ժողովուրդները հեծում էին ռազմա-ֆեոդալական այդ բռնակալության ճիրաններում։

Եվ ամենածանրը հայ ժողովրդի վիճակն էր, նրա նկատմամբ կիրառվող քաղաքականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ բացահայտ ցեղասպանություն։

1888 թվի նոյեմբերին «Հնչակը» գրեց. «Ներկայիս Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապես և տնտեսապես ստրկական կացության կերպերի մի շղթայակապ զանգված է։

Ժողովուրդը կքված է ուղղակի և անուղղակի բազմաթիվ ծանր հարկերի տակ, որոնք կրկնապատկվում, եռապատկվում են քայքայվող և սնանկացած կառավարության հաճախակի կրկնվող ֆինանսական ճգնաժամերի ժամանակ. նույնիսկ հողը շարունակաբար բռնի կերպով հափշտակվում է կառավարության կողմից... Այդպիսի պայմաններում բանտարկված ու շղթայված ժողովուրդն աշխատում և բանում է բացառապես կառավարությանն ու իշխող դասակարգերին կերակրելու համար։

Քաղաքականապես նա լիովին իրավազուրկ է, դատապարտված է ստրկական լռության, հնազանդության, անիրավ՝ դատարանում վկայություն տալիս, մեղավոր՝ եթե իրեն սպանելիս պաշտպանվում է, հանցավոր՝ եթե հառաչում ու լալիս է իր թշվառ վիճակից, կրոնով հալածված, կայքն ու կյանքն անապահով, վայրի ցեղերի ավերիչ ու անարգել հարձակումներին ենթակա, և այդ ամենով հանդերձ՝ մատնված աղքատության ու ֆիզիկական բնաջնջման»։

Թուցիկ անդրադառնանք 19-րդ դարի վերջերին արևմտահայության տնտեսական ու քաղաքական վիճակին։

Նախ՝ հարկերի ու հարկահանության մասին։

Ըստ օսմանյան օրենքի, 17 տարին լրացած 135 հոգուց մեկը զինվորագրվում էր։ Մնացած 134-ը պետք է 50 ոսկի վճարեին, այսինքն՝ յուրաքանչյուրը տարեկան 37 դուրուշ։ Հայերի համար, սակայն, այդ օրենքը չէր գործում։ Հայի տարիքը հաշվի չէր առնվում։ Հարկ էին վճարում արական սեռին պատկանող բոլորը, սկսած «օրորոցի կաթնակերից մինչև վերջին ծերը, հաշմանդամը, կաղը, կույրը, ինչպես նաև ուսուցիչները» (Թուրք ուսուցիչներն ազատ էին զորակոչվելուց և հարկ չէին վճարում)։ Սա կոչվում էր գլխահարկ կամ զինվորական հարկ։

Հողային հարկ կամ տասանորդ՝ եկամտի տասը տոկոսը։ Թուրքերը ևս այս հարկը վճարում էին, սակայն տարբերությունն այն էր, որ հայերի եկամուտը արհեստականորեն բարձրացնում էին և նրանցից շատ հարկ էր գանձվում։

Քաղաքներում ևս կար եկամտահարկ՝ առևտրից ու արհեստից ստացված եկամտի հինգ տոկոսը. տարեկան երկու փարա երկրագործության փոխառության ֆոնդի և հասարակական նշանակության շինարարության, ինչպես նաև կրթության համար։ Քանի որ արհեստներն ու առևտուրը հիմնականում հայերի ձեռքին էին, ապա, օրինակ, Սե-

բաստիայի նահանգում այդ հարկերի երեք քառորդը վճարում էին հայերը։

Կար նաև ուսման տուրք, որի գումարները հիմնականում ծախսվում էին հարուստ մահմեդականների երեխաների համար ստեղծված դպրոցների կամ կրթության հետ առնչություն չունեցող այլ բնագավառներում։ Հայկական դպրոցների վրա պետությունը երբեք որևէ գումար չէր ծախսում։

«Կոչնակ Սեբաստիո» թերթի վկայությամբ հարկ էր պահանջվում նաև մորթված անասունի կամ ունեցվածքի վաճառքի համար։

Գյուղացիներից վերցնում էին նաև արհեստավորների ու առևտրականների համար սահմանված եկամտահարկը։ Այսինքն, գյուղացին եկամտահարկ էր վճարում երկու անգամ։ Նա վճարում էր նաև քաղաք մտնելու տուրք, անտառի հարկ, որ կազմում էր գնված անտառանյութի տասը տոկոսը։ Տուրք էր վճարվում նաև որսի և ամուսնության համար։ Չնայած ճանապարհաշինության համար ևս հարկ կար, բայց գործնականում բոլոր ճանապարհները կառուցվում էին հայերի անվճար աշխատանքով կամ նրանց թալանելու միջոցով։

Այժմ՝ հարկերի գանձման ձևերի ու մեթոդների մասին։

Գյուղացու հավաքած բերքի չափը որոշում էր հարկահավաքը, որը գավազանով իբր չափում էր շեղջի տրամագիծը ու ասում քանակը։ Նա գյուղացուն խաբում էր, և վերջինս այդ գիտեր, բայց առարկելու իրավունք չուներ։ Հաճախ տասանորդը պահանջում էին փողով և «փողից զուրկ գյուղացին ստիպված էր ամենացածր գնով կալում ցորենը վաճառել դրամատերերին»։

Գյուղացին նաև պարտավոր էր առանց վարձատրվելու, որպես հարկ, հավաքված մթերքները տեղափոխել պետական պահեստները։

«...Երբևիցե քաղցած ու լքված, լկտի հացկատակ Թուրքը այդ պահին (հարկ հավաքելիս) հայի հարկի տակ խրստապահանջ ու անդուսպ բռնավոր է դառնում, ավելի՝ քան փաշան իր պաշտոնում և սուլթանը իր գահին։ Գյուղացիների խորոված գառները, ոչխարները, հավերը, սերն ու կարագը, կաթն ու ձվածեղը զարգարում են այդ երբեմնի մուրացկանների սեղանները, որոնց քիմքը այդ պահին նրբանում է վերին աստիճանի...»[6]։

Ահա մի այլ վկայություն ևս. «Հարկահան զափթիները խմբերով են ուղարկվում գյուղերը հարկահավաքության։ Այդ ժամին գյուղը, որտեղ գտնվում են զափթիեները, մի ողբալի պատկեր է ներկայացնում։ Հավ, ոչխար, տավար, ձի, զանազան մթերքներ և դրանց հետ գյուղացու աղջիկը, կինը, բոլորը այդ ժամին գտնվում են այդ զափթիեների քմահաճույքի ու կարգադրության տակ... և լաց, կոծ, մրթմրթոցներ, դժգոհություն, սպառնալիք, ծեծ, հիշոց, ամեն ինչ խառնված է և ներկայացնում է մի տարօրինակ շուկա, որն իր աղմուկով ու տեսքով դառը, շատ դառը ազդեցություն է գործում»։

Տասանորդ հավաքելու մասին «Հնչակին» գրում են. «Ամեն մեկ գավառի գավառապետ իր պաշտոնյաների հետ միասին որոշյալ օրերը ժողով են գումարում՝ իրենց գավառի գյուղերը վաճառելու քաղաքում գտնվող հարուստ մարդկանց։ Հարկավ սահիկներին է վերապահվում գյուղը գնելու արտոնությունը, թեև հայերն էլ իրավունք ունեին։ Գավառապետ փաշան հայտնում է գյուղի գինը... Թուրք աղաները ոչ մի գնի առաջ կանգ չեն առնում, քաջ իմանալով, որ մեկի փոխարեն կարող են տասն առնել, իրենց թիկունքին ունենալով լիրը ու հարստահարիչ կառավարությունը։

Տվյալ գյուղը գնած «մուլթեզիմը» տասանորդ իրավունք ունի առնելու գյուղական ամեն տեսակ արդյունաբերությունից, հողից, հացաբույսերից, այգիներից, պտղատու ծառերից և այլն... Մեր ինքնագոհ մուլթեզիմը փառավորապես ձին հեծած, մի քանի փոքրավորներ էլ ետևից՝ դիմում է իր անմեղ զոհերի բնակավայրը, վաղօրոք իր մտքի մեջ որոշելով, թե քանի հայ գեղջկուհիներ իր գազանային կրքի զոհ պիտի լինեն, քանի խեղճերի տուն պետք է հիմնահատակ անի և որքան հարստություն պետք է դիզի»։ Գյուղացիները գալիս են նրան դիմավորելու և անմիջապես այդ անկոչ հյուրի համար սեղան են գցում։ Եվ վայ գյուղացուն, եթե ճաշը մուլթեզիմի դուրը չեկավ, նա կգանակոծվի, նրա կինը ևս։ Ո՞ւմ բողոքի։ Մուլթեզիմը գյուղ է գալիս կալսելու ժամանակ։ Գյուղացին նախ

բավարարում է նրա պահանջը, ապա՝ շարչիների, եկեղեցու, աղայի, իսկ մնացածը՝ իրենց»[7]։

Թուրքերն առանց երկնչելու այս ու այնտեղ հայտարարում էին. «Մենք մեր մարգարեից պատվեր ունենք գյավուրներին օրական երեք անգամ ծեծելու։ Նրանց հացը մեզ հալալ է. նրանց գեղեցիկները պետք է լինեն մեր հարեմների զարդը»։

Հարկահավաքման ժամանակ Թուրքերն ու նրանց կողմից հովանավորվող քուրդ աղաները գործադրում էին ամենավայրագ միջոցները։

«Գյուղացու ստացած բերքի կեսը կառավարության հարկահավաքն է տանում, մեկ քառորդը՝ գյուղի աղան, և մնացած մեկ քառորդն է մնում գյուղացուն»։

Քրդերն ու չերքեզները ոչ միայն հափշտակում էին հայերի հողերը, այլև նրանց հարկադրում այդ հողերի համար հարկ վճարել։

1890 թ. սեպտեմբերի 12-ին Քարաբերդում Պոլսից ստացվեց հետևյալ հեռագիրը. «Այդտեղի լրտեսներին տրվող աշխատավարձը անմիջապես թեմերթեթ տուրքերի վրա թող ավելացվի. չլինի թե կառավարական դրամարկղից վճարվի, քանի որ լրտեսները հայերի համար են, հարկ է, որ նրանց աշխատավարձն էլ հայերը վճարեն»։

«Կոչնակ Սեբաստիոն» 1891 թ. հուլիսի 17-ին գրեց, թե երբ գյուղացին ի վիճակի չի լինում հարկ վճարել, հարկահավաքները «չեն վարանում գործադրել այն բոլոր պատիժները, տանջանքները, որոնք ինկվիզիցիան մոռացել էր, կամ մտքովն իսկ չէր անցկացրել. անասունների գոմերը, նկուղները, ածխանոցները, թոնիրները բանտերի էին վերածվել, գյուղացուն մերկացրած, ձեռներն ու ոտները պարանով կապած, գլխիվայր կախում ու գանահարում են, ձմռանը նրանց վրա սառը ջուր են լցնում և «գիշերները թողնում դրսում՝ ձյան ու սառնամանիքի տընօրինությանը»։ Պատիժը գործադրվում էր «նույնիսկ իրենց վայրենի երևակայության, եվարճության ու հաճույքի համար»։

Օրինակները շատ-շատ են։ Միայն մի մասի թվարկումը ընթերցողին կարող է զայրույթի տենդի մեջ գցել։

Ավարառություն էին կատարում նաև Թուրքական զորքերն ու ոստիկանությունը։ Հարյուրապետ Իսկենդերը 20 ոստիկանով գյուղից գյուղ էր շրջում և ամենաբազմաբնույթ ու բազմատեսակ կամայականություններ կատարում։

«... Զորքերը,— գրում է «Հնչակը»,— այնքան չարիք են պատճառել տեղացիներին, որ գյուղացիները խնդրում են կառավարությունից դրանց խնուսից հանել։ Քրդերի հարբստահարություններն ավելի տանելի էին, քան զորքերինը»։

Գյուղացիներին առանց պատճառի ձերբակալում էին և ապա կաշառք վերցնելով բաց թողնում։ Մի համիդիե կայմակամ դժգոհում էր. «Կառավարությունը մեզ թալանելու բան չթողեց։ Ինքն է հայերին կողոպտում»։

Հարկերը օրեցօր աճում էին։ 1891 թվին Մուշից գրում էին. «Խարաջը, որ առաջ 20 ղուրուշ էր, այժմ դարձել է 40, իսկ այս տարի 60 ղուրուշ են ուզում»։ Խարաջ են գանձում «նորածին մանուկից սկսած՝ մինչև 80 տարեկան հոգեվարքի մեջ գտնվող ծերունին։ Շատ տներ 10—20 մարդու համար հարկ են վճարում, շատերը 20—30 տարի պանդուխտ են լինում, բայց նրանց էլ են հաշվում ու նրանց համար էլ հարկ վերցնում»։

Զարշամպայից 1892 թ. հուլիսի 10-ին գրում են, որ հայը մարաբա է ու «մշակում է հողը և արդյունքից վարձ է տալիս հողատիրոջը։ Այդ վարձի չափն այնքան է, որ իրեն՝ մարաբային, շատ քիչ բան է մնում՝ չոր հաց»։ Ահա և այլ վկայություն.

«Սոսկալի հարստահարություններին ենթակա հայը... երկրագործ էր, բայց եզ չուներ, կով չուներ, հաց չուներ, ոտքերը բոբիկ էին, գլուխը՝ բաց»։ Գյուղացին սնանկանում էր, խրվում պարտքերի մեջ, ընկնում վաշխառուի թակարդը։ Նա պարտք էր վերցնում աներևակայելի մեծ տոկոսներով. հաճախ տոկոսն ավելի մեծ էր, քան պարտք վերցրած գումարը։

Արևմտյան Հայաստանում սոցիալական մի այնպիսի հրեշավոր աղետ, ինչպիսին սովն էր, կրկնվում էր գրեթե ամեն տարի։ «Սով է Հայաստանում, հայ ժողովուրդը ընտանիքներով է գաղթում... Սովից մարդիկ մեռնում են այն երկրում, ուր ոչ երաշտ է եղել, ոչ մորեխ երևացել և ոչ էլ բնական աղետ պատահել։ Սովից մեռնում են այն

երկրում, որը հայտնի է իր առատությամբ, ճոխ ու հարուստ բնությամբ, ուր ապրում և աշխատում է մի աշխատասեր ժողովուրդ[8]...

Պատճառը, մի կողմից ծանր, միանգամայն անտանելի, հետզհետե աճող հարկերն էին, վաշխառուների, կապալառուների, աղաների, հարկահանների կեղեքումները, մյուս կողմից պաշտոնյաների զեղծումները, տուգանքները, քուրդ ավազակների թալանն ու հափշտակությունը, տուն ու ունեցվածք ավարի ու հրկեզի ենթարկելը և, վերջապես, «ինքը՝ ճոխ, մարդկային արյունով ներկված Ելտզի պալատի գահակալ սուլթան Համիդը, այս բոլոր արյունարբուների խմբապետը, շրջապատված իր նմաններով, որոնց կյանքի միակ նպատակը զվարճությունն է ու անասնական կյանքը, որոնք իրենց գոյությունը պահպանում են հազարավոր զոհերի արյունը ծծելով... ահա թե որտեղ պիտի փնտրել սովի ու գաղթականության բուն արմատները»[9]։

Սուլթանական կառավարությունը սովը քաղաքական զենք էր դարձրել իր հակահայկական նպատակներն իրագործելու համար։

Ամեն տարի հավաքած հացը վաճառքի էր հանվում, իսկ 1893 թվին Մուշ քաղաքում այն ամբարվեց և չվաճառվեց, որի պատճառով երկու անգամ բարձրացավ հացի գինը։ Սովի վտանգը խուճապ էր առաջացրել։ Գյուղացին ու արհեստավորը իրենց ունեցածը վաճառում էին հաց գնելու համար։ Արգելվեց դրսից քաղաք բերված հացը գնել առանց ոստիկանության գիտության։ Սկսեցին հայերի բնակարանները խուզարկել ու եղած հացահատիկը բռնագրավել։ Այսինքն, կառավարությունն ամեն ինչ անում էր արհեստական սով առաջացնելու համար։ Պատահական չէ, որ թուրքերի տները չէին խուզարկվում, դրսից բերած հացահատիկը նրանցից չէին խլում։ Դեռ ավելին, հայերից խլած հացահատիկը էժան դներով վաճառում էին թուրքերին։

Սովի պատճառներից մեկը «Հնչակը» համարում էր այն, որ հողը գյուղացու համար բեռ էր դարձել, այն շահութաբեր չէր, և գյուղացին հողի մի մասն էր միայն մշակում։

1894 թվին Մշո դաշտի յուրաքանչյուր հինգ արտից միայն մեկը մշակվեց։

Գյուղացին արտադրանքի ավելցուկն իրացնել չէր կարողանում, որի հետևանքով դրամ չուներ և ընդունակ չէր հարկ վճարելու։

Կյանքի ծանր պայմանների պատճառով համաճարակներն իրար էին հաջորդում՝ խլելով մեծ թվով մարդկային կյանքեր։

«Խոլերան,— գրում էին Ամասիայից,— այդ սարսափելի համաճարակը, համագործակցելով սովի հետ, սկսել էր սարսափելի կոտորածներ անել։ Սեբաստիայի նահանգում... Թուրք պաշտոնյաներն էլ իրենց հերթին աջակցում են այդ սոսկալի երևույթին։ Տեղի բանտում երևացել է տիֆը, իսկ կառավարությունը ոչ մի ուշադրություն չի դարձնում, նրա ուղածն էլ այդ է»[10]։

Լայն տարածում ստացավ արտագաղթը։ Փակուղու առաջ կանգնած հայը հեռանում էր իր հայրենիքից։ Դրա հետևանքով, ինչպես նշում է ժամանակակիցներից մեկը. «Պարարտ արոտավայրերը և լեռները մնացել էին առանց խաշնարածի և հովվի։ Մի ժամանակ հայ գյուղացիներով շեն վայրերը դարձել էին որջ՝ բաշիբոզուկ կառավարության լիրը ու ավազակ պաշտոնյաների, համիդիեների և զափթիաների համար։ Հացի առատությամբ նախկինում հռչակված Արճեշը (Քաջբերունիք), Ալշավազը և Ալաշկերտը հեծում էին սովի ճիրաններում, որովհետև հողի հիմնական մշակը՝ հայը, չկար. մի մասը կոտորվել էր, մյուսները բռնել էին գաղթի ճամփան»։

***

Սահմռկեցուցիչ դարձան քաղաքական հալածանքները, բռնաբարություններն ու ցեղասպանության կիրքը։

1889 թվի դեկտեմբերին պատրիարքարանը սուլթանին մի տեղեկագիր ուղարկեց, հրավիրելով նրա ուշադրությունը «Հայաստանի այժմյան ողբալի վիճակի վրա՝ նախկին սուլթանների կողմից հայերին տրված այլևայլ առանձնաշնորհները չօգտագործելու, գավառների մի քանի առաջնորդների բռնի կ. Պոլիս տանելու, տարիներ ի վեր տեղի

ունեցած վայրագ հարստահարությունների ու այլնի» վրա[11]։

Սուլթանը որոշել էր բնաջնջել հայերին և մտքում ծիծաղում էր պատրիարքի միամտության վրա։

Համիդը միայնակ չէր գործում. դա թուրքական ազգային քաղաքականություն էր, իսկ սուլթանը՝ այն գործադրող գլխավոր ուժը։ «Թուրքական զորքերը, որպես ուղղակի գործիք, հայկական կոտորածների մեջ իրենց հսկայական մեղքն ունեին. նույն մեղքն ունեցավ և թուրք ժողովուրդը։

— Այն հայտարարությունը,— գրում է Ա. Սապահ Գուլյանը,— թե հայերի կրած տառապանքները հար և նման են թուրքերի կրածին, որ թուրքական կայսրությունում եղած բոլոր ժողովուրդները նույն հալածանքներին, նույն տանջանքներին, նույն զրկանքներին էին ենթարկված, կարող է ասել նա, ով աչք է փակել տիրող իրավանության առաջ։ Հային վերացնում են իր երկրից, ստիպում հեռանալ իր օջախից, կառավարության կարգադրությամբ նրան զրկում են իր հողից»[12]։

Սուլթանն ամեն ինչ անում էր իր դիվային ծրագիրն ու դրա իրագործումը աննկատ դարձնելու համար։

Նա արտասահման ուղարկեց մի բարձրաստիճան գործիչի՝ արտասահմանյան մամուլը կաշառելու և հայերի օգտին հրապարակումները ձախողելու համար։ Վերադառնալիս այդ գործիչը իր հետ տասնհինգ օտարերկրացի թղթակից բերեց և նրանց, բարձր հոնորարներ նշանակելով ու կաշառելով՝ ուղարկեց հայերին վարկաբեկող հոդվածներ գրելու։

Այդ նույն նպատակով սուլթանը հրապարակավ հայտարարեց, թե ինքը «ներում է շնորհել հայ քաղաքական բանտարկյալներին»։ Երբ այդ լուրը Տրապիզոն հասավ, վալին բանտից ազատեց քաղաքական բանտարկյալներին։ Շուտով Պոլսից հեռագիր ստացվեց. «Անմիջապես բանտարկել արձակվածներին, որովհետև ներում է շնորհված Պոլսի բանտարկյալներին միայն»։ Ընդամենը տասնմեկ հոգու։

Պատմական իրականությունն այն է, որ օսմանյան իշխանությունները ոչ միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, այլև կայսրության գոյության առաջին իսկ տարիներից, բոլոր միջոցներով աշխատել են հայերին դարձնել մի կաստա,

որի պարտականությունը լիներ միայն աշխատելն ու թուրքերի համար բարիք ստեղծելը։

Բռնակալի քողարկված նպատակն էր հայերի մեջ մեռցնել մարտական ոգին, թողնել միայն աշխատելու և համակերպության բնազդը։ Կազմակերպված հարձակում սկսվեց հայ մտավորականության դեմ, ստիպելով նրան մտածել միայն գոյությունը պահպանելու մասին։ Հայերին ջանում էին հեռու պահել ռազմավարական արվեստից, նրանցից խլում էին զենքերն ու մյուս պաշտպանական միջոցները, թողնելով միայն մի «զենք»՝ գութանը։

Հայը շրջելու, խանութ բացելու և առևտուր անելու, եկեղեցի գնալու համարձակություն չուներ։ Փողոցում թուրքը հային ամեն տեսակի վիրավորանք էր հասցնում, բայց հայը նույնիսկ մի բառ ասելու իրավունք չուներ, քանի որ զանազան հանցանքներ հնարելով՝ թուրքերը նրան բանտ էին նետում։ Սովորաբար, որպես պատրվակ, օգտագործվում էր «կոմիտեի անդամ» լինելու շինծու մեղադրանքը։ Հայը թուրքից իր պարտքերը պահանջելու իրավունք չուներ։ Այլ վայրեր գաղթելն էլ անհնար էր, որովհետև «հինգ ղուրուշ արժեցող անձնագրի համար վերցնում էին 100 ղուրուշ»[13]։

Օսմանցի կառավարողները լավ էին հասկանում, որ իրենց լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ճարտարությունը, աշխատասիրությունը, առևտրի, երկրագործության մեջ հաջողությունները, ինչպես նաև նրանց մտավոր և բարոյական ուժերն ու ընդունակությունները մեծ վիհ են բացել այդ ժողովուրդների ու թուրքերի միջև։

Թուրքերը ծագումով քոչվոր ցեղեր լինելով, իրենց նախորդներից ժառանգել էին միայն պատերազմելու, ավերելու ու թալանելու հատկանիշները։ Աշխատասիրությունը, կառուցելը, արարելը, առաջադիմությունը խորթ էին նրանց։ Նրանք քաղաքակրթության պատմության մեջ իրենց հաստատեցին որպես օտարակեր ցեղ։ Միայն այդ կերպ կարելի է բացատրել նրանց գազանաբարո վերաբերմունքը էությամբ արարող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ։

Այդ գազանաբարո վարքը ավելի ցայտուն դրսևորվեց, երբ քրիստոնյա ժողովուրդների մոտ իրենց անտանելի վի-

ճակի դիտակցությունը ընդվզման վերածվեց։ Տվյալ ժամանակահատվածում թուրք կառավարող շրջանները ելքը տեսան հայերի բնաջնջման մեջ։

Կարինի վալին հայ հարուստների հավաքի ժամանակ հայտարարեց. «Կառավարության ու երկրի համար ամենավնասակարները հայերն են, և նրանց բնաջնջումը ամենակարևոր պետական գործն է»։

Բնաջնջման մեթոդներն ու ձևերը բազմազան էին ու բազմատեսակ։ Անդրադառնանք դրանցից մի քանիսին։

Մշո դաշտում «կառավարության գաղտնի հանձնարարությամբ քրդական մի ավազակախումբ է ստեղծվել, որը շատ գյուղեր ու մարդկանց է թալանում։ Բերդակ գյուղում վեց հայերի թալանեցին, իսկ իշխանությունը դրա համար տասներկու հայի բանտ նետեց»։

«Քաբաբերդում կազմակերպված էր նման չորս ավազակախումբ՝ յուրաքանչյուրը 30—40 հոգուց բաղկացած։ Նման ավազակախմբերից բացի գործում էին տելուների, հայթաների, ենիչերիների շարժման հրոսակախմբեր, որոնք անարգել սպանում էին, ասպատակում ու քանդում խաղաղ ժողովրդի տուն ու տեղը»։

Ալաշկերտի Մազրե գյուղի անասունները գողանում են։ Հայերը բողոքում են, որ այդ արել են Այիբ փաշայի մարդիկ։ Կայմակամը վկա է պահանջում։ Բերում են մի հայի։ «Հայի վկայությունը չի անցնի»,— հայտարարում է կայմակամը։

Հայերի վիճակը հուսահատական էր և անելանելի այն պատճառով, որ նրանք զենք կրելու իրավունք չունեին և անկարող էին պաշտպանվել կառավարության քաջալերանքը վայելող զինված մուսուլմաններից։

Բայազետից գրում էին. «Կառավարությունը բոլոր պաշտոնյաներին մեկական հրացան տվեց։ Իսկ ղստիկանական հարյուրապետ Իսմայիլ էֆենդին այստեղի թուրքական տներից յուրաքանչյուրին երկու հրացան և 100 փամփուշտ տվեց...»։[14]

«Այս ձմռան սկզբին,— գրում էին Մուշից,— հուքմաթը Դաշտի գյուղերը ժանդարմներ ուղարկեց, որոնք հայ ժողովրդի զենքերը հավաքեցին տարան։ Հրացան, խանչալ,

նաչախ, պչախ՝ բոլորը տարան, մինչդեռ զինված քրդերը ազատ շրջում էին սուրմելի, խափախլի հրացաններով...

Ասում են, թե օսմանյան կառավարությունը հավասար աչքով է նայում հային ու քրդին, ինչպե՞ս չէ, ահա փաստը՝ մեկն անզեն է, մյուսը ոտից գլուխ զինված»[15]։

Հայերը տևականորեն ու անպատիժ ենթարկվում էին ամենաբիրտ ու դաժան հալածանքների, ոտնատակ էին արվում նրանց մարդկային արժանապատվությունը, պատիվը, կյանքը, այն ամենը, ինչ ազատ մարդուն տարբերում էր ստրուկից։

Պոլսի 1890 թվի ցույցից հետո իրենց բնակավայրերը «երթալ ուզող հայաստանցիներին կառավարությունն անցագիր չէր տալիս, մինչդեռ, միայն մեկ շաբաթվա ընթացքում երեք հարյուրից ավելի զինված քրդեր մեկնեցին Հայաստան... Կառավարությունը նրանց ոչ միայն զենք էր տվել, այլև յուրաքանչյուրին չորս օսմանյան ոսկի՝ որպես ճանապարհածախս...»։

Հատկանշական է նաև հետևյալ փաստը։ Միլլի աշիրեթության ապստամբության ժամանակ մի քանի թուրք զինվոր է սպանվում։ Սուլթանն իր մոտ է կանչում քուրդ երեվելիներին ու հանդիմանում. «Մենք ձեզ զենք տվեցինք հայերին և ոչ թե զինվորներին կոտորելու։ Ինչ է, հայերը վերջացե՞լ են»։

Իրավունք չունենալով զենք կրելու և ինքն իրեն պաշտպանելու, հայը կամ պետք է զոհ դառնար ցանկացած մուսուլմանին, կամ պիտի ընկներ այս կամ այն բեկի հովանավորության տակ՝ դրա դիմաց վճարելով իր աշխատանքի արդյունքը և ունեցվածքը։

Մարքսը նկատել է, որ սուլթանը օգտագործելով Ղուրանը, «անհավատներին հայտարարում է օրենքից դուրս» և մուսուլմանների ու անհավատների միջև ստեղծում շարունակական թշնամանք[16]։

Հպատակ ժողովուրդների ուշադրությունը դասակարգային և ազգային-ազատագրական պայքարից շեղելու նպատակով, Համիդը իր քաղաքականության համար զենք դարձրեց պանիսլամիզմը՝ սուլթան խալիֆի գլխավորությամբ աշխարհի բոլոր մուսուլմանների միավորման մեծապետական, շովինիստական, ֆաշիստամետ տեսություն-

նը, որը հետամտում էր մի ծրագիր, ըստ որի օսմանյան տիրապետության տակ պետք է առնվեր նաև Ռուսաստանի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Եգիպտոսի, Հյուսիսային Աֆրիկայի մահմեդականությունը։

Անզուսպ հարձակումների է ենթարկվում մշակութային կյանքը։ Փակվում էին մեծ թվով դպրոցներ, հալածվում գրականության և արվեստի գործիչները։ 1870-ական թվականներին Կ. Պոլսում հրատարակվող հիսուն պարբերականներից մնացին միայն երեք լրագիր և մի քանի հանդես՝ ամենաչնչին տպաքանակով։ Հարձակման էր ենթակա յուրաքանչյուր առաջադիմական գաղափար, արգելված էր համաշխարհային գրականության տիտանների (Վոլտեր, Տոլստոյ, Բայրոն, Շիլլեր) ստեղծագործությունների, առաջադեմ պատմաբանների ու հրապարակախոսների մուտքը Թուրքիա։ Արգելվեց Շեքսպիրի «Համլետի» բեմադրությունը, որովհետև նույնիսկ ներկայացման մեջ թագավորին սպանելը թույլատրելի չէ։ Մոլեգնում էր գրաքննությունը, արգելված էին մեծ քանակությամբ բառեր՝ «հանրապետություն», «սահմանադրություն», «ազատություն», «հավասարություն» և այլն։

Վանից դժգոհում էին. «Գրելու, խոսելու և մինչև անգամ լաց լինելու ազատություն չունենք, ոչ միայն մեր դպրոցները սահմանափակվեցին, այլև խպառ զրկվել ենք մայրենի լեզվով գրվածքներն ուսումնասիրելուց։ Մատենագիտական որևէ գիրք հայի մոտ հայտնաբերելիս, ձերբակալում են։ Եթե այդպես շարունակվի, եկեղեցու դռները ևս պիտի փակենք, որովհետև եկեղեցական գրքերը ևս վնասակար են դիտվում»։

Լոնդոնի «Դեյլի նյուսը» գրեց. «Մի քանի թուրք զինվորներ ժամասացության ժամանակ մտնում են հայոց եկեղեցին (Բայազետում), և պատճառաբանելով, որ ժամերգության ժամանակ «թագավոր» բառը գործ են ածում աստծու, իսկ թագուհին՝ Մարիամ կույսի վերաբերմամբ, հայոց ժամասացությունը հայտարարում են դավադրություն» և, քահանայի վրա հարձակվելով, անարգում նրան։

Ամասիայում մի հայի բանտ են նետում «Բազմավեպին» թղթակցելու համար։

Երզնկայի Տանձիկ գյուղում խուզարկության ժամանակ հայտնաբերված «Հայոց պատմություն» և «Եղգարան» գրքերի համար ձերբակալվել են տասնվեց մարդ։

Կարինից «Հնչակին» գրում են, թե հայրենասիրական ոտանավորների և ազգային տոները նշելու համար բազմաթիվ հայեր են բանտարկվել։

Ալաշկերտում թուրք զինվորները մեծ թվով մարդկանց դաժանորեն ծեծեցին այն բանի համար, թե իբր վերջիններս ցանկություն են հայտնել հանդիպելու «Թայմսի» թղթակցին։ Տեղի թուրք բնակչությունը, պաշտոնատար անձանց թելադրանքով, ամենուրեք հայտարարում էր. «Հայերին բուռ դանակով պիտի մորթենք»։

Սուլթանի հայաջինջ քաղաքականության մեջ առանձնահատուկ դեր ուներ բռնի կրոնափոխությունն ու թուրքացումը։ Մասնավորապես ակտիվացել էր շեյխերի գործունեությունը, որոնք մոլեռանդ զանգվածներին գրգռում էին հայերի դեմ։

Սեբաստիայից 1882 թ. մարտի 21-ին գրում են. «Մի տարուց ավելի է, ինչ թուրքական կառավարությունը իմամի ու խոջաների միջոցով մզկիթներում թուրք հասարակությանը գրգռում է հայ ժողովրդի դեմ»։

Էրզինի մզկիթում քարոզում էին. «Ով հային իր տանը հյուր ընդունի, նա պիղծ է։ Ով հայի հետ ընկերանա, նա պիղծ է։ Հայի ապրանքն ու պատիվը մուսուլմանին հալալ են»։

Հալեպի նահանգում թուրքերի կողմից հայ աղջիկների և կանանց բազմաթիվ առևանգումներ էին տեղի ունենում։ Իշխանությունները առևանգողներին չէին պատժում, պատճառաբանելով, թե նրանք (առևանգվածները) կամավոր են թուրքացել և այդ կերպ խրախուսում էին բռնի մահմեդականացումն ու ձուլումը, փաստարկելով, թե Մուհամեդն ասել է. «Քրիստոնյա աղջիկ առևանգողի ու նրան մահմեդականացնողի ոգին իր ջեննեթի մեջ է լինում, այդ գործը բարիք է, մարդը դժոխքից փրկվում է»։ Կեսարիայում քրիստոնյա աղջիկ առևանգողը բանակից ազատվում էր։

Խստացվեց օրենսդրությունը, ըստ որի, վտանգավոր բովանդակությամբ թուղթ պահողը կամ ուրիշի մոտ տեսնողն ու չհայտնողը 1—3 տարվա բանտարկության էր դատապարտվում։ Եթե զենք էր պատրաստվում, թե՛ պատ-

բաստողը և թե՛ գնողը ենթարկվում էին տասը տարվա տաժանակրության։

Հոկտեմբերի յոթին Կ. Պոլսից գրում են. «Այժմ մայրաքաղաքում... սոսկալի տեռոր է։ Մոլեգնած գազանը ամեն օր նորանոր ձերբակալություններ է կատարում։ Բանտարկյալներից շատերն այլևս արևի երես չեն տեսնի, շատերը դատապարտված են մահվան։ Այո, մահվան։ Միջնադարյան սոսկալի շարշարանքներ են այժմ գործադրվում ձերբակալված հայերի նկատմամբ...»։

Գում Գափուի ցույցի մասնակիցների դատավարության ժամանակ ակնհայտ դարձավ, որ գանակոծելով, օրերով բանտարկյալներին քաղցած ու անքուն թողնելով, անլուր շարշարանքների ենթարկելով, տանջելու ամենակատարելագործված ձևերը կիրառելով (այս հարցում թուրքերը մրցակից չունեն) «նրանցից խոսք են քաշել»։

Մշո բանտի քաղաքական բանտարկյալները փախուստի անհաջող փորձ կատարեցին, որից հետո նրանց վիճակն ավելի ծանրացավ։

Այս բանտը նետված 92 հայեր դատապարտված էին 5—100 տարվա բանտարկության, չնայած նրանցից ոչ մեկի հանցանքը ապացուցված չէր։

Գաղաթիայի բանտում հայ բանտարկյալներին հարցաքննում էին գիշերները։ Շիկացած մետաղով դաղում էին նրանց մարմինները, մերկացրած թավալում կամ ծնկաչոք պահում ձյան մեջ ու գլխներին սառը ջուր լցնում։

Մահապատժի դատապարտված թուրքը շատ ավելի բարվոք պայմաններում էր, քան հայը, որի հանցանքը դեռ ապացուցված չէր։

Բանտում հաճախ էին բռնկվում համաճարակներ։ Սանձարձակ կաշառակերություն էր տիրում։ Թուրք բանտարկյալներին անընդհատ գրգռում էին հայերի դեմ, և հայ բանտարկյալների կյանքը միշտ վտանգի տակ էր։

1894 թ. ձմռան ամիսների ընթացքում Արևմտյան Հայաստանում ավելի քան հազար ձերբակալություն է կատարվել։

Կայսրությունում քաղաքական բանտարկյալների թիվն անցնում էր չորս հազարից։

1889 թվին Վարդենիս, Խարս, Ակրոնք, Մուշեղաշեն և

Արագիլի բույն գյուղերից բանտ նետվեց քառասունհինգ մարդ, որոնցից տասնչորսը մեռան բանտում, իսկ մնացածները աքսորվեցին։

Սասունում բանտարկված 25 հոգուց ութը բանտում մեռան ծեծից։

***

Մոլագար և կասկածամիտ սուլթան Համիդը միանձնյա լուծում էր էթնիկական խմբերի բնաջնջման հարցը։

Միայն Կ. Պոլսում նա պահում էր երեսուն հազար լրտես։

«Ֆրանկֆուրտ ցայտունգի» տվյալներով «Կայսերական պալատում հինգ բյուրո է հաստատված «կասկածելիների» մասին տեղեկություններ հավաքելու... Չկա մի մինիստր, որ աղատ լինի գաղտնի հսկողությունից»։

Գաղտնի ոստիկանության պետ Զիա բեյը հետագայում խոստովանել է. «Եթե ես կատարեի, ավելի ճիշտ, եթե ես ժամանակ ունենայի կատարելու Ելտզի բոլոր հրամանները, ապա, հավանաբար, Թուրքիայում ազգաբնակչությունը կպակասեր մեկ երրորդով»[17]։

«Աբդուլ Համիդի ներքին կյանքը» գրքի հեղինակ Ֆ. Դորիսը գրում է. «Սուլթան Համիդի թագավորության ամենաբնորոշ ախտանշաններից մեկը օրինազանց նախարարներ, մարդասպան կառավարիչներ, կոտորող զինվորներ, պաշտոնական ու անհաստիք լրտեսներ, գող-ավազակների մի ամբողջ աշխարհ ծնելն էր։ Հենց նրանց միջոցով էր սուլթանը գլուխ բերում իր ավերիչ «մտահղացումները»[18]։

Լոնդոնի «Վեստմինստր գազետը» իր 1893 թվի 106-րդ համարում տպագրեց առաջադեմ հայացքներ ունեցող մի թուրքի կարծիքը օսմանյան կայսրության մասին. «Ներկա վիճակից վատ հազիվ թե հնարավոր լինի, այս կարծիքը կիսում են նաև հայրենակիցները», որոնք ամոթ են զգում տիրող իրավիճակի համար և հավատ չունեն ապագայի հանդեպ։ «Տեղյակ եք, անշուշտ, այն ընդարձակ լրտեսական դրությանը, որը օր օրի աճում է. հաշված է, որ պալատի կողմից հինսուն հազար մարդ է օգտագործվում որպես լրտես... Մարդկային հարաբերությունները կաշկանդված

են հաղարումի կասկածներով։ Ասում են, երկու փաշա, մուքն ընկնելուց հետո, չեն կարող միևնույն տան մեջ միասին գտնվել, իսկ երկուսից ավելին՝ ցերեկը, եթե հատուկ թույլտվություն չունեն։ ... Այս ամենը արտաքին նշաններն են այն քաղաքականության, որ իշխում է պալատում։ Այդ քաղաքականությունը կարող է բացատրվել մեկ բառով. ՎԱԽ։ Վերցնենք թեկուզ հայերի վիճակը, որը թերևս ամենածանրն էր։ Թուրք քաղաքական գործիչները հակված են ապացուցելու, որ Արևմտյան Հայաստան չկա։ Մեր դպրոցներում օգտագործվող քարտեզների վրա այդ անունը չի երևում։ Սակայն դրանով հայկական հարցը չի դադարում գոյություն ունենալուց...

Բոլոր նրանք, ովքեր կամովի չեն փակել իրենց աչքերը, տեսնում են, որ վերջին 20 տարիների ընթացքում շարունակ հետադիմել ու անկում ենք ապրել, անընդհատ ընկղմվել ենք տիղմի մեջ, խոր, ավելի խոր, ջանալով խաբել ինքներս մեզ և ուրիշներին, թե եվրոպական քաղաքականության արտաքին ձևերը փոխ առնելով՝ առաջադիմության պողոտայի վրա ենք։

Ռուսաստանը այն կողմից նայում ու ծիծաղում է, որովհետև գիտե, որ կորստյան ճամփի վրա մեզ օգնելու համար կարիք չի զգա մինչև իսկ մատը շարժելու»։

Ահա վկայակոչումներով, փաստերով, օտարագիր և հայագիր մամուլից մեջբերումներ անելով, փորձեցինք մոտավոր պատկերացում տալ այն դժոխային իրավիճակի մասին, որ տիրում էր Թուրքիայում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում սուլթան Համիդի տխրահռչակ թագավորության տարիներին։

Համիդյան արնաթաթախ ձեռքի ծանրությունն իր վրա զգաց նաև տարոնահայությունը, որի դառնաղետ կյանքի ու ընդվզումի որոշ դրվագներ կփորձենք քննել այս գրքում։

1889 թվին «Հնչակը» գրում էր. «Այսօր Մշո դաշտը ողողվում է հայի արյունով։

Այսօր մշեցի հայի արյունաշաղախ գլուխը բարձրացած է օդ... նիզակի ծերին ցցված։

Այսօր մշեցի հայ կինը, աղջիկը թավալվում են իրենց արյան մեջ՝ դառնալով թշվառ զոհեր քրդերի գազանային կրքերի։

Այսօր Մշո գավառի հայ գյուղացիները կողոպտվում, թալանվում, ավերվում են...

Այսօր ընդհանուր տագնապ ու սարսափն է տիրել ամբողջ Մշո գավառին, ամբողջ Հայաստանին։ Անպաշտպան, անօգնական, անուժ ու անզեն, նրանք ակամա փախչում են, պանդուխտ դառնում օտար երկրներում անիծելով այն հողը, որ իրենց սիրելի ու հարազատ էր, որը դարերից ի վեր իրենց կերակրել էր, բայց որն այժմ իրենց գլխին անվերջ թշվառությունների աղբյուր էր դարձել։

Այսօր Մշո գավառին սպառնում է կատարելապես ամայանալու վտանգը... Այսօր Հայաստանը, տեսեք, կատարելապես հանձնված է ավազակների անզուսպ կամայականությանը, դարձել է դրանց բույնը, դրանց կերուխումի շտեմարանը, դրանց ավերիչ արշավանքների ասպարեզը, Հայաստանը, հայ ժողովուրդը սպառվում, քամվում, կորչում են»[19]։

***

Սուլթանն իր հայաջինջ քաղաքականության հարվածային ուժ դարձրեց նաև վաչկատուն քրդերին։ Նա տևական աշխատանք տարավ քրդերի շրջանում հայերի նկատմամբ թշնամություն պատվաստելու, համերաշխ ապրող երկու ժողովուրդների հարաբերությունները վատացնելու համար։ Սուլթանը կարողացավ հմտորեն օգտագործել քրդերի վրա ազդելու տնտեսական, քաղաքական և հոգեբանական միջոցները։

Կառավարությունը հայերի հողերը բռնագրավում ու հանձնում էր քրդերին։ Քրդերը բնակեցվեցին հայերի հետ և հայկական գյուղերը հանձնվեցին նրանց քմահաճույքին։ Գողությունը, ավազակությունը, թալանը ավելի շատացան։ Հայերին հարկադրեցին քուրդ աղաների ու բեյերի համար ամեն տեսակի ծառայություններ կատարել։

Թշվառության մեջ ապրող ալաշկերտցիների գլխին իսկական պատիժ դարձան տեղի ու Ռուսաստանից եկած քրդերը, որոնք այլևս իրենց ձմեռանոցները չէին գնում և Թալիմ փաշայի ու կայմակամի ջանքերով ձմեռն անց էին կացնում հայերի տներում։

Արճեշի շրջանի բոլոր գյուղերում կալի ժամանակ հայտնվում էին քրդերը և յուրաքանչյուր տնից 30—50 փութ ցորեն վերցնում։

Շորտու գյուղում քրդերը մի գյուղացու սպանում են, տունը թալանում ու անպատիժ մնում։ «Իզուր են ջանում խեղճ հայերը,— եզրակացնում է նամակագիրը,— քանի որ կառավարությունը չի ցանկանում քրդերին սանձահարել։ Սպանվողը հայ չէ՞։ Կառավարության համար հայ է մեռել, թե հավ՝ նույնն է։ Դեռ ուրախ են, որ մի հայ էլ պակասեց»։

1890 թվի հուլիսի 13-ին Բաղեշից պատրիարքարանին գրում են, որ Հորմուզ գյուղում, չնայած ոստիկանական կետի առկայությանը, գալիս են 25 մոտկանցի քրդեր և հայտարարում. «Հրովարտակ է եղել, որ հայերին կոտորենք»։ Նրանք գյուղացիների հաշվին կերակրվում են, ատամի վարձ վերցնում ու հեռանում։ Իսկ Կուրավու գյուղ թաֆիր հավաքելու համար ամեն օր քրդական մի ցեղ էր գալիս։

«Կառավարությունը այդ դեպքերի մասին գիտե, բայց լռում է։ Կուսակալը հրապարակավ պաշտպանում և օգնում է քրդերին՝ անընդհատ հայերի դեմ գրգռելով նրանց...»[20]։

Փափախչ ցեղը իր արյունարբու ցեղապետ Միհր Ալիի ղեկավարությամբ 1879 թվին գալիս հաստատվում է Սեբաստիայի հարավային շրջաններում՝ բռնագրավելով տեղացիների ամենաարգավանդ հողերը։ Փոքր Ասիայում ու Անդրկովկասում հայտնի այս ավազակը վայելում էր թուրքական կառավարության հովանավորությունն ու նրանից թոշակ էր ստանում։ Ի վերջո, նրան նշանակում են գերսարգար՝ ավազակության դեմ պայքարելու կոչված զորամասի հրամանատար։ Ամենամեծ ավազակը՝ ավազակության դեմ պայքարող. զուտ թուրքական տրամաբանություն է։

Իսկ Ալաշկերտից հաղորդում էին, որ Թեմուր անունով մի ոմն քուրդ ավազակապետ տասը հոգով շրջում է հայկական գյուղերում և, բռնություններ գործադրելով, դրամ հավաքում։

Սուլթանը քրդերին հայերի հետ թշնամացնելով՝ չբավարարվեց։ Նրա նախաձեռնությամբ քրդերից ձևավորվեցին անկանոն զորամիավորումներ, որոնք սուլթանի անունով կոչվում էին համիդիե։ Այդ գնդերը հայերին բնաջնջելու համար էին ստեղծված։

Կ. Պոլսից 1890 թվի նոյեմբերի 15-ին գրում են.

«Չորրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Զեքի փաշան վերջերս այցելել է բոլոր քուրդ աշիրեթությունները և նրանց համաձայնությունն է ստացել հեծելազորային գնդեր կազմելու, իբր ռուսական ու պարսկական սահմանը՝ Հայաստանն ու Կիլիկիան պաշտպանելու համար»[21]։

Այդ հեծելազորային գնդերը կազմակերպելու համար սուլթանը իրագործ հրապարակեց. յուրաքանչյուր գունդ պետք է ունենար 1000-ական ձիավոր։ «Ռուս դեսպանը պետք է ունենար 1000-ական ձիավոր։ «Ռուս դեսպանը բողոքեց սահմանի վրա այդպիսի անկանոն զորքերի ներկայության դեմ, բայց թուրքերը շարունակեցին ավելի հառնդով կազմակերպել նման զորամիավորումներ»։

1891 թվի ապրիլի 8-ին Կ. Պոլսից գրում էին. «Երբ քուրդ ավազակ և արյունռուշտ ցեղապետներից կազմված Ֆրապիէրթուղրիլ Ղազի կոչված զորագնդերի մի մասը Ցրապիզոն հասավ, սուլթանը հրամայեց, որ հատուկ շրգենավով գնան՝ նրանց առոք-փառոք դիմավորելու և Պոլիս բերելու համար։ Սուլթանը նրանց ծախսերը հոգաց իր անձնական միջոցներով։ Մեկ շաբաթ է, ինչ նրանք մայրաքաղաքում են և շրջում են ամենայն ամբարտավանությամբ»։ Քրդական զգեստներ հագած, մեկական սրով ու խենչալով զինված այդ հեծելազորայինները հետևերը մի-մի ոստիկան առած կառքերով շրջում են քաղաքի մեջ՝ մեծարվելով ավելի քան արժանի էին։ «Այս բաշիբոզուկ հեծելազորը թե ինչ նպատակով էր կազմվել, հասկանալի է...»[22]։

«Սուլթանը,— գրում են Մուշից,— քուրդ բեյերին ու ավազակներին Ստամբուլ բերելով, փառք ու պատվի արժանացրեց։ Թե ինչ է թաքնված այդ մեծարանքի ետևում, պարզ է։ Դրանք բաց ֆարման են թագավորից՝ հայերի հետ ուզած ձևով» վարվելու։

Պոլսից վերադառնալիս, նրանք Բայբուրդի ու Կարինի մոտերքում թալանում են արտաքին աշխատանքից վերադարձող հայերին։ Հայերը գիմում են վալուն, բայց ապարդյուն։ «Ո՞վ կհամարձակվի հանդիմանել սուլթանի մտերիմ իշխաններին»։

Համիդիեների կազմավորվելուց հետո քրդերն ավելի

մարտունակ դարձան, ավելի անպատկառ ու աներկյուղ սկսեցին գործադրել իրենց նողկալի «արհեստը»։

Բուլանըխից 1891 թվի նոյեմբերի 15-ին գրում են. «Չորրորդ բանակի մուշիր փաշան, մի ամիս առաջ Բուլանըխ ժամանելով, այստեղի քրդերին (Հասնանցի), որոնց ցեղապետներն անցյալ տարի Պոլսում զինվորական պատիվ ու աստիճաններ էին ստացել, պաշտոնապես զինվորագրեց ու դասակարգեց»։

Քրդերը նախապես (մուշիրի հրամանով) հայերի ձիերը բռնագրավեցին և նրանց վրա պետական սեփականության նշան դրեցին։ «Մուշիրն այսպես բոլոր գյուղերի քրդերին զինվորագրելուց հետո, Կուշտյան գյուղում զորահանդես կատարեց... Հրամանատարները հերթով երդվեցին Ղուրանի վրա և զինվորներին գաղտնի հրահանգներ տվին հայերի վերաբերյալ»[23]։

Հոկտեմբերի սկզբներին տասնմեկ քուրդ, բոլորն էլ կառավարական «այնալի» հրացանով զինված, գիշերը հարձակվեցին Խարապաշաղ գյուղի հովիվների վրա, մեկին վիրավորեցին, իսկ երկուսին սպանեցին և հոտը քշեցին տարան։ Հաջորդ օրը քուրդ ցեղապետ Այազ աղան այդ գյուղից տասնհինգ մարդ է պահանջում օլամի՝ պարհակ կատարելու համար։ Պոլիս հրավիրված մի այլ ավազակ աղա իր մարդկանց ուղարկում է հայերի կալերն ավերելու։ Այդ օրը համիդիեները սպանում են նաև Համզաշեն գյուղի հովվին ու ոչխարը փախցնում։

Սակայն բոլոր քրդերը չէին, որ համաձայնեցին մտնել համիդիե գնդերի մեջ։ Օրինակ, Մշո հարավում բնակվող քրդական մի ցեղ հրաժարվեց համիդիե դառնալ. նենգամիտ կառավարությունը մոլլաներ ուղարկեց նրանց համոզելու և կաշառելու։ Քրդերի այս ցեղի դիմադրությունը ևս հաղթահարվեց։

Ամասիայում բանտից «ոճրագործ, գող, շնացող և այլ հանցապարտ չերքեզներին ազատ արձակելով և չերքեզ բեյերին զանազան նվիրներ տալով, նրանց համակրանքը շահեցին և հազար հինգ հարյուր հոգուց բաղկացած համիդիե գունդ կազմեցին՝ գործածելու մասնավորապես հայ հեղափոխականների դեմ»[24]։

Վանի գավառում, հայտնի ավազակ Թաֆյուրի հրամանատարությամբ, նույնպես նման մի գունդ կազմվեց։ Նրանց ավերածությունները անհավոր էին։

Բասենի գյուղերից մեկի տանուտերի մոտ համիդիեի գնդապետը մարդ է ուղարկում ու պահանջում, որ իր տասներեք տարեկան աղջկանին իրեն տա։ Գիշերը եղբայրը աղջկան փախցնում է սար։ Հաջորդ օրը համիդիեները խուզարկում են ամբողջ գյուղը, ապա հետապընդում փախչողներին։ Տղայի մոտ մնացել էր երկու փամփուշտ, նա մեկով քրոջն է սպանում, մյուսով՝ իրեն։

Տարոնում համիդիե հազարապետ Իբոն փախցնում է հայերի ոչխարները։ Գիտենալով, որ իշխանություններին դիմելն անօգուտ է, հայերը Իբոյին խնդրում են, որ նա գոնե ոչխարների կեսը վերադարձնի։ Իբոն պատասխանում է. «Թագավորն էլ եմ ես, վալին էլ, ոչ մեկից էլ չեմ վախենում, ահա ոչխարները, բայց չեմ տա»։

Վասպուրականի Գուրուպաշի դաշտում ութ համիդիեներ հարձակվում են բանջար հավաքող հայերի վրա, շորս տղամարդու սպանում, իսկ կանանց բռնաբարում։ Գյուղի հայերը սպանվածների դիակների հետ շարժվում են դեպի Վան։ Զորքերին չի հաջողվում նրանց առաջն առնել, և սգո թափորը քաղաք է մտնում։ Ի վերջո, բանտ են նետվում ոչ թե համիդիեները, այլ սպանվածների հարազատները։

Համիդիե զորամասերը գործնականում դարձան պաշտոնապես կազմակերպված ավազակային միավորումներ։

«Ո՞վ կարող է խոսել կամ բողոքել համիդիե դարձած քրդերի դեմ. տերության նշանը ճակատին, սուրը ձեռքին, հարձակվում են մշակների վրա, սպանում են, եզները տանում»,— դժգոհում են ժամանակակիցները, իսկ Կարինից գրում էին. «Համիդիե հեծելազորը չարիքներ է գործում Մուշի, Վանի գավառներում և մեր կողմերում... Հայը այլևս իր անձի, գույքի և պատվի տերը չէ... Կարինի, Ալաշկերտի ճանապարհը փակված է։ Հաղորդակցությունը դադարեցված է մինչև իսկ հայ գյուղերի միջև։ Ժողովրդի տընտեսությունը հիշյալ զորքերի պատճառով կատարելապես քայքայված և հույժ թշվառ վիճակում է։ Հեծելազորի կամայականությունների դեմ ընդվզողը մահվան է դատապարտվում։ Համիդիե զորքը երկրի համար կատարյալ պատիժ, պատուհաս է դարձել... Կառավարությունը այս ամենը լավ գիտե, բայց չտեսնելու է տալիս, քանի որ այդ ամենը

նը կառավարության թելադրանքով էր կատարվում, նա էր քաջալերում զորքերին։

Մի քանի անգամ կառավարությանը բողոքել են այդ անիրավությունների համար, բայց բողոքողներից «... շատերը պատժվեցին ու բանտարկվեցին, իբրև զորքին զրպարտողներ, պետության անհավատարիմներ և խռովարարներ»։

Համիդիե գնդերի կազմավորումով բացվեցին սուլթանի «խաղաքարտերը»։ Կույր պետք էր լինել, չտեսնելու համար, որ հայ ժողովրդին բնաջնջում էր սպասվում։

***

Բռնությունների ահավորությունն ու ծավալը հպատակ ժողովուրդներին կանգնեցրին պայքարի անհրաժեշտության առջև։

Թուրք Ֆեյզի բեյը գրել է, որ հայկական շարժումներն իրենց պատճառներն ու արդարացումն ունեն. «դրանց դրդողն ու հիմք տվողը նույն ինքը թուրք կառավարությունն է իր կաշառակեր, անբարոյական, խարդախ, տխմար պաշտոնյաներով և արատավոր կառավարական համակարգով»։ Այս հայտարարության համար Ֆեյզի բեյին աքսորեցին։

«Հայերը մեկընդմիշտ պետք է իմանան,— Մուսա բեյի դատավարությունից եզրակացրեց «Հնչակը»,— որ սուլթանի կառավարությունից արդարություն չի կարելի սպասել և մայրաքաղաք դիմելու հարկ չկա դժվար հանգամանքին, այլ թող իրենց երկրում թուրն ուղղեն հարստահարիչների դեմ...»։

Հայկական նահանգներից Կ. Պոլիս պատրիարքին գրում են. «Այլևս ազգն այնպիսի վիճակում է, որ հանդուրժելն ու լռելը հավասարազոր են կորստյան»։

«Ինչո՞ւ է գլուխ բարձրացրել հայը.

Մշտական թշվառություններն ու աղետները Հայաստանում հասել են ծայրահեղության։ Հայ ժողովուրդը կորցրել է իր համբերությունը, միակ զենքը, որով նա մինչև այսօր ընդդիմանում էր կառավարությանն ու նրա հովանավորած վայրենի ավազակների հարձակումներին, բայց

ավաղ, մի զենք, որը որպես կանոն խոցում էր հենց իրեն՝ հայ ժողովրդին։ Այո, հայ ժողովուրդը զդացել է, որ վիզ ճկելով ու մեջք ծռելով թուրքի առջև, իր դրությունը չի բարելավի։

Այո, հայ ժողովուրդը համբերությունը կորցրած, վերջապես շարժվում է։

Եվ ժողովուրդը քաջ գիտե, թե ով է իր թշնամին։ Նրա թշնամին այն ավազակախումբն է, որի անունն է «Թուրք կառավարություն» և նրա պետ բաշիբոզուկը, որի անունն է սուլթան...

Այո, հայ ժողովրդի թշնամին միայն այդ կառավարությունն է և ոչ քուրդը, որի համար ավազակությունը մեկ արհեստ է, որ նա գործադրում է անպաշտպան ժողովուրդների վրա, կառավարությունն է հայի թշնամին, որ արգելք չի ուզում դնել այդ ավերիչ հարձակումներին, այլև գազանաբար քաջալերում ու աջակցում է նրանց...»[25]։

Ահա այս եզրահանգումն էլ դարձավ ուղենիշ հայ հասարակության առաջադիմական շրջանների գործունեության համար։

Թուրքական կառավարությունը ատելի էր դառնում նաև թուրք հասարակ ժողովրդի համար։ «... Ժողովուրդը գրգռված էր, նրա դժգոհ տարրերը սկսեցին տրտնջալ։ Սկսվեց գաղտնի շարժում, խլրտում, մի շարք վայրերում երևացին հակակառավարական «հայտարարություններ»։

1892 թվին օսմանյան կայսրությունում ամենուրեք տարածվեց հետևյալ հայտարարությունը. «Օսմանցիներ, հասել է Աբդուլ Համիդ բռնակալի թագավորության վերջը, որն անպատվել է իսլամի անունը և կեղտոտել օսմանի սուրբ գահը...»։

Այդ նույն ժամանակ Արաբիայում արաբները ապըստամբեցին և պահանջեցին սուլթանից ետ տալ խալիֆի տիտղոսը։

1893 թվի հունվարի սկզբներին Փոքր Ասիայում տարածված հայտարարությունները երևացին նաև հայաբնակ շրջաններում, մասնավորապես Կեսարիայի շենքերի պատերին։ Սուլթանը հրամայեց գտնել դրանց հեղինակներին։ Պոլսից եկած փաշաները ձերբակալեցին 500 հայի ու խոշտանգեցին։

Հայերի շրջանում ընդվզումները հաճախակի դարձան։ Իշխանությունները ամեն միջոց գործադրեցին թուրք ազգաբնակչությանը հայերի դեմ հանելու համար։

Ազգամիջյան կռիվների ալիքը հասավ նաև Եոզդատ։ Այդ օրերին եվրոպական թերթերը գրեցին. «Եոզդատում փետրվարի 2-ին մի հայ, որին ուզում էին ձերբակալել, սպանել է մի ոստիկանի։ Ծագել է մեծ, արյունահեղ ընդհարում։ 100 հայ սպանվել են և 50-ը վիրավորվել։ Թուրքերից երեք սպանված կա և 8 վիրավոր։ Ամասիայում մի լրտես սպանելու համար ձերբակալվել է 28 հայ»։

Երբ այս դեպքերի մասնակիցներին դատեցին և վճռվեց նրանց ղեկավարներից Գալուստ Մորուքին կախել, նույն օրը քաղաքի մուֆթիին կախված գտան «Փոխադարձ հատուցում» մակագրությունով։

Մուֆտիի տան մոտ հայերի ու թուրքերի միջև ընդհարում տեղի ունեցավ։ Ըստ թուրքական պաշտոնական տվյալների՝ սպանվեց 20 հայ և 10 թուրք։ Կ. Պոլսից բերվեց երկու վաշտ զորք, բայց հայերը հարձակվում են և նրանց փախուստի մատնում, քաղաքում պաշարողական դրություն է մտցվում, սկսում է գործել ռազմական դատարանը։ Անատոլիայի բոլոր գլխավոր քաղաքները գործնականում պաշարողական վիճակի մեջ էին։

1894 թվի մարտի 24-ին Սամսոնում 400 զինվոր պաշարում են Մ. Մանխաջյանի տունը։ Վերջինս իր ընկերների հետ հերոսաբար դիմադրում է, բայց, ի վերջո, գնդակահար է լինում։ Քաղաքում ձերբակալվում է շուրջ 500 հայ։

Գազազած այդ ընդհարումներից, սուլթանը բղավեց. «Ես ամսական իմ գանձարանից լրտեսների բանակին 300 հազար ոսկի եմ վճարում, որպեսզի այստեղ, իմ քթի տակ, այսպիսի դեպքե՞ր տեղի ունենան»[26]։

Հուզումներն ընդգրկում են նորանոր վայրեր։

Գյուղացին դիմադրում էր։ Նորից ըմբոստանում է Զեյթունը։ Հայերը հրդեհում են Մուսա բեյի ագարակը։

Դերսիմցի քուրդ Թեմուր բեկը թալանում է պետական աղահանքերը։ Մի այլ քուրդ՝ Եուսֆ բեյը, հարձակվում է Բաղեշի կուսակալության Կողթիի կառավարչատան վրա, այն ավերում և ծառայողներին վռնդում է՝ կառավարչին

հայտարարելով, որ այլևս ո՛չ իրեն, ո՛չ վալիին և ո՛չ էլ սուլթանին չի ճանաչում։

Տրապիզոնի վիլայեթի Զարսամպա գյուղաքաղաքի ու նրա գավառակի բնակչությունը՝ հայ, թուրք, չերքեզ և հույն, հրաժարվեցին կառավարությանը հարկ վճարել։ Նրանցից մի քանիսին բանտ նետեցին։ Քաղաքի ու գյուղի բնակիչները 2—3 հազար հոգով հարձակվում են բանտի վրա և ստիպում բանտարկյալներին ազատել։

Հաջնի կայմակամ չերքեզ Ալի բեյը, տեսնելով հայերի նկատմամբ կատարվող բռնությունները և հասկանալով, որ դրանց մասին իր ահազանգերը Պոլսում դիտավորյալ անարձագանք են մնում, գնում է Ադանա և իր հրաժարականը ներկայացնում կուսակալին։ Նրան անմիջապես ձերբակալում են, մեղադրելով որպես «հայերի կողմնակից»։

Սակայն հայ, քուրդ, թուրք աշխատավորության համատեղ պայքարի օրինակները բացառություններ են։ Փաստն այն է, որ օսմանյան իշխանություններին հաջողվեց թուրք և քուրդ ազգաբնակչությանը օգտագործել հայերին բնաջնջելու համար։

Դրա հետ միաժամանակ արևմտահայության պայքարը գնալով ծավալվում էր թե՛ խորքով և թե՛ լայնքով։ Այդ պայքարում աստիճանաբար առաջատար ուժ էր դառնում հայդուկությունը։

1880-ական թվականները հայդուկային խմբերի ձևավորման տարիներ էին։ Ահա երկու լուր, որոնք գրեթե միաժամանակ ստացվել են Վանից. «Զուխ Կետույքի Կանի Ապի կոչված վայրում երեք հայրենասեր երիտասարդներ՝ Հովհաննես Ագրիպանյան, Վարդան Հարությունյան (Գոլոշյանց) և Կարապետ Գյուլաղալյան, շրջելով հայ գյուղերում, գնում են դեպի Վան...»։ Ճանապարհին նրանց դեմ են դուրս գալիս 10 զափթիե։ Սկսվում է կռիվը, որի ընթացքում Ագրիպանյանն ու Հարությունյանը, ինչպես նաև մի քանի զափթիեներ, զոհվում են։ Վանում ընդհարում է եղել հայերի ու թուրքերի միջև... Երկու կողմից մոտ 30 հոգի սպանվել են։ Թուրք կառավարությունը սոսկում է այդ տեսակ ընդհարումներից, որովհետև կարծում է, թե դա ընդհանուր հայկական ապստամբության սկիզբն է»։

Մի այլ թղթակցություն հաղորդում է. «... Հայաստանի մի քանի կողմերում ժողովրդական ոգևորություններ և ինքնապաշտպանության գործը արագ առաջ է գնում...»։

«Մեծ, արյունահեղ հուզումներ Էրզրումում,— գրեց «Հնչակը»,— հուզումներ Ալաշկերտում, հուզումներ Ջարսամպայում ու Երզնկայում, ընդհարումներ Խոտորջուրում, ընդհարումներ Վանում... Հայաստանցի հայ ժողովուրդը խլրտում, շարժվում է...»։

1892 թվի հունիսի 7-ին ձերբակալվում է սեբաստացի Համբարձում Դավթյանը։ Հարցաքննության ժամանակ նա հայտարարում է, որ սուլթանական ռեժիմը «դատապարտված է ոչնչացման և մենք ուզում ենք այդ դատավճռի գործադրողները լինել...»։

1891 թվի նոյեմբերի սկզբին հայդուկային մի խումբ, ռուս-թուրքական սահմանի վրա, Յոնջալու գյուղի մոտ, կռվի մեջ է մտնում քրդերի դեմ և շուրջ 30 հոգու սպանում։ Սակայն խումբը կիրճում շրջապատվում է ու, երբ փամփուշտները վերջանում են, զոհվում են։

Ալաշկերտում գործում էր Հարությունի հայդուկային խումբը։ 1891 թ. սեպտեմբերի 14-ին քրդերը հարձակվում են այդ խմբի վրա։ Սկսվում է կռիվը, որ տևում է մինչև երեկո։ Քրդերին օգնության են գալիս 400—500 հոգի։ Մարտի մեջ են մտնում նույնիսկ կանայք։ Հայերը կարողանում են ճեղքել պաշարման շղթան։ Այդ ժամանակ մահացու վերք է ստանում Հարությունը, իսկ նրա ընկերներին հաջողվում է հեռանալ։

Սամսոնում լայն հանաչում ուներ ախալալախցի Կարապետի հայդուկային խումբը։ Ի վերջո, Կարապետը մատնության զոհ դարձավ, իսկ խումբը ցրվեց։

Կարինի շրջակայքում գործում էր Շամիլի հայդուկային խումբը, որ սարսափ էր տարածել ոչ միայն բնակչության, այլ նաև թուրքական զորքի ու ոստիկանության վրա։ Խումբը չնայած քրդական էր, բայց հայերին չէր վնասում. «Մենք ձեզ վնասելու միտք չունենք, մեր որսը հարստահարիչ կառավարության բարբարոս պաշտոնյաներն են»։

Նշանավոր հայդուկապետներից էր Գալուստ Արխանյանը, որ քաջ մարդ էր և մի քանի լեզու գիտեր։ Նա ձգեց

հայրական տուն-տեղը, հարստությունը, ընտանիքը և նվիրվեց ժողովրդի ազատության սուրբ գործին։ Նրան ձերբակալելու փորձերը անհաջողության են մատնվում։

Կայմակամը որոշում է Գալուստին խորամանկությամբ ձեռք գցել։ Արխանյանի մոտ է ուղարկում նրա մորը, կնոջն ու գյուղի քահանային և համոզում, որ հանձնվի։ Գալուստը մերժում է, բայց, ի վերջո, հարազատների ճակատագրի մասին հոգալով, հանձնվում է։

Գալուստն ու նրա ընկերները դատվեցին հետևյալ մեղադրանքով. «Կայսերական ժառանգական երկրներում բնակվող հավատարիմ հպատակ հայ ազգը օսմանյան կայսերական կառավարության դեմ զինված ապստամբության հանելու և այդ երկրների մի մասը կառավարության իրավասությունից դուրս բերելու, խռովարարական նպատակով «կոմիտե» անունով հեղափոխական ընկերություն ստեղծելու և նրան աջակցողներից մեծ գումարներ հավաքելու, զաղտնի զենք և ռազմամթերք գնելու... ներքին անդորրությունը և երկրի խաղաղությունը մասամբ վրդովելու, հավատարիմ ժողովրդին վնասելու և հեղափոխական ընկերության մասնակցելու... վնասակար թղթեր տարածելու...» համար[27]։

Գալուստի գործով 25 հոգի մահվան դատապարտվեցին։

Կեսարիայում գործում էր մի այլ հայդուկային խումբ Ճանոյի գլխավորությամբ։ Ալիս գետի ափին այս 5 հոգուց բաղկացած խումբը վեց ժամ մարտ է մղում 200 ոստիկանի դեմ։ Ի վերջո, Ճանոն զոհվում է, իսկ մյուս հայդուկները բռնվում են։

Սեպտեմբերի 8-ին 150 թուրք զինվորներ, մոտ 500 «չերքեզ և գյուրջի ավազակներ ու ծովահեններ» շրջապատում են Մարզվանի Ղապլան և Ճամիի աթիզ թաղերը։ Շմավոնի ղեկավարած հայդուկները, չորս մասի բաժանված, պաշտպանվում են։ Յոթ հայդուկներ հինգ ժամ շարունակ մարտնչում են իրենց 90 անգամ գերազանցող թշնամու դեմ։ Ի վերջո, հայդուկներից երեք հոգու հաջողվում է ճեղքել պաշտպանության շղթան ու անհետանալ։ Իշխանությունները Մարզվանում և Ամասիայում պատերազմական դրություն մտցրեցին, զանգվածային խուզարկություններ ու ձերբակալություններ կատարեցին, արգելեցին տնե-

ռում նույնիսկ ճրագ վառել, որովհետև «եթե ճրագ վառեն՝ խորհուրդներ են անում, դավադրություններ են նյութում բարեխնամ սուլթանի կառավարության դեմ»։

Նույն օրերին Սամսոնի Ալաչամ գյուղում հայ բնակչության և թուրքական զորքերի միջև ընդհարում է տեղի ունենում, սպանվում են 12 հայ և 128 թուրք։

Աբրոն (Մկրտիչ Սահակյանը) Ծապին Գարահիսարից էր, բայց երիտասարդ հասակից աշխատել էր Սև ծովի ափին։ Միջնակարգ կրթություն էր ստացել, զբաղվել վաճառականությամբ։ 1892 թ. գնում է Բաքու և աշխատանքի անցնում նավթագործարանում։ Այնտեղ նա հանձնակատարություններ էր կազմակերպում Արևմտյան Հայաստան խմբեր ուղարկելու համար։

1895 թ. Աբրոն անցնում է Սասուն։ Նա սասունցիներին հորդորում է քանիչ հանձնաժողովի անդամներին ցուցմունքներ ու տեղեկանքներ տալ։ Նա նյութեր մատակարարեց «Դեղի տելեգրաֆի» թղթակից Էմիլ Դիլոնին։

Քիչ անց Աբրոն Կովկասում էր, իսկ 2—3 ամիս հետո նա Սասուն վերադարձավ հայդուկային խմբի հետ ու մասնակցեց ինքնապաշտպանական կռիվներին։ 1896 թ. մարտի 18-ին, Մեզտեռ սարից իջնելիս, նա ընկնում է ձյան փլվածքի տակ ու խեղդվում։ Նրա դիակը գտան 45 օր հետո։

Արևմտյան Հայաստանում և ամբողջ կայսրությունում լայն ճանաչում ուներ հայդուկապետ Հ. Մինասյանը (Մինասօղլան)։

Ռշտունիքի հայդուկության հիմնադիրը (1886 թ.) Շերոն ու Չաթոն (Մարկոսն) էին։ Նրանք երկուսն էլ մեծ հեղինակություն ունեին։ Նույնիսկ քրդերն էին նրանց մասին երգեր հյուսել։ Շերոն ընկավ (1896 թ.) նույն վայրում, որտեղ երկու տարի առաջ զոհվել էր Չաթոն։

1895 թ. օգոստոսի 9-ին Քեռու հայդուկային խումբը Քեմախի կամուրջի մոտ ընդհարվեց թշնամու 400 զինվորի և 1000 բաշիբոզուկների հետ ու ոչնչացրեց 50 հոգու։

Սակայն 90-ական թվականների սկզբի խոշոր իրադարձությունները կատարվեցին Կարինում ու Կ. Պոլսում։

1890 թ. հունիսի 6-ին, զենք փնտրելու պատրվակով, իշխանությունները խուզարկում են Կարինի առաջնորդարանը։ Ոչինչ չեն գտնում։ Խուզարկում են նաև ազգային վարժարանն ու եկեղեցին։ Կրկին ոչինչ չեն գտնում։ Բայց խուզարկությունը դադարեցնելու փոխարեն սկսում են փոր-

բել եկեղեցու խորանի հատակը, որն առաջացնում է հայերի զայրույթը։ Հայերին ցրելու համար 6000 հոգիանոց զորամաս է բերվում։ Մի քանի հայ սվինահար ընկնում են, իսկ նրանցից մեկը կրակում ու սպանում է հարյուրապետին։ Տեղի է ունենում արյունալի ընդհարում։ Այդ ընթացքում քաղաքի թուրք բնակչությունը հարձակվում է հայկական թաղերի վրա։ Հայերը պաշտպանվում են։ Ամբողջ քաղաքը վերածվում է մարտադաշտի։ Սպանվում է 70 հայ, 35 թուրք, վիրավորվում են 400 հոգի։

Կարինի վալին Երզնկայից 2000 զինվոր խնդրեց։ Քաղաքը ամբողջովին պաշարվեց։ Հայերը փակվեցին իրենց տներում ու թաղերում։

Սուլթանն անհանգստացած էր։ Նա իրար հետևից հեռագրեր էր ուղարկում, հանձնարարություններ տալիս, իրավիճակի մասին լուրեր պահանջում։ Կառավարությունն անընդհատ նիստեր էր գումարում։

Պատրիարքը այցելեց Մեծ վեզիրին և հետաքրքրվեց Կարինում տիրող վիճակի մասին։ Վերջինս պատասխանեց, որ իրեն ոչինչ հայտնի չէ և խստությամբ ավելացրեց. «Հայերը թող հանգիստ մնան»։

«Այժմ ձերբակալություններ են կատարվում հայերի ջրջաններում,— գրում էին Կարինից,— և կառավարությունը ջանում է հայկական հեղափոխության կերպարանք տալ գործին և պատասխանատվությունը բարդել հայերի վրա, մինչդեռ ամեն ինչ ցույց է տալիս, որ խուզարկությունները կանխամտածված կոտորած առաջ բերելու նպատակով են գործադրվել»։ Ձերբակալվեց շուրջ 50 հոգի, այդ թվում նաև Խաչատուր Կերեկեյանը։ Կատարվեցին անասելի բարբարոսություններ։

Թուրքերի «կորուստները նվազ են եղել, որովհետև հատուկ պատրաստությամբ և զորքի ու խուժանի գործակցությամբ է հարձակումը տեղի ունեցել, այդ հարձակման կանխամտածված լինելը սարակույս չի հարուցում։ Քաղաքում ռազմական դրություն է հայտարարված»[23]*։*

Կարինի դեպքերի ազդեցության տակ խռովություններ եղան նաև Ալաշկերտում, Խնուսում և Մուշում։ Սուլթանը արգելեց եվրոպական թերթերի մուտքը Թուրքիա։

1890 թվի հուլիսի 10-ին Պետերբուրգից եվրոպական

լրագրերին ուղարկվեց հետևյալ հեռագիրը. «Վերջին ընդհարումը, որ տեղի ունեցավ Էրզրումում թուրքերի ու հայերի միջև, պատճառել է բազմաթիվ զոհեր։ Սպանվածների ու վիրավորների թիվը հասնում է մինչև 300-ի։

Հյուպատոսարանները պաշտպանված են թուրք զորքերով։ Բազմաթիվ ձերբակալություններ են եղել հայերի մեջ։

Այդ անցքի առիթով հայոց պատրիարքը հայտնել է հրաժարական տալու իր ցանկությունը։ Հրաժարականը նա պատճառաբանում է վերոհիշյալ ձերբակալություններով և այն թշնամական դիրքով, որ թուրք կառավարական մարմինները ունեն հայ ազգի նկատմամբ»[29]։

1890 թ. հուլիսի 15-ին Պոլսում տեղի ունեցած ցույցում կարդացվեց հնչակյանների կազմած «Հայ ժողովրդի պահանջները»։

Ահա այդ պահանջներից մի քանիսը.

ա) Հողը նրան, ով այն մշակում է։

բ) Բերքը նրան, ով այն արտադրում է։

գ) Բոլորը պետք է աշխատեն և իրենց քրտինքով վաստակեն ապրուստը։ Հայաստանի տերը պետք է հայերը լինեն։

դ) Օրենսդիր ժողով, ազատ ընտրություն։

ե) Կրոնի ազատություն, բոլոր խտրականությունների վերացում։

զ) Նահանգների լայն ինքնավարություն։

է) Մամուլի, խոսքի, կազմակերպությունների ազատություն։

Այս պահանջները կրոնական արարողության ժամանակ տալիս են պատրիարքին և առաջարկում ցուցարարների գլուխն անցած՝ պալատ գնալ ու ներկայացնել սուլթանին։ Պատրիարքը փախչում ու թաքնվում է։

Գում Գափուի եկեղեցու բակում ևս միտինգ տեղի ունեցավ, որի կարգախոսն էր. «Մահ կամ ազատություն»։

Ամբոխը շարժվում է պատրիարքարան և պահանջում է, որ պատրիարքը միանա ցուցարարներին։ Ահաբեկված պատրիարքը դուրս է գալիս ու ժողովրդի առաջն ընկած՝ շարժվում դեպի պալատ։

Երբ Աբդուլ Համիդին հայտնեցին հայերի ցույցի մասին, նա կատաղության նոպայի մեջ բղավեց. «Զո՛րք, զո՛րք,

կոտորել ապստամբներին»։ Մինչդեռ սուլթանը նախապես զորքեր էր կուտակել Գում Գափուում։ Ցուցարարները հասան Պալի փաշա վայրը։ Այստեղ եկան նաև Դերվիշ փաշան, ոստիկանության նախարարը, Պոլսի կառավարիչը, սուլթանի թիկնապահները, որոնց Համիդը ուղարկել էր ցույցը ջախջախելու։ Հայերին շրջապատեցին ու նրանց վրա կրակ բացեցին։ Հայերն ընկնում էին, բայց շարունակում էին առաջանալ։ Ի վերջո, նրանք անցան դիմադրության, որ տարածվեց նաև Գում Գափուի թաղերը։ Հայերի վրա կրակում էին մարտինի հրացաններով, իսկ նրանք դիմադրում էին ատրճանակներով ու քարերով։

Դերվիշ փաշան պատրիարքին հանձնեց սուլթանի հեռագիրը. «Լսեցի ու սաստիկ բարկացած եմ, մյուս անգամ այդպիսի դեպքեր չլինեն, թե չէ Ձեզ ու Ձեր ժողովները լրիվ կջախջախեմ։ Տեղեկություն տվեք, թե ինչու այդ դեպքերը պատահեցին, անշուշտ, մասնակցություն ունեցել եք[30]։

Սուլթանի հեռագրին խորեն պատրիարքը պատասխանեց. «Ի՞նչ անի խեղճ հայ ժողովուրդը, երբ տեսնում է իր տունը կողոպտված, կանայք ու հարսները՝ լլկված, տեղիս պանդուխտ հայրենակիցներիս նամակները փոստատանը բացված,- իր նյութական միջոցներից զրկված և այլ բազմաթիվ թշվառությունների մատնված։ Հայ գավառցին էլ չկարողացավ տոկալ և, ծայրահեղության դիմելով, ցույց արեց, որ ես ձեզ ասեմ։ Քանի՞-քանի՞ անգամ հայտնել եմ այս ամենը և անհետևանք է մնացել։ Ուստի, էլ չկարողանալով տոկալ և չուզելով իմ սիրելի ազգի թշնամության պատճառ լինել, գալիս եմ ներկա հրաժարագիրս մատուցելու Ձերդ կայսերական գահիդ ոտին»[31]։

Սկսվեցին ձերբակալությունները, բանտ նետվեց շուրջ 600 մարդ, որոնք անպատմելի խոշտանգումների ենթարկվեցին։

Հայկական թաղերը պաշարված էին, տները խուզարկվում էին։

1890 թ. հուլիսի 17-ին Տրապիզոնից գրում են, որ եթե Կարինի դեպքերից հետո թուրքերը սկսեցին բացահայտ խոսել հայերին կոտորելու մասին, ապա «Պոլսի ցույցերից հետո այդ ուղղությամբ գործնական քայլերի դիմեցին։

Հուլիսի 26-ի գիշերը քաղաքի 2000 Թուրքեր զինված հավաքվում են Մեյդանի հրապարակում՝ հայոց թաղերի վրա հանկարծակի հարձակվելու համար։ Հավաքվածների մեջ կային նաև Թրքուհիներ՝ զինված կացիններով ու ատրճանակներով։ Սակայն քաղաքի մի խումբ խելամիտ Թուրքերի ջանքերով կոտորածը կանխվեց»։

Նույն օրը Սեբաստիայում 200 զինված Թուրքեր հարձակվում են հայկական Թաղերի վրա, բայց ետ են շպրտվում։ Մալաթիայում ևս բացահայտ խոսում էին հայերին կոտորելու մասին, փողոցում հանդիպած հային անխնա ծեծում էին։ Թուրքերը հարձակվում են Խարբերդի Եգեքի գյուղի վրա՝ հայերին կոտորելու, բայց ետ են շպրտվում։ Դրանից 15 օր առաջ նման մի հարձակում կատարվել էր նաև Բասենի Ալիք Ջեկրեք գյուղի վրա։

Դրությունն ամենուրեք լարված էր։ Կ. Պոլսից ստացված մի նամակում կարդում ենք. «Հայաստանի բոլոր կողմերից սպանությունների, հափշտակությունների լուրեր են շարունակ հասնում։ Բոլոր քրիստոնյաներին կոտորելու սարսափը ընդհանուր է ամբողջ Հայաստանում»։

Արաբկիրից պատրիարքարանին խնդրում են «կամ մի միջոց ցույց տալ, որով կարողանանք ապօրինությունների առաջն առնել և կամ մի տեղ, ուր կարողանանք ամբողջ քաղաքով գաղթել»։

2000 արաբկիրցիներ բողոք ուղարկեցին նաև սուլթանին ու դեսպաններին։ Քաղաքի բոլոր հայ պաշտոնատար անձինք հրաժարական ներկայացրին։ «Մտքերը ծայր աստիճան հուզված են, ոչ ոք չգիտե, թե վաղը ինչ կարող է պատահել։ Քաղաքին ու շրջապատին սպասվում է մեծ արյունահեղություն։ Անվտանգությունը մնացել է բանտի մեջ...»։

Հայաստանում կառավարությունը վերանորոգում էր թերդերը, բազմապատկում զորքերի թիվը, զինում մահմեդական տարրերին, ամրացնում երկրի սահմանները, պաշարման դրության մեջ դնում ամբողջ նահանգներ։

«Անվստահ՝ Եվրոպայում իր քաղաքական խախուտ դիրքի հետևանքով, ենթակա տնտեսական քայքայման ու ֆինանսական սնանկության, շարունակ կասկածոտ իր հպատակ ազգերի խիստ դժգոհության նկատմամբ,— ո՞վ

կարող է հավատացած չլինել, որ այդ վիճակում տաճկական տերությունը, Արևելյան հարցի այդ հիվանդ գերին, դիտավորություն չունի ամենամոտ ապագայում հայ տղամարդու, հայ կնոջ, հայ երեխայի մսով, ոսկրով ու արյունով, իբրև ցեխով ու ջրով, լցնել ու փակել իր տերության խախուտ շենքի ճեղքերը ու ծակերը, հուսալով ամրացնել այն»։ «Անսովոր, ամենամեծ ծանր դեպքերը մոտալուտ են»[32]։

«Արյան հոտը,— նույն օրերին գրում են Մարզվանից,— օդի մեջ է»։

***

Ասվածից հետևում է, որ օսմանյան կայսրության ներսում, 19-րդ դարի վերջին 20-ամյակին, խմորվում էր ազգային և սոցիալ-քաղաքական մի ճգնաժամ, որը ոչ միայն դարավոր քնից արթնացրել էր ազգային և սոցիալական ճնշման տակ կքված զանգվածներին, այլև հասարակությանը ընդհուպ մոտեցրել էր ազգային շարժումներին ու դասակարգային ընդվզումներին։ Բարձրանում էր ներքաղաքական պայքարի բարիկադը, որի մի կողմում սուլթանական վարչակազմն էր, ֆեոդալական և կալվածատիրական խավերն ու վաշխառությունը, ռազմական վերնախավն ու կաշառակեր պաշտոնեությունը, ինչպես նաև մահմեդական հոգևորականությունն ու կոմպրադորական բուրժուազիան։

Բարիկադի մյուս կողմում գյուղացիությունն էր, պրոլետարական և կիսապրոլետարական տարրերը, արհեստավորները, մանր ու միջին առևտրականները, մտավորականությունը։

Բայց օսմանյան հասարակությունը խճճված էր սոցիալական, ազգային, կրոնական բազմաթիվ գորդյան հանգույցներով, որը հասարակության ներքին խավերին հնարավորություն չէր տալիս պայքարելու իրենց դասակարգային ինքնուրույն շահերի համար։ Դրա հետևանքով Թուրքիայում հասարակության վերակառուցման նպատակ հետապնդող ձևավորված շարժման մասին խոսելը դժվար է։

Դրան մասնավորապես խանգարում էր թուրք ազգաբնակչության հետամնացությունը, կրոնական մոլեռանդությունը՝ նրա կույր հնազանդությունը մահմեդական հոգևորականությանը, նաև այն, որ օսմանյան իշխող դասակարգերին դարերի ընթացքում հաջողվել էր թուրք աշխատավորության գիտակցությունը թունավորել այլամերժ մեծապետական թույնով, որն անհնար դարձրեց կայսրության կազմի մեջ եղած ժողովուրդների աշխատավոր խավերի համերաշխությունը։

Այս պայմաններում սուլթանական վարչակազմի ու շահագործողների դեմ զանգվածային շարժում առաջանալ չէր կարող։ Դա մասնավորապես ակնհայտ էր հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարում։

Մանավանդ, որ այդ ժողովուրդների պայքարը ևս ներքին միասնություն չուներ, տարբեր հասարակական խավեր նրա նկատմամբ հաճախ հակադիր, որոշ դեպքերում թշնամի վերաբերմունք ունեին։

Այս առումով բացառություն չէր կազմում նաև արևմտահայությունը։ Իհարկե, արևմտահայությունը իր ամբողջությամբ ձգտում էր դուրս գալ օսմանյան բարբարոս լծի տակից, բայց ոչ բոլոր հասարակական խավերն էին, որ գործնական մասնակցություն էին ցուցաբերում ազատագրական շարժումներին, իսկ որոշ ուժեր նույնիսկ խոչընդոտում էին դրանց ծավալմանը։

Մի քանի մեջբերումներ այդ տարիների մամուլից։

1880 թ. դեկտեմբերի 4-ին Կ. Պոլսից գրում են. «Այս անգամ ևս ազգային բարձրաստիճան ավագանին և բարձրագույն եկեղեցականությունը, ձեռք ձեռքի տված, վաճառում են ազգի շահերը և ամենախայտառակ ստորագույն պայմաններով հաշտվում են Բ. Դռան հետ»[33]։

1890 թ. վերջին, երբ սուլթանը լուր տարածեց, թե մտադիր է հայ քաղաքական բանտարկյալներին ներում շնորհել, հասարակությանը խաբելու այդ քայլերում սուլթանին լուրջ աջակցություն ցույց տվեցին Կ. Պոլսի հայ ամիրաներն ու հոգևորականները[34]։

«Հայերից քչերն են բարձր դիրքի հասել,— կարդում ենք մի թղթակցության մեջ,— նրանք էլ մեծ մասամբ թուրքի վարքն ու բարքը հնարամտորեն ընդօրինակելու, գողություն, կաշառակերություն, շողոքորթություն, անիրավություն անելով են առաջ գնացել»[35]։

«Հնչակը» գրում է.— «Զգում է մարդ, ինչպես ծնունդ առած աճում է և հայ բուրժուազիան, որ օգուտ քաղելով ժողովրդի անպաշտպան վիճակից, ոտնակոխ անելով նրա իրավունքները, ծաղրելով նրա աղքատությունն ու տկարությունը, պահելով նրան թշվառ ու ստրկական դրության մեջ և այդ տեսակետից օգնելով հարբստահարիչ ու բռնավոր կառավարություններին, ձգտում է ժողովրդի ոսկորների ու արյան վրա իր անիրավ զորությունը հաստատել»[36]։

«Հնչակը» «Արմենիային» գրում է. «Վախկոտներ, դուք դողում եք կառավարության առաջ և ձեր քաջությունը նրանով է արտահայտվում, որ սուլթանի ապտակը ձեր դեմքին՝ դուք «նորին վեհափառության ուշադրությանը արժանի» լինելու նշան եք համարում, որ սուլթանը թքում է ձեր պատրիարքի երեսին, դուք ասում եք. «Վեհափառը ամպոտել է և անձրև է գալիս նրա բերանից։ Նրան չպետք է գրգռել»[37]։

Կատարված մեջբերումներում, իհարկե, նկատելի են չափազանցությունները, քաղաքական հակակրանքի ազդեցությունը, սակայն դրանք ամենայն որոշակիությամբ հաստատում են այն իրողությունը, թե հայկական վերնախավը ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլ նաև ազգային խնդիրներում վերապահ կեցվածք էր ընդունում։ Այս պայմաններում համազգային հզոր շարժում առաջացնելը, եթե ոչ անհնար, ապա շատ դժվար խնդիր էր։

Ահա թե ինչու ժամանակի քաղաքական ուժերը գտնում էին, որ օսմանյան բռնակալության դեմ հայ ժողովրդի պայքարի հիմնական մեթոդը պետք է լիներ պարտիզանական կռիվը, որովհետև նա կանոնավոր բանակ պահելու և ընդհանուր ճակատամարտ տալու հնարավորություն չուներ։

Դրա համար էլ այդ պայքարի գլխավոր ուժը հայդուկներն էին, թշնամի լինելով «ամեն տեսակի բռնությունների՝ սկսած սատրապ աստիճանավորներից մինչև քուրդ ավազակը, մի կողմից, և արյունարբու հարկահանն ու վաշխառուն, մյուս կողմից, այդ խմբերը ապագա պատ-

մության կենդանի դրոշակակիրները կլինեն։ Պարտիզանական հարձակումներ գործելով բռնատերերի վրա, պաշտպանելով ճնշվածներին, նրանք էլեկտրականացնում են ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռվի կենդանի օրինակներ են տալիս ժողովրդին...»[33]։

Ահա թե ինչու հայդուկները վայելում էին աշխատավորական լայն շրջանների, մասնավորապես, գյուղացիության աջակցությունը։ Բերենք բազմաթիվ փաստերից միայն մի քանիսը։

«... Գյուղով... անցնում էին մի խումբ կամավորներ... Մի չքավոր այրի կին, դիմելով խմբապետին, ասաց. «Ես ոչ փող ունեմ և ոչ զենք, ինչ որ ունեմ այն եմ տալիս, սա էլ թող լինի իմ նվերը»։ Այս ասելով, կինը բռնեց իր միակ որդու ձեռքից և տվեց խմբապետին։

Շատ տեղերում գյուղացիները ծախում էին եզները և զենք գնում։ Կանայք զարդարանքները և մատանիները տալիս էին իրենց ամուսիններին և հորդորում, որ վաճառեն և դրամով զենք գնեն։

Երկու եղբայր վիճում են հայդուկ դառնալու համար։ Նրանք դիմում են ծեր հորը հարցը լուծելու։ Մերունին պատասխանում է. «Դուք կարող եք գնալ, ես չե՞մ կարող։ Երեքիս մեջ չոփ (վիճակ) գցեք, ումը կընկնի, թող նա գնա»։

Հայդուկային շարժման և ինքնապաշտպանական կռիվների ծավալման ու ղեկավարման գործում փոքր չէ հայ քաղաքական կուսակցությունների դերը։

Սակայն խորհրդահայ պատմագրությունը, հայտնի պատճառներով, տասնամյակներ շարունակ խեղաթյուրել է այդ դերը։ Մեր պատմագիտական որոշ աշխատություններ ընթերցելիս այն տպավորությունն է ստեղծվում, կարծես, այդ կուսակցությունները կանխամտածված գործել են հայկական ազատագրական շարժման դեմ։ Ընդ որում, նրանց հասցեին օգտագործվել են բնութագրումներ ու ածականներ, որոնք այսօր միայն դառը ժպիտ ու ամոթի զգացում են առաջացնում։

Ոչ մի քաղաքական շարժում ու կուսակցություն սխալներից զերծ չէ և գլխավորն այդ չէ, այլ այն, թե տվյալ

շարժումն ու կուսակցությունն ում է ծառայում և ինչ քաղաքական խնդիրներ է հետապնդում։

Օսմանյան լծից ազատագրվելը, գոյապայքարը հայ ժողովրդի բոլոր խավերի ձգտումն ու երազանքն էին, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում նրանց միությունների ու քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ։ Տարբերությունը լոկ մոտեցումներում ու մեթոդներում, այսինքն տակտիկական բնույթի խնդիրներում էր։

Սակայն այդ չի նշանակում, թե այդ կուսակցությունները սխալներ, և այն էլ կոպիտ սխալներ չեն ունեցել և այլևս դրանք քննադատության չեն ենթարկվելու։

Տվյալ դեպքում ևս չափանիշը մեկն է՝ պատմական ճշմարտությունը, և նրան պետք է հարազատ մնալ։

Ինչպիսի՞ն էր հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումն անցյալ դարի 80—90 թթ.։ «Հնչակը» գրեց, որ ողորմություն խնդրելու փոխարեն պետք էր ստեղծել մարտական կազմակերպություն, «զրդռել ժողովրդին և սկսել հեղափոխական ապստամբական շարժումներ։ Այդ ժամանակ հայկական աքաղաղը կկանչեր և Եվրոպան վեր կթռչեր իր քնից»։

«Հնչակը» հայերին կոչ էր անում. «Հայաստանի բոլոր կենդանի ուժերը պետք է ոտքի ելնեն մեծ ապստամբությամբ և այդպիսով ստիպեն Եվրոպային վերջապես մի բավարար լուծում տալ մեր խնդրին... Եվրոպայից է կախված մեր խնդրի վերջնական լուծումը»[39]։

«Եթե ուզում եք,— գրում է «Հնչակը» 1892 թ. դեկտեմբերին,— Եվրոպան միջամտի և մեր դատին լուծում տա, ամենից առաջ պետք է ինքներս մեր մեջ կենտրոնացնենք մեր բոլոր ուժերը, դնելով դրանք հեղափոխական ուղու վրա։ Եվ միայն այդ ընթացքում մենք կարող կլինենք ցնցել եվրոպական տերություններին՝ արյունահեղ կռիվներ մղելով Թուրքի դեմ, դրանով շոշափելով նրանց արևելյան շահերը և այդպիսով միայն նրանց կամաց-կամաց հարկադրել միջամտելու մեր և Թուրք կառավարության միջադեպին»։

Հնչակյան կուսակցության դիրքորոշումը ամենայն մանրամասնությամբ շարադրված է «Հնչակի» 1888 թ. 4-րդ և 5-րդ համարներում։

Այդ առնչությամբ տպագրված հոդվածում մասնավորապես նշվում է, որ «առաջանում է հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդիրը» և պահանջ է առաջադրված զատելու նրա ճակատագիրը Թուրքիայի ճակատագրից, քանի որ այս վերջինը մեր ժողովրդի ճակատագրի նկատմամբ խաղում է այն դերը, ինչ դեր խաղում է ջուրը կրակի նկատմամբ։ Մտածել, թե՝ «խաղաղ ճանապարհով ժողովուրդը կհասնի բարելավության, միանգամայն անօգուտ և անբարոյական է, ամոթ ու վախկոտություն է»։

Փրկության միայն մեկ ճանապարհ կա. «Բացարձակ պատերազմ մղել այդ կործանիչ կազմակերպության դեմ... Բացարձակ պատերազմ մղել Թուրք կառավարության դեմ...»։ Փրկության միջոցը հեղափոխությունն է, որը «պիտի սկսի գործադրել գիտակցական հեղափոխական տարրը և պատերազմի հաջողության շնորհիվ գրավի ժողովրդի աջակցությունը»։

Ուրեմն, հեղափոխությունը պետք է սկսի «գաղտնի հեղափոխական կազմակերպությունը», որը գործնականում ներկայացնում էր մարդկանց մի ոչ ստվար խումբ, իսկ ժողովուրդը շարժմանը միանում էր այդ խմբի «պատերազմի հաջողությունից» հետո միայն։

Բայց «Հնչակը» իր հարցադրումներում հետևողական չէր։ Արդեն նույն հոդվածում նա թերահավատություն է արտահայտում հեղափոխական ուժերի կարողությունների նկատմամբ։ «Հայոց անմխիթար կյանքում,— գրում է թերթը,— մենք տակավին չենք պատահել այնպիսի անկեղծ ու գիտակցական մարտնչողների, որոնք այն նոր գաղափարի հաղթության գործը դարձրած լինեն իրենց կյանքի գլխավոր նպատակը։ Ցույց տվեք հայ երիտասարդության պարտեզում, ուր, բացի սակավ լալկան ուռիներից և անպետք խոտից, լինի մեկ անկյուն, որտեղ առանձնացրած ծաղկեն արյունագույն վարդեր»։

1888 թ. մարտին «Հայ հայրենասիրական ընկերության» Լոնդոնի մասնաճյուղը հուշագիր է ներկայացնում Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերիին և խնդրում ազդել Թուրքիայի վրա՝ Բեռլինի կոնգրեսի տրակտատի 61-րդ հոդվածը կատարելու համար։ Ծաղրելով նման հուշագրերը խաղաղ պայմաններում ներկայացնելու

փաստերը, «Հնչակը» գրում է, որ հուշագրեր պետք է ներկայացնել «այնպիսի ժամանակ, երբ Հայաստանում հեղափոխական, ապստամբական հոսանքը քաղաքներ ոտի կանգնեցրած լիներ, ժողովրդին ազատության դրոշի տակ համախմբած լիներ,— այդ ժամանակ տեղական սարսափահար անցքերի նկարագիրներն արդարև— ակամա կգրավեն ամեն մի տերության ուշադրությունը...»։

Ուրեմն ո՞րն է ելքը։ «Հնչակը» պատասխանում է. «Մի պատերազմ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև հայերիս համար պետք է լինի ամենահարմար բոպեն դրդելու ու բարձրացնելու հայ ժողովրդին թշնամիների դեմ, ձգտելով օգտվել այդ բոպեից ձեռք բերելու համար հայրենիքի ու ժողովրդի ազատությունը... Այդ գործողությունները միաժամանակ պետք է լինեն ընդդեմ թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուրքիայի։ Մենք խո չե՞նք ձգտում մի բռնապետությունից ազատվելու՝ այնուհետև մի ուրիշ բռնապետության ճիրանները նետվելու համար...»։

Ուրեմն, Ռուսաստանին ապավինելը ևս փրկություն չէր։ Հնարավորությունների այս հետևողական ժխտումը հնչակյան կուսակցությանը հասցրեց քաղաքական պայքարի դերի ժխտմանը և առաջին պլան մղեց ահաբեկչության ծավալումը։

«Թուրք բռնապետական և կեղեքիչ կառավարության դեմ պատերազմ մղելու համար,— 1888 թ. հունիսին գրեց «Հնչակը»,— հայ հեղափոխականների գործադրելի միջոցների մեջ նշանավոր տեղ պիտի բռնե տեռորիզմը»։ Եվ ապա. «... Երբ դեռ գործողը միմիայն հեղափոխական փոքրամասնությունը կլինի, տեռորիզմը ամենաուժեղ և ամենաանհրաժեշտ զենքն է անհավասար պատերազմի մեջ կառավարության դեմ»։

Մի քանի ամիս անց «Հնչակը» ճշտում է. «Կուսակցության գործունեության եղանակները երեքն են՝ պրոպագանդա, ագիտացիա և տեռորիզմ կամ տեռոր»։

Գրեթե նույն մոտեցումը կարելի է հանդիպել դաշնակցական կուսակցության հրապարակումներում։

«Դրոշակը» 1891 թ. № 2-ում գրեց. «Հեղափոխական հարուստ տեխնիկայով զինված գաղտնի կազմակերպության տարածումն ու զարգացումը բնականաբար առաջ

կբերի ավելի հաճախ կրկնվող խմբային ցույցեր տաճկական բռնակալության դեմ, որոնք մի կողմից կդաստիարակեն ժողովրդի հեղափոխական ոգին, մյուս կողմից, կքայքայեն տաճիկների տերության առանց այն էլ խախուտ հիմքերը։

Եվ երբ հեղափոխության պարտիզանական կռվի ալիքները ողողեն ամբողջ Տաճկական Հայաստանը, երբ նրանք անվերանորոգելի ճեղքեր բանան տաճիկ տերության խախուտ շինվածքի մեջ, երբ վերջապես, Եվրոպան տեսնի, որ Տաճկաստանի խաղաղությունը անդառնալի կերպով խախտված է երկու անհաշտ՝ մինչև արյան վերջին կաթիլը մաքառել վճռած թշնամիների կռվով, երբ նա տեսնի, որ Տաճկաստանում իր ներդրած դրամագլուխները վնասվում են և կորչելու վտանգի են ենթարկվում և, որ կայծը բոցավառվելով կարող է եվրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, այն ժամանակ ժողովուրդը ձեռք կբերի իր մարդկային իրավունքները»։

— Իսկ ո՞վ է լինելու հայդուկային շարժման ղեկավար ուժը։ Այդ հարցին «Դրոշակը» միանշանակ պատասխան է տալիս՝ մտավորականությունը, որը պետք է զբաղվի «հեղափոխական ուժերի կազմակերպմամբ», իսկ մտավորականություն ասելով «Դրոշակը» հասկանում է կուսակցության ղեկավար անդամներին։

Պայքարի մեթոդների հարցում ևս հայդուկների ու դաշնակների միջև հակասություններ կային։

Եթե հայդուկային շարժման համար բնորոշը պարտիզանական բնույթի կռիվներն էին, ապա դաշնակցության գործունեության համար՝ բացատրական-կազմակերպական աշխատանքն ու հայ ազգաբնակչության զինումը։ Դաշնակների քաղաքական տակտիկայի մասին խոսելիս, իհարկե, չի կարելի նկատի չունենալ նաև ահաբեկչությունը։

Մեր պատմագրության մեջ ոչ քիչ դեպքերում իրար են հակադրվում հայդուկությունն ու համազգային ապստամբության գաղափարը։ Ըստ որում, աչքաթող է արվում երկու հանգամանք՝ ա) հայդուկությունը հեռու գնացող քաղաքական նպատակներ չէր հետապնդում, նա իր առաջ խնդիր էր դնում պայքարել բռնության, հայի պատվի ու

կյանքի նկատմամբ ոտնձգությունների դեմ, բ) Արևմտյան Հայաստանի տարածքը բնակեցված էր ոչ միայն հայերով, այլ նաև քրդերով, թուրքերով, հրեաներով, ասորիներով, չերքեզներով, և այլազգիների այդ ծովում հայկական մեկուսացված ազգային շարժումը, առավել ևս համազգային ապստամբությունը, անիրականանալի էր։ Հայ ժողովրդի ազատագրության ուղին ընկած էր օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ու, առաջին հերթին, քուրդ ժողովրդի ազատագրական պայքարի խաչմերուկներում։ Պատմությունը այդպես էր որոշել՝ հայն ու քուրդը կամ պետք է ձեռք ձեռքի տված պայքարեին իրենց ընդհանուր ազատության համար, կամ քուրդը դառնալու էր հայի գերեզմանափորը։

Հայ բոլո՞ր հասարակական-քաղաքական ուժերը հասկացան այս ճակատագրական երկընտրանքը։ Դժբախտաբար, ոչ։ Նաև նրանք, ովքեր այսօր ևս համազգային ապստամբության գաղափարը հակադրում են հայդուկային շարժմանը և վերջինիս մեղադրանք ներկայացնում, թե նա խանգարում էր առաջինի նախապատրաստությանը, ջլատում ազատագրական շարժման ուժերը և թուրքերի համար առիթներ ստեղծում հայերին կոտորելու, պարզապես իրենց նեղություն չեն տալիս ըմբռնելու Արևմտյան Հայաստանի ոչ միայն ազգային-էթնիկական ու կրոնական, այլ նաև սոցիալ-քաղաքական իրավիճակը։ Այդպիսիները ազգային-ազատագրական շարժման մասին մարքսիզմի ընդհանուր տեսական դրույթները մեխանիկորեն տարածում են Հայաստանի վրա, առանց հաշվի առնելու օսմանյան տիրապետության զարգրելի առանձնահատկությունները։ Այդպիսիները իրենց նեղություն չեն տալիս նկատելու, որ թուրքական բռնակալության լծից բալկանյան ժողովուրդների ազատագրության հարվածային ուժը հայդուկներն էին, այդ նրանք էին, որ պարտիզանական տևական կռիվների միջոցով միավորեցին ազգային ուժերը, նրանց պայքարի ոգի ներշնչեցին, մարտունակ դարձրին և, ինչպես ասում են, կենաց և մահու պայքարի հանեցին։

Եվ եթե հայ իրականության մեջ հայդուկների պայքարը նման երջանիկ վախճանի չհասցրեց, դա ոչ թե հայ-

դուկների, այլ գոյություն ունեցող իրավիճակի ու «համազգային ապստամբության» ջատագովների մեղքն էր, նրանց մեղքը, ովքեր այդպես էլ չհասկացան և այսօր էլ չեն հասկանում, որ շուրջ 500 տարի պետականությունն ու ազատությունը կորցրած, վայրագ ճնշումների ու հալածանքների հետևանքով հլու-հպատակի հոգեբանություն ձեռք բերած, ոգու մարտունակությունից ու զենք օգտագործելու կարողությունից զրկված գյուղացի ռայան, որպեսզի միավորվի, համազգային գոտեմարտի դուրս գա, պետք է անցնի այդ գոտեմարտը նախապատրաստող պայքարի մի ամբողջ համակարգի բովով, որում գլխավորը ժողովրդական վրիժառուների շարժումն է՝ ֆիդայությունը։

Ահա թե մեր ժողովրդի համար ինչու են այդքան թանկ Արաբոն ու նրա հետնորդները, և դա ոչ միայն նրանց մարտական խիզախությունների, այլ նաև նրանց ազատատենչ և խրոխտ ոգու, նրանց մարդավայել կեցվածքի համար։

Իհարկե, խեղճ գյուղացուն թալանող ավազակին պատժելու փաստը առաջին հայացքից Արաբոյի գործողությունը համազգային ազատագրական շարժման բնույթ չէր տալիս, բայց այդ գործողությունը օգնում էր գարավոր նինջի մեջ գտնվող, կրավորական վարքագծի ախտի տակ կռացած հայ գյուղացուն արթնանալու, մեջքը շտկելու և ըմբռնելու, որ ավազակի ուժը «ի վերուստ չէ», որ նրան պետք է ընդդիմանալ, նրա դեմ պայքարել ու հաղթել։

Մի անգամ Արաբոն հարձակվեց չորս հայի ու մի քրդի թալանող ոստիկանների վրա, նրանց սպանեց ու թալանվածը վերադարձրեց տերերին։ Այսօրվա պատկերացմամբ սա առօրեական և զուտ կենցաղային նշանակություն ունեցող դեպք է, բայց այն ժամանակ հսկայական քաղաքական լիցք ուներ՝ հայ ռայան ձեռք է բարձրացնում օսմանյան պաշտոնական անձանց վրա, անձինք, որոնց հետ մինչ այդ նրա հարաբերությունները եղել են անտրտունջ ստրուկի ու կամակոր ստրկատիրոջ հարաբերություններ։ Առաջին հայդուկների գործունեության իմաստն էր թուրքական գաղութարարներին ցույց տալ, որ

հայը ի վիճակի է զենքի դիմելու, իր կայքն ու ապրելու իրավունքը պաշտպանելու։

Թուրքական պաշտոնական պատմագրությունը հրապարակ է նետել հայդուկային շարժումը բնութագրող մի այլ մոտեցում՝ այդ շարժումը անվանում է ահաբեկչություն, իսկ հայդուկները՝ ահաբեկիչ-տեռորիստներ։ Թուրք պատմաբաններն աշխատում են ընդհանուր գծեր գտնել հայդուկների և այն հայերի միջև, որոնք մեր օրերում տեռոր էին գործադրում թուրքական դիվանագետների նկատմամբ։ Նրանք ուղղակի գրում են. «19-րդ դարի վերջերին ձևավորված հայկական տեռորը շարունակվում է»։

Հանդես գալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նիստում (1983 թ.) Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թուրքմենը հայտարարեց. «Այսօր, ինչպես մեր դարի առաջին տարիներին, հայ տեռորիստները նպատակ ունեն կատարելու նոր ցեղասպանություն»։ Զարշրկվում է թրքական պաշտոնական շրջանների հնարած այն բացարձակ սուտն ու կեղծիքը, թե 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ոչ թե թուրքերն էին սպանում հայերին, այլ հայերը՝ թուրքերին։

Թուրքական պատմագրությունն իրեն բնորոշ ցինիկությամբ ստում է։ Հայդուկները, թեպետ տեռորը որպես պայքարի միջոց չէին ժխտում և օգտագործում էին, բայց երբեք այն չեն համարել իրենց պայքարի գլխավոր ու հիմնական մեթոդը։

Նրանց պայքարի գլխավոր և հիմնական մեթոդը եղել է պարտիզանական կռիվը։ Մինչդեռ տեռորիզմը հայդուկների դեմ թուրքական իշխանությունների գործադրած և ամենաշատ օգտագործվող մեթոդն էր։ Բացի այն դեպքերից, երբ հայդուկների դեմ ռազմական գործողությունների էին հանվում բանակն ու քրդական աշիրեթները, տարիներ ու տասնամյակներ շարունակ, թուրքական իշխանությունները հայդուկ ղեկավարներին ֆիզիկապես ոչնչացնելու համար մեծ գումարներ էին խոստանում, վարձում պրոֆեսիոնալ մարդասպանների, գլխագին առաջարկում։ Դրանք իրագործելու համար ստեղծվել էր լրտեսների լայն ցանց։ Այդպես սպանեցին հայդուկային ամենա-

նշանավոր առաջնորդներից մեկին՝ Աղբյուր Սերոբին։ Մի քանի մահափորձեր կազմակերպեցին Գևորգ Չաուշի և Անդրանիկի նկատմամբ։ Թուրքական իշխանությունների տեռորիստական ակտերի ցուցակը մեծ, շատ մեծ է, և թվելն՝ անհնար։

Թուրքական պատմագրությունը հայդուկային շարժման մեջ ճգնում է տեսնել միայն ազգային նպատակադրումներ։ Մինչդեռ այդ շարժումը ոչ միայն ազգային-ազատագրական էր, այլև դասակարգային։ Այդ շարժման գլխավոր ուժը գյուղացիությունն էր և այն էլ աղքատ ու միջակ գյուղացիությունը։ Շարժումն ուղղված էր ոչ միայն թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության, այլ նաև թուրք ու քուրդ բեկերի, շեյխերի, փաշաների, աղաների, հոգևոր ու աշխարհիկ մյուս ֆեոդալների ճնշումների, շահագործման ու հարստահարությունների դեմ։ Այստեղ դասակարգայինը ազգային պատյանի մեջ է մտնում այն հասկանալի պատճառով, որ ազգային ճնշման վերացումը միաժամանակ նշանակում էր այդ բեկերի ու փաշաների կողմից շահագործման ու հարստահարությունների վերացում։

Հայդուկների իղձը արտահայտված է Գևորգի հետևյալ խոսքերում. «Հայաստան, պատրաստ եմ անգամ անձս զոհել գերագույն նպատակիդ համար։

Թող մարեն աչքերս, միայն թե ծագի Հայաստանի անկախության արևը»։

Հայդուկության ու հայդուկների համար բնորոշ են նաև Բաֆֆու խոսքերը. «Ես և գուցե իմ բոլոր համախոհները կընկնենք, բայց անկումը ճանապարհ կը բացե մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով»։[40]

«Հայդուքը,— մի այլ անգամ գրում է Բաֆֆին,— բնական արտահայտություն է բռնության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի։ Հայդուքը ստրուկի բողոքն է իշխող բարբարոսության դեմ։ Նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, տարերի անմատչելի փապարներում, և այնտեղ որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդի, սկսում է տիրել ամայության վրա...

Հայդուքի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում... որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուիստում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից— ահա դրանք են նրա ցանկությունները...»։

***

Սույն աշխատանքը կպատմի 19-րդ դարում ձևավորված հայ ազատագրական պայքարի սուրբ գործին իրենց կյանքը նվիրաբերած գործիչ-մարտիկների՝ ֆիդայիների և առաջին հերթին Գևորգի կյանքի ու գործունեության մասին։ «Այսուհետև իմ բարձը Հայաստանի լեռներն են լինելու, իմ ամենաբաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը։ Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին»։ Ֆիդայիների երդման այս խորիմաստ խոսքերը մեկնաբանման կարիք չունեն։ Նրանք մշակել էին կյանքի ու մահվան սեփական կարգախոսը։ Աշխարհիկ բոլոր վայելքներից կամովին հրաժարված ֆիդային կարող էր «ամուսնանալ միայն հրացանի հետ» և ցանկացած պահի, առանց տատնվելու, կյանքը նվիրաբերել հայրենիքի ազատության զոհասեղանին։

Տասնամյակներ շարունակ, ի թիվս այլ երևույթների, այդ հերոսների մասին ևս բարձրաձայն խոսելու իրավունք չունեինք, սակայն ժողովուրդը նրանց հիշատակը պահում ու գուրգուրում էր հոգու խորքերում՝ համբերությամբ ու հավատով սպասելով այն օրվան, երբ պատշաճը կմատուցի իր խիզախ զավակների հիշատակին։ «Հայ ֆիդայիների ըմբոստ ճակատները մենք դեռ պետք է համբուրենք»։ Վաղամեռիկ դրող Մուշեղ Գալշոյանի այս խոսքերը դառնում են իրականություն։

1 Վ. Բ. Լենին, նկ, հ. 28, էջ 342
2 «Դրոշակ», 1891 թ., № 1
3 Маркс К. и Энгельс Ф. соч., т. 10, 2-ое изд., с. 83
4 «Հնչակ», 1897 թ., № 5
5 «Հնչակ», 1889 թ., № 2
6 «Դրոշակ», 1891 թ., № 1
7 «Հնչակ», 1890 թ., № 2
8 Նույն տեղը, 1894 թ., № 7
9 Ն. տ.
10 Ն. տ. 1894 թ., № 8
11 Ն. տ. 1889 թ., № 4
12 Ն. տ. 1901 թ., № 12
13 «Դրոշակ», 1892 թ., № 3
14 «Հնչակ», 1890 թ., № 7
15 Ն. տ. 1891 թ., № 6
16 Маркс К. и Энгельс Ф., соч. т. 10, 2-ое изд., стр. 167
17 Миллер. А. Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории М., 1983, с. 51
18 «Դրոշակ», 1901 թ., № 5
19 «Հնչակ», 1889 թ., № 2
20 Ն. տ. 1891 թ., № 4
21 Ն. տ. 1890 թ., № 12
22 Ն. տ. № 10
23 Ն. տ. 1892 թ., № 2
24 Ն. տ. 1895 թ., № 2
25 Ն. տ. 1889 թ., № 2
26 Ն. տ. 1894 թ., № 7
27 «Դրոշակ», 1895 թ., № 5
28 «Հնչակ», 1890 թ., № 8
29 Ն. տ.
30 Ն. տ. № 4
31 Ն. տ.
32 Ն. տ. 1892 թ., № 4
33 Ն. տ. 1891 թ., № 1
34 Ն. տ. № 3
35 Ն. տ. № 6
36 Ն. տ. 1888 թ., № 11—12
37 Ն. տ.
38 «Դրոշակ», 1891 թ., № 2
39 «Հնչակ», 1895 թ., № 19
40 Ն. տ. 1890 թ., № 6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԸԿԹԵՆՔ

Սասնա լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում էր գտնվում Փսանաց գավառակը։ Հյուսիսում՝ Խուլբի, արևելքում՝ Տալվորիկի և արևմուտքում Խիանքի շրջաններն էին։

Փսանքի կլիման տաք էր, ջուրը՝ առատ։ Ամբողջ շրջանը ծածկված էր անտառներով ու այգիներով։ Սակայն, չնայած բնակլիմայական բարենպաստ պայմաններին, փսանցի գյուղացու նյութական վիճակը ծանր էր։

Դրա համար էլ շատերը պանդխտության ցույն էին վերցնում, գնում հեռավոր Հալեպ, իրենց աշխատուժը ամենաէժան գնով վաճառում՝ ընտանիքի բազում կարիքների գեթ մի մասը հոգալու համար։

Փսանքի հյուսիս-արևմտյան մասում էր գտնվում Մըկթենք գյուղը։ Թիկունքը ապավինած սարի լանջին, դեմքը՝ արեգակին, գյուղը ապրում էր. հարսանիքներ էին լինում, երեխաներ էին ծնվում, արտերը հնձվում էին ժամանակին։ Ապրում էին... և թվում էր բնության տվածով ու իր ստեղծածով գյուղը պետք է, որ ապրեր խաղաղ ու ապահով։

Գյուղը ուներ քսանհինգ տուն, մոտ 300 շնչով։ Մըկթենքի կենտրոնում, ամբողջ Սասունում հայտնի իշխան Ղզրոյի քարաշեն տունն էր՝ բավականին ընդարձակ բակով։ Փայտաշեն դուռը փականք չուներ։ Սասունցին դուռը փակելու սովորություն չուներ, դա դժբախտության նշան էր համարվում։ Տուն մտնող հյուրը բակից ձայնում էր տանտիրոջը. եթե տանտերն էր դուրս գալիս, ուրեմն նա մտադիր էր հյուրին ընդունել բակում, իսկ

եթե ընտանիքի երիտասարդներից մեկնումեկը՝ ուրեմն հյուրը ներս մտնելու հրավեր էր ստանում։

Երկարավուն միջանցքի ձախ կողմից մտնում էին օդան։ Սա, սովորաբար, որպես հյուրասենյակ էր ծառայում, բայց այստեղ Ղզրոյի մեծ եղբայրը՝ գյուղի քահանա Տեր Ստեփանը, ընտանիքի արու զավակներին նաև գրագիտություն էր սովորեցնում։

Օդան պատուհան չուներ և լույսը ստանում էր թեք երդիկից։ Խուց հիշեցնող այս սենյակի հատակը ծածկված էր խսիրներով ու կարպետներով։ Դիմացի պատի հարթակին իրար վրա դարսված էին հյուրերի համար պահվող անկողինները, որոնք նույնպես ծածկված էին կարպետներով։ Որպես նստարան ծառայում էին կարմ քուրսիները։ Միջանցքում, օդայի դռան աջակողմյան պատի տակ շարված էին փայտե ու կավե տակառիկներ, որոնց մեջ խմելու ջուրն էր։ Այդ տակառիկների կափարիչներն ու «բաժակները» ևս փայտից էին։

Դիմացի պատի ձախ անկյունում «քունջն» էր, մոտ մեկ մետր բարձրությամբ մի խոռոչ, որի կենտրոնում օջախն էր՝ թվեկը։ Օջախից այն կողմ, առաստաղից կախված էր խնոցին։ Նույն պատը մի դուռ ուներ, որ տանում էր դեպի մըկթենքցու մառանը։

Միջանցքի հակառակ կողմում թոնրատունն էր։ Առավել աղքատ ընտանիքներում թոնրատան մի մասը նաև գոմ էր ծառայում։

Ի դեպ, Սասունի գյուղերի մեծ մասում տներն իրար էին կպած։ Նրանց ընդհանուր պատերի վրա գաղտնի անցքեր կային։ Որոշ տեղերում հնարավոր էր գյուղի մի ծայրի տունը մըտնել և այդ անցքերով հասնել գյուղի մյուս ծայրը։ Այդ արված էր պաշտպանական նպատակներով։

Ղզրոն աղքատ չէր։ Նա տանուտեր էր, ռես, և ինչպես Սասունի շատ տանուտերեր, կրում էր իշխան տիտղոսը։ Ուրեմն, ոչ միայն տանուտեր Ղզրո, այլև իշխան Ղզրո։ Սասունի անցած փառքի մի ողորմելի փշրանք, բայց նաև երաշխիք, որ թեև Սասունը Օսմանյան կայսրության կազմում է, հարստահարվում ու հալածանքների է ենթարկվում օսմանյան իշխանությունների ու քրդական ցեղապետների կողմից, բայց իրեն անկախ է զգում, գլուխ չի խոնարհում։

Ապա գալիս էր իշխան մըկթենքցու հացատունը, որը քառակուսի ընդարձակ սրահ էր։

Առաստաղը հենվում էր պատերի և չորս սյուների վրա։ Արևելյան և հարավային պատերի երկայնքով թարեքներ էին, որոնց վրա, ըստ մեծության, շարված էին կարասներն ու կճումները։ Փայտե դդալներն ու շերեփները, կավե թասերը տեղավորված էին պատերից ու սյուներից կախված փայտյա պահոցների մեջ։ Հարավային պատին ևս թվեկ կար, որի վրա էին ճաշ եփում։ Թվեկից դենը փայտյա մեծ ամբարն էր, որի մեջ ալյուր էր։ Ցորենը, գլգիլը և կորեկը պահվում էին բակի հորերում։

Ամբարին հաջորդում էին փայտյա պահարաններն ու իրար վրա շարված մեծ ու փոքր սնդուկները, որոնց մեջ ընտանիքի անդամների հագուստները, կանանց զարդեղենը, թանկարժեք իրերն էին։

Թոնրատան հյուսիսային պատի երկայնքով դարսված էին վերմակները, կարպետներն ու խսիրները, որոնցից դիշերը անկողիններ էին գցում։

Հացատան սյուներից մեկին ամրացված էր յուղի ճրագը, իսկ մյուսին՝ նավթի թիթեղյա լամպը։

Ինչպես Մըկթենքի բոլոր գյուղացիների, այնպես էլ իշխան Ղզրոյի գերդաստանի եկամուտների հիմնական մասը ստացվում էր այգեգործությունից ու պտղաբուծությունից։ Գյուղը բոլորված էր խաղողի, տանձի, ծիրանի, սալորի այգիներով և, իհարկե, նշանավոր ընկուզենիներով։

Ցանքատարածությունները սակավ էին։ Դրանք հիմնականում գտնվում էին գյուղից 7—8 կիլոմետր հեռավորության վրա՝ Սպիտակ սարի անտառի բացատներում։ Այստեղ էին նաև գյուղացիներից շատերի անասուններն ու գոմերը, մարագը, կալը, կալատունը։

Սասունում ընտանիքները բազմանդամ էին (շատ ընտանիքների անդամների թիվը 40-ի էր հասնում)։ Մեծ ընտանիքը նաև մեծ պատիվ էր։ Իշխան Ղզրոյի ընտանիքը նույնպես բազմանդամ էր։ Ժամանակի ընթացքում ձևավորվել էին ընտանեկան հարաբերությունների չգրված, բայց խստագույն կիրառվող կանոններ։ Օջախի մեծի խոսքը օրենք էր ընտանիքի բոլոր անդամների համար։ Մեծն էր ղեկավարում ընտանիքի գործունեության բոլոր բնագավառները։

Հենց իշխան Ղզրոյի գերդաստանում էլ, 1870 թվականին, ծնվեց մի արու զավակ, որին վիճակված էր դառնալու Արևմտյան Հայաստանի նշանավոր մարդկանցից մեկը։

Նորածնին կոչեցին Գևորգ։ Նա իշխան Ղզրոյի եղբոր՝ Արոյի որդին էր։

Գևորգը սովորական մանուկ էր։ Նրա մազերը, մինչև ատամ հանելը, չսանրեցին։ Սասունցիները հավատում էին, թե երեխայի մազերը սանրելու դեպքում ատամները ամուր չեն լինում։ Առաջին ատամի երևալուն պես, Գևորգին նստեցրին սպիտակ սավանի վրա և նրա բաց գլխին շաղ տվեցին խաշած ձավար, չոր մրգեր։ Այս ծեսը կոչվում էր հատկասորիկ։ Շուրջը խմբված երեխաները հավաքում էին խաշած հատիկն ու չոր մրգերը։ Իսկ երբ առաջին անգամ կաթնատամն ընկավ և փոխարենը հիմնական ատամ բսնեց, կաթնատամը դրեցին դռան ծխնիի տակ ու երգով ասացին. «Առ քեզ գիլու ատամ, տուր մեզ գառան ատամ»։

Իշխան Ղզրոն անզավակ էր։ Նա իր սերը տվել էր Գևորգին։

Չնայած Գևորգը Արոյի միջնեկն էր, կային նաև Մինասը և Օհանը, ծերունին իր հույսը կապում էր Գևորգի հետ։ Ինքն էր հետևում տղայի կրթությանն ու դաստիարակությանը։ Երազում էր նրան տեսնել եվրոպական կրթություն ստացած։ Ըստ այդմ էլ նա Տեր Ստեփանին ապսպրել էր տղային նախապատրաստել ուսումը Առաքելոց վանքում շարունակելու համար։

Սակայն իշխան Ղզրոն, ամեն ինչից առաջ, կյանքի մարդ էր։ Նա հոգ էր տանում, որ Գևորգը մեծանա ֆիզիկապես ուժեղ, կարողանա դիմանալ դժվարություններին։ Դեռ փոքրուց նրան սովորեցնում էր ծանր աշխատանքի, նրա մեջ պատվաստում կամք, համառություն, քաջություն ու պատվախնդրություն։

Նոր էր երեխան բոլորել վեց տարին, երբ Ղզրոն նրան տարավ Սպիտակ սարի անտառ՝ տերև կտրելու։ Համայնական բնույթի այդ աշխատանքը, որ գյուղովի էին իրականացնում, կոչվում էր զուբարա։

Գևորգը Սպիտակ սար գնաց ջորեպան Օհանի հետ։ Վաղորդայն էր։ Ճանապարհը ձգվում էր սարն ի վեր, երբեմն անցնում անդնդախոր կիրճերով։ Ահարկու ժայռերը, ահեղագոչ ջրվեժները բորբոքում էին երեխայի հետաքրքրությունը։

— Քեռի Օհան, էս ի՞նչ սարեր են։

— Դավթի սարերն են, լաո։ Էս քարերն էլ Արջքարերն են։ Էս քարայրներում Դավիթը սպանեց քառասուն դևերին։

— Որ մեծանամ, ես էլ կսպանեմ,— ասաց փոքրիկ հեծյալը։

— Էս էլ Սպիտակ աղբյուրն է,— ժայռի կողքերից բխող

ջուրը ցույց տալով ասաց Օհանը,— Դավիթն էդ ջրից է խմել։ Դու էլ խմիր, գառ ջան, ու թող էդ ջուրը քեզ Դավթի զորությունը տա։

Երեխան ծնկեց աղբյուրի վրա։ Ջորեպան Օհանը խաչակնքեց. «Էս օրը մոռանալու օր չէ»,— մտածեց նա։

Երբ հասան ամառանոցներին, այնտեղ բավականին ժողովուրդ էր հավաքվել։ Սկսվեց զուբարան։ Տղամարդկանց մի մասը կտրատում էր ծառերի հաստ ճյուղերը, մյուսները տերևներն էին կտրում, հնձում գըլգիլը։ Գևորգը մանգաղով գըլգիլ էր հնձում, համենայնդեպս, փորձում էր հնձել։ Աջ թաթիկը ցավում էր, բայց չէր տրտնջում։ Նրա մանկական հոգում աճում էր տղամարդկային ինքնասիրությունը։ Չորրորդ օրը ոչխարներ մորթեցին, մինչև ուշ երեկո կերան-խմեցին և գիշերով ճանապարհ ընկան դեպի գյուղ։ Միայն Ղզրոն ու երեխան գիշերեցին կալատանը և գյուղի ճամփան բռնեցին հաջորդ միջօրեին։

Ղզրոն առջևից էր քայլում։ Գևորգը հոգնել էր, ոտքերը դժվարությամբ էին շարժվում, բայց գնում էր անմոռուչ, որ Ղզրոն հանկարծ չիմանա, թե նա հոգնել է։ Իսկ Ղզրոն, իհարկե, նկատում էր, բայց ցույց չէր տալիս։

Վերջապես գյուղը երևաց։ Գևորգը նայեց իրենց տան կողմը և ուրախ բղավեց.

— Ափո՛, տե՛ս, մեր բակում ինչքան մարդ է հավաքվել։

Ղզրոն տեսողությունը լարեց և հանկարծ գունատվեց։

— Լաո, փորձանք է,— ու քայլերն արագացրեց։

Երբ տուն հասան, պարզվեց, որ Գևորգի հորեղբայրն էր մահացել։ Բակում խոտ էին փռել. ծածկեր գորգով և վրան դրել մահացածի դին, որը ծածկված էր կարմիր շալով։

Երբ Ղզրոն բակ մտավ, մի քանի րոպե լուռ կանգնեց ու հեռացավ։ Այդ ընթացքում Գևորգը աչքերը չէր հեռացնում Ղզրոյից։ Բայց մի պահ նրան կորցրեց։ Չորս դին նայեց, չգտավ։ Շրջանցեց տունը և հորեղբորը տեսավ դեմքնիվայր գետնին պառկած, գլուխը առվին կախած։

Ի՞նչ իմանար փոքրիկ Գևորգը, որ հորեղբայրը գլուխը առվի մեջ մտցրած էր լաց լինում, որպեսզի մարդիկ արցունքները չտեսնեին։

Այսպես մեծանում էր Գևորգը, հասակ առնում ու դաստիարակվում լեռնցիների այս միջավայրում, նրանց դաժան, բայց նաև ազնիվ ու շիտակ հարաբերությունների մթնոլորտում։

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Ամռան շոգ օր էր։ Տասնչորս տարեկան մի պատանի, բորբ արևից պատսպարվելու համար, նստել էր ընկուզենու ստվերում։ Գյուղից օգնություն կանչող ձայներ ու աղմուկ լսվեց։ Գևորգը շարժվեց աղմուկի ուղղությամբ։ Եվ ի՞նչ. քուրդ քոչվորները հավաքվել էին ընկուզենու այգում և քարեր նետելով ցած էին բերում հասած ընկույզները։ Այդին հայերինն էր. գյուղի կանայք, երեխաները, տղամարդիկ պատերի տակ կծկված դիտում էին այս ավազակությունը։ Նրանցից ոչ ոք չէր փորձում միջամտել։ Քրդերը գործում էին ինքնավստահ, կարծես հավաքում էին սեփական այգու բերքը։

Գևորգը մոտեցավ, նայեց քրդերին, հայացքը շուռ տվեց պատի տակ կծկված համագյուղացիներին ու բղավեց.

— Ինչո՞ւ եք կծկվել, ինչո՞ւ եք թողնում, որ թալանեն։

Նրա ճիչը անարձագանք մնաց։

Գևորգն անզոր այս ու այն կողմ նայեց, ապա մի քար վերցրեց ու բղավեց քրդերին.

— Հեռացեք այստեղից, թե չէ կխփեմ։

Քրդերն առանց ուշադրություն դարձնելու շարունակում էին կողոպուտը։ Գևորգը սկսեց քարեր շպրտել նրանց վրա։ Քրդերից մի քանիսը շարժվեցին դեպի Գևորգը։

Հայերից մեկը ձայնեց.

— Գևորգ, փախիր, կսպանեն։

Տղան դեմքը շուռ տվեց ձայնի կողմը, բայց առանց տեղից շարժվելու, շարունակեց քարեր շպրտել։ Քրդերը հարձակվեցին նրա վրա և սկսեցին ծեծել ձեռքերով, փայտով, իսկ երբ Գևորգը գետնին ընկավ՝ նաև ոտքերով։ Միայն այն ժամանակ, երբ տղան արյունաշաղախ ընկած էր և կենդանության նշան ցույց չէր տալիս, քրդերը հեռացան։

... 1886 թ. մայիսի 13-ն էր։ Դեռ լույսը չէր բացվել, բայց իշխան Ղզրոյի մեծ գերդաստանի բոլոր անդամները ոտքի վրա էին։ Նրանք պատրաստվում էին ուխտ գնալ Հեղին գյուղ։ Բոլորի ուշադրության կենտրոնում Գևորգն էր։ Ուխտագնացությունից նա տուն չէր վերադառնալու, այլ գնալու էր Առաքելոց վանք՝ կրթություն ստանալու։ Դրա համար էլ նրան հագցրել էին վանքի աշակերտի համազգեստ՝ կապույտ անդրավարտիք,

կապույտ անթև պիջակ, գույնզգույն գուլպա, նախշուն գլխարկ։ Գևորգի տրամադրությունը բարձր էր։

— Ելե՛ք, ժամանակն է շարժվելու,— գյուղով մեկ հնչեց ջորեպան Օհանի խրոխտ ձայնը։ Ուխտավորները տոնական տրամադրությամբ բռնեցին Հեղին գյուղի ճամփան։

Կանայք հագած էին գույնզգույն կտավե շապիկներ, որոնք իջնում էին մինչև կոճերը։ Շապիկները գրկվում էին երփներանգ թելերից գործված նախշուն գոտիներով։ Կանանցից ոմանք կրում էին շատրիկ ու սրտանոց, որոնց կապերը, ուսերից վար միանալով ծամթելերին, կախվում էին մինչև ոտքերը։ Գլխներին կրում էին քոֆի։ Ֆեսի գագաթին, ներսի կողմից, ամրացված էր կլոր տախտակ, որի վրա ձգված էր գդակը։ Գունավոր ժապավենը ականջների մոտ ճյուղավորվելով իջնում էր մինչև ծնոտը։ Գլխարկը ոլորված էր սև ու կարմիր գույնի մետաքսե փուշիներով, որոնց ծայրերին շարված էին պեծպեծուն ուլունքներ։ Ճակատի լայնքով գլխարկին կարված էին արծաթե դրամներ։

Որոշ կանայք հագել էին սպիտակ կտավից մոմած շապիկներ և կապույտ մահուդից ելակներ։

Տղամարդիկ կրում էին անթար, ելակ, բրդե տաբատ, սախ, գդակ, փուշի, որի երկար ծոպերը թափվում էին նրանց ճակատին ու ծոծրակին։ Բոլորն էլ ունեին գոտի, որի վրա ամրացված էին կեռ դաշույնը, ծխախոտի քիսեկը, իսկ դաստակին՝ նաև համրիչը։

Կանայք կարմիր կոշիկներով էին, իսկ տղամարդիկ դաբաղած կաշուց տրեխ կամ կոշիկ էին հագել։

Եթե ավելացնենք նաև խայտաբղետ հագուստներով տղաներին ու աղջիկներին, երեխաներին ու դեռահասներին, ինչպես նաև բազմագույն խուրջինները, կարպետները, պարկերը, ոչխարներն ու ջորիները, ապա կհամոզվեք, որ դեպի Հեղին շարժվող այդ թափորը իրոք տպավորիչ էր ու տոնական։

Հեղին գյուղը գտնվում էր խոր ձորի մեջ, պարսպված ամեհի ժայռերով։ Գյուղն ընկած էր Սասնա չորս զավառակների՝ Խիանքի, Խուլբի, Փսանքի, Տալվորիկի սահմանագլխին։ Հեղինի վանք ուխտի էին գալիս այդ բոլոր վայրերից։

Արևի ճառագայթները դեռ նոր էին ժայռերի գագաթներից ձորերը լցվում, երբ Մրկթենքի ուխտավորները վանք հասան։ Գևորգենց ընտանիքը տեղավորվեց վանքի բակի մի անկյու-

նում պատրաստված հյուղակում։ Կանայք ու աղջիկները հացի պատրաստություն էին տեսնում, երբ վանքի բակ մտավ մարդկանց մի ստվար խումբ։ Հեղինէ իշխան Վարդանն էր մերձավորների հետ։ Այդ խմբից բաժանվեց 11-ամյա սիրունիկ ու չարաճճի մի աղջիկ, իշխանի միակուճար դուստրը՝ Եղսոն, ու համարձակ քայլերով ուղղվեց դեպի Գևորգը։

— Դո՞ւ ումոնցից ես,— ուղիղ նայելով Գևորգի աչքերի մեջ հարցրեց Եղսոն։

— Իշխան Ղզրոյի ախպոր տղան եմ,— պատասխանեց Գևորգը, չդիմանալով աղջկա հայացքին։

Ընդունված կարգ էր. իշխան Վարդանը այդ օրը պետք է այցելեր մյուս գյուղերից եկած իշխաններին։ Ուխտավորների մի մասը օթևաններ էին պատրաստում, իսկ ջահել տղաներն ու աղջիկները պար էին բռնել։ Ուխտավորների երգը արձագանքում էր կիրճերում։ Եղսոն, առանց քաշվելու, բռնեց Գևորգի ձեռքը և տաղավարից դուրս քաշելով, ասաց.

— Էն դիմացի այգիները մերն են։ Գնանք խաղող ու տանձ բերենք։

Եվ պատասխան չակնկալելով՝ շարժվեց դեպի այգիները։ Այգիներում Եղսոն, ասես, կերպարանափոխվեց։ Գևորգի կողքին կանգնած էր ամաչկոտ ու շիկնած մի աղջնակ։ Գևորգը զգաց, թե ինչպես է սիրտը տրոփում իրեն անծանոթ զգացումից։ Նրանք, առանց մի բառ փոխանակելու, հավաքեցին տանձ ու խաղող և շարժվեցին դեպի վանք։ Արդեն մոտենում էին ուխտավորներին, երբ Եղսոն վարանեց, վախվորած ու շառագունած նայեց Գևորգին և հազիվ լսելի ձայնով հարցրեց.

— Դու ուսանելո՞ւ կերթաս։

— Վաղը չէ մյուս օրը։ Ուխտն ավարտելուց հետո այլևս մեր գյուղ չեմ դառնա։ Պիտի երթամ Առաքելոց վանք սովորելու և չորս տարի այնտեղ պիտի մնամ։

— Չորս տարի՞... Ուրեմն ինձ կմոռանաս,— ակամա թռավ աղջկա բերանից և, խայթված իր խոսքերից, կտրուկ պոկվեց տեղից ու վազեց դեպի ուխտավորները։ Հաջորդ երկու օրերին նա այլևս չերևաց։

... Ուխտավորները խումբ-խումբ հեռանում էին վանքի բակից։ Վանքը և նրա շրջապատը դատարկվում էր։ Տուն չէին վերադառնալու միայն Գևորգն ու չորեպան Օհանը։ Այգաբացին ճամփա էին բռնելու դեպի ուրիշ աշխարհ՝ Առաքելոց վանք։

Բայց մինչև մեկնելը Գևորգը Եղսոյի ձեռքից բռնած վանք մտավ, կանգ առավ խորանի առաջ և աղոթքի՞, թե՞ երդման պես հնչեց նրա պատանեկան ձայնը.

— Այս խաչի վրա երդվենք, որ մեր բախտը իրարու պիտի կապենք։

Չորեպան Օհանն ու Գևորգը Առաքելոց վանքի վարդապետներից մեկի ուղեկցությամբ ճանապարհ ընկան։

Գևորգը քայլում էր ցրված ու տխուր։

— Ա՛յ տղա, ինչո՞ւ ես մթնել, Առաքելոց վանք կերթաս և ոչ թե Մշո բանտ,— ձայն տվեց չորեպան Օհանը։

Գևորգը չպատասխանեց։ Կեսօրին հասան մի սառնորակ աղբյուրի։ Մոտեցան, խուրջինները վար դրեցին, ուտելիքը շարեցին։

Գևորգը նստել էր մի քարի և հայացքը պտտում էր չորս կողմը։ Հորիզոնին ընդգծվում էին Սասունը որպես լեռնաշխարհ ձևավորող երեք լեռնագագաթներ՝ Գեբինը, Ծովասարը և Անդոկը։ Առաքելոց վանքի ճանապարհը անցնում էր Գեբինի փեշերով։ Գեբինը ծածկված է խավրծիլի լայն տերևներով, և հեռվից անտառապատ սարի պատրանք էր ստեղծվում։ Այստեղից էր սկիզբ առնում Տալվորիկ գետը, որը, խորխորատների միջով հոսելով դեպի հյուսիս-արևելք, միանում էր Անդոկից սկիզբ առնող Սասուն գետին։ Տալվորիկ գետի վրա էր հայտնի Սատանայի կամուրջը, որի բարձրությունը հասնում էր 600 մետրի։

Մեր ուղևորները դեռ նոր էին հացի առաջին պատառը կրտրել, երբ աղբյուրին մոտեցան երեք քրդեր։

— Որտեղի՞ց, դեպի ո՞ւր,— ողջունելուց հետո հարցրեց նրանցից ավագը։

— Դեպի Առաքելոց վանք,— կարճ կտրեց չորեպան Օհանը։

— Դեռ երկար ճանապարհ ունեք կտրելու, մեր օդաները մոտ են, ձորի մեջ, գնանք, հանգստացեք, հետո նոր ճամփա կընկնեք։

Վարդապետն ու Օհանը շնորհակալական խոսքերով հրաժարվեցին։ Բայց քրդերը չէին զիջում՝ «Դուք մեր հյուրն եք, հյուրն աստծունն է, առանց մեր հացը կտրելու չենք թողնի, որ գնաք»։ Այդ ընթացքում քրդերից մեկը աննկատ հեռացավ և քիչ անց վերադարձավ՝ իր հետ բերելով մի ոչխար։ Նա չորեպան Օհանի օգնությամբ ոչխար մորթեց և կրակ վառեց։ Նրանք խո-

ղովածի պատրաստություն էին տեսնում, իսկ մյուսները, քարերին նստած զրուցում էին։ Եվ երբ քրդերի ավագն իմացավ, որ Գևորգը Ղզրոյի եղբորորդին է, շատ ուրախացավ և անընդհատ կրկնում էր.

— Ղզրոն իմ քիրվան է, իմ ախպերը, Ղզրոն ինձ շատ լավություն էր արել, իմ քոչ քո ոտի տակ։ Ձեր գյուղո՞ւմ էր, որ քրդերը այգի են թալանել։

— Մեր գյուղում էր,— ասաց Գևորգը։

Քուրդը քնքշանքով նայեց պատանուն.

— Լաո, էդ քրդերը ոչ միայն հայերի, այլև քրդերի թշնամին են։ Մենք երկրագործությամբ չենք զբաղվում, որովհետև մեզ ավելի հեշտ է ու ձեռնտու հայի վաստակը խլել... Եթե հայի արյունը չծծենք, մեր վարկը կառավարության աչքում կկորցնենք, որովհետև նրա պաշտոնյաները իրենք են մեզ ստիպում այդ ճանապարհով լրացնել մեր շահը և մեզ ասում են, որ հայը մեր պատառն է... Դուք հայի տերն եք, ասում են մեզ, և նրա անձն ու ինչքը ձերն են, ճշտությամբ կատարեք ձեր դերը, որպեսզի չզրկվեք արտոնություններից։ Մենք էլ կատարում ենք մեր դերը։ Եվ մեր հարձակումների ու ավերումների համար մենք ոչ մի կշտամբանք և արգելք չենք ունենում։ Օսմանցին լավ գիտե, որ եթե հայերն ու քրդերը միավորվեն, մեր այս լեռներում ինքը տեղ չի ունենա։ Դրա համար էլ օսմանյան պետության ջոջերը քրդերին լարում են հայերի դեմ, քրդերին գրգռում հայերին ոչնչացնելու, նրանց ունեցվածքին ու հողին տեր դառնալու։ Նրանք Սասունի հողերը հայերից մաքրելուց հետո խոստանում են տալ քրդերին, և մեծ թվով քրդեր հավատում են այդ խոսքերին և սպանում ու թալանում են հայերին։ Մեր ժողովրդի խղճի վրա օրեցօր ծանրանում է հանցագործությունների ու սպանությունների մեծ բեռը։ Տա աստված, որ քուրդ ժողովուրդը մի օր հասկանա, որ դրկցին թալանողն ու սպանողը կուշտ ու երջանիկ լինել չի կարող, որ հայերն ու քրդերը մի ընդհանուր թշնամի ունեն։ Այդ թշնամին օսմանյան բռնապետությունն է։ Թե չէ այն սուրը, որ այսօր կտրում է հայերի գլուխը, վաղը իջնելու է քրդերի գլխին։ Զուլո՞ւմ է, լաո՞, զուլո՞ւմ։

ԶՈՒԼՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Հաջորդ օրվա երկրորդ կեսին, անցնելով Շատախի հարթավայրը, մեր ճամփորդները Ծովասարի փեշերով շարժվեցին դեպի Առաքելոց վանք։

— Գևո՞րգ, լաո՞, ա՞յ, էն կողմ նայիր,— ձեռքը Ծովասարի ուղղությամբ պարզելով՝ ասաց ջորեպան Օհանը,— Ծովասարի և Մարաթուկի արանքում է եղել Դավթի քաղաքն ու բերդը։ Բերդի պարիսպների ու տների ավերակները հիմա էլ կան։ Կանգուն են մի քանի պատեր, դարպասի կողերը և գլխի սրբատաշ քարերը։ Էնտեղ են Դավթի ձիերի մսուրը։ Բերդում կա մի աղբյուր, որ դրսից քարե խողովակներով է բերված։ Քաղաքը կառուցել են Սանասարն ու Բաղդասարը։ Լավ գիտցի՞ր, լաո՞, Սանասարի ու Բաղդասարի օրերից մինչև հիմա Վերին Սասունը թշնամու լուծ չի տարել, ապրել է անկախ։

Մայրամուտ էր, երբ երևացին Առաքելոց վանքի պարիսպներն ու գմբեթը։ Վանքից վերև, ասես սարի կուրծքը պատռելով, դուրս էր պրծել մի հսկա ժայռաբեկոր։ Նայողին թվում էր, ուր որ է հսկա քարաբեկորը պոկվելու ու դեպի անդունդն է գահավիժելու։

— Քեռի Օհան, Դավթի քար որ ասում են, է՞ս է,— հարցրեց Գևորգը։

— Իրավ ես, լաո։ Դավթի քարն է, որ կա։

Դավիթը հովիվ էր, ու մի օր, երբ ոչխար էր արածեցնում Ծովասարի լանջերին, հանկարծ լեռան գագաթից մի վիթխարի ժայռ պոկվում ու գլորվում է դեպի ոչխարները։ Դավիթը վազում է ժայռին հանդիման և ձեռքը դեմ անելով՝ կանգնեցնում է։ Ժայռը մեխվում է իր տեղում, իսկ վրան մնում է Դավթի ձեռքի հետքը։

Արդեն մութ էր, երբ Առաքելոց վանքի դարպասից ներս մտան։

Հովհաննես վարդապետը վերամբարձ խոսքերով դիմավորեց նրանց.

— Տղա՞ս, դու ոտ դրիր սուրբ շեմից ներս, դու Թարգմանչաց վանքում ես և այժմ շնչում ես նույն օդը, ինչ հարյուրամյակներ առաջ շնչել են մեր ժողովրդի մեծերը՝ Խորենացին, Ղազար Փարպեցին, Դավիթ Անհաղթը, Ասողիկը։ Այստեղ են հանգչում այդ մեծերի աճյունները։ Դու եկել ես ուսում առնե-

լու մի կրթական օջախում, որտեղից դուրս են եկել շատ նշանավոր գործիչներ, գիտնականներ, գրողներ։ Արժանի եղիր նրանց։

Եվ այսպես, մրկթենքցի 16-ամյա պատանին դարձավ Առաքելոց նշանավոր վանքի՝ «դպրության տաճարի» սանը։

Գևորգը արտակարգ ճարպիկ պատանի էր, որսորդության սիրահար։

Մի քուրդ աղա փորձում է հափշտակել վանքի ոչխարները։ Վանքի հովիվը օգնություն է կանչում։ Գևորգը, հասնելով հալածողների ետևից, նրանցից մեկին գետնում է, զենքը ձեռքից խլում։ Մյուս քրդերը փախչում են։

Գևորգը հրաչանը ուսին, ոչխարներն առաջը դցած, վանք է վերադառնում։

«Դժվար թե չորս հսկա պարիսպներով շրջապատված այդ դարավոր մենաստանը կարողանար պահել իր մեջ Փսանաց գավառի ըմբոստ զավակին, եթե միայն այդ մենաստանը Առաքելոց վանքը չլիներ, որտեղ լեռնական մատաղ, բայց խրոխտ հոգիները գալիս են սնվելու մի քիչ լույսով և դարձյալ մղվում դեպի իրենց սարերի կույս ազատությունը»[1]։

Ժամանակին այսպես է գրվել նրա սանի մասին։

Վանքի դպրոցը հոգևոր էր և, բնականաբար, գլխավոր ուշադրությունը դարձվում էր կրոնական առարկաների դասավանդմանը։ Բայց այս վանքում կենդանի էին Խրիմյան Հայրիկի ազատասիրական գաղափարները։ Այդ գաղափարների նվիրյալն էր վանքի վանահայր Հովհաննես վարդապետ Մուրադյանը։

Դպրոցում մեծ ուշադրություն էր դարձվում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին։ Հովհաննես վարդապետը ձգտում էր իր սաներին դաստիարակել հայրենասիրության ոգով, նրանցից պատրաստել ազատագրական պայքարի մարտիկներ։ Առաքելոց վանքում էին կրթություն ստացել Արաբոն, Լևոնը, Մուրադը, Մովսեսը և այլ հայդուկներ։

Վանահայրը անմիջապես նկատեց ճարպիկ, ֆիզիկապես ուժեղ, միաժամանակ ուշիմ ու եռանդուն Գևորգին։ Նրան լրացուցիչ գրքեր էր տալիս կարդալու։ Նրան և Ահրոնք գյուղից եկած Աղամ անունով աշակերտին հաճախ էր վարդապետը հրավիրում իր խուցը, պատմում հարազատ ժողովրդի վիճակի, Արևմտյան

Հայաստանում տիրող դրության, օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների մասին։

Սկսվել էին զուլումի տարիները։ Հայ ժողովուրդը ոչնչացվելու սպառնալիքի տակ էր։ Քրդերը դարձել էին այն կույր զենքը, որը սուլթանը հմտորեն ուղղել էր հայերի դեմ։

Օգտվելով թուրքական իշխանությունների աջակցությունից ու հորդորանքներից, Մուսա բեկը վայրագ բռնություններ էր գործադրում Մշո դաշտի հայերի նկատմամբ։ 1887 թվականին, երբ Խարսի գյուղապետ Միրոն իր աղջկան նշանում էր, Մուսա բեկը, սանձարձակորեն աղջկա համար փրկագին պահանջեց։ Միրոն հրաժարվեց այդ ստորացուցիչ պահանջը կատարել։ Գազազած Մուսա բեկը հարձակվեց գյուղի վրա, թալանեց գյուղացիների ունեցվածքը, հրդեհեց տները։ Գյուղացիները գանգատ գրեցին Բ. Դռանը։ Բ. Դուռը գյուղացիների արդար բողոքն անուշադրության մատնեց, իսկ Մուսա բեկը կատարեց նոր վայրագություն՝ գազանաբար սպանեց Արգավանքի գյուղապետ Օհանին։ Սարգիսը վրեժխնդիր եղավ հոր սպանության համար։ Մուսա բեկի խմբի հինգ քրդեր ընկան նրա գնդակից, ինքն էլ հերոսաբար զոհվեց։

Այդ ավազակը սիրում էր հոխորտալ. «Ես աշիրեթի ցեղապետ եմ, և 3—4000 քուրդ սպասում են իմ հրամանին. բավական է մատս շարժեմ, և հայերից փոշի էլ չի մնա»։

1889 թվականին Մուսա բեկը կրկին է հարձակվում Խարսի գյուղապետ Միրոյի տան վրա, հորը սպանում, իսկ աղջկան՝ Գյուլիզարին, առևանգում։ Հայերի զանգվածային բողոքների ճնշման տակ սուլթանը Մուսա բեկին բերել է տալիս Կ. Պոլիս, իբր դատելու։ Սակայն նրան դիմավորելու ուղարկեց բարձր պաշտոններ զբաղեցնող Հասան և Բահրի փաշաներին։ Երեք ամիս շարունակ կառավարական շրջաններում Մուսա բեկը հիանալի ժամանակ անցկացրեց։

Դատավարությանը մասնակցելու համար Կ. Պոլիս էին եկել նաև մշեցիներ։

1889 թվի սեպտեմբերին «Հնչակը» գրեց. «... 50 հայ մշեցիներ, որ անասելի նեղություններ կրելով, 60 օր շարունակ հետիոտն ճանապարհ անցնելուց հետո, մի-մի սև հաց օրվա իրենց միակ կերակուր ունենալով, այսօր արդեն Կ. Պոլսում են ամենաողորմելի դրության մեջ...»։

«Հնչակը» գտնում էր, որ սուլթանը միտումնավոր ձգձգում է

Մուսայի դատավարությունը, որպեսզի մշեցիք, Պոլսում մնալու համար նյութական միջոցներ չունենալով և քաշքշուկից զզվելով, վերադառնան Տարոն, ինչը հիմք կտա Մուսա բեկին հայտարարելու՝ թե «մշեցիք զրպարտում են իրեն, և դրա համար էլ փախան»։

Սակայն դատական խեղկատակությունը, համենայն դեպս, տեղի ունեցավ և տևեց 10 օր։ Դատավարությանը ներկա էին Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իտալիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Բելգիայի դեսպանությունների ղեկավարները, եվրոպական և տեղական մամուլի ներկայացուցիչները։

Դատարանը Մուսա բեկի վայրագությունների մասին լսեց մի շարք գանգատներ։ Մշո Առկոնք գյուղի բնակիչ Մկրտիչ Հովհաննիսյանը բողոքեց, որ Մուսան հրդեհել է իրենց կալն ու ամբարը, և հարձակվելով իր հոր ու եղբոր վրա, կապել է սյունին, գանակոծել և 20 ոսկի պահանջել։ Էսվեց նաև ջրաղացպան Մալխասի կնոջ բողոքը, որ Մուսան սպանել է իր ամուսնուն, և մի շարք այլ գանգատներ։ Դատարանում այս հանցագործությունները հաստատվեցին, չնայած դատախազ Խալիլ բեյը բացահայտ պաշտպանում էր Մուսա բեկին և խճողված հարցերով շփոթեցնում հայերին։

1889 թ. նոյեմբերի 11-ին հրապարակվեց դատավճիռը։ Նախապես ունենալով կառավարության ցուցմունքները, դատավորները, համարյա միաձայն, Մուսա բեկին անմեղ ճանաչեցին։

ԱՄՆ-ի դեսպանն այդ դատավճռի դեմ բողոք գրեց Բ. Դուռը։

«Մուսան այժմ դատվում է,— գրեցին եվրոպական լրագրերը,— նրա փաստաբանը, խոսք չկա, ինքը կառավարությունն է։ Ապացո՞ւց... Խնդրեմ։ Մուսա բեկը սպառնացել է, որ եթե ինքը դատապարտվի, կհրապարակի այն բոլոր նամակները, որոնց մեջ գավառական նահանգապետերը նրան դրդում են հայերի դեմ արշավանքներ մղելու։ Եվ մեկ փաստ. Բ. Դուռը դիմակավորված կերպով անգլիական մի լրագրի ուղարկում է այսպիսի հեռագիր. «Մուսային այնչափ մեղադրանքներ են առաջադրված, որ նա ստիպված պետք է անհետանա»[2]։

Սուլթանը հայի «բարին է ցանկանում»։ Բայց տեսեք. Վանի նահանգապետ Խալիլ փաշան, որ Մուսայի պաշտպանն է, ստիպում է տեղացի հայերին ստորագրել Բ. Դռանն ուղարկվելիք մի հեռագրի տակ, որտեղ հայտնվում է այն միտքը, թե հայերը գոհ են իրենց դրությունից և ապրում

Խալիլը չի զլանում ստորագրել շատ հայերի փոխարեն։

Վանի վեց հայտնի վաճառականներ բողոքագիր են ուղարկում Բ. Դռան, որ իրենց անունները հեռագրի տակ ստորագրողը իրենք չեն, այլ Խալիլը Բ. Դուռը... վեց հայերին էլ բանտարկում է։

Մուսա բեկը մնաց անպատիժ, սուլթանի համաձայնությամբ թուրքական դատարանը հայերին համարեց «զրպարտիչներ» և նրանցից գանձեց դատարանի ծախսերը։

Պոլսի շքեղ կյանքը շատ շուտով ձանձրացրեց ազատ լեռնների տիրակալ ավազակին և, իշխանությունների օգնությամբ նա Պոլսից «անհետացավ», դրանով սուլթանին ազատելով մեծ տերությունների նախատինքներից։

Մուսա բեկի գազանությունների կապակցությամբ հայերի զանգվածային բողոքների կազմակերպիչը Մշո վարժարանի ուսուցիչ, Խրիմյան Հայրիկի աշակերտ, վարդենիսցի Մարգար վարժապետն էր։

Փանոս Թերլեմեզյանը անձամբ ճանաչում էր Մարգար վարժապետին ու նրա մասին գրել է. «Նա ինձ հիացրեց իբրև պատրաստված, նվիրված և մեր ձեռնարկած գործին խիստ հարմար մարդ»[3]։

Գործնականում Մարգար վարժապետը Տարոնում ազատագրական գաղափարներ քարոզող առաջին գործիչն էր։ Նա էր նաև առաջին զինված ջոկատի կազմակերպիչը։ Երբ Գյուլիզարին փախցնելուց հետո Մուսա բեկը որոշեց հարձակվել և ավերել նաև Վարդենիս գյուղը, ավազակի դեմ դուրս եկավ Մարգարի զինված խումբը։ Մուսա բեկը մի քանի զոհ տալով փախավ։ Թուրքական իշխանություններն ոստիկանություն ուղարկեցին Վարդենիս։ Նրանք վարդենիսցիներից պահանջեցին հանձնել իրենց մոտ եղած զենքերն ու քուրդ աշիրեթության հետ կռվի մեղավորներին։ Ոստիկանությունը ձերբակալեց 70 գյուղացիների, նրանցից 16-ը տասնհինգ տարվա տաժանակրության դատապարտվեց։ Մարգար վարժապետին իր խմբի հետ հաջողվեց ձերբակալությունից խույս տալ։ Մարգարին ձերբակալելու պատրվակով ոստիկանությունը խուզարկում, թալանում էր հայ գյուղացիներին։ Մուշեղաշեն գյուղում, այդպիսի մի խուզարկության ընթացքում, ոստիկանությանն դեմ են դուրս գալիս վարդենիսցի Հաստաթը իր երկու եղբայրներով։ Ոստիկանության և նրանց միացած քրդերի հետ կռիվը տևում է մինչև երեկո։ Երեք եղբայրները, հինգ հոգու սպանելով, գիշերով անհետանում են։

1890 թ. Մարգար վարժապետը մեկնում է Կովկաս։ 1891 թ. նա մի զինատար խմբի հետ վերադառնում է Մուշ։ Նույն տարվա աշնանը նա նորից կռվկասում էր և պատրաստվում էր Մուշ վերադառնալ Արաբոյի խմբի հետ։ Նրանք հաջողվում է վերադառնալ և Մուշում ու Խնուսում բա-

ցաստրական աշխատանք տանել։ Քմռանք Ակզուտ գյուղում մի մատնիչ նրան ձերբակալել է տպիս։

Բանտում նրան մի ամբողջ տարի խոշտանգում են։ Բայց Մարգարը անձնկում էր և նրանից ոչինչ իմանալ չի հաջողվում։ Նրան կախում են Բաղեշի քաղաքային հրապարակում։ Ականատեսներից մեկը գրում է. «Երբ Մարգարին հրավիրում են կախաղանի մոտ, երեսնամյա երիտասարդը պարզ, անխռով դիմում է դեպի մահ և կանգնած աթոռի վրա, կախաղանի տակ, դիմում է խուռն բազմությանը. «Հայեր, մի վհատվեք, քաջ իմացեք, որ ա :ուհետև կհասնենք մեր նպատակին։ Թեև ես մեռնում եմ, բայց դուք պիտի ապրեք։ Միա.ն այն երջանիկ ժամանակ ինձ չմոռանաք»։

«Այդ նշանավոր զոհը,— գրեց «Հնչակը»,— Մշո դաշտի պարծանքներից մեկն էր և հայ ժողովրդի սուրբ դատի անձնուրաց ու գործունյա զինվորներից մեկը»։

Մուսա բեկի դատական ֆարսը ոգևորեց թուրք բեկերին ու սպաներին։ Առանձնապես լկտիացան Մուսայի ազգականները։

Մուսա բեկի որդին, 14-ամյա Ալի բեկը, 1893 թվի նոյեմբերի 14-ին 15 ձիավորով մտնում է Խնուսի բերդը և իջևանում Մորուք գյուղում։ Երբ այստեղ նրա պահանջները չեն բավարարում, սպառնում է. «Գիտե՞ք ես ով եմ, ես այն Մուսա բեկի որդին եմ, որը հայերին Զուխուրի մեջ շշով խորովեց։ Եթե ասածներս չանեք, նույնը ես կանեմ»։

***

Մուսա բեկի դատավարությունից անմիջապես հետո Մուշում Հաջի Դայիբի ղեկավարությամբ ժողով է տեղի ունենում և որոշվում է հունիսի 10-ի դիշերը հայերին կոտորել։ Սակայն մի քանի խոհեմ թուրքերի հաջողվում է սպանդը ձախողել։ Երկու շաբաթ շարունակ քաղաքը զինվորական հսկողության տակ էր։

Հունիսի կեսերին Տիգրանակերտից Տարոն փոխադրվեցին քեռշերներ կոչվող վայրագ քրդական ցեղերը։ Ութ օրվա ընթացքում այս ավազակները թալանեցին Տարոնի գյուղերի մոտ կեսը՝ Շեխլան, Անձնուտ, Գոմս, Խոփեր, Հայկերտ, Դրմերտ, Քրդագոմ, Ծղակ, Առնիստ, Ավազաղբյուր, Հունան, Բերդակ և այլն, սպանեցին ու վիրավորեցին շատ գյուղացիների։

Իշխանությունները զորք ուղարկեցին իբր քուրդ ավազակներին պատժելու, բայց զորքը ևս սկսեց թալանել հայերին։

Լկտիացել էին նաև լրտեսները, որոնք բանսարկություն անելով, զբաղվում էին դրամաշորթությամբ։

1890 թ. օգոստոսի 30-ին Կ. Պոլսից գրում են. «Մշո դաշտը անընդհատ քրդերի, չերքեզների և քեռշերների ավարառության ու ավերմունքի վայր է դարձել, որոնց աջակցում են թուրք զինվորները՝ խաղաղություն և բարեկամություն հաստատելու պատրվակով...

Տեղ-տեղ պահեստայիններին զենքի են կոչում։ Արաբկիրից մի զինվորական վաշտ է մեկնում Բաղեշ...

Հայերի ու թուրքերի միջև անվստահությունը ահագնանում է, և տարակույս չկա, որ երկուստեք կոտորածների երկյուղը բոլորովին անտեղի չէ և վաղ թե ուշ պետք է իրականանա...»։

Կառավարությունն իր խստություններն ու հսկողությունը հայերի հանդեպ կրկնապատկել էր։ Բոլոր գյուղերում չոնեներ ու ոստիկաններ էին վխտում։ Մուշը փաստորեն պաշարված էր։

Հեղափոխականների դեմ պայքարելու պատրվակով Կոփ գյուղ զորքեր բերվեցին. մի քանի մեծ տներ վերածվեցին զորանոցների։ Ոստիկանները հսկողության տակ էին վերցրել ճանապարհները։ Ոչ մի ջորեպան, կառապան, ճամփորդ չէր անցնում առանց կողոպտվելու։ Ոստիկանների արշավանքների հետևանքով հազարավոր գյուղացիներ, տուն ու տեղ թողած, ցիրուցան էին եղել, հայրը չգիտեր զավակի տեղը, զավակը՝ հորը։

Այսպիսով ձևավորվում էր մահմեդական ազդաբնակչության և օսմանյան իշխանության դաշինքը հայ ժողովրդին տնտեսապես քայքայելու, քաղաքականապես ընկճելու և, ի վերջո, Արևմտյան Հայաստանը և, առաջին հերթին, Սասունը հայերից դատարկելու համար։

Սակայն հեշտ չէ սասունցուն կտրել իր հող ու ջրից, իր լեռներից, ուր կոփվել էր նրա ազատատենչ ոգին։ Սասունցին գիտեր համբերել ու տոկալ, բայց նաև գիտեր իր իրավունքների, իր պատվի ու տան համար կռիվ տալ։ Թեկուզև այդ կռիվը անհավասար լինի, սասունցին արյամբ կվերականգնի լեռնականի իր ոտնահարված արժանապատվությունը։

«Հնչակը» դեռ 1889 թվի դեկտեմբերին գրեց, որ սասունցիները ապստամբելու ուղին են ընտրել որպես «փրկության միակ ճանապարհ»։ Եվ այն, որ կառավարությունը մեծաքանակ զորքի ու թնդանոթների օգնությամբ կարողացավ ձերբակալել Սասնո ապստամբության պարագլուխներից շատերին, դա դեռ թուրքերի հաղթանակը չէր։

1889—1890 թվերը արևմտահայության կյանքում նշանավորվեցին ազատագրական պայքարի մի քանի խոշոր բռնկումներով։ Մասնավորապես, Տարոնում գործում էին մի քանի հայդուկային խմբեր, իսկ Արաբոն Մշո կառավարչի՝ ու քուրդ ցեղապետների սարսափն էր դարձել։

ԱՐԱԲՈ

«Արաբո...»,— Գևորգը երկյուղածորեն էր շշնջում այդ անունը, որի մասին լեգենդներ էին շրջում, և մտքում հնարավորություններ էր փնտրում նրան միանալու։

— Սրբազան, իսկ որտե՞ղ է Արաբոն,— մի անգամ հարցրեց նա։

— Արաբոն ամեն տեղ է,— խուսափուկ պատասխանեց նա, կռահելով պատանու հարցի իմաստը։— Նա մեր դպրոցում էր սովորում, բայց թողեց ու հայդուկ դարձավ։ Արաբոն իշխանություն չի ճանաչում, անընդհատ կռիվների մեջ է թուրքական բռնությունների դեմ։ Առավոտյան նրան կարելի է հանդիպել Մուշ քաղաքի մոտերքում, իսկ երեկոյան արդեն Սասնա լեռներում է։

Մի օր Գևորգը իր դասընկերոջ՝ Ադամի հետ, վանքից դուրս ելավ և շարժվեց դեպի Դավթի քար, ուր, ըստ իր ենթադրությունների, կարող էին տեսնել նրան, ում անունը Սասնա խրոխտ լեռներում թնդում էր որպես ազատատենչ որոտ։

— Հոս եկեք տեսնեմ,— թփերի միջից լսվեց մի ձայն։ Տղաները անակնկալի եկան, երբ տեսան խոտերի մեջ պառկած երեք երիտասարդների։ Նրանցից մեկը երեսունին մոտ, ամուր կազմվածքով, գեղեցիկ դիմագծերով կտրիճ էր։

«Արաբոն է»,— մտածեց Գևորգը։

— Ի՞նչ եք կորցրել էս կողմերում,— սևեռուն հայացքը տղաներին ուղղելով՝ հարցրեց նա։

— Եկել ենք քեզ տեսնելու,— համարձակ պատասխանեց Գևորգը։

— Որտեղի՞ց ես, ո՞ւմ տնից ես, անունդ ի՞նչ է։

— Փսանքի Մրկթենք գյուղից եմ, անունս Գևորգ է, բայց մեր գյուղացիները ինձ Սարհատ են ասում։— Հետո նա աղերսանքով, բայց պահանջելու պես ասաց.

— Արաբո, ընդունիր մեզ քո խումբը։

— Դեռ շատ եք ջահել,— պատասխանեց Արաբոն։

— Մենք վանք չենք վերադառնա,— կտրուկ ասաց Գևորգը,— եթե չվերցնես, կբարձրանանք սարերը։

Արաբոն տեղի տվեց ջահելների հաստատակամության առջև։

Արաբոն Սասունում հայդուկային շարժման ռահվիրան էր, ժողովրդական վրիժառուների անդրանիկ խմբի կազմակերպողն ու ղեկավարը։ Նրա իսկական անունը Առաքել էր։ Ծնվել է Բռնաշենի Կուռթեր գյուղում 1863 թվականին, սովորել է Առաքելոց վանքի դպրոցում։ Փայլուն ընդունակությունների տեր էր։ Նրան սպասում էր կրոնական ծառայությունը, բայց Առաքելը ընտրեց կյանքի այլ ուղի՝ ժողովրդի պատվի, իրավունքների ու ազատագրության համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին։ Նա հրաժարվեց կրոնական կոչումներից, հեռացավ վանքից ու վերցրեց պանդուխտի ցուպը։ Գնաց Հալեպ, մշակ դարձավ, վաստակած փողերով հրացան գնեց և վերադառնալով կազմակերպեց մի խումբ, որը կռվում էր քրդական աշիրեթների ու թուրքական ճնշողների դեմ։ Սկզբում խմբում երեք հոգի էին։ Իրենից բացի՝ դերգեվանքցի Մխոն և ալիզրոնանցի Լևոնը։ Հետագայում խումբը նոր անդամներ ընդունեց՝ Գևորգ Չաուշ, Գալշոյի Մանուկ, Գոմերցի Հովիկ, Բերդակի Ներսո, Ահրոնքցի Ադամ, Ղարսեցի Հագե։

Արաբոյի հայդուկային խմբի գործողությունների մեթոդն էր՝ արագ, հանկարծակի ու աներևույթ։ Նա անընդհատ կռիվների մեջ էր։ Ժամանակակիցներից մեկի արտահայտությամբ «առավոտյան նրան կարելի էր հանդիպել Մուշ քաղաքի մոտակայքում, իսկ երեկոյան նա արդեն Մարաթուկի գագաթին էր»։

Արաբոն բոլոր խեղճերի, հարստահարվածների, թշվառների պաշտպանն էր, անկախ նրանց ազգությունից։ 1885—1889 թվերին Արաբոն որպես «ավազակապետ էր» գործում, այսինքն նրա գործունեության մեթոդները վերցված էին այդ տարիներին օսմանյան կայսրության տարածքում գործող բազմաթիվ հրոսակախմբերի զինանոցից։ 1889—1890 թվերին նա վճռականապես սահմանազատվեց այդ մեթոդներից ու որդեգրեց պայքարի հեղափոխական միջոցներ։

Արաբոյի անունը շուտով տարածվում է ամբողջ Սասունում։ Ոչ միայն հայերը, այլ մասամբ նաև քրդերը միանում են նրան։ Սկզբում նա հայերի ու քրդերի հետ վարվում էր այնպես, ինչ-

պես քուրդ թոռունը, որը իր հպատակներին պաշտպանում է ուրիշների հարձակումներից ու ոտնձգություններից։ Արաբոն ու նրա խմբի անդամները քրդական հագուստներում ծպտված շրջում էին Սասունի ու Տարոնի գյուղերը, թուրքերից զենքեր էին բռնագրավում ու զինվում։ Նրա ստեղծած այս ավանդույթը որդեգրեցին հետագա բոլոր հայդուկային խմբերն ու շատ հայդուկներ։

Կռիվներից մեկում Արաբոն դեմքին դաշույնի հարված էր ստացել։ Սպին ձգվում էր բերանի ձախ անկյունից մինչև ծնոտը։ Այդ սպին նրա դեմքին առնականություն և խորհրդավորություն էր հաղորդում։

Մի անգամ, երբ Գևորգն ու Ադամը ուտելիք էին տանում Արաբոյի խմբին, տեսան Դավթի քարի տակ հավաքված յոթ հոգու։

— Սասունն ու Մշո դաշտը եռում են,— խոսում էր Արաբոն,— ազատագրության գաղափարները ոտի են հանել նաև հայկական նահանգների շատ գյուղացիների։ Թուրքերն ուժեղացնում են ճնշումը։ Մեր ուժերը զորեղ չեն, մենք զենք չունենք։ Խոշոր պետությունները հայերին խաբում են, նրանցից օգնության հույս չկա։ Մեզ օգնել կարող է ռուսաց պետությունը։ Միտք ունեմ անցնել Կովկաս, տեղի հայերի օգնությամբ դիմել ռուսաց թագավորին։ Կովկասում մարտական ջոկատներ կհավաքեմ, կղինեմ ու կվերադառնամ։ Մենք պետք է ժողովրդին պաշտպանենք։ Պետք է փոքր խմբերով տարածվենք ամբողջ լեռնաշխարհով, անպատիժ չթողնենք թալանի, սպանության, բռնաբարության ու դավաճանության ոչ մի դեպք։ Այլ ճանապարհ, այլ հույս չկա ժողովրդի ոգին պահելու, նրան հուսալքության չմատնելու համար։

Արաբոն իսկապես տարբերություն չէր դնում մեծ ու փոքր արարքների միջև, նա գտնում էր, որ ճնշումն ու անարդարությունը, ինչպիսին էլ դրանք լինեն, պետք է պատժվեն։

Մանավանդ, որ թուրքական իշխանությունների վարքագծի սկզբունքն էր՝ թե ով է հանցագործության իսկական հեղինակը, նշանակություն չունի, բոլոր դեպքերում մեղավոր պետք է համարել քրիստոնյային։ Անգլիական «Կապույտ գրքում» տպագրված հյուպատոսական զեկուցագրերից մեկում կարդում ենք, որ Վարդենիս գյուղում «Քրդերի ու հայերի միջև առաջացած ընդհարումը, որ ծագել էր քրդերի կողմից հարսնացու հայ աղջկան հափշտակելու փորձ անելու պատճառով և, որի ժամանակ սպանվել էին երկու քուրդ և մեկ հայ, պատիվ ունեմ հաղորդելու..., որ այդ գործով ձերբակալված և Մուշում բանտարկված 17 հայ դատապարտվել են 15-ական տարվա տաժանակիր աշխատանքի։ Հարձակմանը մասնակցող քրդերին պատժելու համար ոչինչ չի արված»։

Սա իշխանությունների հովանավորությամբ աշիրեթների վայրագությունների բնորոշ օրինակներից է։ Վարդենիսում հարսանիք էր։ Քրդերը հարձակվում են հարսին փախցնելու համար։ Հարսանիքին մասնակցում էր նաև Արաբոն, որը հարձակվում է քրդերի վրա, երկուսին սպանում, իսկ մյուսներին փախուստի մատնում։ Որոշ ժամանակ անց քրդերը մեծ ուժերով շրջապատում են Վարդենիսը, սակայն Արաբոյին ու Մարգար վարժապետին հաջողվում է կազմակերպել գյուղի պաշտպանությունը ու նրանց ետ շպրտել։

Թուրքական իշխանություններն այդ տեսնելով, Վարդենիս զորք և ոստիկանություն են մտցնում։ Չնայած նրան, որ հայերը գիտակցաբար զորքին ու ոստիկանությանը դիմադրություն ցույց չեն տալիս, վերջինները հավաքում են գյուղացիների մոտ եղած զենքերը, մի քանի տասնյակ վարդենիսցիների ձերբակալում են ու Մուշ տանում։ Հետո քրդերը հարձակվում են գյուղի վրա ու այն թալանում։

Թուրքական իշխանությունները բոլոր ուժերը ոտի են հանում Արաբոյին բռնելու համար։ Նրանք օգտագործում են այդ պատրվակը հայկական բնակավայրերում բռնություններ կատարելու համար։ Արաբոյին փնտրելու քողի տակ ոստիկանությունը հարձակվեց Ավաղուտ գյուղի վրա ու սոսկալի կոտորածներ իրականացրեց՝ տղամարդկանց տանջամահ էին անում շիկացած երկաթներով, բռնաբարում կանանց, երեխաներին ճզմում սմբակների տակ, կոտորում անասուններին։

Դառնացած Արաբոն իր շուրջն է հավաքում ընկերներին ու ակտիվ մարտական գործողություններ ձեռնարկում։ Խմբի եռանդուն տեղափոխությունները ամենուրեք մեծ արձագանք էին գտնում, գյուղացու մեջ ներարկում անձնական ու ազգային արժանապատվության գիտակցության տարրեր, գյուղացիական միջավայրից դուրս մղում ստրկական և եսասիրական հոգեբանությունը։ Հայերի շրջանում դավաճանությունն արմատախիլ անելու համար Արաբոն մի օրվա ընթացքում տեռորի ենթարկեց

Վարդենիսի շրջանի երեք գյուղապետների, որոնք մատնությունների էին զբաղվում։

Արաբոյի գործունեությունը գլխավորապես կենտրոնացած էր Բռնաշենում։ Թուրքական իշխանություններն այդ տարիներին աշխատում էին հայդուկների հետ անմիջական շփումներից զերծ մնալ և Արաբոյի դեմ կռվել քրդական աշիրեթությունների ու ցեղապետների միջոցով։ Քրդերին թույլ տրվեց ազատ կերպով թափանցել հայկական գյուղերը։

Սա հայդուկային շարժման սկզբնավորման շրջանն էր։ Հայդուկային առաջին խմբերի մեծ մասը զինված էր միայն որսորդական մեկ կամ երկու հրացանով, մի քանի դաշույնով ու սովորական դանակներով։ Չնայած դրան Արաբոյի խումբը իր վրա էր գրավել թե թուրքերի ու քրդերի, և թե հայ գյուղացիության ուշադրությունը։ Այդ մի կայծ էր, որ բռնկվելով արագ տարածվում էր։

Արաբոյի և նրա խմբի գործունեությանը հետևողը կնկատի, որ հանձինս դրա մենք գործ ունենք հայկական ֆիդայական շարժման հիմնական սկզբունքների ձևավորման պրոցեսի հետ։

Արաբոյին են պատկանում հետևյալ խոսքերը. «Հային այնքան պետք է ուժեղացնել, որպեսզի նրա աստղը պայծառանա և ուժ ունենա մինչև Շամ քշելու այս եկվոր անօրենների»։ Այսինքն ժամանակի ընթացքում Արաբոն հանգում է հայ ժողովրդի ազատության և անկախության համար պայքարի անհրաժեշտության գաղափարին։ Սակայն Արաբոյի հայդուկային խմբի համար բնորոշը ոչ թե այդ էր, այլ բռնության ու բնաջնջման դեմ պայքարը՝ ինքնապաշտպանությունը։ Դա է արտահայտում նաև նրան նվիրված հանրահայտ երգը.

«Գրողը տանի քուրդ Արոյին,
Սպանել է ջոջ Ափոյին,
Իլլաշ մացիր Արաբոյին.
Զարթնիր, լառ, մեռնիմ քեզի

. . . . . .

Դեմ Էրիշկն գալողն ո՞վ է,
Քաջ Արաբո բախտավորն է,
Զարթնիր, լառ, մեռնիմ քեզի»։

Արաբոն մագնիսի նման դեպի իրեն էր ձգում ազատատենչ հայ երիտասարդությանը, նա դարձել էր մի ամբողջ սերնդի

կուռքը։ «Տարոնի կյանքի հուզումնալի ժամանակաշրջանն էր,— գրում է Մորուք Կարոն։— Օդը հագեցած էր հայրենասիրական-հեղափոխական տրամադրություններով։ Արաբոյի, Մարգար Վարժապետի անունները ամենքի բերանին էին»։

Գրում է Գևորգը. «Մնացի այնտեղ (այսինքն Առաքելոց վանքում) երկու տարի, սակայն այնտեղ իմացա ու զգացի, որ հայություն կա, մանավանդ Արաբոն և Լևոնը կային, երբեմն հանդիպում էին վանք, նրանց համար ծառայություններ էի կատարում և դրանով գինովցա»։

Արաբոյի համբավն ու հեղինակությունը արագ տարածում ստացան ոչ միայն Սասունում և Տարոնում, այլև նրանց սահմաններից շատ հեռու։ Նրա հետ համագործակցելու ձգտում դրսևորեցին հայ քաղաքական կուսակցությունները։ Արաբոյի և Մխոյի հետ հանդիպելու և համագործակցելու հնարավորությունները պարզելու նպատակով Վանի արմենականները 1890 թ. Տարոն ուղարկեցին Փանոս Թերլեմեզյանին։ Արաբոյի և Լևոնի հետ նա հանդիպում է Առաքելոց վանքում։ Այդ մասին Թերլեմեզյանը գրում է. «Արաբոն, որ տակավին որևէ կուսակցության չէր պատկանում, լավ կազմվածքով, բարձրահասակ և թխադեմ մի երիտասարդ էր... խոշոր աշխատանք էր հարկավոր նրան ընտելացնելու և լայնորեն ըմբռնել տալու ազատագրական շարժման իմաստը, որին նա բնազդորեն միայն հարած էր։ ... Երկու ժամվա շափ իրար հետ խոսելուց հետո որոշվեց, որ նրանք կապ պիտի ունենան Մշո Ստեփանի (Սապա Գուլյանի— Ս. Պ.) հետ։ Ես վեր կացա, արձակեցի իմ կաման և կապեցի Արաբոյի մեջքին իբրև նվեր և համբուրելով նրանց հեռացա»[5]։

Հարկ է նաև նշել, որ այդ ընթացքում Հրայր Դժոխքի ու Վարդան վարդապետի ջանքերով ստեղծվեց «Ազգային միություն» անունով մի ընկերություն։ Արաբոն ղեկավար մասնակցություն ուներ այդ ընկերության աշխատանքներում։ Նա որոշ ժամանակահատվածում գործեց նաև Մ. Տամատյանի հետ միատեղ։ Գործունեության և մտածողության շրջանակների նման ընդլայնումը Արաբոյի շուրջը համախմբեցին ոչ միայն հայդուկներին, այլև Սասունի ազդեցիկ ուժերի մեծ մասին, ինչպիսիք էին Շենիկցի Գրգոն ու Մուրադը (Համբարձում Պոյաճյան)։

Թուրքական իշխանությունները, որ սկզբում Արաբոյի խմբի ահարեկչությունները համարում էին սովորական ավազակու-

թյուններ, Վարդենիսի ու Մուշեղաշենի կռիվներից հետո հասկացան, որ տվյալ դեպքում իրենք գործ ունեն ոչ թե քրեական հանցագործությունների, այլ ազգային շարժման հետ։

1892 թ. Արաբոն իր խմբով մտնում է Բերդակ գյուղը։ Նա հայդուկներին բաժանում է մոտակայքի գյուղերի վրա, իսկ ինքն ու Մխոն մնում են Բերդակում։ Ալիզոնանի գյուղապետը իշխանություններին հայտնում է, որ հայդուկները Բերդակում՝ Գասպարի մառանում են։ Թուրքական զորքերը գյուղը շրջապատում և զգալի զոհեր տալու գնով Արաբոյին ու Մխո Շահենին ձերբակալում են։

***

Հովհաննես վանահայրը Գևորգին իր խուցը կանչեց։ Տրամադրությունը վատ էր։

— Արաբոյին ու Մխոյին թուրքերը բռնել ու Մուշ քաղաքի բանտն են տարել։ Արաբոն մեղադրվում է «ավազակային խումբ կազմելու մեջ»։ Երբ նրան ու մյուս բանտարկյալներին Կարին էին տանում աքսոր ուղարկելու համար, ճանապարհին ամենուրեք նրանց ողջունում էին մեծաթիվ հայեր։ Ոստիկանները այդ հայերին քշում էին՝ սպառնալով. «Հեռացեք, հերթը ձեզ էլ կգա», որին հայերը պատասխանում էին. «Հիմա տարեք, մենք նրանցից ավել չենք»։ Ալիզոնանի գյուղապետ Կրպոն դավաճան է, նա է քրդերին հայտնել, որ Արաբոն ու Մխոն Բերդակում են։ Կրպոն պետք է սպանվի։ Դավաճանի արյունը ձեզ հալալ լինի։

Գևորգը ստացավ իր առաջին մարտական հանձնարարությունը և հաջորդ օրը Գալշո Մանուկի ու Լևոնի հետ ճանապարհ ընկավ դեպի Ալիզոնան գյուղը։ Առանց նախազգուշական միջոցների դիմելու, նրանք ուղիղ գնում են գյուղապետ Կրպոյի տուն։ Կրպոն նստած էր բակում։ Գևորգը դանակի երկու հարվածով սպանում է դավաճանին։

«Սեպտեմբեր ամսվա 10-ն էր,— գրում է Գևորգը,— մենք էլ գնացինք ս. Կարապետ։ Հոն գտանք Պ. Մուրադին։ Բայց թուրք կառավարությունը շուտով իր հայացքը մեր վրա շրջեց։ Ցույս կողմը սկսեց խուզարկություններ, բայց ոչինչ չգտավ... Բերդակցիք գիտեին, որ մենք ենք Կրպոյին սպանել»։

Նրանք վերադառնում են Առաքելոց վանք։ Արաբոյի ձերբակալությունը հուսալքություն էր առաջացրել։ Թուրքական իշխանություններն ավելի լկտի էին գործում։ Հայդուկները խուսափում էին ակտիվ գործողություններից։

Մի անծանոթ գրգիռ սկսում է նեղել Գևորգի պատանեկան զգացումները և նրա համար հետզհետե անհրապույր, անտանելի էին դառնում վանքն էլ, դպրատունն էլ, դասագիրքն էլ։ Նա միջոցներ էր փնտրում վանքից հեռանալու։

«1888 թ. մայիս ամսի 7-ին հրաժարվեցի վանքից,— գրում է Գևորգը,— գնացի տունս, բայց շարունակ գործ ունեի զենքի հետ... Բոլոր գերդաստանով ինձ սիրում էին, որովհետև այրուբեն գիտեի, իսկ տերտերը շատ էր բարկանում ու ինձ նախատում։ Ասում էր՝ զենքի հետ գործ չունես, փորձիր Ավետարան, Մաշտոց և շարական կարդալ։ Բայց ես ոչ ոքի չէի լսում ու չէի հնազանդվում... Գյուղից թողի հեռացա, կրկին վերադարձա Առաքելոց վանք, որպեսզի ընկերանամ Արաբոյին և Լևոնին»։

Գևորգը Առաքելոց վանքում միայն մի ամիս մնաց և նորից վերադարձավ Մրկթենք։

«Մրկթենք... Փսանաց գավառի այս գյուղն էր Բերդի հետ, որ սնուցել է Սասնո հայտնի կտրիճներին և օրորել է այն քաջարի ասպետների խանձարուրը», որոնց քաջագործությունները հայտնի էին ամբողջ Սասունում։ Մրկթենքցիները վարպետ և անվեհեր որսորդներ էին...

Համբավավոր որսորդ էր նաև Գևորգի հայրը, բայց կուրացել էր։ Գևորգն իր ձանձրույթը սպանում էր լեռներում։ Առավոտ կանուխ, հոր հրացանը ուսած, թափառում էր մացառուտներում, ապառաժների վրա և ուշ տուն վերադառնում։

Վանքից, Արաբոյից ու մյուս ընկերներից բաժանվելուց հետո դարձել էր ավելի ըմբոստ, ավելի խիզախ։

Նա գյուղի երիտասարդներից մարտական խումբ կազմեց ու զբաղվում էր զինավարժությամբ։

Սակայն հազիվ մի տարի տևեց այս ազատ, ինքնիշխան կյանքը...

Մի օր էլ, երբ հայրը արգելում է նրան իր հրացանը օգտագործել, Գևորգը խռոված ասում է. «Թող այս օջախն ինձ հարամ լինի, քանի դեռ սեփական զենք ձեռք չեմ բերել»։ Նա կրկին վերադարձավ վանք։

***

Մի օր Գևորգը հուսահատ նստած էր իր խցում, երբ ներս մտավ Հովհաննես վանահայրը և ուրախ բացականչեց.

— Արաբոն փախել է բանտից։ Վաղը գիշերը կլինի Դավթի քարի մոտ։ Ասել է, որ դու էլ այնտեղ գնաս։

Գևորգը ուրախությունից գլուխը կորցրեց, վանահոր ձեռքը համբուրելու փոխարեն, գրկեց ծերուկին և սկսեց վեր թռցնել։ Վանահայրը մի կերպ ազատվեց նրա գրկից և մի գրություն տվեց՝ Արաբոյին հանձնելու համար։

Արաբոն այս անգամ Գևորգին ու Ադամին ընդունեց իր խմբի հիմնական կազմում և մասնակից դարձրեց ջոկատի մարտական գործողություններին։

Հայդուկային այս խումբը ստանձնել էր ղրկվածների պաշտպանության գործը և հարվածում էր բոլոր նրանց, ովքեր ձեռք էին բարձրացնում հայ գյուղացու կյանքի ու կայքի վրա։ Արաբոն փխրուն հոգի ուներ, բայց անխնա էր թշնամու և, մանավանդ, դավաճանների հանդեպ։

... Դավթի քարի տակ հավաքվել էին տասներկու հայդուկներ։ Երևում են Արաբոն, Մխոն ու Լևոնը։ Բայց Արաբոյի տրամադրությունը տեղը չէր։

— Տղերք, ես մի քանի օրից մեկնելու եմ Կովկաս։ Այս պահին Սասունից իմ հեռանալն անհրաժեշտ է, որովհետև թուրք ոստիկանությունը ինձ բռնելու պատրվակով տակնուվրա է անում հայկական գյուղերը։

Նա Գևորգին պատվիրեց Հովհաննես վանահոր միջոցով ամենուրեք լուր տարածել, որ Արաբոն մեկնել է Տարոնից։

Գևորգը շվարած ոտի կանգնեց։ Նա շփոթված նայում էր Արաբոյին։ Վերջինս մոտեցավ նրան ու Ադամին և ասաց.

— Դուք արդեն հայդուկ եք։ Դուք պետք է լավ հասկանաք, որ հայդուկությունը ոչ միայն պատիվ է, այլև մեծ պատասխանատվություն, անսահման նվիրվածություն։ Հայդուկը իր կյանքի տերը չէ, նրա կյանքը ազատագրական պայքարին է պատկանում։ Հայդուկը պետք է կարողանա ամեն օր մահվան աչքերի մեջ նայել և պատրաստ լինել իր կյանքը զոհելու մեծ նպատակի համար։ Հայդուկը անձնական կյանք չունի։ Հայդուկի ընտանիքը իր մարտական ընկերների խումբն է, նրա տունը՝ Սասնա ժայռերն ու քարանձավները, նրա կերակուրը՝ կորեկն ու գրլ-

գիլը։ Մենք մեր արմատներով ժողովրդի մեջ ենք։ Գնահատեցեք ժողովրդի վստահությունը, վստահեք հայ գյուղացուն, առանց նրա օգնության ու աջակցության մենք անուժ ու ողորմելի ենք։

Ողբերգական վախճան ունեցավ հայդուկային շարժման առաջամարտիկ, մեր ժողովրդի անվեհեր զավակ Արաբոյի կյանքը։ Նա զոհվեց այն ժամանակ, երբ իր ցանած սերմերն արդեն ծիլ էին տալիս, երբ հայդուկային շարժումը գտնվում էր ազգային ազատագրական պայքարի վերաճելու շեմին։ Դեպքը տեղի ունեցավ Խնուսի ու Մուշի միջև ընկած մի գյուղում, երբ Արաբոն Կովկասում հայդուկային խումբ կազմած, վերադառնում էր հայրենի լեռնաշխարհ՝ նոր ուժով ծավալելու պայքարը ընդդեմ բռնատերերի։

Արաբոյի խմբից փրկված մի երիտասարդի վկայությամբ Խոշգելդի և այնուհետև Գյոլ Առաշ գյուղերում, քրդերի հետ անհավասար մարտի բռնվելով, Արաբոյի խումբը պաշարվում է և թշնամուն բազմաթիվ զոհեր պատճառելով, կոտորվում։

Արաբոն, Ղոզլի սարից ազատվելով, իջնում է համանուն գյուղը, այնտեղից անցնում Խոշգելդի։ Այստեղ են մտնում վեց ընկերներով՝ Վարդանն էր, Արաբոն, Ավոն, Մարտոն, Բուլղարն ու այդ երիտասարդը։ Խոշգելդում, մութն ընկնելուն պես, հայդուկները մտնում են մի մարագ, սակայն նկատվում են։ Գյուղացիները մարագի երդիկից թուղթ են ցած գցում, որը զգուշացնում էր. «Ջորս կողմը քրդեր են» և պատրաստ պետք է լինել։ Գյուղացիները նրանց հաց են բերում։ Արաբոն գյուղի երիտասարդներին պատվիրում է ճանապարհներին հերթապահել։ Կես գիշերին հայդուկները թողնում են գյուղը։ Լուսաբացին նրանք մտնում են Գյոլ Առաշի ձորը, և կանգ առնում աղբյուրի մոտ։ Փոխանակ սպասելու մութն ընկնելուն, նրանք ցերեկով շարունակում են ճամփան։ Հագել էին համիդիեի տարազ։ Մտնում են Գյոլ Առաշ գյուղը։ Մի քրդի հարցին, թե որտեղից եք գալիս, Արաբոն պատասխանում է՝ Մոտքից, բայց քուրդը գլխի է ընկնում, որ նրանք հայեր են։ Քիչ անց գյուղից գալիս են զինված քրդեր։ Սկսվում է կռիվը։ Գնալով քրդերը շատանում էին։ Հայդուկները կրակելով առաջ էին շարժվում. նրանք բարձրացան լանջն ի վեր, բայց պարզվեց, որ վերևում ևս քրդեր կան։ Հայդուկները շրջապատված էին։ Քրդերը բոլոր կողմերից կրակում էին։ Ընկան Մարտոն, Բուլղարն ու Ավոն։ Արաբոն ու Վարդանը կրակելով շարունակում էին առաջ ընթանալ։

«Հանկարծ հրացանաձգությունը դադարեց,— պատմում է երիտասարդը,— Արաբոն ու Վարդանը ևս սպանվել էին։ Ես վիրավորված էի, լուսաբացին փորձեցի անցնել Սասունը, բայց չհաջողվեց, սասունցիների ու քրդերի մեջ մեծ կռիվ էր սկսվել։ Ճանապարհները, կիրճերը բռնված էին քրդերով։

Խնուս վերադառնալիս՝ ճանապարհին լսեցի... թե Մշո գյուղերից մեկում 4—5 դիակ են դարսել և գնացող եկողին ցույց են տալիս։ Նրանցից երեքին ճանաչել էին, դրանք Ավոյի, Մարոյի և Բուլղարի դիակներն էին... Մնացած երկուսին, իսկ ոմանց ասելով մեկին, ոչ ոք չի ճանաչել։ Շատերն ասում են, որ Արաբոն դեռ ողջ է և ման է գալիս Դաշտում՝ Տամատյանին ազատելու»։

Միշտ այդպես է։ Ժողովուրդը չի ուզում հավատալ իր սիրելի հերոսների մահվանը։ Նրանք իրենց մահից հետո էլ լեգենդ դարձած շարունակում են ապրել ժողովրդի հիշողության մեջ, շարունակում են ոգեշնչել նրան իր ազատության համար մղվող պայքարում։ Արաբոն չի մեռել, կա։ Նա հարություն կառնի Գևորգի մեջ, Հրայր Դժոխքի, Փեթարա Մանուկի, Ախոյի, մյուսների մեջ։ Նա զենք կդառնա Գևորգի վրիժառու ձեռքերում և վա՜յ նրան, ով Գևորգի «Արաբոյին» թիրախ կդառնա։

ՃԱՆԱՊԱՐՀ, ՈՐ ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ Է ՏԱՆՈՒՄ

Գևորգը մտքում կրկնում էր Արաբոյի խոսքերը. «Հայդուկը անձնական կյանք չունի», և նրա հայացքի դեմ ուրվագծվում էր Եղսոյի պատկերը։ Եղսոն սպասում է, իսկ ինքը ամուսնանալու իրավունք չունի։ Երկու ազնվագույն զգացումներ, որ այլ պայմաններում կհարստացնեին մեկը մյուսին, այս պարագայում բացառում էին իրար։ Ոչ, Գևորգը երկընտրանքի մեջ չէր։ Նա իր որոշումն արդեն կայացրել էր։ Իսկ Եղսո՞ն, ինչպե՞ս կընդունի այդ որոշումը։ Ճակատագիրն ինչո՞ւ է այդքան դաժան բնության երկու զավակների հանդեպ։

— Ադամ,— ընկերոջը դիմեց Գևորգը,— Եղսոյին եմ ուզում տեսնել։

Ադամը խայթվածի պես շրջվեց դեպի Գևորգը, բայց երբ նրանց հայացքները հանդիպեցին, երբ զգաց հոգեկան այն մեծ

խռովքը, որ ապրում է ընկերը, ամեն ինչ հասկացավ ու լուռ հետևեց նրան։

Երեկո էր։ Հեղին գյուղի ամայի փողոցներով իշխան Վարդանի տուն էին գնում երկու երիտասարդներ։ Նրանք մոտեցան տան պարսպին։ Ահա կճուճը ձեռքին շեմից դուրս եկավ Եղսոն։ Գևորգի աչքերի առաջ էր բարձրահասակ, բարակ իրանով, սև աչք-ունքով, փոքր բերանով, մարգարտաշար ատամներով, լայն ճակատով, երկար հյուսքերով մի կատարյալ գեղեցկուհի։ Գևորգը կարկամել էր, և միայն այն ժամանակ, երբ Եղսոն, գործն ավարտելով, ներս էր ուզում մտնել, ձայնեց.

— Եղսո։

Աղջիկը նվաղուն ճիչ արձակեց, և ձեռքից կճուճն ընկավ։ Ակամա վազեց շեմից ներս։ Ապա կտրուկ ետ դարձավ ու նետվեց ձայնի ուղղությամբ։ Որքա՜ն էր սպասել նա այդ ձայնին։ Ահա կանգնած է Գևորգի դիմաց և շրթունքները շշնջում են. «Տեր աստված, եկավ, եկավ»։ Գևորգը, հայացքը փախցնելով, խուլ ձայնով ասաց. «Եղսո, բեր վանքի բանալիները»։ Աղջիկը լուռ ենթարկվեց, և քիչ հետո վերադարձավ բանալիների խուրձը ձեռքին։

Գևորգն առաջ ընկավ, Եղսոն կախարդվածի պես հետևեց նրան։

Ներս մտան վանք։ Ծանր ու ճնշող լռություն էր։ Ապա վանքի կամարների տակ ողբի՞, թե երդման պես հնչեց Գևորգի խռովահույզ ձայնը։

— Եղսո, եթե երբևիցե վիճակվեր անձնական կյանք ունենալ, դու, միայն դու կլինեիր իմ ընտրյալը։ Բայց իմ կյանքը, աստծո կամոք, իմը չէ։ Իմ և քո արանքում մի տառապյալ ժողովուրդ կա։ Ես հայդուկ եմ և ամուսնանալու իրավունք չունեմ։ Եկել եմ քանդելու մեր ուխտը։ Դու ազատ ես։ Աստված քեզ բարի բախտի արժանացնի։

Եղսոն անշարժ կանգնած էր։ Գևորգի խոսքերը նրա գիտակցությանը չհասան։ Նա Գևորգի հետ հանդիպման սպասումների երկար ու ձիգ տարիներ էր ապրել, և հանդիպման երջանկությունը այնպես էր տիրել նրա էությանը, որ այլ բան ի վիճակի չէր ընկալելու։ Իսկ երբ Գևորգի խոսքերը վերջապես նրա գիտակցությանը հասան, վանքում, բացի իրենից, ոչ ոք չկար։

Հայդուկների համար ամենադժվարը սեփական զենք ունե-

նալու խնդիրն էր։ Մեկ հրացան գնելու համար պետք էր վաճառել տասը եզ։ Ուրիշ որտեղի՞ց ճարեին այդքան դրամ։

Գևորգը որոշեց Արաբոյի օրինակով գնալ Հալեպ, փող վաստակել և հրացան գնել։ Նրան ընկերացավ Գալշոյի Մանուկը, և 1889 թվի սեպտեմբերին երկու ընկեր ճամփա ընկան դեպի Հալեպ։ Տիգրանակերտում միացան առևտրական քարավաններից մեկին։ Հալեպում հարցուփորձ անելով գտան հայկական եկեղեցին։ Հալեպում շատ պանդուխտ սասունցիներ էին աշխատում։ Նրանց մեջ կային նաև մրկթենքցիներ, որոնք Գևորգին ու Մանուկին ապաստան տվեցին։

Առաջին անգամ Սասունից ոտքը դուրս դրած Գևորգի համար Հալեպը այլ աշխարհ էր, իր շինությունների անծանոթ ոճով, անծանոթ տարազ կրող բազմությունների եռուզեռով, շուկաների աղմուկով, մզկիթների կանչերով։

Գևորգը սկզբում ծառայության անցավ մի սասունցու ջրաղացում, ապա՝ հացի փռում։

Վեց ամիս անց, իր վաստակած չնչին գումարին ավելացնելով հարազատների ու հայրենակիցների հավաքած փողը (նրանք Գևորգի հեռահար նպատակները գիտեին և բոլոր առաջ ուզում էին նրան Սասնա լեռներում տեսնել, ուր նրա կարիքը օդի պես անհրաժեշտ էր), Գևորգը հրացան գնեց։

Նա երկու ձեռքով հորիզոնական դիրքով բռնեց հրացանը, մինչև ծնկները գլուխը խոնարհեց ու ասաց. «Հայրենակիցներ, շնորհակալ, շատ շնորհակալ եմ ձեզնից»,— ապա գլուխը բարձրացնելով, շուռ եկավ դեպի հյուսիս, հայացքը հառեց երկնքին ու ասաց. «Հե՜յ, Մարաթուկ, քո զորությանը մատաղ, ինձ կամք և ուժ տուր մինչև կյանքիս վերջը Արաբոյի նման իմ այս «Արաբոյով» խփելու թշնամուն ու դավաճանին, պաշտպանելու թշվառին ու լկվածին»։

Այդ օրվանից նրա հրացանը կնքվեց «Արաբո» անունով։

Գևորգը մի քարավանի հետ բռնեց տունդարձի ճամփան։ Քարավանը հանգստանալու համար երկու օր մնաց Տիգրանակերտում, և նա հնարավորություն ունեցավ ծանոթանալու քաղաքի հայկական շրջաններին, որոնք բավական բազմամարդ էին և ունեին հստակ կազմակերպված ազգային կյանք։

Տիգրանակերտից քարավանը շարունակեց ճանապարհը։ Հաջորդ օրը, Խուլբի գետի խորը կիրճով անցնելիս, քարավանի

վրա հարձակվեց օսմանյան կայսրությունում լայն ճանաչում ստացած ավազակապետ Փուշոյի խումբը։

Գևորգը, դիրքավորվելով մի ժայռի ետևում, դիպուկ կրակոցներով գետնին փռեց մի քանի ավազակների։ Նրա գնդակից ընկավ նաև ավազակապետ Փուշոն։ Գևորգը փրկեց քարավանը։ Քարավանի քրդերը անմիջապես երգ հյուսեցին, որը փառաբանում էր Գևորգի քաջությունը։ Հետագայում ոչ միայն այդ, այլ նաև մյուս քարավանների ջորեպանները Գևորգին շատ օգնեցին Հալեպից զենք ու զինամթերք փոխադրելու գործում։

Գևորգը վերադարձավ հայրենի գյուղ։ Նա գյուղում մնաց երկու շաբաթ։ Այստեղ նրան գտավ Ադամը։ Նա Գևորգի մոտ էր եկել Հրայրի հանձնարարությամբ։ Հրայրը հանձնարարել էր գնալ Շենիկ և մտնել այդ գյուղի տանուտեր Գրգոյի մարտական ջոկատը։ Գևորգը նաև իմացավ, որ Սասունում ստեղծվել էին մի քանի ինքնապաշտպանական խմբեր, որոնք գործում էին Հրայրի ցուցումներով։ Երկու օր անց, երբ Գևորգը հորեղբորը՝ Ղզրոյին, հայտնեց հայդուկ դառնալու իր վերջնական մտադրության մասին, ծերունին դառնորեն լաց եղավ իր փչրված երազների ու չիրականացած իղձերի համար, բայց Գևորգին ետ չպահեց վճռից։

Հաջորդ օրը Գևորգը տնեցիներին հրաժեշտ տվեց ու բռնեց Վերին Սասունի ճանապարհը։

Նա այլևս հայրենի գյուղ չվերադարձավ։

«1890 թիվն էր, որ բացում էր հայկական հեղափոխության արյունոտ շրջանը, և դեռ հեղափոխական առաջին քարոզիչները Սասունի լանջերին չէին երևացել, իսկ Գևորգը արդեն ինքնաբերաբար, իրավիճակի թելադրանքով, ըմբոստացած շրջապատող պայմանների դեմ, գյուղացի երիտասարդությանը կոչ էր անում «ոչ խարճ, ոչ էլ խարաճ տալ կառավարությանը»։

«Ու երբ Տամատյանը Սասուն ոտ դրեց, Գևորգը եղավ նրա առաջին ընկերը, նրա վստահելի ու ամենաանխոնջ գործակիցը, ինչպես նաև տեղական պայմաններին ավելի ծանոթ ու իրազեկ ուղեցույցը»[6]։

Հետագայում այսպես կգրվի նրա մասին։ Իսկ առջևում մի ամբողջ կյանք կար։

«Միրին կատար հասնելուն պես,— հիշում է Գևորգը,— չորս ոստիկաններ հանդիպեցին, որոնք մեզ անմիջապես ձերբակալեցին։ Սակայն ես նրանց ձեռքում տասը բոլոր էլ չմնացի,

ջախա ու անվնաս ազատվեցի։ Ոստիկանները հետևիցս բավականին վազեցին, բայց ոչինչ անել չկարողացան։ Ես այն ժամանակ առանց զենքի էի։ Երբ եկա պարոն Մուրադին հասա, գնացինք ս. Հովհաննի վանքի կողմը, գտանք Տամատյանին... Աղբեկ գյուղի կամրջի վրա երկու սասունցի քրդեր անմիջապես իմ ընկեր Քոլոզ Հովհաննեսին բռնեցին, նրա մոտի նամակները խլեցին։ Բայց մեր հետ էր այդ կողմերից Գրիգոր անունով մի տղա։ Մենք երկուսով հարձակվեցինք և նրանց հրացանները խլեցինք։ Ուզեցինք նրանց տեղն ու տեղը սպանել, բայց Հովհաննեսը չթողեց»։

***

Գևորգն ու Ադամը ճամփա ընկան դեպի Գելիեգուզան՝ Ֆադեին հանդիպելու։ Նրանք հասան Գելի և մտան առաջին իսկ պատահած տան բակը։ Բակում մի ծերունի էր նստած սանդի վրա ու մեղեսիկ էր քաշում։

— Բարև, քեռի,— ձայնեցին։

— Բարև, աստծու բարին։

— Քեռի, որտե՞ղ է Ֆադեի տունը։

— Լաո՛, Ֆադեն տուն չունի։ Նա հեռացել է իր տնից ու սարերում է ապրում։

— Ի՞նչ է, տնեցիների՞ց է խռովել, թե՞...

— Է՛, լաո, Ֆադեի պատմությունն ուրիշ է։

Երիտասարդները նստեցին քարերին և խնդրեցին պատմել։

— Սուլթանի հրամանով Սասունում զորանոցներ էին կառուցում՝ հայերին հնազանդ պահելու համար։ Զորանոցներից մեկը կառուցում էին Ֆադեի արտի մեջ։ Զայրացած Ֆադեն գիշերը քանդեց զորանոցի պատերը և քարերը գլորեց ձորը։ Առավոտյան ոստիկանները նրան հարկադրեցին բոլոր քարերը շալակով ձորից բարձրացնել զորանոց, և այդ ամառ զորանոցի շինարարությունն ավարտեցին։ Ֆադեն, հայհոյանքների տարափ տեղալով թուրքերի հասցեին, վերցրեց իր թիակն ու գյուղից հեռացավ։ Սարերում ընտրեց մի փոքրիկ հողակտոր, գարի ցանեց ու ապրում է այնտեղ։ Նրա միակ ունեցվածքն իր բահն է, որից անբաժան է։ Ա՛յ, էս դիմացի սարով որ բարձրանաք, կես օրում կհասնեք Ֆադեի արտին։

Գևորգն ու Ադամը ճամփա ընկան ծերունու ցույց տված ուղ-

ղությամբ։ Ֆադեի արտը Անդոկի փեշերին էր։ Նրանք երկար քայլեցին։ Մութը վրա տվեց, և որոշեցին հանգստանալ՝ առավոտ լույսով ճանապարհը շարունակելու համար։

— Ո՞վ եք, էս կողմերում ի՞նչ եք անում,— կողքի ժայռի ետևից հնչեց մի ձայն։ Գևորգն ու Ադամը գնացին ձայնի ուղղությամբ։ Ժայռի տակ, թաղիքի վրա, թիակը գրկած պառկած էր մի հաղթանդամ մարդ։

— Բարի իրիկուն, քեռի Ֆադեն դո՞ւն ես։

— Դուք ո՞վ եք, ինչի՞ կհարցնեք։ Ես եմ։

Գևորգը ծոցից հանեց ծխամորճը, որը ժամանակին Արաբոն էր տվել որպես վստահության երաշխիք։

Ֆադեն մտածմունքի մեջ ընկավ և շրջվելով դեպի երիտասարդները՝ ասաց.

— Քնեք։ Լույսը բացվի, բարին հետը։— Կրկին շուռ եկավ իր թաղիքի վրա։ Գևորգն ու Ադամը հարմար տեղավորվեցին ժայռի տակ, թիկն տվին քարերին ու աչքները փակեցին։

Առավոտյան, երբ արթնացան, Ֆադեն չկար։ Մտածելով, որ խաբվել են, որ դա Ֆադեն չէր, և գուցե ծուղակ էր պատրաստվում, արագ վեր թռան և շարժվեցին Անդոկն ի վեր։ Դեռ մի քանի քայլ չէին արել, երբ լսվեց.

— Էդ ո՞ւր, էստեղ եկեք,— Ֆադեի ձայնն էր։ Նա գալիս էր դեպի տղաները։— Տալվորիկ պիտի երթանք։

Նա բահն ուսին դրեց և քայլեց սարն ի վար։ Գևորգն ու Ադամը հետևեցին նրան։

— Խառը ժամանակներ են,— խոսեց Ֆադեն և ներկայացրեց հայերի վիճակի այնքան համապարփակ ու հավաստի պատկերը, որ Գևորգն ու Ադամը քար էին կտրել, թե նման տեղեկություններ նա ինչ միջոցներով և եղանակներով էր ստանում։— Սոսկալի սպանդ է ամենուր, ամեն օր նորանոր կոտորածի լուրեր են հասնում։ Կառավարությունը կատաղած հրամաններ է արձակում՝ հայերի ամեն մի շարժում տեղն ու տեղը արյան մեջ խեղդելու։ Երզնկայի ամբողջ բանակը շարժման մեջ է, մեր երկրի բոլոր կողմերը զինվորներով են լցված։ Փոքր Ասիայից՝ Խարբերդից, Սեբաստիայից զինվորներ են գալիս։ Տաճիկ մոլլաները, կառավարության հրամանով, մուսուլման ժողովրդին ատելություն են քարոզում քրիստոնյաների նկատմամբ։ Ահավոր կոտորած տեղի ունեցավ Վանի մոտերքում։ Մուշում՝ նույնպես։ Կոտորածի լուրեր՝ Դերջանից, Բասենից՝ նմանապես։

Արճեշի մոտերքում երեք մշեցի ճամփորդ գազանաբար մորթվեցին։

Հունիսի 23-ին Կարինի Ջիթահող գյուղի դաշտերը կողոպտեցին ու փչացրին։ Ընդհարման ժամանակ հայերից մոտ քսան հոգի զոհվեցին ու հարյուր հոգի վիրավորվեցին։ Նյուս գյուղացիները բանտարկվեցին։

... Մենք այժմ պաշարման մեջ ենք գտնվում, նամակները ստուգվում են, գաղտնի ոստիկանության անխիղճ պաշտոնատար անձինք, ոստիկանները, աչքերը չորս արած, հետևում են հայերի ամեն քայլին, շարժմանը, խոսակցությանը, և ձենք փնտրելու պատրվակով նրանց խուզարկում են։

... Սկսվել են աննկարագրելի ու անպատմելի բարբարոսություններ ու չարագործություններ, մարդկանց արյունը հեղեղի նման հոսում է, եկամուտն ու ունեցվածքը ավարառվում են, տագնապալի լուրերը հաջորդում են միմյանց։

Պատվաստ կատարելու պատրվակով՝ Կիլիկիայում Թուրքերը սպանեցին 200 հայ երեխայի։

Զուլումները մոլեգնում են Տարոնում։ Բիթլիսի վիլայեթը իսկական դժոխք է, մեր Մշո դաշտը, եթե այսպես շարունակվի, ավերակ կդառնա։

ՄԱՐՏԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Տալվորիկ հասան, Ֆադեն նրանց առաջնորդեց իշխան Գասպարի տունը։ Տանտերը միջին տարիքի, ջլապինդ, բարձրահասակ մի մարդ, ուրախությամբ ընդունեց հյուրերին։ Ամեն ինչից երևում էր, որ Ֆադեն գիշերն այս տանն արդեն եղել է, և Գևորգի ու Ադամի գալը տանտիրոջ համար անսպասելի չէր։

— Բարով եք եկել, մեր գլխի ու աչքի վրա տեղ ունեք,— ասաց տանտերն ու հյուրերին տարավ մի մեծ սենյակ։ Երկու տասնյակից ավելի մարդիկ, քուրսիների վրա նստած, Դժոխք Հրայրի հետ ինչ-որ հարցի շուրջ խորհրդակցում էին։ Տալվորիկի շրջանի գյուղերի ներկայացուցիչներն էին։ Լուր էին ստացել, որ Թուրքական զորքերն ու քրդական ցեղապետները հարձակում են պատրաստում Վերին Սասունի վրա, հավաքվել էին իրենց անելիքը որոշելու։ Բոլորը մտահոգված էին, և այդ մտահոգությունը հիմք ուներ։ Բանն այն էր, որ նախորդ տարինե-

բին Թուրքական զորքերը խուսափում էին Վերին Սասուն բարձրանալ։ Դրա համար էլ այս շրջանը գործնականում ազատ էր ասպատակություններից ու թալանից։ Եվ եթե այժմ Թուրքերը որոշել են հասնել մինչև Տալվորիկ, ապա խոսքը ոչ թե մասնակի, տեղական բնույթ կրող, այլ ընդհանուր հարձակման մասին է։ Սուլթանը որոշել է արյան ծովի մեջ խեղդել Սասունը։

— Խնդիրն այն է,— ասաց Հրայրը,— որ թշնամին հակահարված ստանա ու ետ շպրտվի ոչ թե Տալվորիկի մատույցներում, այլ Դաշտում կամ նախալեռնային շրջաններում։ Դրա համար պետք է կազմակերպել Դաշտի գյուղերի ինքնապաշտպանության ջոկատներ։ Դա հնարավորություն կտա դիմադրություն ցույց տալ թշնամուն յուրաքանչյուր բնակավայրում և, ի վերջո, կասեցնել նրա առաջխաղացումը։ Տատրագոմը ձեզ օրինակ, որի բնակիչները, Հովնանի գլխավորությամբ, հարձակվեցին գյուղ ներխուժած զափթիե ու համիդիե ջոկատների վրա ու դուրս քշեցին։

Իշխան Գասպարը գտավ, որ պետք է շտապ կազմակերպել դաշույններ պատրաստելու գործը Դաշտի գյուղերը զինելու համար։ Խորհրդակցության մասնակիցները որոշեցին զինել ժողովրդին և պարտիզանական բնույթի կռիվներով հարվածել թշնամուն ամենուրեք։

Իշխան Գասպարի կարծիքով ինքնապաշտպանության զինված խմբեր պետք է ստեղծվեին բոլոր հայաբնակ գյուղերում։ Եթե առաջներում Թուրքական իշխանությունները աշիրեթապետներին թույլատրում էին թալանել հայկական գյուղերը, ապա 1891 թվին նրանք արդեն պարտադրում էին քրդերին գնալու Թուրքական զորամասերի ետևից, և երբ առաջինները այս կամ այն գյուղում ավարտում էին պատժողական գործողությունները, քրդերը պետք է հարձակվեին և թալանեին տվյալ գյուղը, ոչնչացնեին նրա բնակչությանը։

... Տարոնի հայ բնակչության վրա հարձակումները հատկապես լայն ծավալներ ստացան 1891 թվի գարնանը։ Հարձակման ենթարկվեցին Ծափնա, Հունան, Աղջան, Տերգ, Արբերդ գյուղերը։

Թուրքական բանակային ուժերի դեմ կռվի ծանրությունը իրենց վրա պետք է վերցնեին հայդուկները, իսկ ինքնապաշտպանական ջոկատները պետք է դիմակայեին քրդական աշիրեթներին։

Քրդերի նկատմամբ վերաբերմունքը վճռական նշանակություն ուներ ոչ միայն հայդուկային շարժման, այլ, ընդհանրապես, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար։ Աբդուլ Համիդը ծրագրել էր իր հալածինչ քաղաքականությունը իրագործել քրդերի միջոցով, որպեսզի հետագայում իրեն ներկայացվող ցեղասպանության մեղքը բարդեր նրանց վրա։

Դժբախտաբար, քուրդ ցեղապետների մեծ մասը հեշտությամբ խաբվեց և կանգնեց դահիճների կողմը, դարձավ նրանց հարվածային ուժը։ Սուլթանի կամակատարները հայերի վրա հարձակվելու համար այլ վայրերից Տարոն ու Սասուն էին բերում քրդական նորանոր ցեղեր։

Գևորգին հանձնվեց հինգ երիտասարդներից մի խումբ, որի խնդիրն էր արագ տեղաշարժերով շեշտակի հարվածներ հասցնել թշնամու այն ուժերին, որոնք տվյալ դեպքում առավել ակտիվություն են դրսևորում։ Տեղեկություն ստացվեց, որ Շենիկի շրջանում քրդական Մամկանի ցեղախումբը ակտիվացել և վտանգ է սպառնում տեղի հայկական գյուղերին։ Գևորգն իր խմբով շարժվեց Շենիկ։

Դեռ չհասած Ալիանք գյուղին, խումբը հանդիպեց հարյուր մարդուց բաղկացած քրդական մի ջոկատի, որը դեպի հանդիպակաց կիրճն էր քշում դյուղի ոչխարները։ Գևորգն իսկույն կողմնորոշվեց. եթե քրդերին հաջողվի ոչխարի հոտը անցկացնել կիրճը, այլևս հնարավոր չի լինի կանխել նրանց։ Նա իր խմբով անցավ կիրճի դիմացի ժայռերը և այնտեղից կրակի տակ առավ քրդերին։ Վերջիններս, մոտ մեկ տասնյակ զոհ և վիրավորներ թողնելով, քաշվեցին դեպի ժայռերն ու դիրքեր բռնելով կրակ բացեցին Գևորգի ջոկատի վրա։ Թվական գերազանցությունը հաջողության նժարը հափշտակիչների կողմն էր թեքում, երբ ժայռի ծայրին դաշույններով զինված կանանց մի մեծ խումբ երևաց և աղմուկ-աղաղակով շարժվեց դեպի քրդերը։ Վերջիններս մտածելով, որ շրջապատման մեջ են ընկել, լքեցին իրենց դիրքերը։ Շուտով իր զինված խմբով վրա հասավ նաև Շենիկի իշխան Գրգոն։ Մամկանցիք այլևս դիմադրել չկարողացան և, կռվի վայրում թողնելով երկու տասնյակից ավելի դիակներ, դիմեցին փախուստի։

Եկավ 1892 թիվը։ Հայդուկներն ու հայ գյուղացիները, օգտվելով Սասունի ձյունաշատ ձմռան ընձեռած զինադադարից,

տենդագին նախապատրաստվում էին գարնան մարտերին, փորձից գիտենալով, որ գարնան բացվելու հետ Սասնա գլխին է իջնելու թուրքական արյունոտ յաթաղանը։

Արտակարգ ծանր կացության մեջ էր Դաշտի հայությունը։

Հայերին սովի մատնելու դիտավորությամբ իշխանությունները բռնագրավել ու մահմեդական ազգաբնակչությանն էին բաժանել նրանց հացի պաշարները։ Սովն ու համաճարակային հիվանդությունները տառացիորեն հնձում էին Դաշտի հայերին։ Շատ գյուղերում մահացությունները հասան 24—40 տոկոսի։ «Հասել էր այն պահը, երբ ժողովուրդը այլևս անկարող էր դիմանալ և զսպել իր զայրույթը»։

Տարոնում տիրող վիճակը նման էր «խուլ երկրաշարժի առաջին հարվածին», որին հաջորդելու էին երկրորդ, երրորդ ուժգին հարվածները՝ սպառնալով քարուքանդ անել ամեն ինչ։ Դա հրաբխի նախանշան էր, որը ցանկացած պահի կարող էր վերածվել ահավոր աղետի։

Հայտարարվել էր զորքերի ընդհանուր զորահավաք... Միայն Սասունի վրա մի քանի վաշտ զորքի հետ ուղարկվել էր 16 մեծ դաշտային և 34 լեռնային թնդանոթ։ Սասուն ուղարկվեցին նաև Երզնկայի 19-րդ և Մուշի 12-րդ հեծյալ գնդերը, Էրզրումից մի գումարտակ՝ երկու թնդանոթներով։ Գարնանն համարքայլ դեպի Սասուն շարժվեցին թուրքական ոստիկանական ջոկատները։ Նրանք տեղավորվեցին հայկական գյուղերում։

Ապրիլին Բիթլիսի կուսակալ Թահսին փաշայի զորքերը երևացին Սեմալում։

Թուրքական բանակի դեմ կանգնած էին 2000 գյուղացի՝ զինված միայն չախմախլի հրացաններով, դաշույններով ու մահակներով։

Շատախի ու Գավառի հայերին ահաբեկելու համար իշխանությունները լուր ուղարկեցին քեռչերի քրդերին, որ գան ու բնակվեն Սիմ լեռան վրա, իսկ Հաջի Դայիբը նրանց հրավիրեց Մշո սարերը, ասելով. «Այս տարի ձեզ համար շատ որս կա»։

Քեռչերը քոչվոր չէին. նրանք Խիանքում բնակվող բագրանցիներն ու Խուլբում բնակվող բատկանցիներն էին։ Ամառները գալիս էին Շատախի սարերը և պատուհաս դառնում հայերի համար։

Մուշ քաղաքի հայերին արգելվեց առանց անցագրի քաղա-

քից մեկ ժամից ավելի բացակայել, այսինքն, քաղաքի հայությունը մեկուսացվեց գյուղերից և հատկապես Սասունից։

Ապրիլի 16-ի գիշերը Հաջի Ֆեյիմի ղեկավարությամբ մի քանի վաշտ ոստիկաններ ցրեցին Շատախի Տաիք, Իրիցունք, Գելամավ, Շուշնամերկ, Գեղաշեն գյուղերը և մինչև ապրիլի 20-ը հարցաքննում էին գյուղացիներին։ Հաջի Ֆեյիմը իր մոտ է կանչում Գելիեգուղանի, Սեմալի և Շենիկի տանուտերերին, բայց նրանք հրաժարվում են ներկայանալ։ Խնդիր էր դրված Սասունի գյուղապետներին ձերբակալել և հավաքել ազգաբնակչության մոտ եղած զենքը։ Պոլսից հատուկ ոստիկաններ բերվեցին դրսից եկած հեղափոխականներին գտնելու համար։ Այդ ընթացքում ավերվեցին ու թալանվեցին Խասգյուղի, Հայկերտի եկեղեցիները, խուզարկվեցին բոլոր մեծ ու փոքր վանքերը։

Արգելվեց օտար քաղաքացիների մուտքը Մուշ։ Հայդուկ բռնելու համար նախկինում վճարում էին 20, իսկ 1892 թվին 200 ոսկի։ Թուրքական կառավարությունը ամեն ճիգ թափում էր խեղդելու Տարոնի շարժումները։ Նա երկյուղում էր, որ այդ շարժումները կտարածվեին Հայաստանի մյուս գավառներում... Որտեղ շարժում էր ծագում, պաշարողական վիճակ էր հայտարարվում։

Բ. Դուռը անընդհատ տեղեկություններ է պահանջում Սասունում տիրող վիճակի մասին։ Պատասխանները երկիմաստ են՝ խաղաղությունը վերականգնվում է, բայց լրացուցիչ զորքեր ուղարկեք։

Իշխանությունների հանձնարարությամբ քրդերը հարձակվում են ս. Կարապետ վանքի վրա։ Վանքի միաբանությունը կռվի մեջ է մտնում և, չորս զոհ տալով ու տասը քուրդ սպանելով, նրանց ետ է մղում։

1892 թ. մայիսի 19-ին Մուշից գրում են. «Ոստիկանական վաշտերը մի ամսից ավելի Սասունում են՝ Շատախ, Գավառ, Խուլբ, Խիանք և Խարզան, Տամատյանին գտնելու ու նրա հետ հարաբերություն ունեցած գյուղապետներին ձերբակալելու համար։ Այդ վաշտերը Հաջի Ֆեյիմի, Դալիբ էֆենդու հրամանատարությամբ գյուղերում բազմաթիվ խժդժություններ կատարեցին, սակայն ոչինչ հայտնաբերել չկարողացան, իսկ տանուտերերը ներկայացան այնպիսի պայմաններում, որ նրանց ձերբակալել չհամարձակվեցին։ Այստեղ անհաջողության մատնվելով, թուրքերը իրենց զայրույթը թափում են Խուլբի ձորի երկայնքով ընկած հատուկենտ անպաշտպան ու ցրված տների վրա, ձերբակալում են հինգ հոգու, որոնցից Միրխո անունով մեկը, չդիմանալով խոշտանգումներին, մատնում է ոմանց, այդ թվում և Ազոյին, որին գազանաբար խոշտանգում են։ Ձերբակալվածներին տանում են Սեմալ Դալիբի մոտ։

Բազմոցին նստած էին Դալիբը, Ֆեյիմը և Ռաշիդը։ Ձերբակալված հինգ խուլբեցիներ կանգնած էին սենյակի կենտրոնում, որոնց հսկում էին 30 ոստիկաններ։ Գիշեր էր։ Դալիբը հարցաքննում էր խուլբեցիներին, ծեծի ու ահաբեկման միջոցով ճգնում նրանցից տեղեկություններ ստանալ։ Բայց գյուղացիները չընկճվեցին։ Դալիբը մյուսներին դուրս է հանում ու սենյակում թողնում միայն Ազոյին։ Նրան մերկացնում են և ամենոտին մի ձող դնելով՝ երկու ծայրերը ագուցում են, ապա ձեռները հորիզոնական տարածելով, մի ձող էլ կապում են դաստակներից։ Այդ կենդանի խաչը սյունին կապոտելով՝ սկսում են ծեծել։ Ազոյի մարմինը ծածկվում է կապույտ շերտերով։ Ազոն փորձում է գլուխը սյանը խփելով մեռնել ու ազատվել տանջանքներից։ Ոստիկանները նրա գլուխը բռնում են և, առանց ծեծը դադարեցնելու, հարցեր տալիս։ «Ես ոչինչ չգիտեմ, որքան ուզում եք շարչարեք, մեկ է, չեմ մատնի»,— վերջին ուժերը լարելով ասաց Ազոն։ Աքցանով սկսեցին նրա բեղերը քաշել։ Ազոն չընկճվեց։ Եվ այդպես՝ ամբողջ գիշերը։ Իսկ վաղ առավոտյան, վախենալով գյուղացիների զայրույթից, Դալիբը ձերբակալվածներին ձիերով ուղարկեց Մուշ։

Սասունը բոլոր կողմերից շրջապատվում էր ու կտրվում դրսի աշխարհից։ Սասուն բարձրացան ևս մի քանի հրետանային վաշտեր։ Հաջի Դալիբը շրջում է քրդերի բնակավայրերը ու նրանց գրգռում հայերի դեմ։ Նրան ուղեկցում էին ոստիկանները, այսինքն, նա պաշտոնական հանձնարարություն էր կատարում։ Ջեբրանցի քրդերից մեծ թվով հեծյալների Մուշ տարան, զինվորական զգեստ հագցրին, հրահանգավորեցին ու էտ ուղարկեցին։ Սակայն ոչ բոլոր քրդերը միացան թուրքերին։ Հատկապես Սասունում բնակվող քրդերը անցան հայերի կողմը ու միասին բարձրացան լեռները։

Հուլիսի 12-ին ս. Կարապետի վանքում վարդավառի տոնակատարություն էր։ Տոնակատարությանը մասնակցելու էին եկել

շուրջ 2000 հոգի։ Ոստիկանները շրջապատել էին վանքի տարածքը, այստեղ էին նաև Մուշի ու Կենճի հազարապետները, 50—60 համիդիեներ, Մուշի պաշտոնատարներ, լրտեսներ, ճանապարհները հսկում էին 21 հեծյալներ։

Նույն օրերին բագրանցի քրդերը վրաններ դրին Շենիկ, Սեմալ և Գելիեգուզան գյուղերի մեջտեղը՝ Ջայ կոչված վայրում, նրանց մի մասն էլ շարժվելով հյուսիս՝ կտրեց Շատախի կապը Տարոնի հետ։

Գեղաշենը դատարկվեց, իսկ բնակիչները բարձրացան լեռը։

Հազոյի կայմակամը քրդաբնակ Պողքան գյուղից ջորիներ է ուղում՝ իր զորքերը Սասուն տեղափոխելու, բայց մերժում է ստանում։ Վախենալով քրդերի հետ գժտվելուց, նա ոստիկաններ է ուղարկում հայաբնակ Խոծածվանք գյուղը և ջորիներ պահանջում։ Սակայն հայերը նրանց ծեծում ու վռնդում են։ Գազազած կայմակամը հարձակվում է Խնձորիկ հայաբնակ փոքրիկ գյուղի վրա։ Հայերը պաշտպանության են դիմում, նրանց օգնության են գալիս հարևան գյուղերի հայերն ու քրդերը։ Կռիվը տևում է երկու օր։ Թուրքերը փորձում են նահանջել, հայերը փակում են նրանց ճամփան։ Բայց թուրքերին հաջողվում է նահանջել դեպի Գոմսի վանք ու կանգ առնել Սլնաղբյուր վայրում։ Այստեղ են հավաքվում նաև Սասունից վերադարձող զորքերը։ Բելքցի քրդերը նրանցից պահանջում են հեռանալ։ Կայմակամը տեղի է տալիս ու հեռանում Հազո։

Օգոստոսին, 40—50 քրդեր գիշերը հարձակվում են Շուշնամերկ գյուղի վրա։ Հարևան Կոփ գյուղում 200 թուրք զինվոր կար, բայց նրանք Շուշնամերկի կռվին չմիջամտեցին. հայերն ու քրդերը թող իրար ոչնչացնեն, իրենց ուզածն էլ այդ էր։ Թուրքական կայազորը լսելով, որ «Մշո սարում 80—90 հայդուկ կա, ահաբեկված փախավ Մուշ»։ Եվ ընդհանրապես, լեռնային գյուղերի խաղաղությունը պաշտպանելու պատրվակով խնդճ գյուղացիների վրա բեռ դարձած այդ ուժերը չէին հանդգնում մի քայլ իսկ անել հայդուկային խմբերի դեմ, որոնք զարմանալի համարձակությամբ ոտի տակ էին տալիս Մուշի գյուղերը և գոտեպնդում էին հայերին։

Իշխանություններն ահաբեկված էին։ Գործնականում ինքնապաշտպանության մեջ ընդգրկված էին բոլոր գյուղերը։ Մշո կառավարիչը դիմում է Բ. Դռանը՝ իր գործելակերպը որոշելու խնդրանքով։ Ստացվում է պատասխան՝ գործել շատ զգույշ։

Գյուղերին հրահանգ ուղարկվեց հայերին ապաստան չտալ, եթե հայը նույնիսկ ծանոթ կամ բարեկամ լինի՝ ծեծել ու հանձնել իշխանություններին։ Մի փախստական բռնելու համար սահմանվեց 300 ոսկի վճար։

Միաժամանակ, իշխանությունների հորդորանքներով, արևմուտքից դեպի Սասուն շարժվեցին Տիգրանակերտի քրդերը։ Նրանց միացան նաև Խուլբի ու Խիանքի քրդերը։

Սասունցիները, տեսնելով կանոնավոր զորքերի ու քուրդ աշիրեթությունների շարժումները, գյուղերում նրանց գործադրած բռնությունները, զինվելով ու զինամթերք կուտակելով, խուսափում էին ակտիվ գործողություններից։

Մայիսի կեսերին Հազոյի ոստիկանական ջոկատը նորից հասնում է Տալվորիկ, բայց որովհետև այդ շրջանի քրդերը հայերի հետ համերաշխ էին, կայմակամը չհամարձակվեց մտնել Տալվորիկ։ Նա տալվորիկցիներից պահանջեց վճարել պետության հասանելիք տուրքերը։ Բայց այդ Տալվորիկը երբեք և ոչ ոքի տուրք չէր վճարել և կտրականապես հրաժարվում է հարկ տալ։ Կայմակամը փորձում է տուրքերը հավաքել, բայց զինված դիմադրության է հանդիպում։ Ոստիկանները գերադասում են հեռանալ։

Սասունցիներին պատժելու առաջադրանքը ըստ ամենայնի չկատարելու համար Մուշի մութեսարիֆին հեռացնում են։

Սասունում ինքնապաշտպանական կռիվները ավելի ու ավելի են ծավալվում և սուր բնույթ ստանում։

Հնչակյան կուսակցությունը շտապեց այն անվանել «հնչակյան ապստամբություն»։

«Հնչակը» 1892 թ. № 5-ում գրեց. «Հատուկ թղթատարով մի մեծ ու ծանր լուր հասավ մեզ վերջին վայրկյանին— Հնչակյան հեղափոխական կուսակցության նախաձեռնությամբ մայիսի առաջին օրերը Սասնո գավառն ու Մշո դաշտի մի քանի գյուղերն ապստամբել են կառավարության դեմ։ Մի քանի անգամ Մուշից ու Բաղեշից զորքեր են ուղարկվել ապստամբների դեմ, բայց ջարդվել են։ Կառավարությունը, չունենալով բավականաչափ տեղական զինվորական ուժ, գլուխը կորցրած՝ դիմում է ուրիշ կենտրոնների, օգնություն խնդրելով։ Ապստամբական շարժումն ավելի ու ավելի ընդարձակ ծավալ է ստանում շարունակ։

Կեցցե՛ ապստամբությունը։

Կեցցե՛ Սասունը»։

Տեսնելով հայերի ու քրդերի համերաշխությունը՝ իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին ոչ միայն այն քայքայելու, այլ նաև քրդերի միջև դժգոհություններ ու բախումներ առաջացնելու համար։ Եվ դա հաջողվեց։ Մեկ շաբաթվա ընթացքում քրդերը երեք անգամ իրար բախվեցին։ Այդ բախումների համար օգտագործվեց համիդիեների ղեկավար դերի շուրջը առաջացած տարաձայնությունները։

Որոշ մասնագետներ այն կարծիքն են արտահայտել, որ Սասունում կատարվածի «միակ պատճառը հարկն էր։ Պետությունը ուզում էր կիսանկախ լեռնական Սասունի զավակների վիզը հարկերի ծանր լծի տակ մտցնել»։

Սա սխալ կարծիք է։ Հարկերը միայն առիթ ու պատրվակ էին Սասունի հայության դեմ զանգվածային բռնություններ ու վայրագություններ գործադրելու համար։

***

Գևորգի խմբի վրա պարտականություն էր դրված արագ տեղաշարժերով ստուգել թուրքական բանակի շարժման հավանական ուղիները, այդ մասին մյուս ջոկատներին տեղյակ պահել, իսկ եթե հարկ լիներ՝ կռվի բռնվել։ Գևորգի անունն արդեն հայտնի էր ոչ միայն հայերի, այլև թուրքերի ու քրդերի շրջանում։ Ուստի նրա ջոկատի արագ տեղափոխությունները սանձում էին քրդական աշիրեթներին և առժամանակ ապահովում հայերի թիկունքը։

Կառավարական զորքերը աստիճանաբար ամրացան Կուրտիկի բարձունքներին, իսկ քրդերը ընդհուպ մոտեցան հայկական բնակավայրերին։ Ոչ մի կասկած չկար, որ բոլոր ուղղություններով հարձակում էր սկսվում Սասունի վրա։ Հայդուկները որոշեցին նախահարձակ լինել, հարվածներ հասցնել քրդերին և հարձակողական գործողություններով թուրք հրամանատարությանը հասկացնել, որ Սասունում ծանր մարտեր են սպասվում։

Այս դիրքորոշումն իրեն արդարացրեց։ Թուրքական բանակը 1892 թվականին չհանդգնեց Սասունում ռազմական լուրջ գործողություններ ձեռնարկել և սպասեց նոր համալրումների։ Այդ օրերին էր, որ Գևորգի խմբի մեջ մտավ Սպաղանցի Գալեն՝ Ֆիլիկապես ամուր, առյուծի սիրտ ունեցող, բայց դանդաղա-

Գևորգ Չաուշ



Վարդան վարդապետ

Դժոխք Հրայր

Արաբո

ՄիքրաՀ ՏամատյաՀ

Գեղ. (Ցանկանակված 1896-թՀ)

Աղբյուր Սերոբ

Մշո դաշտի Սուլուխի պատմական կամուրջը

Ս. Կարապետի վանքը

Ամրոցի վանքը

Մշո դաշտը՝ ս. Կարապետի վանքից նայելիս

Մուշ քաղաքը

Մշո ս. Առաքելոց վանքը

Մուշ քաղաքը

Մուրատ Գոյանցյան

Կոնտեմիր գյուղը

Վանցյան

Խաչգյուղ

Ֆիդայիներ

Կորյուն

Ֆիդայիներ

Նեմրութ լեռան գագաթի լիճը

Հաջի

Հակոբ Կոտոյան

Բաղդասար Սալյան. Գուրգեն



շարժ ու սակավախոս մի երիտասարդ, որը դարձավ Գևորգի ու Մակարի մերձավորագույն զինակիցն ու նշանավոր հայդուկներից մեկը։

Գալեն միջահասակ էր, թիկնեղ, թուխ դեմքով, միայն կրակոտ աչքերն էին մատնում նրա ներքին ուժը, երկաթյա կամքն ու վճռականությունը։

Գալեն Սպաղանք գյուղից էր։ Այս գյուղը ընդամենը քսանհինգ տուն ուներ, բայց տվեց մի քանի նշանավոր հայդուկներ։ Այս գյուղից էր նաև հայդուկային շարժման նահապետ Մակարը։ Սպաղանցի էին Ազեն ու Ազան։

Գալեն մարտական մկրտություն ստացավ պատանի հասակում, երբ մասնակցեց աղջիկ փախցնելու համար Տալվորիկի ու Կյապրնիի միջև ծագած կռվին, որն իսկական պատերազմի վերածվեց։ Կյապրնցիները աղջիկ փախցնելը համարեցին իրենց պատվի վայրենի ոտնահարում ու պատերազմ հայտարարեցին Տալվորիկին։ Դա մի անմիտ եղբայրասպան կռիվ էր։ Գալեն մասնակցում է Խիանքի և Մարաթուկի քուրդ ցեղերի դեմ կռիվներին։

1890 թվին, երբ Խալիլ փաշան կոտորեց Սպաղանքի ազգաբնակչությանը, զոհ գնացին Գալեի ու Մակարի ազգականներն ու հարազատները։ Այդ ողբերգական իրադարձությունը վերջնականապես որոշեց Գալեի ուղին։ Նա երդվեց իր կյանքը նվիրել ժողովրդի փրկության գործին, դառնալ հայդուկ՝ ժողովրդական վրիժառու։

1892 թվին նա մտնում է քեռու՝ Մակարի խումբը, նրա միջոցով ծանոթանում Գևորգի հետ։ Գալեն մասնակցել է Գևորգի գրեթե բոլոր մարտական գործողություններին։

Լինելով արտակարգ քաջ ու ճարպիկ կռվող, Գալեն մեծ դեր խաղաց Խարսի, Տալվորիկի, Բերդակի կռիվներում։ 1904 թ. նրան հանձնարարվեց Գրեգոլի դիրքերի պաշտպանությունը, որը նա իրականացրեց աներևակայելի քաջությամբ ու հմտությամբ։

***

1893 թվի գարնանը սկսվեց թուրքական բանակի նոր առաջխաղացում դեպի Վերին Սասուն, որին մասնակցում էին նաև աշիրեթությունները և մոլեռանդ շեյխերը՝ սրբազան պատերազմի կոչող իրենց ոռնոցներով։ Սասունը նորից պաշարվեց։

Հայերը հարկադրված էին կռվել մի քանի ճակատով։ Սակայն հարվածի գլխավոր ուղղությունը Տալվորիկն էր, որի գրավումը ճամփա կբացեր դեպի Անդոկ ու Շատախ։

Այդ ընթացքում Սեմալում ձերբակալվեց հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Միհրան Տամատյանը, որը մեծ դեր

է խաղացել Սասունում ու Տարոնում ազատագրական գաղափարների տարածման և օսմանյան բռնությունների դեմ պայքար կազմակերպելու գործում։

Այս լուրը ստանալով՝ գելիեցիներն ու ալյանքցիները հարձակվում են Սեմալի վրա՝ մատնիչներին պատժելու, սակայն «Սեմալի կանանց թախանձանքներից ազդված, ետ են դառնում»։

Տասնհինգ շենիկցիներ երիտասարդ Գրիգոր Մոսեյանի գլխավորությամբ բարձրանում են Սիմ լեռը՝ անակնկալ հարձակումով Տամատյանին ազատելու մտադրությամբ։ Մեկուկես ժամ հետո մի սեմալցի նրանց հայտնում է, որ Տամատյանին այլ ճանապարհով արդեն Մուշ են հասցրել։

Գևորգը Տալվորիկում էր, երբ ստացավ Տամատյանի ձերբակալության լուրը։ Անմիջապես հավաքելով տալվորիկցիներին՝ շտապեց դեպի Սեմալ։ Բայց արդեն ուշ էր։ Հարյուրապետ Իսկենդերի հրամանատարությամբ և հարյուր ոստիկանների ուղեկցությամբ Տամատյանին խոշտանգելով հասցրել էին Մուշ։ Մի քանի օր անց նրան տեղափոխում են Բաղեշ և, որպեսզի փախուստի չդիմի, մի ոտքը կոտրում են։ Հարցաքննության ժամանակ Տամատյանն իրեն խիզախ է պահում։ «Ոչ թե ձգտում ենք թուրք տարրը ոչնչացնել,— հայտարարեց նա,— այլ մեր ջանքերն ուղղված են, որ հայ և թուրք ժողովուրդները հավասար իրավունքներ ունենան ու բարվոք կյանքով ապրեն»։

Երբ շղթայակապ Տամատյանին բանտախուց են տանում, նա անվրդով ասում է. «Ես երջանիկ եմ, որ այսպիսի կյանքով ապրեցի»։

Լսելով Տամատյանի համարձակ պատասխանները, մի թուրք պաշտոնյա ասել է. «Այժմ արդեն խորապես համոզված եմ, որ իսկական խռովությունը Տամատյանի ձերբակալությունից հետո է սկսվելու»։

Միհրան Տամատյանը ծնվել է 1868 թվին Կ. Գոլտում, 1880-ին ավարտել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը։ Տիրապետում էր ութ լեզուների։ Զանազան վայրերում զբաղվել է ուսուցչությամբ, եղել է Տուրուբերանի և Վասպուրականի հայկական դպրոցների տեսուչ։ Գում Գափուի ցույցից հետո փախել է Աթենք։ 1891-ին վերադարձել է Սասուն և զբաղվել ինքնապաշտպանական կռիվների նախապատրաստական աշխատանքներով։

1893 թ. ձերբակալվել է։ 1897-ին հեռացել է հնչակյան կուսակցությունից, հետագայում դարձել ռամկավար կուսակցության հիմնադիրներից մեկը։ Ֆրանսիայի օգնությամբ փորձեց ստեղծել Կիլիկիայի հայկական ինքնավար պետություն։ 1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում հռչակվում է ինքնավար Հայաստան Մ. Տամատյանի գլխավորությամբ, որը սակայն շատ կարճ կյանք ունեցավ։

Տամատյանը զբաղվել է նաև գրական գործունեությամբ, նա է «Տալվորիկի կտրիճը» երգի հեղինակը։

Տալվորիկի կտրիճ եմ խորդ,
Քաղքցու պես չեմ թուլամորթ,
Սարի զավակ, քարի որդի՝
Հին քաջ հայոց եմ մնացորդ։
Տալվորիկի զավակ եմ քաջ
Չեմ խոնարհվի թուրքի առաջ
Քարոտ լեռանց եմ ազատ լաճ՝
Չեմ տեսեր ո՛չ արոր, ո՛չ մաճ։

Մահացել է Կահիրեում 1945 թվին։

Տամատյանին բռնելուց հետո կառավարությունը դիմում է կտրուկ միջոցների Սասունը ընկճելու համար, և շտապում է զիլանցիների հայտնի շեյխերին նամակ գրել և խնդրել, որ «քուրդ ցեղերին գրգռեն Տալվորիկի դեմ»։ Միաժամանակ Մուշից, Բաղեշից, Կարինից և Տիգրանակերտից զորքեր են հավաքում։ Նախ բագրանցիք, խարզանցիք, սասունցիք (քրդեր) և մի քանի այլ ցեղեր, հավաքված Տալվորիկի մոտ, պատգամավոր են ուղարկում, պահանջելով. «Թագավորին հնազանդվեք ու հարկ տվեք»։ Տալվորիկցիք պատասխանում են, թե Տաճկաստանում ամեն մի քուրդ կամ թուրք թագավոր է ձևանում։ Մենք, փոխանակ թագավորներին հնազանդվելու, աստծուն կապավինենք։ Հազարավոր քրդեր հարձակվում են Տալվորիկի վրա։ Տալվորիկցիները նրանց համփան փակելու համար քանդում են Սատանի կամուրջը։ Նրանք քաշվում են Ֆրոֆրոքար և, ճանապարհներին պահապաններ դնելով, կռվում են։ Մանր մարտերը շարունակվեցին մի ամբողջ օր։ 35 քուրդ ու 6 հայ սպանվում են։ Քրդերը հարկադրված ետ են քաշվում։

Սասունը դրսից որևէ օգնություն չէր ստանում, «անօգնական սասունցիք միմիայն իրենց չախմախլիով հուսահատ պայքար են մղում ոչ միայն ճիվաղների, այլև քաղցի դեմ։ Սասունցիները «կցորա լեռն են քաշվում, նրանց տներն ու արտերը քանդում են զորքերը»։

Բաղեշի կուսակալը Դալիբ էֆենդուն ուղարկում է որպես պատվիրակ։ Նա տալվորիկցիներին ասում է. «Ձեզնից գրավված ոչխարը, ջորին, էշերը ձեր տալիք տուրքի տեսքը համարեք և դուք էլ, մի հնազանդագիր գրելով, սուլթանից ներում հայցեք, նշելով, թե Տամատյանը ձեզ գայթակղեց»։ Բացասական պատասխան ստանալով, կուսակալը հեռանում է Բաղեշ։ Ետ են քաշվում նաև Սեմալում ու Շենիկում եղած զորքերը։

Իսկենդերը Տամատյանի ձերբակալությունից երեք օր հետո, ոստիկանների գլուխն անցած, հարձակվեց Շենիկ գյուղի վրա։ Գրգոյի ղեկավարությամբ շենիկցիները դիմադրում են։ Ոստիկանները մի զոհ տալով փախչում են[8]։

Թուրքական բանակի և քրդական կռվող ուժերի դասավորությունը, նրանց հարձակման ծավալն ու հզորությունը պարզելու համար Գրգոն Գևորգի ջոկատը հետախուզության ուղարկեց։ Երբ Գևորգի խումբը հասավ Կուրտիկի բարձունքներին, տեսավ, որ թուրքական մի ամբողջ գունդ, դիրքավորվելով, իր հսկողության տակ է վերցրել ստրատեգիական բոլոր կարևոր կետերը, լեռնաշխարհը Տարոնի դաշտին կապող բոլոր ճանապարհներն ու անցուղիները։ Խումբը Նովասարի փեշերով շարժվեց դեպի Առաքելոց վանք։

Այստեղ նրանք քննեցին հետախուզության արդյունքները և համոզվեցին, որ թուրքական իշխանությունները Մուշի կայազորից բացի, Սասունի վրա են շարժում այլ զորամասեր Բիթլիսից, Կենճից և Հազոյից։ Մեջիդ փաշան իր ոստիկանական վաշտերը ընդհուպ մոտեցրել էր Շենիկին։ Ժանդարմական մի քանի վաշտեր արդեն տեղավորվել էին Սեմալ գյուղում։ Համզոյի և Շեկոյի աշիրեթները շարժվում էին դեպի Նովասարի արևելյան լանջերը՝ Վերին Սասուն բարձրանալու համար։

Մուշում բանտարկվեցին հայկական համայնքի ու եկեղեցու զեկավարներն ու աքսորվեցին Էրզրում։

Այս տագնապալից տեղեկությունները ստանալով, Գևորգի խումբը հեռացավ վանքից, բարձրացավ դեպի Աստղնակաբերդ ու Միրին Կատար, ապա Շենիկի ճանապարհին հետախուզեց Մրկեմոզանում տեղադրված թուրքական վաշտերի դիրքերը և արդեն ուշ գիշեր էր, երբ վերադարձավ Շենիկ։

Գևորգի խումբը դադար չուներ, մեկ Մրկեմոզանի բարձունքներում էր, մերթ Ալիանքում ու Տալվորիկում։ Գևորգը, օգտագործելով տեղանքի իր գիտելիքները, պարզում էր թշնամու

զորքերի քանակը, տեղադրությունը և գործողությունների ծրագիրը։ Գնալով դեպի հարավ-արևմուտք, նա տեսավ, որ քրդական ցեղապետներն իրենց ուժերն արդեն տեղավորել են Խուլբի ու Խիանքի հարավային շրջաններում։

Մարտերն առանձնապես կատաղի էին Տալվորիկի Սպիտակ լեռան ստորոտում։ Այստեղ հարյուրավոր քրդեր իրենց մահը գտան, բայց մեծ էր նաև հայերի կորուստը։ Տևական մարտերն աստիճանաբար մաշեցին Տալվորիկի ոչ միայն ռազմամթերքը, այլ նաև կենդանի ուժը։

Դրությունը ծանր էր։ Թշնամու ուժերը ընդհուպ մոտեցել էին Տալվորիկի գյուղերին, ազգաբնակչության մեծ մասը, այրելով իրենց տները, հեռանում էր դեպի լեռնային քարանձավներն ու Սպիտակ խազակի կիրճը։ Թշնամին մեծ զոհեր տալով՝ ձգտում էր հասնել կիրճին ու կրակի տակ առնել անզեն ժողովրդին։ Թվում էր, թե ողբերգությունն անխուսափելի է։ Բայց այդ ժամանակ Սպիտակ խազակի կիրճին մոտեցած քրդերն ընկան զանգվածային կրակի տակ ու շփոթված ետ քաշվեցին։ Գևորգի ջոկատն էր, որ դիրքեր գրավելով Տալվորիկի վերևի ժայռերում, իր հսկողության տակ էր առել գյուղի արևմտյան թաղամասերի մուտքերը, մասնավորապես Սպիտակ խազակի կիրճը։ Թշնամուն այդպես էլ չհաջողվեց հասնել կիրճով հեռացող ազգաբնակչությանը։

Կռիվը օրհասական էր։ Երկրորդ օրը նոր ուժերով համալրված թշնամին գրոհում է, և տալվորիկցիները պատրաստվում էին նահանջել դեպի Ֆրոֆրոքար։ Խուճապը ճակատագրական հետևանքներ կունենար Տալվորիկի համար։ Գևորգն ու Փրխվայի Տեր-Գաբրիել քահանան, քաջալերելով գյուղացիներին, հերոսաբար շարունակեցին դիմադրությունը և հաղթեցին։

Գևորգը քսաներկու տարեկան հասակում ժողովրդական հերոսի համարում ձեռք բերեց։

Երբ քրդերի պարտության լուրը Կ. Պոլիս հասավ, սուլթանը կատաղությամբ ասաց. «Պետք է բնաջնջել Սասունը»։ Կազմվեց սուլթանական ֆարման*, որը Զեքի փաշային հանձնելու համար Բիթլիս ժամանեցին Սեյիդ բեյը և շեյխ Սուլեյմանը։

Զեքի փաշան իր համար մեծ պատիվ համարեց սուլթանի նման հանձնարարությունը։ Նա անմիջապես հրավիրեց քուրդ

* Հրաման

ընկրկեցին։ Այդ ժամանակ կիրճ ներխուժեց հազար հոգուց բաղկացած Թուրքական մի զորամաս։ Սկսվեց արյունահեղ ճակատամարտ, կատաղի մարտեր բռնկվեցին նաև գյուղի բարձունքներում։ Հայերը, հավաքելով իրենց ուժերը, բոլոր ուղղություններով հակահարձակման անցան։ Հակառակորդը մինչ այդ կարծում էր, թե հայերի ուժերը սպառված էին և, տեսնելով այդ ընդհանուր հակահարձակումը, շփոթվեց։ Վախենալով շրջապատումից ու փոքր կռիվների մեջ քաշվելուց, Թահսին փաշան իր զորամասերին նահանջի հրաման տվեց։

Սասունցիները տարան առաջին խոշոր հաղթանակը։ Այդ հաղթանակն անհնար էր առանց լեռնաշխարհի բոլոր գյուղերի նյութական, ռազմական ու բարոյական աջակցության։ Բայց հաղթանակն ամենից առաջ ապահովեցին տալվորիկցիները։ Տալվորիկցի ահել ու ջահել, հարս ու աղջիկ կանգնեցին իրենց օջախի պաշտպանության համար։

Տալվորիկի հաղթանակը բարձրացրեց սասունցիների մարտական ոգին, կոփեց հաղթանակի հասնելու նրանց կամքը։

Պատմում է Գևորգը. «... Հուլիսի 17-ին Տալվորիկի մեջ տեղի ունեցավ մի մեծ կռիվ։ Ինձ հետ էին Արմենակը, Ադամը, Պողոսը և Հովհաննեսը։ Կանոնավոր զենք չունեինք, մեկ հատ մարտին իմ ձեռքին կար, մյուսները չախմախլի էին։ Այնտեղ մենք կորցրինք հինգ ընկերներ և մի կին, իսկ քրդերից սպանվեցին 30 հոգի։ Տեղացի խեղճ հայերը բավական վնասվեցին, որովհետև քրդերը թալանեցին։ Մենք էլ անպաշտպան մնացինք, ոչ մի տեղից օգնություն չկար։ Մուրադն էլ ուշացավ։ Մինչև աշուն մնացինք այդ անորոշ վիճակում։ Արմենակը ևս թողեց մեզ և գնաց Խնուս...»։

1898 թվի հուլիսի 29-ին Խարբերդից գրել են. «Սասունի կողմերում մեծ եռով է տեղի ունեցել հայերի և թվով անհամեմատ շատ համիդիե զորքերի միջև։ Սպանված է 50—60 հայ և ավելի քան 200 քուրդ։ Նահանջող քրդերը հարձակվել են հայկական գյուղերի վրա և մոտ հարյուր անպաշտպան կին մորթելով՝ գետն են լցրել»։ («Հնչակ», 1898 թ., № 8)։

Բալուի գավառապետը հայերին սպառնացել է. «Ես այնտեղ (Տալվորիկում) էի, երբեք ևս ձեզ նման խեղճուկրակ մարդիկ էին, բայց չենայեցինք։ Ձեզ էլ երբեք օրն են գցելու։ Ականջներիդ օղ արեք՝ ձեր անունը պետք է չջջվի աշխարհի երեսից»։

Իսկ Ամասիայի մութեսարիֆը* հոխորտացել է. «Եթե լրտեսին սպանդին 24 ժամվա ընթացքում չհանձնեք, Մարզվանը երկրորդ Սասուն եմ դարձնելու...»։ («Հնչակ», 1895 թ., № 10)։

Տալվորիկից հետո Թուրքական իշխանությունները երկյուղելով, որ քրդերը ուժեղանալով կարող են վտանգավոր դառնալ իրենց համար, գժտություններ են հրահրում նրանց մեջ։

Պատմում է Հրայրը. «Սուլթանը համիդիեն ստեղծեց Հայ տարրը ոչնչացնելու համար։ Քրդերը, երբ համիդիե անունը ստացան, ավելի լկտիացան։ Գյուղացիներից պահանջում էին ամեն ինչ, և վա՜յ նրան, ով ընդդիմանում էր։ Իշխանությունները, ի պատասխան հայերի բողոքի, ասում էին. «Մեր թագավորը մեկ համիդիե հեծյալին ձեր ամբողջ ազգի հետ չի փոխի»[9]։

Համիդիեները, Թուրքերի ձեռքին գործիք դառնալով, սկսեցին պայքարել նաև միմյանց դեմ։ Ժամանակավորապես նրանց զենքերը հավաքեցին, բայց երբ հայդուկային շարժումը աշխուժացավ, զենքերը վերադարձրին և ավելի գրգռեցին հայերի դեմ։ Միայն Խնուսում երեք նոր գունդ ձևավորվեց, յուրաքանչյուրը երեք հարյուր հեծյալով։

Սուլթանը, զինելով քրդերին, «հոգում էր», որ նրանց մեջ տարաձայնություններ լինեն։ Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանըխի, Խնուսի և Վարդոյի շրջաններում եղած հասնանցի, ջիբրանցի, զոքցի, բլքցի աշիրեթները ընդգրկված էին համիդիե գնդերի մեջ և իրար դեմ կռվում էին՝ ղեկավար դիրք ունենալու համար։

Սասունցի, բագրանցի, խիանքցի, բելքցի և բոզգցի քրդերը համիդիեի կազմում չէին, բայց իրար դեմ կռվում էին այս կամ այն շահադիտական նպատակով։ Քրդերը «երբեմն հային են բարեկամ ձևանում, երբեմն՝ Թուրքին»։

1893-ի նոյեմբերին Սասունից գրում են, որ լեռնաշխարհը շարունակում է շրջապատման մեջ մնալ, թեև կառավարությունն ու քրդերը զգուշանում են և առաջվա նման ազատ ոտընձգություններ չեն կատարում։

Մուշից Հրայրը 1893 թվի հոկտեմբերի 1-ին տեղեկացրել է, որ չնայած Վալին Սասունից գնացել է, բայց Կենճի Մուսթաֆա փաշան շարունակում է շրջապատման մեջ պահել Սասունի կենտրոնը։ Գյուղերը դատարկ են, բոլորը ապավինել են ժայռերին։

«Ո՞վ գիտե,— գրում է նա,— գուցե մեր այս թղթակցությու-

* Գավառապետ

նը տեղ չհասած, մեր կողմերից հասնի արյան հոտն ու ձայնը»[10]։

Աթենք մեկնած սասունցիները պատմել են. «1893-ի ապրիլի վերջերից մինչև 1894-ի օգոստոսը ամբողջ Սասունը պաշարման մեջ էր։ Մենք այդ ընթացքում բանջարեղենով ու խոտի արմատներով սնվեցինք, իսկ ձմեռը սոսկալի վիճակում անցկացրինք։ Մեր հարաբերությունները դրսի գյուղերի հետ լրիվ կտրված էին... Այս տարվա ապրիլի վերջերին կառավարությունը, կասկածելով, թե Մշո դաշտի Վարդենիս գյուղի բնակիչները մեզ գաղտնի ուտելիք են մատակարարում, նրանց անմիջապես հանձնեց զորքերի ու քրդերի ավարառությանը։ Վարդենիսը ուներ 325 տուն, որից հազիվ 25-ը կանգուն մնացին։ Երբ Վարդենիսում կատարված բարբարոսությունների լուրը Տալվորիկ հասավ, նրա բնակիչները զայրացած հարձակվեցին Վարդենիսը շրջապատող կանոնավոր զորքերի վրա։ Մի մեծ գունդ բերվեց բազմաթիվ թնդանոթներով և սկսվեց ընդհանուր կոտորածը, բոլոր տները ռմբակոծվեցին և ավերակ դարձան»[11]։

ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

Վրա հասավ ձմեռը։

Սասունցիները համոզված էին, որ գարունը բացվելուն պես թուրքերը վերսկսելու են ռազմական գործողությունները։ Դրա համար էլ հանգամանորեն նախապատրաստվում էին։ Նորոգում էին զենքերը, վառոդ էին պատրաստում, կապարից գնդակներ ձուլում։ Տալվորիկը վերածվել էր մի յուրահատուկ զինագործարանի։ Տալվորիկցիներին հաջողվում էր տնայնագործական եղանակով երկաթ ստանալ, որից դաշույններ և այլ տեսակի սառը զենք էին ձուլում։

Սասունում կապար չկար, դրա համար էլ հայ առևտրականների օգնությամբ կապար կուտակեցին Տալվորիկի լեռների գաղտնի պահեստներում։

Վառոդ պատրաստելու համար Մշո Ցրոնք գյուղ ուղարկվեց մի ջոկատ։ Ցրոնքի հողը իր մեջ պարունակում է վառոդի հումք։ Գիշերվա ընթացքում տների հողե հատակին գոյացած սպիտակ բորբոսը հավաքում էին, ջրի խառնուրդով լցնում կավե կաթսայի մեջ ու եռացնում։ Այնուհետև այդ հեղուկը սառեցնում էին և նրա մակերեսից հավաքում վառոդի բյուրեղները, դրանց խառ-

նում ծծումբ և ուռենու շոր փայտից պատրաստված ածուխ։ Այդ խառնուրդը լցնում էին սանդի մեջ և ծեծում։ Ստացված զանգվածը կտրատում էին, մաղում, և վառոդը պատրաստ էր։

Սասունցիներին հաջողվեց որոշ քանակությամբ հրացան գնել Ֆարղինում, մոտ հարյուր հրացան էլ հավաքվեց Մշո գաշտի գյուղացիներից։

Այդ պայմաններում սասունցին ամուսնանում էր, հարսանիք էր անում, երեխա ունենում։ Սասունը իր առօրյա ուրախություններով ու տխրություններով և կռվելու, մեռնելու, բայց հաղթելու վճռականությամբ էր դիմավորում 1894 թվականը։

1893 թ. օգնություն ստանալու հույսով Անդրկովկաս մեկնեց Դժոխք Հրայրը, իսկ Սասուն բարձրացավ հնչակյան կուսակցության անդամ Մուրադը (Համբարձում Պոյաճյանը)։ Նորից Սասունի գլխին չարագույժ ամպեր էին կուտակվում։ Թուրքական 30 հազարանոց բանակը, բազմահազար քրդերի հետ, բոլոր կողմերից օղակում էին Սասունը։ Նրանք որոշել էին նախահարձակ լինել և թնդանոթների օգնությամբ իսկական ճակատամարտ տալ լեռներին ապավինած մի բուռ գյուղացիների դեմ։

Իպամական գոռ վաշտերը կատաղի,
Պաշարել են մեր լեռները սոսկալի,
Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորություն.
Մեր պապերից սովրել ենք
Մեռնիլ քաջամարտի պես,
Զոր մեզ թողին հիշատակ։
Թնդանոթի դեմ եղել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով,
Ի սեր Աստծո, դժվար է
Հպատակիլ Իպամին։

Թուրքական հրամանատարությունը այս անգամ իր գործողությունների նպատակը քողարկում էր Մուրադին բռնելու պատրվակի տակ։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱՃՅԱՆ (ՄՈՒՐԱԴ)

Ծնվել է Հաճն քաղաքում, 1867 թ.։ Նախնական կրթությունը ստացել է տեղի Միացյալ ընկերության վարժարանում։ 1885-ին գնում է Պոլիս և ընդունվում հնչակյան կուսակցության շարքերը։ Շուտով դառնում է այդ կու-

սակցության Կ. Գոլսի կազմակերպության ղեկավարը, մասնակցում Գում Գափուի 1890 թ. հուլիսի 15-ի ցույցին։ Նրան ամենուրեք փնտրում էին, նրա մեծադիր նկարը փակցված էր կայսրության ոստիկանության պետ Նազրմի ընդունարանում։ Նկարներ էին բաժանված նաև ոստիկաններին ու լրտեսներին։ Մուրադի գլուխը գնահատված էր երկու հազար ռուբլի։ Մուրադը Գոլսից գաղտնի անցնում է Եվրոպա, որտեղ մնում է մեկուկես տարի։ Ապա գնում է Սասուն, համագործակցում Մ. Տամատյանի հետ։ 1898 թ. մեկնում է Կովկաս՝ զինյալ խմբեր ու զենք բերելու։ Վերադառնում է Սասուն, ղեկավար մասնակցություն ունենում 1894 թ. կռիվներին և նույն տարվա օգոստոսին, 35 տարեկան հասակում, ձերբակալվում է։

Նրան դատապարտում են ցմահ բանտարկության և աքսորում Աֆրիկա՝ Տրիպոլիս։

Մուրադը բանտում մնում է 11 տարի, 1905 թ. փախչում է և հաստատվում Փարիզում։ 1907-ին մեկնում է ԱՄՆ։ Սահմանադրության հաստատվելուց հետո, 1908 թ. օգոստոսին վերադառնում է Թուրքիա, ընտրվում օսմանյան պառլամենտի դեպուտատ (Ադանայից)։ Նա պառլամենտում խիստ քննադատության էր ենթարկում երիտթուրքերի քաղաքականությունը։ Նրա ջանքերով ձախողվեց ոչ մահմեդականներին բանակ զորակոչելու օրենքի նախագիծը։ 1915 թ. ապրիլին նրան էլ են ձերբակալում և օգոստոսի 24-ին կախաղան են բարձրացնում։

«Երբ Մուրադ էֆենդին (ինչպես նրան անվանում էին սասունցիները) երկրորդ անգամ Կովկասից վերադարձավ, ուր գնացել էր զենք ու ռազմամթերք հայթայթելու, Գևորգը իր ընկերների՝ Կարապետի, Քոլոս Օհանեսի, Ադամի և մյուսների հետ միացավ նրան»։ Այդ խումբը, որի մեջ մտնում էին նաև Կիրակոսը, Մանուկն ու Գալեն, ամբողջ ձմռան ընթացքում դադար չուներ, գյուղից գյուղ էր անցնում, ոգևորում մարդկանց, ստուգում կռվի նախապատրաստության վիճակը, օգնում երիտասարդներին ռազմական գործը սովորելու։

1894 թ. Գելիեգուզանը, Իշխանաձորը, Աղբին, Զիթնգը, Շենիկը, Սեմալը նորից հրաժարվեցին կառավարությանն ու քրդերին միաժամանակ հարկ վճարելուց։ Նրանց օրինակին հետևեցին Փսանքի, Խուլբի ու Խիանքի հայերը։

Թուրքական հրամանատարությունը նորից դիմեց խորամանկության։ Զեքի փաշան, պատանդներ տալու միջոցով, հանդիպում ունեցավ Սասունի ազդեցիկ մարդկանց հետ և պահանջեց զենքը վար դնել ու վճարել կառավարության հարկերը։ Սասունցիները պատասխանեցին, որ իրենք կառավարությանը և քրդերին միաժամանակ հարկ վճարել չեն կարող։ Եթե կառավարությունն իր զորքերը և քրդական աշիրեթությունները դուրս

հանի Սասունից և երաշխավորի սասունցիների անվտանգությունը, իրենք զենքը վար կդնեն և կառավարությանը հարկ կվճարեն։ Բանակցությունները ձախողվեցին։

Կ. Պոլիս է կանչվում Սուլեյմանիի (Տիգրանակերտի և Մուշի միջև է գտնվում) շեյխ Սայիդ էֆենդին, որին անվանում էին նոր Ջալալէդդին։ Նրա տրամադրության տակ կար 85 հազար զինված քուրդ։ Նա մոլի հայատյաց էր, մի հատկանիշ, որ ամենաշատն էր դուր գալիս սուլթանին։

Կառավարությունը այդ հրեշի հետ մեծ հույսեր էր կապում և նախապատրաստում էր նրան Սասունի դեմ հանելու։

Իշխանությունները ապարդյուն միջոցներ ձեռնարկեցին կալանավորելու Հրայրին։ Ահրոնք գյուղում ձերբակալում են նրա հորը՝ Մամբրե քահանային, և անլուր հալածանքների ենթարկելով, տեղափոխում Բաղեշի բանտ։

Գրում է Հրայրը.

«1894 թվի գարնանամուտին Փասուրի կայմակամը անտանելի խստությամբ սկսեց հարկահավաքությունը։ Նա Խուլբի և Խիանքի Ահրոնք, Գեղրվանք, Ընձքար, Էհուբ, Սաղտուն, Փառքայ, Հեղին, Ընկուզնակ, Սևիդ, Արտկոնք, Իշխանձոր և Բերմ գյուղերը ոստիկանախմբեր ուղարկեց, ասելով, որ կառավարությունը նրանց ապստամբ է ճանաչում։ Այդ գյուղերի գլխավորներին ձերբակալելով, ոստիկանները հասան Իշխանձոր գյուղը, որը գտնվում էր Տալվորիկից հարավ, երկու ժամ հեռավորության վրա։ Նա պահանջեց իրեն հանձնել Տալվորիկի իշխաններին ու Մուրադին։ Նա նաև պահանջում է հայտնել այն «թնդանոթների ու ութ հազար զինվորների տեղը», որոնց, իբր, Արաքսի տակով փորված թունելով, Ռուսաստանից բերել էին Մշո դաշտ։ Հայերը պատասխանեցին. «Ահա Տալվորիկը, գնացեք և անձամբ ձերբակալեք»։ Կայմակամը սկսեց խոշտանգել իր մոտ եղած հայերին։ Այլևս չկարողանալով տանել այդ դժոխային տանջանքները, մի խումբ երիտասարդներ հարձակվում են ոստիկանների վրա, 12 հոգու սպանում են, մյուսներին փախուստի մատնում, իսկ իրենք պատսպարվում Անդոկում»[12]։

Բաղեշում մի ժողով է տեղի ունենում, որին մասնակցում էին բագրանցի, ոշկոտանցի, խարկանցի, փենջաբցի, Ծովասարում բնակվող խարզանցի աշիրեթապետները, բեզիկցիների ղեկավարները, Խութի, Բռնաշենի իշխանները, մոտկցիների, խեչանցիների գլխավորները, բազկանցիների, ժաճրգանցինե-

րի, խկանցիների, խիյանցիների և Սիլիվանիկի բոլոր ցեղապետները և հյուսիսային բերդերի համիդիե հեծելազնդի Բեհեդին փաշան։ Ժողովը որոշեց, որ Սասունը իր անառիկ դիրքով, անմատչելի սարերով ու ռազմատենչ ժողովրդով, մշտական վտանգ է օսմանյան կառավարության համար, և քանի դեռ նրա ըմբոստ օրինակին չեն հետևել հարևան գավառների հայերը, անհրաժեշտ է ապստամբությունը խեղդել իր խանձարուրում։ Բոլոր քուրդ ցեղերին հրաման տրվեց նախապատրաստվել և չորս կողմից հարձակվել Սասունի վրա։

Աներևակայելի արագությամբ բոլոր շրջակա կուսակալություններից զորքեր մեկնեցին դեպի Մուշ. 7869 հետևակ, 1000-ի չափ հեծյալ և 150 թնդանոթ ուղարկվեց Սասուն։ Ռուսական և պարսկական սահմանագլխից ևս զորքեր տեղափոխեցին Սասուն։

Սասունը շրջապատած քրդերի թիվը 43 հազար էր։ Նրանք իրենց ցեղապետների ու շեյխերի գլխավորությամբ միացել էին թուրքական 27,4 հազար զինվոր ունեցող կանոնավոր բանակին։ Իսկ հայերի թիվը դժվար էր ճշտել, որովհետև կանայք ու երեխաներն էլ էին կռվում։ 304 հրացանակիր կար Տալվորիկից, 741՝ Գելիեգուզանից, 209՝ Շենիկից, 160՝ Սեմալից, 180՝ Իշխանձորից, 34՝ Հիթնքից, 120՝ Աղբրիկից, 208՝ Ալիանքից։

Սկզբում հարձակման անցան քրդերը։ Սակայն հակահարված ստանալով և կռվի դաշտում թողնելով 600 սպանված, ետ շրջվեցին։ Ահաբեկված քրդերը հրաժարվեցին առանց զինվորների մասնակցության նոր հարձակում սկսել։ Քրդական տարազով ծպտված զինվորների մի խումբ միացրին քրդերին, նրանց սրտապնդելու միտումով։

Կառավարական զորքը համոզվելով, որ միայն քրդական ջոկատներով արդյունքի չի հասնի, միացավ բարբարոս խուժանին և նոր հարձակում սկսեց։

Թուրքական բանակի մի մասը ցրվեց հայկական գյուղերը, հայտարարելով, թե եկել է պաշտպանելու «հավատարիմ հպատակներին»։ Հայերը մեկ անգամ ևս խաբվելով, թուրք զինվորներին ընդունեցին, կերակրեցին, օթևան տվեցին։ Բայց այդ «հյուրերը» գիշերը հարձակվեցին քնած մարդկանց, այդ թվում կանանց ու երեխաների վրա ու բոլորին մորթեցին։

Թուրքերը անընդհատ նոր համալրումներ էին ստանում, և արդեն 1894 թվի կեսերին Զեքի փաշան իր տրամադրության

տակ ուներ 30 հազարանոց զորամիավորում և լեռնային հրետանի։ Օսման փաշայի հրամանատարությամբ Տիգրանակերտից եկավ հետևակային կորպուսը, Երզնկայից և Մուշից՝ հեծելազորային երկու գնդեր, Էրզրումից՝ երկու զումարտակներ, հրետանային երկու մարտկոց, 3000 համիդիեներ, Բաղդատից ու Հալեպից բերվեցին ռազմական միավորումներ, Բիթլիսից՝ ոստիկանական միավորում։

Մայիսի սկզբին Գևորգը լուր է ստանում, որ թուրքական մի զորագունդ մտել է Խիանքի շրջան ու կալանավորել գյուղերի տանուտերերին, իշխաններին և ակդեցիկ մարդկանց։

Խումբը շտապում է օգնության։ Գեբինի սարալանջին նրա դեմ դուրս եկավ ոստիկանական մի ջոկատ։ Գևորգի տղաների շեշտակի հարվածից մի քանի թուրքեր սպանվեցին, իսկ մյուսները ճողոպրեցին։ Իշխանձորում գտնվող թուրք զինվորները փախուստի դիմեցին։ Ձերբակալված տանուտերերն ազատվեցին։ Հենց այդ ժամանակ Շենիկից եկած սուրհանդակը Գևորգին տեղեկացրեց, որ քրդական մի բազմամարդ խումբ Անդոկի փեշերին հարձակվել է հայերի վրա և մի քանի մարդ սպանելով՝ քշել նրանց ոչխարների հոտերը։ Իշխան Գրգոն իր խմբով կտրել է քրդերի ճանապարհը և հոտերը վերադարձրել Շատախի ապահով շրջանները։ Շենիկցիներին պատժելու համար 15—20 հազար զինվորների ու քրդերի խառնամբոխը հարձակման է անցել։ Շենիկը վեց օր շարունակ ետ է մղել թշնամու գրոհները։ Ի վերջո, թուրքերն ու քրդերը դադարեցրել են հարձակումը։ Հայերը հակահարձակման են անցել՝ թշնամուն պատճառելով մեծ կորուստներ։

Իշխանություններն արագացրին զորքերի կենտրոնացումը։ Կարինից տեղ հասան թնդանոթներ և 3000 զինվոր, Մուշից, Վանից, Բաղեշից՝ 100-ական զինվոր ու 15 թնդանոթ։

Թուրքական մի ամբողջ բանակ էր կռվում Գրգոյի խմբի դեմ։ Վերջինս, օգտվելով տեղանքից, արիաբար պաշտպանվում էր։ Սկսում են գործել լեռնագագաթներին տեղադրված թուրքական թնդանոթները։

Ծովասարում, Կուրտիկում և Մրկեմոզանում ամրացած թուրքական կանոնավոր բանակը, հույսը կտրելով քրդերից, մտել էր պատերազմական գործողությունների մեջ։ Տալվորիկին

լուրջ վտանգ էր սպառնում։ Գևորգը իր խմբի հետ բռնեց Տալվորիկի ճամփան։

Սասունը գոյամարտի էր ելել։

Հուլիսի 15-ին Տալվորիկի Հարթք թաղում Գասպար Խաչոյանի տանը նորից հավաքվել էին ինքնապաշտպանության ղեկավարները՝ քննարկելու թուրքական ահագնացող վտանգին դիմակայելու բարդ ու դժվար խնդիրները։ Այստեղ էին Տալվորիկի ինը թաղերի գլխավորների՝ Հարթքի Գասպար Խաչոյանը, Փուրխի Տեր-Գաբրիել արիահռչակ քահանան, Տալվորիկի համանուն թաղից Պետրոս Զոռոյանը, Հլողինքի Արթին Համզեյանը, Հաքմանքի Գասպար Քոլոյանը, Սպաղանքի Խաչո և Մակար եղբայրները, Եղկարտի Մակարը, Հոսնուտի Համզե Գամեյանը։

Տալվորիկցիները պատվիրակներ ուղարկեցին Գելի, Շենիկ ու Սեմալ և տեղեկացրին զոյամարտ տալու իրենց վճռականության մասին։ Գելիեգուզանում նույնպես ժողով գումարվեց, որտեղ ներկա էին Շենիկի ռես Գրգոն, Սաքո Գորգեյանը, Սեմալի Տեր Հովհաննես քահանան, Շառո Կաժոյանը, Ալիանքի Պողոսը և Ասոն, Գելիի ռես Պետոն, Տեր Ղազարյան Պետրոս նորընծան, Օհան Նիկոյանը և Տեր Քաջ քահանան։

Վերլուծելով իրադրությունը, Մուրադը կոչ արեց «մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել հայրենի լեռնաշխարհն ու ընտանեկան սուրբ օջախը»։

«Թշնամին ուզում է անպատվել մեր կանանց ու աղջիկներին,— ելույթ ունենալով ասաց Գրգոն,— քանդել մեր եկեղեցիները, ոտնահարել մեր արժանապատվությունը։ Ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ։ Բոլորս էլ ուխտել ենք մեռնել և գլուխ չծռել թշնամուն»։

Գելիեգուզանցի Տեր Պողոսը, պատճառաբանելով թշնամու գերակշռությունը, առաջարկեց զիջումների գնով խաղաղ լուծում գտնել։ Պատասխանելով նրան, նույն գյուղացի Ավոն ասաց. «Ով որ մեջքը ծռի թուրքի առաջ, դավաճան է»։

Գելիի իշխան Պետոն առաջարկեց ընդհանուր ճակատամարտ չտալ։ Հանկարծակի, սրընթաց հարձակումների միջոցով թշնամուն փախուստի մատնել և զենք ու զինամթերք ավարառել։

Պետոն ասաց. «Տեսեք իմ ալեհեր գլուխը։ Տարիքս 70-ի մեջ է, բայց նրանցից քանի հախից դեռ կգամ։ Այդ 70 տարվա ընթացքում 37 կռիվ եմ տեսել, չհաշված մանր-մունր «կատակները»։ Բայց ձեզ պիտի ասեմ, որ էս կռիվը չի նմանվում էն

կռիվներից ոչ մեկին։ Էս կռվի գույնը և ձևը ուրիշ է։ Ես էս կռվից վախենում եմ։ Սիրտս ինձ ասում է, ես էլ ձեզ եմ ասում՝ կհաղթի նա, ով առաջինը կհարվածի։ Պետք է կռվենք։ Խորհուրդս էն է, որ գաղտնի հարձակվենք թուրք զորքերի վրա... Հարձակվենք գիշերով, նրանց ստիպենք փախչել և ռազմամթերք ու պարեն վերցնելով՝ քաշվենք Գելիեգուզանի ու Տալվորիկի լեռները»։

Ժողովը որոշում է նախահարձակ լինել և նեղն ընկնելիս ապավինել Տալվորիկի ժայռերին։

«Ժողովը,— գրում է Հրայրը,— այն եզրակացության եկավ, որ լավ է մեռնել պատվով, քան լինել ստրուկն այն կառավարության, որը վաղ թե ուշ մեզ կոխկրտելու և ոչնչացնելու է»։

Ժողովը հանձնարարականներ մշակեց ինքնապաշտպանության բոլոր օղակների համար։ Որոշվեցին հիմնական, օժանդակ ու պահեստային պաշտպանական գծերը։ Թիկունքում ունենալով Անդոկի ու Գերինի պես դժվարանցանելի լեռնաշխարհը, իսկ հարավ-արևմուտքում՝ Խուլբի ու Խիանքի լավ կազմակերպված հայկական գյուղերը, որոշվեց պաշտպանության գլխավոր գիծ դարձնել Տալվորիկ-Գելիեգուզան առանցքը։

Որոշվում է հարձակման անցնել հաջորդ գիշեր։

Բայց ժողովը նոր էր վերջացել, երբ լուր բերեցին, որ բագրանցի քրդերը շարժվում են Սեմալի ու Շենիկի վրա։ Թշնամին կռիվն արդեն սկսել էր։ Ժողովի մասնակիցները հանձնարարություններ ստանալով՝ հեռանում են։

Մի քանի օր անց տեղեկացան, որ թուրքերը ուժեր են ուղարկում Սատանի կամուրջը վերականգնելու համար։ Վանից գրում են. «Բաղեշից 16 քարտաշ գնում են Մուշը Սասունից բաժանող գետի վրա կամուրջ կառուցելու։ Սասունցիները թույլ չեն տալիս»։

«Կառավարությունը,— գրում է Հրայրը,— գարնան բացվելուն պես հատուկ արհեստավորներ ուղարկեց Սասնո սիրտն ու ոգին՝ Տալվորիկի Սատանի կամուրջը վերանորոգելու։ Սասունցին հասկացավ դրա օրհասական և սարսափելի վտանգը»[13]։

Գևորգը հարձակվում է կամուրջ վերականգնող 15 թուրք զինվորների վրա։ Զինվորներից յոթը զոհվում են, իսկ մյուսները փախչում են Մուշ։

Գևորգը Սատանի կամուրջից նոր էր վերադարձել, երբ իմա-

ցավ, որ քրդերը հարձակվել են Փսանաց գավառի հայկական գյուղերի վրա և թալանել։ Նա մի ջոկատ ուղարկեց քրդերից թալանը ետ առնելու։ Ֆրոֆրոքարի մոտերքում հայերը բախվեցին քրդերի հետ։ 20 քուրդ սպանվեց։

Խուլբի և Խիանքի հայկական գյուղերին հաջողվեց մանր կռիվներ տալով մինչև հուլիսի վերջը դիմադրել, բայց հուլիսի վերջին, երբ Տիգրանակերտից նոր զորամասեր եկան, հայերը հարկադրված հեռացան դեպի Իշխանձոր, ապա՝ դեպի Գեբին։

«Օգոստոսի 1-ին,— պատմում է Հրայրը,— խառնիճաղանջ բազմությունը սկսեց շարժվել դեպի Սասուն... Չեքի փաշան ձգտում էր հիմնովին կործանել Սասունը։ Նա զորքին ու քրդերին կարգաց սուլթանի ֆարմանը, որը պահանջում էր անխնա կոտորել ապստամբ հայերին։ Զինվորները սկզբում վարանում էին, խուսափում խոշտանգումներին մասնակցել, բայց ընկրկելով սպաների սպառնալիքների առաջ, սկսեցին ջարդել ու ավերել ամենայն անողոքությամբ։ Արևելյան կողմից եկող խարզանցի, բելեքցի, բաղրանցի, զիլանցի, ռաշգոտանցի, շեխտուտունցի, խիանցի, ջելալցի և մինչև Հալեպի կողմերը բնակվող քուրդ աշիրեթները, հասնելով Տալվորիկ, շրջապատում են այն[14]։ Այդ ժամանակ Մուշում կուտակված 12 հազարանոց կանոնավոր զորքը Կենֆի Մուսթաֆա փաշայի և Բաղեշի կուսակալի առաջնորդությամբ, թնդանոթներով հարձակվեցին Շենիկի ու Սեմալի վրա։ Գեղաշեն, Շուշնամերկ, Կոփ, Գերմավ և Իրիցունք հարթավայրային գյուղերի հայ բնակիչները որոշեցին հասնել Սասնո Անդոկ լեռան գագաթը, որը Գելիեգուզանից մի քանի բոլոր հեռավորության վրա էր դեպի արևմուտք, շրջապատված Գեբին լեռան քարքարոտ ապառաժներին։ Այդ ժամանակ կանոնավոր զորքին միանում են Խնուսի և Բուլանըխի համիդիե հեծելազնդերը, ռուսական և պարսկական սահմանագլխի քուրդ ցեղերը և բատկանցի կոչվող քուրդ մեծ աշիրեթը։ Երբ սրանք հասան Մշո Սիմ սարի գագաթը, շենիկցիներն ու սեմալցիները դիմեցին դեպի Անդոկ։

Չայում Շատախի գյուղերից հեռացող ազգաբնակչության ետևից հասան թուրք ու քուրդ բազմահազար զորքերը։ Սկսվեց կռիվը։ Հրացանի որոտը օդն էր թնդացնում, ծուխն ամպի պես պատել էր Սասնա լեռները, ասես հրաբխի լավաներ էին ժայթքում։ Վիրավորների հեծեծանքները, կովողների գոռում-գոչյունը, կանանց ու աղջիկների լացը խառնվել էին իրար։

Ահա Անդոկի գագաթից հասնում են Գելիեգուզանի քաջ երիտասարդները... Քրդերի ու թուրքերի բազմությունը շփոթված փախուստի է դիմում, դաշտում թողնելով ավելի քան 850 դիակ։ Հայերից զոհվում են քսան երիտասարդ և ութ կին։

Հայերը արիացած բարձրանում են Անդոկի գագաթը և պատսպարվում ապառաժների ետևում։ Բայց հաց չունեին, նրանց ուտելիքը թանն ու թանհատը, բանջարն ու անալի միսն էին։ Կանայք, երեխաներին գրկած, կռվող երիտասարդներին քաջալերում էին. «Մարաբեն ձեզ օգնական»։

Մի զորամաս Թահսին փաշայի ղեկավարությամբ շարժվեց Գելիեգուզանի, իսկ մյուսը, Խալիլ փաշայի հրամանատարությամբ՝ Անդոկի վրա։

Լուր ստանալով Շատախում ստեղծված ծանր վիճակի և Շենիկին ու Սեմալին սպառնացող վտանգի մասին, Գևորգն իր խմբով շարժվեց դեպի Շենիկ և դիրքեր գրավեց Գրգոյի կողքին։ Նրա խումբը հանկարծակի մխրճվում էր թշնամու հարձակողական գիծը, խուճապ առաջացնում ու անհետանում։

Թուրքական բանակը, 150 թնդանոթներով զինված, նոր հարձակման անցավ։ Թշնամու ուժերը տասնապատիկ գերակշիռ էին, և իշխան Գրգոն հարկադրված էր հեռանալ Շենիկից ու Սեմալից։ Երկու գյուղն էլ թուրքերը թալանեցին ու այրեցին։

Սասունը բոլոր կողմերից պաշարվեց։ Սասունցիները լավ էին հասկանում, որ այս անգամ թուրքական բանակը եկել էր ոչ թե Սասունը ընկճելու, այլ՝ ոչնչացնելու։ Եվ վճռեցին կռվել մինչև վերջ։

Գրգոն իր ուժերը դասավորեց Մրկեմոզանի դիմաց՝ Անդոկի արևելյան բարձունքների վրա։ Պետոն և Տալվորիկի մի ջոկատ դիրքեր գրավեցին Անդոկի հարավային լանջերին։ Հայերի պաշտպանական գծի երկարությունը հասնում էր 30 կիլոմետրի։ Այդ տարածքի մեջ էր տեղավորված Սասունի ամբողջ ազգաբնակչությունը։

«Բայց թշնամու հետ մեր կռիվները,— գրում է Գևորգը,— երբեք չդադարեցին. կռիվ՝ Չայում, կռիվ՝ Անդոկում, նորից կռիվ՝ Կալի գյուղում։ Չորրորդ կռվից հետո էր, որ վառվեց Գելիեգուզան գյուղը։ Շենիկ, Սեմալ և մյուս գյուղերն արդեն վնասված էին։ Ժողովուրդը այլևս դիմադրելու անկարող էր, չկար որևէ օգնություն, չկար ռազմական ուժ, մենք էլ փոքրաթիվ էինք»։

Ալիանքի շրջանի գյուղերի դեմ թշնամին հանեց 30 թնդանոթ և 4 գունդ։ Չայում հայերը դիմադրեցին 25 օր և դիմադրությունը դադարեցրին միայն այն ժամանակ, երբ իսպառ վերջացել էր փամփուշտն ու սննդամթերքը։

Թուրքերը ցրվեցին հայկական գյուղերն ու ոչնչացրին 2000 մարդ։ Գելիի վրա հարձակմանը մասնակցում էին 30 հազար զորք ու բազմաթիվ քրդեր, 50 թնդանոթ։ Գյուղը 30 օր դիմադրեց։ Հայերը նույնիսկ հակահարձակման անցան ու թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին։ Թուրքերը լրացուցիչ զորքեր բերեցին։

Դեպի Տալվորիկ շարժվող թուրքական ուժերը Աղբրիկի շրջանում սպանեցին 1200 հայ։

Վերը նշված գյուղերից փրկվեց ընդամենը 1000 մարդ, որոնք Դաշտ իջան։ Տալվորիկում աներևակայելի սխրանքներ գործեցին կանայք։ Ըստ թուրքերի վկայության՝ մի գեղեցիկ կին, սպիտակ ձիու վրա, թուրը ձեռքին, արշավում է և կռվով ճեղքելով իրենց շարքերը մտնում եկեղեցի։

Անդոկի փեշերին կռվողների մեջ էր նաև Գևորգի ջոկատը։ Որոշվում է հակահարձակման անցնել։ Դա հուսահատ, բայց միակ քայլն էր։ Վաղ առավոտյան սասունցիները միաժամանակ հարձակման անցան թուրքական բանակի երեք թևերի վրա։ Նրանց գլխավոր ուժերը, հաղթահարելով խուճապի մատնված թուրք զինվորների դիմադրությունը, սլանում էին դեպի Շենիկ։ Ձեզի փաշան մազապուրծ փախավ։ Մինչև մութն ընկնելը Շենիկ գյուղի շրջապատում համառ կռիվներ գնացին։ Երկու կողմերն էլ մարդկային մեծ կորուստներ ունեցան։

1894 թ. հուլիսի 30-ին,— գրում է Գևորգը,— կռիվ սկսվեց Սեմալից վերև, Չայ կոչվող վայրում։ Առավոտյան արշալույսին այնտեղ հավաքվել էին Շենիկ և Սեմալ գյուղերի բնակիչները, Գելիեգուղանի ու Տալվորիկի օգնական խմբերը...»։

Շենիկի ու Սեմալի ջոկատները դիրք գրավեցին աջ թևում, գելիեցիք ու ալիանքցիք՝ ձախ թևում, իսկ տալվորիկցիներն ու Գևորգի ջոկատը զբաղեցրին կենտրոնը։ Նրանց թիկունքում կանգնած էին զենք, ուտելիք և դեղորայք մատակարարող կանայք և աղջիկներ։ Թշնամին բոլոր ուղղություններով առաջ էր շարժվում։ Կատաղի, օրհասական ճակատամարտ էր։ Թշնամու մի քանի հարձակումներ ետ շպրտվեցին։

Երեկոյան կողմ արևի ճառագայթները խանգարում էին հարձակվողներին առաջանալ։ Հայերն օգտվեցին դրանից։ Գրգոն մի կողմից, ալիանքցի Պողոսը մյուս կողմից, կարողացան շրջանցել թշնամուն։ Թուրքերը հարկադրված էին ետ քաշվել։ 7 ժամ տևող ճակատամարտում նրանք կորցրին ավելի քան 200 մարդ։

Սասունցիներին հաջողվեց մեծ քանակությամբ ավար, այդ թվում հրացան ու փամփուշտ ձեռք գցել։ Մեծ էր ճակատամարտի հոգեբանական ազդեցությունը մասնավորապես քրդերի վրա։

Օգոստոսի 3-ին պատերազմական փողերը նորից հնչեցին, ու միաժամանակ հարձակում սկսվեց Տալվորիկի, Իշխանաձորի, Աղբրի, Անդոկի վրա։ Հավատորիկի գագաթներից ոմբակոծվում էին Շատախի գյուղերը։ Թուրքական հարձակման ճակատը ձգվում էր Միրին Կատարից մինչև Կռնկի գյոլ ու Բռնաշեն, Խութից մինչև Շատախ։ Կեսգիշերին թուրքերը գրավում են Ալիանքն ու այրում 165 տուն։ Հրդեհվում է Գելիի Պետոյի տունը։ Պետոն, 27 հոգի սպանելով, երբ այլևս վառոդ չուներ, անցնում է սրամարտի և 13 անգամ խոցվելով՝ սպանվում։ Գելիեցիներին հաջողվում է ետ շպրտել թշնամուն։ Այդ կռվում թշնամին կորցրեց 760, իսկ հայերը՝ 100 մարդ։

Մինչև Գելիի հանձնելը, ինքնապաշտպանության ղեկավարները կարողացան բնակչության հիմնական մասը գյուղից հեռացնել և թշնամուն անծանոթ կածաններով դուրս հանել պաշարման օղակից։ Թուրքերը, ներխուժելով գյուղ, խոշտանգեցին ու սպանեցին այնտեղ մնացածներին, գյուղը թալանեցին ու հրդեհեցին։

Բաղեշի հիվանդանոցում պառկած թուրք զինվորներից մեկը պատմել է, որ փաշայի հրամանով փոս էին փորում և սպանվածներին ու վիրավորներին դրանց մեջ լցնելով՝ այրում։ «Այրում էին կենդանի մանուկներին և ձողերի վրա բարձրացնելով՝ բղավում. «Անխելք հայեր, թե տղամարդ եք, եկեք փրկեք ձեր մանուկներին»։ Յոթ տարեկան մի աղջիկ փախավ կրակից. տեսա ու խղճահարվեցի, փակեցի աչքերս ու հեռացա՝ գարշելով մեր արածից։ Բայց փաշան հրամայեց նորից կրակի մեջ գցել կիսամեռ աղջկան»[15]։

Մի այլ տեղ զինվորները ղազախի էին բարձրացրել մի հայ գեղեցկուհու։ Նրա մարմինը մաս-մաս կտրտում էին ու հայե-

րի կողմը շպրտելով՝ բղավում. «Հայեր, քաղցած եք, ահա ձեր սիրելի կանանց միսը, կերեք-կշտացեք»։

Թշնամին շարժվեց դեպի Անդոկ։

Անդոկի գագաթին կուտակվել էր 21.745 հայ՝ ծեր ու մանուկ, այր ու կին։

Իշխան Գրգոն իր փոքրաթիվ ուժերով ծանր մարտեր էր մղում։ Այս խիզախ մարդը գիտակցելով հանդերձ, որ պարտությունն անխուսափելի է, այնուամենայնիվ, չէր վհատվում և իր հարազատ որդիներին էլ հորդորում էր դիրքերը չլքել։ Նա միաժամանակ կազմակերպեց ազգաբնակչության՝ կանանց ու երեխաների տեղափոխությունը Անդոկի բարձրաբերձ ժայռերն ու համեմատաբար անվտանգ վայրերը։

Օգոստոսի 4-ին և 6-ին տեղի ունեցան մի քանի հարձակումներ՝ փոփոխական հաջողություններով։ Օգոստոսի 7-ը ուրբաթ էր, և թուրքերը դադարեցրին մարտական գործողությունները։

Օգոստոսի 8-ին թնդանոթների համազարկերից հետո թշնամին հարձակման անցավ Անդոկի ու Սպաղանքի ուղղությամբ։ Սասունցիները կռվում էին ինչով պատահեր և կարողացան թշնամուն ետ շպրտել։ Օգոստոսի 9-ից 13-ը դադար էր։ Բայց Անդոկում հայերի վիճակը ծանր էր։ Ոչ միայն փամփուշտ չկար, այլև ուտելիք։ Սասունցիներին սպառնում էր սովը։ 13 օր շարունակ սասունցիները կանոնավոր բանակի դեմ կռվում էին նաև իրենց վերջին զենքով՝ ժայռաբեկորներով։

Օգոստոսի 13—14-ը տեղի ունեցավ ամենածանր կռիվը, որը 27 ժամ տևեց։

Հարձակումը համընդհանուր էր. ամբողջ Սասունն էր հարձակման ենթարկվում։ Պաշտպանության կենտրոն մնում էին Անդոկն ու Գելիեգուզանը։

Տեսնելով, որ հայերին ընկճել հնարավոր չէ, զորամասերը գիմում են ընդհանուր հրամանատարին, թե «սրանց հաղթել անկարելի է, սրանց հետ կա մի գերբնական զորություն, որն անխնա ջարդում է Մուհամմեդի զավակներին»։ Թուրքական բանակում խուճապ է սկսվում։ Հրամանատարը հարկադրված գիմում է խորամանկության և հաշտության դրոշակ բարձրացնում։ Նա պատվիրակներ է ուղարկում հայերի հետ բանակցելու։

Օգոստոսի 14-ին թուրքական բանակից 10 ձիավոր սպիտակ դրոշով շարժվում են դեպի Անդոկ։ Նրանք սասունցիներին առաջարկում են զենքը ցած դնել։ Փաշան խոստանում էր ներում շնորհել։

Խորամանկ Զեքին սուլթանի անունից ներողություն խնդրեց և խոստացավ հասցված վնասը պետական գանձարանի հաշվին հատուցել և Սասունը ազատել հարկերից։ Մուրադը գտնում էր, որ հաշտության առաջարկը պետք է ընդունել, քանի որ առանց հացի ու ռազմամթերքի հնարավոր չէր երկար դիմադրել։

Գրգոն հակառակ կարծիքի էր. կռիվը պետք է շարունակել։ Ըստ նրա «օսմանցին չի կարող մոռանալ իր կորուստները, վաղ թե ուշ պիտի ձգտի մեզ պատժել այն րոպեին, երբ մենք անպատրաստ կլինենք։ Լավ է, որ այսօր խառնենք մեր արյունը մեր եղբայրների արյան հետ և գլուխ չծռենք անգութ օտարներին։ Շնորհակալ ենք այն «բարեսրտությունից», որ սուլթանը ցույց է տալիս մեզ։ Հեռացեք մեր երկրից, և խաղաղությունն ինքնըստինքյան կլինի»։

Օգոստոսի 15-ին փաշան 500 ձիավորով գալիս է Անդոկի ստորոտը և պահանջում, որ մի քանի հոգի գան բանակցության։ Ռազմամթերքի ու հացի սպառվելը ստիպում է սասունցիներին ընդունել բանակցելու առաջարկը։ 184 հրացանակիրներ իջնում են դաշտ։ Գրգոն Անդոկից նկատում է, որ բլուրների ետևից զորքերը շրջափակում են նրանց։ Նա հրացանի համազարկով գնացողներին զգուշացնում է այդ մասին, բայց արդեն ուշ էր։ Սկսվում է հուսահատ կռիվ՝ դեմ առ դեմ։ Դաշտը ծածկվում է դիակներով։ Գրգոն տեսնում է, թե ինչպես մի ծերունի, դամասկոսյան դաշույնով դիակներ փռելով, առաջ է ընթանում։ Նրան հետևում է որդին, որը բղավում է. «Հա՛յր, հա՛յր, քաջերը այսպես են թռչում դիակների վրայով»։

Բոլորը սպանվեցին։

Տեր Պետրոսը յոթ քուրդ սպանեց ու բացականչեց. «Այսուհետև հանգիստ կմեռնեմ»։ Թուրքերը նրան բռնեցին, գլխից մինչև գոտկատեղը քերթեցին, մարմինը կտոր-կտոր անելով կրակի մեջ գցեցին։

Անդոկը բոլոր կողմերից շրջափակվում է։ Գելիեցիք, իշխանձորցիք և սեմալցիների մի մասը դիմում են դեպի Ֆրոֆրոքար։ Գրգոն շենիկցիների, ալիանքցիների և սեմալցիների մյուս մասի հետ ամրանում է Անդոկում և կատաղությամբ կռվում են 6 օր՝ առանց վառոդի, քարերով ու թրերով։ Քաղցած, հոգնած,

ուժասպառ մարդիկ ընկնում են, նրանց փոխարինում են կանայք ու կովում «կատաղած բորենիների նման, որոնց ձագերին հափշտակել էր ուզում... վագրը»։

Բայց երբ սովը սկսում է իր ավերածությունները, Գրգոն Անդոկի պաշտպանությունը հանձնում է կանանց ու փոքրաթիվ տղամարդկանց, իսկ ինքը մի խմբով գնում է Խուլբից ու Խիանքից հաց ու փամփուշտ բերելու։

Կանայք շարունակում են Անդոկի հերոսական դիմադրությունը։ Հափսե անունով մի ծեր կին բղավում է. «Քույրեր, ամոթով չպղծենք սասունցու անունը»։ Նրանք 24 ժամ կովում են։ Թշնամին լրացուցիչ ուժեր է բերում։ Կանայք կովելով նահանջում են դեպի Գեբին։ Նրանք գրկած փոքր երեխաներին, մարտնչում էին քարերով ու փայտերով, հնձվում թշնամու կրակահերթերից։ Դիմադրելն այլևս անհնար էր։ «Այդ ժամանակ սկսվում է աննկարագրելի կոտորած, փախուստ, երեխաների ճիչն ու լացը երկինք է բարձրանում... Վերջապես նահանջող հայերը հասնում են Գեբինի քարոտ գագաթը և տեսնում, որ չորս կողմից պաշարված են»[16]:

Գրգոյի հարս Շաքեն բարձրանում է քարաժայռի վրա և մի տարեկան երեխան գրկին, գոչում է. «Քույրերս, մեզ երկու ելք մնաց, կամ մեռնել պատվով և մեր արյունը խառնել մեր ամուսինների, եղբայրների սուրբ արյանը, կամ անեծքի ու նզովքի արժանանալով, հանձնվել Մուհամմեդի պիղծ զավակներին։ Ես գերադասում եմ մահը»։ Հայացքը դեպի երկինք հառելով, երեխային գրկած, նետվում է անդունդը։ Մյուս կանայք հետևում են նրա օրինակին։

Իրենց մայրերի ետևից անդունդ էին նետվում նաև երեխաները։ Հրեշը նույնիսկ, եթե նրա անունը Թուրք չէ, կազդվեր այդ տեսարանից։

«Քաջարի սասունցին կամաց-կամաց սկսեց նահանջել դեպի Տալվորիկ՝ Գևորգի ու նրա ընկերների առաջնորդությամբ։ Փամփուշտները սպառված էին, ռազմական դիրքերն անցան թշնամու ձեռքը, Սասունի բոլոր կիրճերն ու ճանապարհները բռնված էին զորքերով ու քրդերով։ Այլևս դիմադրությունը շարունակելն անհնար էր»։[17]:

Գյուղը դատարկվում էր։ Տալվորիկցիները գնում էին թաքնվելու լեռներում ու կիրճերում, թաքստոցներում ու քարանձավներում։

Հայդուկներն իրենց ձեռքն էին պահում գյուղի երկու կարևոր բարձունքները և հսկողության տակ էին առել Սպիտակ Լեռան կիրճերը, որտեղից նահանջում էր ազգաբնակչությունը։

Գևորգը Գալեին ուղարկեց Սպաղանք և Մակարին հանձնարարեց ամեն կերպ հսկողության տակ առնել Սպաղանքի ու Եղկարտի կիրճերը։

Նա ելնում էր իրական վիճակից։ Պատերազմը տանուլ էր տրված և պետք էր ամեն ինչ անել ժողովրդին փրկելու, որքան հնարավոր է քիչ կորուստներ տալու համար։

Օգոստոսի 27-ին թշնամին լցվեց Տալվորիկ, բայց հանդիպելով պաշտպանների հակահարվածին, ետ շրջվեց։ Դա Տալվորիկի վերջին կռիվն էր։ Իրեկոյան Անդոկի գագաթներին թշնամու ուժեր երևացին, Անդոկը գրավված էր։ Իսկ առանց Անդոկի Տալվորիկը պահելն անհնար էր։ Գյուղի պաշտպանները խումբ-խումբ նահանջեցին Տալվորիկից և մթության մեջ քայլեցին տարբեր ուղղություններով։

1894 ԹՎ. ԱՐՑՈՒՆՈՑ ՏԱՐԻ

Սասունը պարտվեց, սկսվեց եղեռնը։

Շենիկցիների մի փոքրիկ ջոկատ Անդոկում մաքառող անզեն ազգաբնակչությանը, կանանց ու երեխաների մի մասին տարավ դեպի հարավ՝ ընկուզենու անտառ։ Թուրքական բանակը ու քրդերը շրջապատեցին անտառը և ոմբակոծեցին։ Անտառում հրդեհ բռնկվեց, այնտեղ գտնվողների մեծ մասը զոհվեց։

Սկսեցին հալածել փախչող կանանց ու երեխաներին։

Ոմանք, իրենց ընտանիքներով, զորքերի գթասրտությանն են դիմում։ Նրանք ավելի դաժան ճակատագրի արժանացան։ Բոլորին լցրեցին նախապես փորված հորերի մեջ և ողջ-ողջ թաղեցին։ Թուրքը հրճվում էր։ Նրա վայրենի երևակայությունը մարդկանց տանջելու ինչ եղանակներ ասես, որ չէր հորինում։ Հղի կանանց արգանդը պատռելով, պտուղները սրի ծայրին էին առնում և, շուրջպար բռնած, պարում։ Կանանց կրծքերը կտրատում էին, որպեսզի պտուկներից հետագայում իրենց համար մեղեսիկներ պատրաստեն և տարիներ հետո իրենց «հերոսական անցյալի» համար իրեղեն ապացույցներ ունենան։

Ցաթաղանից մազապուրծ սասունցիների փշրանքները ցիրուցան եղան լեռներում և անտառներում։ Նրանց մի մասը սովից մեռավ, շատերը համաճարակի զոհ դարձան։ Եղան դեպքեր, երբ մայրերը, խելագարության տենդի մեջ, իրենց զավակներին խեղդեցին՝ նրանց տանջանքները չտեսնելու համար։ Ամենուրեք անթաղ դիակներ էին, և անգղները շարունակում էին իրենց «թուրք արյունակիցների» կիսատ թողած խրախճանքը։

Սասունը կոտորված էր։ Սուլթան Համիդի «հանճարեղ մտահղացումը» իրականացված էր. մարել էր «ըմբոստության օջախը», որից այնքան վախենում էր բռնակալը։

«... Տալվորիկում, այս րոպեին,— գրում է ժամանակակիցը,— ոչ մի մարդ, տուն չկա։ Մնացած գյուղերում հազիվ 5—6 տուն է մնացել։ Բոլոր գյուղերն այրվել են... Տալվորիկի փախըստականները դիմել են Տիգրանակերտի կողմերը...»[18]։

Կռիվների ընթացքում միայն Տալվորիկի գյուղերից թալանվեց կամ ոչնչացվեց 3100 խոշոր և 245 հազար մանր եղջերավոր անասուն, շուրջ 260 ջորի, 780 պղնձե ամանեղեն, 14 հազար մեղվատուն, 216 վրան, 8000 ոսկի արժողությամբ իրեր, դույք և հագուստ։

Սասունում ավերվեց 48 գյուղ, որոնցում կար 1300 տուն և 15 եկեղեցի։

Սասունի ճգնաժամի օրերին ծանրացավ նաև Դաշտի հայության վիճակը։ Քրդերի ավազակությունները զանգվածային ու հրեշավոր դարձան, իսկ իշխանությունները խժդժություններ էին կատարում Սասունին հարակից գյուղերում՝ Բերդակ, Առաղ, Հավատորիկ, Տերգեվանք, Ալվառինջ, Ղզլաղաջ, Գոմեր, Տատրագոմ, Քարձոր, Խորոնք, Գալախոլի, Պշել։

Գյուղերը պաշարված էին. նրանցում տեղավորված էին զորքեր։ Սով էր, իսկ զորքերը շարունակում էին բռնությունները։ Երբ Տատրագոմը դիմադրեց, հայերի մի մասին սպանեցին, իսկ մյուսներին գյուղից դուրս քշեցին ու նրանց տեղը քրդերի բնակեցրին։ Թուրքերը նպատակ ունեին այս գյուղերը դատարկել հայերից ու Սասունը շրջապատել թուրքական ու քրդական տարրերով։

«Մշո Դաշտի բոլոր գյուղերը,— գրում է ականատեսը,— առանց բացառության, կողոպտված են և մարդասպանության թատերաբեմ են դարձել»[19]։

Իսկ Մուշ քաղաքում հայերը փաստորեն տնային կալանքի մեջ էին, և քաղաքը հանգած փեթակի էր նման։

Չնայած իրենց ծանր վիճակին, Մշո դաշտի հայկական գյուղերը ինը ամիս ապաստանեցին ու կերակրեցին 2000 փախըստական սասունցու։

Մուշի նոր կառավարիչ Ֆիխամ փաշան զայրացած հավաքում է հայ երեսփոխաններին ու պահանջում վերսկսել քաղաքի գործարար կյանքը։ Հայերը հրաժարվում են խանութները բացել, պատճառաբանելով Մուշի թուրքերի զինված լինելը, Դաշտի գյուղերի վրա քրդերի հարձակումները, Մուշում մեծ թվով զինված քրդերի ու լազերի առկայությունը, որը լուրջ վտանգ էր իրենց համար։

Քաղաքի հայերի ու թուրքերի հարաբերությունները ծայրաստիճան լարված էին։

Հետևանքը եղավ բախումը հայերի և մահմեդականների միջև։ Հայերը հաղթեցին։ Նրանք գրավեցին կառավարչատունը ու փախուստի մատնեցին զորքերին։ Մութեսարիֆը օգնական ուժեր խնդրեց։ Նոր բախում տեղի ունեցավ, որի ընթացքում սպանվեց 270 և վիրավորվեց 400—500 հայ։ Մեծ թվով հայեր ձերբակալվեցին։ Զորքերը մտան գյուղերը։ Հինգ գյուղ կողոպտվեց ու հրդեհվեց։

Բաղեշից ու Կարինից Մուշի թուրքերին նախատում էին, որ դանդաղ են հայերին կոտորում։ Նրանց ծաղրելու համար նույնիսկ կանացի գլխաշորեր ուղարկեցին։ Մինչդեռ հայերի վիճակն այնքան ծանր էր, որ անգամ մութեսարիֆը միջնորդեց Կ. Պոլսի առաջ, որ հարկերի հավաքումը 1—2 տարի հետաձգվի։ Աղետալի չափեր ընդունեց արտագաղթը։

Գրում է Հրայրը. «Տարոնը աղետալի վիճակում է և բոլոր հայերի օգնությունն է հայցում։

Տաճիկ կառավարության ցանկություններն ու ձգտումները գլխիվ իրականացան։ Տնտեսական ու քաղաքական հալածանքների պատճառով Տարոնը լրիվ ավերակ է դարձել։ Այսօր բյուրավոր թշվառ ընտանիքներ փողոցից փողոց են շրջում Տիգրանակերտի, Հալեպի և այլ դաշտերում»։ Իսկ Սասունի ժողովուրդը նույնիսկ փախչելու հնարավորությունից է զրկված։

Հանուն տարոնցի և սասունցի հայի կարող ենք որոշակի ասել և հաստատել, որ «մենք մեզ նշանաբան ենք ընտրել «մահ-

կամ ազատություն», առանց մտածելու այլևս թշնամու գերակշռության մասին։ Օգնություն ենք խնդրում, «բայց վստահ եղեք նաև, որ եթե նույնիսկ օգնություն էլ չստանանք, չենք ընկճվելու և կշարունակենք պայքարը»[20]։

«Հնչակը» 1894 թ. փետրվարի 28-ին գրեց. «Վերջին երկու ամիսներին Մուշից 1000 հոգի ճամփա է եղել Կ. Պոլիս կամ այլուր՝ պանդխտելու։ Կառավարությունը նրանց մինչև Սինոպ հասնելը չխանգարեց, բայց այստեղ այդ քաղցած ու հիվանդ զանգվածին բռնությամբ ետ դարձրեց. ճանապարհին 50 հոգի մեռավ, մի մասն էլ տեղ չհասավ»։

«Որևէ ականատես,— գրում է Հրայրը,— չի կարող զսպել իր արտասուքը, երբ տեսնի պատառոտված զգեստի մեջ, փոքրիկ պարկը ուսին... մանավանդ փոքր երեխաներ, որ բռնած իրենց մայրերի քղանցքներից, բղավում են. «Մայրիկ, ոտներս ծակոտում են, սոված եմ, քայլել չեմ կարող»։

10 հազար մարդ գաղթեց Կովկաս։

Երկրից հեռանալու անձնագիր ստանալու համար պահանջվում էր 1,5 ռուբլի, սակայն շատ հաճախ այդ անձնագիր ունեցողները Պոլսից ետ էին ուղարկվում։ Պանդխտության համար ևս հարկ էր վճարվում։

Սասունցիների զգալի մասը գնաց Հալեպ։

***

Գրգոն իր մարտական ուժերի հիմնական մասն ուղարկեց կանանց ու երեխաներին փրկելու, իսկ ինքը մի փոքր խմբով առաջ նետվեց թշնամու շրջափակման գիծը ճեղքելու և հարավային Սասուն անցնելու համար։

Նրա խումբը, Հեղինից դուրս գալով, բարձրացավ Երկար Աբոտամարգ սարը և այնտեղ հանդիպեց մեծաթիվ քրդերի։ Սկսվեց մարտը։ Հայերը հերոսաբար կռվեցին, նրանց մեծ մասը զոհվեց, վիրավորվեց նաև Գրգոն։ Քրդերը նրան ճանաչում էին և գերի վերցնելով բերում են Զեքի փաշայի մոտ։ Գրգոն գտնվել էր ուշաթափ վիճակում։ Երբ ուշքի եկավ և իր դիմաց տեսավ Զեքի փաշային, կայծակնորեն կողմնորոշվելով, խլեց դիմացի ոստիկանի հրացանն ու հարձակվեց Զեքի փաշայի վրա։ Որոտացին հրացանները, և դյուցազնը գետնին տապալվեց։ Այսպես պատմել են քրդերը, բայց կա նաև վարկած, որ Գրգոն

ինքնասպան է եղել Սպիտակ աղբյուրի մոտ, թշնամուն կենդանի չհանձնվելու համար։

Տալվորիկից վերջինը հեռացան Գասպարը, Գևորգն ու Ադամը։ Նրանք շարժվեցին դեպի Զկնկուլի քարայրը։ Ճանապարհին նրանց միացավ Մուրադը։

Քարայրում էին նաև Գասպարի ընտանիքի անդամները։ Նրանք երեք օր ու գիշեր դիմադրեցին՝ զգալի կորուստներ պատճառելով թուրքերին։ Սակայն հետագա դիմադրությունն անիմաստ էր դառնում։ Գասպարը Մուրադին, Գևորգին ու Ադամին առաջարկեց հեռանալ քարայրից։

— Ճար չկա, ես իմ ընտանիքի անդամների հետ կշարունակեմ կրակել, իսկ դուք գիշերը գաղտնի հեռացեք, մեկ էլ տեսար, փրկվեցիք։ Դուք դեռ շատ եք պետք ժողովրդին։

Գևորգը, ինչպես վայել էր հայդուկին, հրաժարվեց։ Գասպարը դիմեց մեկ այլ ելքի. նա ընտանիքով դուրս եկավ քարանձավից ու հանձնվեց թուրքերին՝ տպավորություն ստեղծելով, որ քարանձավում այլևս մարդ չկա։ Սակայն թուրքերը չհավատացին և, Գասպարի ընտանիքն իրենց մոտ պատանդ պահելով, հայտարարեցին. եթե քարանձավում մնացածները չհանձնվեն, ընտանիքը անմիջապես կգնդակահարվի։ Մուրադը, Գևորգն ու Ադամը քարանձավից դուրս եկան և շարժվեցին դեպի թուրք հրամանատարը։

Մուրադի փոքրամարմին ու նիհար կազմվածքը տեսնելով՝ մի զափթիե ասաց. «Մուրադ, հա Մուրադ։ Սա՞ է Մուրադը, այս պստիկ մա՞ղը»։

Պատմում է Գևորգը. «Երբ զորքերի մեջ մտանք, մեզ վրա սարսափելի հարձակում գործեցին, կապոտեցին և ուղիղ բանակ առաջնորդեցին։ Հաղթական համազարկեր տվեցին, ուրախացան, յոթ անգամ էլ թնդանոթ պարպեցին... Հետո տարան եկեղեցի և սկսեցին գազանաբար ծեծել ու չարչարել։ Այդպես երկու գիշեր, երկու ցերեկ, ոչ հաց տվին, ոչ ջուր...

...Չորրորդ օրը մեզ Մուշ տարան։ Այստեղ էլ բավական չարչարեցին։ Երկու ամիս սպասեցնելուց հետո ինձ, Մուրադին, Գասպարին, Ադամին և Կարապետին տարան Բաղեշ։ Մեր ընկերներից մեկը Մշո բանտի մեջ մեռավ»։

***

Պոլսից գրում են. «Անհերքելի փաստերով հաստատվեց ու ապացուցվեց, որ Սասունում ու Մուշում լսված ու չտեսնված գազանություններն ու անգթությունները մինչև այժմ կատարվել են «ամենագութ և ամենաողորմած» հռչակված արյունարբու սուլթան Համիդի բարձրագույն իրադեով»[21]։

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ թուրքական բարձրագույն հրամկազմից եղան հատուկենտ մարդիկ, որ չխրախուսեցին սուլթանի հրեշավոր ծրագիրը, նույնիսկ փորձեցին նրան համոզել ետ կանգնելու իր մտադրությունից։ «... Օրինակ, մեծ հրամանատար Ղազի Օսման փաշան և առաջին քարտուղար Սուրեյա փաշան։ Վերջինս մինչև իսկ համարձակվեց սուլթանին առաջարկել, որ հայոց կոտորածի «հերոսները» չվարձատրվեն շքանշաններով։ Բայց սուլթանը ոչ միայն լսեց Սուրեյա փաշային, այլև հրամայեց թունավորել նրան»[22]։

Սուլթանը չէր սպասում, որ Սասունի իրադարձությունները մեծ հուզումներ կառաջացնեն մայրաքաղաքում և նման արձագանք կստանան եվրոպական մամուլում։ Նա շփոթվեց։ Ելտզում մեկը մյուսի ետևից խորհրդակցություններ էին տեղի ունենում, «հերքում՝ հերքումի ետևից, կաշառք թղթակիցներին, դեսպաններին»։

Բ. Դուրը «Լա Թյուրքի» նախկինում հրատարակվող թերթի խմբագրին վարձեց և ստեղծեց «Օրիենտ» ֆրանսերեն լեզվով թերթն ու նրա միջոցով տարածեց կառավարության տեսակետները։ «Օրիենտը» սուլթանի ու նրա քաղաքականության օգտին նյութեր էր տպում, իսկ թուրքական թերթերը դրանք արտատպում էին՝ որպես եվրոպական կարծիք։

Սուլթանը իր մտերիմներից մի քանիսին Եվրոպա ուղարկեց մամուլը կաշառելու, որ կոտորածների մասին չգրեն։ Դա նրան հաջողվեց։ Թերթերից շատերը, ոսկու փայլից շլացած, մասնակցեցին «լռության դավադրությանը»։

Բացառություն կազմեցին մի քանի թերթեր, այդ թվում՝ Ռոշֆորի խմբագրած «Էնտրանսիժան»-ը։ Սուլթանի ներկայացուցիչը Ռոշֆորին ևս կաշառք առաջարկեց և թվեց, թե եվրոպական որ թերթին ինքը որքան կաշառք է տվել։ Կաշառք ստացողների թվում էր նաև Վիլհելմ կայսրը՝ 6 միլիոն ֆրանկ։

Սուլթանը կառավարությանը հանձնարարեց. ոչինչ չխնայել կաշառելու նաև Պոլսի եվրոպական դեսպաններին։ Նա իր սեփական գանձարանից չորս հարյուր հազար ոսկի տվեց այդ նպատակի համար, 25 հազար ոսկով կաշառեց ԱՄՆ-ի դեսպան Թեուլիին։

Սուլթանը նույնիսկ «իր հարեմի գեղեցկուհիներին, իր կանանց էր ամուրդի հանել՝ Պոլսի եվրոպական դեսպաններին» և ազդեցիկ անձանց հրապուրելու համար։

Հայկական վերնախավին սիրաշահելու և կաշառելու փորձեր նույնպես եղան։

740 ոսկի հատկացվեց երկրաշարժից տուժած հայկական եկեղեցիները վերականգնելու համար, կաշառվեց հայ կաթոլիկների առաջնորդը, որը սկսեց ուղերձներ ու շրջաբերականներ տարածել՝ հօգուտ սուլթանի։ Թույլատրվեց հրավիրել հայ ազգային ժողով։ Սուլթանը համաձայնեց, որ հայերն իրենց հայեցողությամբ ընտրեն պատրիարքին, քաղաքական և կրոնական ժողովների անդամներին։

Իշխանությունները քայլեր էին անում սիրաշահելու սասունցիներին, խոստանալով մի քանի տարվա հարկերը բաշխել, վերադարձնել նրանցից թալանած ունեցվածքը, 50 հազար դուրուշ նպաստ բաժանել տուժածներին և այլն, պայմանով, որ նրանք շնորհակալական թուղթ տան կառավարությանը, որը բարեհաճեց Սասունում «խռովարարներին» պատժել։

Սասունցիները մերժեցին այս ամոթաբեր առաջարկը։

Զեքի փաշան՝ Սասունի դահիճը, վերապրած հայերին հորդորում էր իրենց տները վերադառնալ՝ խոստանալով օգնել նրանց վերականգնել ավերված տները։ Սակայն վերադարձած բնակչությունը ոչ մի օգնություն չստացավ և կերակրվում էր «քրդերի ձիերի կերակուրի մնացորդով, ցորենի ու կորեկի հասկերով»։ Ամիսներ անց Մուշ է հասնում սուլթանի կողմից քննիչ նշանակված Աբդուլա փաշան, որն իբր կոչված էր պարզելու Սասունի դեպքերի պատճառներն ու հայտնաբերելու մեղավորներին։ Սասունի իրադարձություններն աշխարհին ծուռ հայելու մեջ ներկայացնելու գործում մասնավորապես մեծ ջանքեր էր թափում Բաղեշի ավազակաբարո կուսակալ Թահսին փաշան։

Ո՞վ էր Թահսին փաշան։ Նա Պոլսում հայտնի էր իր կաշա-

ռակերությամբ ու զեղծարարություններով։ Նրա դեմ բողոքներն այնքան շատացան, որ այլևս անհնար էր Թահսին փաշային պաշտպանել։ Բայց Թահսինի հովանավորողները կարողացան նրա համար հաջողացնել Բիթլիսի կուսակալի պաշտոնը, որը կայսրությունում դիտվում էր որպես «ամենաեկամտաբեր» պաշտոններից մեկը։ Թահսինը Բիթլիսի գլխին կատարյալ պատուհաս էր դարձել։ Նա հայերին հարստահարելու միջոցների մեջ խտրություն չէր դնում։ Առանց առիթի մարդկանց ձերբակալում էր և կաշառք վերցնելով՝ ազատում։ Այդ միջոցով նա հայերից կորզեց 28,5 հազար ոսկի։

Թահսին փաշան հավաքում է սասունցի բանտարկյալներին և նրանց համոզում ստորագրել մի թուղթ, ըստ որի Սասունի բոլոր պատահարների մեղավորները հայ հեղափոխական գործիչներն են։

Բանտարկյալները պատասխանում են, որ իրենք նման բան առաջինը փաշայի շուրթերից են լսում և այդպես էլ կպնդեն ամեն տեղ։ Փաշան նրանցից մեկին կախել է տալիս առաստաղից և մնացյալներին սպառնում. «Եթե ասածիս նման վկայություն չտաք, բոլորիդ կախելու եմ»։ Վերջիններս պատասխանում են. «Մենք հանգիստ նստած էինք մեր տանը, դուք ձեր զորքերով հարձակվեցիք մեզ վրա, մեր կանանց, մեր երեխաներին, մեր եղբայրներին սրի քաշեցիք, մեր հարսներին ու օրիորդներին գերի տարաք, մեր տներն այրեցիք. մենք զոհվածներից լավը չենք, մեզ էլ սպանեք։ Մեր ինչի՞ն է պետք այսպիսի կյանքը»։

Շիկացած երկաթներով սկսում են նրանց խոշտանգել։ Երեք հոգի չդիմանալով տանջանքներին՝ մեռնում են։

Մուրադի վզից մի կողով սառույց են կախում և բոբիկ կանգնեցնում ձյան վրա, մինչև որ նա ուշագնաց գետնին է տապալվում։

Թահսին փաշայի կամայականություններն այլևս անտանելի են դառնում։ Հայ երևելիները թուրք վաճառականների մասնակցությամբ ժողով են գումարում։ Ոստիկանությունը հարձակվում և ժողովի բոլոր մասնակիցներին ձերբակալում է։

Բաղեշի հայերը կոտորածի շեմին էին։

Թահսին փաշայի դեմ համընդհանուր զայրույթը այնպիսի բնույթ ընդունեց, որ սուլթանը հարկադրված էր նրան պաշտո-

նից հեռացնել։ Սակայն նրան փոխարինողը շարունակեց նույն քաղաքականությունը։ Մի խումբ հայերի բանտարկեցին, որպեսզի եվրոպացի քննիչներին ցուցմունք չտան Բաղեշում և Սասունում կատարված կոտորածների և վայրագությունների մասին։

Երբ կոտորածները քողարկելու սուլթանի ճիգերը ձախողվեցին, նա օգտագործեց իր վերջին հաղթաթուղթը՝ կոտորածը ամբողջությամբ բարդել քրդերի վրա։

Իշխանությունները քրդերին նույնիսկ հարկադրեցին մի հանրագիր ստորագրել, ըստ որի, կոտորածներն ու ավարառությունները միայն իրենք են կատարել, և զորքերը դրանց մասնակցություն չեն ունեցել։

Գրում է ժամանակակիցներից մեկը. «Ճիշտ է, որ քրդերը ակտիվորեն մասնակցել են կոտորածներին, ճիշտ է, որ հանցակից են Բասենի ու Խնուսի հայերին կողոպտողները, ճիշտ է, որ չիկակները, մուկրցիք, մլանցիկ շարաֆների, մամայների առաջնորդությամբ ավերում էին Վասպուրականը։ Բայց ո՞վ էր նրանց խրախուսողը, ո՞վ էր նրանց զենք տվողը, եթե ոչ Աբդուլ Համիդը՝ իր կուսակալ փաշաների միջոցով։ Բացի այդ, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բացի քրդերից Սասունի վրա արշավել են բազմաքանակ կանոնավոր զորքեր՝ իրենց թնդանոթներով»[23]։

Խեղդվողը ձեռքը զցում է փրփուրներին։ Ինքնարդարացման ջղագրգիռ տենդի մեջ սուլթանը դիմում է վճռական միջոցների։

Հոկտեմբերին, կառավարության հրամանով, Ալա բեկը արշավում է այն քրդերի վրա, որոնք ավերել են Սասունը և այլ գավառներ, որպեսզի խլի հայերից տարած ավարը և վերադարձնի տերերին։ Ալա բեկը 200 ձիավորով նախ գնաց ջիբրանցի քրդերի վրա, բայց քրդերը դիմադրեցին, հրաժարվեցին որևէ բան վերադարձնել, և Ալա բեկը վախենալով կռվից, դատարկ ձեռքերով վերադարձավ։ Հետո ճնշում գործադրեց հասանցիների վրա։ Հասանցիք ոչ մի դիմադրություն ցույց չտվին, վրատահ իրենց ցեղապետ Ֆաթի փաշայի վրա, որը սուլթանի աչքում մեծ հեղինակություն էր։ Բայց սուլթանը ժամանակ չուներ իրեն հավատարիմ մարդկանց մասին հոգալու։ Ֆաթին իր մարդկանցով ձերբակալվեց ու բերվեց Խնուս, որտեղ էլ մահապատժի ենթարկվեց։

«Բռնված էր նաև Աղամի աղան։ Դա մի շատ հարուստ քուրդ

էր, ուներ ահագին ազդեցություն և ամեն տարի 10 հազարից ավելի ոչխար էր տանում Շամ և Հալեպ՝ վաճառելու։ Նա Կարինից հեռագրով բողոքում է Բ. Դուռ՝ հայտնելով, որ ինքը ավազակ չէ, այլ հայտնի վաճառական։ Նա ազատվեց, որովհետև կառավարությանը սպառնացել էր դեսպանների առաջ բաց անել բոլոր գաղտնիքները, ցույց տալ, որ քրդերը ամեն ինչ կատարել են կառավարության դրդմամբ»։

Մյուս ազդեցիկ քրդերին պատժել չհաջողվեց։ Հարվածը փոխադրեցին մանրերի վրա։ Հոկտեմբերից մինչև նոյեմբերի վերջը մեծ թվով քրդեր բռնվեցին ու կողոպտվեցին։ Նրանց ոչխարները, ձիերը, հարստությունը անցան ագահ պաշտոնյաների ձեռքը։ «Մի քանի տեղերում բռնաբարվեցին կանայք ու աղջիկներ։ Հրդեհվեցին մեծ թվով քրդերի տներ...

Այժմ քրդերը սաստիկ գրգռված են կառավարության դեմ»։

Քրդերի վրա մեղքը բարդելու կառավարության ջանքերը հիմնովին հերքեց խիզանցի աշիրեթապետ Խշման աղան, որի համար էլ բանտ նետվեց։ Այդ ցեղապետը հայտարարեց. «Կառավարությունը աշիրեթներին դրդեց կռվի, իսկ կոտորածը հիմնականում կատարել է զորքը»։

Քղիից երկու հայ երիտասարդներ մի քրդի կաշառում են ու նրանից վերցնում քուրդ ցեղապետներին կայմակամի ու շեյխ Մեհմեդի գրած նամակը, որն սկսվում է հետևյալ կոչով. «Ջընջեցեք բոլոր որդերին։ Սույն նամակը ձեզ հասնելուն պես, եթե Մահմեդի կատարյալ հավատացյալներ եք, հավաքեք ձեր բոլոր մարդկանց և սկսեք հայ գյուղերը թալանել, այրել ու սպանել։ Այդ գյավուրները աշխատում են տիրապետել այս երկրին և ձեր տերերը դառնալ։ Ժամանակն է գործելու, դրանց արմատները չորացրեք։ Ոչ մի հայ այդտեղ թող չմնա։ Մեր առատագութ սուլթանը, եթե լսի ձեր քաջագործության մասին, պատիվներով ու շքանշաններով կփառավորի ձեզ, ինչպես արդեն վարձատրեց Սասունի կոտորածին մասնակցած քուրդ բեյերին»։

Այս Մեհմեդը Քղիի մուդեզիմն* է եղել։ Այդ պաշտոնում նա պետական միջոցներից յուրացրեց 2 միլիոն լիրա ու փախավ Մեքքա, դարձավ հաջի և, որպես շեյխ, վերադարձավ Քղի։

Ջիբրանցի մի քուրդ աղա վկայել է. «Անցյալ տարի Սասնա կոտորածի համար կառավարությունից գիր եկավ մեզ և հանձնարարեցին, թե պետք է ձեր բոլոր հնձյալների բազմությամբ և զենքով գնաք Սասունի հայերի վրա և կոտորեք, որովհետև դա թագավորի հրամանն է։ Եթե չգնաք՝ համիդիեներից զրկվելու եք, ձեր տները թալանելու ենք, իսկ դուք մաշվելու եք բանտերում։ Բայց մենք կարևորություն չտվինք և չգնացինք։ Հիմա նոր հասկացանք, թե ինչու անցյալ տարի հոկտեմբերին Կարինի Ալա բեյը զորքերով մեր տներն ավերեց, եղած-չեղածները տարավ և մեզ բանտ ուղարկեց, և հիմա հասկացանք, թե ինչու էին մեզ հայերի դեմ դրդում, հիմա, երբ մենք էլ հայտնվեցինք հայերի վիճակում»[24]։

Կարելի է բերել բազմաթիվ այլ վկայություններ ու փաստեր, ցույց տալու համար, որ քրդերի միջոցով հայերին ճնշելն ու ոչնչացնելը օսմանյան կառավարության ներքին քաղաքականության առանցքային հարցերից էր և մշտապես գտնվում էր սուլթանի ու Բ. Դռան ուշադրության կենտրոնում։ 1894—96 թթ. այդ քաղաքականությունը դրսևորվեց իր ամբողջ խորությամբ։ Սուլթանին հաջողվեց քրդերի շրջանում անասնական ատելություն բորբոքել հայերի նկատմամբ և նրանց ձեռքով կազմակերպել մարդկության պատմության ամենահրեշավոր իրադարձություններից մեկը՝ հայ ժողովրդի բնաջնջումը։

Սակայն սխալ կլինի մտածել, թե բոլոր քրդերն ու թուրքերն էլ անասնական համակերպությամբ սուլթանի ձեռքին գործիք դարձան։ Բռնակալի տիրապետության լուծը իր ուսերին զգաց նաև թուրք ժողովուրդը։ Թուրք առաջադեմ մտավորականներից շատերը ճաշակեցին սուլթանի «եփած դառը կերակուրը»։ Եղան անհատներ, որոնք կառավարության հայաջինջ քաղաքականությունը վնասակար համարեցին իրենց իսկ՝ թուրքերի համար։

«Դարեր շարունակ,— գրում է մի թուրք,— հայը գոյության կռվում օգնության ձեռք է մեկնել Ալլահի որդիներին՝ մահմեդականներին։ Տերության գանձարանը լցրել են հայերը. արհեստը և առևտուրը ծաղկել են նրանց ձեռքերով, երկրի քաղաքական ղեկավարները եղել են նրանք։ Առանց հայի մենք կյանք չունեինք, **մենք իմքներս կարեցինք մեզ կերակրող ձեռքը**»[25]։

Ճիշտ է, Սասունի կոտորածներին աշիրեթությունները ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել, բայց բացարձակ կեղծիք է, երբ ժխտվում է պաշտոնատար անձանց, զորքի ու ոս-

* Հարկահավաք

տիկանության առաջատար դերն ու ղեկավար մասնակցությունը այդ գործում։

Օրինակ, Խնուսում կոտորածների կազմակերպիչն ու ոգեշնչողը սուլթանի ներկայացուցիչ Շաքիր փաշան էր։

Խնուսի Խոզլի գյուղի բնակիչները (60—70 տուն), զինված գերանդիներով ու դանակներով, երկու օր դիմադրում էին քրդերի հարձակումներին։ Բայց հաջորդ օրը, երբ քրդերի հարձակմանը միանում են թուրք զինվորները, խոզլեցիները թողնում են գյուղը և բարձրանում սարը, որը ծածկված էր ձյունով։ Թշնամին լցվում է գյուղ և սրախողխող անում փախչել չհասցրած գյուղացիներին։

Հոկտեմբերի 29-ին Խնուսի բերդ է գալիս ինքը՝ Շարիր փաշան։ Մի խումբ հայեր գնում են նրա մոտ, պատմում եղելությունը, բողոքում քրդերի գազանություններից։ Շաքիրը հրամայում է հայերին բանտ նետել։ Իսկ երբ նրա շուրջը հավաքվում են քուրդ բեկերն ու ցեղապետները՝ Շաքիրը նրանց հանդիմանում է, որ զբաղվելով կողոպուտով, չեն հասցրել բոլոր հայերին ոչնչացնել, ինչպես ինքն էր հրամայել։ Շաքիրի այցելությունից հետո հայերի վիճակը վատթարացավ։ Նրանք թուրքական պաշտոնյաներից, ասկյարներից, ցեղապետներից անընդհատ նույն բանն էին լսում. «Հայե՛ր, ձեր վերջը մոտ է»։

Միամիտներին մոլորեցնելու համար է նաև թուրքական պաշտոնական պատմագրության այն պնդումը, թե թուրքական իշխանություններն այդ տարիներին հետապնդում և պատժում էին միայն օտարերկրյա գործակալ հայդուկներին և հեղափոխականներին, և այն էլ՝ առավելապես Անդրկովկասից եկածներին։ Որպես ապացույց նրանք վկայակոչում էին Մուրադի ու Գևորգի նկատմամբ թուրքական դատարանի վճիռները։ Քանի որ Գևորգը «տեղացի էր», նրան դատապարտեցին 15 տարվա բանտարկության, իսկ Մուրադը դատապարտվեց 101 տարվա բանտարկության, որովհետև ուղարկված էր դրսից։ Կեղծիք է։ Դժոխք Հրայրը տեղացի էր, բայց նույնպես դատապարտվեց 101 տարվա բանտարկության։

1895 թվականին անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթի թղթակից է. Դելոնը շրջագայեց ջարդերի վայրերով և, հենվելով ստուգված փաստերի վրա, գրեց. «Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի կոտորածը պայծառափայլ Բ. Դոան կանխամտածված գործն է, որը նա նախապատրաստեց հոգատարությամբ և իրագործեց դաժանորեն»[26]։

Սասունի կոտորածների պատմությունը ենթապոխել ու ենթագրոխում են ոչ միայն Թուրքիայում, այլև Արևմուտքում։ Եթե 1895 թ. մեծ պետությունների ներկայացուցիչները, այդ թվում և անգլիական կառավարության ներկայացուցիչը, գնալով Սասունի իրադարձությունների թարմ հետքերով, հայտարարեցին, որ սուլթանական կառավարությունը ինքն է հայերին զենքի մղել և ապա նրանց կոտորել, ապա մեր օրերի Անգլիայում ուրիշ փող են փչում, անամոթաբար կեղծում պատմությունը։ Նույնը և ԱՄՆ-ում։ Ամերիկյան պատմաբաններ Ս. և Ե. Շոուները Սասունի կոտորածները համարում են օրինական իշխանությունների դեմ սասունցիների ըմբոստացման հետևանք։ «Երբ պետական զորքերը մոտեցան Սասունին,— պատմում են այդ ծախված պատմաբանները,— ապստամբները ցրվեցին լեռնային մեկուսի վայրերը՝ նախապես ամայացնելով մահմեդական գյուղերը», և ապա շարունակում են ստերի շարանը. «Համիդիե գնդերն ու թուրքական կանոնավոր զորքերը Սասունն ամայացրին միայն այն բանից հետո, երբ հայերն արդեն ոչնչացրել էին մերձակա մահմեդական գյուղերի բնակիչներին»[27]։

Ինչո՞ւ են ստում այս պատմաբանները։ Ստում են, որովհետև այդպես են պահանջում Արևմուտքի պետությունների քաղաքական շահերը։ Շոու ամուսինները կրկնում են ամերիկյան այն պատմաբանների տեսակետը, որ եթե Թուրքիայում թուրքացման քաղաքականությունը չիրականացվեր բռնի միջոցներով, ապա այսօր ԱՄՆ-ը չէր ունենա այնպիսի կարևոր դաշնակից, ինչպիսին Թուրքիան է։

Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Զինովևը 1901 թ. գրում էր, որ թուրքական կառավարությունը, ուժից վեր հարկեր նշանակելով, լռելյայն շարունակում է ջարդերը։ Բ. Դոան քաղաքականությունը նպատակ ունի «կամ ազատվել հայերից, կամ էլ նրանց դնել այնպիսի վիճակում, որ դառնան անմուն ստրուկներ։ Հենց այդ նպատակով էլ, ի դեպ, միջոցներ են ձեռնարկվում, որ հայերին ստիպեն հեռանալ Սասունի լեռներից, որտեղ նրանք հնարավորություն ունեն պաշտպանվելու ավազակային հարձակումներից...»[28]։

Այսինքն՝ խոսքը հայերին ոչնչացնելու նախապես մշակված ծրագրի իրականացման մասին է։ Այս պայմաններում պարոն

Շուներ կարծիքով ո՞րն էր ելքը, հայ ժողովուրդը ի՞նչ պետք է աներ։ Գլուխն անմոռուչ կախե՞ր յաթաղանի առաջ, որդեգրե՞ր սարկությունը, պատվից ու արժանապատվությունից զուրկ կյանքը, թե՞ պայքարի ելներ իր մարդկային տարրական իրավունքների պաշտպանության համար։ Սասունցիները, բնականաբար, ընտրեցին երկրորդ ուղին։

Երբ Սասունի կոտորածներն արդեն դաժան իրողություն էին, հայկական որոշ շրջաններ սկսեցին մեղավորներ փնտրել... հայերի շրջանում։ Պոլսի հետադիմական հայ մամուլը գրեց. «Սասունի հետ այժմ գործ չունենք, թող հանգիստ մնան. հիմա կա մի ավելի մեծ խնդիր՝ կաթողիկոսական խնդիրը»։

«Թուրքերի ակնհայտ բռնաբարությունները տեսնելով հանդերձ,— 1894 թ. № 13-ում գրեց «Հնչակը»,— զարմանալի է, որ մեր մեջ գտնվում են այնպիսի անձինք, որոնք ասում են, թե... «այս մի քանի տարում կատարված վնասակար ցույցերը միայն պատճառ դարձան թշնամու կողմից հարստահարությունների խորացմանը»։ Մինչդեռ այդ ցույցերն այլ «նպատակ չունեին, եթե ոչ թշնամու գործադրած սոսկալի կեղեքումները... ի դերև հանելու և հարստահարված ժողովրդի մի արյունոտ պատկերը հրապարակի վրա դնելու համար։

Թուրքիան արդեն որոշել է բնաջնջել հայերին, նա եռանդով գործի է անցել, ինչպես Վանում՝ Թաֆուրը և Շաքիրը, այնպես էլ այլ վայրերում ուրիշ բարբարոսներ անխնա կոտորում են, հափշտակում, թալանում ու կրակի են տալիս։ Ժողովրդին այժմ մնում է միավորված, համերաշխ դիմադրել իրեն սպառնացող մահաբեր վտանգին...»։

Վանում ամբողջ «ժողովուրդը հուսահատ դրության մեջ է։ Կուսակալ Բահրի փաշան քթի տակ ժպտալով ասում է. «Հայեր, ձեզ բոլորիդ մուրացկան եմ դարձնելու»։

Սասունի դեպքերից հետո մեծ պետությունները նորից փորձեցին խաղալ ուշացած հովանավորի իրենց դերը։

Սասունի դեպքերը «հետաքննելու համար» սուլթանը ստեղծեց հանձնաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները։

«Ահա արդեն ավելի քան մի ամիս,— գրեց «Հնչակը»,— եվրոպական հանձնախումբը գտնվում է Մուշում։ Ստացված տեղեկություններից իմանում ենք, որ նրա քննությունները կա-

տարվում են շատ դանդաղ և աննպատակահարմար ձևով։ Հանձնաժողովի անդամները չունեն հմուտ թարգմանիչներ և, բացի այդ, թուրք կառավարությունը բազմաթիվ արգելքներ ու խոչընդոտներ է հարուցում հանձնաժողովի առաջ»[29]։

Այդ խոչընդոտներից են. «կառավարությունը ձերբակալում է և երբեմն, մինչև իսկ, սպանում այն բոլոր հայերին, ովքեր հանդգնում են հանձնաժողովի մոտ գնալու փորձ կատարել։ Արգելքներ են նաև թուրք կառավարության թափած բոլոր ճիգերը՝ չնչելու կամ ծածկելու Սասունի խժդժություններից մնացած առավել ապացուցիչ հետքերը»։ Այս պայմաններում հանձնաժողովը, եթե նույնիսկ համաձայնություն դրսևորեր իրական վիճակը պարզելու, հազիվ թե կարողանար։

Գրում են Բուլանըխից. «Մեր կողմերում հաղորդակցություն չկա։ Գյուղից գյուղ գնալը արգելված է։ Կառավարության կողմից ամեն գյուղում 2—3 պահապան և երկուական զինվոր է դրված այդ հաղորդակցությունը ընդհատելու համար, որպեսզի չլինի թե Մուշ գալով բողոքագրեր հանձնենք օտար քննիչներին»։

Մի սասունցի գրում է, թե երբ եվրոպական քննիչները եկան, մենք մտածեցինք, թե դա դժոխքի վերջն է։ «Սակայն, ընդհակառակը, նրանց գալով օսմանյան ճնշումը հետզհետե խստացավ, մեծացավ, որը գերազանցեց այն սաստիկ կոտորածը, որ եղավ Սասունում և Տալվորիկում»։

Օսմանյան կառավարությունը սասունցիներից պահանջում էր. «Կամ պետք է գաք ասեք, որ քրդերն են արել, կամ ձեզ էլ ձեր նախնիներին ենք հասցնելու»։ Մշո ճանապարհի վրա սահմանված է ոստիկանական հսկողություն և «չեն թողնում, որ որևէ սասունցի Մուշ գնա և բողոքի, և եթե մեկը գա Մուշ քաղաք, ճանապարհին կամ քաղաքում պետք է ձերբակալվի, կամ թուրքերի ասածով խոսի, կամ այդպես ձերբակալված մնա բանտում... նրանք, որ չեն կարողացել ուրանալ ճշմարտությունը և քննիչներին ամեն բան ճշտորեն և բառ առ բառ խոստովանել են, այսօր բանտում դառնորեն շարչարվում են։

Աղբին գյուղից չորս մարդ գնացին բողոքելու. նրանք անմիջապես անհետացան... Մի քանի ուրիշ մարդկանց, ճանապարհին բռնելով, սրի են քաշել, այդպես վարվեցին նաև մի քանի կանանց հետ, որոնցից մեկի անունը Սարո էր, ալիանքցի Աբրեի կինը։ Շենիկ գյուղից 10 հոգի մնում են ձերբակալված՝ ճիշտ խոսելու համար»[30]։

«Միայն Սասնո մի քանի անձինք Հասան (Մուշ), իրենց բողքներն ասացին և գիշերը փախան. նրանց (թուրքերի) ձեռքը չընկան»,— ահա մի այլ վկայություն։

Սասունցիներին այդ հաջողվեց հետևյալ կերպ. «Օսմանյան ոստիկանները նրանց ձերբակալեցին և շատ չարչարեցին, ներանք պատասխանեցին՝ մեզ մի չարչարեք, ինչ ցանկանում եք, դնանք այդ էլ ասենք...»։ Բայց երբ նրանք հասան քննիչներին, սկսեցին համարձակորեն պատմել կոտորածի մասին։ Այդ մարդիկ են Դավիթ Մարգոյանը, Սիմոն Պողոսյանը, Սագո Սեմալյանը, Չենիկցի Գորգեյանը, Արթին Մարգեյանը, Կիրակոս Հեպոյանը, Սրգո Օսեյանը։ Օսմանցիներն այդ մասին իմացան և, ուրիշներին դաս տալու համար որոշեցին նրանց բռնել ու ոչնչացնել։ Այդ նպատակով նրանք տասն անգամ Սասուն մարդ ուղարկեցին, բայց ապարդյուն։

Ոստիկանները սասունցիներին շարչարում են, նեղում, ասում են, թե եկեք ասեք, որ ոչ թե զորքերն են սուլթանի հրամանով կոտորել, այլ աշիրեթները։ Խուլբի կողմից Դալիբ էֆենդին և Սալի աղան 40 ոստիկանով, մասամբ՝ ոսկով սրտեր ջահեցին, մասամբ՝ խոշտանգումներով կարողացան սուտ ցուցմունքներ ստանալ։

«Նրանք անցան Սասունի կողմերը, որտեղ դեռևս 200 անձինք մնում են իրենց ավերակներում։ Այս տարվա մարտի 1-ին եկան Իսկենդեր աղան, յուզբաշին և Հուսեին աղան 30 ոստիկանով, եղած սասունցիները փախան, որովհետև սկսել էին կանանց չարչարել։ Եկողները խնդրագրի տեքստ են կազմում ու պահանջում, որ սասունցիները ստորագրեն, կանայք ու պատանիները դիմադրում են։ Իսկենդերը զայրանում է և հրամայում է բռնի բերեն ու ստորագրել տան։ Ոստիկանները մի քանի կնոջ բռնում են, ծեծում ու հարկադրում «մատներն այն կազմած թղթին խփել», նաև դտնվում են մի քանի հիվանդներ, որոնք փախչել չէին կարող. սրանց տանում են և զորով «մատները խփում թղթին»։ Այդպես՝ բոլոր գյուղերում[31]։

Երկու վկայություն ևս.

«Միշտ լրտեսները շրջում էին տեսնելու, թե հայերն ինչ են անում, գնո՞ւմ են դեսպանների մոտ և, եթե վիրավորվածներ կան, նրանց գտնում ու անհետացնում են։ Մեծ դժվարությամբ հայերը 41 տեղից վիրավորված մի սասունցու բերին դեսպաններին ցույց տալու։ Եթե կանացի հագուստ չհագցնեին, անհնար էր, որ կարողանային դեսպաններին ցույց տալ»։

Կոտորածները հատկապես գազանային էին Տալվորիկի գյուղերում, բայց այդ գյուղերից ոչ ոք չգտնվեց ու չբերվեց հարցաքննության։ «Մշո կառավարությունը Սասուն, Խուլբ, Խիանք և Տիգրանակերտ ու Սասունին սահմանակից գավառներն ուղարկեց մշեցի Դալիբ էֆենդուն և Սալեհ աղային։ Սրանք բռնությամբ ճանաչված և լեռնցի (հայերի) և թե քուրդ աշիրեթություններում ազդեցիկ դիրք ունեցողների հետ միացած՝ սկսել են կողմերի բնիկ բոլոր քուրդ սպաների միջոցով սպառնալ, ծեծել, հայհոյել և ախոռների մեջ բանտարկել խեղճ հայերին և ստիպել, որ կնքեն հատկապես օսմանյան կառավարության կողմից պատրաստված Սասունի կոտորածը հերքող հանրագիրը։ Միաժամանակ մի քանի խաշնարած մարդկանց ոչխարների գոմերում բռնելով՝ այս կամ այն գյուղի գյուղապետի անվան տակ ոստիկաններով Մուշ են ուղարկել, նրանց հարկադրելով ասել այն, ինչ հեռու է ճշմարտությունից և շահեկան՝ օսմանյան կառավարության համար»։

Սասունցիներին «ստիպում են, թե պետք է դեսպանների ժողովին ներկայանաք և ասեք այն, ինչ կպատվիրենք և, եթե այս անգամ էլ մերժեք,— սպառնում է մութեսարիֆը,— գիտցած եղեք, որ կյանքներդ ձերը չէ և հավերժ կորած եք և միաժամանակ... նշան և պատիվներ կստանաք, եթե մեր խոսքերին ունկընդրեք»։

Ոստիկանությանը հաջողվեց խոշտանգելով ու կաշառելով մի քանի հայերից կեղծ ցուցմունքներ կորզել։

Բուլանըխի, Վարդոյի, Կոնյակի, Խութ-Բռնաշենի և Մշո դաշտի հայերը աղերսագիր կազմեցին քննիչ հանձնաժողովին հանձնելու համար, որոնք «վերաբերում էին ոստիկանների բռնություններին, քրդերի գործողություններին, ավարառություններին, քրիստոնյա կանանց և օրիորդների առևանգումներին և բռնի կրոնափոխություններին, սրբապղծություններին՝ կրոնի անարգումներին, պաշտոնական մարմինների գործած զեղծումներին ու կաշառակերություններին, կապալառուների անտանելի արարքներին...»։ Սակայն նրանք այդ հանրագիրը հանձնել չկարողացան, որովհետև ժանդարմները թույլ չտվին։

Կառավարությունը հապճեպ միջոցներ էր ձեռնարկում իրեղեն ապացույցները կոծկելու համար։ Հատուկ մի ոստիկանական խումբ ուղարկվում է Սասունի լեռը, նույն փոսերի մեջ ամփոփված հարյուրավոր սասունցիների ոսկորները աներևութացնելու հրահանգով»։

«Վերջերս,— գրում են Մուշից,— մի խումբ ոստիկաններ լցվել էին Սասուն, ընկել էին գյուղերը և տարապիսի բարբարոսություններով պահան-

չեզ էին իրենց հանձնել այն անձանց, ովքեր համաձայնել էին քննիչներին բողոք ներկայացնել»։ («Դրոշակ», 1895 թ., № 6)։

Սակայն բողոքները հազարումի հնարքներով, համենայնդեպս, հասնում էին քննիչներին։ Քննիչ հանձնաժողովի նախագահ Շեֆիգ փաշայի զայրույթը կատաղության վերածվեց, և քննության ժամանակ, վրդովված սասունցի կնոջ տված ճշմարիտ ցուցմունքներից, նա, ինքնատիրապետումը կորցնելով, «եվրոպացի քննիչների աչքի առաջ ծեծեց կնոջը»։

Ոստիկանական հարյուրապետ Իսկենդեր աղան շենիկցի ուսուցիչ Միքայելին և մի քանի այլ անձանց բռնությամբ տանում է Մուշ։ Նրան հետապնդելով Մուշ են մտնում 40—50 հայ կանայք, որոնց մուտքը քաղաք մեծ տպավորություն է գործում։ Չնայած ոստիկանների արգելքին, ծեծված ու ջարդված, ցնցոտիներով ու բոկոտն կանայք քննիչ հանձնաժողովի մոտ են հասնում և նրանց հանձնում մի հանրագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանությունը ամեն ջանք գործադրում է, որ ոչ մի սասունցի Մուշ չմտնի»։

Չնայած իշխանությունների կողմից հարուցված խոչընդոտներին, հանձնաժողովը հարցաքննեց 190 հայի, քրդի, ինչպես նաև թուրք պաշտոնատար անձանց և գտավ, որ «կառավարության կարգադրությամբ և կանխամտածված կանոնավոր զորքը կոտորած է կատարել, որ քրդերի մասնակցությունը նույնպես կառավարության հանձնարարությամբ է եղել»[32]:

Հանձնաժողովը գտավ, որ հայերը Սասունում զենքի են դիմել հարկադրված, ինքնապաշտպանության նպատակով, իսկ խլխանությունները իրականացրել են հրեշավոր եղեռն։

Ապրիլի 22-ին քննիչ հանձնաժողովը գնաց Սեմալ, Շենիկ, Գելիեգուզան. «Բոլոր տներն այրված էին, մի քանի նորաշեն խրճիկներում տեսան մի քանի փրկված հայերի, որոնք ցույց տվին այրված եկեղեցին, տները և շենքերը», ապա նրանց տարան փոսերը, որոնք լցված էին դիակներով։ Սասունցիները քանդեցին փոսերը. «Ահա մարդկային մարմինները սկսեցին... երևալ, գարշահոտություն տարածվեց։ Քննիչները ստիպված Մուշից հականեխիչ դեղորայք բերել տվին։

Մի կիսամերկ կին, ցույց տալով այրված ու քանդված եկեղեցին, ասաց. «Այստեղ 50 կին ու երիտասարդ աղջիկ պղծեցին ու մորթեցին։ Ես էլ այնտեղ էի...»[33]:

Բացեցին Պետոյի տան մոտ գտնվող մեծ փոսը, գտան Տեր-Հովհաննեսի մաշկազերծ մարմինը, աչքերը փորված և պարանը վզին, ճիշտ այնպես, ինչպես նկարագրել էին սասունցիները։ Ապա դիակների կույտեր, մանր ու մեծ, ծեր ու երեխա. այր ու կին խառը լցված։ Սարսափահար եվրոպացիք տեսան, և չկարողանալով դիմանալ, հրամայեցին փոսերն անմիջապես փակել։ Նրանք քննությունը բավարար համարեցին և այլևս չուզեցին գնալ Տալվորիկ, վերադարձան Մուշ։

«Սասունի մխացող ավերակների արհավիրքներից և քստմնելի տեսարաններից նույնիսկ այդ բարբարոսությունների հեղինակներն էին սարսափել ու վրդովվել և թողել հեռացել էին այդ կողմերից։ Մինչ սասունցիներից կենդանի մնացած թշվառներն էլ, հեռու իրենց կործանված հարկերից, թափառական ու հալածական, փախուստի մեջ, սովի մահաբույր կծկումների դեմ էին մաքառում։ Գեթ Սասունն էր հանգչում իր գերեզմանային ամայության մեջ, և ձյունե թանձր ծածկոցը վարագուրում էր այնտեղ մերկությամբ երևան եկած, մարդկային հրեշության և վայրենության ամոթալի երևույթները։ Թնդանոթների որոտներից և կովողների, վիրավորների ու օրհասական վիճակում գտնվողների գոռում-գոչումից հետո դադարած էին նաև կուշտ ատամների ուրախ կռինչը և բուերի եղերական վայնասունը։ Սարսռազդու լռություն էր տիրում այդ ահեղ ձորերում ու լեռներում...»։

Նույն հանգստությունն էր տիրում նաև Մուշում. «Կարծես կառավարությունն ու իր մեղսակիցները՝ քրդերը, մի վիթխարի որս կուլ տալուց հետո, հղփացած ու մարսողական թմրության մեջ մտած պոռ օձի պես մի վայրկյան ընդհատել են իրենց շատակերությունները, երևում է, հետաքննության վերջավորությանն են սպասում, հասկանալու համար, թե կարո՞ղ են մարսել բյուրավոր հայ նահատակների արյունը, որ խմել էին...»[34]:

«Քննիչներն ամսի 7-ին այստեղից մեկնեցին և անմիջապես հանգամանքները փոխվեցին։ Մի քանի օր է տեղի թուրքերն ուզում են իրենց կրած նվաստացման վրեժը հանել, մանավանդ լսել էին, որ քննիչների հավաքած նյութերը ամբողջությամբ վնաս էին թուրք կառավարությանն ու նրա արբանյակներին, չնայած այդ քննությունները շատ թերի էին, որովհետև քննիչները անձամբ չկարողացան գնալ մինչև Սասունի խորքե-

ը, որովհետև Սասունի ամենահեռավոր խորշերը ամենաքրստրմնելի վայրագություններին հանդիսավայր եղան»։

«Սաստիկ ճնշման ներքո կատարված քննությունը կարող էր որևէ ճշմարիտ արդյունքի չհանգել, եթե չլիներ սասունցիների անվեհեր քաջությունը, որն ի դերև հանեց կառավարության բոլոր նախազգուշական և արգելակող գործողությունները»։

«Քննիչների մեկնելուց հետո Թուրքերի մեծագույն մասի համոզմունքն այն էր, թե հայոց հարցը բոլորովին մեռավ»։

Մեծ տերությունների առաջարկած բարենորոգումների ծրագիրը ևս «նրանց չի արգելի վայրագությունները շարունակել, քանի որ նրանք ըմբռնում են այդ բարենորոգումների անարժեք, անգործադրելի, բոլոր տեսակի երաշխավորություններից զուրկ լինելը և քաջ գիտեն, որ Թուրք կառավարությունը իր վերջին ճիգը կթափի ծրագիրն էլ մերժելու»[35]։

Եվ իսկապես, Սասունը կրկին պաշարման մեջ էր, ոստիկանները փնտրում էին այն սասունցիներին, որոնք կարողացել էին հանդիպել քննիչների հետ։

Մերկ, սոված և անօթևան մնացած սասունցիները, մանավանդ այն սակավաթիվ կտրիճները, որոնք օձի պես հող ուտելով և սկյուռի պես արմատ կրծելով, դեռ կառչած էին իրենց ապառաժներին, կառավարության աչքի փուշն էին, և նա ջանք չէր խնայում լեռնաշխարհի այդ վերջին մոհիկաններին ևս ոչնչացնելու համար։ «Իսկ ինչպե՞ս։ Իհարկե, փորձված միջոցով. քուրդը կա ու կա»։

Խուլբի ոստիկանապետ Էոմերը բագրանցի և բատկանցի քրդերին համոզում էր գարնանը տեղափոխվել Մշո սար, բայց նրանք հրաժարվեցին։ Դարձյալ խոստումներ, դարձյալ քրդերի ագահությունը գրգռելու փորձեր, և, ի վերջո, ձեռնարկը հաջողվում է։

Եթե քրդերը մեկ անգամ ևս սասունցիներին բնաջնջելու գործիք դառնան, ավելի հեշտ կլինի աշխարհին համոզել, որ 1894 թ. կոտորածների մեղավորը նրանք են, իսկ զորքը ընդամենը խաղաղություն հաստատելու համար է միջամտել։

Սասունում «խաղաղություն» հաստատելու գործը հանձնարարված էր հայատյաց, ջարդերի կազմակերպիչ Հաջի Դալիբին։ Նրա տրամադրության տակ էին 20 հազար քրդեր, որոնք ցրվել էին Շատախի ու Գավառի լեռներում, ողողել Մշո սարը մինչև Հավատորիկ։ Դալիբը «առանձնապես վտանգավոր հայերի» ցուցակ ունեի, որոնց վնասազերծելու հրահանգը ջանում էր իրագործել հատուկ հավատարմությամբ։ Առանց Դալիբի անցագրի, Մուշ գնացած սասունցին կամ Մուշից Սասուն գնացողները անմիջապես ձերբակալվում էին, իսկ Սեմալի, Շենիկի ու Գելիեգուզանի գյուղացիներին ընդհանրապես արգելված էր որևէ տեղ մեկնել։ Սասունում պատերազմական վիճակ էր։ Սասունցիներին նպաստ բաժանելու պատրվակով հայ-թուրքական հանձնաժողով ստեղծվեց, որը գործնականում զբաղվում էր մարդահամարով, մի բան, որը զգաստացրեց սասունցիներին, «որովհետև օսմանյան տիրապետության ընթացքում երբեք չէր հաջողվել Սասունում մարդահամար անցկացնել»։

Մեծ տերությունները կազմեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու ծրագրի նախագիծ և ներկայացրին սուլթանին։ Մի բնորոշ փաստ։ Երբ Աբդուլ Համիդը Քեամիլ փաշային հարցրեց, թե մեծ տերությունների կողմից ներկայացված այդ ծրագիրը գործադրելի՞ է, թե ոչ, և ստացավ դրական պատասխան, դազազած նրա երեսին շպրտեց «դավաճան» բառը։

«Քաջ սասունցիների ապստամբությունն ու նահատակությունները,— գրեց «Հնչակը»,— այսօր Հայկական հարցի վրա ամբողջ Եվրոպայի և Ամերիկայի լարված ուշադրությունն են բևեռել։

Բոլոր երկրների և, մասնավորապես, Անգլիայի բազմաթիվ թերթերում արդեն երեք շաբաթից ի վեր ամեն օր լիառատ լուրեր և ընդարձակ հոդվածներ են զետեղվում Թուրքական զորքերի ու քրդերի գործած խժդժությունների մասին։ Գրեթե բոլոր անգլիական թերթերը արտահայտում են այն միտքը, որ ժամանակն է Հայկական հարցին վերջ տալու, գոհացնելով հայերի պահանջները։ Մի քանի թերթ խոսում են «հայկական ինքնավարության մասին»[36]։

Երբ Անգլիայի դեսպան Ֆիլիպ Քերրին Բ. Դոնից բացատրություն պահանջեց, Մեծ եպարքոսը պատասխանեց. «Հայերը Վանի անգլիական հյուպատոսի դրդմամբ են ապստամբել», իսկ երբ դեսպանը խնդրեց թույլատրել դեսպանության զինվորական կցորդին ուղարկել Մուշ՝ տեղում այդ ապստամբության փաստը ստուգելու, եպարքոսը շտապեց հայտարարել, թե «Բ. Դռան պաշտոնատանը այս կապակցությամբ թյուրիմացություն է տեղի ունեցել և, որ հյուպատոսը որևէ պատասխանատվություն չի կրում ճշված շարժումների համար»։ («Հնչակ», 1884 թ. № 13)։

Սասունի կոտորածները առաջ բերեցին աշխարհի առաջադեմ ուժերի ցասումն ու բուռն բողոքները։ Անատոլ Ֆրանսը

Համիդին անվանեց «մի բռնակալ, որը սարսափից խելագարվել է»։ Ժան Ժորեսը հայկական ողբերգության իսկական մեղավորը համարում էր մեծ տերությունների երկդիմի շահադիտական և տմարդի քաղաքականությունը, որը Եվրոպայի դեմոկրատական ուժերին նույնպես դարձրեց եսասիրական հաշիվների խաղալիք։

Սասունի իրադարձությունների առնչությամբ շատ քաղաքներում բողոքի միտինգներ եղան, որոնցում բանաձևեր ընդունվեցին հասցեագրված Բեռլինի կոնգրեսի մասնակից պետություններին՝ պահանջելով լուծել Հայկական հարցը։

Գլադստոնը Աբդուլ Համիդին անվանեց «մեծ մարդասպան»։

«Ժամանակն է,— ասաց նա,— որ մի ընդհանուր անեծքի և ցասումի ճիչ ուղղվի այդ դաժան չարագործության դեմ։ Մարդկությանը հասցրած այդ վիրավորանքը պետք է պայթի սուլթանի ականջին և նրան զգուշացնի, իհարկե, եթե նրա մեջ դեռևս մարդկության նշույլ է մնացել, զգալու և ընկալելու իր գործած ահավոր չարիքը։ Այս սարսափները անպատվություն են քաղաքակրթության համար... նրանք ապտակ են մարդկությանը»[37]:

Ֆրանսիացի հայտնի գրող Սեվերինը ընդվզում է. «... Ինձ զայրացնում է լռությունը, եսասիրությունից բխող այն եղերական թմրությունը, որ փակել է մեր աչքերը և խցանել ականջները։ Օն, ուշքի եկ, դու հայացքդ շուռ ես տալիս։ Ականջներիցդ բռնած ես քեզ կստիպեմ անտարբեր հայացքդ ուղղել կոտորածի ահավոր սարսափներին։ Քեզ, որ խուլ ես ձևանում, ողջ կյանքում կհալածեն մեռյալների հեծեծանքները ու կխոցեն դեպի երկինք լարված նզովքի նետերը»[38]:

«Եվրոպան,— գրում է իտալական «Պերոկե» թերթը,— որ աճապարում է ամեն տեղ, ուր խժռելու որևէ բան կա, այնքան էլ չի շտապում գթասրտություն դրսևորելու»։

«Դեյլի Նյուսը» սուլթանի խոստացած ռեֆորմների մասին հիասթափությամբ գրեց, որ դրանք «ավելի անարժեք են, քան այն թուղթը, որի վրա գրված են»։

«Ամեն օր, ամեն ժամ կրկնվող սպանությունները, կանանց ու կույս աղջիկների բռնաբարությունները, առևանգումները, այն անթիվ անհամար գազանությունները, որ օրը ցերեկով կատարում էին տաճիկ ու քուրդ բաշիբոզուկները 19-րդ դարի վերջին, «լուսավորյալ» Եվրոպայի քթի տակ, անվերջ ավերումնե-

ը, կողոպուտը, թալանը, հրդեհը, որոնց ենթակա է Տաճկահայաստանի բազմաչարչար, թշվառ, ուժասպառ ժողովուրդը, շատ սակավ է արժանացել եվրոպական մամուլի ուշադրությանը։ Նա նույնիսկ աշխատել է դրանք թաքցնել։ Բայց, երբ այդ սոսկալի բարբարոսությունները ահավոր չափերի են հասնում, այն ժամանակ միայն եվրոպական մամուլը «բարեհաճում է» հատուկենտ տեղեկություններ ողորմալ»[39]։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Սասունի դեպքերին զուգընթաց ուժեղացվեցին բռնությունները հայաբնակ մյուս շրջաններում։ Միայն Երզնկայի Արմտան գյուղից բանտերում էին 50 գյուղացի, որոնցից յոթը այնտեղ մեռան։

1894 թ. դեկտեմբերին երեք օրվա ընթացքում Ամասիայից բանտ նետվեց 120 հոգի։

Հոկտեմբերի 8-ին Կեպան գավառի Սնպոն գյուղի շեյխը հարձակվում է նույն գյուղի վանահոր վրա և գազանաբար խոշտանգելով խարույկի վրա այրում նրան։

Գրում են Կեսարիայից. «Այս կողմերում օրը մեկ-երկու հայ սպանելը սովորական երևույթ է»։

Խնուսից գրում են, որ կառավարությունը իրենցից խլել է ինքնապաշտպանության գործիքները, իր ռազմական պաշարներից առատորեն բաժանել է քրդերին, որոնք սկսել են ամեն տեսակի անգթություններ գործել։

Մահ, ցկյանս աքսոր կամ բանտարկություն է սպառնում այն հային, որի մոտ գտնում են նույնիսկ մի հասարակ դանակ։

Բուլանըխի Ծեղխ Աղուբ գյուղից միայն 1894 թ. քրդերը թալանեցին 120 եզ, 120 կով, 500 ոչխար, 80 ձի, 100 լիտր յուղ։ («Հնչակ», 1895 թ., № 8)։

Սովորական դարձավ աղջիկ փախցնելն ու մահմեդականացնելը։ Միրպար գյուղի եկեղեցին փակեցին և հայերին հարկադրեցին մահմեդական ծեսեր կատարել։

Բալուի Հուվավ գյուղի բնակիչները գանգատվում են. «Գիշերը հանգիստ քնել չենք կարող, որովհետև մի տեղ պատ է ծակվում, մի տեղ տուն է կողոպտվում, մեկի անասունն են

հափշտակում։ Գյուղում գտնվող ոստիկանները սպառնում են Տալվորիկի օրը գցել մեզ»։

Քրդերի դեմ բողոքելը գործնականում դիտվում էր որպես քաղաքական հանցագործություն՝ ուղղված սուլթանի դեմ։

Համիդիե մի գունդ հարձակվում է դաշտում աշխատող գովանտակցիների վրա, թալանում է և մի հոգու սպանում։ Գյուղացիները բողոքում են։ Իշխանությունները 65 ոսկի ճանապարհածախս են պահանջում գյուղ գալու ու քննություն կատարելու համար, իսկ երբ գյուղացիները հրաժարվում են, դաժան ծեծի են ենթարկվում։ Գյուղից 25 հոգի բանտարկվեց։ Նրանց ասացին. «Դուք չգիտե՞ք, որ համիդիե զորքերի դեմ բողոքողը կհայտնվի ծովի հատակում»։

Ռուսաստանի, Անգլիայի և ԱՄՆ-ի դեսպաններին հասցեագրված բողոքագրում կարդում ենք. «Կառավարության պաշտոնյաների, իսլամ հասարակության և չերքեզների կողմից Եոզգատի և շրջակա հայ գյուղերում պարբերաբար կատարվող հարստահարությունները, սպանությունները, անարգանքը, ավարառությունները և զրկանքները մանրամասնորեն անգլիական հյուպատոսին ենք ներկայացրել»։ Բերենք միայն մի քանի փաստեր։

1894 թ. հունվարի 21-ին 40—50 մահմեդականներ «բոլոր հայերին պիտի ոչնչացնենք» աղաղակելով՝ շարժվում են դեպի կառավարչատուն։ Կառավարիչը նրանց դիմումին պատասխանում է. «Ես չեմ խառնվի, ինչ ուզում եք արեք»։ Կեսօրին մինարեից փչում է կռվի փողը։ Զորքերը, միացած մահմեդական ազգաբնակչությանը, փակում են կամուրջներն ու մեծ փողոցները, հարձակվում տների ու խանութների վրա և դրանք հրդեհում։ Մեծ թվով մարդիկ են սպանվում[40]*։*

Հեղափոխական գտնելու պատրվակով ոստիկանությունը խուզարկում է Եվդոկիայի հայկական թաղերը, բայց ոչինչ և ոչ ոքի գտնել չի հաջողվում։ Այդ ժամանակ մունետիկները կոչ են անում թուրքերին. «Հարձակվեք հայոց թաղի վրա, կոտորեք անհավատներին, պղծեք նրանց կանանց։ Մահմեդից կվարձատրվեք»։ Հայկական թաղերը հարձակման ու կոտորածի են ենթարկվում։ Ընդհարման ժամանակ 15 հոգի զոհվեց և 180-ը՝ վիրավորվեց։ Շատ հայեր անելանելի վիճակում թրքանում են։

Թուրք-պարսկական սահմանի վրա հուլիսի սկզբին հինգ բուրդ է սպանվում։ Այդ սպանությունը բարդում են հայերի վրա։ Դերիկ է գալիս Վանի

վալին ու հրամայում. «Դերիկը պետք է քանդվի հենց վաղը, վաղը քարը քարի վրա չպետք է մնա։ Հողի հետ հավասարեցրեք, մահմեդականնե՛ր, այդ սուլթանի հրամանն է. հայ ապստամբների արյունով ներկված գլուխները վաղն այստեղ պիտի տեսնեմ»։

Պետական պաշտոնյաներն ու աղաները, գրում են Օրդուից, որոշում են ջարդել հայերին ու այս նպատակով համապատասխան հրաման են տալիս տաճիկ գյուղացիներին, որոնք հայ ընտանիքների վրա հարձակվելով՝ սկսում են ավերել նրանց այգիները, փչացնել հնձած դաշտերը։ Սրերը քաշած, քարերով ու փայտերով հարձակվում են հայերի վրա։ Հանկարծակի եկած հայերը «քաղցած ու մերկ, բոբիկ ու բաց գլխով», բարձրանում են սարերը։

Արծկե գավառի բոլոր հայաբնակ գյուղերը գրեթե ավերակ դարձան։ Հայդարանցի Հուսեին փաշան իր համիդիե զորքով վերջին տարիներին այնքան նեղեց հայերին, որ շատ գյուղերի ամբողջ հայ բնակչությունը գաղթեց։

Սուլթանը Հուսեին փաշային հեռագիր ուղարկեց, որով շնորհակալություն հայտնեց Սասունի կոտորածին ակտիվ մասնակցություն ունենալու համար և խոստացավ միջոց գտնել նրա ու համիդիեների աշխատավարձը կանխիկ վճարելու։

Ապրիլի 8-ին Կ. Պոլսի Բերայի գերեզմանատունը զատկի տոնի էին հավաքվել մեծ թվով հայեր, որոնք գերեզմանատնից դուրս բշեցին ոստիկաններին։ Լրացուցիչ զինվորական ուժեր բերվեցին։ Ընդհարում տեղի ունեցավ, բայց ռուսական դեսպանը, նոր Սասունի հնարավորության սպառնալիքով, վաղեցրեց Բ. Դռանը և հարկադրեց զորքերը հեռացնել։ Սուլթանը այնքան էր զայրացել այս դեպքից, որ հաջորդ օրը աշխատանքից հեռացրեց պալատի բոլոր հայ ծառայողներին, այդ թվում նաև սպասավորներին ու խոհարարներին։

Մայիսի 11-ին 20 հազար հայեր միտինգի հավաքվեցին ս. Փրկիչ հիվանդանոցի բակում։ Ոստիկանությունը միջամտեց, բայց դիմադրության հանդիպելով՝ այլևս գործողությունների չդիմեց։ Ցույցին ծպտված մասնակցում էր նաև ոստիկանապետ Նազըմ փաշան։ Հաջորդ օրը, լրտեսների մատնությամբ, 50 ցուցարար ձերբակալվեց։

1895 թ. մարտին սուլթանը հատուկ իրադե հրապարակեց, որով բոլոր հայաբնակ վայրերում, այդ թվում նաև մայրաքաղաքի հայկական թաղերում, հաստատվեց շուրջօրյա պահակություն, հայերին հսկողության տակ պահելու համար։

Տրապիզոնում «Թուրք ժողովրդին կառավարություն նախապես զենք էր բաժանել և մի քանի մզկիթներում էլ բավա-

կան քանակությամբ ռազմամթերք կուտակել»։ 1895 թ. մայիսին, ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Բաբերդում, Երզնկայում և մի շարք այլ հայկական քաղաքներում կոտորածի նախապատրաստությունն արդեն ավարտված էր։

Մաթևոս Իզմիրլյան պատրիարքը մի հուշագիր կազմեց Բեռլինի կոնգրեսից հետո հայերի վիճակի վատթարացման մասին, որը 1895 թ. հունվարի 30-ին հանձնեց սուլթանին։ Վերջինս պատրիարքին ընդունեց ընդգծված սիրալիրությամբ, նրան նստեցրեց իր կողքին, գովեց, ապա ասաց. «Ես հայ ազգին շատ եմ սիրում, մոտ ժամանակներս մեծ բարիքներ եմ անելու ձեր ժողովրդին, փոխանակ ուրիշ տեղ դիմելու, համարձակ առաջարկեք, ինչ որ ցանկանում եք, և պիտի կատարեմ»[41]։

Դա սուլթանի ծննդյան օրն էր։

Սուլթանը կեղծելն ու խաբելը ոչ թե ամոթ, այլ արժանիք, հաղթանակ էր համարում։ Պատրիարքին տված «խոստումները» սուլթանը իրագործեց, միայն հակառակ իմաստով. կոտորածների նախապատրաստման գործը նոր թափ ու ծավալ ստացավ։

Սեբաստիայի հայաշատ գյուղերն ու քաղաքներն ավերակ դարձան, սպասակոր հրոսակները բացահայտ հայտարարում էին, որ հայերին թալանելու բարձրագույն հրաման ունեն։

Շապին Գարահիսարի կառավարիչ Մուստաֆա բեյը հայերին ասաց. «Մինչև վերջին շունչս պետք է աշխատեմ ձեր ազգը ոչնչացնել»։

Սեբաստիայից 1895 թ. հոկտեմբերին գրում են. «Երբ լուր ստացվեց, որ սուլթանը ընդունել է բարենորոգումների ծրագիրը, այստեղ իրարանցում սկսվեց։ Կ. Պոլսից զենք էին բերում, համիդիեների նոր գնդեր էին ստեղծվում»[42]։

Հայերի անհանգստությանը կուսակալ խալիլ բեյը պատասխանեց, որ այդ ամենը արվում է, որպեսզի բարենորոգումների ծրագրի իրագործման ժամանակ առաջացած խլրտումները ճնշվեն։ Նույնիսկ հարուստ թուրքերը հաճույքով զինվորագրվեցին։ Հայ զինագործների մոտ եղած զենքերը բռնագրավվեցին և նրանց արհեստանոցները փակվեցին։ Հայկական թաղերում պահականոցներ կառուցեցին և դրանք զինվորներով լցրեցին «հայերին պաշտպանելու» համար։ Իրականում հայերը շրջապատվեցին. թուրքերին զենք բաժանվեց, որոնց զգալի մասը հայերից խլված զենքերն էին։

Քաղաք բերվեց հազար հեծյալ և 5—6 հազար հեռակ

չերքեզ։ Գյուղերում սկսվեցին զանգվածային սպանություններ ու ավարառություններ։ Զինվորներն այդ ամենին օգնում ու քաջալերում էին։

Հոկտեմբերի 30-ին հայերը փակեցին խանութները և տնից դուրս չեկան։ Սակայն Խալիլին հաջողվեց Անգլիայի ու Ֆրանսիայի հյուպատոսների միջոցով հայոց առաջնորդին համոզել, որ ոչ մի վտանգ չկա և խանութները պետք է բացել։

Այդ ընթացքում կանոնավոր բանակի մի գունդ շրջապատեց քաղաքը, և հայերին արգելվեց քաղաքից դուրս գալ։ Սեբաստիայում արդեն կուտակվել էր մի քանի հազար զինվոր և 30—40 հազար բաշիբոզուկ։

Թուրքերը կոտորածի համար առիթ էին փնտրում, իսկ հայերը ոչ մի կերպ առիթ չէին տալիս։ Կեսօրվա աղոթքի ժամանակ մոլլան կոչ արեց ջարդել գյավուրներին և խուժանը շարժվեց շուկայի վրա։ Ով զենք չուներ, զինանոցից զենք ստացավ։

Կառավարչատանը Մեհմեդ էֆենդին թուրք սրիկաներին զինում էր և հրամայում ոչնչացնել հայերին։ Օրինակ ցույց տալու համար նա անձամբ, բոլորի ներկայությամբ, մի հայի սպանում է և ասում. «Ահա ես ձեզ օրինակ եմ տալիս, սպանելով գյավուրին այս պալատում։ Վստահ եղեք, որ կայսերական իրադե կա հայ ցեղը ոչնչացնելու»։

Կ. Պոլսից 1895 թ. փետրվարի 28-ին գրում են. «Սրանից 15 օր առաջ հանգանակություն բազմաթիվ թերթիկներ երևացին՝ ի նպաստ թշվառության ճիրանները մատնված և սուլթանական կառավարության արից ու թնդանոթներից ազատված սասունցիների... Սուլթանը հրաման է տալիս Նազըմին՝ ձերբակալելու թե՛ նպաստ հավաքողներին և թե՛ նպաստ տվող անձնավորություններին։ 170 մարդ ձերբակալվեց։ Մի քանի օր անց բոլորին արձակեցին, որպեսզի աշխարհին ցույց տան «իբր որքան առատագութ է սուլթանը, իբր Սասնո հազարավոր հայերի արյունով գինովցած անձը ինքը չէ և, իբր, շնորհիվ վեհ սուլթանի, ամեն ինչ իր օրինական ուղիով է ընթանում, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառներում»։ («Հնչակ», 1895 թ. № 4)։

Կոտորածներն սկսվեցին այն օրերին, երբ Մեծ մարդասպանը ստորագրում էր հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելու ծրագիրը։ Մի ծրագիր, որի կենսագործումը խեղդվեց հայերի արյան հեղեղի մեջ։

Սեպտեմբերի 20-ին Տրապիզոնում անհայտ անձինք կրակեցին Բահրի փաշայի և զինվորական հրամանատար Ֆերիդ փա-

շայի վրա։ Սպանության մեղքը բարդեցին հայերի վրա։ Հաջորդ օրը հայերը խանութները չբացեցին և սկսեցին պատրաստվել պաշտպանության։ Երբ առաջնորդն անհանգստացած դիմեց կուսակալին, Կադրի փաշան պատասխանեց. «Ձեզ վնասելու համար իմ մարմնի վրայով պիտի անցնեն»։ Հայերին հանգստացրին նաև հյուպատոսները։

Այդ ընթացքում շուկայի Բիթ-բազար մասում մահմեդականները զենք էին գնում, իսկ հայերին խուզարկում էին. նրանց մոտ եղած զենքերը խլելու համար։ Քաղաք բերվեցին մեծ թվով գյուղացիներ։ Հույներին ոպառնացել էին հայերին թաքցնելու համար պատժել։

Կադրին կանչեց քաղաքի երևելի հայերին ու պահանջեց հանձնել ահաբեկիչներին, այլապես «անվտանգության երաշխավորություն» տալ չի կարող։ Հայերը հրաժարվեցին։ Քաղաքում բացահայտ ջարդի նախապատրաստություն էր գնում։ Թուրք բնակչությանը ջարդի էին մղում՝ ասելով. «Հայերը, Անգլիայի հետ միացած, ուզում են մեր օսմանյան թագավորությունը կործանել, իսլամի կրոնը ջնջել։ Առաջիկա ուրբաթ օրը տեղի հայերը զինված հարձակվելու են մզկիթների վրա և կոտորելու են մուսուլմաններին։ Ուստի օր առաջ մենք շարժվենք և չթողնենք, որ անհավատ հայերը մեզ ջարդեն»։

Քաղաքում եղած օտարերկրացիները կուսակալից անվտանգության հավաստիացում պահանջեցին։ Կադրին այդ հավաստիացումը տալու հետ միասին, վախենալով, որ նրանք գործին կարող են միջամտել, սուլթանից թույլտվություն խնդրեց կոտորածն անմիջապես սկսելու համար։ Թույլտվությունը ստացվեց։

Սեպտեմբերի 24-ին հայերի տները խուզարկեցին և բոլորի զենքերը խլեցին։ Հաջորդ օրը խառը բնակչություն ունեցող թաղերում բնակվող հայերի տներին նշաններ փակցրեցին։ Զինվորներին ու խուժանին բաժանեցին երկաթյա ձողեր ու գործիքներ, որոնցով պետք է խորտակեին խանութների երկաթյա դռները։

Սեպտեմբերի 26-ին, ժամը 6-ին փողերը փչեցին, և զորքն ու խուժանը հարձակման անցավ։ Կադրին հորդորում էր, որ ամենից առաջ հարուստներին սպանեն։ Ամբողջ քաղաքում հայերը կոտորվում էին։ Կատարվածը ապստամբություն ներկայացնելու դիտավորությամբ հանձնարարված էր սպանել միայն

տղամարդկանց։ Սակայն սպանեցին նաև կանանց ու երեխաներին։ Նույն օրը հարձակման ենթարկվեցին նաև հայկական գյուղերը, մի քանի գյուղեր հրդեհվեցին։

Իրադարձությունների ականատես Ն. Պասալսկին պատմում է, որ երբ ռուսական «Ազով» նավով Տրապիզոն հասանք, հանկարծ ժամը 10-ին քաղաքի հրապարակում լսվեցին ատրճանակի պայթյուններ և շատ չանցած սկսվեց սոսկալի աղմուկ, վայնասուն և մոլեգին աղաղակներ՝ «զարկեք գյավուրներին»։ Խառնիհալանջ բազմությունը, բաղկացած թուրք նավատիներից, բեռնակիրներից, մսավաճառներից, զինված մարտինի հրացաններով, խռնվում է հրապարակ, խուժում փողոցները, հարձակվում հայերի վրա։ Դիակները շուտով սկսեցին դիզվել փողոցներում։ Սոսկալի էր փախչողներին հալածելու տեսարանը. կարծես վայրի գազանների որս լիներ։ Հարձակվողը բոլոր տարիքի թուրքն էր, զոհը հայն էր՝ ա.ր. կին, ծեր ու մանուկ։

Հրապարակը հիշեցնում էր այն արյունահեղ տեսարանները, որ մարդու երևակայության մեջ հարուցում էին Ումանի կամ Բարդուղիմեոսյան ջարդերը...

Զինվորները... իրենք էլ սկսեցին հարվածել ու թալանել հայերին»։ («Դրոշակ», 1895 թ., № 17—18)։

Տրապիզոնում ռուսական առևտրական ներկայացուցիչ Վ. Դ. Աբրաշկևիչը գրում է. «... Կոտորածը սկսվելուց 20 րոպե անց հրապարակում երևացին հատուկենտ զափթիեներ, բայց նրանք ոչ մի զինված թուրքի չձերբակալեցին, ոչ մի կերպ չփորձեցին արգելք հանդիսանալ կոտորածը շարունակելուն...

... Շատ անգամ անգին թուրքերը զինվորներին ցույց էին տալիս փախչող հային, և նրանք նշան էին բռնում ու կրակում խեղճ փախստականների վրա։

Տասնմեկ հայ, թուրքերի յաթաղանից փրկվելու հույսով, նետվեցին նավակների մեջ և նավարկելով դիմեցին դեպի ամենամոտ շոգենավը՝ ավստրիական «Վենիստը», բայց շոգենավից խկույն վեր քաշեցին սանդուղքը և կրակելով՝ դեն քշեցին փախստականներին։ Նրանք փորձեցին ապաստան գտնել ռուսական գրոշի ներքո, բայց մեր շոգենավին դեռ չհասած, այնտեղ աշխատող թուրք բանվորները հարձակվեցին այդ խեղճերի վրա, խողխողեցին ու ծովը թափեցին նրանց։ Սակայն վրա հասած նավապետի օգնականներից Ա. Ի. Կոստանտինովը և նավաստիները զսպեցին այդ սրիկաներին և ներս առան ապաստան փնտրող հայերին, որոնք ծանր վիրավորված էին գնդակներից ու յաթաղաններից»։

Պ. Աբաշկևիչը պատմում է, որ հյուպատոսարանի ճանա-

պարսին եղած հայերի բոլոր խանութները թալանված ու ավերված էին։ Նա տեսել է հայի յոթ դիակ, ոմանց գլուխը ջախջախված, ոմանց կոկորդը կտրված։ Իսկ շոգենավ վերադառնալիս փողոցում տեսել է 44 դիակ։ Հանդիպել է թուրքերի, որոնք հայերից թալանված գույքերն էին քարշ տալիս։ Նույն օրը, սեպտեմբերի 26-ի երեկոյան, սկսվեց հրդեհը, որը շարունակվեց նաև հաջորդ օրը[43]։

Թուրքերը զվարճանում էին՝ այլանդակելով հայերի դիակները։

Բաբերդի գյուղերում զոհվեց 2,5 հազար մարդ։ Երեսուն գյուղերում թալանվեց ու ավերվեց 1760 տուն, 36 եկեղեցի, թալանվեց 974 կով, 22,5 հազար ոչխար, 273 ձի, 2334 փեթակ։ 20 գյուղեր ընդհանրապես ոչնչացվեցին, երկուսը ամայացան, հինգը կրոնափոխ եղան։

Օրդույում թուրք խուժանը հարձակման անցավ սեպտեմբերի 29-ին։ Հայերը այս հարձակումը ձախողեցին։ Հաջորդ օրը պետք է կոտորած սկսվեր, բայց կայծակն ու հորդառատ անձրևը խանգարեց մոլագարներին։ Մյուս օրը ևս ջարդ տեղի չունեցավ, որովհետև Տրապիզոնի նավահանգիստ մտան ռուսական նավերը։

Որոշ ժամանակ անց լուր տարածվեց, թե Դանիել անունով մի հայ 800 հոգով հարձակվել ու ոչնչացրել է մերձակա գյուղերի մահմեդականներին։ 1500 զինվոր շտապեցին «օգնության» և սկսեցին հայերին անխնա կոտորել։

Իշխանությունները Քեմախ տարան 900 քուրդ, նրանց զինեցին մարտինի հրացաններով ու 25 հոգիանոց խմբերի բաժանելով՝ հարձակման ուղարկեցին հայկական գյուղերի վրա։

Քրդերը հայտարարում էին. «Որտեղ հայ գյուղ կա, պիտի ոչնչացնենք և հայ անունը պիտի վերացնենք։ Մեզ այդպես է պատվիրված»։ Հոկտեմբերի 20-ին քրդերն ու թուրքերը հարձակվեցին Ակնի Բինկյան գյուղի վրա։ Հայերը զենք չունեին ու փախան լեռները։ Տներն ավերվեցին, թալանվեցին, շատերը սպանվեցին։ Պղծեցին ու թալանեցին նաև եկեղեցին։ Ջորքի օգնությամբ քրդերը նույն բանը կատարեցին Ակնի նաև մյուս գյուղերում։

Տեվերիկի ու նրա գյուղերի վրա թուրքերի առաջին հարձակման ժամանակ թալանվեց 4500 ոչխար և այլ անասուններ, երկրորդ հարձակման ժամանակ սպանվեց 20 և վիրավորվեց մոտ 100 մարդ։ Բոլոր գյուղերը թալանվեցին։ Նույնիսկ ջուր խմելու ամանները տարան։

Տեվերիկում «ամեն քայլափոխի դիակ էր, վիրավորների աղեկտուր հառաչանքը, հրդեհվող տներից փախչող կանանց և երեխաների վայնասունը սիրտ էր ծակում։ Աչքովս տեսա բրոնաբարվող կանանց։ Մի կին քաջաբար դիմադրում էր մի քանի խուժանի, և հրացանի մի քանի հարվածներով գետնին տապալվեց։ 200 հոգի սպանված է, 100 տուն այրված, 10 ընտանիք բռնի կրոնափոխված։ Օրը 3—4 մարդ սովից մեռնում է։ Մի գյուղացի պատմում է. «Ձմեռ է գալիս, բայց չոր խսիր անգամ չկա, որ վրան նստենք։ Քաղցած ենք, երեխաները լաց են լինում, ողբում, հաց ուզում... գնում ենք քրդերից մուրալու»։

Երզնկայում կոտորածը տեղի ունեցավ հոկտեմբերի 9-ին, որը «Սասունից ավելի վատթար էր»։ Հարձակումը սկսվեց շուկայում և տևեց 6 ժամ։ Հայերը կոտորվեցին, իսկ շուկան թալանվեց։ Կոտորվեցին նաև գյուղերը։ Սպանվածների թիվը շուրջ հազար էր, գրեթե նույնքան էլ վիրավորներ կային։

Պաշտոնատար անձինք շուկայում բղավում էին՝ խփե՛ք գյավուրներին։ Կոտորածի օրը ոստիկանները շուկա եկած բոլոր հայերին խուզարկեցին ու զինաթափեցին։ Երբ քաղաքի մահմեդականները սկսեցին բացահայտ խոսել հայերին կոտորելու մասին, վերջիններս պատվիրակություն ուղարկեցին Զեքի փաշայի մոտ։ Սա հայերին խոստացավ, որ նրանց պաշտպանելու համար զորքեր կտեղադրի փողոցների երկայնքով։ Սակայն այդ զորքը զբաղվեց հայերի զենքերը խլելով։

Թուրք գյուղացիներին պատվիրել էին երկուշաբթի օրը շուկա գալ զենքով։ Հենց նրանք էլ շուկայում հարձակվեցին հայերի վրա ու սկսեցին կոտորել, իսկ ով կարողացավ փախչել, ընկավ զինվորների գնդակից։ Դիակների մի մասը գցեցին Եփրատը, իսկ մյուս մասը զինվորները քաղաքից հանեցին ու լցրին փոսերը։ Նույնիսկ թուրք զինվորներն էին ասում. «Մենք Սասունի կոտորածը տեսանք, հիմա էլ սա տեսանք, եթե այս բոլորը մարսենք, ուրեմն Աստված չկա»։

Բազվանի գյուղացիները ապաստանել էին եկեղեցում։ Զինվորները ներս խուժեցին ու 60 հոգու մորթոտեցին։

1895 թ. հոկտեմբերին Բաղեշից հայտնեցին. «Վերջին օրերին... անծանոթ դեմքեր էին ավելանում քաղաքում, դրանք դերվիշներ, մոլլաներ, ֆախիներ, շեյխեր և զանազան ցեղի քրդեր էին։ Թուրք ժողովուրդը բացահայտ կամ ծածուկ զինվում է...»։

Կուսակալ Էմեր բեյը որոշեց խորամանկել. նա թնդանոթ-

ների փողերը ուղղեց Թուրքական Թաղերին։ Հայերի դիմումին էմերը պատասխանեց. «Ձեր հավի փետուրի համար էլ պատասխանատու եմ»[44]։

Հաջորդ օրը առավոտից մեծ թվով Թուրքեր են լցվում մզկիթները։ Նրանք փակում են խանութները։ Հայերը ևս փակում են իրենց խանութները։ Ոստիկանը մի հայից պահանջում է խանութը չփակել և, մերժում ստանալով, ատրճանակով սպանում է նրան։ Սա ազդանշան էր։ «Մզկիթներից դուրս են թափվում Թուրք, քուրդ, մոլլա, շեյխ, սոֆթա և սկսում են անխնա կոտորել հայերին։ Սպանում են խանութներում, շուկայում, մորթում են ամեն տեղ։ Կոտորածը տարածվում է Թաղերն ու փողոցները։ Թուրքերը հարձակվում են ս. Սարգսի վարժարանի վրա և սպանում 5—12 տարեկան 120 երեխա։ Փողոցը այդ անմեղ հոգիների դիակներով է ծածկվում»։

Քաղաքում սպանվածների թիվը հասավ հազարի։

22 գյուղ ավերվեց ու հրդեհվեց, մեկ գյուղ, մահմեդականություն ընդունելով, փրկվեց։

Բաղեշի Սիզեռք գյուղում կատարվածի մասին պատմում է ականատեսը. «Հոկտեմբերի 13-ից սկսած, շեյխերի հրամանատարությամբ, բարբարոս քրդերը հարձակվեցին հայ և ասորի գյուղերի վրա։ Աչքի ընկած անձանց, շարաշար սպանելով կամ կենդանի այրելով, գյուղը լրիվ կողոպտում են... Մնացած ժողովրդից մահվան սպառնալիքով մահմեդականացում են պահանջում, ընդդիմացողներին սրախողխող են անում, իսկ մնացածներին թլպատում են։ Քահանաների գլխին սպիտակ փաթթոցներ են դնում։ Քահանաների կանանց մոլլաների կամ այլ մահմեդականների կանանց հետ են փոխանակում, որպեսզի մահմեդականացումը ոչ թե առերևույթ, այլ իրական լինի։

Եկեղեցիները վերաշինելով, աղոթարանը դեպի հարավ շուռ տալով, մզկիթների էին վերածում»[45]։

Երբ Մուշում ստացվեց Բաղեշի կոտորածների լուրը, իշխանությունները հայտարարեցին, որ մեղավորները հայերն են։ 50 հեծյալ շրջում էին հայկական թաղերում ու բղավում «Անհավատներ, այս ամենի պատճառը դուք եք»։

Կառավարիչը քաղաքի հայ և մահմեդական երևելիներին հրավիրեց ու հայտարարեց. «Երեկ կեսօրին, Բաղեշի Թուրքերի

աղոթքի ժամանակ, հայերը հարձակվել են մզկիթների վրա և լուսամուտներից ու դռներից գնդակահարել և սպանել են իսլամի հասարակությունից 90, իսկ զինվորներից՝ 30 հոգի։ Մուշում ևս հայերը պիտի հարձակվեն իսլամների վրա։ Ուստի, դուք պիտի միջոցներ ձեռնարկեք վտանգը կանխելու համար»։

Հաջի Դալիբը նոր էր վերադարձել Բաղեշից և գրգռում, դրդում էր «իսլամ հասարակությանը՝ կողոպտել ու կոտորել հայությանը...»։

Մուշի քաղաքային ժողովի անդամները դիմեցին կառավարչին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել կոտորածը կանխելու համար։ Վերջինս հավաստիացումներ տվեց, բայց միաժամանակ զինապահեստի դռները բացեց մուսուլմանների առաջ։

Քաղաք բերվեցին չերքեզներ ու քուրդ աշիրեթայետներ, նրանց հրահանգավորեցին և ուղարկեցին Թուրքական թաղերը։

Հոկտեմբերի 17-ին հայերը դիմեցին մահմեդական առաջնորդին և հայտնեցին իրենց անհանգստությունը։ Վերջինս պահանջեց, որ հայերն էլ բողոքեն, որպեսզի նպաստ բաժանող Մ. Քոլն ու դոկտոր Ռեյնոտը Սասունից հեռանան, այլապես «իսլամ հասարակությունը զինաթափ չի լինի»։

Մուշի հայերը նամակ գրեցին Սասուն ու խնդրեցին բավարարել այդ պահանջը։

Նոյեմբերի 3-ին մի քուրդ իր ատրճանակը տանում է հայ զինագործի մոտ վերանորոգելու։ Քուրդը հավաստում է, որ ատրճանակի մեջ փամփուշտ չկա, բայց երբ հայը շախմախը ձգում է, ատրճանակը կրակում է, որը դառնում է ազդանշան։ Թուրքերը հարձակվում են հայերի վրա։ Իրարանցում է սկսվում սկզբում շուկայում, ապա հայկական թաղերում։ Սպանվում են վեց, վիրավորվում 36 մարդ։

Մեկ օր առաջ բալաքցի, խութեցի և չխուրցի քրդերը հարձակվում են Վարդենիսի վրա և լրիվ թալանում։ Նույն բանը կատարվում է 12 այլ գյուղերում։

Բուլանըխում թալանվեց յոթ գյուղ։ Թալանվեցին նաև Սասունի Արգավանք, Մկրագոմ և տասը այլ գյուղեր։ Սկսվեց համաճարակը։

«Բոլոր չարագործությունն անողները համիդիե հեծելախմբերն են, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 150—400 հոգուց, որոնք, մերթ ընդ մերթ միանալով կանոնավոր զորքին, ցերեկով հարձակումներ էին գործում... Յուրաքանչյուր գյուղ թալանելը տևում է 3—4 օր։ Ձնայուծ Շաքիր փաշայի

«սպանեցեք և ապա թալանեցեք» կոչին, քրդերը ավելի շատ թալանում էին, քան սպանում։

Կառավարիչը բողոքող հայերին ուղղակի պատասխանեց. «Քրդերի հարձակման ժամանակ մի դիմադրեք, որովհետև թագավորի հրամանն է»։ («Դրոշակ», 1896 թ., № 10)։

Սեպտեմբերի 21-ին Տիգրանակերտում քաղաքի իշխանությունները հայերից պահանջեցին ստորագրել մի շնորհակալական նամակ՝ համաձայն որի հայերը շատ գոհ են կուսակալ էնիս փաշայի քաղաքականությունից։ Հայ ծախու վերնախավը համաձայնում է ստորագրել։ Այդ փաստը առաջացնում է լայն հասարակայնության զայրույթը։

Հաջորդ օրը հայկական եկեղեցիները և վարժարանները փակվում են։ Հնչում են բոլոր եկեղեցիների զանգերը։ Հայերը, խրոնված գավիթներում, երգում, ճառեր են արտասանում։

Սեպտեմբերի 25-ին քաղաքի բոլոր խանութները փակ էին։ Կազմվեցին իշխանությունների գազանությունների ու ապօրինությունների ցուցակներ։

Հուսեին անունով մեկը, մզկիթում իր դժգոհությունը արտահայտելով բարենորոգումների ծրագրի առթիվ, բղավեց. «Պետությունը գյավուրներին վեց նահանգ է տվել...» և ամբոխին կոչ արեց զենքի դիմել։

Բախում հրահրելու համար մի քանի թուրքի հայի հագուստ են հագցնում և հարձակման ուղարկում ճամբարների վրա։ Եվ ահա, նամազից հետո մզկիթներից դուրս գալով, մահմեդականները սկսում են հարձակումը։

Քաղաք է բերվում 8000 զինված զիլանցի։ Կոտորածն ու կողոպուտը չորս օր տևեց։ Իշխանություններն անտարբեր մնացին։ Ոչ մի միջամտություն։ Թուրքական թաղերում գտնվող հայերի տները հրդեհվեցին։ Նույնիսկ հյուպատոսարանը պաշտպանող զինվորները «փողոցներում հանդիպած հայերին ջարդելու... պարտականությունների մեջ բնավ չթերացան, մի բան, որ կարող է վկայել նույն ինքը՝ հյուպատոսը, որ ականատես էր իր բնակարանի առջև փողոցում տեղի ունեցած նմանօրինակ տեսարաններին...»[46]։

Ժանդարմների փոխհրամանատար Ազամեթ փաշան շրջում էր քաղաքում ու կոչ անում. «Ձավակներս, անհավատներին

ջարդեցե՛ք։ Նրանց ունեցվածքը ձեզ հալալ է»։ Նա ինքն էր կոտորելու օրինակ ցույց տալիս։ Ջորքը մեծ եռանդ դրսևորեց խանութներն ու պահեստները թալանելու գործում։ Հայերին՝ մեծ թե փոքր, ամենուրեք սպանում էին։ Մի կնոջ սպանելուց հետո նրա գրկից վերցրին երեք ամսական երեխային ու գցեցին մսաղացի մեջ։ Մի հացագործի իր աշակերտների հետ շպրտեցին հնոցն ու այրեցին։ Նույն բանն էր կատարվում նաև գյուղերում։

Երեկոյան ժամը 11-ին քաղաքի բերդից փող հնչեց։ Խուժանը փախավ շուկայից։ Քիչ անց շուկան հրդեհվեց։ Դա նպատակ ուներ թաքցնելու կատարված վայրագությունները, «մոխիրների մեջ թաղելու սպանված հազարավոր քրիստոնյաների մարմինները»։

Գիշերվա ժամը 5-ին Էնիս փաշան Ազամեթ և Ջամիլ փաշաների հետ մտան Շիֆթե-խան իջևանատունը և զորքին հրամայեցին սվինահար անել հայերին։ Դիակները գցեցին շուկայի հրդեհի բոցերի մեջ։ Երբ փաշաները զբաղված էին ավարը բաժանելով, մի թուրդ դուռը բացեց ու բղավեց. «Թագավորը հրամայել է, որ մենք կոտորենք գյավուրներին և ավար վերցնենք նրանց ողջ ունեցվածքը... մինչդեռ դուք եք տիրանում ավարին»։ Հանդուգն թուրդը կյանքով վճարեց իր խոսքերի համար։ Այդ գիշեր թուրքական թաղերի բոլոր տներում ավար էին բաժանում։

Շատ հայեր, վտանգից խույս տալով, թաքնվել էին եկեղեցիներում։ Շաբաթ առավոտյան զինվորները, ոստիկաններն ու խուժանը հարձակվեցին ս. Սարգիս թաղի վրա։ Նրանց հետ էին նաև թուրք կանայք, որոնք ոգևորում էին մարդասպանները։

Քաղաքի բոլոր 12 մզկիթների մինարեթներին զինվորներ էին բարձրացել և կրակում էին այն հայերի վրա, ովքեր տանիքներով փախչում էին։

Ս. Սարգիս եկեղեցում ապաստանել էր 567 մարդ։ Խուժանը ներս մտավ ու, բացի հինգ գեղեցիկ աղջիկներից, բոլորին կոտորեց։

Թուրքերը նույն օրը հարձակվեցին նաև ս. Կիրակոս մեծ թաղի վրա, կոտորեցին ու թալանեցին։ Փրկվածները ապաստանեցին Ֆրանսիայի հյուպատոս Մ. Մեյրեի տանը։

Մեծ մզկիթի մոտ գտնվող մսի խանութի պատից կախել էին 4—7 տարեկան չորսական տղայի ու աղջկա մարմիններ։

Դիարբեքիրում սպանվեց 3,5 հազար մարդ, որոնց մի մասի

դիակները քաղաքի պարսպից դուրս դիզեցին և երեք օր անց այրեցին։

Հոկտեմբերի 22-ին նահանգի 40—50 հայ գյուղեր ծխում էին. ամենամեծ գյուղից հազիվ 40 մարդ ազատվեց, իսկ Ալիբինոր գյուղից՝ ոչ մեկը։

Կոտորածներից վեց օր անց իշխանությունները հրապարակավ աճուրդի հանեցին հայերից կողոպտված իրերը՝ նրանց գնի 10 տոկոսի չափով։ Հինգ օր տևեց այդ վաճառքը։

Իրենց բարբարոսությունների հետքերը թաքցնելու համար այրված գյուղատեղերը հերկվում էին։

Գյուղերում զոհվեց 10 հազար մարդ։ Անօթևան և որբ մնաց 4—5 հարյուր երեխա, 800—900 որբևայրի կին։ Նյութական վնասը կազմեց 2 միլիոն ոսկի։

Խիզանի հայությունը կոտորվեց հոկտեմբերի 14-ին։ Տեղի կայմակամը, Պոլսից հրահանգ ստանալով, շեյխերին կոչ արեց կատարել վեհափառ սուլթանի կամքը։ Դրանից հետո քրդերը հեղեղի նման թափվեցին այդ գավառի վրա և կոտորեցին անզեն ժողովրդին, իսկ կենդանի մնացածներին բռնի կրոնափոխեցին։

Հային բռնությամբ հարկադրում են սպանել իր եղբորը կամ հորեղբորը և կնության վերցնել նրանց կանանց կամ աղջիկներին, ստիպում են հրապարակավ զուգավորվել արյունակից ազգականների հետ, որը նշանակում է, թե «հայը դնի՝ եկավ»։

Կայմակամը քրդերին հրաման էր տվել. «15 տարեկանից փոքրերին չկոտորեք, իսկ հասակավորներին նախ պետք է թուրքացնել, ապա սպանել, որպեսզի նրանց որդիները, իրենց հոր թուրքական գերեզմանը տեսնելով, այլևս չհիշեն կեղտոտ հայությունը»։

Սպարկերտից 1000 երիտասարդ, ձյունը ճեղքելով, անցնում են Մոկս, իսկ մյուս գյուղացիները ոչնչացվում կամ մահմեդականացվում են։ 14 հազար հայից 4 հազարը կոտորվում է, 2000-ը կարողանում է փախչել, իսկ 8000-ը մահմեդականություն է ընդունում։

Ղմշկածագի գյուղերի վրա հարձակումը սկսվեց հոկտեմբերի 15-ին։ Վաղուանից տղամարդկանց խաբեությամբ գյուղից հանեցին ու բոլորին սպանեցին։ 1000 թվով հայերի մահմեդականացրին։ Եկեղեցու «զանգակն ու զանգակատունը խորտակեցին, խորանն ու խաչկալը ջախջախեցին, վանքի քարը փշրեցին, մինչև իսկ հատակի սալաքարերը քանդելով, վերցրին տարան»։

* *Հավատ*

Ռշտունիքի Փայխներ գյուղը 15 օր ջարդարարներին դիմադրեց և հանձնվեց, երբ փամփուշտները վերջացան։

Աղբակի 28 գյուղեր աղբակույտի վերածվեցին, թալանվեց 11,2 հազար ոչխար, 500 գոմեշ, 1200 կով և եզ։ Հատկապես դաժան էր գործում մազրիկ ցեղի ցեղապետ Շարաֆ բեյը։

Խիզանի ս. Խաչ վանքի վանահայր Սահակ վարդապետը 20 հոգով երկար ժամանակ պաշտպանում էր վանքը և երբ, ի վերջո, վանքը գրավվեց, նրան մորթազերծ արեցին, մաշկի մեջ հարդ լցրին ու կախեցին ծառից։

Խարբերդի գյուղերը ևս կոտորվեցին և մոխրակույտի վերածվեցին։

Միայն Հուսեյնիկ գյուղում սպանվեց շուրջ 300 հոգի։

Այնթափում կոտորածը սկսվեց նոյեմբերի 16-ին և տևեց երեք օր։ Սպանվեց 500 մարդ, այրվեց 3500 տուն։ Քաղաքը լրիվ թալանվեց, մեծ թվով մարդիկ բանտարկվեցին։ Կոտորածներին մասնակցեց նաև զորքը։ Էշի վրա էգ շուն էին նստեցրել, պտտում էին փողոցներով ու բղավում՝ «Հայոց տեր Անգլիայի թագուհի, շուտ հասիր և գյավուրներին ազատիր»։

Նոյեմբերի 3-ին, Մարզվանում, փողերի կանչից հետո թուրքերը հարձակման անցան ու կոտորեցին հայերին։ Քաղաքին հասցված վնասը կազմեց 100 հազար ոսկի։

Ամասիայում, նոյեմբերի 15-ին մոտ 100 հայ սպանվեց։ Կեսարիայում, նոյեմբերի 18-ին, «հազարավոր թուրքեր, մոլեռանդ ու բիրտ, թափվում են փողոցները՝ սրերով, ատրճանակներով, բահերով ու կացիններով և կատաղի հարձակում են սկսում շուկայի ու հայկական թաղերի վրա, անխնա ջարդելով... Բաղնիքում լցվում ու սպանվում են տարբեր սեռի ու տարիքի շուրջ 250 հայ»։ Հայերի տների թալանին մասնակցում էին թուրք կանայք։ Նրանք «բաց երեսով գնում գալիս էին՝ շարունակ կողոպուտը փոխադրելով»։ Հաջորդ օրը կոտորածը դադարեց, իսկ կողոպուտը դեռ երկար շարունակվեց։ 1000—2000 հոգի հարձակվում է Մայր տաճարի վրա, որտեղ հարյուրավոր հայեր էին ապաստանել։ Խուժանը սկսեց տաճարի պատուհաններից ներս կրակել։ Փորձեցին տաճարի դուռը կոտրել, չհաջողվեց։ Հայերը 30 օր փակված մնացին տաճարում։

Մաագործների խանութներում հայերի մարմինների մասեր էին կախել ու վայրագ քրքիջով բղավում էին. «Մսի օխան 80 փարա, իսկ գլուխը 10 փարա»։

Այնթափում կողոպտվեց 1500 խանութ, 500 տուն, սպանվեց ու անհետ

կորավ 5800 հոգի։ Զանազան զրպարտություններով՝ մեծ թվով մարդիկ բանտ նետվեցին։ Նախճիրը հատկապես սարսափելի էր Մարաշում, Զեյթունում և Եդեսիայում։ Մարաշում կոտորվեց 820, իսկ Եդեսիայում 250 հոգի։ Կիլիկիայի քաղաքների միջև կապը խզված էր, նամակները բացվում ու քննվում էին։ Միայն Ուրֆայում կոտորվեց 3000 մարդ։

Այնթափի վնասը կազմեց 400 հազար ոսկի։ 1000 աղջիկներ առևանգվեցին ու Մուսուլում վաճառվեցին յուրաքանչյուրը 50 փարայով։

Արաբկիրում սպանվեց 2000 մարդ։ Ութ օր իշխանությունները նախապատրաստվում էին կոտորածի, զորքերի զեկավարությունը հանձնարարվեց հայատյաց արյունարբուների, խաբեությամբ հավաքեցին հայերի մոտ եղած զենքերը, քաղաքը շրջապատվեց, փողոցներում պարեկներ նշանակվեցին։

Հոկտեմբերի 25-ի երեկոյան հնչեցին զինվորական փողերը։ 20 հազար զորք ու խուժան ներխուժեցին քաղաք։ Խաբված հայերը կոտորվեցին գրեթե առանց դիմադրության։ Միայն հայկական թաղերում հաջողվեց դիմադրություն կազմակերպել ու երեք օր կասեցնել թշնամու առաջխաղացումը։

Խուժանը ետ է քաշվում։ Հարձակման են անցնում զորքն ու ոստիկանությունը։ Քաղաքի փողոցներում «մարդկային այլանդակված դիակները բլուրներ են կազմում, տեղ-տեղ մարդկային կարմիր արյունը առու կազմած գետինն էր ներկում... Քաղաքը բոցերի անհուն օվկիանոս էր դարձել... Ավերում, թալանում, քանդում էին... Փողոցներում՝ անտեր ու մոլորված երեխաներ։ Մի տեղ երեխան սողում է իր մոր արյունլվա դիակի վրա, մի այլ տեղ հայրը իր զավակների աչքի առաջ կացնահար է լինում... Թուրքերի ձեռքը չընկնելու համար շատ կանայք ինքնասպանություն են գործում»[47]:

Կոտորածն ու հրդեհը Արաբկիրում տևեցին 15 օր։ Հայերի 2 հազար տնից կանգուն մնաց 200-ը, բոլոր դպրոցներն ու եկեղեցիները մոխրակույտի վերածվեցին։ Բանտարկյալների միջոցով թաղում էին փողոցներում թափված դիակները և ապա նրանց ևս սպանում։

Հասարակայնությանը խաբելու համար սուլթանը Տրապիզոն ու Կարին է ուղարկում մուշիր Շաքիր փաշային՝ «հայերի դանգատները լսելու և ընդառաջելու»։*

* *Մարշալ*

Կարինում կոտորածը սկսվեց հոկտեմբերի 18-ին։ Պատմում է ականատեսը. «Ես դպրոցում էի և վերևից տեսա, որ հարևան փողոցներով անընդհատ վազում էին լազերը, չերքեզները, թուրքերը, թուրքմենները՝ բեռնավորված թալանով։

Զինվորներին հատուկ հրահանգ էր տրված՝ կոտորել հայերին... Զորքն էր խուժանի համար ճանապարհ հարթում»։ Կոտորածին մասնակցում էր 3000 զինվոր։

Լուսնկա գիշեր էր, և կոտորածը շարունակվեց մինչև լուսաբաց։ Այդ օրը սպանվեց 520 մարդ, մեծ թվով վիրավորներ կային[48]։

Տրապիզոնի հայությանը կոտորելուց հետո լազերը գալիս են, շրջապատում Կարինի գյուղերն ու թալանում։

Կարին բերվեցին մեծ թվով թուրք գյուղացիներ։

Կոտորածից հետո Կարինը ավերակ էր դարձել։ Փողոցներում շրջող զինվորներն ու դաղաշները պարծենում էին, թե ինչպես մոր գրկից խլեցին երեխային և անցկացրին սրի ծայրին։ Թե ինչպես մի գնդակով տապալեցին խաղաղ աշխատանքով զբաղված արհեստավորին։

Կոտորածից մի քանի օր անց պարզվեց, որ քաղաքը զրկված է ամեն ինչից՝ սկսած վարսավիրից մինչև բժիշկը։ Թուրքերի ու հայերի միջև այնպիսի անջրպետ առաջացավ, որ նրանց համատեղ գործունեությունը երկար ժամանակ անհնար դարձավ։

Եդեսիայում իշխանությունները բաշիբոզուկներին զինեցին և ուղարկեցին հայկական թաղերի վրա։ Բայց հայերը երկար դիմադրեցին և նրանց թույլ չտվեցին առաջանալ։ Հայկական թաղերը շրջափակվեցին։ Դրսում մնացած հայերը, մասնավորապես ջրաղացներում բանող պանդուխտ սասունցիները, ինչպես նաև այգիներում աշխատող կանայք, սպանվեցին։

Հասան փաշան հավաքեց քաղաքի հայ երևելիներին ու պահանջեց հանձնել 1800 մարտինի հրացան և, մերժում ստանալով, բոլորին բանտ նետեց ու թնդանոթներն ուղղեց հայոց թաղերի վրա։ Հայերը հարկադրված հանձնեցին զենքերը։ Նոյեմբերի 21-ի գիշերը սկսվեց կոտորածը։

«Ամբողջ Վասպուրականը դարձավ սպանության, թալանի և սոսկալի չարագործությունների ասպարեզ։ Հայերին ջնջելու սուլթանի ծրագիրը սկսեց գործադրվել ամենայն ճշտությամբ... բազմաթիվ գյուղեր հրդեհվեցին»։ Քրդերը հայերից թալանածը ազատ վաճառում են Խոյ և Սալմաստ գավառներում։ Կա-

ռավարությունը ձգտում է պարսիկներին հանել հայերի դեմ՝ գրգռելով նրանց կրոնական մոլեռանդությունը։ Սպանում էին մոլլաներին ու մեղքը բարդում հայերի վրա։

Որոշ տեղերում հայերը, հատկապես հայդուկները, դիմադրեցին։ Վասպուրականում գործում էին մի քանի հայդուկային խմբեր։ Դրանցից մեկի մասին մի քուրդ պատմում է. «Մենք 2000 հոգի էինք ... Հայդուկները 70 հոգուց ավելի էին... Մեզ հաջողվեց նրանց իջեցնել լեռներից ու գցել բաց դաշտ։ Կարծում էինք, թե այժմ նրանք փրկության ելք չունեն։ Բայց, ի զարմանս մեզ, ֆիդայիները, հրաձգության ժամանակ, սառնասրտորեն թաշկինակները վեր պարզեցին և սկսեցին պարել «Գլոր պարեր»։ Դադարեցրինք հրաձգությունը և ապշած դիտում էինք այդ արտասովոր ներկայացումը»[49]։

Վանում, հոկտեմբերի 12-ին շշուկներ տարածվեցին, որ իշխանությունները մահմեդականներին գաղտնի զենք են բաժանում։ «Սուլթանի բարենպաստ հանձնաժողովը մեկ ամիս է ձգձգում է, թե գործում է, բայց իրականում գաղտնի դավեր է լարում»։ Ամեն օր սպանություններ են կատարվում։ Քաղաքում հավաքվել էր 4000 հոգուց կազմված զորք։ Թալանված գյուղերից քաղաք էր լցվել 3000 հայ։ Այգեստանում 35 պահականոց կար, հայերը չորս կողմից շրջափակված էին։

Անգլիական հյուպատոսը «կատարյալ թուրք ոստիկանի դեր էր կատարում»։ Նա հրապարակում դաժան ծեծի ենթարկեց գյուղերից մազապուրծ եղածների ղեկավարներին, պահանջելով ետ գնալ գյուղերը։ Նա հայերին առաջարկեց չնչին գներով իրենց հողերը վաճառել և վերաբնակվել Բաբերդում։

Հայերը մերժեցին, իսկ Սպարկերտի Շաշոն ասաց. «Մենք կառավարությանը չենք հավատում, եթե դուք քրդերի ու թուրքերի նկատմամբ այդքան հավատ ունեք, հագեք քեզագախիկը, դրեք իմ քոլոզը և երկու ժամ քաղաքից հեռացեք։ Եթե առողջ ետ եկաք և ձեր գլուխը ձեր վրա մնաց, մենք ամենքս կվազենք մեր ավերակ տները»։

Հյուպատոսը կատարում էր կուսակալի կամքը, որը գյուղացիներին ուզում էր Վանից դուրս հանել, քաղաքում հայերի թիվը փոքրացնելու և նրանց կոտորածը հեշտացնելու համար։ («Դրոշակ», 1896 թ., № 11)։

«Երկար ժամանակ Վան քաղաքը,— գրում է ականատեսը,— որևէ վայրագությունից զերծ էր։ Մինչև այն պահը, երբ նահանգի կուսակալի և սուլթանի երկու թիկնապահների՝ Սաաեդդին և Շեմզին փաշաների ստորագրությամբ մի պաշտոնական հեռագ-

Քեռի, Համազասպ, Վարդան (ձախից աջ)

դայիներ

Նեքուզ ՕՁիկ

Նիկոլ Դումանն իր խմբով

Սպանդարյանի Սերոբը իր որդիների հետ

Սոսե. Սերոբի կինը

Եղսա. Գևորգի կինը

Վազգեն Տերոյան

Զորապետ Վազգենն իր խմբով

Վարդան

Փայլակ. Ռուբեն Դերձակյան

Սմբատ

Կայծակի խումբը

Վարդան Շաքրազ

Զուգամատ

էր ծանուցեց, որ հայ հեղափոխականները փորձում են ամսի 15-ին խառնակություն առաջացնել Վանում»[50]։

Իրադարձություններն սկսվեցին հետևյալ կերպ. Զարուհի անունով մի օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու ձերբակալեցին։ Թուրքերին պատրվակ էր պետք լրենց ծրագիրն իրականացնելու։

Քրդերը քաղաք լցվեցին։ Հունիսի 1-ին ջուկան փակվեց։ Հաջորդ օրը գիշերապահ զորքերը Այգեստանի հանդում ընդհարվեցին հայերի հետ։ Հնչեց օգնություն կանչող փողը, և հավաքվեցին մեծ ուժեր։ Ընդհարման ժամանակ երկու զինվոր սպանվեց, որոնց դիակները պտտեցրին փողոցներով՝ խուժանին ավելի գրգռելու համար։

Հունիսի 3-ի կեսօրին կռիվն սկսվեց։ Թուրքական թաղերում հայերի տները հրդեհեցին, տղամարդկանց սպանեցին։

Հայկական թաղամասերը ինքնապաշտպանություն կազմակերպեցին։ Հիմնական ճակատային ամրություններն էին հյուսիսում՝ Ծաև թաղը, որի տների պատերը ծակել ու դիրքերի էին վերածել, հարավում՝ Թութունջյանների տունը, Արիջյանների թաղը, Նախրի փողոցը, արևմուտքում՝ Սահակ բեյի տունը։

Սասունի և Սղերդի կոտորածների կազմակերպիչներից մեկը՝ Հալիմ էֆենդին, զորքերի գլուխն անցած, Արարուց հրապարակից հասնում է Կլոր-Դար թաղը, մոտենում է հայերի տներին ու կրակ բացում։ Դա կոտորած սկսելու ազդանշան էր։ Եվ թուրք խուժանը հարձակման անցավ։ Նրան միացան 7—10 հազար քրդեր և համիդիներ։

Վանեցիները պաշտպանվում էին հմտորեն։ Թուրքերի հարձակումները ետ մղվեցին։ Ջենքով հաղթել չկարողանալով, վալին դիմեց Անգլիայի հյուպատոսին, որը վեց տերությունների անունից գնաց հայերի հետ բանակցելու։ Հայերը մերժեցին ու առաջարկեցին, որ բանակցություններին մասնակցեն նաև Ռուսաստանի ու Պարսկաստանի ներկայացուցիչները։ Հյուպատոսները պահանջեցին անձնատուր լինել, զենքերը, ինչպես նաև գլխավոր դեմքերից 10 հոգու հանձնել կառավարությանը։ Պատասխան տալու համար հայերը ժամանակ պահանջեցին։ Սակայն, առանց պատասխանի սպասելու, հաջորդ օրը խոսեցին թնդանոթները։ Ծանր մարտեր գնացին, չկարողանալով դիմադրել հայերի գրոհին, թուրքերը թողեցին թնդանոթներն ու փա-

խան։ Հայերը մինչև մութն ընկնելը կռվեցին և ապա հեռացան քաղաքից։

Այդ ընթացքում անգլիական հյուպատոսը միսիոներների մոտ ապաստանած հայերից ջոկում էր արական սեռի ներկայացուցիչներին ու հանձնում իշխանություններին։

Հայկական թաղերը թալանվեցին։ Այդեստանում կողոպտվեց 3000 և հրդեհվեց 600 տուն, 3 եկեղեցի, դպրոցներ։ Վնասը կազմեց մեկ միլիոն ոսկի։ Հալիմ էֆենդին Այգեստանի փողոցներում քաջալերում էր թուրքերին. «Զավակներս, նախ կոտորեք, կողոպուտը թող մնա վերջում»։

Հունիսի 17-ին Սաաեդդինը 500—600 զինվորով, նույնքան էլ համիդիեներով ու թնդանոթներով, շրջապատեց Վարագա լեռները՝ հայդուկներին բռնելու համար։ Սակայն վերջիններն արդեն հեռացել էին։ Թուրքերը այրեցին ս. Գրիգորի վանքը, թալանեցին ու հեռացան։

Հանրաճանաչ հայդուկ Պետոն գրում է, որ մայիսի 17-ից կառավարությունը խուզարկություններ էր կատարում։ Գիշերը շրջապատեցին Տաճիկ-Ամեմյանի փողոցի 70 տները։ 25 տուն խուզարկվեց, բայց ոչինչ չգտան։

Մի այլ հայդուկապետ՝ Վազգենը, գրում է, որ Վանի կռիվը սկսվեց հունիսի 8-ին և շարունակվեց 12 օր։ Կառավարությունը հայերի դեմ սկզբում գործում էր խուժանի միջոցով և զորքերի գաղտնի մասնակցությամբ, իսկ հունիսի 5—8-ը՝ բացահայտ»։

Կոտորածների ժամանակ, ծանր հրետանու օգտագործումը թաքցնելու նպատակով, ոստիկան-հյուպատոսն ու ամերիկացի միսիոներ Ռեյնոսը պահանջեցին հավաքել թնդանոթների օգտագործված արկերը։ Դրանց դիմաց նույնիսկ դրամ էին վճարում։

Հասարակական կարծիքը ապակողմնորոշելու համար Բ. Դուռը «Բեռլիներ տագեբլատում» տպագրեց հետևյալ «լուրը». «Վանում մեծ խռովություններ են տեղի ունեցել։ Ահագին թվով զինված հայեր (ըստ լուրերի մոտ 6000 հոգի) հարձակվել են թուրքական բերդապահ զորքերի վրա և ծանր կորուստներ պատճառել։ Վալին մեծ զորքեր է պահանջել՝ ապստամբությունը ճնշելու համար»։

Համիդը Վիեննայի «Պոլիտիկ կորեսպոնդենցին» ուղարկած կիսապաշտոնական հեռագրում հայերին ներկայացնում է որպես ավազակների, նրանց է վերագրում այն վայրենությունները, որ զորքերն են կատարել Վասպուրականում։

Աթենքի «Կոմբան» գրեց. «Հայ ապստամբների շարժումը Վասպուրականում մեծ ուրախություն է պատճառել դժբախտ ժողովրդին, որն այդքան տարիներ հեծում է «մահիկի» բռնապետության տակ»։

«Բաբել» ռազմանավը Զմյուռնիայից զորքեր էր տեղափոխում Զեյթուն ու Մարաշ։ Հայերը նախահարձակ եղան և գրավեցին Զյուքար-Հիսարը։ Թուրքական մի զորամաս անձնատուր եղավ։ Զեյթունի զորանոցն ու ստրատեգիական բոլոր կարևոր կետերը հայերի ձեռքն անցան։

Զեյթունի և Ալդերենի գավառների հայերի ու թուրքերի միջև խոշոր բախում տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին։

Մուստաֆա փաշայի 15 հազարանոց բանակը երկյուղեց մարտի մեջ մտնել և ետ քաշվեց։ Հայերը տիրեցին մի շարք բնակավայրերի ու շարժվեցին դեպի Ադանա։

Զեյթունի զորանոցը գրավելով՝ հայերը «թշնամուն մարդասիրության դաս տվեցին», գերիներն հետ վարվելով բացառիկ դթասրտությամբ։

Համաձայն կառավարության կողմից դեկտեմբերի 17-ին դեսպաններին ներկայացրած տեղեկագրի «Զեյթունի ապըստամբները սպանել էին 266 մուսուլման...»։ Դեկտեմբերի 19-ին Զեյթունը շրջապատվեց. դեկտեմբերի 21-ին զեյթունցիները հակահարձակման անցան ու թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին։

Նույն օրը «Ֆրանկֆուրտ գազեթը» գրեց, որ Զեյթունում պաշարված թուրք զորքը (400 հոգի) սրի է քաշված։

Դեկտեմբերի 31-ին Բ. Դուռը ընդունեց վեց պետությունների ներկայացուցիչների առաջարկը՝ Զեյթուն գնալու և հայերի հետ բանակցելու մասին։ Հունվարի 2-ին հայերը այդ տերությունների ներկայացուցիչներից պահանջեցին, որ Զեյթունի կառավարիչ նշանակվի հայերից։ Հունվարի 15-ին «հյուպատոսները հրահանգ ստացան բանակցությունների ժամանակ գործել համաձայն Բ. Դռան պահանջների», ըստ որի, ապստամբների ղեկավարները պետք է հանձնվեն իշխանություններին։

Բանակցությունների ընթացքի վրա ազդելու համար թուրքական հրամանատարությունը Կեսարիայի վրայով 1000 հոգի ուղարկեց՝ Զեյթունը հյուսիսային կողմից ևս պաշարելու համար։

Ֆրանսիական «Տեմպը» գրեց. «... Տաճկական զորքը Զեյ-

թունի դեմ մղած մարտում լիակատար պարտություն է կրել։ Մարաշի բողոքական եկեղեցիները լիքն են վիրավոր զինվորներով, որոնց խնամում են միսիոներները»։

Ըստ թուրքական աղբյուրների՝ Զեյթունում 6000 թուրք զինվոր սպանվեց։

Զեյթունցիների շրջանում ևս համաճարակային հիվանդություններ սկսվեցին։ Սպառնում էր սովը։ Դրսի աշխարհի հետ կապը կտրված էր։

Զեյթունում լինելուց հետո հյուպատոսները հայտնեցին, որ 8000 հայեր սոսկալի չքավոր ու թշվառ վիճակում են։ Նրանք նույնիսկ հանգանակություն կազմակերպեցին հօգուտ Զեյթունի։

Զեյթունի հայերից կռվում զոհվեց 120, իսկ սովից՝ 8000 մարդ։

«Ֆրանսիական հյուպատոսը 4000 դուրուշով Մարաշի 1000 գյուղացու կաթոլիկ դարձրեց»։ («Դրոշակ», 1896 թ., № 19)։

Փետրվարին զեյթունցիները համաձայնեցին հանձնել զենքերը՝ պայմանով, որ ամրոցը վերականգնվի կառավարության հաշվին։ Բ. Դուռը զեյթունցիներին ներում էր խոստանում, եթե նրանք, զենքերից բացի, հանձնեն իրենց ղեկավարներին՝ Պապիկին ու Ասսին։

Հայերն այդ պայմանը մերժեցին։ Իսկ զենքերը համաձայնեցին հանձնել, եթե զինաթափվեին նաև Զեյթունի և Այնթափի մահմեդականները և հարկերը թեթևացնեին։

Սուլթանական կառավարությունը հարկադրված ընդունեց զեյթունցիների պահանջները։ Սակայն թուրքերը իրենց հատուկ «մոռացկոտությամբ» շատ շուտով դրժեցին տված խոստումները և սկսեցին Զեյթունում հարկ հավաքել ու զորանոց կառուցել։

Զեյթունի հերոսամարտը լայն արձագանք գտավ եվրոպական մամուլում։

Ռեյտեր գործակալությունը 1895 թ. հոկտեմբերի 8-ին հայտնեց. «Թուրքական տեղեկությունների համաձայն, Զեյթուն լեռնային գավառի հայերը, որոնք շատ են հիշեցնում Սասունի բնակիչներին, նույնպես մտադիր են ապստամբել իշխանությունների դեմ։ Ասում են, թե լավ զինված են»։

Զեյթունի ինքնապաշտպանական կռիվները հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական էջերից են։ 1895—96 թվերին օսմանյան բռնատիրության վարած հայաջինջ քաղաքականության դեմ արևմտահայության տարբեր հատվածների մղած պայքարում Զեյթունի հերոսամարտը առանձնանում է ոչ

միայն իր մասշտաբներով, ռազմավարական բարձր մակարդակով, այլ նաև՝ արդյունքներով։ Այդ հերոսամարտում հայերը ռազմական առումով հաղթանակ տարան և այն կարողացան վավերացնել նաև համաձայնագրով։

Այլ բան է, որ այդ ռազմական ու դիվանագիտական հաղթանակների պտուղները նրանք երկար չվայելեցին։ Ինչպես միշտ, սուլթանն ու նրա կառավարությունը անբարո գտնվեցին։

Կոտորածները իրենց արյունոտ երախի մեջ էին առնում նորանոր հայաբնակ շրջաններ։

Ագիսար (Պոլսի մոտ) գյուղում ջարդը սկսվեց սեպտեմբերի 27-ին։ Ծուկայի օր էր, այլ վայրերից այստեղ մեծ թվով մարդիկ էին հավաքվել։ Ոստիկանների առաջնորդությամբ խուժանը հարձակվեց շուկայի վրա։ Հայերին կոտորեցին ու թալանեցին։ Դիակները լցրեցին հորերը։

Սեպտեմբերի 18-ին Պոլսում հայ ցուցարարները շարժվում են դեպի Բ. Դուռը։ Սուլթանին անընդհատ լուր էին հայտնում ցուցարարների շարժման մասին։ Նրա թիկնապահներից մեկը գալիս է ցուցարարների մոտ և մի նամակ հանձնելով ոստիկանության հրամանատար Սերվեթ բեյին, ասում է. «Խփեք»։

Ոստիկանները կրակ են բացում։ Նույն ժամանակ գնդակահար տապալվում է նաև Սերվեթը։ Սկսվում է կոտորածը, որը շուտով տարածվեց ողջ քաղաքում։

Սուլթանները*, կատաղության փրփուրը բերաններին, ամբոխին կոչ էին անում անխնա կոտորել հայերին։ Նրանցից մեկը նույնիսկ փորձեց սպանված հայի արյունը խմել։

Բոլոր հայկական թաղերը վնասվեցին։ Փողոցներում օրը ցերեկով սպանում էին։ Բանտերում ոչնչացնում էին խոշտանգելով։

Ֆրանսիական դեսպանատան թարգման Ռունեն անձամբ տեսել էր, թե ոստիկանատան բակում ինչպես ծեծելով սպանել են վեց հայի։

Թաղապետարանի մթերանոցներից եկած սայլերը կազմ ու պատրաստ սպասում էին դիակները ծովափ տեղափոխելուն, որտեղից լաստերը դրանք տանում թափում էին բաց ծով։

Սուեսիայի հայ գյուղերը պաշարման մեջ էին և, հեղափոխական փնտրելու նպատակով, մի քանի անգամ խուզարկվեցին։

* Թուրք հոգևորական

Իշխանությունները լուր տարածեցին, թե ամերիկացիները մտադրվել են ծովից հարձակում գործել։ Թուրք գյուղացիությունը զանգվածաբար փախավ Անտիոք։ Այստեղ նրանց դինելով՝ ուղարկեցին հայերի ու հույների վրա, որոնց արգելված էր քաղաքից դուրս գալ։ Քաղաք են բերվում նաև լրացուցիչ զինվորական ուժեր, որոնք թնդանոթներն ուղղեցին հայկական թաղերի ու գյուղերի վրա։ Մալաթիա քաղաք էր բերվել ավելի քան 20 հազար բաշիբոզուկ, որը շուկայում կոտորածը սկսեց հոկտեմբերի 22-ին։ Շուկան թալանվեց, որից հետո հարձակում սկսվեց հայկական թաղերի վրա։ Նորաշեն եկեղեցում, Պոնջուգրլյանի, Չեքեմենցի և կաթոլիկների թաղերում հայերն ուժեղ դիմադրություն ցույց տվին։ Եկեղեցին չորս օր դիմադրեց և այդպես էլ չհանձնվեց։ Մալաթիայում սպանվեց 2,5 հազար մարդ։

Կենճի գավառի 16 հայկական գյուղեր կոտորվեցին ու ավերվեցին, իսկ կենդանի մնացածները բռնի մահմեդականացվեցին։

Բալու քաղաքում մեծ թվով հայեր սպանվեցին, մնացածները, իրենց յոթ քահանաներով բռնի թլպատվեցին ու մահմեդականացվեցին։

Մակաբայեցիների վանքում ապաստանած 800 հայերը սպանվեցին։

Քրդերը բացահայտ հայտարարում էին. «Սուլթանի հրամանով է... և, եթե ճշտությամբ կատարեինք այդ հրամանը, հիմա Մշո երկրում մեն մի հայ էլ չէր մնա»։

Հայերը, փրկվելու մտադրությամբ, տեղից տեղ էին գաղթում։ Բայց օսմանյան տերության մեջ չկար մի անկյուն, ուր յաթաղանը չգործեր։ Արևմտյան Հայաստանը մահվան թագավորության էր վերածվել։ Շուրջբոլորը՝ արյան լճեր, անթաղ դիակներ, մարդկային մսով հագեցած շներ... Աշխարհի կողմից անտեսված մի քաղաքակիրթ ժողովուրդ մարում էր իր իսկ օջրանում։

Բոլոր փաստերը վկայում էին, որ կոտորածների առաջատար ուժը բանակն էր։ Առանց զորքի խուժանը հայերի վրա հարձակվելուց խուսափում էր։ Բաբերդում հայերը կազմում էին քնակչության 10 տոկոսը, դրսից բերվեցին մեծ թվով լաղեր, բայց կոտորածը չսկսեցին մինչև Երզնկայից զորք չեկավ։

Թուրքական վայրագ երևակայությունը բ նշ նաև «խրախճանքներ» ասես, որ չէր մոգոնում։

Ուրֆայում, ջարդերի հաջորդ օրը, թուրքերը իրենց կողմից սպանված հայերի մսով ճաշ հրամցրին սովյալներին։

Այնթափում դարբինների գլուխները մտցրին հնոցի մեջ, ապա դրեցին սալի վրա և մուրճով ջախջախեցին։ Ներսունի Նալբանդի ծնկների վրա մորթեցին նրա երկու որդիներին։

«Ստանդարտը» գրեց. «Չի կարելի հապաղել, եթե ուզում եք հայերին փրկել կատարյալ բնաջնջումից...»։

Սուլթանի անձնական քարտուղար Թահսին բեյի՝ վալիներին ուղարկված շրջաբերականում գրված էր. «1897 թ. սեպտեմբերի 13։ Իմացել ենք, որ հյուպատոսներին հրամայված է ուսումնասիրել Անատոլիայում եղած հայերի թիվը, մահմեդական դարձածների, մահմեդականների տներում պահվող կանանց, հայերի ու նրանց ընտանիքների և դատապարտվածների վիճակը։ Այժմ բոլորին է հայտնի, որ հայերն իրենք են եղել խռովությունների կազմակերպիչներն ու հրահրողները։ Քանի որ նրանց հարձակումն անսպասելի էր, անտարակուսելի է, որ մահմեդական կանայք ու երեխաները նրանց ձեռքն են անցել։ Մյուս կողմից, նույնքան ստույգ է, որ ոչ մի հայ կին և երեխա չէր կարող մուսուլմանների մոտ գնալ։

Հաշվի չառնելով այս ամենը, անընդհատ քննություններ են կատարում՝ հայերին իբրև զոհ ցույց տալու համար։ Դա արվում է հատուկ՝ կայսերական կառավարությունը խարխլելու միտումով։ Հյուպատոսները այս ուղղությամբ են գործում։ Այդ թշնամական փորձերին խանգարելու համար ձեզնից պահանջվում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին «նախապատրաստելու» և կայսրությանը ձեր նվիրվածությունը փաստելու ուղղությամբ։

Այլ կերպ վարվելու դեպքում կդիտվեք որպես կառավարության ու իսլամի դավաճաններ»[51]։

«Սուլթանը,— գրում է Մակքոլը,— իր սխրագործությունն սկսել է Սասունից։ Եթե ռեֆորմների ծրագիրը չլիներ, գուցե այդ կոտորածով հագենար նրա արյունատենչ ախորժակը, բայց ռեֆորմների հիմքում դրված էր հայերի և մուսուլմանների թվական հարաբերակցությունը։ Ուստի նա վճռեց խափանել այդ ծրագրի իրագործումը, հարաբերակցությունը հօգուտ մահմեդական-

ների փոխելու միջոցով (այսինքն նվազեցնելու հայերի թիվը)... իսկ պետությունները ոչինչ չարեցին մարդասպանի ձեռքը բռնելու համար, և հայերին կոտորելու հրամանը տրվեց Ելոզ-Քոշքից»։

1894—96 թթ. կոտորածները սուլթանը կազմակերպեց հայերին ահաբեկելու համար։ Դա կրոնական մոլեռանդությամբ չի կարելի բացատրել, որովհետև ուղղված էր միմիայն հայերի դեմ. մյուս քրիստոնյաներին ձեռք չէին տալիս։

Կոտորածների անմիջական ոգեշնչողները իշխանություններն ու շեյխերն էին, հարվածային ուժը՝ լեռնաբնակ քոչվորները ու կիսաքոչվորները՝ թուրքեր, քրդեր, չերքեզներ, լազեր։ Համեմատաբար իրենց հեռու պահեցին թուրք երկրագործները, չնայած նրանք ևս մասնակցեցին ավարառությանը։ Երկրագործներից ոմանք, ինչպես նաև հատուկենտ թուրք առևտրականներ ու արհեստավորներ, պաշտպանեցին հայերին։ Որոշ տեղերում հայերին պաշտպանեցին նաև քրդերը՝ Հասան-Ղալա, Բասենի Ամրագոմ, Ալաշկերտի, Բայազետի, Երզնկայի մի շարք գյուղերում։ Նույնիսկ Կարինում, որը կոտորածների «հերոս» Շաքիր փաշայի նստատեղին էր, արհեստավորների ու առևտրականների մի մասը հեռու մնաց կոտորածներից։ Մի շարք հայեր թաքնվեցին թուրքերի տներում։

Կոտորածները առաջացրին թուրք ազգաբնակչության զգալի մասի զայրույթը, և Մեծ մարդասպանը վախեցած, գոնե արտաքուստ, փոխեց իր քաղաքականությունը։ Սոֆտան դարձավ հեղափոխական և թուրքերին համոզում էր նոր կոտորած անել, «հավատացնելով, որ Եվրոպան կմիջամտի հայերին պաշտպանելու համար և կմտցնի բարեփոխություններ, որից բնականաբար կօգտվեն նաև իրենք»։ Դրանով սուլթանը նպատակ ուներ հայերի առաջիկա ջարդերի պատասխանատվությունը դնել թուրք հեղափոխականների վրա։

Սուլթանը մի հանձնաժողով ստեղծեց, որ պետք է հանդանակության միջոցով դրամ հավաքեր՝ վերականգնելու այն մզկիթները, որոնք վնասվել էին «վերջերս Անատոլիայում տեղի ունեցած անկարգություններից»։ Սրա նպատակը ակնհայտ էր՝ Եվրոպային թելադրել այն սուտը, թե հայերն էին անկարգությունների, ավերումների հեղինակները, միաժամանակ՝ մահմեդականներին գրգռել հայերի դեմ, իբր նրանք են կործանել մզկիթները։

Ի պատասխան՝ Մ. Իզմիրլյանը Բ. Դռանը գրեց. «Քանդվել և ավերվել են 400-ից ավելի հայ սրբավայրեր, իսկ մզկիթ՝ միայն մեկը՝ Արաբկիրում, որը, հայերի թաղին կից լինելով, այրվել է»[52]։

Այնուամենայնիվ, 1894—96 թթ. իրադարձությունները ցնցեցին թուրք հասարակությանը, աշխուժացրին ընդդիմադիր ուժերի գործունեությունը։ Օսմանյան հեղափոխականների շրջաբերականներում կարելի էր հանդիպել այսպիսի տողերի. «Հարամ կաթնակեր Համիդը գազազել է»։ «Կատաղած շանը (սուլթանին) պետք է սատկացնել»։ «Գազանաբարո փադիշահի Ելոզը հօդս ենք ցնդեցնելու»։ «Մեր հայրենակից հայերից օրինակ վերցրեք, որպեսզի անցյալներում գործած մեղքերդ քավեք, ձեռք մեկնեք նրանց»։ «Բռնակալ կառավարության անգթություններին զոհ գնացած հայրերը, մայրերը, եղբայրներն ու զավակները երկրից ու երկնքից «Վրե՛ժ, վրե՛ժ» են գոչում»։

Սուլթանը «Մեշվերեթի» դեմ դատ սկսեց։ Այդ թերթը հայկական ջարդերի համար սուլթանին անվանեց վատ, կեղտոտ մարդասպան։

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն մի հայտարարություն հրապարակեց, որում ասված էր. «Սահմանադրություն. ահա միակ իրական միջոցը՝ վերջ տալու միապետական շարագործ իշխանության զեղծումներին, որին Տաճկաստանի մի ծայրից մինչև մյուս ծայրը, ամեն օր զոհ են դառնում քրիստոնյաներն ու մահմեդականները»[53]։

Կարինի մահմեդականները, լսելով, որ հայերը որոշել են գաղթել, դիմեցին կուսակալին, թե պետք է հայերին օգնել, որովհետև մենք առանց հայերի չենք կարող ապրել։

Կոտորածի հետևանքով, վկայում է «Новое время» լրագիրը, պետական գանձարանը դատարկվեց։ Աշխատավարձ չէին ստանում ոչ միայն զինվորներն ու ստորին ծառայողները, այլ նաև բարձրաստիճան պաշտոնյաները։ «Նույնիսկ սուլթանի խոհարարները, աշխատավարձ չստանալու համար, գործադուլ արեցին»։

Վատացել էր կառավարության հարաբերությունները արաբների հետ։

Երիտթուրքական թերթերը հայերին կոչ էին անում. «Մի կողմ նետեք ազգային ատելությունը, և ձեռք ձեռքի տալով՝ տապալենք երկիրը քանդող բռնակալին...»։

Թուրքական «Բարենորոգչական դաշնակցություն» կազմակերպությունը հունիսի 8-ին դիմում հղեց մեծ տերություններին. «Մենք ազատ երկրում՝ տարագիր, հույս ունենք մարդասիրություն հարուցել ձեր մեջ այն հավարավոր դժբախտների նկատմամբ, որոնք հեծում են (սուլթանական) ճիվաղների ճանկերում։

Մինչև ե՞րբ է Եվրոպան այս անպատվությունը հանդուրժելու, ժամանակը չէ՞ գահընկեց անել և ազատել բավմատանջ ժողովրդին։ Դավաճան Համիդի սրով հեղված արյունը պետք է հավիտյա՞ն հոսի»։

Քղիում կայմակամը հայերին 300 հրացան տվեց, որով նրանք հաջողությամբ պաշտպանվեցին քրդերի ու չերքեզների հարձակումներից։

Պոլսի Ֆաթիհ մզկիթի պատին առաջադեմ թուրքերը գրեցին, որ հայերի նկատմամբ թշնամական դիրք չպետք է ունենալ, որովհետև նրանք «մեր բարեկամներն են եղել, բայց մենք չենք հասկացել։ Նրանց թշնամությունը թուրք ժողովրդի դեմ չ՝, որոնց իրենց եղբայրներն են համարում, այլ սուլթանի կործանարար վարչության դեմ»։

Կայսրության ռազմական մինիստր Ֆուադ փաշան ձերբակալվեց՝ Գատի գյուղի հայերին պաշտպանելու համար։

«Մեշվերեթը» գրեց. «... Մի՞թե Թուրքիան հազարավոր քրիստոնյաներին կուլ չի տվել։ Ճիշտ չէ, որ սելջուկների արյունը անխառն է մնացել։

Թուրքիայի ինքնարդարացման քսակը դատարկ է, իսկ պարտքերը շատ են։ Նա պետք է մարի գործած վայրագությունների, ստորացումների պարտամուրհակը»։

Փոխվեց իշխանությունների վերաբերմունքը քրդերի նկատմամբ։ Պոլսից Լոնդոն ու Փարիզ գրում են. «Թուրքերը պատրաստվում են ընկճելու քրդերին, որոնք հայկական ջարդերից հետո խիստ անբարոյական են դարձել... Առաջին անգամ է, որ համիդիեները հարկ պետք է վճարեն»։ «Քուրդ բեյեր և համիդիեների պետեր են այստեղ հետաքննվում ու պատժի ենթարկվում։ Կառավարության աչքում այժմ քրդերը փուշ են դարձել, որովհետև ապստամբական ուղի են ընտրել՝ անկախության հասնելու համար»[54]։

Ելազիզ մեծ մտահոգություն պատճառեց Կահիրեում հրատարակվող «Քրդստան» թերթը։

Ընդհանրապես, քրդական շարժումների մասին լուրերը

պալատին սարսափ էին պատճառում։ Քրդերի և հայերի միասնության գաղափարն իսկ սուլթանին կատաղության էր հասցնում։

Մի թուրք նկատել է. «Եթե հեղափոխությունը քրդերի շրջանում էլ ծավալվի, ապա դա մեզ համար ամեն ինչի վերջը կլինի»։

Դերսիմի քրդերը հրապարակավ ջարդերի պատասխանատվությունը դնում էին կառավարության վրա։ Նրանք հարձակվեցին մի քանի թուրքական գյուղերի վրա։

Հայկական հարցը նորից դարձավ եվրոպական դիվանագիտության երևակայության սնունդ։ Նորից հայ ազգաբնակչության թափած արյունը աճուրդի հանվեց մեծ պետությունների շահադիտական նպատակների համար։

Պաշտոնական Եվրոպան անամոթաբար խեղաթյուրում էր 1895—96 թթ. իրադարձությունները։

Սոլսբերին հայտարարեց. «Հայկական կոտորածները տարբեր վայրերի ազգությունների և տարբեր դավանանքների միջև ատելության արդյունք են. սուլթանը մեղք չունի»։

Նա նաև ասաց, թե Անգլիան միայնակ անզոր է Հայաստանի մասին հոգալ։ «Մխիթարական է տեսնել, որ խաղաղությունը որոշ չափով վերականգնված է, որ սուլթանը համաձայնել է մտցնել ռեֆորմներ, և այն իրականացնելու համար պետք է սուլթանին ժամանակ տալ»։

Դրան լիբերալ Հարֆորդը պատասխանեց, որ Սոլսբերին մի ժամանակ դժգոհ «դիվանագիտական սպառնալիքներից, բնության և նախախնամության ուժերին էր կոչում սուլթանի դեմ, իսկ այժմ հրապարակավ մեղա է ասում Թուրքիայի վեհապետին, նրան վշտացրած լինելու համար»[55]։

Նույն Սոլսբերին, նկատի ունենալով Թուրքիան, նշում էր. «Եվրոպայի կողքին փտախտ է բորբոքվել, պետք է այն հեռացնել ամբողջ մարմինը չվարակելու համար»։ («Դրոշակ», 1896 թ., № 20)։

Անգլիական մի այլ քաղաքական գործիչ 1896 թ. հայտարարեց. «Այն փաստը, որ մի քանի հազար հայ է կոտորվել, մեզ իրավունք չի տալիս Հայկական հարցին միջամտելու և ամբողջ Եվրոպան արյան մեջ ներքաշելու»։

Այդ օրերին Վիլհելմ 2-րդը Համիդին ուղարկում է իր ընտանեկան լուսանկարը։ Համիդը հրճվանքի մեջ էր «ճիշտ ժամանակին ստացած նվերի համար»[56]։

Բայց Եվրոպան միայն շահերի և երկրների առուծախով զբաղված կառավարություններով չէր բնորոշվում։ Եվրոպան Եվրոպա էր իր առաջադեմ մտավորականությամբ, այլ ժողովուրդների ցավերը իրենցը համարող աշխատավոր զանգվածներով։ Եվրոպայի առողջ ձայնը լսելի էր ամբողջ աշխարհով մեկ և դրա հետ սուլթանի նման բռնակալն իսկ չէր կարող հաշվի չնստել։

Սոկթանը հանոզում էր Ռուսաստանին, թե հայերը անաբեկիչներ են, Ֆրանսիային՝ անարխիստներ, Անգլիային՝ Իռլանդիայի դավադիրների համախոհներ։ «Հայ հեղափոխականները,— հաստատեց Բ. Դուրը,— եղեռնագործների հսկա ընկերություն են՝ տարածված աշխարհի բոլոր կողմերում։ Նրանք անարկու թշնամի են Եվրոպայի բոլոր օրինական կառավարություններին։ Նրանք դավադրություններ նախապատրաստող միջազգային ընկերության մասն են կազմում»։ («Դրոշակ», 1896 թ., № 23)։

Շվեյցարական թերթերից մեկը, հայերին մեղադրողներին նկատի ունենալով, գրում է. «Այն, որ նման հուսահատ և անօգնական կացության մեջ նրանք ըմբոստացել են սուլթանի դեմ, մի՞թե մեզ իրավունք է տալիս նրանց փնովելու։ Արդյոք նույն ճանապարհով չե՞ն ընթացել բոլոր ժողովուրդները»։ Հազար անգամ իրավացի էր Վիլհելմ Թելը, երբ ասում էր. «Մենք գիտենք, որ քաղաքականապես մեծ ազգ չենք և մեծ ազդեցություն չունենք, բայց երբ հերթը մարդասիրությանը գա, ուրիշի խորհրդի կարիքը չունենք։ Մարդասիրությունը երկրի մեծությամբ չի չափվում»[57]։

Վիեննայի «Նեո Ֆրայե Բրեսեն» գրել է. «Թուրքիան դեռ այն բարբարոս տերությունն է, ինչպիսին եղել է... և ոչ մի տերություն հանձն չի առնի այդ արյունաթաթախ պետությունը պաշտպանելու ամոթալի դերը ստանձնել»։

Եվրոպայի և Ռուսաստանի առաջադիմական ուժերը քննադատության կրակի տակ առան Հայկական հարցում մեծ տերությունների քաղաքականությունը։

Ֆրանսիական «Դեղին գրքում» բերված են Կ. Պոլսում Ֆրանսիացի դեսպան Կամբոնի հետևյալ հեռագրերը.

«Սուլթանը իր խոստումները մտադիր չէ կատարել, որովհետև համոզված չէ, որ Եվրոպան համերաշխ է և հետևողական»։

«Կրետեի հարցը լուծված է, որովհետև սուլթանը ըմբռնում է, որ ապստամբության տեսականությունը տերությունների միջամտության տեղիք կտա։ Հայկական հարցը ձգձգվում է, որովհետև սուլթանը այդ գործում եվրոպական միջամտության լեռջությանը չի հավատում»։

Նոյեմբերի 4-ին ֆրանսիական պառլամենտը ընդունեց սոցիալիստների առաջարկած նախագիծը, որը աշխարհի աշխատավորներին կոչ էր անում ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա Հայկական հարցը շուտափույթ լուծելու համար։

«Դուք,— դիմելով Հանոթոյին՝ ասաց Ժորեսը,— արտահայտվեցիք ընդդեմ նրանց, որոնց անվանում եք «դրսից եկած հայ ագիտատորներ»։ Դուք նրանց եք մեղավոր դիտում այն տանջանքների համար, որ կրում են նրանց հայրենակիցները»։ Մերկացնելով մեծ տերությունների երկդիմի եսասիրական վարքագիծը՝ նա ասաց. «Եվ ինչո՞ւ ենք զարմանում, որ մի քանի հայեր փորձում են հիշեցնել Եվրոպային նրա պարտականությունները...

Սուլթանն է, որ ցանկացել ու կազմակերպել է կոտորածները...

Նա առաջնորդվեց ամենախելամիտ որոշումով՝ Եվրոպային դնել ջարդերի փաստի առջև։ Նա Եվրոպան տեսավ վարանում, երկմիտ... դեսպանները՝ պառակտված, անզոր... նա մարդասպանի շտապողականությամբ գործի անցավ՝ բոլոր առաջ իր կոկորդին դեմ առած «Հայկական հարցից» և Եվրոպական կեղծավոր ձևականություններից ազատվելու համար։

Այո, Եվրոպան թերացավ իր կոչման մեջ՝ իր պառակտվածությամբ, անհագ տենչերով, նախանձով։ Շահերը բաժանելու առուծախի մեջ, իբր մեծ ընդհարումների տեղիք չտալու պատրվակով, նա թույլ տվեց խողխողելու մի ամբողջ ժողովուրդ...»։

«Լռություն մամուլում,— շարունակում է Ժորեսը,— որի մի մասը անտարակույս վարձատրվել է իր լռության համար։ Ամենացավալին՝ լռություն Ֆրանսիայում։

Ինչո՞ւ իրավունքների այս բռնաբարության դեմ մեր լեղուները կարկամեցին, մեր անտարբերությամբ ու հաշտվողականությամբ մենք մեղսակից դարձանք մի ամբողջ ժողովրդի խողխողմանը։

... Պետք է, որ ամեն տեղ եվրոպական պրոլետարիատը իր ձեռքը վերցնի այդ (հայկական) դատը, որպեսզի հարկադրի տե-

ությունների՝ կատարելու մարդկային տարրական պարտականությունները։

... Արդարև, հենց այն Արևելքում, որտեղ արդեն 17 դար է, ինչ քրիստոնեությունը տիեզերական խաղաղություն է ավետում, նույն այդ Արևելքում է, որ ի դերև է ելնում պառաված քրիստոնյա Եվրոպայի սնանկությունը...»[58]։

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՒ

Իսկ ինչպիսի՞ն էր դրությունը Տարոնում ու Սասունում։ Թուրքական հրամանատարությունը Գևորգի ու Մուրադի բանտարկությունը համարում էր իր մեծ հաղթանակը։ Նրանք Մուշ բերվեցին նվագախմբի հաղթական քայլերգի ներքո։ Հեռագրեր հասան սուլթանին, որ ձերբակալված են իր դեմ կռվողների ամենանշանավոր ղեկավարները։

Հայ ազգաբնակչության մեջ հերոսների ձերբակալումը խթանեց հակակառավարական շարժումներ ծավալելու տրամադրությունը։

1894 թ. կոտորածներից մի քանի ամիս անց Սասունի լեռնաշխարհում արդեն հաջողությամբ գործում էին հայդուկային մի քանի խմբեր։ Մեծ թվով սասունցիներ բողոքի երթ կազմակերպեցին։ Լեռներից իջան Մուշ քաղաք և իշխանություններից պահանջեցին ազատ արձակել ջարդերի տարիներին ձերբակալված ազատագրական շարժման մասնակիցներին։ Այդ ձերբակալությունները փորձեցին օգտագործել օտար պետությունները՝ օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու իրենց երկրների շահադիտական նպատակների համար։

Բիթլիսի իշխանությունները կազմակերպեցին Գևորգի և Մուրադի փակ դատ։ Գևորգին դատապարտեցին 15 տարվա, իսկ Մուրադին 101 տարվա բանտարկության՝ «Նորին վեհափառություն Սուլթանի դեմ ապստամբելու» մեղադրանքով։ Գևորգը, որի 25 տարին նոր էր լրացել, Մշո Սվարի ղշլասի բանտում մնաց 20 ամիս։

Ոստիկանները նրան ենթարկեցին մարմնական ու հոգևոր ահավոր տանջանքների, բայց նա արիությամբ տարավ դրանք և ելք էր փնտրում փախուստի համար։ Ինչ-որ կերպ ձեռք գցած մետաղով նա փորձում էր ծակել բանտի պատը։ Պատից հանած

մեծ քարերը գլխատակն էր դնում, իսկ հողն ու փոքր քարերը հավաքում գրպանում և բռի մեջ։ Երբ օրվա ընթացքում մեկ անգամ բանտախցից բակ էին հանում նրան, աղբը թափում էր այնտեղ։

Նրա խցի պատուհանը պատշգամբաձև էր, մի քանի թիզ դուրս էր ընկնում պատից և վանդակի նման կախվում ցած։ Եթե հնարավոր լիներ պատուհանը ծակե՞լ...

Հայդուկի միտքը փախչելու գաղափարը ընդունեց որպես միակ նպատակ։ Աշխատում էր գիշերով, հնարավորին չափ անաղմուկ։ Համբերությունն էր նրա միակ խորհրդատուն։

Արդեն ավարտել էր գործը, երբ պաշտոնավորներից մեկը նրա խցում քարի մանր կտորներ տեսավ։ Բանտախուցը ստուգվեց և անցքը հայտնաբերվեց։ Գևորգը դաժան ծեծի ենթարկվեց և փոխադրվեց երկրորդ հարկ։ Նրա բանտախուցը շուրջբոլոր էր ընկնում պատից և վանդակի նման կախվում ցած։ Դռան անցքից ոստիկանները հեռևում էին։ Գևորգին զրկեցին նաև բացօթյա զբոսանքից։ Բայց նա հուսահատվողներից չէր, կարողացավ բանտապահներից թաքցնել երկաթի կտորները և գիշերը, երբ հերթապահ ոստիկանը, օգտվելով բանտի ղեկավարության բացակայությունից, ննջում էր, սկսեց փորել խցի հատակը։ Նրան հաջողվեց փոքր անցք բացել դեպի առաջին հարկի բանտախուցը, որտեղ հայ բանտարկյալներ էին։ Ապա այդ անցքով թել անցկացրեց և առաջին հարկի բանտարկյալներին հասկացրեց, որ թելի ծայրին լուցկու տուփ կապեն։ Պահանջվեց մի քանի շաբաթ, որպեսզի Գևորգը կարողանար տուփի վրա տկտկոցների ազդանշանային «բառարան» ստեղծել։ Օգտվելով այդ ինքնատիպ հեռագրային հարմարանքից, նա բանտարկյալներին ներշնչում էր փախուստի գաղափարը։

«Որքան էլ Գևորգը համոզում էր, Մուրադը մերժեց փախուստի առաջարկը»։

Փախուստի օր նշանակվեց 1896 թ. ապրիլի 20-ի գիշերը։ Նա փորելով թուլացրել էր բանտախցի պատուհանի երկաթյա ճաղերը այնքան, որ ուզած պահին կարող էր հանել։ Իր հագուստներից և զանազան փայտերից հյուսել էր պարան։

«Բարեբախտաբար, սարսափելի փոթորիկի և ձյունախառն անձրևի պատճառով մութը թանձր էր։ Գևորգը մեջքին կապեց պարանը, որ ինքն էր հյուսել... ու օձի պես սողաց բարձրությունից»։

Մթության մեջ ոտքը խփեց քարին ու վնասեց։ Հաղթահարելով ցավը, շարժվեց քաղաքից դուրս։ Նրա օրինակին հետևեցին Հովհաննեսը, Ավոն և Խաչոն։

Ժամանակակիցներից մեկը այդ իրադարձությունները նկարագրում է հետևյալ կերպ։

«Սասնո կոտորածից հետո Մշո բանտում ձերբակալված էին մի քանի սասունցի իշխաններ ու երիտասարդներ՝ Մուրադի ու նրա ընկերների հետ։ Ինն ամիս առաջ, երբ սրանց Բաղեշից վերադարձնում էին Մշո բանտ, հայդուկային խմբի անդամներից Գևորգ անունով քաջ երիտասարդին հաջողվում է գողանալ վրանի երկու ցից և մի պարան։ ... Գարնանը դեռ ձյունը լրիվ չէր հալվել, նրան հաջողվում է բանտից փախչել... Ինքը՝ Գևորգը, տալվորիկցի Խաչո անունով երիտասարդի հետ, վերջին հարկում բանտարկված, իսկ նրա ընկերները՝ Մշո Մկրագոմ գյուղի Հովհաննեսը և տալվորիկցի Ավո անունով երիտասարդը՝ ներքնահարկում։

Գևորգին մի կերպ հաջողվում է վրանի ցցերից մեկը հասցնել իր ընկերներին։ Որոշված գիշերը Գևորգը բանտի պատը քանդելով պարանով իջնում է։ Ընկերները դեռ չէին հասցրել դուրս գալ։ Սկսվում է սաստիկ անձրև, բանտապահները չեն երևում։ Հաջողվում է ընկերներին էլ դուրս բերել ու փախչել։

Լրիվ մերկ ու բոբիկ հասնում են մի քարայրի, որտեղ մնում են երկու օր։ Երրորդ գիշերը շարունակում են իրենց ճամփան ու ազատվում։

Իշխանությունները գազազած աջ ու ձախ խուզարկում են, բայց իզուր... Նրանց փոխարեն ձերբակալում են մի քանի երիտասարդների, իբր հայդուկներ և նամակատարներ»։

Բանտից դուրս գալուց հետո Գևորգը և մյուսները իմացան այն ահավոր ողբերգության մասին, որ ապրել էր արևմտահայությունը իրենց բանտարկության ընթացքում։

Այժմ նրանք ոչ միայն հավատամքով, այլև իրենց վիճակով դարձան թուրքական բռնակալության դեմ մարտնչող, օջախից ու ընտանիքից ընդմիշտ զրկված, ժայռերին ու անտառներին ապավինած հայդուկներ։

Հայդուկային շարժումը նոր թափով սկսեց ծավալվել։ Արաբոյի դպրոցով անցած, պատերազմի բովում ու բանտային կյանքում թրծված վրիժառուները նորից ապավինեցին հարազատ ժայռերին ու քարանձավներին։ Նրանք լցվել էին մի անսովոր

վճռականությամբ։ Նրանց հետ էին հաղարավոր անմեղ զոհերի գուրը հայցող հայացքները, նրանց հետ էր Սասնո բզկտված ու արնադեղյա հողը։

Փախուստից մի քանի օր հետո Գևորգը գնաց Շենիկ, ուր նրա մոտ եկան իր հին ընկերները՝ Գալեն ու Հագոն։ Շենիկում նա լուր ստացավ, որ իշխան Վարդանը, հակառակ Եղսոյի կամքին, նրան ամուսնացրել է Հեղին գյուղից մի առևտրականի՝ միակնանի Պչուկի հետ։ Իմացավ նաև, որ սպանվել է ալիգոնանցի Լևոնը՝ հայդուկության հիմնադիրներից մեկը։

Մինչ ինքը բանտում էր, Սասունում շատ այլ տեղաշարժեր, փոփոխություններ ու ողբերգական իրադարձություններ էին կատարվել։ Հարկ էր իմանալ իրավիճակը, կապվել լեռնաշխարհում ու դաշտում գործող հայդուկների հետ, մշակել գործողությունների ծրագիր։

Այդ նպատակով նա, իր հետ վերցնելով Գալեին, տեղից տեղ էր անցնում։ Մի տեղում երկար չէր մնում, որովհետև թուրքական իշխանությունները գյուղերը ողողել էին զինվորներով, ոստիկաններով, լրտեսներով։ Բանտից փախածներին էին փնտրում։ Տալվորիկում նրան միացան մի քանի ուրիշ ընկերներ։

Սասունը 1894 թվի կոտորածներից դեռ չէր ապաքինվել, ավերված էր, արնաքամ։ Կոտորածներից հետո ստեղծվել էր նոր իրավիճակ։ Գևորգը տարակուսանքի մեջ էր և դժվարանում էր որոշել իր գործելակերպը՝ ի՞նչ ձևերով ու եղանակներով շարունակել պայքարը։ Մշո Արգավանք գյուղում մի մարդ էր ապրում, անունը՝ Բենո։ Բենոն Տարոնում ու Սասունում ճանաչված մարդ էր ոչ այնքան քաջագործություններով ու անվախությամբ, որքան իր իմաստուն խորհուրդներով։ Ոչ միայն հայերը, այլև թուրքերն ու քրդերը, ոչ միայն հասարակ գյուղացիները, այլև փաշաներն ու բեկերն էին Բենոյի մոտ գալիս նրա իմաստությունները լսելու, նրանից խորհուրդներ ստանալու։ Մի օր Բենոն բանջարանոցն էր մշակում, երբ Արգավանք մտավ կուսակալը՝ իր շքախմբով։ Բոլոր գյուղացիները դուրս եկան նրան գիմավորելու։ Բենոն չգնաց և շարունակում էր փորել բանջարանոցը։

Կուսակալը մարդ է ուղարկում Բենոյին կանչելու։ Բենոն գալիս է բահը ուսին։

— Ողջ աշխարհը հրացան է կրում,— ասում է կուսակալը,— դու ինչո՞ւ ես բահով ման գալիս։

— Փաշա,— պատասխանում է Բենոն,— արար աշխարհի հրացանները մատաղ լինեն էս բահին։ Հրացանի պատճառն ու սնունդը էս բահն է։ Եվ էս բահն է, որ հողի մեջ է թաղում հրացանի գոհերին։

— Բենո, թե որ այդքան խելոք ես, ինձ ասա. դուք, հայերդ, ձեր մի քանի հրացանով ի՞նչ կարող եք անել մեր կառավարությանը, որ այդքան համառությամբ դրանք չեք ուզում հանձնել իշխանություններին։

— Փաշաներդ, մեր դարդերի ու ցավերի մասին հարցնելու փոխարեն, տներն ընկած զենք եք փնտրում։ Հենց էդ է պատճառը, որ մենք զենք ենք ձեռք գցում ու պահում։ Մի մեծ գամփռ շուն հարցնում է կատվին. «Քո այդ ճանկերով ինձ ի՞նչ կարող ես անել, որ քեզ այդպես համարձակ ես պահում»։ Կատուն պատասխանում է. «Չգիտեմ, բայց երբ հարձակվես վրաս, քեզ ճանկռելու եմ»։

Պատասխանը փաշային դուր չեկավ։ Բայց Բենոն, շնկատելու տալով, շարունակեց։

— Ես մի անվնաս գյուղացի եմ։ Ես գնում եմ հողը փորելու ու հողի տակ մեծ ու փոքր մարդկանց, փաշաների ու ռանչպարների գանգեր գտնելու։ Հավատա, փաշա, եթե չլինի իշխանությունն ու հարստություն ունեցողների ճնշումը, բոլոր ռանչպարները խաղաղ, անվնաս մարդիկ են։

Գևորգը գնաց Արդավանք գյուղ՝ Բենոյի հետ խորհրդակցելու։ Բայց Բենոյի փիլիսոփայական-բարոյական բնույթի խորհուրդները նրան շատ բան տալ չէին կարող։ Ուստի, երբ լուր բերեցին, որ Հրայրը Ղզլաղաջ գյուղում է, նա անմիջապես մեկնեց։ Այդ ընթացքում Հրայրը եղել էր Կովկասում, ընդունվել դաշնակցության շարքերը։

Հրայրը Գևորգին խորհուրդ տվեց հրաժարվել հայդուկային կռիվներից և գլխավոր ուշադրությունը դարձնել «ընդհանուր ապստամբության» նախապատրաստությանը։ Այսինքն, պետք էր գյուղերում զինված ջոկատներ ստեղծել, նրանց վարժեցնել և պատրաստել ապստամբության։

Գևորգը Հրայրին չառարկեց, բայց նաև չըմբռնեց նրա ասածի իմաստը։ Իսկ երբ փորձեց իրականացնել նրա ցուցումները, հասկացավ, որ Սասունի պայմաններում այդ տակտիկան ոչ միայն ընդունելի չէր, այլև վնասակար էր։ Որովհետև ինքնապաշտպանության գործող, ժողովրդին օգնող ու նրանից լայն աջակցություն ստացող ջոկատների փոխարեն Հրայրը առաջարկում էր ստեղծել զինված, բայց անորոշ ժամանակով ակտիվ գործունեությունից հեռու, ժողովրդի առօրյային անհաղորդ, այդ առօրյային չմիջամտող խմբեր։

Գևորգի մեջ թերահավատություն ծագեց Հրայրի քարոզչության նկատմամբ, մանավանդ, նրա ականջին էին հասնում լուրեր Աղբյուր Սերոբի հայդուկային խմբի քաջագործությունների մասին։

***

Սերոբը խլաթ գավառի Սոխորդ գյուղի հին ու համբավավոր խչեի տոհմից էր։ Նա տիտանական կազմվածքի, բնական խելքի ու բարձր առաքինությունների տեր էր։ Պատանի հասակից Սերոբը զբաղվել է ձիարշավներով ու որսորդությամբ։ 1886 թվականին Պոլսից վերադառնում է նրա հորեղբայրը, որը մի քանի տարի ապրել ու աշխատել էր այդ քաղաքում և հաղորդակից դարձել ազատագրական գաղափարախոսություններին, վերջինիս պատմածները բորբոքեցին Սերոբի երևակայությունը։ Դեռ պատանի էր, երբ ավագ եղբորից՝ Մխեից, հրացան ու դաշույն նվեր ստացավ։ Մի անգամ միայնակ գյուղ էր վերադառնում, երբ ճանապարհին նրա դեմ դուրս եկան թալանից վերադարձող երկու քրդեր։ Նա անմիջապես հարձակվեց նրանց վրա, մեկին սպանեց, իսկ մյուսին փախուստի մատնեց։ Այդ դեպքից հետո իրար են հաջորդում երիտասարդ Սերոբ Վարդանյանի քաջագործությունները, որ օրեցօր ավելի մեծ անհանգստություն են պատճառում տեղական իշխանություններին։ Նրանք միջոցների են դիմում Սերոբին բռնելու կամ ֆիզիկապես ոչնչացնելու համար։ 1891 թվին համագյուղացիները Սերոբին փախցնում են Պոլիս։ Այստեղից նա անցնում է Ռումինիայի Սուլինա քաղաքը, որտեղ առաջին անգամ հանդիպում է Հրայրին ու Անդրանիկին։ Նրա մասին ժամանակակիցը գրում է. «Սերոբը ճարպիկ ու աշխույժ երիտասարդ էր և ուր գնար, անգործ չէր մնում»։ Նախ մի զբաղմունք է գտնում Սուլինայում. մի քանի ամիս անց առանձին սրճարան է բացում ոչ թե փող շահելու նպատակով, այլ անգործ չմնալու համար։ «Սուլինայում նա պանդուխտ հայության մխիթարությունն ու ոգևորությունն էր, նրանց միությունն

և եղբայրություն էր քարոզում»։ Նրա սրճարանում հաճախ էին բուռն քննարկումներ տեղի ունենում, որին նա ևս ակտիվ մասնակցություն էր ունենում։

Սերոբի կյանքում Հրայրի հետ հանդիպումը վճռորոշ նշանակություն ունեցավ։ Երբ Հրայրը հայ պանդուխտներին պատմեց երկրի վիճակի մասին, Սերոբի երևակայությունը բորբոքվեց և սկսեց պանդուխտներին համոզել վերադառնալ տուն և օգնության հասնել հայրենակիցներին։ Երկիր մեկնելու մտադրությամբ նա Ռումինիայից անցնում է Անդրկովկաս։ Այստեղ Սերոբը 27 հոգուց բաղկացած հայդուկային խումբ է հավաքում և անցնելով սահմանը շարժվում է դեպի Խլաթ։ Դալիբաբայի գծի վրա ջախջախում է իր դեմ ելած թշնամու գերակշիռ ուժերին և լավ զինված ընտիր խմբով 1895 թվի աշնանը մտնում է Խնուս։ Նա հիմնականում գործում էր Բիթլիսում ու Խլաթում, բայց հաճախ էր լինում նաև Սասունում և սասունցիների շրջանում մեծ հեղինակություն ու համբավ ուներ։

Սերոբի խումբը անընդհատ շարժման մեջ էր, գյուղից գյուղ էր անցնում, թշնամու հետ ընդհարումների մեջ մտնում։

Շուտով նա Խլաթում բացարձակ հեղինակություն ձեռք բերեց և դարձավ այդ շրջանի փաստական իշխանությունը։ Մարդկանց փրկելու, կյանք պարգևելու համար նրան տվեցին Աղբյուր մականունը։

Թուրքական իշխանությունները մեծ ուժեր շարժեցին դեպի Խլաթ և շրջապատեցին այն։ Խլաթի տարածքը փոքր էր և ոչ բավականաչափ արագ ու ճկուն տեղաշարժերի համար։ Նկատի ունենալով այս և նաև այն, որ թուրքական զինվորները Խլաթի գյուղերում սկսել էին խժդժություններն ու բռնությունները, գյուղացիներին չվտանգելու համար նա հեռացավ դեպի լեռները, դեպի Նեմրութ։ Նրան հաջողվեց մի քանի մանր ճակատամարտերի ու արագ տեղաշարժերի միջոցով շփոթության մեջ գցել իրեն հետապնդողներին։ Սերոբը ամենուրեք էր և ոչ մի տեղ։

Ըստ եվրոպական թերթերի. «Դեռ 1895 թվի աշնանը իշխանություններին սարսափ ազդող և Խլաթի մի քանի գյուղերը փառավոր կռիվներով փրկող Աղբյուր Սերոբը իր խմբով մնում էր այդ կողմերում։ Աղբյուրի դեմ կատաղած էին թուրքերն էլ, քրդերն էլ։ Նրանց օգնեց մի լրտես, որը իշխանությանը տվեց հայդուկների ցուցակն ու գտնվելու վայրը։ Կայմակամը 30 զինվոր ուղարկեց Թեղուտ և Սոխորդ գյուղերը հայդուկներին բռնելու համար»։

1897 թվի փետրվարի 27-ին Թեղուտը պաշարվեց։ Գյուղը խուզարկեցին, բայց Սերոբը հասցրեց ժամանակին հեռանալ։ Զինվորների մի մասը մնաց Թեղուտում, մյուսները գնացին Սոխորդ, պայմանավորվելով վտանգի դեպքում կրակել և իրար օգնության հասնել։ Սակայն նրանցից առաջ, թուրքերի օղակը անցնելով, թեղուտցի մի երիտասարդ հասնում է Սոխորդ ու Սերոբին զգուշացնում վտանգի մասին։ «Սերոբը դուրս թռավ, ու տեսավ, որ թուրքերը մոտենում են։ Նա կրակելով շարժվեց դեպի Նեմրութ, որը ծածկված էր 5—6 արշին ձյունով։ Նա շուռ գալով բղավեց թուրքերին. «Ամոթ ձեզ, որ նման բազմությամբ ընկել եք հետևիցս։ Տեսաք, թե որքան փամփուշտ կրակեցի, բայց ձեզ սպանելու նպատակ չունեի, սակայն քաջ գիտցեք, մինչև վերջին շունչս, որքան արյունս շարժվում է երակներումս, ձգտելու եմ ձեզ սպանել...»։

Այդ ժամանակ մառախուղն իջավ ու Սերոբին ծածկեց թուրքերի աչքերից։ Նրանք ետ դարձան՝ բքից փրկվելու համար։ Իսկ Սերոբը առաջ շարժվեց դեպի Նեմրութի խառնարանը և երկու օր մնաց նրա տաք ջրերի հարևանությամբ։

Բաղեշից ու Խլաթից նոր զորքեր բերեցին և սկսեցին ամենուրեք խուզարկել։ Սակայն նրան գտնել չկարողացան։

Թուրք զինվորները, երբ Նեմրութի բարձունքներին սև կետ էին տեսնում, բղավում էին. «Նայեք, անհավատը որտեղ է մնացել»։

Քուրդը ասում է. «Սատանի նման ճարպիկ, հնարագետ և ուժեղ է ջանֆիդային։ Գնդակը նրա դեմ չի գնում։ Նա ընկնում է, բայց նորից կյանք է առնում...»։

Զորքերը հարձակվում են Սերոբի հայրական տան վրա։ Նրա մեծ եղբորը՝ Մխիթարին, և եղբոր տղային՝ Սողոյին բռնում են, սաստիկ ծեծում ու բանտ են նետում, իսկ տունը թալանում են։

Հուլիսի 27-ին հասնանցի 30 քրդեր քշում են Թեղուտ գյուղի անասունը։ Սերոբը չորս հոգով հարձակվում է քրդերի վրա և մի քանի հոգու հրացանալարկ անում։ Իսկ երբ քրդերն իմացան, որ իրենց դեմ կռվողների մեջ է Սերոբ փաշան, ուղղակի փախուստի դիմեցին։ Սերոբին բռնելու պատրվակով Բաղեշի վալի Էմերը մի վաշտ համիդիե է ուղարկում Խլաթի գյուղերը։ Սկսում են թալանն ու գազանությունները։

Սերոբը ծրագրում էր միավորել Ախլաթի ու Սասունի հայդուկներին Թուրքերի ու քրդերի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար։ Նա գտնում էր, որ այդ պայքարի ծանրության կենտրոնը նորից պետք է դարձնել Սասունը։ Այդ նպատակով նա 1897 թվի գարնանը գնում է Սասուն։

Գրում է Գևորգը. «Գարնան սկզբին Սերոբն ու Գուրգենը իրենց խմբով եկան Սասուն։ Նրանց գալուց հազիվ տասն օր էր անցել, երբ Դալիբ էֆենդին Սեմալ հասնելով սկսեց խիստ խուզարկություններ կատարել, բայց չկարողացավ ոչ մեկին ձեռ ցցել»։ Հրայրը, Գուրգենն ու Վարդան վարդապետը, նկատի ունենալով, որ Սերոբի Սասունում գտնվելը կարող է նոր կոտորածների տեղիք տալ, նրան առաջարկեցին վերադառնալ Ախլաթ։

Սերոբը համաձայնեց։ Այդ անգամ նա Սասունում մնաց միայն մեկ ամիս։

Բարդ ու քաղաքական իրադարձություններով հագեցած ժամանակներ էին։

Ազատագրական շարժումը նոր վերելք էր ապրում Վանում, Էրզրումում, Բասենում, Խնուսում, հանգիստ չէր նաև Կ. Պոլսում։ Համիդը, օգտագործելով օտոմանյան բանկի վրա կատարված հարձակումը, ուժեղացրել էր հալածանքները։ Պոլսի հայկական թաղերում կոտորածներ տեղի ունեցան։ Ուշադրությունը կենտրոնացնելով այլ շրջանների վրա, թուրքական իշխանությունները հարկադրված էին չտեսնելու տալ Սասունում և Տարոնում ծավալվող շարժումները, նույնիսկ փորձում էին այս շրջանների հայերին սիրաշահել։ Անդրանիկն իր հուշերում պատմում է, որ «տալվորիկցիներից յուրաքանչյուրին սուլթանի հրամանով մի-մի ոսկի, իսկ վերին գյուղերի ժողովրդին ավելի պակաս բաժանեցին... Թուրք պաշտոնյաներն ու քրդերը կվախենային։ Դաշտն ալ կիսով չափ հանգիստ է և ժողովուրդն էլ ազատված»։ Կառավարությունը հայտարարեց, որ Սասունը յոթ տարի հարկերից ազատվում է։

Համենայն դեպս, 1890—94 թվերի դեպքերից թուրքական իշխանությունները հասկացել էին, որ առանց ռազմական լուրջ ուժեր կենտրոնացնելու, Սասունում ռազմական գործողությունների դիմելը վտանգավոր է։ Թուրքերի մտայնությունը իր կնիքն էր դրել նաև քուրդ ցեղապետների վարքագծի վրա, նրանք ևս խուսափում էին հայերի հետ ընդհարման մեջ մտնելուց։

Սակայն, խույս տալով բացահայտ կոտորածներից, սուլթանը չհրաժարվեց Հայաստանը հայերից դատարկելու քաղաքականությունից։ Նա թուրք և քուրդ աղաներին բոլոր միջոցներով շահագրգռեց տիրանալու հայերի գյուղերին ու հողերին։ Զինչին պարտքերի դիմաց հայերի ցանքսերն աճուրդի էին հանվում, իսկ պարտքատերերը նրանց դարձնում էին կիսաստրուկ ծառա։ Հարկեր հավաքող 20—25 հոգուց բաղկացած ոստիկանական և զինվորական հեծյալ ջոկատները գյուղացիների հաշվին էին ապրում, բռնաբարում կանանց և աղջիկներին, բռնի մեթոդներով մուսուլմանություն տարածում։ Հայկական գյուղերում մուսուլմանական տարրեր բնակեցվեցին, որոնք արտոնյալ իրավունքներ ստացան հայերի կյանքի ու կայքի նկատմամբ։ Դիմադրողը սպանվում էր առանց դատի ու դատաստանի։ Հայերը անվճար վարում, ցանում, մշակում էին մուսուլմանների արտերը, նրանք շատ հաճախ էին ենթարկվում թալանի, հատկապես լայն տարածում էր գտել ոչխարների թալանը։

Այսինքն, կոտորածները շարունակվում էին, բայց այլ մեթոդներով։ Փրկվում էին միայն այն գյուղերը, որոնք զինված դամադրություն էին ցույց տալիս։

Սակայն Սերոբի գործունեությունն այնպիսի ծավալներ ստացավ, որ այն լրջորեն անհանգստացրեց թուրքական իշխանություններին և նրանք ձեռնարկեցին մի շարք միջոցներ հայդուկային շարժումը ոչնչացնելու համար։ Նման հանձնարարությամբ 1898 թ. վերջերին Բիթլիս է գալիս նոր կուսակալը, որը բազմակողմանի նախապատրաստական աշխատանքներ է տանում Սերոբին ու նրա խումբը հաշվեհարդարի ենթարկելու համար։

Սերոբը այդ ժամանակ գտնվում էր Բիթլիսից կես ժամ հեռավարության վրա՝ Բաբշեն գյուղում։ 1898 թվի հոկտեմբերի 20-ին գյուղը շրջապատվում է զինվորներով ու ոստիկաններով։ Նրանց են միանում նաև քրդերը։ Սերոբը իր տասնչորս հայդուկներով տեղավորվում է մոտակա բլրի վրա։ Սկսվում է կատաղի փոխհրաձգություն, բայց թուրքերը ոչ մի կերպ չեն կարողանում ընկճել հայդուկների դիմադրությունը։ Նրանք հարկադրված թնդանոթ ու օժանդակ ուժեր են բերում, բայց հայդուկներին հաջողվում է դիպուկ հարվածով սպանել հրետանային սպային ու նրա չորս թնդանոթաձիգներին։ Հակառակ հրամանատարության ջանքերին, թուրքերն ու քրդերը մնում են գետնին կպած

և գրոհի չեն գնում։ Մարտը շարունակվում է մինչև երեկո։ Երբ մութն ընկնում է, հայդուկները աննկատ հեռանում են։ Բաբշենի ճակատամարտում սպանվեցին յոթանասուն թուրք ու քուրդ և մեկ հայդուկ։

Բաբշենի կռվից հետո թուրքական իշխանությունները գործողության մեջ են դնում բոլոր միջոցները՝ զորք, ոստիկանություն, աշիրեթություններ, լրտեսներ, Սերոբին բռնելու համար ոչնչացնելու համար։

Սերոբը ստիպված վաճառեց հայրական տունը, ունեցվածքը և ստացված գումարները տրամադրեց հայդուկներին՝ զենք գնելու։ Նա կնոջ՝ Սոսեի, որդիների՝ Հակոբի և Սամսոնի, եղբայրների՝ Մխոյի և Զաքարի հետ ընդմիշտ հեռացավ հայրենի գյուղից։

Սերոբն իր հայդուկներով ու ազգականներով տեղափոխվեց Սասուն։ Երբ նրա հիանալի զինված խումբը երևաց Սասունում, ոգևորության մի այնպիսի ալիք տարածվեց, որ սասունցիները դադարեցին նկատել թուրքական պաշտոնավորներին ու ոստիկաններին և ճանաչում էին միայն Սերոբի իշխանությունը։

Այդ տարիներին Սերոբը Սասունում, Մուշում և հարակից շրջաններում անառարկելի հեղինակություն էր, ուժի և հզորության մարմնացում։ Դրա համար էլ, երբ նա երևաց Սասունում, այստեղ գործող գրեթե բոլոր հայդուկային խմբերը ու առանձին հայդուկներ շտապեցին նրա մոտ և մտան նրա ջոկատի մեջ։

Երբ Գևորգը իր խմբով հանդիպեց Սերոբին, արդեն այդտեղ էր նաև Անդրանիկը։

«Ես, Գուրգենը և երեք ընկերներ,— գրում է Գևորգը,— գնացինք Կոփ գյուղը։ Սերոբն էլ իր խմբով այնտեղ եկավ, և Անդրանիկը իր ընկերոջ հետ դաշտից վերադարձավ։ Մեր թիվը հասավ 17-ի»։

Սերոբը իր հետ զենքեր էր բերել, գլխավորապես ռուսական մոսին, որը քրդերի սարսափն էր։ Բանն այն էր, որ քրդերը գլխավորապես զինված էին չախմախլի հրացաններով, որոնց կրակի հարվածող ուժի շառավիղը մի քանի հարյուր մետրից չէր անցնում, իսկ ռուսական հրացանով կարելի էր սպանել հազար մետրի վրա։ Դրա համար էլ Սերոբի ջոկատի գնդակները հակառակորդին հարվածում էին, իսկ կրակողը մնում էր անվնաս։ Սերոբը սասունցի հայդուկների մի մասին զինեց իր բերած հրացաններով։

Սերոբը ոչ միայն հայդուկային շարժման կազմակերպիչ ու ղեկավար էր, այլև այդ շարժման սկզբունքները մշակողը ու դրանք գործադրողը։ Նա հայդուկային շարժման տաղանդավոր ստրատեգ ու տակտիկ էր։ Ըստ նրա, հայդուկային շարժման հաջողությունները ռազմական տեսակետից պայմանավորված են հետևյալ սկզբունքներով՝ արագ, կայծակնային տեղափոխություններ, կռվի մեջ մտնել միայն այն ժամանակ, երբ վտանգն անխուսափելի է և ուրիշ ելք չկա, թշնամուն խփել հանկարծակի, և այնտեղից, որտեղից նա չի սպասում։ Մարտը վերջանալուն պես հեռանալ և կորցնել հետքերը։ Սասունի տեղանքը հայդուկի բնական դաշնակիցն է, և հայդուկը պետք է կարողանա այն ավելի լավ օգտագործել, քան թշնամին։ Սերոբի ողջ կյանքը անցավ կռիվների մեջ։ Բայց նա երբեք կռիվ չի փնտրել։ Նրա կռիվները ունեցել են միայն ինքնապաշտպանական նշանակություն։ Սերոբը մի սկզբունք ուներ՝ այնտեղ և այն դեպքում, երբ գոնե փոքր հնարավորություն կա կռվից խուսափելու, պետք է խուսափել։

Սերոբը հայդուկներին բաժանեց մի քանի ջոկատների, որոնք պետք է գործեին լեռնաշխարհի տարբեր մասերում և, օգտվելով քրդերի ու թուրքերի պասիվությունից, հոգ տանեին զինամթերքի ձեռքբերման ու պատրաստման, գյուղերի երիտասարդության զինման ու վարժեցման մասին։ Սերոբին իրենց հպատակությունն ու հավատարմությունը հայտնեցին Սասունի բոլոր իշխաններն ու հայաբնակ գյուղերի տանուտերերը։ Այսպիսով, նրա տնօրինության տակ էին լեռնաշխարհի ոչ միայն զինված ջոկատները, այլև, որոշ առումով. նաև քաղաքացիական կյանքը։

***

Մուշի թուրք կառավարչի լրտեսները անհանգստացնող լուրեր էին բերում՝ սուլթանի իշխանությունը Սասունում ձևական էր դարձել։ Դրության տերը Սերոբ փաշան էր։ Սակայն կառավարիչը չէր համարձակվում ռազմական գործողությունների դիմել։ Նորից հրապարակ նետվեցին օսմանյան պաշտոնավորների սիրած մեթոդները։ Սերոբին սպանելու համար կառավարիչը մեծ գումար խոստացավ։ Անցան օրեր, բայց թուրքական լրտեսներին այդպես էլ չէր հաջողվում կատարել իրենց տերերի հանձնարարությունը։ Այս անգամ կառավարիչը իր մոտ կանչեց քրդական շեկո ցեղի ցեղապետ Խալիլին և նրան շատ ոսկի խոս-

ա.ացավ՝ Սերոբին սպանելու համար։ Այս ցեղի քրդերը հայախոս էին և հնարավորություն ունեին ավելի հեշտությամբ լրտեսելու Սերոբի տեղաշարժերը։ Մի օր, երբ Սերոբն ու Գևորգը Կոփ գյուղում էին, շեկոյի ցեղի մի մեծաքանակ ջոկատ նրանց շրջապատեց։ Պաշարվածներն անմիջապես կրակ բացեցին։ Քրդերը հետ քշվեցին ու դիրքեր գրավելով՝ սկսեցին կրակել։ Սակայն մոսին հրացանն իր գործն արեց։ Շեկո ցեղը առաջին անգամ էր գործ ունենում այդ «սատանի թվանքի» հետ և խուճապի մատնվեց։ Օգտվելով դրանից, Սերոբը հակահարձակման անցավ և քրդերին փախուստի մատնեց։ Այդ կռվում ծանր վիրավորվեց Ադամը։ Նրան հասցրին Գելիեգուզան։ Որոշ ժամանակ անց նա մեռավ Գևորգի ձեռքերի վրա, մեռնելուց առաջ ասելով. «Գևորգ, մի օր անցիր մեր տուն մորս տեսնելու։ Նրան կասես, որ իր մայրական կաթը ինձ հալալ համարի։ Նվիրվեցի հայրենիքին, իրեն մոռացա»։

Գևորգի խմբին էր հանձնարարված զինամթերքի հայթայթման ու հայդուկային խմբերի զինման պարտականությունը։ Նա այդ անում էր մեծ հմտությամբ։ Հաճախ նրա խումբը ռազմամթերք էր բերում նույնիսկ Մուշ քաղաքից, թուրքական զինանոցների հարևանությամբ գտնվող հայերի տներից։ Զենքի մատակարարումը հնարավորություն էր տալիս ակտիվացնելու հայդուկային խմբերի գործունեությունը։ Գևորգը բազմիցս հարկադրված եղավ կռվի մեջ մտնել թուրքական զորամասերի հետ։ Այդ կռիվներում նրան հաջողվեց վճռական գործողությունների ու արագ տեղաշարժերի միջոցով թշնամուն մեծ վնասներ պատճառել։ Տանջակների հասնող այդ մարտական գործողությունների ժամանակ միայն Գալեն վիրավորվեց, բայց շուտով ապաքինվեց։ Այդ կռիվներում իր քաջությամբ ու հնարամտությամբ առանձնապես փայլեց Հագոն (Յագեն)։

Հագոն Խարս գյուղից էր։ Նրա ուսուցիչը եղել էր Մարգար վարժապետը։ Հագոն ու Գալեն Գևորգի ամենամերձավոր զինվորներից էին, նրա զույգ ձեռքերը։ Բայց խառնվածքով Հագոն Գալեի հակապատկերն էր։ Գալեն խաղաղ էր, արտաքուստ ծույլ շարժումներով։ Հագոն՝ եռանդուն ու հետաքրքրասեր։ Գալեի բերանից խոսք պոկելը հերոսություն էր, իսկ Հագոն խոսքաշատ էր, սիրում էր պատմել, երբեմն էլ պատմություններ էր հնարում։

Հագոն կռիվներում զգույշ էր, բայց գործունյա ու հնարամիտ, ընկերների նկատմամբ արտակարգ ուշադիր ու հոգատար։ «Քաղցր լեզու» ուներ և կարողանում էր մարդկանց համոզել։

Ձևաչափ բնավորությունների տարբերությանը, Գալեն և Հագոն

մտերիմ ընկերներ էին։ Գևորգը Հագոյի «քլորոպ լեզուն» հաճախ էր օգտագործում քրդերի շրջանում տարվող աշխատանքներում։ Գևորգից հետո քրդերի համար ամենամեծ հեղինակությունը Հագոն էր։

Սոլուխի ճակատամարտը վերջինը եղավ Հագոյի համար։ Համբացավ նրա խոսքաշեն լեզուն։ Նա իր կյանքով փակեց թշնամու ճանապարհը։

Հայդուկային շարժումն աստիճանաբար իր մեջ ներգրավեց նաև Դաշտի գյուղերը։ Նման խմբեր էին ստեղծվում նույնիսկ Մուշ քաղաքի հարևան գյուղերում, Մշո թուրք կառավարչի, նրա զորքերի ու ոստիկանության քթի տակ։ Կառավարիչը փորձեց գոնե Դաշտի գյուղերում ոչնչացնել հայդուկային ջոկատները և այդ գործը հանձնարարեց Դալիբ էֆենդուն։ Նրան տրամադրվեցին զինվորական ու ոստիկանական ջոկատներ։ Լրտեսների միջոցով պարզելով, որ հայդուկային մի ջոկատ Ցրոնք գյուղում է գտնվում, թուրքական ստվարաթիվ մի զորախումբ պաշարեց այդ գյուղը։ Հայդուկային խումբը ութ հոգուց էր բաղկացած։ Նրանք փողոցներում հարմար դիրքեր բռնեցին, սկսվեց ուժեղ փոխհրաձգություն։ Թուրքերը զգալի կորուստներ կրելով առաջ էին շարժվում։ Զոհվածների թվում էին թուրքական բանակի մի քանի սպաներ։ Պաշարվածները, առանց կրակը դադարեցնելու, նահանջեցին գյուղի ծայրամասը։ Նրանք մտան մի մարագ և շարունակեցին մարտը։ Մարագը գրավելու թուրքերի բոլոր ջանքերն անհաջողության մատնվեցին։ Որոշվեց հրդեհել մարագը։ Դալիբ էֆենդին բարձրացավ մարագի կտուրը և այնտեղից կարգադրություններ էր անում։ Հայդուկները մարագից կրակեցին առատաղի ուղղությամբ։ Դալիբը սպանվեց։ Դալիբի դիակը վերցնելու թուրք զինվորների բոլոր ջանքերը ապարդյուն անցան։ Դիակին մոտեցողներն ընկան նրա կողքին։

Մարագը հրդեհվեց, ներսում եղած հայդուկները հարկադրված դուրս եկան և դռան առաջ շարունակեցին մարտը։ Բոլորը, այդ թվում նաև Գուրգենը, զոհվեցին, բայց իրենց մահով էլ սարսափ տարածեցին թուրքերի վրա, որոնք երկար ժամանակ չէին համարձակվում մոտենալ հայդուկների դիակներին։ Միայն Մկրտիչ անունով մի կտրիճ երիտասարդ հաջողվեց ճեղքել թուրքերի շղթան և հասնել Մեղրագետ։ Գետի ափին նա միայնակ շարունակեց մարտը մոտ 1000 հոգու դեմ։ Երբ փամփուշտները վերջացան, նա վերցրեց դաշույնը։ Թշնա-

մին չէր համարձակվում մոտենալ մահացու վիրավոր կորիճին, մինչև որ գնդակը խոցեց նրա սիրտը։

Գիլակները տեղափոխվեցին Մուշ։ Մի քանի օր քաղաքում մեծ սուգ էր։ Հայերը թաղում էին ութ հայդուկների, իսկ թուրքերը՝ Ցրոնքում զոհված մի քանի տասնյակ սպաների ու զինվորների։

***

Սերոբը խիստ բնավորություն ուներ։ Նրա խստությունները հաճախ դաժանության էին վերածվում, իսկ երբեմն՝ ողբերգական հետևանքներ ունենում։

Այդ տարիներին Սասունում տարածված էր աղջիկ փախցնելու սովորությունը, որի հետևանքով ոչ միայն տղայի ու աղջկա ընտանիքներն ու ազգականները, այլև նրանց գյուղերն էին թշնամանում։

Սերոբը հայտարարեց բոլոր գյուղերում, որ այսուհետև աղջիկ փախցնողները խստորեն կպատժվեն։

Մի օր, երբ Սերոբը իր խմբի հետ գելիեգուզանցի Տեր Քաջի տանն էր, Մակարը նրան ասաց.

— Սերոբ, էսօր աղջիկ փախցրին, որի պատճառով Աղբրիկը և Տալվորիկը թշնամացան Փսանաց գավառի հետ։

— Ո՞վ էր,— զայրացած վեր թռավ Սերոբը։

— Գևորգի հորեղբայր Ավոն փախցրել է Առաքելոց վանքի տնտեսուհի Հերմոյին։

Քիչ հետո եկավ Գևորգը, այստեղ էր նաև Սոսեն։

— Գևորգ, քո հորեղբայր Ավոն աղջիկ է փախցրել,— ասաց Սերոբը։

Գևորգը ցնցվեց։ Նա գիտեր Սերոբի բնավորությունը։ «Տեսնես ի՞նչ կորոշի Սերոբը»,— մտածում էր նա սարսափով։

— Ինքդ պետք է որոշես Ավոյի պատիժը,— անառարկելի տոնով ասաց Սերոբը։

Գևորգը սարսռաց և աղերսանքով դիմեց Սերոբին։

— Սերոբ, քո կարգադրությունն է, ինքդ էլ որոշիր պատիժը։

— Եթե Ավոն քո հորեղբայրը չլիներ, չէր համարձակվի աղջիկ փախցնել, և դրա համար էլ պատիժը դու պիտի որոշես և դու էլ իրականացնես։

— Սերոբ,— դողաց Գևորգի ձայնը,— նրանք ինձ հայրություն են արել։

Սերոբը անհողդողդ էր։ Գևորգը գունատվեց, աչքերը կա-

տաղությունից փայլեցին։ Օդը չէր բավարարում։ Նա արձակեց վերնաշապիկի կոճակները, գլուխը իջեցրեց ծնկներին, մի պահ այդպես մնաց։

— Որտեղ ե՞ն։

— Կողքի մարագում,— պատասխանեց Մակարը։

Գևորգը խելակորույս վեր թռավ և վազեց դեպի մարագը։ Ոտքի հարվածով դուռը բացեց ու կրակեց...

Նա մի մռնչյուն արձակեց և մոլոր քայլերով հեռացավ։ Ոչ ոք չիմացավ, թե ուր գնաց։ Նա այլևս Սերոբի մոտ չվերադարձավ։ Օրեր ու ամիսներ մենակ թափառում էր Շուշնամերկի անտառներում։ Եվ երբ նրա մոտ եկան հայդուկ ընկերները, Գևորգին գտան ողբալի վիճակում, ծերացած, անճանաչելի դարձած։

Մարտական ընկերները աստիճանաբար նրան ապաքինեցին, և նա նորից մտավ պայքարի բովի մեջ։ Այդ օրերին էր, որ ս. Հովհաննու վանքից նրա մոտ եկավ Ստեփան վարդապետը.

— Գևորգ, եկել եմ ասելու, որ Եղսոյի վիճակը ծանր է։ Նա լքել է ամուսնուն և փախել վանք։ Դու գիտես, որ վանահայր Մկրտիչը իշխան Վարդանի հորեղբայրն է։ Նա Եղսոյին գանակոծեց և պահանջեց վերադառնալ ամուսնու մոտ։ Սակայն ոչ ծեծը և ոչ էլ խրատը չօգնեցին։ Նա անընդհատ կրկնում էր «Սպանեք։ Ես տուն չեմ դառնա»։ Վանահոր կարգադրությամբ Եղսոյին գցեցին խոհանոցում աշխատող կանանց մեջ և օր չի լինում, որ նա ծեծի ու վիրավորանքի չենթարկվի։

Մութն ընկնելուն պես Գևորգը շարժվեց վանք, անցավ պարսպի վրայով և ուղիղ գնաց վանահոր խուցը։ Վերջինիս արթնացրեց ու սպառնաց.

— Եթե Եղսոյին բան պատահի, եթե նրան ծեծեք կամ վիրավորեք, ձեր միաբանությունը քարուքանդ կանեմ։

Մինչ վանահայրը կըմբոներ նրա խոսքերի իմաստը, Գևորգը դուրս եկավ ու հեռացավ վանքից։

Մի քանի օր անց Խուլբից վերադառնալիս, ճանապարհին Գևորգի դեմ ելան Խիանքի ցեղապետի զինված ջոկատները (ղուլամները)։ Գևորգը նախահարձակ եղավ։ Սկսվեց դիրքային կռիվ։ Այս կռիվը դիտում էին մեծ թվով քրդեր և հիացած նրա քաջությամբ Գևորգի մասին երգ հորինեցին. «Գևորգ, ափսոս, որ հայ ես»։

Գևորգը չափազանց համեստ մարդ էր, չէր սիրում իր մա-

սին խոսել և չէր կարողանում տանել, երբ իրեն զրվում էին։ Հարաբերությունների մեջ բացառիկ հասարակ էր, պարզ ու շիտակ, իշխանություն ցույց տալու կամ ձևանալու թշնամի էր։ Ոչ մի ձգտում չուներ իշխանություն ունենալու, մանավանդ, առաջին դեմք լինելու։ Նա քաղաքական ճամարտակություններ ու բանսարկությունների կատաղի թշնամի էր, տանել չէր կարողանում «կուսակցություններ խաղացող» եսասերներին։ Նա զինվոր էր, մարտիկ և իր կյանքը անմնացորդ նվիրել էր իր ժողովրդի ազատագրությանը։ Նրա կյանքի բարձրագույն նպատակն էր. «Լաո, լիներ Հայաստան, ես բոստան ցանեի, դու հյուր գայիր և ես վարունգ հյուրասիրեի»։ Նա չէր սիրում նաև իր մասին հորինված երգերը և երբ այդ երգերը երգում էին, ասում էր. «Իմ վրա երգեր մի կապեք։ Ես բոստանչու տղա բոստանչի եմ։ Ինձ բահ տվեք»։

Մի պատառիկ ևս Գևորգի փիլիսոփայությունից։

«Շատերը հարցնում են, թե խմբերով լեռներն ընկնելով և հեղափոխություն կատարելով ազգ կազատվի՞։

Ազգի ազատությունը դյուրին գործ է, եթե սուտ հույս չդնեք հանգիստ կյանքի վրա, որը չունեք, քանի թուրքի ձեռքի տակ եք, և չխաբվեք հարստություններով, որ ձերը չէ։ Մտածեք, որ մեր կյանքը կարճ է, շատերը մեռնում են չծնված, շատերը՝ խելքի չեկած ու աշխարհ չտեսած։ Տեսնողներն էլ ապրում են շատ-շատ 50, 60 կամ 70 տարի։ Երբ էլ լինի՝ մեռնելու ենք։ Բայց եթե չսպասենք աստծո կամքին և ուզենանք մեր կամքով մեռնել՝ այն ժամանակ կազատվենք։ Աստված մեզ ազատում է մարդ արարածի կենաց տանջանքներից, իսկ մարդը իրեն ազատում է մարդու փորձանքից... Թե որ բոլոր հայերը երեկոյան ուխտ անեն մեռնել, առավոտյան արևը դեռ չծագած՝ ազատ կլինեն»։

Երբ կռվի մեջ չէր, Գևորգը աշխարհի ամենախաղաղ ու ամենահամեստ մարդն էր, իսկ երբ կռիվ էր, նա կերպարանափոխվում էր։ Կռվում նա տիրակալ էր, առյուծ, որ իր կեցվածքով բոլորին հարկադրում էր իրեն ենթարկվել։ Նա նեղ օրվա, շարքաշ կյանքի մարդ էր։ Օրերով սոված ու ծարավ էր մնում, անմռունչ դիմանում սառնամանիքներին, բնության բոլոր արհավիրքներին, և երբ ընկերները չէին դիմանում ու տրտնջում էին, ասում էր. «Հայդուկի բախան է այդպես։ Եթե հայդուկ ես, դիմացիր»։

Գևորգի համար ամենաշռայլ ու ամենաբանկալի բանը պարն էր։ Եվ երբ տրամադրությունը լավ էր լինում, նա պարի էր քաշում իր ընկերներին ու պարում էր ինքնամոռաց, պարում ողջ էությամբ։

Մինչև Սերոբի Սասուն գալը լեռնաշխարհում հայդուկների փաստացի ղեկավարը Գևորգն էր, բայց նա սիրով տեղը զիջեց Սերոբին։ Նա գերադասում էր հայդուկապետ ունենալ դրրսից և ամեն ինչ արեց, որ հայդուկները ենթարկվեն Անդրանիկին, իսկ վերջինս, առանց նրա հետ խորհրդակցելու, հարց չէր լուծում։

Գևորգը համընդհանուր հարգանք ու սեր էր վայելում։ Երբ նա որևէ գյուղ էր մտնում, այդ թվում նաև քրդական գյուղ, նրա կյանքի անվտանգությունը դառնում էր տվյալ գյուղի հասարակության պատվի ու պատասխանատվության գործը։ Գյուղի ներսում ու ճանապարհներին, Գևորգի իջևանած տան շրջապատում գյուղացիները շուրջօրյա հերթապահում էին։

***

Թահսին փաշան հնարներ էր որոնում Սերոբին շարքից հանելու համար։ Նրա հայացքը նորից շուռ եկավ դեպի քուրդ ցեղապետները։ Նա նորից իր մոտ հրավիրեց շեկո ցեղի ցեղապետ Խալիլին և նրան նորից առաջարկեց միջոց գտնել Սերոբին սպանելու։

Զմեռ էր։ Սերոբը իր խմբով Գելիեգուզան գյուղի Տեր Քաջի սարում գտնվող գոմում էր։ Խալիլին հաջողվում է ոսկով շլացնել Գեղաշեն գյուղի ռես Ավեին։ Ավեին թույն են տալիս, որը պետք է խառներ ծխախոտի հետ և տար Սերոբին։

Սեմալի մի գոմում թախտի վրա պառկած էր Անդրանիկը։ Նա հոդացավ ուներ և հայդուկ Հարությունի հետ հեռացել էր Սերոբի խմբից։ 1899 թ. նոյեմբերի 11-ի երեկոյան Հարությունը տագնապած ներս ընկավ ու դիմեց Անդրանիկին.

— Թուրքական ու քրդական զորքը Գելիեգուզանի կողմն են գնում։

— Շա՞տ են։

— Հազար հինգ հարյուր-երկու հազար մարդ։

Անդրանիկը փորձեց վեր կենալ, բայց հոդերի ցավից նորից ընկավ թախտին։

— Օգնիր բարձրանամ։

Հարությունի օգնությամբ նա մի կերպ բարձրացավ և գոմի պատուհանից տեսավ զինվորների ու զինված քրդերի մեծ բազմությունը։ Նրանց առջևից մի ձիավոր էր գնում։

— Խալիլն է,— ինքն իրեն ասաց Անդրանիկը,— գնում է Սերոբի դեմ։ Սերոբին դժբախտություն է պատահել, թե չէ Խալիլը չէր համարձակվի ձմռանն այս կողմերը երևալ։ Շտապ հասիր Գելիեգուզան, մի լուր բեր։

Գելիեգուզան։ Ձմռան գիշեր էր։ Խալիլ փաշայի զորախումբը շրջապատել էր գյուղը։ Երբ առավոտյան Սոսեն Սերոբին հայտնեց իրենց կողմը շարժվող զորքերի մասին, նա ուզեց տեղից վեր բարձրանալ, բայց չկարողացավ և վար ընկավ։ Ձեռքը տարավ գլխին, մատների մեջ մազերի փունջ մնաց։

— Գեղաշենի ռեսը մեզ թունավորել է,— գոռաց նա։

Սոսեն ու հայդուկները Սերոբի թևը մտան ու 12 հոգով շարժվեցին դեպի Անդոկ և դիրքեր գրավեցին։ Սկսվեց կատաղի փոխհրաձգություն։ Սակայն քիչ անց հրացանը Սերոբի ձեռքից վար ընկավ։ Սոսեն վերցրեց ամուսնու հրացանն ու խմբի մյուս անդամների հետ կրակ բացեց թուրքերի վրա։ Սպանվեցին Սերոբի երկու եղբայրները և խմբի ևս չորս անդամներ։ Պատմում են, որ այդ տեսնելով, Սոսեն բարձրացավ քարաժայռին ու բղավեց. «Անդրանիկ, Սերոբի տեղը նեղ է, Գևորգի, Մակարի հետ օգնության հասիր»։ Տեր Քաջը իր որդի Ադամի հետ հրացանը ձեռին տնից դուրս եկան թշնամու առաջն առնելու, բայց դեռ մի քանի քայլ չէին արել, երբ մահաբեր գնդակը խոցեց նրան։

Սերոբը սպանված ընկած էր։ Վրա հասած Խալիլը կտրեց մեռած քաջի գլուխը և տվեց իր զինվորներից մեկին։ Գլխատված Սերոբի մարմնի մոտ կանգնած էր ողբացող Սոսեն՝ որդու հետ։ Սոսեն Խալիլին խնդրեց որդուն ձեռ չտալ, բայց Խալիլը կարգադրեց նրան սպանել մոր կրծքի վրա։ Կռվում վիրավորված, որդեկորույս մորն ու ամուսնուն կորցրած դյուցազնուհուն կապեցին ձիու վրա ու գերի տարան։

Ո՞վ էր Սերոբը, այդ ի՞նչ յուրահատուկ դյուցազն էր, որի առաջ սասանվում էին նահանգի իշխանություններն ու զորքը, որի «անունով թնդում էին Բաղեշի ու Խլաթի լեռներն ու ձորերը...»։ Ո՞վ էր այդ Սերոբը, որին տարիներ շարունակ վալիները, բանակն ու աշիրեթությունները ոչ միայն բռնել, այլև վնասազերծել չէին կարողանում, և որը «մեկ այստեղ, մեկ այնտեղ հայտնվելով, պատժում էր ժողովրդի թշնամիներին...

Դա հայ ժողովրդի բարկության սրբազան աղաղակն էր, որ արտահայտվել էր իր զավակի հրաշալի պատկերով»։

Սերոբի գլուխը Խալիլը Մուշ, ապա Բաղեշ տարավ որպես հաղթական ավար և, թուրքական իշխանություններն այն իսկապես ընդունեցին որպես մեծ հաղթանակ։ Հաղթանակի ծիսակատարությունները մի քանի օր տևեցին, որից հետո Սերոբի գլուխը հանձնվեց հայկական եկեղեցուն ու թաղվեց նրա բակում, Մարգար վարժապետի կողքին, իսկ Սերոբի մարմինը թաղվեց Գելիեգուզանի եկեղեցու բակում։ Հինգ տարի անց նրա կողքին թաղեցին Տարոն բարձրավանդակի մի այլ հսկայի՝ Հրայրին։ Նրանց գերեզմանը դարձավ ուխտատեղի ողջ հայության համար։

«Սերոբը,— գրեց Ա. Զոպանյանը «Անահիտ» հանդեսի 1899 թ. № 1—2-ում,— արժանի է, անշուշտ, ոչ միայն հարգանքի, այլև հիացման։ Այդ բաղեշցի հայը նկարագիր մըն էր, ապստամբ ու անվախ հոգի մը. Բաֆֆիի Սահրատը իրականացնող տիպար մը»։ Գերմանացի հետազոտող Վալմար Բելկին են պատկանում հետևյալ խոսքերը. Սերոբը «իսկապես հավատում էր իր հեղափոխական գործով հայ ժողովրդին օգնել կատում էր իր հեղափոխական գործով հայ ժողովրդին օգնել կրոողանալուն, նրան տաճկական կամ մանավանդ քրդական բռնակալությունից ազատելուն... Սերոբը ազատության անհրկյուղ մարտիկ էր»։

Գնդակ որոտաց նոյեմբեր ամսուն,
Պաշարված ենք մենք, իմ սիրուն Սոսե.
Ձենք վեր առնելով, վերջին քաջության
Քո սիրած Սերոբի Ընտրյալ օրն այս է։

Ձայն տվեց Սոսեն. «Սերոբ ջան, ես եմ,
Զինված պատրաստված, ձայնիդ կսպասեմ,
Քեզ հետ կռվելով, քո կողքին մեռնելով,
Ամեն օր, ամեն ժամ պատրաստ է Սոսեն»։

Ավետիք Խաչակյան

ՍԵՐՈԲԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

. . . . . .

Նեմրութա սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթան.
Մենակ Սերոբի աղբյուրը սրտի

Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա—
Ազատ օրերի, դպար օրերի
Մարալ ժողովրդի սրտի մեջ կերթա...

Նեմրութա սարը քառասուն ժեռ ունի,
Քառասունի գլխուն մարմար քարափ կա.—
Էն քարփի վրա արծիվն է նստեր—
Ժեռերի արքան իր գահի վրա,
Ու կառուցի մեջ մի սիրտ է բռնէր,
Եվ զի կկանչե, չորս դին ձեն կուտա
Սարերի արքան ամպերի վրա...
— «Է՞յ, ականջ արե՛ք, հոգե՛ր ու հավքե՛ր,
Կտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մեջ,—
Սիրտը, որ ձեզնեն բանձրանց կթոներ։
Է՞յ, ականջ արե՛ք, սարե՛ր ու ձորե՛ր,
Սերոբ փաշայի սիրտն է կըտցիս մեջ,
Սիրտը, որ ձեզնեն մեծ էր ու խորն էր։

. . . . . .

Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում լո՛ւյս կուտա,
Ու քարէրում, սև հողերում
Թեկուզ թաղեն՝ չի մարի,—
Սուրբ վաթանի, ազգի սիրում
Հուր հավիտյան չի մարի։
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում բո՛ց կուտա.
Սարի սառույց, ձյունների մեջ
Թեկուզ թաղեն՝ չի սառի,
Ժողովրդի ազատ օրվա,
Գատվի սիրում՝ չի սառի,
Հուր հավիտյան չի սառի....

***

Թուրքերը Մուշում իրենց հաղթանակն էին տոնում, իսկ հայերը իրենց մեծ կորուստն էին սգում։ Սերոբի սպանությունը հուսալքության դողով պատեց Սասունն ու Տարոնը։ Թուրք հրամանատարներն ու քուրդ ցեղապետներն աճապարում էին օգտվել այդ վիճակից։

1899 թվի նոյեմբերին թուրքական մի զորամաս և նույն Բշարե Խալիլի աշիրեթությունը հարձակվում են Սպաղանք

գյուղի վրա։ Նրանց դեմ է դուրս գալիս Մակարը իր խմբով, որը դիրքեր գրավելով ժայռերի ծերպերին՝ կրակի տակ է առնում թշնամուն։ Տալով 10 սպանված, Խալիլը հարկադրված նահանջում է և անցնում Սասնո գետի մյուս ափը։ Խալիլը օգնական ուժեր է ստանում և վերսկսում է հարձակումը, բայց նրան չի հաջողվում գետն անցնել։ Խալիլը հարկադրված հեռանում է։

Մակարը Սպաղանք գյուղի իշխանն էր, միաժամանակ՝ գյուղի զինված ջոկատի զեկավարը, Սասունի հայդուկային շարժման հիմնադիրներից մեկը։ Աժդահա արտաքինով, քաջարահասակ, թիկնեղ, խոշոր գլխով ու մեծ աչքերով, դանդաղ, բայց հաստատուն ու վճռական շարժումներով։ Տորք Անգեղի կերպարանքով այս առնական տասունցին օժտված էր լեռնցուն բնորոշ բնավորության գծերով։ Նա նրբանկատ էր և փխրուն սիրտ ուներ, բայց առանձին դեպքերում նրա դաժանությունը սահման չէր ճանաչում։ Անվախ ու քաջ մարդ էր, չէր հապաղի մեն-մենակ թշնամու վաշտերին դիմակայելու։ Խիստ բարքերի ու բարձր պահանջկոտության տեր էր, իշխանական կեցվածք ուներ, և վա՜յ նրան, ով Մակարի զայրույթին արժանանար։

Պարզամիտ էր և անհիշաչար, չէ-ն երեսին ասող էր և զուրկ խորամանկությունից և երեսպաշտությունից։

Ընդոստ հայդուկ էր, ամեն մեկին չէր ենթարկվի։ Բոլոր հարցերում ուներ իր սեփական կարծիքը և հայդուկային շարժման մեջ ինքնավար և անկախ կեցվածք ուներ։ Մարտական գործողությունների ժամանակ բացառիկ կարգապահ ու պարտաճանաչ էր։

Հայդուկային տնական անցյալն ու մեծ վաստակը, շիտակությունն ու բաջությունը, բարությունն ու նվիրվածությունը Մակարին դարձրել էին հայդուկային շարժման ամենահեղինակավոր զեկավարներից ու երախտավորներից մեկը։

Ահա թե ինչու թուրքական իշխանությունները ամեն կերպ աշխատում էին Մակարին իրենց ձեռքը գցել և ոչնչացնել նրա մարտական ամրոցը՝ Սպաղանք գյուղը։

Սերոբի սպանության լուրը առնելով, դեպի Գելի շտապեց նաև Գևորգը։ Անդրանիկն ու Գևորգը անմիջապես գործի անցան։ Որոշվեց նախ պատժել գեղաշենցի ռես Ավեին։

1900 թ. ապրիլյան մի օր Գևորգը շենիկցի Մանուկի ու Ղազարի հետ գնաց դավաճանի տուն։ Երբ Գևորգը վերջնականապես համոզվեց, որ Սերոբին Ավեն է թունավորել, դավաճանի հետ նրա ընտանիքին էլ դաժանորեն պատժեց։ Նրան հաջողվեց Ավեից իմանալ դավադրության մյուս մասնակիցների, մի քանի դավաճանների ու լրտեսների անունները, որոնց բոլորին հետագայում ոչնչացրեց։

Մի անգամ, երբ Անդրանիկն ու Գևորգը անցնում էին Գելիի փողոցներով, բակերից մեկում տեսան ալեհեր, փարթամ մորուքով մի ծերունու։

— Բարև, քեռի,— բղավեցին նրանք։ Պատասխան չստացան։ Բարևը կրկնեցին, դարձյալ՝ անպատասխան։

— Գևորգ, սասունցիները մեզնից երես են դարձրել։ Կամ կպանենք Խալիլին, կամ Սասունում մենք տեղ չունենք։ Սասունցիներին պահողը նրանց հավատն ու ոգին է, եթե դրանք վերանան, Սասունը չի դիմանա,— տխուր ասաց Անդրանիկը։

Կատարվեց աշխատանքի բաժանում։ Անդրանիկն ու Մակարը զբաղվելու էին մարտական ջոկատների վերակառուցմամբ ու համալրմամբ, իսկ Գևորգը՝ զինամթերքի հայթայթմամբ և թշնամուն ահաբեկող պարտիզանական հարձակումների կազմակերպմամբ։

Սերոբի սպանությունից հետո առանձնապես ծանրացել էր Մուշ քաղաքի հայ բնակչության վիճակը։ Քաղաքի հայկական թաղերում շուրջօրյա ոստիկանական հսկողություն էր սահմանված, որ ուղեկցվում էր բռնություններով ու թալանով։ Քաղաքի հայությունը ահաբեկված էր։ Գևորգն իր փոքր խմբով լեռներից իջավ դաշտ և գիշերը մտավ քաղաք, նա ոստիկանության աչքի առաջ անցավ հայկական թաղերով, առևտրականներից մեկի տնից մի քանի պարկ վառոդ վերցրեց և հեռացավ քաղաքից։

1899 թվի աշնանն ու ձմռանը Գևորգը մի քանի ընդհարումներ ունեցավ թուրքական զափթիեների ու ոստիկանների հետ և կարողացավ դրանցից անվնաս դուրս գալ։ Մի անգամ, երբ նա երկու հայդուկի հետ Սերոբի Վերին գոմում էր, արշալույսին շրջապատվում է, բայց հայդուկներին հաջողվում է մարտի մեջ մտնել, սպանել երկու թուրք զինվորի և օգտվելով մառախուզից, դուրս գալ շրջապատումից ու գնալ դեպի Վերին Սասուն։ Մի քանի ամիս անց Գևորգի հետ ճիշտ նման մի այլ դեպք պատահեց։ Սննդամթերք հայթայթելու նպատակով 50 ոստիկաններ շրջապատում են գյուղը, բայց հայդուկները կարողանում են կռիվ տալով ետ քաշվել դեպի լեռները։

Վերադարձի ճանապարհին նա մտավ Շենիկ գյուղ և տեղի խմբին հանձնարարեց պարզել, որտեղ է Խալիլ փաշան և ինչ է անում։ Այստեղ Գևորգին մոտեցավ սուրհանդակը Մոկունք գյուղից և պատմեց, որ Մոկունքում տեր ու տիրական էր դարձել Շերիֆ աղան։ Օր չի անցնում, որ որևէ ավազակարարո գործողություն չկատարեր, սանձարձակությամբ չզբաղվեր։ Գյուղում կար մի գեղեցիկ աղջիկ՝ Եսթեր անունով, որը ծնողներ չուներ։ Շերիֆը գնում է նրանց տուն։ Եսթերը համաձայնվում է նրան ընդունել, իսկ երբ Շերիֆը քնում է, վերցնում է դաշույնը և խրում նրա կուրծքը։ Եսթերը եղբոր հետ Շերիֆի դիակը փաթաթում է վերմակով և թաղում գյուղից ոչ հեռու գտնվող ձորի տիղմի մեջ։

Բնականաբար, թուրքական իշխանություններն սկսում են փնտրել Շերիֆին և մեկ շաբաթ անց գտնում են դիակը։

Եսթերը ձերբակալվում է։ Չնայած նա պատմում է Շերիֆի սպանության մանրամասները և ասում, որ համագյուղացիներն այդ թուրքի սպանության գործում ոչ մի մասնակցություն չեն ունեցել, ոստիկանությունը մեծ թվով մարդկանց ձերբակալեց, այդ թվում՝ 70 կանանց։ Թուրքերը Մոկունք գյուղը թալանեցին։ Բանտարկված մոկունքցիներից 15-ին թունավորելով սպանեցին։ Մոկունքին բաժին ընկած դժբախտությունը մեղմելու համար Գևորգը գյուղի մի քանի խարխուլ տներ այրում է և մեղքը բարդում թուրքերի վրա։ Նա թուրքերին սպառնում է, որ եթե մոկունքցիները բանտից չազատվեն, ամբողջ շրջանը կբարձրանա իշխանությունների դեմ։ Գևորգի համառ ջանքերի շնորհիվ մոկունքցիների մեծ մասը բանտից ազատվեց։

Շուտով Անդրանիկին ու Գևորգին լուր բերեցին, որ Խալիլը Մուշ քաղաքում է։ Գնացել էր կառավարչից իր ծառայության վարձը ստանա և հաջորդ օրը, վաղ առավոտյան, բարձրանալու էր շեկո ցեղի նստավայրը։ Սերոբին սպանելու համար Խալիլին սուլթանը փաշայի կոչում էր շնորհել և պարգևատրել պատվո նշանով։ Նա նվեր ստացավ նաև Ալվառինջ գյուղից գանձվող տասնորդ հարկը։

Խալիլի ճանապարհը անցնում էր Մառիկի կիրճով։ 25 հայդուկներ Անդրանիկի, Գևորգի, Մակարի ու Գալեի հետ շարժվեցին դեպի կիրճը ու դարան մտան։ 1900 թվի նոյեմբեր ամիսն էր։ Պատմում է Անդրանիկը. «Ասացի, որչափ կարելի է, պետք է աշխատել Խալիլին ողջ բռնել, որպեսզի հարցաքննենք նրան, թե մինչև այժմ հայերից ովքե՞ր են եղել նրա լրտեսները»։

Միջօրեին առաջինը կիրճ մտավ թալանված կայքի ու ապրանքների քարավանը, ապա երևաց ինքը՝ Խալիլը, շրջապատված 40 հոգուց բաղկացած հեծյալ խմբով։ Դարան մտածները

թուլեցին, որ քարավանն անցնի և կրակ բացեցին այն ժամանակ, երբ հեծյալ խումբը հավասարվեց իրենց։ Առաջին համազարկից հեծյալների մեծ մասը գետնին տապալվեց։ Սպանվեց նաև Խալիլի ձին։ Խալիլը վայր ընկավ, բայց ոտքը մնաց ասպանդակի մեջ։ Հայդուկները վրա հասան, Խալիլին ոտքի կանգնեցրին, խուզարկեցին։ Գտան 13 հայ լրտեսների անունները պարունակող փաստաթուղթը և ապա Խալիլի գլուխը կտրեցին, գցեցին պարկի մեջ և շարժվեցին դեպի Գելի։ Ուղիղ գնացին այն ծերուկի տունը, որը մի քանի օր առաջ նրանց բարևին չէր պատասխանել։ Ծերուկը նույն դիրքով նստած էր։

— Բարև՛, քեռի։

Պատասխան չկար։ Մոտեցան ծերուկին ու պարկի միջից Խալիլի գլուխը գլորեցին նրա ոտների տակ։ Ծերուկը նայեց նրանց, թույլ ժպտաց ու ասաց.

— Լաո, սասունցուն միայն մի գազանից ազատեցիք,— ապա ոտքի կանգնելով կանչեց,— Է՜, Խալիլի գլուխը մի ոչխար արժե։ Ոչխա՛ր մորթեք։

...Զմռան համար ննդամթերք հայթայթելու նպատակով Գևորգը նոյեմբերի սկզբներին իջնում է Մշո դաշտ և գիշերը կանգ առնում Բերդակ գյուղում։ Արյունարբու Ալա և Հյուսնի բեկերը շարժվում են դեպի Բերդակ, բայց նրանք դեռ գյուղ չէին հասել, երբ Գևորգը գյուղից դուրս է գալիս և դիրքեր գրավում լեռան փեշերին։ Կռիվը սկսվում է։ Թուրքերին օգնության են գալիս քրդերը։ Հայդուկները մինչև մութն ընկնելը կարողանում են կասեցնել բազմիցս գերակշռող թշնամու հարձակումները և ապա աննկատ հեռանալ դեպի Սասուն։

Իրերի բերմամբ, Բերդակ գյուղում Գևորգը մի քանի կռիվներ է ունեցել թուրքերի ու քրդերի դեմ, և գյուղին կից ժայռը ստացել էր «Գևորգի քար» անունը։

Այդ օրերին Ալա բեկը 200 հեծյալով շրջում էր գյուղերը, խուզարկություններ կատարում և, երբ հրացան կամ սառը զենք էր գտնում, մարդկանց տանջանքների էր ենթարկում։ Բերդակի ռես Բարսեղը Ալա բեկին հայտնում է, որ Գևորգը իրենց գյուղում է։ Արշալույսին գյուղը շրջապատվում է։ Այդ օրը Գևորգը ջերմում էր և կռվում էր հիվանդագին լարվածությամբ։ Թշնամու հարվածները ետ մղելով, հայդուկներն աննկատ քաշվում են գյուղի ետնամասը։ Գիտենալով իր անվան ազդեցության ուժը, մանավանդ, քրդերի շրջանում, և ձգտելով ժամանակ

շահել, Գևորգը բղավեց. «Ես Գևորգ Չաուշն եմ»։ Թշնամու զորքի մեջ խուճապ առաջացավ, և մինչև թուրքերը կկարգավորեին իրենց ուժերը, հայդուկները նահանջեցին։

Հայդուկները գյուղամերձ այգիներում արածող ոչխարների միջով թաքուն անցան կողքի բլուրը։ Թշնամին արդեն գյուղ էր բերել մոտ 200 զինվոր ու զինված քրդեր։ Թուրքական մի հեծյալ ջոկատ փորձեց շրջանցել հայդուկներին, բայց տեղանքը խանգարեց։ Կռիվը գնալով բորբոքվում էր։ Գևորգը կռիվ մղելով քայլ առ քայլ շարժվում էր դեպի Հավատորիկ գյուղը։

Մինչև երեկո կռվելով և 20 կիլոմետր ճանապարհ կտրելով, Գևորգի խումբը բարձրանում է Ծիրին Կատար։ Թշնամին համոզված էր, որ հայդուկներն իրենց ձեռքում են և շարունակում էր հետապնդել նրանց։

Խումբը բոլոր կողմերից շրջապատված էր։ Մուշից մեծ քանակությամբ մարդիկ էին եկել տեսնելու շորս հայդուկի կռիվը հազարանոց թուրքական բանակի դեմ։ Խումբը ուժասպառ հասնում է Կոբեկի աղբյուր։ Թվում էր, թե փրկության ոչ մի հույս չկար, բայց այս անգամ էլ բախտը ժպտաց Գևորգին։ Հանկարծ արևը պահ մտավ ամպերի տակ, մառախուղը կտրեց մինչև գետին։ Թշնամին աչքից կորցրեց հայդուկներին։ Եվ ապա, ո՜վ հրաշք... Թշնամու թիկունքում հրացանային համազարկի ձայներ լսվեցին։ Թուրքերը կարծեցին, թե հայդուկներին օգնական ուժեր են գալիս և խաչաձև կրակի տակ ընկնելու վտանգից խուսափելով փախան։ Ոչ մի օժանդակ ուժ էլ չկար։ Հազոն էր, որ Մուշից հանձնարարությամբ Գևորգի մոտ էր գալիս, և ուշադրություն չդրավելու համար ցնցոտիներ էր հագել ու ուսից մաղ կախել։ Տեսնելով թուրքական զորքերին, նա ճանապարհից դուրս է գալիս, ձորը մտնում և ծպտված առաջ շարժվում։ Քարերի մեջ մի սպանված թուրք զինվոր է տեսնում։ Մոտենում է, նրա հրացանն ու փամփուշտները վերցնում, ապա, դիրք գրավելով, կրակ բացում թուրքերի վրա։

Այս կռվի թողած տպավորությունը ցնցող էր։ Այն վկայում էր պարտիզանական կռիվներ մղելու Գևորգի փայլուն տաղանդի մասին։ Հարյուրավոր թշնամիներով շրջապատված, շորս հայդուկներից երկուսը կրակում էին, իսկ մյուս երկուսը բարձրանում սարը։ Վերջիններս դիրքեր են գրավում և սկսում կրակել, որպեսզի մյուս երկուսը կարողանան իրենց դիրքերը թողնել և նահանջել։ Ու այդպես ամբողջ օրվա ընթացքում։

Բերդակի կռվից հետո Թուրքական իշխանությունները այդ գյուղում մի ջոկատ զինվոր թողեցին հայդուկների դեմ տայքարելու համար։ Չնայած դրան, Գևորգը մի քանի օր հետո իր խմբով վերադառնում է Բերդակ, խմբի անդամներին թողնում գյուղից դուրս, մենակ մտնում է գյուղ և արհամարհելով Թուրքական ջոկատի ներկայությունը, ուղիղ գնում է դեպի դավաճան Բարսեղի տուն։ Նրան տնից դուրս է կանչում և տեղնուտեղը սպանում։

Խալիլի գործակալների ցուցակում էր նաև մշեցի Ռուբենը։ Այս դավաճանը բնակվում էր Մուշի Թուրքական թաղում և խուսափում էր հայերի հետ հանդիպելուց։ Գևորգը քրդի տարազ հագած մտնում է Մուշ, գնում Թուրքական թաղամաս և սպանում Ռուբենին։ Մինչ ոստիկանությունն ուշքի կգար, Գևորգն արդեն անհետացել էր։ Այդ ահաբեկչությունը Մուշում սարսափի մթնոլորտ ստեղծեց։ Քաղաքում արտակարգ դրություն հայտարարվեց։ Չնայած դրան, Գևորգը մնում է քաղաքում, մասնակցում անգի մի խումբ հայերի ժողովին, նրանց հանձնարարություններ տալիս և գիշերն անվնաս հեռանում։ Ճանապարհին հայդուկներից մեկը՝ Համբարձումը, վնասում է ոտքը։ Գևորգը նրան թողնում է Բերդակ գյուղում, իսկ ինքը բարձրանում է լեռը։

Առավոտյան Թուրքերը պաշարում են Բերդակը։ Համբարձումը կաղալով շարժվում է դեպի լեռը։ Թուրքերն աշխատում են նրան կենդանի բռնել և կրնկակոխ հետապնդում են։ Գևորգը սպասում է մինչև հետապնդողները մոտենան ու կրակ է բացում։ Թուրքերը ետ են փախչում, իսկ Համբարձումը միանում է Գևորգի խմբին։

Ձմեռը Գևորգը նորից է Մուշ գնում վառոդ տեղափոխելու։ Նա շալակավորների հետ քաղաքից վերադառնում էր, երբ Բնավի գյուղի մոտ դեմ է առնում Թուրքական մի ջոկատի։ Հայդուկներն անմիջապես համալարկ են տալիս։ Թուրքերը մի քանի զինվոր կորցնելով փախչում են։

Գևորգը մի պարտականություն էր ստանձնել և այն բարեխղճորեն կատարում էր. երբ դավաճանին սպանում էր, նրա որբ մնացած երեխային կամ երեխաներին տանում էր Առաքելոց վանք և կրթության տալիս։

Գևորգը Սիրին Կատար էր հասել, երբ լուր բերին, թե Հրայրը եկել է Շենիկ, հրավիրել իշխանների, տանուտերերի, հայդուկների և դաշնակցական կոմիտեի ղեկավարների ժողով և հայդուկներից պահանջել զենքերը վար դնել և գործողությունները դադարեցնել՝ ի շահ ընդհանուր ապստամբության։

Ժողովին մասնակցել է նաև Անդրանիկը, որ հանդես է եկել Հրայրի պահանջի դեմ։ Հրայրը Անդրանիկին առաջարկել է հեռանալ Սասունից։ Անդրանիկն ու հայդուկները հայտարարել են, որ հրաժարվում են ենթարկվել Հրայրի կարգադրություններին։ Սակայն ժողովում ճնշող մեծամասնություն են կազմել Հրայրին հարողները։

Անդրանիկն ու իր վեց կողմնակիցները զինաթափվել են։

Այդ լուրը ցնցեց, նույնիսկ հավասարակշռությունից հանեց Գևորգին։ Հաջորդ օրը դեռ լույսը չէր բացվել, երբ Գևորգը ճանապարհ ընկավ Շենիկ։ Սեմալում նրա հետ հանդիպելու եկան զինաթափ հայդուկներն ու Անդրանիկը։ Հուզիչ հանդիպում էր։ Հատկապես դառնացած էր Մակարը։ Շուտով Գելիեգուզան գյուղում հավաքվեցին հայդուկներն ու այն տանուտերերը, որոնք Հրայրի գործողություններից դժգոհ էին։ Դիմելով հավաքվածներին՝ Գևորգը առաջարկեց ետ պահանջել զենքերը։ Հրայրը Գևորգի համառությանն ու վճռականությանը ծանոթ էր և ստիպված վերադարձրեց հայդուկների զենքերը։

Հայդուկները Գևորգին խնդրեցին դառնալ իրենց ղեկավարը։ Գևորգը վճռականապես հրաժարվեց և առաջարկեց Անդրանիկի թեկնածությունը։ Անդրանիկը դարձավ հայդուկապետ։

1 «Դրոշակ», 1907 թ., № 8
2 «Հնչակ», 1889 թ., № 3
3 Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988 թ., էջ 244
4 «Հնչակ», 1890 թ., № 10
5 Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988 թ., էջ 244
6 «Դրոշակ», 1907 թ., № 8
7 «Հնչակ», 1892 թ., № 6
8 «Դրոշակ», 1893 թ., № 5
9 «Հնչակ», 1894 թ., № 1—2
10 Ն. տ. № 3
11 Ն. տ. № 13
12 Ն. տ. 1895 թ., № 1
13 Ն. տ. 1894 թ., № 12
14 Ն. տ. 1895 թ., № 1
15 «Դրոշակ», 1895 թ., № 1
16 «Հնչակ», 1895 թ., № 1
17 «Դրոշակ», 1970 թ., № 8
18 Ն. տ. 1894 թ., № 13
19 «Հնչակ», 1896 թ., № 4
20 «Դրոշակ», 1894 թ., № 9
21 Ն. տ. № 14
22 Ն. տ.
23 Ն. տ. 1895 թ., № 1
24 «Հնչակ», 1895 թ., № 14
25 «Դրոշակ», 1896 թ., № 8
26 Геноцид армян в Османской империи, Е., 1982, с. 77
27 ՀԽՍՀ ԳԱ-ի հասարակական գիտությունների ինֆորմացիոն բյուլետեն, 1983 թ., № 3, էջ 5

28 Саркисян Е., — Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.. Е., 1972, с. 202
29 *«Հնչակ», 1895 թ., № 4*
30 *Ն. տ.*
31 *Ն. տ. № 8 և 12—13*
32 *«Դրոշակ», 1895 թ., № 8*
33 *Ն. տ. № 9*
34 *«Հնչակ», 1895 թ., № 15*
35 *Ն. տ.*
36 *Ն. տ. 1894 թ., № 13*
37 *«Դրոշակ», 1895 թ., № 2*
38 *Ն. տ.*
39 *Ն. տ. 1894 թ., № 13*
40 *Ն. տ. № 11*
41 *«Հնչակ», 1895 թ., № 4*
42 *Ն. տ. 1896 թ., № 7*
43 *«Դրոշակ», 1895 թ., № 17—18*
44 *«Հնչակ», 1896 թ., № 4*
45 *Ն. տ. № 2*
46 *«Դրոշակ», 1896 թ., № 9*
47 *«Հնչակ», 1896 թ., № 20*
48 *«Դրոշակ», 1895 թ., № 17—18*
49 *Ն. տ. № 21*
50 *Ն. տ. 1896 թ., № 16*
51 *Ն. տ. 1897 թ., № 16*
52 *Ն. տ. 1896 թ., № 11*
53 *Ն. տ. 1898 թ., № 2*
54 *Ն. տ. 1897 թ., № 16*
55 *Ն. տ. 1896 թ., № 14*
56 *Ն. տ. 1896 թ., № 23*
57 *Ն. տ.*
58 *«Հնչակ», 1896 թ., № 20*

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՐԱՍԿԻԶԲ

Աշխարհը թևակոխել էր 20-րդ դարը, իսկ կապիտալիզմը՝ իր զարգացման բարձրագույն փուլը՝ իմպերիալիզմի դարաշրջանը։ Ոչ միայն զարգացած, այլև գաղութային և կախյալ երկրներում վերելք էր ապրում դասակարգային պայքարը։ Միջազգային ասպարեզում դասակարգային հարաբերությունների ծայր աստիճան սրված լինելը և նոր՝ սոցիալիստական գաղափարները 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությանը տվեցին միջազգային նշանակություն, հսկայական դարձրին նրա ազդեցությունը աշխարհի մոտ ու հեռու, զարգացած ու թույլ զարգացած հասարակությունների վրա։

Բացառություն չէր կազմում նաև օսմանյան կայսրությունը, որի սոցիալ-քաղաքական վիճակը նրան ընդհուպ մոտեցրել էր բուրժուական հեղափոխությանը։

Թուրքիան ծայր աստիճան հետամնաց երկիր էր։

Կայսրության զարգացումը կասեցնող պատճառները ավելի խորացան 20-րդ դարի սկզբներին։ Իրողություն է, որ Թուրքիայի միայն ծովափնյա շրջաններում էին զարգացել ապրանքային-կապիտալիստական հարաբերությունները, որոնք ոչ մի կերպ չէին կարողանում խթանել կայսրության արտադրողական ուժերի զարգացումը տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր ու ազգային դաժան շահագործման ու զանգվածային հետապնդումների պատճառով։ Դրա համար էլ գյուղացիության քայքայումը չէր զուգակցվում բանվոր դասակարգի ձևավորման պրոցեսի հետ. այդ քայքայումը ավելի շատ ձևավորում էր լյումպեն պրոլետարական տարրեր։ «Ֆաբրիկաների փոխարեն,— գրել է ռուս հրապարակախոս Գոլոբորոդկոն,— երկիրը մինչև

օրս լցված է հնագույն տիպի մանուֆակտուրաներով՝ նախնադարյան մեքենաներով և ձեռքի գործիքներով, որոնցից Եվրոպան ազատվել է մոտ 100 տարի առաջ... Թուրքական արհեստները զարգացման այն փուլում են, ինչ փուլում եղել են մի քանի դար առաջ»[1]։ Թուրքական պրոլետարիատի թիվը չէր անցնում 40—50 հազար մարդուց։

Բանվորների իրավազրկությունն ու անպաշտպան լինելը, աշխատանքի վիթխարի պահեստային բանակի առկայությունը, պրոլետարիատի բազմազգ կազմը ձեռնարկատերերին հնարավորություն էին տալիս նրանց ծանրագույն շահագործման ենթարկել։ Աշխատանքի ժամերը սահմանափակված չէին և հասնում էին մինչև 13—16 ժամի, իսկ օրվա աշխատավարձը կազմում էր 8—16 պիաստր։ Աղետալի վիճակում էին Կ. Պոլիս և այլ ծովափնյա քաղաքներ պանդխտության մեկնած 100—150 հազար հայեր, որոնց ճնշող մեծամասնությունը բեռնակիր էր։ Աբևելյան նահանգների քաղաքներում բանվորների վիճակն ավելի ծանր էր։ Դրան գումարվում էին բռնությունները, կյանքի և կայքի անվտանգության իսպառ բացակայությունը։ Ոստիկանությունն ու ժանդարմները, բաշիբոզուկների ավազակախմբերն ու համիդիները մոլեգնում էին կայսրության ամբողջ տարածքով մեկ, բնում խեղդելով ամեն մի շարժում ու դժգոհություն։ «Աբդուլ Համիդը,— գրում է խորհրդային գիտնական Ա. Միլլերը,— օրինական էր դարձրել հայերի, բալկանյան քրիստոնյաների և մյուս ազգային փոքրամասնությունների բռնադատումը և դրանով վաստակել «արյունարբու սուլթան» մականունը»[2]։

1902 թ. հունիսի 26-ին Բեռլինում կայացած բազմամարդ միտինգում Բեռնշտայնը հայտարարեց. «Թուրքիայի ամբողջ վարչական համակարգը միայն մահ է բերում հպատակ ժողովուրդներին... Որո՞նք են, արդյոք, թուրք ժողովրդի «լավ հատկանիշները», որ ոմանք հաճախ շեշտում են...

Եթե այլևայլ ցեղեր թուրքերի հպատակության տակ դարերի ընթացքում պահպանել են իրենց կրոնն ու ազգային արժեքները, դա թուրքական բարության վկայությունը չէ, այլ այն բանի, որ թուրք ցեղը, որ միայն նվաճող տարր է, անընդունակ է եղել ուծացնել այլադավան տարրերը»[3]։

«Լա ֆեդերասիոն օտոմանը» անդրադառնալով օսմանյան վարչակարգին՝ գրեց. «Իր ամբողջ գոյության ընթացքում Տաճ-

կաստանը կարողացել է նվաճել, բայց երբեք չի մտածել իր վարչակարգը բուժելու ուղղությամբ»։

Հանդես գալով Հռոմում կայացած բազմամարդ միտինգում, Անատոլ Ֆրանսն ասաց. «Մի հրեշ, որը սարսափում է իր ոճիրներից և իր վախը վանում է նորանոր ոճիրներ գործելով։ Աբդուլ Համիդ Բ. 1893 թ. մինչև 1896 թ. խողխողել է 300 հազար հայ և այն ժամանակից ի վեր, գարշելի զգուշավորությամբ, պարբերաբար ջանում է բնաջնջել այդ ժողովրդին»[4]։

Սուլթանից երես էին դարձրել ոչ միայն աշխատավորական-դեմոկրատական ու բուրժուական տարրերը, այլև կառավարող շրջանների մի մասը։ Համիդի կառավարության հիմքերը խարխլվել էին։ Միայն իմպերիալիստական տերությունների բարյացակամությունն էր օսմանյան կայսրության գոյության պատվարը։ Կարևոր է նաև այն փաստը, որ կայսրությունում բուրժուական արտադրահարաբերությունների զարգացման մեջ թուրքերը գրեթե մասնակցություն չունեին։ Նրանք իրենց մենաշնորհն էին դարձրել քաղաքական և ռազմական ասպարեզները, իսկ տնտեսական կյանքը թողել էին հպատակ ժողովուրդներին։

Իթթիլաֆ կուսակցության ղեկավար Սաբահեդինը գրում է. «Մինչ նվաճված ազգերը զբաղվում էին հողագործական, ճարտարապետական և առևտրական աշխատանքներով, թուրք տարրը լքում էր իր օջախը, թողնում իր հողերը, ցաք ու ցրիվ լինում ամեն կողմ թե՛ իբրև զինվորական, թե՛ իբրև պաշտոնյա...»[5]։

Ֆ. Էնգելսի դիպուկ բնորոշմամբ՝ թուրքերը առևտրին մասնակցում էին միայն «քարավանները թալանելով։ Այժմ, երբ նրանք դարձան քիչ ավելի քաղաքակիրթ, մասնակցությունը արտահայտվում է հնարավոր կոմայական ու հարկերի բռնի գանձման մեջ... Հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը»[6]։ Բացի այդ, թուրքերը կազմում էին կայսրության ազգաբնակչության միայն 1/3-ը և թուրք ազգի ձևավորումը ետ էր մնացել կայսրության կազմում եղած մյուս էթնիկական խմբերից։

«Թուրք...— գրում է Ա. Միլլերը,— մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը տիրապետող դասակարգերի բառապաշարում նշա-

նակում էր ոչ թե էթնիկական և ազգային պատկանելություն, այլ թուրք «մուժիկի», «մուժլանի», «տգետի» արհամարհական մականուն»[7]։ Թուրքական բուրժուազիան բացառապես առևտրական բուրժուազիա էր, որը մի կողմից թույլ էր, իսկ մյուս կողմից սերտ կապերի մեջ էր կալվածատիրական հողատիրության հետ և դրա համար էլ իր առաջ խնդիր չէր դնում ոչնչացնելու ֆեոդալական արտադրահարաբերությունները. նրա միակ նպատակն էր վերացնել զուլումի տարիներին բնորոշ բռնությունները։

Նա պայքարում էր ոչ թե սուլթանական կարգերի, այլ Աբդուլ Համիդ 2-րդի ռեժիմի դեմ։ Նրա նույնիսկ առաջադիմական տարրերը՝ Եվրոպայում հեղափոխական գաղափարներով դաստիարակված մտավորականներն ու սպայությունը, ձգտում էին ոչ թե հեղափոխական վերակառուցումների, այլ սուլթանական վարչակազմի շրջաններում բարեփոխումների։ Տնտեսական ասպարեզում նրա նպատակն էր անօրինել կայսրության ներքին շուկան և արտադրական կյանքը՝ դուրս մղելով մյուս ազգերին՝ հրեաներին, հայերին ու հույներին։ Քաղաքական ասպարեզում փայփայում էին մինչև Սիբիր ու Հնդկաստան ձգվող Օտոմանյան կայսրության ստեղծումը։ Մյուս ժողովուրդների թուրքացման կամ ոչնչացման գաղափարը կայսրության երազանքն էր։ Այսինքն, թուրքական բուրժուազիան ոչ միայն չէր հրաժարվում արյունարբու Համիդի քաղաքականությունից, այլև ձգտում էր այն դարձնել ազգային և պետական նպատակ։

Ս. Սապահ— Գուլյանը գրում է, որ թուրքական բուրժուազիան չի կարող կայսրության կազմում եղած ենթակա ժողովուրդների պայքարում նրանց դաշնակիցը լինել, որովհետև «Օսմանյան կայսրության ամրապնդումը նա տեսնում է մի տարամերժ նացիոնալիզմի մեջ։ Նրա այդ ձգտումը այնքան սաստիկ ու բուռն է, որ նույնիսկ ցեղային տիրապետությունը, ենթակա տարրերի հպատակությունը, նրանց ապազգայնացումն ու ձուլումը համարում էր անհրաժեշտություն։ Սա է նրա հայացքների իսկական ելակետը», որքան էլ քողարկվի փքուն բառերի տակ[8]։ Թուրքական բուրժուազիայի ու նրա դասակարգային ծագման այդ առանձնահատկությունը նրան դարձրին կայսրության առաջադիմությանը խոչընդոտող ուժ։

Թուրքական բուրժուազիան նաև նենգ ու խորամանկ էր։ Իշխանության հասնելու համար ձգտում էր ստանալ կայսրության հպատակ ժողովուրդների աջակցությունը։ Ահա թե ինչու ազատության, եղբայրության և հավասարության մասին լոզունգներով դեպի իրեն էր ձգում այդ ժողովուրդներին ու նրանց կուսակցություններին։

Առաքելոց վանքի կռվից հետո թուրքական բուրժուազիան և սպայությունը հետաքրքրվեցին նաև հայկական հայդուկային շարժումով։ 1900 թ. ամռանը սուլթանի քեռայր Մուհամեդ փաշան, որը հեռացել էր երկրից և լույս էր ընծայում «Արևելյան աշխարհ» թերթը, հրապարակեց «Բաց նամակ հայերին», ուր գրված էր. «Աբդուլ Համիդը իր թագավորության 25-ամյակը նշում է Սասունի նոր կոտորածով»։ «Իր անձնական անվտանգությունը նա գտավ ոչ այլուր, քան իր հպատակների արյան մեջ»։ Այդ թուրք գործիչը հայերին, որոնք «ևս Աբդուլ Համիդի զոհերն են», թուրքերի հետ միավորման կոչ էր անում»[9]։ Բայց նման կոչերը իրենց կուսակցական նպատակների համար հայերին օգտագործելու միտումով էին արվում։ Երիտասարդ թուրքերի «մի մասի դավանած գաղափարները ավելի վնասակար են, քան ծեր թուրքերինը»[10]։

Այնուամենայնիվ, թուրքական հասարակության ընդերքում աստիճանաբար ձևավորվում էին ուժեր, ճիշտ է սաղմնային, ճիշտ է երկչոտ ու թույլ, որոնք փորձում էին հասարակության լայն խավերի ուշադրությունը հրավիրել օսմանյան փտած ու դաժան համակարգի վրա։ 1906 թ. օգոստոսին թուրք ազատախոհների հրապարակած մի կոչում կարդում ենք. «... Տարիներ շարունակ ավազակային խմբերին գերի ենք, անզոր ու ընկճված։ Որտե՞ղ է ազատությունը, որտե՞ղ է մարդու հնարավոր երջանկությունը։ Մեր նվիրական հայրենիքը դարձել է անարդ ու ոտնակոխ։ Այս անգութ կառավարությունը միևնույն հայրենիքի զավակներին, տարբեր... բայց եղբայր ցեղերին, միմյանց ձեռքով կոտորել է տալիս։ Եվ չբավականանալով նրանց իրար թշնամի դարձնելով, նրանց կյանքն ու երջանկությունը վտանգի տակ դնելով, բանտերն ու աքսորավայրերը լցնում է հայրենիքի ամենաանձնվեր զավակներով»[11]։ Ինչ վերաբերում է թուրք աշխատավորական տարրերին, մասնավորապես գյուղացիությանը, ապա նա չնայած կալվածատիրոջ դեմ պայքարին «չէր մասնակցում», սակայն «շահագրգռված էր, որ հաղթանակ տաներ հայ գյուղացիությունը, քանի որ այդ

հաղթանակը կթեթևացներ նաև մահմեդական գյուղացիության գրությունը»[12]:

Թուրք աշխատավորությունը նախապատրաստված ու հասուն չէր բուրժուական հեղափոխության համար: Իսկ հայերի, արաբների, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը ընթանում էր միմյանցից մեկուսացած ու մասնատված: Հեղափոխական գաղափարների կրողները հիմնականում սպայությունն էր ու սովորող երիտասարդությունը, որոնք սերված էին կալվածատիրական տոհմերից և, մեծ մասամբ Թուրքեր չէին: Հենց նրանք էլ դարձան Թուրք բուրժուազիայի շովինիստական գաղափարախոսության ձևավորողները: «Պանիսլամիզմը իսկապես Թուրքական նացիոնալիզմի ոգին, էությունն է: Պանիսլամիզմը լոկ կրոնական գաղափարախոսություն չէ, ինչպես համաքրիստոնեությունը, ոչ, այն խորապես և ամենավորապես քաղաքական գաղափարախոսություն է: Թուրքիայի ղեկավար դասակարգն ինքը պանիսլամական գաղափարի իրագործմանն է հետապնդում թե՛ Թուրքիայի սահմաններում և թե՛ դրանցից դուրս, և քանի որ պանիսլամիզմն ու ցեղային և կրոնական խտրականությունը միմյանցից անանջատ գաղափարներ չեն, նրա նպատակն է պետական կյանքը դնել իսլամական ուսմունքի հիմունքների վրա...»[13]:

Շովինիստական այդ գաղափարախոսության կրողը ամենից առաջ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն էր:

«Միություն և առաջադիմություն» կուսակցությանը հաջողվեց կարճ ժամանակում դառնալ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ ծավալված օպոզիցիոն շարժումների առաջատար ուժը: Ձևված այդ կուսակցությունը հասարակության արմատական վերակառուցման որևէ ծրագիր այդպես էլ չառաջադրեց:

1902 թ. փետրվարի 4-ին Փարիզում տեղի ունեցավ կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների «ազատական» կուսակցությունների համաժողով: ԵրիտԹուրքական կուսակցությունն այդ համաժողովում ղեկավար ու տոն տվող ուժ էր և կարողացավ նրա վրին փաթաթել իր քաղաքական լոզունգները: Համագումարը խնդիր դրեց. բոլոր հնարավոր միջոցներով ապահովել օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, «կարգ ու կանոնը և խաղաղությունը» երկրի ներսում, հարգել պետության հիմնական օրենքները, անվերապահորեն ընդունել 1876 թ. սահմանադրությունը, հարգել

սուլթանի կնքած միջազգային դաշնագրերը, այդ թվում և Բեռլինի կոնգրեսի որոշումները:

Համագումարին մասնակցում էին նաև դաշնակցական և հնչակյան կուսակցությունների պատվիրակությունները, որոնք այդ բանաձևին դեմ քվեարկեցին և պահանջեցին կետ մտցնել կայսրության ապակենտրոնացման անհրաժեշտության մասին: Սակայն նրանց առաջարկությունը մերժվեց, որը և վերջակետ դրեց հայ և Թուրք կուսակցությունների համագործակցության այդ առաջին փորձին:

«Հնչակը» 1902 թվականի մայիսին գրեց. «Երիտասարդ Թուրքերը ուզում են բարեփոխել Թուրքիան, վերակենդանացնել, երիտասարդացնել նրան, առանց դիպչելու պետության սահմաններին: ... Երիտասարդ Թուրքերն ասում են՝ հեղափոխենք երկիրը, այո, բայց նախ և առաջ պահպանենք նրա ամբողջությունը»[14]:

***

Կայսրությունում ամենածանրը հայերի վիճակն էր, որն օրեցօր անտանելի էր դառնում: «Համբուրգեր ցայտունգը», նշելով այն գազանությունները, որ «տասնյակ տարիներ կատարվում են Թուրքերի ձեռքով քրիստոնյա Հայաստանում», գրում է. «Երեք միլիոն հայեր ապրում են նստակյաց՝ Թուրք կայսրության մեջ, և տառապում ամենաքստմնելի բռնապետության տակ: Նրանց արգելված է զենք կրել և շրջաշրջել գյուղից գյուղ: Նրանց վրա կարգված է հարկերի կամայական սիստեմ: Ոչ մի քրիստոնյա չի կարող երևալ դատարանի առաջ, և նրա դեմ ամեն մի անիրավություն մնում է անպատիժ: Բռնի զանգվածային կրոնափոխություններ, նրբացած չարչարանքներ, գազանություններ...»[15]:

Սուլթանը 1894—96 թթ. ջարդերից տուժած շրջանների հարկերը «զիջեց»: Սակայն երկու տարի անց «զիջել»-ը փոխեց «հետաձգել» բառով: Իսկ 1899 թվին տեղական իշխանություններին գաղտնի հրաման ուղարկեց՝ հավաքել հետաձգված բոլոր հարկերը:

Ֆրանսիական «Օտորիտե» լրագիրը 1900 թ. մայիսի 20-ին գրել է. «Հայկական նահանգներում և մանավանդ Վանի շրջանում նկատվող հուզումները արդյունք են այն հրեշավոր ձևե-

ին, որով հավաքվում են հարկերը։ Փոխանակ այդ գործը հանձնելու քաղաքացիական գործակալներին..., զինվորներին են դարձրել հարկահավաքներ, որպեսզի նրանք այդ ձևով ստանան իրենց աշխատավարձերը։ Տալիս են այսինչ գյուղը այսինչ գնդին, ասելով. «Կառավարությունը ձեզ այսքա՞ն է պարտք, ստացեք այդ միջոցներից՝ գանձելով նրանց տուրքերը»։ Ուրեմն դժվար չէ եզրակացնել, թե հայերն ինչու են ապստամբում»[16]:

Եվրոպական մամուլի շատ օրգաններ ու հասարակական գործիչներ հասկացան հայերին տնտեսապես քայքայելու միջոցով Հայկական հարցը լուծելու սուլթանի նենգ դիտավորությունը և համաշխարհային հասարակությանը կոչ արեցին վճռականություն դրսևորել այդ դիտավորությունը ձախողելու համար։

Ֆրանսիական «Լը տամպը» գրեց. «Արևելքի լուրերը մի քանի շաբաթ ի վեր մտահոգում են բոլոր նրանց, ովքեր ճիշտ պատկերացում ունեն այնտեղ տիրող դրության մասին, որն արդյունք է եվրոպական քաղաքականության հին ու ձանձրալի «մեղեդիների»։ Պետք է հուսալ, որ ժողովուրդների խիղճը կարթնանա և կառավարություններին կստիպի միջոցներ ձեռք առնել մարդկության դեմ նյութվող նոր ոճրագործությունը կանխելու... Եվրոպան պետք է Բ. Դռան մահմեդական մոլեռանդության և սուլթանի մաքիավելության դիմադրությունը հաղթահարելու ուղիներ որոնի»[17]:

Գարիբալդիական շարժման ղեկավարներից Ջիպրիանին «Լա պետիտ ռեպուբլիկի» 1899 թ. օգոստոսի 15-ի համարում գրեց. «Քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ և օրը ցերեկով կազմակերպված և իրականացված ջարդերից հետո ահա հայերին սպառնում են աքսորել իրենց իսկ երկրից»[18]։

Ահա քաղաքական, սոցիալ-տնտեսական այս խառնիճաղանջ պայմաններում էլ օսմանյան Թուրքիան ոտք դրեց 20-րդ դար։ Դար, որը Թուրքիայի առանց այն էլ խարանոտ ճակատին դրոշմելու էր բոլոր ժամանակների ամենավայրագ մարդասպանի պիտակը։

Մշո առաջնորդ Բարկեն վարդապետը 1900 թվին մի տեղեկագիր կազմեց հայերի վիճակի մասին և ուղարկեց պատրիարքարան։ Այդ տեղեկագիրը բավական է, որպեսզի պատկերացում կազմվի Սասունի ու Տարոնի հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր ծանր վիճակի մասին։

«Սասունը,— գրում է տեղեկագրի հեղինակը,— զեղծումների, անհանդուրժելի կեղեքումների և սոսկալի ոճիրների թատերաբեմ է դարձել։ Այս չարիքները գործվում են զանազան ձևերով և հայ տարրը ոչնչացնելու նպատակ են հետապնդում»[19]: Այս միտքը հիմնավորելու համար նա բերում է մի շարք հավաստի ու համոզիչ փաստեր, որոնք ընդգրկում են հայերի կյանքի գրեթե բոլոր կողմերը։ Նախ խոսվում է երկրագործական բանկի կողմից հայերին թալանելու մասին։ Այդ բանկը «չնչին գումարի դիմաց նրանց մեծարժեք արտերն ու կալվածքները գրավ վերցնելով, պայմանաժամանակն ավարտվելիս գյուղացիներին հարկադրում է դրանք կամ տալ բանկին կամ վաճառել թուրքերին՝ իրական գնից 10—15 անգամ էժան»[20]: Պարհակների, ձրի աշխատանքի և հայ գյուղացուց ձրի վերցրած շինանյութի միջոցով կառուցվում էին հիմնարկներ, վարչական շենքեր, զորանոցներ, մզկիթներ, մեչիթներ, թուրք և քուրդ աղաների ու փաշաների համար տներ ու քոշքեր։ Դրանով չբավականանալով՝ նման օբյեկտների շինարարության համար հատուկ տուրքեր էին նշանակվում, որոնք կոչվում էին «իյանե»[21]: «Հայերի նկատմամբ քրդերի գործադրած հարստահարությունները,— նկատում է Բարկեն վարդապետը,— հանրահայտ իրողություններ էին, սակայն վերջին տարիներին այդ հարստահարությունները կազմակերպված տեսք ստացան»։ Այդպիսի ոչ մի խժդժություն ու գազանություն չէր պատժվում։ «Այժմ մարդասպանությունները սովորական են դարձել...»։

Հայ գյուղացին վերցնում է պանդխտության ցուպը։ 1901 թ. հունվարի 3-ին Մուշից գրում են, որ Կովկասում 4000—5000 մշեցի պանդուխտ կար։ Պանդխտության գնացողների հաշիվ 60 տոկոսն էր ողջ տեղ հասնում։

«Հնչակը» պանդխտության մեկնողների վիճակը հետևյալ կերպ է նկարագրում. «Լեռների կողերի գաղտնի ճանապարհների, մութ ճեղքերի մեջ մեկական գավազան ձեռքներին բռնած, մերկ ու ոտաբոբիկ, քաղցած ու խոցված սրտերով, աղի արցունքով, գլուխները կքած գյուղացիների, ոսկրացած մարդկանց քարավաններ են նկատվում... Թողած իրենց հայրենական օջախը, ընտանիքն ու զավակները, մերկ ու քաղցած, հևիհև, կորաքամակ, դիմում են հեռու, շատ հեռու, մերթ ընդ մերթ խանձող հայացքները ուղղելով դեպի ետ, դեպի Երկիր։ Սասանական լռությունը տիրում է այդ խումբ-խումբ քարավանե-

ին, կարծես խոսել չգիտեն, ձայն-ծպտուն չկա, այդ անմեղ զոհերը, շշմած այս քստմնասարսուռ իրականության առաջ, լայլում ու քայլում են... Ճանապարհի երկայնքով շատերը՝ ընկերներ, հայր, եղբայր ընկնում են շնչասպառ ու մեռնում են, բայց կրկին ձայն չի ելնում։ Սով է, արհեստական սով է մեր երկրում, սա մի դիվանագիտական ճարպիկ խաղ է մեզ բնաջնջելու, արմատախիլ անելու»։

Սասունցիները, որ թուրքական խաբդավանքները զգալու սիրտ ունեին, նկատելով, որ կառավարությունը լեռնաշխարհ մուտք գործելով, «անձեն ու անձուն իրենց խեղդելու և կամաց-կամաց ջնջելու նպատակ ունի», որոշեցին ընդվզել և թեկուզ արյան գնով թույլ չտալ, որ այդ ծրագիրն իրականանա։ Նրանք կանանց միջոցով մի հեռագիր ուղարկեցին Մուշի կառավարիչին. «Եթե ուզում եք մեզ մեր հողից գաղթեցնել, բերել տվեք մի քանի օտար հյուպատոսներ, որոնց հովանավորությամբ հեռանանք այստեղից, իսկ եթե ցանկանում եք զորանոցներ կառուցել և մեզ տեղում թողնել, չենք կարող համաձայնել, որովհետև մեր աշխատող ձեռքերը մեր կանայք ու աղջիկները լինելով, գիշեր ու ցերեկ գրսում են և անպատվվում են զորքերի կողմից և այդ տանել չենք կարող»։

1901 թ. սեպտեմբերի 4-ին «Լը տամպը» գրեց. «... Չորեքշաբթի օրը Էրզրումի 7-րդ զորաբաժնի հրամանատար Մեհմեդ Ալի փաշան ութ կանոնավոր վաշտերով գնաց Սասունի գավառը՝ ռազմական միջոցներով գրավելու։ Փայտամրոցներ պիտի կառուցվեն Տալվորիկ, Սեմալ և Գելիեգուզան հայ գյուղերում»։

Ի վերջո, իշխանություններին հաջողվում է քսանութ կետերում զինված ուժեր տեղակայել և հսկողության տակ վերցնել ամբողջ Սասունը, Տարոնն ու Բաղեշը։

Հունիսի 10-ին Մուշից գրեցին. «Տաճիկ կառավարության և իսլամ տարրի վերջին վճռագիրն է՝ կոտորել Մուշն ու Սասունը... Ինչո՞ւ... Որովհետև Մուշի ու շրջակայքի հայ տարրն աչքի զարնող թիվ է կազմում, որովհետև 95-ի գաղանային կոտորածի ժամանակ Մուշը համեմատաբար քիչ չարդ ու վնաս կրեց...»[22]։

Չիզարի թուրք աղան բացարձակ բռնի միջոցներով տիրացավ Ղզլաղաջ, Սնձնուտ, Ավազաղբյուր և այլ գյուղերին։ Նա բատկանցի քրդերին կոչ արեց. «Իջեք, Դաշտի գյուղերն ավերակ դարձրեք»։

Այս աշիրեթությունից Գառանց Ալոն, որ 1895-ին կոտորել էր շուրջ

400—500 հայ, հարձակվեց Տատրագոմի վրա, կողոպտեց ու ավերեց այդ գյուղը։ Հաջորդ օրը նա հարձակվեց Ս. Հովհաննու վանքի վրա[23]։

Ոստիկան Աբդոլլահը, հայդուկներ բռնելու պատրվակով, բանտարկում է մեծ թվով անմեղ գյուղացիների։ Նրա ոստիկանական խումբը գյուղից գյուղ էր անցնում, խոշտանգում գյուղացիներին, ահ ու սարսափ տարածում։

Մուշում հրավիրվում է քուրդ և թուրք աղաների ժողով, որտեղ բալաքցիների ցեղապետ Ֆերո աղան լիազորություն է պահանջում հայ գյուղերը ոտնատակ անելու և հայդուկներին բնաջնջելու։ Մութեսարիֆը համաձայնում է, բայց ասում է, որ պետք է թույլտվությունը վերցվի վալիից։ Հաջի Ֆերոն գնում է Թիֆլիս, սակայն Ռավա վայրում հայդուկները նրա խումբը շրջապատում ու ոչնչացնում են, քիչ անց սպանվում է նաև Մշո քաղաքապետ Ճիվաղ Խալիլ էֆենդին։

«Բեռլիներ լոկալ այնցայդերը» 1901 թ. սեպտեմբերի 23-ին գրեց. «Սասունը թուրքական շորս փաշաների կողմից այնպես է պաշարված, որ մինչև անգամ կես ժամ հեռու գտնվող Մուշում չեն իմանում, թե ինչ է կատարվում Սասունում։ Ամենածանր բաներ են կասկածում։ Այստեղ որևէ լուր չկա... Ասում են, թե Սասունում մեծ թվով քրդեր կան։ Լուրերի համաձայն, այնտեղի գործողությունները ղեկավարվում է ուղղակի Ելտրզից, առանց կառավարության գիտության։ Պալատը նահանգներ է ուղարկում բազմաթիվ ուլեմներ, որոնց գրգռիչ գործունեությանն են վերագրվում Սասունի նոր դեպքերը։ Ընդհանուր վիճակը նման է հինգ տարի առաջ եղած կոտորածների նախօրյակին տիրող վիճակին»[24]։

«Ֆրանկֆուրտեր ցայտունգը» 1901 թ. սեպտեմբերի 25-ի իր համարում հաստատում է այն փաստը, որ հայկական մի շարք շրջաններ, այդ թվում նաև Սասունը, շրջապատված էին թուրքական բանակի կողմից։ Թերթը նաև նշում է, որ «հայկական հանգամանքներից դեսպաններին ուղարկված հյուպատոսական շատ տեղեկագրեր տեղ (հայաստանեցիներին— Կ. Գ.) չեն հասել։ Ենթադրում են, որ թուրքական իշխանությունները դրանք բռնագրավել են»։ («Դրոշակ», 1901 թ., № 6)։

Լայն ծավալներ ստացան ջանբազարների գազանությունները։ Նրանք հարձակվում էին Սասունի ու Տարոնի հայկական գյուղերի վրա և սպանում ազդեցիկ անձնավորություններին։ Իսկ երբ հայերը նրանց դիմադրություն էին ցույց տալիս, ան-*

* *Իշխանությունների կողմից ստեղծված ավազակախմբեր։*

միջասլես միջամտում էր բանակը և ձերբակալում գենք ունեցող գյուղացիներին։ Սովորական դարձավ իշխանությունների հրահրած անհատական ահաբեկչությունը։

Մուշում պետական ծառայողներից, թուրքերից ու քրդերից հրոսակախմբեր ստեղծվեցին, որոնց առաջ իշխանությունները գաղտնի խնդիր էին դրել ոչնչացնել հայերին։ Այդ հրոսակախմբերը Դաշտի 12 գյուղում սպանեցին 29 հայերի։ Նրանց նշանաբանն էր՝ նախ «պետք է ջնջել հայ տարրը, որից հետո նրա ունեցվածքը մերն է»։

Նրանք հրկիզեցին Մառնիկ հայաբնակ գյուղը, Մուշ քաղաքում փորձեցին հարձակվել առաջնորդարանի ու հայկական թաղերի վրա։ Հայերը բողոք ուղարկեցին սուլթանին։ Պատասխանի փոխարեն Մուշ եկավ Բաղեշի կուսակալը և հայտարարեց, որ գյուղերում կատարված բոլոր չարագործությունների հեղինակը հայդուկներն են։ Ալի բեյը, զինվորների գլուխն անցած, դնաց գյուղերը և բռնություններ գործադրելով ստորագրություններ հավաքեց, որ այդ բոլոր խժդժությունները կատարել են հայդուկները։ Բերդակ գյուղում նա գյուղացիներին հավաքեց եկեղեցում, նավթ բերել տվեց ու հայտարարեց. «Կամ կստորագրեք, կամ գյուղը կհրդեհենք»։ Քիչ անց Կարինից Մուշ է գալիս մի պաշտոնական հանձնաժողով, որին հաջորդում են զանգվածային ձերբակալությունները Մուշ քաղաքում ու Տարոնի գյուղերում։ Կարինից զորքեր են բերվում ու տեղակայվում Դաշտի գյուղերում։

1894—96 թթ. զանգվածային կոտորածներից հետո թուրքական վանդալիզմի առաջին ամենամեծ զոհը դարձավ Սասունի Սպաղանք գյուղը։ Այդ 30—35 տուն ունեցող փոքրիկ գյուղի վրա հարձակումը տեղի ունեցավ 1900 թվի հուլիսի 3-ին։ Գիշերը Խալիլ փաշայի, Քոռ Սլոյի, Ալի փաշայի ավազակախմբերը, չորս աշիրեթություն (մոտ հազար քուրդ) և մի քանի վաշտ ոստիկաններ ու զինվորներ շրջապատում են գյուղը։ Քոռ Սլոն 500 քրդերի հետ դիրք է գրավում Գելիեզուզանի և Տալվորիկի արանքում ու կտրում Սպաղանքի կապը դրսի աշխարհի հետ։

Արշալույսին հնչում է հարձակման փողը, և քրդերն ու թուրքերը լցվում են Սպաղանք։ Աղմուկի վրա հայերը տներից դուրս են թռչում, բայց ով ոտը շեմից հանում էր՝ գնդակահար ընկնում էր։ Կանայք երեխաների հետ զորքին ընդառաջ են գնում,

կարծելով, թե կխնայեն, բայց բոլորին թրահար են անում, չխնայելով նույնիսկ օրորոցի երեխաներին։ Ամբողջ գյուղից փրկվեց ընդամենը 7 հոգի, որոնցից հինգը Մակարի գլխավորությամբ կարողացան ճեղքել թշնամու օղակը և շրջապատումից դուրս գալ, իսկ երկուսը կանայք էին, որոնք նետվեցին գետը և քարերից կառչելով կարողացան մյուս ափը հասնել։ Գյուղը թալանվեց և հրդեհվեց։ Այս հրեշավոր ոճրագործությունը աշխարհի աչքից թաքցնելու համար Սպաղանքը երկար ժամանակ շրջափակման մեջ էր պահվում։ Որոշ ժամանակ անց Խալիլն ու Հուսեինը ոստիկանների հետ վերադառնում են Սպաղանք, քանդում հորերը, դիակները հանում ու այրում։

Միայն մի քանի դիակ չեն այրում՝ իբր սպանվել են ոչ թե սպաղանցիները, այլ հեղափոխականները։ Այս սուտը հաստատելու համար հանրագիր են կազմում և բռնությամբ մի քանի ստորագրություն հավաքում։

Սպաղանքում տեղի ունեցած եղեռնագործության մասին ֆրանսիական պառլամենտում Գ. Ռուանեն ասաց. «1900-ի հուլիսի 8-ին քրդական հրոսակախմբերը 1000 հոգուց բաղկացած զինվորական մի վաշտի հետ... արշալույսին, փողերը հնչեցնելով, անպաշտպան ժողովրդի վրա հարձակվեցին։ Բնակիչները, հանկարծակի եկած և շվարած, լեռնաղաշտն են փախչում և եկեղեցիներում ապաստանում։ Ձեռք ընկածին սպանում են, լինի կին, երեխա, թե ծերունի»։

«Լը տամպը» Սպաղանքի կոտորածների առնչությամբ գրեց. «Այս տեսակ դեպքերի, ինչպիսին Սասունինն է, արդարացումը հնչտ չէ...»։ («Դրոշակ», 1900 թ., օգոստոս)։

1900 թ. սեպտեմբերի 13-ին Փարիզում տեղի ունեցավ Միջազգային սոցիալիստական համաժողով, որը ընդունեց մի բանաձև՝ նվիրված Հայկական հարցին։ Ժողովը «բողոքում է Հայաստանում կատարված բռնությունների, խժդժությունների ու չարդերի դեմ և երկու աշխարհամասերի բանվորներին մատնացույց անելով կապիտալիստական պետությունների ոճրագործ մեղսակցությունը, հրավիրում է (բոլոր երկրների) պառլամենտների սոցիալիստական ֆրակցիաներին միջամտել հոգուտ հանիրավի հարստահարված հայ ժողովրդի, որին կոնգրեսն ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխության հավաստիքը»։

1900 թվի սեպտեմբերի 10—13-ը Անգլիայի Գլազգո քաղաքում տեղի ունեցավ խաղաղության միջազգային 10-րդ համաժողովը, որն ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենա-

լով, որ հայ ժողովրդի ծանր վիճակը բնավ չի բարելավվել, որ Հայաստանում կոտորածներն ու դժդժությունները շարունակվում են, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետությունները ոչ մի կոլեկտիվ քայլի չեն դիմել վերջ դնելու այս քրիստոնյա դժբախտի նկատմամբ պարբերաբար կիրառվող անգթություններին՝ որոշում է. «Բեռլինի դաշնագիրը ստորագրած եվրոպական պետություններին մի խնդրագիր ուղարկել, որպեսզի նրանք պաշտոնական կոնֆերանս գումարեն՝ Հայկական հարցը վճռելու համար...»[25]։

Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը այս համաժողովից անմիջապես հետո մի կոչ ուղղեց Ֆրանսիայի աշխատավորությանը. «Ամիսներ ի վեր ամենահուզիչ լուրեր են գալիս Հայաստանից։ Բազմաթիվ գյուղերում ու նշանավոր կենտրոններում՝ Եղերեկ, Խնուս, Մուշ, Սասուն և երկրի շատ ուրիշ կետերում տեղի են ունեցել առանձնապես նշանակալից ջարդեր և բազմաթիվ նշաններից երևում է, որ մոտ ապագայում իրագործվելու են շարաշուք ծրագրերը։ Այդ նշաններից են հայաշատ վայրերում զորանոցների կառուցումը և զինվորական ուժերի անողոք ծավալումը... Փոքր Ասիայի հայ ազգաբնակչությունը ծայրահեղ ծանր վիճակում է...

Արևմտյան Հայաստանը շարունակում է մնալ, «ամեն տեսակի թշվառության, վայրենությունների, ամենաստոր և ամենազարշելի եղեռնագործությունների թատերաբեմ»[26]։

Անհրաժեշտ է, որ «ֆրանսիական կառավարությունը անտարբերության դիմակը դեն նետի և անի այն քայլը, որով կարող է փրկել հարյուր-հազարավոր մարդկային կյանքեր և գուցե բնաջնջումից փրկի մի ամբողջ ժողովուրդ»։

«Լը տեմպը» սեպտեմբերի 14-ի իր առաջնորդողում գրեց. «Բ. Դուռն ու պալատը ճիգ են թափում հասարակական կարծիքը հանգստացնել, Սասունի վերջին դեպքերին երկու անձանց միջև անշնան կռվի տեսք տալով... Բայց ոչ եվրոպական կառավարությունները, ոչ հասարակական կարծիքը այս անգամ չպետք է խաբվեն։ Դեռ մատիկ անցյալի փորձը ասում է, թե ինչ արժե սուլթանի ու իր կամակատարների խոսքը...

Արդեն վաղուց լուրջ նախազգուշացումներ են լսվում»։

Ժ. Կլեմանսոնն իր «Բլոկ» շաբաթաթերթի № 35-ում գրեց. «Այս անգամ Եվրոպան նախազգուշացված է։ Նա թափված արյան պատասխանատվությունից խուսափելու ոչ մի արդարացում չունի։

Բայց նա անհանգստանո՞ւմ է։

... Հայերի խնդրածն ընդամենը այն է, որ Եվրոպան վերջապես կատարի իր տված խոստումները և սուլթանին հարկադրի իր խոսքին տեր կանգնել։ Այն է՝ երեք տերությունների կողմից մշակված և 1895-ի մայիսի 11-ին սուլթանին ներկայացված բարենորոգումների ծրագրի գործադրումը՝ որոշակի երաշխիքների ավելացումով։ Դրանց կարևորությունն զգացվեց Սասունին հաջորդող կոտորածների ժամանակ։

Այն ժամանակ պետությունների կողմից այս ծրագիրը համարվեց Թուրքիայից պահանջվելիք մինիմումը»։

Սուլթանը նորից ստոր քայլերի դիմեց՝ հասարակական կարծիքը խաբելու համար։ Այդ կապակցությամբ «Լը տեմպը» սեպտեմբերի 28-ին գրեց, որ Բ. Դուռը խոստովանում է հայկական վիլայեթների ծանր վիճակը և հայտնում է պետություններին, որ հանձնաժողով է ստեղծել դրությունն ուսումնասիրելու համար։ «Գործնականում,— նշում է թերթը,— նման հանձնաժողովներ ստեղծվում են հասարակական կարծիքը մոլորեցնելու համար։ Այս դեպքում ևս մի կողմից հանձնաժողով է ստեղծվում վիճակն ուսումնասիրելու, իսկ մյուս կողմից Մուշի իշխանություններն արգելք են հարուցում Վանում ռուսական հյուպատոս Տումանսկու առջև, որն ուսումնասիրությունների համար Մուշ էր եկել։ Բիթլիսի կուսակալը ամերիկյան միսիոներներին ևս արգելել է վիլայեթ մտնել»։ Իսկ թե ինչ էր հետևում նման արգելքներին, ցույց են տալիս 1902 թ. մարտի 14-ին Մուշից ստացված նամակի հետևյալ տողերը. «Տարոնից Ռուսաստանի հյուպատոս Տումանսկու մեկնելուց հետո վայրագությունները վերսկսվեցին։ Կատաղած թուրք զինվորները և քրդերն իրենց հրամանատարի ղեկավարությամբ ահռելի տառապանքների են մատնում Նորաշեն գյուղի դժբախտ հայերին»։

Բեռլինի «Նացիոնալ ցայտունգը» սեպտեմբերի 27-ին գրեց. «Թուրքիայի պաշտոնական շրջաններում հաճախ կարելի է լսել հետևյալը. եթե ասվում է, որ Եվրոպան քրիստոնյաներինն է, ապա պետք է նաև ասվի, որ Անատոլիան մահմեդականներինն է։ Հայկական կոտորածները թուրք կառավարող դասակարգերի այս մտածողության արդյունքն են»։

Միջազգային սոցիալիստական բյուրոն 1901 թ. հոկտեմբերի

18-ին կոչով դիմեց բոլոր երկրների բանվորական կուսակցություններին.

«Ամենաողբալի լուրեր են հասնում Հայաստանից... Այն անցքերը, որոնք վերջերս տեղի ունեցան Մշո դաշտում ու Սասունի լեռներում, հաստատում են, որ Թուրքիան շարունակում է կոտորածների քաղաքականությունը։

Պետք է, որ միջազգային սոցիալիզմը... հասարակական կարծիք ստեղծի համիդյան քաղաքականության գարշանքների դեմ։ (Հայաստանում) բռնություններ, անգթություններ, կողոպուտներ, կանանց ու աղջիկների բռնաբարություններ, գյուղերի ու ագարակների հրդեհումներ, մասնակի ջարդեր ու սպանություններ տեղի են ունեցել անընդմեջ, գրեթե բոլոր հայաբնակ վիլայեթներում։ Այնուհետև դրությունը ավելի ծանրացավ (1901 թ. հունիսից հետո)։

Բիթլիսի, Էրզրումի և, մանավանդ, Մուշի ու Բայազետի կողմերում ջարդերը շարունակվում են։ Սարսափը տիրականորեն թագավորում է ազգաբնակչության վրա, որից խլել են բոլոր զենքերը, պաշտպանվելու բոլոր միջոցները...

Աշխատավորնե՛ր։

Աբդուլ Համիդի կառավարությունը, մամուլի մի մասի համագործակցությամբ, ճգնում է լռության դավադրություն կազմակերպել Հայկական հարցի շուրջը։ Ձեր և ձեր թերթերի ու պատգամավորների պարտքն է Համիդին խանգարել, հրապարակ հանել նրա ոճիրները և ձեր համակրանքի ու քաջալերանքի խոսքերն ուղղել նրանց, ովքեր տառապում ու կռվում են՝ ապրելու իրավունք նվաճելու համար»։

1901 թ. նոյեմբերի 4-ին ֆրանսիական պառլամենտում կայացած հարցապնդման ժամանակ Մարսել Սանբան ասաց, որ Հայաստանի «...։ վիճակը անարդարության, օրինազանցության, կամայական բանտարկությունների, գյուղերի ավերումների, եկեղեցիների ու դպրոցների հրկիզումների, կանանց ու աղջիկների առևանգումների երկար շարքի շարունակությունն է, արյունատենչ բռնակալության արդյունքը։ Հայաստանի այդ վիճակը Եվրոպայի ամոթն ու նախատինքն է...

... Սուլթանը պատրաստվում էր այս ձմեռ կոտորածները վերսկսել։ Սասունում մի զորանոցի կառուցումը բնակչության կրծքից խլեց «Մեզ պաշտպանեք մեր պաշտպաններից» ճիչը։

Արտաքին գործերի նախարար Դելկասեն ասաց. «Երբ Սասուն ուղարկված բանակի հրամանատարը հայտարարում է, որ եկել է հայերին պաշտպանելու քրդերից, հայերը, «պաշտպանելու» այդ ձևին ծանոթ, ասացին. «Մեկի տեղ երկու թշնամի ենք ունենալու»[72]։

«Պրո Արմենիայում» Պիեռ Քիյարը գրեց. «Ոչ միայն Բիթլիսի և Էրզրումի սահմաններում, այլև ամեն տեղ, մասնավորապես Մուշի և Բայազետի շրջակայքում, վերսկսվել են պարբերական սպանությունները...»։

1901 թ. օգոստոսի 21-ին Մուշից այդ նույն թերթին գրեցին. «Մշո շրջակայքում նոր անկարգություններ տեղի ունեցան։ Սկսած օգոստոսի 3-ից համիդիեի ավազակախմբերը, կանոնավոր զորքի աջակցությամբ, թալանում և սպանում են։ Ոչնչացրել են Մառնիկ, Կուրավու, Իգդար, Շեխլան, Ծխավու և այլ գյուղեր։ Բնակիչները փախչում են լեռները։ Վանից ու Բիթլիսից եկած քրդերն ու զորքերը դրավում են Սասունի բարձունքները...»։

Անատոլ Ֆրանսի «Պրո Արմենիայում» տպագրած «Հայերի միություն» հոդվածում կարդում ենք. «Բոլոր հայերը, ինչ կենսական մակարդակ էլ ունենան (հարուստ, թե աղքատ), օտարության մեջ անձկությամբ հետևում են մահվան սպառնալիքների տակ գտնվող իրենց եղբայրների վիճակին։ Նրանք գիտեն, որ սուլթանը մեթոդիկ ձևով ի կատար է ածում քաղաքական մի ծրագիր, որի նպատակը բովանդակ հայ ցեղի ոչնչացումն է...»[28]։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾ

Իրականացվում էր անսանձ ու անամոթ հարձակում հայկական մշակույթի, հայկական հոգևոր և լուսավորչական հիմնարկների վրա, պղծվում, թալանվում ու քանդվում էին հայկական եկեղեցիներն ու պատմական հուշարձանները, փակվում էին առանց այդ էլ հատուկենտ հայկական դպրոցները, թերթերն ու հանդեսները, ոչնչացվում էին հայերեն գրքերը։

Կեսարիայում թուրքերի սիրած խոսքն էր. (1885 թ.) «Կարկանդակի միայն եզրերը կարողացանք ուտել, մեջտեղը մնաց», այսինքն՝ միայն 7000—8000 հայ սպանեցինք, «փոխա-

նակ արու գյավուրներին լրիվ ոչնչացնելու և իգական սեռին տիրանալու»[29]։

Թուրքերը հայերին սպառնում էին. «Անհավատներ, դուք գյավուր թագավորների օգնությանն եք դիմում մեր դեմ։ Գարունը հասնելուն պես կտեսնեք, թե ինչ արժեք ունի այդ օգնությունը։ Մեր ձեռքից ստացած ջարդերից հետո դիմեցեք ուր կուզեք։ Ահա ամեն ինչ պատրաստ, սուլթանի հրամանին է, որ կսպասենք»[30]։

Երզնկայից հայտնում են. «... Այս օրերս ընդհանուր ջարդի շշուկը դարձյալ շրջում է ժողովրդի բոլոր խավերի մեջ։ Ասվում է, թե մեծ դահիճը դարձյալ հրաման է արձակել հայերին կոտորելու։ Ամեն կողմ ահ ու սարսափ է տիրում, 95—96 թվականների փորձը աչքերիս առջև է»[31]։

Հայերի մոտալուտ կոտորածների նշան էր համարվում նաև այն, որ իշխանությունները արտակարգ սիրալիր էին դարձել քրդերի, նրանց աշիրեթապետերի և հատկապես ավազակությամբ աչքի ընկած անձանց նկատմամբ։ «Զկոցիների ցեղապետ Ղուլի խանը, որի համար մահվան վճիռ էր տրված... տարվեց Կարին և համիդիե գրվելով ոչ միայն ազատվեց, այլև կայմակամի պաշտոն ստացավ»։

Կոտորածներ նախապատրաստելը հաստատող մի երևույթ ևս։ Գրում են Ախլաթից. «Շշուկ կա թուրքերի շրջանում հայերին կոտորելու մասին։ Այդ փափսանքը մեծ երկյուղ պատճառեց Բազեշում հուլիսի 11—12-ին, երբ հայերը տեսան, թե փոլիսները խումբ-խումբ շրջում էին շուկայում ու թաղերում։ Վերջին կոտորածների ժամանակ էլ այդ նշանը տեսել էին հայերի ջարդը սկսելուց առաջ...»[32]։

Գրում են Աղբակից. «Թուրք կառավարությունը այստեղ համառությամբ առաջ է տանում իր հայաջինջ քաղաքականությունը, ամեն կերպ աշխատելով դատարկել այս գավառը իր հայ ազգաբնակչությունից»[33]։

Գրում են Կ. Պոլսից. «... Ամենուրեք ջարդերը շարունակվում են, բայց ոչ հավաքական»[34]։ «Կոտորածների նախանշան էր նաև հայերին ճնշելու, բռնաբարելու և նույնիսկ ոչնչացնելու համար քրդերին նյութապես ու բարոյապես խրախուսելու պաշտոնական քաղաքականությունը, որ նորից կիրառվում է ամենայն անամոթությամբ»[35]։

1903 թ. փետրվարին Բասենից գրում են, որ թուրքերի շրջանում պրոպագանդիստներ էին տարածվում՝ նրանց հայերի դեմ գրգռելու համար։ Իբր «գարունը սկսվելուն պես ջանֆիդայիները էրզրումի, Բասենի, Հասան Ղալայի կողմերից մեր վրա պիտի հարձակվեն, պայթուցիկ նյութերով պիտի կործանեն քաղաքապետությունները, զորանոցները, և զենքի զորությամբ պիտի տիրանան կարևոր դիրքերի...»[36]։

Այո, հայերի բնաջնջումը ոչ թե քրդական, այլ թուրքական քաղաքականություն էր, և նրա գլխավոր դրդող անձինք թուրք իշխանավորը, ֆինվորն ու ոստիկանն էին։ Քրդերը շահագրգռված չէին հայերին ոչնչացնել, նրանց այդ բանին մղում էին օսմանյան իշխանությունները։ Հայտնի ավազակ շարագործ, համիդիեի հազարապետ Ֆատեն ցուցմունք տվեց. «... Չարագործությունների հեղինակը, արմատը ես չեմ, այլ եկող-գնացող կուսակալները։ Եթե նրանց հրամանով ու հաճությամբ չլիներ, ոչ ես, ոչ էլ իմ մարդիկ չէին համարձակվի ժողովրդի մեկ շյուղին դիպչել։ Մեղավորները նրանք են, որ թույլատրեցին իրենց գիտությամբ և հաճությամբ կատարելու այս ամենը։ Հայաստանի մեջ կատարված բոլոր գողությունները, ոճրագործությունները, մարդասպանությունները, ավազակությունները կառավարության գիտությամբ ու մասնակցությամբ են տեղի ունենում»[37]։

«Աբտողլու գյուղից,— գրում են Ադանայից,— թուրքերը մի աղջիկ են փախցնում։ Աղջիկը համառորեն դիմադրում է։ Թուրքերը նրան բռնությամբ «մերկացնում, սրբունքները դաշույնով խոցոտում են և հետո դժոխային դիտավորությունը կատարում են անպաշտպան և արյունլվա մի կնոջ հետ, որն արդեն մեռած էր»[38]։ Սադիստական այս արարքները ևս նշան են, որ թուրքական հասարակությունը նաև հոգեբանորեն էր նախապատրաստվում ոչնչացնելու հայերին։ Կոտորածների նախապատրաստման մասին էր վկայում նաև պահեստայինների զորակոչը։

«Թուրքերն էլ շատ դժգոհ են,— գրում են Կիլիկիայից,— և այս դժգոհությունն իր գագաթնակետին հասավ, երբ ռեդիֆները սկսեցին զենքի տակ կանչվել։ (Կառավարությունը) իր կատաղությունը ուզում է թափել հայերի վրա։ Երկրի ամեն կողմում դրոշի տակ կանչված շատ թուրքեր դասալիք են եղել, քաշվել լեռներն ու սարերը... զինծառայությունից խուսափող-

ների կատարած վայրագություններն էլ գումարվում էին եղածին»։

Գործնականում հայերի բնաջնջումը ընթացքի մեջ էր. փոխվել էին միայն նրա ձևերն ու մեթոդները։

«Օվր դը Սոլ դ'Օրիենտ» հանդեսի 1899 թ. 219-րդ համարում հայերին բնաջնջելու մեթոդների այդ փոփոխության մասին կարդում ենք. «Հիմա արդեն այն միահամուռ խողխողումները չեն, որոնք գործադրվում էին դժբախտ հայերի հանդեպ, 1895—96-ի այն համատարած սպանդը չէ, երբ հատուկ հրամանով ու ազդանշանով ոչնչացվում էր քաղաքի կամ գյուղի ողջ ազգաբնակչությունը։ Թուրքերը հասկացան, որ Եվրոպայի գթասրտության բաժակը լցվել է։ Եվ վախենալով զինված միջամտությունից՝ փոխեցին իրենց գործելակերպը։ Որդեգրվել է անաղմուկ, գաղտնի ոչնչացման հրեշավոր ծրագիրը, որը ավելի քան մեկ տարի է, ինչ իրականացվում է հայ ցեղի դեմ...»։

Կարելի է իշխանությունների կողմից հայերի ճնշումների ու խոշտանգումների ձևերի ու միջոցների երկար ցուցակ կազմել, բայց գլխավորն այդ չէ, այլ այն, որ բացարձակ բնաջնջման փոխարեն գործադրվում էին ոչնչացման ու հալածանքների բազմատեսակ միջոցներ։

1902 թ. ապրիլին, անդրադառնալով դանիացի ճանապարհորդ Բենիգսեի նոթերին, «Հնչակը» նշում է. «Հայաբնակը տառապում է այսօր, ինչպես միշտ, քաղաքականապես։ Հարյուր հազարներին կոտորելուց հետո, երկրի ելքն ու մուտքը փակելուց, դռները կողպելուց հետո, երբ արտաքին միջամտության երկյուղն արդեն վերացած է, թշնամին ավելի ուժգին, ավելի անամոթ և ավելի լկտի, քան երբևէ, իր բռնապետական անհանդուրժելի կամքն է թելադրում. արդարություն, օրենք, իրավունք՝ դատարկ հնչյուններ են»։ («Հնչակ», 1902 թ., № 1)։

«Պրո Արմենիայում» 1900 թ. դեկտեմբերին տպագրված մի հոդվածում Քիյարը նշում է.

1. Դրությունը Տաճկաստանում այսօր նույնն է, ինչ մեծ կոտորածների նախօրեին։ Օր օրի կոտորածների ալիքներն ահագնանում են։

2. Սուլթանը անձամբ պատասխանատու է կայսրությունում կատարվող ոճրագործությունների համար։

3. Եվրոպական պետությունները կարող են սանձել այդ արյունարբու ինքնիշխանությունը, նրան պարտադրելով գոյություն ունեցող դաշնագրությունները։

«Ռեվյու Բլանշում» Պոլ Լուին գրեց, որ «Եվրոպայում շշուկներ են լսվում հայկական նոր կոտորածների հավանականության մասին։ Բոլոր ազնիվ մարդկանց պարտքն է անհապաղ կանխել դրանք, քանի դեռ ուշ չէ, ոչ թե Հանոթոյի և Լոբանովի նման այդ եղեռնական իրադարձությունները լռության մատնել»[39]։

«Օրորի» 1899 թ. սեպտեմբերի 9-ի համարում Ռուբեն Գոհիեն հայկական նոր ջարդերի մասին գրեց. «Պետք է, որ ողջ Եվրոպան իմանա իր պարտականությունը և վերջապես այն կատարի, որովհետև նա հանցավոր է Հայաստանի թշվառության համար... Միայն մի բան կարող է փրկել հայերի բեկորներին՝ պետությունների համաձայնությունն ու անհապաղ միջամտությունը...»։

Ֆրանսիական «էվենեմենտը» 1899 թ. հոկտեմբերի 15-ին վկայել է. «Համիդը ավելի նպաստավոր օրերի է սպասում իր երազած համատարած բնաջնջման համար...»։

«Պրո Արմենիայի» 1900 թ. 5—8 համարներում տպագրվեցին Հայկական հարցին նվիրված մի քանի հոդվածներ, որոնցից մեկի հեղինակը ֆրանսիացի ականավոր հասարակական գործիչ Ֆրանսուա դը Պրեսանսեն էր. «Քանի որ 1896 թ. թափած արյունը,— կարդում ենք այդ հոդվածում,— այսօր ընդվզումի շիթերով դեպի երկինք չի հեղվում, որովհետև դիակները համ՝ են և արևմուտքի զգայարանները՝ անհաղորդ, մենք պարտավոր ենք այժմվանից գուժել մի նոր դիվային սպանդի վտանգը, այժմվանից մարդկանց ունկերին հասցնել այն խուլ որոտները, որ լսվում են դժբախտ Հայաստանի լեռներից ու ձորերից՝ արթնացնելու Եվրոպայի քաղաքական ողջամտությունը։ Սխալվելու իրավունք չունենք։ Անատոլիայում նախապատրաստվում է մի սարսափելի անակնկալ։ Դեռ թարմ ոճիրներ անվրդով մարսած հրեշը նոր ոճիր է որոճում»։

Ժ. Ժորեսը նույն համարում գրեց.

«Արթո՛ւն։

Մտատանջող ու չարագուշակ լուրերը Հայաստանից նոր ջարդեր են գուժում։ Արնագույն խելագարությունը նորից մոլեգնել է։ Արդյոք Եվրոպան այս անգա՞մ էլ պիտի ականջները խցանի։ Այս անգամ ոճիրն ավելի մեծ է լինելու... Եթե վերսկսվեն Հայաստանի ջարդերը և Եվրոպան դարձյալ նույն ան-

տարբեր մեղսակցության կեցվածքը ընդունի՝ «քաղաքակրթություն» բառը ինքն իր գերեզմանը կփորի»։

1901 թ. օգոստոսի 2-ին «Լա պետիտ ռեպուբլիկը» տպագրեց Գուստավ Ռուանեի հետևյալ խոսքերը. «Կ. Պոլսում վերածընված օսմանցի Կալիգուլան 1895—96-ի ընդհանուր ջարդերից հետո, մարդասպանության մեջ ավելի հմտացած, հիմա մասնակի կոտորածների և պարբերական հարստահարության նվազ աղմկալի մեթոդն է կիրառում հայ ժողովրդին հիմնովին բնաջնջելու համար»։

***

Սուլթանի հայաջինջ քաղաքականությունը առանձնահատուկ դաժանությամբ էր իրականացվում Տարոնում ու Սասունում։ Այդ գավառները, մասնավորապես Սասունը, հայ ազգաբնակչությունից դատարկելը դարձել էր պետական քաղաքականություն և գործադրվում էր անընդհատ, փոփոխվում էին միայն բնաջնջման ձևերն ու մեթոդները, իսկ ինքը՝ բնաջնջման այդ քաղաքականությունը, կար ու մնում էր։

1894—96 թթ. զանգվածային ջարդերին հաջորդեցին ոչ զանգվածային, արտաքին աշխարհի համար աննկատ, բայց տևական ու մեթոդիկ կոտորածները։ 1900 թ. միայն մի քանի ամսվա ընթացքում Մուշի շրջակա գյուղերում սպանվել է 52 հայ։ Սպանություններից ավելի դաժան էր անընդմեջ գործող հալածանքների հրեշավոր համակարգը։

Թվենք միայն մի քանի օրինակներ։ Բաղեշի կուսակալը 200 զինվոր է ուղարկում Սասուն, որոնք Գելիեգուզանում, Շենիկում և Սեմալում անհերևակայելի գազանություններ են կատարում։ Սասունում անհետանում են երեք քուրդ։ Մեղքը բարդում են հայերի (ոչ թե կոնկրետ անձանց, այլ ընդհանրապես հայերի) վրա ու դրա դիմաց Հիթենքում սպանում են 7, Տալվորիկում՝ 10 հայի։ Դրանով չբավարարվելով՝ Հիթենքը հրդեհում ու ավերակի են վերածում։

Սպանում են Աղբիրիկի Ղազար վարդապետին, սակայն վանքի միաբանությունից բռնությամբ ստորագրություններ են հավաքում, թե վարդապետին սպանել են հայդուկները։ Ի դեպ, սա ոչ թե եզակի, այլ հաճախ կրկնվող գործելակերպ էր՝ հային սպանում էին, ապա մեղքը մի այլ հայի վրա բարդում ու նրան ևս ոչնչացնում։

Սակայն սուլթանը այլևս չէր բավարարվում ոչնչացման այդ եղանակներով։ Նա նորից զանգվածային կոտորածների էր ձգտում։

Լորդ Ստրաֆորդ դը Ռեդկլիֆը, նկատի ունենալով այդ վտանգը, գրում է. «Մենք չգիտենք ե՞րբ և որտե՞ղ անգղները կրկին խրախճանքի կհրավիրվեն»[40]։

Սուլթանի տեսադաշտը դարձյալ Սասունն էր, հայերի ըմբոստության օրրանը։ Հանդես գալով խաղաղության համաժողովում, որը բացվեց 1900 թ. սեպտեմբերի 30-ին, Փարիզում, հասարակական խոշոր գործիչ ու գիտնական Լ. Մառիլիեն ասաց. «Հայերը անհետաձգելի օգնության կարիք ունեն, հակառակ դեպքում նրանք կոչնչանան ամենամոտ ժամանակներս։ Դրա համար պարտադիր չէ, որ վերանորոգվեն 1895—96 թթ. ընդհանուր կոտորածները, դրա համար միանգամայն բավարար են այն մասնակի կոտորածները, ընդհանուր թշվառությունն ու անապահովությունը, որոնք միշտ իշխել են դժբախտ Հայաստանում»[41]։

ԱՆԴՐԱՆԻԿ

Ժամանակակիցները նրան հետևյալ կերպ են բնութագրել. «Անդրանիկը աչք ունի... Սար ու ձորով անցնում ենք խմբով, հրացաններն ուսներիս. մեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհով է քայլում, իսկ Անդրանիկը՝ յուրաքանչյուրիս ճանապարհով։ Մենք անհոգ գնում ենք, իսկ նա տեսնում է, նա գիտե, պրպտում է ամեն քար ու դար, ամեն ժայռ ու բլրակ, մացառ ու պուրակ։ Նրա ուշադրությունից ոչինչ չի վրիպում։ Ինչ որ մի անգամ տեսավ, երբեք չի մոռանա... Նա գիտե աննման դիրք բռնել։ Եթե մի անգամ նա մեր տեղը կոլից առաջ որոշեց, ապա մենք վստահ ենք, որ դա լավագույնն է։ Ամբողջ օրը կռիվ կտանք և մեր դիրքերը միշտ լավագույնը կմնան...»։

Անդրանիկը թիկնեղ, լայն ճակատով, փոքր-ինչ կլոր դեմքով, շեկ ու սրածայր բեղերով տղամարդ էր։ Ծնվել է Սեբաստիայի նահանգի Շապին-Գարահիսար գյուղաքաղաքում 1865 թվականին, արհեստավոր-վաճառականի ընտանիքում։ Հայրը ցանկանում էր որդուն վաճառական դարձնել, բայց նրա առևտրական գործերը ձախողվում են և նա դիմում է մտավորու-

թյունը, Անդրանիկին արհեստ է սովորեցնում։ Սակայն Անդրանիկը այլ հակումներ ուներ։ Նա ռազմական խաղերի ու զենքի սիրահար էր։ Անդրանիկը կրթություն է ստանում տեղի վարժարանում, որտեղ և ձևավորվում են նրա ազատատենչ գաղափարները։ Գյուղաքաղաքի երիտասարդությունը մի խումբ էր կազմակերպել, որտեղ քննարկվում էին հայ ժողովրդի ազատագրության ուղիներին վերաբերող բազմազան հարցեր։ Անդրանիկը այս խմբի գործուն անդամն էր։ 17 տարեկանում Անդրանիկն ամուսնանում է «շատ սիրուն օրիորդի մը հետ»։ Սակայն մեկ տարի անց կինը, ապա նաև նորածին որդին, մեռնում են։

Անդրանիկը ուղղամիտ մարդ էր, չէր կարողանում անտարբեր անցնել կեղծիքի, շարադրության կողքով, միջամտում էր, և այդ պատճառով բանտ ընկնում։ Մի թուրք հարձակվում է Անդրանիկի հոր վրա՝ կոտրում գլուխը։ Անդրանիկը հետապնդում է այդ թուրքին և սպանում։ Նրան նորից են բանտ նետում։ Ընկերները կաշառում են բանտապահներին, բանտից հանում են Անդրանիկին և ճանապարհում Կ. Պոլիս։ Հոր սովորեցրած հյուսնությունը նրա համար դարձավ հաց վաստակելու միջոց։ Ընդունակ, ազնիվ և խելամիտ երիտասարդը տեղի հայկական շրջաններում շուտով ճանաչված ու սիրված անուն դարձավ հատկապես այն բանից հետո, երբ սպանեց Կ. Պոլսի թաղերից մեկի ոստիկանապետին, որը դարձել էր հայ մտավորականության դահիճը։ Անդրանիկը մտահղանում է հայդուկային խումբ ստեղծել։ Այդ խմբի համար զենք հայթայթելու նպատակով աշխատանքի է անցնում դինագործարանում։ Սակայն նա ծարավ էր պայքարի, իսկ Պոլիսը գործելու հնարավորություն չէր տալիս։ Ահա թե ինչու Պոլսից անցնում է Ռումինիա, ապա՝ Կովկաս։ 1895 թ. Աբրոյի խմբի կազմում Անդրանիկը մեկնում է Սասուն, Տարոնում հրացան է ձեռք գցում ու մտնում Սերոբի խմբի մեջ և շուտով դառնում տասնապետ։

Գևորգը Կոփ գյուղում հանդիպում է Անդրանիկին ու նրանից խմանում, որ Մոսե Խմոն վերադարձել է Լոնդոնից և անգլիական թագավորից նամակ է բերել։ Երկու օր հետո բոլոր խմբերի ղեկավարներն ու իշխանները հավաքվում են Գելիե գյուղում՝ թագավորի նամակը կարդալու։ Արդեն նշվեց, որ 1894—96 թթ. ջարդերը մեծ պետություններն օգտագործեցին շահադիտական

նպատակներով՝ սուլթանի վրա ճնշում գործ դնելու համար։ Հայ հասարակության որոշ խավեր հավատացին, թե այդ պետություններն իրոք ցանկանում են օգնել հայերի արդար դատին։ Եվ եվրոպական մայրաքաղաքներ ուղարկվեցին նամակներ, հանրագրեր, հասարակական գործիչներ՝ հայերին օգնելու խնդրանքով։

Սասունցիները Անգլիա ուղարկեցին գելիեցի Մոսե Խմոյին իր կնոջ՝ Ալթունի հետ։ Մոսե Խմոն հանձնարարություն ուներ եվրոպական պետությունների կառավարություններից սասունցիներին օգնելու երաշխավորագրեր բերել։

Սասունցու ավանդական տարազ հագած ամուսինները, մեծ դժվարություններ հաղթահարելով, հասնում են Լոնդոն։ Թուրքական կառավարությունն իր գործակալներին ուղարկում է, որպեսզի թույլ չտա Խմոյի հանդիպումը Անգլիայի կառավարության ղեկավարների հետ։ Եվրոպացու հագուստով ծպտված թուրքական գործակալները թագավորական պալատի շրջակայքում նկատում են Խմոյին ու նրա կնոջը և փորձում են նրանց խաբեությամբ կառք նստեցնել, սակայն Խմոն գլխի է ընկնում և, զենքի դիմելով, ազատվում նրանց հետապնդումից։

Խմոն և Ալթունը մտնում են պալատ և խնդրում տեսակցություն թագավորի հետ։ Տեսակցությունը թագավորի ու թագուհու հետ տեղի է ունենում։ Խմոն պատմում է, թե ինչի համար են եկել։ Նրանք որոշ ժամանակ մնում են Լոնդոնում և սպասում թագավորի պատասխանին։ Այստեղ Ալթունը ծնում է մի աղջիկ և, ի պատիվ անգլիական թագուհու, նրան կոչում Վիկտորյա։ Թագավորն ու թագուհին նրանց օրորոց են նվիրում և մի կնքված ծրար հանձնում։ Մոսե Խմոն օրորոցը շալակած, թագավորի թուղթը աբայի տակ թաքցրած, Ալթունի ու դստեր հետ ուղևորվում է Սասուն։

Եվ ահա հավաքվել են Սասունի անվանի մարդիկ։ Խմոն իր ուղևորությունների մասին պատմելուց հետո աբայի տակից հանում է ծրարն ու տալիս Գևորգին։ Բոլորը սրտատրոփ սպասում են։ Գևորգը սկսում է կարդալ. «Սասունի պատվական իշխաններ։ Ձեր պատվիրակ Մոսե Խմոն իր իշխանուհի տիկնոջ հետ ժամանեց Լոնդոն՝ սուլթանի բռնակալությունից քրիստոնյա հայերին ազատագրելու խնդրանքով։ Մի մոռացեք, սակայն, որ ես քրիստոնյաներից բացի թագավոր եմ նաև միլիոնավոր

մահմեդականներին։ Բիթլիսի մեջ մենք հյուպատոս ունենք, դիմեցեք նրան»։

Հավաքվածների ոգևորությունը փոխվեց հիասթափության։ Խմոն ամոթահար գլուխը կախեց։ Լռությունը խզեց տարիների փորձով իմաստնացած Մակարը.

— Ինգլիզից ու Ֆրանկից մեզ օգուտ չկա։

— Մակարը ճիշտ է ասում,— պաշտպանեց Անդրանիկը։ — Եվրոպայի ոչ մի պետություն մեզ օգնության ձեռք չի մեկնի։ Հույսներս մեզ վրա պետք է դնենք, զինվենք ու միաբան լինենք։ Մենք կփրկենք մեր ժողովրդին, եթե մեր շերեփը ոչ թե թղթից, այլ երկաթից սարքենք։

***

1894—96 թվականների կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանին բնորոշ է ոչ միայն սուլթանի հայաջինջ քաղաքականության ձևերի ու մեթոդների կատարելագործումը, այլև ընդդիմադիր ուժերի, մասնավորապես հայդուկների գործունեության թուլացումը, որը Բ. Դուռը կարողացավ օգտագործել իր նպատակների իրականացման համար։ Հայերն իսկապես հուսալքված էին։ Դա բացատրվում է ոչ միայն 1894—96 թթ. կոտորածներով, այլև նրանով, որ օսմանյան դարեր տևած բարբարոս լուծը հայերին դարձրել էր կրավորական, նրանք կորցրել էին ծանր վիճակից դուրս գալու հույսը ու գործնականում դադարել էին պայքարելուց։

«Հնչակը» 1902 թվի հունիսին գրեց.

«Մի ժամանակ ամբողջ հայ ժողովուրդը ընկղմված էր խորքի մեջ՝ անզգա, անտարբեր իր ծանր վիճակին, իր դառը, անտանելի կացության, ճնշված բռնության ծանր լծի տակ և ստրուկին վայել ծայրահեղ համբերությամբ կրում, տանում էր տիրապետողի հարստահարությունը, զրկանքները, նախատինքը և այն ամենը, ինչ որ հպարտ տիրապետողը կարող էր հնարել ռայաներին* ճնշելու համար։ Ռայաները, որոնց կյանքը, եկամուտը, աշխատանքը պատկանում էին իրենց իշխողին, որոնք ամենաթեթև հանցանքի համար ենթարկվում էին խիստ պատժի, տրոնջալիս՝ տանջանքի, և վայ բողոքողին, որը, իբրև քաղաքական հանցագործ, այլևս ապրելու իրավունքից զրկված, դատապարտվում է կախաղանի, աքսորի կամ ցմահ բանտարկության»։

Այս պայմաններում «հայ ռայան անողոք տիրապետողի ռեժիմին հնազանդվելով, ընտելացավ՝ իր վրա գործադրվող բռնություններին, ընտանեացավ հոռի, անարդար, տմարդի, կոպիտ ու վայրենի կարգերին և հետզհետե կորցրեց իր զգայությունը, ինքնասիրությունը, արժանապատվությունը, նա՝ հայ ռայան, ծայրահեղ ու երկարատև բռնության տակ, կորցրեց ազատության իր բնազդը, կորովը, բարոյապես այլասերվեց, այլանդակվեց և այլևս առանց բողոքի, առանց ձայն-ծպտուն հանելու, հաշտվեց իր վիճակի, ապրելակերպի հետ»։

Նման կարծիքների կարելի է հանդիպել նաև օտար հեղինակների մոտ։ Ֆրանսիացի Կիմոնը իր «Լա պատոլոժի դ'իսլամ» գրքի 250-րդ էջում գրում է. «Երկարատև ճնշումների ու բռնադատումների հետևանքով հայերը կորցրել են իրենց հին հատկանիշներից մի քանիսը։ Օրինակ, նրանց համար օտար են ռազմատենչ զգացումը, պատերազմելու հակումները, մարտական ոգին, զինավարժության սովորությունը, հարձակման բնազդը, հաղթանակի բերկրանքը։ Մի բան, որ շատ վտանգավոր է, նրանք կորցրել են նույնիսկ ինքնապաշտպանության ջիղը»։

Սակայն 19-րդ դարի վերջին և մասնավորապես 20-րդ դարի սկզբին, վիճակը զգալիորեն փոխվեց։ Ճիշտ է, 1894—96 թվականների կոտորածները արևմտյան հայությանը հուսալքության մատնեցին, բայց դա երկար չտևեց։ Ժողովուրդն այլևս չէր կարողանում հին ձևով, անտրտունջ տանել բռնություններն ու հարստահարությունները։

Պատմում է Անդրանիկը. «1901 թվականի հոկտեմբերին Գելիեզուզան գյուղում մեր զինվորների գաղտնի ժողով—խորհրդակցություն գումարեցինք ես, Գևորգը, Հարությունը, Վաղարշակը և Հաջի Հակոբը։ Մեր խորհրդակցության նպատակն էր միջոց և ուղի գտնել հայ ժողովրդի վրա ծանրացող տագնապը մեղմելու և թուրքական ու քրդական հարստահարությունների ու հալածանքները դադարեցնելու, քանզի քուրդն ու թուրքը, ազատ ու անկախ, հայ գյուղերի մեջ իրենց ոճիրներն ու ամեն տեսակի բռնությունները կգործադրեին և կառավարությունն այս բոլորը տեսնելով չէր պատժում, չէր սանձում, չէր սաստում։ Կառավարությունը ոչ միայն իր աչքերն էր փակում, որ-

* Բրիտ. նյութ հպատակ։

պեսզի չտեսնի ու չլսի այդ ոճիրների պատմությունը, այլ ներքնապես քաջալերում ու կազմակերպում էր դրանք, առաջ տանելով իր հայահալած ու հայաջինջ քաղաքականությունը, պսակելով նրանց կրծքերը պատվանշաններով ու առանձնաշնորհներ պարգևելով»[42]։

Անդրանիկին ու Գևորգին հաջողվում է ոչ միայն Սասունում, այլև Մշո դաշտում կազմակերպել զինված ջոկատների ու հայդուկային խմբերի ցանց, լուծել զենք ու զինամթերք պատրաստելու և հայթայթելու հարցը։ Այս գործում նրանք ստանում էին աշխատավորության ամենալայն աջակցությունը։ Տարիների փորձով հայ գյուղացին համոզվել էր, որ թուրքական իշխանություններն ու քրդական ցեղապետները հայերի զինված դիմադրության ժամանակ իրենց ոտնձգությունները սանձում են, իսկ երբ նման դիմադրություն չի լինում կամ հայդուկները պարտություն են կրում, նրանք սանձարձակ են դառնում։ Զինված ջոկատների լայն ցանցի ստեղծումը, հայդուկների խմբերի ակտիվ տեղաշարժերն ու հանկարծակի հարվածները, գյուղացիության եռանդուն աջակցությունը, օսմանյան կառավարության ներքին զզվոտոցները և արտաքին քաղաքական ու դիվանագիտական դժվարությունները հնարավորություն էին ստեղծում Սասունում ու Տարոնում նորից բարձրացնելու պարտիզանական կռիվների դրոշը։

Անդրանիկն ու Գևորգը հասկանում էին, որ նման պայմաններում շատ կարևոր է նախաձեռնությունը ձեռքից չփախցնելը, ակտիվ գործողությունների և ցուցադրական ելույթների միջոցով իշխանություններին ժամանակ չտալ ուժերի վերախմբավորում կատարելու ու հարձակման անցնելու համար։ Այդ նպատակով նրանք որոշում են ձմեռն անցկացնել Առաքելոց վանքում, Մուշ քաղաքից ութ կիլոմետր հեռավորության վրա, կուսակալ Ալի փաշայի աչքի առաջ։ Այս բանի հոգեբանական ազդեցությունը հասկանալի է՝ հայդուկները պետք է իրենց շատ ուժեղ զգային, որպեսզի համարձակվեին Առաքելոց վանքում ձմեռել։ Տակտիկական տեսակետից տրամաբանությունը հետևյալն էր։ Առաքելոց վանքը բարձունքի վրա էր, ուներ ամուր պարիսպներ, մոտ էր Մուշ քաղաքին ու Դաշտի գյուղերին, որը հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ լուծելու սնունդամթերքի, զենքի անհրաժեշտ պաշարների կուտակման հարցը և անհրաժեշտության դեպքում լուրջ դիմադրություն ցույց

տալ թուրքական բանակին՝ նրան պատճառելով ծանր կորուստներ։ Հայդուկները մինչև Առաքելոց վանք գալը նախապատրաստական զգալի աշխատանք կատարեցին։ Ցրոնք գյուղից 10 հոգի վանք տեղափոխեցին վառոդ, Մուշից փամփուշտներ հայթայթեցին, շրջակա գյուղերից՝ սննդամթերք։ Նոյեմբերի 2-ին հայդուկային խումբը ճեղքելով Ծովասարի ձյունը, մոտենում է վանքին։ «Դաշտի գյուղերի մեջ թափառող խուզարկիչ ոստիկանական գումարտակը այդ մասին իմանալով շտապում է այնտեղ, ուր ենթարկվում է մեր տղաների անակնկալ հրացանային համազարկին և մի քանի մարդու կորուստ տալով, խույս է տալիս և գալով քաղաք, լուր տալիս կառավարությանը»։

Անդրանիկն ու Գևորգը 40 հայդուկներով 1901 թվականի նոյեմբերի 3-ին մտնում են վանք։

Լուր ստանալով, որ հայդուկները ամրացել են Առաքելոց վանքում, Մշո կառավարիչն իր մոտ է կանչում Վարդան վարդապետին և սպառնում, որ եթե հայդուկներն անմիջապես չհեռանան, վանքը ռմբակոծվելու է։ Վարդան վարդապետը պատասխանում է, որ ինքը հայդուկների վրա ազդել չի կարող։

Հաջորդ օրը, նոյեմբերի 4-ին, իշխանությունները հայդուկներին առաջարկում են վանքից հեռանալ՝ խոստանալով նրանց չհետապնդել։

Հայդուկները մերժում են այդ առաջարկը։

Մի քանի օր հետո վանք են մտնում ևս 10 հայդուկներ։ Անդրանիկին հաջողվում է դրսի աշխարհի հետ կապ ստեղծել։ Այդ կապը իրականացվում էր Շուշանիկ և Զարուհի օրիորդների միջոցով։ Սակայն նախապատրաստական աշխատանքները դեռևս չէին ավարտվել, երբ սկսվեցին գլխապտույտ իրադարձությունները։

Նոյեմբերի 7-ին, թուրքական 3000-անոց մի զորաբանակ Սալեհ փաշայի գլխավորությամբ շրջապատում է վանքը՝ կտրելով դրսի աշխարհից։ Նոյեմբերի 12-ին առատ ձյուն է տեղում։

Պաշարման մեջ է թարգմանչաց սուրբ վանք,
Որ զնա պատեց թուրք զորաց փաղանգ.
Անա կլսվի որբոց աղաղակ,
Անա օգնութ ան կոչն մեզ զանգակ։

Պաշարված են հոն Անդրանիկ, Գևորգ,
Վաթսուն որբերով անտեր և անոք,
Եղեք, օ՜հ, հայեր, մի մնաք չեզոք,
Չքանդեն զվանք թուրքերն անողոք։

Տարոնից 1901 թվի դեկտեմբերի 24-ին գրում են. «Նոյեմբեր ամսվա սկզբին ընկերության տղաները, 50—60 հոգի, իրենց գլուխն ունենալով Անդրանիկն ու Գևորգը, մտան Առաքելոց վանք։ Ֆերիդ փաշան լսելով այդ, զինվորությունը լեռը հանեց...»[43]։

Հայդուկները դիրքեր են գրավում վանքի պարիսպների վրա։ Մեծաթիվ երևալու համար նրանցից ամեն մեկը կռվում էր մի քանի դիրքերից։ Վանականներն ու վանքում աշխատող կանայք պահեստային դիրքեր էին փորում, ռազմամթերք մատակարարում։ Թուրքերի հարձակումները մեկը մյուսի ետևից ձախողվում էին։

Վանքը պաշարելով, թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ պաշարվածների սննդամթերքը շուտով սպառվելու էր, իսկ սառնամանիքին՝ հայդուկները չեն կարողանա ձեղքել պաշարման շղթան ու հեռանալ։ Այսինքն՝ նրանք դատապարտված են սովամահության կամ գերության։ Թուրքերն այդպես էին մտածում, իսկ Գևորգը, գրում է Անդրանիկը, «ամեն օր վանքի դպրոցի աշակերտներին հանում էր բարձր տանիքը՝ բերդ խաղալու. հաճախ ինքն էլ էր մասնակցում։ Երեք կողմից թուրքերի արձակած գնդակները ՍՐԴ-ՍՐԴ կպչում, մխրճվում էին տանիքի թաց հողի մեջ և կամ խաղացողների գլուխների վրայով ֆրսթ-ֆրսթ սուլոցով անցնում գնում՝ հաճույք պատճառելով չարաճճի աշակերտներին»[44]։ Գևորգն այդ անելով նպատակ ուներ «թշնամուն զգացնել, որ վանքում գտնվողները որևէ մտահոգություն չունեն և միաժամանակ զինվորների մեջ հոգեբեկում առաջացնել ու նրանց դիմադրական կորովը թուլացնել»։ Գևորգը ոչ միայն անձնվիրաբար կռվում էր, այլև ամեն ինչ անում էր պաշարված հայդուկների, որբերի, ուսուցիչների ու վանքի մյուս ծառայողների տրամադրությունը բարձրացնելու համար։ Ահա մի քանի օրինակ. Գևորգի հանձնարարությամբ հայդուկներից մեկը պոկում է վանքի պատուհանի ձիթած հաստ թղթերը, դրանք ոլորում է, թաքնվում զանգակատան սյան ետևում ու բացառիկ ճշգրտությամբ նվագում թուրքական զինվորական քայլերգը։ Անդրանիկն ու մյուս հայդուկները շանթահարված՝ դիրքերից վեր են թռչում, կարծելով, թե թուրքերը վանք են մտել։ Իսկ Գևորգը քահ-քահ ծիծաղում էր։

«Թուրք զինվորներից ոմանք, իրենց գետնափոր դիրքերից,

քարերի արանքով սողալով իջնում են ներքև, գոմի ետևում թաքնվում և նշան բռնելով՝ կրակում։ Երբ նրանցից որևէ մեկը գլուխը բարձրացնում էր ու նրա ֆեսը երևում էր, Գևորգը կրակում էր։ Ֆեսը թռչում էր վեր, որն ուղեկցվում էր պաշարվածների ուրախ բացականչություններով ու ծիծաղով։

Նման դեպքերում Գևորգը, ըստ սովորության, բացականչում էր. «Հը՛ը, հը՛ը, ես Գևորգն եմ»[45]։

Նոյեմբերի 19-ի գիշերը թուրքերը երեք կողմից հարձակման անցան։ Մառախուղ էր։ Օգտվելով դրանից, նրանք ծակում են գոմի պատը ու ներս լցվում։ «Գոմի ներսի պատն էլ ծակելով,— գրում է Անդրանիկը,— մտել էին մարագ, դիրքեր թռնել մարագի ու գոմի միջև, մեզնից 70 քայլի վրա ու հոխորտում էին։

Այդ պաշարման ժամանակ էր, որ մի գիշեր թշնամու բանակից մի հոխորտացող ձայն հասավ.

— Ո՞ւր պիտի փախչեք իմ ձեռքից, հանձնվեք, հանձնվեք։

Գևորգը հեգնանքով քրդերեն պատասխանեց.

— Դո՜ւք, կանա՜յք, որ թաքնվել եք դիրքերում և չեք համարձակվում ձեր մազերը ցույց տալ։ Դուրս եկեք, ձեզ հաց ու ջուր տանք և հեռացեք, դուք՝ ո՜ւր, կռիվն՝ ո՜ւր...

Անմոռանալի էջ է զարհուրելի գիշերվա այն դյուցազնական դրվագը, երբ պաշարվածներին հանկարծ ասացին, որ զորքին հաջողվել է մոտենալ վանքին և պատրաստվում է ներս խուժել։ Գևորգը մի քանի կտրիճների հետ դուրս եկավ Հավատորիկ և հազիվ տասը համազարկ փոխանակելուց հետո թշնամին ետ քաշվեց և մինչև վերջ որոշ հեռավորությունից առաջ չեկավ»։

Սալեհ փաշան Մուշից և մոտակա գյուղերից հայ վարպետներ ու գյուղացիներ էր բերել և, ցրտից պատսպարվելու համար, վանքի պարսպից 100—200 մետր հեռավորության վրա, գետնափոր տնակներ ու վանքը ռմբակոծելու համար քարե պատնեշներ էր կառուցել։ Թուրքերին սպասարկելու համար հայկական գյուղերից 600 լծկան եզ էր բերվել։ Սակայն թուրքական զորքերի մեջ սկսվեց տիֆի համաճարակ։ Կռիվները, փոքր ընդհատումներով, տևեցին քսան օր։ Քսան օր մի բուռ հայդուկներ դիմադրում էին երեք հազարանոց բանակին։ Քսան օրվա ընթացքում թուրքերը հայդուկների գնդակներից և տիֆից կորցրեցին իրենց ուժերի զգալի մասը։

Առաքելոց վանքի կռիվները շփոթություն առաջացրին Ելոը-

զում։ Դրանցով սկսեցին հետաքրքրվել օտար պետությունները։ Սուլթան Համիդի հեռագրերը պահանջում էին բոլոր միջոցներով վերջացնել այդ խայտառակությունը, նույնիսկ խոստանում հանձնվելու դեպքում հայդուկներին ազատ արձակել։ Նա յուրաքանչյուր գերված հայդուկի համար գլխագին էր նշանակել, թուրք զորավարներին ու քուրդ ցեղապետներին հարուստ նվերներ ու բարձր շքանշաններ խոստացել։ Պաշարման 17-րդ օրը մի պատվիրակություն գնաց վանք՝ կառավարության անունից պահանջելու, որ հայդուկները հանձնվեն։ Պաշարվածները հարկադրված էին բանակցություններ սկսել, որովհետև երկու օրվա վառոդ ու փամփուշտ էր մնացել, ուտելիք չկար, վերջացել էր նաև վառելափայտը, սկսել էին վանքի մահճակալները վառել, սպառվել էր խմելու ջուրը և ստիպված ձյուն էին հալում։ Բացի այդ, գերի բռնված մի թուրք սպա հայտնեց, որ թնդանոթներ են բերվում՝ վանքը ռմբակոծելու։ Անդրանիկն իր միտքը պարզեց Գևորգին։

— Բանակցությունները մեզ հնարավորություն կտան օգտվելու զինադադարից և նախապատրաստվելու վանքից հեռանալուն։ Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի թուրքական բանագնացները տպավորություն ստանան, թե մեր զենքի պաշարները շատ են, դեռ երկար կարող ենք դիմադրել և չենք պատրաստվում վանքից հեռանալ։

«Այն օրը,— գրում է Անդրանիկը,— որ մենք իրենց նամակին պատասխանեցինք՝ թող գան, իսկույն վանքի առաջնորդարանը մաքրեցինք և մոմերի դատարկ սնդուկները բերեցինք ու առաջնորդարանի մեջ իրար վրա շարեցինք՝ վրայի միայն 4—5 սնդուկները փամփուշտներով լցնելով։ Փամփուշտի այդ սնդուկների մոտ ցիրուցան գցեցինք փամփուշտ լցնող գործիքներ, անգլիական և տեղական վառոդների տոպրակներ ու արկղներ...

Նոյեմբերի 23-ին ժամը 6.30-ին, թուրքական փողերը նորից հնչեցին։ Մի քանի րոպե անց անզեն մարդիկ երևացին։ Նրանք քայլում էին դեպի մեզ։ Երբ մոտեցան, տեսանք Մուշի առաջնորդ Խոսրով վարդապետ Փերիկյանին, Մուխթար էֆենդուն, Մեհմեդ էֆենդուն և վանահայր Հովհաննես վարդապետին»։

Բանագնացները եկան սպիտակ դրոշ պարզած։ Նրանց դիմավորեցին և ճաշասենյակ ուղեկցեցին Անդրանիկի նախատեսած ծրագրով։ Ընդունելության այդ ծիսակատարությունը թուր-

քերի վրա ուժեղ տպավորություն գործեց։ Խոսրով վարդապետը իր աջը մեկնեց Անդրանիկին, որ նա համբուրի, բայց վերջինս նրա ձեռքը ետ հրեց։

Սեղանի շուրջը տեղավորվելուց հետո բանագնացների ղեկավարը ասաց.

— Վեհափառ սուլթանից հրաման է եկել. ձեզ ներում կշնորհվի, եթե զենքը վար դնեք ու անցնեք խաղաղ աշխատանքի։

Խոսրով վարդապետը հաստատեց նրա խոսքերը։

Անդրանիկը բեղի տակ ժպտաց ու պատասխանեց.

— Մենք խաղաղ մարդիկ ենք, երազում ենք խաղաղ աշխատանքով զբաղվել և զենք ենք վերցրել ոչ թե կամովի, այլ ձեր իշխանությունների կամայականությունների ու բռնությունների պատճառով։ Դուք առանց դատ ու դատաստանի սպանում եք հային, հայը Թուրքիայում օրենքից դուրս է, նրա կյանքն ու ունեցվածքը անպատիժ թալանում եք, աղջիկներին բռնաբրում, նրանց ու մանուկներին առևանգում ու բռնի թուրքացնում։ Մենք զենքը վար կդնենք, եթե դուք այդ ամենին վերջ դնեք։ Մենք զենքը վար կդնենք, եթե բանտերից ազատվեն քաղաքական նկատառումներով բանտարկված մեր հայրենակիցները։ Մենք զենքը վար կդնենք, եթե պատժվեն Սասունում ու Դաշտի գյուղերում ավերածությունների ու կողոպուտների կազմակերպիչները և հատուցում տրվի վնասված գյուղերին, պետությունը իր պաշտպանության տակ վերցնի հայ գյուղացիներին։ Մենք զենքը վար կդնենք, եթե սուլթանը իրականացնի իր խոստումը՝ հայկական մարզերին ինքնավարություն տա։ Իմացեք, որ վեց ամսվա կռվելու ուժ ու զինամթերք ունենք։ Եթե ուզում եք՝ թնդանոթներ բերեք ու հարվածեք։ Մինչև դուք ներս գաք, ձեզնից հազարավորներ կսպանվեն, ապա միայն մեզ կհաղթեք։ Իսկ մենք այն օրը, որ հրացան վերցրինք, այդ օրվանից գիտենք մեր մահը։

Բանագնացները հեռացան՝ խոստանալով կառավարչին զեկուցել հայդուկների առաջարկած պայմանների մասին։

1902 թվի հունվարի 7-ին գրած իր նամակում Անդրանիկը կոկիզ է անդրադառնում այդ իրադարձություններին։

«Դեպքի 4-րդ օրը բանակցության մեջ մտանք կառավարության հետ... Նրանք առաջնորդարանի միջոցով մի նամակ ուղարկեցին, որով պահանջում էին կամ անձնատուր լինել և կամ թողնել վանքը։ Բայց մենք կարևորություն չտալով, 8 օր միջոց ուզեցինք պատասխանելու...»

Սակայն, վախեցնելու համար, նրանք պահանջեցին անմիջապես պատասխանել, այլապես կանչենն հարձակման։ Մենք մերժեցինք, նրանք գիշերը հարձակման անցան, բայց անարդյունք։ Երեք օր հետո նոր բանագնացներ եկան, 2 կոմիսեր և 2 առաջնորդ։ Ներս առինք, երեք ժամ խոսեցինք... (ասացինք) թե մեր նպատակն է անձնազոհ լինել հայ ազգի իրավունքը պաշտպանելու համար, և եթե չբավարարվեն ներկայացված պահանջները՝ պիտի կռվինք ու մեռնինք»։

Մի վկայություն ևս. «19-րդ օրը եպարքոսից ու պատրիարքից հեռագրեր են գալիս, որոնք մի պառավի միջոցով ուղարկվեցին հեղափոխականներին»։ Վերջինները ցանկություն են հայտնում տեսնել Խոսրով և Հովհաննես վարդապետներին, որոնք վանք են գալիս Մուխտար և Մեհմեդ էֆենդիների ուղեկցությամբ։

Անդրանիկը նրանց ասում է. «Մենք տերության դեմ ապըստամբներ չենք, մենք եղած անիրավություններուն դեմ բողոքողներ ենք միայն»։

Մեկնելիս վարդապետն ասում է, որ Ֆերիդ փաշան մտադիր է վանքը ոմբակոծել։ Անդրանիկը ծիծաղելով պատասխանում է. «Մենք նրանց թնդանոթների ու հրացանների ուժն ու զորությունը գիտենք, և եթե մենք ուզենք դուրս գալ, որ ժամանակ ուզենք, կանցնենք-կգնանք»[46]։

Մինչև Պոլսից պատասխանի ստացվելը, զինադադար հայտարարվեց։ Հայդուկները որոշեցին օգտվել դրանից և առանց պատասխանի սպասելու սկսեցին նախապատրաստվել վանքից հեռանալուն։ Բոլորի համար կարվեցին սպիտակ խալաթներ։ Եվ 1901 թվի նոյեմբերի 27-ի գիշերը նրանք դուրս եկան վանքից։ Անդրանիկի խումբը գնում էր առջևից. նրան հետևում էր Կորյունի խումբը, իսկ Գևորգի խումբը թևերից հսկում էր, որպեսզի որևէ մեկը ճանապարհից չշեղվեր ու ետ չմնար։

Մութ, մառախլապատ գիշեր էր։ Ոռնում էր բուքը։ Հայդուկները յուրաքանչյուր 50—60 քայլից հետո ծնկի էին իջնում, ստուգում շրջապատը, ապա առաջ գնում։ Պաշարողական առաջին գիծը անցնելով, Գևորգը թեքվում է դեպի վեր։ Հազիվ մի քանի քայլ էր արել, երբ դեմ է առնում թուրքական դիրքերին։

— Ո՞վ եք,— ձայն է տալիս թուրք զինվորը։

— Գիշերաշրջիկ սպա եմ,— մաքուր թուրքերենով պատասխանում է Գևորգը,— մոտ եկ։

Զինվորը մոտենում է։ Գևորգը նրա հրացանը խլում է և սպանում, որ սկսվի։

Վանքից հայդուկների հեռանալու մասին ահա թե ինչ է պատմում ժամանակակիցներից մեկը. «Վանքից նախ դուրս են գալիս Գևորգն ու Հարթինը՝ սպիտակ հագած։ Նրանք, մոտենալով պահակ զինվորին, ասում են. «... այսօր լավ հսկեցեք, որովհետև հրաման է եկել, որ առավոտյան վանքը ոմբակոծվելու է, լավ պահեցեք, որ ֆիդայիները այս գիշեր չփախչեն»։

Այդ ժամանակ պաշարման առաջին գծի մի զինվոր, ինչ-որ բան կասկածելով, բղավում է. «Ֆիդայիները գնացին»։ Թուրքերը սկսեցին կրակել։ Հայդուկներից մեկը սպանվեց։

Անդրանիկը պաշտպանության գիծն անցնելով, որոշ ժամանակ սպասեց Գևորգին, բայց որովհետև վերջինս ուշացավ, թեքվելով աջ, գնաց դեպի Կոփ գյուղը։ Թուրքական կրակագծից դուրս գալով, դեպի Կոփ շարժվեց նաև Գևորգը։

Հաջորդ առավոտյան վանքի ավագ միաբանը դիմավորեց Սալեհ փաշային, նրան հանձնեց վանքի բանալիները և հայտնեց, որ հայդուկները հեռացել են։ Հայդուկային խմբի հեռանալը այնքան աներևակայելի էր, որ Սալեհ (Ֆերիդ) փաշան նույնիսկ մեղադրվեց հայդուկների կողմից կաշառված լինելու մեջ։ ...«Անսպասելի, գրեթե գերբնական այս փախուստը առասպելական գույն ստացավ, ֆիդայիները անխոցելի և անըմբռնելի դարձան ժողովրդի երևակայության մեջ... Ժողովուրդը դուրս է գալիս վհատության հեղձուկ խավարից և իր հոգու խորքում գտնում է ապրելու կամք և պայքարի արիություն...»[47]։

Բ. Դուրը արտասահմանյան երկրներ հեռագրեր ուղարկեց, որոնցում Առաքելոց վանքի կռիվը անվանված էր «ավազակային արարք», իսկ Անդրանիկն ու նրա ընկերները՝ հայության դատը շահագործող մարդասպաններ։

«Ռուսկոյե սլովո» թերթը գրեց. «Վերջապես թուրքերին, քրդերին հաջողվեց գրավել վանքը, բայց առանց նրա խիզախ պաշտպանների։ Նրանք աննկատ ու անվնաս հեռացել էին։ Այդ ժամանակից Անդրանիկի փառքը դուրս է գալիս Թուրքիայի սահմաններից շատ հեռու։ Այդ ժամանակ նրա մասին խոսել սկսեցին ոչ միայն Կովկասում ու Ռուսաստանում, այլ՝ նաև Արևմտյան Եվրոպայում»։

Ֆրանսիական «Օրորը» ևս անդրադարձավ այս դեպքերին. «Աղերսանքներով Եվրոպային դիմելուց հետո հայերն այժմ

ուրիշ տոնով են ուզում խոսել նրա հետ։ Այժմ նրանք ավելի մեծ հավանականություն ունեն ուշադրություն գրավելու»։

Բեբելը, խրախուսելով հայերի քաջությունը, գրում է. «Մենք համոզված ենք, որ ո՛չ կառավարությունը և ո՛չ էլ Ռայխստագի մեծամասնությունը չեն արձագանքելու ձեր բողոքներին։ Այդ շրջանները մինչև արտի խորքը սառն են Հայաստանի անցքերի նկատմամբ»։ Նույն առիթով աջ սոցիալիստների առաջնորդ Էմիլ Վանդերվելդը նշում է, որ բոլոր պառլամենտներում «Ռամկավարներն ու սոցիալիստները մենակ էին մնում, երբ պետք էր դատապարտել Հայաստանի ջարդերը»։

«Լա պետիտ ռեպուբլիկում» հանդես եկավ Ա. Ջիպրանին. «Ճնշումների դեմ ապստամբությունը իրավունք է։ Ձեր թշնամիներից սպասեք միայն ստրկություն, թշվառություն, վիրավորանք, տանջանք ու ավերում։

Լրիվ բնաջնջման ենթակա ժողովուրդը հույսը միայն իր հուսահատ դյուցազնական ընդվզումի վրա պետք է դնի... Եթե դուք մեծ պատերազմում, մեծ հեղափոխության մեջ զոհեիք երեք հարյուր հազար ձեր խողխողված եղբայրներին, դուք ազատ կլինեիք։ Որևէ ժողովրդի անպատիժ սպանելն անհնար է, բացի այն դեպքից, երբ այդ ժողովուրդը ինքն է իր վիզը պարզում դահիճին։ Եթե գիտե և ուզում է ինքն իրեն պաշտպանել նույնիսկ եղունգներով ու ատամներով, այդ ժողովուրդը չի հաղթվի, չի նվաճվի, չի կորչի... Ձեր Աստվածը, ձեր հույսը, ձեր հավատը պետք է լինեն ձեր քաջությունը, ձեր հանդգնությունը, ձեր ատելությունը, ձեր հուսահատությունը... Որովհետև ձեր մարդասպան թշնամիները ոչ սեռն են խնայում, ոչ տարիքը, հետևաբար ձեր պաշտպանության համար ոտքի եք հանելու աղջիկ թե երեխա և կռվելու եք, հաղթելու կամ մեռնելու համար, հանուն ձեր պատվի, ձեր անվտանգության, ձեր անկախության և ձեր ազատության։ Զինված հարձակմանը պատասխանեք զինված ապստամբությամբ։ Ուժին՝ ուժով։

Մարդկանց համար ամեն միջոց լավ է ու բարի իրենց դահիճների դեմ կռվելու... Ամեն պատերազմ, որ տանում է դեպի ազատություն, արդար է և օրինավոր։ Կա՛մ կռվել հերոսի պես զենքը ձեռքին, կա՛մ մեռնել անարգ ու վախկոտ, համակերպվող ու լալկան։ Առաջին դեպքում դուք ազատ լինելու բախտից զուրկ չեք, երկրորդ դեպքում ազատության հոտն անգամ չեք առնի։ Ընտրեցեք»[48]։

Դժվար է գերագնահատել Առաքելոց վանքի կռվի ազդեցությունը հայ ժողովրդի բոլոր հատվածների և, իհարկե, առաջին հերթին, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հայության վրա։

Այդ ազդեցությունը նման էր մի ջահի, որ եկավ մթնում խարխափելուց հոգնածներին ու հուսահատվածներին այդ վիճակից դուրս գալու ճանապարհը ցույց տալու։ Առաքելոց վանքի կռիվը մեկ անգամ ևս հաստատեց այն ճշմարտությունը, որ օսմանյան կայսրությունում փոքր ժողովուրդներն ապրելու և գոյատևելու միայն մեկ ուղի ունեն՝ զենքը ձեռքին մաքառել այդ իրավունքի՝ հարատևելու համար։ Այդ մասին Գևորգը գրում է. «Սասունը հեղաշրջված էր, ինքնավստահության և դիմադրության հոսանքը վերստին գրավում էր իր տեղը։ Բայց սարերը, քարերն ու դաշտերը հեծում են մտրակի տակ, սպանություն, ավերում, հրդեհներ, կողոպուտ, բռնաբարություն, տանջա՜նք, տանջա՜նք...

Ժողովուրդը ծայրահեղ հուսահատության և լքումի մեջ դիմում էր դավանափոխության, հուսալով ռուսական եկեղեցու գրկում անվտանգության մի հենակետ գտնել... միայն թե զուլումը դադարեր և արևի լույսը որևէ տեղից մի քիչ արդարություն բերեր»[49]։

Եվ Առաքելոց վանքի կռիվն էլ «լոկ պատահական դիմադրություն չէր», այլ «ժողովրդի գիտակցությունը ցնցելու» հերթական շարժում, որի շնորհիվ «Տարոնի աչքը, սրբած հուսալքության արցունքն ու կսկիծը իր թարթիչներից, հիմա շուտ էր գալիս դեպի վեր, դեպի բարձունքները՝ լցված հույսով և հավատքի սպասումով, հիմա սրտանց ողջունում էր Սասունին և անկախ ֆիդայուն։

Ժողովուրդը դուրս է գալիս վհատության հեղձուկ խավարից և գտնում է ապրելու կամք և պայքարի արիություն, որ հասարակության գոյության իրավունքն է հաստատում»[50]։

«Հնչակը» 1903 թ. տպեց Ս. Տաշիր* ստորագրությամբ հետևյալ բանաստեղծությունը։

Թող լռև մունջը, անդամալույծը,
Կամ, որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունենք հոգի և սիրտ փակ,
Եկ անվախ եղնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք՝
Ու այդպես լռենք»[51]։

* Ռ. Գատիանյան

ԳԱՐՏԻԶԱՆԱԿԱԿ ԿՌԻՎՆԵՐ

Առաքելոց վանքի կռվից երկու ամիս անց Գևորգը Նորաշեն հայկական գյուղում էր, որը Մուշից ընդամենը տասը կիլոմետր հեռավորության վրա էր։ Հայդուկները գիշերելու համար հարմար տներ են ընտրում։ Գևորգը, Վաղարշակը և Սեյտան Պողոսը հյուրընկալվում են նույն տանը։ Նորաշենցիներից երեք հոգի գնում են Մուշ և մութեսարիֆին ասում.

— Փաշա էֆենդի, մեր գյուղը ինը ֆիդայի են իջևանել, որոնց ուզում ենք կառավարության ձեռքը հանձնել։

— Գնացեք ձեր գյուղերը,— պատասխանում է փաշան,— դուք այսօր հարբած եք...

— Չէ, էֆենդի, մեր գլուխը կտանք, եթե ասածներս սուտ լինի. Փաղիշահի արևը վկա՝ Գևորգ Չաուշը խնզրների հետ է։ Եթե դուք ուշադրություն չդարձնեք, մենք հեռագրով կդիմենք վալիին...

Հուսեին աղա կոչված հրեշը, որը ներկա էր խոսակցությանը, պարծենալով բացականչում է.

— Ես պետք է գնամ ու բերեմ այդ Գևորգ Չաուշի գլուխը։

Առաքելոց վանքի կռվի թարմ տպավորության տակ գտնվող սպաները Հուսեինին ասում են.

— Խալիլ աղային աչքիդ առաջ բեր, նա Սերոբի գլուխը կտրեց, սակայն շատ ժամանակ չանցավ ու ինքն էլ անգլուխ մնաց։

Սակայն Հուսեինը համառում է։ Նրան տրամադրում են մեկ վաշտ ու ոստիկանական դասակ՝ Գևորգին բռնելու համար։

Սա այն Հուսեին աղան էր, որ Խալիլի հետ դավադրություն կազմակերպեց ու սպանեց Սերոբին։

Հուսեին աղան հանդիսավոր խոստում տվեց. «Գնում եմ Գևորգ Չաուշի գլուխը բերեմ։ Եթե այդ գլուխը չբերեմ, այսօրվա ընթրիքի ծախսերը ես եմ վճարելու»։ Նա հույսը դնում էր սառնամանիքի վրա, որը շրջապատման մեջ գտնվող հայդուկներին կդրկեր արագ շարժվելու ու փախչելու հնարավորությունից։

Հուսեինը մեկ ժամ հետո մտավ Նորաշեն։ Նա չգիտեր, թե Գևորգը որ տանն էր իջևանել, և երբ հայդուկների զբաղեցրած տներից անցավ, Գևորգը գյուղի զինված ջոկատին հանձնարարեց դիրքեր գրավել Առաքելոց վանքի ճանապարհին, իսկ ինքը հայդուկների հետ գնաց Մուշ տանող ճանապարհի ուղղությամբ։

Երկու հրացանավոր բարձր շենքի կտուրից պետք է պաշտպաններին հայդուկների թիկունքը։

Ժամանակակիցներից մեկը Նորաշենի իրադարձությունների մասին պատմում է. 1900 թվի վերջերին հարևան գյուղից մի քուրդ երեք ամիս շարունակ հալածում էր Վարդուշ անունով մի կնոջ, որ տա իր դստերը կնության տա իրեն։ Վարդուշը զանազան միջոցներով սիրաշահում էր քրդին, խոստանում՝ հենց որ աղջիկը մեծանա, նրան կնության տա։ Այդ մասին լսում է Գևորգը։ Նա վեց հայդուկ ուղարկում է քրդին բռնելու։ Հայդուկները քրդին բռնում են, ձիուց իջեցնում, մերկացնում, հագուստը կապում թամբից ու ձիուն բաց թողնում։ Իսկ քրդին կապում են ծառից և հարցաքննում։ Քուրդը ամեն ինչ պատմում է, վստահ, որ հայերը չեն համարձակվի իրեն ձեռք տալ։ Ի վերջո, քրդին սպանում են։ Իշխանությունները սկսում են հալածանքները՝ քրդի տեղն ու վիճակը պարզելու համար։ 1901 թվի փետրվարի 7-ին Գևորգը, 12 հայդուկներով, Նորաշենում էր։ Լրտես Մամփրեն այդ մասին լուր է տալիս իշխանություններին։ Առավոտ վաղ գյուղը շրջապատվում է Սառնամանիք էր։ Շրջապատումից դուրս գալ անհնար էր։ Գևորգին հաջողվում է խորամանկությամբ տանիքից վար բերել մի թուրք չաուշի, որին սպանում է ու նրա հագուստը հագնելով՝ մյուս հայդուկներին կարգադրում է կանացի շորեր հագնել, կծեր վերցնել, թե իբր գնում են ջուր բերելու։ Իսկ ինքը տանից դուրս է գալիս, խառնվում թուրքական զորքին ու հրամաններ արձակում։ Զորքը շարժվում է նրա ցույց տված ուղղությամբ, իսկ ինքը մտնում է մի տուն, հագուստը փոխում, մի թուղթ գրում ու փակցնում տան դրսի պատին. «Ես Գևորգն եմ, թուրքեր, ձեր հազար ֆունտը իմ մեկ ֆունտը չարժե։ Ես գնացի Սասուն։ Տղամարդկություն չէ ա՛ս ձուն-ձմռանը հազար հոգանոց զորքով գալ և խեղճ գյուղացիներին չարչարել ու տանջամահ անել»։

Թուրքերը դեմ առան գյուղի զինված ջոկատին, որը կրակ բացեց նրանց վրա։ Առաջինը գետնին տապալվեց Հուսեին աղան։ «Եվ գնդակները սուլեցին օդում։ Առաջին անվրեպ մահացու կապարը ծակեց Հուսեին աղայի ճակատն ու անցավ։ Դիակը ձիուց վար գլորվեց Մեղրագետի ալիքների մեջ»։ Թուրքերը, մի քանի տասնյակ զոհեր տալով և մնալով առանց հրամանատարի, նահանջեցին և լցվեցին մի կիսաքանդ գոմ։ Նրանք մոտակա գյուղերից օգնություն ստանալու հույսով օդ էին կրակում։ Գևորգը պաշարեց գոմը, թուրքերին փակեց այնտեղ և երկու հայդուկի գոմի դռան մոտ պահակ նշանակեց։ Գյուղը նորից պաշարվեց, սակայն թշնամին չէր համարձակվում գյուղ մտնել։ Մինչև երեկո դիրքային կռիվներ գնացին։ Երբ մութն ընկավ, Գևորգը գյուղացիներին հանձնարարեց մնալ տներում և տպավորություն ստեղծել, որ իրենք կռվին չեն մասնակցել, իսկ ինքը իր

յոթ ընկերների հետ շարժվեց դեպի լեռներն ու անհետացավ մթության մեջ։

Սա մեկն է Գևորգի ապշեցնող ճակատամարտերից։ Ութ հայդուկ ու մի քանի գյուղացիներ կռվում են 2000-անոց թուրքական կանոնավոր զորամասի և 2000 զինված քրդերի դեմ ու չեն պարտվում։

«Բազմությունը ցրվեց, ինչպես մշուշը ուժեղ քամուց, խմբի առաջապահ մասը բարձրանալով լեռն ի վեր, գրավեց Ծծմակի քիթը։ Երբ պաշարողները գլխիկոր ետ դարձան, Գևորգը իր ընկերներից մի քանիսին ուղարկեց սար, իսկ ինքը իջավ դաշտ»։

Հուսեինի դիակը Մուշ տարան։ Նրան դիմավորեց բազմամբոխ խուժանը։ Թուրքերը զայրույթով շպրտում էին հայերի երեսին. «Հուսեինին էլ կերաք։ Եթե մարսեք, լավ»։ Իսկ Մշո կառավարիչը սպառնաց Նորաշենը գցել Մոկունքի օրը։

«Այդ օրերին շարիքը կարծես անդադար հետապնդում էր Գևորգին։ Հավատորիկի Շեխ-Նիստ գոմերի մոտ նա հանդիպեց քրդերին, հարկ եղավ նորից աննպատակ կռիվ մղել և հաղթական շարունակել իր ճամփան»։ Այդ կռիվներն էլ ավելի բարձրացրեցին հայդուկների հեղինակությունը։

1902 թ. Սասուն եկավ դաշնակցական կուսակցության ակտիվ գործիչներից Վահան Տոդրամաճյանը։ Սասուն հասնելուց հետո Վահանը տակտիկական նկատառումներով, նպատակահարմար գտավ Գևորգին Սասունից առժամանակ հեռացնել։ Խուսափելով երկպառակությունից այն պահին, երբ Սասունը նոր, խոշոր իրադարձությունների շեմին էր, Գևորգը ենթարկվեց Վահանի վճռին։ Նա 1902 թ. մեկնեց Վան, իսկ այնտեղից բարձրացավ Սիփանի լանջերը։ Գևորգն այնտեղ կազմեց մի զինված խումբ և շրջում էր Արճեշի գյուղերով, որտեղ տեր ու տիրական էր Քյոռ Հուսեին փաշան։ Արճեշի հայերի վիճակը քրդական շրջապատման մեջ շատ ծանր էր։ Մի անգամ Գևորգը իր մարտիկներով դուրս է գալիս այդ քրդերի դեմ ու նրանց սպառնում՝ գյուղից հեռացեք, եթե ուզում եք ողջ մնալ։ Քրդերը զարմանքից քարացել էին, նրանք այդ կողմերում առաջին անգամ էին զինված հայեր տեսնում և այն էլ՝ այդպիսի հրամայական տոնով խոսող։

Գևորգի հեռանալը թե՛ Սասունում և թե՛ Տարոնում առաջ բերեց բուռն դժգոհություն։ Մասնավորապես ըմբոստացան տալվորիկցիները։

Դաշնակները զիջեցին, և հին ֆիդայիների մի մեծ խումբ ջարժվեց դեպի արևելք՝ Գևորգին բերելու։ Գևորգին դիմավորեցին հրացանների տոնական համազարկով։

1902 թվականը խաղաղ անցավ։ Եղան միայն մանր ընդհարումներ։ Բայց իշխանությունների կողմից հայերի ճնշումն ու հալածանքները ոչ միայն չէին դադարում, այլ գնալով ավելի այլանդակ բնույթ էին ստանում։ Հարստահարման օրինակներն ու փաստերը բազմաթիվ էին, դրանցով էր հագեցած Արևմտյան Հայաստանի յուրաքանչյուր բնակավայրի առօրյան։ Այդ նկատի ունենալով՝ Ռուանեն ֆրանսիական պառլամենտում արտասանած ճառում ասաց. «Մասնավոր ոճիրներ չեն, որոնց ենթակա են հայերը։ 1900 և 1901 թվականներին այն դրության մեջ էին, ինչ-որ էին 1892, 1893-ին, մեծ ջարդերի նախօրեին։ Բոլոր փաստերը վկայում են, որ սուլթանը, քաղաքակրթության դեմ այս ոճիրների ուղղակի և պատասխանատու հեղինակը, իր բնաջնջումի ծրագրից ձեռք չի քաշել։

Որտե՞ղ է վերջանում անհատական սպանությունը և որտե՞ղ է սկսվում կոտորածը...»։ Այնուհետև նա ընթերցում է Մշո դաշտից «Պրո Արմենիայի» ստացած մի նամակ։ Նամակագիրը հայտնում է, որ «ավերված է 11 հայկական գյուղ, սպանությունների թիվը հասնում է 106-ի... Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1900—1901 թթ. կարելի է կոչել կոտորածների նախապատրաստության շրջան...»։ Իշխանությունները մի կողմից միջոցներ են ձեռնարկում գալիք կոտորածները քողարկելու, իսկ մյուս կողմից մահմեդական ազգաբնակչությանը հրահրում են «ամենալայն կոտորածների և եղեռնագործության։ Այս նպատակով, երբ որևէ գյուղում հայ է սպանվում, երբ տներն են հրդեհում, երբ հոտերն են քշում տանում, թուրք իշխանություններն իսկույն հայտարարում են, թե այդ չարիքների հեղինակները հայ հեղափոխականներն են»[52]։ Դեռ ավելին, զգալով որ նման պնդումները կարող են հավատ չներշնչել, իշխանությունները «հայերից պահանջում են, որ նրանք իրենց սածը հաստատեն»։

1902 թ. ապրիլի 2-ին Մոնակոյում տեղի ունեցավ Խաղաղության 11-րդ համաժողովը, որտեղ Հայկական հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Պիեռ Քիյարը։ Այդ հարցի վերաբերյալ ընդունվեց բանաձև, որը կոչ էր անում Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին. 1. Հասագրա.ն հրավիրել համաժողով՝ նվիրված Հայկական հարցին։ 2. Նկատի ունենալով

որ նոր կոտորածներ են սպասվում Սասունի կողմերում, խնդրվում էր նույն պետությունների՝ իրենց հյուպատոսներին ուղարկել Մուշ, քանի որ սոսկ եվրոպական պաշտոնական վկաների ներկայությունը բավական է արգելելու արյունոտ անցքերի կրկնումը։

«Պրո Արմենիայում» Անատոլ Ֆրանսը տպագրեց մի կոչ՝ հայերի նոր ջարդերի առաջն առնելու համար միջազգային համաժողով հրավիրելու մասին։ «Ժամանակը սուղ է,— կարդում ենք կոչում,— զորանոցները բարձրանում են Զեյթուն ու Սասուն։ Ազդարարում են նոր աղետների մասին։ Մարտիրոս ժողովրդի վերապրուկներին կարելի է փրկել միայն կառավարությունների միջազգային համաձայնությամբ...»։

1902 թվի փետրվարի 3-ին հանդես գալով ռայխստագում, գերմանական սոցիալիստ Գրադնաուերն ասաց. «Տարիներ ի վեր և առավել ևս այսօր հարաճուն չափով հայերի շրջանում դարձյալ կատարվում են սարսափելի ավերումներ ու կոտորածներ։ Դրա պատճառը թուրքերի ու հայերի ցեղական ու կրոնական տարբերության մեջ չէ միայն, այլ նաև տնտեսական ու քաղաքակրթական ասպարեզում։ Հայ ազգաբնակչությունը հակում ունի դեպի Եվրոպական հաստատություններ և ներկայանում է իբրև արթուն, կենդանի և առաջադիմող մի ժողովուրդ, որը ձգտում է ազատվել Տաճկաստանի չափազանց ապականված մթնոլորտից»[53]:

Փարիզի «Լը Սիգնալ» թերթը գրում է. «... Ոչ մի տարակույս չկա, (որ) սուլթանը Եվրոպայի անտարբերությունը դաշնակից ունենալով պատրաստվում է նոր կոտորածներ սկսել։ Մեծ մարշասպանը հրամայել է սկսել Սասունից։ Սակայն վերապրող սասունցիները գիտեն արժանապատվորեն մեռնել։ Շուտով ջարդերը համընդհանուր բնույթ կստանան և արդեն ուշ կլինի դիմակայել դրանց։ Մարդասպանի հաշվարկներով՝ կարճ ժամանակ անց այլևս հայ չի մնա»[54]:

1902 թ. հուլիսի 17-ին Բրյուսելի Շերբեկ արվարձանում, հակառակ Բ. Դոան ջանքերի, բացվեց Հայասերների միջազգային համաժողովը։ Մասնակիցների թվում էին Ֆ. Պրեսանսեն, Ժ. Ժորեսը, Է. Վանդերվելդը, Վ. Լազարը և ուրիշներ։ Զեկուցող Պ. Քիյարը նշեց Հայկական հարցի լուծման երեք հնարավորությունների մասին՝ «ժողովրդի բնաջնջում, Հայաստանի միացում Ռուսաստանին և վարչական ռեֆորմներ»։

Այս համաժողովի նախագահին Պ. Քիյարը տպագրեց «Հայաստանի համար» գիրքը։ Գրքում ցույց է տրվում, որ հայերի

«վիճակը ծանրանում է օրեցօր և այդ ժողովրդի ոչնչացումը առաջ է տարվում մեթոդիկ ծրագրով»։

1. «Հայերին արգելված է ոչ միայն Թուրքիայից արտասահման գնալ, այլ նույնիսկ երթևեկել գավառից գավառ, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ։ Հետևապես հայի առևտուրը բոլորովին կաշկանդված է, և երբ վարչական միջոցներով ներսում սով է կազմակերպվում, շատ դյուրին է սովամահ անել մեծ թվով մարդկանց։ Այդպես էր Վանի սովի ժամանակ 1896 և 1897 թվականներին։

2. Հարկահաններ են թե՛ թուրք կառավարությունը և թե՛ քրդական աշիրեթները։

3. Հայերի նկատմամբ ստիկանության ստոր վարքագիծն ու մղձավանջը բանտերում։

4. Այն վայրերում, ուր հայ ազգաբնակչությունը, չնայած դաժան ճնշումներին, դեռ ընդունակ է «իրեն պաշտպանելու, կառավարությունը բնակեցնում է մահմեդական գաղթականներ՝, որոնք կեղեքում են հայ հողատերերին»։

5. «Մանր» սպանությունների մեթոդը իրականացնելով, տաճիկ կառավարությունը բնավ չի մոռացել խոշոր ջարդերի ծրագրերը»։

«Կան երկու վայրեր, ուր կառավարությունը առանձին ջանքեր է թափում բնաջինջ անելու հայ համայնքները, որոնք դեռ կարող են լուրջ դիմադրություն ցույց տալ. դա Զեյթունն է և Սասունը»։

Անդրադառնալով Սասունին, Քիյարը գրում է. «1894 թվականից ի վեր կառավարությունը իր հին տակտիկայով ձգտում է ցած բերել լեռնցիներին դեպի Մշո դաշտ՝ այնտեղ խմբուլն ջարդելու նպատակով»[55]:

Անգլիական և գերմանական «Գլոբուս» թերթից հետևյալ մեջբերումը. «Պետք է զգուշանալ դիվանագիտական անխոհեմ քայլերից, որոնք կարող են Փորթ Ասիայի մահմեդականների մոտ կարծիք ստեղծել, թե ուզում են հայերին նրանց տերը դարձնել։ Եվ անցյալում դիվանագիտական սխալ է եղել՝ պահանջել ռեֆորմներ միմիայն քրիստոնյաների համար և չմտածել մահմեդականների մասին, որոնք նույնպես կրում են բռնակալության լուծը», Քիյարը պատասխանում է. «Այդ պատճառաբանությունները նոր չեն, դրանք հնարված են Եյլդզում, և Եյլդզից են տարածվել կոտորածի հրահանգները... Եյլդզից էր նույնպես, որ հավատացրեցին մահմեդականներին, թե ռեֆորմները, իբր, ուղղված են նրանց դեմ...»։

«Լա պետիտ ռեպուբլիկում» 1902 թ. մարտի 10-ին Ժան Ժորեսը տպագրեց «Արևելք» հոդվածը։ «Երեք տարի առաջ,— գրում է Ժորեսը,— երբ հայկական շեների հրդեհը բռնել էր Արևելքի երկինքը, և հարյուր հազարավոր անմեղ զոհերի դիակներն ասես պատվանդան էին դարձել Աբդուլ Համիդի հուշարձանի համար, քաղաքակիրթ աշխարհի խղճի զմռսված դռնից պոկվեց սարսափի ճիչը»։

Ֆ. Պրեսանսեն մերկացնելով եվրոպական պետությունների ենապաշտ քաղաքականությունը, նշեց «նրանց մեղսակցությունը մեծ մարդասպանի հետ, որի ոտքը տապանաքար է դարձել մի շարք ժողովուրդների համար։ ... Մարդասիրության և ազատության անունից նրանց հղված կոչերը փուչ խոսքեր են միայն։ Պետք է գործել անհապաղ։ Չկա ոչ մի արդարացում մեր դանդաղկոտության համար։ Մենք պետք է վերացնենք այն շարիքը, որն արյամբ է հեղել Հայաստանը»։

«Հայտնի է,— շարունակում է Պրեսանսեն,— որ մինչև Արևելյան հարցը լուծվի, սպառնալից անակնկալներ պետք է ժայթքեն այն խարույկից, որը միշտ բորբոքվում է արևելյան ինկվիզիտորի ձեռքով»։

Եվրոպական դիվանագիտությունը «թույլ տվեց, որ Արևելքի շարաշուք բռնակալը հարցը խեղդի անպաշտպան ժողովուրդների արյան մեջ։

Դա մի ոճիր էր մարդկության դեմ...»։

Գլադստոնը հայտարարեց. «... Պաշտպանել հայերին ու Հայաստանը՝ կնշանակի պաշտպանել Եվրոպան»։

«Աբդուլ Համիդը պատվիրում է կոտորել, մորթել, լկել ու բռնաբարել քրիստոնյա ժողովուրդներին, բայց բավական է այդ բազմաշարշար արարածներից գոնե մեկը համարձակվի վայրագ գազանին կարմրաշեկ գնդակ կամ պսպղուն դաշույն հյուրասիրել, որ սկսվի ակնջ խլացնող գոռոցների կոկոցը...»[56]։ Եվրոպայի լավագույն մտածողների, քաղաքական և հասարակական գործիչների, մտավորականության այս ահազանգերը, իհարկե, անհետևանք չմնացին։ Դրանք հայ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգի դեմ բարձրացրին համաշխարհային հասարակական կարծիքը։

Դրանք հարկադրեցին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ սուլթանի վրա ճնշում գործադրելու, որպեսզի նա զանգվածային կոտորածներից ձեռնպահ մնա։

Դրանք բարոյական մեծ աջակցություն էին ապրելու իրավունքի համար մաքառող արևմտահայության համար։

ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

1902 թվականի սկզբին ակնհայտ դարձավ, որ Սասունը դառնում է զանգվածային կոտորածների թատերաբեմ։ Թուրքական իշխանությունները համառ հետևողականությամբ զորքեր էին բերում ու աստիճանաբար բոլոր կողմերից Սասունը վերցնում պաշարման օղակի մեջ։ Նախապատրաստական աշխատանքները տարվում էին այն հաշվով, որ Սասունի վրա հարձակումը սկսվեր 1902 թվի գարնանը։ Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր։ Բերենք դրանցից միայն մեկը. 1902 թ. մարտին Տարոնից գրում են. «Տեղիս կառավարությունը սկսել է պաքսիմաթ եփել տալ, ձյունը հալվելուն պես իր դիտավորությունն է ամբողջ զորքը Սասուն հանել, մի կողմից տղաներին հալածելու և մյուս կողմից կայսերական իրադեով զորանոցներ կառուցելու Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ և ստրատեգիական այլ կետերում, իսկ Նովասարի ժողովրդին էլ՝ ցած իջեցնել։ Արդեն հասկանում ենք, թե ինչու է Տարոնը դարձել զորքերի կենտրոնատեղի։ Աշնանը Կարինից ու Խարբերդից եկած զորքերին 10 օր առաջ 500 հեծյալ զորք ևս ավելացավ»[57]։ Սակայն 1902 թ. հարձակում տեղի չունեցավ, այն հետաձգվեց 1903 թ. գարնանը։ Թե ինչու հարձակումը հետաձգվեց, կան բազմաթիվ բացատրություններ։ Օրինակ, Մուշից 1903 թ. մարտի 20-ին ստացված նամակում կարդում ենք. «Անցյալ 1902 թ. տաճիկ կառավարությունը հարկավոր պատրաստություններ տեսել էր Սասունն ու Մշո դաշտը արյան թատերաբեմ դարձնելու... (սակայն) ֆրանսիական կառավարության աղդու միջամտությամբ գործակալ ուղարկվեց Մուշ, կոտորածի ուրվականը տեղի տվեց... Մի փոքր մխիթարություն էր դա...»[58]։

Այս կարծիքը տիրապետող էր նաև եվրոպական հասարակական-քաղաքական շրջաններում։

Իհարկե, Ֆրանսիայի միջամտությունը որոշակի դեր խաղաշել է, բայց միայն դրանով բացատրել թուրքական հարձակման

հետաձգվելը, ոչ միայն թերի, այլև սխալ կլինի։ Եթե թուրքական իշխանությունները որոշել էին Սասունի վրա հարձակվել և պատրաստ էին այդ հարձակմանը, ապա հազիվ թե նրանք հրաժարվեին իրենց մտադրությունից լոկ այն պատճառով, որ Ֆրանսիան իր գործակալին Թուրքիա էր ուղարկել։ Հավանաբար, վճռական դերը խաղացել է ոչ թե այդ միջամտությունը, այլ այն, որ թուրքական կառավարությունը կատարված նախապատրաստական աշխատանքները բավարար չէր համարում Սասունի վրա հարձակվելու։

Շարադրվածից ակնհայտ է, որ Սասունի վրա հարձակվող գլխավոր ուժը կանոնավոր բանակն ու ոստիկանությունն էր, այսինքն՝ այդ հարձակումը իրականացնում էր օսմանյան կառավարությունը։

Սասունցիները գիտեին, որ կանգնած են բնաջնջման վտանգի առաջ և փրկության ուղիներ էին փնտրում։

Ահա նրանց օգնության կանչերից մեկը։ «Գարուն է։ Տաճիկ կառավարությունն արդեն տվել է հարկավոր հրամանը՝ անցյալ տարվա ծրագիրը ավելի լայն սահմաններում գործադրելու։ Քրդական աշիրեթները պիտ հավաքվեն Մուշ, հայտարանցի մի աղա 500 հոգով պիտի այցելի Ալաշկերտ ու Բասեն, ջամատանցիների աշիրեթը պիտի հավաքվի Բասենի և Ալաշկերտի սահմանին։ Ամենուրեք պատրաստություններ են տեսնում անցյալ տարվա պակասը այս տարի լրացնելու... Եթե մեր հայ եղբայրակիցները շուտափույթ օգնության չգան, մենք, իբրև ոչխարի հոտ, անմոունչ զոհ պիտի դառնանք մարդկային սպանդանոցում և, որ ամենաաններելի ոճիրը կլինի մեզ համար, մեր մի բուռ քաջ զինվորներն ու աղատասեր լեռնցիները իրենց արյունով պիտի ներկեն Սասնո ժայռերը՝ հավիտենական անեծք կտակելով մեզ...»։

Նույն իրողությունը հաստատում է նաև «Դ' ինֆորմասիոնը», որն իր 1803 թ. հունվարի 17-ի համարում գրեց. «Հայտնի է, որ դրությունը Մուշի կողմերում վերին աստիճանի անհանգստացնող է։ Չորս քուրդ ցեղեր, կանոնավոր զորքերի հետ, շրջթայել են Սասուն լեռնավայրը՝ ֆիդայիների բանակին տիրելու և Սասունի ըմբոստներին մեկընդմիշտ ոչնչացնելու համար...»։

Նույն աղբերականը միաժամանակ նշում է, որ Սասունում տիրող վիճակի վրա «բարերար ազդեցություն ունեցավ եվրոպա-

կան տերությունների հյուպատոսական գործակալների գալուստը»։

Եվրոպայի քաղաքական գործիչները լավ էին հասկանում այս միջոցառման անցողիկ և ոչ որոշիչ նշանակությունը։

Դրա լավագույն վկայությունն է Ռուան քաղաքում 1903 թ. սեպտեմբերին տեղի ունեցած խաղաղության 13-րդ համաժողովի բանաձևը, որի մեջ միանշանակ արձանագրված էր, որ լրացուցիչ հյուպատոսների նշանակումը «... թեպետ կարող է արգելել կամ առժամանակ հետաձգել մեծ կոտորածները, բայց չի կարող փրկել դանդաղ բնաջնջումից մի ամբողջ ժողովրդի»[59]։

Մայիսի 20-ին Ռեյտեր գործակալությունը հայտարարեց. «Լեռնային վայրերում ապստամբների կենտրոնացումն անհնար դարձնելու և Սասունի շրջանում խաղաղություն վերահաստատելու համար կառավարությունը ծրագրել է քարուքանդ անել բոլոր հայ գյուղերը և ժողովրդին բնակեցնել Դաշտում, որտեղ ավելի հեշտ էր լինելու նրանց վրա հսկել»։ Հասկանալով ստեղծված վիճակի ահավորությունը և գիտակցելով, որ փրկվելու այլ միջոց և ուժ չկա, սասունցիները հանգում են ինքնապաշտպանության գաղափարին։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն պառլամենտի նիստերից մեկում արտասանած ճառում ասել է. «Բնական է, որ ժողովուրդները, որոնք անպատիժ թալանվում են և բռնաբարվում, վերջապես գիտակցեն, որ չկա ավելի վատթար վիճակ, քան ջարդ-կոտորածի մշտնջենական սարսափի տակ ապրելը»։

«Լ' Էրոպ» շաբաթաթերթի 55-րդ համարում կարդում ենք. «...Եթե այսպես շարունակվեն հարստահարությունները և ջարդերը, անխուսափելիորեն Մակեդոնիայում և Հայաստանում կրոնական ընդհանուր ապստամբություն, այն էլ՝ մոտ ժամանակներում, հնարավոր է՝ եկող գարնանը...»։

Սուլթանը ջղագրգիռ տագնապով ձգտում էր Սասունի հարցը օր առաջ լուծել, քանի որ օսմանյան կայսրության տարածքում սպառնալից չափերով ծավալվում էին ընդդիմադիր շարժումները։ Այդ շարժումները խորամանկ հեռատեսությամբ ձգտում էին՝ մերձենալ հայկական շարժման որոշակի հոսանքների հետ ու օգտագործել դրանց հնարավորությունները՝ սուլթանի դեմ մղվող պայքարում։

1902—1903 թվականներին մի քանի անգամ Մուշի սպանները կապերի մեջ մտան հայդուկների հետ։ Ոմանք հայդուկներին տեղեկություններ էին հաղորդում կառավարչի գործողությու-

ների, թուրքական զորամասերի քանակի, նրանց տեղաշարժերի ու ծրագրերի մասին։ Զորս սպաներ միացան հայդուկներին և կռվեցին իշխանությունների դեմ։ Այս պայմաններում հայ աշխատավորությունն ու թուրքական տեղական իշխանությունները իրար դեմ էին կանգնած որպես հակադիր ռազմական ուժեր։ Օսմանյան հսկա կայսրության տարբեր մասերում ճնշված ժողովուրդների, մասնավորապես՝ մակեդոնացիների պայքարը, սուլթանին հնարավորություն չէին տալիս մեծաթիվ զորքեր կուտակելու Տարոնում։ Սասունցիները եռանդուն նախապատրաստական աշխատանքներ էին ծավալել։ Նրանք այլևս չէին թաքցնում, որ պատրաստվում են թուրքական հարձակմանը հակահարված տալու։ Գրում են Տարոնից. «Ապշում են թուրքերը, զարմանում այս հանդգնությունից։ Նրանք միշտ տեսել էին հեղափոխականը իր գաղտնի դերի մեջ, միշտ թաքնված ու ժրաջան, միշտ աներևույթ ու գործոն, իսկ այսօր դերը փոխված է, նա հրապարակ է եկել ու բացահայտ է գործում, իսկ օսմանյան կառավարությունը իր ուժերից վեր է գտնում նրան խոչընդոտելն ու պատժելը։ Դեռ շատ ժամանակ առաջ չէր, երբ քուրդը ֆիդայի էր տեսնում, ամբողջ գավառը իրար էր խառնվում, աշիրեթներ էին ոտքի կանգնում, իսկ թուրքը երկյուղից պապանձվում էր։ Այսօր քուրդը տեսնում է ֆիդայուն և չտեսնելու է տալիս։ Կառավարությունը աշիրեթներին հրահրում է ֆիդայու դեմ կռիվ գնալու, իսկ նրանք մերժում են։

Փոխվել են ժամանակները։

... Բաղեշի կուսակալը նկատի ունենալով ֆիդայիների համարձակ նիստ ու կացը Սասնո անհաղթ լեռների կատարին, հեռագրում է Բ. Դուռ և հրաման է խնդրում գնալ և նրանց ջնջել։ Բ. Դուռը պատասխանում է. «Եթե կարող եք գործը հաջողությամբ կատարել և 24 ժամում բոլորին ջնջել, դեռ լուրը Եվրոպա չհասած, հարձակում գործեցեք»։ Կուսակալը պատասխանեց. «Ոչ 24 ժամվա և ոչ էլ 24 օրվա ընթացքում նրանց հաղթել չենք կարող»[60]։

Թուրքական 10 հազարանոց մի բանակ դիրքեր գրավեց Մուշ քաղաքի հարավային շրջաններում։ Թուրքական զորաջոկատներն աստիճանաբար թափանցեցին Սասուն և իրենց ձեռքը վերցրեցին ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող կետերը։ Երկու վաշտ տեղավորվեց Շենիկ և Սեմալ գյուղերում, այսինքն՝ հսկողության տակ վերցրին Սասունի դռները։ Հետո այդ զորքերի թիվը զգալիորեն ավելացավ, ինչը գործնականում անհնար դարձրեց հայդուկների ազատ տեղաշարժերը նույնիսկ բուն Սասունում։ Ստեղծվեց վտանգավոր վիճակ։ Գևորգը այդ լավ էր հասկանում և որոշեց ինչ գնով էլ լինի նրանց դուրս շպրտել Սեմալից։ Նա Սեմալի զինված խմբերին հանձնարարեց դիրքեր գրավել և կրակ բացել թուրքական զորամասերի վրա, իսկ ինքը իր ջոկատով շրջանցեց այդ զորամասերի թիկունքը և շեշտակի հարձակման անցավ։ Թուրքական զորամասերը, առանց լուրջ դիմադրություն ցույց տալու, նահանջեցին դեպի Կուրտիկ։ Գևորգը Կուրտիկի բարձունքներին տեղադրել էր մի ջոկատ, որը թուրքերին ծանր կորուստներ պատճառեց։

«Անցած ամառվա հունիս-հուլիս ամիսներին,— գրում են Սասունից,— կառավարությունը բանակ դրեց Գելիեգուզանի մոտերքում։ Ամեն կողմից լուրեր էին հասնում մեզ, որ քրդերը, զրգռված, նախահարձակ պիտի լինեն այստեղի ազգաբնակչության և կազմակերպված պաշտպանական խմբերի վրա։ Բայց կռվից խուսափելու համար, տխուր անցյալից դաս քաղած սասունցին, որոշեց պաշտպանվել լեռներում և հարմար դիրքեր գրավեց Գեբինի և Անդոկի վրա։ Այստեղ փոխադրվեցին ռազմամթերքի և սննդի պաշարները։ Զենք ունեցողները բաժանվեցին խմբերի և սկսեցին ամրություններ ստեղծել կռվի համար։ Ժողովուրդը իր ունեցվածքով տեղավորվեց սարերի ստորոտներին։ Թե՛ զինվածները, թե՛ անզենները կազմ ու պատրաստ էին։ Այլևս ծածուկ բան չկար... Երկու բանակներ, որ իրարից միայն երկու ժամվա տարածությամբ էին բաժանված, առավոտից մինչև երեկո իրար էին դիտում»։ Տեսնելով հայերի կռվելու վճռականությունը, թուրքերը խուսափեցին հարձակումից։ Հուլիսի վերջին Սասունի և Մուշի միջև կապը կտրվեց, իշխանությունները նաև փորձ արեցին ժողովրդին հայդուկներից մեկուսացնելու, սակայն այդ նրանց չհաջողվեց։

Բացի այդ, «Բաղեշի կառավարության, Մուշի մութեսարիֆության կողմից պատվիրակներ, զորապետներ ցրվեցին քուրդ աշիրեթների մեջ՝ նրանց իրար հետ հաշտեցնելու, կրքեր բորբոքելու և Սասունի վրա հարձակման տանելու համար»[61]։ «Հուլիսին քրդերը և մի քանի ծպտյալ ոստիկաններ երկու անգամ ուխտի պատրվակով եկան Անդոկ՝ հայերի գրաված գագաթի հանդիպակաց գագաթը։ Եկան, հրացաններ պարպեցին, բայց

տեսնելով մերոնց արհամարհական վերաբերմունքը, վախեցան առաջանալ և ետ դարձան...»։ Օգոստոսին Թուրքերը եռանդուն քայլերի չդիմեցին։ «Հրամանատարը ուզեց զորքերով դալ ու այցելել ալյանքցիների կառուցած նոր մատուռը, բայց նրանք չընդունեցին։ Ուրիշ անգամ բագրանցի քրդերը ջրի պատճառով վեճ ունեցան սեմալցիների հետ, վերջիններս հրացանագությամբ ետ մղեցին նրանց, և քրդերը չհամարձակվեցին առաջ դալ։ Զանազան տեղերից լուրեր եկան, թե կառավարությունը պատրաստվում է գրավել Շենիկը, Սեմալը, Գելին և Քեշաբը։ Թշնամին մտածում էր առանց կռվի հաղթել։ Անդոկում ու Գեբինում ցուրտը սկսվել էր։ Ջրի և վառելիքի պակաս կար։ Ժողովուրդը նեղվում էր։ Եթե գյուղերը գրավեին, ապա հնարավոր չէր դրսում երկարատև կռիվ մղել ու դիմանալ։ Խորհուրդ գումարվեց և որոշվեց լցվել գյուղերը։ Այդ որոշումը անմիջապես գործադրվեց։ Նույն օրերին մեր տղաները ձերբակալեցին երկու ոստիկանների, մեկը՝ քուրդ, մյուսը՝ հայ։ Քուրդը ազատ արձակվեց և այդ հանգամանքը թշնամու վրա թողեց մեծ տպավորություն, ավելի ևս բարձրացրեց հայերի վարկը»։

Սեպտեմբերի կեսին բանակն էլ մեկնեց, և քիչ անց կառավարությունը Տափքի իր կայմակամին, հազարապետին և ոստիկաններին ետ կանչեց Մուշ։

«Մշո թուրքերը գրգռվեցին, որ կառավարությունը Սասունը թողեց ֆիդայիներին։ Կուսակալը, որ նոր էր մեկնել, նորից վերադարձավ Մուշ... Այսօր հայերը Սասունի բացարձակ տերն են, որ գրեթե անկախ վիճակի մեջ է։ Կառավարությունը ոչ տուրք է հավաքում, ոչ էլ տեղի գործերին միջամտում։ Թե մոտ և թե հեռու մայրերում, ավելի քան երբեք, արձագանք է գտել ֆիդայու հռչակը... Կառավարությունն էլ անգործ չի նստել, լավ գիտե, թե ինչ է կատարվում։ Ինչպես երևում է, չի ուզում ներկայումս աղմուկ բարձրացնել, բայց իր պատրաստությունները տեսնում է։ Վերջերս վեց թնդանոթ բերեց Մուշ։ Ասում են, թե էլի պիտի բերի և Մուշը ռազմական առումով պետք է հզորանա... Գարնանը ընդհարումը անխուսափելի է թվում»։

«... Թուրքական ռազմագիտությունը գործի է դնում իր բոլոր հնարքները՝ մեկընդմիշտ ընկճելու ըմբոստ լեռնականներին և ջնջելու ֆիդայիների հետքը...»[62]։

Այդ հնարքներից մեկը հին էր ու ծանոթ. հարձակումը սկսելու էին քրդերը։ Նպատակը հասկանալի էր՝ թող քրդերը սպանեն հայերին, իսկ հայերը՝ քրդերին։ Եվ եթե քրդերին չհաջողվի հայերին ծնկի բերել, այն ժամանակ մարտի մեջ կմտնի կանոնավոր բանակը և կավարտի հայերի բնաջնջումը։

Օգոստոսի 7-ին Սասունից հայտնում են. «Մուշի կառավարությունը ուղարկեց դեպի Սասուն... հինգ վաշտ զորք։ Հրահանգ է տրված քուրդ աշիրեթություններին ամառվա ամիսներին Սասուն անցնելիս գալ առանց ընտանիքների։ Հաղորդակցությունը Մուշի և Սասունի միջև ընդհատված է։ Հուզմունքը մեծ է»[63]։ «Արդեն գիտենք,— գրում են Բասենից,— որ մյուս աշիրեթներին հրամայված է գարնանը հավաքվել Մուշում։ Կոտորածի վտանգը ընդհանուր է, և ժողովուրդը զուրկ է դիմադրության միջոցներից... Անզորության և անօգնական զայրույթով լի՝ շվարած ենք մնացել տարածված լուրերի և կառավարության հրահանգների դիմաց...»։

Հուլիսի 27-ին գրում են Բասենից. «Կարինի և Մուշի միջև առևտրական հարաբերությունները կառավարության հրամանով կտրվել են։ Կարինում բերդը և քաղաքը պահպանելու համար մնացել են միայն թնդանոթաձիգները։ Տեղափոխած զորքի մի մասը թողել են Խնուսի բերդում, իսկ մնացածը (870 հոգի) ուղարկվել է Մուշ։

Կառավարությունը քրդերին գրգռելու համար լուր է տարածել, թե ֆիդայիները մտադիր են հատկապես քրդերին կոտորել։ Սրանք էլ մեծ թվով պատրաստվում են նախահարձակ լինել Սասունի վրա։ Կառավարությունը իր զորքերը հարձակման էր տանելու քրդերից հետո, ինչպես այդ արվեց Սասունի կոտորածի ժամանակ։ Քրդերի առաջին հարձակումը եղավ Շենիկի վրա, բայց հայերը քշեցին նրանց, իսկ զորքերը, փոխանակ օգնության հասնելու, հավաքեցին վրանները և իջան Մուշ՝ իբր թե քաղաքը պաշտպանելու նպատակով։ Երևի բուն պատճառն այն էր, որ Վանից Մուշ էին հասել անգլիական և ռուսական հյուպատոսներն ու ֆրանսիական փոխհյուպատոսը, որոնց աչքի առջև ներկա հանգամանքներում կառավարությունը հայերին կոտորելը նպատակահարմար չի համարում»[64]։

Այդ նույն ժամանակ Մուշից գրում են. «... Թուրք կառավարությունը այժմ ամեն կարելի և անկարելի միջոց ձեռք է առել քանդելու, բնաջնջելու Սասնո և Մշո շրջակա լեռնաբնակ հայ գյուղերը և դրանք լցնելու մոլեկրոն թուրքով, բարբարոս և վայրենի քրդով ու արյունարբու գող-ավազակ չերքեզներով։

Թուրք կառավարության այս սև նպատակի համար հատուկ հրահանգով եկել Մուշ և Մշո դաշտի գյուղերն են լցվել երեք հազարից ավելի գաղթական չերքեզներ, որոնք օրավուր սպասում են Սասնո կոտորածին, որ գնան ու գրավեն Սասնո և Սիմ լեռնաշղթայի գեղեցիկ, լեռնաբնակ հայ գյուղերը... Մյուս կողմից, այս օրերս այստեղ են եկել Բուլանրխի, Մանազկերտի, Խնուսի և Վարդոյի համիդիե գնդերի պետերը, որոնց գաղտնի հրահանգված է միշտ պատրաստ մնալ, որ ազդանշան ստանալուն պես հարձակվեն Սասունի վրա... Տեղական կառավարությունը լուր է տարածել, թե զորքը գնում է Մերդին, Մանազկերտ, Տիգրանակերտ և այլն, մինչդեռ գիշերային շրջանցումով պաշարման մեջ է առել Սասունը։ Նույն թուրք կառավարության բարձրագույն հրամանով լուր է տրվել Սասնո և Ներքին Դաշտի քուրդ աշիրեթներին, որ գնան և հաստատվեն Սասնո և Մշո լեռներում։ Մինչդեռ Սասնո 94-ի կոտորածից հետո եվրոպական կառավարությունների պահանջով թուրք կառավարությունը արգելել էր այդ քուրդ աշիրեթություններին գալու և հաստատվելու սասունցիների կալվածքներում, որովհետև այդ թափառաշրջիկ քրդերը ամբանը հաստատվելով Սասնո լեռների վրա, բացի այն, որ իրենց բազմաթիվ հոտերով ու խաշինքներով բոլորովին փչացնում ու քարուքանդ էին անում սասունցիների դաշտերը, մարգագետինները և անտառները, նաև ձեռնպահ չէին մնում գողություններից, մարդասպանություններից և ավազակություններից։

Ահա թե թուրք կառավարությունը ինչպես էր առիթ ստեղծում հայերին ու քրդերին կռվեցնելու, որպեսզի ինքն ահագին բանակով վրա հասներ և կոտորեր հայերին, ասելով, թե «դուք խռովարար եք, ապստամբ եք տերության դեմ, տուրք չեք տալիս, պաշտոնյաներին հավուր պատշաճի չեք հնազանդվում, մանավանդ, որ դուք անհաշտարիմ եք, որ ձեր մեջ... ջանֆիդայիներ եք պահում»[65]։

Կայսրության ամենատարբեր շրջաններից շարունակում էին Տարոն գալ նորանոր ռազմական ուժեր ու աշիրեթություններ։ Հունիսի 15-ին Մուշից հայտնեցին. «Մուշը չորս կողմից բռնված է զորքերով և թնդանոթներով։ Ժողովուրդը ահ ու սարսափի մեջ է, ոչ ոք չի կարողանում քաղաքից դուրս գալ, և երեկոյան ժամը 6-ից ամեն մարդ փակվում է իր տանը։ Լուրեր են պտտվում, որ մի քանի գյուղեր Դաշտում քանդվել են, ազգաբնակ-

Մշեցի Արամ (պզտիկ Արամ. Արամ Հակոբյան)

Ամերիկացի

Իսայի Կոչյուզ

Համբարձում Պալանյան

Բալասանի Կարապետ — Աղբյուր Սերոբի հշամարտի զինակիցը

Նիկոլ Դուման

Գայլ Վանան

Հայկուհի

Գայլ

Սմբատ

Սոսվ. Մ. Ժամհարյան (զոհվեց 1905 թ. Շուշիում)

Սեբաստացի Սաքո. Սարգիս Մովսիսյան



Սոկուխ գյուղի քարտեզը և Գևորգի վերջին կռիվը



[illegible]

Պարոնի Գ. Մարտիրոսի

[illegible]

Հարգելի Գ. Մարտիրոսի

[illegible]

[illegible]

[illegible]

1916 [illegible]

[illegible]

Պարոնի Գ. Մարտիրոսի

[illegible]

[illegible]



չությունը լեռներում է ապաստանել, իսկ բանտերում տեղ չկա, որ հայերով լցնեն։ Սասունի ս. Հովհաննես և Առաքելոց վանքերը Բուրքական զորքերը գրավել են, ամեն մեկում տեղավորված է 60—70 զինվոր, «Մշո գավառում գնալով շատանում են թուրք զորքերը, որ գալիս են բոլոր կողմերից։ Քուրդ ցեղապետներին հատուկ պաշտոնական գրություններ են ուղարկվել՝ նրանց ղենքի հրավիրելու։ Խիստ միջոցներ են ձեռնարկվում նաև Սասունում։ Այնտեղ զինվորական ջոկատներ ուղարկվեցին կիրճերը պահպանելու և լեռներ գնացողների ճամփան կտրելու համար։

Հոգեգալստյան կիրակի օրը, հունիսի 8-ին, Մուշ քաղաքում խլրտում ընկավ, իբր թե հեղափոխականները եկել են, լեռը բարձրացել և հայկական դրոշակ պարզել, իբրև թե նոր եկողներին Անդրանիկն ու ընկերները դիմավորել են հրացանների թնդյուններով և այլն...»[66]: Հունիսի 22-ին Մուշից գրեցին. «Տեղական կառավարության շարժումը այս անգամ խիստ կասկածելի է երևում։ Գավառ է ուղարկված անհամար զորք, քրդերին թիվ չկա։ Քաղաքի չորս կողմը թնդանոթներ են շարված, թուրք ազգաբնակչությունը մեծ հուզումի մեջ է. մի մասը ուզում է օր առաջ սկսել կոտորածը, մյուսները խորհում են, որ դա տերության գործն է և իրենց միջամտելու հարկը չկա։

Բոլոր հայերը սոսկալի երկյուղի մեջ են»[67]:

Թուրք-պարսկական սահմանից 1902 թվի ապրիլի 15-ին գրում են. «Երկրի ներսից շարունակ հուսահատ ճիչեր են լսվում, կոտորածի սարսափը նորից տարածվել է ամենի վրա։ Մոտ օրերս Բիթլիսում էլի իրարանցում է եղել. տեղացի քրիստոնյաները սարսափահար թողել են առևտրի հրապարակը ու փախել... Ամբողջ քաղաքը պաշարված է, ելք ու մուտքը բոլորովին դադարեցված։ Նույն սարսափն է տիրում Վանի մեջ։ Իսլամ տարրը օրեցօր ավելի թթու երես է ցույց տալիս»[68]:

Այդ ընթացքում Բասենում ընդհարում տեղի ունեցավ։ 150 հոգուց բաղկացած հայդուկային խումբը կռվի մեջ մտավ կանոնավոր բանակի ու հազարավոր խուժանի հետ։ Վերջիններս կռվի դաշտում թողեցին շուրջ 500 դիակ ու փախան։ Այդ դեպքերից հետո զենքի կանչվեցին համիդիները. ցիրուցան կանոնավոր զորքերը կենտրոնացան միջին կետերում, համիդիները ուղարկվեցին ավելի հեռու՝ սահմանի մոտերքը։ Նրանք շրջում են միայն օրը ցերեկով, 20—30 ձիավորով, անցորդնե-

ին բռնում, հարցաքննում են... Զորքերը վախեցած են. ամեն թփի տակ հայդուկ են փնտրում, ամեն խշշոցին կրակ բացում։ Նրանք այնքան էին ահաբեկված, որ Կարինի Կարմիր վանքի շրջանում կրակ բացեցին զինվորական այլ ջոկատների վրա և սպանեցին 30 հոգի»[69]:

Կարինում անգլիական հյուպատոսի փոխանորդ Հեփսընի 1903 թվականի հոկտեմբերի 13-ի տեղեկագրում նշվում է, որ Բասենի կռվին մասնակցող «հեղափոխականների հիմնական մասը Սասուն է փախել կամ լեռներում է թաքնված...»[70]: Իշխանություններն ամենուրեք լուր տարածեցին, թե Բաղեշի կուսակալությունում 1400 հայդուկ կա։ Օսմանյան պաշտոնական շրջանների Եվրոպա ուղարկած հետևյալ հաղորդագրությունները տպագրվեցին շատ պարբերականներում։ «Թուրքաց կառավարությունն անհանգիստ է նոր հայ հեղափոխական խմբերի երևան գալով, որոնք Ռուսաստանից անցել են Բայազետի և Սասունի կողմերը... Հայերը փոքրիկ խմբերով անցել են Բայազետի շրջանը և այդտեղից ճանապարհ բռնել դեպի Սասունի լեռները, ուր նրանք ապահով են հալածանքից»[71]:

Կամ «Սասունում երևացել է Անդրանիկը՝ իր բազմաթիվ մարդկանցով։ Տեղի կայմակամը փախել է իր ամբողջ պահակախմբով։ 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան Թեֆիկ փաշայի հետ միասին մեկնել է դեպի Մուշ»[72]:

Հեփսընը 1903 թվականի սեպտեմբերի 30-ին գրում է.՝ «Սասունում ծանրակշիռ դեպքերի վախը մի քանի շաբաթ բավական մեծ հուզում և մտահոգություն պատճառեց։ Սասունի վիճակը որոշ ժամանակ շատ տագնապալից էր, և այդ կողմերում որևէ ծանրակշիռ խռովության կասկածը ծնունդ էր տալիս ավելի ծավալուն անկարգությունների հնարավորության երկյուղին։ Թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները հիշում են, որ 1895 թ. կոտորածների անմիջական սկիզբը եղել էին 1894-ի Սասունի դեպքերը։ Սասունի հեղափոխականների դեմ ռազմական ուժ գործադրվելու է, բայց լեռներից վաչկատուն ցեղերի մեկնելուց հետո միայն։ Այնպես որ, եթե նույնիսկ այս հրամանները գործադրվեն, պետք է հուսալ, որ տեղի չպիտի ունենան ծանր զեղծումներ։ Զանազան հայ խմբեր ռուսական սահմանից անցել են։ Նրանցից ոմանց հաջողվել է Սասուն հասնել, իսկ մյուսները հայտնաբերվել և ետ են մղվել։ Այդ առաջին տեղեկագրից իմացվում է, որ արդեն 1903 թ. օգոստոս-սեպտեմ-

բեր ամիսներին և նույնիսկ դրանից առաջ եվրոպական դիվանագիտությունը իրազեկ էր Սասունի խմորումներին, որոնք կարող էին ծանր դեպքեր ծնել»[73]:

1904 թ. հունվարի 9-ին Էրզրումի ռուսական հյուպատոսը հաղորդել է, որ նահանգում կուտակերպված ջանբեզարների խմբերից մի քանիսը ուղարկվել են Սասունի մոտակայքում գտնվող քրդական ցեղապետ Կուլխան բեկի տրամադրության տակ։ «Բաղեշում կառավարությունը հեծյալ կամավոր խումբ կազմեց թուրք ամենահետին տարրերից բաղկացած, որի խնդիրն էր շրջել նահանգում և խափանել ֆիդայիների մուտքը Սասուն»[74]: Իշխանությունները հայդուկներին պատրվակ էին դարձնում հայ աղգաբնակչությանը հարստահարելու համար։ Մեծ թվով մարդկանց հայդուկների հետ կապ ունենալու և նրանց օգնելու մեղադրանքով ձերբակալում էին։ Կաշառք շորթելուց հետո մի քանիսին հետագայում արձակում էին։

***

1903 թ. հոկտեմբերին սուլթանական պալատը կուսակալներին ուղարկեց հետևյալ երկու հեռագրերը։

Առաջին հեռագիր՝ թվագրված հոկտեմբերի 3-ին.

«Բուլղար ավազակների ձեռքում եղած ռումբերը հայերի կողմից են պատրաստվել։ Այդ մասին տեղեկություն ստացվել է։ Ուստի ձեր խնդիրն է աչալուրջ հետևել սահմաններն անցնող հայերի շարժումներին։ Կասկածելիներին անմիջապես ձերբակալել։ Այս ծառայության մեջ աչքի ընկնողներին սպասվում է կայսերական բարձր վարձատրություն»[75]:

Այս հեռագիրը երկու խնդիր ուներ՝ ահաբեկել տեղական իշխանություններին, նրանց ակտիվ գործողությունների մղել և նաև խաբել հասարակական կարծիքը, թե Սասունում կառավարության կողմից իրականացվելիք գործողությունները ոչ թե կոտորածների, այլ «ռումբերի հետ» այդ լեռնաշխարհը մտած հեղափոխականների գործունեությունը մեկուսացնելու ու նրանց պատժելու նպատակ ունեին։

Մարտի 5-ին Բիթլիսի անգլիական փոխհյուպատոսը Կ. Պոլիս՝ դեսպանին հաղորդեց. «Ես երկու մահմեդական աղբյուրներից տեղեկացա, որ հայերի դեմ հարձակման ծրագիր է հղացված, հարձակումը պետք է տեղի ունենա տոներից (բայրամից) հետո...»։ Այնուհետև նա գրում է հետևյալ ուշագրավ տողերը.

«Ես կարծում եմ, որ ոչ մի խռովություն չի ծագի այստեղ, երբ քրդական պարագլուխները և տեղական իշխանություններն իմանան, որ կենտրոնական կառավարությունը իրոք որոշել է խաղաղություն հաստատել»։ Ապրիլի 8-ին Օ՝ Քոնորը հեռագրում է Լոնդոն. «Տեղեկանում եմ, որ հայ եպիսկոպոսների միջնորդությունը մերժվել է հեղափոխականների կողմից այն պատճառաբանությամբ, որ նման խոստումների իրագործման համար սուլթանի կողմից տրված երաշխիքները բավարար չեն, բայց եթե այդ խոստումները տրվեն եվրոպական հյուպատոսների միջոցով, նրանք պատրաստակամություն են հայտնում զենքը ցած դնել»[47]։

Վանից գրում են. «Բացի փետրվարին գնացած գնդից, մարտի 6-ին, 8-ին և 13-ին գնացին երկուական գունդ զորք (գունդը 450—480 հոգի է)։ Այս օրերս (այսինքն մարտի 17-ից հետո) դարձյալ գնալու է 4—5 գունդ։ Մի քանի գնդեր գնում են Սասունի հարավային շրջաններ, իսկ մյուսները՝ ուղիղ դեպի Մշո դաշտ։ Մի քանի աշիրեթների համիդիեականներին ևս հրամայված է սլանալ այն կողմ... Ժողովրդի մեջ, ինչպես և պաշտոնյաներն ու տաճիկները, այստեղ խոսում են, որ ապրիլի 15-ին պիտի սկսվի հարձակում Սասունի վրա։ Թեև հայերն ամեն կերպ ջանում են առիթ չտալ ընդհարումների, այսուհանդերձ կառավարությունը ավելի շատ զորքեր է կենտրոնացնում Սասունում։ Մարտի 20-ին սկսվելու է հարձակումը։ Առաջինը շարժվում է հեծելազորը, որը սկսել է նեղել Տավրոսի տակ ընկած հայ գյուղերին...

Այս գյուղերը մասամբ թալանվում են։ Գյուղերը ոչ մատնություն են անում, ոչ էլ որևէ դիմադրություն են ցույց տալիս. գյուղացիներից շատերը բանտ են առաջնորդվում, շարշարանքների են ենթարկվում և նահատակվում»[77]։

Այսպիսով, հունվար-փետրվար ամիսների ընթացքում իշխանություններին հաջողվեց այլ վայրերից լրացուցիչ ուժեր տեղափոխել Սասուն ու նրա մերձակա շրջանները։ Աշիրեթները, կենտրոնանալով Խուլբում և Խիանքում, հարձակումներ էին գործում Ահրոնքի, Հեղինի, Մազրեյի և Իշխանձորի վրա, իսկ Մուշում ու նրա դաշտում կենտրոնացած զորքն ու աշիրեթությունները Սասունի վրա հարձակվում էին հյուսիսից։ Դա գործնականում թուրքական հարձակումների սկիզբն էր և ուղեկցվում էր կոտորածներով։ Ռազմական գործողություններին զուգընթաց թուրքական զորքերն ու ոստիկանությունը ամենուրեք խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ անլուր բռնություններ էին գործադրում։ Գյուղացին թալանվում էր, զրկվում ապրելու միջոցներից։

ՕՂԱԿԸ ՆԵՂԱՆՈՒՄ Է

Սուլթանը նորից խորամանկության դիմեց։ Նա մի նոր փորձ արեց՝ առանց կռվի հայդուկներին, բոլոր սասունցիներին զինաթափ անելու, որպեսզի զանգվածային կոտորածների քաղաքականությունը լուրջ դիմադրության չհանդիպեր։

Այդ կապակցությամբ «Դենտսդ ցայտունգը» վկայում է.

«Հայոց պատրիարքարանը միջամտել է Սասունում ապրստամբապետ Անդրանիկի հրամանատարության տակ հավաքված 400 հայերի օգտին։ Այդ պատճառով Սասուն ուղարկված ութ զորագնդերը կանգ են առել Մուշում և դրվել են Մուշի հրամանատար Սալեհ փաշայի հրամանատարության ներքո։ Հայոց պատրիարքարանին հանձնարարված է բանակցել Սասունում հավաքված հայերի հետ, որ անձնատուր լինեն»[78]։

Պատրիարք Օրմանյանը սկզբում հրաժարվում է կատարել այդ հանձնարարությունը, պատճառաբանելով, թե «ինքը այդ տեսակի ազդեցություն չունի, քանի որ կառավարությունը տարիներ ի վեր ամեն բան գործ է դրել այդ ազդեցությունը ոչնչացնելու համար»։

Սակայն Բ. Դուրը պնդեց, որ Օրմանյանը միջամտի։ «Այդ նպատակով,— շարունակում է թերթը,— Եյոզից ստանալով որոշ հավաստիացումներ, նա իբրև պատվիրակ ուղարկել է Մուշի եպիսկոպոսին»[79]։ Մեզ հայտնի չեն այս առաքելության մանրամասները, բայց մի բան պարզ է. Անդրանիկը, նկատի ունենալով, որ սուլթանը ոչ թե խաղաղություն է ուզում, այլ ձգտում է կազմալուծել հայկական ուժերը, խաբել հասարակական կարծիքը, մերժում է եպիսկոպոսի միջամտությունը։ Սուլթանն Անդրանիկի այս քայլը աշխարհին ներկայացրեց որպես ազատության դրոշ պարզելու մտադրության վկայություն։

Իսկ «Կորեսպոնդենց բյուրոն» շարունակում էր հակահայկական ընթացքը. «Թուրքահայոց պատրիարք Օրմանյանը հրահանգ ստացավ Եյոզից կրկին անգամ Մուշի եպիսկոպոսի մի-

ջոցով համոզել Անդրանիկին՝ դադարեցնելու իր չարագործությունները,— գրում էր նա կրկնելով թուրքական հերյուրանքները,— Բիթլիսի վալիի տված տեղեկությունների համաձայն ապստամբաբետ Անդրանիկը հրդեհել է կենճի սանջակի երեք քրդական փոքրիկ գյուղեր, որոնց բնակիչները հրաժարվել են մնալ նրան։ Բացի այդ, խմբերից մեկը հարձակվել է Բիթլիսից հինգ մղոն հեռավորության վրա գտնվող մի գյուղի վրա և սպանել 30 մահմեդական»[80],

Մենք այստեղ գործ ունենք սուլթան Աբդուլ Համիդի կողմից արտասահմանյան մամուլին ապակողմնորոշելու արդեն ավանդական դարձած փաստերի հետ։ Հատկանշական է, որ կատարված մեջբերումները վերը նշված թերթերում տպագրված են որպես լուրեր՝ ստացված Կ. Պոլսից։

Իսկ ահա թե ինչ են գրում Եվրոպայի համեմատաբար ոչ կողմնակալ լրագրերը. «Հայերի կողմից ուղղակի գրգռման բացակայության պատճառով, թուրքերը լաճկանցի, բատկանցի քրդերին հրահրեցին հարձակվելու Գելիգերման գյուղի վրա, որպեսզի դիմադրություն առաջացնեն և հայտարարեն, որ հայերը ապստամբել են։ Այս ամենը նրանց պետք է, որպեսզի պատրվակ ունենան իրենց ջարդի ծրագիրը իրագործելու ու ամբողջովին ավերելու Սասունը, որը հայկական ազատագրական շարժումների օրրանն էր»[81],

Իրողությունն այն էր, որ սուլթանը գործողության մեջ էր դրել «Սասունն առանց սասունցիների» իր ծրագիրը։

Տալավեի (Դալավակաժեի) և Գելիգերմանի բախումների մասնակիցներից մեկը մարտի 31-ին գրում է. «Կռիվը սկսվեց։ Թեև շատ կփափագեինք, որ երբեք քրդերի հետ գործ չունենանք և նրանց բարեկամությունը շահելու համար ջանք չէինք խնայում, բայց ինչ օգուտ, որ կառավարությունն էլ մյուս կողմից ամեն ճիգ կթափեր այդ կույր ամբոխը մեր դեմ լարելու և գրգռելու։ Ու վերջապես նրան այդ հաջողվեց»[82],

***

Սուլթանը 1904 թվականը վճռական տարի էր համարում մեկընդմիշտ ձերբազատվելու հայ ֆիդայու վտանգից... Ահա թե ինչու պալատը նպատակահարմար էր համարում մինչև մարտական գործողություններ սկսելը ոչնչացնել հայդուկներին,

զինաթափել սասունցիներին։ Այդ է հոկտեմբերի 7-ին կուսակալներին ուղարկված հեռագրի բովանդակությունը. «Խռովարար հայերը, օտարներից ստացած օգնությամբ և հանգանակությամբ զենքեր, ռումբ (դինամիտ), դեղորայք հավաքելով, կայսերական երկրների մեջ փոխադրելով և տարբեր տեղերում պահելով, այս ձևով գարնան սկզբից խռովահույզ գործողությունների են դիմելու։ Ըստ ստացված տեղեկությունների՝ նորից, ինչպես նախկինում, Սասունից է սկսվելու խռովությունը։ Նրանց մտադրությունը պարզված է։ Ըստ այդմ էլ տեղական կառավարության անելիքն է՝ խստորեն և աչալրջորեն վնասազերծել հայերի խռովարար գործողությունները, իսկ չարագործներին ձերբակալել...»[83]:

Սուլթանը, որոշելով մինչև գարնան բացվելը սասունցիների մարտունակությունը ոչնչացնել, անընդհատ ռազմական ուժեր էր կուտակում լեռնաշխարհի հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար։

Ահա թե ինչու Սասունում ու նրան հարող շրջաններում ռազմական ուժերի կուտակումը հատկապես մեծ թափ ստացավ 1903 թ. վերջերին։

Գրում են Վանից. «Մի ամիս առաջ Էրզրումից, Երզնկայից, Բաղդադից և այստեղից գունդ-գունդ զորքեր էին գնում Սասունի պաշարումը խոսացնելու... Քաղաքում զորք չի մնացել (հնգվով 500—800, մինչդեռ առաջ՝ 8000—8500), փոքր մասը գնացել է դեպի Բայազետ, մեծագույն մասը՝ Սասուն»։

«Նորից մեկ թափուր զորք ճանապարհ ընկավ դեպի Մուշ։ Այս ամսի ընդամենը կարիճից գնացել են երեք թափուր զորք, մի թափուր զորք էլ երկու օր է, թվ բարգել է եղել Սեբաստում և չի կարողանում առաջ գնալ։ Հրաման է ստացված, որ դարձյալ 1000 զինվոր ուղարկվի Սասուն»։

Վասպուրականի իշխանությունները Համիդիեի գաղտնի զորահավաք կազմակերպեցին և 500 հոգիանոց մի խումբ Տարոն ուղարկեցին։

1904 թ. հունվարի սկզբներին արդեն Բաղեշի կուսակալության մեջ դրությունն այնքան երկյուղալի էր, որ Կարինում Անգլիայի փոխհյուպատոս Շիֆլեյը հունվարի 19-ին «ծանուցանելով Բաղեշի կուսակալ Հուսեին բեյի մահը, անհրաժեշտ է համարում նրա հաջորդին անմիջապես նշանակել։ Չնայած ձմեռ է,

բայց նա պետք է անմիջապես իր պաշտոնական պարտականությունների կատարմանն անցնի...»[84]:

Թուրքական իշխանությունները 1903 թ. աշնանը հիմնականում ավարտեցին Սասունի վրա հարձակման նախապատրաստական աշխատանքները։

Կ. Պոլսի պատրիարքին Վարդան վարդապետի ուղարկած զեկուցագրերից մեկում նշվում է, որ Սասունի վրա հարձակվելու նպատակով Տարոնում թուրքական ուժերի կենտրոնացման վճռական փուլը 1903 թ. աշունն էր, իսկ 1904 թ. հունվարից սկսած «հետզհետե 900 հոգիանոց զինված վաշտեր դեպի Մուշ էին մեկնում Սեբաստիայից, Խարբերդից, Դիարբեքիրից, Տրապիզոնից, Երզնկայից, Էրզրումից, Վանից և այլն...[85]։

Արդեն աշնանից հայտարարված էր, թե առաջիկա գարնանը Սասունը պիտի հարձակման ենթարկվի։ Մեկ-երկու տարվա սասունցիների խաղաղ կյանքը շատ է ու քիչ չէ»։

Անդրանիկի հուշերում այս իրադարձությունների մասին կարդում ենք. «Արդեն 1903-ից ի վեր պարզ էր տաճիկ կենտրոնական կառավարության մտադրությունը։ Բոլոր շարժումները, բոլոր հրամանները և արված քայլերը կցուցանեին, որ մեր Սասնո կուժերուն (գազաթների) վրա ապաստանած հայ հեղափոխականներուն համար կմոտենային վճռական և ճակատագրական վայրկյանները»[86]:

1904 թ. հունվարի 16-ին Բաղեշում Անգլիայի փոխհյուպատոս Մր. Հիթքոթը գրում է. «Վերջապես որոշում է տրված գարնանը հարձակվել Սասունի հեղափոխականների վրա և որ այս զինվորական շարժումը պիտի ղեկավարի անձամբ 4-րդ զորաբանակի մուշիր Զեքի փաշան»[87]։ Տասն օր անց, հունվարի 26-ին, Շիփլեյը Կ. Պոլսի իր դեսպանին հայտնում է. «Պարտավոր եմ ձեզ տեղեկացնել, որ խիստ արժանահավատ մի աղբյուր հաստատում է Մր. Հիթքոթի հայտնած տեղեկության ճշտությունը այն մասին, որ Սասունի ֆիդայիների վրա հարձակում սպասվում է ձյունը հալվելուց հետո, մոտավորապես մայիսի կեսերին»։

Օ'Քոնորը Շիփլեյի զեկուցագիրը ուղարկում է արտաքին գործերի մինիստր լորդ Լենզդաուին կից նամակով, ուր պատմում է Սասնո գավառում համախմբված հայ հեղափոխականների վրա հարձակման հավանականության վերաբերյալ մեծ վեզիրի հետ իր զրույցի մասին։ «Մի քանի օր առաջ,— գրում է

նա,— այս խնդրի մասին խոսեցի Մեծ Եպարքոսի հետ, պարզելով ռուսական սահմանի և նրանից այն կողմ հայերի շրջանում տիրող անհանգիստ վիճակը, որի մասին վերջերս բավական տեղեկություններ էին հասել ինձ։ Իր ուշադրությունը հրավիրեցի այն վտանգի վրա, որ կարող է առաջ գալ անխոհեմ գործողությունից։ Ազդու կերպով նախազգուշացրեցի Ն. Բարձրությանը չդիմել ռազմական միջոցների, բացի ծայրահեղ ստիպողական պարագաներից, քանի որ այդ միջոցների գործադրության հավանական հետևանքը պիտի լիներ աշիրեթների խժդժություններ համար դուռ բանալը։ Ֆերիդ փաշան (ասաց), ինքն էլ իմ կարծիքին է Սասունի վրա հարձակման հարցում և ինձ վստահեցրեց, որ այդպիսի հարձակում տեղի չի ունենալու, բացառությամբ այն հանգամանքից, երբ հեղափոխականների վարքը անխուսափելի կդարձնի։ Ինձ խոստացավ, որ եթե ծայրահեղ միջոցների դիմելու որոշում ստացվի, ամեն զգուշություն ձեռք պիտի առնվի»[88]:

Մեծ վեզիրը ստում էր։ Թուրքական կառավարությունը որոշել էր Սասունը կոտորածի ենթարկել՝ անկախ հայդուկների գործողություններից։ Դա այնքան ակնհայտ էր, որ Կ. Պոլսից հայտնում էին. «Մոտալուտ կոտորածի սարսափը տարածվում է ամենուրեք։ Ամեն կողմից շշնջում են՝ գարնանը կոտորած կա»[89]:

Թուրքական կառավարությունը 20-ական թվականներին զինեց քրդերին ու նրանց միջոցով կոտորեց հայերին, իսկ ապա վախենում էր, թե այդ զենքը կարող է ուղղվել իր դեմ։ Ուստի Համիդը սկսեց միջոցներ փնտրել քրդերին իր ձեռքում պահելու համար։ Նա նախ ցեղապետների որդիներին զինվորական ծառայության կամ կրթություն ստանալու պատրվակով հավաքեց Կ. Պոլիս, ուր պահվում էին որպես պատանդ։ Բացի այդ, կառավարության գործակալները շրջում էին քրդերի բնակության վայրերով ու նրանց մեջ բորբոքում ցեղային թշնամություն, իրար դեմ հանում աշիրեթություններին։

Քրդական ցեղերի միջև թշնամություն ու կռիվներ հրահրելը սուլթանի քաղաքականության կարևոր մասն էր։ Նախ, այդ կռիվները քրդերին հնարավորություն չէին տալիս քաղաքական այլ խնդիրների մասին մտածել։ Բացի այդ, նկատի ունենալով միջցեղային կռիվների իրական վտանգը, քուրդ աշիրեթությունները ստիպված էին լինում հլու հնազանդ հպատակվել կառա-

վարությանը, որպեսզի միջցեղային բախումների ժամանակ կառավարությունն իրենց հովանավորեր։

Սակայն սուլթանի խարդավանքները մասամբ իր դեմ շուռ եկան։ Պոլիս պատանդ տարված քուրդ պատանիները, ստանալով կանոնավոր կրթություն և շփվելով Պոլսի ազատամիտ տարրերի հետ, վարակվեցին մի բանով, որի դեմ այնքան կատաղի կռվում էր Թուրքական կառավարությունը։ Դա ազգային ձգտումներն էին։ Այդ երիտասարդները, մի կողմից, մոտիկից ծանոթանալով համիդյան կառավարության այն մթին նպատակներին, որոնք իրագործելու համար այնքան տխուր ու անպատվաբեր դեր պիտի խաղային իրենց ցեղակիցները, մյուս կողմից, մշտապես հարաբերություններ ունենալով Կ. Պոլսի հեղափոխական մարմինների հետ, հղացան մի միտք, որն առաջներում անիրագործելի երազ էր թվում նրանց։ «Ազատ Քրդստանի» գաղափարը մի խումբ քրդերի քաղաքական դավանանքը դարձավ։ Ցանկանալով իրենց գործունեության վայրը Բոսֆորի ափերից տեղափոխել հայրենի լեռները, նրանք սկսեցին մտածել հայրենիք վերադառնալու մասին, սակայն կառավարության ձեռնարկած արգելքների պատճառով շատ քչերին, այն էլ գաղտնի, հաջողվեց Երկիր մտնել։ «Ազատ Քրդստանի» գաղափարը շուտով ունեցավ մեծ թվով հետևորդներ։ Այս շարժման մեջ առաջատար դեր էին խաղում Բեդիր խանի որդիները, որոնցից մեկը արտասահմանում սկսեց հրատարակել «Քուրդիստան» թերթը։ Որոշ ժամանակ անց շարժման գլուխ անցավ շեյխ Օբայդուլայի որդի շեյխ Սադրը, որի անկախ կեցվածքը շատ էր անհանգստացնում կառավարությանը։ Նրան փորձեցին Պոլիս կամ Վան բերել, բայց շեյխը, զգալով Թուրքերի դիվային նպատակը, խուսափում էր։ Թուրքերը նրա դեմ ուժ գործադրեցին, որովհետև Վասպուրականում զորքերի թիվը փոքր էր և քրդերի դեմ կռվելը՝ դժվար։ Շեյխ Սադրը նշաններ էր ցույց տալիս հայդուկների հետ հարաբերությունների մեջ մտնելու համար։ «Քուրդը,— գտնում էին հայ հասարակական գործիչները,— հայի ամենալավ դրացին ու դաշնակիցը կարող է լինել, եթե միայն նրա մեջ լայնորեն ներթափանցի ինքնամանաչման ու անկախության ոգին»։

1901 թ. Բեդիր խանի որդի Աբդոլ Ռահմանը կոչով դիմեց քրդերին. «Դուք վաղուց ի վեր ձեզ քաղաքակրթության ամեն մի առաջընթացից, գիտությունի քարիքներից, ազատության երջանկությունից զրկող ու ենթադրեն գործադրված չարագործությունների աշխարհի առաջ ձեր վարքն ու պատիվը վերջնականապես արատավորող Աբդոլ Համիդին ու նրա բռնավոր պաշտոնյաներին ծառայելուց բացի ուրիշ բան չեք անում։ Փադիշահի հեռավոր նպատակը ձեզ տգիտության մեջ պահելն է։ Նա ձեզ շքանշաններ է տալիս։ Դուք չեք հասկանում, որ այդ նշաններն ու պատվոնշանները ձեր ազգային արժանապատվության և ձեր ապագայի կորստի գինն են... Այս թագավորը, որին խալիֆա ասելով հնազանդվել ուզեցիք, բռնակալ է և գահից գցելու արժանի... Մի՞թե ձեր վեհանձնությունն ու քաջությունը թույլ են տալիս, որ սպանեք հայերի կանանց և երեխաներին։ Մեզ վայել է այսքան հեշտորեն գործիք դառնալ մի Փադիշահի չարագործ ձեռքում։ Չէ՞ որ այդ ամենը աշխարհի աչքին ձեզ ներկայացնում է որպես վայրենի մի ազգ։ Անպաշտպան հայերին սպանելով, չէ՞ որ դուք վարկաբեկում եք ձեր հայրենիքը և ձեր օջախը։ Ձեզ ավարի ու ավերի մղող վալիները, մութեսարիֆները, կայմակամները ձեզնից ամեն ինչ խլելուց բացի, ինչո՞վ արժանացան ձեր հավատարմությանը։ Չէ՞ որ ձեր պատիվն էլ խլեցին։ Դուք, որպես ցեղակից և նույն երկրի զավակ, բնակաբաձար, պարտավոր եք հայերի հետ բարեկամաբար ապրել։ Այդ բնական անհրաժեշտության շնորհիվ չէ՞, որ դարեր շարունակ նրանց հետ հաշտ ու խաղաղ եք եղել։ Դուք դեռ չե՞ք զգվել ձեր վրա իշխող պաշտոնյաների ձեռքին հափշտակության, մարդասպանության և ավազակության գործիք լինելուց»։ («Դրոշակ», 1901 թ., հունիս)։

Քրդական առաջադիմական շրջանների ջանքերն, իհարկե, ապարդյուն չէին անցնում։ Դրանք օգնում էին քուրդ ազգաբնակչության մտածողության զարգացմանը, նախապայմաններ ստեղծում ազատագրական գաղափարների տարածման համար։ Այս ջանքերը նկատելի դեր էին խաղում նաև հայ-քրդական համերաշխություն ստեղծելու գործում։ Ճիշտ է, բազմաթիվ պատճառներով այդ համերաշխությունը մեծ դժվարություններ հաղթահարելով ու երկչոտությամբ էր ճանապարհ հարթում, բայց իրողություն է, որ ոչ միայն նախորդ տարիներին, այլ նաև 1904 թվականի ընթացքում եղան այդ համերաշխության դրսևորման մի շարք փաստեր ու իրադարձություններ։

1904 թ. մարտի 20-ին Քղիից գրում են, որ Խուփուս հայաբնակ գյուղում տեղի հայերն ու Հայդար բեյի ղեկավարած քուրդ ցեղը միասին դուրս եկան քուրդ ավազակների դեմ և նրանց փախուստի մատնեցին։ Հայդար բեյը հայտարարեց. «Մենք՝ զազա ցեղերս, թուրք կառավարությանը ոչ տուրք, ոչ զորք կտանք և ոչ էլ ուզում ենք կառավարության ձեռքին գործիք դառնալ և ճնշել մեր դրացի հայերին»[90]։

Քուրդ-հայկական հարաբերությունների մերձեցմանը զգալի չափով նպաստեց հայդուկների ակտիվ գործունեությունը, քուրդ

աշխատավորության լայն շրջաններում նրանց հեղինակության աճը։ Սակայն, երբ խոսք է գնում քրդերի վարքագծի մասին, անհնար է այն միանշանակ արժեքավորել, դրա պատճառները շատ են։

Նախ՝ քուրդը որպես ազգ դեռ ձևավորված չէր և քրդերի կողմից համազգային վերաբերմունքի և քաղաքականության մասին խոսք լինել չէր կարող։ Ուստի պատահական չէր, որ կային աշիրեթություններ, որոնք հայերի հետ հաշտ ու խաղաղ էին, բայց կային նաև աշիրեթություններ, որոնք հայերի կատաղի թշնամիներն էին։ Նստակյաց քրդերը ձգտում էին հայերի հետ հաշտ ապրել, իսկ քոչվոր քրդերը, ընդհակառակը, առիթ էին որոնում հայերին թալանելու։ Շատ քրդեր երկընտրանքի առջև էին կանգնած։ «Երկընտրանքի մեջ են և քուրդ աղաները,— գրում են Բայազետից,— չգիտեն ինչպես վարվել։ Նրանց հրամայում են սպանել իրենց միս ու արյուն տվող, իրենց խնամող ու կերակրող ձեռքը»։

Հուլիսի 3-ին Ալաշթից գրում են. «Այս գարնանը քրդերին կոտորածի հրահանգ էր տրվել։ Երկրաշարժը (ապրիլի 15-ի գիշերը) պատճառ եղավ այդ հրահանգի գործադրումը հետաձգելու», իսկ այժմ կոտորածի համար «կառավարությունը հանգամանքները նպաստավոր չի համարում, որովհետև երկրաշարժի հետևանքները քննելու համար օտար հյուպատոսներ են եկել այս կողմերը»։ «Հայե՛ր,— ասում են քրդերը,— եթե երկրաշարժը երկու օր էլ ուշանար, հիմա ձեր մեծամասնությունը այն աշխարհը չված կլիներ»։ («Դրոշակ», 1903 թ., № 8)։

Աբդուլ Համիդի կարծիքով ժամանակը բարենպաստ էր Սասունի հարցը լուծելու համար։ Հեռավոր Արևելքում սկսվել էր ռուս-ճապոնական պատերազմը, որն իրեն էր գամել Ռուսաստանի ուշադրությունն ու ռազմական ուժերը։ Այդ պատերազմը անհավանական էր դարձրել օսմանյան կայսրության ներքին գործերին նաև մյուս մեծ տերությունների միջամտությունը, որովհետև նրանք ևս համակ ուշադրությամբ հետևում էին խաղաղ օվկիանոսում ծավալված պատերազմական գործողություններին, և յուրաքանչյուրը ուղիներ էր որոնում այդ պատերազմից օգուտ քաղելու համար։ Դրանով պետք է բացատրել, որ 1904 թ. հունվարից սկսած թուրքական իշխանությունները իրականացրին մի շարք միջոցառումներ հայերի դիմադրողականությունը կազմալուծելու, Տարոնի ու Սասունի բնակավայրերի վրա ռազմական հսկողությունն ուժեղացնելու, ստրատեգիական

կարևորագույն կետերում զինվորական, ոստիկանական, ինչպես նաև քրդական ուժեր կենտրոնացնելու, արտաքին աշխարհի հետ Սասունի հայերի կապի բոլոր ուղիները կտրելու համար։

1903 թ. սեպտեմբերին Մուշ է գալիս Բաղեշի կուսակալ Ֆերիդ փաշան։ Նա հայ երևելիներին ու հոգևոր ղեկավարներին հավաքում ու ներկայացնում է հետևյալ պահանջը. «Սուլթան Համիդի ձեռքի վրա գոյացել է մի մեծ ուռուցք, որը նրան նեղություն է պատճառում։ Անհրաժեշտ է այդ ուռուցքը վիրահատել, որպեսզի վերքը շուտով առողջանա և չլինի թե մեր կայսեր ամբողջ մարմինը վայրակի և թանկագին կայսեր մահվան պատճառ դառնա։ Այդ ուռուցքը Սասունի մեջ գործող Անդրանիկն ու Հրայրն են։ Պետք է նրանք հանձնվեն՝ առանց արյունահեղության։ Հակառակ պարագային սուլթանը մեծ ուժ ու կարողություն ունի այդ վերքը շուտով առողջացնելու»։

Անդրադառնալով Տարոնի և Սասունի կացությանը «Լը տամպը» նկատում է, որ այդ գավառներից ստացվող լուրերը օրեցօր ավելի ու ավելի են վկայում բնաջնջման ահագնացող վտանգի մասին։ Այդ լուրերը պետք է լուրջ ահազանգ հանդիսանան ոչ միայն նրանց համար, «որոնց կարծիքով քաղաքակիրթ Եվրոպան չի կարող հանդուրժել 1894—95 թթ. գազանությունների կրկնությունը, այլև նրանց, որոնց առաջին մտահոգությունն է աշխարհի խաղաղությունը...»։

«Բայց մի բան, որ տակավին հայտնի չէր,— շարունակում է թերթը,— և որը այժմ երևան է գալիս հավաստի աղբյուրներից բխող լուրերից, որ նաև վավերացվում է դիվանագիտության պաշտոնական հաղորդագրություններով,— այդ այն է, որ մի նախագծի մինչև վերջ հետևողական իրականացման համար կամեցել են օգտվել ոչ միայն Եվրոպայի ներողամտությունից, կամ, ավելի ճիշտ կլիներ ասել, լռելյայն մեղսակցությունից, այլև այն հանգամանքից, որ կառավարությունների և ժողովուրդների ուշադրությունը կենտրոնացած է ռուս-ճապոնական պատերազմի վրա. օգտվում են դրանից վերսկսելու համար բնաջնջման ընդհատված գործը... Սասունում, Մշո դաշտում, շրջակա լեռներում էր, որ արյունը վերստին սկսեց հոսել մի քանի շաբաթներից ի վեր»։ («Դրոշակ», 1904 թ., № 2)։

Նախապատրաստվելով հայերի զանգվածային կոտորածներին՝ Բ. Դուռը չբավարարվեց Սասունի դեմ բանակային ուժեր կենտրոնացնելով։ Նա կռվի կոչեց մահմեդական բոլոր տարրերին՝ համիդիեներին ու ջանբազարներին, չերքեզներին ու քրդերին։ Ելնելով 1894—96 թթ. կոտորածների փորձից, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց քրդերին հայերի դեմ հանելու խնդրին։ Սուլթանական պալատում այն կարծիքին էին, որ հայկական առաջին զանգվածային ջարդերի ժամանակ հայերի ու քրդերի միջև թշնամությունն այնքան էր արմատացել, որ վերը նշված խնդրի լուծումը առանձին ջանքեր չէր պահանջում։

Կ. Պոլսում սխալվում էին։ Ճիշտ է, 1894—96 թթ. ջարդերից հետո հայերի ու քրդերի միջև հարաբերությունները իրոք սուր տեսք ստացան, բայց դրա հետ միասին քրդական ավելի ու ավելի լայն շրջաններ գալիս էին այն եզրակացության, որ հայերի ջարդը բխում է ոչ թե քրդերի ազգային շահերից, այլ թուրքական տիրակալների քաղաքական նպատակադրումներից։ Բացի այդ, երբ թուրքական հրամանատարությունը դիմեց քրդերին, որ գան մասնակցեն Սասունի վրա հարձակմանը «մի քանի աշիրեթների պատասխանը շատ կտրուկ և խելացի եղավ. «Սրանից առաջ էլ մեզ դրդեցիք այդպիսի բան անելու, սակայն երբ Եվրոպայի քննիչները եկան, ամբողջ պատասխանատվությունը մեզ վրա գցեցիք, իբր ինքնագլուխ էինք արել այդ գործը։ Ու եթե հայերի ցուցմունքը չլիներ՝ թե քրդերը չէին, այլ՝ զորքերը, եվրոպացին այժմ մեզ ջնջած կլիներ...»[91]։ Ճշմարտությունն այն է, որ ընդհանուր առմամբ քրդերի ազգային շահերը հակադիր էին օսմանյան նպատակներին։ «Քրդերը,— գրում է Շվեյգեր Լետխենվելորը,— թշնամաբար են վերաբերվում թուրքերին։ Ամեն ինչից երևում է, որ նրանք, ինչպես թուրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, ձգտում են անջատվել և որ նրանք պատրաստ են առաջին իսկ բարենպաստ պահին ապստամբելու»։ Իսկ ֆրանսիացի խոշոր գիտնական Ռեկլյուն նկատում է, որ անցյալ դարի կեսից սկսած «քրդական ապըստամբություններից շատերը, անշուշտ, նպատակ ունեին ձեռք բերելու քաղաքական անկախություն։ Մինչև անգամ փորձեր եղան ստեղծելու «քրդական դաշնակցություն»[92]։

Այդ բանը քաջ գիտեին և հայերը. 1900 թվականի դեկտեմ-

բերին Վասպուրականից գրում են. «Քուրդն ու թուրքը բարեկամ և դաշնակից լինել չեն կարող։ Քուրդն ազատ ու անկեղծ, իր լեռների նման կոշտ ու վայրենի, սովոր ավարառության ու հափշտակության, ասպետական դյուցազնականությամբ հիացող, անհնար է, որ համակերպվի, մանավանդ՝ ենթարկվի թուրքին, որն իր հարեմի պես ստրուկ ու վավաշոտ, խարդախ ու երկչոտ, կրոնամոլ ու շահասեր հատկություններով է տոգորված և նրա միակ նպատակը կիրքն ու հաճույքն են»։

Այո, թուրքերի ու քրդերի միջև լուրջ հակասություններ կային։ Այդ հակասությունները հետևանք էին, մի կողմից, քրդերին հարկատու դարձնելու կառավարության որոշմանը, մյուս կողմից, համիդիեների գործողությունների դեմ օսմանյան հասարակության տարբեր խավերում առաջացած դժգոհության։ Ահա այս հիմքի վրա նկատվում էր քուրդ-հայկական հարաբերությունների ոչ միայն մեղմացում, այլև՝ ձգտում մերձենալու, միասնական ճակատ կազմելու ընդդեմ օսմանյան տիրապետության։ Դա անհանգստացրեց իշխանություններին և նրանք ստեղծեցին ջանբազարների կուսակցությունը, որի մեջ հավաքագրեցին հասարակության թափթփուկներին և ուղղեցին բոլոր ընդդիմադիր ու վստահություն չներշնչող ուժերի դեմ՝ լինեն դրանք թուրք, քուրդ կամ հայ։

Այդ մասին Վանից գրում են. «Վաղուց չէ, ինչ կրոնամոլ քրդերից կազմված է «ջանբազար» անվանվող կուսակցությունը. անունն ինքը բացատրում է կուսակցության սկզբունքը։ Անդամները արյունարբու ավազակներից, կրոնամոլ աղաներից և բախտախնդիր քրդերից են հավաքագրվել։ Գազանների այդ ոհմակը գործում է Մշո դաշտում, բայց դեպքից դեպք մեր կողմերն էլ են երևացել։ Ալշավազ գավառում նրանք սկսել են ավերումներ կատարել։ Քուրդ բեկերը, կայմակամները դրանց գործիք են դարձրել իրենց ձեռքում՝ հարկեր հավաքելու և կեղեքելու ժողովրդին։ Կարծում եմ, այդ կուսակցությունը առաջ եկավ այն բանից, որ կառավարությունը վերջերս լուրջ երկյուղ կրելով հայ-քրդական հարաբերություններից, շատ տեղեր զինաթափ արեց համիդիեներին և քուրդ ազգաբնակչությանը...»։ Օսմանյան կառավարությունը խորամանկում էր, հնարքներ փնտրում ազգամիջյան թշնամություններ բորբոքելու համար։ Դրա համոզիչ վկայությունն են 1903 թ. հունիսի 3-ին Բայազետից

ստացված նամակի հետևյալ տողերը. «Վերջին ժամանակներս Համիդիե ալայակները տեսնելով, որ ծայր աստիճանի չքավորության հասած հայ գյուղացիների մոտ թալանելու, կողոպտելու այլևս ոչինչ չի մնացել, խրախուսված կառավարության ձեռնպահությունից դեպի քրդերի արարքները, իրենց շահատակությունները սկսեցին տարածել նաև խաղաղ թուրք ազգաբնակչության վրա։ Ավարառություններն այնքան շատացան, որ թուրքերը, այլևս չկարողանալով տանել քրդական հարստահարությունները, 60 գյուղ միացան և բողոքի հեռագրեր ուղարկեցին։ Իշխանությունները նման առիթի էին սպասում և զորքեր լցրեցին գյուղերը, որոնք «զինաթափեցին մի քանի պատահական քրդերի, ինչը քրդերի մեջ դժգոհության ալիք առաջացրեց։ Քրդերը սկսեցին զանազան սպառնալիքներ տեղալ իշխանությունների հասցեին, մինչև անգամ սպառնում էին միանալ «ջանֆիդայիներին»։ Դա վախեցրեց իշխանություններին, և գյուղերում «ցրված հեծելազորի սպաները շատ քրդերի խոստովանեցին, որ իրենք նշանակված են իսկապես հայերի համար, որ թուրքերի բողոքը միայն պատրվակ էր և քրդերից մի քանի զենք առնելը՝ միայն խաբելու միջոց»[93]։

Սակայն Համիդիե գնդերի չարագործությունների դեմ դժգոհությունները գնալով համընդհանուր էին դառնում։ Երկրի բոլոր ծայրերից անընդհատ բողոքներ էին ստացվում։ Գրում են Վասպուրականից. «Թուրք և քուրդ խաղաղ տարրի և ոչ Համիդիե աշիրեթությունների շրջանում մեծ դժգոհություն կա Համիդիեների նկատմամբ, որ... սկսել են բացահայտ ցույց տալ։ Համիդիեները, իրենց դիրքի շնորհիվ, կարևորություն չեն տալիս այլևս ոչ ոքի, խտրություն չեն դնում ոչ իսլամի և ոչ քրիստոնյայի միջև, սպանում, կոտորում, թալանում են բոլորին»[94]։

1908 թ. մայիսի 21-ին Վանից հայտնում են, թե Համիդիեի հրամանատար Հուսեին փաշան «իր ծառաներին պատվիրում է գնալ շրջակա բոլոր հայ գյուղերի եկեղեցիներն ու վարժարանները, քանդել, ավերել և փայտերն ու գերանները գյուղացիների շալակը տված՝ բերել քրդական ավերակ գյուղերը նորոգելու»։

Մեկ տարի անց, 1904 թ. ապրիլի 14-ին Վանից այդ նույն ավազակն մասին գրեցին. «Անցյալ ամսին կառավարությունը պահեստի զորքերը ժողովել սկսեց, այդ կապակցությամբ թուրք ժողովրդի մեջ հուզումներ տեղի ունեցան։ Նրանք խորհուրդ արեցին, որ պետք է նախ հայերին կոտորել և ապա այդ պահեստայիններին հեռացնել Վանից»։

խստագույն պատիժների էին ենթարկվում այն քրդերը, որոնք հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին։ Հասանացի Յատեհ աղան ձերբակալվեց «հայերի հետ հարաբերություն ունենալու համար»։ «Կառավարությունը հալածում է նույնիսկ Համիդիեի կայմակամ Ալի բեյին... իբր, նա էլ է հայերին համակրում»։ Թուրքական կառավարության ձեռնարկած միջոցները, անշուշտ, դեր խաղացին քրդերի կողմնորոշման գործում։ Բայց ո՛չ գլխավոր և ո՛չ հիմնական։ Որո՞նք էին այդ կողմնորոշման հիմնական պատճառները։ Ինչո՞ւ քրդերը զենք վերցրին հայերի դեմ։ Քուրդը քոչվոր խաշնարած էր, անասնապահական մթերքներ իրացնելու միջոցով իր կարիքների գոնե մինիմումը բավարարել չէր կարող և դրանով չէր էլ զբաղվում։ Նա գերադասում էր թալանի ուղին։ Քուրդը, բացի ցեղ հասկացությունից, համակեցության ոչ մի այլ տեսակի մասին գաղափար չուներ. «ցեղակից» և «այլացեղ» բառերը նրա համար հոմանիշ էին «բարեկամ» և «թշնամի» բառերին։ Ցեղապետը իր եսասիրական շահերին կարողանում էր տալ համացեղային շահի տեսք ու քրդերին քշել ավերելու ու թալանելու։ Փոքր չէր նաև կրոնական մոլեռանդության դերը։

Հայ-քրդական թշնամության երկրորդ պատճառը գերմանացի հետազոտող Շվեյգեր Լեոխենվելդը ձևակերպում է հետևյալ կերպ. «Որպեսզի քրդերը հեռու մնան անկախության ձգտումից, կառավարությունը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով։ Այսպես օրինակ, նա քրդերին դրդում է Քրդստանում բնակվող նեստորականների դեմ, ինչպես նաև մահմեդականներին դնում է քաղդեացիների դեմ, իսկ վերջիններիս՝ եզիդիների ու քրդերի դեմ։ Նա այդպիսով առաջ է բերում խռովություններ այն միակ նպատակով, որ իր ձեռքում պահի գերագույն իշխանությունը... և նպատակ ուղանդները չմիավորվեն ընդհանուր թշնամու դեմ»։

Այդ նույն նպատակով սուլթանն ու նրա կառավարությունը քրդերին հայերի դեմ էին հանում, և օգտագործում իրենց իսկ հնարած այն թեզը, թե հայերը ուզում են տեր դառնալ կայսրության արևելյան և հարավ-արևելյան տարածքներին, որ նրանք չեն ընդունում Քրդստանի գոյությունը։ Զգտելով այն մտցնել Հայաստանի կազմի մեջ, այդ ռայաները ուզում են քրդերին ռայա դարձնել։

Հայկական հարցի ամբողջ ողբերգությունը հենց այն էր, որ

օսմանյան իշխող դասակարգերին հաջողվեց հայերի անկախության ձգտումներով ահաբեկել քրդերին և նրանց հավաքել հայաջինջ քաղաքականության դրոշի ներքո։

1903 թ. մարտի 20-ին Ռայխստագում է. Բերնշտայնը, նկարագրելով Հայաստանի վիճակը Բեռլինի կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջանում, հայտարարեց. «Տեղի ունեցան կոտորածներ, որոնց նմանը չի տեսել մարդկային պատմությունը։ Անխիղճ չեկավարների դրդմամբ և անգութ հրոսակների ձեռքով կոտորվեց ժողովրդի վիթխարի մի հատված։ Դեռ կոտորածների սկզբում սուլթանը տվել էր իր պատվի խոսքը Սոլսբերիին՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստրին, թե շուտով իրագործելու է բարենորոգումները... Բարենորոգումները չիրագործվեցին, վայրագությունները վերսկսվեցին և շարունակվեցին ավելի քստմնելի, ավելի վայրագ կերպով, մինչև որ հայ ժողովուրդը արյունաթաթախ տապալվեց...»։ Ապա՝ «Ոչ մի հայ այսօր չի մտածում անջատել Հայաստանը Թուրքիայից։ Ինչ երազներ էլ ունենան հայերը հեռու ապագայի նկատմամբ, նրանք բոլորը լավ գիտեն, որ դեռ շատ երկար տարիների ընթացքում չպետք է մտածեն անկախ Հայաստանի մասին։ Այդպիսի երազը վեր է նրանց կարողությունից... Հայերը չեն ձգտում ռամկավարական կարգերի... այլ շատ ավելի համեստ բարեփոխությունների, որ... մշակված են պետությունների ներկայացուցիչների կողմից»[95]։

Մակեդոնիայի ու Հայաստանի նվիրված միտինգներից մեկի ժամանակ Ռնատոլ Ֆրանսը հայտարարեց. «Երբ յաթաղանը բարձրանում է Հայաստանի վրա «զգուշ» լինել չի նշանակում լռել և ժխտել կոտորածները, խոհեմ լինել չի նշանակում թույլատրել ոճիրը անարգ լռությամբ։ Ստորությունը երբեք իմաստություն չէ։ Ո՞րն է ուրեմն այս լռության իմաստը, երբ զոհի արյունը աղաղակում է։ Մենք հետաքրքրվում ենք հայերի և մակեդոնացիների ճակատագրով ոչ թե նրա համար, որ նրանք քրիստոնյա են, այլ որ մարդ են»։ («Դրոշակ», 1908, № 8)։

Հերյուրանք էին նաև սասունցիների կողմից նախապատրաստվող ապստամբության մասին լուրերը։ «Լուրեր են շրջում,— գրում է «Հնչակը»,— թե Սասունում կան ուժեր, որոնք ինքնապաշտպանության են պատրաստվում և «քուրդ ցեղերն ու օսմանյան զորքերը հավաքվում են Սասունի շուրջը ֆեսադիներին կալանավորելու»։ Դա նշանակում էր կոտորած, որի պատրվակն այն էր, թե «սասունցիներն ուզում են ապստամբել»։

Մի քանի գյուղեր արդեն ենթարկվել էին քրդերի ու զորքերի վայրենի ասպատակությանը։

«Պրո Արմենիան» և եվրոպական այլ թերթեր տպագրեցին հետևյալ տեղեկատվությունը. «Քրդերի բռնած սպառնալից դիրքի շնորհիվ Սասունում և Մշո դաշտում տիրում է մեծ անհանգստություն»։

«Քուրդ պահապաններ նշանակելը հայ գյուղերում, զորքեր տեղավորելը հայկական նշանավոր վայրերում, հայերին օրենքից դուրս նկատելը ու մահմեդական տգետ խուժանի գրգռումը անզեն հայ գյուղացիների դեմ՝ այս բոլորը բավական չէր։ Հայերի ոչնչացման ծրագրին ավելի արագ ընթացք տալու համար Համիդի կառավարությանը հարկավոր են հրդեհվող գյուղերի ծուխ, մարդկային արյան հոսք»։

Այսպիսով, Սասունի հայությունը բնաջնջելու համար ոտքի էին հանվել նույն ուժերը, ինչ 1894 թվին՝ կանոնավոր բանակ, ոստիկանություն, համիդիե, ջանբազարներ, քրդեր և չերքեզներ։

***

Այժմ պատասխանենք հետևյալ հարցին. որո՞նք էին այն ուժերը, որ պետք է դուրս գային օսմանյան կառավարության հավաքագրած բազմահազար զորքերի ու զինված խաժամուժի դեմ և փրկեին Սասունի հայ բնակչությանը ոչնչացումից։ Դա, առաջին հերթին ինքը՝ Սասունի բնակչությունն էր, որը նախապատրաստվում էր ինքնապաշտպանական կռիվների։ Դա Տարոնի դաշտի և Մուշ քաղաքի հայ ազգաբնակչության այն խավերն էին, որոնք քաջ գիտակցում էին, որ Սասունի կոտորածները նախերգանքն են լինելու Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններում հայկական նոր ջարդերի։ Դա նաև օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությունն էր, որ Սասունի կոտորածների մեջ տեսնում էր իր բնաջնջումը։ Դա արևելահայությունն էր, նաև հայկական դաղթօջախները, որոնք Սասունի կոտորածները համարում էին համազգային ողբերգություն և հայերի գոյատևմանը սպառնացող միանգամայն իրական վտանգ։ Վերջապես հայդուկներն էին՝ հայ ժողովրդի ինքնապաշտպանական պայքարի առաջապահը, ժողովրդական այդ վրիժառուներն ու գոյատևման համար ժողովրդի պայքարի առաջամարտիկները։

Դասակարգային առումով ինքնապաշտպանության ուժերն էին. 1. Սասունի գյուղացիությունը։ 2. Արևմտյան Հայաստանի

քաղաքային չքավոր տարրերը, ինչպես նաև հայ արհեստավորներն ու առևտրականները։ 3. Մտավորականությունը, առավելապես արևելահայ մտավորականությունը։

Սասունում թուրք չարդարարների դեմ պայքարի ելան գրեթե ամբողջ գյուղացիությունը, ամբողջ բնակչությունը։ Հայ գյուղացին այլևս նախկին անմռունչ ստրուկը չէր, նա ըմբոստանում էր, բացահայտ ընդվզում։ Նույնիսկ թուրքերը խոսում էին, թե Սասնո մեջ հեղափոխականները բանակ են դրել Անդոկ լեռան բարձունքներու վրա[98]։

Պատմական գրականության մեջ Սասունում գործող հայդուկների թվի մասին տարբեր տվյալներ են բերվում։ Իրարամերժ թվեր են նշում նաև իրադարձությունների մասնակիցներն ու թուրքական աղբյուրները։ Այսպես, Կարինում Անգլիայի փոխհյուպատոսը 1903 թ. հոկտեմբերի 19-ին տեղեկագրում է. «Շատ դժվար է արժանահավատ տեղեկություն ստանալ Սասունում հայ հեղափոխականների՝ «ֆիդայիների» թվի, կազմակերպության և ծրագրերի մասին և մեծ վարանումով է, որ հաղորդում եմ ինձ հասած հետևյալ տեղեկությունները. «Ֆիդայիները վերջերս թե՛ թվով մեծապես շատացել են և թե՛ հզորացել, ասում են, հիմա նրանց թիվը 5—6000-ի է հասել, և բոլորը լավ զինված, մարզված և կազմակերպված են։ Լրիվ տիրացել են Մշո դաշտի հարավային կողմի լեռներին և իրենց իշխանությունը տարածվում է շատ գյուղերի և նույնիսկ ոչ նվազ չափով Մուշ քաղաքի վրա։ Իրենց պետը՝ Անդրանիկը, շատ կարող մարդ է, և բոլորը անպայման հնազանդվում են նրան։ Զինվորական կազմակերպությունը Թումանով անունով կովկասցի մի հայի հրամանատարության տակ է, որը ռուսական բանակի մեջ ծառայել է, և ասում են, սպա է եղել։ Թե ինչ է ֆիդայիների ծրագիրը, անկարող եմ ասել, բայց եթե այս տեղեկությունները ստույգ են, անտարակուսելի է, որ մոտ ապագայում նրանք կարևոր դեր պիտի խաղան այս երկրի մեջ»[99]։

Դժվար չէ կռահել, որ այս տվյալների աղբյուրը թուրքական է, որ հայդուկների թիվը տասնյակ անգամներ մեծացնելով, ցանկանում են արդարացնել Սասունի վրա հարձակումը։ Հավանաբար, թյուրիմացություն չէ նաև այն, որ ռուսական հյուպատոս Թումանովը ներկայացվում է որպես սասունցիների ռազմական ուժերի հրամանատար։ Եթե ռուս դիվանագետը զեկավար մասնակցություն ունի «ապստամբության», ապա նրա մեջ

խառն է «Ռուսաստանի մատը»։ Ինչևիցե, լսենք անգլիական դիվանագետին։ 1903 թ. նոյեմբերի 16-ին նա գրում է. «Անկարելի է նույնիսկ մոտավորապես որոշել, թե որքան է Սասունում զենք կրող հայերի թիվը։ Մ. Հեփսբնը և իր պաշտոնակիցները նրանց թիվը 5—6000 են հաշվում։ Դա նրանց կարծիքն է։ Ըստ երևույթին, նրանք նկատի ունեն այն ֆիդայիներին, որոնք անցյալ գարնանից ի վեր Սասունում էին, ինչպես նաև Մուշ քաղաքին մերձակա վեց գյուղերի ազգաբնակչությանը, Տալվորիկի բնակիչներին և Մուշ քաղաքից հեռացած 3—400 երիտասարդներին, որոնք, պետք է ենթադրել, որ հեղափոխականներին են միացել։

Մյուս կողմից, փոխհյուպատոս Հիթքոթը, այստեղի (Կարինի) և Բաղեշի տեղական իշխանությունները, ինչպես նաև Մուշից եկող հայ և թուրք ճամփորդները, բոլորն էլ հայտնում են, թե ֆիդայիների թիվը 300-ից ավելի չպետք է լինի, մինչ պաշտոնակիցները (Կարինի) պնդում են, թե նրանց թիվը հավանորեն 1500 է, ամենաքիչը 1000։

Վերջին ամիսներին ի հայտ է եկել մի նոր երևույթ՝ քրդերի գործակցությունը հայերի հետ։ Իրողություն է, որ Սասունի վրա այս ամռանը հարձակվելուց կառավարությանը ետ պահող պատճառներից մեկը քրդերի բռնած անսպասելի դիրքն է։ Նրանք մերժեցին ծրագրված հարձակմանը մասնակցել։ Ֆրանսիական հյուպատոսը ինձ ասաց, թե քրդերի և հայերի միջև տեղի ունեցող բանակցությունները, իր կարծիքով, հանգեցրել են մի դաշինքի, համաձայն որի քրդերը պատրաստ պիտի լինեն կատարելապես չեզոք դիրք բռնելու։ Նրանք ևս, ինչը որ անհավանական չէ, զենք կվերցնեն պաշտպանելու հայերին, եթե նրանց վրա հարձակում կատարվի։ Երկու իրողություններ վկայում են վերոհիշյալ կարծիքի հավանականությունը. առաջինն այն է, որ քրդերը, մանավանդ Սղերդի քրդերը, այս աշնանը պարեն հայթայթեցին զորքերի կողմից Սասունում պաշարված ֆիդայիների համար, երկրորդն այն է, որ այդ հուզումներով բռնկված գավառների քուրդ բնակիչների տներում հայ արհեստավորները մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք են պատրաստում հայ հեղափոխականների գործունեության համար»[100]։ Մեզ չհաջողվեց պարզել, թե քրդերի ու հայերի միջև բանակցությունները, որ հիշատակում է Շեփլեյը, երբ են տեղի ունեցել և ովքեր են դրանց մասնակցել։ Կասկածելի է նաև զենք և

սննդամթերք հայթայթելու գործում սասունցիներին բրդեքի ցույց տված օգնության փաստը։

Սակայն վերադառնանք հայդուկների քանակի հարցին։

Եթե անգլիական դիվանագետների նշած թվերը համեմատենք հայկական աղբյուրների տվյալների հետ, ապա բոլոր հիմքերն ունենք ասելու, որ Սասունի զինված գյուղացիների թիվը 2000 հոգուց չէր անցնում։

Նրանցից հայդուկ էին 200—250 հոգին, որոնցից 30—35-ը եկել էին Կովկասից, երեթե այդքան էլ կայսրության մյուս նահանգներից ու գավառներից, մասնավորապես Տարոնից։ Սասունցի էին 170—180 հայդուկ։

Գոյամարտը, ինչպես ասվեց, համաժողովրդական օգնություն և աջակցություն էր ստանում ոչ միայն Սասունի, այլ նաև Տարոնի ու Արևմտյան Հայաստանի մյուս գավառների հայ բնակչության կողմից։ Տարոնի շատ գյուղերում գործում էին մարտական ջոկատներ, որոնք պատրաստ էին մարտի բռնվել և հակահարված տալ թշնամուն։ Որոշ թվով տարոնցիներ գնացին Սասունի ինքնապաշտպանական կռիվներին մասնակցելու, իսկ տեղում մնացած յուրաքանչյուր մշեցի «ինքնակամ տալիս էր իր հացը, յուղը, մսացուն, հագուստեղենը, դրամը»։

Իրենց հայրենակիցներին օգնելու պատրաստակամություն էին հայտնում նաև մեծ թվով հայ արհեստավորներ, առևտրականներ, քաղաքի ու գյուղի ունևոր խավի ներկայացուցիչներ։

«Հնչակը» 1907 թ. հունվարին հայ առևտրական բուրժուազիայի մասին գրեց. «... Մինչ 1895 թվականը այդ դասակարգը ոչ միայն դեմ էր ամեն տեսակ հեղափոխական շարժման՝ իր կարողության սահմաններում զանազան խոչընդոտներ հարուցանելով հեղափոխական գաղափարի ծավալմանը, այլև նա ամենաջերմ պաշտպանը, ջատագովն էր սուլթանական ռեժիմի պահպանության և հարատևության, այն նկատառումով, որ իրերի այդ դրությունը իրեն հնարավորություն էր տալիս օգտվելու ընդհանուր քայքայումից, ինչպես և տիրապետող անկարգ վիճակից ու տարբեր ազգության պատկանող մասսաների տգիտությունից։

Վրա հասավ 1895-ի կոտորածը։ Թուրք կառավարության գործիք խուժանը, բնականաբար, չկարողացավ մտնել նրանց այդ նուրբ նկրտումների ու հաշիվների մեջ, ուստի իր կողոպուտի հոսանքը ավելի մեծ չափով դեպի այդ դասակարգը ուղղեց։

Իհարկե, խուժանն էլ իր հաշիվն ուներ և փոխադարձ այդ հաշվառության և հաշվետվության հետևանքը այն եղավ, որ հայ առևտրականները բոլորովին զրկվեցին իրենց ունեցվածքից և դրանից հետո էլ ընկան կարոտ ու խեղճ վիճակի մեջ։ Սնանկացած հայ վաճառականների կողքին հրապարակի վրա երևացին թուրք մեծափարթամ վաճառականները և առևտրականները, որոնք իրենց դրամագլխի մեծ մասը կազմել էին հայ վաճառականների կողոպուտից և թալանից։

Կողոպուտից և կոտորածից շատ թե քիչ ազատ մնացած հայ առևտրականները, թեև մի պահ սարսափեցին սուլթան Համիդի վարչակարգից և իրենց վստահությունը կորցրին, բայց արդեն ուշ էր, որովհետև կյանքի, գույքի ապահովություն չտեսնելով, մի կողմից՝ չհամարձակվեցին իրենց մնացած փոքրիկ դրամագլուխները շրջանառության մեջ դնել, մյուս կողմից՝ շատ թե քիչ հանդուգն եղողներն էլ տեսան, որ այլևս առևտրական բոլոր ճամփաները իրենց առջև փակված են։ Առևտրականությանը երկար ժամանակից ի վեր ոչ մի նշանակություն չտվող թուրք տարրը, երբ իր առջև տեսավ շահույթի նոր ասպարեզ՝ այն է վաճառականությունը, որով կարող էր է՛լ ավելի ընդարձակել իր շահույթը և ռայային, գյավուրին իր հպատակության տակ առնել, ամենաեռանդուն կերպով գործի անցավ և հաջողություն ունեցավ, որովհետև նրա դիրքն ու պայմանները բոլորովին տարբեր էին, ամեն ինչ իր համար նպաստավոր էր, թալանվելու, վնասվելու երկյուղ չուներ...

Մի ուրիշ հանգամանք էլ շատ օգնեց թուրք վաճառականին և առևտրականին։ Տաճիկ կրոնավորները 95 թվից հետո թե՛ մզկիթներում, թե՛ հրապարակներում բացորոշ կերպով թուրք ժողովրդին մարսել տվին այն գաղափարը, թե «գյավուրի հետ առևտուր անելը մեղք է»։

Խոջայի և մոլլայի այդ պատկերը բավական էր, որ թուրք գյուղացին իր ոտքը կտրեր հայի խանութից։ Դեռ ավելին, սուլթանի պաշտոնյաներն էլ օգնության հասան, նրանք էլ ոչ միայն կողմնակի, այլև ուղղակի կերպով և իրենց օրինակով թուրք ժողովրդին հասկացնում էին, որ հայ տարրի հետ տնտեսական հարաբերության մեջ չպետք է մտնել, պետք է հայերին աղքատացնել, պետք չէ նրանց հարստացնել, որ կոմիտեի անդամներին դրամ տան։

Հայ վաճառականի անկման պատճառներից մեկն էլ այն

եղավ, որ նա չկարողացավ Պոլիս և այլ վաճառաշահ կենտրոններ գնալ, իր ուղած ապրանքները սուղ գնով գնել թուրք մեծածախ վաճառականներից, որ երբեք ձեռնտու և շահաբեր չէր կարող լինել իր համար։

Հայ առևտրականը իր ապրանքները սպառելու համար չէր կարող դրանք նաև գյուղերը տանել, որովհետև, նախ ճանապարհին կողոպտվելու վտանգ կար, հետո թուրք պաշտոնյաները ամեն րոպե նրան կարող էին մեղադրել որպես հեղափոխական, և երրորդ՝ գյուղերի շուկան էլ արդեն գրավել էին թուրք մանր առևտրականները։ Կատարվել էր մի բան, որ լոկ հայկական երևույթ չէր։ Պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, երբ իշխող ազգի բուրժուազիան օգտագործում է պետական և ռազմական մեքենան շուկայից իր մրցակիցներին, տվյալ դեպքում՝ հայ առևտրականներին դուրս քշելու համար։ Այդ բանը թուրք բուրժուազիային հաջողվեց, որի ուղղակի հետևանքը եղավ հայ առևտրական բուրժուազիայի տրամադրության շրջադարձը՝ նա հանդես եկավ որպես ազգային-ազատագրական պայքարի, տվյալ դեպքում՝ օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարի ղեկավար։ Բայց որովհետև նա ոչ թե արդյունաբերական, այլ առևտրական բուրժուազիա էր, որը աշխատավորական լայն զանգվածների հետ շփումներ և նրանց ղեկավարելու փորձ ու հմտություն չուներ, անկարող գտնվեց իրապես դառնալու շարժման առաջնորդ և մնաց լոկ ուղեկցի ու աջակցի դերում։

Վերը նշված համարում «Հնչակը» անդրադառնում է նաև հայ արհեստավորությանը. «Հայ արհեստավորը օր օրին ապրող դասակարգ է, ապրուստ հայթայթողը իր արհեստի գործիքներն են։ Մեծ թալանին նա էլ իր ունեցած բոլոր գործիքներից զրկվեց։ Արհեստավորներից շատերն էլ սպանվեցին»։ Կենդանի մնացած արհեստավորը իր զբաղմունքը առաջ տանելու համար գործիքի կարիք ուներ... և դրամ էլ չուներ նորը ձեռք բերելու համար։

Վերջապես նա էլ ընկավ վաշխառուների ձեռքը, ահագին տոկոսներով դրամ ճարեց և սկսեց աշխատել։ Բայց թուրք մոլլաների և կառավարության պաշտոնյաների պրոպագանդան և պատվիրանները այստեղ էլ իրենց ազդեցությունն ունեցան։ Թուրք կառավարության միտումն էր հայ արհեստավորների փոխարեն տեսնել թուրք արհեստավորների։ Եվ պետք է ասել,

որ նա մասամբ իր նպատակին հասավ։ Չնայած հայ արհեստավորը անհամեմատ բարձր է թուրք արհեստավորից ու Եվրոպայի արհեստավորների մրցակիցն է և իր արտադրանքը կարող է ավելի էժան ծախել, բայց և այնպես այսօր նա չի կարող իր հացը ճարել, երեկոյան տուն է վերադառնում առանց կարողանալու զավակներին գեթ մի պատառ հաց տանելու։ Քաղաքի մեջ նա իր դեմ ունի թուրք արհեստավորին, իսկ գյուղում անվտանգություն չկա, որ կարողանա իր արհեստը գործի դնել և ապրել։ Սրան ավելացնենք նաև դինվորական և այլ բազմատեսակ տուրքերի օրեցօր ավելանալը, և դուք կունենաք հայ արհեստավորի վիճակի պատկերը։ Այդ դեռ հերիք չէ, նա տարին մի քանի անգամ բանտարկվում է տուրքերը վճարել չկարողանալու համար, եթե մի քանի հաճախորդ էլ ունի, նրանք էլ ցրվում են՝ խանութը փակ տեսնելով»։

Այսինքն՝ թուրքական բռնություններն ու յաթաղանը հայ հասարակական բոլոր խավերին կանգնեցրել էր երկընտրանքի առաջ՝ կա՛մ պայքարել թուրքական լծի դեմ, կա՛մ ոչնչանալ։

Սասունի և Տարոնի վիճակն ու այնտեղ հասունացող դեպքերը իրենց վրա էին բևեռել ոչ միայն արևմտահայերի, այլև ողջ հայության և մասնավորապես՝ արևելահայության ուշադրությունը։

Կովկասում եռանդուն աշխատանք ծավալվեց Սասունին օգնելու։ Մասնավորապես դաշնակցական կուսակցությունն այս ուղղությամբ մեծ գործ կատարեց։ Զենք և մարտական խմբեր հավաքվեցին Սասուն ուղարկելու նպատակով։ Մրգստան—Դուրան-Բարձրավանդակ (այսինքն Երևան—Սասուն) կապը իրականացվում էր՝ 1. Կարս—Խնուս—Սասուն, 2. Դավալու—Մակու—Թադեի վանք—Խոյ—Սասուն, 3. Սալմաստ—Բաշկալա—Հայոց ձոր—Վան—Սասուն, 4. Միրզաջան—Տաք աղբյուր—Արճեշ—Ախլաթ—Սասուն գծով։ Առանձին դեպքերում զենքերը Սև ծովով ուղարկում էին Ալեքսանդրիա, այնտեղից փոխադրում Հալեպ և ապա՝ Սասուն։

Այս բոլոր փոխադրումները կատարվում էին արտակարգ ծանր պայմաններում։ Ուղարկված զենքի մեծ մասը տեղ չէր հասնում և ընկնում էր թուրքերի կամ քրդերի ձեռքը։ Մեծ զոհեր էին տալիս նաև երկիր մտած զինված խմբերը։ Նրանք ճանապարհին հարձակման էին ենթարկվում, ոչնչանում մասամբ կամ ամբողջությամբ։ Բայց դա արևելահայերին չէր հուսահա-

տեղնում։ Կործանման վտանգի տակ գտնվող իրենց եղբայրներին անպայման օգնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նրանք ոչ մի զոհողության ու զոհաբերության առաջ կանգ չէին առնում։

1902—1904 թվականներին Սասուն մեկնելու համար ռուս-թուրքական սահմանը անցան մի շարք զինված խմբեր։ Նախ նշենք, որ Սասուն հասավ Թորգոմի խումբը՝ 25 հոգի, որի կազմում էին նաև Մուրադը, Քեռին, Սեպուհը, Կայծակ Առաքելը։ Թորգոմը ետ դարձավ Կովկաս և նոր խումբ հավաքելով՝ նորից ուղղություն բռնեց դեպի Սասուն, բայց Կարսի մոտերքում նրա խումբը հայտնաբերվեց ու ոչնչացվեց։

Իգդիր—Ալաշկերտ գծով դեպի Սասուն գնացող «Երկաթ» խումբը նույն բախտին արժանացավ։ Նեվրուզի խումբը՝ մոտ 90 հոգի, 1903 թ. սեպտեմբերի 17-ին անցավ սահմանը։ Նրանցից 19-ը առաջ ընկան՝ խմբի համար տեղ պատրաստելու։ Առավոտյան նրանց դեմ դուրս եկան 6 քրդեր, որոնցից 3-ը սպանվեցին, իսկ մյուս 3-ը փախան և օգնություն կանչեցին։ Քրդերը հավաքվեցին։ Կռիվը տևեց մինչև երեկո։ Հայդուկները հեռանում են Յուզվերան գյուղ, բայց վռնեցած գյուղացիները նրանց չեն ընդունում և խումբը շարժվում է դեպի Բոցիկի լեռները։ Այստեղ են հասնում նաև խմբի մյուս 70 հայդուկները։ Նրանք նոր էին միատեղվել, երբ քրդերը սկսեցին հարձակումը։ Կռիվը տևեց երեք օր։ Հայդուկները, հոգնած ու տանջված, քաշվեցին Գոմաձոր։ Զորքեր շտապեցին Կաբինից, Դալի—Բաբայից, Ղաբաբիլիսայից։ Գործի դրվեցին թնդանոթները։ Հայերը հերոսաբար դիմադրեցին։ Բայց երբ ռազմամթերքը սպառվեց, նրանցից 70 հոգի ետ դարձան դեպի ռուսական սահմանը։ Նրանք բոլորը ձերբակալվեցին։ Թուրքական իշխանությունները այս կապակցությամբ մեծ աղմուկ բարձրացրին։ «Թուրք հրամանատարը դժգոհություն է հայտնել, որ ռուսները սահմանը կանոնավոր չեն պահում, որ 600 ֆիդայիներ անցել են, ահագին կորուստ ու ավերածություն առաջացրել։ 400 մարդ խուժանից ու զինվորներից է ընկել, սպանվել է մի հազարապետ, մի կայմակամ, 3 սպա և այլն»։ Թուրքերը չափազանցում էին և դրա իմաստը նույնն էր՝ հասկացնել տալ, որ ցարական իշխանությունները իրենց հանդուրժողականությամբ գործնականում աջակցում են հայկական շարժումներին։ Դա կեղծիք էր, որովհետև այդ իշխանությունների վարքագծում հանդուրժողականության հետք անգամ չկար։

«Դժոխք» խումբը Կայծակի՝ Վաղարշակ Բաղդասարյանի գլխավորությամբ, 29 հոգով, հունիսի 7-ին անցնում է սահմանը՝ Սասուն գնալու համար, բայց թուրք սահմանապահների կողմից նկատվում է Զիվինի բարձունքներում, շրջապատվում 4000 զինվորների ու քրդերի կողմից։ Չնայած հերոսական դիմադրությանը, հայերից քչերն են փրկվում։

Նիկոլ Դումանի ղեկավարությամբ Սալմաստից մի խումբ 1904 թ. հունիսի վերջին մտավ Թուրքիա, բայց սահմանի վրա նրանց դիմավորեց հրացանային համազարկը, որովհետև թուրքերին նախապես հայտնել էին այդ խմբի գալու մասին։ Հայերից երկու հոգի զոհվեցին, իսկ մյուսները ետ դարձան։

Դեպի Սասուն մեկնածներից էր «Արարատյան» անունը կրող խումբը, (60 հոգի), որի մեջ էր նաև Մհեր Մանուկյանը։ Նա Տարոնի Ցրոնք գյուղից էր, հայրուկ, Ալիբենանցի Լևոնի խմբից։ 1894 թվին մեկնել էր Կովկաս, մասնակցել Գոլիցինի վրա կատարված ահաբեկչությանը և անցել Պարսկաստան։ Այստեղ մտել էր «Արարատյան» խմբի մեջ՝ Սասուն գնալու և 1904 թ. կռիվներին մասնակցելու համար։

Սակայն «Արարատյան» խմբին չի հաջողվում Սասուն հասնել, որովհետև դեռ սահմանը չանցած, քայքայվում ու ցրվում է։ Մհերը գնում է Թավրիզ, որտեղ որոշ ժամանակ անց զոհվում է։

Կարելի է նաև այլ խմբերի ու անձանց թվել, որոնք, թողնելով իրենց ընտանիքն ու հարազատներին, ճամփա ելան Սասունում մարտիրոսանալու համար։ Նրանց մեծ մասը նահատակվեց ճանապարհին, քչերին հաջողվեց տեղ հասնել և մաքառել հանուն սասունցի հայի փրկության։

Վանում անգլիացի փոխհյուպատոս Թիրլի 1903 թ. հոկտեմբերի 27-ի տեղեկագրում կարդում ենք. «Երբ Բուլանըխ էի, զինվորական հրամանատար Ֆերիզ Ահմեդ փաշան ինձ ասաց, թե Քեոսե Դալի արևմտյան կողմից սահմանն անցնող զինյալ հեղափոխականների մեծ մասին հաջողվել է թուրքական զորքերի միջից ճեղքել անցնել, և մտադիր է Մանազկերտից Սասուն անցնել՝ միանալու այդտեղի հեղափոխականներին, որոնք թուրքերի կարծիքով, մեծ թիվ են կազմում... Բասենի արշավախմբերից ձերբակալվածները, ամենքն էլ ռուսահայ, խոստովանում են, թե իրենց նպատակն էր Սասուն գնալ, և թե՝ ուրիշ խմբեր էլ պիտի գան»[101]։

Անգլիացի դիվանագետը հաճույքով հավատում է թուրքա-

կան պաշտոնական շրջանների ներկայացրած մտքերին ու թելերին։ Խոսքը սիզբունքային խնդրի մասին է։ Սուլթանական պրոպագանդան համառորեն այն միաքն էր զարգացնում, թե կայսրությունում բնակվող հայերի նկատմամբ Փաղիշահը այնքան հոգատար էր, և այդ հպատակները նրան այնքան հավատարիմ էին, որ իշխանությունների ու արևմտահայության միջև հակասություն, այն էլ՝ զինված պայքար, լինել չէր կարող։ Եվ հայկական շարժումները ոչ թե ներքին, այլ դրսից ներմուծվող երևույթ էին, որոնք ղեկավարվում և իրականացվում էին «դրսեցիների» կողմից։ Հետևաբար, իշխանությունները ճնշում կամ ոչնչացնում էին ոչ թե օսմանյան հպատակներին, այլ կայսրության ներքին գործերին դրսից միջամտողներին։

Բացարձակ կեղծիք է։ Վերևում արդեն ասվեց, որ սասունցիների շարքերում դրսից կռվողների թիվը 30—35-ից չէր անցնում, չհաշված տարոնցիներին։ Փոքր էր նաև կայսրության մյուս շրջաններից եկած հայերի թիվը։ Գոյամարտի նախօրյակին ակնհայտ դարձավ, որ գործնականում Սասունը միայնակ է՝ կանգնած տասնյակ հազարավոր քրդերի ու թուրքական կանոնավոր բանակի առաջ։ Սասունի շարժման մի քանի ղեկավարներ, ստեղծված վիճակից անհանգստացած, դիմեցին մերձակա շրջաններին՝ օգնական ուժեր ստանալու համար։ Հայդուկները մասնավորապես մեծ հույսեր էին կապում Վասպուրականի և լեռնային շրջաններում ինքնապաշտպանական կռիվների ծավալման և Վանի միջոցով զենք ու զինամթերք ստանալու հետ։

Վահան Փափազյանը գրում է. «Անդրանիկը պահանջում է, որ Վասպուրականը լեռնային շրջաններում արձագանքի իրենց շարժումներին»[102]։

Սակայն Վասպուրականի լեռները լուռ մնացին, իսկ Վանից այդպես էլ զենք ու զինամթերք չստացվեց։ Դրա փոխարեն ստացվեց Վ. Փափազյանի պատասխանը. «Վասպուրականի մեր զինապահեստը շատ աղքատ է» սասունցիներին օգնելու համար[103]։

1904 թվականի փետրվարի 6-ին սասունցիների անունից Հրայրը դիմեց բոլոր հայերին։ «Սասունի վիճակն անելանելի է, հնարավոր է, որ այս նամակը վերջինն է։ Սասունցիները մարտի են շտապում, որպեսզի վերջ դնեն դժոխային տանջանքներին... Պատերազմը սկսված է, և դրա համար էլ պետք է հավաքել բոլոր ուժերը և թույլ չտալ թշնամուն հաղթելու...»[104]։

Օգնության խնդրանքով մարդիկ ուղարկվեցին նաև մի շարք քուրդ ցեղապետների մոտ։ Սակայն այդ առաքելությունների արդյունքները մեծ չէին։ Իսկ Արճեշում Ջեվդեթը բռնեց քրդերի շրջանում աշխատանք տանող Պողոս և Պետրոս եղբայրներին։ «Նրանց պայտեցին... և մերկացնելով՝ կապեցին սյունին և ոջիլներով լցված տոպրակը նրանց գլխին հագցրին... կապեցին ձիու պոչից... վազեցրին ու այդպես էլ մեռցրին»[105]։

Վ. Փափազյանը հարկադրված էր խոստովանել. «Սասունը մնաց անհույս՝ դրսից որևէ օգնություն ստանալու հարցում։ Ոչ մի խումբ չկարողացավ դրսից թափանցել և իրական օգնություն ցույց տալ[106]։

Վիճակն այդպիսին էր, իսկ թուրքերը անընդհատ նորանոր ուժեր էին շարժում Սասունի վրա։

ՍԿՍՎԵՑ...

Ահագնացող վտանգի առաջ սասունցիներին օգնության ձեռք չմեկնեցին նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրած կառավարությունները։ Սասունցիների օգնության խնդրանքին էրզրումում Ռուսաստանի հյուպատոսը պատասխանեց. «Հայերը առայժմ պետք է հանգիստ մնան, միայն Ռուսիան է, որ կարող է հայկական խնդրին ցանկալի լուծում տալ, և որովհետև Ռուսիան այժմ զբաղված է ծայրագույն Արևելքում, իհարկե, չի կարող միջամտել Թուրքիայի գործերին և հայերը ավելորդ տեղը ջարդվում են»[107]։

Բ. Դուռը լավ էր հասկանում, որ հայերը մեկուսացված վիճակում էին և որոշեց գործել արագ, առանց ժամանակ կորցնելու։ Դրա համար էլ որոշվեց փոխել կոտորածների նախապես մշակված ծրագիրը, չսպասել գարնանը և սկսել մարտական անջատ գործողություններ, որոնք խնդիր ունեին հյուծելու հայերին։ Դա հնարավորություն կտար գարնանը, առանց լուրջ դժվարությունների, լուծել լեռնաշխարհի հայության հարցը։

Սասունը հարկադրված էր մահու և կենաց կռիվ մղել հղոր թշնամու դեմ։

«Կռվից խուսափելու ոչ մի ելք չկար, նախահարձակը թուրքական զորքն էր։ Սասունցիները, կամա թե ակամա, պետք է ընդունեին այդ մարտը, նրանք պետք է զենքով պաշտպանեին

իրենց գոյությունը՝ դիմելով ամեն տեսակի զոհաբերություններ»,— վկայում են ժամանակակիցները։

Իսկ Սասունում այդ տարի ձմեռը ձյունաշատ էր ու խիստ։ 1904 թվի փետրվարի 4-ին Սասունից գրում էին. «Ձմեռը դաժան է, սառնամանիքները և ձյունահյուսերը անտանելի են, ժողովուրդը բոբիկ է և տկլոր, իսկ պատերազմը՝ անհավասար։ Ի՞նչ կլինի մեզ հետ վաղը և ի՞նչ կլինի մեր դրությունը, չգիտենք»։

Սակայն սասունցիները չվհատվեցին։ 1904 թ. մարտի 21-ին Սասունից ստացված մի նամակում կարդում ենք. «... Սասունի ազատ հայերը պատրաստ են առանց վախենալու, բաց կրծքով կանգնել ընդդեմ սուլթանի կողմից պարտադրված դաժան կրոնի։ Այդ պատճառով թախանձագին խնդրում ենք մեր եղբայրներին չհրաժարվել խեղճ սասունցիներին օգնելուց...»։

Ստեղծված վիճակը քննելու և գործողությունների ծրագիրը մշակելու համար Գելիեգուզանի Ռշկներ կոչված թաղում հրավիրվում է շարժման ղեկավարների ժողով, որին մասնակցում են Անդրանիկը, Հրայրը, Գևորգը, Վահանը, Մուրադը, Սմբատը, Կոտոյի Հաճին, Ավոն, Սեպուհը, Միքայելը (Շենիկից), Քյաթիբ Մանուկը (Սեմալից), Քյաթիբ և Ռես Ավեները (Գելիեգուզանից), Սպաղանաց Մակարը, Տալվորիկից՝ Համզեն, Թաթարը և ուրիշներ։ Գյուղերի ներկայացուցիչները ժողովականներին ներկայացրին իրենց գյուղերի, նրանց մարտական ջոկատների, ռազմամթերքի, սննդամթերքի վիճակը, գյուղացիների տրամադրությունները։ Ժողովը գտավ, որ յուրաքանչյուր գյուղի պաշտպանությունն առաջին հերթին նրա բնակիչների, մարտական ջոկատների պարտականությունն է։ Անհրաժեշտ համարվեց զինել հետապնդումների հետևանքով գյուղերից փախած երիտասարդներին և ըստ ամենայնի օգտագործել նրանց ուժերը։ Զենքի հայթայթումը համարվեց գլխավոր խնդիր[108]։

Ժողովը որոշեց նաև պատերազմական գործողությունների ղեկավարների, այսինքն՝ հրամանատարական կազմի հարցը։ Ընդհանուր հրամանատար ընտրվեց Անդրանիկը։ Նա նաև պետք է ղեկավարեր արևելյան Շատախի ճակատը, Հրայրը՝ հյուսիսային ճակատը, Գևորգը՝ հարավային և հարավ-արևմտյան ճակատը (Իշխանաձոր—Տալվորիկ), Կոտոյի Հաճին՝ Չայի ճակատը։ Այսինքն, ինչպես նշում է ժամանակակիցը, այդ «ժողովում Գեվորգը ընտրվեց զինվորական խորհրդի անդամ և զինվորական երկրորդ հրամանատար»[109]։

Ժողովի ավարտին Անդրանիկը ճառ է ասում. «Կառավարությունը մտադիր է վերջնականապես դուրս հանել մեզ մեր սրբազան հայրենիքից, և թերևս մենք չկարողանանք դիմանալ կենտրոնական կառավարության թվով գերակշիռ զորքերին և ստիպված լինենք նահանջել և թերևս դժբախտություն ունենանք մարտի դաշտում ձգելու մեր ամենաթանկագին ընկերներից մի քանիսին, բայց վստահ եղեք, որ դրանով կառավարությունը ավելի կտարածի հեղափոխության սերմերը։ Հանուն մեր նահատակների, հանուն մեր կորած սուրբ ընկերների, մենք կաշխատենք չվհատվել և կռվել մինչև մեր արյան վերջին կաթիլը»[110]։

Ժողովը որոշում է «կռիվ տալ՝ ճակատագրական, վերջին անհավասար մարտնչումների ճակատամարտ և ապա հեռանալ սուրբ հայրենիքից»։

Ինքնապաշտպանական աշխատանքները կազմակերպելու համար ժողովի մասնակիցները մեկնում են Տարոնի ու Սասունի գյուղերը։ Հրայրը կենտրոնացնում էր կազմակերպչական աշխատանքները, Սմբատը կազմակերպում էր պարենամթերքի հայթայթումն ու տեղափոխումը լեռնային թաքստոցները։ Փոխադրությունների գործի վերահսկողությունը հանձնված էր Զաուշին։ Նրան հաջողվում է քրդերից ձեռք բերել մեծ քանակությամբ կապար։ Սասունի բոլոր մուտքերի վրա մշտական հերթապահություն սահմանվեց։ Փայտե կամուրջներ էին պատրաստվում՝ հարկ եղած դեպքում օգտագործելու համար։ Անվտանգության նկատառումով ծայրամասային մի քանի գյուղեր դատարկվեցին, իսկ գյուղացիներին տեղափոխեցին Սասունի խորքերը։ Սահմանվեց գաղտնի հսկողություն թուրքական ռազմական և քաղաքացիական իշխանությունների գործունեության վրա՝ ժամանակին ու հավաստի տեղեկություններ ստանալու ու հանկարծակիի չգալու համար։ Մարդկանց մի ստվար խումբ դարձել էր գյուղերի, մարտական ջոկատների և ընդհանուր հրամանատարության միջև կապավոր։ Տալվորիկի զենքի արհեստանոցը այդ օրերին աշխատում էր օր ու գիշեր՝ զենքեր էր նորոգում, կապար թափում, երկաթ հալում, սուր ու դաշույն պատրաստում։

Այդ օրերին «Դեյլի տելեգրաֆը» տպագրեց Ավստրա-Հուն-

գարիայի արտաքին գործերի մինիստր կոմս Գոլոխովսկու ճառը, որտեղ կարդում ենք. «Չեմ ուզում- մարգարեանալ, բայց կան թուրքական հպատակներ, որոնք այլևս չպիտի հանդուրժեն ներկայիս թուրքական ռեժիմը, և շատ հավանական է, որ այնտեղ եղած ժողովուրդը կնախընտրի մեռնել, քան այդպիսի պայմաններում ապրել»[111]։

Սասունցիները իսկապես նախընտրեցին ոչ թե ստրուկի նման ապրելու, այլ մեռնելու ուղին։ «Թուրքական հարձակումից առաջ Անդրանիկի մոտ ուղարկվեցին եվրոպական պետությունների ներկայացուցիչներ, որոնք սկսեցին համոզել նրան՝ առանց կռվելու թողնել Սասունը»[112]։

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ձոր...
Հայ ժողովրդի տեր ու պաշտպան Անդրանիկ,
Հայությունը նրա անունը պիտի հիշեր հավիտյան,
Ու թուրքը պիտի սարսափեր նրանից շատ երկար տարիներ։

Օտար դիվանագետները ամեն կերպ աշխատում էին ցույց տալ, որ իրենք գործում էին հօգուտ հայդուկների, հօգուտ հայ ժողովրդի արդար դատի։ Ահա թե ինչ է գրում Էրզրումի ռուսական հյուպատոսը. «Ընդհանուր առմամբ վիճակը շատ լուրջ է։ Անգլիական հյուպատոսները սերտ կապերի մեջ են Խարբերդում, Բիթլիսում և Էրզրումում գտնվող ֆիդայիների հետ։ Իր եռանդուն գործունեությամբ աչքի է ընկնում բրիտանական հյուպատոսը, որը, չնայած ձմեռային պայմաններին, մոտ ժամանակներս գնացել է Սասուն, որտեղ, ինչպես հաղորդում են, հեղափոխական շարժումների ղեկավարներից մեկի՝ Անդրանիկի հետ այցելել է բոլոր ապստամբական պոստերը»[113]։

Դա եվրոպական հյուպատոսների Սասուն այցելելու առաջին դեպքը չէր։ Նման այցելություններ եղան նաև 1903 թվին, երբ նրանք այստեղ եկան Կ. Պոլսի խնդրանքով և հայտնեցին «սուլթանի վճռականությունը՝ նրանց (հայդուկներին) կամ սպանել և կամ դուրս քշել կայսրության սահմաններից»։ Օտար դիվանագետները հայդուկներից պահանջում էին հեռանալ Սասունից։ Բնական էր, որ Անդրանիկը մերժեց այդ առաջարկը, որովհետև Սասունից հայդուկներին հանել, նշանակում էր սասունցիներին անպաշտպան թողնել յաթաղանի առաջ, թուրքական զորքերին ու քրդերին հնարավորություն տալ, առանց դիմադրության հանդիպելու, կոտորել ու թալանել։

Իսկ Սասունում մարտական գործողություններն արդեն սկսվել էին։ Իրադարձությունները ծավալվեցին հետևյալ կերպ.

Հեղինի կռիվը.— 1904 թ. հունվարի 10-ին Գելիեգուզանի Տավրներ գյուղ է գալիս մի գյուղացի և հայտնում, որ խիանքի մյուդիր Քյոռ Սլոն 15 հեծյալներով և իր աշիրեթով հարձակվել է՝ Հեղին, Արտկոնք, Ընկուզնակ և Իշխանձոր գյուղերը թալանելու[114]։

Հեղինում Քյոռ Սլոն գյուղացիներին հայտարարում է. «Ձեր հացը չպիտի ուտեմ, եթե 40 ոսկի չհամրեք»։ Գյուղացին որտեղի՞ց գտներ այդքան գումար։ Սկսվում է թալանը, բացի տնային գույքից հափշտակում են նաև հայերի անասունները։

Դեռ 1903 թ. աշնանը «Գևորգը իջավ Դաշտ՝ հրահանգներ տալու, կարգադրություններ կատարելու և Դաշտի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու։ Նոր էր սար բարձրացել, երբ լուր հասավ, թե Տալվորիկը վտանգի մեջ է։ Անմիջապես շտապեց դեպի սիրելի Տալվորիկ, որի պաշտպանության համար այնքան անգամ կռվել է և իր կյանքի գնով օգնության հասել»։ Բարեբախտաբար, որևէ լուրջ դեպք տեղի չունեցավ և նա թողեց Տալվորիկը ու գնաց ձմեռը Սասունի հարավ-արևմտյան կողմերի գյուղերի՝ Իշխանձորի, Արտկոնքի, Ընկուզնակի և Հեղինի պաշտպանությունը ապահովելու քրդերի հարձակումներից,— վկայում են ժամանակակիցները։

Երբ Գևորգի խումբը Իշխանձոր հասավ, հանդիպեց Հեղինի Իշխան Վարդանին։ Քյոռ Սլոն միայն նրանից հափշտակել էր 60 ոչխար, երեք ձի և 20 ոսկի։

Հայդուկները շարժվում են Հեղին՝ ավազակին պատժելու։ Այդ լսելով՝ Քյոռ Սլոն փախչում է Փասուր և իշխանություններից լրացուցիչ ուժեր խնդրում, որովհետև «այդ ժամանակ Տիգրանակերտից Փասուր էր եկել 400 հոգուց բաղկացած մի գունդ»։

Գևորգը մի գրություն է ուղարկում Սլոյին ու պահանջում հայերին թալանած անասունները, գույքն ու դրամը վերադարձնել։ Սլոն հրաժարվում է և օգնության կանչում նաև բագրանցի քրդերին։ Միաժամանակ նամակ է գրում Գևորգին թե «ինքը նպատակ չունի հայերի հետ թշնամանալու, այլ կառավարությունն է, որ այդ անել է տալիս»։

Մի քանի օր հետո նա հարձակվում է Ակրոնք գյուղի վրա, սպանում 9 հայի և առևանդում յոթ տարեկան մի աղջնակի։ Իշխանություններն այդ գազանությունների համար փոխանակ

հանցագործության հեղինակին բանտարկելու, բանտ են գցում ութ անմեղ հայերի։ Նոր ուժեր հավաքելով՝ Սլոն նորից հարձակվեց Հեղինի վրա։ Գևորգը իր խումբը բաժանեց չորս մասի, որոշեց նրանց դիրքերը և հանձնարարեց սպասել իր հրամանին։ Հունվարի 17-ին Սլոյի ուժերը բոլոր կողմերից շրջապատեցին Հեղինը։ «Առավոտյան թշնամու թնդանոթները կսկսեն որոտալ... Ցյունաշատ ու սառած դիրքերից, Գևորգի ազդանշանով, ֆիդայու մոսինը իր բերանը թշնամիներին է ուղղում։ Դիմացի ձյունապատ սպիտակ տարածությունը սև էր երևում թշնամու անհամար շարքերից։ Զորքերը անընդհատ առաջանում էին, սվինների անտառը փայլում էր, և հրացանները սկսում են միահամուռ կրակել։ Քրդերի բազմությունը ոչ կարգ էր ճանաչում և ոչ կանոն, սրերը մերկացրած, հարա-հուրա տալով Սլոն առաջնորդում էր բանակին»[115]։ Հայերը կրակ բացեցին գրոհող թշնամու վրա, որը ուշադրություն չդարձնելով իր կորուստներին, թնդանոթների կրակի պաշտպանությամբ, համառորեն առաջ էր շարժվում։ Ի վերջո, համոզվելով, որ գյուղը գրավել չի կարող, Սլոն իր ուժերը ետ քաշեց ու հեռացավ Խուլբի ուղղությամբ։

Թուրք-քրդական ուժերի հետ Գևորգը խոշոր բախում ունեցավ նաև Սպիտակ լեռան շրջանում։ Նրան հաջողվեց դիրքեր գրավել ռնդանքի վրա իշխող կետերում և ետ շպրտել թվական կազմով հայդուկներին տասնյակ անգամ գերազանցող թշնամուն։

Նկատի ունենալով, որ նոր հարձակումներից այդ շրջանի պաշտպանությունը դժվար խնդիր է, Գևորգը Խիանքի բոլոր հայկական գյուղերը դատարկեց։ Մեծ թվով խիանքցիներ՝ ծեր, երեխա, հայդուկների պաշտպանությամբ հեռացան դեպի Իշխանձոր։ Գևորգը ժողովրդի տեղափոխության գործը հանձնարարում է Սայտո Պողոսի չոկատին, իսկ ինքը մեկնում Ընկուզնակ։ Ժողովրդի տեղափոխությունն ավարտելով՝ Սայտո Պողոսը գնում է Ընկուզնակ՝ միանալու Գևորգի ուժերին։ Հարավ-արևմուտքում հայերի պաշտպանության գիծը անցնում էր Իշխանձոր—Գերբին—Սպիտակ սարով։

Հունանի կռիվը.— Խաղաղ չէր նաև Սասունի հյուսիսը։ Այդ նույն օրերին, յոթ հոգուց կազմված հայդուկային մի խումբ Հրայրի և Առաքելի ղեկավարությամբ իջնում է Դաշտ՝ նպատակ ունենալով Ցարոնի գյուղերում գործող ինքնապաշտպանական խմբերին հրահանգավորել և պաշտպանությունը ղեկավարող մարմին ստեղծել։ Իշխանությունները այդ մասին իմանալով, զորքեր են ուղարկում նրանց ոչնչացնելու։ Հրայրը մի հայդուկի հետ կարողանում է խուսափել հետապնդումից, իսկ Առաքելը, չորս հայդուկի ուղեկցությամբ, գնում է Մուշ քաղաքից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հունան գյուղը։ Նրանք տեղավորվում են երկու տներում և մի քանի օր մնում Հունանում։ Փետրվարի 5-ին հարկահավաք ոստիկանները Հունան են գալիս և խժդժություններ կատարում։ Զայրացած գյուղացիները հարձակվում են ու գյուղից դուրս քշում նրանց։ Ոստիկանները գնում են Մուշ և իշխանություններին հայտնում, թե Հունանում հայդուկներ կան։ Նույն օրը՝ փետրվարի 5-ին, երեկոյան ժամը 18.30-ին, 12—14 հեծյալ ոստիկաններ զինվորների ու թուրք խուժանի հետ ճանում են գյուղ և շրջապատում այն տունը, որտեղ գտնվում էին հայդուկներ Գրիգորը և Ջնդոն։ Միաժամանակ նրանք մարդ են ուղարկում մերձակա Նորաշեն գյուղը, որտեղ 200-ից ավելի զինվոր կար, և օգնություն խնդրում։ Օգնության համար լուր է ուղարկվում նաև Մուշ։ Այս առնչությամբ «Դեյլի տելեգրաֆը» գրեց. «Փետրվարի 5-ին, ուրբաթ օրը կեսօրին, 15 ոստիկանների մի չոկատ մտնում է Հունան գյուղը»։ Լրտեսը թուրքերին հայտնել էր, որ գյուղի տներից մեկում երեք հայդուկներ կան։ Ոստիկանները շրջապատեցին այդ տունը։ Սկսվեց փոխադարձ հրաձգություն։ Թիկունքից հայտնվեցին նաև գյուղացիները և ոստիկաններին մի կերպ հաջողվեց գյուղի գետակի մյուսն ափն անցնել[116]։

Երբ մշուշը թանձրանում է Դաշտի վրա և մութը կամաց-կամաց խտանում է, քաջերը նստում են զորքերից խլած ձիերը և հեռանում գյուղից։ Բայց ձյունը շատ էր, և ձիերը դժվարանում էին առաջ ընթանալ։ Հայդուկները ձիերի պոչերը կտրում են և նրանց բաց թողնում։ Պոչատ ձիերը Մուշ հասան այն ժամանակ, երբ թուրքական մի զորամաս քաղաքից մեկնում էր Հունան։ Հունանի բնակչության մեծ մասը ստիպված էր դիշերը լքել գյուղը, սակայն ուժեղ սառնամանիքի պատճառով շատերը ցրտահարվեցին, երեք երեխա ցրտից մեռան։ Թուրքերը երկար ժամանակ չէին համարձակվում գյուղ մտնել։ Նրանք միայն գիշերվա ժամը 3—4-ին համարձակվեցին այդ անել, երբ համոզվեցին, որ այլևս զինակիր հայ չկա իրենց դեմ։ Գյուղը լրիվ թալանվում է։ «Սպանությունները,— գրել է ֆրանսիացի մի հեղինակ,— կատարվում էին բծախնդիր դաժանությամբ։ Ինչ վե-

բաբերում է կանանց, նրանց առնանգում էին անկախ տարիքից»[117]։

Նույն բանն են հաստատում նաև եվրոպական լրագրերը։ «Փետրվարի 5-ին, առավոտյան ժամը 4-ին, մահմեդականների զինված ամբոխը, կանոնավոր զորքի աջակցությամբ, ներխուժեց Հունան գյուղը։ 120 տուն թալանվեց և հրդեհվեց։ Փոքր աղջիկներին և կանանց, այդ թվում ծննդաբերողներին փախցրին, բազմաթիվ փոքր երեխաների կենդանի թաղեցին ձյան մեջ կամ գցեցին ջրհորները»[118]։

Հունանի 400—500 բնակիչներ ձմռան սառնամանիքներին մնացին անօթևան և առանց սնունդի։

Հունանի կռիվն ու թալանը ցնցեցին ողջ Սասունը։

Արտասահմանում դրանց արձագանքը սուլթանին վախեցրեց։ Եվ ահա, երբ Մշո առաջնորդ Գնել վարդապետ Գալեմքերյանը պատրիարքին գրեց. «Հունան գյուղում խփված ժողովուրդը խեղճ ու անպաշտպան է...» և առաջարկում էր «կայսեր գթությունը հայցեցեք» ու, երբ պատրիարքը այդ մասին սուլթանին հայտնեց, վերջինս կատաղության նոպա ունեցավ և հայտարարեց, որ Մշո առաջնորդը ստում է։ Ու սկսվեց մի ցինիկ խաղ։ Պալատը Մուշի կառավարչին հարցում արեց Հունանի դեպքերի մասին։ Ստացվեց պատասխան, որ Հունանում ոչ մի դեպք տեղի չի ունեցել։ Սուլթանը պատրիարք Օրմանյանին պալատ է կանչում ու ասում, թե Գնել վարդապետը մթնոլորտը սրելու նպատակով ստել է և պահանջում է նրան հեռացնել առաջնորդությունից։ Պատրիարքը համարձակություն է ունենում սուլթանի հետ չհամաձայնելու։ Նա պնդում է, որ Գնելի տեղեկությունը ճիշտ է։ Սուլթանը ընկրկում է փաստերի առջև և պատրիարքին հանձնարարում նամակ ուղարկել ու հայերին հորդորել խաղաղ մնալ, հեղափոխականներին շաչակցել, իսկ ինքը տեղական իշխանություններին կհրամայի վերջ տալ բռնություններին։ Օրմանյանն ուղարկեց 300 շրջաբերական և ժողովրդին հորդորեց խաղաղ մնալ և «ըմբոստներին չլսել»։ Իսկ սուլթանն, ինչպես միշտ, ստում էր։ Նա իշխանություններին հանձնարարեց հայերի նկատմամբ հալածանքներն ուժեղացնել։ Մարտի 24-ին բանտարկվեցին Մշո առաջնորդն ու «Ազգային ժողովի 12 անդամները՝ Հունան գյուղի ավերման առթիվ սուլթանին գրած բողոքագրի պատճառով»[119]։

Հունանում «իր գործն ավարտելուց հետո» Թուրք խուժանն

ու զորքը բաժանվում են խմբերի ու պատրաստվում հարձակվելու Դաշտի մյուս հայաբնակ գյուղերի վրա։

Ծափի դավադրությունը.— Երբ Հունանի կռվի լուրը Անդրանիկին հասավ, նա շարժվեց Կոփ։ Այստեղ Անդրանիկը «իմանում է, որ մի քանի տափքցի քրդեր, որոնց գյուղերում գիշերել էր նախորդ օրը, մտադրված են եղել սպանել իրեն»։ Նա անմիջապես վերադառնում է Տափք և հաշվեհարդար տեսնում դավադրության մասնակիցների հետ։ Գյուղը դատարկվում է։

Անդրանիկը գիշերը լուր է ստանում, որ աշիրեթները հավաքվել են Խութում և «Սասունի վրա հարձակման են պատրաստվում, որոնց պիտի միանար նաև Բաղեշի զորքը»։

Թե՛ Հունանի և թե՛ Տափքի դեպքերը լայն արձագանք ունեցան։ Եվրոպական թերթերի վկայությամբ՝ «խուճապը տարածվեց մինչև Մուշ, որտեղ խանութները փակ են մնում արդեն վեց օր։ Կուսակալությունը կարգադրեց 4-րդ բանակային կորպուսի մի դիվիզիա ուղարկել Սասունի լեռները բարձրացած հայերի դեմ»[120]։ Փետրվարի սկզբներին «Տիգրանակերտից Սասուն է գալիս մի գունդ լրացուցիչ զորք»։ Գևորգ Չաուշը նամակ է գրում Անդրանիկին և օգնություն խնդրում։ Սմբատի խումբը օգնության է շտապում, սակայն Ընկուզնակում երկար չի մնում և անցնում է Տալվորիկ, որն անընդհատ հարձակման էր ենթարկվում Փսանքի քրդերի կողմից։ Իսկ Գևորգը լուր ստանալով, որ զորքեր են եկել նաև Արտկոնք, Ընկուզնակի պաշտպանությունը հանձնարարում է Մխիթարին, իսկ ինքը գնում է այդ զորքերի առաջխաղացումը կասեցնելու։

Թուրք աշխատավորության և զորքերի մի մասի համար Սասունի վրա հարձակումը անհասկանալի էր։

1904 թ. հունվարի 3-ին Վանից գրում են. «Զինվորները դասալքում են, Սասուն բարձրանալ չեն ուզում։ Տաճիկ ժողովուրդն ու զորքը գրգռված են»[121]։ Դեռ ավելին. առանձին թուրք զինվորներ փորձում են միանալ հայերին։ Մարտի 8-ին Սասունից գրում են. «Շատ թուրք զինվորներ ցանկություն ունեն մեզ միանալու։ Արդեն մի չաուշ և երեք զինվոր հասել են մեզ մոտ։ Ուրիշներ էլ պիտի գան»։

Պատրաստվելով Սասունի վրա հարձակվել, սուլթանը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց Եվրոպայի հասարակական կարծիքը շահելու համար։ Նա ամենուրեք լուրեր տարածեց, թե

«դրսից եկած» մեծաքանակ ուժերն ու հայդուկները պատրաստվում են ապստամբել և Թուրքերին ու քրդերին կոտորել։ Դժբախտաբար, այս սուտը եվրոպական որոշ մայրաքաղաքներում ու մամուլի օրգանների կողմից ընկալվում է որպես ճշմարտություն։ Սասունում սկսված իրադարձությունները անգլիական «Սպիտակ գրքում» ներկայացված են հետևյալ կերպ.

«1904 Թ. փետրվարի 23-ին Կ. Պոլսում անգլիական դեսպանը՝ Օ'Քոնորը, հեռագրում է մինիստր Լանզդոուին, որ Մուշի մոտերքում հարկահանների ու հայդուկների միջև ընդհարում է տեղի ունեցել և որ քրդերը տրամադրված են դիմելու ծայրահեղ միջոցների։ Իսկ Սասունում 1000 հայդուկ կա, որոնք, ըստ մեծ վեզիրի, Անդրանիկի ղեկավարությամբ իջել են Սասունից ու գրավել մի մահմեդական գյուղ[122]:

Մարտի 1-ին դեսպանը հեռագրում է Լանզդոուին. «Մեծ վեզիրի հայտնած պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ հայ հեղափոխականները, թվով մի քանի հարյուր, Անդրանիկի առաջնորդությամբ փորձում են գրգռել մահմեդական ազգաբնակչությանը՝ նրանց դուրս քշելով հայրենի գյուղերից և խլելով զենքերը։ 40 հոգուց բաղկացած մի խումբ Տալվորիկից մտել է Ինիգիան գյուղը, սպանել ու ծայրատել է երեք մահմեդականների, փախցրել է երկու կին և շատ ուրիշ վայրագություններ է կատարել։ Անդրանիկն իր զորքով հաստատվել է Տափք գյուղում, որտեղից Թուրք մյուդիրը և ժանդարմերիայի սպան փախել են Մուշ»։ Մարտի 12-ին Օ'Քոնորը հայտնում է, որ ինքը սուլթանին առաջարկել է բանակցություններ սկսել Սասունի և Մուշի երևելի հայերի հետ և ընդհանուր ներում շնորհել՝ թույլ տալով հայդուկների ղեկավարներին հեռանալու երկրից»[123]։

Մարտի 16-ին նա կրկին է հեռագրում. «... Մոտ օրերս հայոց պատրիարքը կանչվել է պալատ։ Նրան հայտնել են, որ Մուշում ու Սասունում եղած 400 հեղափոխականներից միայն հիսունն են եկել Պարսկաստանից կամ Կովկասից, մնացածը տեղացիներ են։ Սուլթանը հրավիրել է պատրիարքին և նրան հանձնարարել հրահանգել Մուշի իր ստորադրյալներին՝ բանակցության մեջ մտնելու հեղափոխականների հետ և համոզելու, որ ցրվեն, վստահեցնելով, որ նրանց ներում պետք է շնորհվի»[124]։

Ինչպես ժողովուրդն է ասում՝ ստի պոչը կարճ է։ Ճշմարտությունը, ոչ միանգամից, բայց հասնում էր աշխարհին և պարզում Տարոնում ու Սասունում տիրող իրական վիճակը։

***

Տալավեի կռիվը.— Տեղի բատկանցի քրդերին հրահրում են հարձակվել Տալավե հայաբնակ փոքրիկ գյուղի վրա։ Մի քուրդ այդ մասին տեղեկացնում է հայերին, սրանք էլ Շենիկից ու Սեմալից օգնություն են հայցում։ Մուրադը, գոմերցի Իսոն և մոկունքցի Իսոն սեմալցիներից կազմված մի խմբով մարտի 27-ին գնում են, որպեսզի Տալավեի բնակիչներին իրենց ունեցվածքի հետ տեղափոխեն Սեմալ։ Բայց նրանք ուշանում են։ Քրդերը Տալավեն թալանում են, մի քանիսին գերի վերցնում, իսկ մնացած բնակչությանը ստիպում փակվել իրենց տներում[125]:

Օգնության եկած հայերին միայն երկու օր անց է հաջողվում Տալավեի բնակչությանը գյուղից դուրս բերել և վերադարձնել Գելիեգերման։

200 քուրդ որոշում են պատժել անհնազանդ հայերին։ Մարտի 30-ի վաղորդայնին կռիվը սկսվում է։ Այս կռվում հայերը արժանի դաս են տալիս քրդերին։ Հայերից զոհվում է մեկը, իսկ քրդերից՝ 35—40 հոգի[126]: Այս կռիվը Թուրքերի ու քրդերի շրջանում լուրջ հուզումներ առաջ բերեց։ Բատկանցի, հազրանցի, սուլուխցի և այլ աշիրեթներ խուռն բազմությամբ հավաքվում են Շենիկում։ Թուրքական կառավարությունը չարախնդորեն հանդիմանում է քրդերին. «Մի՞թե մենք ձեզ ասել ենք, որ 2—300 մարդով գնաք ֆիդայիների ու Սասնո վրա։ Սասունի դեմ պետք է գնալ մեծ ուժերով»։ Մշո կառավարությունը հազարից ավելի հեծյալ ոստիկաններ է տրամադրում, նրանց են միանում քուրդ ցեղապետները իրենց մարդիանցով։ «4000 զինվոր վեց թնդանոթով դեպի Շենիկ և Սեմալ գյուղերը գնացին։ Տիգրանակերտի կողմից էլ Հազրո գյուղաքաղաքցի Սնտին բեյը և Սիվանա Հաջի Ռաշիդ աղան եկան։ Սասնո և Խուլբի գավառները չորս կողմից պաշարվել են»։

1904 թվականի ապրիլի 9-ին Ռումաստանի զինվորական ներկայացուցիչ Սամոյլովը գաղտնի նամակ է գրում իր վերադասին. «Ըստ վստահելի աղբյուրների՝ փոքրասիական նահանգասին. «Ըստ վստահելի աղբյուրների՝ փոքրասիական նահանգների հայ ազգաբնակչությունը ըստ ամենայնի զինված է։ Հա-

յերը նպատակ ունեն ըմբոստանալ Թուրք կառավարության դեմ սույն թվի գարնանը։ Խռովության կենտրոնը, որտեղ ներկայումս կենտրոնացած են 17 հազար զինված հայեր, համարվում է Սասունը, որը իր աշխարհագրական դիրքով դժվարամատույց է։ Թուրքական կառավարությունը վճռել է ոչնչացնել Սասունում հավաքված հայերին, եթե կուսակցությունների պարագլուխների հետ բանակցությունները արդյունք չտան»[127]։

Ամենայն հավանականությամբ, ռուսական գործակալը օգտվել է Թուրքական աղբյուրներից։ Ծիծաղելի է նամակում նշված այն փաստը, թե Սասունում 17 հազար զինված հայ կա, այն դեպքում, երբ այդ երկրամասի չափահաս հայ բնակչության թիվը 17 հազարի չէր հասնում։ Ցավալիորեն զարմացնում է ռուս գործակալի այն պնդումը, ըստ որի հայերն են ուզում կոտորել Թուրք և քուրդ ազգաբնակչությանը։ Դժվար չէ կռահել նամակագրի «թյուրիմացության» աղբյուրը։ Այնուամենայնիվ, նամակագիրը ևս գտնում է, որ «Թուրքական կառավարությունը վճռել է ոչնչացնել Սասունում հավաքված հայերին», որ Թուրքական բանակի գործողությունների սկիզբը ծրագրված էր ապրիլ ամսին։

***

«Սասունին վտանգ էր սպառնում բոլոր կողմերից։ Գևորգի հետախույզները լուր են բերում, որ Տիգրանակերտից նոր զորքեր են գալիս։ Տալվորիկից էլ Մակարն էր հայտնում, որ Հազոյի զորքերն ու աշիրեթներն են մոտենում։ ... Խիանքցի քրդերն ու բագրանցիներն էլ իրար մոտ են հավաքվում և սպառնում են հարձակվել Իշխանձորի ու Տալվորիկի վրա»։ Նկատի ունենալով, որ հյուսիսային հատվածներում խիստ ձմռան պատճառով մարտական գործողությունները ժամանակավորապես դադարել են, Գևորգը այդ մասերից լրացուցիչ ուժեր է բերում և թշնամուն ետ շպրտում։ Մեկը մյուսի հետևից դատարկվում էին Սասունի հարավային ու հարավ-արևմտյան շրջանների գյուղերը։ Նրանց բնակչությունը քաշվում էր լեռնաշխարհի խորքերը։ Ապրիլի 5-ին դատարկվեցին Ընկուզնակ և Արծկունք, հաջորդ օրը՝ Քորախու, Գերմավ, Զեյնեկցիք և մյուս գյուղերը, նրանց բնակիչները տեղափոխվեցին Տալվորիկ և Տափք։ Հարավ-արևմտյան շրջանում Գևորգի արդյունավետ ու շրջահայաց գործողու-

թյունները Թուրքերին համոզեցին, որ առանց Սասունի վրա հյուսիսից հարձակվելու, հարավում և հարավ-արևմտյան ճակատում հաջողության հասնել հնարավոր չէ։ Թուրքական հրամանատարությունը որոշեց սկսել ընդհանուր հարձակում։ Սասունցիների պաշտպանական գիծը հիմնական հենակետեր ուներ. հյուսիսում՝ Տափքը և Շենիկը, հարավում՝ Տալվորիկն ու Իշխանձորը, կենտրոնում՝ Գելիեգուզանը։

***

Սկսած 90-ական թվականների կեսերից հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես դաշնակցական կուսակցությունը, առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Տարոնում ծավալված ինքնապաշտպանական շարժումներին։ Սասուն ու Տարոն էին գալիս դաշնակցական գործիչներ, նրանց կողմից կազմակերպված մարտական խմբեր։ Հայդուկներին զենք էր մատակարարվում։ Դաշնակները Սասունում ծավալված շարժումները դիտում էին որպես համահայկական ազատագրական շարժման բաղկացուցիչ մաս։ Նրանց նպատակն էր Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում բարձրացնելով պայքարի դրոշ՝ հարկադրել մեծ պետություններին իրենց հովանավորության տակ առնելու հայկական դատը։ Դրա համար էլ նրանք ձգտում էին Արևմտյան Հայաստանում ծավալված շարժումների մակընթացություններն ու տեղատվությունները որոշել Թուրքերի նկատմամբ մեծ տերությունների դիվանագիտական ակտիվության աստիճանով կամ ելնելով հայկական այլ շրջաններում իրականացվող միջոցառումների շահերից։ Օսմանյան ճնշումների ու բռնատիրության դեմ պայքարի մեթոդների հարցում լուրջ սխալ էին թույլ տալիս հնչակյանները։

«Հնչակը» 1904 թ. մարտին գրեց. «Հեղափոխական գործը Թուրքահայաստանում ինքնապաշտպանության գործ չէ, մի գաղափար, որ կարծես դարձել է հայ միջակ հեղափոխականի համար մի տեսակ դավանանք, որ իր մեջ է կրում նրա հեղափոխականության ամբողջ այբուբենը։ Ո՛չ։ Հեղափոխականները պետք է իմանան, որ Թուրքահայաստանում հեղափոխական գործը հարձակողական մեթոդ է պահանջում։ Սա ապստամբական գործ է։ Սա չի սպասում, որ թշնամին գա հայ ժողովրդին կոտորելու, որպեսզի միայն այդ դեպքում ինքնապաշտպանու-

թյան դիմի. Սա չի ընդունում այն, որ փոքրիկ, ցիրուցան մարտական խմբակները, պարզամտությամբ իրենց երևակայելով զինվորական վաշտեր, դեսուդեն «հրոսակային» դիլետանտիզմով զբաղվեն»։

Նույն թերթը 1904 թ. հունիսի համարներից մեկում անդրադառնում է նաև կռվի տակտիկական հարցերին։ «Հայ հեղափոխականների գլխավոր ու հիմնական տակտիկան պետք է լինի «ընդհանուր ապստամբության նախապատրաստությունը» Թուրքահայաստանում, որոշակի նախագծով, կանոնավոր զինվորագրված ռազմական ուժով, որ հնարավոր է միայն կանոնավոր կազմակերպության և գործունեության որոշ ձևերի գոյության միջոցով։

... Դրանով իսկ մենք դեմ ենք ներկայումս եղած բոլոր մասնակի շարժումներին, որոնք առաջ անպայման ունեին իրենց կրթիչ ու նախապատրաստող հեղափոխական նշանակությունը, բայց որոնք ներկայումս այլևս երևան են գալիս կատարած ու ավարտած իրենց պատմական անհրաժեշտ դերը»։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ Սասունում ընդհանուր ապստամբության ժամանակ ինչպիսի «հարձակողական» մեթոդ էլ կիրառվեր, ինչպիսի «որոշակի նախագիծ և կանոնավոր զինվորագրված ռազմական ուժ» օգտագործվեր, գործը վերջանալու էր հայերի բնաջնջմամբ։ Սա այն դեպքն է, երբ ընդհանուր ռազմական հաղթանակն անհնար էր, և տվյալ պայմաններում հարցերի հարցը ոչ թե այդ հաղթանակն էր, այլ ինքնապաշտպանությունը, բնաջնջման դեմն առնելը։

1904 թ. ձմռանը, երբ թուրքական 4-րդ բանակը, 10 հազար զինվորներով, Մուշ քաղաքի ուղղությամբ պատրաստվում էր շարժվել Սասունի վրա, մի այլ բանակ Միջագետքից, Տիգրանակերտի վրայով, ճանապարհ էր բռնել դեպի Խուլբ ու Եիանք, երբ ոտքի էին հանվել քրդական բոլոր աշիրեթները, կուսակցական որոշ գործիչներ հայդուկային շարժման ղեկավարներից պահանջում էին ուժերը կենտրոնացնել Սասունում, հրաժարվել պարտիզանական պայքարից ու ճակատամարտ տալ թուրքական բանակների դեմ։ Պատճառաբանությունն այն էր, որ Կարինում ու Վասպուրականում ինքնապաշտպանական կռիվները դեռևս նախապատրաստական շրջանում էին։ Իսկ Սասունը, ըստ նրանց, միայն մի խնդիր ուներ՝ լուրջ վնաս հասցնել թուրքական բանակին և բարենպաստ պայմաններ ստեղծել այդ կռիվ-

ների համար։ Սասունում թուրքերին հասցվող հարվածի ուժը մեծացնելու նպատակով, նրանք Դաշտի գյուղերից ու մերձակա շրջաններից զգալի թվով զինված ջոկատներ տեղափոխեցին լեռնաշխարհ։

Հայդուկային շարժումն իր առաջ այլ խնդիր էր դնում։ Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ իրենց պայքարը նպատակ ունի թույլ չտալ թուրքերին բնաջնջելու Տարոնի ու Սասունի հայությանը։ Կյանքի փորձով նրանք գիտեին, որ հայության այդ հատվածի գոյատևումը հնարավոր է միայն դահճի դեմ զինված պայքարի միջոցով։ Պետք է զենքի ուժով սահմանափակել յաթաղանի ախորժակը, մինչև օգնություն կգա։ Նրանք նույն այդ կյանքի փորձով համոզվել էին, որ Արևմուտքի պետությունների վրա հույս դնելը միամիտ պատրանք է։

Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ կուսակցությունների սխալ քաղաքականությունն է պատճառը, որ այդ տարիներին Վասպուրականում ազատագրական պայքարի ուժեղ բռնկումներ չեղան։ Եթե Տարոնը օսմանյան կայսրության ներքին նահանգներից էր և ուղղակի կապ չուներ դրսի աշխարհի հետ և, հետևաբար, դրսից էական օգնություն չէր ստանում, ապա Վասպուրականը սահմանակից էր Պարսկաստանին և այդ երկրի վրայով ակտիվ կապի մեջ էր Ռուսաստանի հետ։ Վասպուրականում էր կենտրոնացվել դաշնակցական կուսակցության ղեկավար գործիչների մի ստվար խումբ։ Այստեղ հայկական ջոկատները անհամեմատ ավելի լավ էին զինված, քան Սասունում։

Անդրանիկն ու Գևորգը գտնում էին, որ հայդուկային ուժերը մի վայրում կենտրոնացնելը նշանակում էր հրաժարվել պարտիզանական կռիվների եղանակից և հարցականի տակ դնել ոչ միայն հայդուկների, այլև Սասունի բնակչության գոյությունը։ Նրանք վտանգավոր ու վնասակար էին համարում նաև Դաշտի գյուղերի ռազմական ուժերը Սասուն բարձրացնելը և գյուղերն անպաշտպան թողնելը։

Բայց դաշնակներն արդեն կազմակերպել էին Տարոնի զինված ուժերի տեղափոխությունը։

Մուշից գրում են. «Այսօր մեր քաղաքից բավական թվով հայ կամավորներ մեկնեցին դեպի կռվի վայր՝ Սասուն, իրենց զենքերով և պաշարներով»[128]։

Անդրանիկն ու Գևորգը վճռականորեն մերժում էին նաև ընդ-

հանուր ճակատամարտի գաղափարը։ Թշնամու բազմիցս գերակշիռ ուժերի դեմ ընդհանուր ճակատամարտում հաջողություն ակնկալելը գրեթե անհնար էր և նման ճակատամարտը Թուրքերի համար մեծ առավելություններ էր ստեղծում՝ իրենց ջարդարար ծրագրերն իրականացնելու համար։ Անդրանիկը գտնում էր, որ բոլոր միջոցներով պետք է խույս տալ Թշնամու խոշոր ուժերի հետ լուրջ բախումներից, պետք է օգտագործել Սասունի տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ պարտիզանական կռիվներով Թշնամուն առավել մեծ կորուստներ պատճառելու միջոցով նրան հյուծելու և Թույլ չտալու, որ իրականացնի Սասունի հայ ազգաբնակչությանը բնաջնջելու իր հրեշավոր ծրագիրը։

«Կարող ենք մեր ամբողջ ուժերը մի որևէ վայրում նետել ճակատամարտի մեջ,— ասում էր Անդրանիկը,— բայց տևական դիրքային կռիվը մեր ուժերը կսպառի։ Պետք չէ, որ նույն տեղը մնանք, մեր ուժերը քիչ են և նրանց խմբական ու հարվածային քայլերը կարող են Թշնամուն շփոթի մատնել։ Այս գործելակերպը պետք է որդեգրենք, բայց առայժմ մնանք Սասնո սահմանների մեջ»։ Նույն կարծիքին էր Գևորգը. «Շեշտակի հարվածներ պետք է տանք Թշնամուն և շատ հաճախ փորձենք նրա Թիկունքը անցնել։ Մենք մեր արագաշարժությամբ կարող ենք շփոթի մատնել Թուրքական բանակի շարքերը, քանի որ 10 հազարի հասնող մի զանգված պիտի մտնի այս լեռների և ձորերի մեջ»[129]։

Օգտվելով Տարոնի զինված ուժերի Սասուն բարձրացնելու սխալից, Թուրքական հրամանատարությունը ոստիկանական խմբեր ուղարկեց բոլոր գյուղերն ու ձերբակալեց այդ գյուղերի ազդեցիկ անձանց։ Ավելի քան 1000 մարդ բանտարկվեց Մուշ քաղաքում։ Տնային բանտարկության ենթարկվեց քաղաքի ողջ հայ բնակչությունը։ Սասունցիներին բնաջնջելու համար նորից գործի դրվեց Թուրքական 4-րդ զորաբանակը՝ Զեքի փաշայի հրամանատարությամբ։ Մարտական գործողությունների հրամանատարն էր Սալեհ փաշան, որը գործում էր Բիթլիսի կուսակալ Ֆերիդ փաշայի անմիջական ցուցումներով։ Մեծ եռանդով էին գործում Ալա բեկն ու Հաջի Ֆերոն՝ իրենց հրոսակախմբերով։ Սասունը Թշնամու մոտ 25 հազարանոց ուժերի դեմ հանել էր ընդամենը 2 հազար կռվող, որոնց մի մասը զինված էր միայն ինքնաշեն կամ գործածությունից դուրս եկած զենքերով։

Թուրքական հրամանատարության պահանջով գյուղերից հավաքեցին աշխատունակ տղամարդկանց և հարկադրեցին ձյունից մաքրել դեպի Սասուն տանող ճանապարհները։ Զորամասերն ու Թնդանոթները, գարունը դեռ չբացված, շարժվեցին դեպի Վերին Սասուն։ Նպատակը պարզ էր՝ գրավել Սասունի բարձունքները, հայդուկներին ու ժողովրդին քշել դեպի կիրճերն ու ոչնչացնել։

Հայերը հասկանում էին Թուրքերի մտադրությունը և լավ գիտեին, որ սպասել գարնանը նշանակում էր տանուլ տալ։ Անհրաժեշտ էր գործողություններ սկսել անհապաղ, քանի դեռ Թուրքերը բարձունքներին չէին ամրացել և ձյունոտ լեռներում արագ տեղաշարժվելու հնարավորություն չունեին։ Պետք էր կռվել չորս ճակատով միաժամանակ։

Անդրանիկն ու Գևորգը հավաքեցին մարտական ջոկատների ղեկավարներին և նրանց հետ մշակեցին գործողությունների ծրագիր, որի էությունը հետևյալն էր. ամեն մի ջոկատ իրեն հանձնարարված տեղամասում պետք է արագ տեղաշարժերի միջոցով հանկարծակի հարձակումներ գործի Թուրքական զորամասերի վրա, փորձի նրանց պատճառել առավել մեծ զոհեր ու խուճապ առաջացնի։ Այն գյուղերը, որոնք պաշտպանել հնարավոր չէ, նախապես պետք է դատարկվեն, իսկ բնակչությունը տեղափոխվի Անդոկի հարավային գագաթների անվտանգ մասերը։ Ձյունաշատ երկրամասում տեղափոխությունը հեշտացնելու նպատակով պատրաստվեցին լաքաներ, որ հաղնում էին ձյան վրա քայլելու համար։ Տեսնելով հայերի այդ պատրաստությունները, Թուրքերը չհամարձակվեցին ձմռանը մարտական գործողություններ սկսել։ Այն հետաձգեցին ապրիլ ամսին։ Քրդերից պահանջեցին հարձակողական գործողությունների միջոցով հայդուկներին հնարավորություն չտալ նախապատրաստվելու գարնան կռիվներին։ Եթե մինչ այդ նրանք քուրդ ցեղապետներին կաշառքով էին հրահրում հայերի դեմ, ապա արդեն կար սուլթանի հրամանը գյավուրներին ոչնչացնելու մասին։ Զեքի փաշան, վկայակոչելով սուլթանի հրամանը, քուրդ ցեղապետներին սպառնաց, որ նրանց նկատմամբ խիստ միջոցների կդիմի, եթե չմասնակցեն հարձակմանը։ Ոտքի հանվեց չորս տասնյակ հազարի հասնող քուրդ։ «4-րդ բանակի հրամանատար Զեքին,— գրում են Բայազետից,— բանակցության մեջ է հեյտարանցի ցեղապետ Քյոռ Հուսեին փաշայի հետ, որ սա հանձնառու լինի պատժել ապստամբ Սասունին ու Տալվորիկին։ Հու-

տեինը ձգձգում է, զանազան պահանջներ դնելով։ Նա պահանջում է 2000 մաուզերի հրացան և մթերք, որպեսզի կարողանա իսպառ ջնջել քյաֆիր ֆիդայիներին»։

Ձեռնարկելով ինքնապաշտպանական կռիվներ, հայդուկները չէին կարող անուշադրության մատնել և որոշակի վարքագիծ չդրսևորել քրդերի նկատմամբ։ Անդրանիկն ու Գևորգը կողմնակից էին, որ «հայկական պահանջը ընթանա տեղական ժողովուրդների պահանջների հետ ներդաշնակ, մանավանդ քրդերի հետ բարեկամություն հաստատելով, նրանց մեջ արթնացնելով հասարակական շահերը...»[131]։ Քրդերի շրջանում հատկապես ակտիվ գործունեություն էր ծավալել Գևորգը։ Նա ձգտում էր միավորել հայ և քուրդ ժողովուրդների ուժերը՝ ընդդեմ օսմանյան բռնատիրության։ Ի տարբերություն կուսակցական որոշ գործիչների այն պնդմանը, թե հայ-քրդական միությունը անհնար է[132], հայդուկների ղեկավարությունն այդ միությունը համարում էր ոչ միայն հնարավոր, այլ նաև կենսական։ Մանավանդ որ, ինչպես նշում է Լեոն, «քրդերի մեջ սկսվել էր հակապետական շարժում՝ ազգային անկախություն ձեռք բերելու համար։ Աբդուլ Համիդը սկսել էր հալածանքները ըմբոստ քրդերի դեմ, իսկ հայտնի Բեդրխան բեյի երկու որդիները կոչ էին անում, որ քրդերը միանան հայերին»[133]։ Այդ ընթացքում հայերը կարողացան որոշ ուժեր հավաքել, զինել նրանց և տեղադրել հարձակման ենթակա կետերում։

Համազգային ապստամբություն սկսելը մնաց որպես գաղափար։ Սասունը նորից միայնակ մնաց թուրքական բանակների ու աշիրեթությունների դեմ։ Այդ տեսնելով՝ Հրայրը վճռական շրջադարձ կատարեց և եռանդուն ու ղեկավար մասնակցություն ունեցավ Սասունի 1904 թ. կռիվներին։ Նրա ղեկավարությանը հանձնված պաշտպանական գիծը ձգվում էր Կուրտիկից մինչև Անդոկ։ Այս ռազմաճակատում առաջին մարտը տեղի ունեցավ Լաճկան գյուղում, մարտի 30-ին։

Լաճկանի կռիվը.— Արդեն նշվեց, որ Դաշտում ստեղծված ջանբեզարների խմբերը հայկական գյուղերում ամեն տեսակի գազանություններ էին կատարում։ Լուր է ստացվում, որ այս անգամ նրանք մտել են Քուրդմեյդան (Ողական ամրոցի շրջանում), Շեխլան, Ղզլաղաջ գյուղերը և ավերածություններ կատարել։ Անդրանիկը Մուրադին երկու զինվորների հետ ուղարկում է Դաշտ, մոտիկից ծանոթանալու կացությանը և «Տավրներ՝ խորհրդի կանչելու պատասխանատու մարմինը»։ Մուրադին հաջողվում է հավաքել 20 կամավոր, որոնց ուղարկում է Տավրներ, իսկ ինքը գնում է Շենիկ։

Մարտի 30-ին Գելիգերման է հասնում Մանոն, որը մենակ էր փրկվել իրենց ողջ գերդաստանից, և պատմում է Լաճկանի կռվի մանրամասները. «Չնայած որ քրդերի բռնած դիրքերը ավելի լավ էին, քան մերոնցը, այդուհանդերձ, քրդերը մեկիկ-մեկիկ զետին էին գլորվում։ Նրանք իրենց դիրքերից դուրս են քշվում և դիմում փախուստի։ Նրանք լցվում են մի ձոր։ Սեմալի իշխան Մանուկը և բատկանցի Արթինը բռնում են ձորի երկու կողմի լանջերը... իսկ Մուրադը կռվելով դեպի գյուղն էր առաջանում...»։ Նա գյուղ է մտնում և ուզում է հրդեհել, սակայն, ընդառաջելով քրդերի թախանձանքին, որոշում է բավարարվել նրանց զինաթափ անելով։ Չնայած դրան՝ քրդերի մոտ զենք է մնում և նրանք դավադրաբար սպանում են երկու հայդուկի։ Դրա հետևանքն այն է լինում, որ հայդուկները լցվում են տները և կոտորում բնակիչներին, իսկ Կոտոյի Հաջին այրում է գյուղը։ Այս կռվի մեջ քրդերից կոտորվում է 41 մարդ։ Կռվին մասնակցում էին նաև մի խումբ հայ կանայք, որոնք «ուտելիք, ռազմամթերք և այլն շալակած, կռվի տեղն էին տանում և իրենց քաջալերական խոսքերով խրախուսում կռվողներին»։

Ապրիլի 2-ին քրդերը Ծովասարում հարձակվեցին Արդխու և Քորախու հայաբնակ գյուղերի վրա, տները կողոպտեցին ու հրդեհեցին։ Սմբատը, որ այդ ժամանակ Տալվորիկում էր, շտապեց օգնության, բայց կարողացավ թալանվածի միայն մի մասը ետ խլել։ Օգնության հասած Մակարի ջոկատին հաջողվում է կոտորածից փրկել Քորախուի բնակիչներին և տեղափոխել Տալվորիկ գետի աջ ափը, այսինքն՝ պաշտպանության գծից ներս։

«Դրանից մի քանի օր հետո,— գրում է Սմբատը,— քրդերը հարձակվեցին Ծովասարի ու Քորախուի վրա և կողոպուտից հետո վառեցին տները։ Սպաղանաց Մակարը, որին հանձնված էր գետի հսկողությունը, իր խմբով գնաց օգնության, նրան միացա նաև ես։ Կարողացանք փրկել Քորախուի բնակիչներին և նրանց անցկացնել գետի աջ ափը»։ («Սասունի և Մուշի կռիվները», 1904 թ., էջ 14)։

Թուրքական կանոնավոր ուժերը՝ հաղթահարելով ձյունը, բուքն ու ցուրտը, շրջառիկ շարժումով առաջանում էին երկու ուղղությամբ։ Մի զորախումբ գնում էր Հավատորիկի վրա։ Երկրորդ ուժեղ զորությունը, մոտ 5000 զորքով, առաջանում էր

դեպի Շենիկ։ Քրդերն էլ, իրենց հերթին, առաջանում էին դեպի Բոնաշեն՝ մեկ կողմից, և դեպի Մրկեմոզան՝ մյուս կողմից»։

Մարտի վերջերին Տիգրանակերտից ու Սղերդից եկած թուրքական զինվորական և ոստիկանական ուժերը, ինչպես նաև Հազրոյի Սեսին բեկի և Սլիվանի Հաջի Ռաշիդի ղեկավարած աշիրեթները, միացյալ ուժերով գրավում են Խուլբի բնակավայրերը՝ Ղայսեր, Փասուր, Սաղտուն, Փառկա, դրանք թալանում են ու ավերում։ Այստեղ նրանց միանում են նաև տեղական քրդերն ու երեք թափուր զորք։ Թշնամին շարժվում է դեպի Տալվորիկ և ուժեղ ճնշում գործադրում նրա հարավային և հարավ-արևելյան թևերի վրա։ Թուրքական ուժերի մի մասն էլ բարձրանում է Անդոկի փեշերը։ Ապրիլի մեկին արդեն Գևորգի ղեկավարած պաշտպանության գիծը վտանգված էր։ Գևորգը եռանդուն միջոցների է դիմում այդ գծի պաշտպանությունն ապահովելու համար։ Պաշտպանության պլանը հետևյալն էր. Տալվորիկի զինված ջոկատները պետք է կասեցնեին դեպի Անդոկ և Գեբին շարժվող թուրքերի ու քրդերի առաջխաղացումը։ Այդ նպատակով Խուլբի Գասպարի խմբի առաջ խնդիր դրվեց թևերից հարվածել Տիգրանակերտից շարժվող զորքերին։ Գասպարին հաջողվեց հակահարվածներով թշնամուն կասեցնել և թույլ չտալ հասնելու Իշխանձորում տեղավորված բնակչությանը։ Գասպարը Խուլբի Ահարոնք գյուղի տանուտերն էր, քաջությամբ ամբողջ Սասունում ճանաչված մի մարդ։ Մասնակցել էր թուրքերի ու աշիրեթապետների դեմ բազմաթիվ կռիվների։ Նրա ճակատի խորը սպին և ձախ ձեռքի չորս կտրված մատները այդ կռիվներից մնացած հիշատակներ էին։

Կազմակերպելով Տալվորիկ—Իշխանձորի ճակատային գիծը և համոզվելով, որ այդ գիծը կկարողանա թշնամուն լուրջ դիմադրություն ցույց տալ, Գևորգը որոշ քանակությամբ ուժեր օգնության է ուղարկում հյուսիսային ճակատ, իսկ ինքը գնում է Գելիեգուզան։ Նա կարծում էր, թե թուրքական բանակի հիմնական ուժերը Շուշնամերկի վրայով շարժվելու են դեպի Գելիեգուզան։

Գևորգը «երբ լսեց, որ Գելիեգուզանի շուրջը թնդանոթներ են որոտում, անմիջապես վազեց դիմադրության կենտրոնը»։

Լսենք Սմբատին. «Երբ կռիվները սկսվեցին, ես գտնվում էի Իշխանձորում, որի ղեկավարությունը հանձնված էր Գևորգին։ Շատ չանցած՝ նամակ ստացանք, որով Գևորգին հրահանգվում

էր շտապ վերադառնալ Գելիեգուզան, ինձ հանձնելով Տալվորիկի ճակատի ղեկավարությունը՝ մեկ տասնյակ զինվորներով։

Գևորգը իր հետ առնելով ուժերի մեծագույն մասը, մեկնեց Գելիեգուզան։ Իսկ ես էլ մի տասնյակով՝ դեպի Տալվորիկ։

Նամակի բովանդակությունից հասկացվում էր, որ թշնամու գերակշիռ ուժերի առջև ավելի մտահոգիչ էր կենտրոնի պաշտպանությունը, և Իշխանձորի տեղական ուժերը բավական էին համարվում գյուղի պաշտպանության համար»։

Ապրիլի սկզբին, հյուսիսում թուրքական զորքերի հրամանատար նշանակվեց Քյոսա Բինբաշին։ Թշնամու մարտական ուժերի դասավորությունը հետևյալն էր՝ թուրքական բանակի կենտրոնում Քյոսա Բինբաշու հրամանատարության տակ գործում էին Սալեհ փաշայի, Բիթլիսի կուսակալ Ֆերիդ փաշայի ու Կենճի մութեսարիֆի զորամասերը, նրանց հարվածի գլխավոր ուղղությունը Շատախն էր՝ Շենիկ—Սեմալ, որ դուռ էր բացում դեպի Գելիեգուզան ու Անդոկ։ Ամեն ինչից երևում էր, որ կարևորագույն դեպքերը տեղի էին ունենալու Շենիկի ու Սեմալի բարձունքների վրա, ու սասունցիների գլխավոր ուժերը դիրքավորվեցին այնտեղ։

Սակայն սաստիկ ձյունը անհնար էր դարձնում թշնամու ուժերի ազատ տեղաշարժը։ Դրա համար էլ թուրքական զորքերը կարողացան Մրկեմոզան հասնել միայն ապրիլի 6-ին։

ԳՈՑԱՄԱՐՏ

Ապրիլի 6-ին հյուսիսային ճակատում թուրքական մի զորամաս Հավատորիկի վրայով շարժվում է դեպի Գերմավ և Կոփ գյուղերը, իսկ մի այլ ջոկատ դեպի այդ գյուղերն էր գալիս Բոնաշենի կողմից։ Անդրանիկը, տեսնելով թշնամու գերակշիռ ուժերը, գերադասում է ընդհարումից խուսափել։ Նա դատարկում է այդ երկու գյուղերն ու նրանց բնակչության հետ հեռանում դեպի Տափք և Գեղաշեն։

Նույն օրը Շենիկում Անդրանիկից նամակ է ստացվում. «Մուշից երկու գունդ զորք է գալիս, մեկը քայլում է դեպի Հավատորիկ, իսկ մյուս մասը պիտի գա Շենիկ—Սեմալի վրա. պատրաստ եղեք»[136]։ Թուրքական բանակին միացել էին նաև բատկանցի ու սուլուխցի քրդերը։ Հայդուկները Շենիկի գյուղա-

ցիներին տեղափոխեցին Սեմալ, բայց կռվող ուժերին թողնելով իրենց դիրքերում։ Շենիկի վրա թուրքերի հարձակման առաջին փորձը առատ ձյունի պատճառով տեղի չունեցավ։ Բայց ապրիլի 11-ին 700 սուարիներ (հեծյալ) մտան Շենիկ։ Սեպուհն ու Ավետիսն էլ Ալիանքի կողմից Շենիկ հասան, և սկսվեց կռիվը, որը տևեց 4 ժամ։ Ի վերջո, հայդուկներին հաջողվեց թուրքերին գյուղից դուրս քշել մինչև Գալոյի գյուղը։ Ապրիլի 10-ին բալաքցի և Խութի քրդերը Ղասրմ Բեկի հետ 2000 հոգով հարձակվում են Գելիեգուզանի թաղերից մեկի վրա։ Հայերը Մխիթարի ղեկավարությամբ 3 ժամ կռվում, քրդերին կորուստներ են պատճառում և ետ շպրտում։

Նույն օրը թուրքական մեծաքանակ ուժերը, կուսակալի հետ միասին, շարժվեցին դեպի Շատախ՝ Քյոսա Բինբաշու զորքերի հետ միանալու և ընդհանուր հարձակում սկսելու համար։

Թուրքական այդ ուժերի հետ միասին Սասուն էր տարվում հայ հասարակայնության մի մեծաթիվ պատվիրակություն, որը խնդիր ուներ համոզելու Անդրանիկին զենքերը ցած դնել։ Պատվիրակության կազմի մեջ էին նաև Մուշի և Բաղեշի առաջնորդները։ Մուշից գրում են, որ Մուշ գալուց հետո Բաղեշի վալին «խմբագրելով ինքնագով մի հանրագրություն, այն տեղական իսլամ պաշտոնյաների հետ քննարկեց և կանչելով Բաղեշի և այստեղի առաջնորդներին ու վարչության անդամներին, ճնշումով պահանջեց, որ նրանք էլ կնքեն այդ հանրագիրը։ Հանրագրի մեջ ասված էր, որ բանակցության մեջ մտան հեղափոխականների հետ, որոնք ավազակներ և իշխանության հանդեպ խառնակիչներ են։ Առաջնորդը և հայ վարչական մարմնի անդամները հրաժարվում են այդ թուղթը կնքել»[137]։ Նրանք ասում են. «Մինչ այժմ սասունցիների կամ այնտեղ գտնվողների հետ երբեք որևէ բանակցություն, ոչ էլ հորդոր կամ համոզում չի եղել, որի ժամանակ նրանք ընդդիմություն ցույց տված լինեին, ուստի իրենք չեն կարող ստորագրել այդ գրությունը»։

«Դրա համար կուսակալը զայրացած, առաջնորդների ժողովի անդամներին բռնի կերպով ձիերի վրա նստեցնելով, Սասուն բարձրացավ հինգ թափուր զորքով, որպեսզի այնտեղ իր խմբագրած հանրագիրը բռնի կնքել տա, ապա անմիջապես քրդերով և զորքերով հարձակում կատարի և ոմբակոծի»[138]։

Հետագայում կուսակալի կողմից Սասուն տարված պատվիրակությունն իր գործունեության մասին հաշվետվություն ներ-

կայացրեց պատրիարքին։ Այդ զեկուցագրում մանրամասն շարադրված են թուրքական զորքերի շարժումը և Սեմալ գյուղի շրջանում ծավալված իրադարձությունները։

«Ապրիլի 10-ին, շաբաթ օրը,— կարդում ենք զեկուցագրում,— ժամը 9.30-ին մեկնեցինք Սասուն՝ վեհափառ կուսակալի հետ, ընկերակցությամբ Բաղեշի ընդհանուր դատախազի, Մշո կառավարչի օգնականի և Բաղեշի իտարեի* երկու հայ անդամների։ Նույն գիշեր իջևանեցինք ս. Հովհաննու վանքի ստորոտում գտնվող հայաբնակ Ղզլաղաջ գյուղում, ուր մեզնից առաջ հասել էին զինվորական հրամանատար Սալեհ փաշան և զորքերի վաշտերը»[139]։

Հաջորդ օրը երեկոյան նրանք հասնում են Սասունի Լաճկան անունով քրդաբնակ գյուղը։ Այստեղ հասան նաև ս. Հովհաննու վանքի վանահայրական փոխանորդ Առաքել վարդապետ Մուրադյանը՝ համաձայն կուսակալի հրամանի, ինչպես և Կենճի կառավարիչը և նույն գավառին պատկանող Խուլբ գյուղի կայմակամը։

Տեղ հասնելուց անմիջապես հետո կուսակալը կանչում է իրեն ուղեկցող հայերին, ցույց է տալիս 5 վիրավոր և մեկ սպանված քրդի ու պահանջում տեղեկանք կազմել տեսածի և այն մասին, որ այդ չարագործության հեղինակները հայերն են։ Տեղեկանք կազմվեց, սակայն «առանց երբեք ասելու, թե ում կողմից են սպանված կամ վիրավորված...»։ Հաջորդ օրը, երեկոյան ժամը 10-ին, որպես պատգամավոր Սեմալ է գնում մի ստվար խումբ Առաքել վարդապետի գլխավորությամբ, որն իր հետ տանում էր սուլթանի իրադեն, պատրիարքի կոնդակը, ինչպես նաև Մշո և Բաղեշի առաջնորդների ստորագրությամբ մի գրություն, որոնց բոլորի բովանդակությունը նույնն էր. «Հեղափոխականները անձնատուր լինեն և անվտանգ վերադառնան իրենց տեղերը, իսկ տեղացի ժողովուրդն էլ անպայման հպատակվի կառավարությանը և սպասի նրա շնորհներին, հակառակ պարագային կառավարությունը խիստ միջոցների պիտի դիմի»։

Մայիսի սկզբներին եվրոպական թերթերը հրապարակեցին հետևյալ լուրը. «Բիթլիսի և Մուշի առաջնորդները, տեղի վալին և մի քանի հայ երևելիներ բարձրացան Սասունի լեռը՝ հեղա-

* Ավագանու խորհուրդ։

փոխականներին գտնելու և նրանց խորհուրդ տալու, որ հրաժարվեն ըմբոստությունից, քանի որ սուլթանը խոստացել է նրանց ներում շնորհել, եթե անձնատուր լինեն»[140]: Վարդան վարդապետը մեծ անհանգստությամբ գրում է. «Աղետը պիտի պատահեր և արյունը պիտի վազեր, որովհետև գործելու ընթացքը դեպի դրան պիտի տաներ», քանի որ «խաղաղության պատշաճավոր միջոցներ, համոզիչ երկարատև բանակցություններ, խոստացված ապահովիչ հայտարարություններ և այլն տեղի չունեցան»[141]:

Այդ ժամանակ իրենց խմբերով Սեմալում էին գտնվում Հրայրը, Անդրանիկը, ինչպես նաև Շենիկի, Ալիանքի, Գելիեգուզանի տանուտերերի ու իշխանների մի մասը: Նրանք պատվիրակներին ասացին, որ անմիջապես պատասխան տալ չեն կարող: Հրայրն այդ պահանջը հիմնավորեց նրանով, որ իրենք կառավարության խոստումներին չեն հավատում, որովհետև դեռ հիշում են 1894 թվականի դեպքերը: Պատվիրակությունը դժգոհում է՝ պատճառաբանելով, որ կուսակալը իրեն միայն ինը ժամ ժամանակ է տվել[142]: Բայց այլ ելք չտեսնելով, մնում է Սեմալում և պատասխանի սպասում: Հայդուկները որոշում են հաջորդ օրը Գեղաշենում ժողով գումարել և քննարկել Թուրքերի առաջարկները: Սակայն թե՛ Հրայրը, թե՛ Անդրանիկը գիտեին, որ Թուրքերը խորամանկում են, նրանց ոչ մի պատասխան չի կարող բավարարել, և այն, ինչ արվում է, մի նպատակ ունի՝ ծրագրված կոտորածների պատասխանատվությունը բարդել հայերի վրա: «94-ի դեպքերը բավական ապացույցներ էին հաստատելու, որ չի կարելի բնավ Թշնամու խոստումներին հավատալ և նման բոլոր պաշտոնական բանակցությունները լոկ «պատրվակներ» են ժամանակ շահելու»:

Նույն փաստն է հաստատում մայիսի 17-ին Մուշից ստացված հեռագիրը: «... Ապրիլի 12-ին վալիի հրամանով ս. Առաքելոց վանքի վանահայրը (պետք է լինի ս. Հովհաննու վանքի.— Ս. Գ.) և Բիթլիսի ու Մուշի եպիսկոպոսները հայոց պատրիարքի մի նամակով գնացին Սեմալ՝ հանձնարարություն ունենալով հարկադրելու սասունցիներին անձնատուր լինել: Սակայն այդ ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի խաբուսիկ միջոց, որովհետև ապրիլի 13-ին, նույն այդ միջոցին, երբ հայ խմբապետները իջնելով բարձունքներից, գնում էին ըմբոստացնելու հանձնաժողովին՝ նրա հետ Գեղաշենում բանակցություններ սկսելու նպատակով, վա-

լին հրաման արձակեց հարձակում գործել սասունցիների վրա, հանկարծակի բերել նրանց և բռնել խմբապետներին»: Սասունցիները մի պատասխան ունեին՝ մերժում: Դրա համար էլ սկսեցին ամրացնել իրենց դիրքերը: Սեմալի շրջակայքում ժամապահներ նշանակվեցին Թշնամու շարժումներին հետևելու համար:

Նպատակահարմար համարվեց Ալիանքի, Սեմալի, Գեղաշենի, Շուշնամերկի, Իրիցուկի և այդ շրջանի մյուս գյուղերի բնակչությունը տեղափոխել Գելիեգուզան:

Մինչ այդ լուր էր ուղարկվել Վահանին, որ շտապ մեկնի Գեղաշեն, բայց երբ վերջինս ապրիլի 13-ի առավոտյան հասնում է Գեղաշեն, գյուղը լրիվ դատարկված է գտնում: Մարտական գործողություններն արդեն սկսվել էին, և նա հարկադրված քաշվում է Շուշնամերկ: Վկայում է Վահանը. «Այստեղ (Գեղաշեն) հասա ապրիլի 13-ին ժամը 1-ին, և երբ կսպասեի Հրայրի գալուն, հանկարծ կռվի, հավարի ձայներ հասան: Երևվում էր, որ կուսակալի բանակցության խնդիրը կեղծ էր, մեզ մի վայրում հավաքելով և ապահով համարելով, մտադիր է եղել մեկ հարվածով ամեն ինչ վերջացնել»: («Դրոշակ», 1904 թ., № 4—5):

Պարզվեց, որ Թուրքերը բանակցությունների տակ քողարկվելով, Շենիքում ու նրա մերձակայքում կենտրոնացրել էին մեծ թվով զորք և շուրջ 34 հազար քուրդ: Եվ երբ առավոտյան վաղ Հրայրին հայտնեցին, որ Թշնամին Մրկեմոզանի վրայով շարժվում է դեպի Սեմալ, Թուրքերի հերթական նենգությունը ակնհայտ դարձավ: Թուրքական բանակատեղում հավաքված հայ հոգևորականներն ու երևելիները պարզապես պատանդներ էին, որոնց Թուրքական հրամանատարությունը «ուզեց օգտագործել նաև որպես դավի միջոց, որպեսզի ապստամբ Սասունը մեկ պահ միայն զենքը իր ուսից վար առներ ու խաբվեր խաղաղության կոչից»[143]: Այդ բանը Հրայրին թաքուն ասաց նաև Վարդան վարդապետը. «Առանց կռվի անձնատվություն են պահանջում, իբր թե ներում պիտի շնորհեն մեր ժողովրդին: Մի խաբվեք, մենք արդեն պատանդ ենք, մեր գլուխը պիտի ուտեն, գոնե բարձրավանդակի ժողովուրդը դիմադրի ու փրկվի...»[144]:

Այս իրադարձություններն իրենց արձագանքն ունեցան նաև արտասահմանյան մամուլի էջերում: «Գազեթ դը Լոզանը» ծաղրում է. «... Բոսֆորի ափերին զվարճացող դեսպանները բարե-

հաճել են Բ. Դրան ուշադրությունը հրավիրել, թե վերջինս պատրաստ է միջոցներ ձեռք առնել և արգելել, որ թուրք զինվորները ծայրահեղության չդիմեն, այսինքն, քիչ-քիչ կոտորեն, այնպես, որ կոտորածի ձայնը Եվրոպա չհասնի և իրենց անդորրը վրդովվի»[145]։ «Լը տամպին» Պոլսից գրում. են. «Վրդովեցուցիչ լուրեր են ստացվում Հայաստանում գտնվող հյուպատոսներից և ուրիշներից։ Բիթլիսի մեջ լուր է շրջում, որ անցյալ ամսվա վերջերին քրդերը հարձակվել են և այրել Մշո շրջակայքի մի շարք հայ գյուղեր և բնակիչներից շատերին ջարդել։ Ապստամբները Սասունի մեջ դեռևս պահում են իրենց դիրքերը, և նույնիսկ հաղորդվում է, որ վալին ամենավերջին քայլն է արել, ինքը՝ իր պաշտոնյաների, Մշո և Սասունի հայոց եպիսկոպոսների և ուրիշ հայ երևելիների հետ անձամբ գնացել է ապստամբներին անձնատուր լինելու վերաբերյալ առաջարկի շուրջը բանակցելու։ Սակայն, հազիվ թե հաջողության հասնի, որովհետև ապստամբների նպատակն է երկրի ներկա խառնակ դրությունը պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ մեծ պետությունները չեն միջամտել։ Չի կարելի մեղադրել թուրք կառավարությանը, եթե նա հեղափոխությունը կսպի կանոնավոր զորքերի միջոցով և պատերազմական օրենքներով...»[146]։

Թերթը գիտակցաբա՞ր, թե՞ թյուրիմացաբար ստում է։ Բաղեշի կուսակալը 20 հազար զորքով և նույնքան էլ զինված քրդերով գնացել էր ոչ թե բանակցությունների, այլ կոտորածի։ Նույնիսկ երեխային է հասկանալի, որ շուրջ 40 հազարանոց ռազմական ուժով բանակցությունների չեն գնում։ Դրան հակառակ, «Դեյլի նյուսը» հունիսի 13-ի համարում բացարձակ ճշգրտությամբ է բացահայտում սուլթանի ու նրա կառավարության նենգությունն ու արյունարբու դիտավորությունը. «Թուրքական իշխանությունները վաղուց գիտենալով, որ Անդրանիկը Սասունում է և որ նա պատրաստություններ է տեսնում պաշտպանվելու թուրքերի հարձակման դեպքում, վաղաժամ, մարտ ամսին սկսեցին Սասունի շուրջը կենտրոնացնել զորքեր ու քրդեր։ Թուրքերը դրդեցին լաճկան ու բատկան քուրդ ցեղերին հարձակում գործել Գելիեգերման գյուղի վրա։ Դրա նպատակն էր դիմադրություն առաջ բերել և հայերին հայտարարել ապստամբներ, ինչը և պատրվակ կծառայեր իրագործելու ջարդի ծրագիրը, Սասունի բնաջնջումը, որը համարվում է հայկական

շարժման պատվարը։ Թուրքերի դիտավորությունները գուշակելով, 30-ից ավելի հայ գյուղեր ապաստանեցին Գելիեգուզանում, ուր Անդրանիկն էր իր մի քանի հարյուր մարտիկներով։ Չնայած կատաղի հարձակումներին և ռմբակոծությանը, հայոց դիմադրությունը շարունակվեց մինչև մայիսի 3-ը, այնուհետև որոշվեց քաշվել դեպի Տալվորիկ»[147]։ Հունիսի 8-ին նույն թերթը գրեց. «Ներկա միջադեպերը մի ծրագրված նպատակ ունեն՝ հայերին դնել իրենց մահմեդական հարևանների մշտական սարսափի տակ։ Սա մի անարգանք է եվրոպական դիվանագիտության համար, որը լռելյայն հանդուրժում է հայ ազգաբնակչության հանդեպ գործադրվող այս բռնությունները»։ Նույն միտքն է արտահայտում նաև «Ռուսկիե վեդոմոստի» լրագիրը. «Թուրքերը ջանում են շուտ վերջացնել գործը։ Նրանց նպատակը պարզ է՝ ուզում են Սասունը մեկընդմիշտ դարձնել անվնաս... Հասկանալի է, թե ինչու են հայերը հուսահատորեն դիմադրում թուրքերի ծրագրերին»։ Այդ ծրագրերի իրականացման համար նույնիսկ 30 հազարանոց բանակը բավարար չէր համարվում։ Բոլոր ուղղություններով դեպի Սասուն էին շարժվում նորանոր զինվորական ուժեր ու քրդեր։

Դերջանից գրում են. «Այս օրերին Երզնկայի 4-րդ բանակը արտասովոր իրարանցման մեջ է... Սասունցի քաջերը նորից ոտքի են ելել։ Թուրքերն ու քրդերը սրտատրոփ սպասում են իրենց արյան ծարավին հագուրդ տալուն։ Վերջերս նրանց հետ խոսելը դժվարացել է։ Թուրքերն առասպելական բաներ էին պատմում այնտեղ (Սասունում) կռվող ջանֆիդայիների մասին»։ («Հնչակ», 1904 թ., № 4—5)։

Սեմալի կռիվը.— Շենիկն ու Սեմալը գտնվում են Շատախի հյուսիսային մասում, մի սարահարթի վրա, և իրարից բաժանվում են արևելքից արևմուտք հոսող Ջայ գետով։ Գետի հարավային կողմում բարձրանում են բլուրներ, որոնք Շատախը բաժանում են Միջին Սասունից։ Այդ բլուրները անվանում էին Ջայի գլուխ (Մելներոս լեռ)[148]։ Շենիկի կողմում գետին կից տարածքը հարթ է, և այդ հարթությունը ձգվում է հարավ՝ մինչև Ալիանք գյուղը։ Թուրքական հրամանատարությունն իր ուժերը բաժանեց երկու մասի։ Զորքերի մի մասը՝ վեց վաշտ և 3—4 հազար քուրդ, պետք է առաջանար դեպի հարավ, Ալիանքի վրայով անցներ Բերբերի հովիտը և այնտեղից մտներ Գելիեգուզանի հովիտ, իսկ մյուս մասը՝ երկու վաշտ և 6—7 հազար քուրդ, պիտի առաջանար դեպի արևելք՝ Սեմալ, այնուհետև

մտներ Զայի հովիտն ու անցնելով Զայի գլխով՝ նորից մտներ Գելիեգուզանի հովիտը։

«Դրան համաձայն էլ մերոնք բաժանեցին իրենց ուժերը։ Անդրանիկը գնաց Տափքի գիծը. Մարտիրոսը, Սեպուհը, Ավետիսը և Իսոն գնացին Ալիանքի գիծը պաշտպանելու, իսկ Մուրադը, Հաջին և Տոնոյի Մակարը պետք է պաշտպանեին Զայը և Զայի գլուխները»[149]։

Այսպիսով, Հրայրի հրամանատարության տակ գտնվող ռազմաճակատում հայերը ստեղծեցին պաշտպանության երեք հանգույցներ՝ Զայում Սպաղանաց Մակարի, կենտրոնական մասում, մինչև Բերբերի հովիտը, Ավետիսի հրամանատարությամբ (կռվող ուժերը բացառապես ալիանքցիներն էին), և Բերբերի հովիտը՝ Սեպուհի հրամանատարությամբ։

Զնայած ապրիլ ամիսն էր, բայց լեռները դեռևս ձյան ծածկոցի տակ էին։ Հայդուկների զգալի մասի դիրքերը ձյան մեջ էին։

Սեմալում գտնվող հայդուկներին Հրայրը հանձնարարեց դիրքեր գրավել գյուղի առաջամասում, իսկ բնակչությանն առաջարկեց հեռանալ գյուղից։ Գլխավոր ուժերը դիրքավորեց գյուղի հետնամասին հարող լեռներին։ Գյուղի առաջամասում տեղավորված ջոկատին հանձնարարված էր համառ դիմադրություն ցույց տալ թուրքերին, որպեսզի, նախ բնակչությունը հնարավորություն ունենար գյուղից հեռանալու և, միաժամանակ, թուրքերի մեջ տպավորություն ստեղծեր, թե դրանք են հայդուկների գլխավոր ուժերը, ու երբ բնակչության հեռանալուց հետո այս ջոկատը նահանջներ, թուրքերը, կարծելով, թե հաղթանակն ապահովված է, կորցնելու էին մարտական կարգը և ընկնելու էին թալանի ետևից։ Ահա այդ ժամանակ նրանց վրա կհարձակվեին հայդուկների գլխավոր ուժերը։

Թուրքերն ու քրդերը ապրիլի 13-ին, առավոտյան վաղ, շարժվեցին Սեմալի վրա։ Բերվեցին նաև թնդանոթներ։ Սեմալը գրնգակոծվում էր։ Գյուղի բնակչության տեղափոխությունը դեռ չէր ավարտվել։

Թնդանոթային ռմբակոծությանը անմիջապես հաջորդեց թուրքական հետևակի գրոհը։ Բանակին հետևում էին քրդերը, որոնք ճանապարհին թալանում էին ամեն բան, ինչ պատահում էր։ Թշնամին Սեմալի վրա 15 ռումբ նետեց։ Հայերը «դարձրին իրենց մոսինների բերանները դեպի առաջացող թշնամին։ Ոչ մի

գնդակ պարապ չպիտի անցնի՝ այս էր հայ ֆիդայու նշանաբանը։ Ձյան վրա սև տարածություն փռվեց, լայնացավ, կծկվեց, նորից տարածվեց։ Թշնամու բանակի սվինների ամբողջությունը նման էր անտառի՝ սև ու դաժան։ Կանոնավոր բանակի հետ միասին բաշիբոզուկների և քուրդ ջարդարար խուժանի բյուրավոր բազմությունը համառորեն հետևում էր զորքին»[150]։ «Հայերի դիրքերում տակավին զոհեր չկան, իսկ թշնամին զոհեր է տալիս մեկը մյուսի ետևից[151]։ Հայերը համառորեն դիմադրում էին, իսկ թուրքերը շարունակում էին առաջ շարժվել։ Եվ երբ նրանք արդեն գյուղի ծայրամասում էին, հայերի դիրքերից կրակը դադարեց։ Թուրքերը ոռնոցով լցվեցին գյուղ։ Սեմալը դատարկ էր։ Քյոսա Բինբաշին մտածելով, որ հայդուկների ջոկատը զբաղված է բնակչությանը տեղափոխելով, հրաման տվեց առանց հապաղելու հասնել նրանց ու ոչնչացնել։ Ծանր, արյունահեղ մարտեր եղան։

Ալիանքի կռիվը.— Մարտերը ծանր ընթացք ունեցան նաև Ալիանքի ճակատում։ Առավոտը բացվելուն պես թնդանոթներն սկսեցին որոտալ, և ռումբերը պայթեցին Ալիանքի շուրջը, շատերն էլ խրվեցին ձյան հաստ կեղևի մեջ և մնացին առանց պայթելու... Դիմացի ձյունապատ սպիտակ տարածությունը սեվացել էր թշնամու անհամար շարքերից։ «Թնդանոթներից թռչող առաջին ռումբերի հետ սկսեց շարժվել դաշտի այդ սև ֆոնը։ Սվինների անտառը փայլեց և հրացանները միահամուռ կրակեցին։ Քրդերի բազմությունը անկանոն, վայրի աղաղակներով բանակի առաջն ընկած, գրոհում էր։ Հայ ֆիդային ձյան ու սառույցի վրա ծնկած, մոսինը կրծքին սեղմած, գնդակներ էր տեղում թշնամու վրա։

Սոսկալի էր կռիվը։ Թշնամու գնդակները կարկուտի նման թափվում ու ջարդուփշուր էին անում քար, հող ու թումբ։ Բայց անսասան էր ֆիդային, որը դիպուկ նշանառությամբ թշնամուն մեկը մյուսի հետևից գետնին էր տապալում։ Առանց կորուստների առաջ կանգ առնելու թշնամին առաջ էր շարժվում։ «Մենք այսօր Գելիեգուզանը պետք է գրավենք, Անդրանիկ փաշան Տափքում է, Գևորգ Չաուշն՝ Իշխանձորում»[152], գոռում էին թուրքերը։

«Ավետիսը, Իսոն, Մարտիրոսը և մոկացի Քեռին կռվում էին Անդոկի կողերին։ Հրայրը, Սեպուհը, սեմալցի Կրպեն, Գևոն և Մուշեղը որոշել էին անպայման կտրել թշնամու առաջը և մեռ-

նել կամ ետ քշել նրան»։ Վիրավորվում է Սեպուհը, սպանվում է աղբեցի Գևորգը։ Սեպուհին փրկելու նետված Հրայրը ղոհվում է, իսկ Սեպուհը սողալով հեռանում է։

Հայերի ուժերը խմբավորվում են Բերբերի կիրճի բերանը, «որտեղ Թուրք զորքը կռվում էր ամենամեծ թափով» անցքը գրավելու համար, որ իրենց պետք է տաներ դեպի Գելիեգուզան։ Ավետիսը, Իսոն, Համզոն պինդ փակել էին կիրճի բերանը։ Կռվի միջոցին մի սասունցի կին, բարձր դիրքի վրա կանգնած, կանչում էր, խրախուսում կռվողներին։ «Հեթե, տղերք, մալավա խպտեք, Անթուան փաշեն Մճելնու դեն էկավ, Գևորգ Չաուշ Էկավ Իշխանձորի կողմէ, տե խպտեք, ձեր հոգուն մատաղ, ըռում կոտրվավ, ազգի հացը հալալ էղնի ձեզ, հայ զինվորներ, որն որ պաշ չխպտի, կնկտուս սավան էնոր գլխին թալենք»։ Հայերի վիճակը ծանր էր, երբ իր խմբով կռվի դաշտ հասավ Անդրանիկը։ Նա շրջանցեց Թշնամուն և հարվածեց ձախ թևին։ Թուրքերը փորձեցին ետ քաշվել, բայց Գևորգի խումբը, որ ամրացել էր ժայռերի ծերպերին, նրանց գետնին է գլորում։ Հայերի հարվածների տակ, ինչպես ականատեսն է վկայում՝ «զորքը կանգ է առնում, գլուխը կորցնում և սկսում է ետ քաշվել։ Փողը առաջանալու, հարձակվելու նշան է տալիս, բայց զինվորները ջարդված ետ են նահանջում։ Մերոնք վրա են տալիս, ահագին զորքին նախրի նման առաջները գցած հալածում են և շատերին ողջ-ողջ բռնելով՝ սպանում»։

Չայի կռիվը.— «Հաջին և Մակարը Չայի գլուխներին դիրքեր էին բռնել, իսկ Մուրադը, մի քանի ընկերներով, մնացել էր ջրի ափին՝ չթողնելու, որ Թշնամին ջուրն անցնի։ Բայց զորքը հանկարծակի հարձակվում է, այնպես որ Մուրադն ընկերներով ետ է քաշվում՝ հարմար դիրք բռնելու։ Երբ տեսնում է, որ հարմար դիրք չկա, ձայն է տալիս ընկերներին ետ դառնալ, իսկ ինքն անմիջապես շոքում է ձյան մեջ և սկսում կռվել։ Թշնամու և նրանց միջև տարածությունը մոտավորապես 600 քայլ էր։ Մոսիններից արձակած առաջին գնդակները գետնին գլորեցին մի քանի Թուրքի։ Հաջին էլ բլրի գագաթից կրակ է թափում Թշնամու վրա։ Այսպիսով, Թուրքերի թափը կոտրվում է, և նրանք չեն համարձակվում ավելի առաջ գնալ։ Փոքր ուժերով Թշնամու գնդի առաջխաղացման այդպիսի անսպասելի կասեցումը մեծ ազդեցություն է ներշնչում տղաներին, և Մուրադը ընկերների

հետ պար է բռնում, ապա երգելով շարունակում են կռիվը մինչև ժամը 6-ը։

Մուրադ Սեբաստացի, Սեբաստիայի Խորոխոն գյուղից, ազգանունը Տերտերյան։ Փոքր տարիքին ընտանիքի հետ գաղթում է Պոլիս և հասնում Ամերիկյան քոլեջ։ 1896 թ. Պոլսի ջարդերի ժամանակ սպանվում են հայրն ու մեծ եղբայրը։ Ուսման նպատակով մեկնում է Լոնդոն։ Հնչակյան կուսակցության հանձնարարությամբ գնում է Սալմաստ և զբաղվում ազատագրական գործունեությամբ՝ Երկիր գենք տեղափոխելով։ Այստեղ նրա վրա մի քանի հարձակումներ կատարվեցին, բայց նա կարողացավ հակահարված տալ։

1904 թ. Թիֆլիսում՝ Սոլոլակում, մասնակցում է հայ-ադրբեջանական ընդհարումներին և ապա անցնում Սասուն։ Թուրքական սահմանապահության հնչակումից հետո գնում է Կ. Պոլիս և դառնում հնչակյան կուսակցության քարտուղար։ 1911 թ. Ս. Սապահ-Գուլյանի հետ պրոպագանդիստական աշխատանք է տանում Փոքր Հայքի բնակավայրերում։

1918 թ. հաստատվում է Սեբաստիայում։

Թուրքական մի ջոկատ գերի հանձնվեց։ Շրջապատման վտանգից խուսափելու համար Քյոսա Բինբաշին երկու վաշտի հետ նետվեց մոտակայքում գտնվող ձորը և հարձակվեց Մուրադի դիրքերի վրա։ Մուրադը կռահում է նրա մտադրությունը և, գետն անցնելով, փակում է նահանջի ճանապարհը։ Բինբաշին շրջապատված էր։ Բայց նա ելք գտավ՝ նետվեց ձյան մեջ, հղեղատի առաջացրած խոռոչը, և այստեղ թաքնված մնաց մինչև մութն ընկնելը, որից հետո հեռացավ իր բանակատեղին։ Մնալով առանց հրամանատարի, Թուրքերը խուճապահար փախան։ Նրանք հալածվելով հասան մինչև Շենիկ։ Հայերն ուժեղացնում են հետապնդումը, Թուրքերը թողնում են նաև Շենիկը։ Վալին, «տեսնելով, որ զորքը սարսափահար փախչում է, ինքն էլ վրանները քանդում և վերադառնում է Մուշ՝ նոր ծրագրեր հղանալու համար»։

Հաղթանակը կատարյալ էր։ Հայերի մեծ մասը ոգևորված առաջ էր մղվում Թշնամուն հետապնդելու, սակայն Անդրանիկը թույլ չի տալիս։ Սասունցիները հյուծվել էին։ Նրանք, վերցնելով Հրայրի դիակը, շարժվեցին դեպի Գելիեգուզան, որտեղ և Հրայրին թաղեցին Աղբյուր Սերոբի կողքին։

Հայերն այս կռվում կորցրին հինգ տղամարդ, երկու երեխա ու մի ծեր կին։ «Թշնամուց սպանվեց 800—1000 հոգի։ Մերոնք գրավեցին 53 մաուզեր՝ 3000 փամփուշտ»։ Պատմում է ականատեսներից մեկը. «Կռվողների մի մասը Չայի վրայով բարձրա-

նում էր Գելիի կողմերը, որոնց ետևից խուժում էր նաև զորքը։ Մինչ այս պահը պատերազմը մեզ համար աննպաստ էր։ Բայց երբ չորս կողմից Անդրանիկը իր խմբով և ուրիշ խմբապետներ հասնում են օգնության, մեր կռվողները նոր ուժ առնելով՝ թշնամու թևերին են խփում և ավելի կատաղորեն են հարձակվում զորքերի վրա։ Խուճապ է սկսվում զորքի ու քրդերի մեջ։ Սրանք սկսում են ետ փախչել։ Զինվորների մի մասը մնում է հովտում և անխնա կոտորվում։ Մյուսները ցիրուցան՝ սկսում են փախչել, հայերը խուժում են նրանց հետևից և վռնդում են դեպի Ջայ, դեպի Շենիկի ու Սեմալի ավերակները։ Երեկոյան ժամը 12-ի մոտ կռիվը վերջանում է[155]։

«Երեկ, ապրիլի 13-ին,— գրում է Վահանը,— ունեցանք անհավոր կռիվ Սեմալում, և մենք կրկին տարանք հաղթություն։ Այսօր նոր զորք եկավ Մուշից, վաղը թերևս ավելի մեծ ճակատամարտ ունենանք, եթե ոչնչանանք, անշուշտ, կշարունակեք մեր գործը...»[156]։

Պատրիարքին ուղարկված վերը նշված զեկուցագրում ապրիլի 13—20-ի իրադարձությունների մասին ասվում է. «Ապրիլի 13-ին, առանց սպասելու Առաքել վարդապետի ու բանագնացների վերադարձին, փաշան առաջ շարժվելու հրաման տվեց։ Մեր առջևից գնում էր ինքը՝ փաշան, կայսերական զորքի հետ։ Դեռ Շենիկ չհասած՝ թնդանոթի աղմուկ լսվեց, որին քիչ անց հաջորդեց հրացանաձգությունը։ Կես ժամից, վերջապես, Շենիկ հասանք... Այս գյուղը հայերի կողմից այրված լինելու մասին մի ղնից նորից հայտագիր պահանջեցին։ Սակայն մենք տեսնում էինք միայն այրված Շենիկն ու ծխացող Սեմալը, իսկ թե ո՞վ էր այդ արել, չգիտեինք, և այդպես էլ գրեցինք»։

Ժամը 4-ին Շենիկ հասավ Առաքել վարդապետը և փաշային հայտնեց սասունցիների պատասխանը։ «Հայերը մի պահ մտածում էին գրավոր պատասխան տալ, բայց երբ հեռադիտակով տեսնում են, որ զորքերը տակավին մոտենում են և իրենց վտանգ է սպառնում, Առաքել վարդապետին ասում են. «Ելիր, գնա, ահա զորքերը գալիս են, էլ ի՞նչ պատասխան...»։ Փաշան պահանջեց, որ բոլորս ստորագրենք Առաքելի ներկայացրած բացատրականի տակ։ Կռիվը շարունակվեց մինչև երեկո։ Հաջորդ օրը Շենիկ բերեցին ս. Կարապետի փոխվանահայր Վարդան վարդապետ Հակոբյանին և միաբան Ստեփան վարդապետ Բաղդասարյանին։ Նրանց հարցաքննեցին, մեղադրելով, թե իբր

սննդամթերք են ուղարկում հայդուկներին։ Վարդապետները դա զրպարտություն համարեցին»։ Նրանց մեկուսացրին դատախազի վրանում։ Ապրիլի 16—19-ը հրացանաձգության ձայն չէր լսվում, իսկ 20-ին սկսվեց կատաղի հրացանաձգություն, որը տևեց 13 ժամ։ Նույնը շարունակվեց հաջորդ օրը։

Օսմանյան պալատն ամեն ինչ արեց այս իրադարձությունների շուրջ արտաահմանում թյուր կարծիք տարածելու համար։ Նրան հաջողվեց տպավորություն ստեղծել, որ Սասունի վրա օսմանյան հարձակումը ոչ թե բնաջնջման, այլ լոկ հայդուկներին ոչնչացնելու և կամ նրանց երկրից դուրս քշելու նպատակ ուներ։ Թուրքերը զգում էին, որ իրենց գործերը լավ չեն գնում, որ Սասունում հաղթանակ, այն էլ՝ հեշտ, ակնկալել չի կարելի։

Կատաղած անհաջողություններից, թշնամին իր զայրույթը թափում է Տարոնի խաղաղ բնակչության վրա։ «Թշնամին,— գրում են Մուշից,— վրեժ առնելու համար սկսեց ավերել անմեղ գյուղերը։ Այսօր Ղզլաղաջ, Գոմեր, Քարձոր, Փողրկով, Տազիգում, Շեխլան, Քուրդմեյդան, Ուրուջ, Հայկերտ, Սուլուխ, Խաչեղ, Հավատորիկ՝ 12 գյուղ... զորքով են լցված։ Դաշտի մեջ պարբերական ջարդեր են սկսվել։ Պետք է կարծել, որ շուտով դրանք կվերածվեն ընդհանուր կոտորածի, եթե աստված մի դուռ չբացի»[157]։

ՀՐԱՅՐ

Հրայրը առանձնահատուկ երևույթ է մեր բազմադարյան պատմության մեջ։

Նախ մի քանի մեջբերումներ Հրայրի ժամանակակիցներից ու համախոհներից. «Ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի մեջ սընված և իմաստավորված, իր ամբողջ կյանքը ժողովրդին նվիրած հեղափոխականի բացառիկ տիպար է Հրայրը, որ իր մեջ խտացրել էր Մամիկոնյանների քաջությունը և Բագրատունիների խոհականությունը...

Հրայրը... հայ ժողովրդի դարավոր իմաստնության հարազատ արտահայտիչն էր՝ իր գաղափարներով, ապրումներով ու գործունեությամբ»։

«Արաբոն, Լևոնը և Գևորգ Չաուշը, երբ ինքնաբերաբար լեռներն էին բարձրանում իրենց անձնական արիությամբ մարմ-

նավորելու հեղափոխական ֆիդայու նախատիպին ու տիրող շրջաններին ցույց տալու, որ հայն էլ կարող է զենք կրել և այդ զենքը գործածել, այդ նույն ժամանակ Հրայրը մեծ ոգևորությամբ լծվում էր ըմբոստության ոգին շրջանից շրջան տարածելուն, ... ավատական անիրավությունների դեմ ծառանալու սրբազան գործին»։

«Հրայրը ամեն ճիգ թափում էր բոլոր շրջանները կազմակերպելու, միշտ հետապնդելով ընդհանուր ապստամբության ծրագրին։ ... Խմբային ընդհարումներ, որքան հնարավոր է, պետք է քիչ ունենալ և ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացնել լայնածավալ կազմակերպության ձևավորման և զինման գործին»։

«Վտիտ մարմնով, ցածրահասակ մարդ էր, որ օժտված էր խոշոր ձիրքով ու մտավոր կարողություններով։ Խորը համոզմունքին նա միացնում էր հետևողականություն և համառություն... Նա պահանջում էր հանձն առնել հեղափոխական նահատակությունը...։ Նա ասում էր, որ հեղափոխականը պետք է մեռնի կամ գնդակից, կամ կախաղանով, կամ բանտում։

Այս խստակրոն մարդը, մոլեռանդ քարոզիչը հմայում էր ժողովրդին և կարողացավ նրան կազմակերպել վերևից մինչև ներքև, ինքն դառնալով իր ստեղծած կազմակերպության կենտրոնը։ Գյուղացու շորեր հագած՝ դերվիշի նման գյուղից գյուղ էր թափառում։ Անգամ վատ մարդիկ չէին համարձակվում ձեռք տալ այդ խորհրդավոր մարդուն, չեն հանդգնում նրան մատնել կամ որևէ վնաս հասցնել։ Եվ այդպես, կառավարության քթի տակ, Արմենակը շրջում էր ազատ ու համարձակ և աննկատ ստեղծում մի խոշոր կազմակերպություն»։

Եվ ապա.

«Գյուղացու հագուստով, ցուպը ձեռքին, գիշերային խավարում Հրայրը գյուղից գյուղ, շրջանից շրջան ճանապարհ էր կտրում և ամեն տեղ քարոզում ու կազմակերպում էր։ Այս փոքրիկ, վտիտ, դժգույն մարդը, որ միշտ լուրջ ու սառն էր ինչպես տխրություն, անընդհատ ժողովրդին հիշեցնում էր հին, նահապետական բարքերը, վերակենդանացնում էր անցյալի պատկերները և նրան ոգևորում էր ապագայի հույսերով։ Կարծես մեր անցյալից եկած ուրվական լիներ, որ դեգերում էր հայրենի աշխարհում ժողովրդին արթնացնելու համար։ Եվ հայ մարդը ոչ

թե սիրում, այլ պաշտում էր նրան, թշնամին անգամ նրան ենթարկվում էր»։

Հրայրը՝ Հրայր Դժոխքը, Ուրվականը, նույն ինքը՝ Արմենակ Մամբրեի Ղազարյանը, ծնվել է 1864 թ. Սասնո Խուլբ գավառակի Ահարոնք գյուղում հոգևորականի ընտանիքում։ Նա նախնական կրթությունը ստանում է իր հոր՝ Մամբրե Ղազարյանի մոտ, որից հետո ընդունվում է ս. Կարապետի վանքին կից գործող դպրոցը և ապա Մշո հռչակավոր Միացյալ ընկերության կենտրոնական վարժարանը։

Արմենակի պատանեկությունը համընկավ զուլում տարիներին, երբ թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով սաստկացնում էին հայերի քաղաքական, տնտեսական ու սոցիալական ճնշումները, քրդերին զենք դարձնում հայերին ոչընչացնելու գործում։

1880 թ. Ներջիքի քուրդ Միրզա աղան խաբեությամբ իր մոտ է հրավիրում Ահարոնքի տանուտեր Գրիգորին ու սպանում է։ Ահարոնքցիները Աննա մայրիկի գլխավորությամբ հարձակվում ու հրդեհում են Ներջիքը։ Իշխանությունները օգտագործում են այդ առիթը Խուլբում հարստահարություններն ու բռնություններ ուժեղացնելու համար։ 1880 թիվը նաև սոսկալի սովի տարի էր։ Մամբրեի ընտանիքը հարկադրված թողնում է հայրենի կյուղը և վերաբնակվում Տարոնի Ղզլաղաջ գյուղում։

Արմենակը Մշո կենտրոնական վարժարանում ոչ միայն հանրակրթական գիտելիքներ ստացավ, այլև տոգորվեց ազատագրական գաղափարներով և իրեն նվիրեց հայ ժողովրդի ազատագրության պայքարին։ Դպրոցն ավարտելուց հետո նա սկսեց ուսուցչությամբ զբաղվել, բայց նրա իսկական զբաղմունքը պայքարն էր։ Գիշերները թաքուն տնից դուրս էր գալիս և իր ընկերների հետ գնում վրեժխնդիր լինելու հայի ինչքը հափշտակողներից։

1885 թ. նրա և Վարդան վարդապետի նախաձեռնությամբ հրավիրվում է Սասունի իշխանների ու տանուտերերի ժողով, որը որոշում է ընդունում բոլոր միջոցներով դիմադրություն ցույց տալ թուրքերի ու քրդերի ոտնձգություններին։ Այս ժողովում ձևավորվում է մի խմբակ, որը ստացավ «Ազգային միություն» անունը։

Հրայրը դարձավ արևմտահայության ազատագրական պայքարի գլխավոր դեմքը։ Միանգամայն զերծ լինելով փառատեն-

չությունից, նա առաջ էր տանում ազատագրական պայքարի գործը՝ մնալով անհայտ ու խորհրդավոր։ Նա այն եզակի գործիչներից էր, որը հենց սկզբից պայքարի գլխավոր նպատակը համարեց հայ ժողովրդի քաղաքական անկախությունը, իսկ դրան հասնելու միջոցը՝ ազգի զինումն ու համազգային ապստամբությունը։

1890—1893 թվերին նա ղեկավար մասնակցություն ունեցավ Սասունի ինքնապաշտպանական կռիվներին։ Այդ տարիներին նա նաև հայդուկային շարժման կազմակերպիչն ու ղեկավարն էր, այդ շարժմանը ուղղություն տվողը։ Նրա ցուցումներով ու մասնակցությամբ էր գործում Գևորգի հայդուկային ջոկատը, որը 1893 թվին Տալվորիկի կռվում վճռական դեր խաղաց ու ապահովեց հայերի փայլուն հաղթանակը։

Այդ տարիներին Հրայրը Հնչակյան կուսակցության անդամ էր, Սասունում ու Տարոնում Հնչակյան կազմակերպության հիմնադիրը, այդ կուսակցության հանրահայտ գործիչներ Միհրան Տամատյանի ու Համբարձում Պոյաճյանի (Մուրադի) գործընկերը։

Հրայրը լավ էր հասկանում, որ Սասունի շարժումը առանց համազգային աջակցության ձախողման էր դատապարտված։ Նա այն հայ եզակի քաղաքական գործիչներից էր, որը ի սկզբանե դրեց հայ ժողովրդի բոլոր հատվածների ուժերի միավորման կենսական անհրաժեշտության խնդիրը։ Հրայրը բեղուն գրիչ ուներ և շատ էր գրում, թղթակցում հայկական թերթերին։ Նրա բոլոր հոդվածների ոգին ու պահանջը մեկն էր՝ ազատագրական ուժերի միավորում, տեղայնական տրամադրությունների դեմ անխնա պայքար, համազգային շահեր ու համազգային գործողություններ։ Նա էր հեղինակը «Հայ ժողովրդի փրկությունը իր միասնության ու համազգային զինված պայքարի մեջ է» հայտնի նշանաբանի, որ նրան բարձրացնում է հայ հասարակական-քաղաքական մտքի գագաթները։ Նույն նպատակին էր ծառայում նրա այցելությունը Կովկաս և անդամակցելը դաշնակցական կուսակցությանը։

Հրայրը անողոքորեն հարձակվում էր ազգի ուժերի մասնատման, տարանջատման բոլոր փորձերի, համազգային խնդիրների նկատմամբ անտարբերության ամեն մի դրսևորման վրա։

1895 թվին նա «Դրոշակին» գրեց. «Մենք՝ իբրև ժողովրդի զավակ, ու ծանոթ նրա բնավորությանը, նրա հոգու տրամա-

գրությանը և վերջին չորս տարիների գործունեությանը, կատարելապես համոզվեցինք և հարյուրավոր ապացույցներով տեսանք, որ կուսակցությունները շատ ավելի եղան ժողովրդի հիմքը քանդողները, քան օգուտ տվողները։ Արդյոք ամոթ չէ՞ր հայ հեղափոխական գործիչներին, որ հակառակ Մշո ու Սասնո վերջին չորս տարվա քաղցած, անգեն լինելու գոռում-գոչումին, իրենց ականջները փակեցին. թեև վերջնականապես հայի վիճակն այդպես (արյունոտ) էր լինելու... (նա) դիմանար մի քանի ամսից ավելի, և հեղափոխությունն այդ ընթացքում ընդարձակ ծավալ ստանալով՝ լրիվ չէր քայքայվի...

Ներկա հանգամանքներում, ինչպիսին մենք՝ հայերս ենք գտնվում, անխղճություն և մինչև անգամ դավաճանություն չէ՞ արդյոք, որ այդ կուսակցությունները բաժան են գործում, այդ ընթացքը անշուշտ մեզ դիտել է տալիս, որ եսական փառքի հետևից ընկած, անձնական կրքերից կուրացած՝ ջլատում են ուժերը, քան հզորացնում, մոռացել են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանությանն են ծառայեցնում գործը»։

Հայ հասարակական կյանքում կայծակի շանթ հանդիսացավ Հրայրի հայտարարությունը հնչակյան և դաշնակցական կուսակցություններին, որը 1895 թվին հրապարակեց «Դրոշակը»։ Դա ժողովրդի ուժերի միավորման ճիչ էր, ազգային միասնության կոչ ու մանիֆեստ, որը միանգամայն նշանակալից հնչողություն ունի նաև մեր օրերում։

«Վաղուց ի վեր հայ հեղափոխական գործում նշմարելի էր անձնական կրքերի և եսասիրական փառքի հետևանք հանդիսացող մեծ վնասները հայ հասարակության շահերին, նրա կենսական խնդիրներին։ Ժողովրդի քաղաքական, տնտեսական և բարոյական հալածանքների ներկա ժամանակներում փոխանակ այդ եսը կորչելու և հօգուտ ժողովրդի անհետանալու, գնալով ավելի ու ավելի հսկայական կերպարանք է ստանում, որով այն եզրակացությանն ենք հանգում, որ այդ արյան հեղեղում, ժողովրդի ներկա օրհասի մեջ, կուսակցությունների բաժանված լինելը, անձնական կրքերից բխած կուրությունը, եսասիրական փառքը ժողովրդին տանում են հավիտենական կործանման դուռը...

... Մենք հարյուրավոր փորձերով համոզվեցինք, որ կուսակցությունների բաժանվելը, երբ կա առաջանում է որպես հետևանք գաղափարների արմատական տարբերության, երբ ժողո-

վրդի խաղաղ ժամանակ կուսակցությունը պայմանավորվում է մի որևէ հասարակական հարցի կամ երևույթի մասին՝ ելնելով տարբեր աշխարհայեցողությունից, անբարոյականությունները բարոյականությունից զատողը, ճշմարտության արտահայտիչն ու ժողովրդի քայլերն առաջ տանողն է։ Իսկ հեղափոխական գործում, պատերազմի դաշտում, ժողովրդի ներկա դրության և իրերի այս տագնապալից վիճակում մանավանդ, երբ չկա գաղափարի տարբերություն, երբ հիմնաքարը, երկու կողմից էլ, մարդկանց նեղ «ես» մեջ է կայանում, այդպիսի կուսակցությունները ժողովրդի հիմքը քանդող ու կործանողներ են։...

Ժողովրդի անմիջական շահը պահանջել է և միշտ կպահանջի ընդհանուր ուժերի միացում։ Ինչո՞ւ...։ Որովհետև թշնամին, չթաքցնենք, ուժեղ է, համեմատաբար խիստ ուժեղ...։

Թող այդ կուսակցություններից յուրաքանչյուրն իր խղճին հարցնի, թե արդյո՞ք կուսակցական բաժանումը չի գլխավոր և բուն պատճառը ավերակների տակ Սասունը ծածկելու...

Թող հպարտանա միայն ինքը՝ ժողովուրդը, թող հանգստանա ժողովրդի խիղճը, թող նայի իր աքսորված, բանտարկված որդիներին, թող աչք հառի կախաղաններին, դեպի Հայաստանի հովիտն ու ձորը, ահա այնտեղ է, որ ժողովրդի արյան գոլորշին խառնվելով այրված տների ծխերին, հայ հեղափոխական գործի ղեկավարների գլխի շուրջը կամար կապած, բողոք ու լուտանք է տեղում։

Եղբայրնե՛ր, ի՞նչ ունենք բաժանելու... Փա՞ռք»։

Մի այլ անգամ նա գրեց. «Քաջ գիտակցեք, եղբայրներ, որ եթե այս դրությունը ամիսներ տևի, մի օր հանկարծ հայ հասարակության հուսահատված լինելու մասին եք լսելու։ Հանուն տարոնցի ու սասունցի հայի մենք կարող ենք անվարան ասել և հաստատել, որ մենք մեզ նշանաբան ենք ընտրել՝ «Մահ կամ ազատություն», այլևս առանց մտածելու թշնամու ուժերի անհամեմատ առավելության մասին։

... Վստահ եղեք նաև, որ եթե բոլոր կողմերից էլ անօգնական մնանք, պիտի նաև մնանք միշտ արի, անհողդողդ ու անընկճելի, բայց հողի տակից էլ անծեք ենք կարդալու այն հայերին, որոնք արյան հովիտներում մեր դիաթավալ խաղալուն հանդիսատեսն են, և սնոտի առարկություններ են բերում, առանց շաղելու և նկատի առնելու իրենց շուրջ գործադրված տնտեսական

ու քաղաքական հալածանքը, բանտարկությունն ու աքսորը, մեռցնելն ու խժ.ժությունը և այլն...»։

Հրայրը Անդրկովկասում էր, երբ կատարվեց Սասունի կոտորածը, որի մասին Վարդան վարդապետը գրում է. Սասունը «ավեր ու անապատ դարձրին, երբ Երզնկայից եկավ 4-րդ բանակի հրամանատարը, որն անձամբ պատերազմի վայր գնաց և տեսնելով արևի տակ մնացած դեռևս անթաղ անթիվ դիակները, որոնց հոտը տարածված էր չորս ժամ հեռավորության վրա, հրամայեց զորքերին ու քրդերին, որ մի քանի օր զբաղվեն այդ դիակները ձորերի, ջրերի ու փոսերի մեջ անհետացնելով»։

1895 թ. Հրայրը 40 զինված մարտիկներով հասավ Կարս՝ սահմանն անցնելու համար։

Այս անցումն ու ճամփան դեպի Երկիր Հրայրին այն եզրակացությանը բերեցին, որ մարդական ջոկատների նման տեղափոխությունը արդյունավետ չէ և պատճառ է դառնում մեծ թվով երիտասարդ ուժերի ոչնչացման։ Եվ նա գրեց. «Քանի որ օգնության ձեռք չենք կարող երկարացնել Երկրի խորքերը, մեզ միայն կմնա ջանալ ապրանք հասցնել այդ կողմերը...»։ Հրայրն ու Թաթուլը (Արամ Արամյանը) մի խմբի հետ Բասեն են հասնում, որտեղ թուրքական իշխանություններին հաջողվում է Թաթուլին բռնել ու կախաղան բարձրացնել։ Նա ճոճվելով կախաղանից, գոչեց. «Կեցցե հեղափոխությունը, կեցցե ազատությունը։ Այս կախաղանով միայն ինձ եք սպանում, բայց հեղափոխությունն ու ազատությունը սպանել չեք կարող։ Այս կախաղանի միջոցով դուք լոկ իմ գաղափարներն եք տարածելու»։ Բանտ ընկավ նաև Հրայրը, բայց շուտով քաղաքական բանտարկյալների մի փոքր խմբի ներում շնորհվեց և նա ևս բանտից ազատվեց։ Նա մասնակցեց Դալիբաբայի ճակատամարտին, որտեղ երկու տասնյակ հայդուկներ փայլուն հաղթանակ տարան ավելի քան 500 քրդերի դեմ։

Հրայրի վրա ցնցող ազդեցություն ունեցան 1894—96 թվերի կոտորածներն ու դրանց հետևանքով ստեղծված իրավիճակը։ 1896 թ. ապրիլի 8-ին նա գրեց. «Անցյալ կոտորածը բոլորովին ուժասպառ է արել ժողովրդին։ ... Մի քանի ամիս առաջ նրա զոմերն ու ախոռները լիքն էին աշխատող գոմեշներով, եզներով, կաթնատու ոչխարներով ու կովերով, այսօր, այդ բոլորի փոխարեն, նա իր ձեռքն է մեկնում հաց մուրալու համար։

Եթե տիրող խստությունները չլինեն, եթե կյանքի մի փոքր

ապահովություն ունենա, (նա) իր անխոնջ ձեռքերով էլի կկարողանա պահել իր երեխային ու կնոջը, բայց նա չգիտե, թե վաղը ինչ է կատարվելու, սպասում է արյան նոր հեղեղների...

Էլի ո՞ւմ համար աշխատել, ո՞ւմ համար արյուն-քրտինք թափել, քանի որ վտանգը դամոկլյան սրի պես իր գլխի վրա հավիտյան կախված է տեսնում։ ... Ամեն տեղ սարսափ ու արհավիրք։ Հայ ժողովուրդ, ազատությունդ փնտրի միայն կռվի մեջ»։

Այդ օրերին Հրայրի առաջ ամբողջ հասակով կանգնեց հայ ժողովրդի ամբողջական ոչնչացման վտանգը և նա ելք էր փնտրում ահագնացող վտանգի առաջն առնելու համար։ Այդ մտորումները նրան նորից ու նորից հանգեցրին այն համոզմունքին, որ փրկության միակ միջոցը ինքնապաշտպանությունն է։ «Որ հայ գավառը կամ գյուղը մտնես,— 1896 թ. մայիսին գրեց նա,— առաջինը լսում ես նրա շարշարանքների նկարագրությունը։ Ամեն օր այլևայլ գավառներից հասնող լուրերը քստմնեցուցիչ են. միշտ թալան, միշտ սպանություն, խլամացում, փախուստ և այլն։ Համոզված ենք, որ եթե ամիսներ շարունակվի ներկա անտանելի դրությունը, կոչնչանա տաճկահայ ժողովուրդը, դրա միակ դարմանն ու դեղը հեղափոխական շարժումն է, ապստամբությունն է, որը կորոշի տաճկահայերի ապագան...»։ Այո, ինքնապաշտպանություն, այո, ապստամբական կռիվներ, այո, սեփական ուժերի մոբիլիզացիա և ոչ թե զանազան ակնկալություններ։

«Հայ ժողովուրդ,— գրում է Հրայրը,— անօգուտ է Եվրոպան, ավելի արյունածարավ, քան մեր դարավոր ոսոխը։ Չհավատաս նրան երբեք։ Նա արյան և անմեղ զոհերի մեջ է որոնում իր շահերը։ Մեր հույսը պետք է լինի մեր վրա...»։

Հրայրը մինչև 1896 թ. ամռանը մնում է Բասենում և ստեղծում մարտական ջոկատներ Անդրկովկասից զենքերի փոխադրումն իրականացնելու համար։ Թուրքական իշխանությունները հոտն առնում են և Հրայրին բռնելով ուղարկում են Ղզլաղաջ, նրան զրկելով գյուղից դուրս գալու իրավունքից։ Սակայն անխոնջ ու տագնապների մեջ ալեկոծվող Հրայրը, անտեսելով այդ արգելքը, Սերոբի հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցավ հայդուկային շարժման ծավալմանը։ Նա հասկացել էր, որ «հայ ժողովրդի մեջ առաջացել էր ֆիդայաբար հարվածների տրամադրությունը։ Ամբողջ հայ զանգվածը զենքից զուրկ էր և, հետևաբար, հավաքական ըմբոստությունն արդյունավետ չէր

լինելու։ Թուրքերն ու քրդերը միայն շեշտակի հարվածից էին վախենում։ Այդպիսի հարված միայն ֆիդային կարող էր տալ»։ Հրայրը դեմ էր իրադարձությունների արհեստական արագացմանն ու ցուցադրական գործողություններով թուրքական իշխանությունների բռնությունների համար պատրվակներ ստեղծելուն։ Նա զգույշ, հաշվենկատ ու հեռատես քաղաքականության կողմնակից էր։ Այս հողի վրա հակասություններ ծնվեցին նրա և հայդուկների մի շարք ղեկավարների միջև, որն առավել սուր բնույթ ստացավ Աղբյուր Սերոբի սպանությունից հետո։

Նկատի ունենալով այս և նման մի քանի փաստեր, որոշ պատմաբաններ ու լրագրողներ հայդուկային շարժումը և Հրայրի գործելակերպը՝ համազգային ապստամբության նախապատրաստության քաղաքականությունը, իրար են հակադրում։

Թե հայդուկային շարժումը և թե համազգային ապստամբությունը պայքարի ձևեր էին նույն խնդիրների լուծման համար, դրանք ազգային ճնշումների դեմ պայքարի մեթոդներ են, մեկը հակազդեցություն է, գոյապահպանում, իսկ մյուսը՝ բռնության լծի խորտակում, այսինքն նույն շղթայի տարբեր օղակներ, որոնցից առաջինը հող է նախապատրաստում երկրորդի համար, հայ ժողովրդին մարտական շունչ ներարկում ապստամբության ընդունակ դառնալու համար։

Հարկ է նաև ըստ էության ըմբռնել, որ եթե Արևմտյան Հայաստանում համազգային ապստամբությունը որպես գաղափար, ժողովրդին ակտիվ գիրքորոշման մղող միջոց, իրական էր, ապա որպես պայքարի մեթոդ նրա հնարավորությունը շատ և շատ կասկածելի էր, թեկուզ այն պատճառով, որ Արևմտյան Հայաստանը ազգային կազմով միատարր չէր, հայը շրջափակված էր մահմեդական ֆանատիկոս զանգվածով, որը թշնամաբար էր տրամադրված ոչ միայն հայերի ազատագրական շարժումներին, այլ նաև հայ ժողովրդի գոյության բուն փաստին։ Բայց դա չի նշանակում, թե Հրայրը իր քարոզով ու պայքարով վնասում էր հայ ժողովրդի ազգային շահերին։

Հրայրը անընդհատ տեղից տեղ էր անցնում, ինքնապաշտպանության տեղական խմբեր ու մարտական ջոկատներ կազմակերպում, հոգ տանում նրանց զինման և Կովկասից զենքի փոխադրման կազմակերպման մասին։ Նա կազմակերպչական վիթխարի աշխատանք կատարեց Խնուսում ու Ախլաթում։ Այդ

աշխատանքները կազմակերպելիս նա նորից ու նորից շեշտում էր. «Ապավինել միայն սեփական ուժին, սեփական միությանն ու կազմակերպությանը»։ Բերելով նահատակված Սերոբի օրինակը, Հրայրն ասում էր, թե պետք է ջանալ, որ «ամեն հայ Սերոբ դառնա և ոչ թե ստեղծել մեկ-երկու Սերոբ ու նրանցից փրկություն սպասել»։

Իշխանությունները տեղյակ էին Հրայրի գործունեությանը և քայլերի դիմեցին «նրան ձեռք գցելու»։ Ջնայած Հրայրը գյուղացու հագուստով մեն-մենակ, երբեմն նույնիսկ ցերեկով ու անգեն էր շրջում գյուղերում ու պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքներով զբաղվում, նույնիսկ «հայտնի դավաճանները, որոնք շատերի մահվան պատճառ էին դարձել, չէին հանդգնում այդ նոր մարգարեին վատություն անել»։ Համաժողովրդական սերն ու վստահությունն էր նրան փրկում վտանգներից։

Իսկապես, այդ ժամանակաշրջանում արևմտահայ մտավորականության շարքերում դժվար է գտնել մեկ ուրիշին, որն այնքան խոր ազդեցություն և հմայք ունենար ժողովրդական ամենալայն զանգվածների շրջանում, որքան Հրայր Դժոխքը։

Հրայրը խստորեն պատժում էր անազնվությունը, վախկոտությունն ու մորթապաշտությունը։ Նա խիզախության և մարվտունակության ջատագով էր։ Դեռ 1894 թ. նա գրեց. «Այսօր Հայկական հարցը նոր և գեղեցկահույս շրջան է թևակոխում։ Այսօր ստրկական համբերությունը, գաղտագողի հառաչանքը, լռելյայն գայրույթը և խուլ բողոքը վերջանում են և նրանց հաջորդում է առյուծի մռնչյունը»։ Իսկ որպեսզի այդ մռնչյունը գործնական արդյունք ունենա, պետք է ծավալել համազգային շարժում։ Դրա համար նա անհրաժեշտ էր համարում, որ ամեն մի գյուղ ունենար ա) մարտական խումբ, բ) օժանդակ խումբ՝ կազմակերպչական և մատակարարման աշխատանքների համար, գ) այնպիսի ղեկավարություն, որն ի վիճակի լիներ իր հետևից տանելու տվյալ գյուղի ամբողջ հասարակությանը։

Համազգային շարժում ստեղծելու ձգտումը նրան տարավ Վան, որտեղ նա տեղի գործիչների հետ մշակեց համատեղ գործողությունների ծրագիր, համաձայն որի համաժողովրդական ապստամբությունը պետք է տեղի ունենար 1905 թվին։ Սակայն այս ծրագիրը դատապարտված էր ձախողման։

Սասունի հայության գլխին նորից սև ամպեր կախվեցին։ Սուլթանը միջոցներ էր մտմտում Սասունը ազատատենչ սասունցիներից դատարկելու համար և նա նորից որոշեց այդ անել լեռնաշխարհի հայ բնակչության ֆիզիկական ոչնչացման միջոցով։

Հրայրը տվյալ ժամանակահատվածում իշխանությունների հետ բախումը վնասակար ու վտանգավոր էր համարում, քանի որ համազգային շարժում դեռևս չէր ձևավորվել, որ սուլթանին հնարավորություն տար հոշոտելու ոչ միայն Սասունի և Տարոնի, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանի հայությանը։ Դրա համար էլ նա ամեն ինչ արեց այդ բախումը հետաձգելու ու առավել չափով մասնակի բնույթ տալու համար, սակայն նրան այդ չհաջողվեց։ 1904 թվականի ապրիլին թուրքական բազմահազարանոց բանակն ու աշիրեթությունները շրջապատման մեջ առան Սասունը, և Հրայրն, իր աղնիվ ու հայրենասեր ոգու մղումով, մի կողմ դնելով իշխանությունների հետ վաղաժամ չբախվելու իր կարծիքը, Անդրանիկի ու Գևորգի հետ միասին վերցրեց ինքնապաշտպանական կռիվների ղեկավարությունը։

Հրայրը դառնությամբ է գրում, որ «այս կռիվը թշնամին պարտադրեց իրենց, թե կգանա օրհասական վայրկյանը ուշացնել։ Գուցե վերջին նամակն է, որ գրում եմ ձեզ, պետք է աշխատենք պաշտպանել մեր ժողովուրդը և մեռնել հեղափոխականի մահով»։ Նրա կանխազգացումը դժբախտաբար ճիշտ դուրս եկավ։

Հրայրի զոհվելու առիթով է ստեղծված հետևյալ երգը՝

Սասուն գավառ սև լալագին,
Ձկար նման Արմենակին,
Առավոտյան ժամն էր հինգին,
Հաշիվ չկար տանկաց զորքին։

Կանչեք փաշա Անդրանիկը,
Ձարկին պարոն Արմենակը,
Եղավ հայոց նահատակը,
Թաղին Սասուն ժամին բակը։

Տանկաց զորքը թնդանոթով,
Հայ քաջերը մոսիններով,
Քաջ Գևորգը փայլուն զենքով,
Ձարդեց թուրքեր հազարներով։

Արդեն նշվեց, որ Բերբերի հովտում տարած հաղթանակից հետո սասունցիները առաջ շարժվելու փոխարեն հետ քաշվեցին Գելիեգուզան։ Դա Բինբաշուն հնարավորություն տվեց հավաքել իր ցրված ուժերը և անցնել նոր հարձակման, ապրիլի 15-ի վիճակով իշխանությունները Սասունում ու նրա մերձակայքում կուտակել էին 40 հազար զինվոր ու սպա։ Ավելի մեծ էր հարձակմանը մասնակցող քրդերի թիվը։ Թուրքական հրամանատարությունը նպատակ ուներ Գելիեգուզանում վճռական ճակատամարտ տալ, սասունցիներին կոտորել ու Սասունի հարցը մեկընդմիշտ փակել։ Թուրքական 20 հազարանոց բանակը հյուսիսային ճակատում դիրքեր էր բռնել 20 կիլոմետր երկարությամբ, այսինքն՝ ռազմաճակատի այդ հատվածում ամեն մի մետրին բաժին էր ընկնում մեկ զինվոր։ Այդ նույն ժամանակ քրդերը, Մրկեմոզանի և Ծովասարի փեշերին հավաքված, պատրաստ էին գրոհին մասնակցելու։ Եվս մոտ 20 հազար թուրքական զորք ու ոստիկաններ, առատ ձյունի պատճառով, խճճվել էին դժվարանցանելի ուղիներում, լեռներում ու կիրճերում։ Ռազմաճակատը Ծովասարի փեշերից ձգվում էր դեպի Արևմուտք և, անցնելով Սասնա գետի աջ ափով, իջնում էր Գելի, իսկ մյուս թևով անցնում էր դեպի Անդոկ և նույնպես ձգվում մինչև Գելիեգուզան։

Ապրիլի 14-ի առավոտյան 300 թուրք զինվորներ և 7000 քրդեր հարձակվեցին Գելիեգուզանից 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մերկեր գյուղի վրա։ Սասունցիները «զբաղված էին դատարկ փամփուշտները լցնելով»։ Լսելով հարձակման մասին՝ Մուրադը մի քանի հայդուկի հետ գնաց Մերկեր և Թշնամուն փախուստի մատնեց։ Հաջորդ օրը թուրքերը հարձակումը կրկնեցին։ Բայց այդ օրը առավոտյան տեղ էր հասել Գևորգը իր խմբով և Խասգյուղի Փոթորիկ քահանայի հետ դիրքեր էր գրավել Բերբերի հովտի այն մասում, որտեղ նախորդ օրը թուրքերի ռազմաճակատային գիծն էր։ Քրդերը թուրքական հրամանատարությունից թարմ ուժեր ստանալով երկրորդ անգամ փորձեցին Մերկերի վրա գնալ։ «Մերոնց տեսնելով և թուրք պահապանների տեղ ընդունելով, բարևում են։ Նրանց բարևի պատասխանը լինում է Գևորգ Չաուշի արձակած գնդակը։ Թշնամին հանկարծակիի է գալիս։ Կռիվը տևում է երկու ժամ, պարտված

քրդերը հեռանում են՝ իրենց հետ տանելով մեկ սպանված և մեկ վիրավոր»[159]։

Գևորգն արդեն «Անդոկի պաշտպանության գլուխն էր կանգնել։ Հեռվից քրդական խուժանը և կանոնավոր զորքը առաջանում էին։ Հանգիստ ու առնարյուն՝ թողեց, որ թշնամին մոտենա՝ հայերի դիրքերից ոչ մի շարժում, ոչ մի հրացանի ձայն։ Թշնամին համոզված, որ այդտեղ սպասողները իրենց մարդիկ են, համարձակ ու աներկյուղ մոտենալով՝ իսլամական բարև տվեց.

— Սելամեն ալեքիմ...

Այդ ժամանակ հրացանները որոտացին...

Գևորգը հանկարծակիի եկած ու փախչող թշնամու հետևից բղավում է.

— Ո՞ւր, ո՞ւր եք գալիս, Գևորգ Չաուշի բո՞ւչը...» («Դրոշակ», 1907 թ., № 10)։

Ապրիլի 16-ին Խիանքի և Փասուրի «կողմից եկել էր երկու վաշտ զորք՝ փակելու համար Իշխանձորի ճամփան, որպեսզի ժողովրդից ոչ ոք դուրս չգա գյուղից գավառ գնալու համար»։ Կռիվներն սկսվելուց ի վեր վտանգի և հարձակման ենթակա գյուղերը կամաց-կամաց հարկադրված էին քաշվել դեպի Սասնո կենտրոնական մասը։ Այժմ հերթը եկել է Իշխանձորցիներին։ Իշխանձորի մեջ քաջ կռվողի համբավ ունեին Մուշեղը, Աբրոն, Լևոնը, Մուկուչը ու տերտերի տղաները։ Թուրքական զորքին միացել էին նաև Խուլբի աշիրեթները։ Կռիվն սկսելու լուրը հասել էր Տալվորիկ։ Սմբատը, որ այդ ժամանակ Տալվորիկում էր, «չկրնալով իր դիրքերը թողնել, օգնության է ուղարկում Հլողինքի իշխաններին, Պոլոյի Գևոյին և Օսմանին»։ Սրանք մի քանի զինվորներով Իշխանձոր են հասնում ու բարձրանում Կապլորաքար և կռվի մեջ մտնում զորքի հետ»։ Երբ Իշխանձորի ժողովուրդը փոխադրվում է, իսկ թշնամին ցրտի պատճառով քաշվում է մինչև Սպիտակ սար, մեր կտրիճներն էլ վերադառնում են Տալվորիկ[160]։ Հաջորդ օրը Վահանը Սմբատին նամակ է գրում՝ ժողովրդին Գելի տեղափոխելու և միաժամանակ «թշնամուն Դաշտի մեջ զբաղեցնելու և չթողնելու, որ իր ամբողջ ուժերը կենտրոնացնի Սասունի վրա», նա հանձնարարում է, որ Առաքելը և Պողոսը հինգ ընկերներով Դաշտ գնան «այնտեղ էլ կռիվներ առաջ բերելու»։ Վերջինները, երբ Կռիվ են հասնում, հանդիպում են բալաքցի քրդերին, որոնց «հետ մեկ և կես ժամ կռվելուց հետո, անցնում են դեպի Դաշտ»[161]։

Գելիեգուզանի վրա առաջին ընդհանուր հարձակումը տեղի ունեցավ ապրիլի 15-ին։ Հայդուկները թուրքերին ետ մղեցին։

Նրանք միահամուռ հակագրոհի գնացին և Թուրքերին ոչ միայն թույլ չտվեցին մի թիզ անգամ առաջ շարժվել, այլև հարկադրեցին որոշ դիրքերից ետ քաշվել։ Տեսնելով, որ գրոհը հաջողություն չի բերում, Թուրքական հրամանատարությունը որոշեց նեղացնել շրջափակման օղակը և ամենօրյա ռմբակոծման միջոցով հարկադրել սասունցիներին վատնելու իրենց ռազմամթերքն ու մյուս պաշարները և ապա միայն վճռական գործողությունների դիմել։ Թուրքերի համար դա ճիշտ որոշում էր, որովհետև նրանք ունեին գերակշիռ ուժեր, ռազմամթերք և մշտապես համալրումներ էին ստանում, իսկ սասունցիների ամեն մի կորուստի զոհվելը նկատելի բացասական ազդեցություն էր ունենում նրանց պաշտպանունակության վրա։ Ինչ վերաբերում էր ռազմամթերքին, ապա սասունցիներն այն ոչ մի տեղից ստանալ չէին կարող, որովհետև արտաքին աշխարհի հետ կապը կտրված էր։

Ապրիլի 17-ին Ղասրմ բեկը մտնում է Շատախ, բայց տեսնելով, որ գյուղերը դատարկ են, մոտենում է Գելիին ու նորից հարձակվում գյուղի վրա։ Հայերը հակահարձակման են անցնում, քրդերը մի քանի զոհ տալով՝ փախուստի են դիմում[162]։ Ապրիլի 19-ին Թուրքական ուժերը բոլոր կողմերից առաջ շարժվելով՝ ավելի են նեղացնում պաշարման օղակը. «Հարձակվող զորքերի թիվը կրկնապատկվեց։ Ամեն օր շրջապատի քուրդ գյուղերից հարյուրներ ու հազարներ Սասուն էին հասնում պաշարողներին օժանդակելու, անցքերն ու կիրճերը պաշտպանելու համար»։ Թուրքական ու քրդական ուժերի կողմից պաշարվում է Վերին Սասունի 42 գյուղ[163]։

Ապրիլի 18—19-ը թշնամին բազմահազար քրդերի օգնությամբ Տալվորիկի ուղղությամբ ևս նոր հարձակում ձեռնարկեց։ Հայերը թողեցին Տալվորիկի բարձունքները և ժողովրդին առաջնորդեցին դեպի Գեբինի արևելյան լանջը։ Չնայած սասունցիների համառ դիմադրությանը, Թուրքերը հարավից մոտենում են Տալվորիկի բարձունքներին, իսկ հյուսիսից նրանք Գելիեգուզանի մերձակայքում էին։ Այսինքն՝ հայերի ձեռքում էր մնացել Գելիեգուզանի և Տալվորիկի միջև ընկած 20 կիլոմետր լայնություն ու 25 կիլոմետր երկարություն ունեցող մի տարածք, որի վրա էր կենտրոնացել Սասունի ողջ բնակչությունը՝ մեծ ու փոքր, ահել ու ջահել և մահ ու կենաց կռիվ էր մղում 70—80 հազար հոգուց բաղկացած Թուրքական բանակի ու քրդերի դեմ։

1904 թվականի մայիսի 15-ին Մուշից ուղարկված մի նաս-

մակում կարդում ենք, որ Գելիի դեմ կռվում էին 12 վաշտ զորք ու բյուրավոր քուրդ։ Մեկ հայի դեմ 200—300 թշնամի էր կանգնած։

Գելիեգուզանը Սասունի ամենամեծ գյուղերից մեկն էր։ Նա թիկն էր տվել Անդոկի փեշերին և գետակով բաժանվում էր երկու մասի։ Գյուղը մեկ տասնյակից ավելի թաղեր ուներ, որոնցից յուրաքանչյուրը, ժամանակակից պատկերացմամբ, առանձին գյուղ էր։ Իսկ այդ օրերին գյուղում հավաքվել էր լրացուցիչ 20 հազար մարդ՝ կին, երեխա, ծեր, հիվանդ, որը լուրջ դժվարություններ էր ստեղծել պաշտպանների համար։

Անդրանիկը հայդուկներին և զինված խմբի ղեկավարներին ժողովի հրավիրեց ու նրանց հետ քննարկեց պաշտպանության պլանը։ Ըստ դրա «Զաթոն, Փուրթոն, Սրապիոնը և մի քանի աղբեցի կտրիճներ դիրք են բռնում Տավրների վերևի ավերակ վանքի տեղը, Մխիթարի խոռում դիրք են բռնում Մակարը, Կարապետը, Եղոն, Մճելնի (աղբյուրի) գլխին՝ Հաջին, զինվոր Գրիգորը, Օսեի Ավեն և Կիրակոսը, Կարմիր քարերին՝ Սարգիսը և Ղազարը, Տալազարի գլխին՝ Մոկացին, Քեաթիպ Մանուկը և ռես Մանուկը, Բոզնոցներում՝ Մխիթարը, Ջոռե Օհանը և մի քանի շենիկցի, սեմալցի և գելիեգուզանցի կտրիճներ, Քեփրիշերիֆ խանում և Աղլեզի քարերին՝ Գևորգ Ջաուշը և Անդրանիկը, Բերբերի հովտի բերանին՝ Ավետիսը և Արամը, Տիրացու Օհաննեսի գոմում՝ Մուրադը և Կուրավեցի Քեռին»[164]։ Հայերի դիրքերը ղեկավարվում էին սուրհանդակների միջոցով։ Հրամանատարական կետը Գրեգոլի բարձունքի վրա էր, որ հնարավորություն էր տալիս հրամաններ տալ նաև ազդանշանների միջոցով։ Ապրիլի 20-ին պետք եղավ ամրացնել նաև հետևյալ դիրքերը. «Ամպրնեբի գլխից մինչև Շաշկա և Մուշ պաշտպանեցին Սմբատը և փարկացի Սարգիսը։ Շիքինակի արտերը՝ Անդրանիկը, Մուրադը, Ավետիսը։ Խտանի կողմից մինչև Փուշփուշի տակ՝ Գևորգ Ջաուշը, Արամը, Սմբատը և Մոկացի Գրիգորը»։

Յուրաքանչյուր խումբ ուներ 10 սարքին հրացան, որոնցից չորսը՝ մոսին, մնացածները՝ բերդանկա և չախմախլի։

Թշնամին իր թնդանոթներն ավելի է մոտեցնում և տեղակայում մերոնց բռնած դիրքերի դիմաց։ «Կռվի միջոցին Հաջին և զինվոր Գրիգորը իրենց դիրքերից ավելի առաջ անցան և սկսեցին կուրծք կրծքի կռիվը։ Մերոնցից 11 հոգի վիրավորվում ու ետ են քաշվում նշանակված դիրքը։ Թշնամու հրացանները քիչ

էին գործում, բայց թնդանոթները երբեք չռեցին, մեր դիրքերից հայտնի չէ, թե որ մեկի վրա 32 ռումբ արձակվեց։ Սեմալի և այս կռիվների ընթացքում 15 թնդանոթներ 1500 ռումբ թափեցին հայերի դիրքերի վրա»։ Գելիեգուզանի վրա հարձակման մասնակցող քրդերը ևս «զինված էին կանոնավոր հրացաններով և պարեն էին ստանում, բայց, ի վերջո, Գելիեգուզանն այդ օրն անվնաս մնաց, հայերի կորուստը թեթև, իսկ հակառակ կողմինը՝ ստվարաթիվ էր»։ Սակայն թշնամին Գելիեգուզանը գրավելու մտքից չէր հրաժարվում։ Երեք օր շարունակ թուրքերը հրետանու գնդակոծությունների ուղեկցությամբ շարժվում էին Գելիի վրա, բայց հանդիպելով սասունցիների համառ դիմադրությանը, ետ էին մղվում։ Թուրքական հրամանատարությունը, աննկատ, թնդանոթներն է՛լ ավելի մոտեցրեց գյուղին, որը հնարավորություն տվեց ուղիղ նշանառությամբ հարվածել հայերի դիրքերին և մեծ վնաս պատճառել։ Իսկ սասունցիները դիրքերը փոխել չէին կարող, որովհետև շրջապատված էին գարնանային հեղեղատներով։

Հայդուկների մի խումբ սկսեց վերականգնել Սատանի կամուրջը, որը միակ ուղին էր շրջապատումից ժողովրդին հանելու համար։

Ապրիլի 21-ին մառախլապատ, անձրևոտ օր էր։ Քյոսա Բինբաշին վճռել էր այդ օրն անպայման ընկճել հայերի դիմադրությունը և գրավել Գելիեգուզանը։ Սասունցիները՝ ծեր ու մանուկ, մասնակցում էին ճակատամարտին։ Հայերը կռվում էին աներևակայելի խելահեղությամբ, կյանքի գնով պաշտպանում յուրաքանչյուր թիզ հող։ Կանայք շալակով փամփուշտ ու սննդամթերք էին տեղափոխում, ոգևորում կռվող տղամարդկանց։ Գյուղի ռմբակոծությունը տևեց ամբողջ օրը։ Անձրևն ուժեղացավ, չախմախի հրացանների պատրույգները թրջվեցին և դրանք գործածության համար անպետք դարձան։ Իսկ այդ տեսակի հրացանով հիմնականում զինված էին հայերը։ Դրա հետևանքով թուրքերին հաջողվեց ընդհուպ մոտենալ հայերի դիրքերին (մինչև 200 մետր)։ Բայց ահա սասունցիները տեղատարափ կրակ են բացում և թշնամին ետ է ընկրկում։ Թուրքերը իրենց հարվածի գլխավոր օբյեկտը դարձնում են Մրճելներն ու Մխիթարի խոռը, որտեղ դիրքեր էին գրավել Սպաղանաց Մակարի և Կոտոյի Հաջիի ջոկատները։ Վերջինիս զբաղեցրած դիրքը գրավել հաջողվում է, սակայն Մակարը անսասան մնաց,

չնայած թուրքերը նրա դիրքերն անընդմեջ ռմբակոծության էին ենթարկում։ Հայերին հաջողվեց իրենց ձեռքում պահել նաև Գրեգոլն ու նրա շրջակայքը, որոնք վճռորոշ դեր էին խաղում գյուղի պաշտպանության գործում։ Հայերը նաև հակահարձակումների էին դիմում, որի շնորհիվ թուրքերը շփոթի էին մատնվում և զրկվում նոր, ընդհանուր գրոհ կազմակերպելու հնարավորությունից։ Այդ օրերի կռիվների մասին Մուշից ապրիլի 24-ին գրեցին. «Ապրիլի 20-ի գիշերն էր, որ թուրք զորքն ու քուրդ աշիրեթները ահագին բազմությամբ հարձակում գործեցին Գելիի վրա, որն արդեն պաշարված էր 10—12 լեռնային թնդանոթներով։ Առավոտյան ժամը 7-ից թընդանոթներն սկսում են որոտալ և հրացանաձգությունը քրդերի ու թուրքերի կողմից շարունակվում է մինչև երեկո։ Հայերը՝ ժողովուրդը և ֆիդայիները, դյուցազնաբար դիմադրեցին։

Ապրիլի 21-ին երկրորդ հարձակումը տեղի ունեցավ։ Առաջին օրը 125 և երկրորդ օրը 230-ից ավելի ռումբ գցեցին պաշարված հայերի վրա և լուրջ վնաս պատճառեցին։ Հայ խմբապետները ամրացրին իրենց պաշտպանական միջոցները, բայց թնդանոթների գործած ավերը այլ կերպ վճռեց խնդիրը։ Ավերմունքը մեծ էր։ Գյուղում հավաքված 20 հազարի չափ կանանց, երեխաների, ծերերի, հիվանդների լացն ու կոծը անտանելի էր»։

Եվ երբ մութն ընկավ, հայդուկներն ու ժողովուրդը մեծագույն կազմակերպվածությամբ անցան վերականգնված կամրջով ու հավաքվեցին Ալուշակ գյուղում։ «Իսկ երբ որոշեցին նահանջել,— մայիսի 15-ին գրում են Մուշից,— նախ գաղտնի ճանապարհներով գիշերը փախցրեցին կանանց և երեխաներին, ապա իրենք հեռացան, թեև ռումբերը կարկուտի նման թափվում էին»։

Դեպի լեռները շարժվել ու այնտեղ կռիվը շարունակել հնարավոր չէր։ Լեռները դեռ ձյունով էին ծածկված, սասունցիները ոչ ռազմամթերք ունեին և ոչ էլ սննդամթերք։ Միակ ելքը ժողովրդին Դաշտ իջեցնելն ու այնտեղի հայ բնակչությանն ապավինելն էր։ 115 հայդուկի ուղեկցությամբ ժողովրդի մի մասը շարժվեց դեպի Տարոն։ Ժողովրդին ուղեկցեցին Մուրադի, Սմբատի, Ֆահրադի և Ավետիսի խմբերը։

Հարկ է նշել, որ Սասունի մոտ 20 հազար հայ բնակչությունից Դաշտ տարվեց ընդամենը 1500—2000 հոգի։

Ապրիլի 22-ին թուրքերն ավելի մոտեցրին թնդանոթները և

սկսեցին գնդակոծել ոչ միայն գյուղը, այլ նաև ձորերն ու կիրճերը։ Թուրքական հետևակը մոտենում էր գյուղին, կատաղի կռիվ էր գնում յուրաքանչյուր թիզ հողակտորի համար։ Կռիվը շարունակվում է մինչև երեկո։ Թշնամին այդ օրն էլ գյուղ մտնել չի կարողանում։ Սակայն հայերի փամփուշտները սպառվելու վրա էին։ Որոշվում է գյուղից հեռանալ ու պարտիզանական կռիվներ մղել։

Ապրիլի 23-ին նորից սկսվեց թնդանոթների ռմբակոծությունը, բայց հայերի դիրքերը լռում էին։ Թուրքերը երկար ժամանակ չէին համարձակվում գյուղ մտնել, միայն երեկոյան, երբ նրանց հետախույզները հայտնեցին, որ սասունցիների դիրքերը դատարկ են, շարժվեցին առաջ ու մտան Գելիեգուզան։ Գյուղը գրեթե դատարկ էր։

Այդ օրերին եվրոպական թերթերը գրեցին. «Թուրքական զորքերը, հետապնդելով ազգաբնակչությանը, գնացին Գելիեգուզանի վրա, որտեղ նրանք բախվեցին հայ ազգաբնակչության հետ, որոնք այստեղ էին փախել բոլոր կողմերից և հասցրել էին խմբավորվել։ Սկսվեց արյունահեղ մարտ։ Թուրքերը պարտվեցին և ետ շպրտվեցին՝ մարտադաշտում թողնելով ավելի քան 136 սպանված, բազմաթիվ վիրավորներ և մեծ քանակությամբ հրացաններ։ Հայերից սպանվեց 7 հոգի...»[165]։

Ապրիլի 23-ից հայերը լեռներում ու կիրճերում մաքառում էին թշնամու դեմ, որը դանդաղ, բայց մեթոդիկ ձևով առաջ էր շարժվում։ Հայդուկների եռանկյունաձև ռազմաճակատը ձգվում էր Սխտոր-քարից մինչև Կրոշիկ և Գեբինից մինչև Կրոշիկ։ Կրոշիկի պաշտպանությունը ղեկավարում էին Անդրանիկն ու Մակարը, իսկ եռանկյունու մյուս երկու ծայրերը՝ Գևորգն ու Կորյունը, որոնք մայիսի մեկին անկատ անցան Ծովասար։ Երբ հաջորդ օրը թշնամին հարձակվեց նրանց դիրքերի վրա, դրանք դատարկ։

Սասունը շարունակում էր դիմադրել։ «Մինչև մայիսի 14-ը,— գրեցին եվրոպական թերթերը,— տասը օր շարունակ, 200 հայ ապստամբներ Տալվորիկի ու Գելիեգուզանի միջև խիզախաբար մաքառում էին գերակշիռ ուժերի դեմ։ Նրանց հաջողվեց կամուրջ գցել, որպեսզի հնարավորություն տան անցնելու 150 ընտանիքներին։ Այդ ժամանակ Մուշից եկան թուրքական օժանդակ ուժերը հրետանու հետ։ Բացառությամբ 22-ի, 300 ընտանիքների բոլոր անդամները՝ կանայք, երեխաներ, ծերեր կոտորվեցին։ Վերադարձավ Մուշ։ Նա հավաքեց հայկական գյուղերի բոլոր երևելիներին ու տանուտերերին և նրանց հարկադրեց սուլթանին շնորհակալական ուղերձ գրել»։

Հունիսի 13-ին Թավրիզից «Հնչակի» ստացած թղթակցությունում հետևյալ կերպ են նկարագրված Սասունի իրադարձությունները. «Երբ թուրքերի մտադրությունները հայտնի դարձան, 30 գյուղի հայեր ապաստանեցին Գելիեգուզանում, որտեղ ամրացել էին Անդրանիկն ու իր մի քանի հարյուր զինակիցները»։ Չնայած կատաղի հարձակումներին ու ռմբակոծությանը՝ դիմադրությունը տևեց մինչև մայիսի 3-ը, երբ որոշվեց քաշվել Տալվորիկ։

Լեռներում ու ձորերում ցիրուցան եղած հայերին ամեն օր սպանում են նրանց հետապնդող քրդերն ու թուրքերը։ Մուշ բերված գերիները տեղեկացնում են, որ փախստականներից շատերը ցրտից ու սովից մեռնում են լեռներում։

«Թուրքերը բացեիբաց խոստովանում էին, թե իրենց մտադրությունն է Սասունն ու նրա ժողովուրդը սրի ու հրո ճարակ անել»[166]։

Ինչպես երևաց մեջբերումներից, որոշակի չէ, թե հայդուկները երբ դատարկեցին Գելիեգուզանը։ Ոմանց կարծիքով՝ ապրիլի 21-ին, իսկ որոշ աղբյուրներ հավաստում են, թե այդ արվել է ապրիլի 22—23-ի գիշերը։ Իրականում գյուղից հեռանալը տևել է երկու օր։ Ապրիլի 21-ին Գելիեգուզանը թողեցին այն գյուղացիներն ու հայդուկները, որոնք գնալու էին Տարոն։ Այդ ընթացքում կռիվը շարունակվում էր։ Կռիվը շարունակվում էր նաև հաջորդ օրը, ապրիլի 22-ին, երբ մնացած ազգաբնակչությունը և ոչ մեծ թվով հայդուկներ գյուղը թողեցին ու շարժվեցին Կրոշիկի ու Անդոկի ուղղությամբ։ Նույն օրվա գիշերը Գելիեգուզանը թողեցին հայդուկների վերջին ջոկատները։

Այդ ընթացքում թուրքական 14 գումարտակ և 7 հազար քուրդ առաջ շարժվելով՝ հասան Տալվորիկ ու շրջապատեցին գյուղը, որտեղ 12 գյուղերի բնակչություն էր հավաքված։ Բիթլիսի կուսակալը պարծեցավ՝ «Ռումբերով Սասնա լեռներն եմ քանդելու»։ Երկու օր Տալվորիկն անընդհատ ռմբակոծվում էր։ Տալվորիկի պաշտպանությունը ղեկավարում էին Անդրանիկը, Գևորգն ու Վահանը։ Այստեղ էր հավաքվել հայդուկների մոտ կեսը։ «Ութ օր շարունակ,— գրեցին եվրոպական թերթերը,— Տալվորիկի բարձունքներում սասունցիները հերոսաբար դիմադրե-

ցին»[167]: Տալվորիկը հանձնվեց միայն այն ժամանակ, երբ լրիվ վերջացան նրա պաշտպանների փամփուշտները, իսկ թուրքերը թարմ համալրում ստանալով, ուժեղացրին ճնշումը։ Մայիսի 6-ին Տալվորիկն ընկավ։ Գրավելով Տալվորիկը, թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան։ «Կանանց խոշտանգում էին՝ կտրում նրանց կրծքերը, պատառոտում որովայնները, երեխաներին նստեցնում սրերի վրա, ծերերին՝ թրատում, կտոր-կտոր անում։ Սասունի շրջանն ամբողջովին ավերվեց և ամայացավ։ Մուշի հարթությունը ևս դարձավ հայության սպանդանոց»[168]։

Ականատեսներից մեկը մայիսի 15-ին Մուշից գրում է.

«Տալվորիկի մեջ զորքերն ու քրդերը շատ զորեղ դիմադրություն են գտնում, և երբ տկարանում են հայ քաջերի դիմաց, թենդանոթի ուժին են դիմում։ Ամբողջ 8 օր օրական 150—200 ռումբ են թափում հայերի վրա։ Եվ չկարողանալով քաջերին վնասել, կանանց և երեխաներին են ջարդում, խաբեությամբ ընտանիքների մի մասին գետն են նետում, փոքրիկ տղաներին սրախողխող անելուց հետո՝ նորից գետն են լցնում։ Տասներկու հերոսուհիներ, իրենց պատիվը փրկելու համար, երեխաներին գրկած, անագին բարձրությունից ջուրն են նետվում։ Մի քանի շենիկցի քաջեր ևս նեղ դրության մեջ գահավիժում են։ Անհոգ ու լրբացած զինվորներն անգամ զարմանում են սասունցի կանանց քաջության ու պատվասիրության վրա»։ («Դրոշակ», 1904 թ., № 7)։

Հայերի զանգվածային կոտորածները սկսվեցին ապրիլի 27-ից։

Ըստ Վարդան վարդապետի կազմած տեղեկագրի՝ 1904 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Անդոկի շրջանի 6 գյուղերում (Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Ալիանք, Գելիեմսուր, Գելիեգերման) այրվել է ու կողոպտվել 9 եկեղեցի, 641 տուն, սպանվել՝ 1772 հոգի (572 տղամարդ, 502 կին, 698 երեխա) և 2876 բնակիչներ մնացել են առանց ապաստանի և սննդի[169]։

Մեկ այլ աղբյուր հավաստում է, որ Վարդան վարդապետի բերած տվյալները հիմնականում համապատասխանում են իրականությանը։

«Դեյլի նյուսը» 1904 թ. հունիսի 10-ին գրեց.

«... Նորից մեզ ծանոթ ձեռագիրը՝ բռնաբարություններ, սպանություններ, հրեշավոր կոտանքներ, որին ենթարկվում են դեռևս ողջ հայերը։ Մահ սրից... մահ՝ ցրտից և քաղցից... ամենուրեք մահ... Եվ այս ամենը՝ քաղաքակրթության տեսադաշտում։ Եվ այս ամենը՝ «ի սեր մեր և սուլթանի բարեկամության»։

Ընդամենը 12650 բնակիչ են ունեցել իրադարձությունների

ընթացքում եղած գյուղերը։ Աղատվել են 5500 կին, երեխա և ծեր։ Ամենաեղեռնական ջարդը տեղի ունեցավ Տալվորիկի, Կրոշիկի, Գեբինի տարածքում, մայիսի 9-ին, երբ սպանվեց 3000 մարդ։ «Այդ կողմերն ապաստանած ու ամրացած հայերը, որոնց հետ էին իրենց կանայք ու երեխաները, չորս կողմից պաշարվելով, հարձակման ենթարկվեցին։ Բռնություններ կատարողներն էին թուրքական զորքերի 6 վաշտերը և նրանց հետ՝ 2000 քրդեր՝ Բսանաց գավառի և Իշխանձորի կողմից։ Սասունցիների կոտորածին մասնակցում էին նաև Դիարբեքիրի 8 վաշտ և գիլանցի շեյխ Ահմեդը (գիլանցի շեյխ Մուհամեդի որդին, որ 1894-ին Հայտնի դարձավ իր արյունարբու գործերով) 5000-ի չափ սասունցի, ջալալցի, բաղրանցի, շեյխգարանցի, բատկանցի, ուշկոթանցի՝ աշիրեթներով»։ Կոտորածներից հետո այդ բարբարոսը (շեյխ Ահմեդը) Մուշ գնաց և վալիի տեղակալի հետ «Սասունի 45 գյուղերի հողերը ստանալու պայմանագրեր կնքեց։ Քրդերն արդեն սկսել էին տեղավորվել հայկական գյուղերի ավերակների վրա»։

«Ստույգ տվյալներով,— 1904 թ. հուլիսին գրեց «Դեյլի Մեյլը»,— որ հիմնված է անգլիական և ֆրանսիական հյուպատոսների տեղում կատարած քննության վրա, 28 գյուղեր քարուքանդ են եղել և 6000 հոգի կոտորված է»[170]։ Սասունը դատարկվեց։ Սասունցին մնաց անտուն ու անօթևան։

Մուշից հայտնում են, թե կուսակալը, նկատի ունենալով, որ մեծ տերությունների հյուպատոսները մտադիր են քննություններ կատարել, «ամեն ջանք գործ է դնում բռնությունների հետքերը ջնջելու։ Դիակները ջուրն են լցվում»։ Քանդվում էին Սասունի ջատ գերեզմանները, որպեսզի հյուպատոսական քննության ժամանակ դիակները «վկայություն չտան»[171]։

Կ. Պոլսից հունիսի 17-ին գրեցին, թե Սասունի մասին տեղեկությունները շատ քիչ են։ «Վալին մայիսի 22-ին Գելիեգուզանում էր, ինչը նշանակում է, թե հեղափոխականների հետ կռիվը դեռ շարունակվում է։ Թուրքերը խոստովանում են, որ 25 գյուղ քանդված են։ Գաղտնի լուրերն այս թիվը հասցնում են 40-ի։ Մարդկային կորուստների մասին որոշակի թիվ չկա։ Ոչ ոք չգիտե ավերված գյուղերի վերապրածների ճակատագրի մասին, իհարկե, եթե այդպիսիք կան»[172]։

Մուշ բերած գերիները տեղեկացնում են, թե «փախստականներից շատերը ցրտից ու անոթությունից մեռնում են լեռներում»։

«Դեյլի նյուսի» թղթակիցը հունիսի 17-ին հեռագրել է. «Մայիսի 8-ին Գելիեզուզանից փախչող հայերը կոտորվեցին այնպես, ինչպես 1894 թվականի ջարդի ժամանակ։

Հետ մնացողներն ու անձնատուր եղողները թուրքական և քրդական ենթգուլյան զոհ դարձան։ Մահվան ենթարկվելուց առաջ, գազանաբար բռնաբարվելուց հետո, կանանց ստինքները կտրել են։ Երեխաների մի մասին կտոր-կտոր, իսկ մյուս մասին էլ, ժայռերին խփելով, ջարդ ու փշուր են արել»։

Սակայն, չպետք է կարծել, թե հայերը հանձնվում կամ ոչընչանում էին առանց դիմադրության։ Ամենուրեք նրանք ոչ միայն դիմադրում, այլ պատերազմ էին մղում թուրքերի դեմ և զոհվում էին որպես իսկական մարտիկներ։ Սասունին օգնելու նպատակով, Դաշտի գյուղերում զինված ելույթներ կազմակերպելու մտադրությամբ, Տարոն մեկնած հայդուկների խումբը, որը ղեկավարում էին Առաքելն ու Պողոսը, կանգ են առնում Բերդակ գյուղում։ Ապրիլի 21-ին թուրքերը 300 զինվորներով շրջապատում են գյուղը և խուզարկում տները։ Հայդուկները հարկադրված տներից դուրս են գալիս ու թշնամու հետ կռվի բռնվում, որ տևում է մինչև մութն ընկնելը։ Մութն ընկնելուն պես հայդուկները հեռանում են լեռները։

Հայդուկների հեռանալուց հետո թուրքերը հաշվեհարդար են տեսնում բերդակցիների հետ։

Ամենուրեք մարտեր էին մղվում։ Սասունը պարտիզանական կռիվների բոցերի մեջ էր։ Ռազմամթերք և օգնական ուժեր բերելու համար Մուրադի ղեկավարությամբ Վան ուղարկվեց մի խումբ։ Հունիսի 10-ին Մուրադը վերադառնում է Վանից՝ որոշ քանակությամբ զինամթերք հայթայթած։

Մայիսի 2-ին, Ծովասարում, նոր հարձակում է կատարվում Անդրանիկի խմբի վրա։ Գործի են դրվում թնդանոթները։ Հայդուկները թշնամու կրակին չեն պատասխանում։ Առաջ է շարժվում հետևակը, և երբ մոտենում է հայերի դիրքերին, սկսվում է հրացանային ուժեղ համազարկ։ Մարտը տևում է մինչև մութն ընկնելը։ Թուրքերը հեռանում են։ Անդրանիկը շարժվում է դեպի հյուսիս՝ Գևորգի խմբին միանալու։ Առաքելոց վանքից մինչև Բիթլիս տանող ուղիների վրա վխտում էին թուրքական զորքերը։

Գրում են եվրոպացի ականատեսները. «Բիթլիսի վալին, որ անձամբ էր ղեկավարում զորքերին ու քրդերին, որպեսզի եվրոպական հյուպատոսները չկարողանան տեղում արձանագրել զինվորների կողմից կատարված դաժանություններն ու պարզել զոհվածների թիվը, հրամայեց դիակները կտրատել մաս-մաս ու գետը գցել։ Դիարբեքիրից եկած ճամփորդները պատմում են, որ իրենք Տիգրիսի ափին տեսել են մարդու մարմնի կտորտանք, որ ափ էր նետել գետը»[173]։

Թուրք-քրդական գլխավոր ուժերը շարունակում էին մնալ Սասունում և «սանրել» լեռնաշխարհը։ Թուրքերը շտապում էին սասունցիներին օր առաջ ոչնչացնել, որպեսզի նրանք միջոց չգտնեին Անդոկի անառիկ դիրքերում ապաստանելու, որովհետև այդ դեպքում հաղթելն անկարելի կդառնար։

***

Սասունցի ազգաբնակչությանը դեպի Դաշտ ուղեկցող հայդուկային խմբի մարտական գործողություններից ամենանշանակալիցը Կոփի կռիվն էր։ Ժողովրդին Դաշտ հասցնելուց հետո խումբը բարձրանում է Ծովասար ու կանգ առնում Բարձր Աստվածածնի վանքի ավերակներում։ Սմբատը հանկարծ նկատում է, որ Տափքի կողմից վանք են շարժվում թուրքական զորքերը, իսկ Կոփի կողմից՝ քրդերը։ Հայերը դիրք են գրավում երեք կետերի վրա. Սմբատի ու Գրիգորի խումբը՝ մոտակայքում գտնվող գոմում, Ֆահրատի ու Արամի խմբերը հարձակվում են Կոփից եկող քրդերի վրա, իսկ Մուրադի և Ավետիսի խմբերը դիրքեր են բռնում Տափքից եկող զորքերի դեմ։ Սկսվում են ծանր մարտեր։ Սասունցիներից երկու հոգի սպանվում և երեքը վիրավորվում են։ Նրանց դիրքերը հնարավորություն չէին տալիս եռանդուն գործողությունների դիմելու։ Հարկ էր թշնամուն հարվածել գետի մյուս ափից։ Հայդուկների մի մասն անցնում է վարարած գետը և թշնամուն հարվածում թիկունքից։ Գելիեզուզանի տերտերի ղեկավարությամբ օգնության հասած սասունցիները նեղն են զցում թուրքերին։

Թշնամին նահանջում է, իսկ հայդուկները մտնում են ջուրը՝ գետի մյուս ափն անցածներին միանալու համար։ Մութ գիշեր էր։ Նրանք իրար կորցնում են։ Խմբի հիմնական մասին, մոտ 70 հոգու, հաջողվում է անցնել Կուրտիկ։ Հայդուկները քաղցած էին։ Նրանք երեք օր ոչինչ չէին կերել։ Երկու հոգի սովից ու ցրտից մեռնում են։ Տասը ժամ Կուրտիկի վրա թափառելուց հետո խում-

բը արշալույսին հասնում է Սիմ լեռան գագաթը՝ Ծիրին-Կատար։ Այնտեղից ցերեկով վտանգավոր էր Դաշտ իջնել և, չնայած սառնամանիք էր ու քաղցած էին, խումբը որոշում է օրն անցկացնել լեռան գագաթին։ Սմբատն ու Գելիի տերերը գնում են Հավատորիկ՝ հաց բերելու, բայց գյուղ մտնել չի հաջողվում, որովհետև այնտեղ 30 թուրք զինվոր կար։ Սակայն, երբ գյուղացիներն իմանում են, որ լեռներում քաղցած հայդուկներ կան, նրանց թաքուն սննդամթերք են ուղարկում։

Սասունը հայերից դատարկելու քաղաքականությունը իրականացվում է ոչ միայն կոտորածների, այլև նրանց Սասունից դուրս հանելու միջոցով։ Պատճառաբանելով, թե Սասունում սով է, իշխանությունները փոխանակ սննդամթերքը Սասուն տեղափոխեին, սասունցիներին էին տանում Դաշտ։ Այդ տեղափոխությունը կատարվում էր ոստիկանության միջոցով և ուղեկցվում բռնություններով։

1904 թվականի հուլիսին կաթողիկոս Խրիմյան Հայրիկը նամակ է հղում Նիկոլայ II-ին։ Նա նշում է, որ կրկնվում են 1894—96 թթ. կոտորածները։ «Մուշում և Սասունում, Բիթլիսի վիլայեթի սահմաններում վտանգ կա, որ աղետը կընդունի լայն ծավալներ և կտարածվի հայերով բնակեցված մյուս մարզերում...»։ Կաթողիկոսը ցարին խնդրում է միջամտել, որպեսզի «վերջ դրվի բոլոր կոպիտ բռնություններին, իմ հոտին սպառնացող բոլոր դժբախտ աղետներին՝ Թուրքիայի սահմաններում»։ Կաթողիկոսը նաև նշում է, որ ինքը նման խնդրագիր է հղել Բեռլինի կոնգրեսին մասնակից մյուս պետություններին։

ԴԱՇՏՈՒՄ

Մայիսի 5-ից հետո կռիվների շարանը հիմնականում տեղափոխվում է Մշո դաշտ։ Դրանք, անկասկած, Սասունի ինքնապաշտպանության շարունակությունն ու հետևանքն էին։ Մինչ այդ էլ Տարոնում թուրքերի ու քրդերի հետ բախումներ ու կռիվներ տեղի էին ունենում, բայց դրանք մի նպատակ ունեին՝ իշխանությունների ուշադրությունը իրենց վրա գրավել և, որքան հնարավոր էր, թեթևացնել սասունցիների վիճակը։ Մինչդեռ մայիսի 5-ից հետո սկսված ընդհարումներն ու կռիվները ոչ թե

պլանավորված էին, այլ պարզապես հետևանք էին այն իրողության, որ Դաշտ էին իջել Սասունի հայդուկները, որոնք ակամայից բախվում էին Մուշում ու Տարոնում կուտակված մեծաթիվ զորքերի ու քրդերի հետ։ Դաշտում հայդուկները հիմնականում ապաստանել էին Արազ, Բերդակ, Քրդազոմ, Խասգյուղ և Վարդենիս գյուղերում։

Սասունն ընկճելուց հետո թուրքերը խստություններն ուժեղացրին Դաշտում, կողոպուտի նպատակով դեպի Տարոնի գյուղերը շարժվեցին նաև աշիրեթները։ Իշխանություններն ամեն ինչ անում էին Մուշի և Տարոնի մահմեդական բնակչությանը հայերի դեմ հանելու համար։ Այդ նպատակին էին ծառայում նաև Սասունում գտնված թուրքերի ցուցադրական թաղումները Մուշ քաղաքում։ «Մշո դաշտը,— գրեցին եվրոպական թերթերը,— ևս դարձավ սպանությունների վայր։ Սկսած մայիսի 5-ից՝ թուրքական զորքերը գետնի երեսից մեկը մյուսի ետևից ջնջեցին Բերդակի, Մկրագոմի, Ալիկրպոյի, Ավազ-Աղբյուրի, Առնիստի շրջանի գյուղերը։ Սպանությունների թիվն աճում է օրեցօր։ Սարսափն ու հուսահատությունն անհնար է նկարագրել»։

Կոտորվում ու թալանվում է Գոմեր, Դրինգ, Տատրագոմ, Ճեյխ-Յուսուֆ և Ակիտան գյուղերի բնակչությունը։ Օրեզգոնք գյուղում սպանվեց 19, Տերգևանքում՝ 9, Գեղաշենում՝ 8 հայ։

Հունիսի 6-ին Թավրիզից գրեցին. «Մուշից հայտնում են վրդովեցուցիչ լուրեր՝ կառավարական բռնությունների մասին։ Սուլթանի հրամանով տեղական փաշան և զինվորական հրամանատարը պատրաստում են կոտորած»։

«Դեյլի մեյլը» գրում է. «Դրմերգ, Առնիստ, Խարս, Մկրագոմ և մի քանի այլ գյուղեր ավարի ու հրդեհի են ենթարկված։ Բնակիչների մեծ մասը կոտորված է և նրանց հետել են ջրհորները կամ Մուրադ գետը»։

«Մուշը գրավել են թուրք զինվորները։ Քանդված գյուղերի 2000-ից ավելի կանայք և երեխաներ ապաստանել են այնտեղ։ Այս խեղճ, ողորմելի ժողովուրդը անոթությունից ու վախից կիսամեռ վիճակի մեջ թափառում է փողոցներում և ներկայացնում գթաշարժ տեսարան»։

Սասունն ու Տարոնը դարձան մարդու որսադաշտ։ Օր չէր անցնում առանց սպանության, խոշտանգումների, հրդեհի ու թալանի։ Մայիսի 1-ին քրդերը հարձակվում են Աշտիշատի վրա, սպանում մի քանի երիտասարդի, անարգում հայ նշանավոր դեմքերի գերեզմանաքարերը, կոտորում տեղում եղած հայերին և ապա հրդեհում են եկեղեցին։ Գյուղը թալանվում և 241 հոգի մնում է առանց ապրելու միջոցի։

1904 թ. հունվարից մինչև հունիսի 20-ը Դաշտում սպանվել

է 109, վիրավորվել 29, բռնաբարվել 47, լրիվ թալանվել ու առանց ապրուստի միջոցների է մնացել 5324 հայ։ Բայց եթե 1904 թ. կռիվներին և այդ ժամանակահատվածում հայերի կոտորածների թիվը 1000-ի չէր հասնում, ապա կռիվներից 20 օր ետ յաթաղանի զոհերի թիվը անցավ ութ հազարից։ Ըստ Մշո առաջնորդական փոխանորդի 1904 թ. հունիսի 28-ին կազմված տեղեկագրի, 1904 թ. առաջին կեսին Սասունում կոտորվել է 2809 տղամարդ, 2193 կին, 2771 երեխա։ Ընդամենը 7773։ Նույն ժամանակաշրջանում թալանվել ու ապրուստի միջոցներից լրիվ զրկվել է 8854 մարդ։ Վնասվել, պղծվել և թալանվել է 49 եկեղեցի։ Սասունում և Տարոնում անհետաձգելի օգնության կարիք ունեցողների թիվը կազմում է 14178 մարդ։

Ահա թե ինչու տեղեկագրի հեղինակը ութ հազար կոտորվածների առկայության դեպքում անգամ հարկադրված է նշել, որ «իրավ, կոտորածները մեծ թիվ չեն կազմում, բայց արդեն Մշո և հարակից գավառների հայերը կենդանի մեռելներ են և իրենց տաժանակիր կյանքը մարտիրոսություն է, որ շարունակվում է...»։ Այդ օրերին Մուշից ստացված մի թղթակցություն հայտնում է. «Հայերի անհանգիստ կացությունը բուն Սասունում նույնն է մնում։ Շատերը կան, որ անմատչելի լեռների, քարայրների և անտառների մեջ պահված են։ Ոմանք անոթության զոհ են դառնում։ Զորքերը և լրտես քրդերը անընդհատ հետազոտություններով գտնում են և ջարդում փախստականներին։ Նրանք, որ մի քիչ ռազմամթերք ունեն, թանկ են ծախում իրենց կյանքը, բայց շատերը նվազած, անզեն, անհաց՝ զոհ են գնում դահիճների սրերին»։

Մուշից հունիսի 19-ին նաև գրում էին, որ իշխանությունները առանձնակի խստությամբ հետապնդում են հայդուկներին. «Անդրանիկի վիճակը հալածական է և ավելի դժվար, քան առաջ, որովհետև տեղական իշխանությունները հատկապես նրա հետևից են ընկած»։

Իսկ ի՞նչ ճակատագիր ունեցան Մուշ քաղաք և Տարոն տեղափոխված սասունցիները։

Մուշից մայիսի 15-ին գրում են. «Երկու հյուպատոսներ անձամբ այցելեցին նրանց։ Քաղաք եկածներին արգելված է հայերի հետ հաղորդակցություն ունենալ։ Մերկ, անոթի, խոնավ գետնի վրա, հիվանդ և վիրավոր դրության մեջ են մնում, այնպես, որ օրեկան 4—5 մեռած են հանում այդ բանտից։ Հատկանշական է նաև այն, որ Մուշ բերված կանանց ու երեխաների զգալի մասի մարմնի վրա կացնի, սվինի և դաշույնի հարվածից առաջացած վերքեր կային»։

Մայիսի 26-ին կուսակալը հրամայեց բոլոր միջոցները գործադրել, կանգ չառնել նաև խոշտանգումների առաջ՝ Մուշում եղած 400—500 սասունցի սովյալներին՝ կանանց ու երեխաներին քաղաքից քշելու համար։ Այդ հրամանի հետևանքով «կանայք ու աղջիկներ են մարում, խելագարվում, ոտքերի տակ երեխաներ են մեռնում, զորանոցում հայ կանայք են բռնաբարվում»։ Սակայն դա չէր նշանակում, թե հայ կանայք ու երեխաները Մուշից դուրս էին քշվում, որպեսզի վերադառնան Սասուն։ Ընդհակառակը, Սասունի դռները սասունցիների առաջ փակված էին։ Նույնիսկ մեծ տերությունների հյուպատոսների միջամտությունը այդ հարցը չլուծեց։

1904 թ. հուլիսի 24-ին Մուշից գրում են. «Ստացվեց սուլթանի իրադեն, որով թույլատրվում է սասունցիներին վերադառնալ իրենց լեռները։ Սա Եվրոպային խաբելու համար է, որովհետև տեղական իշխանությունները ոչ մի կերպ թույլ չեն տալիս սասունցիներին բնակվելու Սասունում, հակառակ հյուպատոսներին տված խոստումների։ Այնտեղ շարունակում են զորանոցներ կառուցել։ Կառուցվում է 4 մեծ և 4 փոքր զորանոց»։

Հայերի վրա ճնշում էր գործադրվում, որպեսզի նրանք հրաժարվեն Սասուն վերադառնալու գաղափարից։ Ամեն օր նրանց խումբ-խումբ հավաքում էին և տանում կառավարության դուռը և ստիպում էին, որ հայտարարեն, թե «Որտեղ որ կառավարությունը որոշի, այնտեղ է մեր վաթանը»։

«Թագավորը Սասուն չի տա ձեզ, ասում են և այս միջոցով ուզում են նախապաշարել նրանց միտքը։ Ուրախալին այն է, որ ժողովուրդը մինչև վերջ պնդում է, որ չի ուզում ձեռք քաշել իր հայրենիքից, ուզում է այնտեղ գնալ, այն լեռները, որ շարունակ իրենց արյունով է ներկվել։ Ժողովրդական այդ համառությունը տեսնելով՝ մի քանիսին բանտարկեցին, մյուսներին վախեցնելու համար սպառնում են ցրել աշիրեթությունների մեջ»։ Սուլթանը խնդիր է դրել «սրով ու կրակով դատարկվող Սասունի քանդված գյուղերը տալ քուրդ ցեղերին... իսկ Դաշտի հողերի մի մասով ուզում են խաբել հալածական լեռնականներին, որոնք այսօր դրված են երկու կրակի մեջ»։

Կոտորածների վտանգը Տարոնում այնքան իրական էր, որ

տարոնցի հայը գերադասում էր սովամահ լինել Սասունում, քան զոհ գնալ յաթաղանին։

«Դաշտում տասը կետի վրա, ինչպես և վանքերը, թուրք զինվորներ են լցված և հետզհետե նոր զորքեր են բերում, ասում են, թե Կրուպպի թնդանոթները շարժման մեջ են դրված՝ Դաշտին սպառնալու նպատակով»։

Տարոնի հայությունը օգնություն էր հայցում, և հայդուկների մի մասը Դաշտ իջավ հենց այդ նպատակով։ Մայիսի 5-ին հայդուկները Մկրագոմում էին, երբ գյուղ եկան թուրքական զորքեր և ոստիկաններ՝ արյունարբու ավազակապետներ Ահմեդ բեյի, Ղասըմ բեյի և Հաջի Ֆերոյի գլխավորությամբ։ Եկել էին «գյուղում քեֆ անելու»։ Սկսվում է հրացանային համազարկ։ Թուրքերը դիրք են բռնում, նրանց «ձիերը հրացանների ձայնից խրտնելով՝ փախչում են և գյուղ լցվում։ Սմբատը վերցնում է երկու ձի և երկու ընկերոջ ուղարկում Խարս՝ կովի լուրը Մուրադին հաղորդելու։ Կռիվը տևում է մինչև երեկո։ Երեկոյան հեռվից նկատվում է առաջացող մեծ բազմություն։ Երբ բավական մոտենում է, հայդուկները հստակ լսում են՝ «Կովեցեք, տղերք, կովեցեք, հա, հասանք»։ Դրանք բալաքցի քրդերն էին, որոնք հայերեն խոսելով ուզում էին մերոնց խաբել։ Բայց շուտով պարզվում է նրանց կեղծիքը։ Տղաները անխնա կրակ են թափում մոտեցողների վրա։ Երբ մութն ընկնում է, բոլորը հեռանում են գյուղից։ Քանի որ Մեղրագետն անցնելու հնար չկար, նրանք գետի երկայնքով շարժվում են դեպի Հունան։ Ճանապարհին մի հայ նրանց է տրամադրում իր լաստը և նրանք, գետն անցնելով, գնում են Ալվառինջ։ Մկրագոմում թուրքերը կորցրին 12 հոգի։ Սակայն հայդուկների հեռանալուց հետո նրանք տասնյակ մարդկանց սպանեցին, 24 տուն հրդեհեցին, մեծ թվով հայերի խոշտանգեցին ու թալանեցին։ 448 մարդ մնաց առանց ապրուստի միջոցի։

Քեռին, Կուրավուում, իր վեց ընկերների հետ թաքնված էր Մուրադ գետի ափի գետնափորում։ Նրանց թաքստոցը նկատվում է։ Թուրքերը շրջապատում են գետնափորը։ Հայդուկները ներսից կրակ են բացում, թուրքերը ևս կրակում են, սպանվում են բոլոր հայդուկները։ Ամենուտեղ թուրքերը հարձակվում են, թալանում ու ավերում են Կուրավուն, խոշտանգում են գյուղացիներին։

«Ապրիլի 11-ից մինչև 30-ը, երբ անընդհատ գրոացին կառավարական թնդանոթները և կարկուտի նման ծեծեցին

Սասնա սարերն ու ապառաժները, Գևորգը ո՛չ դադար, ո՛չ հանգիստ, ո՛չ շփոթմունք ու երկյուղ չունեցավ։ Ղեկավարեց իրեն հանձնված խմբերը զինվորական անբեւեկայելի ճարպկությամբ, հասավ ամենուրեք ու ամենավտանգավոր կռիվներին՝ բյուրավոր զինվորների ու քուրդ աշիրեթների դեմ։ 19 օրվա հերոսական դիմադրությունից հետո, Անդրանիկի հետ ժողովրդի գլուխն անցած, Դաշտ իջավ։

Հայդուկները Տարոն մեկնեցին՝ ժողովրդին հասցնելով Գեղաշեն, այսինքն՝ դուրս հանելով թշնամու ռազմական ուժերի տեղադրության շրջանից, բաժանվեցին երեք խմբի, որոնք առաջ շարժվելով՝ հանկարծակի հարձակումներ էին գործում ճանապարհին հանդիպած թուրքական ու քրդական ջոկատների վրա, նրանց զոհեր պատճառում ու խուճապի մատնում։ Հայդուկները հեռանալով իրենց գրաված դիրքերից, ճակատային գծեր էին ստեղծում մեկ այստեղ, մեկ այնտեղ, արագ տեղաշարժերով ու հարձակումներով շփոթության մեջ գցում թուրքերին։ Դրանով իսկ նրանք անգործության էին մատնել թուրքական հրետանուն, թուրքերին զրկել կողմնորոշվելու և գործնական քայլերի դիմելու հնարավորությունից։

Գևորգն ու Անդրանիկը դեռ Կուրտիկի ստորոտներում էին, երբ նրանց դեմ դուրս եկան բարձունքներին տեղավորված թուրքական զորքերի պարեկային ջոկատներն ու տեսնելով եկողներին՝ ահազանգ տվին։ Հայդուկները խուսանավելու հնարավորություն չունեին։ Մութ գիշեր էր։ Նրանք կրակ բացեցին և սրընթաց առաջ գնացին։ Ճանապարհին ոչնչացրին թուրքական մի քանի ջոկատ։ Գևորգն իր խմբով գնաց դեպի Կուրտիկի արևելյան փեշը, որպեսզի թուրքերի ուշադրությունն իր վրա սևեռի և մյուսներին հնարավորություն տա բարձրանալու լեռը։

Զառիթափից զառիթափ անցնելով և շրջանցելով թշնամու դիրքերը, Գևորգի ջոկատը կրակ բացեց խարույկների շուրջը խմբված թուրք զինվորների վրա։ Հակառակորդը խուճապի մատնվեց։ Ասկյարները դես ու դեն ընկած կրակում էին պատահական ուղղություններով։ Նրանք վազվզում էին խարույկների կողքով, լուսավորվում նրանց լույսով և թիրախ էին դառնում հայդուկների համար։ Լսելով հրաձգության ձայնը՝ լեռան արևմտյան մասերում տեղավորված վաշտերն աճապարեցին արևելք։

Բայց մինչ նրանք տեղ կհասնեին, հայդուկներն արդեն հե-

ռացել էին Գոմեր գյուղի ուղղությամբ։ Այստեղ նրանց սպասում էին Անդրանիկը և մյուս հայդուկները։ Գյուղ հասնելուց երկու-երեք ժամ չէր անցել, երբ նորից հրաձգության ձայներ լսվեցին։ Թուրքական վաշտերն էին, որոնք նպատակ ունեին ամրանալ Գոմեր գյուղում և փակել կապը լեռնաշխարհի արևմտյան շրջանների հետ։ 5000 հոգիանոց թուրքական ջոկատը և բատկանցի աշիրեթությունը մայիսի 24-ին շրջապատեցին գյուղը։ Մինչ այդ Անդրանիկն ու Գևորգն իրենց խմբերով հասցրեցին գյուղից դուրս գալ և դիրքեր գրավել մոտակա ժայռերում։ Նրանք թիկունքից հարվածեցին գյուղը պաշարողներին։ Ուժեղացրին կրակը նաև գյուղում մնացածները։ Երբ մութը վրա հասավ, հայդուկները աննկատ հեռացան։ Մի քանի օր անց, մայիսի 31-ի երեկոյան, Բիթլիսի ոստիկանապետ Իզզեթ բեյը 200 ոստիկաններով ու ժանդարմներով նորից է պաշարում Գոմերը։ Նա լուր է տարածում, թե Գոմերում է գտնվում Անդրանիկը։ Կես ժամ անց պաշարմանը մասնակից զինվորների թիվը հասնում է 450-ի։ Նրանց են միանում նաև արմանցի և բատկանցի աշիրեթները։ Հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս։ Այդ ընթացքում Գոմերի կանայք ու երեխաները, օգտվելով ծառախիտ տեղանքից, շարժվում են դեպի Դաշտի գյուղերը, իսկ տղամարդիկ բարձրանում են լեռները։ Թուրքերն ու քրդերը լցվում են գյուղ, այնտեղ մնացած ծերունիներին խողխողում են, գյուղը թալանում ու հրդեհում։

Հունիսի 5-ին Տերգևանք գյուղում էին գտնվում մի քանի հայդուկներ՝ Սմբատի ղեկավարությամբ։ Հաջորդ օրը վաղ առավոտյան թուրքերը պաշարում են գյուղը։ Պաշարողը Իզզեթն էր, որ 120 ոստիկանով և բազմաթիվ զինված թուրքերի ու քրդերի հետ, իմանալով, որ գյուղում հայդուկներ կան, եկել էր նրանց ոչնչացնելու։ Այդ ժամանակ Տերգևանքում էր հավաքված նաև Բերդակի և Առաղի գրեթե ողջ բնակչությունը, որը փախել էր թուրքերի հետապնդումից։

«Մեր վիճակը չափազանց վտանգավոր էր,— գրել է Սմբատը,— հազիվ հրացանս պայթեց, երբ զինվորները ներխուժեցին և սկսեցին հետապնդել մեզ։ Նրանց արագ ու համարձակ առաջխաղացումն արգելելու համար հարկադրված էինք մերթ ընդ մերթ դիրքեր բռնել ու կրակել... Երբ սլանում էինք դեպի վեր, այնքան երկու հարյուր հրացաններից տեղացող համազարկերի տակ, նույնքան խիտ կրակ մեզ հանկարծ դիմավորեց

ճակատից, շատ մոտիկից, հազիվ 100 քայլ հեռավորությունից... Ամեն մի քարակույտից բարձրանում էր թուրքական զինվորի գլուխ, և զենքը կրակում էր մեր ուղղությամբ։ Պաշարվել էինք, մնալով երկու կրակի տակ, ավելի ճիշտ, մահացու ծուղակ էինք ընկել... Մանավանդ, որ դեպի աջ ոչ մի քայլ անել չէինք կարող, քիչ այն կողմ հսկա անդունդ էր բացվել։ Ելք չկար։ Մնում էր կռվել մինչև վերջին փամփուշտը և պատվով մեռնել, կամ կռիվը ձգձգել մինչև մութն ընկնելը և օգտվելով գիշերվա ընձեռած աջակցությունից, թուրքական շղթայից մի ճեղք փընտրել... Մեր ամեն բոպեն հազար հրաշքով օգտագործելու ժամ էր, մանավանդ որ ներքևից ու վերևից կրակ էր տեղում մեզ վրա։ Մեզ մի միջոց էր մնում՝ քայլել դեպի ձախ ոչ թե փրկվելու, այլ գոնե կրակի խաչաձևումից ազատվելու... Եվ այդպես, փոխնե-փոխ, իրար պաշտպանելով, մերթ վազելով, մերթ սողալով, հաջողվեց որոշված տեղը հասնել անվնաս»[174]։

Պատմում է ականատես Լ. Պոլեյանը. «Գևորգը Բերդակ էր եկել, մեր հնձանում էր և սպասում էր մյուս հայդուկների գալուն։ Գևորգը ելավ դուրս, ականջը դրեց գետնին՝ ձայն լսելու համար։ Մեկեն ցատկեց ու ասաց. «Հրացանի ձայն է գալիս»։ Հայրս ասաց. «Ծառերի թփերի ձայնն է»։

Գևորգը նորից պառկեց գետնին։ «Տղաներն անպայման թուրքերի են հանդիպել. ես պետք է մեկնեմ։ Այս գիշեր նորից ինձ սպասեք»։ Մեզ հետ համբուրվեց ու գնաց։ Եթե ետևից ձի քշեին, չէին հասնի։ Տերգևանք գյուղից տղաները մեկնում են, բայց հանդիպում են թուրքական զորքի պահակներին և կռիվ սկսում... Տղաներն ուզում են հեռանալ, բայց չեն կարողանում. զորքի շունը նրանց տեղը հայտնում է։ Տղաների փամփուշտները հատնելու վրա էին, հուսահատվում են։ Ուզում են անձնասպան լինել և ողջ չհանձնվել»։ Այդ ընթացքում Գևորգը «մտնում է ջրաղացի առվի մեջ, որ ջրով լիքն էր, ու կրակում է թուրքերի թիկունքին։ Զորքերը զարմանում են։ Փոխանակ ֆիդայիների վրա կրակելու, զորքի վրա են կրակում։ Թուրք սպան, կարծելով, թե զինվոր է, բղավում է. «Սխալ ես կրակում»։ Այդ միջոցին Գևորգը մի գընդակ է խփում շան ճիշտ բերանին։ Շունը սատկում է։ Երբ շան ձայնը կտրվում է, խմբի տղաները մտածում են. «Գևորգն է օգնության հասել»։ Գևորգը խփում է նաև սպային ու բղավում. «Գևորգ Չաուշն է։ Հանձնվե՛ք»։ Զորքը փախուստի ճամփեն է բռնում։ Գևորգը միանում է ընկերներին»[175]։

Այս կռվում թշնամին կորցնում է 14 հոգի։ Հայդուկների հեռանալուց հետո զորքը հարձակվում է գյուղի վրա։ Գրում է ականատեսը. «Թուրքերը անզեն և անպաշտպան հայերին կոտորում էին գնդակով, սրով ու սվինով»։ Այդ պահին Մուշից Բերդակ են գալիս Ֆրանսիական և անգլիական հյուպատոսները, սեփական աչքերով տեսնում Թուրքական վայրագությունների հետևանքները։

ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆԻՑ

Տեսնելով, որ միայն զենքի ուժով հարցը լուծել հնարավոր չէ, թուրքական իշխանությունները նորից դիմեցին խորամանկության։ Նրանք Անդրանիկի գլխի համար մեծ գումար խոստացան, բայց որևէ արդյունքի չհասան։

Անհաջողություններից կատաղած Մշո կառավարիչ Հաֆզ փաշան իր մոտ է կանչում քաղաքի հայ մեծամեծներին և ասում, թե սուլթանից հրաման է ստացվել, որ եթե հայդուկները Տարոնից հեռանան, կոտորածներն ու հալածանքները կդադարեցվեն և հայերի համար կստեղծվի խաղաղ կյանքի հնարավորություն։ Դրա հետ միասին, ինչպես գրեցին եվրոպական մի շարք լրագրեր, «Մուշի մութեսարիֆի մուավին* նշան էֆենդին գնացել է փնտրելու Անդրանիկին և բանակցելու նրա հետ անձնատուր լինելու պայմանների մասին»[176]: Մշո առաջնորդարանն ու դաշնակցական կոմիտեի ղեկավարները ընկրկեցին և սկսեցին հայդուկներից պահանջել, որ հեռանան Տարոնից ու Սասունից, Դաշտի հայության կոտորածի պատճառ չդառնալու համար։ Կոմիտեն հայդուկներին գրում էր. «Սասունի դատարկվելուց հետո Մշո դաշտը չի կարող ապստամբական պատերազմի բռնվել թուրք բանակների հետ, որոնք Բիթլիսից և Էրզրումից ողողել են Դաշտի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը։ Թուրք կառավարությունը բոլոր գրգռիչ միջոցներին դիմում է, որպեսզի ապացուցի հյուպատոսներին, թե հայերն են, որ ամեն տեղ կռիվներ են սարքում և ապստամբություններ կատարում։ Պահանջում ենք, որ անմիջապես մարտական ուժերը հեռացնեք Դաշտից դեպի լեռնամասերը, խմբերի բաժանված (և եթե կարելի է, այդ խմբերի մի մասը թող անցնի Ախլաթի և Վանի շրջան)»[177]:

Մի քանի օր անց Մուշից ստացվում է մի նոր նամակ՝ Վարդան վարդապետի, Տատրակի (Գեղամ Տեր-Կարապետյանի) և Համազասպի ստորագրությամբ. «Կառավարությունը և զորքանակը Դաշտի հոծ հայությանը ամբողջությամբ խեղդելու սև ծրագրեր են որոճում։ Անդարմանելի աղետ պիտի լինի, եթե խմբերը չհեռանան դեպի Վան... Երբ հեռանաք այս լեռներից ու Դաշտից, մենք աղմուկով այդ իրողությունը պիտի հայտնենք ու, թերևս, այդպիսով որոշ ժամանակ վտանգը հեռացնենք այս շրջաններից։ Օտար հյուպատոսների ներկայությունն էլ մեզ պիտի օգնի»[178]:

Այս նամակներն ստանալուց հետո Անդրանիկը Գևորգին գրում է. «Մենք Սովասար վերադարձանք։ Կ. կոմիտեն խնդրում է, որ լեռները ապաստանենք կամ անցնենք Ախլաթի շրջանը։ Դաշտի վիճակը ծանր է։ Կապ պահենք իրար հետ թռուցիկ փոքր խմբերով և զգուշանանք նոր դեպքերից՝ մինչև Մուրադի վերադարձը»[179]:

Այսինքն՝ Անդրանիկը նպատակահարմար համարեց Մուշից ստացված խնդրանքը ժամանակավորապես կատարել, մինչև Մուրադը Վանից վերադառնար և պարզ դառնար, թե Վանում ինչ վիճակ է տիրում և որքանով է նպատակահարմար Վասպուրական մեկնելը։

Բայց Անդրանիկի այդ քայլը հանդիպեց հայդուկների մի զգալի մասի դժգոհությանը, և նա որոշեց խնդիրը դնել հայդուկների ժողովի քննարկմանը։ Այդ որոշմանը հանգելուց հետո նա Գևորգին գրում է. «Սիրելի Սարհատ, վերցրու խմբերը, իջիր Մշո դաշտ և Ավրանի վրայով բարձրացիր Տերիկ գյուղը, ուր իրար կգտնենք»[180]: Մի քանի օր անց նա նորից Գևորգին գրում է. «Դաշտում ձեր լինելը անհրաժեշտ է։ Շուտով Վահանն էլ է Դաշտ իջնելու»[181]։ Իսկ Վահանը Սպաղանքի սարում էր։ Գևորգը լուր է ուղարկում Վահանին՝ իր մոտ գալ Դաշտ իջնելու համար։ Պայմանավորվում են հանդիպման վայրը և գաղտնանշանը՝ «խարույկ»։ Բայց որովհետև Վահանը շատ գեր էր և դժվարությամբ էր քայլում, գիշերվա փոխարեն տեղ է հասնում լուսաբացին։ Թուրքերը նրան նկատում են ու կրակի տակ առնում։ Կատաղի ճակատամարտ է սկսվում։ Թուրքերը մի քանի զոհ են տալիս։ Զոհվում է նաև Վահանը։ Գևորգը դառնա-

* Խորհրդական

ցած բացականչում է. «Լաո, Վահանն էլ գնաց, վազենք Անդրանիկի մոտ»[182]:

Գևորգը Անդրանիկին հանդիպում է Տերիկ գյուղում։ Այստեղ են գալիս նաև մյուս հայդուկները։ Մառնիկի անտառում ժողովի է հավաքվում հայդուկության ծաղիկը՝ քննելու մեկ հարց. Տարոնից հեռանալ, թե ոչ, և եթե հեռանալ, ապա ո՞ւր, Վա՞ն, թե՞ ուրիշ տեղ։ Տաք վեճեր եղան։ Տարոնից հեռանալու պահանջի դեմ հատկապես ըմբոստանում էին վաստակաշատ հայդուկները, մասնավորապես, տեղացիները։ Այդ թևը ղեկավարում էր Մակարը, ամենատարեց և ամենափորձված հայդուկը, որը քսան տարի շարունակ զենքից և լեռներից չէր բաժանվել։

«Ես իմ հող ու ջրից չեմ հեռանա և եթե իմ վերջը եկել է, թող ընկնեմ Սասունում։ Ո՞ւր գնալ, ո՞ւմ հույսին թողնել անվեն ժողովրդին։ Այդ ո՞ր օրվանից է, որ մենք սկսել ենք թուրք կառավարիչների խոսքերին հավատալ։ Անցած տարիների փորձը հազար անգամ ապացուցել է, որ Տարոնում ժողովրդի վիճակը համեմատաբար բարվոք է լինում այն ժամանակ, երբ կա ակտիվ հայդուկային շարժում։ Մեր թշնամին այնպիսին է, որ հասկանում է միայն զենքի, ուժի լեզուն։ Ինչո՞ւ ենք ժողովրդին դրանից զրկում, թողնում բախտի քմահաճույքին։ Սուտ է, որ թուրքերը բնակչությանը սպանում, կողոպտում են, որովհետև մենք ենք այստեղ։ Թուրքերը մեզնից ազատվել են ուզում, որպեսզի ոչ ոք չխանգարի անվեն ժողովրդի հետ վարվելու իրենց հայեցողությամբ։ Քսան տարվա իմ հայդուկային կյանքում այդ շարժումը երբեք այնքան ուժեղ չի եղել, ինչպես այժմ։ Տասը տարի առաջ մեզնից ոչ ոք նույնիսկ երազել չէր կարող, որ այսքան հայդուկային խմբեր կունենանք։ Ինչո՞ւ ենք քանդում ստեղծվածը։ Քանդում ենք, որովհետև այդպես ձեռնտու է թուրքերի՞ն։ Այն, ինչ նրանք չկարողացան այս երկար տարիների ընթացքում զենքով անել, այժմ անում են մի օրվա ընթացքում, սուտ խոստումներով։

Ով կհեռանա այստեղից, խաբված կամ վախկոտ մարդ է»,— ասաց Մակարը և թողեց ժողովը։ Նրան հետևեցին ևս մի քանիսը։ Նրանք գնացին իրենց լեռների գիրկը, գնացին ձուլվելու նրանց և լեռան ուժով կռվելու թուրքերի դեմ։

Փորձված հայդուկների հեռանալը ծանր տպավորություն թողեց ժողովի մասնակիցների վրա։ Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։ Վերջապես խոսեց Գևորգը. «Քեռի Մակարի բերանով

ճշմարտությունը խոսեց։ Մենք ժողովրդին պայքարի հանեցինք, ժողովուրդը մեզ հավատալով վտանգեց իր տունը, կայքը, կյանքը և բարձրացավ յաթաղանի դեմ։ Իսկ այժմ, երբ ժողովրդի վիճակը ծանր է, մենք նրան լքում և հանձնում ենք բարբարոսների քմահաճույքին։ Ծանր վիճակ մեզ համար այս տարիների ընթացքում շատ է ստեղծվել, բայց մենք երբեք չենք հուսահատվել, շարունակել ենք պայքարը։ Առաջին անգամ վտանգը ընդհուպ մոտեցել է Մշո մեր ազգային ջոջերին, և նրանք մեզնից պահանջում են փախուստի դիմել, հեռանալ։ Լավ, հեռանանք, բայց մեր խղճին ի՞նչ պատասխան տանք, ինչպե՞ս նայենք սասունցու աչքերին։

Ինձ թվում է, Վան պետք է անցնեն միայն Անդրանիկն ու մի քանի ուրիշ ընկերներ, որոնք այնտեղից կգնան Կովկաս՝ զենք հայթայթելու։ Այդ մեզ հնարավորություն կտա տպավորություն ստեղծել, որ հայդուկների հիմնական մասը հեռացել է Տարոնից։ Սասունում մնացող հայդուկները ժամանակավորապես իրենց զգացնել չեն տա և կսպասեն, թե ինչպես իրենց կպահեն թուրքերը»։

Սակայն Գևորգը իրապես դեմ էր նաև Անդրանիկի և մյուսների հեռանալուն և մինչև վերջ էլ նա Անդրանիկին չներեց այդ։ 1906 թվականին նա Անդրանիկին (Պարույր էր նրա ծածկանունը) և Մուրադին մի նամակ գրեց, թե ինչու ինքը, ընտրված լինելով դաշնակցություն կուսակցության 4-րդ համագումարի պատվիրակ, հնարավորություն չունի նրա աշխատանքներին մասնակցելու և իր լիազորությունները հանձնում է նրանց։ Այդ նամակում կարդում ենք. «Ընկերներ, ժողովի համար, երբ ես բախտ չունեցա գալ և ներկայանալ..., բայց ձայնս տվի ձեզ, որ ներկայանաք ժողովին և մեր կողմից խոսեք և ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպես որ գրել եմ Արևելյան Բյուրոյին, որ Դուք պետք է ներկայանաք ժողովին և խոսեք մեր ու Երկրի մասին, թե Երկիրն ինչ է պահանջում, բայց չուրանաք ձեր Աստված և Երկիրը, ինչպես ուրացել եք մինչև ցայդ, թե ինչպես Բարձրավանդակ ու Տարոն, որ ամենից աշխատող ու գործ տեսնող և շատ զոհեր տվող (շրջան է), նրա տրամադրության ներքո ոչ մի դրամ չկա, իսկ Շամի (Վասպուրականի) տրամադրության ներքո կա 80.000 ռուբլի, նաև կա 100.000-ից ավելի ծայրեր, իսկ մերը՝ ոչինչ. ո՞ւմ երեսից, ձեզ պես ընկերների երեսից, որ թողեցիք մեզ և Երկիրը Աստծու կրակի մեջ ու գնացիք,

ոչ դրամ, ոչ էլ ռազմամթերք ղրկեցիք մեզ և ձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող։ Ինչ որ է, այն անցավ, բայց այսուհետև աշխատեք, դուք էլ և մենք մարդ լինենք, Երկրով միասին։ Եղբայրք ջան, խնդրեմ լավ աշխատեք, որ օգուտ հասցնեք այստեղի ժողովրդին և գործին, որ ազատվեք նրանց մեղքից։ Համբույրներով՝ Սարհատ»։

Խիստ նամակ է, բայց նաև ընկերոջ, բարեկամի, մտերիմի, հայրենիքի, ժողովրդի շահերն ամեն ինչից բարձր դասող անձի նամակ է։ Իսկ ժողովում նա մեղմ էր, հասկանում էր Անդրանիկի ու մյուսների հոգու խռովքը, ծանր ապրումները։

Խոսք վերցրեց Կոտոյի Հաջին. «Գևորգ, թե՛ թուրքերի, թե՛ քրդերի և թե՛ հայերի համար հայդուկությունը այդ դու ես։ Այո, առաջին հերթին Գևորգ Չաուշն է։ Թուրքերը գիտեն, որ դրսից եկածները գնալու են։ Չհեռացողները լինելու են տեղացիները, դու և մյուսները։ Թուրքերը քեզ են ուզում հեռացնել Սասունից և եթե դու չես գնալու, մյուսների գնալն ավելորդ է ու վնասակար։ Հետևաբար, հարցը այսպես է դրված՝ Գևորգ Չաուշը պետք է գնա՞, թե՞ մնա։ Իմ կարծիքով, դու գոնե որոշ ժամանակով պետք է գնաս, որպեսզի թուրքերը չօգտագործեն քո մնալն ու ժողովրդին կոտորեն։ Մենք զենք ու ռազմամթերք չունենք և որևէ տեղից ստանալու հույս էլ չկա, որովհետև թուրքական զորքերը փակել են բոլոր ճանապարհները։ Պետք է գնալ, գուցե հնարավոր լինի Վանում զենք հայթայթել։ Իմ կարծիքով, ճիշտ կլինի, եթե այստեղ ժամանակավորապես մնան մի քանի իշխաններ, որոնց կենթարկվեն բոլոր հայդուկային խմբերը, իսկ մյուսները պետք է հեռանան»։

Ժողովը որոշում ընդունեց հեռանալ Սասունից։ Հուլիսի 10-ին 34 հոգուց կազմված հայդուկային խումբը շարժվեց դեպի Բերդակ։

Ինչպե՞ս գնահատել ժողովի այս որոշումը։ Եթե նկատի առնվի ստեղծված իրավիճակը, ապա ճիշտ էր։ Սասունի գոյամարտն իր գործն արել էր և այլևս Տարոնում մնալն իմաստ չուներ։ Այդ իսկապես կարող էր թուրքական իշխանությունների ձեռքում պատրվակ դառնալ՝ Տարոնում ևս կոտորածներ կազմակերպելու։ Բայց այս որոշումը նաև հետևանք էր այդ օրերին նորից գլուխ բարձրացրած այն մտայնության, որ միևնույն է, առանց մեծ տերությունների գործնական օգնության ստեղծված ծանր վիճակը վերացնելն անհնար է։ Նույնիսկ կարծիքներ էին

արտահայտվում, որ հայդուկությունը, որպես շարժում, իրեն արդեն սպառել է և այլևս անելիք չունի։ Տվյալ դեպքում գլխավոր խնդիր համարվեց դիմել մեծ տերություններին, որ նրանք ճնշում գործադրեն սուլթանի վրա՝ հայերի վիճակը բարելավելու, և եթե հաջողվի՝ հայկական նահանգներում նաև բարենորոգումներ կատարելու համար։ Այդ օրերին էր, որ դաշնակցական կոմիտեն որոշում է հուշագիր ներկայացնել եվրոպական տերություններին։

Այս մտահղացման հեղինակներն էին Վարդան վարդապետը, Տատրակը (Գեղամ Տեր-Կարապետյան), Կորյունը, Համազասպը և ուրիշներ։

Կոմիտեի պատրաստած հուշագրում շարադրված էին Սասունի իրադարձությունների պատճառները և այն պահանջները, որոնց գործադրումն անհրաժեշտ էր՝ լեռնաշխարհում խաղաղություն հաստատելու համար։ Հուշագիրը ստորագրել էին Անդրանիկն ու Տատրակը։ Այն առաջարկում էր.

— Վերացնել բոլոր արտակարգ ու ժամանակավոր հարկերը, ինչպես նաև տասանորդ հարկը (աշարը) և սահմանել մեկ հարկ՝ հողային հարկ։

— Սասունի և Տարոնի հայերին 10 տարի ազատել հարկերից, չվճարված հարկերն այլևս չհավաքել։ Հարկահավաքության ժամանակ զորք, ոստիկան և տեղական պաշտոնյաներ չօգտագործել։ Հավաքած հարկերից բաժին հանել տեղական կարիքների համար։

— Վերացնել զինվորական հարկը, հայ երիտասարդներին զորակոչել բանակ և նրանցից ստեղծել առանձին զորամասեր։

— Գյուղերի անվտանգությունն ապահովելու համար զինված պահակներ նշանակել։

— Մահմեդական ազգաբնակչությանը ևս արգելել զենք կրել, կամ այդ իրավունքը տալ նաև քրիստոնյաներին։

— Վերադարձնել հայերից բռնագրաված ու յուրացրած հողերը, ինչպես նաև զանազան շինությունները։

— Դավանանքի ազատություն և հավասարություն։ Թույլ տալ տեղերում թերթեր ու ամսագրեր հրատարակել։

— Առևտրի, տեղափոխության, ճանապարհորդության ազատություն։

— Բոլոր դավանանքների ու ազգությունների հավասարություն դատարանի առջև։

— Թույլ տալ, որ արտասահմանից վերադառնան բոլոր հայ գաղթականներն ու պանդուխտները, նրանց վերադարձնել իրենց հողերն ու նախկինում ունեցած իրավունքները։

— Հայ քաղաքական բանտարկյալներին ազատ արձակել։

— Սահմանափակել համիդիեների իրավունքները, նրանց թույլ չտալ բռնություններ ու ավերածություններ գործել, թույլ չտալ, որ քրդերը որպես արոտավայր օգտագործեն հայերի հողերը։

— Եվրոպական մեծ տերությունների հսկողության տակ հայկական վեց վիլայեթների համար մի ընդհանուր քրիստոնյա կառավարիչ նշանակել, որը պետք է կառավարի «ազգաբնակչության կողմից ընտրված խորհրդի աջակցությամբ»։ Եվրոպական տերությունները պետք է հսկողություն սահմանեն կառավարչի գործունեության վրա։

— Ըստ բնակչության ազգային կազմի ձևավորել ժանդարմերիան, որի վրա վերահսկողություն պետք է իրականացնեն եվրոպացի սպաները։

— Սասունի և Տարոնի հայերի վնասների հատուցում, քանդված տների վերականգնում։ Հոգալ, որ գյուղացին կարողանա դնել սննդամթերք, առաջին անհրաժեշտության իրեր և պիտույքներ, ինչպես նաև հողագործական գործիքներ[183]։

Հուշագրին կցված էր տեղեկանք՝ հայերի ծանր վիճակի, նրանց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին։ Հյուպատոսներին հանձնվեց նաև մի փաստաթուղթ, որով հայերը բողոքում էին Սասունում զորանոցների կառուցման դեմ։

***

Հայդուկային խումբը որոշում է մեկնելուց առաջ թշնամուն ևս մեկ հարված հասցնել և այդ անել Կուրավու գյուղում։

Հայդուկները հուլիսի 16-ին մտան Կուրավու։ Հաջորդ օրը լուսադեմին գյուղ եկավ 200 հոգուց բաղկացած թուրքական մի ջոկատ։ Գյուղացիները ռես Օհանի գլխավորությամբ ասկյարներին դիմավորում են, կերակրում, գիշերելու տեղ տալիս։ Բայց ասկյարը մնում է ասկյար։ Նա առանց բռնության յոլա գնալ չի կարող։ Ասկյարներից մեկը փորձում է բռնաբարել մի կնոջ, որը դիմադրում է, աղմուկ բարձրացնում ու փախչելով մտնում է գյուղի տներից մեկը[184]։

— Թուրքերը,— գրում է ժամանակակիցներից մեկը,— կնոջ

հետևից մոտենում են այն տանը, որտեղ կանգ էր առել Առաքելի տասնյակը, ծեծում են դուռը։ Առաքելը թույլ չի տալիս դուռը բացեն, սակայն զինվորը ճեղքից տեսնում է ներսում եղածներին ու բղավում է, որ ֆիդայիներ են։ Տունը շրջապատվում է, և երբ բոլոր թուրքերը հավաքվում են այդ տան շուրջը, մնացած երեք տներից հայդուկները միաժամանակ համազարկ են տալիս։ Թուրքերի շարքերը հնձվում են։ Նրանց մի մասին հաջողվում է դիրքեր գրավել աթարի ամրոցի հետևում։ Բայց Գևորգը թույլ չի տալիս, որ թշնամին ուշքի գա։ Նա Մուրադի հետ վազում է գերեզմանոց։ Թուրքերի մի մասը հետապնդում է նրանց։ Սկսվում է կատաղի մարտ։ «Շուտով հասնում են Սմբատը, Իսոն, Պողոսը, Ասատուրը, զորքերի դիակներով է ծածկվում գերեզմանոցը... Իսկ զորապետը... սպիտակ երեսսրբիչը վզին փաթաթած, այնպես էր փախչում, որ որսկան շունը չէր կարողանա հասնել»[185]։ Մյուս հայդուկները, տների տանիքներին դիրք բռնած, կրակ բացեցին թուրքերի վրա, որոնք խուճապահար փողոցից փողոց էին փախչում, բայց այդպես էլ կրակի գոտուց դուրս գալ չէին կարողանում։ Թուրքերից մոտ 100 հոգի սպանվեցին։

Հայդուկներն ամրացնում են իրենց դիրքերը, որոնք հիմնականում գտնվում էին բարձր տների ու եկեղեցու տանիքներին։ Նաև դիրքեր փորվեցին, բարիկադներ կառուցվեցին։ Իսոն, Սմբատը և Պողոսը դիրք էին բռնել գյուղի հարավային, Մկրտոն ու Հասրաթը՝ արևելյան, Առաքելն ու Ավետիսը՝ հյուսիսային կողմում, իսկ արևմուտքում, որտեղ գյուղի եկեղեցին էր՝ Հովհաննեսը, Արամը, Ասատուրն էին։

Լուրը Մուշ է հասնում։ Ալա բեյի հրամանատարությամբ գեպի Կուրավու է շարժվում 3000 հոգուց բաղկացած մի զորամաս, որը գյուղ է հասնում երեկոյան կողմ ու դիրքեր գրավում Կուրավուի դիմաց, Արածանիի ափին։ Կուրավուի վրա շարժվեցին նաև չերքեզները, Մուշից բերվեցին թնդանոթներ։ Սուլուվի կամրջի թմբերի ետևից առաջապահ ուժերը կրակ բացեցին Կուրավուի ուղղությամբ։ Հայդուկների մի խումբ հարձակվեց նրանց վրա ու փախուստի մատնեց։ Թուրքերը երեք կիլոմետր ետ քաշվեցին, բայց սկսեցին թնդանոթները գործի դնել, նպատակ ունենալով նոր ուժեր հավաքել։ Եվ հաջողվեց Կուրավուի շուրջը հավաքել զինվորական նոր ուժեր ու մեծաթիվ քրդեր։ Հաջորդ օրը նոր հարձակում սկսվեց։

Հայդուկները խփեցին եկեղեցու զանգերը, որ շրջակա գյուղերը ևս իմանային կռվի մասին ու հարկ եղած դեպքում օգնության հասնեին։ Ծանր մարտեր եղան։ Երբ մութն ընկավ, բոլոր հայդուկները ազդանշանով հավաքվեցին Մուրադ գետի ափին ու հեռացան[186]։

Հայդուկների մի այլ խմբի ուղեկցությամբ գյուղից հեռացան նաև նրա բնակիչները, որոնք գնացին Գոմսի, Ավրանի և Աշտիշատի, իսկ մի մասն էլ՝ Արածանիի հոսանքի ուղղությամբ։ Հաջորդ օրը թուրքերը թալանեցին Կուրավուն, Ծխավանը, Ախչունը, 70 հոգու սպանեցին, Կուրավուն և Ախչունը հրդեհեցին։

Կուրավուի կռվի երկրորդ օրվա մասին Սմբատը գրում է.

«Կռիվը տևեց մինչև երեկո և դեռևս դադարելու նշան ցույց չէր տալիս։ Մեզ տրված հրահանգի համաձայն, օգտվելով մթությունից, պետք է քաշվեինք դեպի Ախչուն, որ հեռու չէր, բայց այնտեղ հասնելու համար պետք է նորից գետն անցնեինք։ Ստացած օգնության շնորհիվ թուրքն արդեն կարողացել էր գրավել գյուղի կեսը, իսկ մենք կռվելով՝ քայլ առ քայլ նահանջում էինք դեպի գետը։ Բայց տեղ հասնելով տեսանք, որ ճանապարհը կտրված է։ Գետի դիմացի ափը գրավել էին Ալա բեյի զինվորները։ Վտանգավոր կացություն էր. երկու կրակի մեջտեղ, թվով անհամեմատ տկար, ամբողջ օրը տևած կռվից ուժասպառ, նաև սոված։ Այս պարագայում միայն հուսահատական հանդգնությունը կարող էր մեզ փրկել...

Ու գնդակների տարափի տակ զենքերն ու փամփշտակալները վեր բռնած՝ նետվեցինք ջուրը։ Դժվար թե մեզնից շատերը ողջ կամ անվնաս հասնեին գետեզերք, եթե մի անակնկալ միջամտություն օգնության չհասներ։ Ախչունից հանկարծ համազարկ պայթեց, շփոթի մատնելով թուրքերին։ Գյուղի մեր ընկերներն էին, որոնք աչքի առաջ ունենալով վտանգը և տեսնելով մեզ վրա ծանրացող մահացու սպառնալիքը, կռվի մեջ մտան։ Ջորքը սկսում է փախուստի դիմել, և մենք բոլորս ապահով անցնում ենք գետը»։

Հուլիսի 17-ին թուրքերը թալանելու նպատակով, հարձակվում են Շեյխ Յուսուֆի վրա։ Մի քանի ախչունցի և տեղացի հայեր դուրս են գալիս նրանց դեմ և մինչև կեսօր հաջողությամբ ետ մղում թշնամու հարձակումները։ Սակայն լրացուցիչ ուժեր ստանալով, թուրքերը գյուղը բոլոր կողմերից պաշարում են։ Հայերը դիրք են գրավում եկեղեցու տանիքին ու շարունակում

կռիվը, ապա մտնում են եկեղեցու ներսը և համառ դիմադրություն ցույց տալիս։ Սակայն փամփուշտները սպառվում են, և թուրքերը, մոտենալով եկեղեցուն՝ հրդեհում են։ Եկեղեցում եղած 12 քաջեր զոհվում են։

Այս կռիվները մեծ արձագանք են ունենում։ Դաշտի գյուղերի միջև երթևեկությունը գրեթե դադարում է։ «Թուրքերը, ֆիդայու ահից չեն համարձակվում դուրս գալ, իսկ հայերը դրսում չեն երևում, վախենալով, որ թուրքերի վրեժխնդրությանը կենթարկվեն։ Կառավարությունը ամենախիստ միջոցներ էր ձեռք առել ֆիդայիներին իր ճանկը գցելու»[187]։

Իսկ հայդուկները Կուրավուից անցնում են Վարդենիսի շրջանի Խարս գյուղը։ Այստեղ նրանք դատում են Սերոբին մատնողներից մեկին՝ մշեցի Նազարին, և որոշում նրան գնդակահարել։ Խումբը ճամփա է բռնում դեպի Ախլաթ։ Այդ ամբողջ ընթացքում թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով փընտրում էին հայդուկներին, որոնց հետքը Կուրավուի ճակատամարտից հետո կորցրել էին։ Կուսակալ Ֆերիդ բեյը նորից Անդրանիկի գլխի համար մեծ գումար՝ 1000 ոսկի խոստացավ[188]։

Հայդուկների ռազմամթերքը սպառվում էր և նրանք խուսափում էին նոր բախումներից, շտապում էին օր առաջ հասնել Աղթամար։ Մանավանդ, որ ամիսներ տևող կռիվները, քաղցն ու հիվանդությունները հյուծել էին նրանց, և կանգ առնելու, ինչպես ասում են, շունչ քաշելու մեծ կարիք ունեին։ Բայց նախախնամությունը նրանց համար նոր կռիվ էր նախատեսել։ Օգոստոսի 11-ին հայդուկները հասնում են Շամիրամ գյուղը և երկու օր կանգ առնում գյուղի կողքին գտնվող բլուրների վրա։ Այդ լուրը հասնում է Ալա բեյին, որը 400 զինվորով գալիս է Շամիրամ՝ հայդուկներին բռնելու։

Ժամանակակիցներից մեկը գրում է. «Կծվակի սպա Ալա բեյին իմաց են տալիս, որ Սերոբ Աղբյուրի մատնիչներին կախող Սեպուհը ընկերներով եկել է Շամիրամ։ Նա առանց իմանալու, որ Անդրանիկն էլ է եկել մատնիչներից վրեժ լուծելու, դիմում է դեպի Շամիրամ»[189]։

Նա անմիջապես շարժվում է դեպի գյուղի բարձունքները դիրքեր գրավելու և Նեմրութ տանող ճանապարհը փակելու համար։ Իրենց զորքերով Շամիրամ էին եկել նաև արյունարբու Ֆերիդ փաշան և Սայիդ բեյը։

Հայդուկների մի մասը դիրքեր է զբաղեցնում գյուղի եկեղե-

ցու տանիքին, Գևորգը 10 հայդուկներով՝ բլուրների վրա գտնվող հին բերդի ավերակներում, Անդրանիկն ու մյուսները՝ գյուղի վերին ծայրամասի բլուրներին։ Սմբատն իր խմբով հանձնարարություն էր ստացել պաշտպանելու գյուղի աղբյուրը, որպեսզի թշնամին ծարավ մնալով, հարկադրված հեռանա։

Մինչև կռիվն սկսելը գյուղից ուտելու պաշար և կժերով բավական չանակությամբ ջուր է բերվում։ Սկսվում է կատաղի ճակատամարտ։ Պատմում է Սմբատը. «Թուրքերը ջանում էին օգտվելով հողի անհարթությունից, սողալով կամ արագ ոստյուններով մոտենալ Աղբյուրին, բայց շնորհիվ մեր անթերի նշանառության, նրանց գամել էինք իրենց տեղերում։ Նրանցից ոչ ոք չէր համարձակվում մի քայլ առաջանալ։ Գլուխը վեր բարձրացնողը տապալվում էր առհավետ։ Այս մահվան խաղը տևեց ավելի քան 2 ժամ»։

Գևորգը տեսնելով, որ Սմբատի վիճակը ծանր է, յոթ հոգով շարժվում է դեպի Աղբյուրը և հարձակվում թշնամու վրա, որը, չկարողանալով դիմադրել, ետ է քաշվում։ Կռիվը սաստիկ բնույթ ստացավ նաև մյուս դիրքերում։

«Շամիրամի կռվում, որ տևեց 14 ժամ, Գևորգը հակառակորդի ամենաուժեղ թևի վրա ցանեց այնպիսի ահարկու կրակ, որ թշնամին դիմանալ չկարողացավ ու սարսափահար նահանջեց»[10]։

Անգլիական հյուպատոսարանի թարգմանիչ Արշակ Սաֆրաստյանը գրում է. «Հյուպատոսի հանձնարարությամբ գնացել էի Շամիրամ, որ հետևեմ իրադարձություններին։

Ճանապարհը բռնված էր զինվորական սայլերով, այս ու այն կողմ շարժվող կանոնավոր զորքերով և, մանավանդ, անկիրթ քուրդ խուժանով։ Հրամանատար Ֆերիդ փաշայի վրանը Շամիրամից մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի բլրի վրա էր։ Հենց ներս մտա, վալին սկսեց շատ լկտի փոլիտիկոսի բառերով հայհոյել հայ ավազակներին, որոնք արդեն սպանել ու վիրավորել էին բազմաթիվ զորքեր ու ձիավորներ։

Դուրս եկա վրանի տակից՝ մի քիչ նայելու շրջակայքին, պայծառ արևի տակ անգամ շատ քիչ բան կարելի էր տեսնել։ Հեծելազորի շարժումներից բարձրանում էր փոշու ամպ։ Ախլաթից հասած նշանավոր գազան չերքեզ Աչա բեյը 400 սուվարիներով կտրել էր Շամիրամը Նեմրութի փեշերից և Գյոգուչի ստորոտներից։ Հարավային դիրքերը բռնել էին կանոնավոր զորքը, ժանդարմները, քրդերը և այլն, ընդամենը 8000 օսմանցի...

Թուրքերը արձակեցին փոքրիկ թնդանոթի մի քանի հարվածներ միայն։ Կռիվը մղվեց հրացանի անդով և անդադրում կրակով։ Գնացի զինվորական

հրամանատարի միջոցով՝ Սայիդ բեյի վրանը։ Նա ասաց. «Այս ստահակները (հայդուկները) առյուծի պես են կռվում»։ («Ավո—«Գևորգ Չաուշ, էջ 236—238)։

Բիթլիսից թուրքերի նոր ուժեր բերեցին, բայց մութն արդեն ընկել էր։ Գևորգը մի ռումբ պայթեցրեց, որ հայդուկների հավաքվելու պայմանանշանն էր։ Շամիրամում թուրքերը կորցրին մոտ 70, իսկ հայերը՝ 1 հոգի։

«Ֆրանկֆուրտ ցայտունգը» գրում է. «Օգոստոսի 18-ին կռիվ տեղի ունեցավ 40 հոգիանոց հայ խմբի և ոստիկան զինվորների միջև»։

Օգոստոսի 19-ին Կ. Պոլսից «Ռեյտեր» գործակալությանը հայտնեցին, որ «վերջին օրերս տեղի ունեցած կռիվների ժամանակ Բիթլիսի նահանգի Շամիրամ գյուղի միայն մի քանի տներ են քանդվել։ Հայ խումբը կարողացավ Նեմրութ հասնել»։

Զոհերի թվի մասին տվյալները շատ խայտաբղետ են։ Դա բնորոշ է ոչ միայն այս, այլև մյուս ճակատամարտերին։ Կարելի է ենթադրել, որ հայ աղբյուրները մեխանիկորեն չափազանցում էին թշնամու կորուստները, իսկ թուրքական աղբյուրները և նրանց միջոցով արտասահմանյան մամուլը՝ ընդհակառակը։

Օգտվելով այն բանից, որ թշնամին խուսափում էր լուրջ գործողություններից, հայդուկները գիշերը դատարկում են գյուղը և շարժվում Դատվանի ուղղությամբ։ Սմբատը հուժկու հարվածով ճեղքեց Մուշեղաշենը շրջապատող թուրքական շղթան և ճամփա բացեց դեպի Դատվան։ Երբ մոտեցան գյուղին՝ այն դատարկ գտան։ Առաջ շարժվեցին դեպի Վանա ծով և ի՞նչ... Դատվանցիները, մեծ ու փոքր, տեղավորված էին նավակների մեջ։ Ամիսներ շարունակ նրանք այդպես էին ապրել։ Հենց թշնամին մոտեցել էր, նրանք նավակներով գնացել էին լճի խորքերը և վերադարձել, երբ վտանգն անցել էր։ Հայդուկները տեղավորվեցին նրանց նավակներում և շարժվեցին Աղթամար։ Հոգնած ու քաղցած հայդուկները ափ դուրս եկան Աղթամարում։ Թուրքերն այդ նկատելով՝ մի քանի հարյուր զինվորով ծովից ու ցամաքից պաշարեցին կղզին։ Ցամաքից թնդանոթները ռմբակոծում էին հայդուկներին (նրանք կղզու վրա 45 ռումբ գցեցին), իսկ զինվորները նավակներով մոտենում էին կղզուն։ Բայց

* Զինվորական կոչում

ամեն անգամ հայդուկները նրանց հետ էին քշում։ Թշնամու հիմնական նշանակետը նավակներն էին, որպեսզի հայդուկները հնարավորություն չունենային կղզուց հեռանալ։ Սակայն հայերը նավակները քաշել էին Ծովախորշի խորքը և թաղիքով ծածկել։ Թշնամուն այդպես էլ չհաջողվեց դրանք հայտնաբերել։

Փամփուշտները խնայողաբար օգտագործելու համար Անդրանիկը ճշգրտորեն որոշում էր թշնամու գտնված վայրի հեռավորությունը և թույլ էր տալիս կրակել միայն այն դեպքում, երբ պարզվում էր, որ թուրքերը 1000 մետրից մոտ տարածության վրա են գտնվում։

Ահա թե այդ իրադարձություններն ինչպես է ներկայացնում «Բրեստ ցայտունգը». «Այժմ միայն ստացված են հյուպատոսական տեղեկագրեր այն մոլեգին հարձակման մասին, որ արել է հայ հեղափոխականների կատաղի առաջնորդ Անդրանիկը Վանա լճի Աղթամար փոքրիկ կղզու վրա։ Լճի շուրջը զանազան պտույտներ գործելուց հետո, Անդրանիկը իր մարտիկներով մի քանի նավ առած... փոխադրվում է վերոհիշյալ կղզին։ Այդ լուրը առնելով՝ մի քանի օր հետո ուղարկում են տաճկական մի զորեղ ջոկատ՝ Անդրանիկին դուրս քշելու համար։ Մոտ 30 թընդանոթի հարվածներ տեղացին կղզու վրա, որոնցից չորսը միայն հասան նրան, այն էլ առանց որևէ վնաս պատճառելու»[191]։ Կռիվը տևում է մինչև երեկո, բայց թշնամուն այդպես էլ չի հաջողվում կղզի մտնել։ Հայդուկների հետ հանդիպելու համար Վանից եկել էին դաշնակցական գործիչներ Իշխանն ու Վահան Փափազյանը։ Աղթամարի տաճարի մոտ նրանք ժողովի հավաքվեցին։ Պարզվեց, որ Վանի գործիչները ամենևին էլ ուրախ չեն, որ հայդուկային այդ բավականին ստվար ու փորձված խումբը Վասպուրական է եկել։ Կոմսը և Իշխանը, դաշնակցական կոմիտեի հանձնարարությամբ, հայդուկներին առաջարկեցին Վասպուրականից հեռանալ և Պարսկաստանի վրայով անցնել Անդրկովկաս։ Ժողովում տաք վիճաբանություններ եղան։ Կոմսն ու Իշխանը, չկարողանալով հիմնավոր պատասխան տալ Անդրանիկի մեղադրանքներին, գերադասեցին հեռանալ ժողովից։ Լուռ էր մնայն Գևորգը։ Նրա ողջ էությունը Սասունում էր։ Վ. Փափազյանը պատմում է. «Անդրանիկը, գլուխը բարձրացրած, բազմության մեջ մեկին էր փնտրում։ Վերջապես ձայնում է. «Գևորգ, լաո, ո՞ւր ես մնացել, առաջ եկ, երեսդ տեսնենք»... Կարճահասակ, նիհար, գլուխը բաց մարդուն էր ուղղված այս

հրավերը, որը անտարբեր նստած գետնին, մեզ էր նայում։ «Այստեղ լավ է,— ասաց մեղմ ձայնով։ Անդրանիկը ելավ, ձեռքից բռնեց և գրեթե բռնի բերեց կողքը նստեցրեց։ Գևորգ Չաուշն էր, Մշո առյուծը, հանդարտ, կշռված շարժումներով, ինքնամփոփ, խոնարհ ու միշտ լուռ»։ Իսկ վեճերը շարունակվում էին։ «Անդրանիկ,— հնչեց Գևորգի ձայնը,— չգիտեմ մյուսները ինչպես, ես հենց այսօր Սասուն եմ վերադառնում։ Ո՞ւր պիտի երթամ։ Չէ՞ որ Դուրանն է իմ երկիրը, այնտեղ եմ ծնվել, այնտեղ պիտի մեռնեմ,— ապա գլուխը կախեց, ժպտաց մեղավոր ժպիտով՝ կարծես թողություն էր խնդրում իր ընկերներից դեպի մահ գնալու իր որոշման համար»։ Նրան միացան ևս 14 հայդուկներ։ Մյուսները լուռ էին, բայց համոզված, որ Գևորգը ճիշտ է վարվում։ Մի քանի ժամ հետո բազում տարիների զենքի ընկերները ողջագուրվեցին, և Գևորգը իր ուղեկիցների հետ նավակ նստեց։ Նրանք ճանապարհ բռնեցին դեպի Նեմրութ։

Թուրքական զորամասերը շրջապատել էին լիճը, նպատակ ունենալով թույլ չտալ հայդուկներին շրջապատումից դուրս գալ։ Բարեբախտաբար, մառախլապատ եղանակ էր։ Ճիշտ է, այդ եղանակին նավարկելը դժվար էր ու վտանգավոր, բայց թշնամին չէր նկատի նավակը։ Սկսվում է ուժեղ փոթորիկ։ Նավակն իր ուղղությունը կորցնում է և շարժվում դեպի Ախլաթ։ Գիշերը վրա էր հասել, երբ վերջապես երկար շարշարանքից հետո նավակը հաջողվեց մոտեցնել Կծվակի ժայռոտ ափին։ Հայդուկներն ափ ելան ու սկսեցին մագլցել ժայռն ի վեր։ Լեռներին սովոր այս մարդիկ ծովի վրա իրենց վստահ չէին զգում, իսկ երբ ոտք դրեցին ժայռերին, մի գերբնական ուժ ձեռք բերին։ Բարձրանում էին, և հանկարծ հենց դիմացից՝ մոտ 30 մետր հեռավորությունից, ուժեղ հրաձգություն սկսվեց։ Պարետություն անող թուրքական զորքերն էին, որ շարժման ձայն առնելով՝ կրակ էին բացել։ Հայդուկներին մնում էր հուժկու հարվածով ցրել հակառակորդին և ճանապարհ բացել։ Դա նրանց հաջողվեց, և խումբը բարձրացավ Նեմրութ։ Հրաձգության վայրում մնաց միայն Ասատուրը, որ ծանր վիրավորվել էր, և որպեսզի թշնամու ձեռքը չընկնի, բարձր ժայռից իրեն նետեց լճի փոթորկահույզ ալիքների մեջ ու խեղդվեց։

Ժամանակակիցներից մեկը գրում է. «Կառավարությունը Շամիրամի կովի հաջորդ օրը ամենուրեք ծովը խիստ հսկողության տակ էր վերցրել և բանտարկել բոլոր նավերը։ Գևորգը,

անտեղյակ թշնամու կողմից արված այս կարգադրությանը, նավով մոտենում է Կծվակի քարերին։ Տղաներից մի քանիսը հազիվ էին ոտները ցամաք դրել, երբ գիշերային մթության միջից դարանակալ թուրք զորքերը նրանց բուռն կրակի տակ են առնում։ Ջաուշը հանկարծակիի է գալիս, բայց չի կորցնում վճռականությունն ու սառնասրտությունը։ Տղաներին հրամայում է արագ առաջ գնալ ու դիրք բռնել Կծվակի քարերի գագաթին... Ռազմիկ կամավորները թռչում են դեպի Նեմրութի լանջերը, թշնամուց խլելով բավական թվով զոհեր»[192]: 1904 թ. օգոստոս ամիսն էր։ Խումբը ճամփան շարունակեց Ծովասար։ Գյուղացիներն ամենուրեք հրճվանքով էին դիմավորում նրանց, կերակրում, լուրեր հաղորդում։ Հայդուկները Սասունում էին։

Գյուղացիների պատմածները Գևորգին մեկ անգամ ևս համոզեցին, որ Սասունից հեռանալը սխալ էր։ Թուրքերն ու քուրդերը, օգտվելով դրանից, անսանձ էին դարձել։ Նրանք անպատիժ թալանում ու սպանում էին։ «Անլուր հալածանքներին ու խստություններին ենթակա ժողովուրդը, ֆիդայիների մեկնելուց հետո, անձնատուր էր եղել սև հուսալքության... Երբ իմացավ Գևորգի ներկայությունը իր մեջ, իր կողքին, իր մոտ, կրկին ունեցավ սփոփանքի թեթև սարսուռ, կրկին իր հոգու խորքում զգաց հույսի բաբախում։ Գևորգը՝ կեղեքիչների սարսափը, այնտեղ էր»[193]։

Իսկ Անդրանիկն ու մյուս հայդուկները Աղթամարում մնացին ևս մի քանի օր։ «Այստեղ ծավալվեցին դաժան մարտեր խիզախների փոքրիկ ջոկատի և թուրքական վիթխարի բանակի միջև»։ «Երբ ուտելու պաշարը վերջացավ, խումբը, կղզում թողնելով երկու դրոշակներ, դուրս եկավ։ Կանգուն մնացած դրոշակները երկու օր էլ խաբեցին թշնամիներին, որոնք ամենայն եռանդով շարունակում էին ոմբակոծել կղզին, կարծելով, թե ֆիդայիները տակավին այնտեղ են»։

«Բրեստ ցայտունգը» գրեց. «Անդրանիկը թողեց կղզին նույն ձևով, ինչ ձևով եկել էր այնտեղ։ Այդպիսով, նա մի քանի օր մնաց կղզում»։ Խումբը շարժվեց դեպի Վան, իսկ որոշ ժամանակ անց, Պարսկաստանի վրայով՝ Ռուսաստան։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Սասունն իր դերը կատարեց։ «Հայերի հերոսական դիմադրությունը, Սասնո լեռներում և Մշո դաշտում ծավալված անհավասար կռիվները հիացրել էին աշխարհը։ Ամենուրեք հայության հանդեպ համակրանքի ալիք բարձրացավ»[194]: 1904 թ. հունիսի 9-ին հանդես գալով Ֆրանսիայի պառլամենտում, մեծ մարդասեր Ֆրանսուա Պրեսանսեն շնորհավորեց հայ ժողովրդին, որ նա զենք է վերցրել նվաճելու իր ազատության տարրական պայմանները...

«Ես չեմ ասում, թե այդ արյունոտ ողջակեզերը միայն ջարդեր են եղել, եղել են և կռիվներ, անհավասար կռիվներ, քանի որ հայերը գրեթե անզեն են եղել, բայց դրանք այն կռիվներից են, առանց որոնց որևէ ժողովուրդ չի նվաճում իր գոյության իրավունքը... Նրանք չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին։ Նրանք պաշտպանվեցին ապրիլ ամսից ի վեր, առանց տոնելու հաղթանակ, որ անհնարին էր։ Հայերի, ինչպես և ուրիշ ճնշված ժողովուրդների համար կան այնպիսի պարագաներ, որ ապստամբությունն ամենասուրբն է և առաջնագույնը բոլոր պարտավորություններից»[195], Ժորեսը գրեց. «Ցանկանում եմ միանալ քաղաքակիրթ աշխարհի մարդկանց զգացմունքներին և բողոքել այն զզվելի վարչակարգի դեմ, որի ներքո գտնվում են հայերը»։ Հանդես գալով հայերին ահաբեկչության մեջ մեղադրողների դեմ «Դեյլի Նյուսի» թերթակիցը 1904 թ. հուլիսի 1-ին Կ. Պոլսից գրեց. «Անգլիայում պետք է լիուլի հասկացվի, որ հայ ժողովրդի մեծ մասը դատապարտում է սպառնալիքների դիմելը և կամ այդ սպառնալիքները բանկ օթթոմանի վրա եղած հարձակման նման եղանակով գործադրելը։ Բայց այդ չի նշանակում, թե նրանք գոհ են ներկա ռեժիմից։ Այդ տեսակ հերյուրանքներ ասվում են միայն վարձկան թերթերի կողմից։ Հայերի ցանկությունն է իրենց կյանքը և ինչքը ապահով տեսնել և ոչ թե իրենց ժողովրդին տեսնել տանջված ու բռնաբարված։ Նրանք ընդունում են, թե կայսրության բոլոր նահանգներում էլ իրենք թվով քիչ են, որ բռնի միջոցների դիմելը, նույնիսկ ի պատասխան հրեշային բռնաբարությունների, առաջ պիտի բերի էլ ավելի դաժան ճնշում»։ «Էրզրումում ժողովուրդը գանգատվում է կամայական ձերբակալումների և մանավանդ այն տանջանքների դեմ, որոնց ենթարկվում են նրանք...

Էդուարդ Թագավորի հպատակներին ինչքան էլ անհավանական թվան այս պատմությունները, սակայն Թուրք կառավարության մեթոդներին ծանոթ եղողներին անհավանական չեն թվա։ Ինչպես երևում է, էրզրումում հյուպատոսները դեմ են կամայական ձերբակալություններին և տանջանքներին, և նրանց դիտողությունները օգտակար դեր են խաղացել, բայց միայն քաղաքում»։ Նամակագիրը հայտնում է, թե հայկական խմբերի մասին տարածված լուրերը սուտ են, և թե՝ «մի քանի հոգու ներկայությունից օգտվում են՝ քրիստոնյա ժողովրդին կողոպտելու։ Այս լուրերը տարածվել են նաև Վանի շրջանում, որոնք նույնպես անհիմն են և պատրվակ՝ քրիստոնյաների վրա քրդերի հարձակման համար»[196]։

«Դեյլի նյուսը» 1904 թ. հունիսի 18-ին անդրադարձել է այս հարցին. «Դժոխային կացությունը դարձյալ տիրել է Հայաստանում, և մենք մի անգամ ևս դեմ առ դեմ կանգնած ենք պատմական այն կոտորածի, բռնաբարության և ավերումի հանդեպ, որոնց հետ մեզ ընտելացրել է սուլթանի կառավարությունը։ Վերջին կոտորածների միջև եղած միակ տարբերությունը այն է, որ այդ կոտորածները կատարված են պարբերաբար, անդադար, և հրկիզումներն ու մարդասպանությունները, որ մի ամսից ի վեր շարունակվում են, Եվրոպայի ուշադրությունը չեն գրավել, ուրեմն և կարող են անպատիժ շարունակվել արյունարբու սուլթանի կողմից»։ Ինչպես 1894—96 թվերի, այնպես էլ 1904 թվի ջարդերի ժամանակ սուլթանն ու Բ. Դուռը ամեն ինչ արեցին, որպեսզի տեղեկությունների արտահոսք տեղի չունենա և արտասահմանում ճշմարտությունը չիմանան։

«Մեծ ջանքեր է գործադրվում,— 1904 թվականի հուլիսի 1-ին գրեց «Դեյլի նյուսը»,— դուրս չհանելու համար որևէ մանրամասնություն՝ Հայաստանում վերջերս կատարվածի վերաբերյալ։ Բայց այժմ գաղտնի նամակներ են հասնում, որոնք լույս են սփռում վիճակի վրա... Ոչ ոքի թույլ չի տրվում քաղաքից կամ Մշո շրջակայքից դուրս ելնել, վախենալով, որ չլինի թե իրենց տեսածները և լսածները պատմեն... Նույնիսկ Թուրքերը, նախքան մեկնելը, ստիպված են թույլտվություն ստանալ և երդում տալ, որ ոչ ոքի չպետք է հայտնեն, թե ինչպես են վարվում քրիստոնյա ժողովրդի հետ»։ Սուլթանական կառավարությունը ոչ մի խաբեության և կեղծիքի առջև կանգ չէր առնում համաշխարհային հասարակայնությանը թյուրիմացության մեջ գցելու համար։

Այս ուղղությամբ հատկապես մեծ ջանքեր էր թափում «Օրիենտ» լրագիրը։ Սուլթանի փողերով պահվող այս թերթում նրա ծախու խմբագիր Նիկոլայդիսի հեղինակությամբ Սասունին նվիրված հոդվածներից մեկում կարդում ենք. «...Մի՞թե աշխարհը չգիտե, որ նրանք (հայերը) առևտրականներ են, որքան ճարպիկ, այնքան և շահասեր, որ նրանց մեջ ագահությունը հիմնական առաքինությունն է... 1895-ի շարժումը առաջացավ շահի, վաստակի այդ ախորժակներից։ Նրանք սրվել էին արդեն դարերի ընթացքում, երբ Անատոլիայի ոչ հայ ազգաբնակչությունը շարունակ կեղեքվում էր հայերի ձեռքով, բայց նրանք տակավին չէին հագեցել։ 1904-ի շարժումը ծագեց միևնույն պատճառներից և նրա դադարելուց հետո նորանոր շարժումներ պիտի առաջ գան, մինչև որ հայկական ախորժակները չստանան լիակատար բավարարություն»։

Սուլթանը շինծու լուրերով ողողում էր արտասահմանյան պարբերականները, կանգ չէր առնում ոչ մի միջոցի առջև, կաշառք էր տալիս, որ այդ նյութերը տպագրվեն։ Եվ տպագրվում էին սուտն ու կեղծիքը, դառնում եվրոպացի ընթերցողի սեփականությունը։ Ահա դրանցից մեկը. Վիեննա, 20-ը ապրիլի. «Պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ Սասունի շրջանում տեղի են ունեցել լուրջ կռիվներ զորքերի և հայ ապստամբների միջև։ Այս վերջինները թվով 2000, եկել են մեծ մասամբ Ռուսաստանից ու Պարսկաստանից։ Կռիվները, անշուշտ, ծագել են այն պատճառով, որ ապստամբապետ Անդրանիկը մերժել է բանակցության մեջ մտնել տեղական իշխանությունների հետ՝ անձնատուր լինելու մասին։ Զորքերն ունեցել են 20 հոգի սպանված և 23 վիրավոր։ Ապստամբների կորուստը հայտնի չէ։ Տալվորիկի շրջանի 12 գյուղեր ավերված են, հայտնի չէ ապստամբների՞, թե՞ քրդերի ձեռքով»[197]։

Կ. Պոլիս, 2-ը մայիսի. «... Քանի որ քրդերը հարձակվել էին Սասունի մի քանի գյուղերի վրա, հայ հեղափոխականները, խմբապետ Անդրանիկի առաջնորդությամբ, շտապ օգնության հասան իրենց հայրենակիցներին, քշեցին և կոտորեցին բազմաթիվ քրդերի»[198]։

Իսկ մայիսի 5-ին Պոլսից հաղորդում են, որ «քրդերի մասնակցությունը այդ կռիվներին կասկածելի է թվում։ Կենտի մութեսարիֆը մի անգամ հեռագրել է, «որ հայկական շարժման առիթով մահմեդականները շատ գրգռված են և դժվար կլինի արգելք լինել բռնի ճնշումներին»[199]։

Բայց բոլոր լրագրողներն ու հասարակական գործիչները չէ, որ հավատում էին թուրքական այս կեղծիքներին։

Հուլիսի 7-ին, Փարիզի մունիցիպալիտետի խորհրդում, Կոլը հայտարարեց. «Ամենուրեք թալան, սպանություն, ավերմունք։ Շաբաթ չի լինում, որ գյուղ չթալանվի, կորստի չմատնվի։ Եվ դրա հետ միասին՝ անվերջ խաբեություններ և կեղծ լուրեր, որ ամեն օր հրապարակ է գցվում օսմանյան դեսպանության կողմից՝ եվրոպական հասարակական կարծիքը քնեցնելու համար»[200]։

Օսմանյան կայսրության ներքին կյանքին լավատեղյակ օտարերկրացիները հերքում էին թուրքական հերյուրանքները հայերի անջատողական գործունեության, մասնավորապես, համազգային ապստամբություն նախապատրաստելու մասին։ Ահա մի վկայություն.

«Սասունի գավառը հանդարտ է և խաղաղված։ Ռազմական կետերի մշտական զորամասերում պահակազորեր են դրված։ Կոտորածից ողջ մնացածները քաղցած են, բայց փորձում են վերաշինել իրենց այրված գյուղերը։

Բիթլիսի հյուպատոսական մարմինը կոտորածից, ցրտից ու անոթությունից մեռնողների թիվը 3500-ի է հասցնում։ Մուշի գավառում ապստամբները պարտիզանական կռվի ձև են ընտրել՝ զորքերին ու քուրդ խմբերին դարանի մեջ գցելով՝ նրանք պահանջում են մի քանի բարեփոխումներ, որոնք գլխավորապես վերաբերում են տեղական վարչությանն ու տնտեսական վիճակին և չեն դիպչում կայսրության ամբողջությանը»։ (ՀԽՍՀ, Մ. Պ. Կ. Ա. Ֆ. 131, ց. 1, գ. 68)։

1904 թ. ամռանից թուրքական իշխանությունները ոչ միայն Սասունում ու Տարոնում, այլև հայաբնակ բոլոր շրջաններում ուժեղացրին զանգվածային հալածանքներն ու ճնշումները։

«Դեյլի նյուսի» թերթակիցը հուլիսի 1-ին գրում է. «Սասունում կատարված սպանությունների մի ցուցակ տեսա, որը ցույց է տալիս, որ թուրք խուժանը ազատ բաց է թողնված ժողովրդի վրա»։

«Ֆրանկֆուրտ ցայտունդը» նկատում է, որ Թուրքիան Եվրոպայի աչքից թաքցնում է «Հայաստանի լեռներում տեղի ունեցող անցքերը»։ Թերթը նշում է, որ Աբդուլ Համիդ II-ը երբեք չի վարանել և չի վարանի «հայկական վտանգը կրկին հեռացնելու արյան գետերով։ Պայմանները Հայաստանում ուղղակի անտանելի են...»[201]։ Հայաստանում տիրող վիճակը հատկապես բուռն հետաքրքրություն էր առաջացրել Ֆրանսիայում, այն դարձել էր քաղաքական կյանքում ամենաեռանդուն քննարկվող հարցերից մեկը. իրար էին բախվում երկու հակադիր կարծիքներ ու մոտեցումներ։ Պառլամենտում արտասանած ճառում արտաքին գործերի մինիստր Դելկասեն հայտարարեց, թե Սասունում հայերը ապստամբել են և, հետևաբար, «ճնշել յուրաքանչյուր ըմբոստություն ամեն մի կառավարության պարտականությունն է»։ Նկատի ունենալով այդ ճառը՝ Պրեսանսեն մայիսի 26-ին նրան դիմեց. «Թույլ տվեք Ձեզ մասնակից անելու այն խիստ ծանրակշիռ հեռագրերին, որոնք ստացվել են Թիֆլիսից ու Բաքվից, և որոնք մանրամասնորեն հաղորդում են, որ Սասնա կոտորածները ներկա ամսվա սկզբներին մեծ չափով վերսկսվել են»։ Ապա Պրեսանսեն պահանջում է միջոցների դիմել՝ «դադարեցնելու այս ոճիրները և սանձահարելու ու արգելելու տասը տարի առաջվա սոսկալի դեպքերի կրկնությունը»[202]։ Երեք օր անց Պրեսանսեն դժգոհում է, որ իր նախորդ նամակի պատասխանը չի ստացել. «Արյունը հոսում է, ժամանակը ստիպում է, հրամայական պահանջ կա, որ Ֆրանսիան պաշտոնապես և հրապարակավ հայտարարի, թե պարտավոր է այս ոճիրները դադարեցնել և 1895-ի սոսկալի աղետների կրկնության առաջն առնել»[203]։

Հունիսի 9-ին նա պառլամենտում հարցապնդում արեց ու պահանջեց, որ Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը ծովում նավերի ցույց կազմակերպեն՝ «արգելելու համար հայ ազգի բնաջնջումը»։

Հանդես գալով պատասխան խոսքով՝ Դելկասեն ընթերցեց Կ. Պոլսում ֆրանսիացի դեսպանի զեկուցագիրը։ «Ներկա վիճակը նման չէ 1894-ի կոտորածին։ Մի քանի գյուղեր են միայն քանդվել ու բնակչությունը սրի քաշվել, սակայն անհնար է աղետի ծավալը որոշել, որը, կարծում ենք, չափազանցված է»։ «Սասունում,— ասաց մինիստրը,— համախմբվել էին հայ հեղափոխականների կամ ֆիդայիների բազմաթիվ խմբեր», և թուրքական զորքերը լեռնաշխարհ բարձրացան «ապստամբությունը ճնշելու, որի համար սուլթանին չի կարելի մեղադրել[204]»։ Ջնայած դրան, նույնիսկ նա չկարողացավ ժխտել, որ Սասունում վայրագություններ են կատարվել և որ սուլթանին հավատալ չի կարելի։ Նա նշեց, որ հայերի նկատմամբ վայրագությունները թուրքական իշխանություններին «բնավ անախորժ չէին», «անմեղ զոհերի թիվը պարզ վկայում է, որ զինվորները շատ էլ չէին նեղվում ընտրության համար»։ Նկատի ունենալով սուլթանի քաղաքականությունը, Դելկասեն նշեց. «Բավական չէ արդարանալու համար ցուցադրել տրված հրամանները։ Պետք է պարզ կերպով հաստատել, որ այդ հրամանները անկեղծ են, որ նրանց

անկեղծությանը հավատում են ամենից առաջ նրանք, ովքեր դրանք գործադրելու հանձնարարություն ունեին»[205]:

Պառլամենտի այդ նույն նիստում Պրեսանսեն հայտարարեց. «1894-ի և 96-ի պատմությունն է, որ վերսկսվում է։ Միևնույն վայրերն են՝ Սասուն, Մուշ, միևնույն գյուղերն են՝ Գելիեգուզան, Տալվորիկ, Սեմալ և ուրիշներ... Միևնույն մարդիկ են՝ Զեքի փաշա, Ֆերիգ բեյ, զոհերն են միայն ուրիշ, որովհետև մի քանիսը բախտ են ունեցել, այո, բախտ, նահատակվել առաջին հարվածից և կենդանի մնացածների հետ չենթարկվել մեծ մարդասպանի հրահանգած ոճիրներին»։ Դիմելով կառավարությանը, նա ասաց. «Բողոքներ դուք արել եք... Ձեզ հետ բողոքել են նաև Անգլիան և Ռուսաստանը։ Բայց սուլթանը գիտե, թե ինչ արժեն այդ բողոքները, երբ նրանց հետևից չկա հաստատ որոշում՝ հասնելու նպատակին, և ձեռնպահ չմնալ գործողություններից, եթե դրանք անհրաժեշտ դառնան»։ «Հիշեցեք,— շարունակեց նա,— որ 1894-ի Սասունի ջարդերով արյունոտ վարագույրն էր միայն, որ բարձրացավ, որովհետև ժամանակին դարման չեղավ չարիքին... Նույնիսկ Զեքի փաշան և Ֆերիգ բեյը գործից չհանվեցին։ Ֆրանսիական կառավարությունը Թուրքական ջրերը նավեր մտցրեց միայն այն բանի համար, որ Թուրքիան ֆրանսիական մի քանի հարուստներից վերցրած պարտքերը չէր վերադարձնում, իսկ երբ մի ամբողջ ժողովրդի արյուն է հոսում, նա էական որևէ քայլի չի դիմում»։

«Եթե դուք չեք ուզում թույլ տալ վերսկսելու մի մեծ ոճիր, որ ոչ միայն մի եղերափորձ է՝ ընդդեմ մարդկության, այլև գեբագույն մի վտանգ՝ Արևելքի ու աշխարհի խաղաղության համար, ապա առաջարկում եմ Ձեզ (Անգլիայի ու Ռուսաստանի հետ) բարեհաճել անհրաժեշտ դիմումներ անել Կ. Պոլսում։ Առաջարկում եմ, իհարկե, պաշտպանել այդ դիմումները նույնպիսի մի ցույցով, որով դուք գոհացում ստացաք չորս տարի առաջ։ Առաջարկում եմ ապահովագրել ձեզ մի այնպիսի ապագայից, որ այժմ դեռ կարող եք հեռացնել, բայց վաղը կարող է խույս տալ ձեզնից, ինչպես և մեզնից»[206]։

Եվրոպական պետությունների եսասեր, անբարոյական քաղաքականությունը նկատի ունենալով, Քիյարը «Պրո Արմենիայում» գրեց. «Միայն Աբդուլ Համիդի երեսը չէ, որ կարմիր է պլշկված։ Այդ սարսափելի արյան ցայտերը հասնում են նաև ուրիշ ժողովուրդների ղեկավարներին, որոնց Հոմերոսն անվանում է ժողովուրդներին լափողներ»։ «Դեյլի նյուսը» 1904 թ. հուլիսի 1-ին գրեց. «Մեր դեսպանը, նոր խռովությունների առաջն առնելու համար, իր ցանկությունների մեջ ուրիշներից անշուշտ ետ չի մնում, սակայն ինքը և պաշտոնակիցները հրահանգ են ստացել բավականանալ միմիայն իրականությունը հասկանալով ու բողոքելով։ Բառը, որ պիտի դադարեցներ առևանգումը, կողոպուտը և բռնաբարումը, դեռ չէր արտասանված»։

Այդ տարիներին օսմանյան վայրագ քաղաքականության մերկացմամբ և հայ ժողովրդի արդար դատի պաշտպանությամբ, բացի Պրեսանսեից և Ժորեսից, հանդես եկան միջազգային ճանաչում ունեցող այնպիսի առաջադեմ գործիչներ, ինչպիսիք են Պասսին, Ա. Ֆրանսը, Կլեմանսոն, Լերուա-Բոլքեոն, Քիյարը, Բերարը, Դ'Էստուրնելը, Գոհիեն, Ձեմբան, Ռուանեն, Դը Կոնստանսը՝ Ֆրանսիայում, Բրայսը, Ստիվենսոնը, Մակքոլը, Դիլոնը, Ռամզեին, Բիտը՝ Անգլիայում, Վանդերվելդը, Ռեկալյուն, Գնիսը, Լորանը, Եանսոնը, Էրբերան և Պիքարը՝ Բելգիայում, Վիրխովը, Լամբրեխտը, Բեռնշտայնը, Բեբելը, Կաուցկին, Լյուքսեմբուրգը, Լիբկնեխտը, Լեփսիուսը, Հարդենը, Լեհմանը, Ռորհբախը՝ Գերմանիայում, Վան Կոլլը՝ Հոլանդիայում, Բայերը՝ Դանիայում, Լոմբազոն, Ֆերրին, Ա. Ջիբրիանին, Ֆ. Գարիբալդին՝ Իտալիայում և ուրիշներ։

Հայ ժողովրդի արդար դատի պաշտպանների շարքում էին ռուսական մտավորականության և հեղափոխական շարժման բազմաթիվ ներկայացուցիչներ։

ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սասունի 1904 թվականի իրադարձությունների ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է լավ ըմբռնել դրանց իմաստը։

Ինչպիսի՞ն էր այդ իրադարձությունների բնույթը։ Դրանք իրենցից ի՞նչ էին ներկայացնում՝ քաղաքական որոշակի ծրագիր ունեցող ապստամբությո՞ւն, պարտիզանական կռի՞վ, թե՞ ինքնապաշտպանություն կամ գոյապայքար։

Թուրքական պատմագրությունը այն համարում է ապստամբություն, որը նախապատրաստեց ու իրականացրեց դաշնակցական կուսակցությունը։

Մինչդեռ իրողությունը հետևյալն է։

Սուլթանը որոշել էր Սասունը դատարկել հայերից և այդ անել նրանց բնաջնջման միջոցով, որը, բնականաբար, ոտքի հանեց սասունցիներին։ Սասունցին զենք վերցրեց ոչ թե օսմանյան կայսրությանը հաղթելու, այլ միայն գոյություն ունենալու իրավունքի համար։ Սասունի ինքնապաշտպանությունը ապստամբություն համարելու դեմ հանդես էին գալիս նաև որոշ դաշնակցականներ։ Օրինակ, այդ կուսակցության ոչ շարքային անդամ Վարդոն մամուլում մի քանի անգամ հանդես եկավ այդ տեսակետի քննադատությամբ։ Սակայն պատմագրության մեջ նման մոտեցումները հազվադեպ են։ Տիրապետողն այն կարծիքն է, որ 1904 թվին նախապատրաստվել և իրականացվել էր դաշնակցական կուսակցության կողմից և խնդիր ուներ «սուլթանին դաս տալ»։

Ընդհանրապես հայդուկության, նրա պայքարի բնութագրման, հայդուկների ղեկավարների գնահատման, քաղաքական կուսակցությունների հետ նրանց կապերի, ինչպես նաև այդ շարժման ղեկավարման գործում կուսակցությունների դերի շուրջը խեղաթյուրումները շատ են։ Ցանդրադառնալով բոլորին, բերենք միայն երկու օրինակ։ Խուքը վերաբերում է Վահան Փափազյանին, որը հայդուկներին վերագրել է վարկաբեկիչ իրաշարժություններ ու հարաբերություններ։

Ըստ նրա՝ հակասություններ կային ոչ թե հայդուկների ու դաշնակցական կուսակցության, այլ «դրսի» ու «ներսի» հայդուկների միջև։ Նա գրում է. «Երկարորեն, մերթ մեղմ, հաճախ բուռն ու կրքոտ վիճաբանությունները կշարունակվեին։ Կզգայի, որ իրենց մեջ անախորժ հարաբերություն ստեղծված էր, նկատելի էր, որ թաքնված ու զսպված մի բան կար դուրանցիների և դրսից եկած ուժերու միջև... Իշխանը և ես մեծ ճիգ գործ դրինք հանգստացնելու կրքերը։ Տիրող ծանր մթնոլորտը կարող էինք փարատել մենք՝ անկաշկանդ, իբրև խնդրից և իրենց ներքին հաշիվներից ու նկատառումներից դուրս մարդիկ։ Մեզ էր ուղղված բոլորի հայացքները»[207]։

Վ. Փափազյանը, խոսելով մի ժողովի մասին, գրում է, որ քննարկվող հարցը «Անդրանիկի և Գևորգ Չաուշի անախորժ փոխհարաբերությունների խնդիրն էր։ Հրայրն օգտագործել էր Վարշգեսի ներկայությունը և հեղինակությունը՝ վերջ տալու ներքին այդ պառակտմանը։ Անդրանիկի և Գևորգ Չաուշի ձգված հարաբերությունների դարմանը կգտնեն վերջինիս ժամանակավորապես Տարոնից Վան փոխադրելով»[208]։ Ճիշտ չէ։ Երբեք Անդրանիկի և Գևորգի միջև հատուկ քննարկում պահանջող հակասություններ ու «ձգված հարաբերություններ» չեն եղել։ Նրանք ոչ միայն մտերիմ ընկերներ, այլև համախոհներ էին։ Իրականում լարված հարաբերություններ կային ոչ թե Անդրանիկի ու Գևորգի միջև (և Հրայրն էլ աշխատում էր այդ հարաբերությունները կարգավորել), այլ Անդրանիկի ու Հրայրի միջև, որոնք կրում էին ոչ թե անձնական, այլ սկզբունքային բնույթ, վերաբերում էին ինքնապաշտպանական կռիվների տակտիկայի ու ստրատեգիայի առանցքային հարցերին։

Ինչևիցե, Սասունի 1904 թ. իրադարձությունները «դաշնակցական ապստամբություն» և ընդհանրապես՝ ապստամբություն համարելը կեղծիք է, որ ստեղծվել է սուլթանական պալատում՝ եղերական իրադարձությունների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար։ Եվ տարօրինակ է, որ դափինների հետևից վազող որոշ գործիչներ սուլթանի նենգությունը չէին ուզում նկատել ու կրկնում էին նրա հնարած կեղծիքը։

Եվ ահա Սասունի իրադարձությունները վերլուծելու համար դրվում են ապստամբության սխեմայի մեջ և փնտրում են, թե որն էր հայերի պարտության պատճառը, կարծես թե այլընտրանք կար և մի բուռ սասունցիներ կարողանալու էին հաղթել օսմանյան հզորությանը։

Օսմանյան իշխանությունների դեմ հայդուկների կռիվն ինքնապաշտպանական էր։ Հայդուկները քաջ գիտեին, որ իրենք սուլթանին հաղթել չեն կարող, բայց և անհավասար մարտի ելան՝ հանուն հայ գյուղացու կյանքի, հանուն նրա պատվի ու արժանապատվության։

Ըստ այդմ էլ միանշանակ ասել, թե Սասունի կռիվներում հայերը պարտվեցին, ճիշտ չի լինի։ Ընդհակառակը, հիմքեր կան ասելու, որ սասունցիներն այս կռիվներից, ըստ էության, հաղթող դուրս եկան։

Նրանք ձախողեցին Սասունը բնաջնջելու, սասունցիներից դատարկելու սուլթանի մտադրության կատարումը։ Ոչ միայն սասունցին մնաց Սասունում, այլև Սասունում մնացին հայդուկային կազմակերպված խմբեր, ինքնապաշտպանության ջոկատներ։ Այստեղ էին Գևորգը, Մակարը։ Սասունն ընկճված չէր։ Պայքարը շարունակվում էր։

գրքերը լայն արձագանք ունեցան։ Նրանք հայկական շրջաններում խանդավառ տրամադրություն ստեղծեցին, տասնյակ հազարավոր մարդկանց մեջ ամրապնդեցին ազատագրական պայքարին մասնակցելու վճռականությունը։ Սասունի դեպքերի ազդեցության տակ ու նրանցից անմիջապես հետո Թուրքերի ու քրդերի հետ բախումներ եղան Էրզրումում, Վանում, Արճեշում։

Որոշ տեղերում մակերես դուրս եկան Թուրք-քրդական հակասությունները։ Խարբերդում համիդիեներին իշխանությունները զինաթափեցին, նրանցից խլեցին նույնիսկ հագուստը, պատճառաբանելով, թե «այժմ արդեն չեն կարող գալ հայ ֆիդայիները»։ Առանձին տեղերում փորձեր արվեցին ամբողջ քուրդ բնակչությանը զինաթափելու։

Իշխանությունները դեռևս զենքի տակ գտնվող համիդիեներին տեղից տեղ էին փոխադրում, անորոշ վիճակում պահում։ Համիդիեներն ասում էին. «Ո՞ւր ենք գնալու, չգիտենք, արդյո՞ք Մակեդոնիա, Ռումելիա, Ալբանիա, թե՞ Սասուն։ Երեք տեղն էլ գնալ կլինի, վերադառնալ չի լինի... Տաճիկի միաքն է մեզ կոտորել տալ... Վա՜յ մեր օրին»։

Սուլթանը պրովոկացիոն ջարդեր ու հալածանքներ հրահրելով՝ չկարողացավ թեթևացնել երկրում խորացող տնտեսական ու քաղաքական համազգային բնույթ ընդունած ճգնաժամը։ Գնալով դրությունը ավելի ծանրացավ, վայրագ բարքերն ու հալածանքները երկիրը կանգնեցրին բարոյալքման առջև[209]:

1904 թ. իրադարձությունները նկատելի բարերար ազդեցություն ունեցան նաև Թուրք և քուրդ աշխատավորության քաղաքական հասունացման վրա։ Նրանք սկսեցին կասկածանքով վերաբերվել, իսկ առանձին դեպքերում՝ ընդդիմանալ սուլթանական քաղաքականությանը, փաշաների, խաների, բեկերի ու շեյխերի կամայականություններին։ Վանում, 1906 թ., Թուրք ընդհատակյաները թռուցիկ էին փակցրել, որում ասվում էր. «Մենք՝ մահմեդականներս, մինչև այժմ հանցավոր էինք համարում հայ հեղափոխականներին, նրանց անվանելով խռովարարներ։ Մինչև այժմ, կուրորեն ենթարկված լինելով կառավարության հարստահարություններին ու ճնշումներին, կարծում էինք, թե այդ է մեր ճակատագիրը, որին պարտավոր էինք հնազանդվել մինչև վերջ։ Իսկ այժմ բացվել են մեր մտքերն ու աչքերը, և մենք էլ ենթարկվելով հայերի վիճակին ու բախտին, ձայնակցում ենք նրանց բողոքներին ու հայտարարում, որ վերացնենք այս խիստ ճնշումներն ու հարստահարությունները, որոնք այլևս անտանելի են։ Անուղղակի տուրքերը, դատարանական զեղծումները, կաշառակերությունը և պաշտոնական ողջ խայտառակությունները մեր ժողովրդին ծայր աստիճանի թշվառության ու հետադիմության մատնեցին, որոնց այլևս չենք կարող դիմանալ»[210]։ Ճիշտ է, այս մտածողությունը լայն տարածում չգտավ և օսմանյան տիրակալներին հաջողվեց Թուրք ժողովրդին դեռ երկար ժամանակ արբեցնել շովինիստական ու կրոնական ֆանատիզմով, բայց անժխտելի է, որ Թուրք հասարակության մեջ ծայր էին առել լուրջ խմորումներ։

Սասունի հերոսամարտից հետո քաղաքական որոշ շրջաններ կրկին բարձրացրին Հայկական հարցը։ Կաթողիկոսը և դաշնակցության ներկայացուցիչներ Հ. Սարաջյանը, Ս. Ավետյանը և Լորիս Մելիքյանը կազմեցին մի պատվիրակություն և հասան մինչև ԱՄՆ։ Նրանց ընդունեց պրեզիդենտ Ռուզվելտը։ Հայերը պրեզիդենտին խնդրեցին աջակցել Հաագայի միջազգային դատարանում Հայկական հարցը քննելու։

Պատմությունը կրկնվում էր։ Այդ նույն Ռուզվելտը, որի գրչին են պատկանում հետևյալ խոսքերը. «Թուրքիայի հայ հպատակների տանջանքները բարձրորեն դարման ու բուժում են աղաղակում։ Այդ տանջանքները ցնցում են ամբողջ մարդկային ցեղի հումանիստական զգացմունքը», հայերի խնդրանքին 1906 թ. փետրվարի 20-ին պատասխանեց, որ ավելի պատճառաբանված կլիներ, եթե այդ խնդիրը (դատարան) մտցվեր մի այնպիսի կառավարության կողմից, որն ստորագրել էր Բեռլինի 1878 թ. դաշնագիրը։ ԱՄՆ-ը հրաժարվեցին նաև Հայկական հարցին նվիրված միջազգային կոնգրես հրավիրելու նախաձեռնությունն իրենց վրա վերցնելուց[211]։

Հարկ է նաև նշել, որ Եվրոպայի միջամտության հարցը հայկական շրջաններում լայնորեն էր քննարկվում, և նա այս կամ այն քաղաքական կուսակցության միանշանակ ծրագիր չդարձավ։ Այդ հարցը ծնվում էր քաղաքական որոշակի իրադարձություններում և երբ վրա էր հասնում հիասթափությունը, հրապարակը թողնում էր։ Օրինակ, «Հնչակ» թերթը, մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունից հիասթափված, 1897 թվականին գրել է. «Մենք մեր հեղափոխական գործը բոլորովին չենք կարող համարեցնել այս կամ այն պետության շա-

հերին։ Պետք է ստեղծել, առաջ բերել իրողություններ, և այդ պետություններն են, որ ստիպված են իրենց շահերի հարմարեցումը փնտրել մերինի մեջ։ Մենք հայ հեղափոխության մահազանգը հնչեցրած կլինենք հենց այն րոպեից, երբ կմտածենք շարժվել այս կամ այն պետության շահերի թելադրանքին և իղձերին համեմատ։ Դա չի լինի հեղափոխություն, այլ մի արտաքին ուժի քաղաքական գործակալություն, ինչ որ հեռու է եղել մեզնից և հեռու էլ կմնա մինչև վերջ։ Հայ հեղափոխությունը իր ուրույն ընթացքը պիտի շարունակի, համաձայն իղձերին և պարագաներին, առանց մեկ ու մյուս պետության քաղաքական խաղալիքը, գործիքը դառնալու»։ Իսկ մի քանի տարի անց «Հնչակը» իր հույսը կապում էր մեծ տերությունների աջակցության և միջամտության հետ։ «Հեղափոխականի հրամայական պարտքը պետք է լինի ժողովրդին հասկացնել,— գրեց նա,— որ եթե եվրոպական տերությունները մինչև այժմ ակտիվ չմիջամտեցին և իրենց ձեռքը չվերցրին Հայկական հարցի վերջնական լուծումը, դրա գլխավոր պատճառն այն էր, որ ուժ՝ տեսական, կովող, մեծածավալ ուժ երևան չհանեցինք...», որովհետև «առանց ուժ երևան գալու չի խանգարվի եվրոպական պետությունների շահերը, իսկ առանց այդ շահերը խանգարելու միջամտություն չի լինի»[212]։

1906 թ. «Հնչակը» նորից է հիասթափություն ապրում և իր օգոստոսի համարում գրում. «Չեկավ մեր փրկությունը սուլթաններից, չեկավ ցարերից, չեկավ և այն պետություններից, որոնք հրապարակային խոստումներ էին տվել մեզ։ Այս վերջիններս իրենց արդահատանքի բառերի ծորակը բաց թողին, ուրիշ ոչինչ... Չորս պատերի մեջ բանտարկված, պրկված ըստրուկին կմնար իր ազգության հարցը լուծել։ Ու այդ միակ ճարը բնական այն ուղին էր, որ մենք դեռ շատ վաղուց բռնած պետք է լինեինք, փոխանակ ծառայական հոգի ցույց տալու, ուրիշների դուռը ծեծելու և մուրացկանություն անելու։ Ժողովրդային շարժումների, կռվի, ապստամբության, հեղափոխության մեջ պիտի որոնեինք մեր ազատագրության բանալին։ Դրանից դուրս ուրիշ ելք չկա։ Ու մենք ընտրեցինք, ավելի ուղիղն ասած, իրերը մեզ ստիպեցին այդ ուղին ընդունել. այդպես էլ եղավ»[213]։

Նման տատանումներից զերծ չմնաց նաև Անդրանիկը։ 1904 թ. իրադարձություններից նա եզրակացրեց, որ հայդուկային

պայքարը ազատագրության միջոց չէ։ Հայդուկային շարժումը կարող է հաջողության հասնել, եթե նա ստանա որևէ հզոր տերության հովանավորությունն ու օգնությունը։ «Սասունցին,— գրում է նա,— մշեցին, խլաթցին հրացանը անգամ մը ևս այն ատեն միայն առնելու են ձեռքերնին, երբ այդ հրացանը պետության մը պահեստից է, որ իրենց կուգա։ Անանկ հարյուր մոսինով, երկու հարյուր բերդանով, աչքը դեպի փամփուշտի ճամփան, պետության դեմ կռիվ չէ մղվի»[214]։

Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները 1904 թ. հուլիսի 14-ին գրեցին Պոլսից, որ ռեֆորմների մի ծրագիր կազմեցին «Անատոլիայի այն վիլայեթների մասին, որոնք բնակեցված են հայերով։ Ռուսական դեսպանը այն հանձնեց Բ. Դռանը»։

Ցարական դիվանագետ Լոբանովին են պատկանում հետևյալ խոսքերը. «Թուրքահայ հարցը Ռուսաստանի համար ոչ թե արտաքին, այլ ներքին հարց է»։ Չնայած դրան, ցարական կառավարությունը առանձնակի եռանդ չէր դրսևորում սուլթանի հայաջինջ քաղաքականության առաջն առնելու։ Նա գործնականում հայկական շարժման նկատմամբ որդեգրեց թշնամական դիրք։ Դա իր արտահայտությունը գտավ նաև Անդրկովկասում Գոլիցինի հայատյաց քաղաքականության մեջ։ «Ռուսաստանի և մասնավորապես Անդրկովկասի հեղափոխական շարժումների վերելքից վախեցած, Նիկոլայ II-ը շահագրգռված էր, որ Ռուսաստանին հարևան Արևմտյան Հայաստանում պահպանվի հանգստություն և կարգ ու կանոն։ Ցարական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին սասունցի փախստականների մուտքը Անդրկովկաս, որպես «անհանգիստ տարրեր»։ Թուրքիա վերադարձող հայերին ընդունելու վերաբերյալ Պետերբուրգում Թուրքիայի դեսպանի պաշտոնական դիմումի կապակցությամբ, Կովկասի փոխարքա Գոլիցինը արտաքին գործերի մինիստրությանը հասցեագրված նամակում վճռականապես դեմ է արտահայտվում դրան, որովհետև «Անկասկած Բ. Դուռը մեզ մոտ կուղարկի հայկական շարժման բոլոր հեղափոխականներին ու ագիտատորներին և ընդհանրապես ամենաանհանգիստ և անհուսալի տարրերին՝ Անդրկովկասը նորից լցնելով հազարավոր և նույնիսկ տասնյակ հազարավոր թուրքահայերով»[215]։

Ցարական կառավարությունը բոլոր միջոցներով խոչընդոտում էր արևելյան հայերի կողմից Սասունին որևէ օգնություն

թրի 11-ին 200 զինված հայեր անանկատ անցնում են ռուս-թուրքական սահմանը։ Հաջորդ օրը ռուսական սահմանապահները իրենք ևս անցնում են սահմանը, հայերին շրջապատում են և պահանջում առանց դիմադրության հանձնվել թուրքերին։ Հայդուկները հարկադրված զենքերը վար են դնում։ Թուրքերը բոլորին ոչնչացնում են։ «Հայերի շրջանում հեղափոխական շարժումների վերաաշխուժացման նշանները նկատի ունենալով,— Բայազետից գրում է ռուս գործակալ Իվանովը,— թուրքական կառավարությունը ձեռնարկում է ռազմական ծավալուն միջոցներ։ Պլաստունների (ռուսական սահմանապահ ջոկատ) մասնակցությունը ֆիդայիների դեմ ուղղված գործողություններին հայ ազգաբնակչության վրա ուժեղ տպավորություն է թողել, որովհետև, եթե հայերի մեջ մնացել է դրսից որևէ օգնություն ստանալու հույս, ապա այդ միայն Ռուսաստանից էր։ Ընդհանրապես սխալ կլիներ կարծել, թե թուրքահայերը թշնամաբար են վերաբերվում Ռուսաստանին, և այս տեսակետից նրանք բաժանում են Ռուսաստանի իրենց ցեղակիցների զգացմունքները։ Թուրքահայերը, հանձինս Ռուսաստանի, տեսնում են բնական պաշտպանի»։ Ռուսական զինվորական գործակալ Իվանովը գտնում է. «Ռուսաստանի շահերին չի ծառայում այն, որ իրենք օգնում են Թուրքիային՝ հայկական շարժումները ճնշելու համար։ Ընդհակառակը, Ռուսաստանի համար շատ ավելի օգտակար է պաշտպանել ու աջակցել թուրքահայերին, հանձինս որոնց Թուրքիայի դեմ պատերազմի ժամանակ Ռուսաստանը կունենա գործնական ու օգտակար դաշնակից...

Այս առումով,— եզրակացնում է Իվանովը,— ֆիդայիների նկատմամբ ... հաշվեհարդարին, թուրքերի հետ միասին, պլաստունների մասնակցությունը հազիվ թե արժանի է հավանության»[216]։

Ակնհայտ է երկու մոտեցում և երկու վերաբերմունք Հայկական հարցին։ Դա Ռուսաստանում նոր բան չէր։ Միշտ էլ ռուսական ռեակցիան մերժել է հայկական շարժումները և աջակցել դրանց դեմ պայքարին, և միշտ էլ ռուսական առաջադիմական շրջանները ողջունել են հայկական շարժումները և աջակցել դրանց ծավալմանը։ Չնայած դրան, նույնիսկ ցարական կառավարությունը 1904 թ. հանդես եկավ ի պաշտպանություն

արևմտահայության և գործնական քայլեր կատարեց հայկական նոր կոտորածների առաջն առնելու համար։

1904 թ. ապրիլի 15-ին Անգլիայի արտաքին գործերի միներստր Լանզդոուն հեռագրում է Պետերբուրգի անգլիական դեսպանին. «Ռուս կառավարությունը տեղեկացել է, որ տաճկական շատ մեծ զորք է կենտրոնացված Հայաստանի այդ մասում (Տարոնում և Սասունում), թվով ենթադրաբար մոտ 38 հազար մարդ, մի ուժ, որ ռուս կառավարությանը թվում է չափազանց, որ կարող է հասցնել լուրջ խառնակությունների և գուցե հայերի ընդհանուր կոտորածի։ Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հրավիրել է Բ. Դռան ուշադրությունը այդ խնդրի վրա և հույս է հայտնել, որ դեսպան Քոնբրը ևս հրահանգ կստանա նույնը անելու»[217]։

Անգլիայի քաղաքականության իսկական բնույթը պարզելուն օգնում է Բիթլիսի նրա փոխհյուպատոսի ապրիլի 2-ի հեռագիրը դեսպան Օ'Քոնբրին։ Բիթլիսի նոր նշանակված կուսակալ Ֆերիգ բեյի այն հարցին, թե հայդուկների դեմ պե՞տք է ուժ գործադրել, փոխհյուպատոս Հեթքոթը պատասխանում է դրական, «եթե միայն վստահ եք, որ զինվորներն ու սպաները չեն չափազանցի իրենց տրված հրահանգները և չեն խառնի անմեղներին հանցավորների հետ»։ Բայց Հեթքոթը միաժամանակ վճռականապես հերքում է թուրքերի տարածած այն լուրերը, թե հայերն են նախահարձակն ու գրգռողները, թե իբր հայդուկները բռնությամբ գրավել են մահմեդական 24 գյուղ։ «Նրան (Ֆերիգ բեյին),— գրում է փոխհյուպատոսը,— սկզբում փոքր-ինչ անակնկալ պատճառեց, երբ ես հայտնեցի իմ համոզմունքը, որ եթե երկրում մի քիչ արդարություն հաստատվեր, կոմիտեներն ու ապստամբները փոքր աջակցություն միայն կգտնեին»[218]։

Բ. Դուռը ապրիլի վերջերին անգլիական դեսպանին հավատացնում էր, որ Հայաստանը լցված է հայդուկներով, որ միայն Վանի ու Բասենի շրջանում 3—4 հազար հայդուկ կա։ Իսկ անգլիացիներն էլ համաձայն էին դա ճշմարտության տեղ ընդունել։ Այսպես, Վանի անգլիական փոխհյուպատոսը ապրիլի 11-ին դեսպանին գրեց. «Հեղափոխականները շարունակ գալիս են Վան, քրդերի նման հագնված, և քրդերը պատրաստակամություն են ցույց տալիս օգնելու նրանց սահմանն անցնելու և ամեն կերպ աջակցելու՝ լիուլի վարձատրության փոխարեն»[219]։

Ճիշտ է, Սասունի դեպքերի ընթացքում նման դիվանագի-

տական գրագրությունները աշխուժացան, սակայն տերություններից և ոչ մեկը ոչ մի գործնական քայլի չդիմեց։

Մայիսի 12-ին նույն Օ'Քոնորը հեռագիր ուղարկեց Բիթլիսի փոխհյուպատոսին, որով հանձնարարվում էր ռուսական և ֆրանսիական հյուպատոսների հետ, ինչպես այդ արվել էր 1896 թ. Զեյթունում, գնալ հայդուկների մոտ և նրանց ու թուրքական կառավարության մեջ միջնորդի դեր կատարել՝ նրանց ղեկավարներին առաջարկել հանձնվել ու դրսից եկածներին, երկրից անվտանգ դուրս հանելու պայմանով, պահանջել «քրիստոնյաների համար կյանքի ապահովության երաշխավորություն, մահմեդական հարևանների զինաթափում, քաղաքական բանտարկյալների ներում, զենքերի հանձնում, մի քանի տարով հարկահանության դադարեցում և այլն»[220]։

Անգլիայի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ բրիտանական կառավարությունը իր միջնորդությունն է առաջարկել Բ. Դռան և ապստամբների միջև բանակցություններ սկսելու։ Բ. Դուռը համաձայնել է։

Պոլսից մայիսի 17-ին հայտնեցին, որ «Մուշի անգլիական և ռուսական հյուպատոսները և Վանի ֆրանսիական հյուպատոսը իրենց կառավարություններից հրաման ստացան համաձայնության գալ, քննություն սկսելու Բիթլիսի վիլայեթի կացության մասին»[221]։

Սակայն այս բոլորը միայն խոսքեր էին և գործնական ոչ մի արդյունք չունեցան։ Դեռ ավելին, Հայկական հարցում անգլիական կառավարությունն ավանդական ձևով երկդիմի քաղաքականություն էր վարում։ Նա խոսքով պաշտպանում էր հայերին, իսկ գործով օգնում օսմանյան կառավարությանը՝ հայկական շարժումները ճնշելու, որովհետև դրանք ռուսական կողմնորոշում ունեին։

«Էքոն» հունիսի 11-ին գրեց. «Այն իրողությունները, որոնց վրա Պրեսանսեն Ֆրանսիայում և Ջ. Բրայսը այստեղ ուշադրություն հրավիրեցին, բավականին զարհուրելի ու սպառնալի են։ Լորդ Փերսին ինքն էլ խոստովանեց, որ 25 հայ գյուղեր կրակի են տրվել, մինչ Դելկասեն ընդունում է, որ այդ գյուղերի բնակիչները սրի են քաշվել»։

Լորդ Փերսիի «երեկվա ճառը պարզապես թուրքին հրավեր էր՝ անպատիժ շարունակելու իր վայրագությունները։ Դիզրաելիի օրերից այս կողմ սրանից ավելի անպատիվ խոսք լսված չէր բրիտանական նախարարի բերանից»։

Մենք պետք է գործով վերացնենք այս «ճառի թողած ցավալի տպավորությունը», թույլ չտանք, որ թուրքերը հոշոտեն հայերին։ Դեռ 1899 թ. Համիդը Վիլհելմին ասել էր, որ վաղ թե ուշ Թուրքիան հեռանալու է Եվրոպայից։ Վերջինս գովեց իր սրտակից բարեկամի իմաստությունն ու ասաց. «Թուրքիայի ապագան Փոքր Ասիայում է»[222]։ Իսկ Պոլսում գերմանական դեսպաններից մեկը խոստովանել է. «Արևելքում, ուր էլ գնանք՝ Պոլիս, Եգիպտոս, հայերը մեր քաղաքականության միակ ընդդիմադիր ուժն են»։ Եվ պատահական չէր, որ կայզերական Գերմանիան այս անգամ էլ հայերի նկատմամբ թշնամական դիրք գրավեց։

Իտալիան էլ անհանգստության նշաններ ցույց չէր տալիս. նույնիսկ պառլամենտում կատարված հարցապնդումից հետո, որը կառավարությունից պահանջում էր ակտիվություն հանդես բերել Հայկական հարցը լուծելու համար, Հռոմը որևէ քայլ չարեց։

ԱՐՅԱՆ ԴԵՄ՝ ԱՐՅՈՒՆ

Գևորգի շուրջն էին հավաքվել 70—80 հայդուկներ։ Նրանց մեջ էին Սպաղանաց Մակարն ու Մարգեն, Գալեն ու Հագեն, Մանուկն ու Ախոն՝ իրենց ջոկատներով։ «Թե որ մեռնել կա, էլ ինչո՞ւ մեռնել շղթան ձեռքներիս։ Ավելի լավ չէ՞ մեռնել Գևորգի կողքին»։ Հանդիպումը հուզիչ էր։ Ծեր Մակարը լաց էր լինում։ Սասունի ժողովուրդը, վերադառնալով գյուղերը, դրանք այրված էր գտել։ Սասունցին վերականգնում էր իր քանդված օջախը։ Թուրքերին հաջողվել էր զինաթափ անել ոչ միայն Սասունի, այլև Դաշտի գյուղերի բնակչությանը։ Անասելի տանջանքների էին ենթարկվում բանտարկված 1000 տարոնցիները։ Դաշտում հազարավոր մարդիկ սրի քաշվեցին, ամենուրեք թալան ու ավերածություն էր։ «Կարմիր ջարդից հետո սպիտակ կոտորած,— գրում են Մուշից,— Սասունի և Դաշտի արյունահեղություններով, հալածանքներով, անգթություններով անարդ բրոնապետությունը չի բավականանում, այլ ուզում է Մշո գեղեցիկ դաշտն ամբողջությամբ քանդել։

Այժմ իրողությունն այն է, որ ամեն գյուղից ամենաքիչը 20—30 տուն գաղթել է։ Կառավարությունը դալալների միջոցով հայտնեց ժողովրդին, թե աղքատները թող ազատ հեռանան Դիարբեքիր, նույնիսկ դյուրություններ ու ճանապարհածախս տվեց, իսկ նրանց հեռանալուց 5—10 օր անց մուհաճիրներ է բերում ու հաստատում հեռացողների հողերի վրա»։ «Սով է, բայց արհեստական սով... Ո՞վ է տեսել կամ լսել, որ ցորենի շտեմարան կոչվող Մշո դաշտը այդ օրվան հասներ...»[223]։ Թուրքական իշխանությունները մեծ ավերածություններ էին կատարել նաև Սասունի միջնաբերդում՝ Տալվորիկում, Գելիեգուզանում, Իշխանձորում, Տափքում։ Սվիններով սպառնալիքի տակ սասունցիներին հարկադրել էին գյուղերում զորանոցներ կառուցել, որտեղ տեղավորվել էին 500 թուրք զինվոր։ Սրանք, հայդուկներին փնտրելու պատրվակով, խուզարկություններ էին կատարում, զբաղվում թալանով։ Եռանդուն գործունեություն էին ծավալել հարկահավաքները։ «Աչքներս որ կողմ դարձնենք,— գրում է ականատեսը,— աչ ու ձախ աղքատություն, խեղճություն է։ Թշվառությունն ամենուրեք համայնական է... Հայը, Թուրքը, քուրդը՝ բոլորն էլ, առհասարակ, անորոշ վիճակում, մութ ապագայի խաբկանքների մեջ, տարուբերվում են ջղագրգիռ, հուսահատ ու անձկոտ...»[224]։ «Տուրքերը թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում անասելի ձևով են հավաքվում»։ Դրա համար էլ ժողովուրդը հայդուկների հասցեին ասում էր. «Մեզ թողին դուշմանի ձեռ, իրենք գնացին»։

Գևորգը հանձնարարություններ տվեց հայդուկներին, իսկ ինքը 15 հոգով դերադասեց որոշ ժամանակ մնալ Մառնիկի շրջանում։ Դաշտի բնակչությունը վտանգի մեջ էր։ Դրա համար էլ Գևորգը նպատակահարմար գտավ հայդուկների հիմնական ուժերը տեղափոխել Դաշտի գյուղերը։ Նա իր խմբով Մառնիկից հսկում էր Դաշտին և անհրաժեշտության դեպքում կայծակի արագությամբ հարվածում բռնության դիմած թուրքական զորքին ու ոստիկանությանը։ Ջանբեզարները Սասունի շրջանում գործում էին արյունախում Կուլի-խան բեկի ղեկավարությամբ։ Այդ ջոկատներում հիմնականում հավաքված էին բախտախնդիր, պորտաբույծ և ավազակային տարրեր։ Ջանբեզարները կառավարությունից ստանում էին բարձր աշխատավարձ, ձրի հագուստ, սնունդ և այլն։ Կառավարությունը, հարկեր հավաքելու պատրվակով, այս ջոկատներն օգտագործում էր հայկական ու քրդական շարժումների դեմ։ Այսպիսով, սուլթանը ազատագրական շարժումների դեմ պայքարում գործարքի մեջ մտավ քրեական հանցագործների, ավազակների հետ։ Ժողովուրդը արնաքամ էր լինում։ Դրա համար էլ հայդուկներն իրենց գլխավոր հարվածը ուղղեցին ջանբեզարների դեմ։

Գևորգն իր խմբով անցնում էր գյուղից գյուղ, և ամենուրեք նրան դիմավորում էին մեծ ոգևորությամբ։ Բռնությունից մեջբերած գյուղացին ուղղվում էր։ Նրա մեջ կրկին արթնանում էր սասունցու մարտնչող ու ազատասեր ոգին։

Թուրքական բանակն ու ոստիկանությունը, Դաշտի գյուղերն ընկած, բռնի միջոցներով հայ բնակչությունից զենքեր էին հավաքում։ Գևորգը հայդուկներին հանձնարարեց գյուղերում եղած պիտանի հրացանները հավաքել, պահել թաքստոցներում և թուրքերին տալ միայն հին ու կոտրտված զենքերը։ Գևորգը վճռեց գործողությունների դիմել նաև այն թուրքերի ու քուրդ աղաների դեմ, որոնք տիրացել են հայերի հողերին, տներին և նույնիսկ գյուղերին։ Տարոնի Օրկնոց գյուղը տնքում էր Միրզա բեյի կեղեքումից։ Նա իր զորքով ու կանանցով այստեղ եկավ գյուղացիներից զենք հավաքելու և տիրացավ գյուղին։ Սր չէր լինում, որ նա կամ նրա մարդիկ թալան ու ավերածություն չկատարեին։ Գյուղացիներին պարտադրեցին ձրի կերակրել ու սպասարկել զինվորներին, հարեմին ու սպասարկող անձնակազմին, որոնց թիվը 150-ից անցնում էր։ Ամեն օր, երեկոյան, Միրզա բեյը գյուղացիների հաշվին խնջույք էր կազմակերպում, զվարճանում և ապա բարձրանում իր հարեմը։ Մի գիշեր Միրզան իր հերթական կերուխումից հետո ձիերի դոփյուն լսեց։ Գևորգը 30 հայդուկների հետ շրջապատել էր Միրզա բեյի տունը։ Նա մոտեցավ մուտքին և ատրճանակը պահելով պահակների վրա՝ պահանջեց արթնացնել Միրզային։

— Միրզա բեյ, ի՞նչ է, մեռա՞ծ ես, որ Գևորգ Չաուշին այսքան սպասեցնել ես տալիս,— հնչեց Գևորգի ձայնը։

Միրզա բեյը դողալով գլուխը պատուհանից դուրս հանեց ու կմկմալով ասաց. «Հրամեցե՛ք, հրամեցե՛ք»։

Երկու պահակ վախվորած դուռը բաց արին և նրան առաջնորդեցին բեյի սենյակը։ Գևորգի ետևից գնում էին Գալեն ու Մանուկը։

— Միրզա բեյ, այս կողմերով անցնում էի, որոշեցի հան-

դիպել քեզ ու բարեել,— ասաց Գևորգը,— խառն օրեր են։ Գյուղացիների հետ լավ վարվիր։

Բեյը սարսափից քարացել էր։

— Իմ գլխի վրա տեղ ունես, Գևորգ,— ապա շուռ գալով ծառաներին՝ հրամայեց,— ոչխար մորթեք։

— Մենք ճամփորդ ենք, ժամանակ չունենք։ Մնաք խաղաղությամբ։ Աստված ոչ անի, թե մեկ էլ հարկադրված լինեմ քո դուռը բանալ,— ասաց Գևորգն ու գնաց դեպի ելքը։

Քիչ անց սարսափած բեյի ունկերը թմբկահարեցին հեռացող ձիերի սմբակների դոփյունը։ Գիշերվա լռության մեջ տպավորությունն այնպիսին էր, ասես մի ամբողջ բանակ էր արշավում։

Օրկնոց գյուղից 5 կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում Մկրագոմ գյուղը։ Այդ գյուղի տեր ու տնօրենը Հասան աղան էր, որն իր վայրագություններով Միրզա բեյից ետ չէր մնում։ Գևորգն իր հեծյալ ջոկատով մտավ գյուղ և ուղիղ գնաց Հասան աղայի տունը։ Աղայի քուրդ պահակները խուճապահար իրար խառնվեցին։

— Այստեղ կանչեք Հասան աղային,— հրամայեց Գևորգը։ Վախվորած շարժումներով վար իջավ Հասան աղան։

— Բարև՛, Գևորգ, ներս հրամեցեք,— մի կերպ կարողացավ արտաբերել Հասան աղան։

— Դու նամարդ ես, քո հացը ուտել չի լինի։ Քեզ քանի անգամ եմ ասել, որ հայն ու քուրդը պետք է հաշտ ու խաղաղ ապրեն, թշնամություն չանեն, միասին կռվեն թուրքերի դեմ։ Դու ինձ հետ համաձայն ես եղել, իսկ հիմա տիրացել ես հայկական գյուղին և թալանում ու տանջում ես ժողովրդին։

Հասան աղան ծունկի իջավ Գևորգի առաջ, գլուխը կախեց ու ասաց.

— Ճշմարիտ ես, Գևորգ, ես խաբվեցի, նամարդություն արի։ Արժանի եմ, խփիր։

Գևորգը զայրույթով ասաց.

— Վերջին անգամ եմ զգուշացնում։

Առավոտյան Հասան աղան հավաքեց գյուղի տղամարդկանց, ջերմ ճառ արտասանեց հայերի ու քրդերի եղբայրության մասին և հավաստիացրեց, որ ինքը ամեն ինչ կանի հայերի կյանքի ու կայքի ապահովության համար։

Իսկ Միրզա բեյը, Գևորգի հեռանալուց հետո, ձի նստեց ու

հասավ Մուշ։ Կառավարչին պատմեց գիշերվա դեպքը և զորք խնդրեց։

Հայդուկների վրեժխնդրությունից ահաբեկված Սասունի կառավարիչ Ջևադ էֆենդին Վերին Սասունից, որն իր նստավայրն էր, հեռացել և բնակվում էր Մուշ քաղաքից ոչ հեռու գտնվող Սեմալ գյուղում։ Բայց դա փրկություն չէր։ Հայդուկները երևում էին նաև Դաշտի գյուղերում, որտեղ Գևորգ Չաուշի հայտնվելու լուրը Մուշի կառավարչին շանթահարեց։ Նա, զայրույթից կարկամած, քայլում էր իր նստավայրում՝ հայհոյանքների կարկուտ տեղալով հայերի հասցեին։

Նա իր մոտ կանչեց Քյոսա Բինբաշուն և հրամայեց զորքերով անմիջապես մտնել այդ գյուղերը, տակնուվրա անել, կրակի տալ, Գևորգ Չաուշին բռնել և Մուշ բերել։

Թուրքական զորքերը լցվեցին հայկական գյուղերը, բայց հայդուկներն ասես չքացել էին։ Լուր ստացվեց, որ Գևորգն իր խմբով Արտխոնք գյուղում է։ Մինչև այնտեղ չորս ժամվա ճանապարհ էր։

Գևորգը հասնելով Արտխոնք, իր մոտ է կանչում ռես Պետրոսին ու ասում. «Գնա Մուշ և կառավարչին ասա, որ Գևորգը իր խմբով ձեր գյուղում է»։ Պետրոսը նախ զարմացավ, ապա փորձեց հրաժարվել նման հանձնարարություն կատարելուց։ Սակայն հանդիպելով Գևորգի վճռական ու խիստ հայացքին, գնաց Մուշ։

Պետրոսի գնալուց հետո Գևորգը գյուղացիներին հավաքեց ու ասաց. — Մենք այժմ մեկնում ենք, քիչ հետո թուրքական զորքերը այստեղ կլինեն։ Բողոքեք մեր դեմ, մեզ հայհոյեք, որ ձեզ ձեռք չտան։

Գիշերը Գևորգը մտնում է Շեխլան գյուղը։ Այստեղ նրան բողոքում են Թելո աղայի սանձարձակություններից։ Գևորգը շտապում է Թելոյի տուն։

— Թելո որ ասում են, դո՞ւ ես,— հարցնում է Գևորգը անսպասելիորեն տուն խուժելով։ Սարսափահար գաղանը տեղից վեր է թռչում և ընկնում Գևորգի ոտները։ Գևորգը զզվանքով ասում է. «Թելո, գիշեր ժամանակ մտել եմ քո տուն՝ քեզ մի առակ պատմելու։ Թե որ իմ միտքը հասկանաս, քեզ կներեմ, թե որ չհասկացար, շանսատակ եմ անելու։ Ժամ ու պատարագ չտեսած սասունցի մի հայ,— պատմում է Գևորգը,— Մուշ է գալիս և, որովհետև կիրակի օր էր, ժամ է գնում։ Երբ պատա-

բաց կատարող վարդապետը ողջույն է տալիս, ժողովրդի մեջ սկսվում է սասունցուն անսովոր շարժում։ Նա կարծելով, թե մարդիկ կատաղած իրար պիտի կոտորեն, ժամից դուրս է գալիս ու փախչում։ Ճանապարհին հանդիպելով ժամ գնացող մի խումբ մարդկանց, աղաղակում է. «Հայեր, ո՞ւր եք գնում, ժամի ժողովուրդը կատաղած իրար միս է ուտում»։ Զարմացած մարդիկ հարցնում են՝ ինչո՞ւ։ Սասունցին պատասխանում է. «Պատճառը չգիտեմ, ախպեր, բայց էդ խառնակությունը վարդապետից սկսվեց»։ Վերջում Գևորգն ավելացրեց. «Թելո, հասկացա՞ր իմ առակի միտքը։ Կատաղած շունը կատաղեցնում է իր կծած շներին։ Ժողովրդի մեջ ամեն խառնակություն սկսվում է մեկից։ Մեր կռիվը ժողովուրդը իրար խառնող սուլթանի դեմ է։ Դու ինչո՞ւ ես կատաղել և ժողովրդի միսն ես ուտում»։ Թելոն երդում է տալիս այլևս հայերին նեղություն չտալ և դառնալ Գևորգի զինակիցը։

Այս շրջանում Գևորգը հայդուկային շարժման համար երեք հիմնական խնդիր է դնում։ Դրանք են. զինված պայքար բոլոր այն աշիրեթապետերի դեմ, որոնք չեն դադարում ճնշումներ գործադրել հայերի նկատմամբ։ Ահաբեկել և զսպել բոլոր այն ցեղերին, որոնք գործիք են դարձել թուրքական իշխանությունների ձեռքին։ Եռանդուն շարժերով ոգևորել և հավատներշնչել ժողովրդին։

Մի օր Գևորգը գնում էր Ալիջան գյուղ։ Նա գյուղացիներից իմանում է, որ գյուղին տիրացած Քերիմ բեյը արյունռուշտ գազանի նման է իրեն պահում։ Գևորգը իր մոտ կանչեց Տիգրանին.

— Տիգրան, ես Քերիմ բեյին նամակ էի ուղարկել, որ հայերին չնեղի, բայց նա ինձ չլսեց։ Վերցրու չորս մարդ, ծպտվեք քրդական հագուստների մեջ, մտեք Քերիմի տունը և նրա վերջը ավեք։

Տիգրանն իր ընկերների հետ հասավ Քերիմի տուն։ Այստեղ մեծ խնջույք էր։ Երբ ներս մտան, Քերիմը չնկատեց, բայց երբ աչքն ընկավ անծանոթներին, ձեռքը դեպի մաուզերը տարավ։ Հենց այդ ժամանակ հնչեց ատրճանակի ձայնը, և Քերիմը ձեռքն այս անգամ արդեն դեպի կուրծքը տարավ։ Հավաքվածներն իրար խառնվեցին։ Քերիմը մի ձեռքով կուրծքը բռնած, իսկ մյուսով՝ մաուզերը, հասավ տան շեմին, բայց Տիգրանի ատրճանակից արձակած գնդակը նրան գետնին տապալեց։ Տիգրանը,

օգտվելով խառնաշփոթից, անհետացավ։ Իսկ նրա չորս ընկերները, այդ թվում Մոսիկն ու Մկրոն, զոհվեցին։ Գևորգը Տերգեվանքից գնում էր Հավատորիկ։ Դիշեր էր։ Հայդուկներին նկատում են թուրքական զորքերը։ Հայդուկները թեքվում են դեպի Բերդակ, ձորի մեջ, թմբերի ետևում տեսնում են թշնամու զինվորների։ Անելանելի վիճակ էր։ Բայց Գևորգին խորթ էր խուճապի ենթարկվելն ու գլուխը կորցնելը։ Անմիջապես գտնում է ելքը։ Երկու հայդուկների հրամայում է իջնել ձորը, աղմկելով իրենց վրա բևեռել թշնամու ուշադրությունը և ապա հեռանալ Դաշտի ուղղությամբ։ Մյուսներին հրամայում է պառկել իրարից 100—200 մետր հեռավորության վրա։ Ոչ մի դեպքում չկրակել և սողալով գնալ դեպի ձորի մուտքը, դիրքեր գրավել ու սպասել իր հրամանին։

Թուրքական զորքերը, հետապնդելով Մանուկին և Ախոյին, հնարավորություն են տալիս մյուս հայդուկներին շրջանցելու իրենց։ Հայդուկները թիկունքից հարվածում են թշնամուն։ Օգտվելով թուրքերի շփոթությունից, Մանուկն ու Ախոն կարողանում են դուրս գալ պաշարման շղթայից, հասնել Նորաշեն։

«Անցյալ շաբաթ,— գրեց «Հնչակը» 1905 թ. օգոստոսին,— Մուշի կողմերում մի հայ հեղափոխական խմբի և թուրքական զորքերի միջև եղած ընդհարումի հետևանքով 12 զինվոր սպանվում է, հեղափոխականների կորուստների թիվը հայտնի չէ։ ... Մուշի գյուղերից մի փախստական պատմում է, որ այդ ընդհարման պատճառով Մշո դաշտի և Բուլանըխի գյուղերը լրիվ կողոպտված են զորքերի, համիդիեների և բաշիբոզուկ խուժանի կողմից, մեծ թվով մարդիկ սպանված և վիրավորված են»։

Գևորգը քաշվում է լեռները։

Վերը նշված դիպվածներն ու ահաբեկչությունները մի շարք թուրք ու քուրդ աղաների զսպեցին. «Ավելի լավ է գիշերվա գայլի բարեկամը դառնալ, քան թշնամանալ նրա հետ»,— մտածում էին նրանք։

ՀԱՅՆ ՈՒ ՔՈՒՐԴԸ ՀԱՇՏ ՈՒ ԽԱՂԱՂ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆ

Գիշերը կես էր դառել, երբ Գևորգն իր խմբով հասավ Օրկնոց։ Խումբը գյուղից դուրս մնաց. Գևորգը երկու հոգու հանձնարարեց մտնել Միրզա բեյի ննջարանը և դաշույնով նրան

տրյանել։ Հանձնարարությունը կատարվեց։ Ապա նա կանչեց Օրկնոցի գյուղացիներից մեկին ու ասաց.

— Վաղը կգնաս Մկրագոմ, Հասան աղային կտեսնես ու կասես, որ ես զիշերն այս կողմերով անցա, բայց ժամանակ չունեցա նրան հյուր գնալու։

Խումբն առաջ շարժվեց։ Մկրագոմ գյուղին չհասած՝ նրանց դեմ ելան մի խումբ գյուղացիներ։ Նրանք Գևորգին պատմեցին իրենց անտանելի վիճակի մասին։ Գևորգը, իր հետ վերցնելով 10 հայդուկներ, գնաց դեպի ոստիկանների բնակատեղին։ Զիներով մտավ բակ և տեսնելով աղմուկից բակ դուրս եկած ոստիկաններին, հանգիստ ասաց.

— Ի՞նչ եք ուզում այս խեղճ ժողովրդից։ Եթե հիմա ես էլ ձեզ նման վարվե՞մ։

— Փաշա, մենք ի՞նչ անենք, մեզ այդպես էր հրամայված, խնայեցեք մեզ։

— Ես փաշա չեմ, ես Գևորգ Չաուշն եմ։

Այդ անունը լսելով՝ ոստիկանները պապանձվեցին։

— Հենց այժմ ձեզ կարող ենք ոչնչացնել, բայց այս անգամ խնայում ենք։ Հեռացեք Մուշ և կառավարչին ասեք, որ հայի արյան դիմաց արյուն է թափվելու։

Մի քանի ժամ հետո ոստիկանները հեռացան գյուղից։

1904 թ. կռիվներից հետո, ինչպես արդեն նշվեց, սուլթանը հանձնարարություն տվեց՝ հայերին թույլ չտալ վերադառնալու Սասուն, գտնել միջոցներ ու պատրվակներ՝ նրանց հողերը խլելու և մուսուլմաններով բնակեցնելու համար։

Նկատի ունենալով այդ՝ Գևորգը հայդուկներին ու տանուտերերին հանձնարարեց թույլ չտալ, որ հայ գյուղացին իր հողը վաճառի թուրքին կամ քրդին։ Եթե գյուղացին կարիքից դրդված է հողը վաճառում, հանգանակության միջոցով օգնել նրան։ Միջոցներ ստեղծել նաև ետ գնելու գյուղացիներից արդեն խլված հողերը։ Այս առումով առաջնակարգ նշանակություն ուներ կառավարության կողմից Կովկասից բերված և Սասունում բնակեցրած շուրջ 5000 մահմեդականների հարցը։ Բանն այն էր, որ չերքեզներին կառավարությունը ոչ միայն բնակեցրեց հայերի հողերում, այլև նրանց զինեց և արտոնյալ իրավունքներ տվեց քրդերի և, մասնավորապես, հայերի նկատմամբ։ Հայերը որոշեցին օգտագործել քրդերի ուժերը՝ եկվոր մահմեդականներին Սասունից հեռացնելու համար։ Քրդական ցեղախմբերը անընդ-

հատ հարձակումներ էին գործում, հայկական գյուղերում տեղավորված չերքեզներին սպանում, թալանում, նրանց համար ստեղծում անապահով վիճակ, մինչև որ նրանց մի մասը հարկադրված հեռացավ Սասունից։ Գևորգի ջանքերի շնորհիվ մի քանի քուրդ ցեղապետներ խուսափեցին թուրքական իշխանությունների հանձնարարությունները կատարելուց, չէին մասնակցում հայերի վրա հարձակումներին։ Հայդուկներին հավատարիմ մնաց Խճող գյուղի դերվիշը՝ իր յոթ եղբայրներով։ Գևորգի հետ բարեկամական հարաբերություններ էր պահպանում ցեղապետ Տրպոյի Սաիդը, քրդական շեկո ցեղի մի քանի ներկայացուցիչներ և այլն։

1905 թ. Բերդակում հրավիրված հայդուկների ժողովում Գևորգը ասաց. «Մնացինք մենք, մեր յուղը և մեր ալյուրը։ Պետք է գործենք այնպես և այնքան, ինչքան մեր ալյուրը ջուր կվերցնի։ Սասունն ընկավ, մնացինք բաց Տարոնի ու Դուրյանի մեջ, ամեն քայլափոխը մեկ-մեկ վտանգ է։ Պետք է քուրդ բեյերի հետ հարաբերության մեջ մտնենք և ամեն կերպ աշխատենք նրանց մեր կողմը պահել»։

Գևորգին ձեռք գցելու թուրքական զորքերի ու ոստիկանության բոլոր ջանքերն ապարդյուն անցան։ Նա ուրվականի նման հայտնվում էր, հարվածում ու անհետանում։ Թուրքերը կատաղած էին, հուսահատված ու ամոթահար։ Իսկ ձմեռը լեռներից աստիճանաբար իջնում էր Դաշտ։ Գևորգին փնտրողները դատարկ ձեռքերով վերադարձան իրենց զորանոցները։

Ձմեռը անհարմարություններ էր ստեղծում նաև հայդուկների համար։ Գևորգն իր խմբով բարձրացավ Մառնիկ և ձմեռն անցկացրեց ձյունե տնակներում, թաղիքների վրա։ Երբ գարունը բացվեց նա հավաքեց հայդուկներին և ասաց. «Սասունն ու Դաշտը պետք է բաժանենք մեր խմբերի միջև, յուրաքանչյուր խումբ գործելու է իրեն կցված գյուղերում։ Խմբերը գործելու են ըստ իրադրության թելադրանքի։ Նորից ու նորից արագ տեղաշարժեր, հարկ եղած դեպքում կայծակնային հարված և լայն շարժման տպավորություն ստեղծեք»։

Գևորգը 15 հայդուկներով շարժվեց Կուրտիկ։ Ճանապարհին նա մտավ Փեթար գյուղը։ Այստեղ տեր ու տիրական էր Յուսուֆ աղան, որը գյուղացիներին պարտքերի դիմաց դատապարտել էր ճորտային աշխատանքի։

Գևորգի խումբը մտավ Յուսուֆ աղայի բակը և առանց ու-

շադրություն դարձնելու բակում եղած պահակներին, բարձրացավ նրա ննջասենյակը։ Վերջինս քնած էր։ Արթնացրեց։

— Ի՞նչ ես ուզում այս խեղճ գյուղացիներից։ Այդ ինչպե՞ս եղավ, որ գյուղացիների հողերը քո սեփականությունը դարձան։

— Էֆենդի, ես գյուղացիներին պարտք էի տվել, բայց նրանք երկու տարում վերադարձնել չկարողացան և հոժարակամ պարտքի դիմաց իրենց հողերը տվեցին։

— Ստում ես, մեկ ոսկու դիմաց երկու տարի անց գյուղացուց 20 ոսկի ես ուզում, որտեղի՞ց տա։ Յուսուֆ աղա, վերջ տուր, թե չէ վատ կլինի։

Եվ շուռ գալով՝ հեռացավ։

Նույն գիշեր խումբը հասավ Ալվառինջ, որտեղ գյուղացիները, չդիմանալով Քասիմ բեկի հալածանքներին, թողել էին գյուղն ու հեռացել։ Գևորգը մտավ Քասիմի տունը, բարձրացավ նրա ննջասենյակը, արթնացրեց, կնոջը մյուս սենյակն ուղարկեց, իսկ ամուսնուն գնդակահարեց։

Յուսուֆ բեկը Մուշից, կառավարչի տրամադրած զորքով, վերադառնում էր Փեթար, երբ լուր ստացվեց Քասիմի սպանության մասին։ Զորքը շուռ եկավ Ալվառինջ, իսկ Յուսուֆը մի քանի ոստիկաններով մտավ Փեթար, նոր թալան կազմակերպեց և գնաց Մուշ՝ հայդուկների պատժից խուսափելու համար։ Գևորգը որոշեց Յուսուֆին ոչնչացնել հենց Մուշում, թուրք կառավարչի, զորքի ու ոստիկանության քթի տակ։

Նա Իսրոյին, Թադեին, Մանուկին և Մխոյին հանձնարարեց այդ գործը։ Նրանք ծպտված հասան Մուշ։ Իրար ուսի բարձրանալով՝ Ախոն ու Մանուկը պատուհանից ներս մտան, իսկ Թադեն ու Իսրոն դրսում սպասեցին։

Առավոտյան սպանված Յուսուֆի գրպանում մի թուղթ գտնվեց. «Զուլումիդ համար դու պիտի մեռնես։ Սարհատ»։

Այս սպանությունն ահաբեկեց թուրքերին. հայդուկների երկար ձեռքը մինչև իրենց տունն էր հասել։

Այդ օրերին Գևորգին հայտնեցին, որ Դեղձմեր գյուղի բեկն իր զինված ջոկատներով շրջում է բնակավայրերով և կողոպտում հայ գյուղացիներին։ Գևորգը հանձնարարում է խասգյուղցի երկու հայդուկի գնալ Ալվառինջ և այդ բեկի հաշիվը մաքրել։ Նրա կարգադրությունը կատարվում է ճշտությամբ։ Իսկ մի քանի օր հետո Ալվառինջ է գալիս ինքը՝ Գևորգը։ Նա իր շուրջն է հավաքում տեղի քրդերին, զրուցում, նվերներ տալիս և այնտեղից

անցնում Գոմս գյուղը։ Այս գյուղում էր բնակվում բանտից նոր աղատված տխրահռչակ ավազակ Մեհմեդ Ալին։ Իշխանությունները Գոմս գյուղը նվիրել էին նրան, որը, իր նման հիսուն ավազակների հետ, բնակվում էր գյուղում և գործադրում ամեն տեսակի բռնություններ։ Գևորգը գերի է վերցնում Մեհմեդ Ալուն և նրանից պահանջում վերջ տալ հայերի նկատմամբ ավազակություններին։ Ահաբեկված Ալին իսկապես դադարում է հայերին հետապնդելուց, մի բան, որ Մուշի ոստիկանական շրջաններում կասկած է ծնում նրա նկատմամբ։ Մեհմեդ Ալուն հսկողության տակ են վերցնում։ Նա հարկադրված հեռանում է Գոմս գյուղից։

Գևորգը Մառնիկում էր, երբ նրան այցելության եկավ քրդական նշանավոր ցեղապետ Ղասրմ բեկը։

— Ղասրմ բեկ, դու բարով եկար, ես քո մասին շատ եմ լսել, բայց առաջին անգամ եմ տեսնում։

— Գևորգ Ջաուշ, քեզ հյուր եմ եկել, եկել եմ քեզ հետ աղ ու հաց կիսելու և եղբայրանալու։

— Հյուրն աստծունն է, մեր աղ ու հացը քեզ հալալ լինի։

— Գևորգ, թուրքերի հետ վերջնականապես խզվել եմ։ Թուրքը մեր դեմ ամեն տեսակի չարիքներ գործեց, բայց մենք՝ քրդերս, խելք չունենք։ Իմ պապերը հայերի հետ հաշտ ու խաղաղ են ապրել և ապրել են պատվով ու նամուսով։ Օսմանցիները մեր մի քանի մեծերին խաբեցին և իրենց գործիքը դարձրեցին հայերի դեմ։ Մեր ձեռքերը արյունոտվեցին հայերի արյունով, մեր հացը հարամ եղավ։ Օսմանցիները մեր ցեղի շատ անվանի մարդկանց վերացրել են, մյուսներին աքսորել, որի հետևանքով ցրվեց մեր ցեղը, կորցրեց իր վաղեմի հեղինակությունը։ Քուրդը հայի վրա ձեռք բարձրացնելու իրավունք չունի, որովհետև դրանից օգտվում են միայն օսմանցիները։

Հյուրասիրելուց հետո Գևորգը հարցնում է.

— Բեկ, ինչո՞ւ ուզեցիր անպատճառ ինձ տեսնել։

— Լավ մարդուն ո՞վ չի ուզի տեսնել, մանավանդ, քեզ նման քաջին, որին, ասում են, գնդակ չի դիպչում։

— Բայց դրանից քեզ ի՞նչ օգուտ։ Չէ՞ որ վաղը, երբ կառավարությունն իմանա, թե դու հետս տեսնվել ես, թշնամի աչքով պիտի նայի քեզ և մի օր էլ գուցե ձերբակալի։

— Կառավարությունը հիմա էլ, եթե կարողանա, ինձ կձեր-

բակալի։ Իսկ քեզ պես բարեկամ ունենալը ինձ շատ հոգսերից կազատի։

— Եթե տղամարդու պես խոսք ես տալիս, որ կդառնաս հայ ազգի բարեկամը, այդ ժամանակ ես ու դու կլինենք ճշմարիտ բարեկամներ, իսկ եթե ոչ, հաշվիր, որ իրար չենք տեսել։

— Համաձայն եմ։ Խութի անունից խոսք եմ տալիս։

— Ես մի քանի քուրդ աղաների հետ ևս պայման ունեմ։

— Ովքե՞ր են։

— Բեկ, եթե ես այդ աղաների անունները քեզ հայտնեմ, ուրեմն քո անունն էլ պետք է նրանց ասեմ։ Եվ եթե ձեզնից որևէ մեկը մատնիչ լինի, ուրեմն վաղը բոլորդ կձերբակալվեք։ Թող ժամանակ անցնի, իրար լավ փորձենք, նոր միայն իրար ամեն ինչ ասենք։— Ապա ձայնեց.

— Աղ ու հաց բերեք։

Բերեցին։ Գևորգն աղն ու հացը բռնեց. Ղասըմ բեկը ոտքի կանգնեց, նրանք հացը կտրեցին, թաթախեցին աղի մեջ ու կեցան։ Ապա իրար մատ կտրեցին և արյունները խառնեցին։ Հետո հրացանի ու սրի առաջ կանգնած՝ երդում տվին հավատարիմ լինել միմյանց։ Որպես հավատարմության նշան՝ Գևորգի հայդուկներից երկուսը՝ Հակոն ու Մոսիկը, անցան ծառայության Ղասըմ բեկի մոտ, իսկ վերջինիս երկու ծառաները՝ Հասեն ու Հասանոն, մտան հայդուկների խմբի մեջ։ Հասանոն Գևորգի թիկնապահն էր, անսահման հավատարիմ մի մարդ, որը բազմիցս իր կյանքը վտանգեց Գևորգին անխուսափելի մահից փրկելու համար։ Նա հերոսի մահով զոհվեց Սուլուխի կամուրջը պաշտպանելու ժամանակ, 1907 թ. մայիսի 27-ին։

Երբ Գևորգի ու Ղասըմ բեկի դաշինքի մասին լուրը հասավ Մուշ, Թուրքական զորամասը շարժվեց դեպի Ղասըմի բնակատեղին և գնդակոծեց։ Ղասըմ բեկին օգնության եկավ հայդուկների մի ջոկատ, որը, սակայն, չկարողացավ կասեցնել Թուրքական գերակշիռ ուժերի առաջխաղացումը։ Հայերն ու քրդերը ծանր կորուստներ կրեցին։ Ղասըմ բեկն իր ընտանիքով մի կերպ դուրս պրծավ ու փախավ, իսկ նրա բնակավայրը ավերվեց։

... Հայդուկների ժողով էր։ Քննարկվում էր քրդերի նկատմամբ վերաբերմունքի հարցը։ Շատերը դեմ էին քուրդ բեկերի ու աղաների, մասնավորապես Ղասըմ բեկի հետ կապեր հաստատելուն։ Գևորգը դեմ էր նման կարծիքներին ու բացատրում էր.

— Մենք նրա անունը կօգտագործենք քուրդ հասարակության մեջ։ Երբ նա մեզ հետ լինի, ավելի համարձակ ու ազատորեն կկարողանանք մեր քարոզչությունն առաջ տանել։ Անտարակույս, մեր գործունեության ողջ դաղտնիքները նրան չենք ասելու։ Նա մեր ազդեցության տակ է։ Երբ տեսնենք, որ սամին ջեղում է, այն ժամանակ փոկը մի լավ կձգենք, բայց քանի դեռ սայլը քաշում է, թող քաշի՝ որքան կարող է։

ՀԱՐՍԱՆԻՔ

Գևորգը 15 հոգու հետ ս. Հովհաննու վանքին հարող անտառում էր։ 1905 թվի գարնան վերջին օրերն էին։ Անտառը չքնաղ տեսք ուներ...

Հայդուկների խումբը ճաշի էր նստել։ Հանկարծ անտառից հնչեց պահապանների ազդանշանը, որ նշանակում էր, թե մարդ է մոտենում։ Գալեն ու Հագեն վեն թռան և քիչ անց վերադարձան մի երիտասարդ կրոնավորի հետ։ Ստեփան վարդապետն էր։ Ընդհանուր բարև տալով ասաց, որ Գևորգի հետ խոսակցություն ունի։ Գևորգը թե.

— Այս տղերքից ես գաղտնիք չունեմ, խոսի՛ր, վարդապետ։

Ստեփան վարդապետը դժվարանում էր խոսել, բայց Գևորգը պնդեց։

— Սուրբ Հովնանի վանքից եմ գալիս։ Հեղինի իշխան Վարդանի աղջիկ Եղսոն այնտեղ է և ինձ քեզ մոտ է ուղարկել։ Խնդրեց հայտնել, որ ուզում է քեզ տեսնել։ Ասաց. «Նրան տեսնեմ, երկու բառ փոխանակեմ ու թող ինձ սպանի»։

Վարդապետի խոսքերը պայթեցին ռումբի պես։ Դրանք այնքան անսպասելի էին, որ ներկաները հայացքներն ուղղած Ստեփանին, քարացել էին։ Կինը ուզում է հանդիպել հայդուկի հետ։ Իսկ այդ երիտասարդ մարդիկ հայդուկ դառնալով, երդվել էին մոռանալ կին, սեր, ընտանիք։

Գևորգի հոգին տակն ու վրա եղավ, նա գունատվեց և գլուխը խոնարհեց։ Ծանր լռություն էր, բոլորը շփոթված էին։

—Գևորգ, ես խոստացել եմ քո պատասխանը այսօր հասցնել Եղսոյին,— հնչեց վարդապետի ձայնը։

Գևորգը գլուխը բարձրացրեց և խուլ ձայնով ասաց.

— Հայտնիր, որ արդեն 20 տարի պսակված եմ զենքի հետ և երկրորդ անգամ պսակվել չեմ կարող։ Ես այսօր կամ վաղը՝

աստված գիտե։ Թող Եղսոն վերադառնա իր հայրական տունը։

Նա վեր կացավ, հեռացավ խմբից ու նստեց մի ծառի տակ։ Նրա հայացքի առջևով անցավ իր կյանքը։ 20 տարի. . Ինչ՞ որ ասես, որ գլխով չեն անցել։ Նա իրեն նվիրեց Սասունի դատին և հանուն դրա զոհեց ամեն ինչ։ Քանի՞-քանի անգամ է ինքը հրաժեշտ տվել կյանքին, բայց բոլոր այդ տարիներին հոգու խորաններում միշտ անթեղված է եղել Եղսոյի սերը։ Եվ բոլոր ջանքերը՝ խեղդելու այդ զգացումը, ապարդյուն են անցել։ Կռվի ԲԼԺ պահին թե մահվան սպառնալիքի առաջ, նրա դեմ հառնել է Եղսոն, որի սիրո ուժն է նրան վտանգներից պաշտպանել, և այժմ Եղսոյի միակ իղձն է հանդիպել, երկու խոսք փոխանակել ու կյանքին հրաժեշտ տալ։

Լռությունը խզեց Գալեն.

— Գևորգ, անաստված բան ես անում։ Եղսոն իր կյանքը քեզ է զոհել։ Մյուսները չգիտեն, բայց ես հո գիտեմ նրա սիրո պատմությունը։ Համաձայնիր, մեղք է։ Դուք պսակվեք, ես պատասխան կտամ հայ ազգին։

Նրան միացավ Հագեն։

— Նահատակի խնդրանքը մերժելը մեղք է, աստված չի ներ։

Նրանց միացան նաև մյուսները։ Բոլորը Գևորգին համոզում էին տեղի տալ, համաձայնել հանդիպելու Եղսոյի հետ, իսկ Արամը, ոտքի կանգնելով, հանդիսավոր հայտարարեց.

— Գևորգ, դու մեր ղեկավարն ես, և քո ասածները միշտ մեզ համար օրենք են եղել։ Այս հարցում մեր ասածը քեզ համար պետք է օրենք լինի։ Խոսքը հայդուկային կանոնների խախտման մասին է։ Դու ինքդ դրանք խախտելու իրավունք չունես։ Իսկ մենք բոլորս միասին կարող ենք։ Հայդուկը ամուսնանալու իրավունք չունի, բայց մեր մեջ դու և քեռի Մակարն եք ձեր ուսերին կրում հայդուկային կյանքի 20 տարիների բեռը։ Դու սովորական հայդուկ չես, այլ մեր շարժման սիրտն ու արյունը։ Եվ մենք գտնում ենք, որ դու ոչ միայն պետք է հանդիպես Եղսոյին, այլև պսակվես նրա հետ։

Լսվեցին ձայներ.

— Ճիշտ է, մենք համաձայն ենք։

Գևորգը լուռ մնաց։

Գալեն մոտեցավ Ստեփան վարդապետին.

— Գնացի՞նք, վարդապետ։

Հայդուկներին համակեց մի արտակարգ աշխուժություն։ Հայդուկային դաժան իրականություն էր ներխուժել մարդկային մի քնքուշ ջերմություն և տաքացրել արյունն աչքերն առած այդ մարդկանց հոգիները։ Դերբնական մի ուժ նրանց մի պահ կտրել էր դաժան իրականությունից և տարել մարդկային նուրբ զգացմունքների աշխարհը։

Լուռ էր միայն Գևորգը։

Ծառերի ետևից երևաց Գալեն և Գևորգին ասաց, թե Եղսոն սպասում է ընկուզենու տակ։ Գևորգը մոլոր քայլերով գնաց։ Երբ մոտեցավ, Եղսոն վեր թռավ, բայց հուզմունքից հազիվ ոտքի վրա մնաց։

— Գևորգ, ես գնամ տղաների մոտ, դուք խոսեք,— ասաց վարդապետը։

— Մենք խոսելիք չունենք,— դուրս թռավ Գևորգի շուրթերից։

Բայց Ստեփանն արդեն հեռանում էր։ Գևորգն ու Եղսոն կանգնեցին իրար դիմաց։ Նրանք այդպես էլ ոչ մի բառ չփոխանակեցին։ Գևորգը շուռ եկավ ու գնաց տղաների մոտ։ Ծառերի արանքից ընկուզենուն մոտեցան Գալեն ու Հագեն։ Նրանք Եղսոյին բերեցին հայդուկների մոտ։

Իսկ այստեղ արդեն ոչխար էին մորթում ու հարսանիքի պատրաստություն տեսնում։ Եվ երբ արևը մայր մտավ, բոլորը հավաքվեցին գետնին բացած սեղանի շուրջը։ Նրանք մոմեր վառեցին։ Գլուխները հակած, դեմ դիմաց կանգնած էին Գևորգն ու Եղսոն։ Ստեփան վարդապետը սուրբ գիրքը բռնած՝ աղոթում էր։ Ապա Գալեն առաջ եկավ, ձեռքին մի ատրճանակ։

— Եղսո քույրիկ, դու հայդուկի նշանած դարձար։ Սա էլ մեր հարսանեկան նվերը. կապիր մեջքիդ, թող փոխարինի պսակի մատանուն։

Սկսվեց խնջույքը, երգն ու պարը, որ տևեց մինչև ուշ գիշեր։ Առավոտյան վաղ խումբը ոտքի վրա էր։ Պետք է մեկնեին։ Գևորգը Եղսոյին հանձնեց Ստեփան վարդապետին և խնդրեց նրան տանել Փեթար, իշխան Պետոյի տուն, և շրջվելով դեպի Եղսոն, բոլորի ներկայությամբ ասաց.

— Եղսո, իմ ընկերների նվիրած ատրճանակն ամենաթանկ նվերն է։ Հայդուկի զենքը խիզախ ոգի է սիրում։ Այդ սուրբ զենքով խփիր թշնամուն, խփիր, որտեղ էլ լինի։ Իսկ եթե ստեղծվի վիճակ, երբ կարող ես թշնամու ձեռքն ընկնել, չվարանես ատրճանակի փողը քունքիդ մոտեցնել...

Նորապսակները բաժանվեցին...

Պսակադրությանը Մակարը ներկա չէր։ Երբ լսեց Գևորգի ամուսնության մասին, խռովքով լցվեց ծեր հայդուկի հոգին։ Նա գտնում էր, որ հայդուկային շարժման գլխավոր ուժը երիտասարդությունն էր, և Գևորգի ամուսնությունը վատ օրինակ կծառայեր մյուսներին։ Ամուսնացած հայդուկը հայդուկ չէր, և եթե մյուսները հետևեին Գևորգի օրինակին, ուրեմն շարժումը կկազմալուծվեր։ Նա չուզեց հանդիպել Գևորգին։ Սեխակ Մակարը հայդուկների ամենահեղինակավոր դեմքերից էր և նրա բռնած դիրքը կարող էր պառակտել շարժումը։

Թուրքական բանակը ողողել էր Մշո դաշտը, գրեթե բոլոր գյուղերում զորամասեր կային, ուժեղ հսկողության տակ էին վերցված բոլոր ճանապարհները։ Գևորգը մի ստվար խմբով Դաշտ իջավ և գնաց Խարս գյուղը։ Նրան զգուշացրին, որ գյուղում թուրքական վաշտ է տեղավորված, բայց նա պնդեց այդ գյուղում գիշերելու իր որոշումը։ Խումբը բաժանվեց չորս մասի և տեղավորվեց գյուղի կարևորագույն կետերը զբաղեցնող տներում։ Եվ այդ արվեց այնպիսի վարպետությամբ, որ գյուղում գտնվող թուրքերը ոչինչ չզգացին։

Գևորգը, Գալեն և մի քանի ուրիշ հայդուկներ տեղավորվում են Դավոյի Մարգարի տանը, որը գտնվում էր գյուղի հարավարևմտյան թաղում։

Հաջորդ օրը հայդուկների ժամապահները լուր են բերում, որ Մուշի կողմից զորք է գալիս։ Եվ իսկապես, Մուշում և Բիթլիսում իմացել էին, որ Գևորգը 30 հայդուկներով Խարսում է և հազարապետ Սուլեյման աղային ու Հյուսնի բեկին ուղարկել էին նրանց ոչնչացնելու կամ գերի վերցնելու։

Մարգարի տանիքից հեռադիտակով հետևելով թուրքերի առաջխաղացմանը, Գևորգը պարզ տեսնում է, որ թուրքական զորքերը, իրենց միացնելով ճանապարհամերձ գյուղերի զինվորական ջոկատներն ու քրդական զինված ուժերը, մոտենում են Խարս գյուղին։ Հարձակվողների մեջ էր նաև Ղասրմ բեկը՝ իր զինված ջոկատով։ Նա Գևորգին լուր է ուղարկում, որ հարկադրված մասնակցում է հարձակմանը, բայց իր ուժերին կարգադրել է կրակել երկինք։

Թուրքերն ու քրդերը շրջապատման մեջ են առնում Խարսը։

Մոտենալով գյուղին՝ Սուլեյման աղան կանչում է ռես Գասպարին և Պետրոսի Դավոյին ու հրամայում.

— Գնացեք հայտնեք Գևորգին, թող անձնատուր լինի։ Մեր բարեհաճ կառավարությունը նրան ներում է շնորհել։ Հայդուկները թող գան իրենց հպատակությունը հայտնեն և զենքերը հանձնեն։ Իսկ եթե չգան, գյուղը կայրենք և բոլորին կկոտորենք։

Գևորգը լրաբերներին հանձնարարում է գնալ թուրքական հրամանատարի մոտ և նրա հետ բանակցելով՝ ժամանակ շահել, մինչև ինքը որոշի անելիքը։ Նա կանչում է գյուղի ավագանուն և ասում.

— Եթե այսօր չկռվենք, բոլորս էլ տնով-տեղով կոչնչանանք։ Եթե կռվենք, բոլորս կազատվենք։ Մենք կթաքնվենք, գյուղի երիտասարդները թող մնան իրենց տներում։ Մնացածները պետք է զբաղվեն իրենց առօրյա գործերով և տպավորություն ստեղծեն, թե գյուղում հայդուկ չկա։ Խարսի ավագանին թող գնա թուրքերի մոտ և ասի, թե հայդուկները եկան, բայց անցան-գնացին։ Թող զորքերը խուզարկեն գյուղը, եթե մեզ գտնեն, այն ժամանակ կասեմ ինչ անենք։

Հայդուկները տեղավորվում են վեց տներում։ Թուրքական հրամանատարը մտնում է գյուղ։ Խարսի ավագանին նրան աղ ու հացով է դիմավորում։ Գասպարը ասում է.

— Իսկապես երկու օր առաջ Գևորգ Չաուշը եկել էր, բայց նույն օրը թողեց-գնաց։ Եթե ցանկանում եք, խուզարկեք գյուղը...

Սուլեյմանը հրամայում է խուզարկել գյուղը։ Բայց ապարդյուն։ Ոչ ոքի չեն գտնում։ Թուրքերը որոշում են մնալ գյուղում և ուրախ ժամանակ անցկացնել։ Այդ ժամանակ մի վաշտ մոտենում է Դավոյի Մարգարի տանը։ Զինվորները ներս են մտնում։ Գևորգը շրջապատված էր, բայց սառնասիրտ հետևում է դեպքերի զարգացմանը։ Թուրք սպան ինչ-որ բան կասկածելով՝ հրամայում է երդիկից և դռնից կրակ բացել։ Նա համոզվել էր, որ Գևորգը գյուղում է։ Վերջապես այդ մեծ հայդուկը ծուղակն էր ընկել։ Թուրքական մյուս ուժերը ևս շարժվեցին դեպի վերին թաղ, դեպի Մարգարի տուն։

Երբ նրանք արդեն խմբվել էին տան շորսբոլորը, Գևորգը ազդանշան տվեց։ Գյուղի վեց կետերից թշնամու վրա կրակ տեղաց։ Հայդուկները չէին երևում. նրանք կրակում էին թաքստոցից, իսկ թուրքերը խռնվել էին փողոցներում և չգիտեին, թե որ

ուղղությամբ փախչեն, որպեսզի կրակի օղակից դուրս գան։ Հայդուկները տներից ելնելով՝ ճակատային կռիվ են սկսում։ Սուլեյմանը փախչում է, ճանապարհին հանդիպելով Դավոյին՝ գոռում է. «Ասում էիր, թե ձեր գյուղում ոչ ոք չկա՞», և գնդակահարում է նրան։

Գևորգը այս տեսնելով, բղավում է.

— Շներ, անմեղ ժողովրդի՞ն եք կոտորում։ Գևորգը ես եմ։ Եթե փախչեք, ձեր թագավորի հացը ձեզ հարամ լինի։

Կռիվը սաստկանում է։ Մարտի մեջ են մտնում Խարսի երիտասարդները։ Նրանք փակել էին գյուղի նեղ փողոցներն ու կրակի տակ առել թուրքերին։ Նրանց հաջողվեց սպանել թուրքերի շեփորահարին և, ձեռք գցելով նրա շեփորը, թուրքական բանակին շփոթեցնող ազդանշաններ տալ։ Գյուղից դուրս գտնվող թուրքական մեծաթիվ ուժերը իրենց անելիքը չգիտեին, որովհետև նրանց հրամանատարները մնացել էին գյուղում և կրկվել զորամասերի հետ կապի միջոցներից, միայն մի վաշտ խրոխտ քայլերով անցավ գյուղի փողոցներով, բայց ընկնելով խաչաձև կրակի տակ, իր կազմի կեսը կորցրեց։ Կռվում էր ողջ գյուղը, նաև՝ կանայք ու երեխաները։

Սուլեյմանը, խմբավորելով իր ուժերը, հարձակման է անցնում, բայց անմիջապես վիրավորվում է և ետ փախչում։ Նրա օրինակին հետևում են մյուսները։ Խարսեցիների ձեռքն անցավ 100 հրացան։ Սպանված էր թուրքական բանակի 24 սպա և 60 զինվոր։ Մի քանի ժամ անց թշնամին ավելի մեծ ուժերով է հարձակման անցնում։ Բայց հաղթանակից արբած հայդուկներն ու գյուղացիները կռվում էին առյուծի պես։ Ամենատաք ու վտանգավոր դիրքը Գևորգինն էր։ Թշնամին, թաքնված խոտի դեզի ետևում, կրակի տակ էր առել նրան։

— Դուրս եկեք տղամարդու պես կռվենք։ Ի՞նչ եք կնկա նման պառկել դեզերի ետևում,— բղավում է Գևորգն ու հրացանից կրակ բացում դեզերի վրա։

Երեկոյան կողմ զորքը ետ քաշվեց, իսկ հայերը հավաքվեցին Մարգարի կալում։ Այդ ժամանակ Ղասրմ բեկը սրարշավ գալիս է Գևորգի վրա ու բղավում.

— Գևորգ Չաուշ, դու իմ ձեռքից ո՞ւր պիտի փախչես։

— Ղասրմ բեկ, քո գլխի ճարը տես։

Ղասրմ բեկի քողարկված խոսքերը հասկացնում էին, որ Մառնիկ տանող ուղիներում թուրքեր ու քրդեր չկան։

Գևորգը Խարս գյուղը լրիվ դատարկում է և գյուղացիներին տեղափոխում Խվներ և Ղասրմ բեկի պաշտպանության տակ գտնվող մյուս գյուղերը։ Հաջորդ օրը առավոտյան, երբ թուրքերը Խարս մտան, այնտեղ գտան միայն ծերունազարդ Հովոյին ու մի կույր աղջկա։

Խարսի կռվի արձագանքները մեծ էին։ Այդ հաղթանակը բարձրացրեց հայդուկների և հատկապես Գևորգի հեղինակությունը ոչ միայն հայերի, այլև քրդերի ու թուրքերի շրջանում։ Իսկ իշխանություններն ուժեղացրին հետապնդումները, ամենուրեք Գևորգին էին փնտրում։

Մի քանի օր անց Գևորգը ժողով հրավիրեց Հունան գյուղի մարագներից մեկում։ Նա, դիմելով հայդուկներին, ասաց.

— Այսուհետև մենք չենք կարող խմբով շրջել։ Կառավարությունը, իր ամոթալի պարտությունից կատաղած, սաստկացրել է հետապնդումները։ Վիճակն ավելի է բարդանում ռազմամթերքի պակասի պատճառով։ Մենք պետք է բաժանվենք փոքր խմբերի և ցրվենք տարբեր ուղղություններով։ Գլխավոր խնդիրը ռազմամթերք ճարելն է։

***

Գևորգի հաղթանակները մի քանի քուրդ ցեղապետների ևս հարկադրեցին հայդուկների հետ դաշինքի մեջ մտնել։ Այդ էր պահանջում նաև աշխատավոր քուրդը, որի համար Գևորգ Չաուշը դարձել էր հերոսության խորհրդանիշ։ Գևորգին իսկապես հաջողվել էր քրդական շրջաններում իր անձի նկատմամբ մեծ հավատ ու վստահություն ստեղծել։ Նա հիանալի տիրապետում էր քրդերենին, հաճախ էր նրանց այցելում, իսկ քրդական օգաներում նրա երևալը իսկական տոնի էր վերածվում։ Քուրդ ցեղապետների միջև ծագած վեճերի ժամանակ վիճող կողմերը հաճախ Գևորգի միջամտությանն էին դիմում։ Գևորգը քրդերին օգնության ձեռք էր մեկնում թուրքերի հետ բախումների ժամանակ։ Քուրդ աշխատավորները նրան մի քանի տասնյակ երդեր էին ձոնել։

Խարսի փայլուն հաղթանակից հետո նա նպատակահարմար համարեց հանդիպելու քուրդ ցեղապետներին։ Գևորգին քրդերը դիմավորեցին մեծ շուքով։ Դիմելով ներկաներին՝ նա ասաց.

— Օսմանցին 100 տարի առաջ ձեզ էր կոտորում։ Այն ժա-

մանակ մենք թույլ էինք և ձեզ օգնել չէինք կարող։ Այժմ նրանք մեզ են կոտորում և այդ անում են ձեր ձեռքով։ Վաղը, մեր հաշիվը մաքրելով, նորից դառնալու են ձեզ։ Վերջապես դուք պիտի հասկանա՞ք այս բանը։

Բոլորը համաձայն էին Գևորգի հետ և հավատարմության երդում տվին։ Նկատի ունենալով քուրդ ցեղապետների անկայուն կողմնորոշումը, (նրանք շատ հաճախ էին հայերին դավաճանում) ոմանք, այդ թվում և Սպաղանց Մակարը, քուրդ ցեղապետների նկատմամբ Գևորգի քաղաքականությունը սխալ ու վտանգավոր էին համարում։ Պատասխանելով այդպիսիներին, Գևորգն ասում էր, որ քրդերը, որպես ամբողջական ժողովուրդ, ձևավորված չեն։ Նրանք նման են մի հոտի, որի հովիվն են կրոնապետը, աշիրեթապետը, աղան ու բեկը։ Ում հետ այդ հովիվներն են, նրա հետ են նաև քրդական ցեղերը։ Փորձել առանց այդ հովիվների ուղղակի աշխատավոր քրդերի հետ կապվել՝ նշանակում է մեր դեմ հանել այդ հովիվներին ու քուրդ աշխատավորին։

Այլ կերպ ասած, քուրդ աշխատավորությունը դեռևս հասունացած չէր ինքնուրույն քաղաքական կողմնորոշման համար։ Սակայն դա չէր խանգարում, որպեսզի Գևորգն օգնության ձեռք մեկներ նրան՝ ընդդեմ քուրդ բեկերի ու աղաների, թուրք հարբստահարիչների։ Եվ որովհետև Գևորգը քուրդ աշխատավորության շրջանում բացարձակ հեղինակություն ու մեծ հմայք ուներ, այդպիսի օգնության կանչեր շատ էին ստացվում։

Ծովասար վերադառնալուց հետո Գևորգը ձեռնարկեց մի նոր շրջագայություն քրդաբնակ գյուղերով։ Դեռ չէր մեկնել, երբ մի սուրհանդակ եկավ ու Գևորգին հանձնեց Ղասրմ բեկի նամակը։

Բեկը Գևորգին հրավիրում էր հյուրընկալվել իր տանը։ Գևորգը բանբերին ասաց. «Բարևիր իմ եղբորը և ասա, որ ես սիրով կգայի, բայց հենց հիմա շտապ տեղ եմ գնալու և չգիտեմ, թե երբ կազատվեմ»։ Այս բանբերը նոր էր հեռացել, երբ մոտ բերին մի ուրիշի։ Սա ևս նամակ հանձնեց Գևորգին։ Գրում էր Ղասրմ բեկի կինը, գեղեցկուհի Ջամիլան։ «Գևորգ, թուրքերը Ղասրմին կաշառել են, նա քեզ կանչում է սպանելու, չգաս»։ Գևորգը բաց թողեց բանբերին և, շուտ գալով դեպի հայդուկները, ասաց. «Ես այժմ հյուր եմ գնալու Ղասրմ բեկին։ Ինձ հետ պետք է գան 10 հոգի»։ Խումբը իսկույն մեկնեց։ Երբ մոտեցան Ղասրմի բնակատեղիին, նկատեցին, որ նրա բակում մոտ 300 զինված

քուրդ էր շարք կանգնած։ Գևորգի հեծյալ ջոկատը ուղիղ մտավ բակ և անցնելով զինյալների շարքի միջով՝ մոտեցավ Ղասրմի վրանին։ Շուտով դուրս եկավ Ղասրմ բեկը կնոջ հետ։ Բեկը աթոռ դրեց, որ Գևորգը ձիուց հեշտությամբ իջնի։ Բեկը ձգվեց՝ նրան համբուրելու, բայց Գևորգը թույլ չտվեց՝ ասելով. «Ես նամարդի հետ չեմ համբուրվի»։ Գևորգը առանց շտապելու, արձակեց զենքերը, դրանք տվեց հայդուկներից մեկին, բաց արեց կուրծքը և սկսեց շրջանցել զինյալների տողանը։ «Ղասրմ բեկը ինձ հրավիրել է սպանելու։ Ես եկել եմ։ Դե, սպանեք։ Ինչո՞ւ չեք շարժվում»։ Քրդերը մեխված կանգնած էին։ Գևորգը վերադարձավ իր նախկին տեղը, զենքերը կապեց, թռավ ձիու վրա ու հեռացավ։ Երկար ժամանակ Ղասրմ բեկն ու զինյալներն անշարժ էին։

Խարսի ճակատամարտից հետո Թուրքերն սկսել էին կասկածանքով նայել Ղասրմ բեկին, և երբ այս անգամ էլ նա չկատարեց իր խոստումը՝ Գևորգին մեռած թե կենդանի իշխանություններին հանձնել, և վերջապես, իմանալով Գևորգի ու Ղասրմի գաղտնի հանդիպումների մասին, Տարոնի կառավարիչը մի քանի վաշտ է ուղարկում Խվներ՝ Ղասրմին պատժելու։ Այդ լսելով՝ Ղասրմն իր ընտանիքով իսկույն հեռանում է՝ զինվորներին պատվիրելով թուրքերի վրա չկրակել։ Թուրքերը շրջապատում են Խվները։ Գևորգի հայդուկներից Մոսոն, որ Ղասրմ բեկի մոտ էր գտնվում, անտեսում է բեկի կարգադրությունը և դիպուկ հարվածներ է տեղում թշնամու զորքերի վրա։

Գևորգը Խվներից ուղիղ գնում է Մառնիկի սար։ Հայդուկները Սասնա լեռներում այլևս թաքուն չէին գործում։ Մառնիկ՝ հայդուկների ճամբարն էին գալիս Սասունի տարբեր գյուղերից, բողոքում, հրահանգներ ստանում, իրենց ծառայությունը առաջարկում։ Այստեղ էին գալիս նաև քրդեր, քուրդ ցեղապետներ՝ Գևորգին տեսնելու, նրա հետ խորհրդակցելու, պայմանավորվելու։ Մառնիկի լեռան փեշի բացատը դարձել էր հայդուկների շտաբը։ Գևորգը որոշում է Մառնիկից գնալ Ալվառինջ գյուղը, որտեղ բնակվում էր խիանքցի աշիրեթապետ Մահմեդ աղան։ Նա ուզում էր այս աղայի հետ բանակցել և նրան ևս իր կողմը գրավել։ Մակարի բոլոր ջանքերը, որպեսզի Գևորգը ետ կանգնի այդ քայլից, իրեն չվտանգի, արդյունք չտվեցին։

... 1905 թ. սեպտեմբերյան մի գիշեր Գևորգի խումբը մտավ Ալվառինջ և ուղիղ գնաց Մահմեդ աղայի տուն։ Տանտերը ուրախությամբ ընդունեց հյուրերին, միաժամանակ լուր ուղար-

կելով Մուշ, որ Գևորգը իր տանն է։ Նա Թեյի հետ Թույն խառնեց և հյուրասիրեց հայդուկներին։

Գևորգը որոշում է հեռանալ գյուղից, բայց դեռ գյուղի ծայրին չհասած, իրեն վատ է զգում և մտնում մարագներից մեկը՝ գիշերն այնտեղ անցկացնելու համար։ Հաջորդ օրը, հոկտեմբերի 1-ի առավոտյան, Թուրքական երկու վաշտ Ալվառինջը շրջապատեցին, իսկ 3-րդ վաշտը մտավ գյուղ ու սկսեց «սանրել» տները։ Գևորգի ջոկատը մարագից դուրս եկավ ու մարտի բռնվեց, բայց ճեղքել պաշարումը չկարողացավ։ Միայն Գևորգին հաջողվեց դուրս պրծնել։ Նա շրջանցեց գյուղը, ճանապարհին հագավ մի սպանված Թուրք սպայի հագուստներն ու գնաց գյուղի կողմը։ Կանգնելով փողոցներից մեկի մուտքին՝ նա սկսեց կրակել Թուրք զինվորների վրա։ Բայց, երբ նկատեց, որ Թուրքերը զարմացած իրեն են նայում, առաջ գնաց և դիմելով Թուրքերին, բղավեց.

— Զարկեք այդ գյավուրներին։

Թուրքերը գնացին նրա հետևից։ Նա Թուրքական զինվորներին տարավ դեպի գյուղի կենտրոնական մասը։ Թուրքերը ներխուժեցին տները, իսկ Գևորգը՝ ծանոթ քրդի տունը։ Նա իր հագուստները տվեց քրդին, որը դրանք հագնելով՝ զենքը ձեռքին թռավ դուրս։ Իսկ Գևորգը մնաց նրա տանը։

Դոմից դուրս եկած հայդուկները կատաղի դիմադրություն են ցույց տալիս, բայց բոլորն էլ զոհվեցին։ Սպանվածներից մեկի մոտ Թուրքերը գտան Գևորգի պայուսակն ու կնիքը։ Նրանք կարծեցին, թե դա Գևորգ Չաուշն է, և հաղթական շուքով շարժվեցին դեպի Մուշ։

— Սպանված է գլխավոր ֆիդային։ Ֆիդայիներին վերջ է տրված,— Մուշից հեռագրեր թռան Ստամբուլ։ Սուլթանը այդ հաղթանակի առթիվ շքանշաններ ուղարկեց 4-րդ բանակի հրամանատարությանը։ Կռվին մասնակցած սպաների զինվորական կոչումները մեկ աստիճանով բարձրացվեցին, իսկ Սալեհ փաշան ստացավ նաև Պատվո նշան։ Թուրք մեծամեծները տոնում էին Գևորգ Չաուշի սպանությունը։ Մինչդեռ, մութն ընկնելուն պես, Գևորգը դուրս եկավ քրդի տնից ու գնաց Մառնիկի անտառ։ Ալվառինջում հայդուկների զոհվելը խռովել էր հոգին. Նա իրեն մեղավոր էր համարում։ Եթե ինքը մի քիչ հաշվենկատ լիներ, այդ դժբախտությունը չէր պատահի։ Երկու շաբաթ նա անտառից դուրս չեկավ։ Խուսափում էր ընկերներից։ Իսկ Թուր-

քերը շարունակում էին տոնել իրենց հաղթանակը։ Այդ լուրերը հասնում էին Գևորգին, և նա վերջապես որոշեց վրեժ լուծել։ Հավաքեց հայդուկներին, բաժանեց երկու խմբի, որոնցից մեկը Արամի ղեկավարությամբ պետք է շարժվեր դեպի Ալվառինջ, իսկ մյուսը իր ղեկավարությամբ գնալու էր Խասգյուղ։

— Խնդիրն այսպիսին է. մենք պետք է մտնենք գյուղերը, մոտենանք այն տներին, որտեղ Թուրքական վաշտեր են տեղավորված, աղմուկ բարձրացնենք, և երբ զինվորներն ու սպաները տներից դուրս թափվեն, դիպուկ կրակով նրանց ոչնչացնենք և անմիջապես հեռանանք։

Ծրագիրը հաջողությամբ իրականացվեց։ Խասգյուղում հայդուկները կրակի տակ առան փողոցից դուրս եկած Թուրքական զորքերին, երեսունից ավելի մարդ սպանեցին ու վիրավորեցին, իսկ երբ Թուրքական մնացած ուժերը դիրքեր գրավեցին և սկսեցին կրակել, պատասխան չստացան։ Կարծես այդ կողմերում ոչ ոք չէր եղել։ Հաջորդ օրը, առավոտյան, զոհվածների դիակները սայլերին բարձած, տարան Մուշի Թուրքական գերեզմանատունը թաղելու։

Սալեհ փաշան ու նրա գործընկերները դժվար կացության մեջ ընկան։ Եթե Կ. Պոլսում իմանային, որ Գևորգը կենդանի է, նրանց վիճակը շատ վատ էր լինելու։ Դրա համար էլ արգելվեց Գևորգի անունը տալ։ Ով այդ անունը տալիս էր, բանտ էին գցում։ Սալեհ փաշան արգելեց Թուրքերին ու քրդերին հայդուկների հետ ընդհարվել։

Մի կողմից, դեմոկրատական-հեղափոխական տրամադրությունների աճի, իսկ մյուս կողմից, հայդուկների ջանքերի շնորհիվ, 1905 թ. հայ ազգաբնակչության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները որոշ չափով մեղմացան։

1905 թվականի հեղափոխական ալիքը թափանցեց նաև Տարոն ու խմորումներ առաջացրեց Թուրքական սպայության շրջանում։ Օսմանյան կայսրության ճգնաժամը խորացել, իր գագաթնակետին էր հասել։ Տարոնում որոշ սպաներ ուղղակի կապեր հաստատեցին հայդուկների հետ, իսկ նրանցից ոմանք կատարում էին հայդուկների հանձնարարությունները։ Այդ պայմաններում հայդուկների հեղինակությունն ու ազդեցությունն աճում էր։ Աճում էր նաև հայդուկների հետ համագործակցող քուրդ բեկերի ու սպաների թիվը։ Ստվարանում էին հայդուկների

շարքերը։ Գևորգի տրամադրությունը բարձր էր։ Նրան մեծապես ուրախացնում էին այս տեղաշարժերը։

1906 թվականն սկսվեց հայդուկների ակտիվ գործողություններով։ Տակտիկական պլանը նույնն էր՝ արագ տեղափոխություններ, շեշտակի հարվածներ։ Փոքր խմբերի բաժանվելով՝ հայդուկները տարածվեցին Սասունի ու Տարոնի ամբողջ տարածքով։ Որտեղ հանդիպում էին թուրքական ուժերի, շեշտակի հարված էին հասցնում ու հեռանում։

Գևորգն իր խմբով անցավ Դաշտի արևելյան մասը՝ Ախլաթ։ Այդ լուրը Մուշ հասավ, զորքը շարժվեց Ախլաթ, իսկ Գևորգն արդեն Գառնեն գյուղում էր, Մուշ քաղաքի կողքին, թուրքական զորանոցների հենց պատի տակ։

Մի օր, երբ մոտակա դաշտում թուրքական զորքերը, Բինբաշու ղեկավարությամբ, զորավարժություններ էին անցկացնում, Գևորգը իր թաքստոցից դուրս եկավ, ձի նստեց, գնաց դեպի զորավարժությունների վայրը։ Քշեց անցավ դաշտի միջով, մոտեցավ Բինբաշուն, զինվորական բարև տվեց ու առաջ ընթացավ։ Գևորգը մտավ Մուշ, գնաց թուրքական թաղերը և սկսեց փնտրել արյունարբու լրտես Ճիմել աղայի տունը։ Մի դուռ ծեծեց։ Դուրս եկավ տանտիրուհին։ Հարցրեց՝ Ճիմել աղայի տո՞ւնն է։ Պատասխանը դրական էր։ «Որտե՞ղ է»։ «Հենց նոր գնաց»։ «Երբ կգա, ասեք, Գևորգ Չաուշը եկել էր իրեն բարև տալու»։ Նա եկած ճանապարհով վերադարձավ, կրկին անցավ զորքի միջով, կրկին բարևեց հրամանատարին ու վերադարձավ իր թաքստոցը։

«Գևորգ Չաուշը Մուշում է»,— այդ լուրը շուտով բերնից բերան անցավ։ Իսկ Գևորգն արդեն լեռներում էր և Մանուկի հետ անտառում նստած լսում էր Ալադի Միսակի երգը։

Մանուկը Շենիկ գյուղից էր։ 1894 թ. կռիվներին մասնակցել էր Գրգոյի ջոկատի կազմում։ Դրանից հետո բանտ էր ընկել, ապա վերադարձել հայրենի օջախ, բայց այդ վերադարձը շատ կարճ էր տևել։ Նա նորից հրացան էր վերցրել ու մտել Գևորգի խումբը։ Մանուկը մասնակցել էր հայդուկների գրեթե բոլոր կարևոր մարտական գործողություններին՝ սկսած Գեղաշենի դավաճան Ավեի և Խալիլ փաշայի սպանությունից մինչև 1904 թ. կռիվները, երբ նա, շենիկցիների գլուխն անցած, ցուցաբերեց ռազմական հիանալի ընդունակություններ, քաջություն ու սառնասրտություն։ Նա աչքի ընկնող դեր խաղաց նաև Բերդակի, Գոմերի, Կուրավուի, Խարսի կռիվներում։

Սուլուխի ճակատամարտից հետո, երբ Մակարը գնաց զբաղվելու Գևորգի կնոջ ու որդու՝ Եղսոյի և Վարդգեսի փրկության գործով, նրան միացան

Մանուկը, շենիկցի Ղազարը, Ախոն, Հագոն։ Նրանք, մեծ դժվարություններ հաղթահարելով, առաջ էին գնում։ Մերացել էր Մակարը, արդեն դժվարությամբ էր քայլում։ Փեթար գյուղում նրանք հանդիպում են Կրբոյին ու Տիգրանին, որոնց հետ էին Եղսոն ու Վարդգեսը։ Նույն օրը երեկոյան Փեթարը պաշարվում է։ Մակարը Ղազարի խմբին հանձնարարում է բարձրանալ լեռը և դիրք գրավել նրա գագաթին։ Դեպի գագաթն է շարժվում նաև Մակարի խումբը։ Մանուկը մի քանի հայդուկներով գնում էր նրանց հետևից։ Մերուկը որոշել էր ճեղքել թշնամու պաշարման օղակը և բարձրանալ լեռները։ Նա մեկնելուց առաջ Տիգրանին հանձնարարություն տվեց Վարդգեսին հանձնել գյուղացիներից մեկի խնամքին, իսկ Եղսոյին ապանել, որպեսզի «մեր նամուսը թուրքերի ձեռքը չընկնի»։

Թուրքերը հասկացել էին Մակարի մտադրությունը և իրենք ևս շտապում էին դեպի սարի գագաթը։ Խումբը բոլոր կողմերից շրջապատվում է։ Մանուկը կռվի մեջ է մտնում, որպեսզի հնարավորություն տա Ղազարին և Մակարին հասնելու լեռան կատարը։ Անհավասար ու անհույս կռիվ էր։ Վեց հայդուկներ կռվում էին հարյուրավոր զինվորների դեմ։

Հայդուկներին հաջողվեց հասնել լեռան գագաթ։ Բայց դա էլ փրկություն չէր. ս. Հովհաննու վանքից դեպի հայդուկներն էր շարժվում թուրքական մի ուրիշ զորամաս։ Փրկվելու համար անհրաժեշտ էր շտապ հեռանալ։ Հայդուկները շարժվում են քրդական ամառանոցները։ Նրանց հաջողվում է շեշտակի հարվածով կոտրել քրդերի դիմադրությունը և առաջ գնալ։ Թուրքական բանակը կրնկակոխ հետապնդում էր։ Հայդուկներն ուղղվում են Շենիկ գյուղի վերևում գտնվող բարձունքը։ Մակարի ուժերը դավաճանում են։ Հայդուկները, ծանրամարմին ծերունուն շալակներն առած, շարունակում են բարձրանալ լեռն ի վեր։ Մակարը պահանջում է իրեն թողնել խոչկանցի քրդերի մոտ ու հեռանալ։ Հայդուկները հարկադրված համաձայնում են, բացառությամբ Մանուկից, որը չի լքում վիրավոր Մակարին։ Նա ծերունուն հասցնում է քրդերի օբան։ Քրդերից մեկը հարձակվում է Մանուկի վրա։ Մանուկը զենքի է դիմում։ Երեք քուրդ սպանվում և երկուսը վիրավորվում են։ Վիրավորվում է նաև Մանուկը։ Նա այլևս անկարող էր Մակարին օգնել։ Քրդերը Մակարին սպանում են, իսկ Մանուկը փախչում է իրենց գյուղի կողմը։ Նրա դեմ է ելնում թուրքական մի ջոկատ։ Մանուկը կրակ է բացում, բայց ապարդյուն, թուրքերը մոտենում են։ Նա կատաղած ջարդում է հրացանը, շպրտում անդունդը, ապա բարձրանում ժայռի գագաթը, հասակով կանգնում ու սպասում է թշնամու գնդակին։

Նրա մահը գեղեցիկ էր իր ապրած կյանքի նման։

ՌՈՒԲԵՆ

Արդեն ասվեց, որ 1905—1906 թվերը եղան հայդուկային շարժման վերելքի տարիներ, ինչը պայմանավորված էր հետևյալ գործոններով։

Օսմանյան կայսրությունը ոչ միայն տարեցտարի, այլև ամ-

սե ամիս ու օրեցօր խարխլվում էր։ Ազատագրական պայքարի էին դուրս եկել կայսրության կազմի մեջ մտնող, յաթաղանի կողմից բռնադատվող ու հարստահարվող ժողովուրդները։ Ազատագրական-հեղափոխական շարժումը հատկապես բուռն թափ ստացավ 1905 թ. ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ազդեցության տակ։ Ահա այս պայմաններում օսմանյան կառավարությունն ու ինքը՝ արյունարբու սուլթան Համիդը, ճակատային հարձակումների ու ճնշումների փոխարեն, խուսանավում էին, երբեմն նույնիսկ չնկատելու տալիս Սասունում և Տարոնում ծավալված ինքնապաշտպանական շարժումները։ Մյուս կողմից՝ այդ շարժումները թուրքական մտավորականության դեմոկրատական խավերի և մասնավորապես հեղափոխական-առաջադիմական հայացքներ ունեցող սպայության կողմից դիտվում էր որպես օսմանյան բռնապետության դեմ ընդհանուր դեմոկրատական շարժման բաղկացուցիչ մաս։

Այսինքն՝ հայդուկային շարժման ծավալման համար այդ տարիներին օսմանյան կայսրությունում ստեղծվել էր համեմատաբար բարենպաստ քաղաքական պայմաններ։

Հայդուկային շարժման աշխուժացման գործում վիթխարի էր Գևորգի ներդրումը։ Նա կարողացավ իր շուրջը համախմբել ոչ միայն Սասունի, այլև Տարոնի ու Խնուսի, Ախլաթի ու Բիթլիսի գյուղերի ու բնակավայրերի մարտական ուժերը։ Բասենից մինչև Դատվան, Բիթլիսից մինչև Տիգրանակերտ ընկած հայաբնակ գյուղերի զգալի մասում ստեղծվեց ինքնապաշտպանության ջոկատների մի համակարգ։ Գյուղերում աշխատանքներ էին տարվում զենքի ձեռքբերման, վինման ու ռազմական ուսուցման ուղղությամբ, սահմանված էր զինված ջոկատների միջև կապի, փոխօգնության ու համագործակցության կարգ։

Գևորգը ստեղծեց գործակալների ու կապավորների լայն ցանց։ Հարաբերությունների մեջ մտավ Մուշի զինվորական և ոստիկանական ղեկավար պաշտոնյաներից մի քանիսի, այդ թվում՝ գաղտնի ոստիկանության պետ, ծագումով հայ Մեհմեդ էֆենդու և ուրիշների հետ, որոնցից տեղեկություններ էր ստանում թուրքական զորքերի ու ոստիկանության գործողությունների, հայդուկների ու հայերի նկատմամբ ձեռնարկվելիք քայլերի մասին։ Նրա կատարած աշխատանքի շնորհիվ՝ քրդերով բնակեցված 20—25 գյուղ հայդուկային կողմնորոշում ունեին,

իսկ մի շարք քրդաբնակ գյուղեր հայդուկների կողմն էին, բայց վախենում էին նրանց հետ համագործակցել։

Մի կողմից՝ քրդերը Գևորգի ու հայդուկների մասին երգեր ու լեգենդներ էին ստեղծում, փառաբանում նրանց, իսկ մյուս կողմից քուրդը իր երեխային սաստում էր, ասելով՝ «Զայնդ կտրիր, թե չէ Գևորգը կգա»։

Բայց 1905—1906 թթ. ոչ միայն հայդուկային շարժման ամենածավալուն, այլև ներքին հակասությունների ու պառակտումների շրջանն էր, որ վերջին հաշվով հանգեցրեց այդ շարժման անկմանը։ Ո՞րն էր պատճառը։ Արդեն տասը տարի Գևորգի և դաշնակցության բյուրոյի միջև պայքար էր գնում հայդուկային շարժման լինել-չլինելու շուրջը։ Այդ պայքարի ընթացքում Գևորգը երկու անգամ արտաքսվեց Սասունից, մեկ անգամ Սասունից դուրս հանվեց հայդուկային շարժման կորիզը։ Այդ շարժման ու նրա ղեկավարների նկատմամբ կիրառվում էին վարկաբեկելու և ահաբեկելու զանազան միջոցներ։ Հայդուկային շարժման վերացումը, ինքնապաշտպանական ջոկատների վերածելը դաշնակցական կոմիտեներին կից գործող մարտական խմբերի, պայքարի մեթոդների առումով, Տարոնում Վանի մի տարբերակի ստեղծումը դաշնակցության ղեկավարների համար աստիճանաբար ձեռք բերեց պատվախնդիր նշանակություն, և նրանք միջոցների ու հնարավորությունների առաջ կանգ չէին առնում՝ այն իրականացնելու համար։ Մեկը մյուսի ետևից Սասուն էին ուղարկվում դաշնակցական կուսակցության աչքի ընկնող գործիչներ (Վահան, Վարդգես, Գուրգեն, Քեռի), օգտագործում էին տեղի դաշնակցական գործիչներին (Հրայր, Վարդան վարդապետ, Տատրակ), բայց ապարդյուն։ Հայդուկային շարժումը ոչ միայն ապրեց, այլև աննախադեպ ծավալ ու թափ ընդունեց։ Արդյունքում՝ շարժումը խզեց հարաբերությունները դաշնակցական կոմիտեի հետ։ Նրանից հեռացան դաշնակների կողմից ուղարկված գործիչները։ Վերջինը Կորյունն էր, որ հեռացավ 1905 թ., Գևորգին թողնելով հետևյալ երկտողը. «Սիրելի Սարհատ, ես գնացի»։ Կարդալով այդ երկտողը՝ Գևորգը դառնացած ասաց. «Կորյունին վաղուց դուր չէր գալիս իմ գործելակերպը։ Նա պահանջում էր հեռու մնալ ինքնապաշտպանական կռիվներից և սպասել։ Սպասել, երբ նույնիսկ աչքիդ առաջ խոշտանգում, թալանում ու սպանում են հայ գյուղացուն։ Կորյունը մնացած-

ների նման հեռացա՞վ, թե՞ փախավ արյան մեջ շաղախված մեր այս երկրից»։

Բայց սխալ կլիներ նույն հարթության վրա դնել դաշնակցական բյուրոյի քաղաքականությունը և Սասունում ու Տարոնում աշխատող դաշնակցական գործիչների վարքագիծը։ Բանն այն է, որ Թիֆլիսում նստած դաշնակցական լիդերները տարբերական պատկերացում չունեին Սասունի ու նրա սոցիալ-տնտեսական, դասակարգային-հոգեբանական առանձնահատկությունների մասին։ Նրանք Արևմտյան Հայաստանի բոլոր գավառները, այդ թվում և Սասունը, աշխատում էին տեղավորել իրենց կուսակցական նպատակադրումների ու ծրագրերի մեջ։ Դրա համար էլ, տակտիկական վարքագիծ մշակելիս, ելնում էին ոչ թե իրական վիճակից, այլ Եվրոպայում մշակված կամ իրականացված ինչ-որ քաղաքական կոնցեպցիայից և կամ պայքարի միջոցից։

Իհարկե, այս գործում փոքր դեր չէր խաղում նաև այն իրողությունը, որ Հայաստանի երկու մասերը, հարյուրամյակներ շարունակ, գտնվել էին տարբեր պետությունների տիրապետության տակ։ Եթե Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի մեջ ու հայկական շրջաններում տիրապետողը օսմանյան Թուրքիային բնորոշ առանձնահատկություններն էին, ապա Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքը, հայ ազգաբնակչության ողջ հոգեբանական համակարգը ներծծված էր Ռուսաստանի քաղաքական, գաղափարախոսական մթնոլորտով ու հասարակական տարբեր հոսանքների ազդեցությամբ։ Տարոնում ու Սասունում ծնված ու հասակ առած դաշնակցական գործիչները, որպես անձ, ձևավորվել էին օսմանյան Թուրքիայի սոցիալ-քաղաքական հնոցում, բայց որպես գործիչներ որդեգրել էին ռուսական իրականության ազդեցության տակ ձևավորված քաղաքական հայացքներ։ Նրանք, իհարկե, լավ էին հասկանում Սասունի ու Տարոնի կյանքի ու հոգեբանության առանձնահատկությունները և ոչ մի կերպ չէին կարողանում դրանք տեղավորել դաշնակցական քաղաքականության կաղապարում։ Այստեղից էլ՝ այս գործիչների հայացքների ու քաղաքականության երկատվածությունը, անհետևողականությունը, տեղատվությունները։

Դաշնակցական կուսակցությունը ինչո՞ւ էր դեմ հայդուկային շարժմանը։

Ինչպես վերևում ասվեց, Հայաստանի ազատագրության համար դաշնակցության ծրագիրը հետևյալն էր. տևական նախապատրաստական աշխատանքի միջոցով Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությանը բազմակողմանիորեն նախապատրաստել ընդհանուր ապստամբության և այնպիսի ապստամբական կռիվների, որ հարկադրեր մեծ պետություններին լրջորեն զբաղվել և լուծել Հայաստանի անկախության հարցը։ Դրա համար, Արևմտյան Հայաստանի զանազան կենտրոններում (Վան, Էրզրում, Կիլիկիա), դաշնակցությունը ստեղծում էր ապստամբության ռազմա-քաղաքական հենակետեր, բնակավայրերում կազմակերպում և վարժեցնում զինված մարտական ջոկատներ, որոնք գործում էին դաշնակցական կոմիտեների ղեկավարության ներքո։ Այսինքն, դաշնակցությունն ամեն ինչ ենթարկում էր ապագա ընդհանուր ապստամբության շահերին։ Իսկ հայդուկային շարժումը դաշնակների այդ ծրագրի մեջ չէր տեղավորվում։ Որովհետև հայդուկային շարժումը ո՛չ ամբողջական և ո՛չ էլ տեղական առումով ազգային-ազատագրության խնդիրներ լուծել չէր կարող։ Մինչդեռ նա զոհասեղանին էր դրել Սասունի և Տարոնի զենք կրելու ընդունակ ուժերին։ Այդ ուժերը պարտիզանական կռիվներում աստիճանաբար հալվում, ոչնչանում էին, և երբ սկսվեր ընդհանուր ապստամբությունը, ապա նա Բիթլիսի նահանգում հաջողության հասնել չէր կարող՝ բավարար քանակի մարտական ջոկատներ չունենալու պատճառով։ Ուրեմն, պետք էր ցրել հայդուկային խմբերը, ինքնապաշտպանության ջոկատները վերակառուցել գյուղական զինված խմբերի և սպասել ապստամբության սկսվելուն։

Հայդուկային շարժմանը դեմ էր նաև երիտթուրքերի կուսակցությունը, որը մեթոդիկ ճնշում էր գործադրում դաշնակցության վրա՝ այդ շարժումը քայքայելու և վերացնելու համար։ Թուրքական բուրժուազիայի շովինիստական կուսակցությունը չէր կարող կողմ լինել և չպայքարել օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ, ինչ ձևով ու բնույթով էլ նա արտահայտվեր։ Բացի այդ, երիտթուրքերի Մուշի կոմիտեի կարծիքով, հայդուկների գոյությունը խանգարում էր այդ կոմիտեի գործունեությանը, որովհետև հայդուկային շարժման պատճառով կառավարությունը Բիթլիսի նահանգում պահում էր մեծ քանակությամբ զինվորական ու ոստիկանական ուժեր, լրտեսական բազմամարդ ցանց, որոնք, բոլորը միասին, հեղափոխական շարժման համար ստեղծում էին ոչ միայն ռազմաքաղաքական լրացուցիչ լուրջ դժվա-

բություններ, այլև ահաբեկված վիճակում էին պահում լայն հասարակայնությանը։

1906 թ. կեսերին Սասուն հասավ դաշնակցական կուսակցության աչքի ընկնող գործիչներից մեկը՝ Ռուբեն Տեր-Մինասյանցը։ Վ. Իսկանդարյանը, որ 1906 թ. դաշնակցական բյուրոյի հանձնարարությամբ գնացել էր Երկիր, գրում է. «Հետագայում, մեր խոսակցությունների ընթացքում, ես և Ռուբենը պարզեցինք. ես՝ Հ. Հ. Դաշնակցական Արևելյան բյուրոյի, իսկ նա՝ տեղական ընկերների տեսակետները։ Ռոստոմը, Սիմոնը և Համոն (բժ. Օհանջանյան) շարունակ պնդել էին և ինձ պատվիրել, որ աշխատենք Գևորգին համոզել, որ նա միառժամանակ թողնի Երկիրն ու անցնի Կովկաս...

... Պետք էր համոզել Գևորգին՝ միառժամանակ անցնելու Կովկաս։ Պետք էր, որ նա Կովկասում միառժամանակ շրջանների մեջ մտներ։ Ամենքն էլ համոզված էին, որ այդ հանգամանքը շատ բարերար ազդեցություն պիտի թողներ նրա բնավորության, գազազած հոգու և աշխարհայացքի վրա։ Մյուս կողմից՝ նրա և փախստական տղոց մեծ մասի հեռանալով, Դաշտի մեջ զինված ընդհարումների շարժառիթները կպակասեին։ Ռուբենը ճիշտ և ճիշտ նույն առաքելությամբ եկել էր Վանից։ Այդ հողի վրա շարունակ պայքարել էր խոսքով և օրինավոր որոշումներով, սակայն միշտ հանդիպել էր Գևորգի համառ ընդդիմությանը...

Գևորգը մի համոզում ուներ. Մշո դաշտը, եթե առանց հայդուկի մնար, հայկական թե թուրքական դավաճանական ու դավադրական տրամադրությունները ազատ թևածելու հնարավորություն կստանային։ Նման պարագայում ժողովուրդը իր գլուխը պիտի կորցներ և կուլ գնար սև ուժին։ Նա կարծես չէր ուզում տեսնել, որ իրենից հետո Երկրում մնում էր Ռուբենը։ Վերջապես, Դաշտի մեջ կարող էին մնալ ժողովրդի սիրած հայդուկներից մի քանի հոգի ևս՝ կազմակերպության հմայքը տեղը պահելու համար։ Մնում էր հայ-քրդական բարեկամության խնդիրը, որ Գևորգի ներկայության կարևորությունը շեշտող ազդակներից մեկն էր նկատված...

Պետք էր մի խոշոր խաչ դնել այդ «հայ-քրդական» ցնորքի վրա»։ Գևորգը Սասունում չպետք է լինի՝ այսպիսին էր առաջադրված խնդիրը։

Ահա թե ինչու, Ռուբենը Սասուն գալով, շարունակեց իրա-

կանացնել հայդուկներին այդ երկրամասից հեռացնելու քաղաքականությունը։ Այդ ժամանակ Տարոնում և Սասունում գործող հայդուկների թիվը անցնում էր 250 մարդուց։ Ռուբենը առաջարկեց նրանց մի մասին ուղարկել Վան, մյուս մասին՝ Անդրկովկաս, իսկ Սասունում պահել ամենաշատը 20 հայդուկ։ Գևորգը վճռականապես դեմ էր այդ առաջարկին։ Բայց Ռուբենին հաջողվեց 60 հայդուկների համոզել և Սասունից հեռացնել դեպի Վան ու Պարսկաստան։ Այս անմիտ ու վնասակար արարքն արդարացնելու համար Ռուբենի հուշագրություններում հայդուկներին վերագրվում են արարքներ, որոնք վարկաբեկիչ են ոչ միայն այդ շարժման համար, այլև ստվեր են գցում հայ գյուղացու նվիրվածության ու անձնազոհության վրա։ Ռուբենը գրում է. «Գևորգը ստիպված էր այդ դժոխք երկրի մեջ ոչ միայն դիմագրավել թշնամու հալածանքներին, այլ շարունակ տանջվել ֆիդայիներու գազանութենեն», որ հայդուկների թվի փոքրացման շնորհիվ ներքին տարաձայնությունները վերացան և տասն օր անց «Գևորգը կամաց-կամաց բոլոր գործերը կը գցե իմ վզիս»։

Սա, մեղմ ասած, ճիշտ չէ և նպատակ ունի հագուրդ տալ սեփական փառամոլությանը։ Իսկ իրականությունն այն էր, որ Գևորգը վճռականապես հրաժարվեց կուսակցական գործերով զբաղվելուց և պահանջում էր հայդուկային խմբերի ու ինքնապաշտպանության ջոկատների ինքնուրույնություն։ Ռուբենն ինքն է խոստովանում, որ Գևորգը կուսակցական աշխատանքներով զբաղվելու ոչ մի ցանկություն չուներ։ Սասուն գալուց հետո Ռուբենը, հակառակ Գևորգի կարծիքին, ձեռնարկեց ու իրականացրեց մի միջոցառում, որն իր բնույթով արկածախնդրություն էր, իրականացման մեթոդներով՝ ստոր ու դավաճանական, իսկ հետևանքներով՝ վնասակար ու վտանգավոր։ Նա որոշեց Սասունի, Տարոնի, Ախլաթի և մի քանի այլ շրջանների գյուղացիներին համոզել, որ նրանք միասին դիմեն թուրքական իշխանություններին, թե ստեղծված ծանր պայմաններում այլևս դիմանալ չեն կարող և հեռանում են Ռուսաստան, Ամերիկա և այլ երկրներ։ Ըստ մտահղացման՝ գյուղացիների այդ քայլը վախեցնելու էր սուլթանին, և նա կաշխատեր ինչ-որ չափով թեթևացնել հայերի վիճակը։ Մինչդեռ սուլթանը ինքն էր ամեն կերպ աշխատում Սասունը հայերից դատարկել, և ահա փաստորեն օգնության էին գալիս նրան։ Սասունի գյուղացիությունը

չխաբվեց ու շարձագանքեց այս պրովոկացիային, իսկ մյուս շրջաններում, մասնավորապես Ախլաթում, Բուլանըխում, մեծ թվով գյուղացիներ արձագանքեցին ու խաբվելով ընկան ծանր վիճակի մեջ։ Նախ ո՞ւր գնալ և ի՞նչ միջոցներով գնալ։ Դաշնակների խոստումը, թե Ռուսաստանն ու Ամերիկան պատրաստակամություն են հայտնել հայերին տեղափոխելու, նույնքան էր ճշմարիտ, որքան այս հրեշավոր միջոցառումը իրականացնելու համար գյուղացիներին ոտի հանելուն ուղղված բոլոր խոստումները։

ՄԱԿԱՐԸ ՋԻՆԱԹԱՓ

Ռուբեն Տեր-Մինասյանցը Արամ Մանուկյանի երաշխավորագրով երևաց Սասունի հայդուկների հավաքատեղում։ Այստեղ նրան ընդունեցին սրտաբաց։ Սակայն շուտով պարզ դարձավ, որ Ռուբենի և Գևորգի «ջուրը մի առվով չի հոսում»։ Ռուբենը ձգտում էր միահեծան իշխանության, նա գեղեցիկ հռետոր էր, գիտեր մարդկանց իր կողմը գրավել խոսքով, իսկ Գևորգը հայդուկների համակրանքն էր շահել իր ապրած կյանքով։ Գևորգի հեղինակությունն ու փառքը խանգարում էին Ռուբենին իր կուսակցական նպատակադրումները իրագործելու։ Այդ իսկ պատճառով նա փորձեց խաղալ այդ հեղինակության հետ, օգտագործելով Մակարի բնավորության թույլ կողմերը։ Իսկ ինչո՞ւ Մակարին ընտրեց։ Որովհետև Գևորգից հետո հայդուկների շրջանում ամենամեծ հեղինակությունը Մակարն էր։ Մակարն ուներ իր ուժեղ ջոկատը, առանձնապես իրեն նվիրված մարդիկ։ Մի անգամ իմանալով, որ Գևորգը երեք օրից լինելու է Փեթարի ձորի Ճամբարում, Ռուբենը զանազան պատրվակներով այստեղ է հավաքում գրեթե բոլոր երդվյալ հայդուկներին։

Գևորգը մտավ Ճամբար։ Նա ընդհանուր բարև տալուց հետո նստեց գետնին։ Այդ ժամանակ լսվեց Ռուբենի ձայնը.

— Մակար, դու ասում էիր, թե մեր մեջ ավազակ կա։ Պետք է այժմ ասես, թե ով է այդ ավազակը։

Գևորգը հանկարծակիի եկավ։ Նրա հայացքը մթնեց։

— Պարոն Ռուբեն, ես քեզ ասել եմ, որ Գևորգը սխալներ է թույլ տալիս, բայց ավազակ չեմ ասել,— կիսաձայն թոթովեց հուզմունքից խեղդվող ծերունին։

Գևորգը վեր թռավ, դաշույնը դուրս քաշեց և բղավեց։

— Մակար, պետք է ասես, թե որոնք են իմ սխալներն ու ավազակությունները։ Այսօր կամ իմ գլուխն է թռնելու, կամ քոնը։

Գևորգի այս խոսքի վրա Մակարի թիկունքից սպառնալից տեսքով բարձրացան մի քանի հին հայդուկներ։

Նրանց դեմ ոտի կանգնեցին մյուս հայդուկները։

— Մակա՛ր, զենքերդ հանիր,— հրամայեց Գևորգը։

Մակարը նայեց դեմ-դիմաց, մարտական տրամադրությամբ ու թշնամական հայացքով իրար չհանդուրժող հայդուկներին, և այդ հսկա մարդը կարծես փուլ եկավ, ուսերը թուլացած կախվեցին, մեջքը կորացավ, կնճիռները խորացան։ Նա դողդողացող ձեռքերով քանդեց մեջքին կապված զենքերը ու դրանք շպրտելով Գևորգի ոտքերի տակ, գլխիկոր անհետացավ ծառերի ետևում։ Մակարի օրինակին հետևեցին նրա հինգ կողմնակիցները։

Այն, ինչ կատարվեց, Գևորգի համար անսպասելի ու ամենասարսափելին էր։ Նա ևս քաշվեց անտառի խորքը և ուզեց հասկանալ, ինքն իրեն բացատրել կատարվածը։ Նրանք, Մակարն ու Գևորգը, հայդուկների ավագ սերնդի ներկայացուցիչներ էին։ Մոտ 20 տարի միասին էին եղել, միասին տարել հայդուկային կյանքի դժվարություններն ու տառապանքները, վրտանգներն ու զրկանքները։ Մակարը հայրական սիրով էր կապված Գևորգին։ Գևորգը նրա թուլությունն էր, նրա պարծանքը։ Նա տասնյակ անգամներ իրեն մահվան երախն էր նետել՝ Գևորգին փրկելու համար։ Նույնիսկ այն գիտակցությունը, թե թշնամու գնդակը կարող է տապալել Գևորգին, նրան շանթահար էր անում, զրկում խոհեմությունից։ Կյանքի բոլոր, նույնիսկ ամենադժբախտ երևույթներին փիլիսոփայորեն նայող այդ հսկան դառնում էր անօգնական մի երեխա, երբ Գևորգի մասին վատ լուր էր ստանում։ Ճիշտ է, անցած երկու տասնամյակների ընթացքում նրանք նաև վիճել էին մի քանի, այդ թվում նաև սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի շուրջ, տարբեր և նույնիսկ իրարամերժ կարծիքներ էին ունեցել, բայց դրանք երբեք բախում չէին ծնել և չէին սառեցրել նրանց հարաբերությունները։ Մակարը դեմ էր Գևորգի ամուսնությանը։ Այդ մասին նա Գևորգին ասել էր թե՛ առանձին և թե՛ հրապարակավ։ Բայց դրանից հետո էլ նրանք շարունակեցին մնալ սրտամոտ բարեկամներ, մանավանդ, որ ամուսնությունից

արդեն ավելի քան մեկ տարի էր անցել, ծնվել էր Գևորգի արու զավակը։ Վարդգեսի ծնվելուց հետո Մակարն այլևս այդ ամուսնության մասին չէր ակնարկում։ Հայդուկների կարծիքով, նա իր հոգու խորքում նույնիսկ ուրախանում էր Գևորգի համար։ Եվ իսկապես, Գևորգի սպանվելուց հետո Մակարը ամեն ինչ արեց, չխնայեց նույնիսկ իր կյանքը՝ Եղսոյին ու Վարդգեսին օգնելու, թույլ չտալու, որ նրանք թուրքական կառավարության ճանկն ընկնեն։ Այդ նա էր, որ մեռնելուց առաջ խնդրեց իրեն թաղել Գևորգի կողքին։ «Ոչ, պատճառն այդ ամուսնությունը չէ»,— եզրահանգեց Գևորգը,— Մակարը միշտ էլ ամենախիստ բառերով էր հայհոյում Գևորգին, երբ վերջինս իրեն չպատճառաբանված վտանգների էր ենթարկում։ Նա հաճախ էր կրկնում. «Գևորգը փորձանք է փնտրում։ Թե ի՞նչ է ուզում, չգիտեմ»։ Բայց դա միայն վկայում է Գևորգի նկատմամբ Մակարի հայրական սիրո մասին։ «Սա էլ պատճառ չէ»,— ինքն իրեն շշնջաց Գևորգը։

Ցարիներ առաջ Մակարը զայրանում էր, երբ խոսք էր լինում Կովկասից սպասվելիք օգնության մասին։ Նա գտնում էր, որ հույսը սեփական ուժերի վրա պետք է դնել։ Մանավանդ, որ Կովկասի խոստումները շատ էին, իսկ իրական օգնությունը՝ չնչին։

Գևորգից մեծ ջանքեր ու երկար ժամանակ պահանջվեց Մակարին համոզելու, որ նա ոչ միայն սխալ, այլ նաև վնասակար տեսակետ է պաշտպանում։ Սասունն ու Մուշը առանձին երկրներ չեն, այլ Հայաստանի մի մասը, իսկ սասունցիներն ու մշեցիները հայ ժողովրդի մի հատվածն են։ Գևորգը սիրում էր ասել ու անընդհատ կրկնում էր. «Էջմիածինը նույնքան Հայաստան է, որքան ս. Կարապետը»։ Նա ամբողջ կրքոտությամբ հարձակվում էր այն հայերի վրա, որոնք փորձում էին հոգեբանորեն ևս օրինականացնել Հայաստանի մասնատվածությունը, ովքեր արևելահայերին անջատում էին արևմտահայերից, փորձում նրանց նույնիսկ իրար հակադրել։ Նա պնդում էր՝ Սասունի ու Մուշի ազատագրումն անհնար է առանց ամբողջ Հայաստանի ազատագրության։ Իսկ Հայաստանի ազատագրության շահերը պահանջում են նրա բոլոր ուժերի միավորում, այդ ուժերի միաձուլում։ «Եթե բոլոր հայերը այսօր երեկոյան որոշեն մեռնել, լուսաբացին, մինչև արևի ծագելը, ազատ կլինեն»,— ահա նրա թևավոր խոսքը, որ կարող էր դառնալ ազատագրական պայքարում հայ ժողովրդի ուժերի միավորման նշանաբան։ «Դեռ ավելին,—

բացատրում էր Գևորգը,— հայերը միայնակ չեն կարող օսմանյան լծից ազատվել, եթե օգնության ձեռք չմեկնի Ռուսաստանը»։

Մակարը համառորեն չէր համոզվում։ Ամբողջ կյանքը Սասունում անցկացրած այդ սասունցուն թվում էր, թե աշխարհում Սասունից մեծ ու հզոր ոչինչ չկա, և եթե Սասունը միավորվի, կկարողանա ազատագրվել։

Գևորգի դեմքին թույլ ժպիտ երևաց։ «Իմ ու քեռի Մակարի տարիների վեճը լուծեց ռուսական մոսին հրացանը,— հիշում էր Գևորգը։— Աղբյուր Սերոբը, երբ Սասուն եկավ, իր հետ բերել էր մի քանի մոսին հրացան, որոնցից մեկական տվեցինք խուլբեցի Գալուստին ու Ղազարին։ Մի անգամ ես, Մակարն ու հինգ ուրիշ հայդուկներ գնացել էինք Խուլբի Կյապռնի գյուղը՝ Գալուստի հետ որոշ հարցերի շուրջ պայմանավորվելու։ Ամառ օր էր։ Երբ հասանք Կյապռնի, ուղիղ գնացինք Ղազարի տուն։ Այստեղ էր նաև Գալուստը։ Դեռ նոր էինք մի քանի բառ փոխանակել, երբ վազելով ներս ընկավ Ղազարի եղբոր տղան՝ Պողոսը, ու բղավեց.

— Զորք է գալիս։

— Շա՞տ են,— հարցրի ես։

— Մի հիսուն հոգի կլինեն,— պատասխանեց Պողոսը։

— Գևորգ,— ասաց Գալուստը,— իմ ու Ղազարի ձեռին մոսին հրացաններ են։ Մենք կքաշվենք դիմացի սարը, իսկ դուք աշխատեք աննկատ շարժվել Տալվորիկի ուղղությամբ։

Այդպես էլ վարվեցինք։ Չէր անցել կես ժամ, երբ հրացանային համազարկի և ապա նաև գոռում-գոչյունի ձայներ, աղիողորմ ճիչեր լսվեցին։ Երբ շուտ եկանք, մի անհավատալի պատկերի ականատես եղանք։ Ղազարն ու Գալուստը բարձրացել էին սարալանջի ժայռին, ողջ հասակով կանգնել ու կրակում էին դեպի սարը շարժվող թուրքական ջոկատի վրա։ Թուրքերը ևս կրակում էին։ Իսկ երբ թուրքերը 500—600 մետր մոտեցան, Գալուստն ու Ղազարը ժայռից իջան և բարձրանալով մի քանի հարյուր մետր, շուտ եկան ու շարունակեցին կրակել։

— Հրաշք է,— տեսնելով այդ՝ բացականչեց Մակարը,— ասի մի հրացանով թուրքի մի գնդի դեմ կարելի է կռվել։

— Բա դու դեմ ես Կովկասի հետ կապին։ Եթե այդ կապը չլիներ, Գալուստի ու Ղազարի ձեռքին ոչ թե մոսին, այլ բերդանկա հրացան էր լինելու և այն ժամանակ ասված գիտեր, թե ես ու դու հիմա մեռած էինք, թե կենդանի»։

Մի սկզբունքային նշանակություն ունեցող հարցում ևս Գևորգն ու Մակարը տարակարծիք էին։ Գևորգը հայ ժողովրդի՝ օսմանյան տիրակալության դեմ պայքարի հաջողության գրավականն էր համարում հայ-քրդական դաշինքը։ Նա գտնում էր, որ Արևմտյան Հայաստանն իր ազգային կազմով միատարր չէ։ Հայերի հետ կողք կողքի ապրում էին Թուրքեր, հույներ, ասորիներ և այլն։ Բայց, տոկոսային առումով, հայերից հետո ամենաշատը քրդերն էին։ Այն պայմաններում, երբ գործնականում անհնար էր հայ և Թուրք աշխատավորության համագործակցությունը, առանց քրդերի հետ դաշինքի, հայերի ազգային ցանկացած շարժում դատապարտված էր պարտության։

Ի դեպ, 1900-ական Թվականներին արևմտահայ հասարակական հոսանքների առաջ կանգնած էր մի երկընտրանք՝ օսմանյան լծից ազատագրվելու համար ո՞ւմ հետ դաշնակցել՝ քրդերի՞ Թե Թուրքական «դեմոկրատական-հեղափոխական ուժերի», տվյալ դեպքում՝ երիտԹուրքերի հետ։ Դաշնակները գտնում էին, որ պետք է դաշինքի եկրեր փնտրել երիտԹուրքերի հետ, որովհետև Թուրքիայում միակ իրական ուժը, որը ի վիճակի էր տապալելու սուլԹանական կարգերը, այդ կուսակցությունն էր։

Դաշնակների ընդդիմախոսները, այդ Թվում և Գևորգը, համաձայնելով, որ սուլԹանական տիրակալության դեմ պայքարում երիտԹուրքերի կուսակցությունն իսկապես առաջատար դեր ուներ, միաժամանակ գտնում էին, որ այդ կուսակցությունը օսմանյան կայսրության կազմի մեջ եղած ժողովուրդներին և, մասնավորապես, հայ ժողովրդին ազատություն չի տա, որ այդ ազատությունը կարող է ձեռք բերվել միայն պայքարի միջոցով, իսկ այդ պայքարում հայերի բնական դաշնակից կարող են լինել քրդերը։

Մակարը դեմ էր դաշինքին Թե՛ երիտԹուրքերի և Թե՛ քրդերի հետ։ Նա Գևորգին զգուշացնում էր, որ գլխավորը սեփական ուժերի համախմբումն է, որովհետև «քրդական ցեղապետները մեզ հետ են, երբ մենք ուժեղ ենք, մեր դեմ են, երբ մենք Թույլ ու անօգնական ենք։ Նույնը և Թուրքական մտավորականությունն ու սպայությունը»։ Ամեն անգամ, երբ Գևորգը հյուր էր գնում քուրդ ցեղապետներին, Մակարը շատ էր անհանգստանում։ Նրան միշտ Թվում էր, Թե քրդերը սիրաշահելով միջոցներ էին որոնում նրան ֆիզիկապես ոչնչացնելու համար։ Միայն այս հարցում՝ քրդերի նկատմամբ վերաբերմունքի հարցում, Մակարն ու

Գևորգը ընդհանուր հայտարարի չեկան և ամեն մեկը մնաց իր կարծիքին։ Բայց սխալ կլիներ մտածել, Թե դա կարող էր պատճառառանալ, որպեսզի Մակարը խզեր կապը Գևորգի հետ, միանգամից հօդս ցնդեցներ այն ամենը, ինչ ստեղծվել էր համատեղ մաքառումների ընԹացքում, զրկանքների ու զոհաբերությունների գնով։ «Ոչ, պատճառը այդ չէ,— վճռեց Գևորգը,— իսկ եԹե օգտագործել են Մակարի միամիտ, հախուռն բնավորությունը։ Բայց ո՞վ»։

Անցան օրեր, և Գևորգի համար առեղծվածը մնաց առեղծված։ Հայդուկի անհանգիստ, վտանգներով լի կյանքը Գևորգին Թույլ չտվին երկար մնալու այդ մտածմունքների ու մտահոգությունների մեջ, նրան դուրս քաշեցին ու տարան լեռնային կածաններով, անորոշ բախտին ընդառաջ։ Այնուամենայնիվ, նա չկարողացավ դիմանալ Մակարից և մյուս հայդուկներից բաժանված մնալու վիճակին։ Մի քանի օր հետո նրանց անձամբ գտավ, ետ վերադարձրեց զենքերը, Մակարի հետ կողք կողքի նստած՝ երեխայի նման հոնգուր-հոնգուր լաց եղան և, առանց նույնիսկ մի բառ փոխանակելու, վերադարձան Մառնիկի անտառ։ Նրանք այդպես էլ այլևս խոսք չբացեցին այդ ծանր միջադեպի մասին։ Նրանցից յուրաքանչյուրը Թանկ էր գնահատում մյուսի հոգու խաղաղությունը, որպեսզի իրեն Թույլ տար բացատրվելու։

«ԳԵՎՈՐԳԸ ԽԵԼՈՒԵԼ Է...»

Ալվարինջի տխուր դեպքերը երկար ժամանակ իրենց կնիքը Թողեցին Գևորգի տրամադրության և գործունեության վրա։ Բնությամբ մարդասեր ու մարդամոտ՝ նա սկսել էր խուսափել ընկերներից, օրերով ու շաբաթներով քաշվում էր Հովնանի անտառ։ Նրան ավելի ու ավելի էր մտահոգում հայդուկային շարժման վաղվա օրը։ Այդ շարժումը չէր կարող անվերջ մնալ ինքնապաշտպանության կաղապարի մեջ։ Միայն օրվա հոգսերով ապրելը, հեռանկարի բացակայությունը չէր կարող բացասաբար չազդել շարժման, մասնավորապես, նրա բարոյական հենքի վրա։ Գևորգը նպատակահարմար չէր համարում իր մտատանջությունները կիսել հայդուկների, ինչպես նաև խմբերի ղեկավարների հետ։ Նա չէր ուզում նրանց մեջ խախտել հավատը

ջարժման ապագայի նկատմամբ։ Գևորգը խորհում էր, քննում։ Նա ելք էր որոնում։ Իսկ ժամանակը չէր սպասում։ Նրա «պասսիվությունը» թե՛ թշնամիների և թե՛ զինակիցների կողմից, չէր հասկացվում։ Հայդուկների շրջանում նույնիսկ ծայր առան անհնպաստ խոսակցություններ։ Ռուսաստանում, այդ թվում՝ Անդրկովկասում, ծավալված հեղափոխական շարժումների պայմաններում հայդուկների գործունեության պասսիվացումը ավելի լավ էր երևում։ Ստեղծվում էր այն տպավորությունը, թե ազատագրական շարժման օջախները տեղափոխվել են հյուսիս, մտել Արևելյան Հայաստանի գյուղերն ու քաղաքները։ Խզվել էր կապը Կովկասի հետ. ո՛չ զինված ջոկատներ էին գալիս, ո՛չ զենք էր ստացվում։

1906 թվականի ուշ աշունն էր։ Գևորգը հայդուկներին բաժանեց գյուղերում ձմեռն անցկացնելու համար, իսկ ինքը, փոքրիկ ջոկատով, մի քանի ցուցադրական այցելություններ ունեցավ քրդական ցեղերին հասկացնելու, որ ինքն ու հայդուկությունը կան և ոչ միայն կան, այլև երբեք այդքան ուժեղ չեն եղել։ Համոզվելով, որ առայժմ քուրդ ցեղապետները հայերի դեմ որևէ քայլի չեն համարձակվի դիմել, վերադարձավ Փեթար։

Արդեն գիտենք, որ սուլթանի հրամանով Սասունի վանքերը վերածվել էին զորանոցների։ Ասկյարների զորակայան էր դարձել նաև հռչակավոր սուրբ Կարապետի վանքը։

Այս վանքը կառուցված էր Բինգյոլի գեղատեսիլ լանջին, Խնուսից մի քանի կիլոմետր հյուսիս-արևմուտք, Մժնկերտ գյուղի դիմաց, Էրզրում տանող ճանապարհից ոչ հեռու։ Ըստ ավանդության, այս վանքը Գրիգոր Լուսավորչի դաստակերտն էր և կառուցված էր նրա կողմից։ Գրիգոր Լուսավորիչը Ս. Կարապետի մասունքը Կեսարիայից Հայաստան բերելիս, երդվեց. «Որտեղ սպիտակ ջորին հոգնի և ծունկը գետնին զարկի, այնտեղ վանք կառուցել և մասունքը այնտեղ ամփոփել»։ Մժնկերտ գյուղի ձորակով բարձրանալիս, ջորին ծունկը գետնին խփեց։ Հենց այդտեղ էլ կառուցվեց վանքը և կոչվեց Ս. Կարապետ։ Այս վանքը մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալի դեր է խաղացել։

Բիթլիսի կուսակալը ոտի էր հանել բոլոր զորամասերն ու ոստիկանությանը՝ Գևորգին գտնելու համար։ Ջյունաշատ ու ցուրտ ձմեռը խանգարում էր արագ տեղափոխությունների միջոցով հետապնդողներից կտրվելու և հետքը կորցնելու։

Գևորգը Գալեի ու Մանուկի հետ ձմեռում էր անտառում։ Ցրտահարվում են Մանուկի ոտքերը, Գալեի՝ ականջները։ Մըրսում և հիվանդանում է նաև Գևորգը։ Բայց նրանք առանց կանգառի առաջ էին շարժվում դեպի ս. Կարապետի վանքի բարձունքները։ Մոտակա բոլոր գյուղերում թուրքական զինվորներ կային, որը բացառում էր հայդուկների մուտքը գյուղերը։ Բուքն ու սառնամանիքը ավելի են սաստկանում։ Այլևս անհնար էր դրսում մնալ։ Եվ Գևորգը դիմում է ծայրահեղ քայլի, որոշում է մտնել ս. Կարապետի վանքը։ Վանքում այդ ժամանակ ավելի քան 100 հոգուց բաղկացած թուրքական ջոկատ կար, որն իր հսկողության տակ էր վերցրել վանքի ողջ շրջապատը, մուտքերն ու ելքերը։

Գևորգին հաջողվում է մի հովվի միջոցով կապվել Ստեփան վարդապետի հետ։ Վանքի կտուրին հերթապահող թուրք զինվորները, բքի պատճառով, մի քանի քայլից այն կողմ ոչինչ չէին տեսնում ու ցրտից դեմքները ծածկած՝ ետ ու առաջ էին քայլում։ Օգտվելով դրանից՝ Գևորգը աննկատ հայտնվում է վանքի պարսպի տակ, ապա ձնագնդի շարտում Ստեփան վարդապետի պատուհանին։ Պատուհանը բացվում է և մի պարան կախվում։ Գևորգը մագլցում է վեր։ Հիվանդ էր, ձեռքերը սառել էին։ Բոլոր ճիգերը գործադրելով հասնում է պատուհանին, ներս սողոսկում ու ուշագնաց ընկնում խցի հատակին։ Ստեփան վարդապետի խնամքի ու հոգատարության շնորհիվ մի քանի օր անց նրա ջերմը անցնում է։ Եվս մի քանի օր՝ և Գևորգը լրիվ ապաքինվում է։ Նա մեկ ամիս մնում է վանքում, իրեն փընտրող թուրք զինվորների հետ նույն հարկի տակ։ Երբ եղանակները մի փոքր մեղմանում են՝ գաղտնի հեռանում է վանքից։

Գևորգը գնում է Խնուսի կողմերը և մինչև գարուն մնում այնտեղ։ Նա միշտ էլ Խնուսում հայդուկային շարժման ծավալմանը մեծ ուշադրություն էր դարձնում։ Գևորգը փափագում էր Խնուսում և Բասենում ստեղծել հայդուկային ջոկատներ ունեցող գյուղերի մի շղթա, որոնք կապահովեին Սասունի կանոնավոր կապը Անդրկովկասի հետ։

Գևորգին հաջողվում է Խնուսի քրդերից (Աղդո, Ֆլեթ) և հայերից (Օհան, Մարտիրոս, Տիգրան, Միսակ, Մոսո) ձևավորել կապավորների մի հուսալի խումբ, որն աշխատում էր անխափան։ Բայց որոշ ժամանակ անց թուրքերին հայտնի դարձավ այդ կապավորների գոյությունը, և նրանց վրա իշխանությունների կողմից հսկողություն սահմանվեց։ Մշտական հսկողության տակ էր նաև Մոսոն։ Նրանց գյուղը ճանապարհի վրա էր։

Ամիսը երկու անգամ նա Կովկաս գնալ-գալիս, անցնում էր իրենց գյուղի կողքով, բայց գյուղ մտնել չէր համարձակվում, այնտեղ ոստիկաններ կային։ Մի անգամ էլ չկարողացավ իրեն զսպել ու մտավ գյուղ։ Ոստիկանությունը և խնուսից բերված զորամասը պաշարում են գյուղը։ Մոսոն իր մոտ եղած նամակներն այրում է, մորն ու սիրած աղջկան հրաժեշտ տալիս, ձի նստած արշավում դեպի Թուրքերը, հուսալով ճեղքել շրջապատման գիծը։ Երեք զինվոր սպանվում են։ Վերջին պահին, երբ համարյա ճեղքել էր շղթան, թշնամու գնդակը թիկունքից հասավ նրան։ Անվեհեր կապավորը զոհվեց։

Գևորգի խնուս գալու նպատակներից մեկն էլ այն էր, որպեսզի կարողանար պայմաններ ստեղծել, կարիքի դեպքում, Սասունից որոշ քանակությամբ սովյալների ժամանակավորապես խնուս տեղափոխել, դեպի այլ երկրներ արտագաղթը կանխելու համար։ Արոս գյուղում, մեկ օրվա ընթացքում, նրա շուրջը հավաքվեցին 25 զինված հեծյալներ, որոնց թվում՝ 5 քրդեր։ Բոլոր գյուղերում նրա երևալը ոգևորության ալիք էր առաջացնում, ստեղծվում էին ինքնապաշտպանական նոր ջոկատներ։

Գևորգը, երբ անցնում էր Ջեռնակ սարի ստորոտով, ուշադրություն դարձրեց մի վիթխարի ժայռաբեկորի, որը կանգնած էր հողասյան վրա և դրա համար էլ շարժվում էր։ Ժաժան քարն էր։ Փորձեր էին եղել եզների ու գոմեշների միջոցով քարը գցել, սակայն ապարդյուն։ Քարը շարժվում էր, բայց ամուր կառչած էր հիմքին։ Այդպես էլ սասունցին է՝ մտածեց նա։

Երբ խումբը մոտենում էր Գովանդուկ գյուղին, նրա դիմաց նկատվեց ոստիկանական մի ջոկատ, որը գյուղերն ընկած հայդուկներ էր փնտրում։ Ջոկատի հրամանատարը բղավեց. «Ո՞վ եք»։

— Ես Գևորգ Չաուշն եմ։ Կարո՞ղ եմ երկու զինվորի հետ մոտենալ։ Հետդ խոսելիք ունեմ։

Բինբաշին համաձայնեց։ Գևորգը մոտեցավ։ Քիչ անց զրուցակիցները բաժանվեցին բարեկամաբար։ Բինբաշին իր ջոկատի անդամներին արգելեց այդ հանդիպման մասին որևէ տեղ պատմել։ ... Խնուս բերդում գտնվելու ժամանակ տեղացիները դանգատվեցին, որ հարկահավաք Ֆայիմ էֆենդին հայերին թալանում է։ Գևորգը գիշերը գնում է հարկահավաք ոստիկանի տուն, ծեծում դուռը։ «Ո՞վ է»,— լսվում է ներսից։ «Գևորգ Չաուշն է»,— հնչում է պատասխանը։ «Էֆենդին քնած է»,— հնչում է ծառայի սարսափահար ձայնը։ «Գնա արթնացրու»,— հրամայում

է Գևորգը։ Երբ ծառան Ֆայիմին արթնացնելով տեղեկացնում է, որ դրսում Գևորգ Չաուշն է սպասում, վերջինս այլայլվում է և հրամայում իմանալ, թե անկոչ հյուրը ի՞նչ է ուզում։ «Գևորգ Չաուշը 400 ոսկի տուգանք է ուզում՝ ժողովրդին թալանելու և կաշառք վերցնելու համար»։

Հաջորդ օրը 400 ոսկին դրված էր նշանակված տեղում։ Այն բաժանվում է աղքատ և հարկահանների կողմից հարստահարված խնուսցիներին։

Թուրքական ոստիկանությունը կազմված էր աշխատավորական ծագում ունեցող մարդկանցից, որոնք, հեղափոխական շարժումների ծավալմանը զուգընթաց ու դրանց ազդեցության տակ, առանձին ջանասիրություն չէին դրսևորում իրենց պաշտոնական պարտականությունների կատարման համար։ Նրանք հատկապես խուսափում էին հայդուկների հետ գործ ունենալուց, որովհետև համոզվել էին, որ հայդուկի վրա զենք բարձրացրած ոստիկանն անպայման վրիժառուների զոհն է դառնալու։ Օրինակ, շատ ժամանակ չէր անցել Ալվառինջի ողբերգական դեպքերից, երբ հայդուկները դարանակալեցին ու գնդակահարեցին այդ գյուղում հայդուկների վրա հարձակված բոլոր ոստիկաններին։ Ոստիկանների մեջ քիչ չէր նաև հայերի կողմից կաշառվածների թիվը։ Իսկ կաշառք ստանալու համար թուրք ոստիկանը պատրաստ էր ամեն ինչի, ընդհուպ մինչև հայդուկների գործակալ դառնալը։

Պատմում են նաև այսպիսի դեպք. Խալիլչաուշ գյուղում էր բնակվում մի անգրագետ, բայց շատ սրամիտ ու ընդունակ երիտասարդ, անունը Սիմե։ Նրա հորեղբորորդին՝ Տիգրանը, ոչ միայն Խնուսում, այլև Սասունում ու Տարոնում հայտնի մատնիչ էր։ Մատնիչին ֆիզիկապես ոչնչացնելու բոլոր փորձերը անհաջողության էին մատնվել։ Գևորգն այդ գործը հանձնարարում է Սիմեին։ Հանձնարարությունը կատարելու համար Սիմեն ծառայության է մտնում իր լրտես ազգականի մոտ և կարողանում շահել նրա վստահությունը։ Մատնիչին ամեն րոպե թվում էր, թե ինչ-որ տեղ թաքնված մեկը պատրաստվում է իրեն սպանել։ Երբ նա այդ մասին գանգատվում էր, Սիմեն պատասխանում էր կատակով.

— Մի վախենա։ Ո՞վ կարող է քեզ սպանել։ Եթե սպանելու հարկ լինի, այդ ես կանեմ։ Ամոթ չէ՞, որ իմ աղգականին ուրիշները սպանեն։

Մի քանի օր անց Սիմեն դավաճանին սպանեց, անցավ Սասուն և մտավ Գևորգի ջոկատը։

... Գևորգը ամեն ինչ անում էր, որ կանխի հայդուկային շարժման մեկուսացումը։ Նա, ինչպես վերևում նշվեց, առանձնահատուկ նշանակություն էր տալիս Անդրկովկասի հետ կապերին։ Այդ նպատակով, բացի Խնուս—Բասեն—Կարս գծից նա աշխատում էր հայդուկային միջանցք ստեղծել նաև Տարոն—Ախլաթ—Լեռնապար—Պարսկաստան ուղղությամբ։ Նրան հաջողվեց Ախլաթի 27 գյուղերում ինքնապաշտպանական ջոկատներ կազմակերպել։

Զենքեր տեղափոխելու ճանապարհ ունենալու համար նա սերտ հարաբերություններ էր ստեղծել Տիգրանակերտի ու դեպի Հալեպ տանող ճանապարհին ընկած գյուղերի քրդերի հետ։ Այդ նպատակով հաճախ էր երևում Հարավային Հայաստանի գավառներում։ Հալեպ—Տիգրանակերտ—Սասուն ճանապարհը նա դարձրեց զենք տեղափոխելու գլխավոր ուղի։ Սկսած 1900 թվականից՝ հայդուկները հիմնականում կարողացան զենքով ապահովվել։ Ըստ ռուսական հյուպատոսի տվյալների՝ միայն մի փոխադրումով տեղ էր հասցվել 400 հրացան։

Մի անգամ Գևորգը Տիգրանակերտում էր, երբ լուր ստացավ, որ քաղաքում օսմանյան սպաների գաղտնի ժողով է հրավիրված։ Գևորգի բոլոր ջանքերը իմանալու, թե սպաներն ինչ հարց են քննելու, ապարդյուն անցան։ Այնժամ որոշեց դիմել խիստ վտանգավոր քայլի. ձեռք բերեց թուրքական բանակի սպայի համազգեստ և մի հայդուկի հետ գնաց մասնակցելու սպաների ժողովին։ Ժողովի մասնակիցները նրա բարևն ընդունելուց հետո հարցրին, թե անծանոթ սպան որտեղի՞ց է գալիս։

— Վանից եմ գալիս և Պոլիս եմ գնում,— պատասխանեց Գևորգը։

— Երևի լսե՞լ եք Բերդակի կռվի և Գևորգ Չաուշի սատանայական զենքի մասին։

— Լսել եմ, գիտեմ, որ այդ կապակցությամբ սուլթանը շատ է մտահոգ։

Նախագահողը հայտնեց, որ սուլթանը Գևորգ Չաուշի գլխի համար խոստացել է հազար ոսկի։ Հավաքվել են որոշելու, թե ինչպես ձեռք գցեն հայդուկապետին, և ո՞վ հանձն կառնի այդ։

Տիրեց լռություն։ Նախագահողը հարցը կրկնեց, բայց այն կրկին անպատասխան մնաց։

— Ես կբերեմ Չաուշի գլուխը,— հայտարարեց Գևորգը։

— Այդ ինչպե՞ս։

— Ահա, վերցրու Գևորգ Չաուշի գլուխը,— գլուխը դեպի նախագահողը երկարելով՝ ասաց Գևորգը։

Մինչ թուրք սպաները զարմանքից ու սարսափից մեխվել էին իրենց տեղերում, Գևորգն անհետացավ։

ՊԱՐՈՒՄ ԵՆ ԿՌՎԵԼՈՎ ԵՎ ԿՌՎՈՒՄ ՊԱՐԵԼՈՎ

1907 թ. ապրիլին Գևորգը հեռավոր ուղևորությունից վերադառնում էր ս. Կարապետի վանք։ Արդեն գարուն էր։ Գևորգը շարժման մեջ դրեց բոլոր հայդուկներին։ Նրանք փոքրաթիվ խմբերով ցուցադրական տեղաշարժեր էին կատարում թե՛ Սասունի և թե՛ Դաշտի, Խնուսի ու Ախլաթի գյուղերով, տպավորություն ստեղծում, որ ամենուրեք կան ու գործում են հայդուկային խմբեր։ Այս տեղաշարժերը լրջորեն անհանգստացրին թուրքական իշխանություններին։ Նրանք լրացուցիչ զինված ուժեր տեղափոխեցին Սասուն և հսկողության տակ առան նրա գյուղերը։ Գևորգը որոշեց էլ ավելի ակտիվ գործողությունների դիմել և թուրքական իշխանություններին հասկացնել, որ հայդուկային շարժման ծավալման առաջն առնել այլևս անհնար էր։ Այդ նպատակով իր խմբով ս. Կարապետի վանքից կտրեց-անցավ Տարոնի դաշտն ու բարձրացավ Նեմրութի լանջերը։ Այդ արշավը ահաբեկեց թուրք և քուրդ փաշաներին ու բեկերին և միաժամանակ Գևորգին հնարավորություն տվեց հարուստ տեղեկություններ հավաքել ինքնապաշտպանական ջոկատների, քրդական ցեղերի շարժումների ու վարքագծի, թուրքական իշխանությունների գործողությունների ու մտադրությունների մասին։

Երբ ճանապարհին հանդիպում էին թուրքական ջոկատներ, Գևորգը կայծակնային արագությամբ հարձակվում էր նրանց վրա, շեշտակի հարվածներ հասցնում և նույն արագությամբ հեռանում։ Այդ պատճառով, թուրքական ջոկատները գերադասում էին ոչ թե վերահսկել հայկական գյուղերի անցուդարձը, այլ մնալ զորանոցներում կամ իրենց հենակետերում։

Մառնիկի անտառում հրավիրված էր ինքնապաշտպանության ջոկատների ղեկավարների ու հայդուկների ժողով, որը քննում էր կենսական նշանակություն ունեցող հարցեր՝ հրաղենի ու զինամթերքի ապահովման գործի բարելավում, քաղաքա-

կան բանտարկյալներին օգնության կազմակերպում, քրդերի հետ կապերի ու համագործակցության զարգացում, ելնելով ստեղծված իրադրությունից՝ հայդուկային խմբերի տեղադրության վերանայում, Անդրկովկասի հետ կապերի ուժեղացում, հայերի հողերին տիրացած մահմեդականների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը և այլն։ Ժողովում տիրում էր ոգևորության և ինքնապաշտպանության գործին աներեր հավատարմության, Գևորգի նկատմամբ սիրո ու վստահության տրամադրություն։ Հավանաբար այս ժողովը Գևորգը հենց այդ նպատակով էլ հրավիրել էր՝ մերժելու տարընթացության, մասնատվածության ու ինքնագլխության, չնայած մասնակի, բայց առկա երևույթները, ամրապնդելու շարժման միասնությունն ու համախմբվածությունը։ Ժողովն ավարտվեց նրա մասնակիցների խրոխտ պարով։ Պարողների շարքը գլխավորում էր Գևորգը։ Քոչարի պարող սասունցիների ոտքերի հարվածներից թնդում էր անտառը։ Այս մարդիկ պարում էին կռվելու պես և կռվում՝ պարելու պես։ Իսկ երբ գիշերը վրա հասավ, հայդուկները, չորս խմբի բաժանված մեկնեցին տարբեր ուղղություններով։ Գևորգն իր խմբով գնաց դեպի Խնուս, բայց այնտեղ երկար չմնաց. նրա խմբի վրա հարձակվեց թուրքական ոստիկանության ու ասկյարների մի ջոկատ։ Հայդուկները հակահարձակման անցան։ 40—50 րոպե անց թուրքերը լեղապատառ փախան՝ ընդհարման վայրում թողնելով 12 զոհված։ Բնորոշ է, որ այս ընդհարման ժամանակ հավաքվել էին մեծ թվով քրդեր և հեռվից դիտում էին մարտը։ Հայդուկների հաղթանակը նրանց վրա շշմեցուցիչ տպավորություն թողեց։ Այդ հաղթանակի շնորհիվ Խնուսի գյուղերում մ'ն քանի ամիս ոչ ոստիկան և ոչ էլ աշիրեթապետ երևաց։ Գևորգի խումբը կտրեց անցավ լեռները և Արածանու վրայով մտավ Շեխլան գյուղը։ Այստեղ նա մի այնպիսի պարահանդես և ուրախություն կազմակերպեց, Գևորգը այնպես պարեց, որ մասնակիցների հիշողության մեջ մնաց ընդմիշտ։ Դա բնորոշ էր Գևորգի բնավորությանը։ Նա ոչինչ կիսատ-պռատ չէր անում։ Նա ցանկացած գործի մեջ հոգի էր դնում և կատարում հիմնավորապես։ Երեկոյան կողմ նրան լուր բերին, որ ս. Հովհաննու անտառի կողմերը թուրքական մի ստվարաթիվ ջոկատ է երևացել։ Գևորգը կտուրն է բարձրանում և հեռադիտակով հետևում թուրքական զորամասի գործողություններին։ Ապա նա իր ջոկատը բաժանում է երկու մասի և քերծերով անցկացնում թուրքա-

կան զորամասի թիկունքը։ Իսկ գյուղի ջոկատներին հանձնարարում է մտնել անտառ և թուրքերի ուղղությամբ մի քանի հարամազարկ տալուց հետո, արագ հեռանալ։ Նրանք այդպես էլ արեցին։ Թուրքերը կարծելով, թե անտառում կրակողները հայդուկների հիմնական ուժերն են, ուղղվեցին դեպի անտառ։ Այդ ժամանակ Գևորգի ջոկատները թիկունքից հարձակման անցան և հարկադրեցին թուրքերին փոքրիկ խմբերի բաժանվելով՝ հեռանալ անտառի խորքը։ Հայդուկները հետապնդելով շրջապատեցին այդ խմբերն ու ոչնչացրին։ Ապա կայծակնային արագությամբ հեռացան դեպի Աշտիշատ։

Հաջորդ օրը թուրքական հրամանատարությունը նոր մեծ ուժեր ուղարկեց ս. Կարապետ վանքի ուղղությամբ, համոզված, որ Գևորգն ու իր ջոկատն այդ շրջանում են։ Մի ամբողջ շաբաթ ասկյարները ոտնատակ էին տալիս հայկական ու քրդական գյուղերը, բայց Գևորգ Չաուշին ոչ մի տեղ գտնել չկարողացան։

Մինչդեռ Գևորգի խումբը Դաշտի մի գյուղից մյուսն էր անցնում, կազմակերպում, ոգևորում ինքնապաշտպանության խմբերին։

Նա Դաշտի արևմուտքում գտնվող Ցրոնք գյուղից գնաց արևվելք, նեմրութի ուղղությամբ։ Երբ հասավ Դաշտի կենտրոնական մասը, թեքվեց դեպի Հացիկ, Խարս, Վարդենիս գյուղերը։ Ապա ետ դարձավ և գնաց Խվներ։ Բոլորը սպասում էին, որ նա երթը կշարունակի հյուսիս, բայց շուտ եկավ և թուրքական զորամասերի կողքով անցնելով՝ բարձրացավ Մառնիկ։ Մեկ շաբաթ աչքից կորավ, ոչ ոք նրա տեղը չգիտեր։ Թուրքական զորամասերն այդ ամբողջ ժամանակ Դաշտի գյուղերն ընկած ճգնում էին հասնել Գևորգի ջոկատին։ Վերջապես Քյոսա Բինբաշին հասկացավ Գևորգի մտադրությունը, որը թուրքական զորամասերն իր ետևից գցած սրընթաց արշավում էր, որպեսզի վերջիններն այդ երթերում հոգնեին, կորցնեին մարտունակությունը, ի վիճակի չլինեին և ժամանակ չունենային պատժողական լուրջ գործողությունների դիմելու։

Բինբաշին իր զորամասերին ետ կանչեց զորանոցները։

1907 թ. մայիս ամիսն էր։ Գևորգը լեռներից նորից իջնում է Դաշտ։ Անձրևոտ ու ցուրտ գիշեր էր։ Հետզհետե քայլելը դժվարանում էր, մինչև ազդրերը խրվում էին ցեխի մեջ։ Գևորգը ստիպված էր Մանուկին իր տաբնյակի հետ ուղարկել մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քարձոր գյուղը՝ ձիեր բերելու։ Շատ չանցած նրանք վերադարձան՝ իրենց հետ բերն-

լով 40 ձի, ինչպես նաև մի խումբ քուրդ գյուղացիների։ Քրդերը հայդուկներին հյուրասիրելու համար ուտելիք էին բերել։ Գևորգը նախ ներողություն է խնդրում գյուղացիներին անհանգստություն պատճառելու համար և ապա ասում, որ 10 օր հետո բոլոր ձիերը կվերադարձվեն։ Նա դրամ է տալիս՝ գյուղի աղքատ քրդերին բաժանելու համար։ Երիտասարդները ոտքով, իսկ մյուսները՝ ձիերով, խումբը առաջ է շարժվում դեպի ս. Հովհաննու անտառը։ Հաջորդ օրը Գևորգին լուր են բերում, որ թուրքական բանակը շարժվում է դեպի անտառ։ Գիշերը կես էր եղել, երբ Գևորգը խմբին ոտքի հանեց։ Նրանք անտառի միջով գնացին դեպի Ղզլաղաջ գետակն ու մտան հեղեղատը։ Հետքերը կորցնելու համար նա ջոկատին ոչ թե մյուս ափը հանեց, այլ առանց ջրից դուրս գալու, շարժվեցին գետի հոսանքի ուղղությամբ։ Հայդուկների անտառ մտնելու հետքերը թշնամին պետք է տեսներ, իսկ անտառից պետք էր այնպես հեռանալ, որ հետքեր չմնային և տպավորություն ստեղծվեր, թե հայդուկները ոչ թե դուրս են եկել, այլ խորացել են անտառի մեջ։ Ռազմական այս խորամանկությունը հաջողվում է։ Գևորգի խումբը հասել և հանգստանում էր Քուրդմեյդան հայկական գյուղում, իսկ թուրքական զորամասերը շրջապատել էին անտառը, տիրբեր գրավել ու դնդակոծում էին։ Մինչև կեսօր հրաձգությունը շարունակվեց։ Թուրքերը վախենում էին անտառ մտնել։ Օրվա երկրորդ կեսին թշնամին, անտառի շրջապատումը շարունակելու համար պահեց միայն հետևակը, իսկ հեծելազորը Դաշտ իջեցրեց՝ հայդուկներին այնտեղ ևս փնտրելու համար։ Հեծելազորը մոտենում էր Քուրդմեյդան գյուղին։ Գևորգը նկատի ունենալով, որ 100 հեծյալներից բաղկացած այդ ջոկատը հետևակից շատ էր հեռացել, որոշում է օգտվել դրանից. նա մի խումբ հեծյալ հայդուկների ուղարկում է Շեյխլան գյուղի ուղղությամբ։ Մոտենալով գյուղին, ջոկատը շրջվում է ու կրակ բացում թուրքական հեծելազորի վրա։ Վերջիններս իրենց ճանապարհը փոխում են և շարժվում դեպի հայդուկները, որոնք սրընթաց հեռանում էին լեռները։ Նրանք արդեն հինգ կիլոմետր հեռացել էին, երբ Գևորգը իր մոտ եղած հայդուկներով դուրս է գալիս թշնամու հեծյալների թիկունքը, նրանց կտրում հետևակից ու վերցնում կրակի տակ։ Նույն ժամանակ թուրքերին հետապնդած ջոկատը դիրքեր է գրավում ու հարվածում թշնամուն։ Թուրքերը ետ են վերադառնում։

Հայդուկների երկու խմբերը մտնում են Արածանի գետն ու անցնում մյուս ափը։ Թշնամու հետևակը թողնում է անտառը և քիչ անց արդեն Արածանիի հակառակ ափին էր։ Բայց չէր համարձակվում հայդուկների կրակի տակ գետն անցնել։

Հայդուկները Արածանիի ափով շարժվում էին վեր, ապա թեքվում հարավ-արևմուտք ու գնալով հասնում պատմական Աշտիշատ։ Այս շրջանի լեռնային մասերում բնակվում էին քրդերը, իսկ հարթավայրում՝ հայերը։ Հակառակ կողմում վարարած Արածանին էր։ Այսինքն՝ թշնամու հարձակման դեպքում հայդուկները հեռանալու հնարավորություն չունեին և ծուղակն էին ընկնելու։ Գևորգը որոշում է անմիջապես հեռանալ։ Նա փեթաբրա Մանուկին ու Ախոյին հանձնարարում է աննկատ մոտենալ Սուլուխի կամրջին և առանց աղմուկ բարձրացնելու՝ ոչնչացնել թուրք պահակներին։ Հարևան Կուրավու գյուղում թուրքական ուժեղ ջոկատ կար և աղմուկի դեպքում կմիջամտեր։ Իսկ դա կարող էր ճակատագրական նշանակություն ունենալ։ Մանուկն ու Ախոն հանձնարարությունը կատարեցին հմտորեն։ Հայդուկներն անցան կամուրջն ու շարժվեցին դեպի Քրդագոմ գյուղը։ Այստեղ լուր ստացվեց, որ Մշո կառավարիչը նոր մեծաթիվ զորքեր է շարժում ս. Կարապետի վանքի շրջանը շրջապատելու և հայդուկներին Աշտիշատի կողմերում բռնելու համար։

Ասել կուզե՝ Գևորգը բացարձակ ճշտությամբ էր գնահատել իրադրությունը և խումբը ժամանակին դուրս բերել այդ շրջանից։ Նա թուրքական բանակին թողնելով, որ իրեն փնտրի ս. Կարապետի ու Արածանիի արանքում, շարժվում է Դաշտի գյուղերը։ Լուր ստանալով, որ Գևորգը գնում է Բիթլիսի ուղղությամբ, թուրքերը թե՛ Բիթլիսից և թե՛ Մուշից զորքեր են ուղարկում։ Թշնամուն հաջողվում է Դրմերտ գյուղի մոտ թիկունքից և ճակատից ընդհուպ մոտենալ հայդուկներին։ Երեկոյան կողմ Գևորգն իր հեծյալներով դուրս է գալիս Դաշտ, բայց այստեղ նրա դեմ է ելնում թուրքական մի հեծյալ ջոկատ։ Սակայն Գևորգը հանկարծակիի չի գալիս և, օգտվելով մթությունից, հարձակվում է այդ ջոկատի վրա ու ճեղքելով թշնամու շղթան՝ ցուցադրաբար շարժվում է Յրոնք գյուղը, ապա թուրքերի տեսադաշտից դուրս գալուց հետո կտրուկ շրջադարձ է կատարում ու սլանում դեպի Սասունի խորքերը։ Թշնամին նրա հետքը կորցնում է ու մի շաբաթ շարունակ ապարդյուն փնտրում։

Եվս մի քանի օր, և Գևորգն իր խմբով Սուլուխ հայաբնակ

գյուղում էր։ Գյուղում 150—200 տուն կար։ Սուլուխցիները քաջ մարդիկ էին. այս գյուղից տասնյակ հայդուկներ են դուրս եկել։ Գյուղը ծառաղուրկ էր, տեղավորված Մշո դաշտի սահմանագծին, մեջքը հենած լեռներին։ Սուլուխը գտնվում էր Մուշ—Էրզրում ճանապարհին, Մուշ քաղաքից 10 կիլոմետր հեռավորության վրա։ Գյուղի կողքին 12 կամար ունեցող հին ու հայտնի, ստրատեգիական ու տնտեսական բացառիկ նշանակություն ունեցող կամուրջն էր։

Գարուն էր։ Մուրադ գետի ջրերը բարձրացել էին և գետն անցնելը շատ դժվար էր, եթե չասենք՝ անհնար...

ՍՈՒԼՈՒԽ

Սուլուխ... 1907 թ. մայիսի 25-ին իր ջոկատով այստեղ եկավ Գևորգը։ Հաջորդ օրը Սուլուխ հասավ նաև Ռուբենը, որը եկել էր հայդուկներին հրաժեշտ տալու, որովհետև մյուս օրը ճանապարհ էր ընկնելու դեպի Կովկաս։ Մինչև մայիսի 26-ի վերջալույսը Սուլուխում հավաքվեցին 84 հայդուկներ։ Հաջորդ օրը սուլուխցի Մեսրոպի տանը ջուր տաքացրին, հայդուկների մեծ մասը լողացավ, խորոված պատրաստեցին և ուրախ կատակներով անհոգ նախաճաշում էին։ Ոչինչ սարսափելի չէ, երբ միասին են 84 հայդուկներ։ Այն էլ՝ Սասունի հայդուկների ընտրանին։ Դրսում նույնիսկ պահակներ չէին նշանակել։ Գևորգը թույլ էր տվել երկու լուրջ սխալ. նախ Սուլուխի տեղանքը թշնամուն հնարավորություն էր տալիս հեշտությամբ շրջապատելու հայդուկներին։ Բացի այդ, հայդուկային այսպիսի բազմանդամ ջոկատով երեք օր Սուլուխում մնալը խոհեմ չէր։ Եթե Գևորգը, համենայն դեպս, որոշել էր կանգ առնել Սուլուխում, ապա պետք է համապատասխան հանձնարարություններ տար Մուշի իր գործընկերներին։ Դժբախտաբար, այս անգամ Գևորգը պարտիզանական շարժման իր սկզբունքներն անտեսեց և դաժանորեն պատժվեց։

Նախաճաշը շարունակվում էր, երբ տանտերը գունատված ներս ընկավ ու բղավեց.

— Մուշից զորք է գալիս, անհամար զորք։

Գևորգը, վերցնելով հեռադիտակը, բարձրացավ կտուր և այն, ինչ տեսավ, ցնցեց նրան։ Խոփերի դաշտը սևացել էր սևազգեստ թուրքական բանակից, որ մորեխի պես շարժվում էր դեպի Սուլուխ։ Հարձակվող զորամասը, որ Համիդի անունն էր կրում, ղեկավարում էր Քյոսա Բինբաշին։

Գևորգը կատաղությունից ատամներն է սեղմում։ Ուրեմն Բինբաշին իսկապես որոշել էր ոչնչացնել հայդուկներին։ Դրա համար էլ գալիս է գաղտագողի և ուզում է հարցը լուծել հանկարծակի, շեշտակի հարվածով։

Թուրքական զորամասն այնքան էր մոտեցել, որ արդեն հնարավոր չէր գյուղից հեռանալ և խուսափել ճակատամարտից։ Գյուղի կողքից հոսում էր Արածանին, Մուրադ գետը։ Գարուն էր, գետը հորդացել էր, հեղեղի վերածվել, և անցնելը գրեթե անհնար էր։

Բացի այդ՝ թուրքական բանակի շարժումը դիտելիս Գևորգը հասկացավ, որ Բինբաշին լրիվ տեղեկություններ ունի, թե տրվյալ պահին որտեղ են հայդուկները և ինչով են զբաղված։ Այսինքն՝ Բինբաշին գյուղում լրտես ունի և հետևաբար, հազիվ թե փակած լիներ նաև գյուղից հեռանալու ճանապարհները։ Եվ իսկապես, հինգ հազար քրդեր արևելքից, հարավից ու հարավարևմուտքից շրջապատել էին Սուլուխը և սպասում էին Բինբաշու հրամանին։ Ուրեմն՝ ճակատամարտ։ Այս խորհրդածությունների ընթացքում Գևորգի ուղեղը տենդագին աշխատում էր, որոշում պաշտպանության գիծը և հայդուկների ու գյուղի զինված ջոկատների տեղադրման կետերը։ Ու երբ կտուրից վար իջավ, արդեն լրիվ պատրաստ էր պաշտպանության մանրամասն սխեման։ Եվ առանց ժամանակ կորցնելու՝ սկսեց հրահանգներ ու հրամաններ տալ։

— Հագո, Հասանոյի և երեք սուլուխցու հետ գնացեք կամուրջը պաշտպանելու։ Կյանքի գնով կամուրջը պետք է պաշտպանեք։ Եթե տիրանան կամուրջին, հնարավորություն կունենան առանց մեծ ջանքերի անցնելու մեր պաշտպանության թիկունքը։

— Ղազար, վերցրու մի խումբ և դիրքեր գրավիր գյուղի գերեզմանատանը։ Ոչ մի կերպ թույլ չտաք, որ թշնամին մեզ հարվածի աջ թևից։

— Ռուբենը տասը մարտիկներով թող դիրքեր գրավի գյուղի ծայրի քանդված մարագում՝ գյուղ մտնող խճուղին կրակի տակ առնելու համար։

— Մշեցի Ռուբենն իր խմբով թող դիրքեր գրավի ավերակ մարագից ձախ ընկած կիսաշեն եկեղեցու պատերին և նույնպես հսկողության տակ առնի խճուղին։

— Մանուկ, քո ջոկատով դիրքեր գրավիր գյուղի կենտրոնում, ս. Գևորգ եկեղեցու շրջակայքում։ Գյուղի միջին մասում, ճակատի ամբողջ երկարությամբ դիրքեր պիտի գրավեն Սուլուխի զինված ջոկատներն ու գյուղացիները։

Ինքը՝ Գևորգը, Գալեն, ցրոնքցի Էլոն, Մեսրոպը և սուլուխցի մի խումբ զինյալներ դիրքեր գրավեցին գյուղի առաջամասում, Քյուչուկի տան կտուրին։

Դիրքերի ընտրությունը կատարվեց ամենաճիշտ տարբերակով։ Հայոն կամրջի վրա, մշեցի Ռուբենը կիսաշեն եկեղեցու պատերի տակ, իսկ Ռուբենն ու Սայտո Պողոսը քանդված մարագում պետք է ապահովեին պաշտպանության գծի թևերը։ Գլխավոր հարվածային ուժը տեղադրված էր կենտրոնական մասում, որովհետև հենց կենտրոնական մասն էր իր վրա կրելու թշնամու գլխավոր հարվածը։ Գևորգը այստեղ ստեղծել էր եռաշար պաշտպանական գիծ։ Առաջամասում Գևորգն էր, նրա թիկունքում դիրքեր էին գրավել գյուղի զինված ջոկատները, իսկ երրորդ գծում, ս. Գևորգ եկեղեցու շրջանում, շենիկցի Ղազարի խումբն էր։

Պաշտպանական դիրքերի այս դասավորությունը վկայությունն էր Գևորգի փայլուն, պատերազմ վարելու ինքնատիպ տաղանդի և իրադարձությունների մեջ արագ ու ճիշտ կողմնորոշվելու կարողության։

Սասունի հայդուկների կռիվների գլխավոր սկզբունքն էր՝ ճակատամարտերի ժամանակ անընդմեջ տեղաշարժեր, բարձունքների վրա դիրքերի գրավում և դրանց անընդհատ փոփոխում՝ օգտագործելով լեռների ծերպերը։ Տեղանքի մյուս հնարավորությունների ճիշտ օգտագործում՝ թշնամուն հարվածելու նրա համար անսպասելի կետերում, անակնկալ տեղաշարժերի ու հարվածների միջոցով անցնելու թշնամու թիկունքը։

Սուլուխն այլ էր։ Այն գտնվում էր Բյուրակնի լեռների և Տարոնի դաշտի սահմանագծին։ Գյուղի թիկունքում բարձրանում էին լեռները, աջ թևում հոսում էր փրփրաբաշ Արածանին, իսկ ձախ կողմը Խոփերի դաշտի շարունակությունն էր։

Գիմացից գալիս էր թշնամու 3000 հոգուց բաղկացած մի զորաբանակ։ Ասենք նաև, որ հայդուկները, այդ թվում նաև Գևորգը, Սուլուխ էին եկել հետիոտն, առանց ձիերի։

Այդ նշանակում էր, որ թշնամուն թևերից հարվածելը և արագ ու հանկարծակի նրա թիկունքն անցնելը հնարավոր չէր։ Ո՞րն էր

ելքը։ Տակտիկական ինչպիսի՞ հնարք պետք է իրականացվեր թշնամու 100 անգամ գերակշռող ուժերի հարձակմանը դիմակայելու համար։ Պաշտպանական երեք գիծ ստեղծելով, Գևորգը ձգտում էր թշնամուն ծուղակը գցել և գյուղի փողոցներում նրան պատճառել մեծ կորուստներ։ Եթե թշնամին հաղթահարեր առաջին գծի դիմադրությունը, կմտածեր, որ հաղթել է հայդուկների գլխավոր ուժերին, որովհետև առաջին գծում կռվում էր անձամբ Գևորգ Չաուշը, հետևաբար նա, առաջին գիծն անցնելով, ավելի ինքնավստահ պետք է գյուղ մտներ։ Այստեղ նա կընկներ Սուլուխի մարտական ջոկատների, ինչպես նաև գյուղի մյուս մասերում դիրքեր բռնած հայդուկների կրակի տակ։ Դա հնարավորություն կտար մինչև մութն ընկնելը դիմադրել և գիշերը հեռանալ Սուլուխից։ Գևորգը խստորեն պատվիրեց, որ առանց իր ազդանշանի ոչ ոք չկրակի։ Թուրքական վաշտերը մոտենում էին։ Նրանք արդեն 100 մետր հեռավորության վրա էին, իսկ հեծյալ զորամասը սրարշավ գնաց դեպի ս. Գևորգի եկեղեցին։ Պայթեց Գևորգի հրացանը։ Բոլոր հայդուկները միաժամանակ կրակ բացեցին խիտ շարքերով առաջ եկող թուրքական վաշտերի վրա։ Թուրքերի մի մասը ճանապարհից դուրս եկավ ու պատսպարվեց փոսերի մեջ, քարերի ու թփերի տակ։ Ոմանք շփոթված վազեցին դեպի գյուղ ու թաքնվեցին պատերի տակ, իսկ հիմնական մասը ետ շրջվեց, հեռացավ, ու դուրս գալով մոսին հրացանի կրակի գոտուց, դիրքեր գրավեց։

Օրվա երկրորդ կեսին լսվեց թուրքական բանակի փողերի կանչը, և Քյոսա Բինբաշին երկրորդ անգամ հարձակման տարավ իր զորամասերը։ Այս անգամ թուրքերը առաջ էին շարժվում ոչ թե շարասյուներով, այլ ցրված մարտակարգով՝ վազքփորսող սկզբունքով։ Սկսվեց կատաղի ճակատամարտ։ Թուրքերը մեծ զոհեր էին տալիս, բայց համառորեն առաջ էին շարժվում։ Քյոսա Բինբաշին անձամբ էր ղեկավարում հարձակումը։ Նա արդեն Քյուչուկի տան պատի տակ էր, երբ գետնին տապալվեց։ Թուրքերի մի մասը, նրա մարմինը վերցրած, ետ գնացին, իսկ մյուսները առաջ շարժվեցին ու մտան հայդուկների դասավորության մեջ։

Գևորգից աջ կռվում էր Գալեն։ Հանկարծ նրա հրացանը դադարեց կրակելուց։ Գևորգը շուտ եկավ դեպի նա։ Իր հայդուկային պատանեկության ընկերը՝ Գալեն, սպանված էր։ Նա հանձնարարեց Գալեին իջեցնել Քյուչուկի ախոռը, իսկ ինքը շարու-

նակեց կրակել։ Բայց հանկարծ դադարեց կրակելուց նաև նրա հրացանը։ Զսպանակը փչացել էր։ Նա ծունկը գետնին իջեցրեց և փորձեց կարգի գցել հրացանը, բայց այդ ժամանակ մի գընդակ, ինչպես Ռուբենն է գրում, անցնելով Գևորգի «աջ թիկունքից խրվեց նրա ծնկի մեջ»։ Գևորգը մի կերպ կտուրից վար իջավ, մտավ ախոռ և գիտակցությունը կորցրած ընկավ զոհված ընկերոջ՝ Գալեի կողքին։ Քիչ անց թուրքերը գրավեցին Գևորգի զբաղեցրած դիրքերը, և Քյուչուկի կտուրի վրա կես ժամից ավելի կատաղի կռիվներ գնացին, մինչև որ Էլոյին հաջողվեց իր խմբով ետ գրավել այդ տունը և շարունակելով հետապնդել թշնամուն, հասնել մինչև խճուղի։ Գյուղ մտած թուրքերից շատերը շրջապատվեցին ու ոչնչացվեցին։ Նահանջող թուրքական զորամասերի ետևից հայդուկները շարժվեցին դեպի Կամուրջի թաղի տները և նոր դիրքեր գրավեցին։

Թուրքերը փորձեցին հեծելազորով անցնել գյուղի հարավային մասը և թիկունքից խփել հայդուկներին։ Սակայն հայդուկները հասկացան նրանց մտադրությունը և շեշտակի հարվածով ցրեցին այդ հեծյալ ջոկատը։

Տալով ավելի քան 150 սպանված և շուրջ 250 վիրավոր, ու Սուլուխը գրավել չկարողանալով, թուրքական հրամանատարությունը հարկադրված էր Մուշից թնդանոթներ խնդրել։

Հայդուկներն ու սուլուխցիները մութն ընկնելուն պես թողեցին իրենց դիրքերը և վերցնելով Գալեի դիակն ու վիրավոր Գևորգին, հեռացան Արածանիի ուղղությամբ։ Գյուղում մնաց միայն Տիգրանի հինգ հոգիանոց խումբը, որը շարունակեց կռվել, մինչև որ հայդուկներն ու բնակչությունը թշնամու կրակի գոտուց դուրս կգային։ Մութ գիշեր էր։ Մի բուռ հայեր թուրքական զորաբանակի քթի տակ զգույշ առաջ էին շարժվում։ Երբ մոտեցան Սուլուխի կամրջին, Հագոյին սպանված գտան։

Շենիկցի Մանուկը ալիզոնանցի Մքոյի ուսից վար բերեց Գալեի դիակը, համբուրեց իր ամենամոտ ընկերոջ ճակատը և նրա դիակն իջեցրեց Արածանիի ջրերի մեջ։ Նույն բանն արեցին նաև Հագոյի ու Հասանոյի դիակների հետ։ Վիրավոր Գևորգին կապեցին ձիու թամբին ու Մուրադ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ շարժվեցին դեպի Խաշլախտախ գյուղը։ Այստեղ Գևորգին դրեցին եղեգնուտում, կանաչ թփերով ծածկեցին, երկու սուլուխցու ապսպրեցին հսկել նրան և հեռացան։

Հաջորդ օրն իր զորախմբով այստեղից անցնելիս, քրդական

ցեղապետներից մեկը՝ Զայնալ բէկը, տնքոց է լսում։ Գնում է ձայնի ուղղությամբ։

Զայնալը խոտը ետ է տանում ու տեսնում է հայդուկի մեռնող դեմքը։

— Ջո՞ւր...

Նա Գևորգին իսկույն ճանաչում է և անմիջապես հանձնարարում Արածանիից ջուր բերել։ Զայնալը Գևորգի գլուխը բարձրացնում է և ջուրը մոտեցնում շուրթերին։ Հենց այդտեղ, քուրդ ցեղապետի ձեռքերի վրա, հոգին ավանդում է Գևորգը։

1907 թվականի մայիսի 28-ն էր։

Սուլուխի ճակատամարտի և Գևորգի սպանության մասին հիմնական գրավոր աղբյուրը Ռուբենի «Հայ հեղափոխականի մը յիշատակները» գիրքն է։ Սակայն այս իրադարձությունների մասին այդ գրավոր աղբյուրի և ճակատամարտի մասնակիցների պատմածների միջև լուրջ հակասություններ կան։ Եվ իսկապես։ Այնպես, ինչպես մինչև այժմ գրականության մեջ ներկայացված է Գևորգի մահը, մի քանի մանրամասներում հանդիպում է ճակատամարտի մասնակիցների տրամաբանական առարկություններին։

Նրանք անհնար էին համարում, որ տանիքին գտնվող Գևորգի վրա ներքևից կրակելիս գնդակը դիպչեր աջ թիկունքին և միաժամանակ ջարդեր ծունկը։ Եթե ընդունենք, որ գնդակը սկզբում դիպել էր ծնկին և ապա մտել կրծքի աջ վանդակը, ապա ծնկի ոսկորների ջախջախված լինելու փաստը բացառում է նաև այդ հավանականությունը, մանավանդ, որ գնդակը Գևորգի մարմինը ծակել անցել էր։ Այսինքն՝ անպատասխան են մնում այն հարցերը, թե ինչպե՞ս և ո՞ւմ գնդակից վիրավորվեց Գևորգը։ Գևորգի վերքը մահացու չէր, և ինչպես Ռուբենն էր ասում՝ նման վերքով նա կարող էր 1—2 շաբաթից ոտքի կանգնել։ Գևորգը մեռավ արյունաքամ լինելուց, այլ խոսքով, անուշադրությունից։ Իսկ ինչո՞վ բացատրել այդ անուշադրությունը հայդուկների առաջնորդի նկատմամբ։ Խոսքը սովորակա՞ն անուշադրության, թեժ մարտերի պատճառով օգնելու անհնարինությա՞ն, թե դիտավորության մասին է։ Նորից հարցեր, հարցեր, որոնք, դժբախտաբար, որոշակի պատասխան չունեն։ Ռուբենը գրում է, որ երբ Գևորգին դրեցին եղեգնուտների մեջ, նրան պաշտպանելու ու խնամելու համար թողեցին երկու սուլուխցու, իսկ ըստ Կարո Սասունու, թողեցին մեկ մարդու՝ սու-

լուխցի Միհրանին։ Մեկ այլ հեղինակ գրում է, որ թողեցին երեք հոգու։ Բայց երբ Զայնալի խումբը եղեգնուտ է մտնում, Գևորգի մոտ ոչ ոք չի լինում։ Ո՞ւր կորան (կամ կորավ) այդ պահապանները։ Ըստ ոմանց, նրանք գիշերը գնացել էին գյուղ՝ միջոցներ գտնելու, Գևորգին տեղափոխելու համար, բայց մի քանի ժամ հետո, երբ վերադարձան, Գևորգին իր տեղում չգտան։

Այդ նույն ժամանակ թուրքական ամբողջ բանակը տարածվել էր Սուլուխում, նրան հարող գյուղերում, դաշտերում ու լեռներում, որպեսզի գտնի ոչ միայն Գևորգին, այլև նրա կնոջն ու որդուն։ Սուլուխի խայտառակությունը, սուլթանի ամենատաղանդավոր հրամանատարներից մեկի՝ Քյոսա Բինբաշու կորուստը, համարժեք հատուցում էին պահանջում։ Եվ պատահական չէր, Զայնալ բեկի հեռանալուն պես այնտեղ հայտնվեց թուրքական մի ջոկատ։ Նրանք անմիջապես Գևորգի սպանվելու լուրը հայտնեցին Մուշ և ապա ձայլի վրա դնելով նրա դիակը՝ հաղթական շեփորներ հնչեցնելով, շարժվեցին հյուսիս, թանկարժեք ավարը իրենց տերերին հասցնելու։

Մահվան թափորը դեռ չէր մոտեցել Մուշ քաղաքին, երբ նրան ընդառաջ եկավ զինվորական կայազորի փողային նվագախումբը մի վաշտի ուղեկցությամբ։ Այդ նույն նվագախումբն ու վաշտը մասնակցել էին Քյոսա Բինբաշու թաղմանը։ Նվագախմբի և զինվորական պատվաշարի ուղեկցությամբ Գևորգի աճյունը քաղաք բերվեց և դրվեց հրապարակում։ Երեք օր շարունակ քաղաքի հայ, քուրդ և նաև թուրք ազգաբնակչությունը նրան հրաժեշտ էր տալիս։ Եվ ապա զինվորական բոլոր պատվածեսերով, Շոպենի երաժշտության ուղեկցությամբ նրան թաղեցին Սաչկի դուրանի Կողու թաղի գերեզմանատանը։

Գևորգի համար ասում էին. «Միշտ ժողովրդի մեջ, միշտ ժողովրդին կպած՝ այդ էր նրա մարտական տենչը, նրա գործելակերպը, անսպառ աղբյուրը այն անվախության ու անվեհերության, որոնցով նա ապրեց, փայլեց ու վերջին րոպեին... մարեց։

Ծարոնի ու Սասունի տանջանքն ու մաքառումը իր աչքով տեսավ, լսեց հարազատ երկրի փրկության կանչող աղաղակը, և այդ վիշտն ու տանջանքը նրա հերոսության հնոցը եղան, ոգեշնչողներն ու մղողները այն ձեռնարկումների, որոնցում նա փայլեց որպես զեկավար ու հայդուկապետ, իբրև վրիժառու ու մարդասեր։ Երբեք թիկունք չդարձրեց, երբեք ձեռքը չառավ տա-

բուդի ցուպը, չկտրվեց մայր հողից ու ժողովրդից։ Աչքերը Անդոկն հառած, նա մնաց մեծ՝ իր հավատով ու հավատարմությամբ, իր անսասան կամքով ու պատանեկան սիրով։

Հերոս՝ թշնամու դիմաց, նա հերոս մնաց նաև մահվա՛ն հանդեպ։ Նա հարազատ ժողովրդին կտակեց արհամարհանք մահվան նկատմամբ և տիտանական ուժի դրսևորում վտանգի ու մեծագործությունների կատարման ժամանակ»։

«Ընկավ անմահ հերոս քաջամարտիկ Գևորգ Ջաուշը...— գրեց Ա. Սաֆրաստյանը,— (նա) պահապան հրեշտակ էր Մշո դաշտին։ Բոլոր հարստահարող, կեղեքիչ, բռնարար քուրդերը կսոսկային նրա վրեժխնդրությունից և հայ գյուղացին կապրեր նրա վեհապանծ հովանիին տակ»։ «Տարոնը զրկվեցավ իր առյուծասիրտ զավակի ազատ հմայքի բարիքներից... Նա գնաց «իր սրին շաչող եղբայրների բողոքի ու վշտի բեռը վերցրած»։

Անգլիական դիվանագետ Վ. Հերդը 1907 թ. օգոստոսին գրել է, որ Գևորդը շատերի սիրելին էր։ Գյուղացիները նրա օգնությամբ ազատվում էին բռնություններից ու կեղեքումներից։

«Մի գյուղում բնակիչներն ինձ բացահայտորեն ասացին, որ եթե ֆիդայիները չլինեին, իրենք վաղուց մահմեդականներ կլինեին», որ այնտեղ, որտեղ «ֆիդայիների իշխանությունն ուժեղ էին», որ այնտեղ, որտեղ «ֆիդայիների իշխանությունն ուժեղ է, քրդերը չեն կարողանում թալանել հայկական գյուղերը», իսկ մի շարք «տեղերում հայերի համար հայդուկապետները նույնքան լեգալ էին, որքան քրդական աշիրեթապետները»։ Ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը Գևորգի մասին գրել է. «Այդ ֆիդային իր համարձակ գործունեությամբ ապշեցնում էր բոլորին»։

Հազար ինն հարյուր յոթը թվականին,
Ձքնաղ մայիսի քսան և յոթին
Տոն է բազմաշխատ՝ մանվան Գևորգին,
Սասնո հարազատ մեծանուն քաջին։

Որ գրկեց հողը հայրենի երկրին,
Մոտ քսան տարի ծառայեց ազգին,
Կռվեցավ անվերջ հետը դուշմանին
Միշտ հաղթեց մեկով անոնց հազարին։

Վերջին բարևներս տարեք հայ ազգին,
Վերջին համբույրներս որդուս՝ Վարդգեսին։
Լացին ընկերներ, մոտեցան կարգով,
Համբուրեցին զինք ու անցան խմբով։

Նայեց բոլորտիք. ալ չկար ընկեր,
Ընկած կռուի դաշտ տառապեր անտեր,
Համբուրեց հողը քաղցր հայրենյաց,
Փակեց աչքերը ներքևն աստեղաց։

ՀԱՅԴՈՒԿ

Հայդուկները հագնում էին լայն տաբատներ ու գույնզգույն բաճկոններ՝ կարմիր ու դեղին նախշերով։ Գոտիներին ամրացնում էին կաշվից քառակապ փամփշտակալներ, որոնք ծածկվում էին անթև աբաներով։ Եթե նրանց հրացանները բազմազան էին՝ չախմախլի, մարտին, մոսին և այլն, ապա բոլոր հայդուկները կրում էին միայն սիրիական կեռ դաշույն։ Հայդուկներն իրենց գլուխները ծածկում էին արախչիով կամ գդակով՝ մուգ կարմրավուն փուշիներով ոլորած։ Մեջքներին կապում էին պայուսակ և մի պարան՝ ծառերը մագլցելու համար։ Պայուսակի ներսը բաժանված էր մի քանի մասի։ Մեկում պահվում էին առաջին անհրաժեշտության առարկաներ՝ գուլպա, տրեխ, ոսկրե սանր։ Մյուսում՝ մի քանի բուռ բռված կորեկալյուր և մի կտոր չորթան, երրորդում դրվում էր երեք մետր սպիտակ կտավ՝ պատանք։ Հայդուկը գերեզման չուներ։ Նրա բաղձանքը՝ եթե մեռնել՝ միայն կռվում, թշնամու գնդակից։ Հայդուկին պատանքի համար կտոր տալը հոգեբանական նշանակություն ուներ։

Հայդուկները աշխատում էին հագնվել միատեսակ։ Ավագ ու կրտսեր հայդուկների հագուստներն իրարից չէին տարբերվում։ Գեորգը ևս հագնում էր սովորական հայդուկի հագուստ։ Նա կրծքին ուներ խաչկապ փամփշտակալներ, փամփուշտների երեք ժապավեն էլ մեջքի կողմից էր։ Միայն նա հեռադիտակ ուներ։ Նա, ինչպես նաև մյուս հին հայդուկները՝ պատանք չէր պահում։

Հայդուկը հարստություն և ունեցվածք ոչ միայն չուներ, այլև ունենալու իրավունք էլ չուներ։ Նրա կյանքը նվիրաբերված էր հայրենի ազատությանը և պատկանում էր միայն հայրենիքին։

Հայդուկն անընդհատ շարժման մեջ էր։ Դեռ լույսը չբացված, նա հեռանում էր, և ոչ ոք չգիտք է իմանար, թե որ ուղղությամբ ուր է գնում։ Նրա բնակատեղին քարայրն էր, ձնե տնակը, լեռներն ու կիրճերը, իսկ գյուղերում՝ անասնագոմի կամ մարագի մութ անկյունը։ Գիշերը հայդուկի սեփականությունն էր,

գիշերը հայդուկն էր դրության տերը, իսկ ցերեկը նրա գլխավոր հոգսը թաքնվելն ու չնկատվելն էր։

Նա տեղափոխվում, տեղից տեղ էր անցնում գիշերը, ապավինելով մթությանը։ Գնում էր սարերով, կիրճերով ու ծերպերով, որպեսզի մարդու չհանդիպեր, իսկ երբ լույսը բացվում էր, մտնում էր թաքստոց։ Նա շատ հաճախ մեջքին ունենում էր ծանր բեռ։ Հայդուկների մեծ մասը հմուտ շալակավորներ էին։ Նրանցից շատերը մինչև 100 կիլոգրամ բեռը տեղափոխում էին 20—30 կիլոմետր։ Այս դեպքում ևս նա իր հրացանից ու մյուս հանդերձանքներից ոչ մի րոպե բաժանվելու իրավունք չուներ։ Վտանգը, մահը հայդուկի մշտական ուղեկիցներն էին, և ամեն օր, ամեն ժամ կարող էին կնքել նրա մահկանացուն։ Հայդուկը մահվան դեմ չէր մաքառում։ Նրա կռիվը թշնամու, իր հայրենիքը բռնադատողների դեմ էր։ Նրա օրերն անցնում էին ձյան ու բքի մեջ, անձրևի ու կարկուտի տակ։ Հայդուկը հիշում էր միայն այն օրերը, երբ կուշտ էր եղել։ Սոված օրերը չէր հիշում, որովհետև նրա գոյությունը պայքար էր քաղցի ու ծարավի դեմ։ Նրա կյանքն անցնում էր անքուն ու վտանգներով լեցուն գիշերներով, առանց անկողնու ու տաք սննդի։ Նրա քունը սովորական մարդու քուն չէր, այլ կիսաքուն վիճակ էր, ականջը՝ ձայնի։ Նա նույնիսկ քնած ժամանակ պետք է պատրաստ լիներ վայրկենապես կռվի մեջ մտնելու, հարձակվելու կամ պաշտպանվելու, վտանգի րոպեին մագլցելու լեռներն ի վեր, գրավելու նոր դիրքեր և դրանք՝ անպայման լեռների ամենաբարձր կետերում։ Նա մի ձեռքով կռվում էր, մյուսով ճանկռում հողը և ծածկում սպանված ընկերոջ դիակը։ Նա սգալու, կորուստը ողբալու ժամանակ չուներ։ Սակայն սպանված հայդուկին թաղելը նրա պարտքն էր ու սուրբ պարտականությունը։

Անընդհատ ու միշտ զգույշ։ Չխոսել ու չհազալ, քայլել լուռ, քանզի նույնիսկ սեփական ձայնը մատնիչ էր։ Նա անտառում ծառերին, նույնիսկ տերևներին դիպչելու իրավունք չուներ, որովհետև մատնիչ էին նաև տերևների խշշոցը, ճյուղերի շարժումը։ Նա շատ հաճախ հարկադրված էր լինում զսպելու հագն ու փռշտոցը, ծխելու անզուսպ ցանկությունը, դրանք նույնպես մատնիչներ էին։ Նա՝ այդ ուժեղ ու անվախ մարդը, հարկադրված թաքնվում էր բոլորից, հայից ու քրդից, բոլոր կենդանի էակներից, որովհետև դրանք բոլորը իրենց ուշադրությամբ կարող էին օգնել թշնամուն նրա տեղը հայտնաբերելու։

Եվ այսպես՝ ամեն օր, ամեն ժամ։ Եվ այսպես՝ ոչ թե մեկ, ոչ թե երկու, այլ տասնյակ տարիներ։ Ավելի ճիշտ, այնքան, քանի դեռ հայդուկը ապրում ու մաքառում էր։ Այնքան ժամանակ, քանի դեռ նա հայդուկ էր, քանի դեռ թշնամու գնդակը չէր խոցել նրան։ Տեղաշարժերի ժամանակ, անկախ դրանց տևողությունից, 10—15 րոպեից ավելի հանգստանալ չէր կարելի։ Ճանապարհ ընկնելուց առաջ մեկ առ մեկ ստուգում էին, թե բոլո՞րն էին ներկա, քնի կամ հոգնածության պատճառով ետ մնացողներ չկայի՞ն։ Պետք էր միշտ աչալուրջ լինել, որ եթե թշնամի հանդիպեր, նրա վրա առաջինը հայդուկը կրակեր ու խուճապի մատներ։ Յուրաքանչյուր հայդուկ պետք է կարողանար կռվել ու հաղթել 10—20 թշնամու։

Եթե ռազմական գործողությունների կարիք չկար, հայդուկների մի մասին թույլատրում էին գնալ իրենց գյուղերը, կազմակերպել պաշտպանական ջոկատներ։

Սկզբնական շրջանում հայդուկ դառնալու հատուկ ծիսակատարություն գոյություն չուներ։ Ժամանակի ընթացքում ձևավորվեց մի շատ պարզ, բայց իր իմաստով դաժան ծիսակատարություն։ Հայդուկ դառնալու ցանկություն ունեցողին նախ տեվական ժամանակ օժանդակ աշխատանքներ էին հանձնարարում և ստուգում։ Ապա մարտական բնույթի հանձնարարություններ էին տալիս ու կրկին ստուգում։ Որից հետո մեկ կամ մի քանի հայդուկ պետք է նրան երաշխավորեին՝ իրենց վրա վերցնելով հայդուկ ընդունվողի վարքագծի պատասխանատվությունը։ Այս բոլորից հետո աղ ու հացի կողքին դնում էին հրացան ու դաշույն, որոնց վրա բոլորի ներկայությամբ ընդունվողը երդում էր տալիս հավատարիմ մնալ հայդուկությանը, նրա կանոններին, ժողովրդի ազատության գործին։ Եթե նա անհրաժեշտ հագուստ, իրեր ու զենք չուներ, հանդիսավոր պայմաններում դրանք հանձնում էին նրան։

Հայդուկների ճնշող մեծամասնությունը աղքատ գյուղացիներ էին, որոնք հարստահարությունների պատճառով հեռացել էին տնից-տեղից, իրենց նվիրել ազգային ազատագրության և սոցիալական ճնշման դեմ պայքարին։

Հայդուկությունը էությամբ ուղղված լինելով թուրքական յաթաղանի եղեռնի ու քրդական ցեղապետերի թալանի դեմ՝ միաժամանակ կրում էր դասակարգային բնույթ, որովհետև հայդուկային շարժման հիմքն ու գոյության գլխավոր պայմանը

գյուղացիական լայն զանգվածներին աջակցություն ու օգնություն ցույց տալն էր։ Առանց այդ օգնության ու աջակցության հայդուկային շարժում գոյություն ունենալ չէր կարող։ Այդ գյուղացիներն էին համալրում հայդուկների շարքերը, գյուղացիների միջոցով էին հայդուկները զինվում, գյուղացիներն էին հայդուկներին կերակրում, նրանց անհրաժեշտ տեղեկություններ հասցնում, հայդուկներին թաքցնում, հարկ եղած դեպքում նրանց հետ կողք կողքի կռվում։ Գյուղերում ստեղծված ինքնապաշտպանական ջոկատները միաժամանակ հայդուկների հենակետերն էին, նրանց պահեստային ուժերը, որոնք շատ հաճախ վճռական դեր էին խաղում թուրքական իշխանությունների ու քուրդ ցեղապետների դեմ մղվող կռիվներում։

Հայդուկությունն ու ինքնապաշտպանությունն խմբերը Սասունի հայ գյուղացիության ազատագրական պայքարի միջոցներն էին, այդ պայքարի ձևերը։ Հարկ է նշել, որ այդ պայքարի կենսունակությունը պայմանավորված էր ոչ միայն գեղջուկ տղամարդկանց, այլև կանանց ու երեխաների ակտիվ վերաբերմունքով ու օգնությամբ, բազմաթիվ օրինակներ կան, երբ կանանց ու պատանիների զգոնության ու խիզախության շնորհիվ հայդուկները փրկվել են ոչնչացումից, շահել են ճակատամարտը, խուսափել հետապնդումից, իսկ վիրավորները նրանցից նաև խնամք ու բժշկական օգնություն են ստացել, ապաքինվել։

Գևորգին հաջողվեց 1905—1906 թվականների ընթացքում հիմնականում ավարտել ինքնապաշտպանական պայքարի մեջ ընդգրկված գյուղացիական խմբերի կազմակերպչական ձևավորումը։ Այն մոտավորապես ներկայացնում էր հետևյալ պատկերը։ Կար հայդուկների կենտրոնական խումբ, որի գործունեության շրջանակների մեջ էր մտնում ամբողջ երկրամասը՝ Սասունն ու Տարոնը։ Այս խմբի ղեկավարը՝ Գևորգը, միաժամանակ հայդուկային մյուս խմբերի, ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարն էր։ Առանձին դեպքերում, հատկապես կարևոր նշանակություն ունեցող հարցեր քննարկելու համար, խորհրդակցության էին կանչում հայդուկային խմբերի ղեկավարներին։

Շարժման կազմակերպչական ու ռազմական հիմքը գյուղում գործող ինքնապաշտպանական ջոկատներն էին։ Դրանց մեջ ընդգրկված էին տվյալ գյուղի խիզախ, նվիրված և անձնազոհ գյուղացիները, հատկապես երիտասարդությունը։ Ջոկատի ան-

դամները, որպես կանոն, ընդունվում էին՝ հաշվի առնելով նրա բոլոր անդամների կարծիքը։ Ընդունվողը պետք է ունենար հրացան և փամփուշտ։ Ջոկատն ուներ իր թաքստոցը և գաղտնի զինապահեստը։ Գյուղում ջոկատը իրականացնում էր ամենօրյա հերթապահություն։ Նրա գլխավոր նպատակը հարձակումներից ու թալանից գյուղը պաշտպանելն էր։

Հայդուկային խմբի անդամների անձնական հակումներից ելնելով նրանց միջև կատարվում էր աշխատանքի բաժանում։ Օրինակ, մշեցի Տիգրանը արտակարգ դիմացկուն մարդ էր։ Առաքելոց վանքի կռվի ժամանակ բանակցությունների սենյակի մուտքի մոտ նա էր որպես պահապան կանգնած և նա էր, որ մերկ ձեռքերով կրակը բռնած՝ վառեց թուրք պատվիրակների ծխախոտը, սարսափի մատնելով նրանց։

Կարկուտ Թադեն մասնագիտացել էր հրացանի գնդակների պարունակությունը ստուգելու գործում, այսինքն ստուգում էր՝ գնդակների մեջ վառոդ կա՞, թե ոչ։ Հասանոն Գևորգի թիկնապահն էր։ Բարսեղը Գևորգի խմբի ձիապանն էր։ Նա միաժամանակ հսկում էր, որ հայդուկները հմտորեն պահպանեն անվտանգության կանոնները՝ առանց քողարկելու կրակ չվառեն և ծխելիս թաքցնեն կամ ձեռնափայտի, կամ ուղղակի ափի մեջ։ Ծխախոտի մնացորդները գետնին չգցեին, այսինքն՝ հետքեր չթողնեն։ Սուրխաչ Հազարիկը տեղաշարժերի ժամանակ հայդուկների ավելորդ բեռներն էր շալակում և հսկում, որ լուսնկա գիշերներին հրացանները ուսներին չդնեն և փայտի կոթերը պահեն լուսնի կողմը, որ դրանք չփայլեն։ Տալվորիկցի Կամե Գասպարը զբաղվում էր հայդուկների համար դրամական միջոցներ հայթայթելով։ Ալադին Միսակը հայդուկների երգիչն էր և իր հիանալի ձայնով փոքր դադարների ժամանակ մի ակնթարթ հայդուկներին կտրում էր դաժան իրականությունից ու տանում մարդկային հույզերի աշխարհը։ Սեյտո Պողոսը հայդուկների կնիքի ու փաստաթղթերի պատասխանատուն էր։ Հայդուկների խումբն ուներ նաև իր շալակավորները, խարույկ վառելու համար փայտ և ածուխ հայթայթողները, կապավորները։

Հայդուկային շարժումը, իր մեջ միավորելով գյուղացիության ձգտումը՝ ոչնչացնել ազգային և դասակարգային ճնշումները, իր բնույթով առաջադիմական-դեմոկրատական շարժում էր։ Դրա համար էլ այդ շարժումը վայելում էր ամբողջ հայ ժողովրդի համակրանքն ու աջակցությունը։ 1903 թվականին բոլշևիկյան «Պրոլետարիատի կռիվ» թերթը գրեց. «Ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը՝ մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»։

1 Миллер А.. Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 48
2 Նույն տեղը. էջ 50.
3 ՀԽՍՀ ՄՊԿԱ ֆ—131, ց—1, գ—48
4 Ն. տ. գ—52.
5 «Երկրի ձայն» շաբաթաթերթ, 1907 թ., № 10.
6 Маркс К., Энгельс Ф., соч. т. 9, 2-ое изд. с. 25
7 Миллер А. Актуальные проблемы новой и новейшей истории, с. 20
8 «Հնչակ», 1906 թ., դեկտեմբեր.
9 «Դրոշակ», 1900 թ., սեպտեմբեր.
10 ЦГИАЛ, ф. 408, оп. 77, д. 270, л. 5—6
11 Ն. տ.
12 Ն. տ.
13 «Հնչակ» 1908 թ., № 4—5.
14 Ն. տ. 1902 թ., մայիս.
15 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—53.
16 «Դրոշակ», 1900 թ., ապրիլ
17 Ն. տ. 1899 թ., փետրվար.
18 «Դրոշակ», 1899 թ., դեկտեմբեր.
19 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—51.
20 Ն. տ.
21 Ն. տ.
22 «Դրոշակ», 1901 թ., № 5.
23 Ն. տ.
24 Ն. տ. 1901 թ., № 6
25 Ն. տ.
26 Ն. տ.
27 Ն. տ. № 8
28 Ն. տ. № 4.
29 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—48.
30 Ն. տ. գ—52.
31 «Դրոշակ», 1903 թ., № 4.
32 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—55.
33 «Հնչակ», 1902 թ., հունիս
34 Ն. տ.
35 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58
36 Ն. տ. գ—59.
37 Ն. տ. գ—55.
38 Ն. տ.
39 «Դրոշակ», 1899 թ., սեպտեմբեր
40 Ն. տ. հունիս.
41 Ն. տ. օգոստոս.
42 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ., էջ 62—63.
43 ՀԽՍՀ ՀՄՊԱ, ֆ—131, ց—1, գ—46
44 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 63.
45 Ն. տ.
46 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—46.
47 «Դրոշակ», 1907 թ., № 9.
48 Ն. տ. 1901 թ., դեկտեմբեր
49 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 61.
50 Ն. տ. էջ 66—67.
51 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—46
52 Ն. տ. ֆ—131, ց—1, գ—11,

53 Ն. տ. գ—45.
54 Ն. տ. գ—48.
55 Ն. տ. գ—50.
56 «Հնչակ», 1903 թ., փետրվար.
57 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—47.
58 Ն. տ. գ—53.
59 «Դրոշակ», 1903 թ., № 8.
60 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—57.
61 Ն. տ.
62 Ն. տ.
63 Ն. տ. գ—49.
64 «Դրոշակ», 1903 թ., № 3
65 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—50.
66 Ն. տ.
67 «Դրոշակ», 1903 թ., № 8.
68 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
69 Ն. տ.
70 «Զարթոնք», 1971 թ., օգոստոսի 11.
71 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—53.
72 Ն. տ. գ—58.
73 «Զարթոնք», 1971 թ., օգոստոսի 11
74 ՌԱՔՍ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1904 թ., գ—2672, թ. 8.
75 «Դրոշակ», 1904 թ., № 3.
76 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
77 Ավո, Գևորգ Չաուշ, Բեյրութ, 1972 թ., էջ 177—178.
78 «Դրոշակ», 1904 թ., № 2.
79 Ն. տ.
80 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
81 Ն. տ.
82 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ. էջ 70.
83 «Դրոշակ», 1904 թ., № 13.
84 Վ. Փափազյան, Իմ հուշերը, Բեյրութ, 1950 թ., էջ 305.
85 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թուղթ 237 բ, վավ. 18, թ—2.
86 Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932 թ., էջ 71.
87 «Զարթոնք», 12 օգոստոսի, 1971 թ.
88 Ն. տ.
89 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
90 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
91 Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագրեց Աղան Տարոնցին, հեղինակներ՝ Տիգրան և Միսակ Բդեյաններ, Կահիրե, 1962 թ., էջ 163
92 «Դրոշակ», 1904 թ., № 2
93 «Դրոշակ», 1903 թ., № 6
94 Ն. տ. օգոստոս
95 Ն. տ. 1900 թ., դեկտեմբեր
96 «Հնչակ», 1904 թ., №4—5
97 «Դրոշակ», 1903 թ., № 3
98 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—57.
99 «Զարթոնք», 11 օգոստոսի, 1971 թ.
100 Ն. տ. 12 օգոստոսի 1971 թ.
101 Ն. տ. 11 օգոստոսի, 1971 թ.
102 Վ. Փափազյան, Իմ հուշերը, էջ 300
103 Ն. տ. էջ 298.
104 Ն. տ.
105 Ն. տ. էջ 298.
106 Ն. տ. էջ 210.
107 Галоян Г. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922 гг. Е., 1969, с. 58
108 Ավո, Գևորգ Չաուշ, Բեյրութ, 1972 թ., էջ 189.
109 «Դրոշակ», 1907 թ., № 9
110 Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, դրեց Արսեն Մուրամբյան, Կ. Պոլիս, 1920 թ., էջ 85
111 «Հնչակ», 1904 թ., № 3

112 Հ. Պողոսյան, Սասունի պատմություն, Ե. 1985 թ., էջ 257
113 АВПР, ф. Посольство Константинополя» (1904), д. 2672, л. 13
114 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—64.
115 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 195—196.
116 «Հնչակ», 1904 թ., № 3.
117 Pour l'Arménie et la Macédoine, Paris, 1904, p. XXI—XXII
118 Sassoun et les atrocités hamidiennes, interpellation, Genève. 1904, p. 28
119 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58
120 Sassoun et les atrocités. p. 28
121 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—58.
122 Ն. տ.
123 Ն. տ.
124 Ն. տ.
125 Սասունի և Մուշի կռիվները, ժնև, 1904 թ., էջ 11.
126 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 7.
127 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 199.
128 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
129 Կ. Սասունի, Սարերի ասլանը, Բեյրութ, 1956 թ., էջ 384—389.
130 «Դրոշակ», 1904 թ., № 2.
131 Տեղակալ Մ. Ավետեան, Հուշամատյան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954 թ., էջ 128.
132 Ք. Միքայելյան, Հեղափոխական մտքեր, ժնև, 1906 թ., էջ 123.
133 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ—Բ, Փարիզ, 1935 թ., էջ 45.
134 «Դրոշակ», 1907 թ., № 10.
135 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 199.
136 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—65
137 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 16.
138 Ն. տ. թ. 13—14.
139 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
140 Ն. տ.
141 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 22.
142 Արսեն Մուրամբյան, Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920 թ., էջ 91.
143 Կ. Սասունի, Սարերի ասլանը, էջ 395
144 Ն. տ.
145 «Հնչակ», 1904 թ., 4—5
146 Ն. տ.
147 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
148 Ն. տ.
149 ЦГВИА, ф. 450. оп. 1, д. 142 (1906), лл. 11—12
150 Անդրանիկի կյանքը... էջ 79.
151 Ն. տ.
152 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—66.
153 ЦГВИА, ф. 450, оп. 1, д. 142 (1906), л. 12
154 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—66
155 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59
156 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
157 Ն. տ.
158 Հարազատ պատմություն Տարոնոյ... էջ 151.
159 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—65.
160 Ն. տ.
161 Ն. տ.
162 Կ. Սասունի, Պատմություն Տարոն աշխարհի, Բեյրութ, 1957 թ. էջ 679—680
163 Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, էջ 264.
164 Անդրանիկի կյանքը... էջ 88
165 Sassoun et les atrocités... p. 27-32.
166 «Հնչակ», 1904 թ., հունիս.
167 Sassoun et les atrocités... p. 31.
168 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59
169 Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թղթ. 237 բ, վավ. 18, թ. 53—54 թ. 54—55.

170 «Հնչակ», 1904 թ. № 7.
171 «Դրոշակ», 1907 թ., № 7.
172 «Հնչակ», 1904 թ. հունիս.
173 Sassoun et les atrocités... p. 32.
174 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 217—218.
175 Ն. տ.
176 «Դրոշակ», 1904 թ., № 4—5.
177 Կ. Սասունի, Սարերի ասլանը, էջ 447.
178 Ն. տ. էջ 458.
179 Ն. տ. էջ 454.
180 Ն. տ. էջ 447.
181 Անդրանիկի կյանքը... էջ 101.
182 Ն. տ. էջ 102.
183 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 221—223.
184 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—68.
185 Ն. տ.
186 Սասունի և Մուշի կռիվները... էջ 61.
187 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—69
188 Անդրանիկի կյանքը... էջ 108.
189 Ն. տ.
190 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 236.
191 «Դրոշակ» 1904 թ. № 11.
192 Ն. տ. 1907 թ. № 10.
193 Ն. տ.
194 Հ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե. 1986 թ., էջ 170.
195 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—59.
196 «Հնչակ», 1904 թ. № 7.
197 «Դրոշակ», 1904 թ. № 4—5.
198 Ն. տ.
199 Ն. տ.
200 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ—131, ց—1, գ—60
201 Ն. տ. գ—62.
202 «Հնչակ», 1904 թ. № 6.
203 Ն. տ.
204 Ն. տ.
205 ՀԽՍՀ ՄՊԿԱ, ֆ. 131, ց. 1, գ. 62.
206 Ն. տ. գ. 61.
207 Ավո, Գևորգ Չաուշ, էջ 243—244.
208 Փափազյան Վ. Իմ հուշերը, հ. 1, Բեյրութ, 1950, էջ 146.
1950, էջ 146.
209 Ս. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976 թ., էջ 209.
210 «Հնչակ», 1906 թ., № 5.
211 Ն. տ. № 3.
212 Ն. տ. № 4.
213 Ն. տ., № 8.
214 Ա. Թերզիպաշյան, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 103.
215 Саркисян Е. Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Е, 1972, с. 215
216 Голобородько, Турция, М., 1912, с. 248
217 «Դրոշակ», 1904 թ., № 12
218 Ն. տ.
219 Ն. տ.
220 Ն. տ.
221 Ն. տ.
222 «Հնչակ», 1906 թ. № 12.
223 «Դրոշակ», 1907 թ., № 3.
224 «Հնչակ», 1905 թ., № 8.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 168—179
2. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 117—119, 239
3. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 9, стр. 20—26, 35
4. Маркс К., Энгельс Ф., соч. 2-ое изд. т. 10, стр. 83, 167
5. Ленин, соч. т. 16, стр. 187
6. Ленин, соч. т. 24, стр. 119—121
7. Ленин, соч. т. 25, стр. 85—86
8. Լենին, Երկ. հ. 28, էջ 243.
9. ՄԷԼ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, 45, 51 ֆոնդեր.
10. ՀԽՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, 408.
11. ՀԽՍՀ Մամուլի պետական կենտրոնական արխիվ, ֆ. 131.
12. Մատենադարան, Կաթողիկոսի դիվան, թուղթ. 237 բ.
13. ЦГИАЛ, ф. 408, оп. 77, к. 270
14. ՌԱՔՍ, Ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն» 1904 թ., գ. 2672.
15. ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 310
16. ЦГВНА, ф. 450, д. 1421 (1906)
17. Երկրի ձայն, 1907 թ. № 10.
18. Զարթոնք. 11, 12 օգոստոսի 1971 թ.
19. Արմենիա, 11-ը նոյեմբերի 1937 թ.
20. Մշակ, 1876—1900 թթ.
21. Նոր կյանք, 1899—1902 թթ.
22. Դրոշակ, 1890. 1908 թթ.
23. Հնչակ, 1887—1914 թթ.
24. Ձայն հայրենյանց, 1908 թ.
25. Մուրճ—1894—1906 թթ.
26. Հուսաբեր 1-ը օգոստոսի 1932 թ.
27. «Հայրենիք» ամսագիր, 1924—1944 թթ.
28. Երկրի ձայն, 1906 № 10
29 Փորձ, 1879 № 7—8
30. Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը, Բեյրութ, 1932, էջ 62—63. 66, 67, 70, 71, 73, 77, 79, 86, 88, 101—102, 103, 108.
31. Ավո, Գևորգ Չաուշ, Պեյրութ, 1972, էջ 177—178, 185—189, 195—196, 221, 223, 236—238, 242—243.
32. Ավո, Հրայր Դժոխք, Պեյրութ, 1985, էջ 10—13, 18, 23, 38, 43, 106, 135, 138

33. Աղայան Ս., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե. 1976. էջ 111. 209.
34. Bayur I. Türk Inkilâb Tarihi, cilf I, Ankara, 1963, s. 69, 371.
35. Братская помощь пострадавшим армянам в Турции, М., 1897, с. 13, 19
36. Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Е., 1969, стр. 58
37. Геноцид армян в османской империи, Е., 1982, стр. 77, 170, 38, 166
38. Голобородько И., Старая и новая Турция, М., 1908, стр. 220—222
39. Голобородько И., Турция, М., 1912, с. 248
40. Գրական դեմքեր, Ե, 1988, էջ 57, 77.
41. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 121—125.
42. Դիվան Հ. 3. Դաշնակցություն, հ. 1, Պոստըն, 1934, էջ 191, 210, 328, 336, 339.
43. Եազճեան Գ., Աբդուլ Համիդ 2-րդ Կարմիր սուլթան, Պեյրութ, 1980, էջ 846—853.
44. Երիցյանց Մ., Զորավար Սմբատի հուշերը, հ—Ա, 1900—1914, Փարիզ, 1936, էջ 153, 174, 190, 192.
45. Զոր. Անդրանիկ, Առաքելոց վանքի կռիվը, Ֆրեզնո, 1926, էջ 9, 11, 14, 17, 22.
46. Զոր. Անդրանիկը և իր պատերազմները, գրեց Սրսեն Մուրամբյան, Կ. Պոլիս, 1920, էջ 85.
47. Инджикян О., Буржуазия Османской империи, Е., 1977, с. 58, 76, 84
48. Թասոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Ե, 1980, էջ 112, 142, 148.
49. Թերզիպաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ 1942, էջ 92, 103.
50. Լալայան, Գ., Հեղափոխական դեմքեր, Գահիրե, 1945, էջ 286, 296, 297, 299.
51. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 41—42, 74, 81, 117, 120.
52. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 39, 45.
53. Karal E. Osmanli Tarihi, cilf VIII, Ankara, 1962, s.s. 69, 371.
54. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 186, 235.
55. Համբարյան Ա., Ազգային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Ե, 1965, էջ 28.
56. Հարազատ պատմություն Տարոնոյ, խմբագրեց Աղան Տարոնցին, հեղինակներ Տիգրան և Միսակ Բդեյաններ, Կահիրե, 1962, էջ 151, 236.
57. Հնչակյան ս. դ. կուսակցության պատմություն, Բեյրութ, 1962, էջ 30—36, 101, 108, 146.
58. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915—1965), Բեյրութ, 1965, էջ 450.
59. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ինֆորմացիոն բյուլետեն՝ 1983 թ. № 3, էջ 5, 1984 թ., № 7, էջ 38, 39, 44, 50.
1984 թ., Օսմանյան դրությունը և հայ մամուլը 1838—1896 թթ. էջ 12.
60. Ղազարյան Հ., Հարություն Սվաճյան, Ե. 1986, էջ 157, 162.
61. Mardin S. Jön Türklerin Siyasi Fikirleri, 1895—1908, Ankara, s. 53.

62. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Ե. 1968, էջ 130, 133, 135, 137, 147, 169.
63. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 15-րդ, Ե. 1989, էջ 143.
64. Миллер А., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 20, 48, 51
65. Միքայելյան Ք. Հեղափոխական մտքեր, ԺՆև, 1906, էջ 133.
66. Nasibian A. Britain and the Armenian Questions 1915—1923. London. 1985, pp. 21, 27, 33.
67. Национальный вопрос в освободившихся странах Востока, М., 1986, с. 47.
68. Նեափ Մ., Հայ եղեռնը. իմ վկայություններս և տոքթ. Ա. Նազգաշեան, Այաշի քանտը, Պեյրութ, 1978, էջ 31, 39, 45, 57, 63, 69, 75։
69. Զորմիսեան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Բ. 1878—1908, Պեյրութ, 1974, էջ 369.
70. Չիլինկարեան Եղ., Հիշատակարաններ Բաղեշի առաջնորդունես, Երուսաղեմ, 1925, էջ 26—29։
71. Петросян Ю., Младотурецкое движение, М., 1971, с. 138, 268
72. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 54, 62—69, 133, 136, 175, 282, 296
73. Պողոսյան Հ., Սասունի պատմություն, Ե., 1985, էջ 130, 257, 284.
74. Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, 1850—1900, Ե, 1988, 243—244.
75. Pour l'Arménie la Macedoine. Paris, 1904, p. XXI—XXII.
76. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, Հ. Դ. Լոս-Անճելըս, 1951, էջ 129, 186, 298—299.
77. Ռուբեն, Հայ հեղափոխականի մի յիշատակները, Հ. Դ. Լոս-Անճելըս, 1951, էջ 41, 73, 86.
78. Սապահ-Գուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 42, 57.
79. Սապահ-Գուլյան Ս., Պատասխանատուները, Ֆրավիտենս, 1916, էջ 97, 102, 141, 153, 174.
80. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական յարաբերությունները (ԺԹ դարէն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 18, 21.
81. Սասունի Կ., Սարերի ասլանը, Բեյրութ, 1966, էջ 372, 384, 389, 395, 447, 454, 458.
82. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 673, 679—680, 682.
83. Սասունի և Մուշի կռիվները, ԺՆև, 1904, էջ 11, 14, 23, 41.
84. Sassoun et les atrocités hamidiennes, interpellation, Genève, 1904, pp. 27—32.
85. Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и держав в последней четверти XIX и начале XX вв., Е., 1972, с. 215
86. Սերոբ Վարդանյան Աղբյուր, ԺԸնեվ, 1907, էջ 7, 8, 12, 14.

87 Սրճեան Հ., Թուրք-ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը, Ե, 1986, էջ 170.
88. Սիրվարդ, Մեծ Մուրաղ, 1955, էջ 32, 35.
89. Վարանդեան Մ., Հ. 3. Դաշնակցութեան պատմություն, հ. 1, Պոսթըն, 1931, էջ 192, 206, 261, 304.
90. Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրման հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե, 1967, էջ 287, 294.
91. Tahsin Pasha, Abdülhamit, Iildiz Hatizalari, Istambul, 1931, c. 131.
92. Տարոնցի Գլակ, Ապստամբ Սասուն, ժնև, 1903, էջ 4—8.
93. Տեղակալ Մ. Ավետիսեան, Հուշամատեան և զոր. Անդրանիկ,Փարիզ, 1954, էջ 128.
94. Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. 1, Բեյրութ, 1950, էջ 206—208, 210, 300, 301, 305.
95. Յեղափոխական ալպոմ, 1972, հ. 4, էջ 16—24.
96. Հուշապատում Հ. 3. Դաշնակցութեան, Բոստոն, 1950, էջ 367, 383, 391.
97 Цовикян Х., Влияние русской революции 1905 года на революционное движение в Турции, Советское востоковедение, т. III, М. — Л., 1945, с. 15—17.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն . . . 3

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Մրկթենք . . . 55
Պատանեկություն . . . 60
Զուլումի տարիներ . . . 65
Արաբո . . . 72
Ճանապարհ, որ դեպի հավերժություն է տանում . . . 82
Մարտական մկրտություն . . . 88
Հերոսամարտ . . . 106
1894 թիվ. Արյունոտ տարի . . . 121
Կոտորածներ . . . 143
Աղբյուր Սերոբ . . . 174

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Դարասկիզբ . . . 205
Նախապատրաստվում է նոր կոտորած . . . 221
Անդրանիկ . . . 227
Պարտիզանական կռիվներ . . . 242
Հարձակումը նախապատրաստվում է . . . 249
Օղակը նեղանում է . . . 261
Գոյամարտի նախօրյակին . . . 270
Սկսվեց... . . . 285
Գոյամարտ . . . 305
Հրայր . . . 317
Գելիեգուզան . . . 328
Դաշտում . . . 340
Հեռանում են Սասունից . . . 348
Արձագանքներ . . . 363
Բնույթն ու նշանակությունը . . . 369
Արյան դեմ՝ արյուն . . . 379
Հայն ու քուրդը հաշտ ու խաղաղ պիտի ապրեն . . . 385
Հարսանիք . . . 391
Ռուբեն . . . 403
Մակարը զինաթափ . . . 410
«Գևորգը խելոռել է...» . . . 415
Պարում են կռվելով և կռվում՝ պարելով . . . 421
Սուլուխ . . . 426
Հայդուկ . . . 434
Գրականություն . . . 444

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Ստեփան Կարապետի Պողոսյան
Կարո Ստեփանի Պողոսյան

ԻՆՁ ԲԱՀ ՏՎԵՔ...

(ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇ)
Փաստագրական վեպ

Литературно-художественное издание

Степан Карапетович Погосян
Каро Степанович Погосян
ДАЙТЕ МНЕ ЛОПАТУ...
(Геворк Чауш)
Документальная повесть

(На армянском языке)
Издательство «NB — пресс»
Ереван 1990

Հրատ. խմբագիր՝ Հ. Թ. Կարճիկյան
Նկարիչ՝ Վ. Ս. Աբրահամյան
Գեղ. և տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Կ. Կ. Հակոբյան

Հանձնված է շարվածքի 25. 06. 90 թ.։ Ստորագրված է տպագրության 12. 07. 90 թ.։ Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 26,04 պայմ. տպ. մամ., 24,47 հրատ. մամ. (ներդիր 24 թ.)։ Տպաքանակ՝ 101000։ (II թողարկում 50001—101000)։ Պատվեր 1։ Գինը 6 ռ.։

ԽՍՀՄ սոցիալ հայտնագործությունների ֆոնդ. Հայկական հանրապետական մասնաճյուղ մամուլի գործակալություն «ՆԲ—Պրես» հրատարակչություն, Երևան, Աճառյան, 40։

Фонд социальных изобретений СССР. Армянский Республиканский филиал агентство печати издательство «NB—пресс», Ереван, Ачаряна, 40.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան— 10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10, ул. Алавердяна, 65.